

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ ԳԱԼՈՒՍԵ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐԵՐՈՒ ԳԻԻՏԻ 1600-ԱՄԵԱԿԻ ՄԱՏԵՆԱԾԱՐ

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Դ. ՀԱՏՈՐ

Է. ԴԱՐ



ԱՆԹՐԻԿՈՍ - ԼԻՍԲՈԱ
2005

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ	VII
ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	IX
ԱՔՐԱՅԱՍ ԱՂԲԱԹԱՆԵՑԻ	
Աքրահամ Աղբաթանեցին եւ իր թղթերը	3
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎՍԻՍԻ	7
ԹՈՒՂԹ ԱՌԱՋԻՆ ՏԵԱՌՆ ԱՔՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ԱՌ ԿԻՐՐՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ	8
ԹՈՒՂԹ ԵՐԿՐՈՐԴ ՏԵԱՌՆ ԱՔՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ԱՌ ԿԻՐԻՒՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ	9
ԹՈՒՂԹ ԵՐԿՐՈՐԴ ՏԵԱՌՆ ԱՔՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ԱՌ ԿԻՐԻՒՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ	11
ԹՈՒՂԹ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ ՏԵԱՌՆ ԱՔՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ	15
ՊԱՏԱՍԽԱՆԻ Ի ՀԱՅՈՑ ԹՂԹՈՅՆ ՄԵԽԹԱՐԱՅ ԱՄԱՐԱՍԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ	20
ՅԱՂԱԳՍ ՂԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՆԻՈՆՈՒԹԵԱՆ ԱԶԳԱԿԱՆԱՑ	38
ՏԵԱՌՆ ԱՔՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ	42
ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ	1
Կոմիտաս Աղցեցի.....	45
ԿՆԻԶ ՀԱԲԱՏՈՅ	49
ՎԱՍՆ ՀԱԲԱՏՈՅ ԵՒ ԿԱՐԳԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՏՆԱԻՐԵՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՆ	312
ԹՈՒՂԹ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ՊԱՐՍՍ	327
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ	335
Սմբատ Բագրատունին եւ իր թղթերը	337
ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՍՄԲԱՏԱՅ՝ ՎՐԿԱՆ ՄԱՐԶՊԱՆԻ, ԱՌ ԿԻՐՐՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ	339
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌ ՄՈՎՍԵՍ	341
ՁԵՌՆԱՐԿ՝ ՉՈՐ ԽՆԴՐԵԱՑ ՍՄԲԱՏ ՎՐԿԱՆ ՄԱՐԶՊԱՆ, ՑԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՄՆԱ, ՈՐԶ ԴԱՐՁԵԱԼ ԺՈՂՈՎԵՑԱՆ ՆՈՐԻՆ ՀՐԱՄԱՆԱԲ Ի ԴՈՒՆՆ՝ ԿԱՐԳԵԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ, ՅԵՏ ՄԱՀՈՒԲՆՆ ՄՈՎՍԵՍԻ	342
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՅՐԱԳՈՍԵՑԻ	343
Յովհանն Մայրազոմեցին եւ իր երկերը	345
ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՈՐ Ի ՆՄԱ ՅԱԻՐԻՆԵԱԼ ԿԱՐԳԱՑ	349
ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՑ ԵՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ	355
ՈՐԲ Ի ՎԵՐԱՅ ԱՆԱՊԱՇԽԱՐ ՄԵՂԱԻՐԱՑ	358
ՎԻՐՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ	361
Աղուանից Վիրոյ կաթողիկոսը եւ իր ճառը	363
ՎԱՍՆ ՍԱՍԿԱՑԵԱԼ ՄՈՎՈՅՆ, ՄՐՈՅՆ ԵՒ ԳԵՐՈՒԹԵԱՆՆ Ի ՄԻԱՍԻՆ	365

ԱՆԱՆՈՒՆ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՅԻ	3 6 9
Անանուն Կաղանկատուացին եւ իր երկը	3 7 1
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՅԱՐՈՒՑՄԱՆ ԱԶԳԱՑ ԲԱՐԲԱՐՈՍԱՑ ԵՒ ՊԷՍՊԷՍ ԱՆՑԻՑ ՏԻԵԶԵՐԱՅԵԾ ՏԱԳՆԱՊԻՆ.....	3 7 5
ՄԱԹՈՒՍԱՂԱ	4 1 5
Մաթուսաղա	4 1 7
ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ՀԱԲԱՏՈՅ	4 1 9
ՄՈՎՍԷՍ ՍԻՒՆԵՅԻ	4 2 5
Մովսես Սիւնեցին եւ իր երկերը	4 2 7
ՅԱՂԱԳՍ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ	4 2 9
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ	4 3 7
ՅԱՂԱԳՍ ԿԱՐԳԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՔ	4 4 5
Ի ՅԵՐԳՍ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑՆ	4 4 8
ՍԵՔԵՆՍ	4 4 9
Սեքենսը եւ իր պատմութիւնը	4 5 1
Պատմութիւն	4 5 3
ՆԵՐՍԷՍ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՅԵՅԻ	5 6 7
Ներսէս Գ. կաթողիկոս Տայեցին եւ Դուինի ժողովի կանոնները.....	5 6 9
ԿԱՆՈՆ ԴԸԻՆԱՅ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ.....	5 7 1
ՅՈՎՍԷՓ ԱՆԱՊԱՏԱԿԱՆ	5 7 9
Յովսէփ Անապատականի «Յիշատակագրութիւնը».....	5 8 1
ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ	5 8 3
ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ	5 8 7
Անանիա Շիրակացին եւ իր գործերը	5 8 9
ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ	5 9 3
ԹՈՒՄԲԱՆԱԿԱՆ	5 9 9
ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ	6 2 7
ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ	6 3 5
ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ	7 0 9
ԱՅԼ	7 8 9

ԱՔՐԱՀԱՄ ԱՂԲԱԹ-ԱՆԵՑԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎՍԻՍԻ

ԹՈՒՂԹ ԱՌԱՋԻՆ ԱՌ ԿԻՐԻՒՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԹՈՒՂԹ ԵՐԿՐՈՐԴ ԱՌ ԿԻՐԻՒՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԹՈՒՂԹ ԵՐՐՈՐԴ ԱՌ ԿԻՐԻՒՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԹՈՒՂԹ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ ՏԵԱՌՆ ԱՔՐԱՀԱՄՈՒ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ Ի ՀԱՅՈՑ ԹՂԹՈՅՆ ՄԽԻԹԱՐԱՅ ԱՄԱՐԱՍԱ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՆԻՈՆՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱԿԱՆԱՑ

ՏԵԱՌՆ ԱՔՐԱՀԱՄՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՆ

ԱՐԲԱՅԱՄ ԱՐԲԱԹԱՆԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԹՂԹԵՐԸ

Աբրահամը ծնունդ է Ռչտունիքի Աղբաթանիք գիւղում եւ եղել այդ գաւառի եպիսկոպոսը: Կաթողիկոս է ընտրուել 607 թ. Դուինում տեղի ունեցած յայտնի ժողովում, որին մասնակցում էր նաեւ Պարսից Խոսրով Փարուէզ արքայից արքայի յատուկ ներկայացուցիչ (նուիրակ) Սմբատ Բագրատունին՝ Վրկանի մարզպանը: Ուխտանէսի բնութագրմամբ՝ Աբրահամ կաթողիկոսը «էր այր հեզ եւ իմաստուն եւ երկիւղած, եւ բարի, եւ հաւատարիմ, եւ հաստատուն ի հաւատս ճշմարիտ, եւ նախանձախնդիր ուղղափառ հաւատոյ, եւ լի գիտութեամբ Տեառն» (Բ, էջ 62):

Աբրահամը եռանդուն քայլեր է ձեռնարկել կայսրութեան տարածքում գտնուող թեմերը եւ Հայոց եկեղեցու գերագահութեան համակարգից («առաջինը հաւասարների մէջ») դուրս գալուն հակուած Վրաց եւ Աղուանից կաթողիկոսութիւնները երկաբնակութիւնից հետ վերադարձնելու համար՝ շարունակելով իր նախորդի՝ Մովսէս Եղիվարդեցու ջանքերը: Նրա ջանքերն են արտացոլուած Ցուրտաւի Մովսէս եպիսկոպոսին եւ Վրաց Կիւրոն կաթողիկոսին ուղղուած՝ ստորեւ ներկայացուող Թղթերում: Ի վերջոյ Աբրահամը համոզուած է, որ Կիւրոնն այլեւս դարձ չունի, ուստի ընդարձակ շրջաբերականով (Թուղթ Շրջագայական) դիմում է «ամենեցուն՝ կացելոց ընդ այսմ հովուական իշխանութեամբ», վրացիներին դիտել իբրեւ հոռոմների եւ «ամենեւեմ մի հաղորդել ընդ նոսա»:

Կիւրոնին ուղղուած երեք թղթերն ու Շրջագայականը մշակութային, դաւանական ու քաղաքական պատմութեան ստուգապատում աղբիւրներ են եւ, Գիրք Թղթոցից բացի, պահպանուել են Ուխտանէսի Պատմութեան Բ բաժնում, ինչպէս նաեւ՝ առանձին ընդօրինակութիւններով: Մեր համեմատութեան մէջ նշել ենք Ուխտանէսի միայն այն ընթերցումները, որոնք օգնում են Թղթերի սկզբնական բնագրերը ճշտելուն (Ռտառանիչով): Այդ բնագրերը, բացի Թիֆլիսի 1901 թ. հրատարակութեան համար հիմք ծառայած ձեռագրից (ԺԳ դար), պահպանուել են նաեւ ՄՄ երկու ժողովածոներում, որոնք պայմանականօրէն ընդունուած է անուանել էջմիածնական Գիրք թղթոց (ՄՄ ձեռագրեր թիւ 3062 եւ 2966, նախկինում՝ Մայր Աթոռի մատենադարանի թիւ 58 եւ 100, ԺԸ եւ ԺԷ դդ.): Մեր համեմատութեան մէջ դրանց տարբերակները նշուած են ԳԹ₁ եւ ԳԹ₂ տառանիչերով, իսկ Թիֆլիսեան հրատարակութեան (Նորայր արքեպ. Պողարեանի՝ 1994 թ. Երուսաղէմի վերահրատարակութեամբ) ընթերցուածքները՝ ԳԹԹ տառանիչով (անհրաժեշտութեան դէպքում՝ բուն Թիֆլիսեան հրատարակութեան ընթերցուածքները՝ ԳԹԹ₁ տառանիչով, Գիրք Թղթոցի բոլոր ընթերցումները՝ ԳԹ):

Աղուանից եպիսկոպոսներ Մխիթարին (Ամարասի) եւ Սիմոնին (Մեծ Իրանքի) ուղղուած Աբրահամի Թուղթը Գիրք Թղթոցից բացի պահպանուել է նաեւ Ժ դարի վերջի հեղինակ Մովսէս Դասխուրանցու Պատմութիւն Աղուանից երկում: Գիրք Թղթոցում այն կրում է «Պատասխանի ի Հայոց թղթոյն Աղուանից. Վրթանիսի Քերթողի» վերտառութիւնը, իսկ Պատմութիւն Աղուանիցի համապատասխան գլուխը՝ (գիրք Բ, գլուխ ԽԹ) «Պատասխանի թղթոյն Մխիթարայ՝ Ամարասայ եպիսկոպոսի ի Հայոց, զոր հայհոյականս էր ուրեք բերեալ ի գրեանսն» գլխագիրը: Գիրք Թղթոցում Վրթանէս Քերթողի անուան առկայութիւնը պատճառ է եղել աւանդաբար համարելու, որ Թղթի բնագրի հեղինակը ոչ

Թէ նրանում իր անունը յիշատակող Աբրահամ կաթողիկոսն է, այլ Վրթանէսը: Սակայն, վերջինիս հեղինակած գրուածքների հետ բնագրի համեմատութիւնը հիմք չի տալիս պաշտպանելու նման մտայնութիւնը: Թուղթը գրուած է թուում Աբրահամի՝ կաթողիկոս օծուելուց բաւական անց, երբ դրանից առաջ կաթողիկոսական տեղապահ եղած Վրթանէսն ինչ-որ պատճառով արդէն յետ էր քաշուել կաթողիկոսարանի գործերից:

Թղթի ամբողջական բնագիրը հրատարակել է Մեսրոպ Մագիստրոսը Էջմիածնական Գիրք թղթոցի երկու ձեռագրերից Արարատ հանդէսի 1896 թ. յաւելուածում (Թիֆլիսի հրատարակութեան մէջ այն պակասներ ունի՝ միակ հիմք ձեռագրի թերիների պատճառով): Մենք աւելացրել ենք Մովսէս Դասիւրանցու Ժ-դարեան հատուածային արտագրութեան տարընթերցումները՝ է-դարեան սկզբնօրինակին հարիւր որոշ ընթերցումներ ընդգրկելով բնագիր: Պատմութիւն Աղուանից-ի *a* ձեռագրի (ՄՄ ձեռագիր թիւ 1531, 1289 թ.) ընթերցումները նշանակել ենք ՊԱ, *a*, իսկ *B* խմբի ձեռագրերի (bcfr ձեռագրեր՝ բոլորը է դարի) ընթերցումները՝ ՊԱ, *B* նշաններով (բոլոր ձեռագրերը՝ ՊԱ):

Աբրահամ Աղբաթանեցուն է վերագրում նաև Յաղագս դատաստանաց ամուսնութեան եւ քանիսնութեան ազգականաց գործը, որը վերահրատարակում է ըստ Վահան վրդ. Բաստամեանցի կազմած գիտական բնագրի: Աշխատասիրողի օգտագործած տառանիչերն են՝ *a* (ՄՄ ձեռ. թիւ 485, ԺԴ դ.), *b* (ՄՄ ձեռ. թիւ 209, ԺԷ դ.), *c* (ՄՄ ձեռ. թիւ 486, ԺԷ դ.), *d* (ՄՄ ձեռ. թիւ 2593, 1303 թ.), *e* (ՄՄ ձեռ. թիւ 778, 1635 թ.), *f* (Փարիզի Ազգային գրադարան, հայերէն ձեռ. թիւ 173, 174, 175, 177), *g* (Էջմիածնի նախկին Սինօզի ձեռագիրը):

Ձեռագրական աւանդոյթը Աբրահամ Աղբաթանեցու անունով պահպանել է նաև երկու կարճառօտ ճառ՝ Խոստովանութիւն եւ Ի սիւնհոդոսէն է:

Պարոյր Մուրադեան, Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Գիրք Թղթոց, էջ 314-318, 333-335, 339-345, 356-396:
2. Միխիթար Գօշ, Դատաստանագիրք Հայոց, իրաւաբանական հետազօտութիւնի հանդերձ ծանօթութեամբ Վ. վրդ. Բաստամեանցի, Վաղարշապատ, 1880, էջ 219-224:
3. Ուխտանէս, Բ, էջ 70-71, 74-75, 79-81, 83-87, 132-136:
4. Յ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երևան, 1959, էջ 76-81:
5. Մեսրոպ Մագիստրոս, Պատասխանի ի Հայոց թղթոյն Աղուանից (Վրթանիսի Քերթողի), «Արարատ», 1896:
6. П. М. Мурадян, К критике текста III послания католикоса Авраама,- «Լրաբեր» (հասարակական գիտութիւններ), 1968, թիւ 10, էջ 41-64:
7. ეპისტოლეთა წიგნი. სომხური ტექსტი ქართული თარგმანით, გამოკვლევითა და კომენტარებით გამოცემა ზაზა ალექსიძემ. თბ., 1968, გვ. 64-68, 84-88, 91-100, 111-123.
8. უხტანესი. ისტორია გამოყოფისა ქართველთა სომეხთაგან. სომხური ტექსტი ქართული თარგმანითა და გამოკვლევით გამოცემა ზაზა ალექსიძემ. თბ., 1975, გვ. 116-118, 122-124, 130-132, 134-140, 204-211.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՄՈՎԱԽՍԻ

1 Սրբասիրի Տեառն Մովսէսի եպիսկոպոսի յԱբրահամայ, թէպէտ եւ ոչ կամաւ՝ Հայոց Կաթողիկոսէ՝ Տերամբ ողջո՛յն:

2 Տեսի զսրբութեան ձերոյ զգիր ողջունի, որ լի էր բազում գոհութեամբ զողորմութեանցն Աստուծոյ եւ արդիւնաւոր աւրհնութեամբք զմեր տկարութենէ, նաեւ արժանաւոր ասել՝ զանբաւականութիւնս իմ, որ եւ յանձնեցաք իսկ պարգեւաբաշխին բոլորեցունց շնորհահաստոյց լինել ձեր սրբութեանդ:

3 Իսկ զսոսկալի եւ զծանր բեռանցն բառնալոյ, որում ոչ ունէի ակն, անգիտելի է ինձ, որպէ՞ս ըմբռնեցայ, եւ կամ թէ՛ զբազմութեանն կամս ի միաբանութիւն գալ. քան զի թէ ի վերուստ կարծիցի ումեք՝ զանարժանութիւնս իմ դիտելով, որ ո՛չ այսմ աստիճանի նմանութիւն ցուցանի, այլ եւ ո՛չ փոքրագունին քան զսոյնս, զոր ունէին¹, եւ եթէ ի փորձութիւն եւ յերեւոյթ ամենեցո՛ւն եդ Աստուած: 4 Այս

յոյս ո՛չ ուստեք է ինձ՝ բայց թէ յետ Աստուծոյ ողորմութեանն ի ձեր սրբութեան աղաւթս:

5 Արդ՝ աղաչեմ զձեր սրբութիւնդ ոչ դադարել աղաչանս մատուցանել առ Ամենազաւրն, զի տացէ ինձ ոյժ կարողութեան ըստ իւրն հաճոյից՝ կատարնագոյնս ցուցանել զնորայն տնտեսութիւն առ մերս երկիր, նմանաբար եւ առ աշխարհն Վրաց եւ Աղուանից, պայծառանալ ի Քրիստոս Աստուած ճշմարիտ հաւատով ի ձեռն մերոյ նուաստութեան, եւ կամիմ աւրհնիլ ի ձեր սրբութեանէդ:

6 Մի՛ դանդաղիցիս ի սուրբ Զատիկն գալ այսր, զի բազմաց լինի խնդութիւն, եւ գործք հոգեւորք առաջի կայ. մինչդեռ Տէր Սմբատ աստէն է, փութամբ որով եւ է արինակաւ նախ զա՛յդ ի գլուխ տանել՝ շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

7 Ո՛ղջ լիեր:

1 Թերեւս ուղղելի է՝ ունէի

ԹՈՒՂԹ ԱՌԱՋԻՆ ՏԵԱՌՆ ԱՔՐԱՅԱՍՈՒ ԶԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ,

ԱՌ ԿԻՐՈՆ ԿՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

1 Սրբասիրի Տեառն Կիւրոնի¹ Վրաց կաթողիկոսի, եւ այլ եպիսկոպոսաց աթոռակցաց քոց. յԱբրահամու² Հայոց կաթողիկոսէ, եւ յայլ եպիսկոպոսաց աթոռակցաց իմոց՝ Տերամբ ողջո՛յն:

2 Յառաջագոյն երանելի Հայրապետն մեր Մովսէս գրեաց առ ձեզ մեղադրութիւն յաղագս հաղորդելոյն ձեր³ ընդ այնոսիկ⁴ ընդ որս չէր⁵ պարտ. եւ ձեր գրով եւ պատգամաւորաւ յանձն էր առեալ՝ չհեռանալ ի միաբանական հաւատոյ հաղորդութենէ աշխարհիս մերոյ: 3 Այժմ գշարագոյնն եւ զծանրագոյնն եւս⁶ եհաս⁷ մեզ լսել. զի զմիաւորութիւն հաւատոյ, եւ զասպնջականութիւն զերկոցունց աշխարհացս Յուրտաւայ եկեղեցին⁸ անշարժ միջնորդութեամբ պահէր, ուստի մեր⁹ եւ խնդութիւնք¹⁰ մարմնաւորականք եւ հաղորդութիւնք հոգեւորականք կատարէին¹¹ ցնծալից ուրախութեամբ՝ աստի¹² ի Մծխիթայի¹³ ի Խաչը¹⁴ գալով, եւ այտի՝ ի Սուրբ Կաթողիկէ. այժմ զՅուրտաւայ¹⁵ եկեղեցոյն¹⁶ զեպիսկոպոսն հալածեալ է¹⁷, թէ ըն-

դէ՞ր խոստովանել¹⁸ հրամայես զհաւատ¹⁹ ուղղափառութեան²⁰, եւ զպաշտանն հայերէն՝ սրբոյ Շուշանկանն²¹ զկարգաւորեալն, որպէս²² լսեմ, թէ ի բաց փոխեալ²³:

4 Մեզ մահու չափ եւ եւս չարագոյն թուեցաւ գործդ այդ: 5 Զի թէպէտ եւ յամս Կաւատայ արքայից արքայի եղեւ խնդիր քննութեան մեր աշխարհիս եւ Հոռոմոց, որք զժողովն Քաղկեդոնի ընկալան, եւ զտումարն²⁴ Լեւոնի, մեր եւ ձեր աշխարհի²⁵ վարդապետք եւ իշխանք հեռացան ի հաղորդութենէ նոցա, եւ²⁶ միաբանութեամբ եւ գրով պահի ի միջի մերում մինչեւ ցայժմ: 6 Այժմ ոչ է պարտ սրբութեանդ ձերում աւտարութիւն ի մէջ արկանել երկոցունց աշխարհացս, եւ հեռացուցանել զսէր եւ զխնամութիւն զմարմնաւորական եւ զհաղորդութիւն հոգեւորական, զի մի՛ ոք եկեսցէ աղաւթել աստի²⁷ ի սուրբ Խաչը, եւ այդի²⁸ ի սուրբ Կաթողիկէ: 7 Զի թէ ի զինուորաց ոք լինէր պատճառ այդպիսի²⁹ պատառման եւ չար խռովութեան, սրբութեանդ³⁰ ձերում պարտ էր³¹ խնամ տանել³² եւ լինել պատ-

1 Գթթ Կիւրովնի, Գթէ Կիւրօնի փխ Կիւրօնի (Գթէ₂)
2 Գթթ յԱբրահամայ
3 Գթէ ձեզ
4 Գթէ յայնոսիկ
5 Գթէ չէ
6 Գթթ չիբ եւս (Գթէ ՈՒ)
7 Գթէ Էհաս
8 Գթէ եկեղեցոյն
9 Գթթ սէր փխ մեր (Գթէ ՈՒ)
10 Գթթ խնամութիւն փխ խնդութիւն (Գթէ ՈՒ)
11 Գթէ կատարին
12 Գթէ ուստի փխ աստի
13 Գթէ ՈՒ Մցխիթայի փխ Մծխիթայի (Գթթ Գթէ₂)
14 Գթթ Խաչն փխ Խաչը (Գթէ ՈՒ)
15 Գթէ Յուրտաւայ
16 Գթթ չիբ եկեղեցոյն Գթէ եկեղեցին փխ եկեղեցոյն (ՈՒ)

17 Գթթ չիբ է (Գթէ ՈՒ)
18 Գթէ խոստովանեալ
19 Գթէ զհաւատն
20 Գթէ ուղղափառութեամբ
21 Գթթ Շուշանկան
22 Գթթ չիբ որպէս
23 Գթէ փոխեալ եւս, Գթթ փոխեցեմ փխ փոխեալ (Գթէ₂)
24 Գթէ տումարն ՈՒ տումարն
25 Գթէ աշխարհիս
26 Գթէ չիբ եւ
27 Գթէ աղօթեցէ փխ աղաւթել աստի (Գթթ)
28 Գթթ այտի փխ այդի (Գթէ ՈՒ)
29 Գթթ այսպիսի փխ այդպիսի (Գթէ ՈՒ)
30 Գթթ սրբութեան փխ սրբութեանդ (Գթէ ՈՒ)
31 Գթէ է
32 Գթթ ունել փխ տանել (Գթէ ՈՒ)

ճառ խաղաղութեան: 8 Իսկ եթէ դուք լինիք պատճառ ակտարանալ մեզ ի միմեանց, ո՞ր բան¹ բովանդակիցէ գայդպիսի աղէտս:

9 Կամէաք² եպիսկոպոսունս առաքել³ առ սրբութիւն ձեր, եւ վարդապետս⁴, զհմուտս գրոց սրբոց, ծանուցանել ձեզ⁵ զվնասամտութիւն ժողովոյն Քաղկեդոնի⁶ եւ գտումարին Լեւոնի, եւ զաղծապիղծ⁷ կրաննս եւ զանսուրբ վարս, որ յայնմհետէ եմուտ յաշխարհ⁸, վասն որոյ սրբասէր եպիսկոպոսն⁹ հալածեալ է: 10 Բայց ապա¹⁰ առժամս պատշաճ համարեցաք նախ ի

ձեռն պատուական ազատացդ¹¹ թղթով¹² ընդունել ի ձէնջ պատասխանի. զի է ինչ, որ հաւատալի¹³ իսկ թուեցաւ մեզ. վասն¹⁴ զի ընդ ակտար թագաւորութեամբ¹⁵ արքայից արքայի ծառայից սիրոյ միաբանութիւն առնել եւ զբնական հաղորդակիցս որոշել՝ կարի իսկ դժուարին է:

11 Ո՛ղջ պահեսջիք Քրիստոսիւ Աստուծով մերով: 12 Եւ զպատասխանի թղթոյս¹⁶, եւ զողջոյն ձեր, ըստ հաճոյիցն Աստուծոյ եղիցի մեզ լսել, որ առիթն է միաւորութեան եւ խաղաղութեան:

1 ԳԹԷ² բուն
2 ԳԹԷ կամեցայ
3 ԳԹԹ արձակել փխ առաքել (ԳԹԷ ՈՒ)
4 ԳԹԷ չի՞ վարդապետս
5 ԳԹԹ չի՞ մեզ
6 ԳԹԹ Քաղկեդոնի
7 ԳԹԷ, ազգապիղծ
8 ԳԹԷ յաշխարհ եմուտ փխ եմուտ յաշխարհ
9 ԳԹԹ եպիսկոպոսս
10 ԳԹԷ, չի՞ ապա

11 ԳԹԹ ազատ արանցդ փխ ազատացդ (ԳԹԷ ՈՒ)
12 ԳԹԷ թխտով
13 ԳԹԷ չե՞ հաւատալի փխ հաւատալի
14 ԳԹԹ չի՞ վասն
15 ԳԹԷ թագաւորութեան
16 ԳԹԷ թխտոյս

ԹՈՒՂԹ ԵՐԿՐՈՐԴ ՏԵԱՈՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ԱՌ ԿԻՐԻՈՆ ԿՐԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

1 Սրբասիրի տեսուն Կիւրովնի¹ Վրաց կաթողիկոսի, յԱբրահամու² Հայոց կաթողիկոսէ՝ Տերամբ ողջոյն:

2 Զգիր ողջունաբեր ձերոյ սրբութեանդ³ ընկալաք, եւ որ գրեալ էր, թէ ընդ⁴ նորոգութիւն սրբոյ աթոռոյդ Տեսուն Գրիգորի՝ յոյժ խնդացաք, եւ զանարժանութիւնս մեր աւրհնեալ էր եւ⁵ գոհացեալ զԱստուծոյ. յաղագս այդորիկ շնորհաւատոյց⁶ Աստուած եղիցի տեսունդ:

3 Իսկ զոր ընդդէմսն⁷ եւ զհակառակս⁸ գրեցէք, ծանեաք եւ զայս: 4 Արդ՝⁹ մեք զհակառակաբանութեան պատասխանիսն թողցուք, զի չգրեմք¹⁰ ի վիճաբանութիւն, այլ փութամք ի սէր եւ ի հաւատս¹¹ Հայրենի միաւորութեանն, եւ չխնդրեմք միայն զանձին աւգուտ, այլ զբազմաց, զի ապրեսցին: 5 Այլ¹² մի պաշարեսցուք իւրիք¹³, յորմէ ոչինչ աւգտիմք, եւ մի պարծեսցուք միայն բարգաւաճեալ եւ նազելի անուամբ սրբոյ քաղաքին Երուսաղէմի, յորմէ զԱստուածային փառսն¹⁴ կողոպտեալ մերկացուցին, եւ զհաւատն առաքելական գերծեալ բարձին ի նմանէն¹⁵, եւ յոլովս եւ զանազան հերձուածս ի հաւատս եւ ի

գործս աղանդեցին ի¹⁶ նմա, զոր¹⁷ դուք այժմ եւս¹⁸ պարծելով գրեցէք առ մեզ, թէ Հարցն մերոց եւ ձերոց սուրբն Գրիգորիոս զԵրուսաղէմի հաւատն ետ, եւ մեք զնոյնն¹⁹ ունիմք:

6 Արդ՝ քաջ քննեցէք եւ տեսէք, զի դուք եւ յոլովք այլք, հանդերձ բնակչաւք սրբոյ քաղաքին, փոխեցայք յայնմանէ, այլ ոչ եթէ զնոյնն²⁰ ունիք: 7 Իսկ մեք եւ այժմ ունիմք զհաւատն Երուսաղէմի, զայն՝ որ ի Սիովնէն²¹ ելանել մարգարէացան աւրինացն յառաջագոյն մարգարէքն, եւ բանին Տեսուն՝ յԵրուսաղէմէ, ուստի եւ Փրկիչն մեր ծագեաց Քրիստոս Բանն Աստուած²² եւ շնորհաւք Հոգւոյն Սրբոյ ելից գերանելի առաքելսն, եւ նոքաւք որսաց²³ զամենայն տիեզերս ի կենդանութիւն, եւ բղխեցոյց նոքաւք զկենդանարար վտակն²⁴, եւ զաշխարհ ի մեռելութենէ²⁵ դարձոյց ի կենդանութիւն, եւ զամենայն եկեղեցիս ծաղկեցոյց յաշխարհի, եւ արար ոչ ստորին, այլ վերինն²⁶ Երուսաղէմի²⁷, եւ զժողովս հաւատացելոց տէրունական աւետարանան փութացոյց յաճելութիւն²⁸, զորս գնեաց եւ ազատեաց կենդանարար մարմնով եւ արեամբն²⁹ իւրով, եւ արար

1 ԳԹԷ Կիւրոնի
2 ԳԹԹ յԱբրահամայ
3 ԳԹԹ սրբութեան
4 ԳԹԷ չիբ ընդ
5 ԳԹԹ չիբ եւ
6 ԳԹԷ շնորհս հատոյց փխ շնորհահատոյց
7 ԳԹԹ ընդդէմս
8 ԳԹԷ հակառակս
9 ԳԹԷ Այլ
10 ԳԹԷ չի գրեմք փխ զի չգրեմք
11 ԳԹԷ հաւատ
12 ԳԹԹ Արդ փխ Այլ
13 ԳԹԷ իրօք փխ իւրիք
14 ԳԹԷ գփառսն
15 ԳԹԷ նմանէ

16 ԳԹԷ չիբ ի
17 ԳԹԷ որով փխ զոր ՈՒ Այլ որով
18 ԳԹԷ եւ փխ եւս
19 ԳԹԹ զնոյն
20 ԳԹԹ զնոյն
21 ԳԹԷ Սիովնէն ԳԹԷ Սիովնէն
22 ԳԹԷ չիբ Աստուած
23 ԳԹԷ որսացաւ
24 ԳԹԷ վտակս
25 ԳԹԷ մեռելութեան
26 ԳԹԷ վերին
27 ԳԹԷ Երուսաղէմ
28 ԳԹԷ անելութիւն
29 ԳԹԷ արեամբ

ժառանգորդս արքայութեանն վերինն¹ Երուսաղէմի:

8 Այլ ոչ եթէ զհայհոյութիւնն ունիմք զանիծեալ ժողովոյն² Քաղկեդոնի³ եւ զտումարն⁴ Լեւոնի, զոր երբեմն բերեալ⁵ սերմանեաց Յուքնաղիոս եպիսկոպոս⁶ անուանեալ յաստուածակերտ քաղաքին⁷, եւ զամենայն աստուածային եւ զառաքելական հաւատս եւ զկարգս ապականեաց եւ վեր ի վայր տապալեաց: 9 Եկն մոլորութիւնս այս, որպէս յառաջագոյն գրեցաք, եւ ի մեր աշխարհսս⁸ առ Բաբգենաւ Հայոց կաթողիկոսիւ եւ առ Գաբրիէլիւ Վրաց կաթողիկոսիւ⁹, եւ միաբանութեամբ եպիսկոպոսաց եւ ազատ որերոյ, նզովեցին եւ ի բաց հեռացան ի միաբանութենէ մեծարողացն¹⁰ զժողովն եւ զտումարն հրէական, եւ այժմ գրով պահի առ մեզ:

10 Արդ՝ աղաչեմք եւ մեք զձեր սրբութիւնդ, մի՛ ախտանալ զախտ ուրացողացն, զի մի՛ ընդ նոսա պատժիցիմք, եւ մի՛ ընդ նզովիւք հարցն եղիցուք¹¹, զի մի՛

զգեհենն¹² ժառանգիցեմք¹³, եւ մի՛ հանգոյն թշնամեաց զխրատտուսն¹⁴ վարկանիցիմք եւ յանձինս պանծայցեմք, զի մի՛ անմիտ եւ անխրատ երեւեսցուք, այլ լցեալ եւ անեցեալ¹⁵ առաքելական եւ հայրենի հաւատովն՝ փութասցուք կանխել¹⁶ եւ յառաքինութեան¹⁷ շաւիղս, զի արժանի լիցուք հասանել եւ պարգեւացն խոստացելոց ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ¹⁸:

11 Իսկ զոր¹⁹ յաղագս սրբասէր եպիսկոպոսիս Յուրտաւայ գրեցէք, քաջ հասեալ եմք ի վերայ սորա բարեպաշտութեան եւ լաւութեան²⁰, եւ աւելի վկայ ոք չէ պիտոյ:

12 Ապա եթէ²¹ է ինչ երկբայութիւն ի միտս ձեր վասն սորա, միայն բան միաւորութեան յաղագս սուրբ հաւատոյն գրեալ²² առ իս, եւ ընդ նմին պատմեալ ինձ վասն տեղոյ ի քո սահմանի, կամ ի մեր, որ յետ սրբոյ Զատկին զմիմեանս տեսանեմք. եւ եթէ²³ առ սմա ինչ թիւրութիւն գտանի, թո՛ղ զի աշխարհաւ²⁴ յանդիմանի եւ մեք անխռով պահիմք:

1 ԳԹԹ վերինն
2 ԳԹԷ ժողովն
3 ԳԹԷ Քաղկեդոնի
4 ԳԹԷ գտումարին
5 ԳԹԷ չի՛ բերեալ
6 ԳԹԷ Յուքնաղիոս ոմն փիս Յուքնաղիոս եպիսկոպոս ՈՒ Յուքնաղի ոմն եպիսկոպոս
7 ԳԹԷ ի քաղաքին
8 ԳԹԹ աշխարհս
9 ԳԹԷ չի՛ եւ առ Գաբրիէլի ... կաթողիկոսիւ
10 ԳԹԹ մեծարաւոյցն
11 ԳԹԷ եղիցիմք

12 ԳԹԷ, զգեհեանն
13 ԳԹԷ ժառանգիցուք
14 ԳԹԷ զխրատուցն փիս զխրատուսն
15 ԳԹԷ եւս փիս եւ անեցեալ
16 ԳԹԷ կանխել
17 ԳԹԷ, յառաքինութեանն
18 ԳԹԹ Քրիստոսէ Աստուծոյ փիս Յիսուսէ Քրիստոսէ
19 ԳԹԹ որ
20 ԳԹԷ լաւութեանն
21 ԳԹԹ թէ
22 ԳԹԷ գրէ փիս գրեալ
23 ԳԹԷ թէ
24 ԳԹԷ զաշխարհաւ փիս զի աշխարհաւ

**ԹՈՒՂԹ ԵՐՐՈՐԴ ՏԵԱՈՆ ԱՔՐԱՅԱՍՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ, ԱՌ
ԿԻՐԻՈՆ ԿՐԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ**

1 *Զի՞նչ առնեմք, ո՞վ պատուական եղբայր, գաստուածային պատուիրանացն զձայն¹, որ միշտ բողոքէ մեզ, թէ զգո՛յշ կացէք հաւտիրդ, որում² եղ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդն³ Տեառն, զոր փրկեաց պատուական արեամբն իւրով. եւ ասել թէ՛⁴ Համարս տալոց էք ընդ նոցա: 2 Եւ մեք ի ծուլութիւն հատեալ⁵ եմք, եւ մեղկք եւ ծոյլք լինիմք իբրեւ զքնածս, որ ոչ երբեք սթափին ի ննջելոյ. եւ ոչ զմի ինչ չփորձեմք զայն, զոր գրեալն է, թէ՛ Փորձեցէ՛ք զամենայն ինչ եւ զբարին ընկալարուք, եւ յամենայն չարի ի բաց կացե՛ք: 3 Քանզի⁶ առաջնորդի եկեղեցւոյ եւ զլուս կացելոյ զբաւականութիւն գիտութեան ի հարկէ պիտի ստանալ եւ ուսանել, եւ այնպէս ապա զԱստուած առաւել սիրել քան զեղբայր եւ քան զորդի եւ քան զայլ⁷ զամենայն սիրելիս: 4 Եւ յայնժամ ապա Աստուծոյ⁸ արժանի լինի որդեգրութեան⁹, եւ մանաւանդ զի¹⁰ վասն այսր¹¹ սիրոյ եղբայրութեանդ քում աւելի հասանէ ինձ ահն առնուլ, եւ պատուիրանին առաքելոյ ի խոնարհ մնալ. այն որ ասէ, թէ՛¹² Հաստատեցէ՛ք զմիմեանս եւ շինե-*

ցէ՛ք զիրեարս, եւ միոյն առաւելութիւն՝ զմիւսոյն պակասութիւն լցցէ՛ք:

5 *Բայց արդ՝ մի՛ հեղգասցուք զսէրն հոգեւոր, որ կայր ի մէջ երկուց¹³ ազգաց¹⁴, նորոգել. զայն, որ ի միջէ աղբերէ առեալ էր զվարդապետութիւն, որ նախ ինքեանք զկենդանութեանն¹⁵ լոյս առին, որպէս ուսուցին մարգարէքն¹⁶ եւ առաքելքն¹⁷, եւ ապա մեզ եւ ձեզ առ¹⁸ Հասարակ սերմանցին զաստուածաշտուութիւն¹⁹: 6 Նախ երանելին սուրբն Գրիգոր²⁰, եւ ապա Մաշտոց²¹, եւ զգրոց ծանալթութիւն ի պնդութիւն հաւատոյ²², եւ այժմ աղաւթեսցուք նովիմք կալ²³ մեզ, մինչեւ ի գալուստն Աստուծոյ մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի, եւ զնոյն հաւատ ճշմարտութեան ընծայել նմա:*

7 *Քանզի եւ սէր իսկ աստուածային այն է՝ եւ յայդ վրիպեալ մտաց ի բաց փախչել²⁴. արժան է՝ գոնեայ²⁵ թէ այժմ, զոր ասէքդ, թէ՛ Մեք զհայրենի²⁶ ունիմք հաւատ եւ այժմ: 8 Զի թէ զհայրենի հաւատն ունիք²⁷, մեր այլ խնդիր ի ձէնջ¹*

1 ԳԹԷ գձայնս
2 ԳԹԷ յորում
3 ԳԹԹ զժողովուրդ
4 ԳԹԷ, չի՛ք թէ
5 ԳԹԷ, հարեալ
* ՏԷ՝ * Ը ԹԷ * Ե 21:
6 ԳԹԷ զի փխ քանզի
7 ԳԹԷ չի՛ք գայլ
8 ԳԹԷ չի՛ք Աստուծոյ
9 ԳԹԷ յորդեգրութեան
10 ԳԹԷ, զիս
11 ԳԹԹ այսր (որ)
12 ԳԹԹ չի՛ք թէ

բ Հմոր. Բ Կոր. Ը 14:
13 ԳԹԷ երկոցունց փխ երկուց
14 ԳԹԹ ազգացս փխ ազգաց (ԳԹԷ ՈՒ)
15 ԳԹԷ զկենդանութեան որ նախ ինքեանք փխ որ նախ ինքեանք զկենդանութեանն
16 ԳԹԷ մարգարէք
17 ԳԹԷ, առաքելք
18 ԳԹԷ, չի՛ք առ
19 ԳԹԷ գաստուածաշտութիւնն
20 ԳԹԷ, Գրիգորս
21 ԳԹԹ Մաշտոց փխ Մաշտոց (ԳԹԷ ՈՒ)
22 ԳԹԹ հաւատոց
23 ԳԹԷ կեալ փխ կալ
24 ԳԹԷ փոխեալ փխ փախչել
25 ԳԹԹ ԳԹԷ գոնեայ
26 ԳԹԷ զհայրենի
27 ԳԹԷ ունեիք

զի՞նչ էր, եւ կամ բնաւ զաշխատութիւնս զայս զի՞ կամէաք տեսանե: 9 Այլ զի փոխեցայք յայնմանէ, վասն այնորիկ այս երրորդ թուղթ² գրեցաւ ի մէնջ առ ձեր սրբութիւնդ, քանզի գրեալ է. Յերկուց եւ յերից վկայից հաստատեսցի ամենայն քան՝:

10 Զի յառաջ, մինչ առաքելնի հարքն մեր ազգացս³ երկոցունց եւ որք յայս իշխանութիւն կարգեալ, զոր այժմ մեք ունիմքս, նոքաւք հանդերձ միաբանէին յամենայն բարիսն⁴, եւ զուզաց հեռանային յամենայն չարէ. թուի ինձ⁵, թէ տեղեակ է ձեր սրբութիւնդ այնմ: 11 Եւ յեկեղեցւոջ Սուրբ զԵրրորդութիւնն փառաւորել մեզ ուսուցին⁶ առաքեալքն, եւ որք ի նոցանէն ճշմարտութեամբ ուսանն⁷, ի նոյն Սուրբ Երրորդութիւնն մկրտիլ, եւ զՈրդի յԵրրորդութենէն մարմնացեալ՝ միացեալ, մի լեալ քարոզեցին, եւ զնոյն Աստուած՝ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն: 12 Եւ ասեն այսպէս⁸. Մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս⁹: 13 Եւ դարձեալ, Յորոց եւ Քրիստոս, որ է ի վերայ ամենեցուն Աստուած՝ արհմեալ յարտեանս¹⁰: 14 Եւ այլ¹¹ դարձեալ ի Կաթողիկէին՝ Սա՛ է Աստուած ճշմարիտ եւ կեանմ յարտեանակամ¹², եւ այլք բազումք նոյնպէս քարոզեցին առաքեալքն, որ վասն ժամուս այսչափ բաւական համարե-

ցայ: 15 Նոյնպէս եւ մարգարէքն¹³ յառաջագոյն ծանուցեալ վկայեցին: 16 Երեմիա¹⁴ ասէ¹⁵. Սա՛ է Աստուած մեր, ընդ որում ոչ համարեսցի այլ ոք. սա՛, որ ետ զիմաստութիւնն¹⁶ Յակովբայ¹⁷. յետ այսորիկ յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան չըջեցաւ. եւ այլք նոյնպէս վկայեն:

17 Իսկ եթէ վասն ճշմարիտ մարդ¹⁸ լինելոյ՝ եւ առաքեալ¹⁹ յիշատակէ. որպէս զայն, թէ՛ Մարդով եղեւ յարութիւն մեռելոց, եւ կամ թէ՛ երկրորդ՝ Մարդն՝ Տէր յերկնից²⁰. ոչ թէ՛²¹ զբնութեանց ինչ²² ճառեն առաքեալքն, այլ վասն այնր, զի իւրով մարմնովն, որ ի սրբոյ կուսէն Աստուածածնէ²³ էառ՝ մարդ է, եւ իւրով մարմնովն՝ Աստուած, եւ կամ²⁴ ոչ՝ երբեմն մարդ եւ երբեմն Աստուած²⁵ է: 18 Մի՛ լիցի. չքարոզեն այսպէս: 19 Նոյնպէս²⁶ եւ²⁷ երանելի հարքն, որ ի Նիկիայ ժողովին, այսպէս ուսուցին ըստ առաքելոցն վարդապետութեանց²⁸: 20 Հաւատա՛լ, ասեն, ի մի Աստուած, Հայր²⁹ ամենակալ, արարիչ երկնի²⁹ եւ երկրի, եւ ի մի Տէր Յիսուս

1 ԳԹԹ չիբի ձեւը
2 ԳԹԷ թուխտ
3 Մ․Կ․Բ․Ժ․Ը 16
4 ԳԹԷ բարութիւնս փիլ բարիսն
5 ԳԹԷ չիբի ինձ
6 ԳԹԷ ուսուցին մեզ փիլ մեզ ուսուցին
7 ԳԹԹ ուսան փիլ ուսանն (ԳԹԷ ՈՒ)
8 ԳԹԷ այսպէս ասեն փիլ ասեն այսպէս
9 Լ Կ․Բ․ Ը 6
10 Հ․Կ․Բ․ Թ 5
11 ԳԹԷ յարտեանս ամեն
12 ԳԹԷ չիբի այլ
13 Լ Յ․Կ․ Ե 20

11 ԳԹԷ մարգարէբ
12 ԳԹԷ երեմիայ
13 ԳԹԷ չիբի ասէ
14 ԳԹԷ սայ
15 ԳԹԷ զիմաստութիւն
16 ԳԹԷ Յակովբայ
17 Հ․Կ․Բ․ Թ 37:
18 ԳԹԷ մարդն
19 ԳԹԹ է ուրեմ որ փիլ եւ առաքեալ (ԳԹԷ ՈՒ)
20 Լ Կ․Բ․ Ժ 21
21 ԳԹԷ չիբի յերկնից
22 ԳԹԷ եթէ ԳԹԷ է թէ
23 ԳԹԷ զինչ
24 ԳԹԷ Աստուածածնէն
25 ԳԹԹ չիբի կամ
26 ԳԹԷ Աստուած եւ երբեմն մարդ փիլ մարդ եւ երբեմն Աստուած
27 ԳԹԹ Սոյնպէս փիլ Նոյնպէս
28 ԳԹԷ չիբի եւ
29 ԳԹԹ վարդապետութեան փիլ վարդապետութեանց (ԳԹԷ ՈՒ)
28 ԳԹԹ ի Հայր (ԳԹԷ ՈՒ)
29 ԳԹԷ երկնից

Քրիստոս, այլ ոչ երկուս բնութիւնս, կամ երկուս Որդիս ասացին, այլ զմի Տէր Յիսուս Քրիստոս, ծնեալ ի Հաւրէ անճառաբար, եւ զնոյն մարմնացեալ ի սրբոյ Կուսէն¹, եւ մարդացեալ, եւ² խաչեալ, եւ³ թաղեալ, եւ⁴ յարուցեալ, եւ Համբարձեալ⁵, եւ գալ⁶ ի դատել, որոյ թագաւորութեանն վախճան⁷ ո՛չ գոյ. եւ ի Սուրբ Հոգին, որով խաւսեցան առաքեալքն⁸ եւ մարգարէքն:

21 Զայս կալաւ Հաւատ եկեղեցի Աստուծոյ⁹ ի սրբոց առաքելոցն¹⁰, եւ նովիմբ¹¹ պարծի ի վերինն Երուսաղէմ ժողով լինել:

22 Իսկ ի Քաղկեդոնի¹² ժողովեալքն, Հակառակ առաքելոցն եւ սուրբ ժողովոյն Նիկիայ¹³, խոստովանեցին երկուս բնութիւնս ասելով միոյ Քրիստոսի, խաբելով զպարզամիտս, եւ փոխանակ Երրորդութեանն չորրորդութիւն քարոզեն. յաւելուն ներմարդութեանն¹⁴ բնութիւն եւ որդոց երկակաց, եւ այլ նոյնպիսիս¹⁵ բարբաջեն, որ է ի սատանայի վարդապետութենէն:

23 Նոյնպէս եւ ջնջեալ¹⁶ տուժարն Լեւոնի այսպէս պատմէ վասն Քրիստոսի Աստուծոյ. ասէ՝ Ազդէ կերպարանն¹⁷ երկոցունց բնութեանց¹⁸ ընդ ընկերին շարայարու-

թեամբ¹⁹, միովն գործել զաստուածայինսն, որ ինչ Աստուծոյ վայել է, իսկ միւսովն՝ զմարդկայինսն, որ ինչ մարդոյ արժան²⁰ է. եւ այլ ինչ բազումս²¹ այսպիսիս:

24 Արդ՝ զայս յորմէ՞ առաքելոյ²² լուան, եւ կամ ո՞ր ճշմարիտ վարդապետ պատմեաց: 25 Եւ եթէ²³ ճշմարիտ էր ասացեալն²⁴ ի ժողովոյն Քաղկեդոնի եւ ի Լեւոնի տուժարէն, ապա մինչ փառս տան, զի՞ չասեն²⁵ Փառք Հաւր եւ Որդւոյ երկուց բնութեանցն²⁶, եւ Հոգւոյն²⁷ Սրբոյ. եւ կամ ի մկրտութեանն, եթէ²⁸ Մկրտի այս անուն յանուն Հաւր եւ Որդւոյ երկուց բնութեանցն եւ Հոգւոյն Սրբոյ. եւ կամ ի ժամ պատարագին, եթէ²⁹ Հայր սուրբ, Որդւոյ երկու բնութիւնքն սուրբ, եւ Հոգիդ³⁰ Սուրբ: 26 Ապա թէ չիշխեն ասել այդպէս³¹, այլ Հաւր, եւ Որդւոյ, եւ Հոգւոյն Սրբոյ փառս տան, ապա ուրեմն³² լոկ խոտորումն յԱստուծոյ ուսուցանեն³³ ժողովն Քաղկեդոնի եւ տուժարն Լեւոնի:

27 Արդ՝³⁴ եթէ³⁵ չէք փոխեալ ի Հայրենի Հաւատոյ³⁶ որպէս բազում անգամ գրեցեր առ մեզ, ե՛կ նզովեա՛ եւ դու³⁷ զանիծեալ³⁸ ժողովն Քաղկեդոնի եւ զպիղծ տու-

1 ԳԹԷ չի՛ք ի սրբոյ Կուսէն
 2 ԳԹԷ չի՛ք եւ
 3 ԳԹԷ չի՛ք եւ
 4 ԳԹԷ չի՛ք եւ
 5 ԳԹԷ չի՛ք եւ համբարձեալ
 6 ԳԹԷ գա
 7 ԳԹԷ չի՛ք վաղնան
 8 ԳԹԹ առաքեալք
 9 ԳԹԷ չի՛ք Աստուծոյ
 10 ԳԹԹ առաքելոց
 11 ԳԹԹ սովիմբ փիս նովիմբ
 12 ԳԹԹ Քաղկեդոնի
 13 ԳԹԷ չի՛ք Նիկիայ
 14 ԳԹԹ ներմարդութեան
 15 ԳԹԷ նոյնպիսի
 16 ԳԹԹ ի ջնջեալ
 17 ԳԹԹ կերպարան
 18 ԳԹԹ բնութեանցն

19 ԳԹԷ շարաշարութեամբ
 20 ԳԹԷ վայել փիս արժան
 21 ԳԹԷ բազում ինչ փիս ինչ բազումս
 22 ԳԹԹ առաքելոց
 23 ԳԹԹ թէ
 24 ԳԹԹ ասացեալ
 25 ԳԹԷ ընդէ՞ր ոչ ասեն այսպէս փիս զի՞ չասեն
 26 ԳԹԷ բնութեանց
 27 ԳԹԹ Հոգւոյ
 28 ԳԹԷ թէ
 29 ԳԹԹ թէ
 30 ԳԹԹ Հոգի
 31 ԳԹԷ այսպէս
 32 ԳԹԷ չի՛ք ուրեմն
 33 ԳԹԷ ցուցանեն փիս ուսուցանեն
 34 ԳԹԷ Այլ փիս Արդ
 35 ԳԹԷ թէ
 36 ԳԹԷ հաւատոց
 37 ԳԹԷ չընդունեն փիս եկ նզովեա եւ դու
 38 ԳԹԷ զանիծեալ փիս զանիծեալ

մարն Լեւոնի, որպէս նախնին¹ քո՝ երանելին Գաբրիէլ կաթողիկոսն Վրաց, նզովեաց ընդ երանելի հարսն մեր հանդերձ աթոռակցաւք իւրովք, որոց անուանքն² են այսոքիկ. որ ինքն Գաբրիէլ եպիսկոպոս Մցխիթայի³ անուանի, եւ Պաղգէն⁴ եպիսկոպոս թագաւորութեան տանն, Եղիփաս եպիսկոպոս Սասուրիաղ⁵, Սամուէլ եպիսկոպոս Տումասուէլ⁶, Դաւիթ եպիսկոպոս Բողնիս⁷, Յակոբ⁸ եպիսկոպոս Արտաւի⁹, Ստեփաննոս¹⁰ եպիսկոպոս Ուսթաւի¹¹, Սահակ եպիսկոպոս Տփղեաց¹², Եղազէս¹³ եպիսկոպոս Մանգղեաց¹⁴, Ենէս եպիսկոպոս Մարուէլ¹⁵, Եւզենէս¹⁶ եպիսկոպոս Սամթաւացի, Յովսէփ¹⁷ եպիսկոպոս Աղսուէլ¹⁸, Յովան եպիսկոպոս Սառուսթիէլ¹⁹, միւս²⁰ Յովսէփ²¹ եպիսկոպոս Կամուրդայ²², Եգրաս եպիսկոպոս Կիսգաղ²³, Ենովք եպիսկոպոս Ծիղկանու²⁴, Յովսէփ²⁵ եպիսկոպոս Միգամիղ²⁶, Ղազար եպիսկոպոս Փողղ-

պի²⁷, Թէոդորոս եպիսկոպոս Փորթայ, Զաքարիաս եպիսկոպոս Կաստրացի²⁸, Փոկաս եպիսկոպոս Տսերմիղ²⁹, Իսահակ եպիսկոպոս Քունանակերտ³⁰, Թովմաս³¹ եպիսկոպոս Տարսի³², Եստգեն³³ եպիսկոպոս Քորզանայ³⁴:

28 Արդ՝ այս երանելի եպիսկոպոսունքս³⁵, որ յաշխարհէ ձերմէ էին, եւ ընդ Աղուանիւք եւ ընդ Սիւնիւք ի Հայս Հանդիպեցան յաւուրս Բաբգենայ Հայոց կաթողիկոսի, յայնմ ժողովի, յորում անիծաւ³⁶ ի նոցանէն միաբանութեամբ ժողովն Քաղկեդոնի եւ տումարն³⁷ Լեւոնի: 29 Եւ զի պայման նամակն, որ հայերէն գրով էր, յապտամբութեանն կորեաւ, եւ³⁸ թարգմանեցաւ այս յՈւրհայ³⁹ քաղաքի ի հռոմ գրոյ⁴⁰, քանզի եւ նոքա ունէին ի մէնջ. եւ ստոյգ եւ սուրբ, որպէս արժան էր, չկարացին թարգմանել, զի են որ քաջ յայտնի են եպիսկոպոսացո՛ւ եւ եպիսկոպոսարանացն անուանք, եւ են, որ կարի ի⁴¹ ծածուկ եւ ալլաձեւք: 30 Բայց թէ կամիք անուամբք եպիսկոպոսացո՞ւ⁴² եւ յաջորդաւք տեղեացո՞ւ⁴³ եւ ալլաձեւ անուամբք եպիսկոպոսարանացո՞ւ⁴⁴ որպէս գրեալդ⁴⁵ են, կա-

1 ԳԹԷ՝ նախնիքն
 2 ԳԹԷ՝ անուանք
 3 ՈՒ ՄԾԽԻՔԱՅԻ
 4 ԳԹԷ Պողգեն ՈՒ Պաղղէն
 5 ԳԹԹ Սամուրիաղ ՈՒ Ասուրիաղէ
 6 ԳԹԹ Տումասուէլ ԳԹԷ՝ Տումասուեղ ՈՒ Տիմուէլ
 7 ՈՒ Բողնիսայ
 8 ԳԹԹ Յակովբէ ԳԹԷ՝ Յակոբ
 9 ԳԹԹ Որտաւի ՈՒ Արդաւի
 10 ԳԹԹ ՈՒ Ստեփանոս
 11 ՈՒ Ուսթաւի
 12 ԳԹԷ Տփղեաց
 13 ՈՒ Եղասուէս
 14 ԳԹԷ Մանգղեաց ՈՒ Մանգղեաց
 15 ԳԹԹ Մարուէլ ԳԹԷ՝ Մարուեղ ՈՒ Մարուելի
 16 ԳԹԷ Եւզենիս
 17 ԳԹԷ Յովսէփ
 18 ԳԹԹ Աղսուէլ ՈՒ Աղսուեցի
 19 ԳԹԷ Սառուսթիէլ ՈՒ Սառուսթի
 20 ԳԹԷ՝ չի՛ միւս
 21 ԳԹԷ Յովսէփ
 22 ԳԹԹ Կամուրդոյ ՈՒ Կամուրայ
 23 ԳԹԹ Կիսգաղ
 24 ԳԹԷ Ծիղկանու
 25 ԳԹԷ Յովսէփ
 26 ԳԹԷ Միգամիլ

27 ԳԹԹ Փողղբիղ փիս Փողղպի (ԳԹԷ) (=Բողբէ)
 28 ԳԹԹ Կաստրացի ՈՒ Կաստացի
 29 ԳԹԷ Տսերմիլ ՈՒ Աստերմիւղայ
 30 ՈՒ Հնարակերտ
 31 ԳԹԷ Յովսէփ, ՈՒ Մովսէս փիս Թովմաս (ԳԹԹ)
 32 ԳԹԷ Տարսի
 33 ԳԹԷ Եստգեն ՈՒ Ըստգենեւ
 34 ԳԹԹ Քորզոնայ
 35 ԳԹԷ եպիսկոպոսունք
 36 ԳԹԹ անիծաւ
 37 ԳԹԷ՝ տումարն
 38 ԳԹԷ չի՛ բւ
 39 ԳԹԷ՝ յՈւրհայ ԳԹԷ՝ յՈւրհայ
 40 ԳԹԷ՝ գրոյ
 41 ԳԹԷ ի կարի փիս կարի ի
 42 ԳԹԹ եպիսկոպոսացն
 43 ԳԹԹ տեղեացն
 44 ԳԹԹ եպիսկոպոսացո՞ւ փիս եպիսկոպոսարանացո՞ւ
 45 ԳԹԹ գրեալ

րէք զստոյգ անուանս եպիսկոպոսարանացն գտանել, եւ զայլոցն եւս, քանզի եւ մեք զմերս այդ տարազու մարթացաք գտանել, եւ¹ մանաւանդ թէ զպայման նամակն² իսկ գտանիցէք գրով ձերով:

31 Իսկ զոր դարձեալ գրեցէքն յոլովիցս անգամ, թէ՛ Յառաջ եւ դուք զԵրուսաղէմի հաւատն ունէիք՝ եւ արդ ունիմք մեք զայն, որ յառաքելոցն քարոզեցաւ³. որպէս եւ գրեալ⁴ է, թէ՛ Աւրեմ⁵ ի Սիոնէ ելցեմ⁶, որ են⁶ առաքեալքն ժողովեալք ի վերնատունն⁷, եւ՝ Բան⁸ Տեառն յԵրուսաղէմէ, որ⁹ է Բանն Աստուած Քրիստոս: 32 Եւ զոր ի նոցանէն ուսաք՝ պահեմք եւ պահեսցուք մինչեւ յաւիտեան, եւ այլոց¹⁰ պատուիրեմք մի՛ խոտորել եւ մի՛ զաւտար ուսումն ուսանել: 33 Քանզի զայս գիտէր Պաղոս առաքեալ. գրէ, թէ՛¹¹ Ջարմանամ, զի¹² այդպէս վաղվաղակի փոփոխիմ յայլ աւետարանէ, որ¹³ ոչ գոյ այլ աւետարան: 34 Եւ ոչ միայն Երուսաղէմացիք, այլ թէ եւ¹⁴ մեք, ասէ, եւ կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ¹⁵ ձեզ՝ աւելի քան զոր առեմ¹⁶, նզովեալ լիցի¹⁷: 35 Ջնոյն եւ ես ասեմ, զոր առաքեալքն ասէին:

36 Իսկ զոր վասն եպիսկոպոսիս Յուրտաւայ գրեալ էր, թէ՛ Յորժամ չգիտէր զմեզ ուղղափառս¹⁷ չէր արժան աւրհնիլ ի մէնջ, երդմամբ հանդերձ հաստատեաց զայդ տեղի, թէ՛ Չգիտէաք, բայց զի յետ ձեռնադրութեանն ծանեաք: 37 Որ եւ մեզ կարի հաւատալի թուեցաւ, քանզի չգիտէր ոք յուղղափառաց¹⁸ ստոյգ զայդ այդպէս: 38 Վասն զի եւ¹⁹ երանելին Մովսէս, որ յառաջ քան զիս յառաքելական աթոռս²⁰ յաջորդեալ էր, չգրեաց այնպէս, թէ՛ դուք չէք ուղղափառք, այլ թէ՛ ընդ չուղղափառսն²¹ ընդէ՞ր հաղորդեցայք²²:

39 Արդ՝ ինձ այս անգամ յաղագս անիծեալ ժողովոյ Քաղկեդոնի²³ եւ պիղծ տումարին Լեւոնի²⁴ թէ՛ որպէս ընդունիք, ճշմարտութեամբ²⁵ եւ հաւաստի պատասխանի արարէք: 40 Եւ թէ՛²⁶ Աստուած կամի, եւ բան միաւորութեան գրէք²⁷, թո՛ղ ժամադրես ինձ եւ քեզ ի տեղի մի²⁸ զալ, որով²⁹ լինի խաղաղութիւն, թէ՛ Աստուած կամի³⁰:

1 ԳԹԷ չի՞ք եւ
2 ԳԹԷ նամակացն փխ նամակն
3 ԳԹԷ քարոզեցաւն
4 ԳԹԷ գրեալն
5 ԳԹԷ, Օրէն
6 Լ.՝ Բ. 3
6 ԳԹԷ ուր էին փխ որ եմ
7 ԳԹԷ, սուրբ վերնատունն
8 ԳԹԷ, բանն
9 ԳԹԷ ուր փխ որ
10 ԳԹԷ այլ, ՈՒ այլում փխ այլոց (ԳԹԹ)
11 ԳԹԹ գրէր, եթէ փխ գրէ, թէ (ԳԹԷ ՈՒ)
12 ԳԹԷ թէ փխ զի
13 Գ.՝ Գ.՝ Լ. 6
13 ԳԹԷ ուր փխ որ
14 ԳԹԷ չի՞ք եւ
15 ԳԹԷ, աւետարանիցէ
16 ԳԹԷ, առիփ
17 ՏԷ՝ Գ.՝ Գ.՝ Լ. 8

17 ԳԹԷ ուղղափառ
18 ԳԹԹ ուղղափառաց
19 ԳԹԷ չի՞ք եւ
20 ԳԹԷ յաթոռս
21 ԳԹԷ չուղղափառսդ
22 ԳԹԷ հաղորդեցարուք փխ հաղորդեցայք
23 ԳԹԷ ժողովոյն փխ ժողովոյ Քաղկեդոնի
24 ԳԹԷ չի՞ք Լեւոնի
25 ԳԹԷ նշտութեամբ փխ նշմարտութեամբ
26 ԳԹԹ եթէ փխ թէ (ԳԹԷ ՈՒ)
27 ԳԹԹ գրէք փխ գրես (ԳԹԷ ՈՒ)
28 ԳԹԹ մի տեղի փխ տեղի մի (ԳԹԷ ՈՒ)
29 ԳԹԹ եւ Աստուծով փխ որով (ԳԹԷ ՈՒ)
30 ԳԹԷ կամի Աստուած փխ Աստուած կամի

ԹՈՒՂԹ ՇՐՋԱԳԱՅԱԿԱՆ ՏԵԱՆՆ ԱՐԲԱՅԱՄՈՒ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

1 Նազելի եւ ի վեր քան զբանի բերման պարգեւի¹ զշնորհ², զոր ետ Բանն Աստուած արժանեաց մարդկութեանս՝ աթոռ ունելոյ³ երկնային զառաքելոցն⁴ ասեմ, եւ զնոցուն⁵ յաջորդացն⁶, որ եւ ես՝ Աբրահամ անարժան, կոչեցայ յաթոռ երջանիկն⁷ Գրիգորի՝ յաջորդեցելոյ մեծի առաքելոյն Թադէոսի, ամենեցուն կացելոց ընդ այսմ⁸ հովուական իշխանութեամբ՝ առաջնորդաց եկեղեցւոյ, վանից⁹ երիցանց, եւ քահանայից, եւ սարկաւազաց, եւ բնաւ ուխտի¹⁰ եկեղեցւոյ, անապատակեցաց¹¹ եւ մենացելոց, ազատաց եւ շինականաց, եւ համարէն ժողովրդականաց, արանց եւ կանանց՝ ողջունիւ եւ խաղաղութեամբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, հասցէ¹² ձեզ զարգանալ:

2 Կարգ վարուց եւ յաշտիճան իրական կոչումն սովորութիւն կալաւ պատահել թէպէտ եւ մեծանձանց յառաքինաւէտսն, այլ ոչ նուազ՝ եւ դուզնաքեանցն¹³ յառաքինութեան եւ ի զգաստալի խոհականութիւնս¹⁴, նաեւ ի բաց որոշեալսն¹⁵ ի նմանութեանցն բարուք. թէպէտ եւ¹⁶ երկուքն ի վերին տեսչութեանէն ակնարկեալք, եւ մինն՝ ի թոյլ¹⁷ տալոյ, որոց

զպատճառսն ինքն միայն գիտէ, եւ է մեզ խորշելի, մի՛ զի զդուզնաքեայցն¹⁸ ըմբռնեցաք եւ մեք՝ ակամայ ածեալք յաշտիճանս¹⁹ քահանայապետական²⁰ ի կամողացն զայս հրաժարեալք. գիտէ զամենեցուն զսիրտս²¹ ճանաչաւղն Քրիստոս, զի ոչ ստեմք: 3 Այլ զի՞նչ²² քան զբաւականն զիմ²³ զհաւատացեալսն համարէի եւ արհամարհելիք, ցանկացաւք²⁴ տիրել²⁵ վիճակաց, նաեւ սոսկալի. մի՛ վասն գերամբարձ գահակցութեան Աստուծոյ քահանայապետելոյ²⁶, եւ երկրորդ՝ յազգս սղալայեղց²⁷ եւ ըմպահակոտի²⁸ մարդկային բնութեանս գուցէ ծանրաբեռնեալ ոչ ախորժակաւքն ըստ պատուոյ եւ կամ զվարդապետութեանն ընտրութիւն առ արժանս ոչ բաւականել. եւ թէ այսք²⁹ ինձ առ նախսն³⁰, քանի՞ք եւս՝ առ³¹ արդեանս: 4 Բայց յետ բռնաձգութեանս դիմադարձեալ՝ գուցէ ի փոխաւղն զսիրտս իշխանացն հաշուէ եւ ի պատուէրն հնազանդ եղանիլն վասն Տեառն ամենայն մարդկային ստեղծուածոյ, առաւել՝ որք ի մահ Որդւոյն Աստուծոյ կենդանացեալք՝ հաղորդեցան անճառաբար՝ զՀոգւոյն Սրբոյ զորդեգրութեան շնորհն յինքեանս³² բերեալ, հարկաւորեցաք հնազանդել ընդ

1 ԳԹԹ պարգեւ փիս պարգեւի (ԳԹԷ ՈՒ)

2 ԳԹԷ գշնորհս եւ

3 ԳԹԹ ունել փիս ունելոյ (ՈՒ ունելոց)

4 ԳԹԹ գառափնական փիս գառափնոցն (ԳԹԷ ՈՒ)

5 Թեքեւս ուղղելի է՝ գնոցունց

6 ԳԹԹ յաջորդաց փիս յաջորդացն (ԳԹԷ ՈՒ)

7 ԳԹԷ երջանիկին

8 ԳԹԷ այս

9 ԳԹԷ վանաց

10 ԳԹԷ դաս փիս բնաւ ուխտի (ՈՒ դասոփ)

11 ԳԹԹ անապատականաց (ԳԹԷ ՈՒ)

12 ԳԹԹ հասցի փիս հասցէ (ԳԹԷ ՈՒ)

13 ԳԹԹ դուզնաքեայ փիս դուզնաքեանցն

14 ԳԹԷ խոհականութիւնսն

15 ԳԹԹ որոշեալ փիս որոշեալսն

16 ԳԹԷ եւ թէպէտ փիս թէպէտ եւ

17 ԳԹԷ թոյլն

18 ԳԹԹ ըստ դուզնաքեայցն փիս զի զդուզնաքեայցն

19 ԳԹԷ յաստիճանս

20 ԳԹԷ փահանայապետականս

21 ԳԹԹ սիրտս

22 ԳԹԷ ինչ փիս զինչ

23 ԳԹԷ իմ

24 ԳԹԷ ցանկացող ո՞ր փիս ցանկացաւո՞ր

25 ԳԹԷ սիրել փիս տիրել

26 ԳԹԷ փահանայապետելոց

27 ԳԹԷ սխալանաց փիս սղալայեղց

28 ԳԹԷ ապա հակամիտ փիս ըմպահակոտի

29 ԳԹԷ այսո՞րիկ փիս այսօր

30 ԳԹԷ նախնիսն փիս նախսն

31 ԳԹԷ չի՞ր առ

32 ԳԹԷ շնորհս յինքեանսն փիս շնորհն յինքեանսն

լծով կոչմանս այսորիկ, եւ ընդ հուպ ի ձեռն առնուլ զայցելութեանն բան ի պատիւ անուանն Աստուծոյ, ի պայծառութիւն վարդապետութեան նորա:

5 Զի թէպէտ եւ ձեռաց ժամանակիս մարդկան գործք են ամբարշտելն¹ առ Աստուած, եւ անիրաւ գնացքն պտուղ սպառմունս պատրաստեաց եւ զմնացեալս² դարձեալ տասանորդել, սակայն հոգաւոր վերատեսչութեանն զծուլական լքումնն, որ դասակցէ պատժապարտիցն³, ի վերջ հրամայեցաք հարկանել եւ ի բաւական⁴ լինել անաշխատաբար յառաջատիւ զՀոգւոյն Սրբոյ զվարդապետութիւնն, որ է հաստատուն միտիթարութիւն՝ ամենայն ումեք բաշխեալ⁵, մանաւանդ՝ որք պատշաճին ժամանակին⁶, թէ պարտ է համբերել նեղութեան եւ տանել առաքինութեամբ կարեաց, համբառնալ զանձն առ Աստուած մաքուր մտաւք եւ յուսալ ի նա: 6 Քանզի խորհուրդք թիւրք անշատանեն յԱստուծոյ, որպէս ուղիղքն եւ մաքուրքն անքակ պահեն:

7 Վասն զի յաճախութիւն թեթեւ նեղութեան յանհաստատ եւ ի վաղանցուկ ի կեանսն⁷ յաւիտենականն⁸ զմեծութիւն փառաց գործէ, միայն իբրեւ⁹ սպանող զնեղութիւնն մի՛ ընկալլիք, եւ զչարչարելն, կամ իբրեւ՝ զգող, կամ իբրեւ՝ զաւտարատեսուչ, որ է հերձուածող: 8 Ապա թէ իբրեւ զքրիստոնեայ՝ երանելի է այնպիսին, քանզի սովոր է մարդասէրն ի բարկութեան զողորմութիւնն յիշել եւ կե-

ցուցանել, յորժամ դառնան առ նա եւ յոգոց¹⁰ հանեն: 9 Զի որպէս¹¹ երկրագործն համբերէ տապախառն ջերմութեան աշխատանաց, վաճառականն՝ գերկայնուղեայ¹² տուայտանս, նաւաստին¹³ ընդդէմ ալեացն եւ մրրկին հնարել, խխտածէտն՝ ի բուժողական կտրումն¹⁴ խարմամբ, մինչեւ առցէ իւրաքանչիւրք¹⁵ զաւգուտն, այսպէս եւ մեք ի նեղութեանս յաղաւթիցն¹⁶ փութով նահատակեալք՝ զգթութիւն ի¹⁷ բարձանց ընկալցուք եւ զկատարելն իսկզբան¹⁸ յուսոյն:

10 Կամէաք մերով բարբառով ասել ի բարեպաշտացդ լսելիս, բայց ի հոգ¹⁹ պիտոյից շինուածոյ²⁰ եկեղեցւոյս հասարակացս Հայաստանեայցս, որ ի Դունի, արգելեալք²¹ եղեաք: 11 Փութացայ զգուշացուցանել շրջաբերական թղթովս՝ ի գայթակղութեանցն²² զարթուցանելոց²³ ի մահացան թշնամւոյն, զոր թանձրամիտքն եւ մարմնասէրքն²⁴ խխտացեալ ի նոյն ապերախտք եղեն, եւ զփրկութիւնն յՈրդւոյն Աստուծոյ, եւ վասն մարմնոյ նորա զհաշտութիւնն ընդ մեզ, եւ զմեզ ի վեր տա-

1 ԳԹԹ՝ ամպարշտելն
2 ԳԹԷ՝ զմնացեալսս
3 ԳԹԷ՝ դասակից է պատժապարտեացն փխ դասակցէ պատժապարտիցն
4 ԳԹԷ՝ բաւականն
5 ԳԹԷ՝ բաշխել
6 ԳԹԷ՝ ժամանակիս
7 ԳԹԹ՝ կեանսս
8 ԳԹԹ՝ յաւիտենական
9 ԳԹԷ՝ զի իբրեւ

10 ԳԹԹ՝ յոգոց փխ յոգոց
11 ԳԹԷ՝ չի՞ որպէս
12 ԳԹԷ՝ գերկայնուղեաց ԳԹԷ՝ գերկայնուղեայն
13 ԳԹԷ՝ նաւանստին
14 ԳԹԷ՝ բուժողէն զկտրումն փխ բուժողական կտրումն
15 ԳԹԹ՝ իւր (ձեռագրի մաշուած հատուած)
16 ԳԹԹ՝ նեղու ... թիցն (մաշուած հատուած)
17 ԳԹԹ՝ զ... ի (մաշուած հատուած)
18 ԳԹԹ՝ զկատարել... զբան (մաշուած հատուած): Գուցէ կարելի է կարդալ նաեւ իսկ զբան փխ իսկզբան
19 ԳԹԹ՝ հարկէ փխ հոգ (ՈՒ հոգ ի փխ ի հոգ)
20 ԳԹԹ՝ շինածոյ
21 ԳԹԹ՝ արգելեալ փխ արգելեալք (ԳԹԷ՝ ՈՒ)
22 ԳԹԹ՝ գայթագողութեանցն (վերջին հրատարակութիւնում վրիպակով՝ գաղթագողութեանցն) փխ գայթակղութեանցն (ԳԹԷ՝ ՈՒ)
23 ԳԹԹ՝ զարթուցելոց փխ զարթուցանելոց (ԳԹԷ՝ ՈՒ)
24 ԳԹԹ՝ մարմնասէրք (ԳԹԷ՝ ՈՒ)

նուժն ի բարձրութիւնս¹ երկնից երկնի ու-
րանան: 12 Զի յայսպիսեացն² խորշեաջիք
զընտանիսն հաւատոյ ճանաչելով՝ ոչ աւ-
տար ինչ ձայնիւ նորաձեւեալ յայլայլակն,
որպէս գաւձտողսն³ լեզուաւ⁴ է⁵, մեր վար-
դապետութիւնս: 13 Այլ յառաջագոյն ա-
ւետարանեալքն յիսկզբանէ ականատե-
սացն եւ սպասաւորաց բանին, եւ ի մար-
գարէիցն գուշակեալք, զոր մատուցին մեզ
Յ եւ ԺԸ հարքն՝ ժողովեալք ի Նիկիայ⁶,
նովիմբ քաջ նահատակքն⁷ ՃԾ-քն ի Կոս-
տանդնուպաւլիս, կործանեցին զհոգե-
մարտն, եւ Մ-իւրքն յԵփեսոս՝ զամպա-
րիշտն Նեստոր: 14 Եւ իւրեանց խոստովա-
նութիւն առաջնորդ կալեալ⁸ ի կեանսն յա-
ւիտենից⁹, զոր եւ ես կարճառատագոյնս
եւ մեկնողաւրէն յիշատակեցից. եւ է այս:

15 Հաւատամք¹⁰ ի մի Աստուած՝ Հայր
ամենակալ, արարիչ երկնի եւ երկրի, երե-
ւելեաց եւ աներեւելեաց¹¹: 16 Եւ ի մի Տէր
Յիսուս Քրիստոս, յՈրդի Աստուծոյ, ծնեալ
յԱստուծոյ Հաւրէ, միածին, այլ ոչ արա-
րեալ կամ հաստատեալ¹², համագոյ Հաւր,
այլ ոչ յոչնչէ¹³. արարիչ ամենայնի երեւե-
լեաց եւ աներեւելեաց¹⁴: 17 Եւ ի Սուրբ
Հոգին, արարիչ եւ կենդանացուցանող եւ
նորոգիչ, ո՛չ ծնունդ, այլ՝ ելումն: 18 Աս-
տուած, ասի, Հայր, Աստուած Որդի, Աս-
տուած Սուրբ Հոգի, ո՛չ երեք աստուածք,
այլ մի աստուածութեամբ, կամաւք եւ

զաւրութեամբ փառաբանի Սուրբ Երրոր-
դութիւնն: 19 Զոր իմանամ միաւորու-
թեամբ բաժանեալ, եւ բաժանմամբ¹⁵ միա-
ւորեալ. ո՛չ սկիզբն եւ ո՛չ դադարումն կամ
երիցութիւն, քանզի որպէս փառք առանց
լուսոյ ոչ իմանի, եւ ոչ է¹⁶ նկարագիր¹⁷
կամ պատկեր առանց էութեան, եւ զաւ-
րութիւն առանց զաւրութեան, կամ իմաս-
տուն առանց իմաստութեան, այսպէս եւ
ո՛չ¹⁸ Հայր առանց Որդւոյ: 20 Եւ որպէս ի
լուսոյ երեսաց նորա միշտ լոյս ծագէ տե-
սաւղացն, եւ ոչ ոք զատանի առանձնա-
բար, կամ մինն յառաջ երեւի, այսպէս եւ
ո՛չ¹⁹ Հայր եւ Որդի՝ առանց Սրբոյ Հոգ-
ւոյն: 21 Իսկ ի վերջին աւուրս²⁰, Որդի ի-
ջեալ մարմնացաւ եւ մարդացաւ. ծնաւ
անճառաբար ի սուրբ կուսէն Աստուածած-
նէ մարմնով, հոգւով բանականաւ, շնչով,
մտաւք, եւ զինչ ի մարդ յարունակ աս-
տուածային ճոխութեամբ: 22 Եւ է մի Տէր
Յիսուս Քրիստոս, անմեկնելի ի Հաւրէ, եւ
բովանդակ յերկրի, խաչեալ, թաղեալ եւ
յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ յերկինս՝
նստաւ ընդ աջմէ Հաւր, զայ նովիմբ
մարմնով դատել զկենդանիս եւ զմեռեալս,
որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան²¹:
23 Իսկ որք ասենն, եթէ էր՝ յորժամ ոչ էր,
եւ նախ քան զլինելն չէր, եւ կամ զայս
զՍրբոյ Հոգւոյն, կամ փոփոխելի, եւ կամ
այլայլելի, եւ կամ յայլմէ էութենէ եւ կամ
ի գոյութենէ, զայնպիսիսն նգովէ կաթու-
ղիկէ եւ առաքելական եկեղեցի:

24 Այս է խոստումն նախասացեալ
ցուցակաւրէն²² երանութեանցն պայծա-

1 ԳԹԷ բարձրութիւնս
2 ԳԹԹ յայսպիսեացս (ԳԹԷ ՈՒ)
3 ԳԹԹ զոցտողսն փիս գաւձտողսն (ԳԹԷ ՈՒ)
4 ԳԹԷ լեզուով
5 ԳԹԹ չիբ է ԳԹԷ₁ էր փիս է (ԳԹԷ₂ ՈՒ)
6 ԳԹԹ ԳԹԷ₂ Նիկիա (ԳԹԷ₁ ՈՒ)
7 ԳԹԷ₁ նահատակեալք ԳԹԷ₂ նահատակք (ՈՒ նա-
հատակօքն)
8 ԳԹԹ կալան փիս կալեալ (ԳԹԷ ՈՒ)
9 ԳԹԷ յաւիտենականս փիս յաւիտենից
10 ԳԹԹ Հաւատամք (ԳԹԷ ՈՒ)
11 ԳԹԷ աներեւութից փիս աներեւելեաց
12 ԳԹԷ հաստեալ
13 ԳԹԹ յոչնչէ
14 ԳԹԷ աներեւութից փիս աներեւելեաց

15 ԳԹԷ բաժանման
16 ԳԹԹ չիբ է (ԳԹԷ ՈՒ)
17 ԳԹԷ չիբ նկարագիր
18 ԳԹԷ չիբ ոչ
19 ԳԹԷ₂ չիբ ոչ ԳԹԷ₁ չիբ եւ ոչ
20 ԳԹԷ աւուրսս
21 ԳԹԷ վախճան ոչ գոյ փիս ոչ գոյ վախճան (ԳԹԷ₂
վաղնան)
22 ԳԹԷ ցուցակութեան փիս ցուցակաւրէն

ուռլթիւն, որ առ թովմաս ճայնն, եւ նո-
վիմբ¹ մկրտեալք պահեցաք ի մեզ, եւ աւե-
լի հաստատեալք պահեցուք. յորս գտեալ
Տեառն մերոյ եւ Աստուծոյ, պատուականս
համարի յաջակողմեան² դասուն: 25 Եւ
մի՛ երբեք ըստ հաւատոյն³ մասին ըստ-
գտցուք⁴, այլ եւ ընդ ըստգտեալսն ամենե-
ւիմբ⁵ ո՛չ հաղորդել, որ կամակարն զյաւի-
տենական կորուստն հասարակ ժառանգե-
ցուցանէ: 26 Բայց եղիցին կամք ձեր ըստ
մարգարէին բանից՝ Ատել ձեզ գծողովս չա-
րաց⁶ եւ ընդ ամբարշտեալսն⁷ մի՛ նստել՞,
եւ զՏեառն⁸ ատելիսն ձեզ ի⁹ կատարեալ
թշնամիս դնել, որք են յաշխարհիս մերում
բազում չարք, բայց առաւել՝ երկաբ-
նակքդ:

27 Քանզի յաւուրս Մարկիանոսի¹⁰
Հոռոմոց թագաւորի, որ էր¹¹ գրեթէ ի ժա-
մանակս Կաւատայ Պարսից արքայի¹², եւ
կամ թէ փոքր ինչ¹³ յառաջ, ժողովեալք ի
Քաղկեդոն¹⁴ ի ճշմարտութենէն վրիպե-
ցան¹⁵. զի եւ զնոյն ինքն զթագաւորն, ա-
սեն, չար¹⁶ կամացն Նեստորի միաբանեալ,
եւ ժողովեալքն զլիաւորք համախոհակք¹⁷
նմին, արձան¹⁸ կացուցեալ իւրեանց չարա-

փառութեան¹⁹ զթուղթն Լեւոնի՝ հաստա-
տեցին²⁰ զյառաջ եղեալ աղանդն Նեստորի,
եւ կամ զեւս վերնագունին²¹ զՍամուս-
տացւոյն²², զի թէպէտ եւ ճայնքն որոշին,
այլ դէմքն²³ զմիոյ բերեն²⁴: 28 Քանզի
չյիշատակելին Նեստոր անդուռն բերանով
յանդգնի ասել երկուս որդիս, մի՛ զՈրդին
Աստուծոյ, եւ միւս՝ զի՛ Մարիամայ
ծնեալն²⁵, մարդ սոսկ, եւ տաճար բանին:
29 Եւ զաւրանալ զնա ի Հոգւոյն Սրբոյ
ուսուցանէ, քանզի մարդածին, եւ ոչ Աս-
տուածածին ասէ զսուրբ Կոյսն. եւ մարդ
մեռեալ ասէ, եւ ոչ խոստովանի²⁶ զԱս-
տուածն Բան՝ իւրով մարմնովն կրեալ զա-
մենայն²⁷, վասն որոյ նզովեցաւ: 30 Իսկ ի
Քաղկեդովնի ժողովեալքն ոչ իշխեցեալ²⁸
զնոյն ասել՝ երկուս բնութիւնս աւրինադ-
րեցին: 31 Որք ի սուրբ վարդապետացն
երկաբնակք անուանեցան եւ հայհոյողք,
քանզի եւ որոշեն իսկ զկիրան միոյ²⁹ բնու-
թեան՝ զքաղցենալն, զծարաւելն, զվաստա-
կելն յուղեգնացութենէն, զլալն ի գթոյն³⁰:
32 Յանդգնին եւ զանգիտութիւնն³¹ ասել
զխաչն եւ զամենայն տկարականսն, իսկ
զնշանագործութիւնսն, եւ զաստուածա-
յինսն³² եւ զհրաշափառսն ի բժշկութիւնս³³
եւ զայլսն³⁴ միւսում բնութեանն՝ իբրեւ

1 Գթթ սովիմբ փիս նովիմբ
2 Գթէ յաջակողմանն փիս յաջակողմեան
3 Գթէ հաւատին
4 Գթթ մեղիցում փիս ըստգտցում
5 Գթէ ամենեւին փիս ամենեւիմբ
6 Գթէ₂ չարեաց Գթէ, գծողովուրդս փիս գծողովս չարաց
7 Գթթ ամպարշտեալսն
* Տէ՛ * Ս * Ե * Ի * Ե * 5 :
8 Գթէ զՏէրն փիս զՏեառն
9 Գթթ չիբ ի
10 Գթէ Մարկիանոսի
11 Գթթ չիբ էր (Գթէ ՈՒ)
12 Գթէ արբայի Պարսից փիս Պարսից արբայի
13 Գթէ մի փիս ինչ
14 Գթէ Քաղկեդոնի
15 Գթթ վրիպեցին փիս վրիպեցան (Գթէ ՈՒ)
16 Գթթ ամենաչար փիս ասեն չար (Գթէ ՈՒ)
17 Գթէ համախորհրդակք փիս համախոհակք (ՈՒ համախոհիք)
18 Գթէ յարձան

19 Գթէ չարափառութեանն
20 Գթթ հաստատեաց փիս հաստատեցին (Գթէ ՈՒ)
21 Գթթ վերագունին (Գթէ ՈՒ)
22 Գթէ զՍամոստացւոյն
23 Գթթ միտն փիս այլ դէմքն (Գթէ ՈՒ)
24 Գթէ բերին փիս բերեն (Գթթ ՈՒ)
25 Գթէ ծնեալ
26 Գթէ խոստովանէ
27 Գթէ զամենայնն
28 Գթթ իշխեցեալ փիս իշխեցեալ (Գթէ ՈՒ)
29 Գթթ միում փիս միոյ (ՈՒ մերոյ)
30 Գթէ գթոցն փիս գթոյն
31 Գթթ անգիտութիւն
32 Գթթ զաստուածային
33 Գթթ բժշկութիւն
34 Գթ յայլսն փիս զայլսն (վերականգնում ըստ Ուխտանէսի)

Աստուծոյ¹ պարզագուռնի եւ քաջ մեկուսացելոյ ի մարմնականացն: 33 Եւ այսպէս երկուս ուսուցանեն, զմինն՝ մարդ եւ ընդ կարեաւք անկեալ, եւ զմիւսն՝ ի վեր քան զկարիս, զմինն՝ բնակութիւն, իսկ զմիւսն՝ բնակիչ, զմինն՝ չարչարելի, եւ զմիւսն՝ անչարչարելի, թէպէտ եւ դէմ մի համբաւեն: 34 Ապա յիրաւի նզովեցան յուղղահաւատից եւ ի վարդապետաց աշխարհիս:

35 Քանզի առաքելքն Փրկչին մերոյ մի Տէր քարոզեցին զՅիսուս Քրիստոս, եւ զնոյն ի խաչ ելեալ: 36 Պաղոս յայտնագոյն աղաղակէ, թէ՛ զՏէրն փառաց ի խաչ հանին՝, եւ՛ Որդին Աստուծոյ զմահ նաշակեաց. *ասէ՛ Մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ՝ մահուամբ Որդւոյ Նորա՞. եւ թէ՛ Քրիստոս վասն մեր մեռաւ. եւ զնոյն ասէ՛ Ի վերայ ամենեցուն Աստուած արինեալ յարիտեանս՞:* 37 Եւ այսպէս զԱստուածն Բան իւր մարմնով եւ անձամբ զամենայն մարդկայինսն կրեալ առանց մեղաց ուսուցանեն² մեզ. եւ հրաման ետուն՝ որք այսու վարդապետութեամբ ոչ զան, զնոսա մի՛ ընդունել ի տունս եւ մի՛ ողջոյն ասել, զի մի՛ նոցա մեղացն կցորդիցիք:

38 Արդ՝ ըստ առաքելոցն եւ ըստ³ երանելի մեր վարդապետացն հրամանի՝ փախիցուք ի նզովեցելոցն, եւ ի նոցունց դժոխաժառանգեցուցանող փսխմանցն⁴, զանբիծն⁵ հաւատսն զառեալ ի մեզ պահելով: 39 Քանզի եւ դեռ որպէս զքաղցկեղ ճարակի խմոր հերձուածոյն, մինչ զի եւ⁶

զրեթէ ի սահմանակիցս⁷ եւ միով վարդապետութեամբ լուսաւորելով⁸ ժամանեաց. զՎրաց ասեմ եւ զԱղուանից, որք զժահահոտ ուսումն⁹ նախասացելոցս¹⁰ մեծարանաւք ընկալեալ՝ յինքեանս հաստատեցին, զաստուածպաշտութեան լոկ զկերպարանս ցուցանելով պարզամտաց: 40 Եւ որք սովորութիւն ունին զմիաբանելն ընդ նոսա եւ ի զաւրութենէն ինքեանց մնան¹¹ եւ զնոսա հեռացուցանեն: 41 Վասն այսր հարկաւոր համարեցան¹² գրել յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթուղիկոսութեան՝ յԱղուանս. իսկ մեք՝ ի Վիրս, առ Կիրիոն¹³, որ կաթուղիկոսն անուանի, եւ առ¹⁴ նորին աթոռակիցսն¹⁵. քանզի զեպիսկոպոսն եկեղեցւոյն Յուրտաւայ, որ զմիջնորդութիւն ունէր երկուց¹⁶ աշխարհացս, յաղագս ուղղափառ հաւատոյ հալածական արար, եւ զպաշտաւնն հայերէն, զոր սրբոյն Շուշանկանն¹⁷ էր կարգաւորեալ, հակառակ մեզ¹⁸ խրոխտացեալ ի բաց փոխեաց: 42 Յաղագս որոյ գրեցաք՝ դառնալ ի ճշմարիտ հաւատն եւ կալ հաստատուն յաւանդութեան առաքելոցն, որ տուաւ ի ձեռն մեր վարդապետացն, եւ նոցա ընդդիմացեալ երկիցս անգամ զհակառակսն¹⁹ գրեցին առ մեզ: 43 Քանզի նոյնդ իսկ սուտանուն՝

1 ԳԹԹ ԹԷ փիս Աստուծոյ (ԳԹԷ ՈՒ)
* Ը ԿՊԲ Բ 8
բ ԸՊՊՄ Ե 10
գ ԸՊՊՄ Թ 5
2 ԳԹԹ ուսուցիցն փիս ուսուցանեն (ԳԹԷ ՈՒ)
3 ԳԹԷ2 գտուրք փիս ըստ ԳԹԹ չիբ ըստ
4 ԳԹԹ փսխմանց (ԳԹԷ ՈՒ)
5 ԳԹԹ զամբիծն, ԳԹԷ զամբիծ փիս զանբիծն (վերականգնում ըստ Ուխտանէսի)
6 ԳԹԷ չիբ եւ

7 ԳԹԷ մահաճնունդ փիս սահմանակիցս (ԳԹԹ) (թէպէտ Ուխտանէսի մօտ՝ մահ մանավանդ)
8 ԳԹԹ լուսաւորեալս փիս լուսաւորելով (ԳԹԷ ՈՒ)
9 ԳԹԹ սերմն փիս ուսումն (ԳԹԷ ՈՒ)
10 ԳԹԹ նախասացելոցն
11 ԳԹԷ նման փիս մնան
12 ԳԹԷ համարեցայ
13 ԳԹԹ Կիրիոն
14 ԳԹԷ չիբ առ
15 ԳԹԹ աթոռակիցս փիս աթոռակիցսն (ԳԹԷ ՈՒ)
16 ԳԹԷ երկուցունց փիս երկուց
17 ԳԹԹ սրբոյ Շուշանկան փիս սրբոյն Շուշանկանն (ԳԹԷ ՈՒ)
18 ԳԹԷ հասարակ մեզ հակառակ փիս հակառակ մեզ
19 ԳԹԹ զհակառակն փիս զհակառակսն (ՈՒ զհակառակս)

կացեալ գլուխ եկեղեցւոյն՝ Վրաց, ի նմին ժամանակս Խոսրովու արքայի՝ որդւոյ Որհմզդի², ընկալեալ ի Նեստորի ուսմանէն եպիսկոպոս զոմն, եւ ի նոյն հայհոյող վարդապետութիւնն³ զինքն տուեալ, յառաջ ունելով զի՛ Քաղկեդոնի⁴ ախտն. ապա թէպէտ եւ զայրն մերժեալ՝ զմրուր դեղոցն⁵ պահեցին: 44 եւ ուժգնագոյն եւս զամբարշտութիւնս⁶ իւրեանց յերրորդ գրին ընկալաք. եւ պարծանաւք խորխտացեալ⁷ ոչ թողուլ զաղանդն՝ այլ եւ զմեզ զկնի իւրեանց թիւրեալ խորխորատն ուսուցանել համարձակեցաւ:

45 Վասն որոյ եւ գյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հոռոմին հատին, եւ կացցէ մինչեւ ցբուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մեք զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենեւիմք մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղաւթս, մի՛⁸ ի կերակուրս, մի՛⁹ յըմպելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ ի դայեկութիւն, մի՛ աղաւթիւք երթալով¹⁰ ի Խաչն, որ ի¹¹ Մցխիթայի տեղեալքն¹² համբաւի, մի՛ ի Մանգղեաց խաչն, եւ մի՛ ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել, այլ եւ ամուսնութեամբ ամենեւիմք հեռանալ, բայց միայն գնել ինչ, եւ կամ գնոյ տալ որպէս Հրէից: 46 Նոյն

հրաման եւ վասն Աղուանին անշարժ կացցէ, զի պատկառեալ դարձցին ի թիւր ճանապարհէն:

47 Իսկ մեք ոչ լուեմք ի խրատելոյ, որչափ եւ եմք ի կենցաղիս¹³, եւ որք զկնիսն՝ աղաչեմք նախանձաւորս մեզ լինել՝ ածել զնոսա յուղղութիւն: 48 Իսկ յարդեան ժամանակիս, որք հաղորդեցան ընդ յառաջ որոշեալսն, եւ կամ ընդ որս ի մէնջ, կամաւ թէ ակամայ, եւ կամ տգիտութեամբ, մարգարէին ճայնակից լիցի այնպիսին աղաւթիւք¹⁴, թէ՛ Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան¹⁵ մի՛ յիշեր՞, եւ¹⁶ այլ զգուշացի ըստ կանոնաւոր հրամանիդ մերոյ: 49 Ապա թէ անխտրաբար վարեսցի ոք հաղորդելով ընդ նոսա, եւ կամակից լինիցի¹⁷ պղծութեան հաւատոց նոցա, այնպիսիքն նզովեսցին հոգւով, նզովեսցին մարմնով, եւ ամենայն կենցաղով իւրեանց, եւ որոշեսցին ի սրբոյ եկեղեցւոյ Աստուծոյ, եւ եղիցին խաւարաբնակք եւ յաւիտենից հրոյն կերակուր: 50 Իսկ եթէ ոք ամբարտաւանեսցէ՝ արհամարհելով զնզովիւքս¹⁸, գիտասցէ այնպիսին, զի յետ հոգեւոր պատուհասին¹⁹, եւ զմարմնաւոր պատուհասն²⁰ պատրաստ եմք²¹ ի վերայ ածել:

1 ԳԹԷ սուրբ եկեղեցւոյն
 2 ԳԹԹ Որհմագղի փխ Որհմզդի (ՈԻ Որմզդի)
 3 ԳԹԹ վարդապետութիւն (ԳԹԷ ՈԻ)
 4 ԳԹԹ ԳՔաղկեդոնի փխ Գ՛ի Քաղկեդոնի
 5 ԳԹԷ մեղացն փխ դեղոցն
 6 ԳԹԹ զամպարշտութիւնս
 7 ԳԹԷ խորխտեալ փխ խորխտացեալ
 8 ԳԹԹ եւ մի
 9 ԳԹԹ եւ մի
 10 ԳԹԷ երթալով աղաւթիւք եւ փխ աղաւթիւք երթալով
 11 ԳԹԷ չի՛ր ի
 12 ԳԹԹ տեղաւքն

13 ԳԹԷ կենցաղումս
 14 ԳԹԷ աղաւթիւք այնպիսին փխ այնպիսին աղաւթիւք
 15 ԳԹԷ զանգիտութեան իմոյ
 * Ս ... Գ. Ի Գ. 7
 16 ԳԹԷ չի՛ր եւ
 17 ԳԹԷ լինիցին
 18 ԳԹԷ զնզովիւքն
 19 ԳԹԹ պատուհասի
 20 ԳԹԹ զմարմնաւորս փխ զմարմնաւոր պատուհասն
 21 ԳԹԷ չի՛ր պատրաստ եմք

ՊԱՏԱՍԽԱՆԻ Ի ԶԱՅՈՑ¹ ԹՂԹՈՅՆ ՄԵԻԹԱՐԱՅ ԱՄԱՐԱՍԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ²

1 Պատուական գտելոցդ եւ վեհ հռչակելոցդ, որք զտկարութիւն բերեալ յաւժարութեամբ յառարկութեան եւ զանտեղիս բացասողք, նաեւ նմանք թուեցեալք³, ի դէպ է ինձ ասել⁴ կամաւք հաւասար ընդ հարց⁵ ջանի Աթենականացն, որ Լիզաւնից⁶ լսողս եւ պատմիչս յարդեան ժամանակիս՝ ի մէջ հիւսիսակողմանդ⁷ տաղաւարողք, զբոլոր լսողս տարաբերմամբ, ի մանաւանդն⁸ սակս ջամբոցել⁹ զ'ի խորհրդոցդ¹⁰ սեւեռումն¹¹ Տէր Մխիթար Ամարասու¹² եպիսկոպոս եւ Սիմոն Մեծիրանց¹³ եպիսկոպոս¹⁴ եւ թէ այլ եպիսկոպոսունք նոցին¹⁵ Համախոհակք, եւ ուխտ¹⁶ սրբոյ եկեղեցւոյ, եւ ազատ մարդիկ, կամ այլք ի ժողովրդականաց միաբանակք¹⁷:

2 յԱբրահամայ Հայոց կաթողիկոսէ¹⁸ եւ¹⁹ ի Թէոդորոսէ Մարդպետական եպիսկոպոսէ, ի Ստեփանոսէ Բագրեւանդայ ե-

պիսկոպոսէ, ի Դաւթէ²⁰ Սիւնեաց եպիսկոպոսէ, ի Մովսիսէ Խոռխոռունեաց եպիսկոպոսէ, ի Քրիստափորէ Ապահունեաց եպիսկոպոսէ, ի Մատթէոսէ Ամատունեաց եպիսկոպոսէ²¹, եւ յայլ եպիսկոպոսաց եւ յուխտէ սրբոյ²² եկեղեցւոյ, եւ յազատ մարդկանէ, եւ ի ժողովրդականաց²³, ըզձամբք²⁴ աղաւթալիւր եւ ուժգին խնդրուածաւք²⁵ սրտի զտէրունեան հոգեխառն ողջոյն համարձակապէս մեզ առ ձեզ ասել:

3 Քանզի գրով մեզ ի ձէնջ²⁶ պատմեցէք զձեր որպիսութիւնն²⁷ եւ զկամս, եւ թէ անհակառակք արդեաւք զստեղծեալ հակառակութիւնն, զոր ընկալաք ի նախարարէ միոյ Սիւնոյ²⁸ Գրիգոր անուն: 4 Քանզի եւ զարբանեկէն ձերոյ ասաց ի կէս ուղւոյ²⁹ հրաժարեալ. բայց մեզ բարեպաշտութիւն խնդրել³⁰ գուշակեցաւ, եւ կամաց շարժութիւն ի հաստատուն եւ ի կատարեալ խոստովանութիւն երանելի նախահարցն հասարակաց ի Քրիստոս³¹: 5 Թէպէտ եւ զլուրս ի նմանէ³² զանազանեալս տեղեկացաք, եւ³³ թէ ըստ կարծեացս, զոր առաքիցէ Աստուած վայելուչ խոստովանութիւնք, թէ յաշակերտաց բանին, բայց եւ յաւտարաց եղեալք: 6 Ու՞մ

1 ՊԱ. աստ չի՞ ի Հայոց
2 ԳԹ. Աղուանից Վրթանիսի Քերթովի փիլ Մխիթարայ ... եպիսկոպոսի ՊԱ. եպիսկոպոսի, գոր հայիոյականս էր ուրեք բերեալ ի գրեանսն
3 ԳԹ. բուեցեալ
4 ԳԹ. իմանալ փիլ ասել
5 ԳԹ. ընթ արց փիլ ընդ հարց
6 ՊԱ. Բ ոգոյն ի փիլ Լիզաւնից (ՊԱ.) ԳԹ. Աթենականացն մորագունից փիլ Աթենականացն, որ Լիզաւնից (բերես յուն. Լիկեյոն-Լիցեյ բառն է)
7 ՊԱ. հիւսիսակողման, ԳԹ. հիւսիսայ կողմանդ, ՊԱ. հիւսիսական կողմանցս (ԳԹ. է)
8 ԳԹ. վրիպակ՝ մանաւանդ
9 ԳԹ. ջամբոցեալ ԳԹ. վրիպակ՝ ջարբոցել
10 ՊԱ. Բ զխորհրդոյդ, ՊԱ. Բ զխորհրդոյն
11 ՊԱ. սեւեռութիւն փիլ սեւեռումն
12 ՊԱ. Ամարասա, ԳԹ. Ամարասոյ
13 ԳԹ. Մեծ Իւրանց, ԳԹ. Մեծ Կողմանց փիլ Մեծիրանց (ՊԱ.)
14 ԳԹ. չի՞ եպիսկոպոս
15 ԳԹ. նման
16 ՊԱ. չի՞ եւ ուխտ
17 ՊԱ. Աղուանից փիլ միաբանակք
18 ԳԹ. կաթողիկոսէ
19 ՊԱ. չի՞ եւ

20 ՊԱ. Դաւթայ
21 ՊԱ. չի՞ ի Մատթէոսէ ... եպիսկոպոսէ
22 ՊԱ. չի՞ սրբոյ
23 ՊԱ. չի՞ եւ ի ժողովրդականաց
24 ՊԱ. ըզձամբք ԳԹ. ըզձամբք փիլ ըզձամբք (վեր.)
25 ՊԱ. խնդրուածովք
26 ՊԱ. գրելով ձեր առ մեզ փիլ գրով մեզ ի ձէնջ
27 ՊԱ. որպէսպաշտութիւնն փիլ որպիսութիւնն
28 ՊԱ. Սիւնեոյ, ԳԹ. Սիւնեոյ փիլ Սիւնոյ (ԳԹ. է)
29 ՊԱ. կեր տղոյ փիլ կէս ուղւոյ
30 ԳԹ. բարեբարութիւն լեալ փիլ բարեպաշտութիւն խնդրել (ԳԹ. ՊԱ.)
31 ՊԱ. չի՞ հասարակաց ի Քրիստոս
32 ԳԹ. նման փիլ նմանէ
33 Այս բառից մինչեւ նախադասութիւն 15-ի բարեմտաց բառը Մ. Դասխարանցին չունի:

ոչ սրտալիր ուրախութիւն թուիցի. քանզի նա աւելագոյնս անդր եւս անկումն խաւարային իշխանին է, եւ աշխարհի յաղթութեանն զքաջալերութիւնս ի Փրկողէն ամենեցուն առաւելագոյնս Հնչեցուցանէ, թէպէտ եւ ինքն անպարտելի է միշտ. քանզի նա զայն ձայն տայ լսել, թէ անդաստիարակ ամենեքեան դուք որդի Աստուծոյ էք հաւատովն ի Քրիստոս: 7 Ձի որք ի մի հաւատ միով հոգևով նահատակեալք, թէ երկու կամ երեք խմբեալք, զամենայն զինչ է խնդիր յանուն Որդւոյ ի Հաւրէ շնորհի քանի եւս եկեղեցւոյ, որ մի մարմին եմք բազումքս:

8 Արդարեւ բարի եւ ուղիղ խոստովանութիւն հաւատոյ է հիմն ի վերայ հաստատուն վիմի եղեալ՝ առեալ զիմաստութիւն յԱստուծոյ իմաստութենէն, կատարեալ այրական հասակաւ զչափ խոստովանութեան որ ի Քրիստոս լիագոյն ընդգրկել, որքան թողան ի մարդոյ ի շնորհէն, որ ի յուզիս վատ ամբարշտութեան եւ ի հոգմոյ աւտարաձայն վարդապետութեան անդրդուելի մնայ: 9 Ձայս գոյ իմանալ միաբանելն ցնծութեամբ եւ երգով հրեշտակաց, եւ թէ յերկրի են նոցա դասակից. զի զՍրբոյ Երրորդութեանն խորհուրդ անյաւելուած եւ առանց թերանալոյ երգեն խաղաղութեան ծնեցելոյ յերկրի՝ ի բարձունս Աստուծոյ, եւ հաշտարարին մարդկան փառք ասիցեալ: 10 Քանզի ի Պաւղոսէ ուսայ այսպէս փոխադասել, նոյնպէս անհարկելիք յերկինս դասակից, զնոյն փառաբանելով ի միութիւն, եւ են կամահաճոյ ամենեցուն Արարչին: 11 Եւ թէ նոքա, որպէս ցուցաք, սիրելի՛ք, խնդութիւն եւ պսակ առաքելոցն: 12 Անպիտանքն ի հաւատս տարագիրք են ի յաւիտենիցն ուխտէ եւ խոտորեալք զկնի սատանայի. քանզի զհետ երթեալք են այնր, որ միշտ ատեալ զճարտութիւն, եւ էութիւն իւր ի ստութեան է ուրախութիւն այնց, որ խնդացուցանեն ի տարտարոսն ըստ չոր-

քոտանեացն բնութեան. քանզի թողին զարդարութեան ճանապարհն, դարձեալ հաւասարեցան անասնոց անմտից: 13 Դարձեալ սովեալք իբրեւ շունք յերկնից իջեալ հացէն՝ յածին յայրատաբար զքաղաքաւ՝ զեկեղեցեաւն Աստուծոյ, զաւղանջեն բերանաւք իւրեանց զորս ոչ ունէր եկեղեցի. քանզի սուր է ի շրթունս իւրեանց յաւտարացուցանել ի մաւրէն ըստ ինքեանց եւ զայլս եւ առնել բաժինս աղուխուց, դիւաց, որոց նման են. եւ զայն ոչ գիտեն, թէ սուրք նոցա ի սիրտս նոցին մտանեն. եւ անհնարին կործանումն լինի այնմ տան, զի ի վերայ աւագոյ հիմնեցաւ:

14 Բայց մեք, եղբարք, թէ ո՛չ տեսանէաք պառակտեալ զգեղեցիկ հաւտ քաջ հովուապետի, եւ գողն խարդախութեամբ ի գողաւնս, եւ միշտ ի մէջ հեթանոսաց վասն անմիաբանութեան անուանն Աստուծոյ հայհոյումն՝ թերեւս զանվարժութիւն եւ խորհրդոցն զոչ քաջաբերութիւն փաստաբանեալք, ի պարսաւասիրացն բարս հայեցեալք, զմեզ հրաժարեցուցանէաք ասել, թէ ո՞վ ելանիցէ ի բարձրութիւն հաւատոյն բանի՝ գուցէ զՔրիստոս ըստ մեզ վայրաբերիցս հաւասարել, կամ իջանել յանդունդս իմաստից Գրոց՝ ըստ մերում մեռելամտութեան զանծախապէս աղքատացեալն, որ ըստ մեր գոյութեանն վերագոյն գոլ ասեմ այսմ մտաց: 15 Իսկ զոռոգումն կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ հանապազարուխ, որ է բան հաւատոյ Աստուածաշունչ Գրովք, իբր ի սրտի գրեալ ի նմա եւ արձանագրեալ անջինջ՝ ո՛չ տայ տարակուսել ողջամտիցս զհայհոյոյս Բանին մարմնացելոյ արտաքս քեցել հանել յեկեղեցւոյ Աստուծոյ, զթիւր միտս խորամանկեալս զպէսպէս ուսուցանողս եւ զաւտարաձայնութիւնս յառաքելոցն, եւ կամ զխաւսս սպասաւորաց Բանին ի թիւր իմացումն զղջանալն բազմաց ցուցանել եւ

զգուշացուցանել զանձինս բարեմտաց. այլ¹ եւ ձեր ըստ նախնեացն² հարազատ եղբայրութեան գութ բռնաձգեալ³ էած զմեզ այսր⁴:

16 Արդ՝ գրով ձեր առ մեզ⁵ զխոստովանութիւն հաւատոյ կամեցաք համառաւտս⁶ յիշատակել, եւ առ նմին զՀոգւոյն Սրբոյ վարդապետութիւնն ղնել⁷ ըստ մասին ի ճշմարտութենէն հեռանալ, եւ կամ միաբանել յետ ծանաւթանալոյն բազմաց: 17 Տո՛ւր ինձ եւ⁸ զքո միտոք ոչ զլանալ⁹ զուղիղն, եւ մի դասիլ ի հակառակող կաման, զի եկեղեցւոյ Աստուծոյ այս ոչ է սովորութիւն: 18 Քանզի ի ձէնջ գիրն ծանոյց մեզ այսպէս¹⁰: 19 Յետ դուզնաքեայ զմէնջ գոհութիւն¹¹ իմն ասելոյ¹² ամբաստանութեան ճառ զմարդոյ տկարագունի¹³ էր նշանակեալ, եւ զմեր նմա հաւատալն իբր անիմաստ, անտեղի գիմն¹⁴ համբաւեալ՝ թէ¹⁵ ոչ թերի, այլ լի նման ձեզ եմք ի հաւատս, զի առաքեալքն եւ վարդապետքն հասարակ եւ միապէս աւետարանեցին:

20 Եւ ապա յետ սակաւ ինչ բանից զՍրբոյ Երրորդութեանն գյառաջ քան գյաւիտեանս զէութիւնն¹⁶ էր աստուածաբանեալ՝ տարաբերմամբ. եւ յետ յոլովից զմարմնաւորութիւն Բանին մեզ պատմե-

ցէք զանազանեալ մտաւք, զոր վարդապետութեան միտս եկեղեցի Քրիստոսի յառաքելոցն չէառ¹⁷, եւ ոչ զբանս Գրոց ի նոյնս բռնաձգեալ, այլ գայլոցն յափշտակեալ ի նմանէ արս¹⁸, որ խաւսին թիւրս ձգել զկնի իւրեանց զաշակերտեալսն: 21 Իսկ զայլ խաւսսն, որք ոչ ընդ¹⁹ սոսայն²⁰ միաբանին, իբր²¹ զպարզամիտս խաբելոյ, կեղծաւորութեան դուռն առ մեզ հաւատացեալս փակի. եւ զի այսպէս է, ո՛վ պատուականքդ²², մի՛տ դիք խոստովանութեան ձերոյ, թէ²³ ուր ձգէ, եւ որպէս մեկուսացուցանէ ի Հոգւոյն Սրբոյ վարդապետութենէ²⁴:

22 Արդ՝ բան առ բան բազմաւորական եւ հատու պատասխանովք զլոյսն առ խաւար ծաներո՛ւք խորագոյնս քննելով²⁵:

23 Արդ՝ զՀաւելէ ասել ամենակալ, կատարեալ Աստուած, արարիչ ամենայնի եւ այլքն՝ ձայնակից մեր են: 24 Իսկ յառաջագէտ եւ նախակարծ զՆա ցուցանել՝ աւտարին սերմն. զի թէ յառաջգիտակ կարծող ոչ է, եւ թէ երկոքեանն անհաս յէութեանն ըստ քեզ մուտ եւ շարժումն՝ ուրեմն հակառակ կացին նմա. քանզի նախագիտութիւն եւ յառաջ կարծիք միմեանց հակառակք, եւ ի ներքս անկանի երբեմն եւ ստութիւն յընդունայնանալ կարծեացն եւ վրիպումն, եւ իրն, վասն որոյ յառաջ

1 Վերսկսւում է Մ. Դասխուրանցու բնագիրը
2 ՊԱ ըստ նախնեացն ձեր փխ եւ ... նախնեացն
3 Գթ՝ բոնի ձգեալ
4 Գթէ այսր փխ յայս (Գթթ, ՊԱ)
5 ՊԱ Ձի գգրեալսն ձեր համառաւտ փխ Արդ՝ գրով ձեր առ մեզ
6 ՊԱ աստ չի՛հ համառաւտս
7 ՊԱ ղնել մերձ
8 ՊԱ չի՛բ եւ Գթթ, եւ ինձ փխ ինձ եւ
9 ՊԱ գէանալն փխ զլանալ
10 ՊԱ չի՛բ այսպէս
11 ՊԱ գոհութեանն
12 ՊԱ չի՛բ իմն ասելոյ
13 ՊԱ որ տկարագունի
14 Գթէ իմն, Գթթ, գիրն փխ զիմն (ՊԱ)
15 Գթթ, եւ թէ, Գթէ եթէ փխ թէ (ՊԱ)
16 Գթէ գէութիւն փխ գէութիւն (Գթթ, ՊԱ)

17 Գթէ չէառ փխ չէառ (Գթթ, ՊԱ) ՊԱ չէ առեալ յառաքելոյն փխ յառաքելոցն չէառ
18 Գթէ որս փխ արս (Գթթ, ՊԱ)
19 ՊԱ ըստ փխ ընդ
20 Գթէ սոսա փխ սոսայն (Գթթ, ՊԱ)
21 ՊԱ իբրեւ
22 Գթ ա՛յ (Գթթ, յէ) պատուականք փխ ո՛վ պատուականքդ
23 Գթ չի՛բ թէ
24 Այս բառից սկսւում է Մ. Դասխուրանցու մեծ բացթողումը մինչեւ 190 նախադասութիւնը: Հաւանաբար, մի փոքր բացթողում է կատարել նաեւ Գթ-ի ձեռագրերի մայր օրինակի գրիչը: Դա յաջորդ նախադասութիւնն է (Արդ բան ... քննելով): որք բնագիր եմք ընդգրկում ՊԱ-ից:
25 Գթ չի՛բ Արդ՝ բան ... քննելով (ՊԱ)

կարծիքն վաղ եւ իսկ զնա սկզբնագոյն քան զկարծողն, եւ նոյն եւ ի բանին. վասն զի ըստ կարծեաց բանաւորի եւ բանաշարժից եւ նորին զհետ երթայ: 25 Որպէ՞ս ուրեմն ասէ կարծիքն եւ յամենայն եղեն, եւ ի կարծելոց բարութեանց միանգամայն վրիպել. եւ այլ այսպիսի կարծիք առ ամբարտաւանութեան մաւտ տան եւ անաւրէնութեան: 26 Ապա է, ո՞վ ասասցէ զայս յո՛ փոփոխեալ. եւ զայս յԱստուած ի Հայր իմանալ, որ զգիւսաց կատարութեամբն զանցուցանէ. Տիմա՛, ասէ, ես եմ նոյն, որ յառաջինն՝ եւ ապա՛ ես եմ Տէր, որ խաւսիմ գարդարութիւն եւ պատմեմ զնշմարտութիւնք. եւ թէ՛ ես եմ Տէր Աստուած, որ արարի զյապայսն որ գալոցն եմք: 27 Եւ ի Դանիէլ նախագէտ եւ զծածոկս տեսաւ, եւ զամենայն գիտակ զնա ցուցանէ. իսկ զամենայն մերկապարանոց առաջի նորա կալն եւ ի վերայ գալոց ինչ ժամանակաց իմանայցես՝ ապա նախակարծ զՀայր ասել անաւրէնութիւն է:

28 Նմանապէս եւ զՈրդոյ ճոխութեանն անուանս, որ ի ձէնջ ասացան՝ ցուցցուք: 29 Ասելն զՈրդի Համագոյական, մշտնջենակից Հաւր, մշտնջենաւոր Համագոյական ծնունդ եւ յառաջ քան զյաւիտեանս բովանդակ Աստուած, նոյն էութիւն, եւ Աստուծոյ զԱստուած ծնել միածին, եւ այլքն սոյնպիսիք ասացեալքն՝ այդ խոստովանութիւնք ընդ մեզ միաբանին: 30 Իսկ անդրանիկ միածին զնա ասել եւ անճաճանչ՝ հետի է ի կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ բարբառոց: 31 Քանզի անդրանիկն անուն զբազումս նշանակէ, եւ առ նմին միածին մի միոյ, որպէս երբեմն Սողոմոն թագաւորութեամբն անդրանիկ ի մէջ այլ որդւոցն Դաւթի, եւ ըստ Բերսաբեայ մի մաւրն իւրոյ: 32 Այլ եւ

ըստ ժամանակի ոմն նախ եւ ոմն միջին եւ այլն պակասաւրեայ, եւ կէսքն առաւելագոյն կրտսեր նոյնպէս եւ կայեանք նոցա: 33 Իսկ անճաճանչն անուն նսեմութեան ասի, եւ է նա ստուերք լուսոյ պակասութեան, եւ ոմանք պատուհասական, որպէս խաւար անշաւաւիելի կալ յոգոջ գիշեր անգիտութիւն զբարի, եւ ի կռապաշտութեան յաղտեղի գործս անկանելն է, որպէս Գիրք ասեն: 34 Արդ՝ ո՞ ի մոլեաց զայս ի Բանին կարծիցէ. քանզի յառաջ քան զմարդկանալն, զորմէ մեր խաւսքս են, ո՞ւմ է անդրանիկ. ի ձեռն մարգարէին ասէ Հայր եւ Արարիչն. ես եմ Աստուած եւ չիմ այլ ոմք: 35 Աստուած յորժամ լսես, մի՛ անբան եւ առանց հոգւոյ կարծիցես, քանզի անզգայութիւն է այս: 36 Ո՞չ արդեաւք լսիցես, զի Հայր ցՈրդի ասէ. Ոնդ քեզ է ինձ սկիզբն աւուրց զաւրութեան քե՛. այս ոչ մի քան զմիւսն նախ գոյ: 37 Իսկ ի վայելչութիւն սրբութեան քո՛ զաստուածութեանն հաւասարութիւն միութեան եւ յորովայնէ, որ է նոյն էութիւն բնութեան Հաւր: 38 Զի որովայն են ծոց Հաւր, յորժամ ասեն Գիրք, վասն Որդւոյ զնոյնութիւն, որ ի նմանէ է, նշանակէ՝ ուսուցանելով ի մերումս զմեզ, այլ ոչ յԱստուածում է այս: 39 Եւ յառաջ քան զԱրուսեակ ծնայն զքեզ՝ նախ քան ի կարգ անկեալ աւրաց ըստ լուսաւորացն է ծնեալն, յայտ առնելով զանսկզբնութիւնն, եւ անցանէ քան զմիտս եւ զբան մարդոյ, եւ հրեշտակաց ծնունդն, եւ է միածին:

40 Իսկ վասն Հոգւոյն Սրբոյ ինքն ասէ, թէ՛ Յիսկէն ելանէ: 41 Արդ՝ ո՞ւմ է նա անդրանիկ, եւ որպէս ցուցաւ մի էութիւն Հաւր եւ Որդւոյ: 42 Լոյս ասի Հայր. եղիցի լոյսն Իսրայէլի հուրք: 43 Լոյս ասի Որ-

ա Հմմտ. Եւ. ԽԵ 4:
 բ Եւ. ԽԵ 19
 գ Հմմտ. Եւ. ԽԵ 11:

դ Եւ. ԽԵ 5
 է Սաղմ. ՃԹ 3
 զ Եւ. ՆԵ 16
 է Հմմտ. Եբք. 18:

զի. Էր լոյսն մշմարիտ եւ խաւար ի մմա չի՛ք եւ ոչ մի՞. եւ ըստ գիտութեան գիտէ՛ որպէս Հայր զՈրդի, եւ Որդի զՀայր նմանապէս. ապա անճաճանչ զնա տեսողն երեւի թշնամանողացն դասուց: 44 Բայց մեք տրտմական հիացմամբ զգածեալ եմք, թէ ընդէ՞ր արդեաւք ոսոխն բարւոյ զարտաճայնութիւնս եւ որ վասն Սրբոյ Հոգւոյն հակառակս տալ դասել հնարեցաւ՝ թէ դարար առնու առ Որդւոյ, եւ ապա դարձեալ զնա իշխան եւ պետ Աստուծոյ ասել:

45 Եւ դարձեալ զանտանելի հայհոյութիւն՝ տարրական զնա ասել, եւ ընդ նմին ասել դարձեալ ոչ Հայր քան զՈրդի աւագ, եւ ոչ Որդի քան զՀոգի, այլ միաբան, միակամ եւ միախոհ. եւ գոցին հաւասարան սուրբ եկեղեցի դաւանէ ընդ նմա: 46 Արդ՝ եթէ տարրական է եւ դարարէ առ Որդւոյ, եւ պետ իշխանութեան է Աստուծոյ՝ ա՛յլ ուրեմն էութիւն եւ գոյութիւն է. զի տարրեղինի հարկ է արարած լինել, եւ ի տարրեղինի բանաւորեցաւ շարժութիւն եւ ոչ պարզութիւն, եւ շարադրութիւն, եւ ախտից դասումն՝ թէպէտեւ անեղծանելի ասացեր. եւ այսպէս տկար եւ աղքատ է, որպէս եւ Պաւղոսն ասէ. Զիա՞րդ միւսանգամ դառնայք անդրէն ի տարերս ի տկարս^բ. եւ թէ, որպէս նաւթճէքն, եւ դարարէ առ Որդւոյ՝ ապա եւ ի սկսանելոյ հանգչելովն եւ դարարելովն լուծանէ յիւրն էութենէ, եւ կամ պակասեալ եւ թէ խառնեալ իմանայցեն, որպէս փայլակն ինչ ի մեծ խարոյկ՝ եղիցի շփութութիւն: 47 Թողից ասել զանհնարին հայհոյութիւնն, որ անդուստ իմանի՛ զԲանն եւ զՀայր ի տարերս իջուցանել, եւ նմա լինել Աստուծոյ պետ եւ իշխան՝ անդր է քան զուրուախաստիցն բարբաջանս, եւ այսպիսի կատարութիւն Սիմոնի կախարդական աստեացն է. քանզի թէ զՀոգւոյն

Սրբոյ գէութիւն եւ էութիւն եւ բաժանեալ դիմաւք անբաժանելին, եւ մտաւք միայն որոշել որ ոչն որոշի՛ միաւորեալ աստուածութեամբ, առաւելախաղացի հաւասարմանն, եւ է՛ ինչ, զոր եւ դուք վկայեցէք, զի ի ներքս ածէ զաւտար Աստուած. քանզի նա ասէ. Զփառս իմ այլում ոչ տաց^բ:

48 Այլ որ վասն Երրորդութեանն յառաջ քան զյաւիտեանս ասացեալ՝ եկ փոխեմք բանիւս եւ յաղագս մարմնաւորութեան Որդւոյ ասացեալսն: 49 Արդ՝ Որդին Միածին անբովանդակելին բովանդակեցաւ կամաւք Հաւր եւ Սուրբ Հոգւոյն, ինքնակամն ի սուրբ յարգանդ Աստուածածնին եմուտ եւ յարգանդին զԱստուած զէն, զհոգի եւ զմարմին միացոյց: 50 Աստուած զէ թէ Բանին Աստուծոյ ասես, եւ թէ հոգի եւ մարմին մարդկայնոյս ասես միացեալ՝ այո՛, ընդ իս ճայնակից ես այդու մեզ, մանաւանդ թէ յաւելուս ի Հոգւոյն Սրբոյ եւ Բարձրելոյն զաւրութեան հովանաւորեալ: 51 Իսկ զի կուսէն ի Հոգւոյն Սուրբ անախտ առանց մեղաց աստուածախառն մարմին էառ՝ այս միտք աւտար են յեկեղեցւոյ. զի թէ մարմինն աստուածախառն անախտ առանց մեղաց էր եւ ապա առ՝ նախ ստեղծեալ եւ ապա առեալ լինի, բայց կամիս ուսանել զնոյնդ զմարմին աստուածախառն որ էառ, ո՞վ էր այն խառնեալն ընդ մարմնոյն. զի թէ յաւտար Երրորդութենէն ոք խառնեցաւ՝ աւտարին է մարմինն, որպէս դուդ ասես, զի ընդ իւր ստեղծ, եւ եթէ ի Սրբոյ Հոգւոյն իմանաս զխառնումն՝ ուրեմն Սուրբ Հոգին մարմնացաւ, զի որ խառնեցաւ նոյն մարմնացեալ ասի. ապա թէ զԲանն խառնեալ յառաջ ասես, ո՞վ առ զնա ի վերջոյն:

52 Եւ կամ դարձեալ փոքր մի յառաջ՝ յաջորդն որ ասէ, թէ Բանն Աստուած եւ Աստուծոյ Բանն է էմմանուէլն եւ զայլն

բ Հմմտ. Լ. Թ. 14. Լ. 5:
բ Գ. 1. Գ. 9

գ Ե. 1. Խ. 8

խաւսս, մինչեւ ցայն վայր, թէ աստուածախառն Աստուծոյ մարմնովն ի Մարեմայ է: 53 Ձէմմանուէլդ անուն Բանին, առանց մարմնոյն իւրոյ՝ ո՞վ ուսուցանէ կոչել, եւ դարձեալ որպէս ասեսդ, թէ գառեալն ընդ էին է արար, ըստ այնմ, թէ՛ Իմաստութիւն շինեաց իւր տուն^ա: 54 Ձի թէ ըստ Պաւղոսի ասելոյն Քրիստոսդ անուն մարմնացեալ Բանին առասեցաւ, ո՞վ շինեաց իւր տուն միաւորութեան:

55 Արդ՝ զանց առնելով զնորա չարաչար միտան բացայայտելոյ, զի իմաստնոց յայտնի է, ի Գրոց սրբոց վարդապետութիւնն փութասցուք: 56 Քանզի՝ Իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած գորդին իւր ի կնոջէ եղանիլ^է: 57 Արդ՝ աւետարեցաւ կոյսն ի ձեռն հրեշտակապետին՝ Հոգւոյն Սրբոյ գալ ի նա եւ ուժգնութեամբ Բարձրելոյն Հաւր հովանանալ ի վերայ նորա: 58 Քանզի ծնունդն սուրբ գեկուցանէ եւ Բարձրելոյն Որդի, եւ ասի Բանն մարմին եղեալ^է. եւ զի մարմին անուն Գիրք մարդ ասեն՝ Յովէլ պատմէ. Հեղից ի վերայ ամենայն մարմնոյ^ն: 59 Եւ Բանին ի կուսէն մարմին եղեալ. եւ զի Բանն Աստուած հոգի է, ձեր իսկ խոստովանեալ, եւ զի մարմին ի սրբոյ Կուսէն՝ հրեշտակապետն գեկուցանէ: 60 Մարմին մինչ ասեմ ընդ նմին իմա հոգին բանական եւ միտս եւ զինչ ի մարդկան է: 61 Եւ այսպէս իբր հոգի եւ մարմին միացեալ: 62 Բանն մարմին եղեւ, սաղմնառեցաւ որ ի սկզբանէ Որդին Աստուծոյ՝ ո՛չ ի կամաց առն եւ ոչ մարմնոյ ծնաւ կատարելապէս ի սրբոյ Կուսէն՝ կոյս պահելով զըստ մարմնոյ զիւր մայրն. վասն որոյ եւ Աստուածածին ասի, եւ կուսածին ծնունդն է: 63 Որ ի կերպարանս Աստու-

ծոյ էր՝ զծառայի կերպ առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ ձեւով իբր զմարդ գտաւ, առանց մեղաց: 64 Եւ Որդին Աստուծոյ եղեւ ի զաւակէն Դաւթի՝ վասն ըստ մարմնոյ սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ, զաւրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան: 65 Աստ իմա ինձ եւ ոչ փոխեալ յէութենէ զՈրդի, եւ զՀոգին Սուրբ. որպէս առ Հաւր հոգի Աստուծոյ, այսպէս եւ հոգի Որդւոյ, եւ ի մարմնանալն Որդւոյ՝ սոյնպէս եւ զորդի ի Հաւր եւ զՀայր յորդուո՞. բայց ոչ զՀայր մարմնացեալ ասեմք, եւ ոչ զՀոգին Սուրբ, այլ զԲանն Աստուած:

66 Քանզի համբակ դեռաճիղմն, որպէս ասացի, յառաջ քան զԱրուսեակն՝ մարմնով, հոգւով, մտաւք, զգայութեամբ ծնանի, եւ անուն կոչի՝ ընդ մեզ Աստուած: 67 Ո՞վ նոր խառնմանն անյեղ, որ յերբորութեան ոչ այլ տեսանի, եւ յերկրի ըստ մեզ տայ աւետիս հրեշտակն Տեառն, թէ՛ որ այսաւր ծնաւ, Տէր է Յիսուս, որ է Քրիստոս, եւ ըստ մերումս՝ Փրկիչ, որ է Աւծեալ^է: 68 Արդ՝ ո՞վ է, որ պատմէ ըստ ձեր յառաջ ասելոյն, կամ զաստուածախառն մարմինն առնուլ եւ կամ զէմմանուէլն առանց մարմնոյն Աստուածն Բանի, եւ կամ զմիաւորութիւնն նորա ասել՝ որպէս իմաստութիւն շինել տուն: 69 Լինի կաթնասուն, որ յառաջ քան զյաւիտեանս, եւ յորովայնի Բարձրեալն երգեալ ի Զաքարիայէ, որպէս զմերն ի մարմնանալն յանձն առ կրել: 70 Աճէ լի իմաստութեամբ, քանզի իմաստութիւն Հաւր ինքն, եւ շնորհք Աստուծոյ հաւր ի վերայ նորա, զի նա իսկ է շնորհն երեւեալ. եւ այսպէս ընդ ամենայն տիս հասակի աճմամբ անցեալս, զի առ մեզ պարտաւորութեանն տեղի ոչ լիցի: 71 Մի՛ քեզ առանց վկայութեան թուեսցին ասացեալքս, զի ի Գրոց է եւ ձեզ չէ ի ծածուկ:

^ա Լուսկ. Թ. 1
^բ Գուղ. Դ. 4
^գ Յովէ. Լ. 14
^դ Տէ՛ * Յվ. Բ. 28:

է Տէ՛ * Գուղ. Բ. 11:

72 Դարձեալ յիշատակել ձեր յայսմ վայրի, թէ լինի հպատակ հաւր եւ մաւր իւրոյ հնազանդական աստուածախառն մարմնովն՝ թուիք մեզ երկուս ցուցանել, մի՛ գայն, որ հպատակն լինի եւ միւս՝ գհնազանդական զաստուածախառն մարմինն, իբր աւգնականաւ վարեցեալ. եւ զի վերագոյնն արարեալ է զսորա հարցումն: 73 Արդ՝ զայս խնդրեմ. ո՞վ ուսուցանէ զայդպիսի նոր վարդապետութիւն, զոր առաքելոցն չէ խաւսեցեալ. արդեաւք զառմանդ կարծիս այնու նմանութեամբք իմացա՞յք՝ առանց աճմանն զհրամանն ընկալեալ նախնոյն, եւ թէ՛ Առ յիմքն զկիմ իւր, կամ թէ՛ Առ իւր կիմ, եւ եմ երկո՞րեանմ մի մարմին եւ մի հոգի՞՝ ըստ Մաղաքիայ. եւ որպէս Յակոբ երկրպագութիւնն Յովսեփայ Հռաքելիւ կատարէր զերագոյն մեկնութիւն:

74 Այսպիսի մտաւք համարձակութիւն բերեն ասել՝ ոչ իջեալ յերկնից, ոչ մարդացեալ, եւ ոչ ծնեալ, այլ այնպէս իմանալ իբր զմարդ ոք, որպէս ի հնումն զԻսրայէլ անդրանիկ որդի իւր կոչէր. այլ քաւ մի՛ լիցի, անաստուածութիւն է այսպէս իմանալ: 75 Իսկ աւանդողքն մեզ զիւրեանցն առեալ ի կերպին Աստուծոյ եղեալն, զկերպ ծառային առ, եւ նա եղեւ ի նմանութիւն մարդկան, եւ կերպարանաւն իբրեւ զմարդ գտաւ, եւ զնա՛ ասացին լոյս փառաց եւ կերպարանք հոլթեան Հաւր, եւ թէ՛ Որով ամենայն ինչ եղեւ, եւ զնա՛ Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն եւ մեք նովալ՞ ուսուցին մեզ, եւ ոչ այդպիսի կարծիս:

76 Գրեալ է ձեր եւ վասն մկրտութեանն, թէ իբրեւ երեսնամեայ լինի մկրտի, ձայն Հաւր յերկնից վկայէ, Հոգին աղանակերպ իջանէ: 77 Այո՛, ինչ զուսուցեալսն Աւետարանացն ասես: 78 Իսկ

զՀոգւոյն Սրբոյ պսակ բերել, զայդ ոչ ուստեք լուայ յԱստուածաշունչ Գրոց յեկեղեցւոջ: 79 Քանզի որ բնութեամբ Որդի Աստուծոյ է, եւ ի վերջոյ ժամանակի ի կնոջէ ծնաւ ըստ մարմնոյ՝ եւ Հոգին նորին հոգի որպէս Հաւր, թէպէտ եւ դիմաւք ի բարձունս ընդ Հաւր. ո՞ւմ բերէ պսակ. քանզի պսակ յանարգութենէ ճոխացելոյ բերի եւ զոչ պատուեալն ի պատիւ հասուցանելոյ, այլ ոչ այսպէս. քանզի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր նոյն եւ յաւիտեանս: 80 Բայց որպէս եղեւ մեզ ճանապարհ նորոգ՝ ուսուցանէ մեզ զվերստին ծնունդն յաւագանէ: 81 Արդ՝ Որդի մկրտի, ոչ ի մաքրութիւն, այլ յաւրինադրութիւն զնոյն մեզ: 82 Հաւր ձայն յերկնից, Հոգին աղանակերպ իջմամբ՝ թէպէտ Մկրտչին ուսուցանէ. Հայր եւ Հոգին, թէ որ ի բարձունս Որդին է մարմնացեալդ. այլ զմեր որդեգրութեան մեծութիւն յայտնեաց աւագանաւն: 83 Արդ՝ զոչ զրեալսն ընդէ՞ր հարկիք ասել եւ ջանայք գտնաւրէնութիւն Փրկչին այլոց լինել. եւ ապա յետ այսց բանից ի վերայ բերէք, թէ՛ Հայր իմ ցայժմ գործէ եւ ես գործեմ: 84 Իսկ քաղցնուլն եւ վաստակելն աստուածընկալ մարմնո՞յն: 85 Զմարմին Փրկչին մերոյ Աստուածընկալ՝ չէ ուրուք աւետարանեալ, այլ կենդանացուցիչ եւ կամ զնոյն իսկ զԱստուած մարդ: 86 Բայց թէ զամենայն լրումն աստուածութեան ի նմա բնակեալ՝ զայդ ասել կարիցես՝ ուրեմն ոչ իմանայցես թէ զմի աստուածութիւնն մարմնապէս ի նմա լինել ասես. քանզի ընդունաւ յընդունաւ զի անհնար է լինել, որպէս ասեն, թէ էք դուք նովաւ լցեալ: 87 Իսկ որ զաստուածավայելուչսն զատուցանեն իբր Բանին, եւ զտնտեսութեանն տնաւրինութիւն մարմնոյն մարդոյն, արժան էր ասել ըստ քեզ՝ զի անձն եւ միտս ունէր, եւ համարձակեցուցանել, թէ Աստուած որ հաստա-

« Հմմտ. Նոն. Բ՝ 24:
 Է՝ ԱՊՊ. Բ՝ 6

Գ՝ ՅՊԸ. Ե՝ 17

տեաց զծագս երկրի, ոչ քաղցիցէ, եւ ոչ վաստակիցի, եւ ոչ ի քուն է պահապանն Իսրայելի, եւ փոխանակ քրիստոնէի լինել չրէայ ըստ թլփատութեան. եւ եթէ ոչ ոք կարէ տեսանել զԱստուած, եւ ուրանալ զԳիրն, որ ասէ. Տեսաք մեք զնա, եւ ոչ գոյր նորա տեսիլ, եւ ոչ փառք, եւ տեսակ նորա նուազ քան զամենայն որդւոց մարդկան, որոյ զազգատոհմն չկարէ ոք պատմել. եւ զաղքատութիւն մեծատանն եւ զթափումն անձինն, որ յեութեան աստուածութեանն էր, եւ մանաւանդ զոտս եւ զձեռս, որով զնշանս արար. զի ոչ է այս ի բնութեան աստուածութեանն:

88 Ապա թէ զԲանն Աստուած մարմնացեալ ասեն, յորում էր հոգի բանական, միտք ըստ մարդկութեանս, նոյն ոտիւք որով վաստակեցան, եւ ի վերայ ծովուն զնաց, եւ ձեռաւքն աշխատողաւք կաւ արար եւ եղ ի վերայ երեսաց կուրին, եւ զնոյն կաւն ակն ստեղծագործեաց, զի ծանիցես դու, թէ որ զառաջին մարդն ստեղծ՝ նոյն է երեւեալն ըստ մարմնոյ: 89 Ապա եթէ երբեմն Աստուած եւ երբեմն մարդ կարծիցես, ոչ կարես զնա անմեղ ցուցանել, զի մարդոյ միտք ի վայրկենի յեղումն ընդունին ի չար եւ ի բարի: 90 Արդ՝ մի՛ լիցի աւտարածայնս իմանալ արտաքոյ այնց քան զոր ուսաքն. զի միում դիմի մարդ կացելոյ՝ զաստուածավայելուչսն եւ զըստ տնտեսութեանս քարոզեցաւ:

91 Բայց հարկաւոր է մեզ եւ զհաւատալն ձեր փրկաւէտ չարչարանաց Փրկչին՝ որպէս ծանուցէքն առ ձեզ երկրորդել. բայց զի կրկնաբանեալ զնոյն միտս յոլովէ, ի մի տեղւոջ ցուցցուք: 92 Արդ՝ ասացեալն այս է, թէ մինն կամաւք Հաւր եւ Սուրբ Հոգւոյն եկն ի խաչն. եւ մեք այսպէս ասեմք, թէ սուրբ Քրիստոս Աստուած, որ խաչեցար մարմնով, եւ զՀայր անմահ

եւ առանց չարչարանաց, եւ Որդւոյ խաչակից անարգութեամբ համարեալ, եւ ոչ ցաւեցուցեալ, զի զէութիւն զաստուածութիւն Որդւոյ անմահ եւ առանց չարչարանաց ասեմք, բայց զՈրդւոյ զաստուածութիւնն, զէութիւնն, զանմահութիւնն եւ զհոգին ոչ ի Հաւրէ մեկնեմք, եւ ոչ ի խաչէն, եւ ոչ ի գերեզմանէն, եւ ոչ ի յիւր մարմնոյն. եւ թէպէտ չմեկնեմք ի մարմնոյն զանչարչարելին՝ ի չարչարելումն չսպանանեմք, այլ զչարչարելին յանչարչարելումն չարչարեմք: 93 Արդ՝ փոքր ինչ հարցից եւ մանաւանդ ըստ հետազաւտութեանն զ'ի վերայ իսկ մեր հասեալն. զՈրդի Աստուած խաչակցեալն կամաւ անարգութեամբ համարելն՝ որպէս է ուրեմն հանգոյն Սամուիէլին, որ ասէրն Աստուած, թէ՛ Ոչ զբեզ անարգեցիմ այլ զիս՞, եւ կամ որպէս յառաջագոյն ցՊաւղոսն ասէր, ի կովհահալածն առնելոյ զառաքեալսն, թէ՛ Զի՞ հալածես զիս՞, եւ որ այլք այսպիսիք: 94 Ապա չէ ինչ ընդ մէջ ասել, թէ վաղ իսկ էր մարմնացեալ. զի դորին համարելդ ասելոյ զհետ երթայ ի ծննդեանն աւրինակ եւ կոյսն մնալոյ մաւրն. եթէ զաւրութեամբ եւ ոչ գործով եւ զիս անդամն Քրիստոսի լինել, եւ զամենայն իսկ կիրան ըստ տնտեսութեան, եւ յազատութիւնն զմեզ կոչելն շնորհիւն չեւ եւս է: 95 Այսպէս եւ ասացեալն, թէ հանդերձ Հոգւով Սրբովն անմեկնելին ի խաչէն, եւ գերեզմանէն, եւ ի մարմնոյն եւ յամենայն ուստեք. զի թէ որպէս Սուրբ Հոգին էր ի մարմնի Բանին, եւ ի խաչին եւ ի գերեզմանին, եւ զԲանին Աստուծոյ մարմնանալն, եւ ի խաչին եւ ի գերեզմանին զլինելն նմանապէս ասիցես՝ ըստ այդմ եւ յառաջ քան զմարմնանալն խոստովանէին աստուածապաշտք եւ ուղիղք արդ եւ մինչեւ ցյաւիտեանս:

« Ե․ ԾԳ․ 2

բ Ը Թ․ 4․ Ը 8

գ Գ․ Գժ․ Թ 4

96 Եւ յուրաստ չիշխես լինել զլրութե-
նէ նորա մեզ բոլորիցս առնել, եւ զլնուլն
զամենայնսն եւ զբնակելն նորա ի
սուրբսն՝ ապա եւ սուրբքն սպանեալք եւ
կամ որ սպանանին՝ զնա պիտի ասել. վասն
զի զիւր կամսն վասն նոցա մահու զՊետ-
րոսէ ասելն իմացուցանէ, թէ՛ Ե՛կ զվնի
իմ^ա. եւ զամենայնսն վասն կալոյն, եւ թէ
որպէս ասէքն կամելովն միայն, ապա ան-
համարք քրիստոսք եկեալ են եւ գալոց են:
97 Եւ այլ եւս համարեալդ նշանակէ զա-
մենայն լնուլ ի սա միշտ, եւ զմիջոցս երկ-
նի եւ երկրի: 98 Իսկ քարինս եւ նետս ա-
ռաքել յոմեքէ այսր՝ ուրեմն եւ զայն իւր
համարիցի, իբր թէ ծեծեալ եւ խոցոտեալ
նոքաւք. քանզի լնու զամենայն անմեկնե-
լին եւ մարդիկ արժանիք, եւ կամ հաւք, եւ
կամ այլ կենդանիք այնպիսեաւքն ծա-
խեալք, ապա եւ այս չարչարելիք յանչար-
չարելումն չարչարին, եւ անհուն աս-
տուածք այլ եւ այլք աղանդաբանին մեզ
պաշտել: 99 Ո՛վ մտացածնոյց յիմարու-
թեան խաւք, ուր քարոզի աւելի քան
զգրեալսն իմանալ:

100 Եւ դարձեալ ըստ ասելոյդ, թէ
զՀոգին Սուրբ եւ զՈրդւոյ աստուածու-
թիւն ի մարմնոյն եւ յամենայն ուստեք
չմեկնեմք՝ կարծիս տայք ասել վասն հա-
մաբնակութեան ցուցանելոյ, թէ եւ Հոգին
Սուրբ մարմնացաւ. քանզի զերկոսեանն ի
մի յընթակայումն պատմէ: 101 Այլ ոչ
այդպէս ուսուցանէ վարդապետութիւն
Հոգւոյն Սրբոյ. զի թէպէտ եւ Սուրբ Հոգին
Բանին մարմնացելոյ հոգի ասի, ըստ այնմ
թէ զհոգին Քրիստոսի ոչ ունի. եւ զհոգի
Որդւոյ իւրոյ առաքեացն. այսպէս եւ
Հաւր հոգի ասի, եւ դիմաւք որոշեալ մեզ
պատմի, այլ ոչ գատանի ի Հաւրէ եւ յՈրդ-
ւոյ. եւ թէպէտ անգատանելի է, այլ ոչ ի
միում մարմնի Որդի եւ Հոգի, եւ ի խաչի
եւ ի գերեզմանի, իբր թէ մարմնացեալ ոք

յառաքելոցն եւ ի մարգարէիցն ասաց-
բայց միայն զՈրդին Աստուծոյ զԲանն
Հաւր մարդկացեալ գրեցին: 102 Եւ զի
այսպէս է՝ լո՛ւր, Փիլիպպոս ցՆաթանայէլ
ասէ. Զորմէ գրեցիմ Մովսէս եւ մարգա-
րէմ՝ գտաք զՅիսուս ի Նազարեթէ՞. եւ զի
նոյն է Բանն Հաւր մարդկացեալ որ խաչե-
ցաւն, Մովսէս պատմէ՝ ասէ. Բայ՛ զկեանս
ձեր կախեալ զփայտէ յանդիման ձերէ:
103 Զոր եւ Յովհաննէս մեկնեաց. Սա է,
ասէ, նշմարիտ Աստուած եւ կեանք յաւի-
տեանկանքէ: 104 Եւ Երեմիա զկեանս իւր
մեռուցանել ի գբի ասէ, եւ վիրաւորել եւ
պատժել զնա, որոյ զագգատոհմն նորա ոչ
ոք կարէ պատմել, գոչէ Եսայի: 105 Եւ
զՏէրն փառաց խաչեալ պատմէ Պաւղոս,
զոր այլուր լոյս փառաց կոչեաց՝ եւ որ ի
կերպին Աստուծոյ էր, որպէս պատմի մի
ըստ միոջէ՝ զինքն թափեաց, հնազանդեաց
մահու եւ խաչի:

106 Եւ զի ոչ ըստ ամենայն ուրեք լի-
նելոյն էր Որդւոյ աստուածութիւնն յիւր
մարմինն, որպէս ասացէքն, այլ Բանն Աս-
տուած մարդկացեալ՝ ե՛կ տե՛ս եւ զԱւետա-
րանացն զբարբառս: 107 Քանզի Ղուկաս
յետ գրելոյն ականատես լինել զԲանն նո-
րին սպասաւորացն՝ զազգաբանութիւնն
այսպէս արար. Յիսուս որոց կարծէր որդի,
որ ի Յովսեփայն, որ յԱդամայն, որ Աս-
տուծոյն՝ ասաց. զի որ յԱստուծոյն էր,
նոյն մարդացեալ եւ հովուացն տեսեալ եւ
ի խաչ ելեալ ասաց: 108 Եւ Յովհաննէս
զԲանն մարմին եղեալ եւ զկեանսն յայտ-
նեալ՝ զնոյն ասաց խաչեալ եւ եղեալ ի գե-
րեզմանի. որպէս Երեմիաս յառաջագոյն
պատմեաց, թէ տեսեալ զմեռեալսն յաւի-
տեանից՝ ինքն էջ առ նոսա ի հող աշխարհի,
զի կեցցեն. եւ Աստուած մարդացեալ այն-

բ ՀճԳ. ՅՊԸ. Ը 45:
գ ՀճԳ. ԲՕԳ. ԲԸ 66:
դ ՀճԳ. ՅՊԸ. ԺԷ 3:
է ՏԵ՝ Ե՝. ԾԳ 8:

ա ՂՊԸ. Թ 59, ՅՊԸ. Ը 43

պէս յաղթեաց զաւրացեալ մահու եւ ապա-
կանութեան, եւ եհատ զարտաւար յամե-
նայն երեսաց: 109 Իսկ թէ Հոգին Սուրբ
այսպէս ուսուցանէ յԱստուածաշունչ
Գիրս, եւ ոչ մարդ աստուածագրեաց, որ-
պէս Ստեփանոսն Հոգևով Սրբով. մեռանէր
չարչարելին յանչարչարելումն զհանգոյն
ամենայն ուրեքն լինել էր ի մարմնին, ի
խաչին եւ ի գերեզմանին, հանդերձ այ-
լովքն: 110 Ձայդ ո՞վ ոք ոչ ասիցէ թիւր
վարդապետութիւն: 111 Յաւելեալ ի
բանսդ ասացէք. զբեւեռսն ոչ ի զաւրու-
թեանն անմահութեան հարկանեմք, իբրեւ
թէ ի ցաւեցուցանել, այլ աստուածացեալ
մարմնին:

112 Բազում անգամ ասացաք, զի թէ
աստուածացեալ մարմինն այլ է, եւ զաւ-
րութիւն անմահութեանն այլ, որ թուի քեզ
ասելն զԱստուածն Բան սոսկ, երկուս ու-
րեմն պատմել ձեռնարկէք, մին մարմնե-
ղէն Աստուած եւ միւսն զաւրութիւն ան-
մահական Աստուած: 113 Բայց զպարզա-
միտս խաբէք, թէ զաւրութիւնն անմահա-
կան անհաղորդ է մարմնոյն՝ մինն Աս-
տուած է եւ միւսն մարդ: 114 Իսկ ապա
ո՞ւր է միանալոյն ձեր բան, զոր վերագոյն
փոքր մի խոստովանեցէքն:

115 Բայց մեք նախ աւերինակաւ ինչ
կամիմք հարցումն առնել, թէպէտ եւ ոչ
պատշաճ է. հուր եթէ ի բնութեանց իւրոց
զատցի, ի ջերմութենէն, ի լուսաւորութե-
նէն, եւ նիւթն մնացեալ կարիցէ՞ կոչել
հուր. եւ կամ ձիւն ի ցրտութենէն եւ ի
սպիտակութենէն՝ կարիցէ՞ կալ շաւշափելի
նիւթն եւ զձիւնն ունել: 116 Արդ՝ որպէս
սոցա երից տեսակաց ի մի բնութիւն ե-
կեալ՝ առանց զատուցման զգոյութիւնն
ցուցանեն՝ եւ զատուցանելն ջանալ եղ-
ծումն գործէ, իսկ երեւելոյ արեգականն ի
բարձանց արդեաւք ո՞չ առաւելագոյն
զմիաւորութիւնն ունիցիս ի միտսդ:

117 Ձի եւ յարեգականէ թէ զատցի ճառա-

գայթ լուսոյ ջերմութեամբն՝ գնդածեւ
տարրն առանց այնց ոչ ասի արեգակն.
սոյնպէս թէ զատցի Աստուածն Բան ի
մարդանալոյն իւրմէ՝ ծնեալն ի կուսէն ոչ
Աստուած մարմնացեալ, այլ մարդ ընդ մե-
ղաւք անկեալ: 118 Ձի թէ միաւորութիւն
Աստուծոյն Բանին եթող մարդոյն միտք
ըստ այլոց, որպէս ասացաք, ի վայրկենի,
մերթ ի չար եւ դարձեալ ի բարի փոխելոյն
ոչ դադարեն:

119 Ապա եւ ոչ առանց մեղաց էր. այլ
քա՛ւ լիցի՝ արեգակն միշտ արեգակն եկաց,
որպէս պատմէն Ձաքարիայ. քանզի առա-
քելոցն ցուցեալ զոտս եւ զձեռս ի վերնա-
տանն՝ Աստուած վայելչաբար ի մտանելն
զնոյն ուրեմն վարդապետեաց, եւ Թումաս
տեսեալ զտեղիս բեւեռացն եւ զխոցումն
կողիցն՝ Տէր եւ Աստուած իւր խոստովա-
նեաց. վասն որոյ երանեաց Տէր զայնս, ո-
րոց ոչն տեսեալ այնպէս հաւատասցեն,
որպէս տեսաւն առ տեսեալն բարբառե-
ցաւ: 120 Բայց Բանին մարդկացելոյ
մարմնոյն եւ հոգւոյն, որ երեսաց մերոց է
Տէր, զբեւեռսն թափանցանց առնել ասել՝
ո՞ւմ ոչ յայտնի է յիմարութիւնն. քանզի
զմարդիկ խեղս մի եւ կամ երկու անդա-
մաւք՝ ոչ ասեմք, եւ զոգիսն ընդ նմին խե-
ղեալս. եւ կամ խոցմամբ եւ բեւեռաւք ի
փայտի մեռեալք այժմ եւ կամ ի հնումն՝
ոչ ոք կարէ ասել զոգիսն ընդ նմին բեւե-
ռեալս եւ խոցոտեալս: 121 Իսկ յառաջ
քան զմարմնանալն որ էութիւն Բանին էր՝
խառնեալ եւ միացեալ ընդ իւր մարմինն ի
մարդկանալն, զիա՞րդ վիրաւորեսցի:
122 Այլ անհնարին է ասէք այդպէս խոս-
տովանութեամբդ զնա առանց վիրաւորու-
թեան ասել. հաւանեցի՛ր յաւերինակէդ եւ
զխոստովանութիւնն, որպէս Գիրք Աս-
տուածաշունչք ուսուցանեն, մի թիւրեր ի
մտացն, եւ թէ յաղթիս՝ զտնաւրէնութիւն
նորա ի քննել յանձն ա՛ռ. քանզի դու եւ
ամենայն իսկ մարդ կարիցեն ասել զին-
քեանց զբնութեան էութիւն, որպէս հոգին

ընդ մարմնոյն խառնեալ, եւ կամ շունչ ընդ ջիւս ներգործեալ աւժանդակէ նմին մարդոյն, եւ կամ թէ լոյս արեգական, եւ կամ ճրագի, ընդ ական յստակագունի միաւորեալ գտեսութիւն գործէ: 123 Իսկ տնաւրէնութիւն նորա սոսկալի ումեք չթուիցի, եւ ի վեր քան զիւր միտս եւ զբան: 124 Ապա թէ ոչ՝ իմա՛ ինճ զնա, թէ յարգանդի կուսին ո՞րպէս մարմին ինքեան հոգևով եւ մտաւք լինել եւ զի՞նչ ի մարդ է, սաղմնացեալ էր Բանն Աստուած ի Հոգևոյն Սրբոյ յամենայն մարդկանէս ի սկզբանէ լինելութեան մարդոյն, եւ որք ի ժամանակիս մինչեւ ցկատարածն՝ Աստուած մարդացեալ ծնանէր, առանց մեղաց, հասակաչափ միոյ մարդոյ, որպէս Պաղոսն պատմէ, թէ՛ որ Ոչ է Հրեայ եւ ոչ հեթանոս, խուժադուժ, Սկիւթացի, ծառայ, ազատ՝ այլ ամենայն ուրեմ Գրիստոս է՞: 125 Ունի՞ս ինչ ասել զորպիսութեանէն. ապա իմա՛ եւ զայլսն, թէ են մեզ անհասանելիք, եւ մի՛ խուզեր. վասն որոյ մարդարէն ի տնտեսութիւն նորա հայեցեալ երկնչէր, եւ զարմանալ ասէր. ապա հաւատ պիտոյ է, եւ ոչ քննութիւն:

126 Յետ այսր հակառակողս ոմանս նշանակեալ էր, թէ սոքա ասեն՝ սուրբ անմահ Աստուած, որ խաչեցար. անմահ էր, ասեն, եւ մեռաւ հոգևով եւ աստուածութեամբն՝ մեր բնութեամբ: 127 Արդ՝ եթէ հակառակողս զմեզ կոչէք եւ թէ զայլ ոք, որպէս ցուցաբեր ձեր գրով, ըստ Աստուածաշունչ Գրոց վարդապետութեան, զխոստովանութիւն հաւատոց մերոց յՈրդին Աստուծոյ՝ թէ բիւր անգամ հարցանէք՝ զնոյն երկրորդեմք: 128 Բանն Աստուած միեւնոյն էր, որ զամենայն ըստ տնտեսութեանն եւ զնշանսն նա գործեաց: 129 Բայց ո՞վ ոք է թերուսումն, որ ի վերայ մարդոյն չգիտէ զմահ, թէ որոշումն հոգևոյն ի մարմնոյ է, եւ մարմնոյ յերկիր

լուծանել, իսկ հոգին կենդանի եւ անապական, որպէս Գիրք ասեն զնահապետացն, թէ պակասեալ յաւելաւ ի ժողովուրդ իւր, եւ զոմանս՝ եթէ յաւելաւ առ հարս իւր: 130 Իսկ վասն մարմնոյ՝ եթէ զապականութիւն ետես. քանզի մարդոյ հոգևոյ յանգագայականս լուծումն ոչ ոք գիտէ, զի Աստուած միշտ կենդանեաց է Աստուած, եւ որպէս ինքն կենդանի է եւ կարող՝ ոչ փոփոխեցաւ եւ ի մարդկանալն, բայց մեռաւ զիւր զմահն, եւ պարտեաց զմահ. եւ վասն զի միութիւն՝ ոչ Բանին միայն, վասն այնորիկ բանն Աստուած ոգևովն իւրով, որ ի մարդկանէ, երեւեցաւ ի դժոխս, արգելեալ ոգևոց՝ յորժամ Անբեր Անոցա Աստուծոյ երկայնամտութիւնն, որպէս ասէ Պետրոս, եւ այնպէս աւերեաց զդժոխս. եւ Աստուած մարմնով ի գերեզմանի զապականութեան իշխանութիւն ի բաց քայքայեալ՝ մեզ զանապականութիւն պարգեւեաց:

131 Եւ վասն այնորիկ ասեմք զերից սրբասացութիւնն՝ սուրբ Աստուած, սուրբ հզաւր, սուրբ անմահ, որ խաչեցար վասն մեր: 132 Երեք սրբասացութեամբք Երրորդութեանն դիմաւք, եւ միով աստուածութեամբ, զաւրութեամբ եւ անմահութեամբ, եւ Հաւր եւ Հոգևոյն Սրբոյ՝ խաչեալն առանց այլ երեւմամբ, ի մի էութեանէն, զողորմութիւն հայցեմք: 133 Քանզի առաքելական եկեղեցի այս բարբառով եւ ձեւով միշտ պարծի. զի ի ժամ պատարագի զոհաբանական զգրուակն ի դէմս Հաւր արարեալն՝ երիցս սուրբն ասելով միով տէրութեամբ ընդ Հաւր եւ ընդ Հոգևոյն Սրբոյ, զեկեալն եւ զգալոցն ի բարձունս արքայ փառաւորեալ գոչէ. եւ աստ թէ խաչեալ ասեմք՝ մի՛ զարմանար, քանզի նա զհարչարանսն իւր փառս կոչէր:

134 Իսկ յետ այլ բանից այսպէս գրեալ էր, թէ՛ Մեք զմարմնոյն մեռանել

ձեզ գրովք ցուցանեմք. եթէ Մարդ Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն փրկանս, եւ եթէ՝ Յիսուս Քրիստոս որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, եւ թէ՝ զՅիսուս Քրիստոս զխաչեցեալն խնդրէք. եւ թէ՝ խաչեցաւ ի մերմէ տկարութենէ՝ եւ թէ՝ Մարդ Յիսուս Քրիստոս, եւ այլ աշպարհսիս, ուր ինքն Յիսուս Քրիստոս ըստ խոնարհութեանս մերոյ ցուցեալ լինի: 135 Արդ՝ նախ զայս հարցանեմք. մինչ աշպարհս գորդի երկուս ասել սիրէք, եւ զԵրրորդութիւնն չորրորդութիւն մտացածին ստեղծանէք, Յիսուս Քրիստոս անունդ ուր ինքն ըստ մեր զկիրս նշանակէ, զի ըստ տնտեսութեանն կամ սքանչելագործութեանն, առ նմին այլ ոք Որդի Աստուծոյ կամ Բան Աստուած գտանէք. եւ թէ ո՞րպէս ի վերայ մարմնոյն լոկ որոշեցէք ասել զՅիսուս Քրիստոս միշտ եւ կամ մի՛ ուրեք կարիցէք ցուցանել սոսկ ի վերայ մարմնոյն: 136 Իսկ եթէ լսիցես մարմինն Քրիստոս է, մի՞թէ աւտար իցէ այս ձայն յայնմանէ, որ ասեն թէ՝ Բանն մարմին եղիւ՞. այլ քա՛ւ, ոչ զանագան բայց մի: 137 Եւ թէ ոչ այսպէս կարծես՝ լո՛ւր. զՔրիստոս զիտել մարմնով ասեն Գիրք, եւ Քրիստոսի չարչարելն մարմնով: 138 Արդ՝ եթէ ըստ քո ասելոյդ Յիսուս Քրիստոս մարմնոյն ասիւր, նորին մարմնոյ այլ մարմին որպէ՛ս էր արդեաւք՝ մարմին ի մարմնի եղեալ, մի՛ որով չարչարէրն եւ միւս՝ մարմին Քրիստոսն, որ ի ներքսն: 139 Եւ այսպէս իմանալն ի պառաւանց առասպելս ձգեալ տանի: 140 Այլ մի՛ լիցի աշպարհս իմանալ զքարոզութիւն առաքելոցն. զի որ ի ձէնջ կամեցեալ բռնաձգել ի վերայ մարմնոյն զՅիսուս Քրիստոս անունդ՝ նոյն ցուցաւ ի մեծութեան ականատեսից Որդի Աստուծոյ եւ Բան Աստուծոյ. այսչափ ինչ գրեցաւ, ասէ, զի հաւատայցէք,

թէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ՞. եւ թէ՛ Որ փոխեացն զմեզ յարձայութիւն Որդւոյ սիրելւոյ իւրոյ՝ որով ունիմք զբաւութիւն արեամբ նորա՝ զթողութիւն մեղաց մարմնով նորա՞, որ է պատկեր աներեւութիւն Աստուծոյ՞. եւ թէ՛ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենայնի Աստուածէ. եւ թէ՛ Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուսնն, որում ականատեսն իսկ եղաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շաւշափեցին զԲանն կենաց՞: 141 Թողից ասել զլիութիւնն այսպէս բանից, որ ի նոր կտակարանս, վասն խաւսիցս բազմանալոյ:

142 Ապա հաւաստագոյնս տեղեկացի՛ր, թէ Քրիստոս Յիսուս զԲանն Աստուած մարդկացեալն կոչեն Գիրք, որպէս եւ սուրբ ժողովն որ ի Նիկիա ասացին, թէ ծնաւ կատարելապէս ի Մարիամայ հոգևով ըստ այնմ, թէ՛ հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոսէ, եւ որով հոգի եւ միտք եւ ամենայն մարդկայինս, եւ ծնեալն կոչեցաւ Յիսուս Քրիստոս: 143 Եւ Պաւղոս ասէ. Ոչ զայլ ոք ի մտի եղեալ ձեզ գիտել, բայց միայն զՅիսուս Քրիստոս՞ եւ զնոյն խաչեալ. ապա մի՛ մեռեալ եւ մի՛ իմանալի ի ձէնջ զի՞ առասպելաբանի:

144 Բայց եւս առաւելագոյն տարաւրէնութիւն մեկնութեամբս արարելով ի ձէնջ իմանի, թէ վասն երկուց եւ մի բնութեանց Քրիստոսի ի նախագրին աւրինակեցաւ. Հրամայեցաւ, ասէ, երկուս հաւս առնուլ, եւ ամանս խեցեղէնս եւ փայտ նոնի, եւ կարմիր, եւ զոպայ, եւ զեմուլ զմի հաւն յաման խեցեղէնէ՞, որ գուշակեցաւ ի ձէնջ այն՝ մարդոյն բնութիւն, եւ զմիւսն՝

« Յ՝ՎԸ. Ը 14

բ Յ՝ՎԸ. Ի 31
 գ Կ՝Ղ. Ը 14
 դ Բ՝Կ՝Գ. Գ 4
 է Հ՝Ն՝Բ. Թ 5
 զ Ը Յ՝ՎԸ. Ը 1
 ի Ո՞՞՞. Գ 20
 յ Հ՝Ն՝Գ. Ը Կ՝Գ. Բ 2:
 զ Տ՝Ն՝Ղ. Ե. Ժ՝Գ 49:

թացեալ յարեան հաւուսն սպանելոյ, դիցեն ի վերայ զփայտն եւ զայլսն եւ արձակեցն ի դաշտսն՝ այն զԱստուծոյ բնութիւն ասացէք: 145 Եւ այժմ քաջ միտ դի՛ք ձերում մեկնութեանդ: 146 Պաւղոս գրէ Եբրայեցւոցն՝ յիշեցուցանելով նոցա զխորանն եւ զնորին զկահ եւ զժողովուրդն, եւ զարեան սրսկումն ի վերայ նոցա, եւ ասէ, թէ՛ ամենեքեան արեամբն սրբէին, զի վասն մարտիրոյ արիւնն ցանիւր գնոմաւ: 147 Ապա եւ ըստ ձեր ապիրատն լեզուի՛ բնութիւն Աստուծոյն Բանի ի մարդոյն բնութիւն շրջեցաւ, եւ նորա արեամբն թացեալ ի նմանէ՛ պիտոյ եղեւ առնուլ զանապականութիւն եւ զՀոգւոյն Սրբոյ զմաքրութիւն նմա, որ յետութենէն Հաւր էր: 148 Եւ այսպիսի բանք ո՞ւմ ոչ շարժեսցեն արտաւսր՝ զկարծիս տալ նմա իւր զփրկութիւն ի մարդոյն հայցել: 149 Նոյնպէս եւ վասն նոխազացն, թէ՛ որ զենաւն՝ մարդոյն բնութիւն էր, եւ կենդանւոյն, յորոյ ձեռս ի վերայ եղեալ եւ զանաւրէնութիւնս եւ զմեղս ի վերայն ասացեալ եւ նորա յինքն առեալ՝ Բանին Աստուծոյ բնութիւն էր: 150 Ապա եւ ըստ ձեզ՝ աստուածութեամբն իւրով զմեղս մեր վերացոյց, եւ ստեալ՝ եղեւ Պաւղոս, որ ասացն, թէ՛ զմեղս մեր մարմնով իւրով վերացոյց ի խաչափայտին: 151 Եւ զորոյ գէտութիւնն ի վշտաց վերագոյն կամիք ասել՝ զայն էութիւն ընդ մեղաւք եւ ընդ ամբարշտութեամբ անկեալ ասացէք: 152 Այլ քա՛ւ եւ մի՛ լիցի այդպէս զարհուրելիս իմանալ ի Ղեւտականին գրեալսն:

153 Քանզի երկուք հաւուքն ասելով՝ միովն նշանակեալ լինի Որդին Աստուծոյ մարդացեալ, եւ միովն մեք՝ մարդիկս: 154 Արդ՝ սպանաւ Որդին Աստուծոյ մարդացեալ՝ իմ մահուամբն, որպէս վերագոյնն ասացաք, եւ արեամբ նորա թացեալ

մեք գտաք զփրկութիւն, եւ յայնժամ ստացաւ ի մեզ անապականութիւն՝ որ է նոճի անփուտ փայտն, եւ զոպայն՝ որ է ի Հոգւոյն Սրբոյ ի մեզ մաքրութիւն, եւ կարմիրն՝ զշնորհս զորդեգրութեանն Աստուծոյ. եւ կատարեցաւ բան մարգարէին, թէ՛ անդ եղիցի ուրախութիւն հաւուցե՞, այսինքն՝ մարդկանս: 155 Նոյնպէս եւ նոխազն, յորոյ վերայ մի հաւն էր, զենաւ: 156 Արդ՝ Քրիստոս Յիսուս Տէր զենաւ ըստ մարմնապէս, բազում անգամ ասացաք, եւ արձակման վիճակն անկաւ ի վերայ մեր, զի վիճակեալ մեզ ընդ ընտրեալս մասն մեղացն թողութեանն՝ եւ առնու նոխազն զանաւրէնութիւն որդւոցն Իսրայէլի, առաքելովքն առաջնորդովքն եկեղեցւոյ, որչափ նոցա այն շնորհեցաւ ընդ ոմանց զհամարսն տալ, եւ որոց կամին յետ մկրտութեան թողուլ զմեղս: 157 Իսկ անապատն՝ եկեղեցի հեթանոսաց, աւազանաւն ծաղկեալ, զոր Եսային ասէ. Ցնծասցէ անապատն, եւ ծաղկեսցէ որպէս շուշան անապատն Յորդանանու: 158 Եւ այս ո՞չ թուի քեզ եկեղեցի առաքելական, յորում մկրտութիւն է: 159 Բայց թէ ի վերայ Բանին մարմնացելոյ կամի ոք ասել, մի եւ զնոյն պարտի իմանալ, զՏէրն նշանակեալ վիճակաւն զենանի զիմն, մի եւ զնոյն յարուցեալն, որ բարձիչն եղեւ դժոխոցն խայթոցաւն, եւ զընդ աջմէ Հաւր նստեալն. ապա եւ երկուս իմանալ զնա, ըստ երկուց նոխազացն, յանաստուածիցն դասու կացուցանէ:

160 Բայց առաջիկայ բանս թուի մեզ իմանալ յաւանդութենէ առաքելոցն ի բաց փոխումն. զի նշանակեալս ասէ այսպէս, թէ՛ զՍուրբ Հոգին՝ զմիայն զհաւուրն, զթագաւորն թագաւորաց եւ զՏէրն տէրանց, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց, զոր ոչ ոք ետես ի մարդկանէ,

« Տէ՛* Եօր. Թ. 21:
բ Ե Պէր. Բ. 24

գ Ե* 1. Ե 7
դ Ե* 1. Ե 1

եւ ոչ տեսանել կարող է՝՝ ձեզ յայտնի լի-
ցի, եւ մեք առանց չարչարանաց եւ մահու
ասեմք: 161 Արդ՝ զՍուրբ զՀոգին եւ
զՀայր Աստուած ոչ մարմնացեալ ասել
քրիստոնէից՝ յայտնի է ամենեցուն, որպէս
ցուցաքն, եւ թէ ասէ ոք՝ նզովեալ է:
162 Բայց ձեզ զայդ ասել՝ զԱստուածն
Բանէ առանց չարչարանաց եւ մահու զնա
ցուցանելն զեկոյց:

163 Արդ՝ որպէս ասէքդ, թէ ոչ երեւե-
ցաւ, եւ ոչ չարչարեցաւ, եւ ոչ մեռաւ. է
զի եւ ոչ մարդոյն զոր ասէք ի կուսէն ծնե-
լոյ՝ Աստուածն Բան ի յարելութիւն ոչ ե-
ղեւ. քանզի որպէս ա՛յն ոչ, եւ ա՛յս ոչ:
164 Արդ՝ զսուրբն զայն կոյս Աստուածա-
ծին զի՞ ասէք՝ զի նորա ուրեմն սոսկ մարդ
լինի ծնեալ, երեւելի, չարչարելի եւ մահ-
կանացու, եւ հրէիցն բարբառոյ առ ի
ստուգել՝ թէ Դու մարդ ես եւ զամձն քն Աս-
տուած առնես: 165 Այլ եւ ուրեմն ի մահ
մարդոյ մկրտիք, քանզի ի նորա մահն
մկրտիմք, եւ զմարդ պաշտեն երկնաւորք
եւ երկրաւորք եւ սանդարամետականք, ի
ծուներ կրկնելն Յիսուսի Քրիստոսի:
166 Ստեցի՞ն ուրեմն առաքեալքն՝ զնա
զոյ ասելով Որդի Աստուծոյ, եւ մանա-
ւանդ ի ձեր ասելոյդ. եւ Փիլիպպոս վրի-
պեցո՞յց զներքինին Նսայեաւ, թէ՛ իբրեւ
զոչխար ի սպանդ վարեցաւ, որոյ զազ-
գատոհմն ոչ ոք կարէ պատմել. եւ նա
զհաւատալն բարբառէր, թէ՛ Յիսուս Քրիս-
տոս է Որդի Աստուծոյ. եւ ինքն զնոյն
այլոց քարոզեաց:

167 Բայց ոչ ստեցին մարգարէքն եւ
առաքեալքն, այլ այնք, որ ի ճշմարտութե-
նէն թիւրեալք են: 168 Քանզի Որդի Աս-
տուծոյ մարգարէիւք ասէ, թէ գտայ այնո-
ցիկ, որք զիս ոչ խնդրէին, յայտնի եղէ

՝ ԸՏԷ. Գ. 16
բ ԹՎԸ. Ժ. 33
գ Ե. Ծ. Գ. 7, Գ. Գ. Բ. 32
դ Գ. Գ. Բ. 37

յայնց, որ զինէն ոչ հարցանէին, եւ՝ երե-
ւելի ի Հրէաստանի Աստուած, եւ՝ Աս-
տուած մեր յայտնապէս եկեցէ, եւ՝ սա է
Աստուած մեր, ընդ որում ոչ համարեցի
այլ ոք, որ եգիտ ամենայն զիմաստութեան
մանապարհս, եւ ետ զնա Իսրայէլի, յետ այ-
տրիկ յաշխարհի երեւեցաւ եւ ընդ մարդ-
կան շրջեցաւ, եւ եթէ՛ Կոչեցի անունն նո-
րա Էմմանուէլ, այսինքն՝ ընդ մեզ Աս-
տուած, եւ Սիմէոն, թէ՛ Տեսիմ ասք իմ
զփրկութիւն Գո, զլոյս յայտնեալ ազգաց,՝
եւ Յովհաննէս, թէ՛ Կեսնքն յայտնեցան եւ
տեսաք եւ վկայեմք, զի որ էրն առ Հաւր
եւ երեւեցաւ մեզ: 169 Եւ դարձեալ՝ զԱս-
տուած ոչ ոք ետես, բայց Միածին Որդին,
որ է ծոց Հաւր, նա պատմեաց մեզ. որ ա-
սէրն, թէ՛ Ելի ի Հաւրէ եւ եկի յաշխարհս,՝
եւ թէ՛ Որ ետեսն զիս՝ ետես զՀայր իմ, եւ
ամենայն իսկ մարգարէական եւ առաքե-
լական ձայնք զնոյն պատմեն: 170 Արդ՝
յայտնի լիցի ձեզ, թէ երեւեցաւ. քանզի
մեք նոցա քաջ հաւատամք, եւ սորա այս-
պէս պատմեն:

171 Եւ որպէս յիշատակեցաւ ի մէնջ,
չարչարիլ եւ մեռանել՝ սակաւուք եւ այժմ
ցուցցուք: 172 Ի վախճան աւուրցս խաւ-
սել Որդուվն, ասէ, զորոյ մեծութիւնն
յաջորդք բանիցն ցուցանեն. Որդուվն
խաւսեցաւ Հայր, եւ՝ Աստուածորդին
վասն ամենեցուն զմահ մաշակեաց, եւ՝
Որ ի կերպարանս Աստուծոյ էր՝ նա հնա-

է Ե. Կ. Ե. 1
չ Ս. Գ. Ը. Ե. 2
է Ս. Գ. Խ. Թ. 3
ը Բ. Գ. Գ. 36-38
բ Ե. Է. 14, Մ. Գ. Բ. Ը. 23
գ Հ. Գ. Գ. Բ. 30:
դ Ը. Թ. Ը. Ը. 2
եք Թ. Ը. Ժ. Գ. 28
զգ Թ. Ը. Ժ. Գ. 9
զդ Տ. Է. Ե. Գ. Ը. 2:
զե Ե. Գ. Ը. 2
զը Ե. Գ. Բ. 9

զանդ եղեւ խաչի եւ մահու... եւ զի մի յերկարաբանեցուք, ինքն չարչարելովն, որով զփորձն էառ՝ նա է փորձանաւորաց աւգնական եւ Աստուած, եւ մեք կարացեալքս զնա տեսանել. այսպէս եւ չարչարեցաւ, եւ որով եւ ի դժոխս յայտնեցաւ որդոցն՝ նովիմք եւ մեռաւ. եւ Աստուած ըստ իս եղեալն, եւ ետ պատերազմ եւ պարտեաց զմահս եւ զապականութիւն զմեր թշնամին՝ աւերեալ զդժոխն, որպէս ասացաքն: 173 Եւ ըստ որում յառաջ քան զչարչարանսն մարդկան երեւեցաւ՝ այնպէս յայտնեցաւ եւ հրեշտակաց. եւ վասն այնորիկ նոյն վերացելոյն փառաւք սպասաւորեալ ստորնեայքս՝ բարբառէին ի վերինսն, առ իշխանութիւնս եւ պետութիւնս՝ համբառնալ զդրունսն ի վեր, զի մտցէ թագաւորն փառաց: 174 Որք զարմացեալք վասն թանձրացելոյն մարդկային մարմնովն՝ հարցանէին. Ո՞վ է սա թագաւոր փառաց, եւ անդէն լուեալ, թէ՛ Տէր հզաւր զաւրութեամբ իւրով, Տէր հզաւր ի պատերազմիք. եւ իբրեւ անհնազանդեալ իմն իշխանութեանցն, եւ իբր թէ յերկրէ ի վեր երթալն աստուատ նոյն հրաման, եւ իւրեանց հարցումն լսէին դարձեալ՝ զնոյն ինքն է, որ թագաւորն փառաց: 175 Թուի ինձ, թէ եւ զվիրացն անդ ոմանք հարցանէին, թէ՛ Զի՞նչ են վէրքդ ի ներքոյ ձեռացդ. յորմէ պատասխանի եղեալ՝ Զորս վիրաւորեցայ, ասէ, ի տան սիրելոյն, որոյ տունն մեք իսկ եմք:

176 Արդ՝ ո՞չ զարմանայցես ընդ յայտնի պատմութիւնս Հոգւոյն Սրբոյ, եւ ի Պաւղոսէ զասացեալսն վասն բազմաստուածութեանն եւ կռապաշտութեանն ի բաց բառնալոյ՝ այնու ուրանաս զմարդկանալն Փրկչին մերոյ, ապա թէ՛ ոչ հաւանել այսմ ձայնի, ի բաց հալածեսցի ի մէնջ

մարդապաշտութիւն եւ չորրորդութիւն, եւ միշտ աստուածապաշտութիւն պատուեսցի երկրպագութեամբ Սրբոյ Երրորդութեանն, եւ մի՛ լիցի ի մահ մարդոյ մկրտել մեզ, այլ՝ Աստուծոյ մարդացելոյ:

177 Իսկ զկնի այսպիսի խոստովանութեան ասացէք՝ իջուցանել զնա ի փայտէն եւ աստուածընկալ գերեզմանի դնել, եւ իւր զինքն յարուցեալ: 178 Արդ՝ որպէս ասացէքն, թէ մեռեալն Աստուած չէր՝ գերեզմանն աստուածընկալ ո՞րպէս էր. եւ կամ մինչ մեռաւն ո՞չ ինքն՝ զի՞մք յառնէր. եւ ահա զասացեալդ գեղիս եւ ոչ յայտնիս՝ ասելի է: 179 Բայց ոչ նուազ ըստ այլոցդ զարմացումն մեզ եւ աւարտման խաւք բերեն, թէ գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս, եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց ումեք. արդեաւք ո՞չ սպառնացաւ հրով այրել զհերձուածողս եւ զամենայն չարագործս՝ ուր խաւարն եւ անքուն որդնն, զոր ի սկզբանէն պատրաստեաց սատանայի: 180 Եւ արդ՝ զի զի՞նչ ըստ կամաց եւ մտաց գնացելոցն զանհաւատութեանն հաւատասցուք, եւ խառնակ գործովք պղծութեան մարդիկ վարեսցին. զի որպէս ասէքդ՝ մինչ զդատաստանն ոչ յայտնեաց՝ չիմանի զիւրաքանչիւր գործոց առնուլ չարին եւ բարւոյն, եւ ահա ավրինադրութիւնդ լինի առաջնորդ լինել ի խաւարն արտաքին: 181 Այլ ո՞վ այդպէս յայտնեաց զդատաստանս իւր՝ Որդին Մարդոյ, զոր ընդ աջմէ Հաւրն ետես Ստեփանոս, ի վերայ ուղղահաւատիցն եւ բարեգործաց՝ զարքայութիւնն իւր, եւ խոտորելոյ ի հերձուածս եւ պղծեալ ի գործս ըստ սատանայի՝ զնմա պատրաստեալ զգեհեանն, եւ ինքն է թագաւոր, որոյ արքայութեանն վախճանն ոչ գոյ:

182 Բայց հաւանեա՛ ընդ իս ասել, մանաւանդ թէ ընդ Պաւղոսի՝ անքննելի զդատաստանս նորա. եւ այսպիսի ինչ է ասելս՝ հրով ասաց, եւ խաւարաւ, եւ անքուն

« Հմմտ. Փլւ. Բ 6-8:
բ Սաղմ. ԻԳ 8
գ Զա՛վ. ԺԳ 6

որդամբ տանջել ընդ սատանայի զմեղա-
 ւորս. եւ հրոյ բնութիւն լուսաւոր իցէ, իսկ
 նա խաւարային, եւ ոգի՝ հրոյ տանջման
 անըմբռնելի: 183 Իսկ սատանայ ոգի է եւ
 տանջի նովաւ ընդ մարմնաւորս, եւ որդն
 կենդանի է մարմնաւոր, յորմէ քուն եւ
 հանգիստ բարձեալ՝ ընդ հրով վրէժխնդիր
 է, միշտ ուտելով զգայնս, որ անդրն:
 184 Իսկ հուր այրիչ վրիժապարտիցն եւ
 պարարիչ որդանն, եւ այլք յայսպիսիք,
 յորմէ յաղթին միտք մարդոյ: 185 Իսկ
 մինչ դատաստանք նորա եւ գործք անքն-
 նելի են՝ ո՞րչափ առաւել դատաւորն եւ
 կազմիչն ամենայնի: 186 Բայց զդատաս-
 տանս իւր ոչ յայտնեաց՝, զոր ի ձեռն սաղ-
 մոսին ասաց՝ առ աւրինաւորս եւ հեթա-
 նոսս այն պատշաճեցաւ: 187 Արդ՝
 զանքննելին ոչ քննեսցուք, քանզի ան-
 քնին, այլ մարգարէին ձայնակցեսցուք,
 ծածուկքն Տեառն Աստուծոյ՝ յայտնիքն
 մեզ: 188 Եւ այսպէս կարողութիւն հաւա-
 տոյն ի մեզ պնդեսցի ընդդէմ կալ ոսոխին,
 որ ի սկզբանէն դժնդակութիւնն բռնած-
 զող ի վատ ամբարշտութիւն՝ ի բաց մղես-
 ցի ի հաւտէ Քրիստոսի. զի զնշանսն որո-
 շեալ խնդրողք Հրէականք են, որոց գայ-
 թակղութիւնն դիւրաբերելի, եւ մարդկա-
 յին իմաստութեամբ հասու լինել կամե-
 ցողք նմա՝ հեթանոսականք, զորս յիմա-
 րութիւն ըմբռնէ: 189 Բայց յեկեղեցւոջ
 Աստուծոյ միշտ քարոզի եւ քարոզեսցի
 խաչեալն Քրիստոս. եւ սա չէ դիւրալպիրծ,
 կամ վրիպեցուցանող շաւիղ ի Սուրբ Եր-
 րորդութենէն, այլ առաքելոյ ձայնակից
 առնէ եւ նորին աշակերտս զմեզ գործէ:

190 Եւ դո՛ւ, բարեաց ցանկացո՞ղդ,
 վերացո՞ ընդ իս սրագոյն զհայեցուածսդ՝
 ի սահմանս Սրբոյ Երրորդութեանն, զոր
 Պաւղոսն վարդապետեաց². քանզի նա մեզ

զայն աւանդեաց, զոր եւ ինքն ընկալաւ,
 եւ գրէ զնոյն Հռովմայեցւոց³. Աղաչեմ
 գձեզ, ասէ, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
 Քրիստոսի եւ սիրով Հոգւոյն՝ պատերազ-
 մակից լինել ինձ յաղաթս առ Աստուած^ք,
 Աստուած եւ⁴ Տէր Յիսուս Քրիստոս եւ Հո-
 գին Սուրբ՝ յայտնի զՍրբոյ Երրորդու-
 թեանն ուսուցեալ զանուն⁵: 191 Եւ դար-
 ձեալ Կորնթացւոցն. Շնորհիք Տեառն մերոյ
 Յիսուսի Քրիստոսի^ք, եւ սէրն Աստուծոյ,
 եւ հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ: 192 Եւ
 Եփեսացեացն. Աւրինեալ է Աստուած եւ
 Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի^ք,
 եւ ի վերայ եբեր, թէ՛ որով կնկեցայք Հոգ-
 ւովն Սրբով^է: 193 Եւ առ Տիտոս, թէ՛ Մար-
 դասիրութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ
 յայտնեցաւ, եւ նորոգութիւն Հոգւոյն Սրբոյ,
 զոր եհեղ ի մեզ ի ձեռն Տեառն մերոյ Յի-
 սուսի Քրիստոսի^ք. եւ գրէ իսկ, թէ՛ ամե-
 նայն առաքելական կտակարանք լի են
 այսու բարբառով, յոր անուն մեք հրաման
 առաք մկրտել եւ փառաբանել⁷ զՍուրբ Եր-
 րորդութիւնն⁸, միով երկրպագութեամբ՝
 զնոյն առաքելոցն մի աւետարանութիւն
 սերմանեաց երիցս երանեալն սուրբ Գրի-
 գորիոս՝ Թագէտսեան վիճակիս:

194 Ապա թէ՛⁹ ընդէ՞ր տամք տեղի
 Յերոբովամու¹⁰ պատառել զեկեղեցի Աս-
 տուծոյ, զոր Որդին Աստուծոյ ժողովեաց

« Սաղմ. ճԻԼ 20
 1 ՊԱ. գիպեցուածս
 2 ՊԱ. վարդապետե

3 ՊԱ. առ Հռովմայեցիսն փիս քանգի նա ... Հռով-
 մայեցւոց
 ք Հռովմ. ԺԵ 30
 4 ՊԱ. եթէ Աստուած է փիս Աստուած եւ
 5 ՊԱ. այսպէս ուսուցեալ զանուն Սուրբ Երրոր-
 դութեանն փիս յայտնի ... ուսուցեալ զանուն
 ք Ը Կոր. Ժ. 9 23-24
 Դ Եփե. Ը 3
 է Հռովմ. Եփե. Ը 13:
 6 ՊԱ. չի՞ք եւ դարձեալ ... Քրիստոսի (երեմ նախ.)
 զ Տէ՛ր Տէ՛ր. Գ. 4-6:
 7 ՊԱ. փառս վայելի փիս փառաբանել
 8 ՊԱ. չի՞ք զՍուրբ Երրորդութիւնն
 9 ՊԱ. Արդ փիս Ապա թէ
 10 ՊԱ. Բորովամու փիս Յերոբովամու

զոչխարս¹ ի մի գաւիթ. մի՛ ոք² ի մէնջ երեւեսցի Նաբաթ եւ Աբիութ³ գաւտար հուր մատուցանելով⁴ անհաւատարմութեամբ⁵, զի մի՛ հրատոչոր լիցուք: 195 Ձմեզ վերստին գերկնողն գՔրիստոս⁶ մի՛ անարգեսցուք այլաձեւով զհաւատ, զի մի՛ զՆոյեանն առ Քանան գանձձան յորոշողէն գաւդիսն ի յայծեացն առցուք մեք⁷: 196 Քանզի ընդ մեզ է ձայնդ⁸ եւ քեզ, Միխիթա՛ր, որ կացեալդ⁹ ես զլուխ Ամարասու¹⁰ եկեղեցւոյն¹¹ եւ համբաւես, եթէ Գրիգոր եղեալ է հիմն, զնոյն հաւատն ունող, եւ գաւակ բարեխաւս առ Քրիստոս Աստուած՝ վասն մեզ ժառանգակից նմա եղանիլ¹², մի՛ գուցէ լուիցեմք¹³, թէ¹⁴ դուք գաւակ Քանանու էք ծառայելով¹⁵ մեղաց, եւ ոչ Յուդայի խոստովանողի՝ եւ հրամայիցիմք¹⁶ կտրել ընդ մէջ եւ զմասն եւ զբաժին ընդ կեղծաւորսն առնուլ¹⁷:

197 Եթէ¹⁸ որդիք այնց հարցն¹⁹ եմք, որք անգատանեն յառաքելոցն, զհաւատս²⁰ պինդ կալցուք, եւ մի բուռ ընդ ջուր²¹ խառնելով՝ ի նմանութիւն²² ան-

խարդախ կաթինն արասցուք. զի որոյ անուամբ մեք պարծիմք, նա իսկ չարախաւս լինի զմէնջ առ երկնաւոր Հայրն²³: 198 Այլ եւ ոչ յուրվութեամբ ամբոխից²⁴ հրապուրեսցուք, բայց ըստ առակողին խրատու՝ մի՛ միտել ընդ բազումս ի չարիս: 199 Ընդ ութ ոգիսն²⁵ տապանափակ լինել ջանասցուք՝²⁶ ի բազմամբոխն²⁷ ձգողաց զջրահեղձոյցն պատուհաս²⁸. ընդ Ղովտայ գերծանել²⁹ ի հրակէզն անձրեւաց՝ ընդ երկուսն ի պարգեւականն մտանել յաշխարհ³⁰, ի վեց հարիւր հազարն³¹ տապաստելոց: 200 Քանզի եւ այժմ ցանգ բարբառի³² հովիւն³³ զլերինս հնչեցուցանելով, ասէ. Մի՛ երկնչիր հաւտ փոքրիկ, զի հանեցաւ Հայր³⁴ ձեր տալ ձեզ զարքայութիւն³⁵*. եւ գյամառեալսն յայսցանէ յորդորեսցուք ի նոյն³⁶: 201 Բայց մեք որպէս ընկալաքն երկրպագութեամբ պատուել զՍուրբ Երրորդութիւնն՝ առանց թերահաւատելոյ ունիմք, եւ կալցուք մինչեւ յաւիտեանս՝³⁷ խորշելով յամենայն եղբաւրէ, որ յայս ստահակիցէ:

1 ՊԱ. չի՛ գոչխարս
2 ՊԱ. չի՛ ոք
3 ՊԱ. Աբիուդ
4 ՊԱ. մատուցանել
5 ՊԱ. անհաւատապէս փխ անհաւատարմութեամբ
6 ԳԹ ի Քրիստոս փխ գՔրիստոս
7 ՊԱ. մեք աոցուք փխ աոցուք մեք
8 ՊԱ. ձայնս
9 ՊԱ. կացեալ
10 ՊԱ. Ամարասս
11 ՊԱ. եկեղեցւոյն
12 ՊԱ. լինել փխ եղանիլ
13 ՊԱ. լիցի լսել փխ գուցէ լուիցեմք
14 ՊԱ. գուցէ եթէ փխ թէ
15 ՊԱ. ծառայելոյն
16 ՊԱ. հրամայեսցի
17 ՊԱ. կեղծաւորացն մասն փխ զմասն ... առնուլ
18 ԳԹ թէ
19 ԳԹ հարանց փխ հարցն
20 ՊԱ. որ ոչ անգանագան առաքելոցն են հաւատ, զնոցին ուսուցեալս փխ որք ... զհաւատս
21 ՊԱ. ջուր ընդ բուռն փխ բուռ ընդ ջուր
22 ՊԱ. զմանութիւն փխ ի նմանութիւն

23 ՊԱ. Հաւրն փխ Հայրն
24 ՊԱ. ոխից փխ ամբոխից
25 ՊԱ. ութն հոգիսն փխ ութ ոգիսն
26 ՊԱ. ջանասցուք լինել փխ լինել ջանասցուք
27 ՊԱ. բազմաց ամբոխն փխ բազմամբոխն
28 ՊԱ. զպատուհաս
29 ՊԱ. գերծանել
30 ՊԱ. երկիր փխ յաշխարհ
31 ՊԱ. ԶՌ-սն փխ վեց հարիւր հազարն
32 ՊԱ. բարի փխ բարբառի
33 ՊԱ. չի՛ հովիւն
34 ՊԱ. Հայրն
35 ԳԹ զարքայութիւն երկնից
* Ղ.՝-Կ. Ժ.Բ՝ 32
36 ՊԱ. նոյնս
37 ՊԱ. յաւիտեան

ՅԱՂԱԳՍ¹ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՍՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՔԱՆԻՈՆՈՒԹԵԱՆ ԱՉԳԱԿԱՆԱՑ²

1 *Ջի*³ որպէս առ⁴ ամենայն մեր աթոռակիցս հարկ եղեւ գրել ⁵ի նոյն ութուտասն ամի տէրութեանն⁶ խոսրովայ որդւոյ⁷ Որմզդի, զնոյն եւ առ քո սրբութիւնդ հարկեցաք գրել - պինդ ունել զպատուէր Հոգւոյն Սրբոյ ի ձեռն աւրինաց եւ մարգարէից, զորս⁸ առաքելական կանոնադրութեամբ հաստատեցին սուրբ եւ ուղղափառ վարդապետքն: 2 Բայց մանաւանդ առաւելագոյն զգուշանալ յանիծեալ յամուսնութենէ մերձաւորաց, ⁹որ ազգաւ մատաւորութիւն¹⁰ է եւ կործանին յայնքան չարիս: 3 ¹¹Քանզի ոչ միայն զխառնակութիւն ազգահամարութեանն գործեն այնպիսիքն, ¹²այլ եւ զազահոութիւն, զոր¹³ արմատ¹⁴ ամենայն չարեաց ասաց¹⁵ առաքեալն, զհեթանոս¹⁶ աւրէնս անաստուածս¹⁷ լինել, որպէս եւ նախամարգարէիւն ծանալթացոյց¹⁸ ամենայն¹⁹ աս-

տուածապաշտաց²⁰: 4 Եւ բիւր եւ այլ չարիս²¹, որպէս եւ իմաստնոց յայտնի է:

5 *Ջի* թէ աստուածային բերանն անիծանէ²² զմարդիկ, որ փոխեն զընկերի եղեալ սահմանս, ²³իսկ զԱրարչին²⁴ զբոլորեցուն²⁵ զսահմանադրութիւն եւ զպատուէր առ ոտն հարուն²⁶ եւ ²⁷արհամարհողք լեալք, մեծի բարկութեան ²⁸արժանի է, այլ²⁹ վասն նոցա եւ այլք: 6 Եւ յայտ անտի է՝ զի ի հնումն, զորս³⁰ ելից³¹ Աստուած, ³²այսպէս ասաց, թէ՛ ըստ կրաւնից ազգաց եգիպտացոց եւ ֆանանացոցն մի՛ երթայցե՛ք, ես եմ Տէր Աստուած ձեր՛: 7 Եւ ի կարգ³³ արկեալ՝ զայսպիսի անկողինս կոչեաց խայտառականաց առականս, որով ամբարիշտքն վարէին: 8 ³⁴Հրածարեցոյց յառաջին ազգէն ³⁵եւ ապա յերկրորդէն, եւ հասեալ յայն, զոր մեք խորթս կոչեմք, եւ ասէ՛ մի՛ յայտնեք³⁶ զի համիարեայ³⁷ Բոյր Բո Է՛: 9 Եւ ապա յետ ոչ սակաւ բանից եւս զարմանալոյ արժանի իմն

1 g միայն Վասն
2 a Վասն թէ քանի ազգ առնուն զիրար
3 b Մի
4 bf չի՞ք առ
5 a ի նոյն նիւթի ժ. ամի / b յուր եւ տասն ամի / ֆուրուտասներրորդի ամի
6 b չի՞ք տէրութեանն
7 ce չի՞ք որդւոյ
8 abcdg գոր
9 a չի՞ք որ ազգաւ ... եւլն
10 ֆմերձաւորութիւն
11 a եւ կործանին յայնքան համարակութեամբն, զոր գործեն / d քանզի զմիայն զազգահամարութեան գործեն
12 g այլ եւ ազգատոհմութիւն
13 a որ է / b որ
14 b չի՞ք արմատ
15 a ասէ
16 a զհեթանոսաց
17 g անիծան
18 b ծանոց
19 ad չի՞ք ամենայն

20 bf աստուածապաշտից
21 a որք էին, եւ այլ ոչ չարիս
22 b անիծէ
23 b իսկ որ զԱրարիչն
24 a զԱրարիչն
25 b g ամենեցուն
26 bdf հարու / g հարաւ / a կոխել եւ հարկանել
27 b արհամարհող լեալ
28 abdfg քանաչելի է / ce ժառանգեմ
29 ad այս
30 a g գոր
31 ֆ ըստ ելից
32 ֆ այնպէս / a այսպէսաց
* Հմբ. Ղե. ԺԲ 2-4:
33 a ի կարգս
34 b հրածարեցոյց յայնքանէ առաջին ազգէն
35 b չի՞ք եւ ապա յերկրորդէն
36 b աւելի զառականս
37 Բոյր օրին. համօրեայ
բ Ղե. ԺԲ 11

նշանակէ. քանզի իբր ասաց, թէ համհաւ-
րեայ¹ քոյր քո է, դարձեալ երկրորդէ այս-
պէս, թէ՛ զառականս² կնոջ եւ զդստեր նո-
րա - որ լինի³ մին կին եւ միւսն խորթ, -
⁴մի յայտնեցես եւ զդուստր ուստեր նո-
րա, - այսինքն է՝ զխորթին,- եւ կամ
զդուստր դստեր նորա մի՛ առնուցուս,
քանզի ամբարշտութիւն է: 10 Ապա վերա-
դոյն ⁵քան զայս նշանակէ, որ նոյն մեզ
⁶երրորդ ազգ կարծի⁷ ըստ յառաջ ⁸յայտ-
նագոյնդ առնելոյ⁹ մեր¹⁰, զառականս¹¹
¹²դստեր ուստեր քոյ կամ դստեր դստեր¹³
քոյ մի յայտնեցես: 11 Բայց մի՛ ոք կար-
ծեսցէ զասացեալս ի վերայ ծնողին միայն,
այլ¹⁴ եւ որք ի նմանէն, քանզի այս կատա-
րեալ յիմարութիւն է: Քանզի ¹⁵ոչ ուրուք
եղբայր առանց հաւր եւ կամ քոյր, ¹⁶այլ
թէ եւ հաւրաքեռ որդի եւ կամ մաւրա-
քեռ¹⁷, քանզի եւ ազգակցութիւնն ¹⁸մի եւ
նոյն է եւ որդւոց: 12 Զի որպէս առաջին
եւ երկր¹⁹ եւ երի²⁰ ազգ ասին, ²¹այսպէս
եւ եղբաւորորդւոյն²² ²³եւ կամ այլոց առ

միմեանս առաջին ազգն ²⁴եւ երկրորդն
²⁵եւ երրորդն եւ քառորդ՝ ազգ ասին:

13 Եւ ոչ այսչափ, բայց եւ այլ որո-
շումն արժանի²⁶ զարմանալոյ ուսուցանէ
աստուածագանն²⁷ մեզ աւրէնք՝ զառա-
կանս նուոյ²⁸ մի՛ յայտնեցես, եւ
զդուստր²⁹ դստեր կամ³⁰ զդուստր ուստեր
նորա մի՛ առնուցուս: 14 Որ ցուցանէ
զայս իբր թէ մեռեալ որդւոյն, եւ նուոյն³¹
առն այլում եղեալ եւ ծնեալ ուստր ³²եւ
նորա կին առեալ այլ դուստր ծնանիցի,
մի՛ առնուցուս զնա³³ կնութեան³⁴, զի ամ-
բարշտութիւն է: 15 Այսու³⁵ զկատարեալն
իսկ³⁶ զսահման ցուցանէ եւ թէ՛ ցո՞րս³⁷
³⁸խորշելի է յամուսնութենէ:

16 Իսկ Սուրբ Հոգին Ովսեաւ մարգա-
րէիւ զամենայն անհնարին եւ զչարհար
մեղս փոքր համարեցաւ առ այսու³⁹ յանց-
մամբ եւ ամբաստանութեամբ⁴⁰: 17 Լո՛ւր,
որ զասացեալս նշանակէ՝ եթէ լոկ ա-
նուամբ գոյ զի՛նչ հարագատութիւն ի մի-
ջի կայ, ասէ⁴¹, դատաստան Տեառն է ընդ
բնակիչս աշխարհի, զի ոչ գոյ նշմարտու-
թիւն եւ ողորմութիւն եւ գիտութիւն⁴² Աս-
տուծոյ ի վերայ երկրի, այլ անէծք եւ ստու-

1 g համօրեայ / մնաց. օրին. համօրեայ
2 af զառակս / g զառաչականս
3 a լինիմ
4 g մի՛ յայտնեցեսն
5 ad քան զայն / b չի՛ք քան
6 g երրորդ նշանակի
7 b կոչեսցի
8 acdefg յայտնագոյն դառնալոյ
9 b ցուցելոյ
10 b չի՛ք մեր
11 g զառականս
12 a միայն դստեր քո / b ուստեր դստեր քո
13 g քեռ
* Գ է - Ժ Ը 10
14 b չի՛ք այլ
15 c չի՛ք ոչ / b ոչ ուրե՛ք
16 c ապա / g այլ թէ ի հօրաքեռ
17 a աւելի որդի
18 b մի է. նոյն է եւ որդւոց / cefg մի է եւ նոյն է
19 bf երկրորդ
20 f երրորդ / b եւ երրորդն եւ չորրորդն / d
երկիր, սխալ
21 b չի՛ք այսպէս եւ եղբօր որդւոյն ... ազգ ասին
22 a եղբօր որդւոցն
23 a չի՛ք եւ կամ այլոց

24 d չի՛ք եւ երկրորդն
25 ac չի՛ք եւ երրորդն
26 b չի՛ք արժանի
27 g աստուածագացն
28 b նուոյ քո / g ուստ, սխալ
29 a զուստր
30 a եւ կամ / d աւելի նորա / b չի՛ք կամ զդուստր
... նորա
բ Հ մ գ ՝ Գ է - Ժ Ը 15:
31 b նուոյն, աղնատմունք
32 c չի՛ք եւ նորա կին ... դուստր
33 a չի՛ք գնա
34 a ի կնութիւն / d ի կնութեան
35 a այսինքն
36 b չի՛ք իսկ
37 bcdef ցոր / g յո՞ր
38 a ցուցանէ զի գարշելի է
39 a յայսու
40 a անբանարութեամբ, աղնատմունք
41 b այդ
42 a գթութիւն

 37 առաքեալն եւ յորդւոյ. «Քանզի ահա զձեզ առաքեմ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց» (Մ՝՝. Ժ 16). առաքեցան եւ ի Հոգւոյն Սրբոյ, որպէս ասէ ի Գործս Առաքելոցն
 38 Մ՝՝. ԻԸ 18-19

Դի Հոգւոյն՝ իջին ի Սելեւկիա¹։ 73 Ասեմ իբրեւ Տէր, շուարո՛ւք իբրեւ ծառայ։ 74 Ի պահել նոցա եւ ի պաշտել Տեառն, Հայեցարո՛ւք։ 3Ի պաշտելն ասէ. ասասցեն որք յանդգնին 4պաշտաւնեայ զՀոգին Սուրբ ասել. քանզի՝ Ո՞րք արար զիրեշտակս իւր հոգիս եւ զպաշտաւնեայս իւր ի բոց հրոյ՞։ 75 Բայց 5ո՛չ պաշտաւնեայ եւ Հոգին Սուրբ, այլ պաշտեալ։ 6Ի պաշտել նոցա, ասէ, Տեառն՝ Ասաց Հոգին Սուրբ. 7որոշեցէ՛ք ինձ զՊաւղոս եւ զԲառնաբաս ի գործ⁷։ 76 Տեսե՛ր զիշխանութիւնն. ծառայ ո՛չ երբէք ասէ. 8Որոշեցէ՛ք ինձ. այլ Տեառն է ձայնս. այժմ դուք 9որոշեցէ՛ք ինձ զՊաւղոս եւ զԲառնաբաս, քանզի ես¹⁰ որոշեցի զգոսս յորովայնէ մաւր իւրեանց։

77 11Յետ սակաւուց։

Այժմ այլ իմն Հարցումն Հայհոյութեան Հարցանեն¹² ասելով. Ունի՞ր աթոռ Հայր. ասեմք՝ այո՛ւ. Աստուած մտաւ յաթոռ Սրբութեան իւրոյ⁷. ունի՞ր եւ աթոռ եւ

13Որդի. ասեմք՝ այո՛ւ. Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս¹⁴։ 78 Եւ դու 15յորժամ աթոռ լսես Աստուծոյ՝ աստուածվայելչաբար 16իմա՛ զաթոռն, զիշխանութիւնն, զթագաւորութիւնն, զտէրութիւնն. վասն զի ընդ մեզ Գիրք իբրեւ 17ընդ մանկտեակս խաւսին։ 79 Արդ, ասեն. ո՞րք գրեցաւ, եթե եւ Հոգին Սուրբ ունի 18աթոռ, զի Համապատիւ տէրութեանն արասցուք¹⁹։ 80 20Այնպիսեացն ո՛չ է արժան պատասխանի առնել. 21քանզի եթե առաքելոցն աթոռք են

13 Հայր. ասեմք այս. գրեալ է յաղագս Որդւոյ
 14 յաւիտեանս յաւիտեանից
 Է Սաղմ. ԽՊ. 7
 15 Այդ աթոռ յորժամ լսիցես
 16 իմա՛յ, աթոռն այս է
 17 ընդ մարդկան խօսին
 18 զի յաթոռոյն իմացաք զհամապատիւ
 19 չի՛ք
 20 Տայցե՞մք առ այնպիսի հարցուածս պատասխանի. պարտ եւ արժան է մանաւանդ եւ ոչ պատասխանի տալ այնպիսեացն
 21 Բանգի եթե ծառայք յերկրէ լեալք, զառաքելոցն ասեմք արժանիք եղեն յաթոռ մտել. «Ահա դուք երկոտասանից, ասէ, մտաջիք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգ Իսրայելի» (Գէ՛ս Սաղմ. ԺԹ. 28), եւս առաւել Հոգին Սուրբ։ Եւ առ այդմիւր ո՞րք Հոգւոյն փառք. փառաւորի Հայր, փառաւորի եւ Որդի. ո՞րք փառաւորի եւ Հոգին Սուրբ, ինդրեն անհաւատքն։ Ասասցէ Եսայիաս եւ Պաւղոս վկայեցէ. «Տես զՏէր վերայ աթոռոյ բարձու» (Ես.՝ 9. 1). յաղագս Հոգւոյն ասէ, որպէս յինէն յաւետ ցուցցի այս. եւ ամբարձեցելոյ, ասէ. եւ լի էր տունն փառաւորն, եւ սերովքէ կային շուրջ զմովաւ. վեց թեւ միոյ եւ վեց թեւ միոյ, աղաղակէին ասելով. «Սո՛ւրբ. սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէր Սաբաւովք, լի է երկին եւ երկիր փառաւոր քովք» (Գէ՛ս Ես.՝ 9. 2-3). հայեա՛ց աստանաւր, եւ զաթոռն տեսանես եւ զփառսն։ «Եւ ասէ Տէր ցիս. Զո՞ առաքելից եւ ո՞ երթիցէ առ ժողովուրդն այն՝ Հրեից, եւ ասասցէ ցնոսա. լսելով լուիջիք եւ մի՛ իմասջիք, եւ տեսանելով տեսջիք, եւ մի՛ տեսջիք. վասն զի թանձրացաւ սիրտ ժողովուրդեանն այնորիկ եւ ականջաւն ծանունս լուան» (Գէ՛ս Ես.՝ 9. 8-10), եւ որ ի կարգին է։ Գայ Պաւղոս յետ բազում ազգաց նախապարհաւ մարգարէութեանն. լինի ի Հոովմէ, վինի ընդ Հրեայսն, տեղեկացուցանելով նոցա զՄիածնին Քրիստոսի զհաւատն, իսկ նոքա ի բաց դառնային եւ ո՛չ հաւատային, եւ յայնժամ յիշէր զմարգարէութիւնս զայս, յորժամ լցաւն, եւ զի՞նչ ասէր ցնոսա. Բարւոք ասաց

1 ի Հոգւոյն Սրբոյ, իջին ի Սելեւկիայ։ Կոչեաց Հայր զառաքելսն, կոչեաց եւ Որդի, նմանապէս եւ Հոգին Սուրբ կոչեաց զնոսա. ի սպաս տանելն նոցա Տեառն յայտ է թե առաքելոցն ասէ Հոգին Սուրբ. Որոշեցէ՛ք ինձ զԲառնաբաս եւ զՊաւղոս ի գործ. յոր գոչեմ զգոսս. որոշեցէ՛ք դուք ինձ զԲառնաբաս եւ զՊաւղոս. ասեմ
 * Գ.՝ Գ.՝ Ժ.՝ Գ.՝ 4
 2 եւ լուարուք իբրեւ ծառայք
 3 եւ ի պաշտելն
 4 եթե պաշտաւնեայ է Հոգին Սուրբ, մի ի հրեշտակաց եւ ի սրբոց առաքելոցն է, Բանգի
 ք Ես.՝ Ե.՝ 7
 5 ո՛չ է պաշտաւնեայ
 6 ի պաշտելն
 7 Որոշեցէ՛ք ինձ. հայեա՛ց եւ յայն, որ ասէն. Որոշեցէ՛ք ինձ
 ք Գ.՝ Գ.՝ Ժ.՝ Գ.՝ 2
 8 որոշեցէ՛ք, այլ
 9 որոշեցէ՛ք ինձ զՊաւղոս եւ զԲառնաբաս ի գործ, յոր կոչեմ զգոսս. այժմ դուք
 10 ես ահա
 11 Տե՛ս Ե, ք. 157v:
 12 գտին եւ հարցանեն զմեզ
 Գ Սաղմ. Խ.՝ 9

պատրաստեալ եւ դատաւորութիւն, ո՛րչափ բաշխաւորին պարգեւաց զչնորհս իւր ի նոսա: 81 Ասէ Եսայիաս. Տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ՞, եւ որ զկնի բանք իցեն. զկնի դարձեալ ասէ. Լուայ զձայն նորա, եւ ասէր ցիս. Ե՛րթ առ ժողովուրդն եւ ասացես ցնոսա. լսելով լուիջիք եւ մի՛ իմասջիք: 82 Յետ բազում ժամանակաց, ի ընդ մարգարէութեանս այսորիկ՝ գայ Պաւղոս ի Հռոմ, վիճի ընդ հրեայսն, եւ անմիաբանեալ նոցա՝ ասէ. Դարևո՞ւ ասաց, ո՛չ Հայր եւ ո՛չ Որդի, այլ Հոգին Սուրբ, այն, որ յաթոռ բարձրութեանն՝ ի ձեռն Եսայայ մարգարէի. Լսելով լուիջիք, եւ որ զկնի: 83 ³Արդ, ո՞վ իցէ մոլորեալն, որ յերկուանայ՝ ասելով, եթե պաշտաւնեայ է Հոգին Սուրբ, որում փառք վայելէ ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ:

1 Կիրդի եպիսկոպոսի Աղեփանդրացւոյ՝ ի Սուրբ Երրորդութիւնն:

2 Երրորդութիւն նոյն բնութեամբ՝ երեք դէմք, մի զաւրութիւն, մի աստուածութիւն. յամենայն ժամ Հայր, յամենայն ժամ Որդի, յամենայն ժամ Հոգին Սուրբ: 3 Մի Աստուածութիւն է յերեսին դէման. որպէս կամի, որպէս խորհի՝ ամենայն ուրեք է, մի հրամանք, մի կամք, մի թագաւորութիւն՝ յերեսին դէման Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ:

1 Եզնկայ Կողբացւոյ՝ թարգմանչի ի Հայս:

2 Մի Աստուած խոստովանիմք՝ յանդիմանութիւն բազմանուն չաստուածոցն, ինքնակաց, անպատճառական, պարզական, անյաւղական, արարիչ, ամենակալ, ամենազաւր, ամենագործ, Հաստիչ եւ կազմիչ երեւելեաց եւ աներեւութից: 3 Եւ ի նմանէն եւ ընդ նմա եւ առ նմին մի Ծնունդն՝ անսգբնակից, արարչակից, Համազաւր, Համագործ: 4 Եւ մի Հոգի Սուրբ Աստուծոյ, մշտնջենաւոր բղխեալ եւ ընդ նմին եւ առ նմին՝ արարչակից եւ զաւրակից Հաւր եւ Որդւոյ: 5 Այսպէս կատարեալ Սուրբ Երրորդութիւնն դաւանի սուրբ եւ ի Համաշխարհական եկեղեցիս, անմարմին, անզնական, անտարրական, կանխագէտ, յառաջիմաց քան զամենայն արարեալս եւ Հաստատեալս, ի մի թագաւորութիւն եւ ի մի աստուածութիւն՝ յերիս անձինս կատարեալս: 6 Զի ո՛չ անձն Հաւր է անձն Որդւոյ, քանզի ո՛չ իւրոյ անձինն է Հայր, եւ ո՛չ անձն Որդւոյ է անձն Հաւր, քանզի ո՛չ եթե իւրոյ անձինն է Որդի. եւ ո՛չ անձն Սուրբ Հոգւոյն է անձն Հաւր կամ Որդւոյ, զի ո՛չ եթե իւրոյ անձինն է Հոգի, այլ Աստուծոյ Հոգի:

1 Երանելոյն Յովհաննու Մանդակունւոյ կաթուղիկոսի:

2 Սրբոյ զուգական եւ միասնական Երրորդութեանն՝ երեք անձինք, մի Աստուածութիւն, մի հականութիւն, մի իսկական էութիւն, մի ինքնական էութիւն, մի ինքնակալ էութիւն. մի է թագաւորութիւն, մի է արքայութիւն, մի է տէրութիւն, մի է իշխանութիւն, մի է փառաւորութիւն, մի բնութիւն, մի հաւասարութիւն. մի է սրբութիւն, մի է լուսաւորութիւն, մի է ընտրողութիւն, մի է կարողութիւն, մի է [տ]իրողութիւն, մի է կամք, մի խորհուրդ, մի փառք, մի պատիւ, մի հաւատ, մի յոյս, մի սէր. մեծ, հզաւր, կարաւղ եւ ի վեր քան

« Ե․․Չ 1
 ք Տէ՛․ Ե․․Չ 8-9:
 1 այդ բարևո՞ւ ասաց Հոգին Սուրբ
 ք Տէ՛․ Գ․․ք շ․ ԻԸ 25-26:
 2 ի կարգին է
 3 Արդ, եթե Եսայիաս Տէր Սաբաւովք ասէ, ի վերայ աթոռոյ բարձու նստեալ եւ ի հրեշտակաց փառաւորեալ, եւ Պաւղոս ասէ, եթե Հոգին Սուրբ, ո՞ր իցէ արդեւ մոլեալ, որ յերկուանայ, թե արդեւ ո՛չ իցէ Տէր եւ Աստուած Հոգին, եւ եթե պաշտաւնեայ իցէ. եւ նմա փա՛ւո՞ւ, յաւիտեանս յաւիտեանից. ամէն:

զամենայն. անեղ, անանց, անսկիզբն, անվախճան, անկատարած, անհաս, անտես, անքննին, ո՛չ իւրիք կարաւտ եւ ո՛չ իմիք ցանկացաւզ. ամենահայր, ամենարար, ամենալուր, ամենապարզեւ, ամենահաս, ամենատես, ամենագէտ, ամենափրկիչ, ամենակեցոյց. որ ակնարկելովն դարմանէ զամենայն արարածս՝ զերկնաւորսն եւ զերկրաւորքս, զերեւելիս եւ զաներեւելիս, ի շէնս եւ յանշէնս, յամենայն արարածոց՝ յերեւելեաց եւ յաներեւուծից, յերկնաւորաց եւ յերկրաւորացս, որում փա՛ռք յաւիտեանս. ամէն:

1 Յովհաննու Մայրագումեցոյ նգնաւոր Խոստովանողի:

2 Եւ արդ, այսպէս հաւատամք եւ խոստովանիմք զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին Սուրբ՝ միշտ ի միութեան եւ յանորոշաւորութեան, ցանգ անբաժանելի, անփոփոխելի եւ [ան]այլայլի: 3 Զի Հայր միշտ Հայր է եւ կատարեալ յամենայնի, եւ ծնաւ Միածնի Որդւոյ իւրոյ. եւ Որդի միշտ Որդի եւ կատարեալ յամենայնի, եւ ծնունդ միածնողի Հաւր իւրոյ. եւ Հոգին Սուրբ միշտ Հոգի Սուրբ, ելումն ի նորին էութենէ, կատարեալ ամենայնիւ. երեք անձնաւորութիւնք անբաժանելիք ի միմեանց եւ անշփոթելիք: 4 Մի բնութիւն, մի գաւրութիւն, մի էութիւն՝ ամենեւին հարթ հաւասար ի փառս մեծութեանն. ո՛չ ժամանակումն ինչ միջակութեան, նախասկիզբն ել ինչ լինելութեան, այլ յաւէտ, յարակայ եւ ամենեւին անընդմիջելի էութիւն Սուրբ Երրորդութիւնն. զի ընդ Հաւր կատարելութեանն իմանի կատարեալ ե՛ւ Որդի ե՛ւ Հոգին Սուրբ: 5 Ո՛չ առանձին բաժանեալ Հայր, զի միշտ զՄիածինն ի ծոց իւր կրէ. ո՛չ առանձին բաժանեալ է եւ Որդի, զի ո՛չ մեկնի յՈրդւոյ Հայր. ո՛չ առանձին բաժանի Սուրբ Հոգին, զի ելանէ ի Հաւրէ, եւ ո՛չ բաժանի, բղխէ եւ ո՛չ սպառի: 6 Այսպէս անբաժանելի է Սուրբ Երրորդութիւնն:

7 Եւ վասն զի Հայր միշտ Հայր է, եւ ո՛չ փոփոխի յՈրդի, եւ Որդին միշտ Որդի է եւ ոչ փոփոխի ի Հայր, եւ Հոգին Սուրբ միշտ Հոգի է, եւ ո՛չ փոփոխի ի Հայր եւ յՈրդի. վասն այսորիկ անշփոթելի իմանի Սուրբ Երրորդութիւնն: 8 Եւ հաւաւսիկ նզովեմք զՍաբէլիոս, զի ընդ շփոթութեամբ փակեաց զբնութիւն Սուրբ Երրորդութեանն: 9 Նզովեմք եւ զԱրիոս, զի բաժանեաց զՈրդի ի Հաւրէ բնութենէ եւ աւտարացեղութիւն խառնեաց յանխառն էութիւնն: 10 Նզովեմք եւ զՄակեդոն, զի բաժանեաց զՀոգին Սուրբ ի Հաւրէ եւ յՈրդւոյ. իբրեւ զարբանեակ ասաց եւ զսպասաւոր: 11 Բայց զայժմու ճարտարաց Յունաց զի՞նչ պարտ է համարել, որք ասեն զՍուրբ Երրորդութիւնն դիմաւք եւ առանձնաւորութեամբ բաժանեալ ի միմեանց եւ աստուածութեամբն միաւորեալ: 12 Այս հաւատ մարդկային խորհրդով է, կարծել ընդդէմ ասել Սաբելի խանգարմանն, եւ զԱրիոսի եւ զՄակեդոնի զանջատողականն ի ներքս մոլծանել, որպէս մարդոյ ումեք, որ հայր իցէ երկուց որդւոց, զէմս եւ առանձնաւորութիւնս բաժանել, եւ բաժնոց եկամտութիւն լինել յանբաժանելի Երրորդութիւնն: 13 Ո՛չ վասն այսորիկ գրեցաւ. Հաւաւսի՛ն անձն մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զաւրութեամբ Աստուծոյ՞: 14 Այս է գաւրութիւն Աստուծոյ առ կատարեալ հաւատն. զի Հայր միշտ յինքեան է, եւ յՈրդւոյ երբէք ո՛չ բաժանի, որպէս Միածինն ասաց առ հրեայսն. Դատաստան իմ նշմարիտ է, զի չեմ միայն, այլ ես եւ որ առաքեացն զիս Հայրէ. եւ դարձեալ. Որ առաքեացն զիս ընդ իս է, ո՛չ եթող զիս միայն՞. եւ ցաշակերտսն ասաց. Ամենեքեան դուր ցրուեսչիք յիմէն եւ զիս միայն թողուցուք:

« Ը. Կ. Գ. Բ. 5
բ. Յ. Կ. Բ. 16
գ. Յ. Կ. Բ. 29

եւ չեմ միայն, զի Հայր ընդ իս Է՞: 15 Արդ, ո՞ւր է առանձնաւորութիւնն բաժանեալ: 16 Նոյնպէս եւ Որդի միշտ յինքեան է, բայց ի Հաւրէ ո՛չ բաժանի, որպէս ի սուրբ Աւետարանին ասէ. ԶԱստուած ոչ ո՛ր ետես երբեք, բայց Միածին Որդին, որ ի ծոց Հաւր՝ նա պատմեաց՞. եւ առ Նիկիոզիմոս ասաց Տէրն. Ոչ ո՛ր ել յերկինս, եթե ո՛չ որ էջն յերկնից՝ Որդի մարդոյ, որ էն յերկինս՞. եւ դարձեալ ասէ. Զի գիտասցիք եւ ծանիջիք եթե Հայր յիս եւ ես ի Հայր՞. եւ ցՓիլիպպոս ասէ. Ո՞չ հաւատաս, եթե ես ի Հայր եւ Հայր յիս, եւ թէ՛ Հայր, որ յիս բնակեալ էն՝ գործէ զգործնէ: 17 Արդ, ո՞ւր է առանձնաւորութիւնն բաժանեալ: 18 Նոյնպէս եւ Հոգին Սուրբ միշտ յինքեան է, եւ ի Հաւրէ եւ յՈրդւոյ ո՛չ բաժանի. վասն զի միշտելումն ասի եւ հանապազարդիւումն, որպէս եւ Տէրն ասէ. Հոգին նշմարտութեան, որ ի Հաւրէ ելանէ, նա վկայեցէ վասն իս՞: 19 Տեսանե՞ս զգերահրաշնութիւն Բանին. ո՛չ ասաց, եթե Հոգին ճշմարտութեան, որ ի Հաւրէ ելեալն է, այլ թէ՛ որ ի Հաւրէ ելանէ: 20 Տեսանե՞ս, զի ելանէ եւ ո՛չ բաժանի, բղխէ, եւ ո՛չ սպառի. վասն որոյ ասաց իսկ. Յորժամ եկեսցէ նա՝ Հոգին նշմարտութեան, առաջնորդեցէ անգ զամենայն նշմարտութեամբ. ո՛չ եթե յանձնէ ինչ խաւսեցի, այլ թե՛ յիմմէ անտի առնու եւ պատմեցէ անգէ: 21 Տեսանե՞ս՝ որպէս երից անձանցն հաւաստապէս կատարեալ միութիւն ճանաչի՝ անբաժանելի եւ անորոշելի. եւ որպէս անորոշելի եւ անբաժանելի ճանաչի, նոյնպէս անշփոթելի եւ անփոփոխելի իմանի: 22 Այս է անհասական պայման անբաւ էութեանն. վասն այսորիկ ասացաւ. Հա-

ւստ՛ ան մի՛ իցեմ իմաստութեամբ մարդկան, այլ զաւրութեամբ Աստուծոյ: 23 Եթե զաւրութեամբ Աստուծոյ է գիտել զճշմարտութիւն հաւատոցն, նոքա զիս՞որդ յաւակնեցան՝ մարդկային իմաստութեամբ դիմաց եւ առանձնաւորութեան բաժանումն հետազաւտել, եւ բաժանմանցն հրապոյրք եւ դիմացն որոշմունք յաստուածային Գիրս ո՛չ երբէք գտանի: 24 Ընդէ՞ր ո՛չ ասաց Որդին Աստուծոյ, եթե բաժանեցայ ի Հաւրէ եւ եկի յաշխարհ. քա՛ւ, այլ՝ Ելի, ասէ, ի Հաւրէ՞, եւ երկրորդէ եւ ասէ. Ես յԱստուծոյ ելի եւ եկի՞: 25 Տեսանե՞ս զելսն ճշմարիտ եւ զանբաժանելիս, զի յերկինս է եւ յերկրի՝ առ Հայր եւ ընդ Հաւր: 26 Տե՛ս եւ զբաժանմանց թերութիւն, որով տգեղութիւն աւտարացեղութեանն եկամուտ լինի, որով անիծաւ Իսկարիոս: 27 Նաեւ զդիմացն իսկ որոշմունս ընդէ՞ր քարտաւատեն եւ բաժանեն. զի յորժամ ասեմք զԱստուածութենէն՝ Հայր եւ ծնաւղ եւ առաքաւղ Միածնի Որդւոյ իւրոյ, ո՛չ դէմքն բաժանին, այլ դէմքն յայտնին, եւ յորժամ ասեմք զՈրդւոյ՝ Բան եւ Որդի եւ Ծնունդ, ի դէմս Որդւոյ վերաբերի Բանն, այլ ո՛չ եթե դէմքն բաժանին. եւ յորժամ ասեմք զՀոգւոյն Սրբոյ՝ ելումն եւ բղխումն, եւ առաքումն ի Հաւրէ եւ յՈրդւոյ, դէմքն երեւին, այլ ո՛չ եթե բաժանին: 28 Այս դէմք ըստ առանձնաւորութեանն եւ ըստ անուանցն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ վերաբերին, եւ ո՛չ բաժանին, եւ երեւին եւ ո՛չ անջատին: 29 Դարձեալ դէմք համասեռք վերաբերին յաղագս միութեանն, զի մի է Աստուածութիւնն. մի էութիւն, մի գոյութիւն, մի բնութիւն, մի լոյս, մի փառք, մի զաւրութիւն, մի իշխանութիւն, մի պատիւ Սուրբ Երրորդութեանն ճանաչի, եւ զգուշանամք յորձորը-

» Տե՛ս Յ՝ՎԳ՝ ԺՊ 32:
 բ Յ՝ՎԳ՝ Ը 18
 գ Յ՝ՎԳ՝ Գ 13
 դ Յ՝ՎԳ՝ Ժ 38
 է Յ՝ՎԳ՝ ԺԴ 10
 Ղ Յ՝ՎԳ՝ ԺԵ 26
 և Յ՝ՎԳ՝ ԺԶ 13

ը Ը Կ՝Գ՝ Բ 5
 թ Յ՝ՎԳ՝ ԺԶ 28
 ժ Յ՝ՎԳ՝ Ը 42

մանցն եւ ի շփոթութեանցն Սաբելի, ողջ պահելով զերից անձանցն կատարելութիւնն. զգուշանամք եւ ի բաժանմանցն եւ յաւտարացեղութեանցն Արիոսի՝ ողջ պահելով զմիութիւնն յԵրրորդութեանն:

30 Նորին:

31 Այսպէս հաւատամք ի Սուրբ Երրորդութիւնն, խոստովանելով զմիմիայն Հայր Աստուած՝ զինքնագոյն յէութեան, զէակն անսկզբնաւոր, զծնաւղն եւ զառաքաւղն Միածնի Որդւոյ իւրոյ, զարարաւղն համանգամայն գոյութեանց, յորմէ Սուրբ Հոգին բնաբար ելիւքն լնու գտարերքս եւ զանտարերքս: 32 Եւ զմիմիայն Միածինն Յիսուս Քրիստոս՝ զծնունդն Աստուածութեան, զիսկզբանէ Բանն, զառաքեալն ի Հաւրէ, զմարմնացեալ եւ մարդացեալն յԱստուածածնէն Մարիամայ, կատարեալն յաստուածութեանն եւ ի մարդկութեանն՝ զլոյս երեսաց Հաւր, զնկարագիր էութեանն, զպատկեր երեւելոյն Աստուծոյ, որ զամենայն արարածս բանիւ հրամանաւ իւրով գոյացոյց: 33 Եւ զմիմիայն ամենազաւր Հոգին Սուրբ, զմշտնջենաբողիւ լոյս, զհաւասարն Հաւր, զանեղն եւ զհամագոյն Հաւր եւ Որդւոյ, որ զաղաւնակերպեալն աստուածազան հրաշիւքն՝ անգոյք յեղելութեան զանազանութիւնն աստուածազան յիւրնուածով վերանգեցան: 34 Այսպէս հաւատամք ի Սուրբ Երրորդութիւնն եւ խոստովանիմ զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին Սուրբ՝ յանշփոթ եւ յանբաժանելի:

1 ¹Երանելոյն Սեբերիանոսի Գոբելի-նից սրբական եպիսկոպոսի՝ ի յԵրրորդ Գառնի, ի բանէն՝ Երեկ Գառնցալ:

Եկեղեցի ո՛չ երիս ամենակալս գիտէ,

այլ մի զաւրութիւն, որ զամենայն² ունի, եւ³ ճշմարտութեամբ ⁴ամենակալութիւնն Հայր եւ Որդի եւ Հոգին ճանաչի: 2 Որ սիցէ երիս աստուածս որոյն⁵ ի միմեանց՝ նզովեա՛լ եղիցի: 3 ⁶Որ սիցէ երիս ամենակալս, բաժանեալս ի միմեանց՝ նզովեա՛լ լիցի: 4 Որ⁷ ո՛չ դաւանեսցի⁸ մի ամենակալ զԵրրորդութիւնն՝ նզովեա՛լ լիցի:

1 ⁹Սահմանք հաւատոյ՝ որք ի Նիկիայ ժողովեցան սուրբ եպիսկոպոսքն, բացատրութիւն Գառնի ժողովոյն առ Պաղոս Սամոսացի:

2 ¹⁰Խոստովանիմք զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ զի Հաւրէն յառաջ քան ¹⁰զյաւիտեանս Հոգւով Սրբով ծնեալ, ի վախճան աւուրց ի սրբոյ Կուսէն ըստ մարմնոյ ծնեալ, մի ¹¹դէմ, շարագրեալք յերկնային աստուածութենէն եւ ի մարդկային մարմնոյն: 3 Եւ ըստ որում մարդն էր՝ ամենեւին Աստուած եւ ամենեւին մարդ էր. բոլորովին Աստուած եւ ¹²Հանդերձ մարմնովն, այլ ո՛չ ըստ մարմնոյն Աստուած, եւ բոլորովին մարդ՝ Հանդերձ աստուածութեամբն, այլ ո՛չ ըստ աստուածութեանն մարդ: 4 Այսպէս բոլորովին երկրպագելի է, եւ Հանդերձ մարմնովն, այլ ո՛չ ըստ մարմնոյն երկրպագելի է¹³. եւ բոլորովիմք¹⁴ երկրպագելի է՝ Հանդերձ¹⁵ աստուա-

2 զամենայն
3 չի՛ք
4 ամենակալութիւնն ի Հայր, յՈրդի եւ ի Հոգի Սուրբ Գառնացի
5 ուրոյն
6 չի՛ք Որ սիցէ ... լիցի
7 եւ որ
8 դաւանեսցէ
9 Տե՛ս Խ, ք. 44v. Սահմանք հաւատոյ, որ ի Նիկիայ ժողովեցան սուրբ եպիսկոպոսքն Յովն Յովն.
10 զյաւիտեանս ծնեալ Հոգւովն Սրբով
11 դէմ շարագրեալ
12 չի՛ք
13 չի՛ք
14 բոլորովին
15 եւ հանդերձ

1 Տե՛ս Զ, ք. 265. համեմատութիւնն ըստ տպագրին՝ Սեբերիանոսի Եմեսացոյ, Գարաղացոյ եպիսկոպոսի՝ Ճառք ԺԵ, Վեներտիկ-Ս. Ղազար, 1830, էջ 76:

ծուծեամբն, ¹այլ ո՛չ ըստ աստուածութեանն միայն երկրպագելի²: ⁵ Բոլորովին անստեղծ, եւ Հանդերձ մարմնովն, այլ ո՛չ ըստ մարմնոյն անստեղծ: ⁶ Բոլորովին ստեղծանելի է³, եւ Հանդերձ աստուածութեամբն, այլ ո՛չ ըստ⁴ աստուածութեանն ստեղծանելի է⁵: ⁷ Բոլորովին Համագոյացութիւն Աստուծոյ՝ Հանդերձ մարմնովն, այլ ո՛չ ըստ մարմնոյն Համագոյացութիւն Աստուծոյ, որպէս եւ ո՛չ ըստ աստուածութեանն Համագոյացութիւն մարդկան, եւ սակայն աստուածութեամբն էացեալ՝ ըստ մարմնոյն մեզ է Համագոյացութիւն: ⁸ Քան⁶ յորժամ ըստ Հոգւոյն ասեմք զնա Աստուծոյ Համագոյացութիւն, ո՛չ ասեմք ըստ Հոգւոյն մարդկան Համագոյացութիւն. եւ դարձեալ, յորժամ քարոզեմք ըստ մարմնոյ⁷ մարդկան Համագոյացութիւն, ո՛չ քարոզեմք զնա ըստ մարմնոյն Աստուծոյ ⁸Համագոյացութիւն. քանզի որպէս ըստ Հոգւոյն մեզ չէ Համագոյացութիւն, այսպէս այսոցիկ ընտրութիւնք զատեալք են, ո՛չ առ բաժանումն միոյ դիմացն անբաժանելոյ⁹:

1 ¹⁰Այս թուղթ հերձուածողացն, գոր

1 այլ ո՛չ աստուածութեամբն
 2 երկրպագելի է
 3 չի՞
 4 չի՞
 5 չի՞
 6 քանզի
 7 մարմնոյն
 8 համագոյացութիւն, վասն զի ըստ Աստուծոյ է յայսմիկ համագոյացութիւն, այսպէս
 9 *Խ՝ ձեռագրում աւելի է՝* բայց այդչափ թէ վասն ի Կուսէն ձեռնդեան զինչ եւ ասեն նեստորականն՝ թիւրք եւ սուտք են. որ եթէ սկզբնագրում լինէր, այս հատուածը նիկիոյ ժողովի հետ ո՛չ մի անղչութիւն չէր կարող ունենալ հարկաւ:
 10 *Հմմտ. Մ, Թ. 327v.* Զայս թուղթս ասեն յիշել Կիրոզի յիւր թուղթսն: Սրբոյն Աթանասի եպիսկոպոսի, Աղեֆանդրի հայրապետի՝ թուղթ առ եպիսկոպոսն եպիսկոպոս Կորնթացոց, Յաղագս ուղղափառ հաւատոյ՝ ընդդիմադրութիւն սակս յարուցելոց ոմանց հակառակ ճշմարիտ եւ սուրբ հաւատոյ: Նոյն թուղթը, ինչպէս այս եւ

վերնագրեցին եթե Աթանասի է առ Ատտիկոս, եւ լի է հայիոյութեամբ:

2 ¹¹Ես այսպէս ածէի զմտաւ, եթե ամենայն ընդունայնաբանութիւնքն, ուր եւ իցեն Հերձուածողաց եւ աղանդաւորաց՝ լռեալ դադարեացին ի լինել մեծ ժողովոյն Նիկիայ. քան որ ի նմա ըստ աստուածեղէն Գրոց դաւանեցան ի Հարցն Հաւատք՝ կարող էին տապալել զամենայն ամպարչտութիւնս եւ Հաստատել զբարեպաշտութիւն քրիստոսեան Հաւատոյս: ³ Քանզի եղեն եւ այլ ի բազում տեղիս ժողովք՝ ի Գալիա եւ ի Սպանիա եւ ի մեծն ի Հռոմ եւ էր ուրեք ուրեք, որ գաղտնիս որ ունէին զԱրիոսի աղանդն, զԱւքսինտեայ ասեմ զՄեղուլացոյ եւ Ուրասակէս եւ Վաղանդէս եւ Գայիոյն Սպանիացի, վասն այսց արիանոսաց ժողովեցան Հարքն, որպէս ի Սուրբ Հոգւոյն յորդորեալք, նզովեցին եւ ի բաց մերժեցին զարիանոսս, եւ զբեցին յամենայն տեղիս, եթե վասն այսպիսեացս խաբաւղ մոլորութեանցս մի՛ անուանեցի այս սիւնհոգոս, որ է ժողով, որ թարգմանի զուզածանապարհք, եւ կաթողիկէ եկեղեցի, բայց միայն որ եղեւ ի Նիկիայ, որ կարողն է յանդիմանել զամենայն աղանդս, եւս առաւել զաղանդն արիանոսաց, վասն որոյ եւ ժողովեցան իսկ Հարքն: ⁴ Արդ, ո՞րպէս զՀետ այսչափ մեծի Հաստատութեան արժան է յերկբայս լինել, կամ ի խնդիրս եւ ի քննութիւն Հաւատոյս ձեռնարկել: ⁵ Զի թէ ոք յարիանոսաց իցէ՝ չեն ինչ զարմանք, վասն զի զիւրեանցն քակեալ լուծանեն եւ որպէս Հեթանոսք լսեն ի մէնջ, եթե՛ Կուոբ հեթանոսաց արձաթ եւ ոսկի եւ ձե-

ուրիշ ձեռագիրներում կցուած է **Կիրեղ Աղեֆսանդրացու** Պարապմանց գրքին, այնպէս էլ կից տպուած է Կ. Պոլսում, 1717, էջ 491: Բառացի համեմատութիւն տալ չէինք կարող, որովհետեւ այստեղ տարբեր թարգմանութեամբ է, բայց բովանդակութիւնը մէկ է:
 11 *Ձեռագրում կազմելիս սխալմամբ մի թերթ մէջ է ձգած ուրիշ կապակցութիւնից, ապա անմիջական շարունակութիւնն է:*

նագործ եմ որդւոց մարդկան՝, յիմարութիւն համարեմ վասն աստուածեղէն վարդապետութեանն պատուական խաչին՝:

6 Իսկ եթե յուղղահաւատաց, որք սիրեցին զյայտնութիւն Հաւատոյ ժողովոյն Հարցն եւ արդ կամեսցին վերստին քննուան եւ խնդիր առնել՝ ոչինչ վճարեն, այլ ըստ գրեցելոցն՝ Արքուցանեմ ընկերաց իրեանց զմոլորութեանն պղտորութիւնն՝ եւ հակառակաբանութիւն՝ յոչինչ պիտանացու, ի շրջելն յունայնութիւնս:

7 Զայս ամենայն վասն այսորիկ գրեցի առ Քո Աստուածաշտուութիւնդ, զի պատահեալ ընթերցայ զմեկնութիւն գրեւեացն քոց. զոր ո՛չ գրել արժան է եւ ո՛չ յիշատակել զայսպիսի ինչ իրս՝ զհետ այսչափ մեծի Հաստատութեան: 8 Ո՞վ լուաւ զայսպիսի ոք երբէք եւ կամ յո՞րմէ վարդապետէ ոք տեղեկացեալ լուաւ. զի մեք գիտեմք զգրեալսն, ասէ՝ Ի Սիոլմէ ելցեմ արեւմ եւ բան Տեսոն յերուսաղեմէ՞:

9 Իսկ այս հուր բարկութեան ուստի՞ ել եւ բղխեաց, կամ ո՞ր դժոխք զգայուեցան ասել՝ մի բնութիւն որ ի Մարիամայ մարմինն էր եւ Բանին Աստուծոյ, եւ կամ թէ՛ Բանն ի մարմին եւ յոսկր. եւ կամ թէ՛ ամենեւին բնաւ ի բնութիւն մարմնոյ շրջեցաւ, եւ կամ՝ փոփոխեցաւ յիւրմէ բնութենէն:

10 Կամ ո՞ լուաւ յեկեղեցւոջ եւ կամ յամենայն հաւատացեալս, թե պիտակապէս նմանութիւն, եւ ո՛չ զբնութիւն մերոյ մարմնոյս զգեցաւ Տէրն: 11 Եւ ո՞վ այսչափ ամպարչտեալ ասիցէ եւ կամ ի միտս իւր անկանիցի, եթե աստուածութեանն բնութիւն, որ է Հաւր հաւասար, թլփատեցաւ եւ անկատար ի կատարելութենէ իւրմէ եղեւ. եթե որ ի խաչին բեւեռեցաւ՝ չէր մարմին, այլ ինքն էր արարիչ բնութիւնն,

որ էր իմաստութիւն Հաւր: 12 Ո՞ ոք լուաւ ասել զայս, եթե ո՛չ ի Մարիամայ, այլ յիւրմէ բնութենէն շրջեալ արար իւր մարմին անչարչարական՝ Բանն: 13 Եւ ո՞ր հաւատացեալ եւ քրիստոնեայ, որ զայս ասէ, եթե որ ի Մարիամայ է տէրունական մարմինն ո՛չ ասին Երրորդութիւն, այլ Երրորդութիւն յԱստուածութեանն համարին. վասն զի, ասեն, մերձաւոր եղեալ բնութեանս զԵրրորդութիւնն՝ ի մարմնոյն, զոր զգեցաւ ի մարմնոյ Փրկիչն: 14 Եւ կամ ուստի՞ դարձեալ ոմանք զգայուեցան ուղիս ամպարչտութեան՝ ասել յառաջ զմարմինն, եւ ո՛չ յետոյ յապա ժամանակաւ, եւ ո՛չ կրսեռագոյն աւուրս զմարմինն, քան զԲանն Աստուծոյ, այլ միշտ հաւասար ընդ Բանին Աստուծոյ, եւ էր կից ընդ նմին համագոյգ ժամանակաւք. վասն զի գիտացին, եթե ի բնութենէ իմաստութիւն հաստատեալ է՝ ընդ մարմինն միացան: 15 Եւ ո՞րպէս յերկուանալ իշխեցին եւ յանդգնեցան, որ լոկ անուամբ միայն են քրիստոնեայք, եթե որ ի Մարիամայ ծնաւ Տէրն եւ Որդին ըստ բնութեան աստուածութեան հաւասար Հաւրն է, որ եղեւ մարմնով ի գաւակէ Դաւթի՝ ի մարմնոյ Սուրբ Մարիամայ: 16 Եւ կամ ո՞վ ոք են ամպարիչտք, որ այսչափ յանդգնեցան, մինչեւ ասել զՔրիստոսէ, որոյ մարմինն չարչարեցաւ, եթե ո՛չ է Տէր եւ Փրկիչ եւ Աստուած եւ Որդի Հաւր: 17 Եւ կամ ո՞րպէս հաւատացեալք ի Քրիստոս անուանին, որք ասեն՝ որպէս ի մարդ ոք սուրբ, իբրեւ զմի ի մարգարէիցն եմուտ ի նա Բանն, եւ ո՛չ եթե ինքն եղեւ մարդ՝ առեալ ի Մարիամայ մարմին, այլ զայլ ոմն ասեն զՔրիստոս եւ զայլ ոմն Աստուծոյ Որդի. այլ յառաջ քան զՄարիամ եւ քան զամենայն յաւիտեան Որդի էր առ Հաւր: 18 Եւ կամ դարձեալ զիա՞րդ կարիցեն անուանել քրիստոնեայք, որք ասեն՝ այլ ոմն զՈրդին եւ այլ ոմն Բանն Աստուած: 19 Զայս ամենայն գրեալ է ի մեկնութիւնս. պէսպէս մա-

« Սաղմ. ճժԳ. 4. ճԼԳ. 15
 բ Հմմտ. Լ. Կոթ. Լ. 18:
 գ Լմբ. Բ. 15
 դ Ես. Բ. 3

սամբք եւ դիմաւք էր ասացեալ, այլ ամե- նայն ի մի դէմս եկեալ միաբանէր. քանզի ցուցանէր զմիտս ամպարշտութեանն ի ներքս: 20 Վասն այսր ամենայնի դատեալ կշռեցին ընդ միմեանս եւ, կռիւ եղեալ՝ քակեցին զամենայն հերձուածողս ժողով սուրբ հարցն, որ ի Նիկիայ:

21 Այլ ես զարմանամ ընդ Աստուած- սիրութիւն Քո, թե ո՞րպէս ընկալար զայս յանձին՝ որք խափանեալ յայնպիսի սուրբ ժողովոյն, միւսանգամ դարձեալ նորածեւս եւ պէսպէս քննութիւնս ի մէջ բերեն եւ լի- նին ընդվայր եւ հակառակաւ: 22 Քանզի զայս ամենայն ո՛չ ասել արժան է եւ ո՛չ լսել հաւատացելոց քրիստոնէից, այլ աւ- տար եւ հեռի է յառաքելոյ վարդապետու- թենէն: 23 Վասն այսորիկ զոր լուայ ի նո- ցանէ զգրեալսն՝ յայտնի ամենեցուն գրեցի զթուղթս. զի որք լսեցինն՝ հեռացին եւ տեսցեն եւ իմացին զամպարշտութիւնս իւրեանց եւ զամաւթնն: 24 Եւ թեպէտ պէտ էր բազում բանիւք յանդիմանել զանզգամութիւն, որք զայնպիսիսն իմա- ցան, այլ շատ եւ բաւական լիցի մինչ ցայս վայր գրել զթուղթս, եւ մի՛ առաւել ինչ գրել. քանզի կարող է յայտնի ցուցանել զմոլորական միտս՝ որք կամին կրթել, այ- սուլ բանիւք: 25 Եւ ոչ է արժան աւելի ինչ ի խնդիրս եւ ի քննութիւնս արկանել, զի մի՛ հակառակողացն երկբանութիւնք ինչ թուեսցին, այլ առնել նոցա պատասխանի սակաւութեւ ասել, եթե ո՛չ է այս խոր- հուրդ, զորս դուք ասէք զմտաւ, սուրբ եւ կաթողիկէ Եկեղեցոյ, եւ ո՛չ հարքն զայս հաստատեալ կանոնեցին. եւ մեք դարձեալ ո՛չ իսպառ լռեցաք, զի մի՛ պատճառք գտցեն եւ եւս առաւել զչարութիւնս իւ- րեանց անցուցեն:

26 Բարևոք է մեզ եւ յաստուածային Գրոց սակաւ ինչ յիշատակ բերել, զի նո- քաւք յանդիմանեցուք եւ լռեցուցուք զընդվայրած զաղտեղի խորհուրդս նոցա:

27 Արդ, սկսուք ասել. ուստի՞ է նոցա ա- սելն, եթե մի բնութիւն է Բանին եւ մարմ- նոյն Աստուծոյ. քանզի աստի արժան է սկիզբն առնել, զի յորժամ յայսմ ըմբերա- նեսցին նոքա, լուծեալ կորնչին ամենայն ամպարշտութիւնք նոցա: 28 Քանզի ամե- նայն Գիրք միաբանեալ ասեն, եթե Բանն Աստուծոյ մարմին ի կուսէ առեալ՝ ծնաւ է- մանուէլ. եւ հարք ի Նիկիա ժողովեալ՝ ո՛չ եթե զմարմինն, այլ զնոյն ինքն զՈրդին ասացին մի բնութիւն եւ հաւասար Հաւր- իսկ զմարմինն ի Մարիամայ դաւանեցին՝ ըստ գրելոցն յաստուածային Գիրս: 29 Արդ, եթե ոք ուրանայ զասացեալսն ի Նիկիայ սուրբ ժողովոյն եւ իբրեւ զհեր- ձուածաւղս բերէ ի մէջ զայն ամենայն, ե- թե կամիցի որդի լինել հարցն, մի՛ աւելիս խորհիցի, քան զոր գրեցին նոքա. քանզի յայսմ գիտեմք զայլանդակութիւն հեր- ձուածողացն: 30 Արդ, փորձեալ տեսցուք զայն, եթե մի՞ բնութիւն է Բանին եւ մարմնոյն: 31 Մարմինն յերկրէ ունի զբնութիւնն իւր. իսկ Բանին Աստուծոյ եւ Հաւր մի բնութիւն է՝ ըստ հարցն խոստո- վանութեան. ապա թէ այդպէս, զոր ասեն հերձուածաւղքն՝ մի բնութիւն է եւ նոյն իսկ Հաւրն եւ մարմնոյն, որ յերկրէ եղեւ, եւ զի՞ եւս պախարակեն զարիանոսսն, որք ասեն զՈրդին Աստուծոյ արարած. քանզի եւ սոքա աւասիկ ասեն զՀաւր եւ զարա- րածոց մի բնութիւն: 32 Եւ եւս առաւել յամպարշտութիւնսն զարկեալ կործանեն, որք ասեն՝ ի մարմին եւ յոսկր, ի նեարդս եւ ի ջիւս եւ բովանդակ իսկ ի բնութիւն մարմնոյ, թէ շրջեցաւ եւ փոխեցաւ յիւրմէ բնութենէն: 33 Տեսանե՞ս, զի ասացին յայտնապէս, թէ յերկրէ ինքն. քանզի յերկ- րէ ոսկր է եւ բաւանդակ մարմնոյ բնու- թիւն: 34 Արդարեւ մեծ անզգամութիւն է ընդ նոսա հակառակ ասել. այլ զի մի՛ մե- ծաբանեսցեն՝ սանձահարել ընդդիմացուք նոցա: 35 Զի մի բնութիւն ասել Բանին եւ մարմնոյ՝ որպէս ընկեր առ ընկեր նշանա-

կի, որ լինի երկու, եւ ո՛չ մի: 36 Իսկ յասելն, եթե ի մարմին չըջեցաւ Բանն, նորին իսկ Բանին զփոփոխումնն եւ զապականութիւնն ցուցանեն: 37 Ով ոք իցէ, որ զայսպիսի քանս յանձին ունիցի, քան զամենայն Հերձուածաւդս յամպարշտութիւն կործանեցան: 38 Զի եթե մի բնութիւն իցէ Բանին եւ մարմնոյն, աւելորդ էր յիշել զՄարիամ. զի եթե բնութիւն մարմնոյն յառաջագոյն էր քան զՄարիամայնովն, եւ էր աներեւոյթ եւ անտես մարմինն. ապա եթե այդպէս է, եւ նախ իսկ է Բանն: 39 Ապա թէ ըստ ձերում ասելոյ մի բնութիւն է Բանին եւ մարմնոյն, զի՞նչ պէտք էին գալուստ Բանին. վասն որո՞յ եկեսցէ եւ զիւր բնութիւնն զգեցցի, եւ կամ յիւրմէ բնութենէն փոխեալ մարմին լինիցի: 40 Այլ ո՛չ ոք երբեք զայդ ի մոլեգնելոցն ոք կարծէ, եթե ինքն զինքեան զիւր բնութիւնն զգեցաւ, եւ ո՛չ եթե որ ինքն մեղուցեալն իցէ՝ զայլս ի մեղաց փրկեսցէ Բանն: 41 Եւ դարձեալ, եթե չըջեալ փոխեսցի Բանն ի մարմին, ինքն վասն իւր պատարագ մատուցանիցէ եւ զինքն փրկեսցէ: 42 Այս ո՛չ այսպէս, քա՛ւ լիցի: 43 Զգաւակէ Արքաիստոս քուրմն հարեալ՝ առնու մարմին, որպէս ասաց եւ առաքեալն. զի ըստ ամենայնի պարտ է եղբարցն նմանել՝ եւ առնու զմեր զբնութեանս մարմինս: 44 Վասն այսորիկ իսկ եւ անուանէ ճշմարիտ զԿոյսն Մարիամ, զի ի նմանէ զմեր բնութիւնս զմարմինս առցէ, եւ միացուցեալ ընդ Բանին, որպէս իւր՝ վասն մեր զնա պատարագ մատուցէ: 45 Եւ զայս մարգարէացեալ Եսայայ՝ յայտնապէս ցուցանէ. Ահաւասիկ կոյս յղասցի եւ ծնցի: 46 Եւ Գաբրիէլ առ սա առաքեցաւ, ո՛չ եթե առ վայրապար կոյս, այլ որպէս՝ Առ կոյս խաւսեցեալ առնի. զի եւ ի խաւսմանէն ցուցանէ զԿոյս Մարիամ

ճշմարիտ ըստ բնութեան մերում, եւ ի սմանէ ասեն ծնեալ Գիրք սուրբք եւ ի խանձարուրս պատեալ,՝ երանելի ստեամբ դիացեալ՝ եւ մատուցեալ ի տանարիմ վասն սրբութեան պատարագ, վասն բանալոյ եւ պողաբերութեան արար անդի՛ իւրոյ զվանկունս: 47 Այս ամենայն վասն ծննդեան Կուսին է գիտելութիւն եւ ծանալութիւն ամենեցուն: 48 Եւ Գաբրիէլ զգուշութեամբ աւետարանէ զսմանէ՝ ասելով. ո՛չ եթե վայրապար ասաց զծնանելն ի նմանէ, զի մի՛ թե արտաքուստ ի Կուսէն զմարմինն կարծիցէ, այլ զգուշութեամբ ասէ. Որ ի ԲԷՆ ծնանելոցն է՛ է ի նորին բնութենէ, եւ այսպէս Հաւատացեալ՝ յայտնապէս եցոյց զառ բնութեան ծնունդ Կուսին, եւ ո՛չ ուստեք այլուստ: 49 Քանզի չէր Հնար Կուսին լինել կաթն, եթե ո՛չ էր ծնեալ. եւ ո՛չ էր մարթ զիացուցանել եւ կաթամբ սնուցանել զմարմինն եւ պատել ի խանձարուրս, եթե ո՛չ յիւրմէ բնութենէն էր. այլ ծնեալ յիւրմէ բնութենէն՝ այս է որ ութաւրեայ թլփատի: 50 Զսա Շմաւոն ի գիրկս իւր ընկալաւ. սա եղեւ մանուկ եւ աճեաց, եւ եղեալ երկոտասանամեայ եւ Հասեալ մինչեւ յերեսնամեայսն՝ եկն ի մկրտութիւն, եւ յայտնապէս երեւեալ աշխարհի: 51 Այլ ո՛չ որպէս ոմանք մոլորեալ ասացին, եթե բնութիւն Բանին չըջեալ փոխեցաւ ի մարմին եւ թլփատեցաւ. քանզի ասէ ինքն Աստուած այսպէս. Տեսէ՛ք տեսէ՛ք, զի ես նոյն եմ, եւ ո՛չ փոփոխեցայք. եւ Պաղոս վկայելով սմին ասէ. Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն եւ յաւիտեանս յաւիտենիցք:

« S՝* Եբր. Բ 16-17:
բ Ե* Է 14
գ Ղ* Կ Ը 27

դ Հմբ. Ղ* Կ Բ 7:
ե S՝* Ղ* Կ Ժ Ը 27:
1 Պետր Է ինէր երեւի՝ արգանդի
շ Հմբ. Ղ* Կ Բ 22-24:
է Ղ* Կ Ը 35
ը S՝* Բ Օբ Ը Բ 39:
թ Եբր. ԺԳ 8

52 Արդ, երեւեցաւ, եթե ո՛չ նոյն բնութիւնն Բանին է՝ ճշմարտութիւնն մարմնոյն թլփատեցաւ եւ ի գիրկս գգուեցաւ, եւ կերաւ եւ արբ, եւ վաստակեալ աշխատեցաւ, եւ ի փայտին բեւեռեցաւ եւ չարչարեցաւ. եւ է ի մարմնին անչարչարելին անմարմին Բանն Աստուծոյ: 53 Այս մարմին էր, որ եղեալն էր ի գերեզմանին. ընդ նմին էր եւ Աստուած Բանն, որ քարոզէր զարձակումն եւ թողութիւն մեղաց ոգւոցն, որք պահեալն էին ընդ աղիտեալք դրամք պատուհասին, որպէս ասէ Պետրոս մի ըստ միոջէ՞. որ կամի՝ ընթերցցի զայն, եւ կարող է իմանալ ի նմանէն. եւ յանդիմանեալ կշտամբէ զայնոսիկ, որք ասենն, եթե ի մարմին չըջեալ փոփոխեցաւ Բանն Աստուծոյ: 54 Եթե այդպէս էր, զի՞նչ պէտք էին գերեզմանին. քանզի ինքն երթեալ էր՝ որ չըջեցաւ ի մարմին Բանն, քարոզէր զարձակումն արգելելոցն ի դժոխս: 55 Իսկ արդ աւասիկ ինքն Բանն երթեալ քարոզէր. իսկ զմարմինն առեալ զԲանին Յովսէփ պատէր կտաւաւք եւ դնէր զնա ի նոր գերեզմանին՝ մաւտ ի Գողգոթայն: 56 Ահաւասիկ յայտնի ամենեցուն երեւեցաւ, եթե ո՛չ մարմին էր Բանն, այլ մարմին է Բանին, եւ զայս մարմին յարուցեալ ի մեռելոց Թովմաս շաւշափեաց եւ ետես ի նմա զտեղի բեւեռացն: 57 Եւ անչարչար մնացեալ ինքն Բանն՝ տեսանելով բեւեռեալ զիւր մարմինն, զոր կարողն էր արգելուլ զչարչարանս մարմնոյ իւրոյ, եւ ո՛չ արգել. այլ իւր հաշուեալ համարի զիւրոյ մարմնոյն չարչարանս, եւ ինքն աներեւոյթ եւ անչարչար է Բանն Աստուծո. եւ ի հարկանել զմարմինն իւր ի սպասաւորէ քահանային, որպէս ինքնն չարչարեսցի՝ ասէ. Զի՞՞ հարկանես զիս: 58 Եւ անշաւափելի եւ անըմբռնելի բնութիւնն Բանին իւր համարեալ զիւրոյն մարմնոյն՝ ասէր. Զթիկունս իմ ե-

տու ի հարուածս եւ գերեսս իմ ո՛չ դարձուցի յամաւթոյ՞. քանզի մարմինն իւր չարչարէր ի Բանին: 59 Զայս ամենայն միաբան ընդ մարմնոյ Բանն էր՝ իւր զամենայնն հաշուեալ համարէր, զի եւ մեք Բանին աստուածեղենի ընդունիչ կարասցէ լինել: 60 Եւ արդ եւ են սքանչելապէս զարմանազանութիւնք, զի ինքն էր չարչարականն եւ ինքն էր անչարչարական. չարչարական՝ վասն զի իւր ինքեան էր, որ չարչարէր մարմինն, եւ ինքն ի նմա ի չարչարեցելումն էր. եւ անչարչարական է, զի բնութիւնն աստուածութիւնն Բանին անչարչար եւ անախտ մնաց, եւ ինքնն անմարմինն էր միացեալ ի չարչարականի մարմնին իւրում. եւ մարմին ունէր միացեալ յինքեան անչարչար Բանն Աստուծոյ, որ ջնջէր եւ ապականէր զտկարութիւն ապականութեան՝ զբնութեան մարմնոյն, եւ զգեցուցանէր մարմնոյն զանապականութիւն: 61 Եւ արարեալ զայս եւ զառ ի մէնջ մարմինն յինքեան ընկալեալ միաբանութիւն՝ ընդունի յանմահէն մահկանացուս զանմահութիւն, եւ մատուցեալ զմարմինն պատարագ՝ ջնջեալ ապականէր զմարմնոյն զմահ եւ զգեցուցանէր մահկանացուին զանմահութիւն: 62 Քանզի ո՛չ կարէր մահկանացուն գրաւել ի մահ, այլ անմահին զմահ ի բաց ջնջեալ եւ զմահկանացուս ընդ անմահին միաբանեալ՝ անմահ արար, եւ իւրով մարմնով զայսպիսի անմահութիւն մեզ շնորհեալ՝ տայ այսուհետեւ մեծաբարբառ իւրում առաքելոյն գոչել ես ասել. Արժան է ապականացուիս այսմիկ զգեցուլ զանապականութիւն եւ մահկանացուիս այսմ զգեցուլ զանմահութիւն: 63 Ո՛չ առաջաւք եւ նմանութեամբ այս ամենայն եղեւ, քա՛ւ լիցի, որպէս ումանք ի հերձուածողացն ասեն զմարմինն,

« Հմմտ. Լ. Պէր. Գ. 19-20:
 Է Յ՝ՎՃ. ԺԲ 23

գ Ե՞. Ե՞ 6
 Դ Լ. Պ. ԺԲ 53

եթե նմանութիւն էր, եւ ո՛չ բնութիւն. այլ արդարեւ մարդ եղեւ ճշմարիտ Փրկիչն մեր եւ զբովանդակ բնութիւնն մեր միացոյց իւր Բանն Աստուծոյ եւ կատարեալ բովանդակ մարդոյ բնութեանս փրկութիւն շնորհեաց: 64 Զի եթե նմանութեամբք եւ պիտակապէս՝ առաջաւք թարգմանի, եւ ո՛չ բնութեամբ, գտանի այսուհետեւ առաջաւք յարութիւնն՝ առաջաւք, եւ ո՛չ բնութեամբ փրկութիւն մարդոյ, եւ լինիմք հաւասարեալք եւ նման ամպարիշտ Մանիքեցոցն: 65 Այլ ո՛չ էր առաջաւք յարութիւն մարմնոյն եւ փրկութիւն մեր ամենեցուն, այլ ճշմարիտ իսկ, եւ ո՛չ միայն զմարմինս միացոյց իւր Բանն, այլ բովանդակ զՏոգի եւ զմարմին: 66 Ըշմարիտ զբնութիւնս մարդոյ իւր միացոյց Աստուած, արար փրկութիւն մարդկան բնութեանց. արդարեւ զմարմին բնութեանս մերոյ էառ ի Մարիամայ ըստ աստուածեղէն Գրոց, եւ ճշմարիտ էր մարմինս այս Փրկիչին մերոյ. քանզի էր մեր քոյր սուրբ Կոյսն Մարիամ, վասն զի ամենեքեան յԱդամայ եմք: 67 Եւ զայս ո՛չ ոք կարէ յերկբայս լինել. քանզի խաւսեալ էր զնա առն, որպէս եւ Ղուկաս ցուցանէ մի ըստ միոջէ՝. «յայտ է՝ եւ Յովսէփ եւ Մարիամ մեր քոյր եւ եղբայր էին, եւ ի մերմէ բնութենէս»:

68 Եւ եւս առաւելագոյն այլք մոլորեցան եւ ասեն, եթե յետ յարութեանն ի մեռելոց ո՛չ նոյն մարմին էր, զոր էառն ի Մարիամայ, եւ ո՛չ բնութեամբ մարմնոյ տեսին զՏէրն, այլ ահագին իմն ասեն՝ ի նմանութիւն մարմնոյ: 69 Եկա՛յք յանդիմանեացուք զսոսա ի սուրբ աւետարանէն բանիւն Տեառն, զոր ասէր ցաշակերտսն. Շաւշափեցէ՛ք զիս եւ տեսէ՛ք, զի ոգի մարմինն եւ ոսկերս ո՛չ ունի, որպէս զիս տեսանէք, զի ունիմ. զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռս իւր եւ զոտս՝: 70 Եւ այսու բա-

նիւ դարձեալ յանդիմանէ զայնոսիկ, ոյք յանդգնին եւ ասեն, եթե ի մարմին եւ յոսկերս շրջեցաւ Բանն Աստուծոյ, եւ փոխեալ. ո՛չ ասաց եթե՝ որպէս տեսանէք մարմին եւ ոսկերս զիս, այլ թե՝ որպէս տեսանէք մարմին զիս, զի ունիմ եւ ոսկերս. վասն զի մի՛ զնոյն ինքնն զԲանն ի մարմին շրջեալ փոփոխմամբ իմանայցեն, այլ ինքն Բանն էր ի մարմնին իւրում յառաջ քան զմահն, եւ զկնի յարութեանն ի նմին ի մարմնին իւրում էր միացեալ. եւ այսպէս յայտնի ամենայն հաւատացելոց քարոզեցաւ յառաքելոցն: 71 Արդ, աւելորդ է եւ այլ եւս զհետ մտաց հերձուածողացն երթալ. քանզի մարմին էր միացեալ ընդ Բանին, եւ ո՛չ էր մի բնութիւն Բանին՝ աստուածութեանն եւ մարմնոյն, այլ ի սրբոյ կուսէն Մարիամայ ճշմարտութեամբ ծնեալ: 72 Եւ ո՛չ եթե Բանին Աստուծոյ շրջեալ փոփոխեալ ի մարմինն, այլ ի մարմնին իւրում, զոր առ ի Կուսէն, անքակ Բանն է միացեալ, եւ միանալն իսկ ցուցանէր զբնութեանցն զանքակութիւն եւ զմիութիւն: 73 Իսկ արդեւք յա՞յն ինչ զրդուեցին եւ գայթակղեցին, զոր Յովհաննէս ասաց թե՝ Բանն մարմինն եղեւ՞. այս է, զոր ասես, եւ արժան է զսա միով բանիւ, որ ըստ նմանութեան սորա՝ գտանել եւ մեկնել: 74 Գրէ այսպէս Պաւղոս եւ ասէ. Քրիստոս վասն մեր եղբւ անէծք. եւ ո՛չ եթե ինքն Քրիստոս եղեւ անէծք, քա՛ւ լիցի. այլ վասն զի զմեր անէծսն յանձն իւր ընկալաւ եւ ընդ մեր անիծիցն եւ պարտուցն ինքն չարչարեցաւ, վասն այսորիկ է ասացեալ թե՝ Քրիստոս վասն մեր անէծք եղեւ: 75 Ըստ այսմ աւրինակի է, որ ասեն. Բանն մարմինն եղեւ. ո՛չ շրջեալ փոփոխեցաւ ի մարմինն, այլ զի մարմին վասն մեր առեալ՝ իւր միացոյց Բանն Աստուծոյ եւ եղեւ մարդ, վասն այսորիկ ասացաւ եթե՝

« ՏԵ՛՞Պ՝ Գ՝ Կ. Ը 27:
 Է՛ Գ՝ Կ. Ի՛Պ 39-40

Գ՛ Զ՝ Կ. Ը 14
 Գ՛ Գ՝ Կ. Գ 13

Բանն մարմին եղեւ: 76 Եւ դարձեալ զոր ասեմք, եթե մարդ եղեւ, նման է այնմ, զոր ասէ Յովէլ մարգարէ. Հեղից յոգւոյ իմոյ ի վերայ ամենայն մարմնոյ^ա. մի՞թե ի վերայ անասնոց եհեղ զչնորհս Հոգւոյն. այլ ի վերայ մարդկան բանաւորաց: 77 Ըստ այսմ աւրինակի է, զոր ասեն եթե՝ Բանն մարմին եղեւ: 78 Եւ դարձեալ որ ասէ եթե՝ մարդ եղև Տէրն ամենայնի^բ: 79 Այս միտք եւ մէկնութիւնք են, զոր ասէ աւետարանիչն Յովհաննէս եթե՝ Բանն մարմին եղև^գ:

80 Շատ եւ բաւական է բանս այս յամաւթ առնել եւ զայնոսիկ, որք ասեն, թե յառաջ քան զՄարիամ առնուլն զմարմինն՝ էր ընդ Բանին, եւ յառաջ քան զմարմնանալ Բանին Աստուծոյ Հոգի մարդոյ էր ընդ նմին, եւ յառաջ քան ի Մարիամայ ծնանելն բազում անգամ զալուստ ասեն Բանին Աստուծոյ յաշխարհ: 81 Արդ, լուեալ դադարեսցին ընդվայրայած անամաւթ բերանք նոցա:

82 Եւ դարձեալ այնք, որ ասեն. ո՛չ էր ընդունիչ մահու մարմինն, վասն զի, ասեն, յանմահութենէն Աստուծոյ էր նա: 83 Իսկ եթե ո՛չ մեռաւ մարմինն տէրունական, զիա՞րդ Պաւղոս աւանդէ Կորնթացւոցն, զոր եւ ինքն ընկալաւ. Քրիստոս, ասէ, մեռաւ վասն մեղաց մերոց, ըստ Գրոց^դ:

84 Եւ արդ, որպէ՞ս յարեաւ՝ որ ոչն մեռաւ: 85 Եւ դարձցին յետս եւ ամաչեսցեն ամենեքեան, որք խաւսին զանաւրէնութիւն:

86 Եկա՛յք այսուհետեւ ըմբերանեսցուք զայնոսիկ, որք իշխեսցին ասել, եթե Երրորդութիւնն չորրորդութիւն լինի, եթե ասեմք, եթե ի Մարիամայ է մարմինն. եւ թե մի բնութիւնք ասեմք ամէն՝ Բանին եւ մարմնոյն, մնայ Երրորդութիւնն երրոր-

դութիւն: 87 Ապա թէ ասեմք մարդկեղէն բնութիւն ի Մարիամայ, հարկ է եթե աւտար իմն բնութիւն մերձեցուցանեմք, եւ միանալ Բանին ընդ մարմնոյն իւրում ասեն չորրորդութիւն յԵրրորդութեանն լինել՝ վասն յաւելուածոյ մարմնոյն ի Բանն: 88 Եւ զայս այսպէս ասելով՝ ո՛չ իմանան, եթե ինքեանք զարկուցեալք յաղթահարին. զի եթե ո՛չ ի Մարիամայ իցէ մարմինն, այլ մի բնութիւն Բանին եւ մարմնոյն, որպէս ասեն ինքեանք, յորմէ փախչին՝ զնոյն չորրորդութիւն քարոզեն: 89 Եւ արդ, եկա՛յք ասասցուք. Որդի ապաքէն մի բնութիւն է եւ էութիւն Հաւր, որպէս եւ սուրբ Հարքն ի Նիկիա դաւանեցին, եւ թեպէտ եւ մի բնութիւն է, ո՛չ եթե ինքնն Որդի Հայր, այլ ինքնն Որդի Հաւր ասի. եւ ահա մի բնութիւնս երեւեցան երկու անձինք կատարեալք եւ մի էութիւն՝ երկու ինքնութիւնք: 90 Այսպէս եւ մի բնութիւն մարմնոյն եւ Բանին Աստուծոյ ո՛չ ինքն նոյն Բան, այլ այլում ընկեր Բանին, եւ թե ընկեր Բանին եւ նոյն բնութիւն մարմնոյն, որպէս եւ ասենն, նոքա արարին զԵրրորդութիւնն չորրորդութիւն: 91 Այլ ճշմարիտ Երրորդութիւնն կատարեալ եւ անքակ է, եւ ո՛չ ընդունի զոք յաւելուած, որպէս թէ ինքնն անկատար իցէ, եւ ո՛չ զայլ ոք Բանն Աստուծոյ ընկերակից ընդ իւրում բնութեանն ընդ ինքեան աներեւոյթ մարմին ունի: 92 Արդ, զիա՞րդ եւ սոքա քրիստոսեանք անուանեսցին, որ զայլ ոմն էակից Աստուածութեանն համաբուն ի մտաց իւրեանց կարծեցին եւ ասեն: 93 Եւ դարձեալ, ընդդէմ Գրոց հակառակին եւ ի ներքս հերձուածս եւ պատառմունս արկանեն. զի Գիրք ասեն, եթե ի Մարիամայ էառ զմարմինն մարդկեղէն Փրկիչն մեր՝ Բանն Աստուծոյ, եւ նոքա չորրորդութիւն ի ներքս արկանել իշխեսցին, եւ յաւելուածս իմն զմարմին Աստուածութեանն առնեն, եւ զոյգ եւ հաւասար Արարչին զարարածսն: 94 Եւ Աստուածութեանն, որպէս

^ա Յվ. Բ. 28. Գործ. Բ. 17
^բ Հմմտ. Փլոյ. Բ. 7:
^գ Յովհ. Ե. 14
^դ Ե. Գոր. Ժ. 3

թերացելոյ, յաւելուածս համարեն, եւ ո՛չ իմանան, եթե ո՛չ ի կատարումն ինչ Աստուածութեանն եւ առ կարաւտութիւն ինչ Բանն մարմին եղեւ, այլ զի զմեռելութիւնս մեր կենդանացուցէ: 95 Եւ ո՛չ եթե կատարեալ Բանն անկատար իցէ, վասն այնորիկ ծնաւ ի Մարիամայ, այլ զի զմարդկեղէն բնութիւնս փրկեցէ ի մեղաց: 96 Որպէ՞ս ո՛չ իմանան, եթե Բանիւ եղեւ փրկութիւն մարմնոյն եւ կենդանութիւն: 97 Արդ, զիա՞րդ յաւելուած. որ եղեւ կենդանի մարմինն՝ Բանին կենդանարարի լինէր: 98 Մանաւանդ թե եւս առաւել մարդկութեան բնութեանս եղեւ յաւելուած հաղորդութիւն եւ միութիւն Բանին. քանզի մարմինն ի մահկանացուէ եղեւ անմահ եւ ի շնչաւորէ եղեւ հոգեւոր, եւ որ յերկրէ եղեալն էր՝ վերացաւ էանց ընդ դրունս երկնից, եւ որ հողեղէնն էր՝ եղեւ անմահ եւ, ելեալ յերկինս, նստաւ ընդ աջմէ Հաւր: 99 Այլ Երրորդութիւնն, եւ թեպէտ եւ էառ ի Մարիամայ մարմին Բանն՝ Երրորդութիւն կատարեալ է, ո՛չ ընդունի զյաւելուածս եւ զթերութիւնս, այլ միշտ ի կատարելութեանն իւրում էր եւ է, որ յերրորդութեանն միութիւն ճանաչի, եւ այսպէս յեկեղեցւոջ մի Աստուած քարոզի: 100 Արդ, վասն այսր ամենայնի լռեալ կարկեսցին հերձուածաւղքն:

101 Ասասցուք եւ առ այսոսիկ, որք ասենն, եթե որ ի Մարիամայ մարմինն էր՝ ո՛չ նա Քրիստոս եւ ո՛չ Տէր եւ ո՛չ Աստուած: 102 Եթե, որպէս ասեն, եթե ո՛չ տէրունական մարմին էր եւ ո՛չ Աստուած Բանն ի նմա էր, զիա՞րդ իսկ եւ իսկ ծնեալ ի Մարիամայ՝ կոչեցաւ էմանուէլ, որ թարգմանեալ կոչի՝ ընդ մեզ Աստուած: 103 Որպէս դարձեալ եւ Պաւղոս, եթե ո՛չ Բանն էր ի մարմնին՝ զիա՞րդ Հռովմայեցւոցն գրէ, ասելով: 104 Յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն

Աստուած՝ արհնեա՛լ յաւիտեանս, ամէն: 105 Արդ, եկեալ խոստովանեսցին, եթե յանցեան եւ մեղան, եւ դաւանեալ՝ հաւասարելով ընդ մեզ, ասասցեն, եթե խաչեալն է Աստուած, եւ հաւանեալ հաւատասցեն ամենայն աստուածեղէն Գրոց: 106 Մանաւանդ Թովմա, որ ետես գտեղի բեւեռացն, մեծաճայն գոչեաց՝ ասելով. Տէ՛ր իմ եւ Աստուած իմ: Աստուած եւ Տէր փառաց եւ ի չարչարելումն ի մարմնին: 107 Իսկ մարմին չարչարեալ մեռաւ բեւեռեալ ի խաչին, եւ ի խոցելն գեղարդեամբ՝ բղխէր ի կողիցն չարչարական մարմնոյն արիւն եւ ջուր. տաճար Բանին Աստուծոյ չարչարեալ մարմինն՝ լցեալ եւ միացեալ ընդ աստուածութեան Բանին, եւ զչարչարանս իւրոյ մարմնոյն Որդին Միածին Աստուծոյ իւր համարեալ, եւ ինքն անախտ եւ անչարչար էր յիւրում մարմնին չարչարականի: 108 Վասն այսորիկ արեգակն տեսեալ զԱրարիչն իւր, այսինքն զԲանն Աստուած, ի խաչ ելեալ եւ թշնամանեալ զտէրունական մարմինն՝ յինքն ամփոփեաց զլուսաւորութիւն ճառագայթիցն իւրոյ, արար խաւար ամենայն աշխարհի:

109 ¹Յապականուրթիւն:

110 Եւ դարձեալ մարմնոյն Բանին Աստուծոյ, որ ըստ բնութեան մարմնոյն էր մահկանացու՝ Բանն, որ ի մարմնին ի վեր քան զբնութիւնն մահկանացու մարմնոյ, արար զմարմինն իւր անմահ եւ անապականացու, եւ լռեցոյց եւ ջնջեաց ի մարմնոյն զբնական մահն եւ զապականութիւն. վասն զի զգեցեալ եւ միացուցեալ էր իւր զմարմինն Բանն Աստուած, որ ի վեր է

բ Հոմ. Թ. 5

գ Եւ. Ի. 28

1 Հմմտ. Ծ, ք. 335, տպ. էջ. 504. ուր անմիջական շարունակութիւն է նախընթացի, միայն սկզբում զգալի կերպով տարբեր է մեր ձեռագիրը եւ մօտ 10 տող մի պարբերութեամբ՝ վերջում մի Բանի տողով, աւելի. մնացածի բովանդակութիւնը նոյնն է:

քան զբնութիւն մարդկան. վասն որոյ եղեւ մարմին անապական, եւ յաղթահարեցաւ մահ ի բնութեան մարմնի մահկանացուի. վասն զի Բանին Աստուծոյ կեանք թագաւորեցին ի նմա:

111 Ասասցուք դարձեալ եւ վասն այնոցիկ, ոյք յանդգնեալ ասեն, եթե որպէս ի մի ի մարգարէիցն եմուտ ի նա Բանն:

112 Ձսոսա եւս դիւրագոյն է յանդիմանել, վասն զի առաջի ամենեցունց ի կուսական արգանդէ ծնաւ Բանն մարմնացեալ:

113 Եթե էր լիեալ իբրեւ զմի ի մարգարէիցն Քրիստոս, ընդէ՞ր ի կուսէ ծնանէր, եւ ո՛չ յառնէ եւ ի կնոջէ, որպէս ամենայն մարգարէք եւ սուրբք, եւ ընդէ՞ր նորա մահն ասի վասն մեր ամենեցուն, իսկ այլոց մարգարէիցն եւ սրբոցն ո՛չ նոյնպէս:

114 Եւ ընդէ՞ր միայն ի գալստեան Բանին, որ մարմնացաւ ի Մարիամայ, ասի, եթե ի վախճան աշխարհիս այսորիկ խաւսեցաւ ընդ մեզ Որդովն իւրով՞. իսկ այլոց մարգարէիցն եւ սրբոցն, որ յառաջ քան զնա էին եւ կամ յետոյ՝ զիւրաքանչիւր ծնունդս ծնան եւ զիւրաքանչիւր մահ մեռան, եւ ո՛չ ասի վասն նոցա, եթե Բանն Աստուծոյ, եւ ո՛չ՝ ի կուսէ, եւ ո՛չ վասն մեր ամենեցուն զմահ ճաշակեալ: 115 Եւ դարձեալ, առաքեալն ասէ. Ամենեքեանցն Գնչեցիմ, եւ ո՛չ եւս ընկալեալ զհատուցմունս, այլ մեզ մնանք. իսկ որ ի Մարիամայն՝ միայն յարեաւ յերիւր աւուր եւ արար փրկութիւն ամենայն տիեզերաց: 116 Եւ եթե նման արդարոցն էր, ընդէ՞ր որ ի Մարիամայն ծնաւ՝ նա միայն ասի էմանուէլ. որ էր մարմինն միացեալ եւ լցեալ աստուածութեամբն եւ ծնանէր յԱստուածածին Կուսէն, քանզի Եմանուել, որ թարգմանեալ կոչի՝ ընդ մեզ Աստուած: 117 Եւ դարձեալ՝ ամենայն սուրբք կերան եւ վաստակեցան եւ մեռան. եւ ո՛չ ասի որպէս վասն նորա,

եթե եկեր եւ վաստակեցաւ եւ մեռաւ, ո՛չ զինքեան ինչ պէտս, այլ վասն մեր ամենեցուն: 118 Եւ դարձեալ՝ վասն իւրաքանչիւր սրբոցն ինչ ո՛չ վասն ուրուք ի նոցանէն ասացաւ. իսկ որ ի Մարիամայն է՝ վասն նորա միայն ասացեալ է, եթե Բանն մարմին եղեւ, որով երեւեցաւ, թե առ սուրբսն տուաւ ի Բանէն Աստուծոյ շնորհք մարգարէութեան, իսկ որ ի Մարիամայն էր՝ ինքն Բանն իւր մարմին էաւ եւ ծնաւ մարդ կատարեալ, ըստ բնութեան եւ ըստ էութեան Բանն Աստուծոյ Հաւասար Հաւր, եւ ըստ մարմնոյն ի գաւազէ Դաւթի՞. եւ մարմնոյն ի Մարիամայ եղեալ, որպէս ասաց Պաւղոս ի սկզբան ի Հռովմայեցոց թղթին: 119 Ձսա եւ Հայր եցոյց յէջն Յորդանանու եւ ի Թաբաւրական լերին եւ ասէ. Սա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: 120 Ձսա արիանոսք ուրացան եւ հերձուածողք, եւ Հաւատացեալ երկրպագեմք սմա, եւ ո՛չ բաժանեմք զՈրդի ուրոյն եւ Բանն ուրոյն, այլ զնոյն ինքն Բանն զիտեմք ճշմարիտ Որդի Աստուծոյ, որով ամենայն ինչ եղեւ, մեք փրկեցաք եւ տիեզերք ամենայն փառաւորութիւն Հաւր մատուցանեն:

121 Այլ եւ ես ընդ այս զարմացեալ էի, թե որչա՛փ յայտնի եղեն իրք, զիա՞րդ դուք գայիք ի մեծ Հակառակութիւն, մինչեւ առ մեզ եւս Հասանել. այլ փա՛ռք Աստուծոյ, զի թեպէտ եւ տրտմեցաք ի վերայ գրելոցս եւ մեկնութեանցս, եւս առաւել ուրախ եղաք վասն այնոցիկ, որք եկին ի ձէնջ առ մեզ, զի միաբանեցան ընդ մեզ եւ խաղաղութեամբ արձակեցան առ ձեզ, խոստովանելով զբարեպաշտութիւն եւ զուղղութեան Հաւատ: 122 Եւ զայս, զոր գրեցի առ ձեզ, ո՛չ բազում ինչ ի միտ ածելով, այլ սակաւ բանիւ Հարկեցայ գրել, զի մի լուութեամբս տրտմեցուցից զձեզ, այլ ի

« Եբր. Ը 2
բ Հմար. Եբր. ԺԸ 2, 39-40:

գ Հմար. Ը 3
դ Մարթ. Գ 17, ԺԷ 5, Բ Պետ. Ը 17

ձեռն սակաւ գրոյս միաբանեալ ընդ ձեզ՝ միաբանութեամբ զուրախութիւն ընկալցուք: 123 Նախ աղաչեմք զԱստուածասէր լաւութիւնդ Քո եւ երկրորդ անգամ զայնոսիկ, որ լսեն զբան թղթոյս՝ Հանդերձ մտաւորութեամբ եւ բարեկամութեամբ ընդունել զասացեալսդ: 124 Եւ թե իցէ պակաս եւ նուազ դէմք ասացելոցդ՝ դուք եղբայրաբար ուղղեսցիք եւ առ իս տաջիք բերել. եւ թե իցէ ինչ տգիտաբարադիր բանիցն, զոր ո՛չ ունի զարժանն կատարելութեան՝ շնորհեսցէ մեզ, գիտացեալ զամենեցունց զբնութեան մարմնոյն զտկարութիւնս եւ զտգիտութիւն. զի հաւատով փառաւորեմք զԱստուած, այլ ո՛չ եթե քննութեամբ ինչ ի վերայ բնութեան Աստուածութեանն հասանել ինչ կարասցուք:

1 Այստեղիկ եմ խորհրդածութեան բանք Սրբոյն Գրիգորի Սֆանչելագործի, եպիսկոպոսին Նէոյկեսարու՝ յայտնեալ Հաւատամբ:

2 Մի՞ Աստուած, Հայր կենդանի Բանին, Յէական իմաստութեանն եւ զաւրութեան կերպարան իւրոյ. կատարեալ կատարելոյ ծնաւդ, Հայր Որդւոյ Միածնի: 3 Մի՞ Տէր միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան եւ պատկեր Աստուածութեանն, Բանն՝ գործաւոր, իմաստութիւն պարառական ամենեցուն ընդ լինելութեամբ անկելոցն՝ եւ զաւրութիւն, Դուրս էիցս արարաւդ. Որդի ճշմարիտ ճշմարտոյն, անտե-

սանելի անտեսանելոյն⁸. անապական անապականին, անմահ անմահին, մշտնջենաւոր մշտնջենաւորին: 4 ⁹... եւ Որդւով երեւեալ յայտնապէս մարդկան, ¹⁰պատկեր Որդւոյ, կատարեալ կատարելոյ, պատճառ կենդանեաց, սրբութիւնք¹¹ սրբութեանց¹² շնորհաւդ, որ¹³ ծանուցանի Հայր, որ ի վերայ ամենեցուն եւ յամենեսին, եւ Որդի Աստուած¹⁴, որով ամենայնք: 5 Երրորդութիւն կատարեալ փառաւք եւ մշտնջենաւորութեամբ եւ թագաւորութեամբ՝ անբաժանելի եւ¹⁵ անաւտարելի. ո՛չ ստեղծական ինչ եւ ¹⁶ո՛չ ծառայական Երրորդութեանն, եւ կամ ի ներքս ածական, որպէս թէ ¹⁷յառաջագոյն ինչ ո՛չ եղելոյ զկնի ի ներքս ածաւ: 6 Եւ¹⁸ ո՛չ երբէք նուազեաց Որդի ի Հաւրէ, ¹⁹եւ ո՛չ յՈրդւոյ Հոգի, այլ անփոփոխելի եւ²⁰ անայլայլելի Երրորդութիւնն միշտ:

7 Յաղագս Երրորդութեանն՝ Նորին, գ.:

Բայց մեք երկիրպագանեմք Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն. Աստուած զՀայր, Աստուած զՈրդի, Աստուած, եթե ո՛չ զայրանաս, զՍուրբ Հոգին. մի բնութիւն երիցն առանձնաւորութեանցն՝ իմանալեաց եւ կատարելոց, ըստ ինքեան էութիւնս բաժանեցելոյ աստուածութեամբն:

1 Հմմտ. Հ, ք. 178. կրկնութիւն է իրօք ք. 17 (ք. 13v) վերջին հատուածի՝ աննշան շեղումներով եւ թերութիւններով: Այստեղ համեմատել ենք Յ, ք. 124v ձեռագրի հետ:
 2 Մի է
 3 Էական իմաստութեան եւ զաւրութիւն կերպարանին
 4 եւ մի
 5 Բան
 6 անկելոյս
 7 բոլորիցս

8 նշմարտին
 9 Մի Հոգի Սուրբ՝ Աստուծոյ գեութիւն ունելով եւ Որդւովն
 10 չի՞ պատկեր Որդւոյ
 11 չի՞
 12 սրբութեանն
 13 որով
 14 Աստուծոյ
 15 չի՞
 16 ո՛չ ստեղծական ինչ յերրորդութեանն
 17 յառաջագոյն չէր
 18 Զի
 19 եւ ո՛չ ի Հօրէ եւ յՈրդւոյ Հոգին Սուրբ
 20 չի՞

8 ¹Մեկնութիւն հաւատոյ. Նորին:

9 Այսպէս հաւատամք եւ խոստովանիմք զՍուրբ Երրորդութիւնն ի միաւորութիւն անդ՝ առանց խառնակութեան, նոյնպէս զսուրբ Միաւորութիւնն յերրորդութիւն անդ՝ անհատաբար եւ անսկզբնաբար եւ անբաժանաբար: 10 Քանզի, որպէս անխառնելի է Սուրբ Երրորդութիւնն, այսպէս եւ անբաժանելի. անխառնելի է յաղագս իւրաքանչիւր յատուկ բնութեանն, իսկ անբաժանելի, վասն զի ամենակալ է Հայր, ամենակալ է Որդի, ամենակալ է եւ Հոգին Սուրբ՝ անորոշաբար, մշտնջենաբար: 11 Քանզի երեք էութիւնքն մի են Սուրբ Երրորդութեանն՝ անարատք, անխառնք, անհատք, անբաժանելիք, անսկզբունք, մշտնջենաւորք, համագոյականք, անհասանելիք, որպէս եւ գրեալ է. Մեզ մի է Աստուած՝ Հայր, յորմէ ամենայն^ա. նմա փառք յաւիտեանս:

12 ²Նորին՝ Մասին Հաւատոյ. ե.:

13 Եւ է Աստուած ճշմարիտ, անմարմին ի մարմնի երեւեալ, կատարեալ ճշմարտութեամբ եւ աստուածային կատարելութեամբ. ո՛չ երկու դէմք եւ ո՛չ երկու բնութիւնք, քանզի եւ ո՛չ քառս երկրպագել ասեմք զԱստուած եւ զՈրդին Աստուծոյ, եւ ո՛չ զմարդ³ եւ զՀոգին Սուրբ: 14 Սակս որոյ ⁴նզովեմք զայսպիսի ամպարշտաւդս, որք մարդ յաստուածային փառաբանութիւնն⁵ դնեն: 15 Զի մեք ասեմք՝ մարդ եղեալ ⁶զԱստուծոյ Բանն առ փրկութիւն մեր, զի նմանութիւն⁷ զերկնայնոյն առ-

ցուք եւ աստուածագգեսցուք⁸ առ նմանութիւն՝ ըստ նմանութեան ճշմարիտ⁹ Որդւոյ Աստուծոյ, իսկ ¹⁰ըստ Մարիամայ՝ Որդւոյ մարդոյ, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

16 Նորին՝ Յաղագս մարմնանալոյ Աստուծոյ Բանին, եւ Հաւատոց. գ.

17 Աստուծոյ շնորհաւորապէս պարտ է հաւատալ յաղագս մարմնանալոյն եւ մարդացելոյ Որդւոյն Աստուծոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, աւրինացն յառաջագոյն գուշակեալ, մարգարէիցն վկայեալ, յառաքելոցն քարոզեալ, եւ նորին Տեառն բանիւ վարդապետեալ եւ գործով զինքն երեւեցուցեալ:

18 ¹¹Ճառք ԺԲ. գլխոց նզովից:

19 ա. Եթե ոք ասիցէ՝ կարծեալք երեւեալ զՔրիստոս աշխարհի, եւ ո՛չ խոստովանի զնա մարմնով եկեալ, որպէս եւ գրեալ է նզովեալ լիցի:

20 բ. Եթե ոք ասիցէ առանց հոգւոյն կամ առանց մտաց զմարմինն Քրիստոսի, եւ ո՛չ խոստովանիցի զնա ըստ ամենայնի կատարեալ՝ զմի եւ զնոյն, որպէս եւ գրեալ է, եղիցի՝ նզովեալ:

21 գ. Եթե ոք ասիցէ մասն մարդոյ առեալ Քրիստոսի, եւ ո՛չ խոստովանեսցի զնա նմանութեամբ ըստ ամենայնի՝ առանց մեղաց, որպէս եւ գրեալ է, նզովեալ:

22 դ. Եթե ոք ասիցէ փոփոխելի կամ այլայլելի զՔրիստոս, եւ ո՛չ խոստովանեսցի զնա հոգւով անապական մարմնով, որպէս եւ գրեալ է, եղիցի՝...:

23 ե. Եթե ոք ասիցէ մարդ կատարեալ զՔրիստոս, բաժանելով զԱստուածն Բան,

1 Հմմտ. ք. 17 (ք. 14v.) Սահմանք հաւատոյ ՅԺԸ.իցն, որի կրկնութիւնն է իսկապէս՝ ընթերցուածների աննշան տարբերութեամբ:

^ա Տէ՛.՝ Յ.՝վ.՝ Ը՛ 41:

2 Հմմտ. Տիմոթէոս, էջ 21, 92, 189. համեմատութիւնն ըստ վերջին օրինակին:

3 եւ զմարդ

4 եւ նզովեմք զայսպէս ամպարշտաւդսն

5 փառաբանութեանն

6 զԱստուծոյն բան

7 զնմանութիւն

8 աստուածագործեսցուք

9 նշմարտի

10 ըստ մարմնոյ

11 Առաջին 5 նզովքը հմմտ. «Արարատ», 1895, էջ 10. նոյնը՝ այլ եւ է-թ, ԺԱ-ԺԲ նզովները՝ Տիմոթէոս, էջ 190: Երկու թարգմանութիւնն էլ տարբեր, մասնաւոր վերջինը, թէպէտ կան նաեւ մօտիկ աղբյուրներ ցոյց տուող նմանութիւններ (օր. նզ. ԺԱ.):

եւ ո՛չ խոստովանի մի Տէր գթիտուս Քրիստոս, որպէս եւ գրեալ է, եղիցի՝ նզովեալ:

24 գ. Եթե ոք ասիցէ փրկեալ գթրիստոս, եւ ո՛չ խոստովանի զնա փրկիչ աշխարհի եւ լոյս տիեզերաց, որպէս եւ գրեալ է, նզովեալ եղիցի:

25 է. Եթե ոք ասիցէ՝ այլ է, որ չարչարեցաւ, եւ այլ է, որ ոչն չարչարեցաւ, եւ ո՛չ խոստովանի զնա առանց չարչարանաց՝ զԲանն մարմնով իւրով չարչարեալ առանց փոփոխելոյ, որպէս եւ գրեալ է, եղիցի՝ նզովեալ:

26 ը. Եթե ոք ասիցէ՝ այլ նախ քան գյաւիտեանս Որդին Աստուծոյ, եւ այլ է որ ի վախճանի, եւ ո՛չ խոստովանի զնա, որ յառաջ քան գյաւիտեանս՝ զնոյն եւ ի վախճանի, որպէս եւ գրեալ է, եղիցի՝ նզովեալ:

27 թ. Եթե ասիցէ ոք ի սերմանէ առն ծնեալ գթրիստոս ի Կուսէն, որպէս զամենայն մարդ, եւ ո՛չ խոստովանի զնա ի Հոգւոյն Սրբոյ եւ սրբոյ Կուսէն մարմնացեալ եւ մարդացեալ՝ ի զաւակէ Դաւթի, որպէս եւ գրեալ է, նզովեալ եղիցի:

28 ժ. Եթե ոք ասիցէ մարդ կատարեալ առեալ Քրիստոսի, իբրեւ զմի ոք ի մարգարէիցն, եւ ո՛չ խոստովանի զնա մարմնով ի Կուսէն լեալ մարդ, ի Բեթղեմ ծնեալ, ի Նազարեթ սնեալ եւ զարգացումն Հասակի ընկալեալ, եւ ժամանակաց թիւ արարեալ, Յորդանիս մկրտեալ եւ ի Հաւրէ վկայեալ, որպէս եւ գրեալ է, նզովեալ եղիցի:

29 ժա. Եթե ոք ասէ զմարմինն Քրիստոսի նորին բնութեան աստուածութեանն, եւ ո՛չ խոստովանի զնա ի կերպարանի Աստուծոյ նախ քան գյաւիտեանս, եւ զինքն թափելով՝ զկերպարանս ծառայի առեալ, որպէս եւ գրեալ է, նզովեալ:

30 ժբ. Եթե ոք ասէ անստացական զմարմինն Քրիստոսի, եւ ո՛չ խոստովանի զնոյն զանեղ Աստուած Բանն ի ստացա-

կան մարդկութենէս զմարմնաւորութիւն եւ զմարդկանալն ցուցեալ, որպէս եւ գրեալ է, եղիցի՝ նզովեալ:

31 Մեկնութիւն ժԲ. գլխոց՝ ի ԲԺ. երորդէն սկսեալ, ի ներուստ մինչեւ յառաջինն:

32 ժբ. Ո՞րպէս արդեւք անստացական ասէ ոք զմարմինն. քանզի անեղն անխոցելի է, անչարչարելի, անշաւափելի. իսկ Քրիստոս ի մեռելոց յարուցեալ՝ գտեղիս բեւեռացն եւ զխոցումն տիգին եւ զշաւափումն մարմնոյն ցուցանէր աշակերտացն, եւ դրաւքն փակելաւք ի ներքս մտեալ՝ այլ զի ցուցցէ զաստուածութեանն գործ եւ զմարմնոյն ճշմարտութիւն:

33 ժա: 34 Զիա՞րդ եւ յետ ժամանակին մարմին նորին բնութեանն լինիցի՝ անժամանակ էի Աստուածութեանն. քանզի նոյն բնութեամբ՝ որ նոյն է էութեամբ եւ մշտնջենաւորութեամբ, անփոփոխաբար:

35 ժ. Զիա՞րդ ասիցեն մարդ կատարեալ առեալ Քրիստոսի, իբրեւ զմի ի մարգարէիցն, նորին Քրիստոսի մարդ եղելոյ ի Կուսէն մարմնով. յաղագս որոյ գրեալն է եթե՝ Առաջին մարդն յերկրէ հողեղէն. վասն զի ստեղծեալ յերկրէ՝ յերկիր չոգաւ, երկրորդ մարդ լիեալ յերկինս, եւ ասի առաջին Ադամ, որպէս խոստովանի, եթե յառաջնմէն երկրորդն ըստ մարմնոյ. յաղագս որոյ եւ մարդ եւ որդի մարդոյ Քրիստոս:

36 Այսպէս վկայի, եթե երկրորդն առաջնոյն փրկիչ. վասն որոյ եւ եկն ի յերկնէ իջեալ Բանն եւ մարդ լիեալ՝ յերկինս ել, եւ ասի յերկնէ երկրորդ Ադամ:

37 թ. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք ի սերմանէ առն լիեալ գթրիստոս ի Կուսէն սրբոյ. քանզի հրեշտակն, որ աւետարանեաց՝ ի Հոգւոյն Սրբոյ ասաց. եւ Մարիամ

1 ժԲ եւ ժԱ. հաստուածները հմմտ. Տիմոթէոս, էջ 190, ուր տարբեր թարգմանութեամբ է:
» Լ. Կ. Բ. Ժ. Ե. 47

ասէ. Զիա՞րդ լինիցի, զի գայր ո՛չ գիտեմ^ա։
 38 Վասն որոյ դարձեալ՝ Զաւրութիւն
 Բարձրելոյն հովանի լիցի քեզ, եւ՝ Որ ծնա-
 նելոցն է սուրբ է եւ Որդի Բարձրելոյն^բ։
 39 Եւ Յովսեփայ ասէ։ 40 Մի՛ երկնչիր
 առնուլ զՄարիամ կին քո, զի ի նմայն
 ծնեալն ի Հոգւոյն Սրբոյ է. ծնցի որդի եւ
 կոչեսցի անունն նորա Էմանուէլ՝ ընդ մեզ
 Աստուած^գ։

41 Ը. Ո՞րպէս արդեւք լինիցի այլ նախ
 քան զյաւիտեանս Որդին Աստուծոյ, եւ
 այլ որ ի վախճանի, ինքնին Տեառնն ասա-
 ցեալ. Յառաջ քան զԱրքայաւ սմ ես^դ. եւ
 թե՛ ի Հաւրէ ելի եւ եկի, եւ դարձեալ երթամ
 առ Հայր իմ^ե։

42 Է. Ո՞րպէս արդեւք ասիցէ՛ այլ է որ
 չարչարեցաւն, եւ այլ է, որ ո՛չ չարչարե-
 ցաւ. Տէրն ասէ. Պարտ է Որդւոյ Մարդոյ
 բազում չարչարել եւ մեռանել եւ յերրորդ
 աւուր յառնել^զ. եւ՝ Յորժամ տեսանիցէ՛ք
 զՈրդի Մարդոյ նստեալ ընդ աջմէ Հաւրէ. եւ՝
 Յորժամ եկեսցէ Որդի Մարդոյ փառաւ
 Հաւր իւրոյն^զ։

43 Գ. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք
 փրկեալ զՔրիստոս. իւր Տեառնն ասացեալ
 է. Ես եմ կեանք^է. Ես եկի, զի զկեանս ունի-
 ցին^է. եւ՝ Որ հաւատայ յիս, զմահ մի՛ տես-
 ցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտեանա-
 կանս^զ։

44 Ե. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք մարդ
 կատարեալ զՔրիստոս՝ բաժանմամբն
 զմարդն եւ զԱստուածն Բանն. ինքն իսկ

Տէրն ասէ. Ընդէ՞ր կամի՛ք զիս սպանանել՝
 այր, որ զնշմարտութիւնն ձեզ խաւսեցայ.
 եւ՝ Զոր լուայ ի Հաւրէ^է։ 45 Զի ո՛չ եթե
 զմարդն ետ յաղագս մեր, այլ զինքն մատ-
 նեաց վասն մեր. վասն որոյ ասէ. Քակեցէ՛ք
 գտանարս գայս, եւ յերի աւուրս յարուցա-
 նեմ գդա. քանզի նա ասէր յաղագս տանարի
 մարմնոյ իւրոյ^է։

46 Դ. Զիա՞րդ ասիցէ ոք փոփոխելի
 կամ այլայլելի զՔրիստոս՝ իւր Տեառնն ա-
 սացեալ. Ես եմ, եւ ո՛չ փոփոխիմ^է. եւ
 դարձեալ՝ Ոչ հոգին նորա թողաւ ի դժոխս
 եւ ո՛չ մարմինն նորա ետես գապականու-
 թիւն^է։

47 Ե. Զիա՞րդ արդեւք ասիցէ ոք փո-
 փոխելի կամ այլայլելի եւ կամ մասն ա-
 ռեալ Քրիստոսի. իւր Տեառնն ասացեալ է.
 Զանձն իմ դնեմ յաղագս ոչխարացն^է, եւ՝
 Մարմին իմ նշմարիտ կերակուր եւ արիւն
 իմ նշմարիտ ըմբելի^է, եւ՝ Որ ուտէ զմար-
 մին իմ եւ ըմբէ գարիւն իմ ունի կեանս յա-
 վիտեանականս^է։

48 Ը. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք ա-
 ռանց Հոգւոյ կամ առանց մտաց զմարմինն
 Քրիստոսի. քանզի խռովութիւնն եւ
 տրտմութիւնն եւ Հոգք ո՛չ մարմնոյ առանց
 Հոգւոյ, եւ ո՛չ Հոգւոյ առանց մարմնոյ, եւ
 ո՛չ աստուածութեանն անփոփոխելոյ, եւ
 ո՛չ կարծեացն ցոյցք, եւ ո՛չ մարդկային
 սկարութեանս խնդիր, այլ ըստ մեզ չար-
 չարանացս ցոյցս յինքեան առնէր Բանն,
 ընդունելով զչարչարականն, որպէս եւ
 գրեալ է՝ Նա գտկարութիւնս մեր էառ եւ

ա Ղ.՝ Գ. Ե 34
 բ Ղ.՝ Գ. Ե 35
 գ Մ.՝ Գ. Ե 20-21, 23
 դ Յ.՝ Գ. Ե 58
 է Տե՛ս Յ.՝ Գ. Ե 28:
 զ Տե՛ս Ղ.՝ Գ. Ե 22:
 ի Տե՛ս Մ.՝ Գ. Ե 64, Մ.՝ Գ. Ե 62:
 յ Տե՛ս Մ.՝ Գ. Ե 27, Ի.՝ Ե 31:
 զ Տե՛ս Յ.՝ Գ. Ե 25, Ժ.՝ Ե 6:
 լ Յ.՝ Գ. Ե 10
 խ Տե՛ս Յ.՝ Գ. Ե 15-16 եւ 17:

է Յ.՝ Գ. Ե 40
 է Յ.՝ Գ. Ե 19, 21
 լ Մ.՝ Գ. Ե 6
 խ Ղ.՝ Գ. Ե 31
 թ Յ.՝ Գ. Ե 15
 ձ Յ.՝ Գ. Ե 56
 ճ Յ.՝ Գ. Ե 55

զիւանդութիւնս մեր երարձ՝: 49 Վասն զի խռովութիւն եւ տրտմութիւն եւ հոգք՝ հոգւոյն են ախտք, իսկ աշխատութիւն եւ քուն եւ խոցումն մարմնոյ՝ տկարութիւն մարմնոյ է:

50 ա. Զիա՞րդ ասիցէ ոք արդեւք կարծեաւք երեւեալ զՔրիստոս աշխարհի, որ ի Բեթղեէմ ծնաւ եւ ի Թլփատութիւն մարմնոյ ածաւ, ի Շմաւոնէ բարձաւ եւ երկոտասան ամ ծնաւդացն հնազանդեաց, եւ Յորդանիս մկրտեցաւ եւ ի խաչին բեւեռեցաւ եւ ի մեռելոց յարեաւ: 51 Վասն որոյ, թեպէտ եւ ասի՝ Խոռովեցաւ հոգւովք, տրտմեցաւ անձն իւր, խոցեցաւ մարմնով՝ ըստ մեզ հաստատութիւն չարչարանացն անուանէ, եւ զի ցուցցէ, թե մարդ եղեւ, յաշխարհի մարդկան երեւեցաւ, ըստ նմանութեան՝ առանց մեղաց: 52 Քանզի ծնաւ ի Բեթղեէմ աստուածավայելչաբար ըստ մարմնոյ. երկնաւոր հրեշտակացն ծանուցեալ՝ զիւրեանց Տէրն ակրհնէին, որ ի մտուր խանձարաւքն պատեցաւ, որ ասէին՝ Փանօ ի բարձունս, Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւնք: 53 Ի Նազարեթ սնեալ աստուածավայելչաբար, ի մէջ վարդապետաց նստեալ՝ հիացուցանէր զնոսա իմաստութեամբ, ի տարածամ հասակի ըստ մարմնոյ, որպէս ակետարանական բանն թուէ: 54 Յորդանիս մկրտեցաւ, ո՛չ զի զսրբութիւն ընդունիցի մերձեցեալ, այլ զի սրբութեանն ընդունելութիւն շնորհեցէ: 55 Յանապատին փորձեցաւ՝ ո՛չ փորձութեանցն ի ներքս անկեալ, այլ զմեր փորձութիւնն յառաջ կոչելով, զփորձիչն առաջի արկեալ, զի սնոտի ցուցանէ զփորձաւդն: 56 Վասն որոյ ասէ. Քաջալերեցարո՛ւք, ես յաղթեցի աշխարհիք. ո՛չ զաստուածային մարդն առաջի արկեալ, այլ

զիւր մարմինն յաղթող ախտիցն եւ մահու եւ ապականութեան ցուցանելով: 57 Այլ զի՛նչ. ի ձեռն որոյ մարմնոյ մեղօ մտին յաշխարհ, եւ մեղաւքն մահ թագաւորեաց ամենայն մարդկան, ի ձեռն նորին մարմնոյ ըստ նմանութեան դատապարտեցին մեղօ ի մարմինէ, եւ յաղթեցի որ մեղացն վերակացու էր. լուծցէ Փրկիչն զմահն, եւ ո՛չ եւս թագաւորեալ, եւ խափանեցի ապականութիւն թաղմամբ մարմնոյն, եւ պտուղ յարութեան եւ ցուցցէ եւ սկիզբն արդարութեանն յաշխարհի նահատակեցի ի ձեռն հաւատոցն, եւ արքայութիւնն երկնից ակետարանեցի, եւ Աստուծոյ ընդ մարդկան եղիցի հաղորդութիւն: 58 Յաղազս այսպիսի շնորհի փառաւորեմք զՀայր՝ զտրւաւղն զնոյն ինքն զՈրդին Միածինն վասն աշխարհի կենաց. փառաւորեմք զՈրդի, որ ետ զինքն վասն մերոյ փրկութեան. փառաւորեմք զՀոգին Սուրբ, որ զաւրացուցանէ եւ կենագործէ զմեզ, եւ տա շնորհս Աստուծոյ ի Աստուծոյ հաղորդութիւնն: 59 Եւ մի՛քննեցուք զակետարանական բանն՝ ցամաք վաճառիւք եւ անբաւ խնդրովք բանակոտութիւն սերմանելով եւ զխարթ եւ զուղիղ բանն հաւատոցն խոշորացուցանելով, այլ մանաւանդ գործեցուք զգործս հաւատոցն. զխաղաղութիւն սիրեցո՛ւք, զմիաբանութիւն ցուցցո՛ւք, զմիաւորութիւն պահեցո՛ւք, զսէր մշակեցո՛ւք, որով գոհացեալ լինի Աստուած, որպէս զի ո՛չ է մեզ զժամանակս եւ զժամս, զոր Հայր յորում իշխանութեանն եղ՝ զիտել, այլ հաւատալ, թէ եւ ժամանակի է կատարած եւ հանդերձելոց յաւիտենին երեւումն եւ դատաստանին յայտնութիւն, եւ Որդւոյն Աստուծոյ գալուստ եւ գործոց հատուցումն, եւ արքայութեանն երկնից ժառանգութիւն: 60 Նոյնպէս եւ ո՛չ մեր է գիտել՝ զիա՞րդ Որդի Աստուծոյ մարդ եղեւ. քանզի խորհուրդս այս մեծ է, որպէս եւ գրեալ

ա՝ Մատթ. Բ 17. Գե՛՞ Ե՞. ԾԳ. 4:
բ՝ Տե՛՞ Թ՞. Գ. 33:
գ՝ Ղուկ. Բ 14
դ՝ Թ՞. Գ. 33

ե՝ Հմմտ. Հուս. Ե 12:

է թէ՛ Զագգն նորա ո՞վ պատմեցէ, զի բառնան յերկրէ կեանք նորա՞: 61 Այլ հաւատալ, թէ՛ Որդին Աստուծոյ ճշմարտապէս ծնաւ ըստ մարմնոյ՝ մարդ ըստ գործոց, եւ թէ՛ մեռաւ յաղագս մեր, եւ յարեալ, ¹որպէս եւ գրեալ է՞, եւ յերկինս ել՝ նստաւ ընդ աջմէ Հարի, ուստի եկեցէ դատել զկեանդանիս եւ զմեռեալս, որպէս եւ գրեալ: 62 Մի՛ գուցէ ի մեր բանակուիւ լինելոյ առ միմեանս՝ հայհոյեցեն ոմանք զհաւատոյն բան, եւ գայցէ ի վերայ ասացեալսն. Յաղագս ձեր յամենայն ժամ անուն իմ հայիոյի [ի] մէջ հեթանոսացէ, եւ ի մարդկան, ընդ որ շրջեցաւ ըստ նմանութեան՝ առանց մեղաց:

1 Չորրորդն Բարսղի, Եպիսկոպոսի Կեսարու Կապուտկացոց՝ Յաղագս Սուրբ Երրորդութեանն:

2 ԶԱստուած յիշել հանապազ բարեպաշտութիւն է, եւ յագուծմն ո՛չ ունի զաստուածասէր՝³ Հոգի. բայց բանիւ անցանել յաղագս Աստուծոյ յանդգնութիւն է՝ մտաւք⁴ բազում չափով ⁵յիրացն արժանաւորութենէ ի բաց մնացեալ, եւ դարձեալ բանիւ աղաւտաբար մերձ կացուցանել զիմացեալն: 3 Արդ, եթե միտք մեր յուրվագոյն ի մեծութենէ ի բաց նուազեալ, իսկ բանն նուազագոյն ⁶եւս է եւ քան գնոյն ինքն զմիտսն. զիա՞րդ ո՛չ հարկաւոր է լռութիւն⁷. մի՛ երբեք բանիցն տկարու-

թեամբ թուեսցի վտանգել եւ⁸ յաստուածաբանութեանն սքանչուծմն: 4 Արդ, փառաւորելն զԱստուած տենչալի յամենեսին ի բանականսս սերմանեցաւ ըստ բնութեան. իսկ արժանաւորապէս⁹ ասել՝ ամենեքեան ¹⁰նուազեն նմանաբար, եւ յաղագս բարեպաշտութեանն բաղձանայ¹¹. այլ յայլմէ զանազանեմք, եթե ո՛չ արդեւք ոք ամպարհաւաճեալ մտամոլոր է զինքն, ¹²որպէս եւ կարծել զինքն ի վերայ ծայրագունին ելանել ըմբռմամբ¹³. այլ ¹⁴որքան թուի յառաջատել ի գիտութեամբ, այնքան առաւել զտկարութիւնս իւր զգասցէ¹⁵: 5 ¹⁶Այսպիսի էր Աբրայամ, այսպիսի էր Մովսէս, յորժամ ¹⁷զԱստուած տեսանել կարացին, որպէս մարդոյ տեսանել է կարելի. յայնժամ մանաւանդ իւրաքանչիւր¹⁸ ոք զինքն անարգեաց. քանզի Աբրահամ երկիր զինքն մոխիր¹⁹ անուանեաց, իսկ Մովսէս աղաւտաբար²⁰ ասելով զինքն եւ յամբարալեզուէ. վասն զի տեսանէր զլեզուոյն իւրոյ զտկարութիւն՝ սպասաւորել մեծութեան իմաստիցն ո՛չ կարացեալ: 6 ²¹Այլ սակայն լսելիք բացան այժմ²² առ աստուածաբանութեան լսելութիւն, եւ յագուծմն ո՛չ է յեկեղեցւոյ այսպիսեաց լսաւորութիւն²³, հաստատելով զԺողովողին բան

« Ե․․ՆԳ․ 8
 1 որպէս թե
 ք Հմմտ. Լ. Կոր. Ժ. Ե 32:
 զ Տէ՛ս Կոր. Գ. 1:
 ր Տէ՛ս Բ Տիմ. Գ. 1:
 ւ Ե․․ՆԳ. 5. րէ՛ս Հմմտ. Բ 24:
 2 Տե՛ս Ի, ք. 905v:
 3 աստուածասէր
 4 միտք
 5 իրացն նւագեն
 6 եւս եւ
 7 լուրթիւնն

8 չի՞ք
 9 արժանապէս
 10 նմանաբար նւագեն
 11 բաղձանաց
 12 որպէս թե
 13 ըմբռնման
 14 որպէս թի յառաջել ի գիտութիւնն
 15 սգասցուք
 16 Այսպիսի Աբրահամ
 17 տեսանել զԱստուած
 18 երկախանչիւր
 19 եւ մոխիր
 ք Հմմտ. Նոն. Ժ. Բ 27:
 20 աղօտաձայն
 ւ Հմմտ. Եւ. Գ 10:
 21 զի ամենայն լսելիք
 22 յոյժ
 23 լուսաւորութեանց

եթե՝ Ո՛չ լցցի ունկն ի լսել¹։ Հարկաւոր է ասել՝ ըստ կարի. եւ ասեմք՝ ո՛չ որքան է Աստուած, այլ որքան մեզ հասանի, եւ ո՛չ վասն զի զմիջոց² երկնի եւ երկրի ²գետեղի՝ անցանել աչաւք զբովանդակն անկարանամք եւ որքան կարիցեմք տեսանել հրաժարեսցեմք³։ 7 Սոյնպէս եւ այժմ սակաւ բանիւք զբարեպաշտութիւնն լցուցուք⁴, իսկ մեծ⁵ բնութեանն թողացուցուք ունել զամենայն բանի զյաղթանակն. քանզի եւ ո՛չ հրեշտակացն լեզուք ոք⁶ երբեք իցեն եւ ո՛չ հրեշտակապետացն՝ Հանդերձ ամենայնի միասին բանական բնութեամբն ժողովեալք, յոլով մասամբ հասանել կարասցեն, ո՛չ ⁷զի ամենայնի զինքեանս զուգել։ 8 Իսկ դու եթե կամիս յաղագս Աստուծոյ ասել ինչ կամ լսել, թո՛ղ զմարմինդ քո, թո՛ղ զմարմնական զգայութիւնս⁸, լքցես զերկիր, լքցես զծով, ի ստորեւ քան զքեզ արասցես զաւղդ, ⁹զա՛նց արա զժամուց եւ զժամանակաց բարեկարգութեան որ յերկրի զարդք, ի վերոյ քան ¹⁰զերկին ելցես, զանցցես զաստեղաւք եւ շուրջ զնոսա հրաշալիեալքն՝ զբարեզարգութեամբ նոցա, զմեծութեամբն եւ զպիտոյիւքն, զորս բնձեռն ամենեցուն, զքաջակարգութեամբ¹¹ նոցա, զպայծառութեամբն, զդրութեամբն, ¹²զչարժամբն եւ բացատուութեամբ ունին. ըստ ամենայն զանցեալ բանիւ, զերկնաւն ի վեր յառեալ եւ գեր ի վերոյ նորին

լինելով՝ յատուկ մտաւք շուրջ տեսցես զանդ գեղեցկութիւնն, զաւրութեանց երկնայնոյ զպարակցութիւնն՝ զհրեշտակացն, զհրեշտակապետացն, զվերակացութիւնս, զփառս տերութեանցն, զնախանստութիւն¹³ աթոռոյն¹⁴, զգաւրութիւնս, զպետութիւնս, զիշխանութիւնս՝ զանցանելով ըստ ամենայն եւ ի վերոյ քան զբոլոր ստացուածսն. ի վեր ¹⁵հայեսցիս մտաւք եւ խորհրդաւք, գեր ի վերոյ քան զայսոսիկ զմիտսդ ի վեր բարձրացուցեալ՝ իմասցիս զաստուածային բնութիւնն, կացեալ անփոփոխելի, անայլայլելի, անախտ, պարզ, անշարադիր¹⁶, անբաժանելի, լոյս անմերձանալի, զաւրութիւն անճառելի, մեծութիւն անհասանելի՝ փառս առաւել փայլեալս, բարութիւն ցանկալի, գեղեցկութիւն անհնարելի՝ ¹⁷ուժգնաբար ի վարժեցեալ հոգի մերձանալով։

9 ¹⁸Անդ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի անստացական բնութիւն, տիրական արժանաւորութիւն, բնական բարութիւն։ 10 Հայր ամենեցուն սկիզբն, պատճառ գոլով¹⁹ էիցն, արմատ կենդանութեանց. ուստի յառաջ եկն աղբիւր կենաց՝ իմաստութիւն, զաւրութիւն, պատկեր անայլայլելի անտեսանելոյն²⁰ Աստուծոյ, ի Հաւրէ ծնեալ Որդի, կենդանի Բան, ²¹Աստուած եւ էն եւ առ էն Աստուած։ 11 էն ո՛չ լինելով գոյացեալ նախ քան զյաւիտեանս, ո՛չ առստացեալ ²²զՈրդի զկնի, ո՛չ ստացուած, արարիչ՝ ո՛չ արարած, ստացաւդ եւ ո՛չ

« ԺՂ. ԸՑ
 1 զմիջոցս
 2 գտեղի զանց առնել
 3 հրաժարիցեմք
 4 լցուի
 5 մեծի
 6 որք
 7 զամենայն
 8 սգաութիւնդ
 9 զանց արա զժամանակաց բարեկարգութեամբ եւ որք
 10 զերկինս լիցիս
 11 զբազակարութեամբ
 12 զչարժամբն, եթե զիս²րդ առ իրեարս ունակութեամբ եւ բացատրութեամբ

13 գնախանստութիւնս
 14 աթոռոյն
 15 հայեսցիս խորհրդով
 16 անշարագիր
 17 ուժգնաբար վարժեցեալ
 18 Թիւ 904 ձեռ. կազմելիս սխալմամբ ուրիշ տեղից միջանկեալ մի թերթ է դրուած, ապա թ. 907 այս շարունակութիւնը։
 19 գոլ
 20 անտեսանելոյ
 21 եւ Աստուած եմ
 22 զկնի Որդի

ստացուած: 12 Ամենայն էր¹, որ ինչ է
 2 Հայր. Որդի ասացի եւ Հայր, պահեա՛ ինձ
 զայսոսիկ զառանձնաւորութիւնս³. բայց
 մնալովն ի գորն Որդի՝ ամենայն է, որ ինչ
 է Հայր, ըստ իւրում ձայնի Տեառնն՝ ասե-
 լով. Ամենայն, գոր ունի Հայր՝ իմ է՞. քանզի
 էին պատկեր է, որ ինչ է նախատպին դի-
 մաց. վասն զի՝ Տեսաք, ասէ աւետարանիչն,
 զփառս նորա՝ զփառս իբրեւ զՄիածնի առ
 ի Հաւրէ, լի շնորհաւ եւ նշանաւորութեամբ⁴:
 13 Այս է, ո՛չ ի պարզեւէ եւ ի շնորհէ
 տուեալ նմա սքանչելեացն, այլ ըստ բնա-
 կան հաւասարութեանն ունելով Որդւոյ
 զհայրենի Աստուածութեանն պատիւ.
 քանզի առնու⁴ հասարակ առստացուածն,
 իսկ ունելն ի բնութենէ ծնիցելոյն յատուկ:
 14 Արդ, իբրեւ Որդի բնաբար ստացաւ
 զՀաւրն, եւ իբրեւ զՄիածին զբովանդակ⁵
 ունի յինքեան բովանդակելով, ո՛չ ուրուք
 բաժանեցելոյ⁶ առ այլ. զի ի նմին իսկ
 յՈրդւոյ⁷ անուանէ վարդապետիմք, զի
 բնութեան⁸ է հաղորդ, ո՛չ հրամանաւ ստա-
 ցեալ, այլ ի գոյացութենէն⁹ պայծառա-
 ցեալ՝ ¹⁰անբաժանաբար, անժամանակապէս
 ընդ Հաւր միաւորեալ, զոյգ բարութեամբ,
 զոյգ զաւրութեամբ հաղորդ փառացն.
 քանզի ո՞ ¹¹այլ կնիք եւ պատկեր ¹²բովան-
 դակ յինքեան ցուցանելով զՀայր. եւ որ-
 քան զքեզ զկնի այսոցիկ ի մարմնական
 պատրաստութենէս խաւսի՝ զմարդկային

փրկութիւնն տնաւրիներով, էն մարմնով ե-
 րեւեալ մեզ ցուցաւ, առաքեալ ասելով
 զինքն¹³, ¹³եւ ո՛չ կարել յինքենէ առնելոյ¹⁴,
 եւ պատուիրան առեալ¹⁵, եւ որքա՛ն ¹⁴այս-
 պիսիք՝ մի՛ քեզ ընձեռեցեն պատճառս առ
 ի փոքրկացուցանել¹⁵ զՄիածնին աստուա-
 ծութիւնն: ¹⁵Քանզի ¹⁶ո՛չ առ քո տկարու-
 թիւնդ խոնարհումն նուազութիւն պարտի
 լինել արժանաւորութեան զաւրաւորին.
 այլ զբնութիւն մեծվայելչաբար¹⁷, իսկ
 զխոնարհագոյն բանսն ընկա՛լ տնաւրինա-
 բար: ¹⁶Յաղագս որոյ, եթե կամեսցուք ի
 մերձակայիս հաւաստեալ պատմել, մոռա-
 նամք արդեւք զմեզ ինքեան¹⁸, բազում ինչ
 եւ անբաւ յղովութիւն բանից ի ներքս ա-
 ծեալ ¹⁹ի պատճառ. այլ յառաջիկայն վերս-
 տին երթիցուք, զի միտք կարիցին²⁰ ի նիւ-
 թականացն մաքրանալ եւ զամենայն զի-
 մանալի ստացուածն լքանել. ²¹որպէս
 ձուկն ի խորոց ինչ առ վերին երեւութիւնն
 զուղեցուք՝ ի մաքրութիւն ստացուածի
 լիեալք:

17 Անդ տեսանիցէք զՍուրբ Հոգին,
 22ուր Որդին եւ Հայրն, զամենայն ունելով
 եւ նա, գոյակից ըստ բնութեանն բարու-
 թիւնն²³, զուղղութիւնն, զսրբութիւնն,
 զկենդանութիւնն: 18 Քանզի՝ Հոգի քո, ա-
 սէ, բարի²⁴ եւ դարձեալ՝ Հոգի ուղիղ¹. եւ

1 է
 2 Հայր եւ Որդի
 3 զառանձնաւորութիւնն
 4 Յ՝ՎՃ՝Ժ՝Գ 15
 5 Յ՝ՎՃ՝Լ՝ 14
 6 առնուլն
 7 զբովանդակն
 8 բաժանեցելոց
 9 յՈրդոյս
 10 բնութեանն
 11 Գոյութեանն
 12 անբաժանաբար, գոյգ բարութեամբ հաղորդ
 փառացն.
 13 այլ զկնի քեզ պատկեր
 14 զբաւժնողայ յինքեն ցուցանել զՀայրն

4 Հ՝Մ՝Պ՝Մ՝Գ՝Ժ՝Ե 24, Գ՝Ն՝Կ՝Գ՝ 44:
 13 եւնչ ինչ կարել
 14 Յ՝ՎՃ՝Լ՝ 19
 15 Տ՝Ն՝ Յ՝ՎՃ՝Ժ՝ 18:
 14 այսպիսիք քեզ ընձեռեցեն
 15 փոքրացուցանել
 16 ո՛չ առ քո տկարութիւնն
 17 իմա աստուածավայելչաբար
 18 ինքենս
 19 ի պատճառս
 20 կարացեն
 21 եւ որպէս զձուկն ինչ ի խորոց
 22 եւ ուր Հայրն
 23 զբարութիւնն
 24 բարի սա է
 1 Մ՝ՊՃ՝Ճ՝Լ՝ 10
 1 Մ՝ՊՃ՝Ն՝ 12

զարձեալ՝ Հոգի քո սուրբ^ա. եւ առաքեալ՝ Աւրէնք հոգոյն կենդանութեանք^բ: 19 ¹Այս սոքիկ ոչինչ ի վերայ ստացեալք նմա, եւ ո՛չ գկնի լիեալ է, այլ որպէս ²անբաժանելի է հրոյ ջեռուցանել եւ լուսոյ պայծառացուցանելն, նոյնպէս եւ Հոգւոյն սրբելն եւ կենագործելն՝ ուղղութիւն, բարութիւն³: 20 Արդ, անդ եկաց Հոգին Սուրբ, անդ՝ յերանելի բնութեանն, ո՛չ ընդ բազումս թուեալ, այլ ⁴յերրորդութեան նստեալ, միաբար պատմեալ՝ ո՛չ շուրջ ըմբռնեալ բաղկացութեամբքն: 21 Քանզի, գորաւրինակ Հայր մի եւ Որդի մի, ⁵սոյն[պէս] մի եւ Հոգին Սուրբ: 22 Իսկ սպասաւորական Հոգիքն ըստ իւրաքանչիւրում⁶ կարգի բազմութիւն մեզ երեւի դժուարաթուելի: 23 Արդ, մի՛ խնդրեր ի ստացուածի գառաւելն քան զստացուածն, եւ մի՛ ⁷ի վայր ածեր զսրբաւղն ընդ սրբեալսն: 24 Նա լնու զհրեշտակս, լնու զհրեշտակապետս, սրբէ զգաւրութիւնս, կենագործէ զամենայն: 25 Սա յամենայն ստացուածս բաժանեալ, յամեն⁸ եւ այլազգաբար յայլմէ ընկալեալ՝ ամենեցուն ⁹զիւրմէ շնորհսն տայ, եւ ո՛չ ծախի ¹⁰յընդունաւղսն, եւ ինքնն է աննուագ: 26 Զորաւրինակ արեգակն պայծառացուցանելով զմարմինս եւ զանազանաբար ըմբռնեալսն¹¹, ոչինչ նուագէ յընդունողացն, ¹²սոյնպէս Հոգի Սուրբ ամենեցուն զառ յինքննէ շնորհսն ընձեռելով՝ անա-

ղաւտելի մնայ եւ անբաժանելի, զամենեւեան լուսաւորէ առ ի յԱստուծոյ իմաստսն. շնչի¹³ ի մարգարէսն, զաւրինադիրն¹⁴ իմաստնացուցանէ, զաւրացուցանէ զթագաւորսն, զքահանայս կատարէ, Հաստատէ զարդարսն, պարկեշտացուցանէ զողջախոհս, գործէ ¹⁵զշնորհս բժշկութեան, կենդանիս¹⁶ առնէ զմեռեալս, լուծանէ զկապեալս, ուղղէ զվայրանգեալսն¹⁷, որդեգրէ զաւտարացեալսն: 27 Զայսոսիկ վերստին ¹⁸գործէ ծննդեամբ. եթէ զմաքսաւորն ըմբռնէ, Հաւատացեալ¹⁹ աւետարանիչ ցուցանէ. եթե ի ձկնորսի լինի՝ աստուածաբան կատարէ. եթե զհալածիչն գտանէ ապաշաւեալ՝ առաքեալ հեթանոսաց գործէ, քարոզ հաւատոյն²⁰, անաւթ ընտրութեան: 28 Սովաւ տկարք զաւրանան եւ աղքատք ճոխանան, տգէտք բանիւ իմաստնագոյնք են քան զիմաստունս: 29 ²¹Պետրոս եւ նա ի տկարութեան մարմնի էր, այլ բնակեցելոյ²² ի նմա շնորհի Հոգւոյն՝ անկեալ ի մարմնոյն ստուեր ²³զհիւանդութիւնն ի բաց հալածէր աշխատեցելոցն: 30 Աղքատ Պետրոս եւ Յովհաննէս, ²⁴զի ո՛չ ունէին արծաթ եւ ոսկի, այլ շնորհէին ողջութիւն²⁵ քան զբազում ոսկի պատուականագոյն. վասն ²⁶զի յոլովից առնլով ոսկի կաղն ²⁷եւ մուրացիկն, իսկ ի

ա Սաղմ. Ծ 13
 բ Հռոմ. Բ 2
 1 Այսուհետեւ ո՛չ ինքն
 2 անբաժանելի հրո ջեռուցանելն, նոյնպէս Հոգոյն
 3 սրբութիւն
 4 յերրորդութեանն տեսեալ
 5 այսպէս եւ մի է
 6 իւրաքանչիւր իւրում
 7 ընդ վայր
 8 չիք
 9 յիւրմէ շնորհ
 10 յընդունողսն. այլեւ ընդունողն լցել լինին, եւ ինքն աննուագ
 11 ի նոցանէ ըմբռնեալ
 12 սոյնպէս եւ Հոգին

13 շնչէ
 14 գորիմադիրսն
 15 շնորհս բժշկութեանց
 16 կենդանի
 17 զվայրագնացեալսն
 18 ծննդեմբ գործէ
 19 գիտացելն
 20 հաւատոցն
 21 Պողոս տկար էր, այլ մերձօրութեամբ Հոգոյն վարշամակն նորա մարմնոյն բժշկութիւնս ընձեռէր կարատելոց. Պողոս եւ նա ի մարմնի տկարութեան
 22 բնակեցելով
 23 ի բաց հալածեր զհիւանդութիւն ախտացելոցն
 24 քանզի չունէին
 25 ասողութիւն
 26 ի յոլովից
 27 եւ էր մուրացիկ

Պետրոսէ ընկալեալ շնորհս՝¹ ²դադարեալ ի մուրանալոյ, վազելով իբրեւ զեղջերու եւ աւրհնելով զԱստուած: ³¹ Ո՛չ գիտէր Յովհաննէս զաշխարհիս իմաստութիւնն, այլ խաւսէր զբանս զաւրութեամբ Հոգւոյն, յորս եւ ո՛չ մի իմաստութեան համեմատել կարէ: ³² Սա եւ յերկնի եկաց եւ զերկիր ելլից, եւ ամենայն ուրեք մերձ է ³եւ ո՛չ պարունակի բովանդակ, յիւրաքանչիւրում ընտանենայ⁴ եւ բովանդակ է ընդ Աստուծոյ, ո՛չ սպասաւորաբար պաշտէ զպարգեւսն, այլ ինքնիշխանաբար բաժանէ զշնորհսն. քանզի բաժանէ, ասէ, իւրաքանչիւր ումեմ՝ որպէս եւ կամի՞, եւ առաքի տնաւրինաբար, իսկ մերձ լինի ⁵ինքնն իշխանապէս: ³³ Զսա մերձ գոլ յանձինս մեր աղաւթեսցուք, եւ ո՛չ զմի ժամանակ զմեզ լքանել. շնորհաւք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փա՛ռք յաւիտեանս. ամէն:

1 Թարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապաղիմարի հերձուածողի վիճարանութիւն:

2 Թարսղի ասէ: 2 Մարմին մարդկայի՞ն ունէր Քրիստոս, թէ ո՛չ:

3 Ապաղիմար ասէ. Ո՛չ:

4 Ուղղ. Բնութեա՞մբ, եթե միաւորութեամբ տնաւրէնութեա՞նն:

5 Ապաղիմար ասէ. Միաւորութեամբ տնաւրէնութեանն:

1 զշնորհն
 2 դադարեաց ի մուրանալոյն
 3 եւ ո՛չ ուրեմ պարունակե բօական
 4 ընդանեկ
 * Լ. Կ. Բ. Ժ. Բ. 11. Հմմտ. նաեւ 4:
 5 ինքնիշխանապէս
 6 Տե՛ս Ի, ք. 911v. Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի եւ Ապղիմարի հերձուածողի՝ Տեսութիւն ի մարմնաւորութիւն Փրկչին:
 7 Բարս. Իսկ այլ զո՞ր:- Ապօղ. Աստուածախն:- Բաղ.

6 Ուղղ ասէ. Ապա ուրեմն բնութեամբ մարդկային, եւ⁸ միացուցանելով տնաւրէնութեանն աստուածային:

7 Ապաղ. Այո՛:

8 Ուղղ. Եւ համաբնութի՞ւն մեզ:

9 Ապաղ. Որ ի Մարիամայ մարմինն՝ համաբնութիւն մեզ:

10 Ուղղ. Զայնակի՞ց ուրեմն մեզ ⁹լիցիս յայսմ:

11 Ապաղ. Թե այդպէս՝ այո՛:

12 Ուղղ. Արդ, տեսցուք յաղագս անձինն:

13 Ապաղ. Տեսցուք:

14 Ուղղ. Անձնաւո՞ր ¹⁰մարմինն էր, եթե առանց հոգւոյ:

15 Ապաղ. Հոգեւոր:

16 Ուղղ. Հոգի ունէր՝ յայտ է ահա:

17 Ապաղ. Ո՛չ¹¹:

18 Ուղղ. Եւ զիա՞րդ հոգեւորն ո՛չ ունէր հոգի:

19 Ապաղ. Աստուածային էր հոգեւորութեամբ հոգիացեալ:

20 Ուղղ. Իսկ դու անաստուածութեա՞մբ հոգիացար:

21 Ապաղ. Բնաբար անձնացայ:

22 Ուղղ. Առանց Աստուծոյ զաւրութեա՞նն:

23 Ապաղ. Այլ ո՛չ այսպէս¹² Տէրն. քանզի յայնոսիկ անձն բանական ի մարմնի միանալով՝ հրամանաւ Աստուծոյ մարդկատարէ. իսկ Քրիստոս¹³ ո՛չ այսպէս. այլ Աստուած ¹⁴Բանն ի մարմնի միացեալ՝ մարդ կատարեաց զԱստուածն:

8 իսկ
 9 լինիցիս յայս
 10 էր մարմինն
 11 Ո՛չ ունեւ հոգի
 12 որպէս
 13 Քրիստոսին
 14 Բանն մարմին

24 Ուղղ. Ուրեմն զա՞յն ասես աստուածային անձնաւորութիւն:

25 Ապաւղ. Եւ ամենեւին իսկ:

26 Ուղղ. Փոխանակ անձի՞ն¹ ուրեմն էր Բանն:

27 Ապաւղ. Այո՛:

28 Ուղղ. Իսկ ո՞ էր, որ ասէրն. Զանձն իմ ²ո՛չ ոք բառնայ յինէն. յորժամ կամիմ՞ դնեմ զնա, եւ յորժամ կամիմ՞ ³առնուիմ զնա՞. մարմի՞նն է, եթե Բանն:

29 Ապաւղ. Բանն:

30 Ուղղ. ⁴Զո՞ր անձն. զոր ո՞չ ունէրն, թե զոր ունէ՞րն:

31 Ապաւղ. Զմարդկային կենացն ասէր:

32 Ուղղ. ⁵Եւ կարելի՞ զմարդկային կեանսն զոլ առանց մերձաւորութեան անձինն:

33 Ապաւղ. Ամենեւին իսկ. քանզի Աստուած Բանն ինքն ի վերայ երկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ:

34 Ուղղ. Երեւեցաւ բնութեամբ անտեսանելին՝ զիս՞րդ:

35 Ապաւղ. Մարմնով:

36 Ուղղ. Արդ, որպէս ⁶մարմնոյ երեւելն, սոյնպէս եւ անձին շրջելն. անկարելի է բնութեամբ անտեսանելոյն տեսանիլ, եթե ո՛չ միացի ի մարմնի, որ ⁷կարէն երեւելի լինել, եւ անկարելի բնութեամբ անչարչարելոյն չարչարել եւ շրջել ընդ մարդկան, ո՛չ միացեալ մարմնի⁸ անձնաւորի. իսկ մարմին ⁹անձնաւորի հոգի ունել, եթե կամիս եւ եթե ո՛չ կամիս:

37 Ապաւղ. Մա՞րդ ուրեմն չարչարեցաւ յաղագս մեր:

38 Ուղղ. Մի՛ լիցի. այլ Աստուած կամելով երեւել՝ ¹⁰միացոյց ինքեան մարմին, զկարելին երեւել, եւ կամելով չարչարել՝ միացոյց ինքեան մարմին անձնաւոր, զկարելին չարչարել. ո՛չ յառաջագոյն զգոյացեալն եւ յայնժամ ¹¹ըստ առաքինութեան միաւորեալ, եւ ո՛չ ի մարդոյ պարզաբար Մարիամայ¹². այլ յառաջագոյն զնա սրբեալ¹³, ¹⁴յայնժամ ի նմա ընկալաւ Աստուծոյն Բան զմարդկութիւնն եւ միացոյց ինքեան ըստ տնաւրէնութեանն՝ հոգեւոր մարմին, որպէս զի զոլ զմի եւ նոյն¹⁵ Աստուած եւ մարդ:

39 Ապաւղ. Անձնաւոր մարմին¹⁶ մա՞րդ է:

40 Ուղղ. Ո՞չ պարզաբար զհոգեւոր մարմին ասեմ մարդ, ¹⁷այլ մարդկային մարմինն անձնաւոր լիեալ՝ մարդ է:

41 Ապաւղ. Մարդ Յիսո՞ւս է:

42 Ուղղ. Միաւորեալ Բանին:

43 Ապաւղ. ¹⁸Ապա ուրեմն ո՛չ է Յիսուս մարդ:

44 Ուղղ. Առանց Բանի ո՛չ զիտեմ զնա մարդ եղեալ, քանզի զգոյգութիւնն¹⁹ իւր միաւորութեամբ Բանին ծանեայ:

45 Ապաւղ. Ապա ուրեմն փոխանակ բանականի՞ն էր Բանն:

1 հոգո
2 ո՛չ բառնայ
3 դնեմ զնա. Բանն, եթե մարմինն
* Տէ՛* Յ*վ՛. Ժ 17-18:
4 եւ զո՞ր անձն ասէ. զոր ունե՞րն, եթե զո՞ր ոչն ունեք
5 եւ կարելի՞ է
6 մարմնոյն երեւել
7 նոյնպէս եւ անձինն շրջել եւ անկարելի է
8 ի մարմնի

9 անձնաւոր հոգի ունել է
10 մարմին անձնաւոր զկարելին չարչարել
11 ըստ առաքելութեանն
12 ի Մարիամա
13 սրբեց
14 եւ յայնժամ ի նմանէն կալաւ Աստուածն
15 զմարմինն
16 մարմինն
17 ասեմ մարդկային մարմին անձնաւորել
18 Մարդ Յիսու՞ս է:- Բսդ. Առանց Բանին ո՛չ մարդ զիտեմ զնա լինել
19 զգոյացութիւնն

46 Ուղղ. Ո՛չ, ¹այլ բանականին էր Բանն՝ միաւորելով յինքեան, եւ բանականաւն եկն ի կամաւոր չարչարանս:²

47 Ապաւղ. Միտս զմարդո՞յ³ ուրեմն ունէր Քրիստոս:

48 Ուղղ. Մի՛ ասեր Քրիստոս բաժանելով զմիտս⁴ ունէր. քանզի երկոքին՝ միտքն եւ Բանն, ասի Քրիստոս. եւ այսպէս միտս մարդոյ⁵ ասեմ, յորում էր⁶ Բանն, ⁷որպիսիքս տան բանին, ասացաք՝ մարմին մարդկային բնութեամբ եւ տնաւրէնութեամբ Աստուծոյ⁸. ⁹սոյնպէս եւ զանձն բնութեամբ զմարդկային, իսկ տնաւրէնութեամբ զԱստուծոյ, եւ միտս¹⁰ մարդկային՝ բնութեամբ եւ տնաւրէնութեամբ Աստուծոյ: 49 Եւ զորաւրինակ ¹¹մարմին նորա ո՛չ ետես զապականութիւն, սոյնպէս եւ ո՛չ միտքն արարին զմեզս. եւ որպէս Հարկաւոր է բնութեամբ զմարդկային ¹²մարմինն եւ յԱզամայ ի ¹³մարմնոյ եւ յարեւնէ ունել զբնութիւնն, նոյնպէս Հարկաւոր է զմարդկային անձնն բանական գոյ: 50 Եւ դարձեալ ասեմ. զորաւրինակ մարմինն բնութեամբ մարդկային էր¹⁴ եւ միաւորութեամբ տնաւրէնութեամբն¹⁵ աստուածա-

յին, սոյնպէս եւ ¹⁶միտք՝ բնութեամբ միաւորութեանն աստուածային միտք:

51 Ապաւղ. Երկո՞ւք ուրեմն կատարեալ¹⁷:

52 Ուղղ. Երկուց ¹⁸գոյացութեանցն կատարելոցն միաւորութիւն:

53 Ապաւղ. Երկու կատարեալք մի կատարեալ ո՛չ լինին:

54 Ուղղ. Առ մարդկան արդեւք անկարելի լինել, ¹⁹բայց առ ի յԱստուծոյ կարելի:

55 Ապաւղ. Զիա՞րդ կարելի:

56 Ուղղ. Որպէս կուսին ծնանելն, որպէս ի վերայ ծովուն գնալն, որպէս դրաւքն փակելովք մարմին թանձրամասն մտանել ²⁰ի մարմնոյ եւ յոսկերաց Հաստատեալն: 57 Արդ, զորաւրինակ այսոքիկ կարելիք Աստուծոյ, եւ նո՛յնք:

58 Ապաւղ. Մա՞րդ ուրեմն ծնաւ Մարիամ:

59 Ուղղ. Սոսկ ո՛չ, այլ Աստուած մարդացեալ. քանզի յառաջագոյն ընդ նմա Տէրն աստուածաբար եւ յայնժամ ի նմանէ տնաւրինաբար մանուկ, յաղագս որոյ եւ Աստուածածին Մարիամ:

60 Ապաւղ. Մա՞րդ ուրեմն խաչեցաւ յաղագս մեր:

61 Ուղղ. Սոսկ ո՛չ, այլ Աստուած էր Աստուծոյ Որդին, եւ կամեցեալ խաչել յաղագս մեր՝ միացոյց ինքեան մարմին անձնաւոր, բանական՝ զկարելին խաչել Հանդերձ կամաւոր չարչարանաւքն:

62 Ապաւղ. Ընդէ՞ր ասես խաչեցեալ²¹ Հանդերձ չարչարանաւք. այլ է խաչն, ¹եւ այլ է չարչարանսն կամաւորս:

1 այլ զի բանականն էր Բանին միօրեւի
2 Շարունակութիւնը Ի, ք. 94. յոգոյն ի բանականէ... պարբերութիւնն է՝ մինչեւ մեր ձեռագրի մէջ եղած հատուածի վերջը. իսկ յետոյ անմիջապէս հետեւում է այն պարբերութիւնը (ք. 912v), որ այստեղ մեր ձեռագրի շարունակութիւնն է կազմում, եւ այսպէս ամբողջանում է հատուածը:
3 մարդոյ
4 զմիտսն
5 մարդկաին
6 է
7 որպէս ի սկզբան բանիս ասացաք
8 զԱստուծոյ
9 չի՞ սոյնպէս ... զԱստուծոյ
10 զմիտս
11 մարմինն
12 մարմինն յԱղամայ
13 մարմնոյն եւ յարեւնէն
14 չի՞
15 տնօրէնութիւնն

16 միտքն բնութեամբ եւ մարդկաին եւ միաւորութեամբ տնօրէնութեանն աստուածաին
17 կատարեալի
18 գոյացութեանց կատարելոց
19 բայց Աստուծոյ
20 ի մարմնոյն
21 խաչել

63 Ուղղ. Կարի՛ քաջ:

64 Ապաւղ. Զիա՞րդ:

65 Ուղղ. Զի մարմին ²հոգեւոր խաչել կարէ, իսկ չարչարանս ընդունել կամաւորապէս ո՛չ կարէ, որ ³ո՛չ է հոգեւոր բանական, եւ այս է ամպարչտութիւն ասողացն, եթե՞ ⁴ հոգի ո՛չ ունէր. քանզի մարմնոյ ո՛չ կարացելոյ զգալ զկամաւոր չարչարանսն առանց հոգւոյ, հարկաւոր է Բանին⁵, փոխանակ հոգւոյն լեալ՝ ⁶ընդունել չարչարանս, կամ ո՛չ բնաւ գոլ զգայութիւն կամաւոր չարչարանացն:

66 Ապաւղ. Եւ ո՞չ չարչարեցաւ Բանն:

67 Ուղղ. Միացուցեալ յինքեան⁷ զկարելին չարչարել, որպէս զի գոլ զչարչարանս տնաւրէնութեանն, եւ ո՛չ բնութեան Բանին. զորաւրինակ վաստակեաց⁸ յուղեցնացութեանն՝ ո՛չ բնութիւն աստուածութեանն, այլ միաւորութիւն տնաւրէնութեանն. սոյնպէս եւ չարչարեցաւ՝ ո՛չ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: 68 Ապա թէ ո՛չ, ⁹արար զերկին եւ զեկիր առանց աշխատութեան եւ զնայ ի վերայ թեւոց հողմոց¹⁰, զիա՞րդ արդեւք¹⁰ աշխատեցաւ, եթե ո՛չ միացոյց ինքեան զկարելին վաստակել մարմինն¹¹. զի մարմին առանց հոգւոյ ո՛չ աշխատի եւ ո՛չ վաստակէ: 69 Եւ¹² զորաւրինակ նորա մարմին է, զոր միացոյց ¹³ինքեան հոգեւոր մարմին՝ ո՛չ բնութեամբ,

¹⁴այլ տնաւրէնութեամբ, սոյնպէս նորա աշխատութիւնն, վաստակն¹⁵ ո՛չ բնութեամբ, այլ տնաւրէնութեամբ միաւորութեանն, եւ նորին չարչարանքն ո՛չ բնութեամբ. քանզի անչարչարելի է աստուածութիւնն¹⁶, այլ ¹⁷տնաւրէնութեամբ միաւորութեանն: 70 Վասն զի յաղագս ¹⁸չարչարանաց է միաւորութիւնն եւ յաղագս ¹⁹փրկութեան չարչարանքն. քանզի կեցուցանել կամելով²⁰ չարչարեցաւ, եւ չարչարել կամելով՝ միացոյց, եւ միացուցեալ՝ ո՛չ եթող. զի՝ ²¹Սոյնպէս եւ եկեցեք, գորաւրինակ տեսէ՛ գնա երթեալ յերկինս²². եւ՝ ²²չալեցից յոր խոցեցիցն²³:

71 Ապաւղ. Այլազգաբար արդեւք ո՞չ կարէր ապրեցուցանել:

72 Ուղղ. Այլ այնպէս կամեցաւ ապրեցուցանել՝ յիմարութեամբ քարոզութեանն:

73 Ապաւղ. Եթէ զմիտս մարդոյ ունէր՝ ²³կարէ՞ր արդեւք մեղանչել:

74 Ուղղ. Եթե ո՛չ էր միացեալ աստուածութեամբն²⁴ միտքն՝ այո՛:

75 Ապաւղ. Փոփոխելի՞ ուրեմն էր Քրիստոս:

76 Ուղղ. Մի՛ լիցի:

77 Ապաւղ. Զի եթե կամէր²⁵ մեղանչել՝ փոփոխելի էր:

78 Ուղղ. Յիշեա՛ զասացեալսն²⁶. քանզի ասացի, եթե ո՛չ էր միացեալ՝ այո՛. ¹զի

1 չի՛ք եւ այլ է ... կամաւորս
2 հոգեւոր բանական
3 եւ ո՛չ ի հոգեւոր
4 զի ասեմ թե
5 բան. Բանին
6 չարչարանս ընդունել
7 ընդ ինքեան
8 վաստակեցաւ
9 արարն զերկինս
* Սաղմ. ԿՂ. 3
10 չի՛ք
11 մարմին
12 չի՛ք
13 ընքեան հոգեւոր

14 այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն
15 չի՛ք
16 բնութեամբ
17 միաւորութեամբ տնաւրէնութեանն
18 չարչարանացն էր
19 ի փրկութիւն էին
20 կամեցաւ
21 Սոյնպէս
* Գործ. Ը 11
22 հանցել տեսին գոր
* Եզեկ. ԺԹ. 37. Զալ. ԺԲ 10
23 կարեք եւ
24 ընդ աստուածութեանն
25 կարեք
26 զասացելն

Քրիստոս Յիսուս առանց միաւորութեան
ո՛չ իմանի Քրիստոս Յիսուս, այլ Աստուած
Քան եւ Որդի Աստուծոյ գոյացեալ: 79 Ե-
թե կարացես³ գտանել անձնաւոր մարմին
առանց միաւորութեան՝ իմա⁴ փոփոխումն.
ապա թե միանգամայն մարմին՝ միանգա-
մայն Աստուծոյ Բանին մարմին⁵ հոգեւոր,
բանական, զի՞ խնդրես⁶ փոփոխումն:

80 Ապաւղ. 7^{թե} զմիտս մարդոյ ունէր,
եւ զմոռացումն եւ զանգիտութիւն ունէր
եւ⁸ մեղանչել կարէր:

81 Ուղղ. Եթե ո՛չ էր միացեալ աս-
տուածութեամբն՝⁹ այո՛. ¹⁰եւ դու մի՛ ասեր
միտս մարդոյ, քանզի ո՛չ զայլոյ ուրուք
մարդոյ ունէր միտս:

82 Ապաւղ. ¹¹Եթե զմարդկային միտս
ընկալաւ Բանն, գորաւրինակ եւ զմարդկա-
յին միտս, զիա՞րդ կարէր մարդկային
միտքն ո՛չ փոփոխել:

83 Ուղղ. Որպէս մահկանացուս այս
զգենլով զանմահութիւն՝ ո՛չ եւս մեռանի,
եւ ապականացուն զգենուլ¹² զանապակա-
նութիւն՝ ո՛չ եւս ապականի, սոյնպէս եւ
միտք աստուածացեալ¹³, միաւորութեամբ
Աստուծոյ Բանին՝ ո՛չ փոփոխի:

84 Ապաւղ. Ապա ուրեմն եւ սուրբքն
¹⁴անփոփոխելի՞^օ ունին զմիտսն:

85 Ուղղ. Ո՛չ:

86 Ապաւղ. ¹⁵Ընդէ՞ր. ո՞չ ի նոսա էր
Բանն:

87 Ուղղ. Այլ ի սուրբսն ո՛չ ըստ միա-
ւորութեան էր, այլ ըստ Հոգւոյ շնորհի,
զանազանաբար ի նոսա նորա զաւրանա-
լով. իսկ աստ ամենայն լիութիւն¹⁶ աս-
տուածութեանն. եւ սուրբքն ¹⁷ընդունակ
էին, իսկ աստ Բանն ընկալաւ զմարդկու-
թիւնն:

88 Ապաւղ. Ասաց¹⁸ արեան եւ մարմ-
նոյ, որպէս գրեցաւ:

89 Ուղղ. Սովորութիւն է Գրոց զբո-
վանդակ մարդն մարմին եւ արիւն կոչել,
որպէս յորժամ ասէ՝ ¹⁹Ոչ վերագրեցիմ
մարմնոյ եւ արեան. ²⁰եւ՝ Ի վերջին աւուրս
հեղից յովոյ իմմէ ի վերայ ամենայն մարմ-
նոյ՞, եւ դարձեալ՝ Ո՛չ մնացէ հոգի իմ ի
մարդկանդ յայդմիկ, յաղագս գոյ զդոսս
մարմինս²¹, եւ որ ինչ այսպիսիք:

90 Ապաւղ. ²²Զի՞նչ են, որ սուրբքն
ընկալան, եւ Աստուած Բանն ո՛չ ընկալաւ.
զի՞նչ է զանազանութիւնն:

91 Ուղղ. Զի սուրբքն յառաջագոյն գո-
յացեալք եւ²³ յայնժամ ընկալան զԱս-
տուած Բանն. իսկ աստ ո՛չ այսպէս, այլ որ
էր նախ քան զյաւիտեանս Աստուածն Բան՝
կամեցեալ մարդանալ, սրբեաց զԿոյսն եւ
միացոյց ինքեան ի նմանէ²⁴ մարմին. զի
ո՛չ յառաջագոյն գոյացեալ եւ յայնժամ²⁵

1 Բանգի Յիսուս Քրիստոս
2 Բանն Որդի
3 կարիցես
4 Բանին ի նմա
5 հոգեւոր եւ բանական մարմին
6 խնդրես
7 եթե միտս
8 չի՞ք
9 ընդ աստուածութեանն
10 այլեւ մի՛ ասեր, միտս մարդոյ ունեք
11 ունեք միտս. այլ թէ արդեօք, ասա՛, զմարդկաին
միտսն ընկալաւ Բանն, գործրինակ զմարդկաին
մարմինս: Ապօղ.
12 այս սգեցնլով
13 աստուածացեալք
14 անփոփոխելի ունեին

15 ընդէ՞ր եւ
16 լրութիւն
17 Բանին էին
18 Ասա՛
19 ո՛չ վերագրեցի արեան եւ մարմնո ումեք
* Գ.Պ. Լ 16
20 չի՞ք եւ ի վերջին ... իմմէ
ք Յ.Լ. Բ 28, Գ.Պ.Ձ. Բ 17
21 մարմին
ք Ծ.Պ.Ձ 3
22 Զի՞նչ է, սուրբքն
23 եւ ապա
24 չի՞ք
25 եւ ապա

միացեալ, այլ ¹ի նմին գոյութենէ միացոյց:

92 Ապաւղ. Երկ^օւք ուրեմն ²իշխանականք էին ի մարմնին՝ Աստուած Բան եւ միտք մարդկայինք:

93 Ուղղ. Այլ ինքն Բանն առաջնորդէր մտացն:

94 Ապաւղ. Զիա^օրդ կարէր:

95 Ուղղ. Զորաւրինակ սպիտակութիւն աստուոյն³ ներկեալ գունով ծիրանեաւ⁴, ⁵ո՛չ երկու գոյն է, այլ մի, նոյնպէս միտք պայծառացեալք եւ աստուածացեալք մի է, եւ ո՛չ եւս⁶ երկուք առաջնորդականք:

96 Քանզի ո՛չ այլ ինչ կամին⁷ միտքն եւ այլ ինչ⁸ Բանն, այլ որպէս երաժշտականն եւ գործին ո՛չ երկու ⁹երաժշտականք, սոյնպէս Բան եւ միտքն մարդկայինք ո՛չ երկու իշխանականք¹⁰. քանզի փոխանակ գործույ ¹¹մարդկային մտաւքն վարէր Բանն:

97 Ապաւղ. Այլ ¹²գործն երաժշտականի առանց մտաց է:

98 Ուղղ. Երաժշտականն մահկանացու, իսկ աստ Բանն անմահ էր, մտաւքն վարի գործեաւ¹³. եւ գորաւրինակ ի մեզ միտքն ¹⁴մարմնով վարին գործեաւ, զի ի ձեռն մարմնոյն է կատարելութիւնն¹⁵, նոյնպէս եւ անդ Բանն մտաւքն վարէր գործեաւ¹⁶.

զի ի ձեռն մտացն կատարելութիւն:

99 Ապաւղ. Եւ զի^օնչ եւս մարմնոյն պէտք¹⁷:

100 Ուղղ. Յաղագս բազմաց. զի երեւել կամեցաւ եւ զի երկաքանչիւրովք էր կորուսեալն՝ նմանեաւն¹⁸ զնմանն ապրեցուցէ ¹⁹խաչիւ, եւ կամաւոր չարչարանսն մտաւք վարեցաւ, եւ կամաւոր չարչարանաւքն հաճեցաւ, որպէս յառաջն ասացի՝ գործեաւ, իսկ ի մարմնականսն մարմնով, եւ այսպէս խնդրելով եւ գտանելով՝ միացոյց եւ ապրեցոյց զկորուսեալսն:

101 Ապաւղ. ²⁰Որո՞վ ասես մարմնականաւք:

102 Ուղղ. Խաչիւն, թաղմամբն, դնելովն²¹, ²²չաւշափմամբն, կերակրովն, ըմբելեաւն, եւ որք այդոցիկ զհետ գան²³:

103 Ապաւղ. Աստուա^օծ էր Բանն, որ ծնաւ ի Մարիամայ:

104 Ուղղ. ²⁴Ծնեալն ի Մարիամայ էութիւն ի նորա բնութենէն ո՛չ էր ²⁵Աստուած բնաբար, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն:

105 Ապաւղ. Եւ զիա^օրդ՝ Աւրինեալ պտուղ որովայնի քո՞ւ, ասի:

106 Ուղղ. Վասն զի՝ որ ի բնութենէ Հաւր էր Աստուած Բանն, ի բնութենէ Մարիամայ էառ զպատկեր ծառայի, եւ ձեւաւք²⁶ գտեալ իբրեւ զմարդ՝ պտուղ որովայնի նորա գտաւ:

1 ի նմին միութենէ գոացել
2 իշխանք են
3 ասրու
4 ծիրանո
5 ո՛չ երկնագոյն, նոյնպէս եւ միտքն աստուածացել եւ պայծառացելք
6 չիք
7 խօսին
8 չիք
9 որպէս երաժշտականն, այլ մի
10 իշխանականք, այլ մի
11 միտք մարդկային եւ նովիմք վարեր Բանն
12 գործի երաժշտականին
13 գործօք
14 մարմնով վարին գործով
15 կատարելութիւն
16 գործով

17 պետք էին
18 եւ նմանովն
19 խաչիւն եւ կամօր չարչարանաւքն հանեցաւ եւ ի կամօր չարչարանս մտօքն վարեցաւ
20 Որո՞վ ասէք
21 գալովն
22 շաւշափելովն, ըմբելովն
23 երթան
24 Էութիւնն ծնել է ի Մարիամայ ի նոյն
25 բնաբար Աստուած
* Գ.՝ Է. Ը 42
26 ձեւով

107 ¹Ապաւղ. Յարեցա՞ւ ուրեմն Բանն ծնեալ ի մարմինն, որ ի Մարիամա, իբրեւ զկենդանի:

108 Ուղղ. Իբրեւ զկենդանի ո՛չ գրեցաւ, այլ իբրեւ Աստուած ի տաճարի կենդանւոջ:

109 Ապաւղ. Եւ յիւրաքանչիւր ումեք² ի սրբոցն ³այսպէ՞ս բնակեցան, որպէս ի տաճարի կենդանւոջ:

110 Ուղղ. ⁴Ո՛չ այսպէս. քանզի իւրաքանչիւր ոք սրբոցն⁵ այնքան եղեն տաճարք, որք⁶ կարացին առաքինութեամբ եւ ճգնութեամբ ուղղել, իսկ աստ ամենայն լիութիւն աստուածութեանն բնակէ. եւ սուրբքն զպատկեր Աստուծոյ առին՝⁷ առաքինութեամբ ուղղեալք, բայց աստ Բանն պատկեր ծառայի էառ:

111 Ապաւղ. Այն, որ ի հոգւոյ եւ ի մարմնոյ գոյացաւ տաճար՝ մա՞րդ է՞:

112 Ուղղ. Թէ առանց Բանին էր՝⁹ այո՛. իսկ եթե ո՛չ է, յորժամ առանց Բանին ¹⁰ի մարմնի՝ ո՛չ էր մարդ սոսկ, այլ Աստուած՝ միաւորութեամբ Բանին:

113 Ապաւղ. Ծնեալն ի Մարիամայ տաճար ¹¹էր ա՞յնմ, որով ամենայնքն:

114 Ուղղ. Ծնեալն ի Մարիամայ տաճար ո՛չ թափուր ¹²եւ ունայն ծնաւ, այլ Հանդերձ բնակչաւն. յաղագս որոյ եւ ինքն է Յիսուս, որով ամենայնք: ¹¹⁵¹³Արդ, ո՛չ զտաճարն կոչեմք¹⁴ Յիսուս՝ առանց Բա-

նին, եւ ո՛չ զԲանն առանց տաճարին. այլ յայնմհետէ Յիսուս Բան կոչեցաւ, ¹⁵յորմէ հետէ բժշկեաց զխորտակումն¹⁶ ժողովրդեանն իւրոյ. եւ յայնժամ բժշկեաց, յորժամ ¹⁷արժանի արար զպատկեր ծառայի առնուլ: ¹¹⁶Արդ, այս Բան, որ այժմ Յիսուս¹⁸ յաղագս տնաւրէնութեանն կոչեցաւ՝ նոյն է, որով ամենայնք: ¹¹⁷Եւ ¹⁹որպէս հրացեալ երկաթ հուր եւ երկաթ իմանամք, ²⁰սոյնպէս զՅիսուս՝ զԱստուած Բան մարդացեալ:

118 Ապաւղ. Տաճա՞րն, որով ամենայնք, թե ո՞ր ի տաճարին:

119 Ուղղ. Մի՛ բաժաներ զտաճարն ի բնակաւղէն. ²¹զի թէ որ յարին ի Տէր մի հոգի է, ²²բազում եւս առաւել յորժամ Տէրն ասի²³, եւ հաւատարիմ է միաւորեալ պատկեր ծառայի՝ միեւնոյն Աստուած եւ մարդ:

120 Ապաւղ. Ո՛չ ուրեմն է մարդ ծնեալն Մարիամայ²⁴:

121 Ուղղ. Միայն մարդ՝ ո՛չ:

122 Ապաւղ. Այլ եւ զի՞նչ:

123 Ուղղ. Եւ Աստուած. քանզի ²⁵ո՛չ է միայն մարմին ²⁶Իսահակ ծնեալ յԱբրահամէ, եւ ո՛չ այլ ոք ի մարդկանէ, ²⁷այլ մարդ ի մարդոյ ծնեալ. ²⁸իւրաքանչիւր ոք ի մէնջ ո՛չ ծնեալ ոգւոյն բանականի ի յոգւոյն բանականէ, եւ սակայն մարդ յանձնէ բանականէ եւ ի մարմնոյ գոյանայ:

1 չի՞ք Ապոդ. Յարեցաւ ... կենդանւոջ
2 ոք
3 այսպէ՞ս է, որպէս ի տաճարի
4 Ո՛չ այսպէս է
5 ի սրբոցն
6 որքան
7 չի՞ք
8 էր
9 իմանի
10 իմանի ո՛չ է
11 չի՞ք էր այնմ ... տաճար
12 ծնաւ եւ ունայն
13 Բարսեղ. Արդ
14 կոչեմք

15 յորմէ հետէ
16 գրեկումն
17 արժանատորեաց
18 Աստուծոյ
19 Որպէս գիրացելն
20 Սոյնպէս եւ զՅիսուս Աստուած
21 քանզի եթե
22 բազում առաւել
23 ասի լել մարդ
24 ի Մարիամա
25 որպէս ո՛չ է մարմին միայն
26 Սասկ ծնելն
27 այլեւ հոգի եւ մարդ
28 իւրաքանչիւր ոք ի մէնջ է բանական կենդանի, բայց ո՛չ ծնեալ հոգոյն բանականի

124 Սոյնպէս եւ Աստուած ասեմ զ'ի Մարիամայ ¹ծնեալ Հոգւոյ եւ մարմնի միացեալն. վասն զի, զորաւրինակ միացեալ ²ոգի ի մարմնի ծնանիմք³ ի ձեռն կնոջ, սոյնպէս միացեալ Աստուած Բանն ոգւոյ եւ մարմնոյ՝ ծնաւ Աստուած եւ մարդ ի ձեռն կնոջ:

125 Ապաւղ. Եւ սակայն՝ ի կնոջէ գրեցաւ:

126 Ուղղ. Ի կնոջէ ըստ մարմնոյ, ի ձեռն կնոջ ըստ Հոգւոյ:

127 Ապաւղ. Իւր որդի⁴ Աստուծոյ ուրեմն⁵ յաղագս ⁶մերոյ է Բա՞նն, եթե մա՞րդն:

128 Ուղղ. Իւր Որդին Աստուծոյ նոյն ինքն է, որ խոնարհեցոյց զինքն, զպատկեր ծառայի առնելով, ⁷եւ նովիմք ծառայական պատկերաւն գտաւ:

129 Ապաւղ. Ո՞չ ծնեալն ուրեմն ի Մարիամայ Յիսուս, այլ ծնեալն ի ձեռն նորա Բանն ինքն զինքն խոնարհեցոյց մինչեւ ի մահ:

130 Ուղղ. Մի՛ բաժաներ զընտանեցեալ միաւորութիւնն. քանզի ասացի, թե նոյն ինքն է իւր Որդին⁸ եւ ի Մարիամայ ըստ մարմնոյ, եւ ի ձեռն նորա ըստ Հոգւոյ:

131 Ապաւղ. Որ ի ձեռն նորա՞ արդեւք Բանն խոնարհեցոյց զինքն մինչեւ ի մահ:

132 Ուղղ. Որ ի ձեռն Մարիամայ Աստուած Բանն՝ ո՛չ կարելով բնութեամբ աստուածութեանն խոնարհիլ մինչեւ ի մահ, էառ ինքեան ի Մարիամայ անձնաւոր մարմին՝ զկարելին խոնարհել մինչեւ ի մահ, որ է պատկեր ծառայի:

133 Ապաւղ. Աստուած՞ ուրեմն մեռաւ յաղագս⁹ մեր:

134 Ուղղ. Աստուած՝ միացուցանելով ինքեան Հոգեւոր մարմին, զկարելին մեռանել. վասն զի ո՛չ բնութեամբ աստուածութեանն յաղագս¹⁰ մեր մեռաւ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն:

135 Ապաւղ. Թե Հոգի բանական ունէր մարմինն՝ ո՛չ Աստուած, այլ մարդն մեռաւ:

136 Ուղղ. Որ ի ¹¹մարմնոյ բաժանումնն մա՞հ ասի, թե ո՛չ:

137 Ապաւղ. Այո՛:

138 Ուղղ. ¹²Չորաւրինակ ուրեմն ո՛չ կարէ ¹³ասել Աստուած ի գերեզմանին եւ ի թաղմանն լինել, եթե ո՛չ ունէր զեղեալ մարմինն, սոյնպէս ո՛չ ասացաւ՝ բաժանեցաւ¹⁴ ի մարմնոյն, զի¹⁵ ամենայն ուրեք էր եւ զամենայն ¹⁶բովանդակէր, եթե ո՛չ ունէր զբաժանելի Հոգին, ընդ որում եւ որոց ի դժոխս էին աւետարանեաց: 139 Վասն զի յաղագս նորա եւ գնալ ի մարմնոյ ¹⁷եւ ի դժոխս լինել. եւ այս է յաղագս մեր Աստուած ի գերեզմանի եղեալ ի ձեռն մարմնոյ, եւ ի դժոխս լինել¹⁸ ի ձեռն Հոգւոյն:

140 Ապաւղ. Ես Հաւատացի, թե Աստուած Բանն իւրով մերձաւորութեամբն Հոգիացոյց զմարմինն եւ պէտս ինչ ոչ ունէր Հոգւոյն:

141 Ուղղ. Որպէս ի խաչելն եւ ի թաղիլն եւ յունելն պէտս ունէր մարմնոյ, զի մի՛ կարծեաւք խաչն լիցի¹⁹, այլ ճշմար-

1 ծնեալն՝ ի հոգո եւ ի մարմնո
2 ոգո ի մարմին
3 ծնանի մարդ
4 Որդին
5 գոր ետն
6 մեր, ո՞ է
7 եւ նորին ծառայական պատկերովն տւօ
8 Որդին Աստուծոյ

9 վասն
10 վասն
11 մարմնոյն բաժանումն
12 Արդ, զորօրինակ ուրումն
13 ասել ի գերեզմանին
14 եթե բաժանեցաւ
15 չի՞
16 բաւրնդակեր եւ ուներ գանբաժանելի հոգին, ըստ որում
17 եւ որոց ի դժոխս լինել. եւ այս յաղագս մեր
18 չի՞
19 լինիցի

տուժեամբ, նոյնպէս եւ ի մեռանելն եւ ի դժոխս լինելն պէտս ունէր հոգւոյ. քանզի յաղագս ո՞յր ասացաւ տրտմել եւ հոգալ մինչեւ ի մահ. յաղագս ¹մարմնո՞յ զգալոյ, եթե Բանի՞ն Աստուծոյ:

142 Ապաւղ. Եւ մեք ասեմք, եթե զգայութիւն ունէր մարմինն, որով զգայր զչարչարանացն:

143 Ուղղ. ²Եթե մարմին զգայութեան ունէր, հոգեւոր է. քանզի առանց հոգւոյն անզգայ է. ³որպէս որ խոնարհեցոյց զինքն մինչեւ ի մահ եւ մեռաւ՝ Աստուած է, ո՛չ բնութեամբ Աստուածութեանն մեռանելով, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն. ⁴վասն զի զմարդկութեան զչարչարանսն իւր համարեցաւ չարչարանս: 144 Եւ գորաւրինակ էր անկարելի⁵ բեւեռել զնա ի խաչին եւ պատել պաստառակալաւն եւ դնել ի գերեզմանի՝ առանց մարմնոյն, նոյնպէս անկարելի էր ⁶նմա տրտմել առանց հոգւոյն բանականի. ⁷քանզի անբանականն ո՛չ տրտմի՝ յառաջագոյն անգիտանալով զմահն, այլ իբրեւ զարջառ ի սպանումն ածաւ⁸, եւ կամ իբրեւ զայլ ինչ յանբանիցն:

145 Ապաւղ. Ո՞չ ուրեմն եղեւ մարդ Որդին Աստուծոյ, այլ ի մարդումն, եւ անկարելի որ ⁹ի մարդումն՝ զնա գոլ Աստուած:

146 Ուղղ. Ասե՞օ զԲանն լեալ մարմին, ¹⁰եթե ո՞չ:

147 Ապաւղ. Բան մարմին եղել՞ազրեալ է:

148 Ուղղ. ¹¹Փոփոխեա՞լ ի մարմին, թե ի մարմնի լինելով:

149 Ապաւղ. Ի մարմնի լիեալ¹²:

150 Ուղղ. Թէ անկարելի է նմա մարդ լինել, լինելով ¹³ի մարմնի, իսկ եթե ¹⁴ի մարմնի լիեալ՝ մարմին ասի լինել, ¹⁵ո՛չ փոփոխելով¹⁶ ի մարմին, եւ մարդ լիեալ՝ մարդ ասի եղեալ¹⁷, ո՛չ փոփոխելով ի մարդ:

151 Ապաւղ. ¹⁸Ո՞վ է, որ ասէրն. Աստուած, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս⁹. Աստուած Բա՞նն, եթե մարդ¹⁹:

152 Ուղղ. Ես զթաղումն ²⁰մարմնոյն, եւ զգեստսն նորա ասեմ Բանին՝ ո՛չ բնութեամբ ²¹աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: 153 Սոյնպէս զձայնականս²² զտրտութիւնն, զգոփալն եւ որքան ասի յաղագս²³ նորա յաւետարանսն՝ Աստուծոյ Բանին ասեմ, ո՛չ բնութեամբ աստուածութեանն, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն. քանզի նոյն ինքն մարմինն նորա ո՛չ բնութեամբ Աստուածութեանն էր մարմին, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն: 154 Արդ, զորաւրինակ զմարմինն իւր առնէ՝ ասելովն. եթե ո՛չ կերիցե՞մ զմարմին իմ⁹. նոյնպէս եւ զողբին²⁴ իւր առնէ՝ ասելով. ²⁵Ձոգի իմ ո՛չ ոք

1 մարմնոյն անսգալո
2 եւ մարմին սգաութիւն ունելով
3 զի որ
4 վասն զի մարդկութիւնն չարչարանս կրեց
5 անկարելի էր
6 նորա տրտմելն եւ հոգալն առանց հոգոյ
7 զի անբան անձն ոչ տրտմի
8 ածել լինի
9 ի մարդումն լել՝ գոլ զնա Աստուած
10 եւ ո՛չ

՝ Յ՝ՎԶ՝ Ը՝ 14
11 փոփոխելի մարմին
12 լինելով
13 ի մարմին
14 մարմին լինել
15 ո՛չ փոփոխել ի մարմին եւ մարդ լինել. մարդ ասի եղել, ո՛չ փոփոխելով ի մարդ:
16 փոփոխել
17 լինել
18 ո՞վ էր, որ ասեր
9 Մ՝ՊՇ՝ ԻԼ՝ 46, Մ՝ՊԿ՝ ԺԵ՝ 34
19 մարդն
20 մարմնոյն նորա
21 աստուածութեանն. նոյնպէս եւ զայնս
22 զանձնականս
23 վասն
4 Յ՝ՎԶ՝ Չ՝ 54
24 զողբին

ո՞ր բառնայ յիմէ՞: 155 Նոյնպէս զչարչարանսն երկաքանչիւրոցն ընտանեցուցանէ. քանզի որպէս նորա մարմինն տնաւրինաբար, այսպէս² նորա թաղումն մարմնոյն³, եւ գորաւրինակ նորա անձն տնաւրինաբար՝ նորա⁴ ձայն անձինն տնաւրինաբար, զի եւ թաղումն նորա⁵ մարմնոյն՝ Բանին թաղումն տնաւրինաբար, եւ ձայն անձին նորա Բանին ձայն տնաւրինաբար. քանզի ինքն էր Բանն՝ ձայնելով զանձինն յատուկ⁶:

156 Ապաւղ. Մեք ասեմք, թե մարդասէրն Աստուծոյ Բանն մարդ լինել արժանի արար՝ մարմին առնելով ի սրբոյ կուսէն Մարիամայ, եւ էր Աստուած մարմնացեալ իբրեւ զմարդ գտեալ:

157 Ուղղ. Մի՛ ասեր մարդասէր Աստուծոյ Բանն, այլ մանաւանդ ասա՛ մարմնասէր. քանզի եթե ո՛չ արժանի արար միանալ ի մարդն՝ զիա՞րդ մարդասէր:

158 Ապաւղ. Սիրելով զմարդն՝ ի մարդկային ⁸մարմնի միացաւ, զի իցէ նոյն ինքն Աստուած եւ մարդ:

159 Ուղղ. Ո՛չ եւս մարդկային ⁹մարմին է, որ ո՛չ է ¹⁰անձնաւոր բանական. քանզի զիա՞րդ ¹¹ո՛չ անձնացեալ անձամբն բանականաւ մարմին ¹²մարդոյ կարասցէ զոյ. քանզի մարմինն մարմին է եւ անձն անձն է, եւ յայնժամ մարդ ասի, յորժամ

բանականաւ¹³ անձամբ մարմնանայ, եւ ¹⁴մարմինն անձնանայ: 160 Արդ, ո՛չ եւս մարդկային մարմին, որ ո՛չ Հաւասարեաց¹⁵ հոգւոյ բանականի:

161 Ապաւղ. Երկրային մարմինք յորժամ ինչ առընկալցին՝ անձն բանական մարդ¹⁶ լինի. եթե անբան անձն առընկալցի, այլ կենդանի մարդոց¹⁷ լինի. եւ յայսմ նիւթոյ Տէրն ինքեան ¹⁸ստեղծանելով մարմին եւ զնոյն կենդանացեալ¹⁹ իւրով բնութեամբն, որպէս բնաւորեցաւն՝ անձն ²⁰ուրեւ կատարեալ, եւ նմա զիւր զաւրութիւնն տալով՝ ²¹առնէ կենդանի Աստուած, Աստուած ըստ տեսակի եւ մարդ ըստ նիւթոյ:

162 Ուղղ. Ըստ տեսակին ո՛չ իմանամ. կամիս ասել ըստ աստուածութեա՞նն:

163 Ապաւղ. Մարմին կերպարանեալ աստուածայնովքն՝ պայծառացեալ զաւրութեամբք:

164 Ուղղ. ²²ՁԱստուած ուրեմն զգաւրութիւնս տեսա՞կ ասես:

165 Ապաւղ. Այո՛:

166 Ուղղ. Ձի յորժամ ինչ յերկրային մարմնոյն առցէ, անձն բանական մարդ լինի, յայնժամ մարդկային մարմին լինի եւ լսի. բայց ո՛չ ²³առնելով զանձն բանական՝ ո՛չ մարդկային մարմին է, եւ որ ոչն է մարդկային մարմին, զիա՞րդ ասես ըստ²⁴ նիւթոյն. նիւթոյս յայնժամ մարդկային եղելոյ, յորժամ անձն բանական առընկալ-

1 եւ զիողի իմ
 * Տէ՛ * Յ՛ * Վ՛ * Ժ՛ 18 :
 2 նոյնպէս եւ
 3 մարմնոյն տնօրինաբար
 4 նոյնպէս եւ նորա
 5 չի՞
 6 յատկութիւն
 7 Մի՛ ասեր Աստուծոյ Բանին մարդ, այլ մանաւանդ մարդասէր.
 8 մարմին միացել
 9 մարմին, որ ոչն է
 10 անձն անձնօրական
 11 ո՛չ անձնացեալ բանականօն
 12 մարդկային կարաց

13 բանական
 14 Մարմնանալ արդ
 15 հասարակաց
 16 մարդն
 17 ի մարդո
 18 մարմին ստեղծանելով
 19 կենդանացուցանել
 20 ունելով հօսար կատարել
 21 առնել կենդանի Աստուած ընդ տեսակին
 22 Ձաստուածաին ուրեմն զգորութիւնսն տեսակա՞ն ասես.
 23 առցէ անձնական, ո՛չ մարդկային մարմին է. եւ որ ո՛չ մարդկային մարմին է
 24 վասն

ցի: 167 ¹Ես եւ ընթերցայ զվարդապետին ձերոյ ²զԱպողիւնարին խոստովանութիւն, յորում Համաբնութիւն³ ասէ զմարմինն ⁴Տեառն Մարիամայ, եւ Մարիամ⁵ մեզ. ապա ուրեմն Համաբնութիւն տէրունական⁶ մարմինն, ⁷վասն զի եւ մարդկային:

167 Ապաւղ. Զիա՞րդ⁸ ասես տէրունական մարմին, զոր երբեք մարդոյ կազմեսցես:

168 Ուղղ. ասէ. ⁹Եւ ես զմարմինն տէրունական ասեմ եւ զանձն տէրունական, եւ զմիտան տէրունականս եւ ¹⁰զարիւնն տէրունական, եւ զթաղումնն տէրունական, եւ զմարդն բոլորովին տէրունական՝ միաւորութեամբ Աստուածն Բանի, այսպէս, ¹¹որպէս մի Տէր լսես զնոյն ինքն ¹²զԱստուածն եւ մարդն. երբեմն զնոյն ինքն բովանդակ Աստուած եւ Տէր լսել, երբեմն ¹³զնոյն բովանդակ մարդ. քանզի ինքն յաղագս իւր ասէ. Զի՞ խնդրեմ զիս սպանանել՝ զմարդ¹⁴, որ զնշմարտութիւնն ձեզ խաւսեցայ՞: 169 Եւ Պաւղոս մարդ՝ Յիսուս¹⁵ Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն¹⁶ եւ յաւիտեանս: 170 Եւ զնոյն ¹⁷զայս մարդ շաւշափելով թովմաս ասէ. Տէ՛ր իմ եւ Աս-

տուս՝ իմ. Եւ¹⁸ նմանաբար եւ Պաւղոս ասէ. Յորոց եւ¹⁹ հարքն, յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենայնի²⁰ Աստուած, աւրինեալ յաւիտեանս²¹: 171 Արդ, Աստուած ²²եւ Բանն յաղագս Հաճոյութեան²³ միաւորութեանն. քան²⁴ որ յարին ի Տէր մի Հոգի է²⁵. բազում առաւել յորժամ Տէր ասի լեալ մարդ՝ ո՛չ կորուսանելով զգոլն Աստուած, է նոյն ինքն Աստուած եւ մարդ. Աստուած յաղագս բնութեանն, իսկ մարդ յաղագս Հաճոյութեան²⁶ ընդունելով զմարդկութիւնն, որում փա՛ռք յաւիտեանս:

1 ²⁷Երանելոյն Սեբերիանոսի սրբական եպիսկոպոսի, ի բանէն՝ Ոչխարքն ձայն իմ լսեն:

2 Հարցիմ աշակերտքն եւ ասեմ. Տէ՛ր, յո՞ւ ամբառնայցես. ասէ ցնոսա. ²⁸Ուր մարմինն իցէ՞.— եւ բարեոք ասաց մարմինն²⁹, քանզի մարմնովն ³⁰զալոց է. թեպէտ եւ ծածկեցաւ մարմինն աստուածութեամբն եւ ներկեաւ³¹ անմահ արմատովն, եւ է ամենեւին³² անմահութիւն, չկորոյս զնկարագիրն, այլ կայ մնայ նկարագիրն³³ մարմ-

1 ես ընթերցա եւ
2 զԱպողիւնարի զխոստովանութիւնն
3 համաբնական
4 Տեառն մերո ի Մարիամա
5 զՄարիամ
6 մեզ տէրունական
7 վասն զի մարդկային
8 ընդէ՞ր
9 ես եւ
10 զարիւնն տէրունական եւ զմարդն
11 որպէս զի մի Տէր լսեմ
12 Աստուածն. եւ Տէր լսեմ եւ երբեմն
13 զնոյն ինքն բաւանդակ մարդ
14 մարդ
* Յ՞վճ. Ը՛ 40, Հ՞մԳ. նաեւ— Լ՛ 20:
15 զՅիսուս
16 նոյն ինքն
բ ե՞ք. ժ՛Պ. 8
17 զայն մարդ թովմասու շաւշափել ասեր

գ Յ՞վճ. Ի՛ 28
18 չիմ
19 չիմ
20 ամենեցուն
21 յաւիտեանս. ամեն.
դ Հ՞մԳ. Թ՛ 5
22 եւ մարդ Բանն
23 հանութեան
24 բանզի թե
25 եմ
26 հանութեամբ
27 Տե՛ս Զ, ք. 283v. համեմատութիւնն ըստ տպագրին, էջ 116:
28 իմ մարմինն իցէ. փոխանակ ասելոյ, թէ ուր իմ գալուստն իցէ: եւ բարիոք
է Տէ՛ս Ղ՞. Գ. Ժ՛ 36-37:
29 թէ մարմինն
30 յայտնելոց է
31 ներկաւ
32 ամենեւիմ
33 նկարագիրն

նոյն ներկեալ եւ ընկղմեալ ի կենացն: 3 Եւ աւրինակ ¹ինչ ի նմին ի մէջ բերցուք. թեպէտ եւ մթին եւ ընդ աղաւտ իցէ, սակայն եւ ի փոքուն առնու ոք գոնեայ² սակաւ ինչ գնչմարանս մեծին: 4 Ա՛ռ երկաթ եւ մխեա՛ ի բովս հրոյ եւ տե՛ս՝ որպիսի՛ ինչ էր, մինչչեւ ³ի հուրն մխեալ էր, ⁴ցուրտ առ շաւշափելն, եւ յետ ի հուրն մտանելոյ՝ լուսաւոր տեսեամբ, ջերմն գննելով. չկորոյս⁵ զլինելն երկաթ, այլ զի առաւելութիւն իւր⁶ բնութիւնն ընկալաւ, թեպէտ եւ պայծառացաւ, չվրիպեաց յիւրոց կերպարանացն. զինչ կերպարան եւ ի

ներքս մխեսցես, նոյնն⁷ երեւի, եթե բոլորակ, եթե երեքկուսի, եթէ չորեքկուսի եւ եթե զիարդ եւ իցէ՝ զկերպարանսն⁸ չփոխէ, բայց ⁹գոյնն զհրոյ գոյնն առնու: 5 ¹⁰Նոյնպէս սուրբ եւ արժանի երկրպագութեան տէրունական մարմինն ներկաւ անմահ ¹¹արմատաւն՝ աստուածութեամբն, եւ ընկղմեցաւ ի կենացն, ¹²եւ խառնեալ ունի ¹³գաստուածութիւնն իբրեւ գերկաթն՝ ի ներքոյ եւ յարտաքոյ. բայց կայ եւ մնայ անեղծ¹⁴ նկարագիրն՝ ի փառս հաւատացելոց եւ յամալթ արհամարհողաց¹⁵:

1 ինչ նմին
2 գոնէ
3 ի հուր
4 մթաք երեսօք, ցուրտ առ ի շոշափել
5 եւ չկորոյս
6 քան զիւր

7 նոյն եւ
8 զկերպարանս
9 զհրոյն գոյն
10 նոյնպէս եւ սուրբ արժանի
11 արմատով աստուածապաշտութեանն
12 եւ զգեցեալ
13 գաստուածութիւնն, ո՛չ վայրապար արտաքոյ
14 յանեղծ
15 արհամարհողացն

Յաղագս մին գոլ զՏէր մեր եւ զՓրկիչն Յիսուս՝ հանդերձ իւրով մարմնովն, եւ նմա առբաշխել զամենայն աստուածավայելուչս եւ զմարդկայինս, եւ զի յերկուս բնութիւնս բաժանեն զնա ամպարիշտփ:

1 ¹Սրբոյն Յեռոթեոսի փիլիսոփայի՝ Առ յԱստուածաբանականացն ստիճիքոնացն, որ էր ի հեթանոսականիմ եղեալ ուսուցիչ Դիոնիսիոսի Արիսպագացւոյ:

2 Որ ամենեցուն պատճառն եւ վերայլիկատար Յիսուսի աստուածութիւնն, որ զմասնաւորսն բոլորին համաձայն միացուցեալ՝ եւ ո՛չ մասն եւ ո՛չ բոլոր ելով, եւ մասն եւ բոլոր, որպէս ամենայն, եւ զմասն եւ զբոլորն յինքեան ի միասին առեալ, եւ առաւելապէս ունելով եւ նախաբար ունելով: ³ Կատարեալ ապա է յանկատարս, որպէս կատարելապետ², եւ անկատար ի կատարեալս, որպէս առաւելակատար եւ նախակատար. տեսակ ³տեսակաբար յանտեսակս, որպէս տեսակապետ. անտեսակ ի տեսակս, որպէս վերակատար⁴: ⁴ Գոյութիւն բոլորիցս գոյացելոց՝ անապականապէս եղեալ եւ վերագոյ ամենայն գոյութեանց, եւ համարձեալ զբոլոր իշխանութիւնս եւ զկարգապետութիւնս որոշելով, եւ բոլոր պետութեանց եւ կարգաց վերանստեալ, եւ չափապէս գոյացելոցն, եւ յաւիտեան եւ վերայաւիտեան եւ նախ քան զյաւիտեանս: ⁵ Կատարեալ ի կատարեալսն եւ առաւել ի կատարեալսն. անճառելի եւ անբարբառ, գերամիտ, գերակայ, գերագոյական՝ գերաբնապէս ունելով զգե-

րաբնութիւնն, գերագոյաբար զգերագոյութիւնն: ⁶ Վասն զի, մինչ ըստ բնութեանն եւ ճշմարտապէս վասն մարդասիրութեան եկն եւ գոյացաւ, ⁵եւ այր, որ Աստուածն անուանեցաւ, քաւեալ ապա եղիցի ի մէնջ՝ առաւելեալն մտաց եւ բանի աւրհնելով: ⁷ Թեպէտ եւ այսոքիւք ունի ⁶զգերաբնութիւն եւ զգերագոյակ, ո՛չ միայն զի անայլայլաբար եւ անշփոթապէս մեզ հազորդեցաւ, ոչինչ պակասեալ ի լիութենէն, որ առ մեզ խոնարհեցաւ, այլ զի եւ ըստ ամենեցուն նոր եւ նորագոյն մերում բնութեանս գերաբնութեամբ գոյր, որ ըստ բնութեանն գերաբնութիւն զբոլորս մեր առ ի մէնջ, ի վեր քան զմեզ ունելով:

⁸ Դիոնիսիոսի Արիսպագացւոյ, Աթենացւոյ՝ առ Գայիոս սարկաւագ:

⁹ Որպէս ասէ Յիսուս, որ ամենեցունն առաւելն է՝ ամենայն մարդկան կենդանութեամբ կարգեալ. քանզի ո՛չ որպէս պատճառ մարդկան, որ ասի մարդ, այլ որպէս նա ինքն է ըստ գոյութեան՝ բոլորովին ճշմարտապէս մարդ ելով: ¹⁰ Բայց մեք զՅիսուս ո՛չ մարդոյ նմանապէս ձեւացուցանեմք, վասն ո՛չ մարդն միայն եւ ո՛չ գերագոյակ, կամ մարդ լոկ, այլ մարդ ճշմարտապէս, որ եւ առաւելապէս մարդասէր՝ ի վեր քան զմարդիկ եւ ըստ մարդկան ի մարդկայինն գոյացութեանց գերագոյա-

1 Հմմտ. Ի, ք. 546ր. Սրբոյն Յեռոթեոսի՝ Յաղագս աստուածաբանականացն տարրութեանց: Համեմատել ենք Գ, ք. 88v, որ առանց «լուծմանց» է, թեպէտ նոյն՝ մեր ձեռագրից տարբեր թարգմանութեամբ:
2 կատարողապետ
3 տեսակարար յանտեսակսն
4 գերատեսակ

5 եւ այր եղեւ գերագոյնն Աստուած, եւ հանեցաւ յառ ի մէջ գերագոյնն քան զմիտս եւ զքան արհմարանութիւնսս
6 զգերաբնութեանն գերագոյութիւնն
7 Հմմտ. Ի, ք. 570v. Գ, ք. 140. Չորրորդ առ նոյն՝ Գայիոս
8 Զիա՞րդ ասես զՅիսուս

կան գոյացեալ: 11 ¹Եւ գոյ ոչինչ պարտ գոյութեանն, որ Ամենակալին է, եւ առաւել վերագոյակ. վասն որոյ եւ այսորիկ ազագաւ գոյութիւնն ասի, կենդանութիւն ճշմարտապէս գոյով՝ ի վեր քան զգոյութիւն գոյացաւ եւ ի վեր քան զմարդ ներգործէր զմարդոյն: 12 Եւ զեկուցանէ Կոյսն՝ վերաբնաբար ծնանելով, եւ ջուր անկայուն նիւթական եւ երկրակոխային ոտից անսաւով ծանրութեանն, եւ ո՛չ ճոճելով, այլ վերաբուն զաւրութեամբ յանհեղի հաստատեալ: 13 Զի՞նչ թերեւս զայլն՝ յոյժ բազում գոյով, ասիցէ ոք, ²ի ձեռն որոց եւ աստուածաբար տեսանելով՝ ի վեր քան զմիտս ծանիցէ, ³եւ զմարդասիրութեամբն Յիսուսի հակառակ զաւրութեանցն վերին իշխանութեանն ունելով: 14 ⁴Եւ զի համառատաբար ասասցուք՝ ⁵ո՛չ մարդ, այլ որպէս ո՛չ մարդ, այլ որպէս առ ⁶ի մարդկանէ՝ մարդկան գերազանց եւ ի վեր քան զմարդ, եւ ճշմարտապէս մարդ եղեալ, եւ այնուհետեւ ո՛չ ըստ Աստուծոյ զաստուածայինսն ներգործեալ, եւ ո՛չ զմարդկայինսն ըստ մարդոյ, այլ այրացեալ ⁷Աստուծոյ նոր իմն եւ աստուածայրական ներգործութեամբ ըստ ⁸մեզ քաղաքավարեալ:

րանք քարոզեցին զՔրիստոս՝ ¹⁰զճնեալն ի Կուսէն եւ զչարչարեալն ի խաչին եւ զյարուցեալն ի մեռելոց եւ յերկինս վերացեալ եւ փառաւորեալ, եւ թագաւոր յաւիտեանս. եւ զի սա է կատարեալ միտք Աստուծոյն Բան, ¹¹որ նախ վաղորդայնագոյեցին ծնիցեալն՝, շինակից է ¹²ամենայնի, ստեղծիչն մարդոյ, յամենայնի ամենայն եղեալն՝ ի հայրապետսն հայրապետ, յաւրէնսն աւրէն, ¹³ի քահանայսն քահանայապետ, ի թագաւորսն իշխան առաջնորդական, ի մարգարէսն մարգարէ, ի հրեշտակսն հրեշտակ, ¹⁴ի մարդիկ մարդ, ի Հաւր Որդի, յԱստուածունմն Աստուած, յաւետարանսն ¹⁵արքայ: 3 Սա իսկ է սա, ¹⁶որ նաւուղեաց, զԱբրայամ առաջնորդեաց, ընդ Սահակայ կապեցաւ, ընդ ¹⁷Յակովբայ աւտարակենցաղեաց ¹⁸, ընդ Յովսեփայ վաճառեցաւ, ընդ ¹⁹Մովսեսի զաւրավարեաց, ժողովրդեանն աւրինադրեաց, ²⁰ընդ Յեսուաւ վիճակատուեաց. ի Դաւթի երգիչ ²¹, ի մարգարէսն զիւր կիրսն քարոզէր ²², ի Կուսի մարմնացեալն, ²³ի Բեթղեէմ ծնեալ. ի հովուացն տեսեալ, ²⁴ի հրեշտակացն փառաւորեալ, ի մոգուցն երկրպագեալ, Յովհան-

1 ⁹Երանելոյն Երանոսի՝ Հետեւողին առաքելոց, եպիսկոպոսի Ղոբղոնի Գալիլեացոց:

2 Աւրէնն եւ մարգարէք եւ աւետա-

1 եւ ոչինչն տրուպ ի գերագոյն էութենէն
 2 ի ձեռն որոց աստուածային ոք տեսանելով
 3 եւ գորս ի վերայ մարդասիրութեանն Յիսուսի են նառեալ՝ գորութիւն գերունականի անանութեանն ունելով:
 4 Հմմտ. Խ, ք. 208, ուր այստեղից մինչեւ վերջը վկայութիւն է բերած նոյն թարգմանութեամբ, որի վերայ եւ եղել է շարունակութեան համեմատութիւնը:
 5 Ո՛չ մարդ էր Քրիստոս եւ ո՛չ որպէս
 6 չի՞ք
 7 այրացելոյ
 8 ընդ
 9 Հմմտ. Տիմոթէոս, էջ 256:

10 ծնիցեալ ի Կուսէ եւ ախտակրեի ի փայտին եւ տեսանելի մեռելոց եւ յերկինս վերերթեալ եւ ի Հաւրէ փառաւորեալ
 11 որ նախ վաղորդայնագոյեցի ծնիցեալ
 * Հմմտ. Սաղմ. ճԹ՝ 3:
 12 չի՞ք
 13 ի Բահանայս, ի թագաւորս եւլն.
 14 ի մարդկան
 15 յաւիտեանս
 16 որ զնոյ նաւուղղեաց
 17 եւ ընդ
 18 յաւտարակենցաղեաց
 19 եւ ընդ
 20 եւ ընդ Յեսուվայ Նաւեայ
 21 երգիչն եւ
 22 քարոզեաց
 23 եւ ի Բեթղեէմ ծնիցեալն եւ ի մտոր խանգարապատեալն եւ
 24 ի հրեշտակաց փառաւորեալն եւ ի մոգուցն երկրպագեալն, ի Յովհաննէ ընկալեալն եւ ի Յորդանանէ մկրտեալն

նէ ընկալեալ, ի Յորդանան մկրտեալ, յանապատի փորձեալ¹, եւ Տէր գտեալ, ²զառաքեալսն հաւաքեալ, զարքայութիւնն քարոզեալ, զկաղս բժշկեալ. զբորոտս սրբելով, զկոյրս լուսաւորելով³, զմեռեալս յարուցանելով. ⁴ի տաճարին երեւեալ, ի ժողովրդենէ անհաւատացեալ⁵, ի Հրեից ⁶մատնեալ եւ ի քահանայապետիցն ըմբռնեալ, առաջի Հերովդէի ⁷յառաջ ածեալ, առաջի Պիղատոսի դատիցեալ⁸, ի մարմնի բեւեռեալ⁹ եւ ի փայտի կախիցեալ¹⁰. ի յերկրի թաղեալ¹¹, ի մեռելոց ¹²յարուցեալ, առաքելոցն երեւեալ, ¹³ի յերկինս համբարձեալ, յաջմէ Հաւր ¹⁴նստեալ եւ ի նմանէ փառաւորեալ. ¹⁵Որ է յարութիւն մեռելոց, փրկութիւն կորուսելոց¹⁶, լուսարան խաւարելոց եւ ¹⁷փրկարան բացածնելոց. առաջնորդ մոլորելոց եւ ապաւէն վշտացելոց, հովիւ ապրեցելոց եւ փեսայ Եկեղեցւոյ, ¹⁸երեսանակալ քերովբէից եւ զաւրավար հրեշտակաց. Աստուած յԱստուծոյ, Որդի ի Հաւրէ, Յիսուս Քրիստոս, արքայ է¹⁹ յաւիտեանս. ամէն:

1 փորձեցեալն
 2 գառափեալս հաւաքելով եւ զարքայութիւն քարոզելով, զկաղս բժշկելով եւ զբորոտս մաքրելով լուսածելով եւ
 3 ի բազմի երեւեալն եւ
 4 անհաւատացեալն
 5 մատնեալն եւ ի քահանայապետաց ըմբռնեալն
 6 յառաջածեալն եւ
 7 դատիցեալն
 8 բեւեռեալն
 9 կախեցեալն
 10 թաղիցեալն
 11 յարուցեալն եւ առաքելոց երեւեալն
 12 եւ յերկինս բարձրացեալն, յաջմէն
 13 նստեալն, եւլն.
 14 որպէս է յարութիւն թաղեցելոցն եւ
 15 կորուսելոցն, եւլն
 16 փրկանակ բացածելոցն
 17 երասխանակընկալ քերովբիցն
 18 չիբ

1 ²⁰Սրբոյն Փիլիկեայ եպիսկոպոսապետին Հոովմայ եւ վկայի՝ ի թղթոյն, որ առ Մաֆսիմիոս եպիսկոպոս եւ առ ուխտ եկեղեցւոյն Աղէֆսանդրի:

2 Յաղագս²¹ մարմնաւորութեան Բանին եւ հաւատոյ²²: 3 Հաւատամք ²³ի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ի Կուսէն Մարիամայ ծնեալ, եթե²⁴ ինքն է յԱստուծոյ²⁵ մշտնջենաւոր Որդի²⁶ եւ Բան, եւ ո՛չ մարդ ²⁷յԱստուծոյ առաւ, զի իցէ այլ քան զնա. քանզի ²⁸ո՛չ մարդ առընկալաւ Աստուծոյն Որդի, զի իցէ այլ քան զինքն, այլ Աստուած ելով կատարեալ՝ եղեւ համանգամայն եւ մարդ կատարեալ, ²⁹մարմնացաւ ի Կուսէն: 4 ³⁰Հաւատամք ի Քրիստոս Յիսուս՝ Աստուած խոստովանելով զնա աստուածական³¹ բնութեամբն, ³²ո՛չ ընդունելութեամբ աստուածութեանն. քանզի ինքն է, ³³որ ընկալեալ լինի, աստուածաբար փչեալ³⁴ յաշակերտսն զՍուրբ Հոգին. ինքն³⁵, որ մեռաւ մարմնով ³⁶վասն մերոյ փրկութեան՝ եւ ապրեցողցանելով ի մեղաց զհաւատացեալս ի նա: 5 Քանզի ո՛չ մարդ ըստ մեզ Տէրն առաւ³⁷ յԱստուծոյ, այլ Աս-

20 Հմմտ. Տիմոթէոս, էջ 2:
 21 Բայց յաղագս
 22 հաւատոց
 23 ի Տէրն
 24 զի
 25 Աստուծոյ
 26 Որդին
 27 յԱստուծոյ ընկալեալ, որպէս զի այդ իցէ առ նովաւ
 28 ո՛չ զմարդ ետ Որդին Աստուծոյ, զի եղիցի այդ ոմն առ ինքեամբ, այդ Աստուած կատարեալ էութեամբն եղեւ միանգամայն
 29 մարմնացեալ ի Կուսէ
 30 Այստեղից սկսած՝ Տիմոթէոս յառաջ է բերել իբրեւ առանձին հատուած. եւ այդ եւս նորին:
 31 աստուածային
 32 եւ ոչ ըստ կցորդութեան աստուածութեան
 33 յորմէ կցորդութիւն առնումբ
 34 փչեցեալ
 35 եւ ինքն է
 36 վասն մեղաց մերոց, որ եւ ապրեցոյց
 * Հմմտ. Է. Պէր. Գ. 18:
 37 ընկալեալ եղեւ

տուած ճշմարիտ ¹զմարդիկ առնելով, որպէս եւ գրեալ է. ²Առնելով գ..եզ Տէր՝. *Իսկ Տէր է Յի Մարիամայ ծնեալն՝ ըստ Պաւղոսի^է, ⁴ինքն ելով Աստուծոյն Բան: ⁶Երայց նզովեմք, որք ախտակիր զաստուածութիւնն ⁶ասեն եւ որք մարդ զխաչեցեալն ⁷զՔրիստոս ասեն, եւ ո՛չ ⁸բողոքովին հուլթեամբ Աստուած:*

1 ⁹Պետրոսի եպիսկոպոսին Աղեփսանդրի:

2 ¹⁰Վասն որոյ եղեալն, ասէ, ¹¹սուրբ կոչեսցի եւ Որդի Աստուծոյ՞. *Իբր¹² զի՝ ծնեալն ի մարմնոյ մարմեն է: ³ ¹³Քանզի Մարիամ ի մարմնի զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ծնալ՝ զմի եւ զնոյն ելով¹⁴, այլ ¹⁵ո՛չ այլ եւ այլ, քա՛ն լիցի: ⁴ Քանզի ¹⁶ճշմարտապէս ասեմք եթե՛ Տէր Յիսուս^է, հաւատալով առաւել, եթե Յիսուս է Որդի Աստուծոյ, եւ եթե ¹⁷Յիսուս է Քրիստոսն^է, ¹⁸որպէս ինքն յետ յարութեանն եւ ի համբառնալն ինքն Յիսուս երեւեցաւ:*

1 ¹⁹Երանելոյն Դիոնէսիայ եպիսկոպոսապետին Աղեփսանդրիայ՝ Երրորդ թղթոյն, որ առ Քուստոս եպիսկոպոսապետ Հոռմայ:

2 *Իսկ եթե զնախանձ ունել զԱստուծոյ²⁰ եւ ի բոլոր սրտէ զմա սիրել հաւատ զմեզ յորդորէ՞, եւ ²¹միայն պղծել պարտ ²²որ զէպպէսն միմիայն խոտեն Աստուած եւ զերկնի եւ զերկրի եւ ²³զամենեցուն արարիչ եւ տէր, ²⁴նուաստագոյնս ուրեմն այլոյ եւ անարգագոյն գոլ ասելով, եւ ²⁵ամենայն բարւոյ չարութիւն առյարեն, եւ ²⁶ո՛չ զսիրելին նորա ²⁷զմեր Փրկիչն, որ զինչ էն՝²⁸ հաւատան, այլ զսքանչելի տնաւրէնութիւնն եւ զմեծ խորհուրդն լուծանելով՝ զոմն²⁹ ո՛չ Աստուած, ո՛չ³⁰ Որդի գոլ հաւատալ³¹, իսկ զոմն³² ո՛չ մարդ եղանել՝ ո՛չ³³ մարմնով եկեալ, այլ երեւոյթ եւ ստուեր գոլ ասելով՝ զնոսա³⁴ զամենեսեան ³⁵յիրաւի Յովհաննէս թղթովն դերաբխստոս կոչեացէ. ³⁶եւ յաղագս նոցա մարգարէն վկայեաց ասելով. Ո՛չ³⁷ ³⁸գատելիս քո ատեցի եւ ի թշնամիս քո հալէի. կատարեալ յատե-*

1 զմարդիկ ընդունելով ըստ Գրելոցն
 2 ընդունի գիեզս
 * Սաղմ. ՃԽ.Չ.6
 3 որ ի Մարիամայն ծնեալ
 ք Հմմտ. Լ. Կոր. Բ. 6:
 4 Բանին, եւ ինքն է Աստուծոյ Բանն
 5 եւ նզովեմք չարչարելի
 6 ասացողս եւ
 7 Քրիստոս ասացողս
 8 ամենայն էութեամբն
 9 Հմմտ. Տիմոթէոս, էջ 2:
 10 եւ որ ծնանելոցն է
 11 սուրբ է, կոչեսցի
 ք Տէ՛.Պ.Ն.Է. Լ. 35:
 12 որպէս
 13 վասն զի եւ
 14 էն
 15 ո՛չ գայդ ոմն եւ գայդ. քա՛ն մի՛ լիցի
 16 նշմարտութեամբ ասեմք Տէր զՅիսուս, առաւել հաւատալով թե
 ք Լ. Կոր. Ժ. Բ. 3
 17 նոյն իսկ ինքն Քրիստոս
 է Լ. Յովհ. Ե. 1. 5
 18 ըստ որում եւ Առաքելոյ զկնի վերանալոյն

19 Հմմտ. Տիմոթէոս, էջ 7:
 20 Աստուծոյ
 ք Հմմտ. Բ. Օր. Գ. 5. Ժ. 12. Մարթ. Ի. Բ. 37. Մարկ. Ժ. Բ. 30. Ղ.Ն.Է. Ժ. 27:
 21 միայնս պիղծս վարկանել
 22 որք զարդարեմն մի եւ զմիայնն արհամարհեն
 23 զամենայնցն Արարիչն
 24 նուաստագոյն ուրումն այլոյ
 25 յԱմենաբարտեմն
 26 եւ կամ
 27 զՓրկիչն մեր Յիսուս Քրիստոս
 28 է
 29 զոմանս
 30 եւ ո՛չ
 31 հաւատալով Աստուծոյ
 32 գայդս
 33 եւ կամ
 34 զայսոսիկ
 35 բարտեմ Յովհաննէս ի ձեռն թղթոյն նեոինս
 է Հմմտ. Լ. Յովհ. Բ. 18. 22:
 36 եւ եւս առ նովա յաղագս սոցա եւ
 37 չի՛ք
 38 Տէ՛ր, ատեցի եւ ի վերայ թշնամեաց քո մաշեցա

լուծուիմ¹ ատեցի զնոսա. Չինձ ի թշնամիս եղեմ²:

3 Նորին Դիոնիսի՝ ի լուծմանէ ժ. քանէն, որ առ Սամոստացին Պաւղոս:

4 Առաքեալ ասէ. Որոց հարքն, յորոց եւ Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած³: 5 Եւ Եսայիաս ասէ. Մանուկ ծնաւ մեզ եւ Որդի տուաւ⁴: 6 Քանզի այն, որ էր ի սկզբանն՝ տուաւ մեզ, եւ այն, որ էր ինչ յառաջագոյն, եղեւ. եւ եղեւ իշխանութիւն նորա ի վերայ ուսոց իւրոց: 7 Զի որ էրն ի սկզբանն եւ յառաջ քան զաշխարհս ընդ Հաւր ծնողի իւրոյ, ինքն իսկ ի վերջին ժամանակս վասն փրկութեան մերոյ տուաւ մեզ⁵, եւ եղեւ այն ինչ վասն մեր, որ ո՛չ կայր ի նմա, եւ մնաց որպէս էրն ի սկզբան յառաջագոյն: 8 Որպէս մարգարէն Ովսէէ ասէ վասն Քրիստոսի եթե՝ Մարմին իմ ի նոցանէն⁶. այլ մարմինն, զոր ասաց, վասն Բանին ասաց Աստուծոյ, որ մարմնացաւ ի սուրբ Կուսէն. քանզի եղեւ մարմին եւ ետ զհոգին, արա իւր մայր եւ ետ մեզ Հայր. կոչեաց իւր մայր զՄարիամ եւ մեք կոչեմք՝ Հայր մեր, որ յերկինսդ ես⁷: 9 Եւ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոցէ. քանզի զկեանս մեր եբարձ ի վերայ ուսոց իւրոց՝ այն, որ է Աստուած ամենայնի, այսինքն՝ զսուրբ խաչն տէրունական, մինչ ինդութեամբ երթայր ի մահ: 10 Եւ խորհրդակից Հաւր իւրում, քանզի նա ասաց. Հայր, եկայք արասցում մարդ ըստ պատկերի մերում⁸: 11 Եւ Աստուած հզար

կոչեցաւ եւ իշխան խաղաղութեան⁹. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ զնա¹⁰: 12 Յղացաւ Բանն Աստուած ի սուրբ Կուսէն եւ ծնաւ ի նմանէն մարդ կատարեալ, յղացաւ եւ ո՛չ գիտաց, ծնաւ եւ ո՛չ չարչարեցաւ, եւ որպէս Աստուած եւ տէր բնութեամբ՝ պահեաց զարգանդ սրբոյ Կուսին որպէս էրն իսկ: 13 Եւ վկայէ Եզեկիէլ մարգարէ. Դուռն այն եղիցի փակեալ եւ ոք մի՛ մտցէ եւ ելցէ ընդ նա. բայց ինքն Տէր մեր մտցէ եւ ելցէ¹¹: 14 Ի Բեթղեէմ ծնաւ Որդին, որ յառաջ քան զաշխարհ, եւ վկայէ Միքիա մարգարէ ասելովն. Եւ դու, Բեթղեէմ, տուն Եփրաթայ, սակաւաւոր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քնն ելցէ իշխան¹²: 15 Եւ իշխան, ո՛ Սամոստացի, զնա կոչէ. քանզի չիք այլ իշխան յառաջ քան զնա: 16 Եւ դարձեալ եթե՝ Նա հովուեսցէ ժողովրդեանն իմում Իսրայելի¹³, այսինքն զնդի առաքելոցն, որ յԻսրայելէ էին. քանզի ասաց ցնոսա. Ահա առաքեմ զձեզ իբրեւ գառինս ի մէջ գայլոց¹⁴. քանզի երկոտասան ոչխարք էին սուրբ առաքեալքն, զորս առաքեաց, եւ զամենայն գայլս, որ ի վերայ երկրի էին՝ խաղաղացոյց: 17 Եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի¹⁵ որպէս երանելի մարգարէն Դաւիթ յիւրումն ասէ, եթե՝ Յառաջագոյն քան զարեւ է անուն նորա¹⁶, եւ արիւնեսցին ի նա ամենայն ազգք երկրի¹⁷: 18 Եւ առաքեալ ասէ. Յիսուս Քրիստոս երէկ եւ այսար, նոյն եւ յաւիտեան¹⁸. քանզի նորաստեղծ ծագեցաւ առ մեզ առաջի այն թագաւորի փառաց, որ

1 ատելութիւն
2 ի թշնամիս եղեմ ինձ
3 Սաղմ. ՃԼԸ 21-22
4 Հաղմ. Թ 5
5 Ես. Թ 6
6 Հաղմ. Ը ՅՎԸ Ը 1, Եբր. Ը 2:
7 Ովս. Թ 12
8 Մաթթ. 9 9
9 Ես. Թ 6
10 Հաղմ. Ծ 26:
11 Տէ՛ս Ծ 26:

ժ Հաղմ. Ես. Թ 6:
ժա ՅՎԸ Ժ 18
ժբ Տէ՛ս Եղե՛կ ԽԳ 2:
ժգ Մե՛կ Ե 2
ժդ Տէ՛ս Մե՛կ Ե 4, Մաթթ. Բ 6:
ժե Մաթթ. Ժ 16, Գաղ. Ժ 3
ժզ Մե՛կ Ե 2
ժէ Սաղմ. ՀԸ 17
ժը Ծն. ԺԲ 3, Գաղ. Գ 8
ժր Եբր. ԺԳ 8

Յակովբայն ծագեաց մարմնով, որ է Աստուած ամենայնի: 19 Եւ վկայէ երանելին Մովսէս թե՛ Ծագեաց աստղ Յակովբայ՝. քանզի ել մարդ ինքնն մարդասէրն, այսինքն Յակովբայ, եւ բարձրացաւ թագաւորութիւն նորա. եւ ո՛չ ասաց թե՛ բարձրացի, այլ այն, որ ինքնն իսկ Բարձրեալն էր, զիս՞րդ պիտոյ էր նմա բարձրանալ. քանզի ընդ ամենայն երկիր ծագեաց լոյս նորա: 20 Եւ մոզք յարեւելից եկին եւ մատուցին պատարագ այնմ, որ ծնաւ ի Բեթղեմէմ. եւ վկայէ Նսայի. Ի Սարայ եկեացեմ՝ բերելով ոսկի եւ կնդրուկ եւ զմուռ, եւ պատգամս մատուցեմ եւ զփրկութիւն Տեառն պատմեցեմք:

1 1Երանելոյն Ուիտադեայ եպիսկոպոսապետին Հոովմայ՝ Յադագս հաւատոց:

2 Իսկ եւս եւ 2յաղագս մարմնոյ տնաւրէնութեան մերոյ³ Փրկչին հաւատամք, զի⁴ անայլայլելոյ եւ 5անյեղեղկի մնացելոյ Աստուծոյ Բանին զմարմնաւորութիւն եղանել: 3 Քանզի Որդի ելով ճշմարտապէս Աստուծոյ՝ ըստ յաւետախաղաց Աստուծոյ⁶ ծննդեանն⁷, եղեւ Որդի ըստ ի Կուսէն ծննդեանն⁸, եւ է միեւնոյն կատարեալ Աստուած՝ համագոյական⁹ ըստ աստուածութեանն եւ համագոյ¹⁰ Հաւր, եւ կատարեալ մարդ, նոյն ինքն ըստ ի Կուսէն

ծնելութեանն¹¹, եւ համագոյ¹² մարդկան ըստ մարմնոյ: 4 Իսկ որք¹³ յերկնուստ ասէ մարմին ունելով¹⁴ զՏէրն, կամ Հոգւոյ¹⁵ Աստուծոյ զմարմինն՝ եղիցի նզովեալ: 5 Որ ոք ո՛չ ¹⁶խոստովանիցի Տեառն մարմին ի Կուսէն, եւ մարդկան համագոյ¹⁷, եղ. 6 Որ ոք զՏէրն մեր եւ զՓրկիչն¹⁸, ի Հոգւոյն Սրբոյ եւ ¹⁹ի Մարիամայ կուսէն ծնեալ ըստ մարմնոյ՝ անանձն ասէ, կամ անզգայ, կամ անբան, կամ անիմաստ, եղ. նզ. 7 Որ ոք բաժանէ եւ զատուցանէ զՏէրն մեր եւ զՓրկիչն²⁰ եւ ասէ այլ զոլ Որդի ²¹զԱստուած Բանն եւ այլ զառեալն մարդ, եւ ո՛չ ²²խոստովանի մի եւ զնոյնն, եղ. նզ.

1 23Երանելոյն Երեմբայ եպիսկոպոսապետին Անդուֆ Պիսիդեայ՝ ի իսաւսիցն ասացելոց յաստուածայայտնութիւնն ի մեծ եկեղեցւոցն Կոստանդնուպալսի, նստելով երանելոյն Պրոկղի եպիսկոպոսին:

2 Առ էսայայ²⁴ մեծի մարգարէի Աստուծոյ քարոզելոյ²⁵ մանկանն՝ Քանզի մանուկ, ասէ, ծնաւ մեզ, որդի եւ տուաւ մեզ, որոյ պետութիւնն²⁶ եղեւ ի վերայ ուսոց իւրոց, եւ կոչեցի²⁷ անուն իւր մեծի խորհրդոյ հրեշտակ, սքանչելի խորհրդակից²⁸, եւ

*** ԹԻՆ. ԻՂ. 17
 ք ՏԷ՝* ԼԷ՝* Կ 6:
 1 Հմմտ. Տիմոթէոս, էջ 7:
 2 ըստ մարմնոյ
 3 չիֆ
 4 չիֆ
 5 անյեղեղկի միացելոյ Աստուծոյն Բանի զմարմնաւորութիւնն եղանիլ առ նորոգութիւն մարդկութեան:
 6 յԱստուծոյ
 7 եւ Որդի Մարդոյ
 8 ծնընդեան
 9 չիֆ
 10 նոյնագոյ. լուսանցում՞ համագոյ

11 ծնելութեան
 12 նոյնագոյ
 13 որ ոք
 14 ունել
 15 նոյնագոյ
 16 խոստովանի զՏեառնն մարմինն
 17 նոյնագոյ
 18 զՓրկիչ
 19 ի Մարիամայ կուսէ ծնեալ մարմնով
 20 Փրկիչ
 21 զԱստուածն Բան
 22 խոստովանէ մի եւ զնոյնն ինքն
 23 Հմմտ. Տիմոթէոս, էջ 277:
 24 էսայայ
 25 քարոզեցելոյ
 26 պետութիւն
 27 կոչի
 28 ԼԷ՝* Թ. 6

որ գկնի: 3 Մի՛ ոք այսուհետեւ գձեզ հրէական պատրեսցէ ոստ. քանզի այսպէս կոչել զհերձուածողականսն արժան, իբր այլ ոմն ծնիցեալ¹, ²իսկ այլ ոմն ծնիցելոյ բնութիւնք: 4 Քանզի եթե ոք զայս ասել համարձակեսցի, զեմանուէլն³ զայս միայն ընդդէմ դի՛ր, եւ սանձս⁴ լռութեան զանուանն ⁵ընկալցի գլխոյն զլռութիւն: 5 Քանզի ո՛չ երկու բնութիւնք, այլ զմարմնացեալն Աստուած Կոյս⁶ խորհրդաբար սաղմնեաց⁷, ընկալեալ զՀոգւոյն վերեկութիւն. քանզի եթե մարդկայնոյ էր սերմաբողբոջ⁸ Քրիստոս, հաւանեի արդեւք եւ⁹ զպտուղն ըստ բնութեանն¹⁰ քատակիլ յարմատոյն¹¹. Իսկ եթե ¹²Հոգւոյն է վերեկութիւն¹³ ըստ հրեշտակապետին ¹³ձայնին, Աստուած է ծնեալն. վասն զի ¹⁴Աստուած ծնելութեան առիթ:

1 Երանելոյն Պրոկղի եպիսկոպոսի:

2 Եւ թերեւս պահանջիցէ ոք, զի եթե չէ Քրիստոս որդի Յովսեփու եւ Դաւթի, զիս՞րդ համարիմք զՄաթէոս, որ առնէ սկիզբն աւետարանին եթե՛ Գիբի ծննդեան որդւոյ Դաւթի, Որդւոյ Աբրահամու^է: 3 Այսպէս իմանալի. քանզի Կոյսն եւ ուրում զնայն խաւսեցան՝ Յովսեփ, էին յագգէ Դաւթի եւ Աբրահամու. զի որպէս զԱբ-

րահամ եւ Դաւթի զիտեմք անուամբ հայր Յիսուսի, քանզի ի Կուսէն, որ յագգէ նոցա էր, երեւեցաւ մարմնացեալ Բանն Աստուած, նոյնպէս եւ զՅովսեփ անուամբ իմանամք հայր Յիսուսի, եւ ո՛չ բղխամամք սերմամբ՝ ըստ աւրինակի ամուսնութեան, այլ հանգուցեալ ի Մարիամ զաւրութեանն, եւ ի Մարիամայ առեալ ճշմարտութեամբ մարմին եւ մարդացեալ. ո՛չ որպէս ընդ սողէն անցեալ, որպէս Վաղենդիանոսք եւ Ծայղանացիք եւ Մարկիոն հայհոյեն, եւ ո՛չ ստուերականի կերպարանաւք եւ առաջաւք երեւեալ, որպէս Մանինէացիքն ամպարչտեն. եւ ո՛չ մարմին առանց շնչոյ առեալ, որպէս Արիանոսք եւ Մակիդոնիանոսք եւ Եւնոմիանոսք բամբասեն. եւ ո՛չ մարմին եւ շունչ առանց մտաց, որպէս Ապողինարիտքն դանդաչեն. եւ ո՛չ մարդ լոկ, որպէս տաճար իմն եւ բնակութիւն աստուածութեան՝ ի նմանութիւն մարդարէիցն եւ առաքելոցն, որպէս Նատորիկեանքն անաւրինին: 4 Այլ Աստուած յԱստուծոյ, Բան մշտնջենաւորական, Որդին Միածին՝ անսկզբնականն, որ ի Հաւրէ եւ ընդ Հաւր՝ ի բնէ եւ յաւիտենից, ի վախճան ժամանակաց եկեալ յարգանդ սուրբ Կուսին՝ մարմնացաւ եւ մարդացաւ, ո՛չ ի սերմանէ եւ ո՛չ յամուսնութենէ եւ ո՛չ յարենէ, այլ որպէս ինքն գիտէ միայն: 5 Եւ զի մարմնացեալ եւ մարդացեալ երեւեցաւ՝ հաւատամք, բայց եթե զի՞նչ աւրինակ իցէ՛ չքննեմ, քանզի չեմ բաւական լինել հասու. զի խորհուրդ է անճառ, անքննին, անասաց. եւ մինչ խորհուրդն խորհուրդ է՝ ո՛չ ոք կարէ յայտ ածել եւ մերկանալ. ապա եթե մերկանայցէ եւ յայտնեսցէ, խորհուրդն այնուհետեւ չէ խորհուրդ:

6 Նորին՝ ի թղթոյն, որ առ սուրբն Սահակ Հայոց հայրապետն, Պրոկղի:

7 Հաւատամք յԱստուածն Բան՝ յանեղծն, յանարատն. թե առանց անցից մարմնացաւ եւ սրբութեամբ՝ հաւատամք.

1 ծնիցեալն
 2 իսկ այդ ի նոյն բնակեալ Աստուած, եւ իբր երկու ծնիցելոյն
 3 զեմանուէլն
 4 սանձ
 5 կալցի յիշողութիւն
 6 Կոյսն
 7 բացասողմնեաց
 8 սերման բողբոջ
 9 չիբ
 10 բնութեան
 11 արմատոյն
 12 Հոգւոյ է Սրբոյ
 * Մատթ. Ը 20
 13 ձայնի՝ Աստուած ծնիցեալն
 14 եւ Աստուած ծնելութեանն
 է Մատթ. Ը 1

զի այս ինքն է մերոյ փրկութեանս հիմն եւ հաստատութիւն. նաեւ սիրեմք՝ որ վասն մեր եկն եւ զկերպարանս առ զծառայութեան. որ ո՛չ եթե զբնութեանն ինչ եղծումն յանձն էառ եւ ո՛չ աւելորդ ինչ յերրորդութիւնն արար: 8 Արդ, ամենայն քրիստոնեայ, որ ո՛չ պարարեալ է հաւատովք եւ յուսով եւ սիրով, չէ նա այն, որ անուանեալն կոչի. զի թեպէտ եւ բազում անգամ ճնշէ զմարմին եւ յանցից անցից ցանկութեան թուի իմն զվարուց զքաջութիւնս ուղղել՝ յաղթութեան պսակացն արժանի չլինի, իբր նոյն ինքն յաստուած պաշտութեանն պատրաստիչ պսակացն, որ նահատակացն պատրաստեալ է՝ չժամանել: 9 Արդ, հաւատք են, որպէս ասացաք, ամենայն բարեացն գլխաւորութիւն. եւ պահեսցի նոքա առանց շնութեան, մի՛ ինչ ի նա մատուցանել ամենեւին պղծութեան խորհրդոց ի մարդկանէ, եւ մի՛ բնաւ ի պղծութիւն ի նորաձայն ուսմանցն պղտորեալ խառնակեցի, այլ ի ներքոյ աւետարանական յառաքելական սահմանացն հաստատեալ կացցէ. զի մի՛ ոք ամենեւին իշխեսցի ձեռն ածել այնու, որով վրիպեցաքն եւ որով ի մկրտութեան անդ մերով իսկ լեզուաւ ձեռնագրեցաքն. զի խոտէ եւ անարգէ բարձրութիւն հաւատոցն զամենայն արձակումն յանդգնութեան եւ ժպրհութեան՝ ո՛չ միայն մարդկութեանս, այլ եւ որ յանմարմին բնութեանն են՝ ի բարձունս գլխաւորեալ: 10 Որպէս երանելին Պաւղոս բողոք կալեալ գոչէ. եթե կամ մեք, ասէ, կամ հրեշտակք յերկնից աւետարանիցէ ձեզ քան զայն, զոր ընկալարուքն դուք՝ նզովեալ լիցի: 11 Արդ, ինքն Աստուած՝ անեղծն, անարատն, անպաճոյճն, անսկիզբն, անչափակալն, հզաւրն, ամենազաւրն Բանն եկն մարմնացաւ. քանզի ամենայն զաւրութիւն եւ ամենայն կամակարութիւն առ իւր էր, եւ առ նա զկերպար

րանս ծառայի եւ եղեւ մարմին եւ ծնաւ ի Կուսէն, ամենայնիւ կամեցաւ ցուցանել, եթե ճշմարտիւ մարդ եղեւ: 12 Զի ի հարկէ երթան զհետ բարուցն իշխանութիւնք եւ կերպարանք եւ չարչարանք. զի ո՛չ ուրեք ասէ աւետարանիչն, եթե եկն եմուտ նա ի կատարեալ մարդն, այլ ասէ. եղեւ մարմինս՝ ի նոյն ինքն իջեալ ի բնութիւնն եւ ի սկզբան անդր հասեալ ծննդեանն. նախ եղեւ մարմին, ո՛չ եթե ի մարմինն եղծաւ, քա՛ւ լիցի. զի կայ հաստատեալ Աստուածութիւնն եղծմանն ի վերոյ. քանզի որ եղծմամբն է՝ ի ծորել բարուցն չարչարմամբն, իսկ որ մշտնջենաւորն է՝ միշտ առ իւր ունի զանեղծ բնութիւնն:

13 Արդ, ասեմք՝ գերկոսինն առաջի արկեալ բարբառս գրոց. եղեւ մարմինս եւ առ զկերպարանս ծառայի՞, եւ երկոքինն ուղղապաշտմամբ իմացեալ՝ փրկութեան սերմանիք լիցին մեզ: 14 Այն զի ասէ՝ բայց եղեւ, զանքակ կատարեալ հաւասարութիւն աւետարանիչն ցուցանէ մեզ. զի զորաւրինակ միութիւն ո՛չ լինի ի միւսութիւնս երկուս. զի եթե այսպէս լինի, ո՛չ լինի միութիւն. սոյնպէս մի ըստ կատարեալ հաւանութեանն ո՛չ բաժանի յերկուս, այլ այն որ ասեն՝ առբողոքէ զանխախտուն բարուց. քանզի ամենայն որ լինելոցն՝ ի չէէ անտի լինի: 15 Արդ, երկուքին յաստուածային բնութեանն անկազմ են. զի ո՛չ եթե ի չգոյից անտի ի մէջ եկն որ միշտ անսկիզբն է, եւ ո՛չ ի գոյից քակտեցաւ անեղծ Բանն. վասն այսորիկ յերկուց կողմանց՝ եւ զանեղծ եւ զանարատ աստուածութեանն եւ զանքակ խորհրդեանն, Աստուածեղէն Գիրք ուսուցանեն. զի առաջնովն զմիութիւն երեսացն հաստատեսցէ եւ երկրորդաւն զանեղծն եւ զանարատն գոչեսցէ:

« Գող. Ը 8

բ ԹՊԸ. Ը 14
գ Հմմտ. Փլա. Բ 7:

16 Արդ, եղեւ Աստուած Բանն կատարեալ մարդ՝ ո՛չ եթե կարճեալ ինչ յանեղծն յանարատ բնութենէ անտի, որ ի վեր քան զիմաստ զարմանալեաց. այլ հաւատովք զայնպիսին ուսաք, ո՛չ եթե քննութեամբ հասաք. եղեւ մարդ եւ ապրեցուցանէ չարչարակցութեամբն, որ ըստ մարմնոյ ազգակից եւ տոհմականն է. հատոյց զպարտիս մեղացն ի վերայ ամենեցուն մեռանելովն իբրեւ զմարդ, խափանեաց զայն, որ զիշխանութիւն մահու ունէր, այսինքն զսատանայ, իբրեւ զչարատեաց զԱստուած, եւ զկար զաւրինացն եցոյց՝ ի կատարել անդ զամենայն արդարութիւն, եւ բնութեանն զառաջին ազնուութիւն հատոյց ի պատուելոյ անտի ի մարմնանալն, զոր իւր իսկ ստեղծեալն էր զբոյս բարուցն բարութեան: 17 Արդ, մի է Որդի, եւ համազաւր Երրորդութեանն երկիրպագանեմք. չորրորդութիւն անդ ո՛չ մատուցանեմք, այլ մի Որդի՝ անակիզքն ի Հաւրէ ծնեալ, որով զամենայն յաւիտեանս հաւատամք եղանել. որ մշտնջենաւորակիցն է արմատոյ շառաւիղ, որ առանց ծորման ի Հաւրէ իջանէ¹. որ անքակ մտաց անտի յառաջ եկեալ եւ անդէն բնակեալ. զի թեպէտ յերկրի երեւեցաւ, այլ ի Հաւրէ ո՛չ մեկնեցաւ: 18 Սա կամեցաւ փրկել զոր ինքն ստեղծ, եւ փրկեաց ի բնակելն յարգանդի անդ, եւ աւրհնեաց զդուռն բուսոյ բարուցն բարութեան, եւ ծննդեան իւրով կնքեաց, եւ եցոյց զինքն, որ ի վեր է քան զբարս ծննդեան՝ Բանն մարդացեալ: 19 Արդ, ո՛չ եթե այլ ոք է Քրիստոսն, քա՛ւ լիցի, եւ ո՛չ այլ ոք Աստուած Բանն. զի երկուս Որդիս Աստուածութեան բնութիւնն ո՛չ գիտէ, այլ միայն միածին ծնաւ: 20 Զի ուր ո՛չ գոյ ամուսնութիւն ծննդականաց, անդ ո՛չ գտանի երկուցիւն ծնելոյ. Զի յանուն Յիսուսի Քրիստոսի կրկնեսցի ամենայն ծուր՝ երկնաւորաց եւ երկրաւորացս

եւ սանդարամետականաց^ա: 21 Ապա եթե այլ ոք է Քրիստոսն, քան զայն, որ Աստուած Բանն է ի Հաւրէ, դոյզն մարդ է Քրիստոս. զի տաճար է Աստուծոյ՝ ըստ բանի սրաբեոցն: 22 Իսկ եթե դոյզն մարդ իցէ Քրիստոս, զիա՞րդ, որ ի վեր են քան զբնութիւն նորա եւ պատուականագոյնք՝ երկնաւորքն, ծուր իջեալ երկիրպագանեն կրտսերոյն. եւ կամ զիա՞րդ ընկալցուք մեք զբարբառ մարդարէիցն, որ գոչեն. Աստուած մեր յերկրի երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ^բ. երեւել զայն ասէին, որ մարմնովն երեւեցաւ, եւ շրջել՝ որ ըստ ժամանակի, ընդ մարդկան. զառաւելութիւն զամենազաւր ի գործոց անտի գնացիցն ցուցանէր, զի իբրեւ զամենակալ, որ եկաց եւ մնաց ի նմին վասն իւր եւ որ ինչ կամեցաւ եւ եղեւ վասն մեր: 23 Ապա եթե գայթակղութեան պատճառք լինիցին խանձարուքն եւ որ ի մարի անդ բազմականն էր, եւ կամ ժամանակաւ ըստ մարմնոյ աճումնն էր, եւ որ ի նաւին անդ ի քուն մտանելն էր եւ ի ճանապարհի աշխատ լինելն էր, եւ որ ի ժամանակի անդ քաղցնուլն էր, եւ որ ինչ միանգամ մարդոյ եղեալն էր դէպքն անցանէին: 24 Արդ, ես զարմացեալ եմ ընդ պակասամտութիւնն, որ նոր ճանապարհս խոտորս ձեւեն. զի իմ զմինն գիտացեալ եւ ուսեալ բարեպաշտութեամբ զՈրդի, եւ մի խոստովանութիւն ունիմ զմարմնացելոյ Բանին Աստուծոյ զաւրութիւն բնութեանն²:

25 Իսկ արդ, զի մի է, որ անցից անցից համբերութեամբ յանձն էառ եւ զմեծաւքանչ զաւրութիւնսն կատարեաց, արդ՝ ընդէ՞ր զաստուածեղէնսն լուեալ եւ զվատթարագոյնն յերկարեալ բարբաջեն: 26 Զի նա իբրեւ կամեցաւ, թե հաւատարիմ արա-

1 Լուսանցում այս բառի փոխարէն՝ ծագեալ

^ա Փլւ. Բ 10
^բ Բար. Գ 36. 38
 2 Լուսանցում Ի միտ առ, ո՛վ երկարակրթաց

րից՝ Աստուած եմ եւ Բան, հաստատեցաւ կաց որ էրն. իսկ եղեւ մարմին եւ մանուկ, եւ ո՛չ միով իւրք քակտութեամբ զխորհուրդն թշնամանեաց. նոյն ինքն եւ զմեծասքանչ զաւրութիւնն առնէր եւ նոյն ինքն չարչարանաւք մտանէր. նշանաւք եւ արուեստիւք կալ մնալ յայնմ, որ էրն իսկ եւ երեւեցուցանէր, իսկ չարչարանաւք զոր եղեւն հաստատէր: 27 Արդ, միեւնոյն մշտնջենաւոր ի սկզբանէն եւ ի կատարածի մարմնացեալն խոստովանեսցուք Որդի, եւ մի՛ ինչ այլ ամենեւին յաստուածութիւն բնութեանն անդր աւտարոտի եւ խոտան խառնեսցուք, զի ոչինչ աւելորդ գոյացն աթոռ:

1 Երանելոյն հաւր մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետին Աղէքսանդրու, եւ գրեցելոյ Թղթոյն ի Գանգրայ յԱսորիս, ուր զաշակերտսն կատարեաց ի Քրիստոս՝ թուղթ եւթներորդ: 2 Սեպտեմբերի Բ. հոռի վեցերորդն. Առ Միայնակեացսն ի Հեմատոն գրեցեալ թղթոյ:

3 Քանզի գիտեմք² զնա հաւատով բուժեալ ծնիցեալ զնա³ իբրեւ զԱստուած, իսկ զնոյն ծնիցեալ ⁴ի Մարիամայ իբրեւ զմարդ: 4 Տե՛ս զնա ի վերայ երկրի ճեմեալ⁵ իբրեւ մարդ⁶, եւ տե՛ս զնա երկնայնոց հրեշտակաց արարիչ իբր զԱստուած: 5 Տե՛ս զնա ի նաւի ննջեալ⁷ իբրեւ զմարդ, եւ ⁸տե՛ս ի վերայ ալեացն ճեմեալ իբր զԱստուած⁹: 6 Տե՛ս զնա քաղցեալ իբր զմարդ, եւ տե՛ս զնա բուժանաւղ աշխարհի իբր զԱստուած: 7 Տե՛ս զնա ծարաւեալ իբր

զմարդ, եւ տե՛ս զնա արբուցանելով՝ իբր զԱստուած¹⁰: 8 Տե՛ս զնա մերկացեալ իբր զմարդ, եւ տե՛ս զնա ¹¹զգեցուցանաւղ իբր զԱստուած: 9 Տե՛ս զնա ի վերայ յովանակի նստեալ իբր զմարդ, եւ տե՛ս ¹²զնա ի քերովբէսն նստեալ իբրեւ զԱստուած: 10 Տե՛ս զնա ¹³ի հրեիցն քարկոծեալ իբր զմարդ, եւ տե՛ս զնա ի հրեշտակաց երկրպագեալ իբր զԱստուած: 11 Տե՛ս զնա փորձեալ իբր զմարդ, եւ տե՛ս զնա զղեւս¹⁴ հալածելով իբր զԱստուած: 12 ¹⁵Տե՛ս զնա ոչխար իբր զմարդ, եւ հովիւ իբր զԱստուած¹⁶: 13 Տե՛ս զնա ¹⁷զոհ զենեալ իբր քահանայ ընծայաբեր, եւ փրկանաւորելով՝ իբր զԱստուած¹⁸: 14 Տե՛ս զնա ի¹⁹ Պիղատոսի յատենի կացեալ իբր զմարդ, եւ տե՛ս ²⁰Հաւր գահակցեալ իբր զԱստուած²¹: 15 Տե՛ս զնա խաչեալ²² իբր մարդ, եւ տե՛ս զնա աւազակին դրախտին²³ շնորհելով իբր զԱստուած²⁴: 16 Տե՛ս զնա ²⁵քացախ արբեալ իբր զմարդ, եւ ²⁶տե՛ս զաշխարհ արբուցեալ անչարակնաբար իբր զԱստուած: 17 Տե՛ս զնա մեռեալ իբր զմարդ, եւ տե՛ս զնա մեռեալս յարուցանելով՝ իբր զԱստուած: 18 Տե՛ս զնա աղքատացեալ մարմնով²⁷ իբր զմարդ²⁸, եւ տե՛ս զնա փարթա-

1 Հմմտ. Տիմոթէոս, էջ 279:
 2 գիտեմ ես
 3 ահա զնա
 4 ի Մարիամայ իբր մարդ
 5 մեմելով
 6 զմարդ
 7 մնջեցեալ
 8 զնա ի վերայ ջուրց
 9 Աստուած

10 Աստուած
 11 զգեցուցանելով իբր Աստուած
 12 զնա վերելակեալ քերովբէց իբր Աստուած
 13 ի հրեից
 14 դեւս
 15 եւ տես զնա դարձեալ
 16 Աստուած
 17 եւ իբր քահանայ ընծայաբերելով, եւ տես զնա
 18 Աստուած
 19 չի՛ք
 20 զնա Հաւր գահակցելով
 21 Աստուած
 22 խաչեցեալ
 23 զդրաստն
 24 Աստուած
 25 քացախ ի խաչին արբուցեալ իբր մարդ
 26 տես զնա իբր Աստուած անչարակնաբար զաշխարհ արբուցանելով
 27 չի՛ք
 28 մարդ

մացուցանալ¹ իբր զԱստուած²: 19 Տե՛ս զնա ծառայ իբր զմարդ³, եւ տե՛ս⁴ ազատիչ իբր Աստուած: 20 Տե՛ս զնա որպէս ցորեան սերմանեալ⁵, եւ տե՛ս զնա ⁶զարձեալ սերմանալ իբր Աստուած: 21 Տե՛ս զնա այգի պտղալից⁷ իբր մարդ, եւ տե՛ս զնա բուսակեր երկրագործ⁸ իբր զԱստուած⁹: 22 Այլ զի մի ¹⁰բազմամբոխ շարագրութեանս արարից, թողում այժմ զվկայութիւնս ¹¹իւրաքանչիւր հաւաքեալ գլխոց, եւ հաւաքեցից՝ շնորհելով Աստուծոյ, ի¹² զիպող ժամանակի առ այս կոչողի: 23 ¹³Իսկ զաւտարափառացն անպիտանութիւն թողեալ, զմի¹⁴ եւ զնոյն խոստովանիմք Փրկիչ եւ Տէր եւ Աստուած, ¹⁵եւ թե եղեւ տնաւրինաբար: 24 Կալարո՛ւք այսուհետեւ եւ¹⁶ զհարցն խոստովանութիւն, եւ մի՛ շոգմոզողացն ¹⁷հերձուածողաց համեմատիք բանից, այլ եւ մի՛ յերկուս բաժանողաց. զմինն¹⁸ հաւանի՛ք. քանզի մինն¹⁹ է մեր փրկիչ, ²⁰որպէս ասացն թե՛ եղեւ մարդ սակս մարդասիրութեան²¹:

1 փարթաւացուցանելով
 2 Աստուած
 3 մարդ
 4 տես զնա
 5 սերմանեալ իբր զմարդ
 6 սերմանող դարձեալ
 7 չիբ
 8 եւ երկրագործ
 9 Աստուած
 10 բազում ամբոխի շարագրութեանս
 11 իւրաքանչիւրոյ հաւաքել գլխոյ, եւ հաւաքեցից
 12 չիբ
 13 Իսկ մեք գաւտարափառաց անպիտանութիւնս
 14 մի
 15 եւ եթ՝ եղեւ անաւրինաբար մարդ
 16 չիբ
 17 հերձուածողացն հետեւանայք բայից
 18 զմին
 19 մի
 20 որպէս ասացի, եւ եթ՝
 21 մարդասիրութեանն

1 ²²Երանելոյն Տիմոթէոսի եպիսկոպոսի Աղէֆանդրացոց՝ ի Հակաճառութեան, առաջին գլխոյն Լեւոնի հայիտութեանն եւ որ յառաջ Բան զնա հերձուածողք՝ Նեստորի Անտիոքացոյ եւ Դիոդորի Տարսուցացոյ եւ Պաւղոսի Շամշուացոյ եւ Թեոդորիտեայ Կիրոս Բաղաբի, եւ աշակերտաց որ յետոյ:

2 Հերձուածողացն նորա ²³վարդապետացն ի բաց յայտնելով զնորայն զամպարչտութիւն, իբր հետեւեցելոյ իւր նորայն ամպարչտութեանն, ²⁴ենթակայեցի յիրաւի ²⁵զնոցայն ելելոյ նզովիցն ²⁶ի հարանց սրբոց: 3 Քանզի երանելի առաքեալն Պաւղոս ²⁷զմարմնացեալ Աստուած Բանն հանդերձ իւրով մարմնովն Քրիստոս քարոզեաց²⁸, եւ Աստուծոյ զարուսթիւն եւ Աստուծոյ իմաստութիւն ²⁹ընդ երկնաւ զսանուանեաց՝. զի ո՛չ որպէս նորում վարդապետիս թուի՝ տաղաւարեաց ³⁰ի Մարիամայն մարդն Աստուծոյ Բանին, իբր այլ ելով քան զ՛ի Կուսէն ծնիցեալն³¹ Փրկիչն, Քրիստոս Տէրն. քանզի տուն անուանեաց նորս վարդապետ ³²զ՛ի Մարիամայն առեալն. բնակեալ զԱստուած Բանն ի տան աւրինադրէ, որպէս թուի ³³հերձուածողացն նորա վարդապետաց, զի մի՛ ³⁴Աստուած Բանն, որպէս ինքն կոչէ իմաստութիւն՝

22 Հմմտ. Տիմոթէոս, էջ 55:
 23 վարդապետաց յայտնելով զնորա ամպարչտութիւնն
 24 նոցայցն վարդապետութեանց ենթակայեցի
 25 զնոցանէ եղելոց
 26 ի սրբոցն հարանց
 27 զմարմնացեալն Աստուածն Բան
 28 անուանեաց
 29 զսա քարոզեաց ընդ երկնաւս
 * Հմմտ. Լ՝ Կոր. Լ՝ 24:
 30 ի Մարիամայն մարդ Աստուածն Բան
 31 ծնիցեալ
 32 զ՛ի Մարիամայն առեալ՝ բնակիլ զԱստուածն Բան ի տանն
 33 հերձուածողաց նորայն
 34 Աստուածն Բան

Թափեալ զինքն գտանիցի, եւ մի՛ տուեալ վասն մեր ի Հաւրէ՛ ըստ գերազանցութեան սիրոյն¹. Զի այնպէս² սիրեաց Աստուած զաշխարհս³, ասէ աւետարանիչն Յովհաննէս, իբր զի գորդին իւր Միածին⁴ ետ վասն մեր՞. այլ⁵ զի մի Տէրն փառաց, այլ Տեառն փառաց տունն⁶ ասիցի զխաչն Պամբերիչ վասն մեր՞, եւ զմահն եւ զթաղումն եւ զյարուցումն:

4 Այլ ո՛չ ճուսուցին այսպէս Աստուածեղէն Գիրք, այլ ինքն Բանն մարմին եղեալ՝ տաղաւարեալ կամ բնակեալ ի մեզ, եւ ի մարդկան. քանզի՝ Բնակեցայց ի նոսա եւ զգնացից, ասէ, եւ եղէց նոցա Աստուած, ¹⁰եւ նոքա եղիցին ինձ ժողովուրդ՞: 5 Իսկ ¹¹զբնակիլն ի սիրտս մեր զՔրիստոս աղաւթէ երանելին Պաւղոս՞. իսկ բնակիլ ¹²ի մարդիկ Աստուծոյ միայնւոյ¹³ յատուկ է, եւ ո՛չ մարդոյ: 6 Եւ յԱռ Եբրայեցիս թղթին ¹⁴զՔրիստոս հարազատ քարոզէ Որդի¹⁵ Հաւրն եւ արարիչ բոլորեցուն, եւ ¹⁶զեր ունել անբաղդատաբար ամենայնի համանգամայն արարածոցս. Քանզի, ասէ, Մովսէս¹⁷ հաւատարիմն¹⁸ բոլորում տան

նորա բուժող¹⁹ առ ի վկայութիւն խաւսեցելոցն, իսկ Քրիստոս իբրեւ²⁰ որդի ի տուն նորա, որոյ ²¹տունն մեք եմք: 7 Իսկ Քրիստոս²² իւր ²³ո՛չ տուն ասի եւ ո՛չ բնակութիւն յԱստուածային Գրեցելումն, թեպէտ եւ ²⁴մարդկայնաւք վարեացի ճայնիւք՝ վասն տնաւրէնութեանն²⁵, զի մի՛ երեւոյթ կարծիցի ²⁶մարմնաւորութեանն իւրոյ խորհուրդ. այլ ըստ ճշմարտութեան մարդ եղեալ ²⁷տնաւրինաբար Աստուծոյ Բանն՝ հաւատասցի մնացեալ անյեղում բնութեանն: 8 Քանզի եթեւ Աստուած էր հանդերձեալն յերկրի ²⁸երեւելն եւ ի Կուսէն ծնանելն՝ էսայի մարգարէանայ ասելովն²⁹. Ահա Աստուած մեր դատաստան հատուցանէ եւ հատուցէ, ինքնին³⁰ եկեացէ եւ փրկեացէ³¹ զմեզ. յայնժամ ³²աչք կուրաց բացցին, եւ այլն զկնի՞: 9 Եւ՝ ³³Ահա Աստուած Տէր գայ հաստատութեամբ³⁴. Եւ՝ Ահա կոյս ³⁵յորովայնի ընկալցի եւ ծնցի որդի, եւ կոչեցեն³⁶ զանուն նորա Էմա-

1 սիրոյ
2 այսպէս
3 զաշխարհ
4 Մե՛նածին
՝ Տէ՛ս Յովհ. Գ. 16:
5 այդ եւ
6 տունն
7 համբերիչն զվասն
ք Հմմտ. Լ. Կոր. Ի՛ 8:
8 այսպէս ուսուցին աստուածային գրեցեալն, այդ զինքն
9 ասէ, եւ առգնացից
10 եւ ընթեանք եղիցին իմ ժողովուրդ
ք Եւսէ. Լ. Լ. 27
11 բնակել զՔրիստոս ի սիրտս մեր
ք Տէ՛ս Եւսէ. Գ. 17:
12 ի մարդում
13 միայնում
14 զՔրիստոսն Որդի
15 չիք
16 գեր ունելով
17 եւ Մովսէս

18 չիք
19 Լուսանցումն ծառայ / իբր բուժող
20 իբր
21 տունն եմք մեք
է Եւս. Գ. 5-6
22 Քրիստոսի
23 ո՛չ տուն եւ ո՛չ բնակիչ ասի նաստուածային գրեցելումն
24 ուրեք մարդկայնով վարի
25 տնտեսութեանն
26 մարմնաւորութեան իւրոյ խորհուրդն, այդ ըստ նշմարտութեանն
27 տնաւրինաբար այն հաւատայցի մնացեալն անյեղումն բնութեան
28 երեւել եւ ի Կուսէ ծնանիլ, Իսայի
29 ասելով
30 ինքն
31 կեցուցէ
32 բացցին աչք կուրաց
ք Եւս. Լ. Լ. 4-5
33 մեր, ահա Տէր
34 հարստութեամբ եւ բազուկ իւր տիրակաճութեամբ
է Եւս. Լ. 10
35 նորովայնի կալցի
36 կարդացեն

նուէլ¹. եւ զի՝ ²Կոչեսցի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ, Աստուած հզարէ՝
 10 եւ ինքն իսկ յառաջ³ քան ⁴զյաւիտեանս Աստուծոյ Բանն յաղագս ի կնոջ իւր ըստ մարմնոյ ծննդեանն տնաւրինականի մարգարէիւն ասէ. Լուարո՛ւք ինձ, կղզի՛ք, եւ հայեցարո՛ւք, ազի՛նք, յետ բազում ժամանակաց⁵, ասէ Տէր, ճորովայնի մար իւրոյ կոչեաց գանուն⁶։ 11 Ահա ⁸զկամաւոր եւ զանկիր եւ զանճառելի յղութիւն իւր զեկուցանեն որովայնիւ մաւր, եւ առանձին մայր կոչէ զսուրբ Կոյսն, եւ անուն կոչեցեալ⁹ առ ի Հաւրէ։ 12 Իսկ եթե տուն իւր շինեաց եւ յայնժամ ¹⁰բնակեցաւ ի Մարիամայն մարդն Աստուծոյ Բանն՝ արտաքոյ ելով ամենայնիւ է ¹¹շինելոյն տանէն, մինչեւ իննամսեայ ժամանակաւ զսա շինեսցէ, այլ ելով Քրիստոսն, զի ի Մարիամայն իւր տուն, ապա ուրեմն ո՛չ¹² շարառեցաւ անճառաբար մարմնացեալն յարգանդի¹³ Կուսին ¹⁴Աստուած Բանն, որպէս նմա թուի, եւ ո՛չ Աստուածածին ¹⁵սուրբ Կոյսն, եւ ի՞բր մնաց ¹⁶յղացեալ եւ ծնեալն կոյս։ 13 Այլ մարգա-

րէն վկայէ եւ գոչէ զսորա զասութիւն¹⁷, մանաւանդ ¹⁸ինքն իսկ Աստուած Բանն մարգարէիւն, ապա իբր առ նոյն ծնիցեալն ի Կուսէն ասէ¹⁹ մարգարէիւն. եւ Սերոււացի²⁰ արք բարձունք առ քեզ անցցին եւ քեզ եղիցին ծառայք եւ յետոյ քո հետեւեսցին կապեալք ձեռակապաւք, եւ ի քեզ աղաթեսցեն, զի ի քեզ Աստուած է, եւ ո՛չ է Աստուած բայց քո՞։ 14 Ասէր իսկ ինքն Տէրն եթե՝ Հայր յիս ²¹մնալովն գործէ զգործս ինքն, եւ եթե՝ Հայր²² իմ ընդ իս է. ո՛չ²³ եթող զիս միայն, զի ես ²⁴զհաճոյս նորա առնեմ յամենայն ժամ՝ եւ՝ Հայր իմ յիս եւ ես ²⁵ի Հայրէ։ 15 Էջ իսկ եւ Հոգին Սուրբ մարմնական տեսակաւ իբր աղանձի ի²⁶ յերկնուստ եւ մնաց ի վերայ նորաւ. զի այսպէս ասէ²⁷ Տէրն. Հոգի Տեսոն առ իս, ²⁸սակս որոյ ան զիս²⁹։ 16 Վասն այսորիկ եւ ²⁹տաւար ասաց զիւր մարմինն՝ իբր ակծեալ տնաւրինաբար ³⁰Սուրբ Հոգւովն եւ ունելով ինքեան³¹ զՀայր եւ զՀոգին Սուրբ. զի եւ ³²մեր մարմինքս իւրով շնորհաւն կո-

1 եմանուէլ
 * Ե․․ Է 14
 2 կոչի անուն իւր
 ք Ե․․ Թ 6
 3 յառաջ
 4 զյաւիտեանց յաղագս ի կնոջէ
 5 ամանակի կացցէ
 6 յորովայնէ մար իմոյ
 7 գանուն իմ
 ք Ե․․ ԽԹ 1
 8 եւ զկամաւոր եւ անկիր եւ անճառելի յղութիւնն իւր զեկուցանէ նորովայնի մար, եւ առանձինն նմա առ ի Հաւրէ
 10 բնակեաց ի Մարիամայն մարդ յԱստուծոյն Բանն ի շինեցելոյն տանէ. մինչ զի իննամսեայ ամանակաւ զսա շինիցէ, այլ ելով քան զի Մարիամայն իւր տուն
 12 եւ ո՛չ
 13 յարգանդին
 14 Աստուածն Բանն
 15 սուրբն Կոյս
 16 յղացեալ եւ ծնեալ

17 ստութիւն
 18 իսկ ինքն Աստուածն Բանն
 19 ասի
 20 Սերոյիմացիք
 ք Տէ՛․ Ե․․ ԽԷ 14։
 21 մնալով առնէ
 է Յ․ՎԸ․ ԺԳ 10
 22 Հայրն
 23 եւ ոչ
 24 հաճոյս նմա
 շ Յ․ՎԸ․ Բ 29, Հմմտ․ նաեւ ԺԳ 32
 25 ի Հաւր
 է Յ․ՎԸ․ Ժ 38, Գէ՛․ նաեւ ԺԳ 10-11, Հմմտ․ նաեւ ԺԷ 21։
 26 չիք
 շ Հմմտ․ Մատթ․ Գ 16, Գ․ՆԿ․ Գ 22։
 27 ասէր
 28 որոյ սակս եսած
 ք Գ․ՆԿ․ Գ 18, Ե․․ ԿԸ 1
 29 բազին եսաց զիւրն մարմինն
 ժ Հմմտ․ Յ․ՎԸ․ Բ 19, 21։
 30 Սրբովն Հոգւով
 31 Նիւնեան
 32 մերն մարմինն

չեսցի ¹տաճար ի մեզ բնակեցելոյ ²Հոգւոյն Սրբոյ. Զի անդամք եմք մարմնոյ նորա³, եւ՝ Ի լրմանէ նորա մեք ամենեքեան առաք⁴, եւ՝ Ծիմիմք ի վերայ հիման առաքելոց³ եւ մարգարէից՝ ելոյ ի ծայր ⁴անգիւնոյ Յիսուսի Քրիստոսի, յորում ամենայն շինուած յաւդակապեալ՝ անէ ⁵ի տանար սուրբ Տեառն⁶:

17 Այլ թէպէտ եւ էր ի նմայ Հայրն եւ ⁶Սուրբ Հոգին, այլ վկայէ մարգարէին, եթէ ո՛չ էր Աստուած բայց նորա. քանզի մնալովն⁷ Աստուած՝ եղեւ անխառնաբար եւ անյեղապէս մարդ, եւ Համագոյ⁸ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ, եւ յորժամ եղեւն ըստ մեզ: 18 Իսկ ⁹մարմնաւորութեան եւ ծնելութեան նորա յեղանակ ¹⁰անճառելի է եւ անհիմանալի է ¹¹ամենեցուն, որպէս միայն գիտէ ինքն Մէնածինն Աստուած ընդ իւրում¹² Հաւր եւ ¹³Սուրբ Հոգւոյն: 19 Քանզի երանելի¹⁴ աւետարանիչն Յոհաննէս¹⁵ սկզբանն առ Աստուած եւ Աստուած Բանն էր, որով ամենայն եղեւ¹⁶, մարմին¹⁶ եղեալ փարոզեաց, մնալովն Աստուած, տաղաւարեալ¹⁷ ¹⁸ի մեզ հաւատացեալսս¹⁸: 20 Քան-

զի եւ նախածին եղեալ ի բազում եղբարս եւ տեսեալ յառաքելոցն վկայի՞, եւ այսպէս՝ Փառս ունել¹⁹ Մէնածնի առ ի Հաւրէ, լի շնորհաւ²⁰ եւ նշմարտութեամբ. զի ի լրմանէ նորա ամենեքեան ²¹առաք գշնորհ Սուրբ Հոգւոյնէ, եւ ընդունիչք նորա եղաք: 21 Եւ երանելիքն իսկ ²²Հարքն, որ ի Նիկիայ, զ'ի գոյացութենէ Հաւր՝ Աստուած յԱստուծոյ ասացին²³ զնա. վասն մեր եւ վասն մերոյ փրկութեան ստորիջեալ ²⁴մարմնացեալ եւ ախտակրեալ եւ յարուցեալ ²⁵ասացին, որպէս աւետարանիչն Յոհաննէս²⁶, եւ ո՛չ ուրեք անուանեցին²⁷ զՔրիստոս եւ զիմաստութիւնն, կամ եթէ ²⁸զԱստուած Բանն բնակեալ ի նմա, այլ ²⁹զմի եւ զնոյն Համագոյ Հաւր ելով եւ Սուրբ Հոգւոյն ասացին: 22 Արդ, եթէ³⁰ թուեցաւ ապականչին ³¹Աստուածայնոյ Գրեցելոյն եւ սրբոյ կանոնին՝ բնակեաց Աստուծոյն ³²Բանն ի Մարիամայն մարդումն, աստուածազգեստ ³³մարդ էր Քրիստոս, եւ ո՛չ եղեւ մարդ ³⁴Աստուծոյ Բանն՝ մնալովն Աստուած, այլ ի մարդ բնակեաց: 23 Քանզի զայս յառաջիկայն³⁵ յայտնապէս ուսուցանէ, շինելով ի վերայ

1 բազին ի մեզն
 2 Սրբոյ Հոգւոյն
 3 Եփէ. Ե 30
 4 Յ.Վ. Ե 16
 5 առաքելոցն
 6 անկիւնոյ ինքեան
 7 ի բազին սուրբ Տերամբ
 8 Եփէ. Բ 20-21
 9 Սուրբ Հոգին այդ վկայէ մարգարեիւն
 10 մնալով
 11 նոյնազոյ էր
 12 մարմնաւորութեանն եւ ծնելութեանն
 13 աննառելի եւ անպարիմանալի
 14 ամենեցուն է եւ որպէս
 15 իւրումն
 16 Հոգւոյն Սրբոյ
 17 եւ երանելի
 18 զ' նիսկզբանն Աստուածն Բան առ Աստուած
 19 Յ.Վ. Ե 1-3
 20 զսա մարմին
 21 տաղաւարել
 22 ի նա հաւատացեալս
 23 Եփէ. Յ.Վ. Ե 14:

24 Եփ. Ե. Ե. Բ 29:
 19 ունելով
 20 շնորհիւ
 21 եառաք գշնորհս Սրբոյ
 22 Ե՛. Յ.Վ. Ե 14. 16:
 23 հարբ, որք ի Նիկեա, զ'ի գոյացութենէն Հաւրն
 24 չիք
 25 եւ մարմնացեալ եւ կրեալ
 26 ուսուցին, որպէս եւ
 27 Այս կապակցութիւնից վերցրած յաջորդ հաստուածն է, որ ձեռագրում մտել է ս. Աթանասի քրթի մէջ (թ. 57):
 28 տուն անուանեցին
 29 զԱստուածն Բան
 30 զմին եւ զնոյն, նոյնազոյ ելով Հաւրն եւ Սրբոյ Հոգւոյն:
 31 եթ' որպէս
 32 աստուածայնոց գրեցելոցն
 33 Բան ի Մարիամայ
 34 էր մարդ Քրիստոսն
 35 Աստուծոյն Բան
 36 յառաջիկայն

¹չարապէս գրիցելոյ հիման նեստորի հեր-
 ձուածոյն: ²⁴ Ի՞բր արդեալք բնակէ Քրիս-
 տոս յամենայն սուրբս, եթե ո՛չ Աստուած
 գոյր եւ մարմնով. ^{ասէ՞} ²⁵ Յախ քան զլինելն
 Աբրահամու եղանիլ³, եւ այս ըստ մարմնոյ
 Որդի ելով Դաւթի⁴. քանզի միայնոյ Աս-
 տուծոյ յատուկ ի սուրբս բնակիլ: ²⁵ Իսկ
⁵զի՞նչ է աւելի սրբոյն մարգարէիցն երե-
 ւեսցի արդեալք ի Քրիստոսի այլ ասացեալ.
 ցուցեալ⁶ ահա, զի Մովսէս ընդ ընդոմնս
 կարգեալ Աստուծոյ, իսկ Քրիստոս ամե-
 նայնի տէր՝ իբր Որդի Աստուծոյ եւ Աս-
 տուած. քանզի երկրպագի ջամենայն հրեշ-
 տակաց, եւ նովաւ արար Պայտեանսն
 Հայր, եղելոյ նախածնի¹⁰ ի բազում եղբարս
 եւ վկայեցելոյ դարձեալ, եթե մնաց բացա-
 փայլումն եւ գծաւորութիւն ենթակացու-
 րեան¹¹ Հաւրք, եւ՝ Ի նմա կեամբ եւ շարժիմբ
 եւ եմբք: ²⁶ Քանզի նման¹² ասացաւ ի
 Դաւթայ եւ ի Պաւղոսէ. Աթոռ քո, Աս-
 տուած, ¹³յաւիտեանս յաւիտենիցք. քանզի
 անապաւառութիւն¹⁴ մեղաց մերոց արա-
 րեալ պատուական արեամբն¹⁵ իւրով՝ եւ
 փրկանաւորեալ՝ նստաւ ընդ աջմէ Աստու-
 ծոյ, Աստուած ելով եւ¹⁶ մարմնով: ²⁷ Եւ

զի պատուական արիւնն նորա արիւն Աս-
 տուծոյ է, Պաւղոս ուսուցանէ՝ ասելով ¹⁷առ
 յԵփեսոսէ երիցունսն. Հայեցարո՛ւք ձեզ ին-
 քեանց եւ ամենայն¹⁸ հաւտիդ, յորում գձեզ
¹⁹եղ Հոգին Սուրբ վերադիտաւդս, հովուել
 զեկեղեցի²⁰ Աստուծոյ, զոր ստացաւ արե-
 անամբն²¹ իւրով: ²⁸ Քանզի մի է Որդին²²
 Աստուծոյ՝ Մենածին²³, իբր Աստուած յԱս-
 տուծոյ, եւ ²⁴նախածինն էր բազմաց եղ-
 բարցէ, ի ձեռն յաղագս մեր կամաւոր իւ-
 րոյ թաղմանն, ըստ որում եղեւ մարդ
 տնաւորինաբար վասն մերոյ²⁵ փրկութեան,
 գոյով իսկ եւ այսպէս ըստ բնութեան Աս-
 տուած մարմնովն²⁶: ²⁹ Քանզի էակն²⁷ ի
 սկզբանէ է Աստուածն Բան՝ կենդանու-
 թիւն²⁸, տեսաք, ասեն Փրկչին աշակերտքն,
 եւ ձեռք մեր որոնեցինք: ³⁰ Քանզի եղեն
 ինքնատեսք եւ սպասաւորք Բանին²⁹, որպէս
 ասէ Ղուկաս: ³¹ Քանզի անտեսանելին ե-
 ղեւ տեսանելի՝ ²⁹մնացեալն յանյեղիլ բնու-
 թեանն. քանզի ինքն է Աստուած մեր եւ՝ Ի
 վերայ երկրի երեսեցաւ եւ ընդ մարդկան
 շրջեցաւ³⁰, եւ յայտնեցաւ մեզ՝ Աստուած ե-
 լով Տէր, մարդ եղեալ անխառնաբար, եւ
 ո՛չ անմարմնապէս երեւեալ ի վերայ երկ-
 րի: ³² Քանզի ³⁰ուսուցանէր մեզ զինքն ե-
 կեալ իւրով մարմնովն՝ ասելով. Ես եմ հաց

1 չարապէս ի նմանէ գրեցելոյ հիմանն
 2 ասէ իսկ
 3 նախ քան զԱբրահամ եղանել եմ ես
 4 Դաւթայ
 5 զի՞նչ աւելի սրբոց
 6 եւ ցուցեալ
 7 Մովսէս ընդ ընդոմնս
 8 եւ յամենայն հրեշտակաց Աստուծոյ
 9 եարար զյաւիտեանս Հայրն
 10 նախածնի
 11 ենթակացութեանն
 12 Հմմտ. Եբր. Ա 2-3, Հմմտ. Գ 5-6:
 13 Գործ. Ժ 1-28
 14 նմա
 15 յաւիտեան յաւիտենի
 16 Մատ. Խ Գ 7, Եբր. Ա 3
 17 ապաւառութիւն
 18 արեամբ
 19 Հմմտ. Եբր. Ա 7:
 20 չիք

17 առ յԵփեսոսէ երիցունսն ասելով
 18 ամենայնի
 19 Հոգին Սուրբ եղ
 20 գեկեղեցին
 21 արեամբ
 22 Տէ՛ս Գործ. Ի 28:
 23 Որդի
 24 Մենածին
 25 նախածին ներբազմաց
 26 Հմմտ. Հմմտ. Ա 29:
 27 մերոյն
 28 եւ մարմնովն
 29 զեակն
 30 կենդանութեան
 31 Հմմտ. Ա Յով. Ա 1:
 32 Տէ՛ս Գործ. Ա 2:
 33 մնացեալ նախեղիլի
 34 Բար. Գ 38
 35 ուսուցանէր մի զինքն եալ

Վեցնդանի ի յերկնուստ իջեալ. եթե ոք շկերիցէ յայսմ հացէ՝ կեցցէ յաւիտեան. եւ հացն իսկ, զոր ես տաց, մարմին³ իմ է՝ յաղագս աշխարհի կենդանութեան⁴։ 33 *Եւ դարձեալ*. եթե ո՛չ ուտիցէ՛ք զմարմին Որդւոյ մարդոյ եւ ըմպիցէ՛ք զարիւնն՝⁴ ո՛չ ունիք կենդանութիւն ի ձեզ. Ուտողն զիմ մարմին եւ ջարբաւղն զիմ արիւնն ունի կենդանութիւն յաւիտեանական, եւ ես յարուցից զնա ջաւուրն վերջնումն⁵։ 34 *Եւ սոցուն ի վերայ բերէ*. Ուտողն զիս՝ նա⁷ կեցցէ վասն իմ. Բանգի ջես եմ հացն յերկնուստ իջեալ եւ կենդանութեան տուիչ աշխարհի⁶։

35 *Տեսանե՞ս, զի ջամենայն ուրեք մին զինքն քարոզէ՛ Հանդերձ իւրով մարմնովն, ինքն գողով յերկնուստ՝¹⁰ իբր Աստուած, եւ ի Կուսէն՝ իբր որդի մարդոյ։ 36 Ասէ իսկ Յոհաննէս աշակերտն յաղագս տեսցելոյն¹¹ եւ որոնացելոյն ի նմանէ Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի. Սա է նշմարիտ¹² Աստուած եւ կենդանութիւն յաւիտեանական⁷։ 37 ¹³Եւ Պաւղոս խոստովանեաց զՔրիստոս ¹⁴ի Հրեիցն ըստ մարմնոյ ¹⁵զ՛ի վերայ ամենեցուն Աստուած¹⁶, բարեբանեալ*

յաւիտեանս⁸։ 38 *Եւ յայլում ¹⁷Թղթի դարձեալ ասէ*. Ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի⁹։ 39 ¹⁸Եւ այլ դարձեալ բացերեւեցուցէ յաղագս ամենայնի կատարաւորի զցանկութիւնս մարմնոյ, եւ ո՛չ գոլով¹⁹ զնացելոցն, իբր ո՛չ ընկալցի զարքայութիւնն²⁰ Քրիստոսի Աստուծոյ²¹։ 40 *Իմաստութիւն այսուհետեւ Աստուծոյ այս է. Քրիստոս ճշմարիտ շինեաց ինքեան տուն հոգեկան զ՛ի նայն հաւատացեալս. վասն այսորիկ ²²զկամաւորն ենթակաց թափումն անթափն զբնութիւնն իբր Աստուած, եւ զաղատութեանս մերոյ զամենայն իւր արարեալ, զի մեք փարթամացումք ²³ի նա հաւատով² եւ բնականն նորա եղիցումք սրբով մկրտութեամբն՝ յաւետ փարթամացեալք առ ի նմանէ տուեցելոյ ²⁴զնորիս Սուրբ Հոգւոյն. սակս որոյ ընդ մեզ է մինչեւ ի սպառումն յաւիտեանիս²։ 41 Աստուած ուրեմն մեր²⁵ Քրիստոսն ներբնակեալն եւ ներճեմեալն ի մեզ²⁶, եւ յերկրի երեւեալն²⁷ եւ ընդ մարդկան շրջեցեալն, ²⁸ի փչման շնորհաւորն առաքելոց Հոգին Սուրբ, իբր Աստուած, որոյ եւ ժողովուրդն²⁹ յատուկ եմք⁸ ըստ հրեշտակապետին³⁰ ձայնին. Զի*

1 կենդանի յերկնուստն
 2 ուտիցէ յայսմանէ
 3 մարմինս
 4 Յ․ՎԸ․Չ 51-52
 5 զնորա արիւնն
 6 ըմպաւղն զիմ արիւնն
 7 ի վերջնում ավուր
 8 Յ․ՎԸ․Չ 54-55
 9 եւ նա
 10 ես եմ, ասէ,
 11 ՏԵ՛՛ Յ․ՎԸ․Չ 51-52, 58-59։
 12 ամենուրեք մի
 13 եւ յերկնուստ
 14 տեսցելոյն
 15 նշմարիտն
 16 Ը Յ․ՎԸ․ Ե 20
 17 եւ Պաւղոս նմանապէս զՔրիստոս ունելով նին-
 18 քեան խաւսող
 19 ի հրեից
 20 զ՛ի վերայն
 21 Աստուածն

8 Ըստ Ս․ Թ 5
 17 դարձեալ թղթի
 18 ՏԵ՛՛ Բ 13
 19 եւ այդուր դարձեալ բացերեւեցէ
 20 ոգով զնա
 21 ժառանգութիւն յարքայութեանն
 22 եւ Աստուծոյ
 23 Ը Ս․Պ․ Բ 16, 21։
 24 եւ զկամաւորն ... կացեաց
 25 ի ձեռն ի նայն հաւատոյ
 26 Ը Ս․Պ․ Բ Կ․ Ը 9։
 27 շնորհիւ Սրբով Հոգւովն
 28 Ը Ս․Պ․ Գ․ 27, Մ․Պ․ Ի Ը 20։
 29 Եր
 30 նըմեզ
 31 երեւեալ
 32 ի ձեռն փչմանն շնորհաւորն առաքելոցն զՀոգին
 33 ժողովուրդ
 34 Ը Ս․Պ․ Ը ՊԵ՛՛ Բ 9։
 35 հրեշտակապետի

Վոչեսցես զանուն նորա Յիսուս. զի ինքն ասպեցուսցէ զժողովուրդ շիր ի մեղաց²:

42 Յտորին՝ ի Հակամատուցեանն երրորդ գլխոյն Լեւոնի:

43 Եթե մարդ բացակատարեաց⁴ հասարակական նարգանդի Կուսին եւ յետ այտորիկ⁵ յարակցեաց Աստուածունն Բանի ունակութեան շարայարութեամբ, քանզի այս⁶ եղեր քեզ հիմն ամպարչտութեան, որպէս Նատորի⁷ թուի եւ այլոց քոց վարդապետաց, Յիսուս է մարդ, կարէ պարիլ յատկութիւն իւրաքանչիւրոյ⁸ բնութեանն, որպէս ⁹դու դանդաղեցեր, զի եւ մի՛ Աստուած¹⁰ Բան մարդ եղեալ անյեղաբար եւ ¹¹ըստ ճշմարտութեանն հաւատասցի, եւ յարակցեալն մարդ Աստուած գոլ հաւատասցի¹² ըստ ճշմարտութեանն, ¹³ապա ուրեմն եւ ո՛չ Աստուած ի Կուսէ ծնիցաւ ըստ քեզ, այլ մարդ սոսկ. քանզի յատուկ մարդոյ զի կնոջէ ¹⁴ծնանիլն աղանդեցեր: 44 Եւ ի՞բեր Աստուածածին Կոյսն քարոզի ¹⁵ընդ երկրաւս, եթե ո՛չ ¹⁶Աստուած իցէ ի նմայն մարմնացեալն, որոյ ե՛լ նուաստին ե՛լ ¹⁷կարեւորքն, ախտակրութիւնքն եւ առնելութիւնքն յատուկ իւր ըստ ճշմարտութեանն¹⁸ է: 45 Եւ ի՞բեր ¹⁹իւրաքանչիւր

բնութիւնքն, որպէս դու ասացեր, ի մի դէմ կարէ ²⁰կայակցիլ ըստ մարդկային իմացման. ո՞ւր մտանելոյ դիմին ²¹միւսոյ բնութեանն, ասա՛ ինձ. քանզի ո՛չ է բնութիւն անդէմ. այլ է յայտ, իբր ըստ ընդբնութեան²² ի մեզ, որպէս²³ ի վերայ մեր, այսպէս համարիս ²⁴գԱստուած Բանն՝ ընտանեցեալ ունակաբար նուաստին ²⁵եւ անկարին եւ մահկանացուին մարդոյ, որպէս Նեստորի թուի: ⁴⁶ Իսկ²⁶ յորժամ ասէ ²⁷վասն Սամուէլի Աստուած. Ոչ զեզ անարգեցիմ, այլ զիս մերժեցիմ²⁸, առ յոչ թագաւորել ի նոսա՞. եւ՝ ²⁹Լսաւն ձեզ ինձ լսէ՞. եւ՝ Որչափ արարէ՞ միում այսոցիկ տրպոցս, ինձ արարէ՞, ի նոյն իսկ ի³⁰ Փրկչէն ասացեալ: ⁴⁷ Այլ ո՛չ այսպէս ի վերայ Քրիստոսի խորհիմբ, մի՛ լիցի, եւ ո՛չ մարդկայնովք մտածութեամբք ըստ³¹ նմայն խորհուրդ արտախուզեալ ձեռնարկեմք³². այլ հաւատամք, որպէս ընկալաք ³³ի սուրբ եւ յԱստուածաշունչ Գրեցելոց, զի վասն մեր աղքատացաւ կամաւորապէս, բառացի, ³⁴Աստուած ելով Բանն, եւ եղեւ մարդ ճշմարտութեամբ³⁵, մնալով անյեղիլ

1 ասէ, զանուն
2 ի մեղաց իւրեանց
3 Մատթ. Լ 21
4 Տիմոթէոս, էջ 66
5 բացակատարեցաւ
6 այտորիկ
7 զայս ահա
8 եւ Նեստորի
9 երկաբանչիւրոյ
10 դուդ աղանդես
11 Աստուածն
12 ըստ նշմարտութեան հաւատացի, եւ մի
13 հաւատացի
14 ապ'որեմն եւ ո՛չ ի կուսէ Աստուած
15 ծնանիլ
16 ընդ երկնաւս
17 Աստուած է ծնիցեալն ի սրբոյն Կուսէ մարմնացեալ
18 կարեւորք. ախտակրութիւնք եւ առնելութիւնք
19 նշմարտութեան

19 երկաբանչիւրն բնութիւն
20 Էակցիլ ըստ մարդկայինս իմացմունս
21 միոյ բնութեան
22 ընդունակութեան
23 որպէս եւ
24 գԱստուածն Բան ընտանացեալ
25 եւ անկարի եւ մահկանացու մարդոյն, զաստուածային բնակութիւն փարթամացելոյն, որպէս եւ
26 իբր
27 յաղագս Սամուէլի
28 չի՞բ
29 Լ թագ. Լ 7
30 լսէ, եւ արհամարհիչն զձեզ զիս արհամարհե. եւ Ջորչափ
31 Ղ. Կ. Ժ 16
32 Մատթ. Ի 40
33 չի՞բ
34 զըստ
35 ձեռնարկեմք մեք
36 ի սրբոյ եւ Աստուածաշունչ Գրեցելոյն
37 ելով Աստուծոյն Բան
38 ըստ նշմարտութեան

իբր Աստուած, եւ զամենայն կարացեալ: 48 Եւ յատուկ իւր մարմնացելոյ Աստուածն¹ Բանի Հաւատամք գոլ եւ զաստուածավայելուչս² եւ զմարդկայինս, սակս ըստ մեզ տնաւրէնութեան. քանզի ըստ ըստ բնութեան է³ Աստուած եւ, մնացեալ միշտ Աստուած, եղեւ ըստ տնաւրէնութեանն⁴ մարդ, սակս մերոյ⁵ փրկութեան: 49 Քանզի ո՛չ ըստ բնութեան ունի Բանն⁶ Աստուծոյ մարմնաւորութիւն⁷, այլ տնաւրէնութեան, գերազբնութիւն⁸ գործեցելոյ Աստուծոյ⁹ ի Հասարակական եւ ի մարդկային մերմէ բնութենէս կամ գոյացութենէս: 50 Սակս որոյ ¹⁰Համաբան եւ Համասեռ մեզ ասի ¹¹ըստ տնաւրէնութեան Բանին, կամ զ՛ի կնոջէն ծնելութեան¹². այլ եւ ո՛չ բնութիւն եւ ո՛չ գոյացութիւն Հասարակականի ուրեմն¹³ մարդոյ ասացեալ էր¹⁴ երբէք, ¹⁵անկրական եւ Համասեռ մեզ ¹⁶մարմինն Աստուծոյ Բանի. ¹⁷զի ո՛չ ենթակայակցեաց ըստ ինքեան. քանզի ¹⁸ի պարառնութեան Բանին ո՛չ ենթակայութիւն ընկալաւ, այլ մարմին Քրիստոսի ասի եւ մարմին Աստուծոյն Բանի, եւ ¹⁹մարմինն կենագործիչ յամենեցունց ուղիղ²⁰ խորհիլ

սովորելոցն ասի, եւ Հաւատան²¹: 51 Քանզի եւ Քրիստոսի քահանայագործք ի ձեռն աստուածայնոյ²² խորհրդոցն այսպէս զնա քարոզեալ²³ սովորեցաք ²⁴ժողովրդոցն, եւ նոցա յառլսել մեզ զամէնն. եւ ո՛չ ոք երեւի ասացեալ զնա ի ժամանակի բաշխմանն այնորիկ մարմին Հասարակական մարդոյ, կամ բնութիւն մարդոյ, կամ գոյացութիւն մարդոյ. այլ մարմին Աստուծոյ²⁵ Բանի կենագործիչ զնա քարոզեմք, ²⁶ըստ Տեառնն վարդապետութեանն եւ առտաւութեանն:

52 Դադարեսցին այսուհետեւ զերկուս²⁷ բնութիւնս մեզ ²⁸ի սահմանս Հաւատոյ քարոզիչքն, իբր աւտարացեալք յուղիղ խորհիլ սովորելոցն. որպէս ուսուցին մեզ²⁹ ի սկզբանէ ³⁰իմքնատեսքն եւ սպասաւորքն եղելոյ Բանին, եւ յետ նոցայն ուղղափառ³¹ վարդապետք ³²եկեղեցւոյ եղեալքն:

53 ³³Նորին՝ ընդդէմ Լեւոնի, գլուխք ԽԲ. հեմգնելով յարիմեալ:

54 ա. Եւ ո՛չ է ասել զմի Քրիստոս երկուութիւն³⁴.

55 բ. Եւ ո՛չ երկախումք.

56 գ. Եւ ո՛չ երկաբոյս.

57 դ. Եւ ո՛չ կրկնապատիկ.

58 ե. Եւ ո՛չ երկակերտ.

59 զ. Եւ ո՛չ երկաբնութիւն.

1 Աստուծոյն
 2 զաստուածավայելուչսն
 3 եալ
 4 տնաւրէնութեան
 5 մերոյն
 6 Բան
 7 մարմնաւորութիւնն
 8 գեր գրնութիւնն
 9 յԱստուծոյ
 10 եւ հոմաբուն եւ հոմագոյ
 11 ըստ տնաւրէնութեանն Բանի
 12 ծնելութեան
 13 ուրումն
 14 է
 15 անկրական եւ հոմասեռն
 16 մարմին Աստուծոյն
 17 զի եւ ո՛չ ենթակացեաց
 18 ի պարառութեան Բանին գերակացութիւնն / յուսանցիւմ յոյութեան:
 19 մարմին կենագործիչ
 20 ուղիղս

21 հաւատանայ
 22 փոխատուութեան աստուածայնոց
 23 քարոզել
 24 ժողովրդոց նոցա եւս լսելով
 25 Աստուծոյն
 26 ըստ նորին Տեառն վարդապետութեան եւ առտուութեան
 27 գերկուսն
 28 ի սահման
 29 զմեզ
 30 իմքնատեսքն եւ սպասաւորքն եղեալք
 * ՏԷ՝Պ՝Կ՝Լ՝ 2 :
 31 ուղղափառք
 32 եկեղեցեաց եղեալք
 33 Տիմոթէոս, էջ 341
 34 երկու բնութիւն

60 է. Եւ ո՛չ երկատուութիւն¹ բնութեանց.

61 ը. Եւ ո՛չ ներկութիւնս առանձնացեալս.

62 թ. Եւ ո՛չ իւրաքանչիւր բնութիւնս.

63 ժ. Եւ ո՛չ երկուս գոյացութիւնս.

64 ժա. Եւ ո՛չ երկուս ենթակացութիւնս.

65 ժբ. Եւ ո՛չ երկուս առանձնաւորութիւնս.

66 ժգ. Եւ ո՛չ երկուս տեսակս.

67 ժդ. Եւ ո՛չ երկուս յատկութիւնս.

68 ժե. Եւ ո՛չ երկուս ներգործութիւնս.

69 ժզ. Եւ ո՛չ երկուս զանազանութիւնս.

70 ժէ. Եւ ո՛չ երկուս տարբերութիւնս.

71 ժը. Եւ ո՛չ երկուս զաւրութիւնս.

72 ժթ. Եւ ո՛չ երկուս ազդմունս.

73 ի. Եւ ո՛չ միւսութիւն յատկական զանհատանելի միութիւնն.

74 իա. Եւ ո՛չ այլ եւ այլ զանպարիմանալի միաւորութիւնն².

75 իբ. Եւ ո՛չ այլածին եւ այլազնեայ Աստուծոյ մարդ սրբեցեալ զՔրիստոս Աստուած:

76 իգ. Եւ ո՛չ ապականելի եւ անկատար զպատուական մարմինն Տեառն.

77 իդ. Եւ ո՛չ հասարակական մարդոյ զմարմինն տէրունւոյն:

78 իե. Եւ ո՛չ բնակութիւն ասել զմարդեղութիւնն³.

79 իզ. Եւ ո՛չ տուն կամ տաղաւար զմիաւորեալ իւր Տեառն զմարմինն.

80 իէ. Եւ ո՛չ աստուածազգեստ մարդ զմարմնացեալ Բանն Աստուած.

81 իը. Եւ ո՛չ ընտանեկան ունակութեամբ.

82 իթ. Եւ ո՛չ շարունակութեամբ.

83 լ. Եւ ո՛չ ունական արժանաւորութեամբ.

84 լա. Եւ ո՛չ յարակցութեամբ.

85 լբ. Եւ ո՛չ յարելութեամբ⁴ կամ մերձաւորութեամբ մարդոյ⁵ հասարակականի առ Աստուած Բան.

86 լգ. Եւ ո՛չ ըստ արժանաւորութեան որդուութեան⁶.

87 լդ. Եւ ո՛չ մարդ բացակատարեալ յարգանդի Կուսին եւ յետ այսորիկ յարակցեալ Աստուածուն Բանի.

88 լե. Եւ ո՛չ մարդածին շնորհագիւտ զԱստուածածինն Կոյս.

89 լզ. Եւ ո՛չ սոսկ մարդ զխաչեցեալն զՏէրն փառաց.

90 լէ. Եւ ո՛չ այլ ոմն զչարչարեալն.

91 լը. Եւ ո՛չ այլ ոմն զոչ չարչարեալն.

92 լթ. Եւ ո՛չ այլ ոմն էր մածուցեալ ի փայտին, իսկ այլոյ լեզուն խոստանալոյ ի դրախտն զմուտ աւագակին.

93 լս. Եւ ո՛չ դարձեալ, որպէս այսոքիկ ուրանան, զոյ զկենդանարարն զանապական մարմինն⁷ Աստուծոյ Բանին.

94 լա. Եւ ո՛չ ըստ մասին դնել Աստուած եւ մարդ՝ բաժանելով զտնաւրինականս եւ զաստուածայինն ճահագործութիւնս եւ սքանչելիսն:

95 լբ. Քանզի ո՛չ ասացաւ մեզ յԱստուածային Գրութենէ եւ ո՛չ ջի սուրբ հարցն՝ այս բնութեան այս ինչ եւ այն բնութեան այն ինչ, այլ միոյ Քրիստոսի ճշմարտի Աստուծոյ զամենայն համանգա-

1 երկատուութիւն
2 միաւորութիւն
3 զմարդեղութիւն

4 յարաբերութեամբ
5 մարմնոյ
6 որդութեան
7 մարմին
8 ի սրբոց

մայն՝ զաստուածավայելուչս եւ զտնաւրէնութեանն¹ Բանին առբաշխեն. քանզի իւր արար զմարդկայինսն: 96 Եւ ո՛չ որպէս սասցն հայհոյիչն Լեւոն, մինչդեռ երկախումբքն ²ընդ իրեարս է. ահա երկախումբքն ասել եւ³ ⁴ընդ իրեարս, եւ միւս ընդ միւսումն եւ երկաքանչիւրն եւ հաւասարութիւնն⁵ զերկուս նշանակէ, եւ ո՛չ զմի: 97 Եւ ո՛չ ոք իւր ասի առգոյ, եւ ո՛չ ընդ իրեարս կարի ասել եւ ի վերայ միայնոյն եւ անբաժանելի Քրիստոսի. քանզի ո՛չ ի վերայ դիմի եւ ո՛չ ի վերայ միաւորութեան ⁶զերկաքանչիւր բնութիւն ասել կարելի է. քանզի երկաքանչիւր բնութիւն ասացեալ՝ երկուս յայտնապէս դէմս նշանակէ⁷: 98 Իսկ միաւորութիւն ո՛չ եւս կարի ասել իւրկաքանչիւրսն⁸. զի ամենայն ի միոյ մի բնութիւն ասի. քանզի անկարելի է համանգամայն պահել զմիաւորութիւն եւ զերկաքանչիւրսն դիտել. քանզի ո՛չ ոք մի կամեցեալ ցուցանել՝ ասէ. Սա, որ զայս ինչ պարտ էր կրել, եւ նա, զոր վայել էր փառաւորել եւ երկրպագել. քանզի ի ձեռն՝ սա եւ սա եւ զոր եւ զոր, եւ զայս անուն եւ զայն անուն, եւ սոցա եւ սորա եւ նորա, եւ այսորիկ եւ այնորիկ, եւ ոմն եւ ոմն, եւ միւս միւսումն⁹ յարակցեալ: 99 Ահա երկու յաւելիւք եւ երկակս նշանակեալ զեկուցանէ մեզ Լեւոն ըստ սովորութեան իւրոյ հայհոյութեանն:

1 10Ի թղթոյն Զեմոնի բարեպաշտ եւ ուղղափառ թագաւորի, որ կոչի Հե-

1 գտնաւրէնութեան
 2 ընդ իրարս
 3 չիբ
 4 ընդ իրարս
 5 հաւասարութիւն
 6 վասն երկաքանչիւր բնութեան
 7 Լուսանցիում՝ ի մի՛տ առ, երկաքանչիւր
 8 երկաքանչիւրն
 9 եւ միւսումն
 10 Տե՛ս ԳԹ, էջ 270:

նատիկոն, այսինքն միաւորիչ, որ է յետ Լ. ամի Քաղկեդոնի ժողովոյն:

2 Յաղագս այսորիկ¹¹ ծանուցանել ձեզ փութացաք, զի ամենայն ուրեք ուղղափառ եւ սուրբ եկեղեցւոյ միաւորութիւն¹² եղիցի, եւ¹³ այլ հաւատ, կամ ուսումն, կամ սահման հաւատոյ կամ ¹⁴հաւատ, քան զասացեալսն ¹⁵յառաջագոյն ի սուրբ հարցն ՅԺԸ.իցն, զոր հաստատեցին եւ¹⁶ ՃԾ. սուրբ հարքն ¹⁷ժողովեալք ի Կոստանդնուպոլիս, ո՛չ ունէաք եւ ո՛չ ունիմք, եւ ո՛չ կալցուք եւ ո՛չ թե ունիցի ոք գիտեմք¹⁸, եւ որ¹⁹ ունիցի ոք՝ աւտար զնա ի մէնջ համարիմք, եւ այսու միայն քաջալերիմք: 3 Յառաջագոյն²⁰ ասացաք եւ այսու հաւամարիմք] կենդանի պահել զմեր թագաւորութիւնս եւ միաբան զամենայն ժողովուրդս, որ փրկական մկրտութեանն արժանի²¹ եղեն՝ զմի եւ զնոյն ընկալեալ, ²²նովին լուսաւորեալ, ²³զորոյ եւ զհետ չողան ամենայն սուրբ հարքն, մանաւանդ որ յեփեսոս ժողովեցան, որք լուծին եւ ի բաց մերժեցին²⁴ ²⁵զանաւրէնն Նստոր եւ որք յետ նորայն զնորայն ²⁶խորհէին եւ ունէին: 4 Զոր եւ մեք²⁷ զՆեստորիոս՝

11 այսոցիկ
 12 միաբանութիւն
 13 բայց
 14 հաւատոց, քան զասացեալս
 15 յառաջագոյն սուրբ հաւատն ՅԺԸ. սուրբ հարանցն
 16 չիբ
 17 ժողովեալք յառաջագոյն յիշեցեալն, որ ի Կոստանդնուպոլիս
 18 եւ գիտեմք
 19 թէ
 20 որպէս յառաջագոյն
 21 արժանաւորի
 22 նովին լուսաւորին մանաւանդ որք
 23 ժողովեցան: Որոց եւ զհետ իսկ չողան ամենայն սուրբ հարքն, որք լուծին
 24 հերքեցին
 25 գտնաւրէն Նեստորիոս
 26 խորհին եւ ունին
 27 մեր

¹միանգամայն հակառակասիրի մտածել, եւ որք զնորայն² խորհին եւ մտաբերեն՝ նզովեմք, ընկալեալք զԲժ. գլուխն⁴, զասացեալսն յաստուածասիրէն Կիւրղէ, այն որ եղեւ գլուխ ⁵եպիսկոպոսացն եւ սրբոյ եկեղեցւոյն Աղեքսանդրեայ⁶: 5 Քանզի հաւատամք, եթե Միածինն Որդի Աստուծոյ Աստուած էր⁸ ճշմարտութեամբ՝ այն, որ մարմնացաւ, Տէր մեր Յիսուս Քրիստոս. այն, որ ի բնութենէ Հաւր յաստուածութեանն⁹ իւրում, եւ ի բնութենէ մերմէ եղեւ մարդկութիւնն¹⁰ իւր. այն, որ էջն¹¹ եւ ¹²մարմնացաւ ի Հոգւոյն Սրբոյ եւ ի Կուսէն Մարիամայ Աստուածածնէն: 6 Քանզի մի է Որդի, եւ ո՛չ երկու խոստովանիմք. զի մի է Միածին Որդին Աստուծոյ, եւ ¹³նորա են սքանչելագործութիւնքն եւ չարչարանքն, զոր կամաւորութեամբ կրեաց մարմնով իւրով: 7 Այլ զայնոսիկ, որ բաժանենն եւ¹⁴ փոփոխելի ասեն կամ այլայլելի՝ զայնպիսիսն ո՛չ ընդունիմք. քանզի ճշմարիտ մարմնաւորութիւնն¹⁵ անապական եւ առանց մեղաց, որ յԱստուածածնէն եղեւ, յաւելուած Որդւոյ ո՛չ արար. այլ¹⁶ Երրորդութիւնն Երրորդութիւն՝ մինչ կամեցան¹⁷ եւ մարդացաւ մի յԵրրորդութենէն, Բանն Աստուած:

1 միանգամայն ընդ եւտիֆեայ հակառակս իրե-
րաց մտածեալս, եւ որք զնոցայն
2 նորա
3 մտածեն եւ կամ մտածեսցեն
4 գլուխսն
5 եպիսկոպոսաց սրբոյ
6 Աղեքսանդրացւոց
7 Միածին Որդին
8 է
9 յաստուածութեան
10 մարդկութիւն
11 էջ
12 մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ Աս-
տուածածնէն Հոգւովն Սրբով
13 նորա է սքանչելագործ գաւրութիւնն
14 եւ կամ
15 մարմնաւորութիւն
16 այլ եկաց մնաց
17 կամեցաւ

8 ¹⁸Արդ, զիտացէ՛ք այսուհետեւ, զի ո՛չ սուրբ եկեղեցիք, որ են յամենայն կողմանս, եւ ո՛չ այնք, որ պաշտենն զնոսս՝ աստուածասէր քահանայք եւ թագաւորութիւնս մեր, ա՛յլ հաւատ կամ ա՛յլ սահման հաւատոյ, բայց այն, որ վերագոյն ասացաւ, ո՛չ ընկալաք եւ ո՛չ ընդունիմք: 9 Այսուհետեւ եկա՛յք ամենեքեան անխտրութեամբ ի միաբանութիւն հաւատոյ: 10 Այլ զայդ ամենայն, զոր զրեցաքդ առ ձեզ, ո՛չ եթե այնք որ զհաւատ նորոգեմք, այլ որպէս զայսոսիկ, որ խնդրուածս մատուցանեմք: 11 Բայց զայնոսիկ, որ այլ ինչ խորհեցան եւ կամ խորհիցին այժմ եւ կամ երբ եւ իցէ, կամ ի Քաղկեդոնի, եւ կամ յոր եւ իցէ յայլ ժողով՝ զնոսս նզովեմք, մանաւանդ զայնոսիկ, որ կոչեցան Նեստորիանոսք եւ Եւտիքոսք, եւ որք զնոցայն խորհեցան կամ խորհին:

12 ¹⁹Ի թղթոյն Անաստասայ բարեպաշտ թագաւորի ընդդէմ հերձուածողաց, որ էր յետ [Խա?] ամի Քաղկեդոնի ժողովոյն:

13 Մի է սահման ²⁰հաւատոյ, զոր ընդունիմք՝ ՅժԸ. սրբոց հարցն, որք ի Նիկիա ժողովեցան՝ այն, որ ցուցանէ, եթե²¹ ²²մի է ի Սրբոյ Երրորդութենէն Տէր²³ մեր Յիսուս Քրիստոս՝ Բանն Աստուծոյ, այն որ մարմնացաւ²⁴ ի սուրբ եւ յԱստուածածին Կուսէն Մարիամայ, եւ մարդացաւ²⁵: 14 ²⁶Չնոյն սահման կալան ճԾ. սուրբ հարքն, որ ի Կոստանդնուպաւլիս ժողովեցան վասն Սրբոյ Հոգւոյն: 15 Ըստ նմին եւ երանելի ժողովն, որ յԵփեսոս ժողովե-

18 Այս հատուածը մինչեւ վերջ պահատու՛մ է ԳԹ-
ում:
19 Տե՛ս ԳԹ, էջ 144-145:
20 հաւատոց, գոր ունիմք, ՅժԸ. սուրբ հարցն
21 մեզ, թէ
22 մի ի սուրբ
23 էր Տէր
24 մարմնացաւն
25 մարդ եղեւ
26 Զայս սահման ընկալան եւ սուրբ հարքն ճԾ.ԲՆ

ցան եւ նզովեցին զՆեստոր¹ հերձուածաւղ եւ զամենայն, որ ըստ նմա խորհին եւ հաւատան: 16 Որպէս² թուղթն, որ կոչի Հենատիկոն՝ Ջենոնի ուղղափառ թագաւորի, նոյնպէս եւ թուղթն Յովհաննու եպիսկոպոսապետին ³Աղեքսանդրի՝ այն, որ ցուցանէ այսպէս, յորում նզովէ ⁴գտաւմարն Լեւոնի եւ ոյք անցին ըստ նոյն սահման եւ երկուս բնութիւնս զկնի միաւորութեանն սահմանեցին ի վերայ միոյն⁵ Քրիստոսի: 17 Մեք⁶, որպէս ընկալաք ի ⁷սուրբ հարցն՝ ո՛չ ասեմք ⁸երկուս բնութիւնս, այլ մի բնութիւն, որ մարմնացաւ՝ զԱստուած⁹ Բանն խոստովանիմք, եւ նզովեմք զժողովն Քաղկեդոնի. ընդ¹⁰ նմին եւ զԼեւոն եւ ¹¹գտաւմարն նորին եւ զայնոսիկ, ¹²որք ասեն, զՔրիստոս երկուս որդիս՝ մինն, որ յառաջ քան զժամանակս, եւ միւսն, որ ի վերջինս ժամանակի: 18 Եւ որք ասեն, զկնի ¹³խոստովանելոյն միաւորութիւն՝ երկուս բնութիւնս եւ երկուս ղէմս, կամ¹⁴ երկուս աւրինակս, կամ երկուս յատկութիւնս եւ¹⁵ զանագանութիւնս, կամ¹⁶ երկաքանչիւր բնութեան գործ¹⁷ խոտեմք եւ նզովեմք. վասն զի ընդդէմ երանելոյն Կիւրղի ԲԺ. գլխոցն գտանի¹⁸:

1 ¹⁹Սրբոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի եւ սուրբ վարդապետին Մեսրոբայ՝ ի թղթոյն, որ առ երանելին Պրոկղ պատասխանի:

2 Այլ մեք հաւատամք ի մի Աստուած՝ Հայր, Արարիչ²⁰ երկնից եւ երկրի՝ ²¹երեւելեաց եւ աներեւութից: 3 Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ ի Միածին Որդին Աստուծոյ, ²²այսինքն՝ էութիւն յէութենէ, էութիւն ծնեալ, որով ամենայն եղեւ. Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ՝ ծնեալ, եւ ո՛չ արարեալ, իսկակից Հաւր. որ վասն մեր²³ էջ եւ մարմնացաւ, յանձն առ զչարչարանս, թաղեցաւ²⁴, յարեաւ յերրորդ²⁵ աւուր, ել²⁶ յերկինս եւ գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս: 4 ²⁷Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին: 5 Իսկ որք ասենն՝ էր երբեմն, ²⁸զի ո՛չ էր, եւ մինչչեւ ծնեալ էր՝ չէր, եւ ասեն՝ ի չէութենէ եղեւ եւ յայլմէ իմեմնէ եւ զաւրութենէ, եւ կամ եղծանելով եւ փոփոխելով, զայնպիսիսն նզովեմք: 6 Ձի միշտ Հայր, միշտ Որդի, միշտ ²⁹Հոգին Սուրբ: 7 Հոգի Աստուծոյ Հոգի Սուրբ՝ կատարեալ, բարեխաւս, անստեղծ, անեղծ, որ խոստացաւ³⁰ աւրինաւք եւ մարգարէիւք եւ առաքելովք. որ էջ Յորդանան³¹: 8 Եւ վասն մարմնագգեցութեան Որդւոյն³² այսպէս հաւատամք, զի էառ³³ յանձն լինել մարդ կատարեալ՝ յԱստուածածին Կուսէն³⁴

1 զՆեստորիոս
 2 որպէս եւ
 3 Աղեքսանդրի՝ որ ցուցանեն
 4 գտոււմարն Լեւոնի եւ գժողովն Քաղկեդովնի, որ վասն
 5 եւ մեք
 6 մշմարիտ հարցն
 7 բայց յերկուց մի
 8 Աստուածն
 9 եւ ընդ
 10 գտոււմարն նորա
 11 որ երկուս Քրիստոս եւ երկուս որդիս ասեն, մի յառաջ քան գլխաւորեանս եւ միւս՝ որ ի վերջին ժամանակս
 12 խոստովանելոյ գլխաւորութիւնն
 13 եւ
 14 եւ երկուս
 15 եւ կամ
 16 գործք
 17 գտանիս

19 Տե՛ս ԳԹ, էջ 41-48:
 20 ամենակալ արարիչ
 21 երեւելի եւ աներեւելի արարածոց
 22 այսինքն է
 23 մեր մարդկութեան
 24 չիք
 25 յերիւր
 26 եւ ել
 27 եւ ի Սուրբ Հոգին հաւատամք
 28 զի չէր
 29 Սուրբ Հոգին
 30 խաւսեցաւ
 31 ի Յորդանան
 32 Որդոյ
 33 առ
 34 չիք

Մարիամայ, Սրբով Հոգևով՝ առեալ շունչ եւ մարմին, ճշմարտիւ եւ ո՛չ կարծեալք¹:
 9 Զի ²այսպէս եկն ի կատարել փրկել զմեր մարդկութիւնս, եւ ճշմարտիւ ³չարչարեցաւ. ո՛չ թե ինքն պարտ էր չարչարանայ, այլ վասն մեր ⁴յանձն էառ զչարչարանս, եւ ⁵յերրորդ առուր յարեալ, եւ յերկինս համբարձաւ եւ ընդ աջմէ Հաւր նստաւ, եւ գալոց է դատել զկենդանիս եւ զմեռեալս:

1 6Ի թղթոյն եզնկայ Կողբացոյ թարգմանչի, գոր գրեաց ի Կոստանդնուպոլիս՝ առ երանելիմ Մաշդոց վարդապետ, յետ առաջնոյ ժողովոյն Եփեսոսի, յորում լուծին ի պատուոյ զՆստոր Կոստանդնուպոլիսի եպիսկոպոս:

2 Եւ վասն Հաստատութեան եկեղեցեայց⁷, զոր կարծեաց յարուցանել⁸ հողմ մոլորութեան եւ⁹ շարժել՝ սուրբ ¹⁰աղաթիւք ձեր դադարեաց, եւ ի միաբանութիւն եկին ամենայն եպիսկոպոսք Հոռոմոց՝ ունել Հաստատուն գառաջին երեքհարիւրոցն հաւատ¹¹, եւ նզովեցին, զի մի ոք իշխեսցէ նորած¹² ինչ եւ աւտարաւտի հաւատալ¹³, այլ ¹⁴ի սորին վերայ շինել եւ զնոյն ուսուցանել. խոստովանել զՔրիստոս Աստուած ճշմարիտ եւ¹⁵ Որդի Աստուծոյ եւ Միածին՝

ծնեալ ի Հաւրէ յառաջ ¹⁶քան զյաւիտեանս եւ Տէր արարիչ ¹⁷ամենայն արարածոց, եւ զնոյն Բանն Աստուած ¹⁸ի վաղջան ժամանակաց զգեցեալ մարմին եւ¹⁹ եղեալ մարդ՝²⁰ առանց շրջելոյ եւ ²¹անկանելոյ յիւր աստուածական բնութենէն, եւ ծնեալ ի սուրբ Կուսէն, Աստուած՝ ըստ մարմնաւոր ծննդեանն մարդ կատարեալ, եւ կոչի եւ է Կոյսն Տիրածին եւ Աստուածածին, ²²եւ ծնեալն Աստուած եւ մարդ կատարեալ:

1 Երանելոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի՝ ի հակաճանութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց:

2 Քանզի ՅԺԸ. ի Նիկիայ գումարեալք ի քակտումն արիանոսացն ո՛չ կալան փոյթ երկու բնութեանց առնել ընտրութիւն գանազանութեան, այլ ըստ վիրաց վիրաւորեցելոց բարբառեալ՝ վաղվաղակի կտրելով զարմատ ժահահոտ փտութեանն, մի բնութիւն ասացին, նպատակ ուղղափառութեան կանգնելով յաղթութիւն յերեսս լրբենի լկտողաց, որք ուրացան զՈրդի յէութենէ Հաւր՝ յապականութիւն եւ յաղքատութիւն իջուցին տաժանեալք: 3 Է նոյն բնութիւն Հաւր, որով ամենայն եղեւ, եւ այս առաւել իմն դիպողագոյն, զի բնութիւն Բանին աստուածութիւնն է, եւ զի մի է բնութիւն Բանին՝ դաւանելի է: 4 Քանզի չէ ոք ի Սուրբ Երրորդութեանն յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ. մինն նետիւ երեքսայրեան սլաքաւորաւ սպանին զթշնամին արդարութեան՝ աւետարանելով զյաղ-

1 կեղծեալք
 2 այսպէս եւ կատարեաց
 3 չարչարանաց, զի ազատ է աստուածութիւնն ի չարչարանաց
 4 ետո յանձն
 5 խաչեցաւ եւ թաղեցաւ եւ յերիր
 6 Հմմտ. ԳԹ, էջ 30-40. Թուղթ Պրոկոպեայ եպիսկոպոսի առ սուրբն Սահակ հայրապետ Հայոց եւ առ սուրբն Մածոյց:
 7 եկեղեցեայց
 8 յանկարծ յարոյց
 9 չիք
 10 աղաթից քոց տեառն սրբութեան
 11 հաւատս
 12 նորածին
 13 հաւատս
 14 ի նորին
 15 չիք

16 քան զամենայն արարածս
 17 ամենայնի
 18 ի վախճան
 19 չիք
 20 վասն մեր մարդ
 21 անկանելոյ եւ խախտելոյ յիւրոյ աստուածային ինքնութենէն
 22 եւ կատարեալն Աստուած ասի մարդ կատարեալ

Թուփիւնն հանդերձ հրաշալի տնաւրէնութեանն կրիւք: 5 Իջեալ, ասէ, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ՝ ի սուրբ Կուսէն: 6 Դարձեալ աստանաւր զիջանելն ոմանք կերպարանաւք, եւ ո՛չ ճշմարտութեամբ՝ վարկանին, զի տեղաց ի տեղիս փաստաբանելով փոփոխումն, հաճոյութեամբ իմն եւ կամաւք՝ զխոնարհմանն տայ զաւրինակ, եւ ո՛չ գիտեն, թե որով զայլսն ասիցեն, ինքեանք մարմին նովիմք, յայտ առնելով, եթե միով վայրի բովանդակին: 7 Եւ վասն այնորիկ զայլսն դատապարտեն՝ հայհոյիչս գոլով ամենայնի, եւ զայն ո՛չ իմանան, թե տարրական նիւթեղինաց այնպիսի կիրք ուրեմն լինել եւ ի հեռաձիգս ակամաւ միայն մատչիլ ի հաճոյութիւն ունիլ անարդիւնաւոր, զոր ո՛չ բաւէ բոլորն աւարտել: 8 Իսկ անբովանդակելի էութեանն ո՞ կարէ առնել որոշումն վայրաւք զանագանելովք¹. յայտ է, եթե ամբարիշտն: 9 Ո՛չ ապա՛մէն գերկիմս եւ գերկիր ես լնում^ա, ասէ Տէր. եւ՝ երկիմք աթոռ իմ եմ եւ երկիրս պատուանդան է ոտից իմոց^բ: 10 Եւ հեզն Դաւիթ բողոք բարձեալ յոյժ յանդգնագոյն գոչէ. Մի՛ մոլորիմ, ասէ, Աստուած մեր յերկիմս եւ յերկրի եւ ի ծովս եւ յամենայն խորս^գ. այս իսկ է Ամենակալն: 11 Ապա, եթե անկարելի թուի գոլ բնութեամբ մարմնանալն եւ ընդհանուր լինելն՝ գիտասցէ, զի եւ հաճութիւնն ի հաճելումն աւարտի, ո՛չ եւս ուրեք բաւելով:

12 Բայց ճշմարիտ քրիստոնէին ո՛չ է պարտ ընդ այնպիսի խոհերս դեգերելով թաւալիլ, քանզի մահ գործէ, եւ որք ժպրհեցան քննել զխորս Աստուծոյ՝ իսկապէս շահեցան զսատակումն. այլ հաւատալ մարմնացելումն Բանին Աստուծոյ եւ յա-

ւէտ զարմացմամբ փառաւորել՝ որ զծառայի կերպարանս առնելով երեւեցաւ, եւ է ի վեր քան զհրեշտակս խոնարհութիւնն: 13 Այլ Բանն յաշխարհի էր, որպէս եւ աւետարանագիրն ասէ, եւ աշխարհս նովաւ եղեւ^դ, եւ որպէս էրն՝ է միշտ ծածկատեսն, միայն յայտնի էակն. աւետաւոր պարզեւացն եւ մարգարէութեանցն յայտնիս զհետ երթիցուք, եւ մի՛ բնութեամբք դուպար² եղեալ, զանճառելին բացասելով՝ չարաշար աւցտիցիմք:

14 Իսկ արդ, թե չէին մոլեգնեալ դասք հերձուածողացն, որք յառաքելոցն ընկալան զքարոզութիւնն, արդեւք չէ՞ին քրիստոնեայք. քանզի բնութեանցն անուն եւ յակաջալուրս անգամ ձեր լեալ, այլ նորին հակառակն. Կեանքն յայտնեցան, ասէ, եւ տեսա՛մ եւ վկայեմք. Բանգի որ էրն առ Հաւր եւ երեւեցաւ մեզ^ե: 15 Ո՛վ սքանչելի նպատակին, որ առաւել իմն ուշմնագոյնս տայ ընթանալ ի կէտ կոչման նորա. զի որք զմարմնոյն տեսանէին զկերպարանս, որպէս էր իսկ նշմարտիւ եղեալն մարդ, որդի Յովսեփու կոչէին, այլ եւ Սամարացի եւ հայեղիչ^զ իսկ զիմանալին ունաւղք զհոգեւորական աչս՝ Լոյս փառաց եւ նկարագիր էուրթեանն անսկզբնականին Հաւրէ խոստովանէին. քանզի լուան ի կենսատու Փրկչէն եւ հաւատացին, եթե՛՛ ես ի Հայր եւ Հայր յիս է^է: 16 Ապա զի՞նչ ասէ բնութեանցն խնդրաւղ, որ քրիստոնեայ զինքն անուանէ. զո՞ր բնութեան տեսին աշակերտքն՝ զաստուածութեանն, եթե զմարմնոյն. յայտ է, զի զմարմինն տեսին. այլ թեպէտ բիւր անգամ կամեցան ուրանալ, գիրն բողոք բարձեալ աղաղակէ. Շաւշափեցէ՛մ զիս եւ տեսէ՛մ, զի ոգի մարմին եւ

1 Այստեղ եւս ձեռագրի թերթերը խտնուած են:
 ա Երեմ. ԻԳ. 24
 բ Ե. Կ. Գ. 1, Գ. Գ. Է. 49
 գ Տե՛՛ Խ. Խ. Ը. 1, Գ. Գ. 3:

դ Յ. Գ. Ը. 10
 է Պետր Է կարդալ հարկաւ՝ գուպար
 ե Ը. Յ. Գ. Ը. 2
 Ղ Հ. Գ. Գ. Յ. Գ. Գ. 42, Ը. 48, Ժ. 36:
 զ Տե՛՛ Ե. Գ. Ը. 3:
 ի Յ. Գ. Ժ. Գ. 10-11

նսկերս ո՛չ ունի, եւ զիս տեսանէք, զի ունիս^ա. զոր էառն ի զաւակէ Դաւթի: 17 Քանզի Հայէին ի նա, որպէս ի մի ոք ի մարդկանէ. այլ զի Բանն միացեալ էր ի մարմնի, բառնա ի բաց զխտրումն անջրպետութեանն. քանզի ո՛չ ասաց՝ որ ետես զաստուածութիւն բնութեանն կամ զմարմնոյն, այլ անորոշաբար ասէ՝ զիս: 18 Եւ դարձեալ ասէ եթե՛ Ո՛չ ոք յերկիցս, եթե ո՛չ էջն յերկնից՝ Որդի մարդոյ, որ էրն յերկիցս^բ. ո՞ւր էրն Որդի Մարդոյ յերկինս, զորմէ իջանել ասէ, աղէ՛ ցուցցեն. զի թե երկնուստ էր մարմինն, ո՛չ յորջորջէր Որդի Մարդոյ, եւ եթե յերկրէ եւ ի զաւակէ Աբրահամու, որպէս եւ խոստովանիմք իսկ պանծալով՝ զհա՞րդ էր յերկինս. եթե ուղղակի իմասցուք՝ յաղագս անբաժանելի միաւորութեանն: 19 Արդ, եթե ստուգիւ Հաւատամք ասացելումն Փրկչին եւ Տեսառն՝ ի բաց թողցուք զխտրութեանն բաժանմունս, զի մի՛ նմանել լիցուք փարիսեցւոցն, եթե՛ Դու մարդ ես, եւ զանձն քո Աստուած անես^գ:

1 1Երանելոյն Բարգեմի Հայոց կաթուղիկոսի, որ էր յաւուրս Անաստասայ ուղղափառ թագաւորի՝ ի թղթոյն առաջնոյ, զոր գրեաց ի Պարսս ուղղափառն, հանդերձ աթոռակցաւքն ի գաւառէ եպիսկոպոսաւք:

2 Արդ, Հարկաւոր է մեզ զբոլորումն սրբոյ Հաւատոցն², զոր երանելի ³Հարքն մեր, որ ի Նիկիայ ժողովեցանն՝ ՅԺԸ. եպիսկոպոսացն ընկալեալ՝ բարեպաշտութեամբ⁴ եւ առանց գայթակղութեան զսոյն եւ աւետարանել. ընդ որս պատահեաց ըստ

աստուածային շնորհին⁵ ի սուրբ ժողովին երանելին Հայրապետն մեր Ռատակէս⁶ եւ ընկալեալ ի սուրբ Հարցն մեր⁷ բոլորովմբ զՀաւատն ճշմարտութեանն⁸ երեր յաշխարհս⁹: 3 Ձոր առեալ ¹⁰ի նմանէ Հայոց՝ նովին¹¹ Հաւատովք լուսաւորեցաք ¹²եւ յաջորդեցաք ի նմանէ մինչեւ ցայժմ ձեռնադրութիւն ¹³քահանայութեան աշխարհի Հայոց, եւ կամք Հաստատուն ի նմին, ¹⁴զոր ընկալաքն եւ ասեմք.

4 Հաւատամք¹⁵ ի մի Աստուած, Հայր ամենակալ, ամենեցուն երեւելեաց եւ աներեւութից արարիչ: 5 Եւ ի¹⁶ մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ, ծնեալ ի Հաւրէ, Միածին, այսինքն¹⁷ ի գոյութենէ Հաւր. Աստուած յԱստուծոյ եւ լոյս ի լուսոյ, ¹⁸Աստուած՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ եւ ո՛չ արարեալ. այլ նոյն էութիւն Հաւր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ յերկրի: 6 Որ վասն մեր մարդկան, որ եւ վասն մերոյ փրկութեան՝ ¹⁹իջեալ, մարմնացաւ եւ մարդացաւ ի սուրբ Կոսէն Մարիամու, չարչարեցաւ ²⁰վասն մերոյ փրկութեան, մեռաւ եւ յերրորդ աւուր յարեաւ. ել յերկինս եւ ²¹նստաւ ընդ աջմէ Հաւր, եւ ²² ²³գալոց է դատել զկենդանիս եւ զմեռեալս:

5 շնորհաց
6 Առիստակէս
7 չի՛ք
8 ճշմարտութեան
9 յաշխարհս ճշմարտութեամբ
10 ի նմանէն
11 եւ նովին
12 եւ ի նմանէն յաջորդեցաւ
13 քահանայապետութեան աշխարհիս
14 չի՛ք զոր ընկալաքն եւ ասեմք
15 եւ այսպէս հաւատամք
16 չի՛ք
17 այսինքն է
18 Աստուած ճշմարիտ
19 էջ եւ մարմնացաւ
20 վասն մեղաց մերոց
21 չի՛ք
22 չի՛ք
23 գայ

ա Գ.՝ Կ. ԻԳ. 39
բ Յ.՝ Կ. Գ. 13
գ Յ.՝ Կ. Ժ. 33
1 ԳԹ, էջ 147-156
2 հաւատոյն
3 հարցն ի Նիկիեա ժողովեցելոցն
4 պարկեշտութեամբ

7 1Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն: 8 Եւ վասն այնոցիկ, 2որք ասենն՝ էր երբեմն, զի 3ո՛չ էր, եւ մինչչեւ ծնեալն էր՝ 4ո՛չ էր, եւ թէ5 յոչնչէ եղեւ, 6կամ թէ յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ համարին, թէ իցէ, կամ փոփոխելի, կամ 7անցանելի, զայնպիսիս նզովէ կաթողիկէ եւ8 առաքելական եկեղեցի:

9 Այսպէս հաւատամք, որպէս մկրտեցաքն9 եւ 10սուրբ հարքն կանոնեցին. եւ այլ սահման 11արտաքոյ կանոնին ո՛չ է, եւ ո՛չ ընկալաք եւ ո՛չ ընդունիմք: 10 Քանզի եւ վարդապետն 12եկեղեցոյ Պաւղոս յոյժ զգուշացուցանէ զմեզ յերկրաւոր 13իմաստից մարդկանէ: 11 Բազում են վկայութիւն14 սուրբ Գրոց, յոլովագոյն եւ 15սուրբ հարց ուղղափառաց 16վարդապետութիւնք լուսափայլք, որով լուսաւորեալքն17 լուսաւորին եւ 18զգեանու մխիթարութիւնն վատեալք հոգևով ի սէր եւ 19յոյս եւ հաւատ սրբոյ Երրորդութեանն հիմնաւորեալք20, որ կենդանութիւն է եւ պաշտպանութիւն հոգևոյ եւ մարմնոյ:

12 Զայս հաւատ Հոռոմք եւ Հայք եւ Վիրք եւ Աղուանք ունին21, 22եւ փախչիմք

ուրացեալ ի Քաղկեդոնէ: 13 23Զի Քաղկեդոնի ստութիւնն զՆստորի եւ զնոցունց նմանեացն, զոր գիտեմք կեղծաւորութեամբ փախուցեալք24 ի հեթանոսութենէ եւ ի հրէական մոլորութենէ. զի25 եւ զնոյն խոստովանին հեթանոսութիւնն26, միանգամայն եւ հրեութիւնն27 պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղաց, որ է տգիտաց, վրիպեցուցանելով ի ճանապարհէ զկոյրն28, 29որով սա հիմնեցաւ ի Հոգևոյն Սրբոյ մարգարէիւն՝ զհատուցումն30 նոցին: 14 Քանզի31 ո՛չ խոստովանելով զՈրդի՝ 32ուրանան զոր ասաց ուրանալ եւ ինքն Քրիստոս զնոսա առաջի Հաւրն33. պատուիրեաց34 եւ մեզ հրաժարել ամենեւիմք35 ի նոցանէ եւ ատել, մինչեւ բանիւ 36անգամ ո՛չ տալ ողջոյն նոցա: 15 Արդ, զի եւս37 յայտնագոյն եղիցի 38խոստովանութիւն մերոյ բանի, որպէս հաւատամք՝ 39ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, յորոց վերայ չինեալ եւ հաստատեալ է սուրբ եկեղեցի.

16 Խոստովանիմք զՀայր եւ 40զՈրդին՝ ծնեալ ի Հաւրէ յառաջ քան զյաւիտեանս,

1 չի՛ք Հաւատամք ... եւ ի կատարեալն:
 2 ոյ՛ք ասեն
 3 չէր
 4 չէր
 5 զի
 6 կամ իբրեւ յայլմէ էութենէ
 7 անցանելի գորդին Աստուծոյ, գնոսա նզովէ
 8 չի՛ք
 9 մկրտեցաք
 10 հարքն
 11 այսորիկ կանոն
 12 երկնային Սաւղոս
 13 իմաստից մարդկան եւ ի մոլար խաբութենէ
 14 վկայութիւն
 15 սրբոց
 16 լուսափայլ վարդապետութիւն
 17 լուսաւորեալք
 18 զգեանուն մխիթարութիւն վատեալքն
 19 ի յոյս եւ ի հաւատս
 20 հիմնաւորեալ
 21 ունիմք

22 եւ փախչիմք. ու շարունակութիւնը Բարգէն կաթողիկոսի երկրորդ թղթից է՝ անմիջապէս կցուած Ա. թղթի այս նախորդ հատուածին. տե՛ս ԳԹ, էջ 56:
 23 ուրացեալ գ՛ի Քաղկեդոնին ստութիւն Նեստորի եւ այլոցն նմանից
 24 փախուցեալ
 25 չի՛ք
 26 զհեթանոսութիւն
 27 զհրեութիւն
 28 զկոյրս
 29 որով սահմանեցաւ ի Սրբոյ Հոգւոյն
 30 հատուցումն
 31 Սորանից առաջ մի ընդարձակ հատուած բաց է բողոքած, եւ այսպէս շարունակուիմ է էջ 48-51:
 32 ուրանան եւ զՀայր
 33 Հաւր
 34 եւ պատուիրեաց
 35 ամենեւիմ
 36 անգամ գողջոյն
 37 եւ
 38 խոստովանութեանս մերոյ բան
 39 մե՛ք Հայր ի Հայր
 40 գորդի զմեալն

անսկիզբն, մարմնացեալ ի սրբոյ Կուսէն Մարիամայ՝ ի փրկութիւնն արարածոց, անքննելի, անարատ ծննդեան աւրինակաւ՝ կոյս ¹մնացեալ մայրն. եւ ի Սուրբ ²Հոգին՝ էակից եւ փառակից Հաւր Որդոյն. Աստուած զՀայր, Աստուած զՈրդի, Աստուած ³զՀոգին Սուրբ, յոր մկրտիմք, ո՛չ եւ ⁴հրէքար պակասեցուցանեմք, եւ ո՛չ նուազ եւ առաւել քան զմիմեանս, այլ երկրպագեմք զերիսն ի միութեան՝ փառաւորելով եւ ⁵զՄինն յերրորդութեանն:

1 ⁶Երանելոյն Ներսիսի Հայոց կաթողիկոսի՝ ի պատասխանոյ թղթոյն, որ ի Միջագետս Ասորոց. որով ձեռնադրեցաւ Արդիշոյ եպիսկոպոս Ասորոց ի Ներսիսէ Հայոց կաթողիկոսէ:

2 ⁷Խոստովանիմք եւ հաւատամք իսկապէս զմարդանալն կատարելապէս ամենայնիւ՝ զկաթնաբուծն ⁷լինելն, զանանիւն, զչարհարանս ⁸ ի վերայ սրբոյ խաչին, զմահն, զթաղումն, զերեքաւրեա յարութիւնն, որպէս կամեցաւ աստուածաբար. նովին ⁹մարմնովն զփառաւք համբարձումն, զնստիլն ընդ աջմէ Հաւր. յաղագս ամենայն տիեզերաց փրկութիւնն, զգալոցն ¹⁰ նովին մարմնով եւ փառաւք՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, յաւիտենական թագաւորութեամբ: 3 ¹¹Եւ նովին հաւատով եւ յուսով ¹¹փառաւորեմք զաստուածութիւնն հանդերձ մարմնաւորութեամբն, եւ զմարմնաւորութիւնն հանդերձ աստուա-

ծութեամբն, եւ երից ¹² սրբասացութեամբ զերրորդութիւնն ¹³ խոստովանիմք: 4 ¹⁴Եւ նզովեմք հանապազ զուրացաւդան. ¹⁵զՆեստորիոս չարագտող հնարութեան ¹⁶հերձուածողացն, եւ զՍամոստացին եւ զԹովգորոս եւ զԴէոդոր եւ զԵւտիքէս եւ զԱրիոս, եւ զամենայն Գիրս ապականութեանց ¹⁷, եւ զԱպաղիսարիս, եւ զտամարն ¹⁸ Լեւոնի, եւ զՄանի ¹⁹ եւ զՄարկիոն, եւ զԲարձուճայ եւ զ[Ս]եւերոս եւ զԶիբայ եւ զԱկակ, եւ ²⁰զստանուն կանոնս նոցա, եւ զԹեոդորիտոս, եւ զանաւրէն ժողովն Քաղկեդոնի եւ զԹշնամանաւղ եւ զանյիշելի բռնադատեալ կանոնս ²¹ ի նոցանէ. զոր ²² նզովեաց ²³ ժողով սրբոցն, որ ի Նիկիա ՅԺԸ., եւ ՃԾ., որ ի Կոստանդնուպաւլիս, եւ Մ, որ յԵփեսոս. զոր հնազանդեալ ունին եկեղեցիք Քրիստոսի կարգաւորեալ: 5 Այլ եւ զամենայն ²⁴ պիղծ եւ արհամարհելի հերձուածս՝ հեռացեալս ի ճշմարտութենէ ²⁵ ուրացաք եւ ուրանամք, եւ միշտ ուրասցուք:

1 մնալով մաւրն
 2 Հոգին, յանեղն եւ ի կատարեալն
 3 զՍուրբ Հոգի, յորում մկրտեցաքն, եւ մկրտիմք չիք
 4 զմին յերրորդութեան
 5 Տե՛ս ԳԹ, էջ 176-180:
 7 զկաթնաբոյծ
 8 զչարհարանս
 9 մարմնով փառաւք զհամբարձումն
 10 զգալուստն
 11 երկրպագեմք եւ փառաւորեմք

12 երիցս
 13 զխաչիլն
 14 եւ մեք հանապազ
 15 եւ զՆեստորիոս չարագտաւդն
 16 հերձուածողութեան եւ զնմանն նորին, եւ զԹեոդորոս, եւ զԴիոդորոս եւ զԵւտիքոս
 17 ապականութեան
 18 գտումարն
 19 զՊաղոս Սամոստացի եւ զՄանի
 20 եւ զպիղծ ժողովն նոցա եւ զստանուն
 21 կանոնս
 22 գորս
 23 եւ ժողով սրբոցն ՅԺԸ.իցն ի Նիկիա. եւ Ճ. եւ Ծ.իցն ի Կոստանդնուպաւլիս եւ Մ-ոցն յԵփեսոս
 24 զամենայն
 25 ի ճշմարտութեանէն

1 ¹Երանելոյն Յովհաննու Հայոց կաթողիկոսի՝ ի թղթոյն, գոր գրեաց Ի Եպիսկոպոսս առ Աղուանից Եպիսկոպոսն:

2 Խոստովանիմք մեք զմի Աստուած՝ Հայր ամենակալ, Արարաւոյ՝ 2 ամենայն երեւելեաց եւ աներեւութից: 3 Եւ ի մի Տէր ³Յիսուս Քրիստոս՝ ծնեալ ի Հաւրէ, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, որով ամենայնքն: 4 Եւ ի Սուրբ Հոգին, որ ի Հաւրէ ելանէ եւ ընդ Հաւր եւ ընդ Որդոյ երկրպագի եւ փառաւորի՝ 4, արարչակից եւ հաւասար Հաւր եւ Որդոյ: 5 Երրորդութիւն կատարեալ՝ միով բնութեամբ, փառաւր եւ զաւրութեամբ եւ իշխանութեամբ՝ նախախնամութեամբ ընդհանուր եղելոցն՝ 5: 6 Իսկ ⁶ի վաղճան յաւիտենիս՝ Աստուած գոլով՝ 7 մշտնջենաւոր, Բանն Աստուծոյ եղեւ մարդ կատարեալ, անյեղապէս մարմնացեալ ի սուրբ Կուսէն՝ անճառաբար, ո՛չ հեռացեալ ի բնութենէն, ո՛չ ⁸քայքայեալ ի մարմնաւորութիւնն ⁹, այլ եկաց մնաց նոյնպէս՝ 10 անփոփոխելի, անայլայլելի, Աստուած մարդացեալ՝ 11 ո՛չ մասամբ, 12 ո՛չ երկուութեամբ, այլ անբաժին միութեամբ. ո՛չ Հայր էառ մարմին, այլ Որդի՝ 13. ո՛չ Սուրբ Հոգին թանձրացեալ մարմնով, այլ Միածինն ի Հաւրէ, բայց կամաւք Հաւր

եւ ¹⁴ զաւրութեամբ Սուրբ Հոգւոյն. այլ գոյութեամբ միայն Բանն Աստուած՝ 15: 7 Այսպէս սուրբ ծնունդ ¹⁶ ճանաչի. նոյն ինքն անբովանդակելին խանձարապատեցաւ, զի մեք զգեցցուք զանապականութիւն. եղաւ ի մսուր, զի զանասնական ¹⁷ ի բաց փախուցէ զբարս. ի հրեշտակաց փառաւորեցաւ ¹⁸, զի եւ ¹⁹ մեք ²⁰ կոչեսցուք փառաբանակիցք նոցին: 8 Ընծայեցաւ ի մոգուցն, զի պտղաբերեսցուք զհաւատս. կաթնաբուծեցաւ, զի զանմեղութիւն ընկալցուք. զարգացաւ ըստ մարմնոյն ²¹ ամենակատար ²², զի ժամանեցուցէ ²³ ի չափ հասակի կատարմանն ²⁴ Քրիստոսի: 9 Եկն կամաւ ²⁵ ի չարչարանս, զի ի տանջանաց մեղաց ²⁶ զերծուցէ. խաչեցաւ, ²⁷ զի կենդանութեան պտղովս վայելեսցուք. մեռաւ, զի մահուամբն ²⁸ սպանցէ զմահ. եղաւ ի գերեզմանի, զի խորտակեսցէ զնիգս դժոխոց ²⁹, յերրորդ աւուր յարեաւ, զի զմեզ ³⁰ նորդումն կենդանութիւն փոխիցէ. համբարձաւ յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Հաւր, զի մեք ³¹ դասեալք լիցուք ընդ աջմէ նորա. զալոց է միւսանգամ դատել զկենդանիս եւ զմեռեալս, եւ ³² թագաւորութեանն նորա վաղճան ո՛չ գոյ: 10 Այսպէս հաւատամք եւ երկրպագեմք եւ փառաբանելով ասեմք.

1 Հմմտ. Ճ, ք. 24. Խոստովանութիւն Հայոց, գոր գրեցին առ ժողովն Եփեսոսի: Նոյն վերնագրով Շ, ք. 562v: Համեմատել ենք ԳԹ, էջ 211:
2 յարարաւղն
3 յՈրդին Աստուծոյ ծնեալ
4 փառաբանի
5 եղելոյ
6 ի վախճան ժամանակի
7 գոլ
8 եւ ո՛չ
9 ի մարմնաւորութիւն
10 նոյն որ էրն
11 մարմնացեալ
12 ո՛չ երկուութիւն, այլ միութիւն անբաժանելի
13 եւ ո՛չ

14 չի՛ք
15 Աստուծոյ
16 ծնունդն
17 գանասնականն
18 փառաբանեցաւ
19 չի՛ք
20 լինել փառաբանակիցք նոցա
21 մարմնոյ
22 ամենակատարն
23 ժամանեցուք
24 լրմանն կատարմանն
25 կամաւ
26 մեղացն
27 ի կենդանութեան պտղոյն
28 մահուամբ
29 դժոխոցն
30 ի նորդութիւն կենդանութեան փոխեցէ
31 եւ մե՛ք
32 թագաւորութիւն նորա վախճան ո՛չ ունի

Սո՛ւրբ Աստուած, Սո՛ւրբ եւ Հզաւր, Սո՛ւրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեան՝ց մեզ: 11 Իսկ զոչխոստովանաւղսն այսպէս նզովեցին սուրբ Հարքն, նմանապէս եւ մեք նզովեմք՝ ¹Կհինսն եղեալսն հերձուածաւղսն եւ զնորսս. զԱրիոս, ²զՊաւղոս Սամոստացի, զՄանի եւ ³զՄարկիոն եւ զՈվնէմիոս, եւ զԵւտիքոս, եւ ⁴զԱպողինարոս եւ զպեղծ⁵ Նեստոր եւ զԹովղորիտոս⁶ եւ զանտի ժողովն Քաղկեդոնի եւ զպեղծ տամարն⁷ Լեոնի, որ լրբաբար յանդգնեցան ասել երկուս բնութիւնս եւ երկուս զէմս ի վերայ ⁸միոյն Քրիստոսի, եւ թե սուրբ Կոյսն ո՛չ ծնաւ զաւակ⁹, այլ ¹⁰սոսկ մարդ ըստ մեզ եւ տաճար Բանին Աստուծոյ: 12 Այլ են ոմանք, որ ասեն. մինչ յերկրի էր Քրիստոս, ո՛չ էր յերկինս, ¹¹եւ յորժամ ի խաչին եւ ի գերեզմանի էր, ո՛չ էր յաթոռ փառաց¹². զխորհեցաւղսն

այսպէս եւ զԶիբայ¹³ եւ զԱկակ եւ զԲարծումն¹⁴, որք ¹⁵Հնազանդ Նեստորի եւ եղեն պատճառք կորստեան բազմաց, եւ զՍեւերիոս, զգիրս¹⁶ ապականութեան նորա, այլ եւ զամենեսեան իսկ զայնոսիկ, ¹⁷որք այնմ հաւանին եւ Հնազանդին նոցա ամբարիշտ սպանաւղ վարդապետութեանն՝ նզովե՛մք:

1 ¹⁸Երանելոյն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի՝ յերրորդ թղթոյն, զոր գրեաց առ Կիրիոն Վրաց կաթուղիկոսն՝ այն, որ դարձաւ յուղիղ հաւատոյն եւ եղեւ Քաղկեդոնի:

2 Բայց արդ մի՛ հեղգասցուք ¹⁹նորոգել զսէրն Հոգեւոր, [որ] կայր ի մէջ երկոցունց ազգացս՝ զայն, որ ի միոջէ աղբերէ առեալն²⁰ էր զվարդապետութիւնն²¹, որ նախ ինքեանք ²²զկենդանութեան զլոյս առին, որպէս ուսուցին մարգարէքն եւ առաքեալքն, ²³եւ ապա ի մեզ եւ ի ձեռն առհասարակ սերմանեցին զաստուածպաշտութիւնն²⁴, նախ՝ երանելին սուրբն Գրիգոր եւ ապա Մաշտոց²⁵, եւ զգրոց ծանաւթութիւնն²⁶ ի պնդութիւն հաւատոց. եւ այժմ աղաւթեսցուք նովիմք եկեալ²⁷ մեզ մինչ²⁸

1 զհինս գամենեսեան եղեալ հերձուածոսս եւ զնորս
 2 եւ զՊաւղոս Սամոստացի
 3 զՄարկիոս, զԵւնոմիոս
 4 չիբ
 5 զպեղծն
 6 եւ զԹովղորոսս եւ զԹովղորիտոսս
 7 եւ զտամարն
 8 միոյ Քրիստոսի Աստուծոյ
 9 Աստուած
 10 մարդ սոսկ
 11 եւ մինչ ի խաչին վերայ էր՝ ոչ էր յԱթոռ փառաց եւ մինչ ի գերեզմանին էր՝ ոչ էր յաջմէ Հաւր
 12 Վերեւ յիշուած ձեռագիրներում՝ շարունակութիւնը տարբեր է. այսպէս ըստ Տ. 44 ձեռագրի. Այլ եղեալ են ոմանք, որ ասեն, թէ մինչ յերկրի էր Քրիստոս՝ յերկինս ո՛չ էր, եւ մինչ ի վերայ խաչին էր՝ ոչ էր յաթոռ փառաց. եւ մինչ ի գերեզմանին՝ էր ո՛չ էր ընդ աջմէ Հօր: Եւ արդ նզովեմք զայնպիսի հերձուածոսսն եւ զայնոսիկ, որ հնազանդեցան Նեստորի ժողովոյն եւ եղեն պատճառք կորստեան բազմաց: Այլեւ գամենեսեան զայնոսիկ, որք այժմ հնազանդին նոցա ամբարիշտ եւ սպանող վարդապետութեանն՝ նզովեմք: Եւ բան հաւատոյ մերոյ այս է. որ միաբան է ընդ լուսաւոր վարդապետութիւն ուղղափառացն, զոր մարգարէք եւ հարքն առաջինք՝ յերեք հարիւր եւ տասն եւ ութն, որ ի Նիկիա ժողովեցան եւ հարիւր եւ յիսունն, որ ի Կոստանդինուպոլիս, եւ երկու հարիւրն, որ

յեփեսոս՝ զայս հաւատս հաստատեցին. եւ մեք յայս գերիս ժողովս դաւանեմք, եւ փառաւորեմք զամենասուրբ զերրորդութիւնն, այժմ եւ միշտ եւ...
 13 նզովեմք եւ զԻբայ
 14 զԲարծումն ի Մծբնայ
 15 հնազանդեցան ժողովոյն
 16 եւ զգիրս
 17 որ այսմ
 18 Տե՛ս ԳԹ, էջ 339-345:
 19 զսէրն հոգեւոր, որ կայր ի մէջ երկոց ազգացս՝ նորոգել
 20 առեալ
 21 զվարդապետութիւն
 22 զկենդանութեանն լոյս
 23 եւ ապա մեզ եւ ձեզ հասարակ
 24 զԱստուածպաշտութիւն
 25 Մաշտոց
 26 ծանօթութիւն
 27 կալ
 28 մինչեւ

ի գալուստն ¹Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ²զնոյն եւ հաւատ ճշմարտութեան ընծայել նմա: ³Քանզի եւ սէր իսկ աստուածային այն է, եւ յայդ վրիպեալ մտաց ի բաց փոխել արժան է. ³զոնեայ զոր այժմդ ասէք, թե դեռ եւս զհայրենի հաւատն ունիմք: ⁴ ⁴Զի թե զնոյն հաւատն ունէիք՝ զհայրենին, ապա մեր այլ զի՞նչ էր ի ձէնջ խնդիր, եւ կամ բնաւ զաշխատութիւնս զայս զի՞ կամէաք տեսանել, այլ զի փոխեցաք ⁵ յայնմանէ, վասն այնորիկ այս երրորդ թուղթ գրեցաւ ի մէնջ առ Զեր Սրբութիւնդ. քանզի՞ ⁶ Յերկուց եւ յերից վկայից հաստատեցի ամենայն բան՝:

⁵ Զի յառաջ, մինչ առաքիւնի հարքն մեր ազգաց ⁷ երկոցունց եւ որք յիշխանութիւն ⁸ կարգեալ, զոր այժմ մեք ունիմք ⁹, նոքաւք հանդերձ միաբանէին յամենայն բարիս ¹⁰ եւ զոյդ ¹¹ հեռանային յամենայն չարէ, թուի ինձ, եթե տեղեակ է Զեր Սրբութիւնդ այնմ: ⁶ Եւ յեկեղեցւոջ ¹² Սուրբ Երրորդութիւնն փառաւորել մեզ ուսուցին ¹³ առաքեալքն եւ որք ի նոցանէն ճշմարտութեամբ ուսանն, եւ ի նոյն Սուրբ Երրորդութիւնն մկրտել, եւ զՈրդի յերրորդութենէն ¹⁴ մարմնացեալ եւ մարդացեալ՝ մի լեալ քարոզեցին, եւ զնոյն Աստուած՝

ընդ Հաւր եւ ընդ ¹⁵ Սուրբ Հոգւոյն, եւ ասեն այսպէս. Մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ դարձեալ՝ Յորոց եւ ¹⁶ Քրիստոս ըստ մարմնոյ, Էակն ի վերայ, Աստուած արհնեալ յաւիտեանս: ⁷ Եւ ¹⁷ դարձեալ ի Կաթողիկէին ասէ ¹⁸. Աստուած ¹⁹ ճշմարիտ եւ կեանք յաւիտեանակամք: ⁸ ²⁰ Եւս բազում քարոզեալ յառաքելոցն, զոր ո՛չ է այժմ բաւականապէս մի ըստ միողէ ասել: ⁹ Նոյնպէս եւ մարդաբէքն յառաջագոյն ծանուցեալ վկայեցին, եւ ²¹ Երեմիա թե՛ Ըստ որում ո՛չ համարեցի այլ Աստուած, որ ²² ետ զիմաստութիւնն Յակովբայ. յետ այսորիկ սա յերկրի երեսեցի ²³ եւ ընդ մարդկան շրջեցի ²⁴ եւ այլք նոյնպէս վկայեցին:

¹⁰ Իսկ եթե վասն ճշմարիտ մարդ ²⁵ լինելոյ է ²⁶ ուրուք ասացեալ, որպէս այն ²⁷ թե՛ Մարդով եղեւ յարութիւն մեռելոց, կամ ²⁸ թե՛ ²⁹ երկրորդ Ադամ Տէր, ո՛չ ³⁰ եթե զբնութեանցն ինչ ճառեն առաքեալքն, այլ

1 Աստուծոյ մերոյ Տեառն
 2 եւ զնոյն
 3 գոնեա թէ այժմ գոր ասէիդ, թէ մեք գիայրենի ունիմք հաւատ եւ այժմ
 4 Զի թէ գիայրենի հաւատն ունիմք, մեր այլ ինչիդ զի՞նչ էր
 5 փոխեցայք
 6 քանզի գրեալ է
 7 Բ Կ Գ Ժ Գ 1
 7 ազգացս
 8 յայս իշխանութիւն
 9 ունիմքս
 10 բարիսն
 11 զուգաց
 12 Սուրբ գերրորդութիւնն
 13 ուսան
 14 մարմնացեալ միացեալ

15 չիք
 16 Ը Կ Գ Ժ 6
 16 Քրիստոս, որ է ի վերայ ամենեցուն
 17 Ը Կ Գ Ժ 5
 17 եւ այլ
 18 չիք
 19 Սա է Աստուած
 20 Ը Կ Գ Ժ 20
 20 եւ այլք բազումք նոյնպէս քարոզեցին աստուածաբան, որ վասն ժամուս այսչափ բաւական համարեցայ:
 21 Երեմիա ասէ. Սա է Աստուած մեր, ընդ որում ո՛չ համարեցի այլ ոք
 22 Տէ՛ Բ Թ Գ 35. 39. Գ Թ Գ Ժ 60:
 22 սա որ
 23 երեսեցաւ
 24 շրջեցաւ
 25 Տէ՛ Բ Կ Գ Ժ 37-38:
 25 մարդն
 26 ուրեք որ յիշատակէ
 27 զայն
 28 Ը Կ Գ Ժ 21
 28 եւ կամ
 29 երկրորդ մարդն Տէր յերկնից
 30 Տէ՛ Ը Կ Գ Ժ 45. 47:
 30 թէ զբնութեանց

վասն այնր, զի իւրով մարմնովն, որ¹ ²ի կուսէն սուրբ Աստուածածնէ էառ, մարդ է, եւ իւրով մարմնովն Աստուած է³. եւ ո՛չ թե՛⁴ երբեմն մարդ եւ երբեմն Աստուած⁵. մի՛ լիցի, չքարոզեն այսպէս: 11 Այլ⁶ երանելի հարքն, որ ⁷ի Նիկիա ժողովեցան՝ այսպէս ուսուցին ըստ առաքելոցն վարդապետութեան. Հաւատամք⁸ ի մի Աստուած, ի Հայր ամենակալ, ⁹Արարիչն երկնի եւ երկրի: 12 եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս. այլ ո՛չ բնութիւնս¹⁰, կամ երկուս որդիս ասացին, այլ մի¹¹ Տէր Յիսուս Քրիստոս՝ ծնեալ ի Հաւրէ անճառաբար, ¹²զնոյն եւ մարմնացեալ եւ մարդացեալ, խաչեալ¹³, ¹⁴յարուցեալ եւ համբարձեալ, եւ գալոց է դատել. որոյ թագաւորութեանն վաղճան ո՛չ է¹⁵: 13 եւ ի Սուրբ Հոգին, որով խաւսեցան առաքեալքն¹⁶ եւ մարգարէքն:

14 ¹⁷Զայս հաւատ ընկալաւ ¹⁸սուրբ եկեղեցի Աստուծոյ եւ նովիմբ պարծի սուրբ Երուսաղէմն վերին: 15 Իսկ ¹⁹ի Քաղկեդոն ժողովեալքն՝ հակառակ առաքելոցն եւ սուրբ ժողովոյն, ²⁰երկուս բնութիւնս ասացին միոյն Քրիստոսի, խաբելով զպարզա-

միտան²¹, եւ փոխանակ Երրորդութեանն չորրորդութիւն մուծանեն²². յաւելուն ներմարդութեանն²³ բնութիւն, ²⁴եւ Որդւոյ երկասաց, եւ այլ նոյնպիսի²⁵ բարբաջեն, որ²⁶ ի սատանայի վարդապետութենէն: 16 Նոյնպէս եւ ի ջնջեալ ²⁷տաւմարն Լեւոնի այսպէս պատմէ, ասէ²⁸. ազդէ կերպարան ²⁹երկուց բնութեանց ընդ ընկերին շարայարութեան³⁰ միովն գործել զաստուածայինսն՝ որ ինչ Աստուծոյ վայել է, իսկ միովն³¹ զմարդկայինսն, որ ինչ մարդոյ արժան է, եւ ³²այլ բազում ինչ այսպիսիս: 17 Արդ, զայս յո՞րմէ առաքելոց³³ լուան, եւ կամ ո՞ր ճշմարիտ վարդապետ պատմեաց: 18 Եթէ³⁴ ճշմարիտ էր ասացեալ ³⁵ի Քաղկեդոնի ժողովոյն եւ ի Լեւոնի տաւմարէն³⁶, ապա՝ մինչ փառս տան, ³⁷զի՞նչ ասեն այսպէս. Փա՛ռք Հաւր եւ Որդւոյ երկուց բնութեանց³⁸ եւ Հոգւոյն Սրբոյ. եւ կամ ³⁹մկրտութեանն՝ Յանուն Հաւր եւ Որդւոյ երկուց բնութեանց⁴⁰ եւ Հոգւոյ⁴¹ Սրբոյ. եւ կամ ի ժամ պատարագին թե՛ Հայր Սուրբ, ⁴²Որդի Սուրբ երկու բնու-

1 չի՛բ
2 ի սրբոյ կուսէն
3 չի՛բ
4 չի՛բ
5 Աստուած է
6 Սոյնպէս եւ
7 ի Նիկիայ ժողովին
8 Հաւատալ, ասեն
9 չի՛բ Արարիչն ... Քրիստոս
10 երկուս բնութիւնս
11 զմի
12 եւ զնոյն
13 եւ խաչեալ
14 յարուցեալ եւ գայ ի դատել
15 կայ
16 առաքեալք
17 Զայս կալաւ հաւատ
18 ի սրբոց առաքելոց, եւ սովիմբ պարծի ի վերինն Երուսաղէմ ժողով լինել
19 ի Քաղկեդովնի
20 խոստովանեցին երկուս բնութիւնս ասելով միոյ

21 գպարգամիտս
22 քարոզեն
23 ներմարդութեան
24 եւ որդոց երկակաց
25 նոնպիսիս
26 որ է
27 տումարէն Լեւոնայ
28 վասն Քրիստոսի Աստուծոյ ասէ
29 երկոցունց բնութեանցն
30 շարայարութեամբ
31 միւսովն
32 այլ ինչ բազում
33 առաքելոյ
34 եւ թէ
35 ի ժողովոյն Քաղկեդոնի
36 տումարէն
37 զի՞նչ չասեն
38 բնութեանցն
39 ի մկրտութեանն, եթէ մկրտի այս անուն
40 բնութեանցն
41 Հոգւոյն
42 Որդւոյ երկու բնութիւնն Սուրբ

թիւնք եւ Հոգին¹ Սուրբ: 19 Ապա թե չիշխեն ասել այսպէս², այլ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ փառս տան, ապա ուրեմն լոկ խտրումն³ ուսուցանեն ժողովն Քաղկեդոնի եւ ⁴տաւմարն Լեւոնի:

20 Արդ, եթե չէ⁵ փոխեալ ի հայրենի հաւատոցն⁶, որպէս բազում անգամ գրեցեր ⁷առ իս, ե՛կ նզովեա դու⁸ զանիծեալ ժողովն Քաղկեդոնի եւ ⁹զպիղծ տաւմարն Լեւոնի որպէս եւ նախնիքն¹⁰ Քո՛ երանելի¹¹ Գաբրիէլ կաթողիկոսն Վրաց նզովեաց ընդ երանելի ¹²Հաւրն մերում, հանդերձ աթոռակցաւք իւրովք եւ եպիսկոպոսաւք¹³: 21 Արդ, այս երանելի եպիսկոպոսունքս, որ յաշխարհէդ¹⁴ ձերմէ էին ¹⁵եւ ընդ Ադուանաւք եւ ընդ Սիւնեաւք ի Հայս դիպեցան յաւուրս Բաբգենի Հայոց կաթողիկոսի՝ յայնմ¹⁶ ժողովի, յորում ¹⁷անիծաւ ի նոցանէ միաբանութեամբ ժողովն Քաղկեդոնի եւ տաւմար¹⁸ Լեւոնի: 22 Եւ զի պայման նամակն, որ հայերէն գրով էր, յապտամբութեանն կորեաւ, թարգմանեցաւ¹⁹ այս յՈւռհա²⁰ քաղաքի ի հոռոմ գրոց²¹.

1 Հոգի
2 այդպէս
3 խտրումն / յԱստուծոյ
4 տումարն Լեւոնայ
5 չէ՛ք
6 հաւատոյ
7 առ մեզ
8 եւ դու
9 զպիղծ տումարն
10 նախնիքն
11 երանելիքն
12 հարսն մեր
13 չի՛ք եւ եպիսկոպոսո՛ք / Այստեղ բաց են բողոքած եպիսկոպոսների անունները, որ կան ԳԹ, էջ 343:
14 յաշխարհէ
15 եւ ընդ Ադուանիւք եւ ընդ Սիւնիւք ի Հայս դիպեցան
16 յայն
17 անիծանքն ի նոցանէն
18 տումարն
19 եւ թարգմանեցաւ
20 յՈւրհայ
21 գրոց

քանզի եւ նոքա ունէին ի մէջն²²:

1 Երանելւոյն Յովհաննու հաւր մերոյ, նզուարի եւ խոստովանողի եւ Մայրագոմեցոյ՝ ի բանէն, որ վասն տնաւորէնութեան Փրկչից:

2 Խորհուրդն ըստ նախակարգ յաւրտեանցն եղելու թիւն՝ ըստ ցաւազակերպ իջիցն, յառաջ քան զմարմնանալն մարմինն ո՛չ ի Բանէն էր եւ ո՛չ ի Կուսէն. զի Բանն Հոգի էր եւ եթ եւ Կոյսն ինքեանք միայն: 3 Ի մարմնանալն ո՛չ Բանն ըստ ինքեան մարմնացաւ, զի ինքն Բանն Աստուած մարգարէիւն՝ Մարմին իմ ի նոցանէ՞. եւ ո՛չ Կոյսն ըստ ինքեան յղացաւ, այլ աւետարանագիրն ասէ զԿուսէն. Գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ: 4 Ինքն Բանն, առաքեալն ի Հաւրէ, ինքն էակից Որդին, ինքն Միածին Որդին Հաւր՝ լրութեամբ աստուածութեամբն է՞լ եւ անճառաբար եւ անպարիմացապէս անքննելի միութեամբ եղեւ մարմին ի Կուսէն, եթե՛ ինքն եկեցեւ եւ փրկեցեւ: 5 Ինքն Բանն է պատճառ եղելութեան. առանց պատճառին զեղելութիւնն անհնար է ասել: 6 Ինքեանէ եղեալն ինքն եղեալն է Աստուած եւ մարդ միանգամայն. եւ զի ամենեւին եղեալն է Աստուած եւ բնութիւն Հաւր, եւ Հայր վկայեաց եւ ազդ արար մարգարէիւն Իսրայելի, եթե՛ Յիմէն գտաւ պտուղ ի բեզ: զի ի պտղոյ արդարութեան ճանաչի ծառն կենաց: 7 Եւ զի Աստուածութիւնն է պատճառ եղելութեանն, վասն այնորիկ ասէ մարգարէն. Որ ի սկզբանէն էր՝ այն եկն եհաս, եւ գորս ես պատմեցի ձեզ: ապաքէն որ ի սկզբանէ՛ նոյն է մարմնացեալն,

22 Յաջորդը ենթադրաբար կցեցինք այստեղ:
* ՈՎ. Թ. 12
բ Մ. Գ. Լ. 18
գ Ե. Լ. 4
դ ՈՎ. Ժ. 9
ե Ե. Խ. 9

այլ ի հիմնակալութիւն հաւատոց, որ ի Քրիստոս:

8 Յետ սակաւուց:

9 Յայսմ վայրի վերադիտեսցուք զվերածնութիւն, սակս ցաւազակերպ իջիցն եւ հակիրճ զնախագրելոցն զնոյնս վերակարգեալ հանդիպեսցուցուք իրին, զգուշանալով ի վրիպախոհ իրաց հոգեմտութեամբ. զի թեպէտ եւ տղայացաւ Հինաւուրցն վասն մեր յանկատար հասակի, անկատար ո՛չ երբէք ասի, այլ միշտ կատարեալ՝ ըստ Գրոց, եթե՛ Որդին յաւիտեան կատարեալ. եւ թեպէտ անսաց անբանութեան աճման հասակին ըստ աւրինակի տղայոց, անբան ո՛չ երբէք ասի, այլ՝ ի սկզբանէ էր Բանն՞, եւ գլուխ բանից եւ խաւսից՝ ըստ Գրելոց, եւ հրաման կամացն Հաւր ի բերանոյ նորա բխեն եւ ամենայն արարածք հրամանաւ նորա շարժին: 10 Եւ թեպէտ անիմաստ եւ անզաւր կարծեցաւ, իբրեւ զմի ոք ստնդիացիկ մանգանց, այլ զիր ասէ. Քրիստոս Աստուծոյ զարուսթիւն եւ Աստուծոյ իմաստութիւնէ: 11 Եւ թեպէտ եւ անգէտ եւ անմտաւոր համարեցաւ ի մարդկանէ՝ ըստ համաբնութեան տիոցն, այլ մարգարէն ասէ. Ահաւաղիկ ի միտ առցէ մանուկ իմէ. նոյն բան վեր առցի եւ առ մանուկն, եթե՛ Ոչինչ ծածկեցաւ ի Բէնն: 12 Եւ թեպէտեւ յապականութենէ մարդկան զգեցաւ մարմին, ինքն միշտ անապական ասի, ապականացու եւ երբէք ո՛չ. ըստ նախագրեցելոցն՝ Մարմինն նորա ո՛չ ետես զապականութիւնէ. եւ եթե զմեզ անապական գործեաց՝ զձեռնալս վերստին յանապականութեան սերմանէն կենդանի եւ մշտնջենական Բանին Աստուծոյ: 13 Եւ

թեպէտ զկերպարանս ծառայի էառ, ծառայ ո՛չ երբէք ասի, այլ Տէր եւ ազատ, ըստ գրելոյն թե՛ Ազատ է Որդինէ, եւ թե՛ Նա է Աստուած, ընդ որում ո՛չ համարեսցի այլէ: 14 Եւ թեպէտ առաքեաց զնա Աստուած ի նմանութիւն մեղացէ, մեղաւոր երբէք ո՛չ ասի, այլ ցանգ անմեղ, ըստ վերագրելոյն թե՛ Ի նմա մեղք ո՛չ եմէ: 15 Եւ թեպէտ զգեցաւ հողեղէն բնութիւն, հողեղէն երբէք ո՛չ ասի, եւ ո՛չ երկրեղէն, այլ Տէր եւ ստացաւ հողոյ եւ հողեղինացս, ըստ յառաջագրացն բաղազանեալ ի նորուստ եթե՛ Առաջին մարդն յերկրէ հողեղէն, երկրորդ մարդն յերկրիցէ՞, որպէս եւ Տէր. զի զհնացեալ եւ զմահականացու աշխարհս ըստ առաջին հողածին մարդոյն՝ երկրորդ մարդն, Կուսին ծնեալ, եկեալ յերկրից նորոգեսցէ: 16 Եւ թեպէտ առ զմարդկային շունչ եւ համեկեալ ունի յնքեան զշնչաւորն, եւ բնաւ ուրեք շնչաւոր երբէք ո՛չ ասի, այլ միշտ հոգեւոր, ըստ հնագրութեանցն փոխարկեալ ի նորս, եթե՛ Եղի մարդն առաջին Ադամ ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ ի հոգի կենդանիէ: 17 Եւ թեպէտ յարարածոց եղեւ մարդ, արարած անհնար է ասել զնա, այլ ամենեւին անեղ եւ արարիչ եւ մեծ եւ կատարեալ, եւ անձեռագործ խորան, եւ ո՛չ յայսց արարածոց՝ ըստ աստուածաստեղծին եւ հոգեծնելոցն քատակապէս նմանէ, որ նախակարգեաց ի խաւսս իւր զարարիչն անուն զառ ի յապա զասաւղան, թե՛ Աստուած եմ ես, եւ ո՛չ մարդ, ի միջի ձերում սուրբսէ: 18 Եւ թեպէտ եւ ստեղծական եւ ստացական մարմին գոյացոյց ինքեան, ինքն ո՛չ կարէ ասիլ ստեղծուած եւ ստացական, այլ ստեղծաւղ եւ

ա Յով. Ը 1
բ Ա Կոր. Ը 24
գ Ես. Ծ 13
դ Ես. Խ 26. Գե. Երեմ. Լ 17. Գան. Գ 6:
ե Գործ. Բ 31, Գե. Եսեմ. Ժ Գ 37. Սաղմ. Ժ Ե 10:
զ Տե՛ս Ը Գե. Ը 23:

է Տե՛ս Սաղմ. Ժ Ե 25:
ը Տե՛ս Բ Օր. Գ 35. 39. Գ Թագ. Ը 60:
թ Տե՛ս Հեռմ. Ը 3:
ժ Հմմտ. Յով. Ը 46. Բ Կոր. Ե 21. Ը Գե. Գ 22:
ժա Ա Կոր. Ժ Ե 47
ժբ Ա Կոր. Ժ Ե 45
ժգ Ով. Ժ Ը 9

ստացաւ զ համանգամայն ստեղծուածոց, ըստ այնմ թե՛ Սա ինքն, որ ստացաւն՝ արարելու ստեղծմ զբեզ¹: 19 Եւ թեպէտ երկու ծննդաւք փառաւորեալ է՝ անեղապէս ի Հաւրէ եւ եղելութեամբն ի Կուսէն, եւ աւտարին ի Գրոց երկոքին ծնունդքն, ինքեան հրաշիւքն եւ Որդի Աստուծոյ ասի ե՛ւ Որդի Մարդոյ. սակայն ի խոստովանողական հաւատս, յորժամ հատուցանէ կաթողիկէ եկեղեցւոյ միաբանական պտուղ շրթանց ի հոտ անուշից Տեառն՝ ո՛չ հնար է երկածին ասել զՔրիստոս, այլ Միածին եւ եթ, եւ ո՛չ երկուց որդուց հնար է կարծիս ունել, բայց միոյ. զոր ընդ Հաւր ծննդեամբ փակեալ է կուսական ծնունդն, եւ ո՛չ կարէ երկաւորիլ, զի Միածին տուեալ լինի վասն աշխարհի՝ յառաջ քան զարուսեակ ծնեալ յարգանդէ²: 20 Եւ մինչ աստուածավայելուց ծնունդք եւ ճշմարիտ պատմագրութիւնք ծննդոցն ո՛չ երբէք հնարանան երկածին ասել, անգրաւորական բնութեանցն համբաւած՝ անմտացածնութիւնք յաւելլ, զիա՞րդ հնարանան երկաբուն առնել զմիշտ միաբանութիւնն Քրիստոսի: 21 Զի որպէս կատարեալ Աստուած իմանամք զՀայր եւ կատարեալ Աստուած զՈրդի եւ կատարեալ Աստուած զՀոգին Սուրբ՝ ո՛չ երիս Աստուածս յաւակնիմք ասել, այլ մինոյնպէս կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ իմանամք զՔրիստոս, բայց երկու անձինս եւ երկու բնութիւնս ո՛չ ասեմք, այլ մի անձն եւ մի բնութիւն: 22 Արդ, զի՞ միաւորեալ երկարեցից զբանս, մինչ այս ամենայն որ շարայարեցաւ մասնաւորաբար ի դէմս Քրիստոսի՝ միադէմ եւ միակարգ եւ անշարժ, եւ չէ փոփոխմամբ եւ այլայլութեամբ: 23 Ո՛չ անկատար ասի վասն տղայութեանն, ո՛չ ապականացու ասի վասն յապականութենէ մարդկան զգեկելոյ զմարմինն, ո՛չ ծառայ

ասի վասն ծառայի կերպ առնելոյ, ո՛չ մեղաւոր ասի վասն նմանութեան մարմնոյ մեղաց երեւելոյն. ո՛չ երկածին ասի ըստ երկուց ծննդոց, եւ Որդին Աստուծոյ որդի մարդոյ լինելն. ո՞չ երկուց որդոց կարծիս ունի: 24 Եւ մինչ այս ամենայն, զոր շարակարգեցիս՝ զգոյացութիւն մարմնոյն ընդ աստուածային բնութեանն փակեալ, եւ ո՛չ երկրաւորին ի Քրիստոսի, եւ ո՛չ է հնար ասել զմի Քրիստոսն Աստուած եւ հատուած, արարիչ եւ արարած, Տէր եւ ծառայ, անապական եւ ապականացու, անգէտ եւ ամենագէտ, անեղ եւ եղական, երկնաւոր եւ երկրաւոր, հոգեւոր եւ շնչաւոր, անմեղ եւ մեղաւոր. զի ամենեւին Աստուած է, ամենեւին արարիչ է, ամենեւին Տէր է, ամենեւին անեղ է, ամենեւին անապական է, ամենագէտ եւ հոգեղէն եւ անմեղ է: 25 Արդ, զի ըստ ամենայն դէմ ո՛չ երկաւորի մարմնացեալ Բանն Աստուած, ըստ բնութեանն զի՞ երկաւորի եւ երկաբուն ընդէ՞ր ասի: 26 Այլ քանզի գիտէր չարն, եթե թիւք բնութեանցն բաժանեն զՔրիստոս, յամենայն դէմս հնարեայց ուսոյց զայդ: 27 Այլ եթե ո՛չ բնութիւնքդ երկաւորեն զՔրիստոս, ընդէ՞ր ծփեցուցեն զեկեղեցի, որպէս հողմ զՋուրս ծովու, որ ըստ անիծիցն Կայենի յանդադար երբմունս տատանմանցն սասանին անհանգիստ ծփանաց: 28 Եւ կամ զի՞նչ են բնութիւնքն փաստմունս, որ այսպէս կերպակերպս շրջշրջեն զհաւատս. մերթ յերկուց ասեն զՔրիստոս, մերթ դառնան անդրէն եւ մի ասեն, մերթ յերկուց եւ երկուս ասեն, եւ զտիեզերս կործանեցին ի հաւատոց:

1 Լուսաւորչիցն մերոյ սուրբ Գրիգորի ի Վարդապետութենէ՝ ի ծննդեանն կարգէն:
 2 Արդ², առաքեցաւ¹ Աստուած՝ յԱս-

¹ Տէ՛ * Բ՝ Օր. ԼԲ 6. Ե. * ԽԿ. 2:
² Հմմտ. Սաղմ. ՃԹ 3:

1 Տե՛ս Ագաթ., էջ 184 (ՄՀ, հտ. Բ, էջ 1472):
 2 չի՛ք

տուծոյ Սուրբ Հոգին, եւ առ² զմարմին ի Կոսէ՝ մարդ³ կատարեալ կատարէ աստուածութեամբն. զԱստուածութեանն⁴ զգալութիւնն⁵ յայտ արար եւ զմարմնոյ տկարութիւնն ցուցանէր. ծառայակից եղեւ եւ⁶ զմարմնովն մարդկութեամբ մարմինս: 3 Ո՞վ էջ⁸ ի դժոխս. Աստուած, եւ եհան անտի զարգելեալսն դժոխոցն⁹. մարմնով հալածեցաւ, եւ հալածեաց զսատանայ եւ կապեաց զսատանայ¹⁰: 4 Ձի որ¹¹ մարմին հաւատացին՝ ծանոյց նոցա զաստուածութիւնն իւր. որք ի մարմնոյն գլխեցին՝ ուրացան զբնութիւն նորա. քանզի միացաւ ի մարմնի բնութեամբ եւ խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութիւնն: 5 Որք հաւատացին ի նա՝ նոքա վայելեցին¹² ի բարիս անպատուամ, եւ¹³ որ յայս հաւատոց վրիպեցան՝¹⁴ զանկոխ գնացին եւ ըստ արտուղի անգան¹⁵,¹⁶ եւ խրատեցին իւրեանց անձին խրատս անկարկատս, եւ զբազումս ի ճշմարիտ հաւատոցն թիւրեցին, եւ¹⁷ կարծէին, թե գտին ինչ՝ գտին¹⁸ զոչինչ, որպէս եւ գրեալ է. Չոգան զհետ ոչնչի եւ գտին զոչինչ¹⁹:

6 Յետոյ¹⁹:

7 Իսկ իբրեւ եկեալ կատարեաց Փրկիչն ամենեցուն²⁰ զերբեմն խոստացեալս վասն նորին, եւ²¹ վկայութեամբ վասն նորին զգալուստն կարեմք ճշմարտել մարգարէականաւք²² յառաջ ասացելովք վասն մարմնածին²³ ծնելութեանն Որդւոյն Աստուծոյ՝ հոգեխառն բանիւք զաստուածախառն մարմնոյն, զոր յառաջագոյն Աստուած եցոյց, ²⁴զոր յՈրդւոյն զգալուստ՝²⁵ իւրով մարգարէիցն ձայնիւք: 8 Ձի՛ Առաքեաց²⁶ զՈրդի իւր, որ եկն եւ ծնաւ ի կնոջէ եւ եմուտ ընդ արիմաւք, զի գորս ընդ արիմաւքն իցեն՝ զնիցեն²⁷, զի մեք գորդեգրութիւն ընկալցուք²⁸:

9 Յետոյ²⁸:

10 Սակայն յորժամ կամեցաւ՝ առ զմարդկան ի Երպարանս եւ զԳեցաւ մարմին, եւ էջ ի մեր նմանութիւնս²⁹, այն, որ անբաւն էր եւ անհաս յամենայն լրութեանն՝ լրութեան Աստուածութեան³⁰, եւ վասն մեր էջ ի չափաւորութիւն եւ ամփոփեցաւ³¹ ի մարմինն, բովանդակեցաւ ճշմարտութեամբ³² ի մարմինն եւ ճշմարիտ մարդ եղեւ եւ էջ յանարգութիւն, զի զմեզ բարձրացուցէ. սակայն իւրով աստուածու-

1 Որդին
2 Որդին
3 կատարեալ
4 զԱստուածութեան
5 գորութիւն
6 չիք
7 մարմնովն մարդկութեանս, եւ ազատեաց ի մեղաց զմարդկութեան մարմինս: Որով էջ
8 ի դժոխս, եւ ած եհան
9 ի դժոխոց
10 զմեղս
11 ի մարմինն
12 ի բարիսն յանպատուամ
13 որք յայսց
14 զանկոխն եւ զանխուլ զնացին
15 անկան
16 եւ խրամատեցին անձանց իւրեանց անցս
17 իբրեւ
18 եւ գտին
19 Տե՛ս Երեմ. Բ 5:

19 Տե՛ս Ագաթ., էջ 186 (ՄՂ, հտ. Բ, էջ 1474):
20 գերբնմի խոստացեալսն
21 վկայութեամբ զգալուստ Որդւոյն
22 մարգարէականօքն
23 ծննդեան Աստուածորդւոյն
24 գիւրոյ Որդւոյն
25 արժանաւոր իւրոց մարգարէիցն
26 Աստուած զՈրդին
27 զնեցէ
28 Տե՛ս Գ. Գ. 4-6
29 Տե՛ս Ագաթ., էջ 188 (ՄՂ, հտ. Բ, էջ 1476):
30 նմանութիւն
31 Տե՛ս Գ. Գ. 7:
32 Աստուածութեանն
33 ի մարմին
34 Տե՛ս Գ. Գ. 9:
35 ի մարմին
36 Տե՛ս Գ. Գ. 9:

թեամբ¹ յերկինս ²էր եւ յերկրէ առ Հաւր էր³ եւ ընդ Հաւր, եւ ամենայն արարածք հրամանաւ նորա շարժին՝ ըստ իւրաքանչիւր ⁴կարգածոյ կազմածոյ: 11 Սակայն վասն⁵ մեր էջ յանարգութիւն, այլ կայ իւրում բնութեանն, որպէս⁶ ինքն ասէ. եւ նոյն եմ, եւ ո՛չ փոխեցայ⁷. զի թեպէտ զկերպարանս ծառայի էառ եւ զմարմին մարդկան, այլ խառնեաց միացոյց՝ ընկղմեաց զմարմինն յաստուածութեանն⁸ իւրում: 12 ⁹Եւ դարձեալ ասէ. Սա է Աստուած, Աստուած մեր յաւիտեանս¹⁰: 13 Եկեալ այսպիսի բարբառ եւ ¹¹առ մարգարէն Մովսէս եթե՝ եւ եմ, որ ¹²ի սկզբանէն. այսպէս ասացես թե՝ որ ի սկզբանէն Աստուած, առաքեաց նա զիս ¹³առ քեզ: 14 Ձոր եւ Յովհաննէսն¹⁴ ասէր ի թղթին իւրում թե՝ Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուսն, որում ականատեսն¹⁵ եղաք, ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շաւղափեցին ի վերայ Բանին¹⁶ կեանց. եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեաք, զի նա ինքն է նշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտեանակամք: 15 Որ առ ¹⁷մարմին՝ անըմբռնելի, եւ շաւ-

ղափեցաւ եւ ըմբռնեցաւ մարմնովն, եւ զամենայն անցս մարմնոյն յանձն էառ¹⁸ իւրովք կամաւքն¹⁹: 16 Յանձանաւթս եղեալ՝ ²⁰Համբերէր հանդերձ խոնարհութեամբն, եւ ո՛չ ուրուք բանադատութեամբ, բայց իւրով²¹ իշխանական եւ անձնիշխան կամաւքն²² կրեաց զայն, որպէս եւ ինքն ²³ասէ եթե՝ Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, իմովք կամաւք, եւ²⁴ դարձեալ միւսանգամ առից զնա: 17 Եւ ինքն ծնաւ ի Կուսէն, եւ իւրով²⁵ կամաւք կատարեաց զկամս անձին²⁶ իւրոյ, ասէ. Եկի²⁷ կատարել զկամս Հաւր իմոյ՝ զի ցուցցէ ²⁸զմիաւորականն, անքակ, անբաժին ինքնութեանն միութեանն²⁹: 18 Կամաւք Հաւր եմուտ յարգանդ Կուսին, եւ ո՛չ զարչեցաւ. ³⁰վասն ինքն իսկ է սրբիչ ամենայնի. իւրովք կամաւք պատեցաւ ի խանձարուրս, եղեալ³¹ ի մտուր անասնոց, զի ինքն³² Տէր եւ արարիչ ամենայն մեծութեանց եւ բխիչ³³ ամենայն բարութեանց: 19 Հինաւորցն վասն մեր մանկացեալ³⁴ եւ առ զկերպարան³⁵ մարմնոյ ³⁶տկարութեան մարդկութեանս մերոյ, զի զմեզ փոխեսցէ

1 Աստուածութեամբն
 2 է եւ յերկրի
 3 չիք
 4 կարգածոցն կազմածոց
 5 թեպէտ վասն
 6 որպէս եւ
 7 փոփոխեցայ. զի թեպէտ զկերպարանս առ
 * Տէ՛* Մ*շ. Գ. 6:
 8 յաստուածութեան
 9 եւ դարձեալ ասէ. «Ինչ նոյն ես, եւ ամբ քո ո՛չ անցանեն»: Եկեալ
 10 յաւիտեանս յաւիտեանից
 ք Մ*շ. Խ. 15
 11 առ մեծն մարգարէից
 12 ի սկզբանէն էի
 13 առ ձեզ
 ք Տէ՛* Եւ. Գ. 14-15:
 14 Յովհաննէս
 15 ականատեսն իսկ
 16 զԲանն
 ք Ե. Յ*վ. Ե. 1-2. Ե. 20
 17 զմարմին անըմբռնելին

18 առեալ
 19 կամով
 20 համբեր խոնարհութեամբ
 21 իւրովք
 22 կամով
 23 ասէր
 24 զի
 է Տէ՛* Յ*վ. Ժ. 18:
 25 իւրովք
 26 առաջին
 27 եւ Եկի
 ք Տէ՛* Յ*վ. Գ. 38:
 28 զմիաւորական զանգակ զանբաժին
 29 միութիւն
 30 վասն զի ինքն է
 31 եւ եղեալ
 32 ինքն է
 33 բոլորիչ
 34 մանկացաւ
 35 զկերպարանս
 36 տկարութեանս մերոյ մարդկութեանս

¹յիւր անմահութիւնն. սակայն թեպէտ² զգեցաւ մարմին եւ էջ ի մեր նմանութիւն, այլ կայ ի փառս հայրենի բնութեանն աստուածութեանն³ իւրոյ, որպէս եւ էր իսկ եւ է եւ կայ յաւիտեան ընդ Հաւր իւրում ի բարձունս, ի⁴ յիւրում բնութեանն՝ հանդերձ մարմնովն, զոր ⁵ի մէջն զգեցաւ: 20 Փառաւորեալ ⁶ցանգ Որդի ի հոգեղէն եւ հրեղէն⁷ զուարթնոցն՝ նա եկն եւ⁸ եղեւ մարդ, զի մարմնաւորք⁹ տեսանել կարացեն զնա¹⁰. զի¹¹ բայց զԱստուած գոյիւ ո՛չ տեսեալ է¹² ուրուք՝ ո՛չ հրեշտակաց եւ ո՛չ հրեշտակապետաց, ո՛չ սրովբէից եւ ո՛չ քրովբէից, եւ ո՛չ բիւրաւոր ¹³բանակք վերին զըւարթնոց. բայց Որդին ծածկեալ է¹⁴ մարմնով, ¹⁵կատարելամիտ ի մասնաւորացն ցոյց յայտնի արար, զի յագեսցին ¹⁶լուսով սքանչելութեանն, թե՛ Որ ետես զիս, ետես զՀայր իմ¹⁷: 21 Եւ եկեալ զխոստացեալն¹⁷ կատարեաց, ի սրբոյ Կուսէն. եւ ծնունդ¹⁸ առաջին ի Հաւրէ յառաջ քան զանգէտ¹⁹ յաւիտեանս՝ մշտնջենական²⁰ եւ յաւիտենական ծնունդ մշտնջենական եւ յաւիտենական Հաւր²¹, յառաջ քան զյաւի-

տեանս²²: 22 Այսչափ եւ եթ զիտել տկարութեան արարելոցս ի նմանէ:

23 ²³Յետ սակաւուց:

24 Հաւատք ճշմարիտ այս են. խոնարհեցաւ եւ խառնեաց զաստուածութիւնն ²⁴ընդ մարդկութիւնն եւ զանմեռն ²⁵ընդ մեռոտն, զի զամենայն մարդկութիւնն²⁶ անքակ արասցէ յանմահութենէ աստուածութեանն²⁷ իւրոյ: 25 Եւ²⁸ յորժամ ²⁹առ Հաւր մարմնով ընդ աջմէ եմուտ եւ խառնեաց զմեզ յաստուածութիւնն³⁰ իւր ³¹Միածին Որդին հզաւրակից, որոյ³² ի ձեռն հաստեաց³³ զհիմունս երկրի եւ պարզեաց զպարզուածս երկնից. վասն որոյ մարգարէն ասէր³⁴. Յայտնեաց զաջ³⁵ իւր եւ զբազուկ իւր ամենայն հեթանոսաց, եւ տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ³⁶: 26 ³⁶Աջ Հաւր ինքնին եւ բազուկ՝ Միածինն Քրիստոս, եւ նովաւ լուսաւորեցան ամենայն եղեալք³⁷. որ՝ Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն³⁸. որ՝ Ամենայն ինչ նովաւ եղեալ, եւ՝ նովաւ հաստատեցաւ³⁸ ամենայն ինչ, որ յերկինս եւ յերկրի³⁹: 27 Հարկ էր զի նովին սրբեսցին, որով

1 յանմահութիւն իւր
 2 թեպէտ եւ
 3 աստուածութեան
 4 չիբ
 5 ի մէջն
 6 ցանկորդ
 7 ի հրեղէն
 8 ի մէջն
 9 մարմնաւորիս
 10 չիբ
 11 չիբ
 12 չիբ
 13 բանակաց երկնաւոր զուարթնոց
 14 չիբ
 15 կատարելամիտ իմաստնոց եցոյց եւ յայտնի
 16 լուսոյն սքանչելութեամբ
 17 Յ՝ՎԸ՝ԺՎ՝Գ
 18 զխոստացեալսն
 19 ծնունդն
 20 զանկէտ
 21 ի մշտնջենական
 22 ձորէն

22 զամենայն
 23 Տե՛ս Ագաթ., էջ 192 (ՄԷ, հտ. Բ, էջ 1479):
 24 ընդ մարդկութեանս
 25 ընդ մեռոտս
 26 մարդիկ
 27 Աստուածութեան
 28 չիբ
 29 մարմնովն առ Հօրն ընդ աջմէն
 30 յԱստուածութիւն
 31 միածին Աստուածորդին հզօրակիցն Հօր
 32 յորոյ
 33 հաստատեաց
 34 ասէ
 35 Տէր զաջ
 36 Տե՛ս՝ Ս՝Պ՝Վ՝Լ՝ 1-3:
 36 Աջն Հօր իսկ է եւ բազուկն
 37 եղեալսն
 38 Յ՝ՎԸ՝Լ՝ 1
 38 Յ՝ՎԸ՝Լ՝ 3
 38 հաստատեցան
 39 Կ՝Պ՝Լ՝ 16

եղենն՝ հաստատեցանն¹, ²եւ լուսաւորեսցին: 28 եւ կամեցեալ Աստուծոյ, զի կեցցեն արարածք, եւ մի՛ կորիցեն՝, առաքեաց³ Աստուած զՀոգին Սուրբ ի Կոյսն Մարիամ, եւ առ Աստուածորդին մարմին ի Կուսէն, որով կորոյս ⁴զչարն եւ պատուիրեաց զմեզս աստուածախառն մարմնովն. ի բարձրախառն խոնարհութենէն՝ ⁵զաներեւոյթս խառն տեսմանէն, աւետարանաւն հրեշտակաց առ հովիւսն՝ զաստուածային⁶ փառացն գուշակէր, ⁷մտուր եւ խանձարուրսն՝ զխոնարհածեւ մարմնոյն ⁸զաղքատութիւն ի մէջ բերելով. առաջնորդութեամբ աստեղն, մոգուցն պատարագաւք յայտնի է⁹ Ամենատեառնն տէրութիւն. երկրաւորաւքս գիտասցուք զմարմինն, եւ երկրաւորաւքն ծանիցուք զաստուածութիւնն: 29 Արդ, տե՛ս՝ զինչ ¹⁰պատմէ քեզ Միքիա շնորհաւք Հոգւոյն մարգարէութեանն¹¹ թե՛ եւ դո՛ւ Բեթղէեմ¹², ոչինչ ¹³կրտսեր ես, վիմակեցես. ի Բեմ ¹⁴ծագեսցի ինձ իշխանն տան Իսրայելի, եւ ելի՛ նորա ի սկզբանէ աւուրց աշխարհիս¹⁵: 30 Սկիզբն¹⁶ զաստուածութիւնն ցուցանէ.

ի Բեթղէէմ¹⁷ զմարմինն պատմէ ¹⁸հրեշտակապետն. Ծնիցէ, ասէ, եւ ¹⁹կոչեսցի անուն նորա Քրիստոս²⁰. եւ սաղմոսարանն երգէ՝²¹ Յառաջ քան զարեւ զանուն նորա: 31 Զմարմնածնին²² ծնունդն պատմէ, եւ միւսն զաստուածութիւնն ցուցանէ՝ յաւիտեան²³ ի Հաւրէ ծնեալ: 32 Մեք զայս ճշմարիտ հաւատս ունիմք ի սուրբ Գրոց եւ յաւրինաց եկեղեցւոյ՝ առաջնորդ կենաց ճանապարհի առ Աստուած, եւ ի սուրբ Գիրս վարդապետութեանն²⁴ հաւատովք:

33 Յետ...²⁵:

34 Բայց մեզ դեռ կայ պատմել²⁶ զծնունդ Աստուածորդոյն ²⁷ի Կուսէն. եթե զիս՞րդ եղեն²⁸, մի ըստ միողէ կարգեսցուք²⁹: 35 Զի ո՛չ եթե յորմէ հետէ ծնունդ³⁰ ի Կուսէն իցէ՛ յայնմ հետէ սկիզբն³¹ անսկզբանն Բանին գոյութեան³², որ³³ յառաջ քան ³⁴զամենայնն ծնաւ, իսկ արդ վասն մեր էջ եւ մարմնով ծնաւ ի Կուսէն. ³⁵այն, որ ծնունդ Հաւր, որ զնայն ծնաւ՝ նա միայն գիտէ: 36 ³⁶Իսկ երկրորդն շնորհաւք իւրովք ի մէջ մարդկան, վասն զի կեցուցէ զմարդիկ եւ աւրհնեցէ յա-

1 եւ հաստատեցան
 2 եւ նովաւ լուսաւորեսցին
 3 Հմմտ. Լ ՏՃԺ. Բ 4. Բ Պէք. Գ 9:
 4 Արդ առաքեաց
 4 զչարն. դովին մարմնովն պարտաւորեաց զմեզս
 5 զաներեւոյթ խառն տեսմանն: Աւետարանումն հրեշտակացն
 6 զաստուածեղէն
 7 մտուրն եւ խանձարուրքն զխոնարհածիք
 8 զաղքատութիւնն ի մէջ բերելին. առաջնորդ աստեղրն
 9 չիք
 10 պատմէ մեզ Միքիայն շնորհ
 11 մարգարէութեան
 12 Բեթղէեմ, ասէ
 13 կրտսեր վիմակեցես հասեր
 14 ծագեսցէ ինձ պետ եւ իշխան տանն
 15 աշխարհի
 15 Տե՛ս Միքի. Ե 2:
 16 Ի սկզբանէ

17 Բեթղէեմ
 18 Հրեշտակապետն ասէ. ծնցի
 19 կոչեսցեն զանուն
 20 Յիսուս
 21 Տե՛ս Մարք. Լ 21:
 21 երգեսց
 22 Սիւս. Վ 17
 22 Մին զմարմնածին
 23 գլխառաջ քան զարուեսակ
 24 վարդապետութեան
 25 Տե՛ս Ագաթ., էջ 195 (ՄՀ, հտ. Բ, էջ 1482):
 26 պատմել ձեզ
 27 որ ի կուսէն
 28 եղիւ
 29 պատմեսցուք
 30 ծնունդն
 31 է սկիզբն
 32 գոյացութեան
 33 այլ
 34 զամենայն յաւիտեանս ծնաւ ի չորէ
 35 այլ այնր ծնունդոց
 36 Իսկ երկրորդ ծնունդն շնորհիւ իւրով

ուձին 1անիծիցն անդ գերկիր, իւրով² ււրհնութիւնաբեր գարշապարաւքն նորոգեաց³. զի ետես կորուսեալ զմարդիկ, ժողովեաց զցրուեալսն եւ եգիտ զկորուսեալսն: 37 Եւ յղացեալ այնուհետեւ ի Հոգւոյն Սրբոյ՝ ի 4չնորհագիւտ ի Կուսէ յանցանաց յանապական արգանդէ, Որդին Աստուծոյ, անհասական պայմանաւ, 5ըստ ւարինակի ծննդականաց ծնեալ⁶ զանդրանիկն 7ի քաղաք Դաւթի 8ի Բեթղէեմ, առ ի կատարելոյ զմարգարէականն թե՛ Դո՛ւ 9Բեթղէեմ, տուն 10Եփրաթայ, ոչինչ կրսեր իցես ի հազարաւորս Յուդայ, ի Բեմ ելցէ ինձ 11իշխան եւ պետ Իսրայելի, եւ ելք Գորա 12ի սկզբանէ աւուրցա՞: 38 Տեսանե՞ս զելսն յառաջընծայս. տեսանե՞ս 13զաւետիս հրեշտակաց յաւթեվանս Հովուաց, եթե՛ Ծնաւ ձեզ այսար Փրկիչ, որ է աւծեալ Տէր՝ ի Բաղաբի Դաւթի: 39 Տեսանե՞ս՝ որոյ ելքն ի սկզբանէ աշխարհի, այսաւր ծնաւ՝ ասէին, եւ 14 պատմէին 15 զաւծելոյն, առ ի նշանակելոյ զմարգարէականն թե՛ Ո՞վ պատմէ ի մէջ մարդկան զաւծեալ իւր՞. եւ տուեալ նշան զաւծելոյն թե՛ Գտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս եւ եղեալ ի

մտուր՞: 40 Այն իսկ էր յաւիտենական խորհուրդ¹⁶ ծածկեալ 17առ ի յԱստուծոյ, որ յայտնեցաւ երկրակեաց իշխանացն: 41 18Զորս եւ անդէն իսկ աստուածական¹⁹ փառացն զերգս առեալ երկնաւոր զաւրու՛ն՝ Հովուացն ուսուցանէին, զի մի՛ ի մարոյն եւ 20ի խանձարրոյն արհամարհեալ Հովուացն կարծիցէ²¹: 42 Եւ փութացեալ այնուհետեւ Հովուացն՝ հասեալ գտանէին զմանուկն ըստ նշանակելոյ հրեշտակին, որ ո՛չ միայն մաւտաւորաց²², 23այլ եւ հեռաւորաց բազմաց երեւելեաց աստղանշան ծանաւթ գտեալ: 43 Անդ էր այնուհետեւ 24քննել ի հոգիապատում մատեանս մարգարէիցն, եթե՛ Մանուկ ծնաւ մեր եւ որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն է²⁵ ի վերայ ուսոց իւրոց. եւ անուն կոչեցաւ նմա՝ հրեշտակ մեծի խորհրդոյ, սփանչելի խորհրդակից, Աստուած հզար, հայր²⁶ հանդերձելոյ աշխարհիին: 44 Տեսանե՞ս, զի որդի²⁷, եւ իշխան եւ հրեշտակ եւ խորհրդակից, եւ Աստուած հզար եւ հայր հանդերձելոյ աշխարհին՝ զայսաւրածին մանուկն նշանակէ: 45 Բանգի եւ է իսկ Որդի, վասն զի զաւրութիւն Աստուծոյ է, եւ 28 խորհրդակից եւ Աստուած հզար, որով եւ յաւիտենաւքն Հաստատեցան. եւ մանուկ, զի այսաւր ի սուրբ Կուսէն 29ի Բեթղէեմ ծնաւ. որ՛ յա-

1 անիծից անտի
 2 եւ իւրով
 3 եկեալ նորոգեացէ
 4 շնորհագիւտ կուսին անարանց յանապական արգանդին գիրդին
 5 եւ ըստ օրինին
 6 ծնաւ
 7 ի Բաղաբի
 8 ի Բեթղեհեմ
 9 Բեթղեհեմ տունդ
 10 Եփրաթայ, սակաւաւորդ իցես լինել ի հազարաւորսն
 11 պետ եւ իշխան
 12 յաւիտենից աշխարհի
 * Մէ՛. Ե. 2. Գէ՛. Մ. Գ. Բ. Բ. 6:
 13 եւ զաւետիս հրեշտակացն յօթեանս հովուացն
 ք Ղ. Գ. Բ. Բ. 11
 14 չիք
 15 պատմեն
 ք Լ. Գ. Գ. 13

Գ. Գ. Բ. Բ. 12
 16 խորհուրդն
 17 առ Աստուծոյ
 18 Զորոյ
 19 զաստուածական
 20 ի պատանացն
 21 կարծիցի
 22 մտաւորացն
 23 այլեւ բացականացն արեւելեաց
 24 Բնելի հոգեպատում մատեանն մարգարէականք, թէ
 25 իւր է
 26 իշխան հայր
 ք Լ. Գ. Բ. Բ. 6
 27 եւ որդի
 28 չիք
 29 ծնաւ ի Բեթղեհեմ

ուղապատում իսկ է², թէ՛ Տէր ասաց ցիս, Որդի իմ ես դու, եւ ես այսար ծնա զեզ³։
 46 Եւ Հայր Հանդերձելոյ աշխարհին, զի զՀնացեալ եւ ³զմահակուլ աշխարհս, ըստ Հողածին առաջին մարդոյ, երկրորդ մարդն կուսածին, եկեալ յերկնից՝ նորոգեցէ⁴։
 47 Եւ իշխան, քանզի Գաւազան բղխեալ յարմատոյն Յեսսեա՝ ասէ Էսայի, եւ ծաղիկ ի շառաւիղաց ⁵անտի⁵, եւ ծնունդ դստերն Դաւթայ⁶։ 48 Ապա եւ՝ Յաթոնն Դաւթի նստի⁷ եւ զարբայութիւն նորա յաջողէ⁸։
 49 Որով եկեալ Հասին աւուրք⁹, զոր մարգարէն յառաջագոյն սահմանեաց. Ահա աւուրք գան, ասէ Տէր, եւ ¹⁰հաստատեցի զուխտն իմ ի բարի, զոր խաւսեցայ ի վերայ տանն Իսրայելի եւ ի վերայ տանն Յուդա. ¹¹յաւուրս յայտոսիկ եւ ի ժամանակս յայսմիկ ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, որ առնիցէ իրաւունս եւ արդարութիւն յերկրի¹²։ 50 Վասն որոյ անդէն¹² ասէ. Դարձ անդէն¹³ եւ բունն հար զմմանէ Յակովբ¹⁴ ընդ ծագումն առաջի¹⁵ լուսոյ նորա. մի՛ տար այլում զփառս քո եւ մի՛ գաւզուտս քո ազգի աւտարոտաց¹⁶։

1 որ եւ
 2 ասէ
 3 Սաղմ. Բ՝ 7
 4 զմահակուլ աշխախս ըստ առաջին հողածին մարդոյն
 5 նորոգիցէ
 6 անտի՝ զծնունդ
 7 Տէ՛․ Կ․ ԺԼ՝ 1։
 8 Դաւթի
 9 նստցի
 10 յաջողեցէ
 11 Կ․ Թ՝ 7
 12 աւուրքն
 13 հաստատեցից զքանս իմ բարի
 14 Յաւուրսն յայտոսիկ եւ ի ժամանակին յայնմիկ
 15 Կրէմ. ԼԳ՝ 14-15
 16 եւ անդէն
 17 Յակոբ
 18 չիբ
 19 առաջին
 20 օտարոտոյ
 21 Բար. Գ՝ 2-3

51 Իսկ այլ մարգարէ յայտնագոյն վճիռ¹⁷ տայ թե՛ Յաւուրն¹⁸ յայնմիկ ¹⁹զխորանն Դաւթի զանգեալն, եւ կանգնեցից զկործանեալն նորա, եւ գլատակեալն վերստին կանգնեցից, եւ շինեցից զնա ըստ աւուրցն յաւիտենից, որպէս զի ²⁰խնդրեցին զիս մարդիկ, որ մնացեալ են, եւ ամենայն ազգք, յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր, որ առնէ զայս²¹ յայտնի է ի սկզբանէ յաւիտեանս²¹։ 52 Քանզի յառաջագոյն խոստացաւ²² Դաւթի, ասէ եւ²³ թե՛ Ի պողոյ ²⁴որովայնի նորա նստուցից յաթոն նորա²⁵։ բարձրացուցեալ քան զամենայն թագաւորս երկրի՝ հաստատել²⁶ զաթոն նորա ²⁷ըստ աւուրցն երկնից, իբրեւ զարեգակն առաջի իմ եւ²⁸ իբրեւ զլուսին, զի հաստատեալ է յաւուրն²⁹։ 53 ²⁹Նա եկեալ, որոյ իւրն է, եւ եցոյց հեթանոսաց³⁰, որպէս եւ պատմեացն Մովսիսի³⁰. եւ յարուցեալ թագաւորն³¹ համաշխարհական՝ զամենայն ազգս հնագանդելով, եւ ³²թագաւորութիւն իւր այլում ո՛չ փոխեալ³², ըստ ասելոյն³³

17 իսկ վնիռ
 18 Յաւուր
 19 կանգնեցից զխորանն Դաւթի, զանկեալն կանգնեցից, եւ զկործանեալս նորա եւ զսատակեալս նորա
 20 խնդրեցեն զիս մնացորդ մարդկան եւ ամենայն հեթանոսք
 21 Ը՛․ Թ՝ 11-12
 22 յաւիտեանց
 23 խոստացեալ
 24 չիբ
 25 յորովայնէ քո
 26 քո
 27 Տէ՛․ Սաղմ. ՃԼԸ՝ 11։
 28 հաստատեալ
 29 ըստ աւուրցն
 30 չիբ
 31 Տէ՛․ Սաղմ. ՉԸ՝ 28, 30, 37-38։
 32 իւրն է թագաւորութիւն. եւ նա է յոյս
 33 Հմմտ. Ծն. ԽԹ՝ 10։
 34 Մովսէս
 35 թագաւոր
 36 զթագաւորութիւն իւր ազգի
 37 Հմմտ. Գաւ. Բ՝ 44։
 38 ասացելոյն

Դանիէլի, որ վասն¹ Դաւթի իսկ, որոյ որդի անուանեցաւ Քրիստոս. բղխեալ ի սրտէ ²Հոգեպատում մարգարէից՝ բարբառովն զհրամանս թագաւորին յայտ արարեալ, նախ թե՛ Գեղեցիկ է տեսութեամբ քան գամեմայն որդիս մարդկան, եւ շնորհս սփռեալ³ ի շրթանց իւրոց⁴, եւ գեղեցիկ՝ ո՛չ կերպարանաց⁴, այլ անզուգական փառացն ասէ: 54 Եւ դարձեալ. Ա՛ծ⁵ գտուր քո ընդ մէջ քո, հգա՛ւր, զի վայել է նշմարտութեան քում: 55 Ապա ⁶յետ այտորիկ զոր լուարուքն, զի միանգամայն վճիռ տայ⁷. Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտեանից, գաւազան ուղղութեան եւ⁸ գաւազան արքայութեան քո. եւ նշանակէ, թէ աւժեալն է այն, զոր եւ ինքն եւ ⁹մարգարէքն զմուտ աւժելոյն երգէին, ասելով թե՛ Վասն այտորիկ աւժ զքեզ Աստուած, Աստուած քո, իւրով ուրախութեամբ¹⁰ առաւել քան զընկերս քո: 56 Տեսանե՞ս, յառաջագոյն¹¹ ծանուցեալ տեսանաւ¹² մարգարէին Հոգւով¹³ Սրբով, թե Միածին Որդին Աստուծոյ, աթոռակից Հաւր իւրոյ¹⁴, Սիրելին՝ եղեւ Որդի Դաւթի, եւ բարձրացուցանել զաթոռ նորա յաւիտեան¹⁵. որպէս եւ ¹⁶ասէ իսկ թէ՛

Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի ¹⁷իմ, զի ընդ աջմէ իմմէ: 57 ¹⁸Զոր եւ մարգարէն գիտէր, զի երգմամբ երգուաւ նմա՛¹⁹ ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա՛ որում աւրինակքն²⁰ իսկ վկայեն²¹ թէ՛ Յագգէ ²²Դաւթի, յառաջագոյն գուշակելոյն՝ ի Բեղդէմ գեղջէ գա Քրիստոս²³: 58 Եւ անդ ²⁴նա ո՛չ նշանով մոգուցն միայն եկելոյ թագաւոր ճանաչէր, ²⁵եւ որք ասէինն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէիցն²⁶. եւ տեղեկացեալ ²⁷ի դպրաց անտի՛ Հասին ի տեղին, ուր էր մանուկն, ²⁸որում երկրպագեալ՝ մատուցեալ պատարագս, եւ միանգամայն տէրագէտ հրեշտակածանաւթ եղեալ դարձան:

59 Յետոյ²⁹:

60 Զի թեպէտ³⁰ խոնարհեցաւ Աստուածութիւնն յերկնից, սակայն ³¹յերկարակեաց ի ներքնոյս բարձրացեալ ճանաչի. ի միտ առեալ, զի թեպէտ³² խոնարհութեամբ էջ, սակայն ինքնաբուն իւրոյ³³ փառացն զաւրութեամբ վերացեալ՝ ըստ

1 նաեւ
 2 հոգեպատում բարբառով մարգարէին, գիւտեալ
 3 սփռել
 4 Ս՝ՂՄ. ԽԳ. 3
 4 զկերպարանացն
 5 թէ՛ Ած
 6 Տէ՛՝ Ս՝ՂՄ. ԽԳ. 4:
 6 յետ այնտորիկ միանգամայն
 7 տաց. թէ
 8 չի՞ք
 9 Ս՝ՂՄ. ԽԳ. 7
 9 մարգարէն գմուտս օծելոյն երգէր ասելովն
 10 ուրախութեան
 11 Ս՝ՂՄ. ԽԳ. 8
 11 զի յառաջագոյն
 12 տեսող
 13 Հոգւովն
 14 չի՞ք
 15 յաւիտեանական
 16 ասէն.

17 իմ յամենայն ժամ. եւ
 է Ս՝ՂՄ. ԺԵ. 8
 18 զոր եւ գիտէ
 19 նմա Աստուած
 20 Ս՝ՂՄ. ՃԼԸ. 11:
 20 եւ օրինականքն
 21 վկայելին
 22 Դաւթի եւ ի Բեթղահէմ
 23 Քրիստոսն
 է Տէ՛՝ Յ՝ՎԸ. Է. 42:
 24 նա ո՛չ միայն յառաջագոյն գուշակելոցն, այլ եւ առ ժամայն նշանաւ մոգուցն եկելոց
 25 որք եւ ասէին
 26 Հրէից
 27 Մ՝ԳԶ. Բ՝ 2
 27 ի դպրացն՝ հասանէին
 28 որում եւ երկրպագեալ եւ պատարագս մատուցեալ
 29 Տե՛ս Ագաթ., էջ 202 (Մ՛, հտ. Բ, էջ 1489):
 30 թէպէտ եւ
 31 յերկրակեաց ի ներքնոցս
 32 թէպէտ եւ
 33 իւրոց

յառաջագուշակ տեսողութեանն¹ մարգարէին, թե՛ Վերացի եւ բարձրացի եւ փառաւորեսցի յոյժ²: 61 *Իբրեւ զի* ²*ո՛չ էր նա կարաւտ փառաց, այլ յետ իւրովք կամաւք զիւր կամս կատարելո՞՛ համբերատար իշխանութեամբն, ո՛չ եկամտաւք³ ինչ, այլ բնական փառաւքն վերացեալ ճանաչէր երկնաւոր զաւրուն, ըստ այնմ, որ ասեն⁴. Համբարձաւ Պատուած արհմութեամբ⁵: 62 *Եւ զի էջ ի խոնարհութիւն խոնարհ մարմնով⁷, վասն այսորիկ⁸ նորին խոնարհութեան մարմնոյ⁹ կերպարանաւք բարձրանայ*: 63 *Իբրեւ զմարդ* ¹⁰*խոնարհեցաւ, որ առաւել քան զամենայն մարդիկ* ¹¹*խոնարհ եւ հեզ, եւ հանդարտութիւն ցուցեալ* ¹²*Համբերութիւն վշտաց, որ առ մարմինն. վասն այնորիկ¹³ նովին մարմնովն բարձրացեալ* ¹⁴*ի խոնարհութեանցն՝ մարմնովն իբրեւ զմարդատեսիկ կերպարանացն, զոր առ¹⁵:**

1 Երանելոյն Կիրղի Աղեփանդրացւոյ՝ ի Մեկնութենէ առաքելոյն, յերբայցեցոց թղթոյն՝ յԱռաջինն մատեն, ի բանէն՝ Բագուս մասամբք եւ բագուս արիմակաւ կանխաւ խաւսեցաւ:

2 Ասէ այսուհետեւ երանելին Պաւղոս.

1 տեսողութեան
 * Ե․․ ԾԻՒ 13
 2 ոչինչ է
 3 եկամտաւ
 4 ասէն թէ
 5 եւ Տէր մեր ձայնի փողոյ
 Զ Ս․ՂԲ ԽԳ 6
 6 Ազգաբանգեղոսի համեմատութեամբ այստեղ 12 տող բաց է թողած:
 7 մարմնովն
 8 այնորիկ
 9 մարմնոյն
 10 խոնարհ երեսեալ, եւ առաւել
 11 հեզ եւ խոնարհ
 12 համբերութեամբ վշտացն. գոր առ ի մարմինն
 13 այսորիկ
 14 ի խոնարհութեանցն մարդկութեամբն վերացեալ եւ բարձրացեալ եւ փառաւորեալ, իբրեւ զի զմարդատեսիկ
 15 առն

Բագուս կերպարանաւք խաւսեցաւ ընդ հարս մեր մարգարէիւն. ի կատարածի աւուրցս այսոցիկ խաւսեցաւ ընդ մեզ Որդովն իւրով, գոր եղ ժառանգութիւն, որով եւ գաշխարհ արար⁶: 3 *Իսկ ինքեամբ խաւսեցաւ ընդ մեզ Որդի՛ ո՛չ եւս միջնորդաւք սրբովք մարգարէիւք, այլ ինքեամբ, որպէս ասացին, լեալ իբրեւ զմեզ Միածինն՝ Աստուած խաւսի*: 4 *Խաւսել ասեմք մաւր որդովն իւրով, ո՛չ եթե մարդով իւրեք՝ որդւոյն միջնորդաւ, որ պատգամաւորութեամբ ինչ զայլոց զկամս եւ զխորհուրդս պատմեցէ. այլ իւրով բարբառովն եւ իւրով մարմնովն խաւսեցաւ ընդ մեզ Որդի. զի իւրով իսկ է Միածին մարմինն, զի ո՛չ այլոյ ուրուք. զի Աստուած է բնութեամբ, եւ եղեւ մարդ տեսչութեամբ՝ իւրով ծառայական կերպարանաւք⁷: 5 *Զի է բնութեամբ իւրով ազատ եւ ազատեալ եւ Տէր ամենայնի, որով ասիմք յիրաւի ուսեալք յԱստուծոյ. եւ այս բարութիւն առաւելութեան պահեցաւ մեզ յԱստուծոյ ի Հաւրէ ի Քրիստոս, եւ զի խոնարհեցոյց զանձն իւր վասն սիրոյ, որ առ մեզ՝ Որդի եղեւ մարդ, եւ ո՛չ անկաւ յԱստուածութենէ իւրմէ, այլ եկաց մնաց որ էն*: 6 *Յայնժամ խաւսեցաւ ընդ մեզ՝ զանձառ Հաւր յայտնի առնել մեզ զխորհուրդն*: 7 *Վասն այսպիսի իրաց կոչի անունն նորա հրեշտակ մեծի խորհրդոյ⁸, զի պատմեաց մեզ որչափ լուաւ ի Հաւրէ⁹, զի պատմեաց ո՛չ իբրեւ մարդով, ուրոյն միջնորդութեամբ՝ ոմանց յիմարութիւն կարծեցաւ, այլ ինքն իսկ եղեւ մարդ եւ իւրով բարբառովն խաւսէր ընդ լսաւղսն*: 8 *Եւ յորժամ ասեմ, թե մարմին եղեւ Բանն, ո՛չ եթե լոկ մարմին ասեմ, այլ յամենայն մարդկութենէն յայտ առնեմ՝ ոգւով բանաւորութեամբ եւ ամենայն**

6 ՏԵ՛Պ ԵԶԵ՛Ր Ը 1-2:
 7 Հ՛ՄԳ՝ ՓԼԳ՝ Բ՛ 6-7:
 8 Հ՛ՄԳ՝ Ե՛Պ Թ՛ 6:
 9 Հ՛ՄԳ՝ Յ՛ՎԸ՛ Ը 40, Ժ՛Գ 25:

մարդկութեամբք կացուցեալ մարդկութեան: 9 Այլ զոր ոմանք տխմարութեամբ եւ յանդգնութեամբ ածեն ի Քրիստոս, եւ մարդ ուրոյն ցուցանեն որ ի Կուսէն ծնեալ՝ կամին պաշտաւնեայք լինել իրաց ընդելացն[?] մոլորութեամբ, որք ո՛չն կարեն ճշմարտութեամբ խոստովանել զմիութիւն երեսացն միոյ Որդւոյն Աստուծոյ՝ մարմնացելոյն ըստ Գրոց: 10 Եթե ո՛չ ըստ արժանի զաւրութեան խորհրդոյ քարոզաց նայեսցիս, մարդ լոկ կարծի Քրիստոս, եթե ո՛չ տացես նմա ըստ արժանի իրացն ճշմարտութեան, զի է Աստուած. վասն Բանին, որ ի բնութեանն է Աստուծոյ, ի սուրբ Կուսէն մարմնացաւ, եւ ո՛չ եթե յարելութիւն ինչ հաւասարութեան, այլ միութիւն ի վերքան զիմաստութիւն մարդկան, որ միացոյց իւր Բանն Աստուած մարմին ի Կուսէն: 11 Եւ վասն զի էակից է Հաւր եւ Որդի բնութեամբ եւ մշտնջենաւորակից, յորժամ ըստ կամաց Հաւր ի Կուսէն ծնանի ըստ մարմնոյ վասն մարդասիրութեան իւրոյ, իբրեւ սկիզբն որդիութեան առնու յանձն միւսանգամ վասն մեր, եւ ասէ յառաջագոյն ի բերանոյ Դաւթի զի՝ Տէր ասաց ցիս. Որդի իմ ես Դու, եւ ես այսաւր ծնա գիեզ՞. զի այսաւրդ սկզբնաւորութեան եւ մերձաւորութեան եւ արդիս ժամանակաց անուն է, յորմէ հետէ եղեն մարմին: 12 Եւ որ Աղամաւն պարտաւորեցաւ, եւ ի վիշտս մատնեցան եւ եղեն ընդ անիծաւք եւ ընդ մահուամբ գրաւեալք, նոյնպէս դարձեալ յամենայն ազգս մարդկութեանն Քրիստոսիւ բաշխեսցի՝ լուսաւորութիւն ազատութեան, աւրհնութեան եւ կենաց ընդունի յանձն իւր: 13 Ձայս ո՛չ իբր կարաւտեալ բնութիւն Միածնին Աստուծոյ, զի լի են նովաւ ամենայն արարածք. քանզի էր բնութեամբ Աստուած եւ ո՛չ իւրիք է կարաւտ, մեծացուցանէ եւ ընու երկնաւոր բարեաւքն իւրովք զամենայն արարածս:

14 Դարձեալ անուանի վասն այդպիսի իրաց երկրորդ Ադամ՞, զի սկիզբն արասցէ երկրորդ կենաց. զի որ առաջին Աղամաւն վնաս եմուտ, ինքն ուղեսցէ եւ զիւր մեծութեան բնութիւնն մարդկան շնորհեսցէ: 15 Ձի ապստամբեցան յանդգնութեամբ մարդիկ եւ հեռացան ի ծառայութենէն Աստուծոյ, կամեցաւ Հայրն եւ Արարիչն կեցուցանել զարարածս իւր, առաքեաց զՄիածնին իւր յաշխարհ՝ զԲանն Աստուած, զի լիցի մարմին եւ շրջեսցի ընդ երկրաւս իբրեւ զմարդ՝ Քարոզել գերեաց գթողութիւն եւ կուրաց տեսանել, կոչել ամ Տեսոն ընդունելի՞ք. զի լիցի քաղցրութեամբ աստուածաբարբառոյն, որ ասէր. Եկա՛յք առ իս. ամենայն աշխատեալիք եւ վաստակեալիք, եւ ես հանգուցանեմ զձեզ՞: 16 Եւ յիրաւի եւ ուղիղ մտաւք իմանալ, թէ աղբատանալն ասի վասն մեր, որ էն մեծ բնութեամբ, զի մեք նորա աղբատութեամբն մեծացուցուք: 17 Յերո՞ւմ երեւէր աղքատութիւն նորա, եթե ո՛չ եղեւ իբրեւ զմեզ, այսինքն մարդ կատարեալ՝ մնացեալ ի նմին անշարժութեանն Աստուած: 18 Այսպէս ուսուցանէ զմեզ Պաւղոս երանելի յասել անդ իւրում թե՛ Որով արար զաշխարհ՞ զի թե ի վախճանի ժամանակի ծնանի Կոյսն զեմամանուէն, ո՞րպէս արդեւք լինել ասիցէ զաշխարհս հոգեկիրն. յիրաւի ասէ եւ առաւել յիրաւի. զի որ յԱստուծոյ Հաւրէ Բանն, որ յառաջ քան զամենայն ժամս եւ ժամանակս եղեալ ի Հաւրէ բնութեամբ, ի վաղջան աւուրցս այսոցիկ ծնանի ի Կնոջէ ըստ մարմնոյ եւ ոչինչ վնասի ամենեւին յԱստուածութեան պատուոյ, որ ունի զժամանակ էութեան կարգս բնութեամբ, զի գրեալ է այսպէս. Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն եւ

« Սաղմ. Ի 7

բ Լ Կոր. ԺԵ 45
 գ Եւ. ԿԼ 1-2. Գ. Կ. Գ. 19
 դ Մարթ. ԺԼ 28
 է Հմմտ. Ի Կոր. Բ 9:
 զ Եբ. Լ 2

յաւիտեանն^ա։ զի եւ մարդկութեամբն երեւեալ՝ կայ ի նմին, վասն բնութեան Աստուածութեանն, որ կանուխ է քան զամենայնն։ եւ հաւանեցուցանէ զքեզ բանն, որ ասէր ընդ Հրէայն թե՛ Արդարեւ ասեմ ձեզ, յառաջ քան զԻհնելն Արքահամու եմ ես^բ։

19 Նորին՝ յերկրորդ նառէն, որ ի՛ Ծագումն փառաց եւ կերպարանք^գ։

20 Արդ երեւեցաւ մեզ Որդի՛ զՀաւր բնութեան փառս ծագեալ յնքեան, եւ զի ասէր իսկ յայտնապէս։ Որ ետես զիս՝ ետես զՀայր իմ^դ։ 21 Զի է կերպարան էութեան նորա, առնու դարձեալ զմեր նմանութիւն թանձրութեան եւ շաւշափելի մարմնոյ եւ յանձն առնու զբովանդակիլ եւ զսահմանելի անուն։ զի բնութիւն Աստուածութեանն անմարմին եւ անշաւշափելի է։ 22 Եւ ո՛չ ըստ նմանութեան մարմնաւորաց ընդունի ծագումն զկերպարանս էութեան Հաւր Որդի, որ է ինքն անձնաւորութեամբ էութեանն։ Թեպէտեւ ի Հաւրէ իմանի եւ ի նմանէ ծնեալ բնութեամբ՝ ունի յինքեան զմեծութիւն Հաւր բնութեամբ ամենայնիւ, բայց միայն ի հայրութենէն։ 23 Որպէս անշիջելի է մշտնջենաւոր Հայր եւ կա նմա ի նմին, որ է, այսինքն Հայր, եւ յորդիութիւն ո՛չ փոխի, նոյնպէս եւ Որդի կա մնա յորդիութեան մշտնջենաւոր եւ երբէք ի հայրութիւն ո՛չ փոխի, զի յայտ լիցի ամենեւին թե կերպարանք էութեան Հաւր։ եւ ցուցանէ զծնաւդին իւրոյ առաւելութիւն յինքեան եւ զփառացն վայելչութիւն՝ զգեղեցկութիւնն։ 24 Զի Աստուած ճշմարիտ է եւ ճշմարիտ յԱստուծոյ ի Հաւրէ ծնեալ, լոյս ի լուսոյ, կեանք ի կենաց, կրէ յինքն զամենայն բանիւ զաւրութեամբ իւրով։ զի բան է կենդանի անձնաւոր, ծնեալ ի յԱս-

տուծոյ Հաւրէ բնութեամբ ամենազաւր, եւ կարաւ ի հրաման նորա, եւ զամենայն ընդ իւրեաւ ունի, կազմէ եւ յարդարէ կամաւ իւրովք։ 25 Ասէ ցբորոտն։ Կամիմ, սրբեա՛ց. եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնէ։ 26 Դարձեալ եւ մեռելոյն հոտելոյն ընթանալ ի կեանս իշխանութեան հրամայէ, որ վայել է իսկ Աստուծոյ իշխանութեանն բարբառոյ։ երբեմն ասէ. Ղազա՛ր, ե՛կ արտաքս՝ երբեմն դարձեալ եւ այրոյ որդւոյն ասէ. Պատանի՛ դու, քե՛զ ասեմ, արի՛է։ 27 Սաստէ դարձեալ ծովուն եւ հրամայէ իբրեւ Տէր եւ արարիչ ամենայնի, զի եւ զՀաւրն իսկ զփառս եւ զառաւելութեան յինքեան ցուցանէր, իբրեւ ցոյց ճշմարիտ վասն աստուածութեան նորա։ 28 Ցուցանէ դարձեալ վասն մարդանալոյն տեսչութեան, որով ապրեցաքն եւ մեծացաքն, սրբեցաք արեամբ նորա, եւ հաւանեցուցանէ զքեզ երանելին Պաւղոս, որ ասէ. Որով ընկալաք զփրկութիւն արեամբ նորա եւ թողութիւն մեղաց^ե։ 29 Պարտ է ածել յայսմիկ զմտաւ զմեծ եւ զփառաւորեալ խորհուրդ մարդանալոյ փրկութեան մերոյ՝ զՄիածին Որդին Աստուծոյ, եւ զարմանալ ասել ըստ բարբառոյն մարգարէին Ամբակումա. Տէ՛ր, զլուր քո լուս եւ երկեա, նայեցայ ի գործս քո եւ զարմացայ^ը։ այս իսկ են զարմանք ի վեր քան զմիտս մեր, զի Բան է բնութեամբ եւ ծագումն փառաց Հաւր եւ կերպարան էութեան նորա, եւ եղեւ մարմին, եւ ո՛չ եթե յիւր բնութեանն ինչ յաւելոյր պատիւ ի մարդանալոյ տեսչութեանն, այլ վասն մեր առնուցու յանձն զվիշտս, համբերէ խաչի մահու, արհամարհէ զամաւթ անարգանաց, զթշնամանս, զթքանս, զի զմեզ արեամբն իւրով ազատեսցէ եւ սրբեսցէ յամենայն պղծութենէ,

^ա Եբր. ԺԳ՝ 8
^բ Յով. Բ՝ 58
^գ Տե՛՛ Եբր. Ը՝ 3
^դ Յով. ԺԳ՝ 9

ե Մատթ. Բ՝ 3. Գե՛՛ Մատթ. Ը՝ 41-42. Գու՛՛ Ե՝ 13
զ Յով. ԺԸ՝ 43
է Գու՛՛ Ե՝ 14
ը Կու՛՛ Ը՝ 14
թ Ըմբ. Գ՝ 2

եւ զազատեալսն մերձեցուցէ ինքեամբք
 ամ Հայր իւր. զի նովաւ ընկալաք զընծա-
 յումն առ Հայր: 30 Նոյն ինքն է դուռն եւ
 ճանապարհ. զի թեպէտ եւ եղեւ Բանն մար-
 մին իւր ի Կուսէն, այլ նովին բնութեան եւ
 փառաւք. եւ յորժամ ընդ մեզ իբրեւ զմեզն
 երեւեցաւ՝ յառաւելութենէ պատուոյն Աս-
 տուծոյ եւ Հաւր աթոռոյն ո՛չ երբէք մեր-
 ժեցաւ. զի էր իբրեւ զմարդ յերկրի եւ ընոյր
 դարձեալ գերկինս, եւ լի էին նովաւ ամե-
 նայն արարածք: 31 Զի Աստուածաշունչ
 Գիրք այլովք կերպարանաւք հաստատեն ի
 մեզ՝ առանց բաժանելոյ զխորհուրդս մար-
 դանալոյ եւ միանալոյ մարմնաւորու-
 թեանն, եւ ասեն այսպէս. Բան մարմին ե-
 դեւ. զի մարմին յորժամ ասէ՝ Հանդերձ
 հոգևով եւ մտաւք բանաւորութեանն իմա-
 նամք զմարմնանալն. զի նմին իմանալի է
 Աստուած բնութեամբ՝ յԱստուծոյ ի Հաւրէ
 անծառայութեամբ ծնեալ եւ նոյն մարդ
 վասն տեսչութեան Աստուածութեան ի վեր
 քան զմիտս իմանալոյն, որ Աստուծոյն
 միայն վայել է: 32 Եւ ո՛չ ասեմք, եթե ար-
 գելեալ սահմանեցաւ բնութիւն Բանին Աս-
 տուծոյ ի մարդկութեանն. զի անսահման
 անբովանդակելի Աստուածութիւն բովան-
 դակէ զամենեսին, ո՛չ բովանդակի յումե-
 քէ, այլ ի սուրբ մարմնոյ իւրո. եւ ընոյր
 զամենայն արարածս, եւ աթոռակից ծնո-
 ղին իւրոյ: 33 Եթե նայեսցի ոք ճշմարիտ
 հաւատոց նայեցած ի սուրբ եւ ի փրկական
 խորհուրդն՝ տեսանէ ի Քրիստոս զկատա-
 րեալ մարդկութիւնն, կատարեալ դարձեալ
 զբնութիւն Բանին Աստուծոյ. սակայն մի
 Քրիստոս, մի Որդի խոստովանելի է՝ միով
 երեսաւք, միութեամբ ի վեր քան զմիտս,
 անճառ, անհաս գիտութենէ մտաց մարդ-
 կան, որ Աստուծոյ գիտութեանն միայն
 անդ է: 34 Քանզի անուանի Եմանուէլ, ի

սուրբ Կուսէն ծնեալ՝ ընդ մեզ Աստուած^ք.
 այսուհետեւ թե մարդ անուանեսցես զնա
 եւ լուիցես ի մարդկութենէ, եթե որ իբրեւ
 զմեզ եղեւ յայտ առնես:

35 Նորին՝ յերրորդ ցառէն. Յորժամ
 միւսանգամ ածցէ զանրանիկն յաշխարհ:

36 Վասն զի Բանն Աստուած ի Հաւրէ
 կամեցաւ նորոգել զամենայնն, որպէս ի
 սկզբանէն, միացոյց իւր մարմին ի սուրբ
 կուսէն Մարիամայ եւ անուանեցաւ Որդի
 Մարդոյ, զի մատուցէ զինքն Աստուծոյ
 Հաւր պատարագ հաշտութեան, գնեսցէ
 զամենեսեան արեամբն իւրով, տիրեսցէ
 կենդանեաց եւ մեռելոց եւ բազում իրաւք
 տեղեակս արասցէ զմեզ խորհրդոց փրկու-
 թեան իւրում: 37 Եւ առաւել զայս պարտ
 է մեզ գիտել, զի թեպէտ եւ խոնարհեցաւ
 Բանն Աստուած եւ մարդացաւ, ո՛չ զի
 կացցէ մնասցէ ի խոնարհութեան ընդ մեզ,
 այլ եւ հանդերձ մարդկութեամբ է նոյն
 Աստուած. այլ զի կամաւք իջոյց զանձն
 իւր ի խոնարհութիւն եւ եղեւ մարմին եւ
 անուանեցաւ եւ եղեւ եղբայր մեր երկրա-
 ւորացս: 38 Սակայն թեպէտ եւ եղեւ մարդ
 եւ անուանեցաւ անդրանիկ ընդ բազում
 եղբարս, սակայն գիտեմ զառաւելութիւն
 նորա եւ զփառս, խոստովանիմք ի վերայ
 ամենայնի Աստուած: 39 Այլ այսպէս ա-
 սեմք զմտանելն նորա յաշխարհ, զի եղեւ
 իբրեւ զմի ի մէնջ եւ անուանեցաւ մարմ-
 նաւոր իբրեւ զմարդ յաշխարհէ, որ է բնու-
 թեամբ ի վերուստ. եւ զարժանաւորութիւն
 փառաց իւրոյ զառաւելութիւն, որ միայն
 Աստուծոյ վայել էր, առանց մերժելոյ ու-
 ներ յինքեան. այլ տեսչութեամբ իմաստու-
 թեամբ իւրով եւ կամաւք բարերարու-
 թեամբ կամեցաւ լինել իբրեւ զմասնաւոր
 եւ զբովանդակելի: 40 Եւ այն, որ բովան-
 դակելին էր բնութեամբ, էր յաշխարհի իբ-
 րեւ զԱրարիչ, արդ տեսչութեամբ իւրով եւ
 կամաւք Հաւր մտանէ յաշխարհ, իբրեւ զմի

« Յ՝ՎԸ՝ Ը 14

ք ՏԵ՛՝ Ե՛՝ Է 14 Մ՝ՊԳ՝ Ը 23:

յաշխարհէ, զի կեցուցէ զայնոսիկ, որ էին յաշխարհի, եւ բռնադատեալքն պատրանաւք խաբէութեամբ չարին եկեցեն Քրիստոսիւ առ Աստուած Հայր: 41 Զի որպէս Ադամաւ, որ մասնաւոր է յաշխարհէ՝ անկաւ յապականութիւն մարդկան բնութիւն, գրեցաւ ընդ մեղաւք եւ եղի ընդ մահուամբ, նոյնպէս դարձեալ Քրիստոսիւ, որ կամաւ իւրով եղի իբրեւ զմասնաւոր յաշխարհէ, զի կեցուցէ զամենեսեան ի նորոգութիւն կենաց՝ ի սրբութիւն եւ յարգարութիւն: 42 Քրիստոսիւ ամենայն ինչ նորոգեցաւ. այլ գիտել մեզ ճշմարտիւ եւ հաւատալ, եթե որ է Բանն Աստուած եւ եղեւ մարմին եւ ի բնութիւն մարմնոյ ո՛չ փոխեցաւ, զի անհնար էր, այլ զի միացոյց իւր մարմին ի Կուսէն: 43 Եւ ո՛չ ասեմ մարդ զոք կամաւք եւ հաճութեամբ մերձաւորութեամբ մերձենալ առ Աստուած, այլ միացեալ եւ մարդացեալ Բանին Աստուծոյ ի սուրբ Կուսէն՝ սա մի Որդի է Յիսուս Քրիստոս, մի Տէր անբաժանելի. ո՛չ բաժանեն ի մի երեսս զԲանն Աստուած եւ ի մի երեսս զմարդն ի Կուսէն, այլ զմի եւ զնոյն Որդի խոստովանել Աստուած մարդացեալ: 44 Այսպէս տեղեկացուցին զմեզ Գիրք Աստուածաշունչք՝ զնոյն ինքն զԲանն Աստուած Աստուծոյ Հաւր միացեալ բնութեամբ եւ մարդացեալ, մարմին բանաւոր եւ մտաւոր երեւեալ յերկրի՝ մարդ, հանդերձ առաւելութեամբ փառաւք Աստուածութեանն: 45 Այսուհետեւ մի է Քրիստոս՝ Որդի եւ Տէրք, ըստ Գրոց. այսպէս հաւատասցուք:

46 Նորին՝ յերրորդ նառէն, ի բանէն՝ Սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զանարեւոտութիւնք:

47 Կամեցաւ այց առնել արարածոց իւրոց Տէրն ամենայնի եւ Արարիչն արա-

րածոց, զի հաճեցաւ Աստուած Հայր կատարել եւ բովանդակել Քրիստոսիւ զամենայն եւ նորոգել միւսանգամ, որպէս եւ ի սկզբանն, եւ զգիւրամուտար միտս մարդոյն, որ ի պատրանս անգեալ էր, շնորհաւք Հոգւոյն Սրբոյ տեղեկութեամբ հաստատեցէ ի գիտութիւն ճշմարտութեան եւ կացուցէ առաջի իւր սուրբս եւ ամբիծս եւ անարատս՝, եւ յամենայն աղտոյ եւ ի մեղաց սրբեցէ, եւ յառաջին պատուիրանացն ազատեալս՝ ի ճշմարտութիւն հաստատեցէ զմեզ: 48 Եւ արդ, ո՞րպէս իցէ ի վերին այցելութեանն խնամոյ կարգք. Բանն իւր Միածին, որ հաւասար կերպարանաւք էր առ Հայր իւր, որ էն եւ ասին՝ Ոչինչ էր նմա յափշտակութիւն հաւասար Աստուծոյ, այլ զանձն իւր ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի էառ, ի նմանութիւն մարդկան եղեալ եւ կերպարանաւք մարդ գտաւ. խոնարհեցոյց զանձն իւր, եղի հնազանդ մինչեւ ի մահ, եւ մահու խաչիք:

49 Բազում հոգաբարձութեամբ տեղեկք խորհրդոյ Տեառն իւրեանց՝ զբարձրութիւն փառաց Աստուածութեանն Միածնին յայտնեն պատմութիւն քրիստոնէից մեզ, ցուցանել զխորհուրդ զուսայնալոյ եւ զխոնարհելոյ կարգս իմաստութեամբ. իջուցանեն զԲարձրն բնութեամբ, զի դարձեալ բարձրացուցանել զնա, եւ աստուածութեամբ մեծութեամբ բնութեան պսակեն զնա՝ հանդերձ մարմնովն, եւ հաւանեցուցանեն զսրբեալսն շնորհաւք նորա, եթե վասն մեր կամաւք աղքատութիւն առ յանձն, զի իբրեւ սկիզբն երկրորդ արացէ զկնի առաջին մարդոյն: 50 Ասէ երանելին Եսայի այսպէս. Ահա կոյս յղացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցէ զանուն նորա Եմմանուէլ. եւ ի մեղր կերիցէ. յառաջ քան զժամանակ գիտելոյ նորա զչարն՝ ընտրես-

ա Վճճ. Լուս. Ե 12-21:
բ Վճճ. Ե Կոթ. Բ 6:
գ Սաղմ. ԽԻ 8. Եբբ. Ե 9

դ Վճճ. Կոթ. Ե 22:
ե Փլա. Բ 6-8

ցէ գրարիմ⁶⁶. յառաջ քան զգիտել մանկանն զչար կամ զբարի, անարգեսցէ զչարն եւ ընտրեսցէ զբարին. Սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զանարեւնութիւն⁶⁷. վասն զի ինքն է արդարութիւն եւ Աստուած: 51 Զի մինչչեւ ի ժամանակ մանգանն կարողութիւն գիտելոյ զպարսաւէն եւ գովել զգովութեան արժանի, զիա՞րդ էր Հնար խնդրել զչարն եւ ընտրել զբարին: 52 Այլ այսպէս ուսուցին, թէ Աստուած երեւեցաւ մարմնով ըստ արժանի իւր բնութեան բարեաց՝ յայտնել զընտրութիւն բարութեան եւ զպարսաւանս չարեաց. այս ասացեալ լիցի վասն ճշմարիտ կրանիցն հաւատոյ: 53 Արդ, վասն այսորիկ բարերար Բանն Աստուծոյ, Որդին բնութեան Հաւր, որ անկարաւտն է բնութեամբ, սուրբն, արդարն, որ սիրէ զարդարութիւն եւ ատէ զանաւրէնութիւն՝ եղեւ իբրեւ զմեզ եւ անուանեցաւ ծառայ, եւ Աստուած անուանեաց իւր բնութեանն զՀայրն իւր՝ վասն մարդանալոյն. զի թեպէտ եւ Աստուած էր բնութեամբ, աւծանիլ ասէ ի Հաւրէ Հոգւով Սրբով, ո՛չ եթէ իբրեւ կարաւտ բնութիւն՝ այն որ սուրբն իսկ է եւ Աստուած բնութիւն, այլ զի ինքեան բացցէ մեզ դուռն շնորհաց եւ արժանի արասցէ զմեզ Հաւր աւրհնութեանն. որ յառաջագոյն ընդդիմադարձ գտեալ էաք պատուիրանազանցութեամբ Ադամա, եւ զկնի նորա ի վերա մեր բռնացեալ էին մեզքն մեր: 54 Վասն այսորիկ ո՛չ պատգամաւորաւք եւ ո՛չ հրեշտակաւք, այլ ինքնին Տէրն փրկեաց զմեզ. զի եւ երանելին Յոհաննէս ասէ, եւ զի Աստուած է բնութեամբ եւ եղեւ մարմին, զհոգեւոր վերստին ծննդեամբ պատուականութիւն շնորհեաց զաւրութեամբ իւրով, այսպէս ասէ վասն նորա. Սա է, որ եկն ջրով եւ Հոգւով, Յիսուս Քրիստոս. ո՛չ ջրով միայն, այլ եւ ջրով եւ արեամբ. եւ Հո-

գիմ է, որ վկայէ, զի Հոգին է նշմարտութեան⁶⁸: 55 Արդ, ասի Հոգին Քրիստոսի, եւ բաշխէ եւ տայ իբրեւ զիւր՝ ի լրութենէ իւրմէ. զի Աստուած է ճշմարիտ եւ Որդի բնութեամբ, եւ զազատելոյն ունի յինքեան զիշխանութիւն բնութեամբ, իբր եղեւն ի կերպարանս ծառայութեան եւ էջ ի նմանութիւն մարդկան. զի գրեալ է այսպէս. Եղեւ առաջին մարդն յերկրէ հողեղէն, իսկ երկրորդն Տէր յերկնից⁶⁹. որո՞վք կերպարանաւք ասասցի զայս, այլ վասն զիւրմէ մարմինն ի վերուստ յերկնից եկելոյ Բանին Աստուծոյ, եւ զորաւրինակ տէր է երկնից եւ աւրէնսդիր որպէս Աստուած, լինի ընդ արիմաւ, զի գնեսցէ զայնոսիկ, որ ընդ արիմաւն իցենէ, որպէս եւ գրեալ է: 56 Նոյնպէս դարձեալ վերստին ծնունդն ջրով եւ Հոգւով պատուեաց տեսութեամբն, որ բնութեամբն իսկ Որդի էր. լուրիցի դարձեալ ի բարբառոյ Հաւր Աստուծոյ եթե՝ Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հանեցայ⁷⁰: 57 Ընդունի զայս Քրիստոս եւ ընքեամք զիւր բաշխէ մեզ, որեւ իւր իսկ են բնութեամբն բարութիւն զմեզ հաղորդարասցէ եւ լիցի ճանապարհ եւ դուռն այսպիսի լուսաւորութեան պատուոյ: 58 Անդ իսկ էր Որդւոյ Աստուծոյ առնել զայս ամենայն, զի որպէս եղեւ պտուղ ննջեցելոցն ի կեանս եւ յանապականութիւն բնութեան մարդկան ինքեան, նոյնպէս դարձեալ գտցի ինքն առաջնորդ կատարմանն, իբրեւ պտուղ սրբեցելոցն մկրտութեամբ, զի յորդեգրութեան փառս վերացուցէ: 59 Եւ զոր ինչ եցոյց յինքեան Քրիստոս՝ նոյնպիսի կարգեաց աւրինակաւ եւ մեզ սփռեաց զշնորհս Հաւր. որպէս եղեւ առ Կարապետ Մկրտչաւն, նոյնպէս լիցի եւ առ քեւ. բացցին երկինք եւ թռուցեալ իջանիցէ ի վերայ

⁶⁶ Եւ. Է. 14-15
⁶⁷ Սաղմ. Խ. Թ. 8. Եբր. Է. 9

⁶⁸ Է. Յով. Է. 6-7
⁶⁹ Է. Կոր. Ժ. Է. 47
⁷⁰ Հմմտ. Գաղ. Գ. 4-5:
⁷¹ Մատթ. Գ. 17

քո Հոգին Սուրբ, եւ լինիցիս եւ դու որդի Աստուծոյ: 60 Այսպիսի ճանապարհ փրկութեան նորոգեաց մեզ, որ վասն մերոյ եղեւ Բանն Աստուծոյ իբրեւ զմեզ, զի մեք առ նմա եւ նովաւ գտցուք վայելել ի շնորհս նորա: 61 Եւ ո՛չ ոք կարէ կարծել ի ճշմարիտն հաւատացելոցն եւ յուղամիտ խորհրդոցն զայլ ոք աթոռակից Հաւր, քան զայն, որ ի Կուսէ ծնեալ է ըստ մարմնոյ. եւ վասն զի է մինն միաւոր ճշմարիտ Որդի՝ Եմմանուէլն, իմանալի եւ խոստովանելի է ի մէնջ Աստուած եւ մարդ միանգամայն, որ անգ է նմա ըստ պատմութեան Գրոց Սրբոց աստուածութիւն եւ մարդկութիւնն:

62 Նորին՝ ի Հինգերորդ ցատէն, ի բանէն՝ Վասն այսորիկ պարտ է մեզ ունկնդիր լինել բանից ասացելոց՝:

63 Արդ, գայ յայտնի, այսինքն մարմնով, եւ վկայէ Բարուք իւրում յասելն այսպէս. Սա է Աստուած մեր. մի՛ համարեսցի ընդ ամենայն այլ ոք. եզիտ զամենայն ցանապարհ իմաստութեան, ետ զմա Յակոբայ ծառայի իւրում եւ Իսրայելի սիրեցելոյ իւրոյ. եւ յետ այսորիկ ի յերկրի երեսցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ: 64 Արդ, երեւեցաւ ի վերայ երկրի եւ շրջեցաւ ընդ երկրաւորս, այսինքն ընդ մեզ՝ ո՛չ մերկ աստուածութեամբ, զի աստուածութիւնն աներեւոյթ է, այլ զի յառաջագոյն ասացի՝ ինքն էական եղեւ մարմին, ծնաւ ի կնոջէ եւ եղեւ ընդ արիւնաւ՝^բ բնութեամբ Որդին Աստուծոյ. եւ աւրինադիր, զի ամենայն, որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտեականս: 65 Ձի բնութիւն մարդկան, որ ընդ մահուամբ եւ ընդ անիծիւք գրաւեալ էին վասն յանցանացն Աղամա՝ ազատեսցէ զնոսա շնորհաւք իւրովք ի վշտաց բազմութենէ եւ արասցէ ի

վեր քան զմահ եւ զապականութիւնն, եւ ածցէ կացուսցէ առաջի Աստուծոյ Հաւր՝ այն, որ եղեւ իբրեւ զմեզ տեսչութեամբ, եւ ո՛չ եկաց մնաց ընդ մեզ յաղքատութեանն, այլ վերացաւ ի նոյն բնութիւնն յիւր իսկ յառաւելութիւն եւ ի փառս: 66 Եւ որպէս ասեմք զնա լինել մարմին, եթե եղեւ մեղք եւ անէծք, եւ բնութիւնն իւր ի վեր է ի չարեաց եւ ի զղմանէ, այլ զի աւրհնեսցէ զարարածս իւր եւ փրկեսցէ զմեզ յանցանաց մեղաց եւ յանիծից մահու եւ ի պարտաւորութենէ:

67 Այսուհետեւ ինքնին պարտեւք առնուլ վարդապետութեամբ կրանից ճշմարիտն հաւատոյ, եթե զիա՞րդ ածցեն զմտաւ յանդգնել եւ ասել զՅիսուս Քրիստոս ուրոյն լոկ մարդ, կամ իմանալ այսպիսի ինչ կամ ասել, այլ պարտ է գիտել ճշմարտիւ եւ խոստովանել զԲանն Աստուած մարդացեալ. զի այսպիսի խոստովանութիւն քարոզութեան փրկութիւն է անվրէպ ամենայն խոստովանողաց իւրոց:

68 Ձի Աստուած է բնութեամբ, որպէս բազում անգամ ասացաք, Բանն Աստուծոյ. այլ իջոյց զանձն իւր ի խոնարհութիւն եւ անուանեցաւ ընդ մեզ իբրեւ զմարդ եւ փոքր մի խոնարհ քան զիրեշտակս՝ եւ հնազանդ է Հաւր միանչեւ ի մահ, զի փառաւ եւ պատուով պսակեսցէ զմարդկան բնութիւնս. իբրեւ զմի ի մեզ պսակեալ՝ ասէ, որ Տէրն է փառաց: 69 Այսպէս ուղղութեամբ եւ աստուածապաշտութեամբ խոստովանեսցուք, այսպէս սրբեսցուք զխորհուրդս մեր, եւ զամենայն բարձրութիւն հպարտացեալ ընդդէմ գիտութեանն Աստուծոյ խոնարհեցուցուք եւ գերեսցուք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի: 70 Այսպէս առողջ եւ առանց վնասելոյ պահեսցուք զմիտս խորհրդեանն՝

ա Եբր. Բ 1
 բ Բար. Գ 36-38
 գ Գաղ. Գ 4
 դ Յով. Գ 15

ե Հմմտ. Բ Կոր. Ե 21. Գաղ. Գ 13:
 զ Եբր. Բ 7
 է Հմմտ. Ը Կոր. Բ 8. Փլա. Բ 8-11:

տուեկոյն մեզ քարոզաւքն իւրովք: 71 Արդ, զի զխորհուրդս փրկութեան մերոյ կամիցին ցրուել, զի զանբաժանելի զմի Որդի յերկուս կամին բաժանել, զոր Գիրք սուրբ քարոզեն մեզ, ո՞վ առնուցու յանձն եւ հաւանեսցի սատարոյ թշնամոյն զայսպիսի բարբաջանս. այլ բարերարութիւն Աստուծոյ եւ զաւրութիւնն, վասն որոյ անքնին քաղցրութիւն ի վեր քան զմիտս, որ ի վերն է բնութեամբ աստուածութեանն իւրոյ ի բնութենէ տարրեղինացս, խոստովանելի է բնութեամբ անըմբռնելի, գատեալ յըմբռնելեացս եւ ի մարմնաւորացս, լինի մարմին, առնու զկերպարանս ծառայութեան մարդկութեան՝ միութիւնն ի վեր քան զմիտս եղելոյ: 72 Քանզի ճշմարիտ քարոզացն իւրոց ի հոգեկրաց մի Որդի՝ աստուածութեամբ եւ մարդկութեամբ անբաժանելի, Աստուած մարդացեալ, եւ որոյ առեալն զկերպարանս ծառայութեան. զի թեպէտ եւ կարգի եւ անուանի ընդ այնուսիկ, որք խնամաւք եւ շնորհաւք զան յորդեգրութիւն՝ յանուանելն իւրում ընդ նոսա, ո՛չ կորուսանելով բնութեան իւրոյ զազատութիւն, եւ ո՛չ հեռանայ ի Միածին անուանէ, եւ ո՛չ ըմբռնի ի ծառայութիւն ի լինելն մարդ, այլ իմանալի եւ խոստովանելի է եւ ի մարդկութեան իւրում ազագ եւ ազատիչ եւ Միածին: 73 Եւ զի ունայնացոյց զանձին իւր եւ էջ ի խոնարհութիւն վասն մեր, ո՛չ զի կացցէ մնասցէ ունայնութեամբ յաղքատութեան, այլ զի հաւատացեալ լիցի մեզ, թե Աստուած է բնութեամբ, որ զամենայն լնու եւ ի լինելն իւրում մարմին: 74 Արդ, թեպէտ եւ ի մարմնաւորութեանն իւրում կարգի ընդ բազում եղբարս, իբրեւ յորդեգրութիւն ծնեալ բնութեամբ եւ աստուածաբար ի Հաւրէ, Բանն՝ իւր արմատ եւ սկիզբն երեւելոյն ի մարդիկ ունի զսուրբ Կոյսն ի լինելն իւրում մարմին. այլ ճշմարիտ միաւորութեանն կարգապահ է անվրէպ եւ անապական զփառս Միածնին. զի թեպէտ եւ եղեւ

տեսչութեամբն իւրով մարդ եւ թեպէտ եւ անուանի ընդ բազում եղբարս՝ խոնարհելով եւ ծառայութեան կերպարանաւքն, սակայն անընկեր եւ անհամեմատ է եւ ի վեր քան զամենեսին բնութեամբ աստուածութեանն իւրով, եւ յառնուլն իւրում զծառայութեան կերպարանս՝ զազատութիւն բնութեան եւ զհաւասարութիւնն առ Հայր ո՛չ մերժէ յինքենէ. բնութիւնք նոր յանգին ի միմեանս: 75 Բնութեամբ միանալ, ասեն, չէ հնար, այլ մերձաւորութիւն մարդոյ առ Աստուած. եւ զիս՞րդ ասեն, որ այնչափ յայտնի աղաղակեն իրք եւ բնութիւնք անհաւասար ի միմեանց: 76 Ո՞վ մշակք թշնամոյն, հնազանդեսցին զաւրութեանն Աստուծոյ եւ լուիցեն ճշմարիտ քարոզացն, որ աղաղակեն եւ ասեն եթե՛ Բանն մարմին եղեւ՞, ի վեր քան զինքն մարդոյն, որ Աստուծոյ միայն է գործ՝ իմանալի եւ անհաւատալի, ո՛չ քննելի. զի այն, որ կամեցաւն մարդ լինել եւ առ զկերպարանս ծառայութեան, հաւատալի է մի Որդի, վասն փրկութեան մարդկան եղեւ մարդ՝ ի փրկութիւն արարածոց իւրոց: 77 Ի վերայ այսր ամենայնի մի Որդի խոստովանելի է ճշմարտութեամբ:

1 Երանելոյն Յոհաննու եպիսկոպոսապետի Կոստանդնուպոլսի՝ Մեկնութիւն որ ըստ Մատթէոսի աւետարան:

2 Մատեան ձնելութեան Յիսուսի Քրիստոսի, Որդոյ Դաւթի, Որդոյ Աբրահամու:— 3 Երանելին Մատթէոս 2իբր զԵբրայեցոց գրէ ասելով. նախ քան զամենայն խնդրեաց ցուցանել, եթե յԱբրահամու³ եւ ի Դաւթայ էր Քրիստոսն⁴. եւ վասն զի

« Յովհ. Լ. 14
 1 Տիմոթէոս, էջ 282
 2 Մատթ. Լ. 1
 3 իբր զի եբրայեցոց գրելով
 4 յԱբրահամու
 4 Քրիստոս

լուեալ էր Աբրահամու պատմութիւնն¹ վասն ամանակին, եւ փոխանակելով Դաւթի զկենցաղն Աբրահամու, ապա եւ զխոստացեալ² արքայութեան սերման նորա կալաւ Դաւիթ. եւ ³յիշաւդութեանն ամենեցուն է: 4 Քանզի, որպէս յայնժամ ասէր Իսահակայ⁴ Աստուած. Մի՛ երկնչիր, զի ընդ քեզ եմ բարեբանեցից զքեզ, եւ բազմեցուցից⁵ զքեզ սակս Աբրահամու հաւր քո՞, սապէս յետ այսորիկ ասէր Աստուած Եզեկիայ. Գերասպարեցից վասն քաղաքիս ասորիկ սակս իմ եւ Դաւթի եւ⁶ հաւր քո՞. քանզի ժառանգաւոր շատուածսիրելութեան եղեւ Դաւթի: 5 Եւ վասն զի յետ այսորիկ ի սերմանէ Դաւթի ակնկալութիւն զՔրիստոս եղանել, քանզի լուեալ էր ⁸ըստ Աբրահամու ամանակին, այսր աղագաւ նախ եղ⁹ Որդւոյ Դաւթի, ապա որդւոյ Աբրահամու:

6 Իսկ ասէ աւետարանիչն յաղագս Գաբրիէլի թե՛ Եկն առ կոյսն խաւսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ, ¹⁰ի տանէն՝ ի տոհմէ Դաւթի՞. ի Դաւթայ էր կոյսն, եւ Յովսէփ, որ արդար ելով եւ պահապան աւրինի, յիւրմէ հայրենւոյ եւ ի տանէ աստէր իւր զկոյսն. ¹¹զի քան հրամայէր աւրէնն՝¹² ո՛չ պարտ գոլ առնուլ կինն¹³, եթե ո՛չ ի նոյն ցեղէ. եւ վասն զի ո՛չ էր աւրէն առ

հրէայսն ազգաբանել զկանայսն¹⁴, զի զսովորութիւնն պահեսցէ աւետարանիչն եւ ¹⁵մի՛ թուեսցէ ի տարագծել ի նախերգանացն, եւ զաղջիկն¹⁶ մեզ ծանուցէ, սակս այնորիկ¹⁷ զնախնիս նորա¹⁸ լուեաց, իսկ զՅովսէփ¹⁹ ազգաբանեաց, զի ուսցուք նովալ զՄարիամ, եթե էր ի տանէ Դաւթի, ուստի եւ ինքն, զի եւ աւրինացն ²⁰անտեղելի մնասցէ: 7 Քանզի ասդաւղին²¹ ի բաց երեւեցելոյ ի տանէ Դաւթի՛ եւ կոյսն ընդ նմա ցուցեալ է, հաւաստապէս ի սերմանէ ելով Դաւթի, յորմէ եւ ծնիցաւ Յիսուս Քրիստոս: 8 Իսկ Յիսուս թարգմանի ²²Փրկիչ՝ ի փրկելոյ զժողովուրդ իւր: 9 ²³Հռաչափառ լսել զխորհուրդս սքանչելի, եթե Աստուած անճառելի եւ անասելի եւ անպարիմանալի, եւ Հաւր համագոյելի²⁴ Որդի՛ արգանդաւ ծնիցաւ կուսական²⁵ եւ եղեւ ի կնոջէ, եւ կալաւ նախնիս զԴաւիթ եւ ²⁶զԱբրահամ, այլ որ էք ըստ ընդելագոյն զկանայսն զայնմ²⁷, զորս այժմս²⁸ եւս յիշեցաք: 10

1 մմանութիւն
 2 զխոստացեալն
 3 յիշողութեան ամենեցուն էր
 4 Իսահակայ
 5 բազմացուցից
 * Ի՞նչ. Ի.Չ. 24
 6 չի՞ք
 ք Տէ՛ւ. Գ. Թ. ագ. Ժ. Թ. 34, Ի. 6. Ե. * . Լ. Է. 35:
 7 Աստուած սիրելութեանն եղեւ Դաւիթ
 8 որ ինչ ըստ Աբրահամու վասն ամանակին
 9 ետ
 10 ի տանէ եւ ի տոհմիէ Դաւթայ
 ք Գ. * - Կ. Լ. 27
 11 քանզի
 12 արեւն
 13 կին

Մարիամայ յատուկ 1ասաց ժողովուրդ նովաւ ապրեցեալսն, եւ եւս զնոսա ²ի մեղաց ի բաց թափիցէ. Աստուծոյ իսկ ամենայն ³եւ վայելեսցի իսկ՝ նմա եւ միայն զ'ի բաց թաւթափելն ի մեղաց կարել զմեղուցեալն⁴: 4 Աստուած ուրեմն⁵ ի Կուսէ ծնիցեալն, որոյ եւ յատուկ եմք ժողովուրդ, եւ ի մեղաց զմեզ ի բաց փոխեաց՝ ունելով⁶ զայսորիկ իշխանութիւն:

5 ⁷Դարձեալ՝ բան երկրորդ:

6 Իսկ Յիսուսի ջնանելն ի Բեթղաեմ Հրէաստանի՞.— ⁹ի Բեթղազէմ Հրէաստանի ծնանի որ յարմատոյն Յեսսեայ, եւ ասէ յաղագս նորա միով ի մարգարէիցն Աստուած եւ Հայր. եւ դո՛ւ ¹⁰Բեթղեհեմ, տունդ Եփրաթայ, սակաւոր ես գոյ ¹¹ի հազարաւորացն Յուդայ. Բանգի ի Բէն ինձ արտաքս եկեսցէ առ ի գոյ իշխան Իսրայէլի¹², եւ ելի իւր ¹³ի սկզբանէ աւուրցն յաւիտենից¹⁴: 7 Ի՞բր արդեւք ծնիցեալն ¹⁴ի Բեթղեհեմ Հրէաստանի ի սկզբանէ զելսն յաւիտենից ասի ունել, այս է ¹⁵զոյութեան սկիզբն, թեպետ եւ ծնիցեալ ¹⁶ի վերջին յաւիտենիս ժամանակս. Աստուած ուրեմն Քրիստոս, եւ վայել էր նմա Աստուծոյն Բանի ծայրա-

գոյնն¹⁷, քանզի Աստուած էր, վասն մեր մարմնական համբերեալ ծնելութեան¹⁸ զ'ի կնռջէն:

8 ¹⁹Դարձեալ՝ բան երրորդ:

9 Ես գճեզ ջրով մկրտեմ յապաշխարութիւն, իսկ որ գիտն իմ գայ հարստագոյն իմ է, որում ²⁰ն'չ եմ բաւական գկաւշիկս բառնալ, ինքն գճեզ մկրտեսցէ Հոգւով Սրբով եւ հրով. որոյ հեծանոցն ի ձեռին իւրում է²¹, եւ մաքրեսցէ գկալ իւր²²:— 10 Ո՛չ մարդկութեան գործ գոյ ասեմք մկրտել²² Հոգւով Սրբով, այլ եւ ո՛չ գկալն զիմանալի, այս է՝ գորս ի վերայ երկրի, յատուկ գոյ ասեմք մարդոյ. քանզի Աստուծոյ է ամենայն եւ նմա միայն²³ վայել է ²⁴Հոգւով Սրբով մկրտել կարել զհաւատացեալս: 11 Ներգործեաց զայս Քրիստոս՝ յետ Յովհաննու եկեալն ըստ մարմնոյ, կամ եթե ըստ ²⁵մարմնոյն ամանակի ինքն իսկ իւր²⁶ կալ մաքր[է]. Աստուած ուրեմն է ճշմարտապէս:

12 ²⁷Եւ դարձեալ՝ բան չորրորդ:

13 Եւ ահա բորոտ յառաջ եկեալ՝ երկրպագէր նմա²⁸ ասելով. Տէ՛ր, եթե կամիս, ²⁹կարող ես գիս մաքրել. եւ ձգեալ ³⁰գճեռն ի նա, յարեաց՝ ասելով. Կամիմ, մաքրեցի՛ր. եւ արագապէս մաքրեցաւ ³¹ի նմանէ բորո-

1 եասաց ժողովուրդ զնովաւ ապրիցեալսն
 2 ի մեղաց գնոսա ի բաց թափեսցէ
 3 եւ վայել, իցիւ իսկ նմա եւ միայնում զ'ի բացն թափել
 4 զմեղուցեալսն
 5 ուրեմն է
 6 իբր ունելով
 7 **Տիմոթէոս, էջ 284**
 8 ծնիցելոյ ի Բեթղեհեմ
 * **Մատթ. Բ 1**
 9 ի Բեթղեհեմ ծնանի Հրեաստանի
 10 Բեթղեհեմ տուն
 11 ի հազարաւորս
 12 յԻսրայէլի
 13 **Տէ՛ր՝ Մատթ. Բ 5. Մէկ. Ե 1:**
 14 ի սկսբանէ յաւուրցն
 15 **Հմմտ. Մէկ. Ե 14-15:**
 16 ի Բեթղեհեմ Հրեաստանի ի սկսբանէ յաւիտենի գելսն ունել ասի
 15 զգոյութեանն սկիսբն
 16 ի վերջինս

17 ծերագոյնն
 18 ծնելութիւն
 19 **Տիմոթէոս, էջ 285**
 20 չեմ
 21 չի՛մ
 22 **Մատթ. Գ 11-12. Գ. 4. Գ 16-17**
 22 մկրտելն
 23 միայնում
 24 Սրբով Հոգւով
 25 զմարմնոյն ամանակ
 26 եւ զիւրն
 27 **Տիմոթէոս, էջ 285**
 28 գնա
 29 կարես
 30 գճեռնն՝ յարեաց առ նա
 31 ի նման

տուրիւնն՝: 14 Ներգործելն կարել աստուածավայելչաբար ո՛չ յատուկ մարդոյ, եւ այս յաւէտ հետեւանայ եւ միայն եւ՛ յոր եւս անդր ամենեցուն բնութեան, եւ ներգործէ այսպէս Քրիստոս. ո՛չ ուրեմն սոսկ մարդ ըստ մեզ, այլ մանաւանդ Աստուած մարդկութեան կերպի: 15 Այսպէս 2^{իմասցիս} եւ ի վարդապետս ի գսքանչին, թեպէտ եւ հողմոց վերասաստելով երեւեցցի³, ծովու եւ ջրոց. ուստի եւ աստուածազան աշակերտքն եւ զծով եւ զհողմս ընդ իշխանութեամբ տեսանելով՝ հրաշացան, ասելով. Ո՞րպիսի է սա. քանզի ո՛չ մարդոյ սոսկի զայսպիսիս կարել գործել⁴: 16 Աստուած ուրեմն, ըստ նմին եւ մարդ՝ Քրիստոս:

17 4^{Դարձեալ}:

18 Իսկ դեմք մաղթեիմ⁵ ասելով. Եթե հանես զմեզ, առաքեա՛ զմեզ յերամակ⁶ խորից. եւ իմքն ասաց⁷ նոցա. Երթա՛յք:— 19 Նախախնամելն ամենեցուն⁸ եւ ապրեցուցանել զնոսա ո՞ր եւս իցէ, բայց միայնոյ⁹ ըստ բնութեան Աստուծոյ: 20 Այսպէս եւ Փրկիչն ասէ. Ո՞չ երկու ձագք սակարի¹⁰ վանաոիմ, եւ մի 11^ի նոցանէն ո՛չ անկցի 12^{յերկրի} թարց Հաւր ձերոյ, որ 13^{յերկիմնս} է. իսկ ձեր եւ մագք¹⁴ զիտոյ ամենայնք համա-

րեալ եմ¹⁵: 21 Քանզի ահա այսուհետեւ այսքանից էակաց¹⁵ նախախնամութիւն արար¹⁶ Քրիստոս, իբր մի իշխել անմաքրոց դիւացն եւ ո՛չ խողաց երամակին¹⁷ ունել. յաղթեցեալ¹⁸ ապա՝ հրամայեաց հազիւ, եւ ո՛չ զնոցայն ընոյր հայցումն, 19^{այլ} եւ զմեզ հաւանեցուցէ, եթե նախախնամէ բոլորեցունց²⁰ իբր Աստուած: 22 Աղէ, ի՞բր ո՛չ Աստուած, որ զաստուածավայելուչս իշխանութիւնն եւ զամենեցուն հարստութիւնն յարեալ ունել՝ 21^{ապրեցուցանելով իւր զիւրսն նովաւ եղեալս}:

23 22^{Եւ դարձեալ}:

24 Ամենայն, 23^{որ} խոստովանիցի զիս առաջի մարդկան, խոստովանեցից եւ ես զնա առաջի Հաւր իմոյ, որ յերկիմնս. իսկ որ ոք ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի Հաւր իմ, որ յերկիմնէ:— 25 Բազումք կոչեցեալ են 24^{սրբոյն առ վկայութեան փառս եւ կատարեալք ախտակրութեամբք եւ մահուն՝ Աստուած խոստովանելով, արդեւք պսակեցին՝ հաստատելով եւ ասելով մարդ գոյ հասարակական զնա, կամ յաւէտ իբր Աստուած խոստովանութեամբ. 25^{այլ յայտ է, քանզի զայս ուրացեալքն եւ վկայութեան փառացն կորիցեն եւ զնա գտցեն 26^{յաւուրն դատաստանի՝ ուրանալով զնոսա Քրիստոսի}}: 26 Աղէ, ի՞բր ոչ Աստուած, որ}

ա Մատթ. Բ 2-3

1 չիք

2 իմասցիս ի վերայ Պետրոսի

3 երեւիցի

բ Հմմտ. Մատթ. Բ 28. Յովհ. Գ 2:

4 Տիմոթէոս, էջ 286, ուր այս հատուածը կցուած է անմիջապէս նախընթացին:

5 մաղթեիմ զնա

6 յերամակն

7 եսաց

գ Մատթ. Բ 31-32

8 բոլորեցուն

9 նորա միայնոյ

10 ասարի

11 ի նոցանէ

12 ի վերայ երկրի թանց

13 յերկիմնս

14 մագ

դ Տէ՛ս Մատթ. Ժ 29-30. Գևհ. ԺԲ 6-7:

15 էակացն

16 եարար

17 արամակիմ

18 մաղթեցեալ

19 այդ զի

20 բոլորեցուն

21 ապրեցուցանելով իբր զիւր զնովաւ եղեալսն

22 Տիմոթէոս, էջ 287

23 որ ոք խոստովանեցէ

ե Մատթ. Ժ 32-33. Գևհ. ԺԲ 8-9:

24 սրբոցն առ վկայութեանն

25 այդ է յայտ

26 յաւուր դատաստանիմ

վկայեալսն¹ փառաւք պսակէ, զորս ²եթե ասէ՝ ճշմարտապէս խոստովանելով զնա:

27 ³Դարձեալ:

28 Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալիդ⁴ եւ ծանրաբեռնեալք, եւ ես հանգուցից գնեց. բարձե՛ք զլուծ իմ ի ձեզ՝:– 29 ⁵Եթէ ոչ Աստուած ճշմարտապէս էմանուել, զի՞նչ աւրինակ մեզ ⁶զիւր լուծն դնէ ի վերայ. քանզի Աստուծոյ ծառայ ամենայն, եւ ասացեալ է լուծ աւրէնն⁷. այլ ի վերայ դնէ մեզ Քրիստոս զիւր⁸ լուծ եւ իւր հնազանդէ, եւ թեպէտ զամենայն ի ներքոյ բերէ Հաւր, Աստուած ուրեմն է. ուստի եւ ընդ նովաւ կալ զամենայն⁹ վայել է, ըստ ասացաւորին առ Աստուած եթե՛ Ամենայն ծառայ քե՛:

30 ¹⁰Դարձեալ:

31 Ի՛կամ թե ոք քահանայք ի քահանայարանին¹² զշաբաթս պղծեն եւ անպատեանելիք են¹³. իսկ ասեմ ձեզ, եթե քահանայարանին մեծագոյն է աստ՛:– 32 ¹⁴Եթե պղծելով զշաբաթն քահանայքն անպատճառելիք են՝ իբր Աստուծոյն¹⁴ մատուցանելով զբուժականսն, ի՞բր ¹⁵ի քահանայարանին գործելոյն իմանի մեծագոյն Քրիստոսի

բնութիւնն¹⁶. այլ է յայտ, զի այնք որ յաւրէնսն ստուեր եւ աւրինակ երկնայնոցն պաշտանէին¹⁷. իսկ աստուածագան¹⁸ աշակերտքն առնթերակացեալք եւ սպասաւորեալք Քրիստոսի՝ զմեծագոյն¹⁹ եւս զփառսն ունէին. եւ եթե յաւրէնսն պատուեանն²⁰ լաւագոյն է պաշտելն²¹ Քրիստոսի, ի՞բր ոչ իմանասցէ²² Աստուած ճշմարիտ:

33 ²³Եւ դարձեալ:

34 Իսկ ²⁴եթե ես Բէեդգեբուղաւ հանեմ գղես, որդիքն ձեր ի՞նչ հանիցեն. վասն այսորիկ ²⁵դատաւորք նոքա եղիցին ձեզ՝:– 35 ²⁶Եթե յանուն Քրիստոսի բժշկեցին զայսոսն²⁶ աշակերտքն, քանզի ի վերայ ձայնէին. Յանուն Յիսուսի Քրիստոսի նագովրացոյ արի՛²⁷, ի՞բր ո՛չ իմանասցէ²⁸ Աստուած ճշմարտապէս: 36 Քանզի ո՛չ եւս բաւականեաց մարդոյ փառք եւ զաւրուութիւն յաղթահարել²⁹ զսատանայ:

37 ³⁰Դարձեալ:

38 Եւ որպէս ժողովի որոմն եւ հրով այրի, այնպէս³¹ եղիցի եւ կատարածի յաւիտենին. առաքէ Որդի Մարդոյ զիրեշտակս իւր, եւ ժողովեացեն յարհայութենէ նորա

1 վկայութեամբ
2 եթ՝ այս է
3 **Տիմոթէոս**, էջ 287
4 վաստակեալք
* **Մարք. ժ.Ը** 28-29
5 եթ՝ ո՛չ Աստուած է ճշմարտապէս եմանուել
6 զիւրն լուծ ի վերայ դնէ
7 եւ արեւն
8 զիւրն
9 զամենայն
բ **Սաղ. ճ.ժ.Ը** 91
10 **Տիմոթէոս**, էջ 287
11 Կամ եթ՝ ոչ վերծանիցէք յարեւն, եթե ի շաբաթս քահանայքն ի քահանայարանին զշաբաթն
12 *Լուսանցքում* ի Բագնին. *նաեւ Տիմոթէոս*
13 *Լուսանցքում* անմեղադրելիք են / *Տիմոթէոս՝ մեղադրելիք*
գ **Տե՛ր Մարք. ժ.Բ** 5-6:
14 Աստուծոյ
15 ի քահանայարանի գործեցելոցն

16 բուժութիւն
17 պաշտելին
18 աստուածագանք
19 մեծագոյն
20 պարշտութեանն
21 պարշտելն
22 իմանայցի
23 **Տիմոթէոս**, էջ 288
24 եթ՝ ես ի Բեեդգեբուղ
25 նոքա դատաւորք ձեզ եղիցին
դ **Մարք. ժ.Բ** 27. **Ղ.՝.Ճ.ժ.Ը** 19
26 զայսոսն
27 չիք
ե **Ղ.՝.Ճ.ժ.Բ** 6
28 իմանայցի
29 առ ի յաղթահարել
30 **Տիմոթէոս**, էջ 288
31 այսպէս

զամենայն ¹գայթազդուութիւնս, եւ արկցե՛ զնոսա ի հնոց հրոյն²։— 39 Յաղագս Աստուծոյ է՞՞ գրեալ. Բարեբանեցե՛ք զՏէր, ամենայն հրեշտա՛կք նորա³. քանզի ո՛չ հրեշտակ հրեշտակի է, ⁴այլ Աստուծոյ յաւէտ ամենայնի: 40 Ի՞բր արդեւք եւ ասէ յաղագս Որդւոյ Մարդոյ, թէ առաքէ՛ զհրեշտակս իւր. Աստուած ուրեմն է, որպէս եւ յատուկս առնելով հրեշտակս իւր⁵, եւ ի ձեռն վերին ⁶հոգւոյն սպասաւորել:

41 ⁷Դարձեալ:

42 Եւ⁸ էհարց⁹ Քրիստոս. Զո՞ ոք¹⁰ ասեն մարդիկ գոլ ¹¹զՈրդւոյ. նոքա ասեն. Ոմանք զՅովհաննէս¹² Մկրտիչ, եւ այլք գերիաս, եւ միւսք գերեմիաս եւ կամ զմի ի մարգարէիցն. ասէ նոցա. Իսկ դուք զո՞վ¹³ զիս ասե՛ք գոլ. ¹⁴պատասխանեաց Պետրոս եւ ասաց. Դու ես Քրիստոս, Որդի¹⁵ Աստուծոյ կենդանւոյ. ¹⁶պատասխանեալ Յիսուս եւ ասաց նմա. Երանեա՛լ ես, Սիմո՛վն Բարիտովնայ¹⁷, զի մարմին եւ արիւն ո՛չ յայտնեաց քեզ, այլ Հայր¹⁸ իմ, որ յերկինս է՞:— 43 Եթէ սոսկ մարդ Որդին¹⁹, ընդէ՞ր սքան-

չանայ Պետրոս՝ խոստովանելով զնա. Ի՞բր իսկ է եւ աստուածուսումն, կամ որո՞ւմ կարաւտացաւ լուսածուլթեան ի վերուստ, զի ուսցիս²⁰ զ՛ի վերայ նորա խորհուրդն. այլ ծանեալ, եւ Աստուած ելով եւ Որդի Աստուծոյ կենդանւոյ խոստովանելով²¹ զնա, եւ աստուածհասու իսկ²² սքանչացաւ. բայց մի որդի, եւ ո՛չ երկուս որդիս ասէ: 44 Վատապարիշտ ուրեմն բաժանելոյն²³ յերկուս:

45 ²⁴Եւ դարձեալ:

46 Քանզի պատրաստեալ է Որդի²⁵ Մարդոյ գալ փառաւ Հաւր իւրոյ, հանդերձ հրեշտակաւ իւրովք:— 47 Ահա դարձեալ հրեշտակ²⁶ նորա ասէ զվերին հոգիսն, թեպէտ եւ ասացելոյ Որդւոյ Մարդոյ:

48 ²⁷Դարձեալ:

49 Իսկ ելոց²⁸ նոցա ²⁹ի Կափառնայում՝ առաջեցին զերկադրաբնայսն առաւղին Պետրոսի եւ ասացին. Վարդապետն ձեր ո՞չ հատուցանէ զերկադրաբնայսն. ասէ՛ Այո՛. եւ եկեալ յապարանսն՝ նախաժամանեալ³⁰ զնա Յիսուս, ասելով. Զի՞նչ ³¹թուի քեզ, Սիմոն. թագաւորք երկրի յումե՞ առնուն զհարկս, կամ զկենսոն. յորդուն՞ց իրեանց, թէ յաւտարա՞ց. իսկ ասացեալ՝ յաւտարացն, ասէ նմա Յիսուս. Ուրեմն ³²ազատ են որդիքն:— 50 Ի՞բր ազատ զինքն

1 գայթակղութիւն եւ որք առնեն անարեւոյթիւն. եւ արկցեն
 2 հրոյ
 3 Մատթ. ԺԳ. 40-42
 4 չիք
 5 Սաղմ. ՃԽԸ 2
 6 այդ յաւէտ Աստուծոյ ամենայն
 7 չիք
 8 հոգեացն սպասաւորեալ
 9 Տիմոթէոս, էջ 288
 10 չիք
 11 Եհարց
 12 չիք
 13 զՈրդի Մարդոյ եւ նոքա
 14 զՅովհաննէս
 15 զո՞վ
 16 եւ պատասխանեալ Սիմովն Պետրոս եսաց
 17 Որդին
 18 եւ պատասխանեալ Յիսուս եսաց
 19 Բարիտովնայ
 20 Հայրն
 21 Տէ՛ր Մատթ. ԺԳ. 13-17:
 22 զՈրդին

20 ուսցի
 21 խոստովանեաց
 22 եւ այսու իսկ
 23 բաժանելն
 24 Տիմոթէոս, էջ 289
 25 Որդին
 26 Մատթ. ԺԳ. 27
 27 հրեշտակս
 28 Տիմոթէոս, էջ 289
 29 եկելոցն
 30 ի Կափառնայում առաջեկեցին
 31 նախաժամանեաց
 32 քեզ թուի Սիմովն
 33 ազատք են որդիք
 34 Տէ՛ր Մատթ. ԺԷ. 23-25:

զուլ ասէ եւ արտաքոյ աւրինին¹ եւ անհարկապարտ եւ Որդի ճշմարտապէս, եթե ո՛չ Աստուած է՝ միաւորութեամբ ըստ ենթակացութեան մարմնոյ եւ արեան հաւասարեալ. հարկատուեաց իսկ գերկզրաքմեանն², իբր եղեալ³ ընդ աւրինիւ գերզաւրէնն⁴ Որդին: 51 Իսկ մարդ ո՛չ գերզաւրէնն իմանին⁵. Ի՞բր իսկ այլ եւ ո՛չ ունի բնութեամբ զազատակն, եթե ո՛չ իմանի Աստուած ի ներմարդութեան կերպի:

52 ⁶Դարձեալ:

53 Եւ քահանայապետն հին ասաց⁷ մնա. Երդմնեցուցանեմ զքեզ զԱստուծոյ⁸ կենդանոյ, զի մեզ ասացես թե՛ Դո՞ւ եւ Քրիստոս⁹ Որդին Աստուծոյ. ասէ մնա Յիսուս. Դու ասացեր. բայց ասեմ ձեզ՝ արդուստ տեսանիցէ՛ք զՈրդի¹⁰ Մարդոյ նստեալ յաջմէ կարութեանն եւ գալոց¹¹ ի վերայ ամպոց երկնից¹²։— 54 ¹³Իսկ Որդի Մարդոյ նստի յաջմէ կարութեանն. այլ է յայտ, զի թեպէտ եւ¹⁴ եղեւ որդի մարդոյ յԱստուծոյն Բան, ո՛չ դադարեաց զգոլն Աստուած, այլ է որ էն¹⁵, այսուիկ եւ ¹⁶աթռակից է բուսակիին էն աստուածայինս արժանաւորութիւնս վայելուչ տեսանի, թեպէտ եղեւ մարմին:

55 ¹⁷Դարձեալ:

56 Իսկ Յիսուս դարձեալ աղաղակեաց¹⁸ ձայնիւ մեծաւ՝ արձակեաց զոգին, եւ ահա վարագոյր բազմին հերձաւ յերկուս՝ վերուստ մինչ ի վայր, եւ երկիր սասանեցաւ, վէմք հերձան եւ շիրիմք բացան, եւ բազում մարմինք ¹⁹Քունեցելոց սրբոցն յարեանէ։— 57 *Եթե հասարակական մարդ էր Քրիստոս, ի՞բր²⁰ մեռեցելոյ նորա այսքան էր ի տարերսն խռովութիւն. քանզի արեզակն զճառագայթսն²¹ ամփոփեաց, եւ նաւուր ²²խաւար գործեցաւ. իսկ երկիր զիւր Տէրն տեսանելով ի Հրեիցն այպանեալ՝ հերձանիւր. արձակեաց իսկ եւ ²³դժոխք զսրբոց անձինս. ո՞յր զայս առնելով արդեւք, ²⁴եթե ո՛չ յԱստուծոյ քանզի Աստուած է²⁵ ի մարմնի, որում եւ արարածս թշնամանեցելոյ յեղանակ իմն միաբանեալ բարկանայ²⁶:*

58 ²⁷Ըստ Ղուկայ. բան Ա.:

59 Հրեշտակ Աստուծոյ Զաքարիայի²⁸ ասէ յաղագս Մկրտչին. Եւ եղիցի խնդութիւն քեզ եւ ցնծութիւն, եւ բազումք ի ծնելութեան նորա խնդացեմ. քանզի եղիցի մեծ առաջի Տեառն, եւ զինի եւ ²⁹ուղի մի՛ արբցէ, եւ Հոգւովն³⁰ Սրբով լցցի յորովայնէ³¹ մաւր իւրոյ, եւ զբազումս³² որդւոցն

1 արինի
 2 գերկադրաբանն
 3 եղեալն
 4 զարեւն
 5 իմանի
 6 **Տիմոթէոս, էջ 290**
 7 եսաց
 8 Աստուծոյ
 9 Քրիստոսն
 10 զՈրդին
 11 գալով
 12 երկնի
 * **Մատթ. Ի.Չ. 63-64**
 13 ի՞բր Որդին
 14 չի՞ք
 15 էրն
 16 արթնակից է բուսակիին նաստուածայինս

17 **Տիմոթէոս, էջ 291**
 18 աղաղակեալ
 19 *Լուսանցում*՝ ննչեցելոց / քունեցելոցն սրբոց
 * **Մատթ. Ի.Է. 50-52**
 20 չի՞ք
 21 զնառագայթն
 22 խաւարագործեցաւ
 23 դժոխք սրբոցն
 24 եթ՝ ոչ Աստուծոյ
 25 էր
 26 բարկանայր
 27 **Տիմոթէոս, էջ 291**
 28 Զաքարի
 29 աղի ո՛չ
 30 Հոգւով
 31 տակաւին յորովայնէ
 32 բազումս

Իսրայելի դարձուցէ ի՛՛ Տէր Աստուած իւրեանց²։ 60 *Երանելի Մկրտիչն Յովհաննէս Հարցողաց Հրեիցն*⁴ Դու ո՞վ ես, ես ձայն գոչման⁵ յանապատի՝ ասէ. պատրաստեցէ՛ք գնանապարհս⁶ Տեառն եւ ուղի՛դ արարէք զշաւիղս նորա⁷։ 61 *Մարգարէանալով եւ ինքն իսկ Զաքարիաս ի վերայ Համբակին*⁷ ասէ. եւ դո՛ւ, մանուկ, մարգարէ Բարձրելոյն⁸ կոչեսցիս. քանզի նախագնացես առաջի Տեառն՝ պատրաստել գնանապարհս նորա, առ ի տալ զգիտութիւն⁹ փրկութեան ժողովրդեան նորա՝ ¹⁰ի թողութիւն մեղաց նոցա. յաղագս գթութեան ողորմութեանն¹¹ Աստուծոյ մերոյ, որովք դիտաւորեաց մեզ՝ երեւել¹² ի բարձանց, ծագել ի խաւարի եւ ի ստուերս մահու նստելոց, առ յուղղել զոտս մեր ի գնանապարհս խաղաղութեան¹³։ 62 *Քանզի նախագնայր Քրիստոսի եւ նորա եղեւ կարապետ, եւ նմա զճանապարհ¹³ պատրաստել քարոզէր, եւ ¹⁴զի ի վերայ նորա մարգարէանայր բան՝ դարձուցանելով ¹⁵առ Աստուած իւր, արդարացուցանել կարելով զայն¹⁶, որ ի մեզս։* 63 *Աղէ, ի՞բր ո՛չ Աստուած Քրիստոս։*

1 առ
 2 նոցա
 * *Ղ.՝-Է. Ը 14-16*
 3 Յովանէս հարցողացն
 4 հրեից
 5 կոչման
 6 գնանապարհն
 7 *Յովհ. Ը 19, 23. Ե.՝. Խ 3. Մ.՝.Ք.՝. Գ. 3. Մ.՝.Է. Ը 3*
 7 իւրոյ համբակին
 8 Բարձրելոյ
 9 գիտութիւն
 10 ի թողութեան
 11 ողորմութեան
 12 արեւելից
 13 *Ղ.՝-Է. Ը 76-79*
 13 գնանապարհս
 14 զ՛ի վերայն
 15 իբր առ Աստուած
 16 զայնս

64 *17Դարձեալ բան։*
 65 *Նա¹⁸ եղիցի մեծ եւ Որդի Բարձրելոյ կոչեսցի, եւ տացէ նմա Տէր Աստուած ¹⁹գաթոնն Դաւթի հար իւրոյ. եւ թագաւորեսցէ ²⁰ի տան Յակովբայ յաւիտեան²¹, եւ թագաւորութեան նորա ²²վախճանն ո՛չ եղիցի*։—
 66 *Արդեւք ըստ²³ միո՞վ, որ ըստ մեզ, կացցեմք²⁴ թագաւորութեամբ հանապազ եւ անվախճանապէս, եթե յԱստուծո՞յ յաւէտ եղիցուք՝ թագաւորելոյ²⁵ մեզ Քրիստոսիւ, եւ ո՛չ որպէս արտաքուստ միջնորդի ²⁶ուրումն յայս առայցելոց, այլ իբր Որդւով եւ յՈրդւոջ Հարստահարելով բոլորեցունցն Աստուծոյ եւ Հաւր։* 67 *27Եւ այս ճշմարիտ, ²⁸որպէս եւ է ճշմարիտ, Աստուած ուրեմն է²⁹ Քրիստոս։*
 68 *30Դարձեալ։*
 69 *31Եւ ասաց իսկ Մարիամ առ հրեշտակն. Ի՞բր եղիցի ինձ այս, զի գայր ո՛չ գնանաչեմ. եւ ասէ նմա³² հրեշտակն. Հոգի Սուրբ վերեկեսցէ առ քեզ եւ կարութիւն Բարձրելոյն³³ հովանասցի քեզ. զի եւ ծնիցեալն սուրբ է³⁴, կոչեսցի Որդի Աստուծոյ՛։—* 70 *Արդեւք կոչեսցի³⁵ միայն Որդի՛*

17 *Տիմոթէոս, էջ 292*
 18 Սա
 19 գթագաւորութիւն
 20 ի տուն
 21 յաւիտեանս
 22 ո՛չ եղիցի վախճան
 23 *Ղ.՝-Է. Ը 32-33*
 24 ընդ
 25 կայցեմք
 26 թագաւորեցելոյ
 27 ուրեմն յայս առեցելոյ
 27 եթ՝ այս
 28 որպէս եւ
 29 չի՛ք
 30 *Տիմոթէոս, էջ 292*
 31 եսսաց
 32 նմա
 33 Բարձրելոյ
 34 չի՛ք
 35 *Ղ.՝-Է. Ը 34-35*
 35 կոչեսցաւ

ի սուրբ Կուսէն Հոգևով¹ անճառաբար ծնիցեալն, եթե բնութեամբ եւ ճշմարտապէ՞ս Որդի գոյ Հաւատանայ եւ Աստուած. այլ է Աստուած² ճշմարիտ, իսկ իմասցի մարմին՝ ըստ ենթակացութեանն եղեալ Բան³, այս է՝ ⁴արարեալ իւր մարմին ⁵զՀոգւոյն ի Սրբոյ Կուսէն. քանզի այսպէս եղիցի Աստուած⁶ ճշմարտապէս:

71 ⁷Դարձեալ:

72 Եւ եղեւ իբրեւ լուսւ գողջունելմ գՄարիամայ Եղիսաբեթ⁸, իայտայ⁹ ցնծութեամբ համբակն յորովայնի նորա¹⁰. Եւ լցաւ Հոգւով Սրբով Եղիսաբեթ¹¹, եւ մարգարեացաւ ¹²եւ ասաց. Բարեբանեալ՝ ես¹³ դու ի կանայս եւ բարեբանեալ¹⁴ պտուղ որովայնի քո. եւ ուստի՞ ինձ այս, զի եկեցել մայր Տեառն իմոյ առ իս՞:– 73 ¹⁵Նոր գործաւորի Աստուծոյ մարգարէութեան սակս՝ եղիցի ¹⁶մարգարէ ոք, իսկ ըստ միւսում յեղանակի ո՛չ եւս: 74 ¹⁷Արդ, ողջունելն սրբոյ ¹⁸Աստուածածնին Մարիամայ՝ սաղմնազգեցելոյ տակաւին գՅիսուս, շարժեաց նարզանդի ¹⁹զՅովհաննէս ի մարգարէութիւնն: 75 Ի՞բր ո՛չ Աստուած Քրիստոս՝ ²⁰ի Համակուսին շարժեաց աստուածավայել-

չապէս ի մարգարէութեան կարութիւն գՄկրտիչն:

76 ²¹Դարձեալ:

77 Այժմ արձակեա՛ զծառայս²² քո, Տէ՛ր, ²³ըստ բանի քոմ ի խաղաղութիւն. զի տեսիմ աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առ դէմս ամենայն ժողովրդեան²⁴, լոյս առ ի յայտնութիւն ազգաց եւ փառք ժողովրդեան քոմ Իսրայելի՞:– 78 Սիմէոնն գՅիսուս ի գիրկս առեալ՝ գայսպիսիս²⁵ յաղագս նորա ասէ²⁶. Ի՞բր արդեւք է փրկական²⁷ եւ ի՞բր լոյս յայտնութիւնն²⁸ ազգաց, եթե ո՛չ Աստուած իցէ²⁹ ճշմարտապէս մի եւ միայն Որդի, որ բնութեամբ ի Հաւրէ իբր Բան, իսկ ի Կուսէ նոյն ըստ մարմնոյ: 79 Քանզի ո՞ր եղեւ յայտնութիւնն ազգաց, բայց ի վերայ նորա. գիտացին, թէ Աստուած է, եւ նմա պաշտելով՝³⁰ փախեան զպարտաւորութիւնսն ³¹պաշտել Աստուծոյ միւսում, քան զմին բնութեամբն եւ ճշմարտապէս:

80 ³²Դարձեալ:

81 Եւ գիտելով Յիսուս զխորհուրդս նոցա՝ ³³պատասխանեալ ինքն ասաց առ նոսա. Զի՞նչ խորհիք ի սիրտս ձեր, ³⁴զի՞նչ դիրավաստակագոյն՝ ասել է. թողցին քեզ ³⁵մեղք քո, եթե ասե՞լ. ա՛ն զպատգարակն³⁶

1 Լուսանցեալ լծ. ի ձեռն Հոգւոյն
 2 այս
 3 Բանն
 4 իւր արարեալ
 5 զՀոգւովն ի սրբոյն Կուսէ
 6 եւ Աստուած
 7 Տիմոթէոս, էջ 292
 8 Եղիսաբետ
 9 իսայտայ
 10 ներայ
 11 Եղիսաբետ
 12 եսաց
 13 չիք
 14 բարեբանեալ է
 * Գ՝-Կ՝ Լ՝ 41-43
 15 Ներգործաւորի
 16 ոք մարգարէ
 17 այսուհետեւ ողջունելմ
 18 Աստուածածնի Մարիամայ
 19 զՅովհաննէս ի մարգարէութիւն
 20 ի համա կուսին

21 Տիմոթէոս, էջ 293
 22 զծառայ
 23 ըստ բայի
 24 ժողովրդեանն
 ք Գ՝-Կ՝ Լ՝ 29-32
 25 գայսպիսիս
 26 ասէր
 27 փրկական
 28 յայտնութեան
 29 է
 30 պարշտելով
 31 Աստուծոյ պարշտել
 32 Տիմոթէոս, էջ 293
 33 պատասխանեալ եսաց
 34 զի՞նչ է դիրավաստակագոյն ասել
 35 մեղք քո՛ ասել
 36 զպատկարագ

Կո եւ զնա՛ւ:– 82 *Եթե միայն զմեզ բոլորեցունն Աստուած ի բաց վճարէ յանցանաց՝ այլում վայելելով զայս ո՛չ ումեք, եւ շնորհէ Քրիստոս եւ զայս իշխանութեամբ աստուածավայելչիւ, ի՞բը ոչ իցէ Աստուած. կոչի իսկ Որդի Մարդոյ՝ ծնիցեալ ի կնոջէ ըստ մարմնոյ, եւ՛ 3Թեպէտ եւ Աստուած ելով Բան:*

83 Յայնմ ժամու բժշկեաց զբազումս⁵ յախտից եւ ի⁶ հարուածոց եւ յոգւոց չարաց, եւ կուրաց բազմաց շնորհեաց տեսանել, 7եւ ասէ. Պատմեցէ՛ք Յովհաննու զոր լուայիդ եւ տեսէ՛ք: 84 *Գործովքն ողջացուցեալ՝ զինքն Քրիստոս աստուածավայելուչ՝⁹ մեծագործականաց բացակատարաւդ առ՛¹⁰ յիշողութիւն վերաբերէ ասացելոցն ձայնիւ մարգարէից՛¹¹. յաղագս իւր ինքն՛¹² ասաց այսուհետեւ երանելին Եսայի՛¹³.¹⁴ Առհարստացարուք ձեռք թողացեալք եւ ծունգք քակտեալք. ապա միայն ո՛չ եւ ձեռք՛¹⁵ կարկառելով ցուցանէ յեմանուէն՛¹⁶ այսպէս ասելով. Ահա Աստուած մեր, ահա Տէր զարութեամբ գայ եւ բա-*

զուկն իւր տէրութեամբ²: 85 *Եւ ասաց իսկ յայլսն. Յայնժամ բացցին աչք կուրաց եւ ՛¹⁷ականջի խից լուիցեն. յայնժամ ոստիցէ ՛¹⁸կաղն իբրեւ գեղջերու՛. եւ ՛¹⁹առ այտքիկ. Յարիցեն մեռեալք եւ ՛²⁰կանգնեցեն որ ի շիրիմս, եւ ուրախացին որ՛²¹ յերկրին. Բանգի ցաւոն, որ՛²² ի Բէն՝ բժշկութիւն ՛²³է նոցա՛: 86 ՛²⁴Եւ ասաց դարձեալ ի՛²⁵ դէմս Քրիստոսի. Ոգի Տեառն առ իս, սակս ՛²⁶որոյ եւ աւծ իսկ զիս, աւետարանել աղփատաց առաքեաց զիս, քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսութիւն՛²⁷։ 87 *Յորժամ այսուհետեւ զ՛ի վերայ իւր հաւատոյն՛²⁸ զմարգարէիցն ձայնն առնէ նշանակ, կամ թե ապացութիւն, եւ Աստուած զնա մարգարէքն քարոզեն, ո՞ սոցա զընդդէմսն ՛²⁹իշխել ասել:**

88 ՛³⁰Իարձեալ:

89 *Չմեռնային երբեմն ըստ լծին աշակերտքն ապա մատուցեալ՛³¹ զարթուցին զնա՝ ասելով. Վերակա՛ցու, ապրեցո՛ւ, կորնչիմք. եւ յարուցեալ սաստեաց հողմոցն եւ խոռվութեան ՛³²ջրոյն, եւ եղև խաղաղութիւն մեծ՛: 90 *Ասացեալ է վասն՛³³**

1 զնա՛ ի տուն Բն
 2 Տէ՛ւ Մ՝աբէ. Թ՝ 4-5. Մ՝աբէ. Բ՝ 8-9. Ղ՝ա-Կ. Լ՝ 22-23:
 3 չիք
 4 թեպէտ
 5 Տիմոթէոս, էջ 293. այս հատուածն եւս եւ դարձեալ վերնագրով բաժանուած է նախորդից:
 6 բազումս
 7 չիք
 8 եւ պատասխանեալ եսաց նոցա
 9 Գնացեալ պատմեցէ՛ք Յովհաննու զոր տեսէ բն լուայի. կոյրք վերատեսեն, կաղի մեմին, բորոտ մաքրին, խուլք լսեն. մեռեալք յառնեն, աղփատ աւետարանին, եւ երանեալ է, որ ո՛չ գայթաղեացի յիս:
 10 Ղ՝ա-Կ. Լ՝ 21-22
 11 աստուածավայելիցն
 12 առ ի
 13 մարգարեիցն
 14 չիք
 15 Եսայիա
 16 հարստացարո՛ւք ձեռաւք թուղացեալք
 17 ձեռն
 18 ձեռն
 19 ձեռն
 20 ձեռն
 21 ձեռն
 22 ձեռն
 23 ձեռն
 24 ձեռն
 25 ձեռն
 26 ձեռն
 27 ձեռն
 28 ձեռն
 29 ձեռն
 30 Տիմոթէոս, էջ 294
 31 մատուցեալք
 32 ջրոցն, եւ դաղարեցին
 33 Տէ՛ւ Մ՝աբէ. Բ՝ 25-26. Մ՝աբէ. Գ՝ 38. Ղ՝ա-Կ. Լ՝ 24:
 34 յաղագս

2 Լ՝. Խ՝ 9-10
 17 ականջ խից
 18 իբրեւ գեղջերու կաղն
 19 Լ՝. Լ՝ 5-6
 20 առ այտքիկ
 21 կանգնեցին որք
 22 որք
 23 առ
 24 նոցա է
 25 Լ՝. Բ՝ 19
 26 եսաց իսկ
 27 եւ ի
 28 որոյ եւ աւծ զիս
 29 վերատեսութիւն
 30 Լ՝. Կ՝ 1
 31 հաւատայն
 32 ասել իշխել
 33 Տիմոթէոս, էջ 294
 34 մատուցեալք
 35 ջրոցն, եւ դաղարեցին
 36 Տէ՛ւ Մ՝աբէ. Բ՝ 25-26. Մ՝աբէ. Գ՝ 38. Ղ՝ա-Կ. Լ՝ 24:
 37 յաղագս

Քրիստոսի ձայնիւ երանելւոյն Դաւթայ¹. Դու տիրես զաւրութեան² ծովու եւ³ ⁴զտղէլութիւն կոհակաց նորա դու հեզացուցանես⁴. ⁵Քո եմ երկիր լրիւ իւրով⁵: 91 Արդ, այսուհետեւ հեզացուցաւ զին զծով վայել է իսկ եւ տիրել բոլորեցուն եւ ունել իւր⁶ գերկինս, եւ հիմնել կարել զաշխարհ⁷ եւ զլրումն նորա: 92 Ի՞բր ո՛չ արդեւք գոլ ⁸իմանասցի ճշմարիտ Աստուած Քրիստոս՝ ծովու եւ հոգեաց վերահաստելով, եւ զայս հանդերձ իշխանութեամբ:

93 ⁹Դարձեալ:

94 Մաղթէր զնա այրն, յորմէ արտաքսելեալ էին դեւքն¹⁰ գոլ ընդ նմա. իսկ առաքեաց զնա՝ ասելով. Դարձի՛ր ի տուն քո եւ զրուցեա՛ ¹¹որքան ինչ արար Աստուած. եւ երթեալ ըստ բոլոր քաղաքին քարոզելով՝ որքան ինչ¹² արար նմա Աստուած:

95 Դարձեալ:

96 ¹³Ի Գերգեսացոց քաղաքին բժշկեաց Քրիստոս զվայրենապէս դեւածատեալն¹⁴. ¹⁵Ներգործեաց ուրեմն ինքն, իբր Աստուած գոլով ճշմարիտ: 97 Քանզի ո՛չ եւս ասեմք՝ իբր արբանեակ եղեւ աստուածային շնորհին, ըստ միում ի մարգարէիցն,

կամ եթե սրբոց առաքելոց¹⁶, այլ էր ինքն, որ զաւրութեամբ իւրով խորտակէր զսատանայ. քանզի անուամբ նորա եւ սրբոց աշակերտացն հնազանդէին¹⁷ դեւք, եւ զայս¹⁸ խոստովանեցին ինքեանք:

98 ¹⁹Դարձեալ:

99 Ի վերայ դատեր ժողովրդապետի²⁰ ասէ Քրիստոս. Մի՛ լայք, քանզի ո՛չ մեռաւ աղջիկն, այլ մնջէ՞: 100 Արդեւք ստեա՞ց, քա՛ւ լիցի: 101 Ըշմարիտ²¹ իսկ, ըստ իմ յեզանակի, Աստուածային Գրութիւնն մեկնէ՛ ասելով. Ո՛չ է Աստուած մեռելոց, այլ կենդանեաց²². քանզի կեան Աստուծոյ կեալն հանդերձեալ²². ուրեմն եւ մեռեալք ²³ըստ մեռեալք մարդկան, իսկ ²⁴ըստ կենազործութեանն, այս է ըստ աստուածայնումն՝ ո՛չ մեռանի²⁵: 102 Ըշմարիտ է այսուհետեւ իբր Աստուած, յազգս աղջկանն ասելով եթե՛ Ո՛չ մեռաւ, այլ ննջէ:

103 ²⁶Դարձեալ:

104 Ամենայն ինչ²⁷ աւանդեցաւ ի Հաւրէ իմմէ, եւ ո՛չ ոք գիտէ զՈրդի²⁸, եթե ո՛չ Հայր, եւ ո՛չ գիտէ զՀայր, եթե ո՛չ Որդի²⁹, եւ որում ³⁰կամիցի Որդի՝ յայտնէ՛:— 105 Ո՛չ ուրուք գիտելով զՈրդին, ³¹եթե ո՛չ միայ-

1 Դաւթի
 2 հարստութեան
 3 չիք
 4 զտղէլութիւն կոխակացն
 5 Սաղմ. 2Ը 10
 6 Քո եմ երկիրն եւ քո է երկիր, գաշխարհ եւ զլրումն նորա դու հիմնացուցեր
 7 Տե՛՛ Սաղմ. 2Ը 12:
 8 իւրո
 9 գաշխարհ
 10 իմանայցի նշմարտապէս
 11 Տիմոթէոս, էջ 294
 12 դեւք
 13 որքան քեզ արար
 14 չիք
 15 ի Գերգեսացոցն գաւառի / Տիմոթէոս, էջ 294. յաջորդն անմիջապէս նախընթացին է կցուած, առանց վերնագրի:
 16 դիւստեալն
 17 չիք ներգործեաց ... առաքելոց

16 առաքելոցն
 17 հնազանդին
 18 զԱստուծոյն
 19 Տիմոթէոս, էջ 295
 20 ժողովրդապետին
 21 Տե՛՛ Ղուկ. Ը 52. Մարք. Թ 24. Մարկ. Ե 39:
 22 նշմարտէ
 23 Մարք. Թ 32. Մարկ. Ժ 27. Ղուկ. Ի 38
 24 հանդերձեալք
 25 Տիմոթ. Տիմ. Ժ 8:
 26 ըստ մարդկան եւ մեռեալք
 27 ըստ կենազործակ բնութեանն
 28 մեռանին
 29 Տիմոթէոս, էջ 296
 30 ինչ
 31 զՈրդին
 32 Որդին
 33 կամի Որդին
 34 Մարք. Ժ Ը 27. Ղուկ. Ժ 22
 35 եթ՛ ոչ՝ միայնոյ

նուժն Հաւր, ի՞բր անգոսնեն ոմանք
 1 զՀաւր վկայութիւնն. քանզի եցոյց զիւրն
 Որդի եւ² Յորդանան ասելով. Սա է Որդի իմ
 սիրելի, յորում հանեցայ³: 106 Այլ ո՛չ
 մերկ³ միացոյց զիւրն. Բան, այլ միաւորեալ
 մարմնով, եւ ո՛չ⁴ ասաց, եթե ի սմա է Որ-
 դին⁵ իմ, այլ՝ Սա է, որ մարմնովս: 107 Մի
 ուրեմն է Քրիստոս, եւ Որդի եւ Աստուած:

108 ⁶Դարձեալ:

109 Իւրոց աշակերտացն ⁷տրամաբա-
 նելով՝ ասէր. Ո՞վ մեծ է, բազմեալն կամ
 սպասաւորն. ո՞չ բազմեալն. իսկ ես ի միջի
 ձերում եմ ՝ իբրեւ զսպասաւոր⁸: 110 Տե-
 սանե՞ս, զի⁹ որչա՛փ եհաս յաստուածու-
 թեանն վայելուչ եւ ի տէրունական
 փառսն. միայն ո՛չ եւ ի փառսն ի բաց սա-
 սանէ զ՛ի սպասաւորին իմանիլ կարգի. իսկ
 պատուէ զայս սակա մարդկայնոյն. քանզի՝
 ես, ասէ, ի միջի ձերում եմ իբրեւ զսպասա-
 ւոր¹⁰: 111 Ուրեմն, թեպէտ եւ վայրիջեաց
 ընդ սպասաւորսն, ¹¹սակայն է նոյն՝ իբրեւ
 զՏէր բազմեալ, եւ յամենայն արարածոց¹²
 սպասաւորեալ իբր Աստուած:

112 ¹³Դարձեալ:

113 ¹⁴Ասաց քահանայապետից, Հար-
 ցողացն զնա թե՛ Դո՞ւ ես Քրիստոսն¹⁵, ¹⁶ե-

թե՛ Ո՛չ ձեզ ասացից, ո՛չ եւ հաւատայք. իսկ
 եթե հարցից, ո՛չ եւս պատասխանիցէք. ար-
 դուստ իսկ եղիցի Որդի Մարդոյ ցատեալ
 ընդ ¹⁷աջմէ կարուքեանն Աստուծոյ⁸:
 114 ¹⁸Մարդոյն Որդի ի՞բր ո՛չ Աստուած
 Քրիստոս, որ ¹⁹վերնագոյնս գահս վայելե-
 լով եւ աթոռակից Հաւրն. քանզի ո՛չ գա-
 հակցէ ըստ բնութեանն Աստուծոյ ծնանելի
 արարած բոլորովին, իսկ գահակցէ Որդի
 Մարդոյ. Աստուած ուրեմն՝ ըստ միաւորու-
 թեանն տնաւրինականի մարմնոյ եղելոյ
 Բանին:

115 ²⁰Ըստ Յովհաննու աւետարանին.
 Բան Ա.:

116 Իսկ է Բան եւ Բան է Աստուծոյ եւ
 Աստուած է Բան. նա է ընդ հաւր անխա-
 փան: 117 Ամենայն եղականք նովաւ եղեն,
 եւ առանց նորա չիք ինչ արարեալ¹⁷:—
 118 Բոլորից գոյացուցիչ տեսանիւր ընդ
 Հաւր, եւ առ Հաւր Բան եւ յԱստուծոյ Աս-
 տուած: 119 Իսկ յորժամ լսիցեն ունայնա-
 բանքն, եթե այս Բան մարմին եղեւ եւ
 շրջեցաւ ընդ մեզ, եւ զսա իւրով մարմ-
 նովն՝ առիցելովն ի մէնջ, մի Միածին կնքի
 Աստուած ի մարմնի՝ նոյնագոյական Հաւր
 Ծնաւդի, կարկեսցեն ընդվայրաբանու-
 թիւնք այլանդակութեանց նոցա, որք եր-
 կաբունք ի մարմնի թուեցին զմարմնա-
 ռեալ Բանն Աստուած:

120 ²¹Դարձեալ:

121 Էր լոյսն նշմարիտ, որ լուսաւորէ
 զամենայն մարդ ²²եկեալ յաշխարհ. յաշ-

1 զՀաւրն վկայութիւն
 2 ի
 3 Մատթ. Գ. 17
10 եւ իմքն ուրեմն ասէ՝ բոլորիցս արարչագործն եւ Տէր

Գ Եւ. Ի 3

11 եւ ո՛չ ոք է

Դ Տէ՛. ԽԸ՝ 4. Ե՛. ԽԴ՝ 6:

12 զպարտն գոլ

13 չի՞ք Ի հայր ամենակալ

14 զի ընդ մմին ի ներքս բերցի

15 գոյակցի եւ Էակցի

16 այսինքն Հայր ամենայնի գոլով

17 անդր քան գեղելութիւն եւ ի գերագոյնս բարձրութիւնս

18 հետեւեցուցանէ

19 չի՞ք Յարարողն երկնից եւ երկրի

20 արարչագործիլ ամենայնի

տի անբուսական¹ բնութիւնն նորա առ ամենայն արարածս իմանացէ². քանզի ³անհամեմատ առաւելութիւն է Արարչի եւ արարածոց՝ անեղելոյ⁴ եւ եղելոյ բնութեան, որ ընդ լծով ծառայութեան եւ որ ի ⁵տէրունական պատիւն գեղեցկացեալ, աստուածաբար եւ ի վեր քան զաշխարհ հասեալ փառաց: 10 ⁶Զորդւոյ անուն յիշեալ, զի մի՛ կարծիցէ ոք ⁷հասարակ անունն նմա բաժանել, որ կարգիցէ արդեաւք եւ ի մեր վերայ. քանզի կոչիմք եւ մեք որդիք: 11 Կարի հանճարեղազոյնք զկնի ածեն Որդւոյն անուան, որ ով մանաւանդ է տեսանել ⁸զնորա պատուոյն պայծառութիւնն ի վեր քան զարարածս՝ ըստ բնութեանն գոյութեան:

12 Ծնեալ, եւ ո՛չ արարեալ:

13 ⁹Անզուգական գոյութեամբ ընդ արարածս իմանալով զնա, վասն ո՛չ լինելոյն, այլ հաստատեալքն մանաւանդ ի ծնեալն ի գոյութենէ Աստուծոյ եւ Հաւր՝ անժամանակ եւ առանց իմանալոյ. քանզի էր Բանն ի սկզբանէ. ¹⁰ապա եւ ծննդեանն մտերմութիւն մարմնապէս ասացին, եւ այս վասն պիտոյական եւ կարգի գեղեցիկ նշանակելոյ:

14 Աստուած յԱստուծոյ ծնեալ

ասացին զՈրդի: 15 ¹¹Իւր ծնունդն ամենեւին ճշմարիտ է. անդ ամենայն իրաւք զկնի երթայ զարժանն խորհիլ եւ ասել, ե-

թե ո՛չ աւտար է ¹²ի գոյութենէ Ծնաւդին Ծնեալն, այլ նորին իսկ. զի եւ ի նմանէ է, ¹³որպէս եւ նմա վայել է ըստ արժանական բանի: 16 Զի ո՛չ եթե ըստ մարմնոյ ծնանիցի անմարմինն, ¹⁴այլ այսպէս մանաւանդ՝ լոյս ի լուսոյ. զի եւ ի ծագելում լուսոյ ճառագայթեալ լոյսն իմանացի¹⁵ եւ ի նմանէ ¹⁶ըստ անճառ եւ պատում էլից, եւ ի նմին ըստ միաւորութեան, եւ ¹⁷եւ ի նմին իսկ բնութեամբ: 17 Քանզի այսպէս լինել ասեմք ի Հաւրէ զՈրդի եւ յՈրդւոջ զՀայր, ¹⁸զրե եւ Որդի ի յիւրում բնութեան եւ փառս զիւր Ծնաւդն. քանզի ասացեալ ¹⁹յայտնապէս ցՍիմոն յիւրոց աշակերտացն, Փիլիպոս էր այն. Ո՞չ հաւատաս, եթե ես ի Հաւր եմ եւ յիս Հայր. որ ետես զիս, ետես զՀայր իմ. ես եւ Հայր իմ մի եմք¹⁶: 18 Եթե այդպէս՝ միասնական²⁰ է Որդի Հաւր. ըստ այս աւրինակի Աստուած յԱստուծոյ ճշմարտէ ծնեալն Հաւատա²¹: 19 Այլ զծննդեան անուն ²²գտցուք եղեալ եւ ի վերա արարածոց. ըստ այնմ ասեմ. Որդիս ծնա եւ բարձրացուցիք², ²³վասն այնորիկ յարենէն Իսրայելի ասացեալ յԱստուծոյ, այլ շնորհաց կարգի զայսպիսի կոչումն շահի եղեալն²⁴. ²⁵[Ի]սկ ի բնութեան Որդոջ ըստ ի կիր առնելոյ ոչինչ ամենեւին

12 յեութեմէ
 13 ըստ իւր վայելուչ մեան սահմանին
 14 այլ այսպէս, որպէս ասացի, ի լուսոյ.
 15 իմասցի
 16 ըստ յառաջ ցանապարհին աննաոնելոյ եւ անպատմելոյ
 17 եւ նոյնութեան բնաւորականի
 18 զի կրէ Որդի
 19 հաւաստեալ առ մի ոմն ի սրբոց աշակերտաց
 * Յ՝ՎՃ՝Ժ՛Գ՝ 10՝9՝Ժ՝30
 20 համագոյ
 21 հաւատացեալ լինի
 22 եղեալ գտանեմք ի վերայ ստացուածոցս
 ք Լ՝*՝ Լ՝ 2
 23 յաղագս որոց յԻսրայելէն ասացեալ առ յԱստուծոյ
 24 արարեալն
 25 իսկ ի վերայ բնութեան Որդւոյն պիտակապէս յայսպիսեացս ոչինչ է

1 անհամեմատն
 2 իմասցի
 3 անհամեմատելի է տարբերութիւնն
 4 անեղի
 5 տիրականին պատուոյն գարդարեցելոյն
 6 Յիշեալ եւ զՈրդի
 7 զհասարակաց անուն հետեւեցուցանել մմա
 8 զմերգոյին ի մմա պայծառութեան բնաւորականին՝ գոր ի վեր քան զարարածս պատիւն
 9 անդասակից էապէս արարածոցս վասն ո՛չ արարեալ իմանալոյն զնա. այլ ծնանել ստուգեն զնա յեութեմէն Աստուծոյ եւ Հօր
 10 ապա զծննդեանն ճշմարտութիւն մարդկօրէն
 11 Քանզի ուրանուր բնաւին ծնունդ

յայտարարեացս գտցի, այլ ճշմարիտ ամենայն. եւ վասն այսորիկ միայն յամենեցունց՝ եւ եւ, *ասէ, նշմարտութիւնն՝ որպէս զի՝ թեեւ ՝ ծնունդ եւ թե որդիութիւնն ի նմա ասիցէ, ստաբանութիւնն ինձ լինել ամենեւին ո՛չ գտցի. քանզի նա է ճշմարտութիւնն:*

20 *Չուշացուցեալ ամրացուցանեն այսուհետեւ զոգիս մեր ամենագով խորհրդացոյցքն՝ չայր եւ Որդի եւ ծնունդ ամենայն ուրեք անուանելով:*

21 *Լոյս ի լուսոյ ծագեալ*

ասացին. զի եւ զանմարմնութիւնն եւ զպարզականութիւնն միաւորութեան ծնունդս ունիցի, եւ զառ ի նմանէն եւ զնոյն, ՝ եւ ո՛չ այլ ոմն որիչ ինքնեքստութեամբ իմանացէ: 22 *Ձի չայր է չայր, եւ ո՛չ Որդի. եւ Որդի ծնեալ, եւ ո՛չ չայր, ՝ եւ ի նմին իսկ բնութեան առանձինն ոք լինել, որ էն:* 23 *Ամենեցուն Արարիչ՝ երեւելեաց եւ աներեւութից, ցուցեալ զչայր՝ Որդով արարեալ զամենայն ասացին, ո՛չ նուագութիւնն ի փառսն, ՝ իբրեւ զվիճակ ինչ պատշաճական՝ բաժանելով:* 24 *Անն անդր ի բաց. ո՞ւր արդեաւք ամենեւին փոքր եւ մեծ իցէ տեսանել ՝ ի նմին միում գոյութեան. այլ որպէս թէ Աստուծոյ եւ չաւր ո՛չ էր առանձինն ինչ գործել եւ ի չգոյէ ի գոյ ածել, բայց եթե ՝ Որդով եւ չգոյ, իբրեւ զաւրութեամբ եւ իմաստու-*

թեամբ իւրով. քանզի զրեալ է թէ՛ Բանիւ Տեառն երկինք հաստատեցան եւ հոգով բերանո նորա ամենայն զարուրթիւնքն ևնցա՞:

25 *Այո՛, այլ եւ ամենասուրբն Յովհաննու ասացեալ թէ՛ Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն՞, ՝ զկինի ած թափեաց կարի գեղեցիկ եթե՛ Ամենայն ինչ նովար եղեւ եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ՞:* 26 *Միասնական այսուհետեւ եւ ՝ զուգափառ եւ Հասարակագործ չաւր զՈրդի ցուցեալ՝ յիշեն կարի աւգտակարագոյնս զմարդկութիւնս նորա, եւ զմատակարարութիւնն խորհրդաւոր Հանդերձ մարմնովն յայտ յանդիման կացուցեն. ՝ զիտացեալ այսուիկ՝ կատարելագոյն եւ անկարաւտ Հաւատոց աւանդութիւնն երեւեալ տեսանի:* 27 *Քանզի ո՛չ միայն այն բաւական է Հաւատացելոյն, առ ի նմա զմտաւ ածելն եւ խորհելն զայն միայն, եթէ Աստուած յԱստուծոյ ծնեալ է, ՝ ՝ չաւրէ՛ միասնական միւն եւ կերպարան զարութեան նորա՞, այլ կարեւորագոյն է գիտել ընդ այնոսիկ եւ զայն եւս, որպէս զի վասն ամենեցուն փրկութեան եւ կենդանութեան զիջուցեալ զինքն յունայնութեան՝ էառ զկերպարանս ծառայի՞. ՝ եւ մարդ ծնեալ ըստ մարմնոյ ի կնոջէ:* 28 *Վասն այսորիկ ասեն:*

« **Յ՝ՎԸ. Ժ՛Ղ. 6**

- 1 ծնունդ ոք եւ որդիութիւն ոք ասիցէ ի վերայ նորա՝ ստէ եւ ո՛չ բնաւ ուրեք.
- 2 Արդ, զգուշացուցանեն զանձինս մեր երանելիք խորհրդածուքն
- 3 եւ Աստուած նշմարիտ յԱստուծոյ նշմարտէ եւ լոյս ի լուսոյ փայլակեալ ասելով
- 4 զպարզութիւն կայցի ծնունդն
- 5 եւ իւրաբանչիւր գոյով առանձնապէս դիմաւ իմասցի
- 6 եւ նոյնութեամբ բնութեանն առանձին է իւրաբանչիւր ուրուք որ ինչ են:
- 7 այլ որպէս զվիճակ ինչ նմա վայելուչ հետեւեցուցեալ:
- 8 ի նոյնութեան էութեանն
- 9 Որդով ի չայր

« **Ս՝ՂԺ. Լ՛Բ 6**

- « **Յ՝ՎԸ. Լ՛ 1**
- 10 ի վերայ բերէ կարեւորապէս
- « **Յ՝ՎԸ. Լ՛ 3**
- 11 համագոյ եւ հաւասարափառ եւ հաւասարագործ
- 12 վասն այնորիկ կատարեալ լինել եւ անկարօտ՝ զհաւատոյն աւանդութիւն բարիքն ծանուցեալ:
- 13 Հօր համագոյ եւ նորա գոյով նկարագիր էութեանն
- է **Հ՝ՄԳ. Փ՛ԼԳ. Բ՛ 6. Ե՞ՔՐ. Լ՛ 3:**
- չ **Տ՛՞՞ Փ՛ԼԳ. Բ՛ 7:**
- 14 յառաջ եկն

29 Որ վասն մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ եւ մարմնացեալ եւ մարդացեալ:

30 1Տե՛ս, թէ զիա՛րդ գեղեցիկ աստիճատշաճական եւ արժանական կարգի յառաջ խաղա բանն նոցա. իջանել ասացին, զի այսոսիկ իմասցուք զայն, որ ի վեր է քան զամենայն բնութեամբ եւ փառաւք. զնա զիջեալ վասն մեր՝ ի կամելն, ասեմ, զառ ի մեր նմանութիւնն գոլ եւ ծագել աշխարհի հանդերձ մարմնովն: 31 Քանզի գրեալ է ի գիրս Սաղմոսաց. 2Աստուած յայտնապէս եկեացէ՛. իմանալի է, թէ 3կամիցի ոք, արդեաւք աստ այլում աւրինակի էջն, որպէս յերկնից եւ ի վերուստ, եւ կամ եթե ի նմանէ իսկ ի Հաւրէ. քանզի բարբառաւք, որ 4ըստ մեզ եւ որ ի վեր քան զմիտս է, 5սովորութիւն է յայտնել Աստուածեղէն Գրոց: 32 Ասաց ուրեմն Քրիստոս՝ այսպէս խաւսեցաւ ընդ սուրբ աշակերտսն. ելի ի Հաւրէ եւ եկի յաշխարհ, 6դարձեալ թողում զաշխարհ եւ երթամ առ առաքիչն իմ՛. զկնի յայնորիկ եւ այլ եւս. ես ի Հաւրէ ելի եւ եկի՞: 33 Գրե եւ զարմանալին Յովհաննէս եթե՛ ՚ի վերուստ եկեալմ ի վեր է քան զամենեսեան՛: 34 7Արդ, այն, որ էրն ի բարձրանագոյն առաւելութիւնսն եւ ի վեր քան զամենեսին՝ 8գոյութեամբ իւրով, որ եւ ի նմին իսկ բնութեամբ առ ի նմին իսկ պսակեալ, ո՛չ յափշտակութիւն համարեցաւ զիմեյն հաւասար Աստուծոյ,

այլ զիմեյն ունայնացոյց՝ զկերպ ծառայի էառ եւ ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանաւ գտեալ իբրեւ զմարդ, խոնարհեցոյց զիմեյն՛. վասն զի 9Աստուած էր Բան, ի մարմինս միացաւ ի մեր, մնաց եւ այնպէս Աստուած: 35 10Այսու աւրինակաւ սքանչելին Պաւղոս զԱստուած ի նմանութիւն մարդկան եղեալ ասէ եւ գտեալ իբրեւ զկերպարանաւք մարդ. քանզի Աստուած էր, որպէս թուեցաւ ոմանց ի հերձուածողացն, այլ հոգէկան, 12մանաւանդ հոգի բանաւոր: 36 Արդ, զնա ուրեմն, 13որ ի գոյութեանն Հաւր եղեալ Բան եւ Որդի Միածին՝ զԱստուածն ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, զլոյսն ի լուսոյ, որով ամենայն ինչ եղեւ, իջեալ ասացին հարքն մեր՝ մարմնացեալ եւ մարդացեալ, այսինքն 14յանձն առեալ զծնանելն ըստ մարմնոյ ի կնոջէ եւ յառաջ զալ 15տեսեամբ մարմնով ըստ մեզ. քանզի այն է մարդանալն: 37 16Արդ, մի Տէր է Յիսուս Քրիստոսն, նոյն Միածինն Բանն Հաւր՝ եղեալ մարդ, ո՛չ ի բաց եղեալ զգոյն որ էն. քանզի եկաց մնաց եւ 17ի մարդանալն Աստուած, եւ ի ծառայի կերպարանսն Տէրն, եւ յունայնութեան ըստ մեզ, 18որ լին է աստուածապէս, եւ ի տկարութեան մարմնոյ Զաւրութեանցն Տէր, եւ ի մարդկութեան 19չափն զիւրն ունելով որ առաւելն քան զամե-

1 եւ տես, թէ զիա՛րդ ի դէպ եւ ի վայելուչ կարգի զայ առաջ Բանն Աստուծոյ
2 եկեացէ, Աստուած մեր ո՛չ լոնսցէ եւ իմացի
*** Սաղմ. ԽԹՅ
3 կամեացի եւ ըստ յեղանակի իջանելն
4 ըստ մեզ ձայնիւք
5 յայտնի է սովորութիւն
6 եւ դարձեալ. Դուք ի ներուստ էք, բայց ես ի վերուստ եմ. ես առ այսոքիւք
բ Յ՝ՎՎ. Ժ.Չ 28
գ Յ՝ՎՎ. Ը 42
դ Յ՝ՎՎ. Գ 31
7 Քանզի եւ է իսկ ի վերայ ամենեցունց
8 էապէս ընդ շօր իւրում

է Փլա. Բ 6-8
9 Աստուած գոյով Բանն՝ զմերս առ մարմին
10 Այսուիկ Աստուած նմանութեամբ մարդկան ասաց գոլ եւ գտանել որպէս զմարդ ձեւով
11 անանցն
12 այլ անձնաւոր հոգով իմանալեալ
13 գոր յերթեմէն շօր եկեալ յառաջ
14 կրել զծնունդն որ
15 տեսակով ըստ մեզ
16 Մի ուրեմն է Տէր
17 ի մարդկութեանն
18 որ զլրումն ունէր աստուածաբար
19 չափս եւ ի վեր քան

նայն արարածս: 38 ¹Որ ինչ էրն յառաջ քան զմարմինն՝ ²անընկէց ունի, քանզի Աստուած էր եւ Որդի ճշմարիտ, Միածին եւ լոյս եւ կեանք եւ զաւրովիւն. եւ ³ո՛չ էրն՝ զայն առաւել տեսանի վասն տնտեսութեանն, եւ իւր արար զմարմնոյսն, քանզի ո՛չ այլոյ ուրուք էր, ⁴այլ նորա, մանաւանդ անճառութեամբ եւ անպատմութեամբ նմա միացեալ մարմինն: 39 Այսպէս եւ իմաստունն Յոհաննէս մարմին եղեալ ասէ զԲանն՝. եղեւ մարմին, ⁵ո՛չ փոփոխումն ինչ եւ շրջումն, կամ այլայլումն, ի մարմնոյ բնութիւն դարձեալ. ⁶այլ ոչինչ զանգուած կամ խառնուած եւ, ըստ փասքսելոյն ոմանց՝ յարումն բնութեան համբերեալ. քանզի անհնարին է, վասն զի ըստ բնութեանն անշրջական⁷ է եւ անայլայլելի, ⁸ի մարմին մանաւանդ, որպէս եւ անճականասցի հոգի բանաւոր՝ ի կուսական եւ յանարատ մարմնոյն առեալ եւ ինքեան զնա միացուցեալ: 40 Սովորութիւն է Աստուածաշունչ Գրոց թերեւս եւ ի մարմնոյ միայն զբովանդակ մարդն նշանակել. Հեղից, ասէ, ի հոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ՞. ⁹քանզի ո՛չ եթե մարմնոց անհոգւոց բանական հոգւովն զչնորհն Հոգւոյն Սրբոյ զեղուլ խոստանայր Աստուած, այլ մանաւանդ մարմնոց ի մարմնոյ եւ յոգւոյ բովանդա-

կելոց: 41 ¹⁰Թե այդպէս է ուրեմն, եթե ո՛չ Բանն ¹¹զգոլն որ էրն եղեւ մարդ, այլ ի նմանութեանն ըստ մեզ երեւեալ՝ եկաց մնաց Բան, եւ ո՛չ եթե նախ մարդ իմանայցի¹² Քրիստոս եւ այսպէս յառաջ եկեալ ի լինել Աստուած, ¹³այլ Աստուած Բանն եղեւ մարդ, զի ի նմին ¹⁴իմանասցի Աստուած, միանգամայն եւ մարդ նոյնն: 42 Այլ որք զնա յերկուս որդիս բաժանեն եւ ժպրհին ասել, եթե զմարդն, որ ի զաւակէն Դաւթի, յինքն յարեաց¹⁵ Աստուած Բանն եւ ետ նմա ի Բանն եւ ¹⁶ետ նմա ի պատուոյն եւ ի փառացն եւ յորդութեանն արժանաւորութենէ, եւ պատրաստեաց զնա համբերել խաչի, մեռանել եւ կեալ, եւ վերանալ յերկինս եւ ընդ աջմէ Հաւր նստել, զի երկիրպագիցի յամենայն արարածոց, ¹⁷ընծա յԱստուծոյ զպատիւսն: 43 Նախ երկուս որդիս ասեն, ապա եւ զխորհրդեանն զաւրովիւնն ¹⁸զառածանեն տգիտութեամբ. քանզի ո՛չ եթե ¹⁹ի մարդոյ եղեւ Աստուած Քրիստոս, որպէս եւ ասացին, այլ Աստուած եղեւ մարմին, այսինքն է մարդ, եւ ունայնացեալ ասի, որպէս զի յառաջ քան զունայնանալն զլիութիւնն ունելով յիւրում բնութեանն, ըստ որում իմանի Աստուած, ²⁰եւ ո՛չ եթե յունայնութենէ ի լիութիւն եկն. խոնարհեցոյց զինքն ի բարձրութեանցն աստուածականաց՝ յանճառ փառացն, եւ ո՛չ եթե խոնարհ մարդ ոք փառաւորեալ. եւ առ զկերպ ծառայի իբրեւ զազատ. եւ ո՛չ եթե ծառայ ոք յատուութեան փառս վազեաց. ի նմանութիւն

1 Գանգի որ
 2 առանց ի բաց դնելոյ
 3 որ ինչ ոչն էր առեալ տեսանի վասն տնտեսութեանն
 4 այլ իւր աննաորաբար եւ որպէս ո՛չ պատմելի միաւորեալ ընդ նմա մարմինն
 * ՏԷ՝ * Յ՝ՎԸ՝ Լ՝ 14 :
 5 ո՛չ ըստ փոխադրութեան, կամ յեղման. կամ այլայլութեան
 6 այլ եւ ո՛չ խառնակումն, կամ շփոթումն, գյուրվակի ասացեալս առ ի յոմանց՝ կրեալ
 7 անփոփոխելի
 8 Այլ մարմին առեալ, որպէս ասացի, հոգւով իմանալեալ
 9 Յ՝ՎԸ՝ Բ՝ 28՝ Գ՝Պ՝ Բ՝ 17
 10 Գանգի ո՛չ ի մարմինս՝ յոչ անճառութեալ հոգւով իմանալեալ

10 Ապա ո՛չ ի բաց կացեալ Բանին
 11 ի գոլոյ որ ինչ էրն
 12 իմանի
 13 Աստուած գոլով
 14 իմասցի Աստուած գոլ
 15 յարակցեաց
 16 հաղորդ արար փառաց եւ պատուոյ
 17 յԱստուած վերաբերութիւն ընկալեալ զպատիւն
 18 ի հակառակն շրջին անուսումնաբար
 19 ի մարդկութենէ
 20 Գանգի ո՛չ ոք յունայն գոլոյ ել ի բարձրութիւն

մարդկան եղեւ, որ ի կերպարանս եւ ի հաւասարութեան Հաւր, եւ ո՛չ եթե մարդ էր եւ զնմանողն լինել Աստուծոյ մեծացաւ հաղորդաբար՝: 44 *Ընդէ՞ր այսուհետեւ փոխեալ շրջեն զմատակարարութեան՝ բանս եւ խառնակեն զճշմարտութիւնն, հակառակ կալով ամենայն Աստուածաշունչ Գրոց, որք Աստուած ճշմարիտ գիտեն ի մարդկութեան զՈրդի եւ մի անուանեն զնա ամենայն ուրեք:* 45 *Քանզի եւ յԱշխարհարարութեանն գիրս գրեաց Մովսէս. յորժամ անցոյց սփանչելին Յակոբ զմանկունս իւր ընդ հեղեղատ եւ մնաց միայն, կոուէր այր ոմն ընդ նմա մինչեւ յառաւառն. եւ կոչեաց Յակովբ զանուն տեղոյն այնորիկ Տեսիլ Աստուծոյ. Քանզի տեսի, ասէ, զԱստուած դէմ յանդիման, եւ ապրեցաւ անձն իմ. ծագեաց ի նմա արեգակն, յորժամ էանց ընդ Տեսիլն Աստուծոյ, եւ Յակովբ կաղայր ի բարձէն իւրմէք: 46 Յառաջագոյն ցուցանէր նահապետին Աստուած, եթե ի մարդանայն շրտ ժամանակաց Միածին Բանի նորա Յուուակից ունիցի զԻսրայէլ, եթե 4 ո՛չ ուղղաքայլեն վասն սորա, այլ կաղան ըստ այնմ, որպէս եւ նոյնն իսկ ասաց քնարաւ երգաւղին. Որդիք աւտարաց ստեցին ինձ. որդիք աւտարաց Կնացան ի շաւղաց իւրեանցք: 47 Թուի ինձ, թէ զայս նշանակեաց ի կաղալն Յակովբայ ի բարձէն իւրմէք. այլ սակայն դու զայն տես՝ մարդոյ կուուելոյ ընդ նմայ, տեսանել զԱստուած դէմ յանդիման, եւ տեսիլ անուանէ զնա Աստուծոյ. քանզի մնաց Աստուած Բանն, եւ յորժամ մարդ եղեւ՝ ի կերպի*

Հաւր. 6 ըստ մտաւոր կերպարանաց ասեմ, 7 քանզի ըստ ամենայնի իսկ անփոփոխումն զոր ունի՝ ասաց ցՓիլիպպոս, 8 նկարագիր զաւրութեանն՝ 9 Հաւր զինքն ցուցանելով եւ հանդերձ մարմնովն. Որ ետես զիս՝ ետես զՀայր իմ՞: 48 Եւ վասն զի զոմն ի ծնէ կոյր բժշկեաց, գտեալ զնա ի տաճարին, Դու հաւատա՞ս, ասէ, յՈրդի Աստուծոյ, եւ նորա առ այս ասացեալ. Ո՞վ է, Տէ՛ր, զի հաւատացից ի նա, պատասխանի ետ ասելով. եւ տեսեր զնա, եւ որ խաւսիս ընդ քեզ՝ նա՛ էք. ետես զնա կոյրն ո՛չ մերկ եւ ո՛չ անմարմին, այլ մանաւանդ 10 ըստ նմանութեան մերում, եւ հաւատաց յայն, զոր ետեսն, 11 ո՛չ իբրեւ յորդի ընդ որդւոյ միացեալ, այլ իբրեւ ի մի բնութեան եւ ճշմարտութեամբ, ո՛չ առանց մարմնոյ ծագեալ որոց յերկրի: 49 Այլ եւ սքանչելին Մովսէս յաւրհանութիւնսն ասէ. Տո՛ւմ Ղեւեայ զյայտնութիւնս նորա զնշմարտութիւնս նորա առն անարատի. զի փորձեցին զնա ի փորձութեան, բամբասեցին զնա ի վերայ ջուրցն հակառակութեան. որ ասէ ցիայր իւր եւ ցմայր. Ո՛չ տեսի զքեզ, եւ զեղբայր իւր ո՛չ ծանեաւէ: 50 Հրամայեաց ամենեցուն Աստուած զպճղնաւորն լինել Ահարոնի՝ 12 յազգի ազգի անգուածոյ զգետս վայելչական միայն քահանայութեանն որոչել, եւ առ լանջաւքն քահանային ականք.

« Հմմտ. Փլւ. Բ՝ 7:
 1 գտնօրէնութեանն
 ք Տէ՛ր ԿՆԻՔ ԼԻՐ 23-24. 30-31:
 2 յետին ժամանակաց
 3 ընդդիմառար կայցի
 4 ո՛չ եղիցին առ նա ուղիղ զնացիւք
 5 հնացան եւ կաղացան
 ք Ս՝Պ՝ ԺԷ 45-46

6 ըստ իմանալոյ պատկերի
 7 եւ ըստ ամենայնի, զոր ինչ եւ իցէ, զանվրէպ մտնութիւն ունելով
 8 նկարագրութեան Հաւր
 9 Լուսանցում էութեանն
 ք Յ՝ՎԳ՝ ԺԳ՝ 9
 է Յ՝ՎԳ՝ ԺԳ՝ 36-37
 10 ըստ մեզ տեսակաւ
 11 ո՛չ յորդուց այլ որդի պատուեալ, այլ որպէս մի գրնութեամբն եւ նշմարտապէս
 շ Բ՝Օ՝ ԼԳ՝ 8-9
 12 եւ եղեալ ի վերայ նորա ի լանջս քահանայատեւտին ականս ընդելուգեալս՝ թուով երկոտասան, եւ ի միջին եղեալ զնշմարտութիւնն եւ զյայտնութիւնն՝ այլ երկուս ականս

աւրինակաւ ի ձեռն այսոցիկ ¹ցուցանէր սրբոց առաքելոցն պար՝ շուրջ փայլեալ զէմմանուէլիւ, որ է յայտնութիւն եւ ճշմարտութիւն. քանզի յայտնեաց մեզ ճշմարտութիւնն, ²որ ի ստուեր եւ յաւրինակս մեկուսեցուցեալ զպաշտաւնն: ⁵¹ Եւ զի եղեւ մեզ քահանայապետ Միածին Բանն Աստուծոյ, յորժամ եւ մարդն եղեւ զիա՞րդ իցէ յերկուանալ, զրելով այսպէս սքանչելոյն Պաւղոսի. նկատեցէ՛ք գառափեալն եւ զփահանյապետ խոստովանութեանն ³ Գիսուս, հաւատարիմ եղեալ Արարչին իւրում^ա. քանզի քահանայապետութեանն⁴ պատիւ ⁵մարդկութեան չափոցն յիրաւի ո՛չ դէպ ինչ թուիցի եւ նուազ ինչ Բանին բնութեան եւ փառաց. ⁶այլ եթե անպատշաճ ինչ՝ Հանդերձ մարմնական տնարէնութեամբն, քանզի նորա եղեն մարմնականքն. Տո՛ւք այսուհետեւ Ղեւեայ, այսինքն է քահանայի, զյայտնութիւնն եւ զճշմարտութիւնն. եւ ՚որո՞ւմ առն արդեւք եւ կամ Ղեւեայ, յայտնագոյնս արար, ասելով եթե՛ առն անարատի. Բանգի ո՛չ արար մեղս Տէր մեր Յիսուս Քրիստոս^բ: ⁵² Այլ եւ երանելի Պաւղոս զրէ վասն նորա. Այսպիսի վայել էր մեզ փահանյապետ՝ սուրբ, անմեղ⁸, անարատ, զատեալ ի մեղաւորաց եւ բարձրագոյն Բան զերկինս եղեալ^բ: ⁵³ Զնա փորձեցին ի փորձութեանն, բամբասեցին ի վերայ ջուրցն հակառակութեան. ո՛ չքնաղ եւ

սքանչելի իրաց. այր ասացեալ զնա՝ վաղ-վաղակի Աստուած երեւեցոյց⁹. զոր բարկացոյցն եւ փորձեաց Իսրայէլ յանապատին եւ ի ջուրսն հակառակութեան: ⁵⁴ Եւ հաւատարմացուցէ զասացեալսն սաղմոսերգուն Դաւիթ եթե՛ Պատառեաց¹⁰ զվեմ յանապատին եւ արքոյց գնոսա, որպէս ի խորոյ մեծէ. եւ հան ջուր ի վիմէն եւ իջոյց որպէս գետ¹¹ զջուրսն^բ: ⁵⁵ Եւ զի՞նչ յետ այսորիկ. եւ փորձեցին զնա ի սիրտս իւրեանց, եւ չարախաւսեցին զԱստուծոյ եւ ասացին. Մի՞թէ կարիցէ Աստուած պատրաստել սեղան յանապատին. զի եհար զվեմն, եւ հոսեցան ջուրք ¹²եւ ուղի հեղեղեցան. եւ մի՞թէ հաց կարէ տալ, կամ պատրաստել սեղան ժողովրդեան իւրոյ^բ:

⁵⁶ Արդ, մի՛տ դիր, եթէ զիա՞րդ բանբասեն ¹³զսքանչելագործն Աստուած. զոր եւ այրն ասէ Մովսէս, ¹⁴զայս իմացեալ երանելոյն Պաւղոսի, եթե՛ Ըմպէին ի հոգեւոր վիմէն, որ երթայր զհետ նոցա, եւ վեմն էր իմն Գրիստոս^բ: ⁵⁷ Թէ այդպէս է, ապա ուրեմն բամբասեալ այրն նա էր՝ այն, որ չեւ եւս մարմնացեալ ¹⁵փորձեալ յԻսրայէլէ: ⁵⁸ Եւ զի ո՛չ այլ ոք որդի էր, որ յառաջ քան զմարմին, եւ այլ ոք յետ նորա, որ ի զաւակէ Դաւիթի, որպէս յանդգնեցան ասել ոմանք, այլ միեւնոյն ինքն՝ յառաջ քան զմարմնանալն մերկ Բանն, եւ յետ ծննդեանն ի սուրբ Կուսէն մարմնացեալ եւ մարդացեալ, որպէս զրեցին սուրբ Հարքն, ¹⁶այլով դարձեալ նշանակելովն հաստա-

1 ցուցանի դասս, որպէս շուրջանակի՝ ի միջի ունելով զէմմանուէլ
 2 ի բաց մերժեալ զստուերիս եւ զօրինակաւ պաշտաւնն
 3 մերոյ
 ա Տէ՛. Եւք. Գ. 1-2:
 4 փահանյութեանն
 5 մարդկութեան չափոց ո՛չ իմասցի անմման, եւ փոքր է ըստ Աստուծոյ
 6 բայց ո՛չ է անպատշաճ տնօրէնութեանն
 7 որո՞յ ասէ Ղեւեայ, փահանայի
 բ Հմմտ. Ի Կոր. Ե 21. Ը Պէտ. Ի 22:
 8 անրիծ
 գ Եւք. Ե 26

9 կոչեաց
 10 հերձ
 11 զգետս
 ք Սաղմ. ՀԷ 15-16
 12 եւ վտակի խաղացին
 է Սաղմ. ՀԷ 19-20
 13 ի սփանջելագործելն Աստուծոյ
 14 Այսպէս եւ աստուածայինն Պաւղոս գրէ. Փանգի ըմպէին
 շ Ը Կոր. Ժ 4
 15 փորձիւրն առ ի յորոց, Իսրայէլէն
 16 դարձեալ այլ նշանաւ հաւատարմացոյց

տեաց Մովսէս. իբր եթե հարցեալ ուրուք, կամ ուսանել կամեցեալ, թէ վասն որո՞յ առն եղեւ բանն, զոր փորձեալ եւ բամբասեալ ասէ յԻսրայէլէ, ո՛չ միայն այսչափ, այլ գրեթէ ձեռն ձգեալ՝ մատամբ ցուցանէ զՅիսուս եւ ասէ. Որ ասէ ցհայր իւր եւ ցմայր իւր՝ ո՛չ տեսի զքեզ, եւ զեղբարսն՝ իւր ո՛չ ծանեալ: 59 Յիշեմք զգրեալն միոյ ուրուք յաւետարանչանցն, որպէս զի յուսուցանելն երբեմն Քրիստոս զխորհուրդս արքայութեանն, եւ կային առ դրան նորա մայրն եւ եղբարքն նորա, եւ ապա ընթացեալ միոյ ուրուքն յաշակերտացն՝ ասացեալ. Ահա մայր քո եւ եղբարք կան արտափոյ եւ տեսանել զքեզ կամին, ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասաց. Մայր իմ եւ եղբարք սոքա են, որ լսեմ զԲանն Աստուծոյ եւ առնեն. զի որ ոք արասցէ զկամս Հար իմոյ, որ յերկինս է, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր՞: 60 Թուի ինձ, թէ ասիցէ զոր ասացն Մովսէս. Որ ասէ ցհայր իւր եւ ցմայր՝ ո՛չ տեսի զքեզ, եւ զեղբարս իւր ո՛չ ծանեալ: 61 Այո՛, այլ եւ ամենիմաստն Դանիէլ 2նմանութեամբ ըստ մեզ տեսանել ասէ զՄէնաձին Բանն Աստուծոյ. քանզի տեսանել ասէ զՀինաւորացն նստեալ յաթոռ, եւ բիւրս բիւրուց յառաջի կացեալ եւ հազարս հազարաց պաշտաւնէից. 3եւ յետ սակաւ միոյ այսոցիկ ածէ, թափէ: 62 Տեսանէի տեսլեան գիշերոյ, եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ Որդի Մարդոյ եկեալ, եւ մինչեւ ի Հինաւորացն էհաս, առաջի նորա մատուցաւ, 4 եւ նմա տուաւ պատիւ եւ արքայութիւն, 5 եւ ազգք եւ լեզուք նմա ծառայեցնէ: 63 Ահա դարձեալ յայտնա-

գոյնս եւ լուսաւորագոյնս՝ վերանալով առ երկնաւորն Հայրն եւ Աստուած, ետես զԵմմանուէլ. քանզի ամպն կալաւ զնա, զոր եւ ո՛չ մարդ լոկ, այլ իբրեւ զՈրդի Մարդոյ ասէ, քանզի Աստուած էր ի նմանութիւն ըստ մեզ եղեալ մարդ: 64 Այսպէս իմացեալ երանելոյն Պաւղոսի՝ ի նմանութիւն մարդկան ասէ լինել զնա եւ գտանել կերպարանաւ իբրեւ զմարդ, եւ ի նմանութիւն մարմնոյ մեղաց Յերեմիոյ յերկրի: 65 Ապա եթե մարդ ոք էր, յարմամբ7 առ Աստուած իբրեւ զԱստուած պատուեալ, ասէր արդեւք մարդարէն՝ իբրեւ զԱստուած, կամ իբրեւ զՈրդի Աստուծոյ տեսեալ զեկեալն ընդ ամպս երկնից. այլ ո՛չ զայս ասէ, այլ մանաւանդ զայն, եթե իբրեւ զՈրդի Մարդոյ. զիտէ ուրեմն, 8եթե Աստուած է եւ ի մարմնաւորութեանն Որդի, թեպէտ եւ ի նմանութիւն մարդկան եղեալ՝ ըստ Պաւղոսի բարբառոյն. սակայն եւ մարմնով երեւեալ՝ ի Հինաւորացն եհաս, այսինքն է՝ 9յիւրոյին Հաւր ել յաթոռ, եւ ամենայն ազգք եւ լեզուք նմա ծառայեցին: 66 10Եւ այս արդեալք ի նմանէ էր ասացեալ. Հայր, փառաւորեա՛ զիս փառաւրբ, զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քեզ: 67 Եւ զի մարմնացեալ Բանն Աստուծոյ 11աթոռակից է եւ զուգափառ 12Աստուծոյ եւ Հաւր եւ յետ մարմնոյն՝ իբրեւ զմի Որդի, եւ յորժամ եղեւ մարդ՝ յայտնագոյնս ցուցանէ ամենիմաստն Պաւղոս. Այսպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մեծութեանցն ի բարձունս: 68 Այո՛,

1 զեղբայր
 * Տէ՛ * Մարգ. ԺԻ՝ 47-50. Հմմտ. Մարգ. Գ՝ 31-35:
 2 ըստ մերոյ տեսակի ասէ զՄիաձինն Աստուծոյ Բան տեսանել
 3 եւ ապա եղեալ ի միջի այս ինչ բանս՝ քերէ ի վերայ այսոցիկ
 4 ամաւ
 5 թագաւորութիւն
 6 Գ. Կ. Է 13-14

6 երեւեալ որոց ի յերկրիս
 7 Հմմտ. Հմմտ. Բ՝ 3. Փլա. Բ՝ 7:
 8 յարակցութեամբ
 9 եւ Աստուած զոլ եւ մարդացեալ զՈրդի
 10 ի Հոր իւրոյ յաթոռ ելեալ, եւ նմա տուաւ պատիւ եւ թագաւորութիւն
 11 եւ այս է ուրեմն ասացեալն առ ի նմանէ
 12 Բ՝ 4. ԺԻ՝ 5
 11 քահակից է եւ հաւասարափառ
 12 Հոր եւ մարմնովն՝ հաւաստէ գրելով
 Ե Եբ. Բ՝ 1

այլ եւ նոյն իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ի հարցանել զնա Հրէիցն, եթե նա՞ իցէ ճշմարտութեամբ Քրիստոսն, եթե ասացից, ասէ, ձեզ՝ ո՛չ հաւատայք. եթե հարցից՝ ո՛չ պատասխանէք. յայսմիտեւ լիցի Որդի Մարդոյ նստեալ ընդ աջմէ գաւրութեանց Աստուծոյ՞: 69 Ապա ուրեմն յաստուածութեան աթոռան եւ ի մարդանալն զՈրդի տեսանէր սրբոց մարգարէիցն գուճնդն¹:

70 Տեսցուք եւ զՆորոյ Կտակարանացս քարոզ, զառ ի ներքոյ արեգական խորհրդացոյցսն, որոց ինքն Քրիստոս ասաց. Ո՛չ եթե դուք իցէք, որ խաւսիցիք, այլ Հոգի Հաւրձնոյ, որ խաւսիցի ի ձեզ: 71 Գտցուք այստուհետեւ ասացեալ սքանչելի Մկրտչին. Զկնի իմ գայ այր, որ առաջի իմ եղեւ, 3^զի առաջին իմ էրք. եւ զիւրձ արդեաւք, որ զկնի նորա երթայր՝ առաջի նորա էր. 4^ե զի կրտսեր էր ըստ մարմնոյն ժամանակաց Քրիստոս քան զՅովհաննէս, զիւրձ ո՛չ իցէ ամենեցուն յայտնի: 72 Զի՞նչ ոք արդեաւք ասիցէ առ այս. ելոյժ մեզ զխնդիրն ինքն իսկ Փրկիչն. ասաց ուրեմն՝ ընդ Հրէայսն խաւսելով. Ամէն ասեմ ձեզ, յառաջ քան զիլնելն Արքայաւորու եմ ես. քանզի էր յառաջ քան զԱբրահամ աստուածապէս, իմանի եւ յետոյ քան զնա, ըստ որում երեւեցան մարդ: 73 Եւ դարձեալ Հաւրձն եւ Աստուծոյ գոչելով յայտնապէս. Զփառս իմ այլում ո՛չ տացէ, 5^քանզի Աստուած ոք բաց ի նմանէ չիք. ասաց մեզ Քրիստոս. Յորժամ եկեցէ Որդի Մարդոյ փառաւ չաւր իւրոյ՝ հանդերձ հրեշտակաւ սրբովք:

Որդւոյն Մարդոյ ակն ունել⁶ իջանել յերկնից: 74 Գրէ դարձեալ ամէնիմաստն Պաւղոս. Պրեւեստան շնորհն փրկչական ամենայն մարդկան, իրատելով զմեզ, զի ուրացեալք գամպարշտութիւն, գաշխարհական ցանկութիւն, զգաստութեամբ եւ արդարութեամբ կեցցուք, յաշխարհիս յայսմիկ, ակն կալեալ երանելի յուսոյն եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ Փրկչին մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի: 75 Ասաց ուրեմն եւ այլուր, 8^վասն որոյ յարենէն իսրայելի զխաւսն արարեալ, եթե՞ Նոցա եմ աւետիքն եւ արեւնդրութիւնն եւ կտակարանն, եւ ի նոցանէ ըստ մարմնոյ Քրիստոս, որ է ի վերայ ամենեցուն Աստուած՝ արեւնեալ յաւիտեանս, ամէնէ:

76 9^Որովհետեւ այդ այդպէս է, ապա ի չաւիղս սրբոց հարց խոստովանութեան առանց խոտորելոյ գնացեալ՝ զծնեալն ի յԱստուծոյ Հաւրձն զՈրդին Միածին մարմնանալ եւ մարդանալ, չարչարել եւ մեռանել եւ յերրորդ աւուր յառնել ի մեռելոց. 10^քանզի անչարչար է ընդ անգի իւրոյ բնութեանն Աստուած Բանն, 11^ե ո՛չ այնպէս ոք յիմարեսցի, որպէս թէ համարեսցի չարչարանաց 12^ընդունիչ լինել զայն, որ ի վեր քան զամենայն բնութիւնս է. այլ վասն զի եղեւ մարդ՝ իւր 13^{ար}արեալ միաւորեաց զմարմինն, որ ի սրբոյ Կուսէն, 14^{այ}սու աւրինակաւ մարմնովն չարչարել մարդաբար ասեմք՝ զայն, որ ի վեր է քան

« Տէ՛ս Պ.՝ 4. ԻԲ 67-69:

1 դաս
2 քարոզ, գոր ընդ արեգական խորհրդածուս
ք Մ.՝ ք.՝ Ժ 20
3 նախ քան զիս էր
զ Յ.՝ 4.՝ Ը 30
4 եւ զի վերջանայ
դ Յ.՝ 4.՝ Ը 58
է Ե.՝ ԻԲ 8. ԻԲ 11
5 աստուած քան զնա այլ ոք ո՛չ է
ը Մ.՝ ք.՝ Ժ 27. Գ.՝ 4.՝ Ը 38. Պ.՝ 4.՝ Թ 26:

6 ունելով
7 քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ
է Տէ՛ք. Բ 11-13
8 յաղագս յորոյ յԻսրայելէն, գտեղի առնելով նոցա
ը Տէ՛ս Վ.՝ 4-5:
9 Արդ, ընդ նախապարհ հարցն խոստովանաբար գնալովն՝ ինքն ասեմք
10 խոստովանելի է, զի անչարչարելի է յիւրն բնութիւն
11 եւ ոչ ոք է այսքան յիմար
12 ընդունական գոյ
13 արարեալ մարմին
14 այսուիկ տնօրէնութեանն հետեւել քանի

զչարչարանս իբրեւ զԱստուած: 77 **Զի թէ**
 1 Աստուած էր եւ եղեւ մարդ, 2 չթողեալ ա-
 մենեւին զլինելն Աստուած, եւ թէ եղեւ ա-
 րարածոցս մասն, եւ եկաց մնաց ի վեր քան
 զարարածս. եթե աւրինադիր էր իբրեւ
 զԱստուած, եւ եղեւ ընդ աւրինաւք, եւ
 տակաւին եւս աւրինադիր է. եւ եթե Տէր է
 աստուածաբար, եւ ի կերպ ծառայի եղեւ,
 եւ անընկէց ունի գտէրութեանն պատիւ.
 եւ եթե Միածին էր, եւ եղեւ անդրանիկ ի
 բազում եղբարս, եւ տակաւին Միածին է,
 3 զի՞նչ զարմանալի է, թէ մարմնովն չար-
 չարեալ մարդապէս: 78 **Քանզի եւ ամէնի-**
 մաստն Պաւղոս՝ Որ ի կերպարանս եւ ի
 հաւասարութեան Հաւր էր Բանն, 4 զնա
 հնագանդ լինել մահու չափ եւ մահու իա-
 չի: 79 **Դարձեալ եւ ի միւսումն եւս յաւե-**
 լոյր թղթոյն վասն նորին, ասէ. Որ է
 5 պատկեր աներեւութին, անդրանիկ ամե-
 նայն արարածոց, 6 զի ի նա հաստատեցաւ
 ամենայն, որ ի յերկին եւ յերկրի, 7 եւ նա է
 յառաջ քան զամենեսին, եւ ամենայն ի նա
 բովանդակեցաւ. եւ զնա տալ ասէ՝ գլուխ ե-
 կեղեցւոյ լինել եւ 8 պտուղ ննջեցելոց 9 եւ
 անդրանիկ մեռելոց: 80 **Եւ կեանք եւ կե-**
 նարար է որ յԱստուծոյ Հաւրէ Բանն, քան-
 զի եւ ի կենաց ծ[ն]եալ ի ծնաւդէն իւրմէ:
 81 **Զիա՞րդ արդեւք եղեւ անդրանիկ մեռե-**
 լոց եւ պտուղ ննջեցելոց. այլ վասն զի
 10 ընդունիչ մահու մարմինսն ինքեան իւ-
 րացոյց՝ չնորհաւք Աստուծոյ, որպէս եւ ա-

սէ ամէնիմաստն Պաւղոս. Վասն ամենե-
 ցուն զմահ նաշակեաց՝ մարմնովն, որով
 Հնար է չարչարել, ո՛չ ի բաց եղեալ զգոլն
 կեանս: 82 **Ուրեմն, եթե եւ ասիցէ մարմ-**
 նով չարչարել՝ 11 ո՛չ միայն աստուածու-
 թեանն բնութեամբն ընդունիցի զչարչա-
 րելն, այլ որպէս ասացի 12 այժմ, զի իւրով
 մարմնովն ընկալաւ զչարչարանսն:
 83 **Քանզի եւ երանելին էսայի մարգարէ,**
 մարդացեալ զԱստուած մարմնովն չարչա-
 րել զիտացեալ՝ ասաց ուրեմն վասն նորա.
 13 Իբրեւ գորոջ առաջի կտրչի անբարբառ՝
 այսպէս ո՛չ բանա գրեբան իւր. ի խոնար-
 հութեանն դատաստան նորա բարձաւ, եւ
 զագգատոհմն նորա ո՞վ պատմեցէ. զի
 14 բարձեալ եմ յերկրէ կեանք նորա: 84 **Եւ**
 զի թէ էր 15 մարդ ոք, որպէս եւ ասեն պիղծ
 վարդապետութեանն պատմիչք, 16 եւ որ ա-
 ռանձին իմացեալ Որդի յարեաւ Աստուած
 ոք, զիա՞րդ արդեւք դժուարագիւտ էր,
 որ զագգն նորա կարէր պատմել. քանզի ե-
 դեւ ի զաւակէն Յեսսեայ եւ Դաւթի:
 85 **Իսկ զԱստուծոյն Բանի ծնունդն, եւ**
 կամ զծննդեանն աւրինակ՝ 17 ո՞ կարիցէ ա-
 սել. քանզի բարձեալ են յերկրէ կեանք նո-
 րա, այսինքն է՝ գոյութիւնն. եղ աստ փո-
 խանակ գոյութեանն զկեանսն. 18 քանզի ի
 բարձու ուրեմն չըջի եւ վերամբարձ զուղի՝
 քան զամենայն երկրաւորս անիմաց եւ

1 Աստուած գոլով
 2 ո՛չ եկաց ի բաց ի գոլոյն
 3 մարդկօրէն, իմանի եւ այսպէս անչարչարելի
 աստուածաբար
 4 զնոյն ինքն հնագանդ լինել ասէ
 * **Տէ՛* Փլա՛. Բ՛ 6, 8:**
 5 Աստուծոյ աներեւութի
 6 զի նովաւ արար
 7 չի՞ք եւ նա է ... բովանդակեցաւ
 8 առաջին պտուղ ննջեցելոցն
 9 չի՞ք եւ անդրանիկ ... ննջեցելոց
 բ **Տէ՛* Կ*չ. Ը՛ 15-18:**
 10 մահուն ընդունական իւր մարմին

Գ Եբբ. Բ՛ 9
 11 ո՛չ բնութեամբ աստուածութեանն ընկալիցի
 զչարչարանս
 12 այժմ, մարմնով՝ չարչարանաց ընդունական
 13 Որպէս ոչխար ի սպանումն ածաւ եւ որպէս
 որոջ առաջի կտրչի իւրոյ անմոռնչ կայ
 14 բառնան
 * **Ե՛* Կ*Գ՛ 7-8**
 15 մարդ, եւ առանձին իմացեալ որդի ընդ
 Աստուծոյ գոլով
 16 չի՞ք եւ որ ... ոք
 17 յեղանակ
 18 ի վեր ընթանայ եւ բարձրանայ քան զոր յերկ-
 րիս, քանզի անիմանալի է. եւ ո՛չ անկանի ա-
 մենեւիմբ ընդ մտածութեամբ, որ յաղագս ան-
 նառելոյն բնութեանն բան

անմատոյց ամենեւին մարդկան մտաց, որ վասն անճառութեանն բան: 86 Յաւելից յասացելոյս եւս. Մի Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն^ա, որպէս եւ ասէ սքանչելին Պաւղոս. արդ, միոյ Տեառն գոլոյ, միոյ Հաւատոյ եւ միոյ մկրտութեան՝ ո՞վ է Տէրն եւ յո՞վ Հաւատացաք եւ մկրտեցաք. այլ թե՛րեւս պատշաճական Համարել ասիցէ ոք արդեաւք, եթե Բանն, որ յԱստուծոյ Հաւրէ. գտէրութիւնն եւ զՀաւատն նորա առ ի մէնջ՝ Վնոյն կատարել եւ զփրկչական մկրտութիւնն: 87 Քանզի այսպէս ուրեմն, սրբոց առաքելոցն ասելով՝ պատուիրեաց. Աշակերտեցէ՛ք զամենայն ազգս, մկրտելով զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ^բ: 88 Այլ սքանչելին Պաւղոս գտէրութեանն զփառսն եւ զՀաւատոց մերոց խոստովանութիւն, եւ զսրբոյ մկրտութեանն զգաւրութիւն շայտ յանդիմանակաց ցուցանէ՝ ասելով. Մի՛ ասիցես ի սրտի քու՞ ո՞վ ելցէ յերկիւնս, այսիմքն է՝ զՔրիստոս իջուցանել, կամ իջցէ ի խորս, այսիմքն՝ զՔրիստոս հանել ի մեռելոց. այլ զի՞նչ ասէ Գիր. մաւտ է ի քեզ բանն՝ ի բերան քու՞ եւ ի սրտի քու. զի թէ ասիցես Տէր զՅիսուս, եւ հաւատայցես ի սրտի քու, թե Աստուած յարոյց զնա ի մեռելոց՝ կեցցես^գ: 89 Գրէ դարձեալ. Ո՞չ գիտէք, եթե որ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ նորա մկրտեցաք^դ. Յաւատարկ յայտնապէս զատուցանէ ճշմարտաբար գտէրութեանն եւ զՀաւատոց մերոց խոստովանութիւն, եւ զնոյն ինքն սրբոյ մկրտութեանն շնորհս, ⁴եւ չարչարելն մահուամբ, եւ յարուցեալն ի մեռելոց: 90 Արդ, արդեաւք յերկո՞ւս որդիս Հաւա-

տացուք. արդեաւք զանց արարեալ զառ ի յԱստուծոյ Հաւրէ ճառագայթեալ Բանիւն՝ ⁵իբրեւ Որդւոյ, թող զնա, միւսումն չարչարելո՞ւմն յարեսցուք գտէրութեանն զփառսն, եւ զնոյն ինքն խոստովանութիւն Հաւատոցն եւ զերկնաւոր մկրտութիւնն. եւ զիս՞րդ ոչ իցէ անմատութիւն, եւ յիմարութեան, ⁶մանաւանդ եթե առանց յերկուանալոյ մեծի ամբարշտութեան՝ այսպէս ասել կամ խորհել: ⁹¹ Արդ, զի՞նչ ասացուք. մի Տէր ճշմարտութեամբ, մի Հաւատ, մի մկրտութիւն. քանզի մի իսկ է Տէր եւ Որդի. ⁷ո՛չ զմարդ ըստ յարելոյ յինքն առ Բանն եւ Հաղորդ զնա երեւեցոյց պատուոյն, եւ ետ նա յորդիութենէն եւ ի տէրութենէն իւրմէ, որպէս ասացին եւ զրեցին ոմանք՝ զառանցեալ բարբանջանաւք. ⁸այլ նոյն իսկ մարդացեալ եւ մարմնացեալ որ յԱստուծոյ Հաւրէ Բանն՝ լոյսն ի լուսոյ, ի նորա մահն մկրտեցաք. չարչարեալ նորա մարդկաբար իւրով մարմնովն, եւ մնացեալ անչարչար աստուածաբար, եւ միշտ կենդանի. քանզի կեանք է ի կենաց՝ յԱստուծոյ եւ ի Հաւրէ: ⁹² Այսպէս յաղթահարեսցի մահն իշխանացեալ, ⁹վազեալ ի վերայ մարմնոյ կենաց. այսպէս եւ ի մեզ խափանի ապականութիւնն եւ նորուն իսկ մահուան զաւրութիւն տկարանայ. քանզի եւ ասաց իսկ Քրիստոս. Ամէն ասեմ ձեզ, եթե ո՛չ կերիջիք զմարմին Որդւոյ Մարդոյ եւ արբջիք զարիւն նորա, ո՛չ ունիք կեանս յանձին. ապա ուրեմն կենարար է սուրբ մարմին եւ արիւնն Քրիստոսի. քանզի մարմին է, որպէս ասացին, ո՛չ մարդոյ ուրուք՝ ¹⁰Հաղորդականի կենաց, այլ նորա մանաւանդ, որ ըստ բնութեանն կեանքն է:

^ա Եփէ. Գ 5
¹ ի նա կատարեալ եւ զփրկականն մկրտութիւն
^բ Մատթ. ԻԲ 19
² յայտնի կացուցանէ
^գ Հռոմ. Ժ 6-9
^դ Հռոմ. Զ 3
³ Ահա հաւատեալ ընթացուցանէ բարիոք արուեստաւորապէս զտիրութեանն
⁴ ի կրեալն զմահ եւ ի յարուցեալն

⁵ որպէս այլ որդւոյ քան զնա չարչարեցելոյ հպեցուցում
⁶ յաւետ զի եւ աներկրայելի ամբարշտութիւն
⁷ ո՛չ մարդ ըստ յարակցութեան առեալ Բանին
⁸ այլ ինքն
⁹ ի վերայ յարձակեալ յանդգնեալ
¹⁰ հաղորդի կենացն, յայտ է զի Միածնին

93 Յայտ է, թէ յայս միտս հաստատեալ եւ զսոյն խոր[հ]ի ընդ մեզ ¹քրիստոսասէր հարցն ժողով, եւ նոյն իսկ, որ այժմ զսրբոյ եկեղեցւոյ Կոստանդնուպաւսացոյ զաթոռն զարդարէ՝ սուրբ եւ աստուածապաշտ եղբայր մեր եւ եպիսկոպոսակից Պրոկղաս². քանզի գրեաց եւ նա առ արեւելեաց աստուածապաշտ ³եպիսկոպոսն սովին բանիւք. ⁴Այսպէս եւ մարմնոյ անշրջականութեամբն անտեսիլն. ծնանի ըստ մարմնոյ անսկզբնականն, ⁵զարգանա ըստ մարմնական հասակի բնութեամբ ամենակատարն, եւ չարչարանաց համբերէ վերագոյնն քան զչարչարանսն. ո՛չ որով էրն համբերեաց թշնամանաց, այլ որով եղեւն յանձն էառ զմարմնոյ թշնամանս⁶: 94 Յանդիմանեալ կշտամբի այսուհետեւ եւ չարահաւատութիւնն այնոցիկ, որք աւելի ինչ քան զայս խորհեցանն եւ գրեցին ամենայն ուրեք՝ ⁷ախտացեալք զպիղծ եւ զանհաճոյ վարդապետութեանն:

95 Յանգ հանել այսուհետեւ զբանն, որ վասն Քրիստոսի՝ ⁸երանելեացն հարցն, յիշել եւ զՀոգւոյն Սրբոյ. քանզի հաւատալ ասացին ի նա, ⁹որպէս եւ պարտ է ի Հայր եւ յՈրդի. վասն զի միասնական իսկ է նոցին, ¹⁰եւ զեղու կամ ելանէ, իբրեւ յաղբիւրէ՝ յԱստուծոյ եւ ի Հաւրէ, բաշխի արարածոց ի ձեռն Որդւոյ. քանզի եւ փչեաց ի սուրբ առաքեալսն՝ ասելով. Առէ՛ք զՀոգին Սուրբ՝: 96 Ապա ուրեմն յԱստուծոյ եւ Աստուած է Հոգին Սուրբ, եւ ո՛չ աւտար ի

գոյութենէն, որ է վերագոյն քան զամենեսեան, այլ ի նմանէն եւ ի նոյնն եւ նորին իսկ գոյութեան:

97 Այս է սրբոց հարցն ուղղակորով եւ անմոլար հաւատք եւ հաւատոց խոստովանութիւն: 98 Այլ որպէս Պաւղոսն ասաց. Աստուած յաւիտեմիս այսորիկ կուրացոյց զսիրտս անհաւատիցն՝ ¹¹առ ի չծագել լուսաւորութիւն արեւտարանիմ փառաց Քրիստոսի², թողեալ ոմանց զուղիղ ճանապարհն ճշմարտութեանն ընթանալ՝ ընդ առապարսն ընթանան, չիմանալով ամենեւին՝ զի՛նչ ասեն, կամ վասն որոյ վիճինն. քանզի զատուցեալ¹² զորդութեան փառս ¹³միայն ի ծնեալ Բանն յԱստուծոյ Հաւրէ, իբրեւ միւս եւս Որդի գայն, որ ի զաւակէն Յեսսեայ եւ Դաւթի՝ յարեալ ասեն ի նմա եւ հաղորդել որդութեանն եւ պատուին աստուածականի ¹⁴եւ բնակելոյն ի նմա Աստուծոյն Բանի, եւ մանաւանդ զամենայն ինչ ունել առ ի նմանէ, եւ յիւրմէ ինչ ոչ ամենեւին: 99 Վասն այսպիսեացս, որպէս կարծեմ ես, գրեցին Փրկչին աշակերտքն եթե՝ Սպրդեցիմ մտիմ ոմանք ի մարդկանէ, ¹⁵որք եւ յառաջագոյն գրեալ էին յայս դատաստան, ամբարիշտ՝ զճնորհսն Աստուծոյ փոխելով ¹⁶ի պղծութիւն եւ զմի Տէրն մեր զՅիսուս Քրիստոս ուրացեալք²: 100 Յիսուս Քրիստոս անուանեսցի՞ արդեւք մարդկեղէն կերպարանաւք երեւեալ Բանն. ապա թէ ո՛չ՝ յայտնի արասցեն այնուհետեւ ¹⁷հարցանելեացն հակառակորդք, որ ¹⁸գնեստորին եւ զթէոզորիտին խորհել եւ խաւսել ի յոյժ եւ ի բազում

1 աստուածասէրն դաս սրբոցն հարց
 2 Պրոկղոս
 3 եպիսկոպոսունսն այսոքիւք բառիւք զայս ինչ
 4 եւ մարմնանայ անփոփոխապէս անտեսակն
 5 անէ մարմնոյ հասակաւ
 6 կիրս
 7 ախտացեալ զպղծութիւն եւ զնշմարտութենէն զօտար արեւորութիւնս
 8 երեմբերանեան հարքն մեր գտուրք Հոգին յիշեն
 9 որպէս միշտ ի Հայր
 10 յառաջ հեղու եւ արտաքս ելանէ
 * Յ՝ՎԸ՝ Ի՝ 22

11 զի մի՛ ծագեսցել ի նոսա
 2 Բ՝ Կ՝ Գ՝ 4
 12 փոխեալ
 13 ի միայն Աստուծոյ Հօրէ ծնիցելոյն Բանէ
 14 եւ բնակութեան նորին Բանին
 15 նախագրեալք
 16 ի գեղիտութիւն
 2 Տէ՛՝ Յ՝ Գ՝ 4:
 17 հարցողացս հակառակորդքն
 18 գնեստորին եւ զթէոզորիտայն

անմտութենէ չզանգիտեալք՝ մերժեցին ի լինելոյ Աստուած եւ Որդի ճշմարիտ Աստուծոյ եւ Հաւր զայն, ¹որ ի սրբոյ Կուսէն՝ զչարչարելն միայն նման մասնելով եւ հարթուցանել յԱստուծոյն Բանէ, ²զի մի՛ չարչարելի ասիցի: 101 Այս գիւտք են նոցա ³ճշգրտականութեանն իմն եւ մտացն խուզութեանն: 102 Թէ՛ այդպէս է, մի՛ անուանեսցի Քրիստոս առանձինն եւ միայն որ ի յԱստուծոյ Հաւրէ Բանն. քանզի որպէս անպատշաճ է նմա չարչարել, յորժամ արտաքոյ մարմնոյն իմանայցէ, նոյնպէս եւ աւծումն ⁴անզաւղ իրք իմն եւ աւտար ի նմանէ. ԶՅիսուս որ ի նազարեթէ, ասէ, աւծ Աստուած Հոգովն Սրբով՝. քանզի ամենայն իրաւք ինքնակատար է Աստուած Բանն եւ ո՛չ արդեաւք կարաւտացաւ աւծանելոյ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ: 103 Թէ՛ այդպէս է, ապա ուրացարո՛ւք զտնտեսութիւնն⁵, մերժեցէ՛ք զՈրդի առ ի սիրոյ աշխարհիս. մի՞⁶ անուանեսցի Քրիստոս ի ձէնջ, ⁷կամ թէ չիցէ փոքր նմա ըստ մերոյս չափոյ լինել: 104 Ապա ուրեմն, քանզի եւ այս ⁸անպատշաճ է նմա, եւ խոստովանեսցի ոք՝ մի՞⁹ թէ եղեւ մարդ. զի եւ ցնոսա ասէ Քրիստոս. Մի՛ մոլորիմ, չգիտել զԳիրս եւ զգաւրութիւնն Աստուծոյ¹⁰: 105 Թէ՛ այդպէս է, իբրեւ զթշնամիս ճշմարտութեանն համարելով զայնոսիկ, որք այսպէս խորհել կամեցան, փախիցուք ⁹ի սատակիչ զրաբանութենէ նոցա, եւ մանաւանդ զհետ երթիցուք

փառաց երանելի հարցն եւ աւանդութեանց սրբոց առաքելոցն եւ աւետարանչացն. քանզի նա իսկ էր, որ խաւսէրն ընդ նոսա, ¹⁰որ մարդացաւ՝ Բանն, որով եւ ընդ որում Աստուծոյ եւ Հաւր պատիւ եւ փառք եւ զաւրութիւն հանդերձ Հոգւովն Սրբով, յաւիտեանս յաւիտենից, ամէն:

1 ¹¹Նորին Կիւրդի՝ Երկոսասան Նգովից:

2 Առաջին նգովի:

3 Եթե ոք ո՛չ խոստովանեսցի, թէ Աստուած է ¹²ճշմարտութեամբ էմմանուէլն, եւ վասն այնորիկ Աստուածածին զսուրբ ¹³Կոյսն, որ ծնաւ ըստ մարմնոյ զմարմնացեալ Բանն Աստուած, նզովեսցի՛¹⁴:

4 Մեկնութիւն:

5 ¹⁵Երանելի հարքն, որք ժողովեցան ի քաղաքն Նիկիայ¹⁶ եւ զուղիղ եւ զանվրէպ հաւատոցն եղին զսահման, եւ ասացին հաւատալ՝ Մի՛¹⁷ Աստուած, Հայր ամենակալ, ամենայն երեւելեաց եւ աներեւութից արարիչ, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին¹⁸ Աստուծոյ, եւ ի Սուրբ Հոգին. զայն¹⁹ ասէին, որ յԱստուծոյ Հաւրէ ²⁰Բանն երեւեցաւ, որով ամենայնքն՝ զլոյսն ի լուսոյ, զԱստուածն²¹ ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՛ մարմնանալ, ²²մարդկանալ, մեռանել եւ յառնել, զի Աստուած էր²³ բնութեամբ:

1 որք զչարչարելն նմա միայնոյ հետեւեցուցանէ
 2 ասացի Աստուած չարչարելի
 3 ամբարշտութեանն
 4 աննման է նմա
 * Գործ. Ժ 38
 5 գտնարեւութիւն
 6 է՞ր մի
 7 ո՞չ ապաքէն փոքր լինել նմա ըստ մարմնոյս չափոյ
 8 անպատշաճ է նմա, ասացէ Քրիստոս. Մոլորեալք
 9 Մատթ. ԻԲ 29
 9 ի նոցա կործանիչ ունայնաձայնութեանցն

10 մարդացեալն Բան
 11 Գ, 6 ք. 320v եւլն. համեմատել նեմ տպագրի հետ՝ Կիւրեղ, Պարապմանց, էջ 477:
 12 ըստ նշմարտութեան էմմանուէլ
 13 Կոյսն ձեռնալ
 14 նզովեալ եղիցի
 15 հարքն մեր, որք ի ժամանակս իւրեանց
 16 Նիկիացոց
 17 ի մի
 18 Որդի
 19 զայս
 20 երեւեցաւ Բանն, որով ամենայն
 21 զԱստուած
 22 մարդանալ, մեռանել
 23 է

6 Միածինն՝¹ Բանն Հաւր, ²ի գաւակէ Աբրահամու ընդունի մարմին, ³որպէս եւ ասէն երանելին Պաւղոս. եւ հաւասարեաց⁴ մեզ արեան եւ մարմնոյ՞, ծնեալ⁵ ըստ մարմնոյ ի սուրբ Կուսէն, եւ մարդ երեւեցաւ իբրեւ զմեզ եւ ո՛չ մերժեցաւ յատուածութենէն իւրմէ, քա՛լ լիցի, այլ է որ էրն⁶ եւ կայ եւ մնայ ի փառս եւ ⁷ի բնութեան աստուածութեան իւրում⁸: 7 Ասեմք ⁹զնմանէ լեալ, այլ¹⁰ ո՛չ այլայլումն ընկալաւ յայնմանէ, որ էրն, եւ ո՛չ փոփոխումն, զի միշտ է նոյն, եւ գայլելոյ¹¹ ինչ վիշտս եւ ոչ ակնարկելով ընդունի, եւ ո՛չ խառնակութիւն եւ շփոթութիւն բնութեանն¹² իւրոյ ասիցէ ոք ի մարմնանալն: 8 ¹³Ասեմք մարմին Հոգեկան, բանական միանալ ի Բանն, ի վեր քան զմիտս՝ անճառութեամբ, որպէս ինքն միայն գիտէ: 9 Այսուհետեւ եկաց մնաց Աստուած¹⁴ եւ ի լինելն իւրում մարմին, եւ է մի Որդի Աստուծոյ Հաւր՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս, նոյն եւ յառաջ քան զաւիտեանս¹⁵ եւ զժամանակս, որ իմանի ¹⁶ի սկզբան ծագումն էութեան նորա եւ ի կատարած ժամանակաց մարդ վասն մեր: 10 Եւ վասն զի ուրանան ոմանք ի մարմնաւոր ծննդենէ նորա, որ¹⁷ ի սրբոյ Կուսէն, որ եղեւ ի փրկութիւն ամե-

նայնի, զոր ո՛չ ասեմք ի սկզբանն¹⁸ աստուածութեան նորա, այլ զի զմեզ ազատեցէ ի մահուանէ եւ յապականութենէ՝ ի լինելն իբրեւ զմեզ, վասն այսպիսի պատճառանաց¹⁹ եղեալ է մեր զառաջին նզովսն, որ աղաղակէ վասն²⁰ չարաչար Հայոյիչ Հաւատոյ²¹ նոցա. իսկ որք ուղիղ²² խոստովանին՝ Աստուած ճշմարիտ ասեն զԵմմանուելն, ²³վասն այնորիկ Աստուածածին զսուրբ Կոյսն:

11 ²⁴Նզովի:

12 Եթե ոք ո՛չ խոստովանեսցի բնութեամբ միանալ ի մարմնի Բանին Աստուծոյ, եւ մի Քրիստոս խոստովանելի՝ ²⁵զմի եւ զնոյն Աստուած եւ մարդ, նզովեա՛լ եղիցի:

13 Մեկնութիւն:

14 Գրէ երանելին Պաւղոս, որ աստուածային²⁶ խորհրդոցն է պաշտաւնեայ, եւ ասէ եթե՝ Խոստովանիմք ²⁷զմեծ է խորհուրդն աստուածապաշտութեան, որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, երեւեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ յաշխարհի, ամբարձաւ²⁸ փառաւե՛: 15 Արդ, ²⁹զի՞նչ է, որ ասէն եթե՝ երեւեցաւ մարմնով. ³⁰այսինքն է, թէ եղեւ մարմին Բանն, որ յԱստուծոյ, ո՛չ փոփոխելով յիւրմէ բնութենէն, որպէս յառաջագոյն ասացաք, այլ ³¹միացոյց իւր մարմին ի սուրբ Կուսէն, եւ մի եւ նոյն ա-

1 Միածին
 2 ի գաւակէն
 3 որպէս
 4 հաւասարեցաւ
 * Հմմտ. Եբր. Բ՝ 14:
 5 ծնաւ
 6 էն
 7 ի բնութիւն
 8 իւրոյ
 9 մարդ լինիլ
 10 չի՛ք
 11 գայլայլելոյ
 12 բնութեան
 13 Այլ ասեմք մարմին հոգեւոր
 14 չի՛ք
 15 գլխաւորեանս
 16 ի սկզբանէ եւ
 17 չի՛ք

18 սկիզբն
 19 պատճառաց
 20 չի՛ք
 21 հաւատոց
 22 ուղորդ
 23 վասն այսորիկ
 24 Երկրորդ ցառ ցգովից
 25 մի եւ նոյն
 26 աստուծութեան
 27 զի մեծ է
 28 եւ վերացաւ
 * Լ՝ Տ՛Կ՛. Գ՝ 16
 29 զի՞նչ ասէ, թէ որ
 30 այսինքն եղեւ
 31 իւր միացոյց

նուևանի Որդի, յառաջ քան զմարդանալն անմարմին Բանն¹ յետ ²մարդկանալոյն նոյն մարմնացեալ: 16 Զսմանէ ասեմք, թէ նոյն է Աստուած Բանն³ միանգամայն եւ մարդ. ո՛չ⁴ բաժանեմք ուրոյն ի մարդ եւ ուրոյն որիչ ⁵զտեսակ զնորա, եւ ուրոյն դարձեալ ⁶Աստուած Բան, զի մի երկուս որդիս ոք իմասցի, այլ մի եւ նոյն ինքն⁷ է Քրիստոս Որդի եւ Տէր: 17 Իսկ որք ո՛չ⁸ այսպէս ասացին եւ ո՛չ այսպէս Հաւատալ ⁹կամեցան, եւ բաժանեցին յերկուս որդիս զմինն¹⁰ եւ զատուցանեցին¹¹ ի միմեանց զմիացեալն ճշմարտութեամբ, եւ ¹²ասացեն, եթե միայն պատուով եւ յարգանաւք ¹³մարդոյ եղեւ մերձաւորութիւն առ Աստուած, յուղիղ եւ յանբիծ ¹⁴Հաւատոյն աւտարացեալ ասեմք զնոսա: 18 ¹⁵Զի թէպէտ առաքեալ անուանի, որ¹⁶ կամ թէ աւծեալ ասի եւ Որդի ¹⁷կոչի Աստուծոյ, ոչինչ ամաչեմք ¹⁸ընդ տեսչութիւնն, զնոյն ասեմք որ յԱստուծոյ Հաւրէ Բանն, եւ իբրեւ եղեւ ¹⁹ընդ մեզ, յայնժամ անուանեցաւ ²⁰առաքեալ եւ աւծաւ ²¹ընդ մեզ մարդկութեամբ. զնոյն, որ եղեւն վասն մեր իբրեւ զմեզ`

²²թէպէտ եւ եկաց մնաց յորումն²³ որ էրն, ո՛չ հրաժարէ²⁴ ի մերմէն, առնու յանձն ²⁵զմարդկութիւնն վասն տեսչութեան, եւ ոչինչ ամենեւին վնասի ²⁶ի բնութեանէն իւր` փառացն իւրոց, այլ է եւ այնուրիկ²⁷ Աստուած եւ Տէր ամենայնի:

19 ²⁸նզովի:

20 Եթե ոք զմի Քրիստոսն²⁹ բաժանեցէ յերկուս երեսս յետ միանալոյն, եւ միայն մերձաւորութիւն եւ պատիւ եւ ճոխութիւն տացէ նմա, եւ ո՛չ միութիւն բնութեամբ, նզովեսցի³⁰:

21 Մեկնութիւն:

22 Զխորհուրդ միաւորութեանն³¹ տեսչութեան զՄիածնին³² զմտաւ ածցուք, զի փառաւք անճառութեան միանալ³³ ասեմք ի սուրբ ³⁴մարմնին ի հոգի բանաւոր, մտաւոր` զԲանն, որ յԱստուծոյ Հաւրէ, եւ այսպէս մի որդի իմանամք. որպէս ի վերայ մեր իսկ է տեսանել. զի այլ ³⁵բնութիւն է հոգին եւ այլ մարմինն, սակայն յերկոցունց մի կենդանի բովանդակեալ է:

23 Այլ ոմանք ո՛չ իմանան զայս այսպէս, այլ մարդ ուրուք զատեալ մերձենալ ասեն ³⁶ի Բանն Աստուած, միայն պատուով եւ ճոխութեամբ յարգեալ, եւ ո՛չ միութեամբ բնութեանն³⁷, ³⁸այսինքն ճշմարտութեամբ,

1 Բան
 2 մարդանալոյն
 3 չի՛
 4 եւ ո՛չ
 5 զտեսիլ նորա
 6 յԱստուած Բանն
 7 չի՛
 8 ոչն
 9 կամիցին եւ բաժանեսցեն
 10 զմինն
 11 զատուցանիցեն
 12 ասիցեն թէ
 13 եղեւ մարդոյ
 14 հաւատոցն օտարացեալս
 15 թէպէտ եւ
 16 եւ
 17 Աստուծոյ կոչի
 18 ըստ տեսչութեանն
 19 ընդ մեզ մարդ, յայնժամ
 20 եւ առաքեալ
 21 ըստ մարդկութեանն, զի այն

22 զի թէպէտ
 23 յիւրումն
 24 հրաժարի
 25 զմարդկութեանն վասն տեսչութեանն
 26 ի բնութեանէ փառաց
 27 այսուրիկ
 28 Երրորդ ցառ նզովից
 29 Քրիստոս
 30 նզովեալ եղիցի
 31 մարմնաւորութեանն
 32 Միածնին
 33 մի
 34 մարմնի հոգի
 35 բնութիւնն եւ հոգիին եւ այլ մարմնին
 36 որ յԱստուծոյ
 37 բնութեան
 38 այսինքն որպէս մեք հաւատամք նշմարտութեամբ

վասն զի ¹մի իսկ խոստովանիմք զՅիսուս Քրիստոս, այսինքն ²զմարդացեալ եւ զմարմնացեալ Բանն Աստուած. ³որպէս զի, թէ ասիցէ ոք զմարդկութեանն ըստ մարդանալոյն կարգաց՝ նմին իմանամք, եւ յորժամ ըստ աստուածութեանն կարգաց ասիցեն⁴, նմին մարդացելոյն զիտեմք. թէպէտ իբրեւ զԱստուած ասիցէ, Աստուած խոստովանիմք զմարդացեալն, դարձեալ միում Քրիստոսի եւ Որդւոյ՝ ի վեր քան զտկարութիւնն բնութեան, համարիմք զբարբառսն: ³³ Իսկ որք յերկուս երեսս⁵ բաժանեն, ապաքէն երկուս որդիս իմանան. որպէս ի վերայ մերո⁶ մարդկութեանս ո՛չ յերկուս երեսս բաժանել մարթասցէ⁷, ⁸թէպէտ եւ հոգոյն եւ մարմնոյն իմանալի է, այլ մի եւ նոյն մարդ է, այսպէս եւ ի վերայ Եմմանուէլին⁹. վասն զի ¹⁰մի է Որդի եւ Տէր, որ մարմնացաւ եւ մարդացաւ՝ Բանն Աստուած¹¹: ³⁴ Ապաքէն մի երես պարտիմք խոստովանիլ եւ միում համարել ¹²զմարդկաւրէնսն, վասն Բանին, որ յԱստուծոյ Հաւրէ, որ¹³ անճառութեամբն¹⁴ է ծնեալ: ³⁵ ¹⁵Արդ, որք որոշեն եւ զատանեն մարդ առանձին¹⁶ եւ ուրոյն Որդի՝ արտաքս քան զԲանն Աստուծոյ¹⁷, եւ զաստուածութիւնն դարձեալ ուրոյն Որդի, եւ¹⁸ երկուս

որդիս կամին ցուցանել, եւ զսոյն ցուցանէ ¹⁹դարձեալ ճառ նզովիցիս, որ առաջի այս:

36 [Ե]թէ ոք իշխեսցէ ասել աստուածագգեաց²⁰ մարդ զՔրիստոս²¹, եւ ո՛չ Աստուած²² ճշմարիտ եւ մի որդի բնութեամբ, որ եղեւ Բանն մարմին եւ հաւասարեաց²³ մեզ արեան եւ մարմնոյ, նզովեա՛լ եղիցի:

37 Մարմին լինել ասէ երանելի աւետարանիչն Յովհաննէս զԲանն, որ յԱստուծոյ՞, ո՛չ փոփոխումն ²⁴եւ ո՛չ այլայլումն ընդունել ի բնութենէ իւրմէ ի մարմնոյ ²⁵բնութիւնն, որպէս յառաջագոյն ասացաք. զի ունի յինքեան զանխախտութիւն²⁶ բնութեանն իբրեւ²⁷ զԱստուած. այլ զի հաւասարեաց²⁸ մեզ արեան եւ մարմնոյ լինելն²⁹ մարդ, եւ զի սովորութիւն է Աստուածաշունչ Գրոց՝ մարմին ³⁰զմարդ անուանեն, գրեալ է. Զի տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ³¹: ³⁸ Այլ պիղծ եւ անաւրէն կրաւնիք³² գտակք՝ Նեստորիոս եւ որք իբրեւ զնոյն իմանան, կեղծաւորին խոստովանել զմարմնանալոյն բարբառ³³. ո՛չ ճշմարտութեամբ մարմնացաւ, ասեն, Բանն, որ յԱստուծոյ, ³⁴այսինքն մարդ լինել իբրեւ զմեզ եւ կալ մնալ որ էրն. այլ իբրեւ զմի ի սրբոցն, ա-

1 իսկ Որդի
 2 մարդացեալ մարմնացեալ զԲանն Աստուծոյ
 3 Որպէս թէ
 4 ասիցէ
 5 երեսս
 6 միոյ
 7 մարթէ
 8 թէպէտ ի հոգւոյ եւ ի մարմնոյ
 9 Էմմանուէլի
 10 մի Որդի եւ տէր է
 11 Աստուծոյ
 12 զմարդկօրէնսն վասն տեսչութեան մարմնանալոյն եւ զաստուածաբարն վասն Բանին
 13 չի՞
 14 անմատոթեամբ
 15 Այլ՞ որք որոշենն
 16 առանձինն
 17 որ յԱստուծոյ
 18 չի՞

19 ի նաոն նզովից, որ կայ առաջի: Հինգերորդ նաոն նզովից
 20 աստուածագգեստ
 21 Քրիստոսի
 22 չի՞
 23 հաւասարեալ
 * Հմբ. Յով. Ե 14:
 24 եւ այլայլութիւն ընդունիլ
 25 բնութիւն, որպէս եւ
 26 զանախտութիւն
 27 որպէս
 28 հաւասարեսցի
 29 ի լինելն
 30 զմարդն անուանել. զի գրեալ է թէ
 31 Աստուծոյ մերոյ
 * Ե. Ե 5. Գ. 4. Գ. 6
 32 կրօնիցն
 33 բարբառս
 34 չի՞ այսինքն ... որ էրն

սեն, ¹որ ի սրբոյ Կուսէն ծնաւ, եւ պնդեալ եւ յամառեալ են, թէ բնակեցաւ ի նմա Միածին Բանն Աստուծոյ. զի մի՛ եւս միում Քրիստոսի եւ Որդւոյ եւ Տեառն երկիրպագցեն², այլ իբրեւ մարդ լոկ ուրոյն իմացեալս՝ միայն մերձաւորութեամբ եւ պատուով ասեն միացեալ, որ երկիրպագակից է նորա եւ փառաւորակից: ³⁹ Բնաւորէ³ ի մեզ Աստուածն ամենայնի ⁴Հոգւով իւրով, զոր եւ⁵ յառաջագոյն ասէր ⁶մի ոմն ի սրբոց մարգարէիցն թէ՛ Բնակեցայց ի նոսա եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդս⁷: ⁴⁰ Գրէ դարձեալ երանելին Պաւղոս. Ո՞չ զիտե՛ք, ասէ՛, եթէ տանար էք Աստուծոյ, եւ Հոգի⁸ Աստուծոյ բնակեալ է ի ձեզ⁹: ⁴¹ Ասէ դարձեալ եւ⁹ ինքն Քրիստոս ¹⁰[վասն] սրբոց իւրոց մարգարէիցն¹¹ եւ կամ յառաջագոյն եղելոց սրբոց. Զի թէ զնոսա աստուածս ասէ, ¹²առ որ զբանն Աստուծոյ եղեւ. իսկ զոր Հայր սրբեաց եւ առաջեաց¹³, դուք ասէք, թէ հայիոյես, զի ասացի թէ Որդի Աստուծոյ եմ¹⁴: ⁴² Այլ ո՛չ որպէս եւ ի մեզ բնակէ¹⁴ Աստուած, այսպէս եւ Քրիստոս. զի նայ Աստուած է բնութեամբ, եւ երեւեցաւ իբրեւ զմեզ, մի եւ նոյն Որդի է եւ իբրեւ եղեւն¹⁵ մարմին: ⁴³ Արդ, որք

յանդգնին ասել զնայ մարդ աստուածագրեաց, եւ ո՛չ Աստուած մարդացեալ, ¹⁶ի հարկէ եղիցի ընդ նզովիւք:

⁴⁴ Եթէ ոք ասիցէ Տէր Քրիստոսի զԲանն, որ յԱստուծոյ Հաւրէ, եւ ո՛չ զնոյն Տէր խոստովանեսցի Աստուած միանգամայն եւ մարդ՝ ¹⁷զԲանն մարմնացեալ, ըստ Գրոց, ¹⁸եղիցի՛ նզովեալ:

⁴⁵ Տէր մեր Յիսուս Քրիստոս մի եւ նոյն ճշմարտութեամբ Որդի է Աստուծոյ եւ Հաւր՝ [Բանն] որ եղեւ մարմին, տիրէ¹⁹ ամենայնի ընդ Ծնաւդին իւրում, եւ նմա կրկնի ամենայն ծունր ²⁰Երկնաւորացն եւ երկրաւորացս եւ սանդարամետականաց, եւ խոստովանէ²¹ ամենայն լեզու, թէ Տէր է Յիսուս Քրիստոս՝ ի փառս Աստուծոյ Հաւր²²: ⁴⁶ Արդ է ինքն Տէր ամենայնի, ²²որ ի մարմին, եւ է Աստուած անմարմին յառաջ քան զմարդանալն, այլ ինքն իւր ո՛չ²³ Աստուած եւ ո՛չ Տէր. անարժանութեամբ եւ անկարգութեամբ եւ ամբարշտութեամբ լի են իմաստք այնոցիկ, ²⁴որ զայս խորհին եւ այսպէս ասեն. ի հարկէ ²⁵ի վերայ նոցա գայ առաջի եղեալ ²⁶նզով: ⁴⁷ ²⁷Եթէ ասիցէ ոք մարդ զաւրացեալ յԱստուծոյ Բանէն զՅիսուս, եւ Միածնին²⁸ փառաւորութիւն մերձեցեալ, որ արտաքս քան զնա իցէ, ²⁹նզով լիցի:

1 զոր ի Կուսէն սրբոյ ծնաւ
 2 երկիրպագակիցն
 3 Բնակի
 4 Հոգւովն Սրբով
 5 չիք
 6 միով
 7 Ի Կոր. Գ. 16. Գե. Գե. Ի. Գ. 12:
 8 չիք
 9 հոգին
 10 Ը Կոր. Գ. 16
 11 չիք
 12 վասն սրբոցն
 13 մարգարէից
 14 առ որս բանն
 15 առաջեաց յաշխարհ
 16 Յ. Գ. Գ. 35-36
 17 բնակի
 18 եղեւ

16 ի հարկէ գրաւին ընդ նզովիւք առաջի եղելովն: Վեցերորդ նառ նզովից
 17 որ մարմնացեալ
 18 նզովեալ եղիցի
 19 եւ տիրէ
 20 երկնաւորաց եւ երկրաւորաց
 21 խոստովան լինի
 22 Տէ. Փ. Լ. Բ. 10-11:
 23 որ իմանին
 24 ո՛չ է
 25 որք զայն
 26 գան ի վերայ նոցա
 27 նզով: Եօթներորդ նառ նզովից:
 28 ոք ասիցէ
 29 ի Միածնին
 30 նզովեալ եղիցի:

48 *Զի յորժամ զմարմնաւոր ծնունդն¹ Միածնի Որդոյն Աստուծոյ աւետարանէր սրբո Կուսին երանելին Գաբրիէլ. Ծնցի, աւսէ, եւ կոչեսցի² զանունն նորա Յիսուս³, եւ նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց³: 49 Անուանի եւ Քրիստոս վասն աւժեկոյն⁴ ընդ մեզ մարդկաբար, ըստ բարբառոյ երգչին, որ ասէ. Սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զանարեւոթիւն. վասն այսորիկ աւժ⁵ զեզ Աստուած՝ Աստուած քո, իւղով ուրախութեամբ⁶ առաւել քան զընկերս քո⁷: 50 Դեւ նակայն նայ բաշխաւոյ Հոգոյն Սրբոյ, եւ ո՛չ չափով⁸ տայր արժանաւորաց իւրոց⁷. զի լրումն⁹ րինքն է եւ՝ ի լրութեանն նորա մեք ամենեքեան¹⁰ ընկալաք⁷, որպէս եւ գրեալ է: 51 Տեսչութեամբ մարդկութեանն աւժանել¹¹ ասի իբր¹² զմարդ, եւ թողցեալ¹³ իջանէ ի վերայ Հոգոյն Սրբոյ, զի¹⁴ ըստ նմին աւրինակի եւ ի մեզ հանգիցէ, որ վասն յանցանացն Ադամայ ի սկզբանն հեռացաւ: 52 Արդ, ինքն Միածինն¹⁵ Բանն Աստուծոյ եղեւ մարմին եւ կոչեցաւ աւժեալ. որ անգն է Աստուածութեանն զաւրութիւն ունէր յինքեան եւ առնէր զարմանալիս եւ փառաւորեալս: 53 Արդ, որք ասենն¹⁶ վասն Քրիստոսի, թէ ի զաւրութիւն փա-*

ռաւորութեանն¹⁷ Միածնին մերձեցաւ եւ ուրոյն զատուցանեն զՄիածինն ի Քրիստոսէ, այսինքն¹⁸ երկուս որդիս իմանան՝ զոմն զաւրացուցիչ եւ զոմն զաւրացեալ, իբրեւ զմարդ ոք մի¹⁹ ի մէնջ, վասն այսր²⁰ լինին ընդ նզովիւք:

54 *21* Եթե ոք իշխեսցէ ասել, եթե վերացեալ մարդն երկրպագակից է Աստուծոյ եւ փառաւորակից, որ²² յորջորջի Աստուած, իբրեւ այլայլում, եւ ո՛չ միով երկրպագութեամբ պատուեսցէ զեմմանուէլն²³ եւ մի փառատրութեամբ²⁴ տացէ նմա, ըստ լինելոյ Բանին մարմին, նզ.²⁵:

55 Մեկնութիւնն:

56 *Ի մի Աստուած՝ Հայր ամենակալ, եւ ի մի Որդի եւ ի մի 26*Սուրբ Հոգին մկրտիմք: 57 Արդ, ասէ երանելին Պաւղոս. Ո՞չ գիտեմք, եթէ որ²⁷ ի Քրիստոս 28 մկրտեցանք, ի մահ նորա մկրտեցաք. թաղեցաք ընդ նմին մկրտութեամբ 29 ի նորա մահն, զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառաւ Հայր, այսպէս³⁰ եւ մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք³¹: 58 Այսուհետեւ հաւատացաք եւ մկրտեցաք, որպէս ասացի³², ի մի 33 յորդին՝ ի Տէր Յիսուս Քրիստոս, այսինքն՝ 34 ի

1 ծնունդ
 2 կոչեսցես
 3 Գ. 1. 4. Ը 31
 3 նոցա
 4 օձանելոյն
 5 էօծ
 6 ուրախութեան
 7 Ս. 1. 7. Ի 8
 7 եւ սակայն նա էր բաշխիչ
 8 չափով ինչ
 9 Հ. 1. 7. 3. 4. Գ. 34:
 9 էր ինքն
 10 ամենեքեան
 11 3. 4. Ը 16. 4. 1. 7. Ի 23:
 11 օձանիլ
 12 իբրեւ
 13 իջանել ի վերայ նորա
 14 չիք
 15 Միածին
 16 ասեն

17 փառաւորութեան
 18 այսպիսիքն
 19 չիք
 20 այսպիսի իրաց
 21 Ուրեքորդ նառ նզովից: եթէ
 22 եւ
 23 զԷմմանուէլ
 24 փառաւորութիւն
 25 Այստեղ վերջանում է ձեռագրի բուն նախնական մասը, եւ շարունակութիւնը նախադասութիւն թիւ 55-ից նոր գրչով է:
 26 Հոգին Սուրբ
 27 որք
 28 մկրտեցաք, ի մահն
 29 ի մահ անոր նորա
 30 նոյնպէս
 31 շրջիցուք
 32 Հ. 1. 7. 3-4
 32 եւ ասացին
 33 Որդի ի Տէր մեր
 34 եւ ի մարդացեալ Բանն

մարմնացեալ Բանն, որ յԱստուծոյ միուս ճշմարտի՞ Աստուծոյ ուսաք երկիրպագանել, եւ ընդ մեզ վերին զաւրութիւնքն. ²զի գրեալ է. Յորժամ միւս անգամ մուծցէ ³զանդրանիկն յաշխարհ, ասէ, երկիրպագցեմ նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ՞: 59 Եղեւ անդրանիկ Միածինն, յորժամ մարդն⁴ երեւեցաւ ըստ⁵ մեզ, յայնժամ եւ եղբայր յորջորջեցաւ սիրելեաց իւրոց⁶: 60 Այսուհետեւ եթէ ոք ասիցէ ուրոյն մարդ երկրպագակից, որպէս⁶ այլ ոք, քան զԲանն, որ յԱստուծոյ Հաւրէ, եւ ոչ միութեամբ ճշմարտութեանն մի Քրիստոս եւ Որդի եւ Տէր խոստովանիցէ⁷, ի հարկէ լիցի⁸ ընդ նզովիւք:

61 ⁹Իննեքորորդ նզովի:

62 Եթէ ոք զմի Տէր Յիսուս Քրիստոս, փառաւորեալն¹⁰ յԱստուծոյ՝ ասիցէ իբրեւ յայլմէ զաւրութենէ եւ յայլմէ ընդունել զաւրութիւն կարողութեան ի վերայ այսոց պղծոց, եւ կատարել ի մարդիկ զնշանս աստուածագործս, եւ ո՛չ իւր իսկ¹¹ ասիցէ զՀոգին, որով առնէր¹² զզաւրութիւնս եւ զնշանս¹³ աստուածագործս, նզովեա՛լ լիցի¹⁴:

63 Մեկնութիւն:

64 Եղեւ մարդ Միածինն Աստուծոյ Բանն, էկաց մնաց եւ այնպէս Աստուած

յէութեանն¹⁵ իւրում, որպէս եւ Հայր, բաց¹⁶ միայն ի հայրութենէն. եւ ¹⁷էր իւր բնութեամբ Հոգին, եւ առնէր նշանս աստուածագործս, եւ ի լենելն մարդ, սակայն ¹⁸եւ այսպէս Աստուած է ի զաւրութեան իւրում, եւ իւրով զաւրութեամբն¹⁹ կատարէր զաքանչեւիսն²⁰: 65 Իսկ որք ասենն²¹, եթե իբրեւ զմարդ մի է²² ի մէնջ եւ կամ իբրեւ²³ զմի ²⁴ի սրբոց փառաւորեցաւ ²⁵Հոգովն զաւրութեամբ, եւ ո՛չ իւր համարիցին, այլ որպէս²⁶ աւտար, եւ ո՛չ իբրեւ աստուածաբար վարել Հոգովն իւրով, այլ իբրեւ ի շնորհաց կարգի ընդունել զՀոգին եւ գյերկինս²⁷ վերանալն, այնպիսիքն ի հարկէ լիցին ընդ նզովիւք:

66 ²⁸Տասնեքորորդ նզովի:

67 Առաքեալ եւ քահանայապետ խոստովանութեան մերոյ՞ ²⁹լինել արեամբ զՔրիստոս Աստուածաշունչ Գիրք, եւ մատուցանել զանճն իւր վասն մեր հոտ անուշից Աստուծոյ Հաւրէ: 68 Արդ, եթե ոք առաքեալ եւ քահանայապետ խոստովանութեան մերոյ ասիցէ ո՛չ զայն, որ յԱստուծոյ Հաւրէ Բանն, որ եղեւ³⁰ մարմին եւ մարդ ընդ³¹ մեզ, այլ որոյն³² մարդ ի կնո-

1 նշմարտիմ
 2 գրեալ է թէ
 3 զանդրանիկն իւր
 * Ե.Ք.Ղ. 6
 4 մարդ
 5 ընդ
 6 իբրեւ
 7 խոստովանեցէ
 8 լիցիցի
 9 նառ նզովից
 10 փառաւորեալ
 11 չիք
 12 առնէ
 13 նշանս
 14 եղիցի

15 յէութեան
 16 բաց
 17 իւր էր
 18 այնպէս եւ
 19 հոգւովն
 20 սեանչեւիս
 21 ասեն
 22 չիք
 23 չիք
 24 ի սրբոցն
 25 գորութեամբ հոգւոյն
 26 իբրեւ
 27 յերկինս
 28 նառ նզովից
 9 Ե.Ք.Ղ. 1
 29 լինիլ ասեն զՔրիստոսէ
 30 եղեւ
 31 ըստ
 32 ուրոյն

ջէ, եւ կամ ¹թէ իւր վասն իւր մատուցեալ զինքն պատարագ, եւ ո՛չ վասն մեր՝ այն, որ ²ո՛չն էր կարաւտ պատարագաց, որ³ ո՛չ զիտէր զմեզս, նզովեա՛լ լիցի⁴:

69 Մեկնութիւն:

70 Փոքունք եւ խոնարհագոյնք ասին ի վերայ բնութեանն⁵ Աստուծոյ Բանին մարդկայինքն⁶. սակայն ո՛չ մերժի յիւրմէ պատուոյն վասն տեսչութեանն, զի տէր է ամենայնի բնութեամբ, եւ իջոյց զանձն իւր ի մեր նմանութիւնս⁷, զկերպարանս ծառայի եառ եւ անուանեցաւ առաքեալ եւ քահանայապետ՝ ըստ մարդկութեան կարգացն, եւ յայսմիկ⁸ զմի եւ զնոյն Որդի ա- նուանէ, եւ մատոյց զանձն իւր վասն մեր ի հոտ անուշից Աստուծոյ եւ Հաւր, Միով պատարագովն⁹ կատարեաց զսրբեալսն հանապագորդ¹⁰, որպէս եւ գրեալ¹⁰ է:

71 Այլ ո՛չ զիտեմ, թե զիա՞րդ ¹¹այլ այլս ի- մացան, եւ ո՛չ զնոյն Բանն Աստուծոյ, որ եղեւ մարդ, եւ անուանեաց¹² առաքեալ եւ քահանայապետ խոստովանութեան մերոյ, այլ ուրոյն¹³ մարդ առանձինն¹⁴ ի սրբոյ Կուսէն ծնեալ, եւ ասեն, եթե անուանեցաւ առաքեալ եւ քահանայապետ, եւ իբր¹⁵ յա- ռաջադիմութեամբ գոլ¹⁶ յայն, եւ ո՛չ վասն մեր, այլ վասն իւր մատոյց զանձն իւր պատարագ Աստուծոյ եւ Հաւր. յուղիղ եւ

յանբիծ ¹⁷հաւատոցս ամենեւին աւտարա- ցեալք են. զի այն, որ ոչն արար մեզս եւ ի վեր է¹⁸ քան զզղջանալ¹⁹ եւ ²⁰անմասն է ի մեղաց, ո՛չ էր կարաւտ ²¹ամենեւին պատա- րագաց. եւ որպէս ասացի²², երկուս որդիս իմանան այլայլիմացք, որք յայտնի արա- րին զամբարշտութիւն²³ իւրեանց, եւ ի հարկէ եղեն ընդ նզովիւք:

72 ²⁴Մետասաներորդ նզովի:

73 Եթե ոք ո՛չ խոստովանիցի²⁵ զմար- մինն Տեառն կենդանարար եւ իւր Բանին Աստուծոյ, այլ իբրեւ այլոյ ուրումն ²⁶ար- տաքս քան զնա, մերձեցելոյ ի նա պա- տուով, կամ իբրեւ բնակութեամբ²⁷ աս- տուածութեանն, եւ կամ խնամով, եւ ո՛չ կենդանարար, որպէս ասացին, որ եղեւ իւր Բանին, որ զամենայն կարաւդ²⁸ կենդանի առնել, նզովեա՛լ լիցի²⁹:

74 Մեկնութիւն:

75 Զսուրբ եւ զկենդանարար պատա- րագ³⁰ աւրհնութեան, զոր կատարեմք յե- կեղեցիս՝ ո՛չ իբրեւ զմիոյ ի մէնջ զմարմին լոկոյ մարդոյ հաւատամբ զառաջի եղեալն, նոյնպէս եւ վասն պատուական արեանն, այլ խոստովանիմք իւր ³¹Բանին մարմին, որ յԱստուծոյ. նոյնպէս եւ զարիւնն կեն- դանարար³² ամենայնի. զի լոկ մարմին

1 թե ոք ասիցէ վասն իւր մատուցեալ
2 ո՛չ կարօտն էր
3 եւ
4 եղիցի
5 բնութեան
6 մարդկօրէնք
7 նմանութիւն
8 յայսոսիկ
9 պատարագաւ
* Լէք. Ժ. 14
10 գրեալն
11 այլայլսն
12 որ անուանեցաւ
13 ուրոյն ի նմանէ
14 առանձին
15 իբրեւ
16 գալ

17 հաւատոցն ամենայնիւ օտարացեալ
18 չի՞ք
19 զզղջանալն
20 անմասն մեղացն
21 պատարագաց ամենեւին
22 ասացին
23 գանպարշտութիւնս
24 նառ նզովից
25 խոստովանեցի
26 արտաքս մերձեցելոյ ի նա քան զնա պատուով
27 բնակութեամբն
28 կարօղ է
29 եղիցի
30 պատարագն
31 մարմին Բանին
32 զկենդանարարն

կենդանութիւն տալ ո՛չ կարէ: 76 Այսմ՝ վկայէ Փրկիչն ամենեցուն², որ ³ասէն եթե՝ Մարմին ինչ ո՛չ աւգնէ, Հոգին է կենդանարարա՞րա՞ր³: 77 ⁴Եւ վասն զի եղեւ իւր Բանին մարմին, այսու իմանի եւ է կենդանարար. որպէս եւ ասէ⁵ Փրկիչն թե՛ Որպէս առաքեաց զիս ⁶կենդանին Հայր, կենդանի եմ եւ⁷ ես վասն Հաւր⁸, եւ որ ուտէ⁹ զիս եւ նա կեցցէ վասն իմ¹⁰: 78 Եւ քանզի Նստոր¹⁰ եւ որք իբրեւ զնայն¹¹ իմանան եղծանել ջանան իւրեանց տխմարութեամբն ¹²զխորհուրդ զզաւրութիւնն, վասն այնր¹³ յիրաւի եղեն ընդ նզովիւք:

79 ¹⁴Նզովիք:

80 Եթե ոք ո՛չ խոստովանեսցէ զԲանն, որ յԱստուծոյ, մեռանել¹⁵ մարմնով, եւ խաչիլ¹⁶ մարմնով եւ զմահ ճաշակել¹⁷ մարմնով, որ ¹⁸եղեւն անդրանիկ ի մեռելոց¹⁸, որ կենդանի¹⁹ է եւ կենդանարար, նզովեալ լիցի²⁰:

81 Մեկնութիւն:

82 Անվիշտ եւ անմահ է²¹ Բանն յԱստուծոյ Հաւրէ, եւ ի վեր է վշտանալոյ. անհաս եւ անճառ է²² բնութիւնն Աստուծոյ եւ ի վեր է քան զապականութիւն, եւ կենդանի առնէ զամենայն, եւ չէ ընդունիչ ²³տրտմութեան. թեպետ եւ այսպէս է բնութեամբ Բանն Աստուծոյ, իւրացոյց իւր մարմին ընդունիչ մահու²⁴, որ վշտանալ սովոր է, ²⁵եւ յաղագս մեր յանձն իւր ընկալաւ զվիշտսն, զի զամենեսեան զմեզ ազատեսցէ ի մահուանէ եւ յապականութենէ, եւ կենդանացուցէ իբրեւ զԱստուած²⁶ իւրով մարմնովն: 83 ²⁷Եւ եղեւ անդրանիկ ի մեռելոց²⁷. ²⁸Գի ո՛չ մարդ լոկ ուրոյն եւ որիչ իմացեալ՝ արտաբոյ²⁹ քան զԲանն, որ յԱստուծոյ Հաւրէ, որ վասն մեր համբեր³⁰ պատուական խաչին եւ զմահ նաշակեաց, այլ իմքն Տէրն³¹ փառաց իւրով մարմնովն մեռալէ, ըստ Գրոց: 84 Այլ որք զընդունայն³² եւ զհայհոյութեան կրաւնս³³ կամին ի սուրբ Հաւատս³⁴ մուծանել, մարդ ուրոյն ասեն, որ վասն մեր խաչին³⁵. յիրաւի եւ յարժանի եղան ի վերայ նոցա՝ ըստ մեծի ամբարշտութեանն³⁶, մեծամեծ նզովք³⁷:

1 եւ այսմ
 2 ամենայնի
 3 ասէ թէ
 4 ՅՊՎԸ.Չ 64
 5 չիք եւ վասն զի ... կենդանարար
 6 դարձեալ
 7 Հայրն կենդանի
 8 Հորն
 9 ուտէ
 10 ՅՊՎԸ.Չ 58
 11 Նստոր
 12 գայն
 13 զխորհրդոյն գորութիւնն
 14 որոյ
 15 Երկոտասաներորդ նառ նզովից:
 16 չարչարեալ
 17 խաչեալ
 18 նաշակեալ
 19 եղեւ անդրանիկ մեռելոց
 20 ԿՊՂ.Լ 18. Հմմտ. Լ ԿՊՐ. ԺԵ 20:
 21 կենդանիին
 22 եղիցի
 23 զիս

21 էր
 22 չիք
 23 տրտմութեանց եւ թէպէտ
 24 չիք
 25 վասն մեր եւ
 26 Աստուած
 27 եւ եղեւ պտուղ ննջեցելոց եւ անդրանիկ մեռելոց
 28 ԿՊՂ. Լ 18. Հմմտ. Լ ԿՊՐ. ԺԵ 20:
 29 ո՛չ եթէ
 30 արտաբոյ
 31 համբերեաց
 32 Տէր
 33 Հմմտ. ՓԼԳ. Բ 6-8:
 34 ընդունայն
 35 կրօնսն
 36 հաւատն
 37 զհամբերելն խաչի
 38 անպարշտութեան նոցա
 39 նզովք վասն հայհոյութեան նոցա:

1 ¹Երանելոյն Սեբերիանոսի, սրբական եպիսկոպոսի Գոբեղիցից՝ Երբորդ մատեն, որ ի Զատիկն, ի բանէն՝ Երբեմն յորժամ նախամեծար արարին շնորհին Աստուծոյ:

2 Արդ², նախ քան զամենայն ³ինչ զայն պարտ է գիտել, զի Միածին Բանն Աստուած՝ անչարչարելի էութիւնն, անեղ եւ անփոփոխական զաւրութիւնն⁴, ա՛ն ⁵իւր զստեղծուածն եւ ընդ ինքեան զմարմինն միացոյց. ո՛չ ինքն ⁶ի նուաստութիւն իջեալ, այլ զնուազն⁷ յառաւելութիւն խառնեալ⁸: 3 Եւ տե՛ս՝ զիա՛րդ երկնաւորն⁹ փոփոխմունս ¹⁰ընդ մարդկութեանն գործէ. քանզի որ փոխանակիցէ ոք՝ տայ եւ առնու. առ մարմին ի մէնջ եւ ետ մեզ զոգի¹¹ յիւրմէ. եւ որպէս դու, որոյ Աստուած եւ Տէր գոյ, չիշխեիր զԱստուած Հայր կոչել, եթե չէր¹² զՀոգին ի նմանէ առեալ, նոյնպէս եւ Որդի ո՛չ զՀայր Աստուած իւր կոչէր, եթե չէր մարմին ի քէն առեալ: 4 Եւ քանզի գիտէր Կենարարն, եթե ո՛չ նոյն-

գուճակ է Հայր նորա եւ Հայր մեր, եւ ո՛չ ըստ նմին աւրինակի Աստուած մեր, բաժանէ ¹³զանուամբ մին՝ Առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր. ¹⁴է եւ այլազգ ձեր եւ այլազգ իմ. եւ՝ Առ Աստուած¹⁵ իմ եւ առ Աստուած ձեր՝. քանզի այլազգ ձեր Աստուած է եւ այլազգ իմ: 5 Վասն առ ձէնջ մարմնոյս¹⁶ եղեւ իմ Հայր Աստուած եւ վասն առ յինէն ¹⁷Հոգոյն յաշխարհի եղեւ Հայր աշխարհի. ո՛չ ինձ Որդոյս¹⁸ կարէր Հայր Աստուած կոչիլ, եթէ չէր¹⁹ առեալ զմարմինս²⁰, ²¹եւ ձեզ հնար ինչ չէր զԱստուած Հայր կոչել, եթե չէր առեալ զՀոգին: 6 Եւ վկայէ Պաւղոս. Եւ²² զի ²³էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդոյ ²⁴իւրոյ ի ձեզ, որ աղաղակէ²⁵. Ա՛րբայ՝ Հայր²⁶: 7 Եւանեմ ²⁶առ Հայր իմ՝ ²⁷ըստ բնութեանս, եւ առ Հայր ձեր՝ ըստ շնորհաց. առ Աստուած ձեր՝ ²⁸ըստ բնութեանդ, եւ առ²⁹ Աստուած իմ՝ ըստ մարմնոյս:

1 Տե՛ս Զ, ք. 275v եւլն. հմմտ. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1830, էջ 99:
 2 Եւ արդ
 3 չի՛ք ինչ զայն
 4 գորութիւն
 5 զիւր ստեղծուածն
 6 ի նուագութիւն
 7 զնորա նուագութիւնն
 8 հանեալ
 9 զերկնաւոր
 10 ընդ մարդկութեան
 11 հոգի
 12 չէիր

13 զանուանսն
 14 բանգի այլազգ իմ է, եւ այլազգ ձեր
 15 Աստուածն
 * Յ՝ՎԸ՝Ի 17
 16 մարմնոյն
 17 հոգւոյն՝ Աստուած եւ հայր աշխարհի եղեւ
 18 որդւոյ
 19 չէր իմ
 20 զմարմինն
 21 եւ ո՛չ ձեր հնար ինչ էր
 22 չի՛ք
 23 ասէ
 24 չի՛ք իւրոյ ի ձեզ
 25 աղաղակէ ի սիրտս ձեր
 26 Գ՝Պ՝Գ 6
 26 Ես առ հայրն
 27 ըստ բնութեան
 28 ըստ բնութեանս
 29 չի՛ք

Եթե պարտ է անապական խոստովանել զմարմինն Քրիստոսի՝ անդստին յարգանդէ կուսական Աստուածածնին Մարիամայ:

1 ¹Երանելոյն Երինոսի՝ Հետետողի առաքելոց, եպիսկոպոսի Ղոզգոնի Գալիլէացոց:

2 ²Ուրեմն եւ մի բնութիւն Աստուծոյ եւ մարդոյ գործեաց, մեր ո՛չ կարացելոցս³ այլաւրինակաբար ինձ⁴ կցորդութիւն ⁵ընդունելութեան զանապականութեան, ⁶եթե նորա եկեալ էր առ մեզ: ³ Քանզի անտեսանելի եւ ⁷աներեւոյթ ելով՝ ոչինչ աւգուտ առնէր. արդ, ⁸եղեւ տեսանելի է, զի ըստ ամենայն մասին կցորդութեան ընդունելութիւն⁹ առցուք զանապականութեանն:

4 ¹⁰Նորին:

5 Քանզի արիւն ո՛չ եղիցի, բայց եթե յերակաց եւ ի մարմնոյ¹¹ եւ յայլ եւս ի մարդն գոյացութենէ, զոր ճշմարտութեամբ¹² եղեալ Բանն Աստուծոյ արեամբն իւրով փրկեաց զմեզ: ⁶ Ըստ որում եւ առաքեալն նորա ասէ. Յորում ընկալաք զփրկութիւն ի ձեռն արեանն¹³ նորա՝ զթո-

ղութիւն մեղաց¹⁴: ⁷ Քանզի այս է, որ ի հասարակութիւն միաբանութեան եւ ի միութիւն զմարդն ածելով ընդ Աստուծոյ, որ վասն առաւելութեան առ զստեղծուածն յիւր սիրոյ զ'ի կուսէն լինելութիւն կրեաց ինքն, ի ձեռն որոյ զմարդն միաւորեաց ընդ Աստուծոյ: ⁸ Քանզի թե մարդ ո՛չ յաղթեաց հակառակորդին մերոյ, ապա եւ ո՛չ յիրաւի հերքեցաւ թշնամին, եւ ո՛չ թե Աստուած պարզեւեաց զյա[ղթ]ութիւնն. ապա եւ ո՛չ հաստատութեամբ ընկալաք զնա. եւ եթե ո՛չ էր միաւորեալ մարդն ընդ Աստուծոյ, ո՛չ էր կարացեալ կցորդութիւն ընդունել անապականութեանն: ⁹ Իսկ որ ասեն՝ մարդ էր, եւ ո՞ ծանիցէ զնա. ¹⁵Եւ մերձեցաւ առ կին մի մարգարէ, եւ ծնաւ որդի, եւ ¹⁶կոչեաց զանուն նորա սփանջելի Խորհրդական, Աստուած հզարէ. եւ ի հասարակութիւն միաւորութեան¹⁷ զմարդն անդէն¹⁸ վերստին կոչեաց¹⁹ Աստուծոյ, զի ²⁰ի ձեռն հասարակութեան մեք կցորդութիւն²¹ անապականութեան առցուք:

10 ²² Ընդունայն²² եւ սնտորք են ամենեւին որ զամենայն տնաւրէնութիւն²³ անարգեն զԱստուծոյ, եւ զմարմնոյ²⁴ [փր]կութիւնն]

1 Հմմտ. *Des heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung* (Յոյցք առաքելական քարոզութեանն). Leipzig, 1907, S. 24.
2 Արդ զմարդն միաւորեցոյց ընդ Աստուած եւ հասարակութիւն միաբանութեան
3 կարացելոց
4 ինչ
5 ընդունել զանապականութիւնն
6 ո՛չ էր նորա եկեալ
7 անապականութիւնն, ոչինչ մեզ
8 տեսանելի եղեւ
9 ընդունելութեան
10 Առաջին եւ վերջին հատուածները հակառակ դասաւորութեամբ հմմտ. *Irenäus, Gegen die Häretiker* (**Իրենիոսի**՝ Ընդդէմ հերձուածոց), Leipzig, 1910, S. 155. *Վերջընթեր հատուածը՝ Յոյցք, S. 29-50. սորա մասընթաց տողերը կրկին՝ Ընդդէմ հերձուածոց, S. 514:*
11 մարմնոց
12 ճշմարտապէս
13 արեան

14 յանցանացն
* Եփէ. Լ 7
15 Մերձեցայ առ կինն
16 կոչի անուն
* Ե. Լ 3, Թ 6
17 միաբանութեան
18 անդրէն
19 կոչեցեալ
20 առ նոյն հասարակութեան
21 զկցորդութիւն
22 ընդունայնք
23 գտնաւրէնութիւնն
24 զմարմնոյս

ուրանան, զվերստին՝ ծնունդ նորա անպատուեն՝ ո՛չ գոլ ընդունական ²ասելով զանապականութեան: 11 ³Եւ ո՛չ ապրեցաւ սա, եւ ⁴ ո՛չ Տէր ուրեմն արեամբն ⁵ իւրով փրկեաց զմեզ. ⁶ ո՛չ եւ բաժակն գոհութեան հասարակութիւն արեան ⁷ նորա, եւ ո՛չ հացն, զոր բեկանեմք, հասարակութիւն է մարմնոյ ⁸ նորա:

12 ⁹Նորին:

13 Եկն ¹⁰ Որդին Աստուծոյ եւ սգեցաւ մարմին անապական ¹¹յանապական ի կուսէն Մարիամայ:

1 ¹²Երանելոյն Եփրեմի՝ ի բանէն, որ ի սուրբ Կոյսն:

2 Սպասաւորեաց Կոյսն ի ձեռն անապականութեանն Քրիստոսի, պահեաց միշտ ¹³ զկուսութիւնն. վասն ¹⁴ զի միշտ անապականութեան փափագեաց, եղեւ մայր անապականութեան, ¹⁵ եւ ո՛չ կարաց լինել աղախին ապականութեան: 3 Քանզի ¹⁶, յորում ստեղծաւ ¹⁷անապականութիւն, շաւիղ

ապականութեան լինել ո՛չ կարէ. յեղումն ¹⁸ անփորձ ամուսնութեան սովորութեան ¹⁹ խորհրդապէս ²⁰ապականութիւն ո՛չ կարէր տեղի գտանել, քանզի ²¹ ո՛չ կարէր ²²զանապականութիւնն ապականութիւնն պարտել. վասն այնորիկ եւ Մարիամ գուգաբնակցութեանն ²³ յաղթեաց: 4 ²⁴Ասաց եւ Պաւղոս եթե՝ Ապականութիւն զանապականութիւն ²⁵ոչ ժառանգէ՞. ²⁶քանզի Մարիամ նշանակ է յարութեան. ի ²⁷ յարութեանն ապականութիւն հալածական լինի, եւ առ Մարիամաւ ընդարմացաւ նորա զաւրութիւնն՝ առան բնակցութեան եւ ծննդեան. ամենեքեան յարութեանն ²⁸ ծնցին, այնպէս ²⁹ եւ Մարիամ զՔրիստոս ³⁰ ծնաւ: 5 Երանելի՛ն ³¹ Մարիամ, զի այնպիսի ³² ունէր մաքուր խորհուրդ, որպէս ³³ զի կարելի լինել զանապականութիւն ծնանել. երանեա՛լ ³⁴ է եղեալն անապականութեան ըշտեմարան, զի առատապէս զնա ի վերայ երկրի յառաջ եհեղ. երանեա՛լ ³⁵ է ազբիւրն բարեպաշտութեան, զի ի նմանէն արտածողկեցաւ մարդ Աստուած. երանեա՛լ ³⁶ է,

1 եւ զվերստին
 2 գաւ ասելով անապականութեան
 3 եւ եթէ ո՛չ ապրեցի
 4 ապա
 5 արեամբ
 6 ե՛ւ ոչ
 7 է արեանն
 8 մարմնոյն
 9 Հմմտ. Կ, ք. 104, Ստեփանոս Իմաստասիրի գրութեան մէջ. հրատ. Գ. Տէր-Մկրտչեան, «Արարատ» 1902, մարտ-ապրել, ուր վկայութիւն է բերուած նաեւ առաջին հատուածը եւ երկրորդից՝ Ընդունայն եւ սնտոի են ... զանապականութեանն. նոյնը՝ Կիրեղ, Պարապմանց, էջ 458:
 10 Արդ եկն
 11 յանապական Կուսէ:
 12 Հմմտ. Խ, ք. 200v: Սորա այս առաջին հատուածի առաջին պարբերութիւնն եւս վկայութիւն է բերել Ստեփանոս Իմաստասէր:
 13 չի՞
 14 զի անապականութեան ցանկացեալ եւ մայր անապականութեանն
 15 ոչ եղիւ
 16 զի
 17 շաւիղ անապականութեան

18 յեղելումն
 19 չի՞
 20 ո՛չ կարէր ապականութիւն
 21 զի
 22 զանապականութիւն պարտել ապականութիւն
 23 զուգաբնակցութեամբն
 24 որպէս սասց Պաւղոս, թէ
 25 ժառանգել ո՛չ կարէ
 * Լ. Կ. Ժ. Ե. 50
 26 զի գիտէր թէ
 27 զի ի
 28 ի յարութեանն
 29 այսպէս
 30 չի՞
 31 երանելի է
 32 այսպիսի
 33 չի՞
 34 երանելի
 35 երանելի
 36 երանելի

որ ստացաւ զքն պիտանացու եղեալ¹, զի եղեւ փրկութիւն բոլոր ²ազգիս մերում:

6 Նորին:

7 Ո՛չ էր ապականութեանն³ մաւտաւորութիւն. քանզի⁴ խաւար փախչի առ ⁵ի գալստենէ լուսոյն: 8 Եկն անապական յանապական տեղի⁶. զի ուր անապականութիւն⁷, անդ դադարեալ հովանացաւ աստուածային զաւրութիւնն. ո՛չ մարմնովն⁸ յեղափոխեալ ի ստուեր, այլ ի ձեռն այցելութեան նմա զիւրոյ ⁹գալստեանն զգայութիւն շնորհաց:

9 Նորին:

10 Գզաթ էր Մարիամ, ո՛չ ներգործեաց ապականութիւն¹⁰. մեռանի մարմնով, վասն այնորիկ գզաթու իջանել ասի Բանն ի վերայ նորա: 11 Անդ զԱդամ կարգեաց ընդ անապականութեանն կենակից լինել. իսկ ի Մարիամու զանապականութիւն¹¹ աւրինազրեաց:

12 Նորին՝ ի բանէն, որ յաղագս մարգարէին:

13 ¹²Ո՛ր երեկնաւն հրամանացն, ¹³զի ծնաւ բնութիւն ո՛չ զիւրն. կոյսն մայր եւ բնութիւնն աղբիւր. արգանդն սնուցիչ, աղջիկն գործակից, առումնն¹⁴ ի հիւթից բնութենէ¹⁵ եւ ծնունդն¹⁶ ի կատարելութե-

նէ հաստատեալ բնութենէ¹⁷. միայն կին ծնաւ, զի աւտար էր ապականութեան ծնեալ¹⁸ կոյս, եւ¹⁹ ծնաւ՝ ²⁰վասն այնր, որ էր սրբութեան աղբիւր:

14 ²¹Նորին:

15 Լոյս²² սպասաւորեաց բնութեամբ աստուածութեանն. վասն այնորիկ եւ բնութիւն անապական ետ նմա:

16 Երանելոյն Գրիգորի Սֆանչելագործի, եպիսկոպոսի Նէու-Կեսարու՝ յերկոտասան գլխոց նգովիցն չորրորդ գլուխն հանդերձ մեկնութեամբ զուգակցէ այսմ խորհրդոյս, որ նախ է գրեալ:

1 ²³Երանելոյն Աղէֆանդրու, եպիսկոպոսին Աղէֆանդրու, ի բանէն, որ ի Տնարէնութիւնն:

2 Աւգնեա՛յ Աստուած:

3 ²⁴Լոյսն մայր է, եւ Յովսէփ հայր, ²⁵եւ ապականութիւն ո՛չ ուրեք. այս երեւելապէս էր, կատարեալն²⁶ եղեւ մարմին՝ գորով Բանն, ո՛չ ըստ հնոյ ²⁷ծննդեան ծնունդ, որով ապականութիւնն²⁸ քաղաքավարիւր, եւ ծնաւ ո՛չ յաղտեղիս, այլ առ ²⁹յեւայի գործարանն:

1 եղեւ
2 ազգի մարդկան
3 ապականութեամբ
4 զի
5 ի գալ լուսոյ
6 տեղին
7 անապականութիւն է
8 մարմնով
9 գալստեան գգայութիւնն շնորհեալ
10 ապականութեամբ
11 զանապականութիւնն
12 Ո՛վ երկնային
13 զիւր. եւ եղեւ ծնունդ, որ ո՛չ յառնէ անկաւ. կոյսն
14 առնումն
15 բնութենէն
16 ծնունդ

17 բնութեամբ
18 ծնեալն
19 չի՛ք
20 վասն այնորիկ բնութիւն անապական ետ նմա
21 Հմմտ. «Արարատ», 1902, էջ 386. Ստեփանոս Իմաստասիրի գրութիւնը, ուր վկայութիւն է բերուած նաեւ՝ եկն անապական յանապական տեղի ... սգայութեան շնորհեալ հատուածը:
22 Կոյս
23 Հմմտ. նոյնպէս Ստեփանոս Իմաստասիրի գրութիւնը:
24 Կոյս մայր եւ Յուսէփ
25 չի՛ք եւ ապականութիւն ... կատարեալն
26 չի՛ք
27 ծննդեանն ծնունդն
28 ապականութիւն
29 յԱստուծոյ գործարանս

4 ¹Նորին:

5 Ո՛չ կարէ մահ բնակել ընդ կեանս, եւ ո՛չ ապականութիւն ընդ անապականութեան. ²Քանզի ասէ. Որ ետես զիս՝ ետես զՀայրն իմ՝:

1 ³Երանելոյն Աթանասի Աղեփսանդրու եպիսկոպոսին՝ ի բանէն, որ յերգս երգոցն:

Գահաւորակ արար իւր⁴ արբա ⁵Սողոմոն⁵.– գահաւորակ է մարմինն, զոր զգեցաւ ⁶Բանն. առ ի փայտից Լիբանանու զանփուտն. եւ անապական, որ ի Կուսէն:

2 Միւն արար նմա արծաթիս⁷.– զնոյն ինքն⁸ մարմին⁹ անապական՝ քան զայլ մարմինս: ³ ¹⁰Յոսկոյ. քանզի նոյն ինքն մարմինն բարձեալ լինէր առ¹¹ ¹²ի Բանէն Հաւր: ⁴ Եւ սքանչելի է այս, զի գահաւորակն ո՛չ բառնայր զնա, այլ նա մանաւանդ առ ի նմանէ բարձեալ լինէր:

5 ¹³Նորին՝ ի բանէն, որ ի Չարչարանս:

6 ¹⁴Գալստեան Բանին Աստուծոյ յերկիր եւ մարմնա[նա]լոյ ի սրբոյ Կուսէն, զի

նորոգեսցէ զբնութիւն ¹⁵որդոց մարդկան իւրով անձամբն¹⁶ եւ զերծուցէ զնոսա ի մահուանէ եւ յապականութենէ, որ տիրեաց¹⁷ ի վերայ մեր¹⁸, եւ դարձուցէ զնոսա յառաջին գեղեցկութիւնն¹⁹: ⁷ Իսկ զիա՞րդ կապեաց զՀզաւրն ²⁰եւ փրկեաց ի նմանէն զանձինս որդւոց մարդկան: ⁸ ²¹Եւ զիա՞րդ երանելին Յովհաննէս ցուցանէ զՔրիստոս ձեռամբ իւրով եւ ասէր. Ահա²² Գառն Աստուծոյ, որ բառնա զմեղս աշխարհի՞: ⁹ Իսկ թե զմեղս աշխարհիս ասաց բառնալ, որ է մայր ապականութեան...: ²³

¹⁰ ... անվնասաբար²⁴ ի թշնամութենէն²⁵: ¹¹ Իբր զի մի ասիցեն այսոքիկ մեղաւորեալք²⁶ ի՞բր արդեւք Տէրն թլփատիւր եւ զամենայն պահէր աւրէն, ընդդիմակն զնա դարձուցանէ. ո՛չ եւս զի մնացէ աւրէնն՝ զայս արար²⁷, ասէ, այլ զի զնա լուծցէ եւ զքեզ յանգ Հանիցէ²⁸ ի նորայն անիծից, եւ ազատեցուցէ²⁹ բոլորովին յիշխանութենէ նորա:

1 Հմմտ. Ստեփանոս Իմաստասիրի գրութիւնը:
2 չի՞ Բանզի ... զՀայրն իմ:
3 Յ.Վ.Ը. Ժ.Պ. 9
4 Հմմտ. Խ, ք. 202v:
5 չի՞
6 Սողոմոն, այսինքն մարմինն
7 Երգ. Գ. 9
8 Բանն. ի մայրիցն անփուտ, այսինքն ի կուսէն անապական
9 սինքն արծաթի՞
10 Երգ. Գ. 10
11 չի՞
12 զմարմինն
13 Յոսկոյ, զի ինքն նոյն
14 չի՞
15 ի բանէն. եւ ո՛չ թէ գահաւորակն զնա բառնայր. զի գալուստ...
16 Խ, ք. 203r ձեռագրում անմիջական շարունակութիւն է այս նախընթացին: Նոյնը՝ Մ, ուր երեք փոփոխութիւններ շարունակութիւն ունի:
17 զի գալուստ Բանին առ մարդիկ եւ մարմնանալ ի Կուսէն

15 ազգի
16 մարմնովն
17 տիրեալ էր
18 նոցա
19 անապականութիւնն
20 եւ զմեզ ազատեաց
21 եւ զիա՞րդ ասէ Յոհաննէս
22 Սա է
23 Յ.Վ.Ը. Լ. 29
24 Այստեղ ընդհատուով է, եւ 11/6 էջ ու ամբողջ 5 թերթ մինչեւ ք. 154 մերկ եւ մնում, իսկ լուսանցումը ցածր կարգում ենք. «Մին տետր պակաս էր յօրինակին»:
25 ազատացեալք
26 Հմմտ. Տիմոթէոս, էջ 26. Երանելոյ Յովաննու եպիսկոպոսի Կոստանտինոպոլսացոյ ի կարգառուստէն [որ?] յԱռաքեալ:
27 մեղադրեալք
28 ետարար
29 հանցէ
30 ազատացուցէ

1 ¹Երանելոյ հաւր մերոյ Հայոց Լուսաւորչի սրբոյն Գրիգորի՝ ի Վարդապետութեան կարգէն:

2 Եւ արդ, դու տե՛ս զճշմարիտ կերպարանսն² բերեալ ի սուրբ Կուսէն, եւ ո՛չ առաջաւք ինչ տեսիլ. զի եւ³ սկիզբն առնու անսկզբնականն եւ ⁴աւուրք համբերեալ ութաւրեայ՝ թլփատի յառաջ քան զարուեսեակ Որդին, աւտեաւք խոստացեալ զաւակն Աբրահամու, ⁵որով ազգք երկրի աւրհնին. որպէս եւ ⁶Յիսուսի Քրիստոսի թլփատելն առ ի կատարելոյ զաւետիս հարցն, որո՛՛ Մտեալ, ասէ, ընդ արիւնաւն⁷, զի գարիւնաւորսն փրկեցէ, եւ⁸ մեք գորդեգրութիւն ընկալցուք^{***}:

3 ⁹Յետ սակաւուց:

4 Վասն զի ճշմարիտ Որդին Աստուծոյ խոնարհեցաւ եւ էջ ¹⁰ի ջուրս մկրտութեան՝ մի, զի զխոստումն¹¹ կատարեսցէ զհարցն եւ զաւետիսն. եւ յառաջ քան ¹²զայս առ յանձն եւ զթլփատութիւն, ¹³վասն զի երկոցունց կողմանց¹⁴ շնորհեսցէ շնորհս եւ հատուցէ զբարիսն¹⁵, զի իւրով թլփատելովն կատարեսցէ զհաստատութիւն ¹⁶խոստմանն՝ ի խրախուս հրաւիրմանցն, եւ ի

մկրտիլն զամենայն մկրտեալսն կեցուցէ¹⁷:

5 Յետոյ գտի:

1 Երանելոյն Եպիփանու՝ հարցումն եւ պատասխանի:

2 Ընդէ՞ր զառաջնոցն թլփատութիւնս յութերորդումն հրամայեն ավրէնքն:

3 Պատասխանի.

4 Եւ սա յիշատակ էր առաջնոցն՝ իբրեւ առհաւատչեայ կենաց դրոշմ, յանձին բերելով զաստուածածան ավթութեանն գիտութիւն յութերորդումն, որով ցուցանէ զութերեակ երեւումն Քրիստոսի՝ զմկրտութեանն զանընդդիմակալ թողութիւնն:

5 Հարցումն.

6 Եւ ընդէ՞ր ո՛չ ի պարկեշտ վայրի, այլ ի վերայ առականացն տայ զնշանն, որ է ամաւթոյ եւ ծածկութեան տեղի:

7 Պատասխանի.

8 Պարկեշտութիւն, եւ ո՛չ զապականութիւն՝ յայտնելոյ ի Քրիստոս. քանզի որոց երեւելոցն էր մարմնով՝ սրբութիւն պահանջէ, ո՛չ միայն ի պոռնկութենէ ի բաց կալ, այլ եւ զանառակ ցանկասիրութիւնն կարճել. վասն որոյ ի վերայ առականացն տայ զնշան, զի որ երեւելոցն է մարմնով՝ զեւս վեհագոյն պարկեշտութիւն ցուցցէ, որպէս եւ եղեւ իսկ. զի առանց սերման յղացաւ եւ թարց ապականութեան ծնաւ:

9 Հարցումն.

10 Եթէ անապական ծնաւ, զի՞նչ պարտումն թլփատութեան. զի ի բաց առաւ:

11 Պատասխանի.

12 Այսուիկ քաջ հաւանէ անապականութեան նորա. զի ի նոցանէ զպարկեշտան առնլով աւանդ՝ եւ զիւր անապականն փոխանորդէ փրկական. քանզի նոքաւք ավրի-

1 Ագաթ., էջ 200 (ՄՀ, հտ. Բ, էջ 1487)
2 կերպարանս
3 չիք
4 ատուրբք համարեալ
5 որով օրհնին ամենայն ազգք երկրի
6 Քրիստոսի Յիսուսի
7 օրինօք
8 զի եւ
*** Գ.Պ.Ղ. Դ 4-5
9 Ագաթ., էջ 207 (ՄՀ, հտ. Բ, էջ 1493)
10 ի ջուրսն
11 զխոստումնսն
12 զայն եւ զթլփատութիւնն առ յանձն
13 զի եւ
14 կողմանցն
15 զբարիս
16 խոստմանցն եւ ի խրախուս հրաւիրմանցն որդեգրութեան ժառանգութեան արժանաւորացն: եւ ի մկրտելն

17 կեցուցանէ...

նակէր, որպէս զի իւր երեւեալ մարդկութիւնն բացառապաշտ պարկեշտութիւն երեւեսցի:

13 Հարցումն.

14 Եթե թլփատութիւնն վասն պարկեշտութեան եւ անմեղութեան, որպէս ասես դու, եթե աւրէն ունելով երկեցուցիչս, ընդէ՞ր եւ Քրիստոս ընդունի զայս՝ այն, որ ո՛չ արար մեղս, յորում եւ ո՛չ գտանենգութիւն:

15 Պատասխանի.

16 Բազում վասն պատշաճ իրաց եառ զայս Քրիստոս. մի զի սրբութիւն ցուցցէ՝ սրբութեան արարաւղն, որպէս դու ասացեր. եւ միւս, զի զմարդեղութիւնն իւր հաստատեսցէ՝ ճշմարիտն Աստուած, եւ զաւրէնս հաստատեսցէ՝ աւրինաց տվիչն. քանզի ո՛չ յուճեքէ են սպասաւորքն, նոյնպէս եւ ո՛չ յայլ ուճեքէ սպասաւորեալն:

17 Հարցումն.

18 Զի՞նչ պարատեալն յանապականութենէն, քանզի ի բաց առաւ՝ յանհունս տարաբերեալ զանապականութեանն խորգ. ապա թէ ո՛չ Գիր վրիպեալ գտանի:

19 Յետ սղի.

20 Դաւանեաց զմարդեղութիւնն ճշմարտապէս, եւ վասն թլփատութեանն ո՛չ

ապականացու զմարմինն. քանզի անկատար ոչինչ յաստուածութեանն իմանի, բաց ի մեղաց. որպէս կատարեալ աստուածութեանն բնութեամբ եւ տէրութեամբ, նոյնպէս կատարեալ ըստ մարդկութեանն բնութեամբ, եւ աւրինացն պահպանութիւն, եւ կամաւոր կրիւք: 21 Բայց արդ, աւտարացոյցս ինչ հաւանական առաջի դիցուք, զի այնմ հաւանին դիւրաւ ընդ երկիր վարժեալ իմաստունք. զիսոր զանկուածումն յո՞ւճէ աւանդն ընկալեալ. աւանդն մինչեւ հաճոյասցի ամենայն՝ մի՞թէ կորնչիցի աւանդն. եւ կամի ոք ի պատուական ականց, զոր բազումք գիտեմք, զոր գտեալ ուրուք նկրտեսցէ ի սաստիկ ջուրս եւ այնու զբազմութիւն ջուրցն ի սպիտակութիւն դարձուցէ, եւ յետ այնորիկ զկշիռն առանց թերութեան բերիցէ: 22 Նոյնպէս իմա՛յ զթլփատութիւնն Քրիստոսի, աւանդ զհետ ընթացեալ՝ յաղագս փոփոխելոյ զհաւատացեալս յիւր ի մաքրակի անապականութիւնն: 23 Իսկ ո՛չ բառնի յեղծումն թլփատութիւնն Քրիստոսի, քանզի ո՛չ եւս ի հուր տա զթլփատութիւնն, եւ որ յիւրաքանչիւր ուճեքէ ո՛չ հեռի է՝ զիսորդ ինքն յընքենէ հեռանայ ուրեք երբէք:

24 Աստուած ողորմի գծողիս:

ԲԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Եթե պարտ է գմարդեղութիւնն Քրիստոսի ըստ նախաստեղծին Ադամայ խոստովանել՝ յառաջ քան գլախտեանսն:

1 ¹Երանելոյն Յեռոթէոսի փիլիսոփայի, ուսուցչի Դէոնիսեա Արիսպագացոյ վարդապետի՝ յԱստուածաբան Ստեֆերոնացն:

2 Եւ մասն եւ զբողորն յնքեան ի միասինն առեալ, եւ առաւելապէս ունելով, եւ նախաբար ունելով:

1 ²Երանելոյն Աթանասի եպիսկոպոսի, ուստի զԱպաղիմարն, ի բանէն՝ Աւրինակ բարեպաշտութեանն:

2 ³ՁԱդամ յանցանսն յանհաւասարելի կանգնումն Քրիստոս կանգնեաց՝ նմանութեան⁴ մարմնոյ մեղաց երեւեալ, եւ ջղատապարտեաց գմեղս ի մարմնի՞, որպէս զի մարմնով ի վերայ երկրի առաքինասցի եւ անընդունակ մեղաց ցուցցէ գմարմինն, զոր յառաջին ստեղծուածին ⁶անմեղ ունէր Ադամ, իսկ յանցանաւքն ընդունակ մեղաց արար եւ յապականութիւն եւ ի մահ կործանեաց: ³ ⁷Ձայս ըստ բնութեան անմեղն, զի ցուցցէ զԱրարիչն անպատճառ մեղաց, ⁸եւ ըստ սկզբնատպին զստեղծուածն յընքեան բնութեան հաստատեաց. զի ինքն էր անմեղութեանն հանդէս: ⁴ Արդ, ունայն երեւութանայք, կործանեա՛լքդ, եւ ի յերկ-

նուստ ասելով գմարմինն Տեառն. ⁹Եւ համայն Ադամ յերկնից յերկիր իջոյց, բայց Քրիստոս ի յերկրէ յերկինս եհան:

1 ¹⁰Երանելոյն Յովհաննու Երուսաղեմի՝ յարտադրութիւն հաւատոյ:

2 Խոստովանիմք իսկ, եթե զբնութիւն մարդկային¹¹ ճարտարապետեաց՝ բաղկացեալ¹² յանձնէ աննիւթականէ¹³ եւ ի մարմնոյ երկրայնոյ, ¹⁴անմեղ շինէ, ¹⁵որպէս էրն Ադամ նախ քան զաստուածային պատուիրանաւն զյանցանելն¹⁶:

1 Երանելոյն Փիլիփսինոսի, եպիսկոպոսին Արքոմ քաղաքի՝ Ժէրոքոյ գառնէն, ի բանէն՝ Ելանեմ ես առ Հայր իմ՛:

2 Իսկ մահ եւ ախտք ի վերայ այնոցիկ տիրեն, որ յայսցանէ ծնեալ են՝ ի մարդկան արենէ, ապականելի եւ եղծանելի մարմնովն: ³ Այլ Տէրն մեր յայսպիսի նիւթոյ եղեալ սքանչելի, որ ի մէնջ ո՛չ յառաջի, որ ի մեղաց դատապարտութեան ո՛չ ստացաւ գմարմնաւորութիւնն. այլ եղեւ մարմին նորա ըստ նմանութեան նախաստեղծին, ընկալաւ զհոգին անփոփոխելի՝ զայնպէս, որ յԱդամն, եւ ո՛չ խոնարհեցաւ ի մեղս:

1 Տե՛ս ք. 67v (99), որի քառացի կրկնութիւնն է:
2 Հմմտ. Ն. 4246 եւ այլուր:
3 ՁԱդամայ յանցանս
4 ի նմանութիւն
5 դատապարտեալ գմեղս, զի մարմնով յերկրի
* Հմմտ. Հռոմ. Բ՝ 3:
6 ունէր անմեղ, եւ յետ յանցանացն յապականութիւն եւ ի մահ կործանեցաւ
7 Քրիստոս զըստ բնութեանն անմեղ
8 եւ ըստ մեզ բնական ստեղծուածն յինքեան հաստատեցէ

9 անմեղութեան հանդէս, զի զանկեալն յերկնէ յերկիր, դարձեալ յերկինս եհան:
10 Հմմտ. «Արարատ», 1902, էջ 392. Ստեփանոս Ի-մաստասիրի գրութեան մէջ:
11 մարդոյն
12 զբաղկացեալն
13 անապականէ
14 շինեաց եւ անապական
15 որպէս ի սկսբանն
16 գանցանելն
Ք ԹՎՀ Ի 17

1 Իերանելոյ հարս մերում Յովհաննու նգնաւորի Մայրագումեցոյ՝ ի բանէն, որ ի տնաւրէնութիւնն Քրիստոսի:

2 Մեք ո՛չ պարտիմք ապականութեանս մասունս եկամուտս² զաւզել ի Քրիստոս, զի ո՛չ աւճապատիր³ մերկացելոյն ի փառաց տերեւապատն Ադամա՝ դարձելոյն ի հող, համեմատի երկրորդ Ադամ, այլ աստուածաստեղծին փառագգեստն⁴ Ադամայ համեմատի ճշմարիտ մարդն կուսածին:

3 Խաւս:

4 Երանելի առաքեալն ասէ. Մերկացարո՛ւմ գիիմ մարդն եւ զգեցարո՛ւմ զնորմ⁵. եւ դարձեալ նոր ասելով հնացոյց զառաջինն, եւ որ հնանայ եւ ծերանայ՝ մերձ է յապականութիւն. եւ ապականութեան սկիզբնն յանցանելն տիրեաց Ադամայ: 5 Իսկ նոր Ադամ անուանի Քրիստոս, զի ո՛չ եկն հին մարմնովն, այլ ի նմանութիւն մարմնոյ մեղաց. իսկ նմանութիւն եւ ճշմարտութիւն ո՛չ մի են: 6 Արդ, ո՛չ ասաց, թե առաքեաց Աստուած զՈրդի իւր մարմնով մեղաց, այլ ի նմանութիւնէ, եւ որ զնմանութիւնն հաստատէ եւ ճշմարտութեանն ո՛չ հաւանի՝ ուրացող է ընդ հրէիցն. զի որում ասացաւն, եթե ի նմանութիւն մարդկան եղեւ, ասեին ցնա եթե՛ Դու մարդ ես եւ զանձն քո Աստուած առնես: 7 Իսկ Որդին Աստուծոյ ո՛չ եթե զմարդեղութիւնն ուրանալ սիրէ, որ զթութեամբն կամեցաւ լինել մարդ եւ մարդե-

ղութեամբն փրկել զարարածս. զի հանապազ զինքն Որդի մարդոյ հաստատեալ անուանէր, եւ էր իսկ ճշմարտութեամբ. քանզի կոյրք աղաղակեին. Որդի՛ Դաւթի, ողորմեա՛ մեզ, եւ մատուցեալ բժշկեաց զնոս. եւ մանկունքն ասեին. Աւրինութիւնն Որդոյ Դաւթի, եւ հրեշտակն եթե՛ Տացէ նմա Տէր Աստուած զաթոնն Դաւթի հարս նորա. զի զ՛ի սկզբանէ ճշմարտութիւնն գիտէին եւ զմարդեղութիւնն խոստովանեին: 8 Բայց առ Հրեիցն անհաւատութեանն ընդդէմ դառնայ նոցա, թե՛ Զոր Դաւթն զնա Տէր կոչէ՛ զիս՞որդ որդի նորա իցէ: 9 Նոյնպէս եւ առաքեալն թե՛ Ո՛չ ի մարդկանէ եւ ո՛չ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: 10 Իսկ ճշմարիտ հաւատացեալք ի Քրիստոս ո՛չ նմանութեամբ զճշմարտութիւնն ուրանան եւ ո՛չ ճշմարտութեամբ զմարդեղութիւնն խոստեն, այլ ըստ Հոգոյն Սրբոյ վարդապետութեանն եւ ըստ Տեառնն ձայնին, խոստովանութեամբ մերով՝ Ո՛չ արկանեմք զգիմի նոր ի տիկս հիմս, եւ ո՛չ մկրտութեամբ զՔրիստոս զգեցեալ՝ արկանէ զնորմ ի վերայ հնացեալ ձորձոյ, զի մի՛ չար եւս պատառումն լինի՛ս հերձուածն, որ զՏէրն ի պարտեալն եւ ի մեղաւք հնացեալ մարմինն միաւորէ. քանզի ասէ՛ չմիաբանի նորմ ընդ հնոյն: 11 Իսկ արդ ասեմ եթե՛ զիս՞որդ ասաց առաքեալն եթե՛ Հին մարդն մեր խաչակից եղեւ նորա, զի խափանեցէ զմարմին մեղաց: 12 Արդ, ասա՛, ո՛վ է հին մարդն եւ ո՛ւմ եղեւ խաչակից. եւ Քրիստոս մի անգամ խաչեցաւ՝ մի՞ բնու-

1 Հմմտ. «Արարատ», 1902, էջ 392. Ստեփանոս Ի-մաստասիրի գրութեան մէջ, ուր Ստեփանոս բերում է այս վկայութիւնը հետեւեալ խօսքերով. «Զնոյն եւ Յոհան Իմաստասէր ասէր». տալիս է նա եւ կրկնապատիկ ընդարձակութեամբ շարունակութիւն:

2 չիք

3 անապատիք

4 չիք

5 Կող. Գ. 9-10

6 Հմմտ. Հուս. Բ. 3:

7 Յով. Ժ. 33

Գ Մատթ. Թ. 27, Ի 31 եւ 32.

Ե Մատթ. Ի Ը 9

Զ Գող. Ը 32

Է Մատթ. Ի Բ. 45. Մատթ. Ժ Բ. 37. Գող. Ի 44

Ը Գող. Ը 1

Թ Մատթ. Թ. 17. Գող. Մատթ. Ի 22. Գող. Ե 37:

Ճ Հմմտ. Գող. Գ. 27:

Մ Տե՛ս Մատթ. Թ. 16. Մատթ. Ի 21:

Յ Տե՛ս Գող. Ե 36:

Զ Գող. Գ. 6

թեամբ. եթե երկաբնակ ես եւ եթե քրիստոնեայ՝ ո՛չ կարես ասել, եթե որ խաչեցաւ եւ որ խաչակից եղեւ Քրիստոսն էր. քանզի ո՛չ բերէ խորհուրդն՝ ո՛չ ի հերձուածն եւ ո՛չ ի ճշմարտութեանն. այլ խաչեցաւ նոր Ադամն՝ կենդանին ի մեզ Քրիստոս, անմահական բնութեամբ մարմնոյն, զոր ի մէնջն էառ եւ անմահացոյց, եւ շնորհեաց մեզ խաչակից լինել եւ կենդանանալ, որպէս եւ գրեցաւն. Զի ես զչարչարանս Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ^ա. Այսուհետեւ կենդանի եմ ո՛չ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս^բ: 13 Եւ դարձեալ զայլս յորդորէ ընդ իւր՝ ասելով ընդ իւր. Եթե չարչարանացն կցորդ լինիմք, եւ փառացն հաղորդ լինելոց եմք^գ. Եթե մեռարուք ընդ Քրիստոսի, հաւատամք, եթե կենաւք նորա կեցցով ընդ մեա՝^դ ընդ փահանայապետին մերոյ, որ ըստ կարգին Մելքիսեդեկի^ե. որով վկայեցաւն, թե անմահ եւ կենդանի է որ տասանորդեաց

զԱբրահամ եւ աւրհնեաց: 14 Քանզի այս Մելքիսեդեկ թագաւոր Սաղիմայ, որ թարգմանի թագաւոր արդարութեան, եւ կամ իսղաղութեան, որոյ ո՛չ սկիզբն աւուրց եւ ո՛չ կատարած կեցաց. անհայր՝ չհամարեալ յազգս, նմանեալ Որդոյն Աստուծոյ^ա: 15 Արդ, որ անհայրն է՝ զիա՞րդ նմանեցաւ Որդոյն Աստուծոյ, որոյ հայրն յայտնի է եւ հզաւր. այլ վասն կոռսածին ծննդեանն եւ մարմնաւորութեանն. զի ո՛չ եթե Հայր մարմնացաւ եւ ո՛չ Հոգին Սուրբ թանճրացաւ, այլ Որդին: 16 Եւ դարձեալ՝ անմայրն ըստ յառաջ բնութեան անսկզբնութեանն, եւ ո՛չ համարեալ յազգս, վասն զի ինքն ի մեռեալս միայն ազատ է եւ իշխանութիւն ունի մեռանել եւ յառնել, զի մեռելոց եւ կենդանեաց տիրեսցէ՝ ո՛չ աւտարաբար, այլ արարչաբար, եւ աստուածապէս զիւր արարածս փրկել յաւտարէ:

ա Գաղ. Գ 17
 բ Գաղ. Բ 20
 գ Հռոմ. Է 17
 դ Հռոմ. Գ 8
 ե Տե՛ս Եբր. Գ 20:

զ Տե՛ս Եբր. Է 1-3:

ԲԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ

Յաղագս մարմնական կրիցն Քրիստոսի. եթե ո՛չ է ինքնութիւն ակամա եւ հարկաւոր եւ կարեկցութեամբ, այլ ի վեր քան զկարիս հարկաւորս եւ զմարդկային բնութիւնս:

1 ¹Երանելոյն Յնոթէոսի, Աթենացոց փիլիսոփայի, ուսուցչի Դիոնիսեայ՝ Աստուածաբանական Ստիփիոնացն:

2 ²Բաւեալ ապաեղի ի մէնջ առաւելեալն մտաց եւ բանի³ աւրհնելով. ⁴Թեպէտ եւ այսոքիկ ունի զգերաբնութիւնն եւ զգերագոյակ՝ ո՛չ միայն, զի այլաբար եւ անչփոթապէս մեզ հաղորդեցաւ, ոչինչ պակասեալ ի լիութենէն, որ առ մեզն խոնարհեցաւ. ⁵այլ զի ըստ ամենեցունց նոր եւ նորագոյն ⁶բնութեանս մերում գերաբնութեամբ գոյր, որ ըստ բնութեանն ⁷գերաբունն, զբոլորս մեր առ ի մէնջ՝ ի վեր քան զմեզ ունելով:

1 ⁸Երանելոյն Դիոնէսեայ, Աթենացոց առաջին եպիսկոպոսին եւ մարտիրոսի՝ սակս մարդանալոյն Քրիստոսի, ի բանէն՝ Որպէս ասէ Յիսուս, որ ամենեցուն առաւելն է:

2 Եւ զի համառատաբար ասասցուք՝ ո՛չ մարդ, ո՛չ որպէս մարդ, այլ որպէս ի մարդկանէ՝ մարդկան եղեւ ի վեր քան զմարդ եւ ճշմարտապէս մարդեալ, եւ այնուհետեւ ո՛չ ըստ Աստուծոյ զաստուածայինսն ներգործեալ, եւ ո՛չ զմարդկայինսն ըստ մարդոյ, այլ այրացելոյ Աստուծոյ՝

նոր իմն եւ աստուածայրական ներգործութեամբ ըստ մեզ քաղաքավարեալ:

1 Երանելոյն Եփրեմի եպիսկոպոսի Խորին Ասորոյ՝ ի բանէն, որ վասն շնորհացն այսպէս գրեաց:

2 Կինն պոռնիկ ի շնորհաց քաւարան ոտիցն Տեառն ընդունելով բովանդակութեամբ՝ տարաւ թողութիւն մեղաց, աւծանելով զոտսն Տեառն եւ Բժշկին իւղով, ճրի ընկալաւ զգանձսն առողջութեան ցաւոց իւրոց. զի ո՛չ թե⁹ վասն որովայնի լրման ¹⁰հրաւիրեցաւ յագեցուցանել զքաղցն իւր, այլ վասն ապաշխարութեան ¹¹մեղաւոր կնոջն հրաւիրեաց զանձն իւր՝ արգարացուցանել զմեղաւորն. եւ ո՛չ թե բազմապատրաստ կերակրոց փարիսեցոյն քաղցեալ էր Տէրն, այլ արտասուաւք պոռնկին յագեալ¹² եւ հանգուցեալ ¹³յարտասուացն, որով քաղցեալն էր, ¹⁴չըջելով զվայելչութիւն անցաւոր կերակրոցն, որով հրաւիրեալն էր՝ ցուցանել, ¹⁵եթե ո՛չ վասն անցաւոր կերակրոցն¹⁶ հրաւիրեալ էր, այլ վասն աւգնականութեան մտացն: 3 Եւ ո՛չ իսկ¹⁷ վասն հեշտութեան ¹⁸եղեւ Տէրն ընդ կերաւոյս եւ ընդ արբեցողս, որպէս կարծէր փարիսեցին, այլ զի ի մահկանացու կերա-

1 Ի, ք. 156r. տարբեր թարգմանութիւն է. մինչ նոյն թարգմանութեամբ հմմտ. «Արարատ» 1902, էջ 388. Ստեփանոս Իմաստասիրի գրութեան մէջ:
2 Բաւեալ եղիցի ապա
3 բանի
4 չի՞թեպէտ եւ ... այլաբար եւ
5 զի եւ ըստ մեզ ամենեցուն
6 ի մերում բնութեանս
7 անապական գերաբունն գրուորսն մեր ի վեր քան զմեզ առ ի մէնջ
8 Հմմտ. ք. 66r (էջ 100):

9 Սկսած այստեղից՝ մինչեւ վերջը հմմտ. Մ:
10 հրաւիրեցաւ յարգել
11 կնոջն մեղաւորի, զի արդարացուցէ զմեղաւորս. ո՛չ էր քաղցեալ կերակրոց
12 յագէտ
13 յարտասուաց, յորում
14 չի՞ջըջելով ... ցուցանել
15 զի ոչ թէ
16 կերակրոյն
17 չի՞թ
18 եղեւ ընդ կերակրողս

կուրս նոցա խառնեսցէ զվարդապետութիւնն¹ իւր, որպէս դեղ կենաց: 4 ²Եւ որպէս ի պատճառս կերակրոյ տայր ³զխրատ դառնութեան Չարն տանն Ադամայ, նոյնպէս ի պատճառս կերակրոց տայր Բարին պարգեւս կենաց որդոց Ադամայ. որսորդ էջ, զի որսասցէ⁴ զկորուսեալ կենդանիս⁵, ⁶եւ տես զմաքսաւոր եւ զպոռնիկս եւ զյամենայն անառակութիւնս ընթացեալս, փութացաւ եւ սփռեաց զգործս⁷ իւր ի վերայ ընթացից նոցա, զկերակուր⁸ պարարաւղ մարմնոյ⁹ որսալ զնոսս ի պահս, որ պարարէ ¹⁰զհոգին: 5 Ի լկտաց կարծեցեալ կերաւղ, ի գետնոց՝ ամենապարգեւ, յարբեցողաց՝ արբեցեալ¹¹, յիմաստնոցն¹² ¹³արբուցաւղ ամենեցուն. ¹⁴աւրհնեալ տեսչութիւնն իւր:

1 ¹⁵Սրբոյ Լուսաւորչին Հայաստանեայց՝ ի Վարդապետութենէն Գրիգորի, Յարութեան բանէն:

2 ¹⁶Եւ սքանչելագործ է եւ անհասական ի քննաւղաց, եւ ամենայն անհնարականաց¹⁷ հնարաւոր: 3 Զի որպէս յառաջ քան զչարչարելն պարգեւեաց ¹⁸զկենարար մարմինն իւր եւ զարիւնն¹⁹ աշակերտացն՝

առ ի յայտ առնելոյ, եթե ինքնակամ չարչարի, նոյնպէս²⁰ յետ յարութեանն ցուցանէ յանձին զնշանս²¹ բեւեռացն, ²²յայտ առնելով, եթէ չէին բաւական ²³վէրք արգելուլ զնա ի գերեզմանին՝ զբժիշկն վիրաւորաց: 4 Նոյնպէս եւ ճաշակեալ ընդ աշակերտսն ի նոր արքայութեանն, զի յայտ արասցէ, թե որ յանկարաւտ եւ յանճաշակ արքայութեանն ճաշակել զիտէ, նոյն եւ յառաջ քան զչարչարանսն ²⁴քաղցական եւ դարմանաւոր յաշխարհիս լի եւ անկարաւտ ամենալցոյց²⁵ չըջէր: 5 Այլ զորաւրինակ անդ վասն²⁶ հաստատելոյ ²⁷աշակերտացն ճաշակէր, նոյն աւրինակ աստ առ ի հաւատարիմ առնելոյ աշխարհի ²⁸քաղցեալ, եւ թե արդարեւ իսկական Որդին Աստուծոյ եղեւ յետ²⁹ ժամանակի եւ որդի մարդոյ, զի կեցուցէ զաշխարհս³⁰. ³¹վասն որոյ կանխասաց եղեալ մարգարէն³² եթե՝ Աստուած յաւիտեմական, Աստուած, Աստուած³³, որ հաստեաց³⁴ զծագս երկրի՝ ո՛չ փաղցեցի³⁵ եւ ո՛չ աշխատեցի³⁶, եւ ո՛չ գոյ ֆննութիւն իմաստութեան նորա՞:

1 ³⁷Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեմսամդրացոյ՝ ուստի զԱպաւղի-

1 զվարդապետութիւն
 2 զի որպէս ի պատճառս կերակրոյն
 3 չի՛ք զխրատ ... տայր
 4 որսայր
 5 կենդանիսն
 6 ետես զմաքսաւորս եւ զպոռնիկեալս յանառակութիւն ընթացեալ
 7 զգործիս
 8 որ է կերակուր
 9 մարմնոյ նոցա
 10 զհոգիս նոցա. ի լկտեաց կարծիւր կերող. իսկ
 11 արբեցող
 12 իսկ յիմաստնոցն
 13 արբեցաւղ ամենեցուն զբաժակն կենացն
 14 տեսչութիւն ֆո, Տէ՛ր ամէն էից:
 15 Ագաթ., էջ 244 (Մ՛, հտ. Բ, էջ 1528)
 16 եւ ֆանգի
 17 անհնարականաց
 18 զկենդանարար մարմին
 19 զարիւն

20 նոյնպէս եւ
 21 զնշան
 22 արարեալ թէ
 23 վէրքն ի գերեզմանի արգելուլ
 24 ի փաղցական եւ ի դարմանաւոր աշխարհիս
 25 ամենալցոյցն
 26 առ ի
 27 զաշակերտսն ճաշակեաց, նոյնպէս եւ
 28 փաղցեալ, եթէ
 29 ըստ
 30 զաշխարհի
 31 վասն որոյ եւ
 32 մարգարէին
 33 չի՛ք
 34 հաստատեաց
 35 փաղցիցէ
 36 վաստակեցի
 * Ի՞նչ Ի՞ 28
 37 Հմմտ. Մ:

նարեաց, ի բանէն՝ Աւրիմակ բարեպաշտութեան:

2 Բնութեամբ ուրեմն¹ եւ ո՛չ ուրեմն² ³պիտակ արար Տէր, մարդ ⁴եղեւ ո՛չ ըստ բնութեան, եւ ոչ ըստ գործոց մեզ մեղաց հանդուրժել կարողութիւն էր յԱրարիչն⁵. քանզի⁶ մերով բնութեամբ եւ ⁷գտանելով պատերազմ եւս լինի, եւ սերման տանումն ի ձեռն մերոյ տկարութեան: 3 Իսկ Բանին մարմնաւորութիւն ըստ բնութեան Աստուածութեանն եղեալ՝ աննդունակ եղեւ որ ի մեզ հնութեամբ սովորական ⁸իրքն էին, եւ վասն այսորիկ ուսանիմք մերկանալ զհինն եւ զգենուլ զնորն. ⁹եւ յայսուսիկ է սքանչելի, զի մարդ եղեւ Տէրն եւ առանց մեղաց, զի նոր բովանդակ եղեւ, եւ որքան ինքն հրամանաց բնութեանն՝ կամելով յինքն ընկալաւ որքան կամեցաւ, այս է՝ ծննդեանն, որ ¹⁰ի կնոջէ, ածման հասակի, ¹¹թուոց ամաց եւ աշխատութեան, եւ ծարաւոյ եւ քաղցո, եւ տրտմութեան եւ մահու, եւ յարութեան:

1 ¹²Երանելոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու, ի բանէն՝ Յաղագս գոհութեան:

2 Եւ համայն արտասուելն¹³ Տեառն ի վերայ Ղազարու եւ ի վերայ քաղաքին զայս¹⁴ ասել ունիմք, զի եւ եկեր¹⁵ եւ արբ՝

1 չի՞
2 չի՞
3 պիտակապէս Տէրն
4 եւ ո՛չ
5 Արարչին
6 զի
7 գտանել զմեզ պատերազմ լինէր
8 իր՞ էին. վասն այնորիկ
9 չի՞ եւ յայսուսիկ է սփանչելի
10 ի կուսէն
11 ամաց, թուոց, աշխատութիւն, ծարաւոյ, քաղցոյ, փնոյ, տրտմութեան, մահու
12 Ի, ք. 922
13 առ արտասուելն
14 զայն
15 կեր

ո՛չ ինքն այնոցիկ ¹⁶կարաւտ, այլ չափս քեզ եւ սահման հարկաւորաց անձին ախտից թողլով: 3 ¹⁷Նոյնպէս եւ արտասուեաց՝ ողբացողաց եւ ողբացելոց սասուկացեալ զախտսն նուաստացուցանելով ¹⁸ուղղէր. Ղազար սիրելին մեր բունեաց, այլ երթամ, զի զարթուցից գնա՞: 4 ¹⁹Ո՞ ի մէնջ զննջեալն ողբա սիրելի, զոր սուղ ինչ զկնի վատահանայ զարթնուլ:

1 Երանելոյն Տիմոթէոսի, եպիսկոպոսին Աղէփսանդրու՝ ուստի զԼեւոն եւ զԵւտիփէ:

2 Իսկ լինելով Բանն մարմին, որ է այս որդի մարդոյ, եղեւ բնակից մեր, որպէս ի ստացականէ մարմնոյ, որ ի Կուսէն սրբոյ մարմնացեալ, որպէս վայել է Աստուծոյ՝ ըստ Աստուծոյ աստուածապէս ի նմա: 3 Իսկ մարմին անապական լինել՝ հիմն հոգեւոր անձնաւոր հաստատապէս եւ անշարժապէս, աղէ՛ արդեաւք վասն բնութեանն հողեղինի ստացեալ. պիտո՞յ էր արդեաւք ասել՝ տեսանել եւս նմա զանապականութիւն եւ բառնալ զբեռն մեղաց, եւ թագաւորել ի վերայ նորա մահու, եւ լծոյ եւ առանց ապականութեան հնազանդել, ընդ որով որդիք մարդկան հնազանդին ընդ դատապարտութեանն այնուիկ, եւ պարտաւորեալք եղեալք: 4 Ո՛չ է արժան իմանալ եւ այսպէս, այլ մինչեւ կարի յոյժ ճշմարիտ եղեալ մարդ, յոյժ անցեալ վերաբերեալ քան զչափս բնութեան մարդկութեանս, եւ աստի ամենայն խորհուրդք

16 կարօտել, այլ քեզ չափ
17 նոյնպէս արտասուեց. զմեզ ողբաց, եւ զսուսուցելոց սասուկացել ախտն
18 ուղեր: Քանզի ո՞ այլ քան զարտասուելն Բանին չափաւորութեան կարատանա, եւ ի վերայ ո՞յր լինել, եւ որքա՞ն եւ ե՞րբ, եւ ո՞րպէս արեւն է. զի ո՛չ ախտաւոր եր ախտաւորն Տեառն, այլ վարդապետական, անդուստ է, յայտ. Ղազարոս բարեկամ
* Յ՝ՎՃ՝ԺԸ 11
19 ի մէջ գփուն լինելն զսիրելի ողբա

մարմնաւորութեանն, որպէս վայել է Աստուծոյ, կատարելին:

1 Երանելոյն Փիլիսիանոսի, Նարոկայ եպիսկոպոսի՝ ի մեկնութեանէ սրբոյ աւետարանից ըստ Յովհաննոս:

2 Առաքեաց Աստուած գորդից իւր ի նմանութիւն մարմնոյ մեղաց՝. ո՛չ աւրինակաւ մարմնոյ միայն նմանութեան, որպէս կարծեցին Եւտիքէ եւ Մարկիոն, Մանի եւ Վաղընտիանոս, այլ մարմին ճշմարիտ, եւ ցանկութիւն ո՛չ ի նմա եւ ո՛չ Հաշումն, եւ ո՛չ մի ինչ, որ ի պատճառս դատապարտութեանն Ադամայ, այլ ազատ իսկ ամենեւեմբ. որպէս ազատութեամբն իւրով փորձեալ Տէրն ամենայնի՝ կամաւորութեամբ, եւ ո՛չ որպէս Հնազանդեալ ի բռնութենէ: 3 Այլ որպէս ինքն Տէրն ասէ. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ զնա: 4 Ապա թե դնել եւ առնուլն իշխանութեամբ էր, յայտնի է թե ամենայնն եւս կամաւորութեամբ է եղեալ, եւ ո՛չ բնականք. քաղցն եւ ծարաւն, վաստակելն, քունն եւ չարչարանքն՝ այս ամենայն ըստ տեսչութեանն Համարեալ, եւ ո՛չ ըստ բնութեան մարմնոյ: 5 Յորժամ կամեցաւ, քաղցեաւ, եւ յորժամ քաղցեաւն՝ ո՛չ ըստ թափուր լինելոյ ի կերակրոյ, որպէս ամենայն մարդ. պահեաց երբեմն զբառասուն տիւ եւ զբառասուն գիշեր, եւ յետ կատարելոյ քառասուն աւուրն ապա քաղցեաւ: 6 Եւ եթե բնութեամբ քաղց նորա, որպէս ամենայն մարդոյ, ո՛չ յանցանել պահոցն եւ ո՛չ ի կատարել քառասուն աւուրն ապա սկսա-

նէր երեւիլ քաղցն. եւ այն ըստ բնութեան մարդոյ ո՛չ պատշաճի, եւ ո՛չ այս, եթե զկնի քաղցոյն եւ ծարաւոյն ո՛չ վարի կերակրով եւ ըմպելեաւ: 7 Իսկ զայս, զոր ասացաքս, ո՛չ ասեմք, եթե ո՛չ վարեցաւ Տէրն կերակրով եւ ըմպելեաւ, այլ ո՛չ ի բռնութենէ, որպէս կարաւտ ձգեալ առ կարաւտութիւնն:

1 Երանելոյն Սեբերիանոսի՝ ի հիմագորոդ գառէն:

2 Եկն դարձեալ ի Կանա Գալիլէացոց, ուր արար զջուրն գիւնի: 3 Յիշէ՜ գերեկի բանսն, եթե զոր ինչ մարմնապէսն է ասացեալ՝ չէ՛ պարտ մարմնապէս իմանալ: 4 Երեւի երբեմն աստ եւ երբեմն անդ՝ ըստ մարմնոյն, եւ ո՛չ ըստ աստուածութեանն սահմանելոյ. զի աստուածութեամբն ամենայն ուրեք է, այլ տեսչութեամբն զկարգ տեսչութեանն կատարելոյ: 8 Եւ Յիսուս վաստակեալ ի ճանապարհին՝ աշխատեցաւ աշխատելեան, 9 որ ո՛չն աշխատէր, պահեաց զՍ. տիւ եւ զՍ. գիշեր, եւ յետոյ քաղցեաւ. եւ յայտ է, եթե յորժամ կամեցաւ՝ քաղցեաւ, 10 զի բնութիւնն իւր առանց կարեաց է:

« Հոգի. Բ 3
բ ՅՎԸ. Ժ 18

1 Զ, ք. 279 ելլն. հմմտ. տպ. էջ 106:
2 Դարձեալ Յիսուս
3 ի գիւնի
4 Յիշեա՛
5 Եկն Յիսուս ո՛չ ըստ աստուածութեանն գորութեան փոփոխելոյ, այլ ըստ մարմնոյն տեղաց ի տեղիս փոխելոյ զի թէ անսահմանական բնութիւն ըստ աստուածութեանն, ապա ամենայն ուրեք է. երեւի մարմնով
6 աստ է, երբեմն անդ. ո՛չ եթէ բնութեամբ աստուածութեանն սահմանելով, այլ տեսութեամբ
7 կատարելով
8 Եկն Յիսուս եւ աշխատութիւն կրեաց. աշխատեցաւ՝ ո՛չ ըստ աստուածութեան բնութեանն, այլ ըստ մարդկութեան: Եկն, ասէ, Յիսուս, եւ աշխատեալ էր ի նանապարհորդութեանն
9 եւ ո՛չ աստուածութեամբն, որ չկրէ երբեք աշխատութիւն... (կրկին մի նախադասութիւն աւելի)
10 Տեսանե՞ս, զի աստուածեղէն բնութիւնն

ԲԱՆ ԵՒԹՆԵՐՈՐԴ

Եթե ո՛չ է պարտ անգիտութիւն ասել Քրիստոսի ըստ տնաւրէնութեանն.
թե պարտ է եւ ուրեք՝ ձեւանայ անգիտանալ՝ յաղագս իմիք պատնառի:

1 Երանելոյն Երանեանոսի, Հետեւողի առաքելոց՝ Եպիսկոպոսի Ղոգոնի Գալիլէացոյ, ի բանէն, որ յաղագս տնաւրէնութեան Փրկչին:

2 Քանզի նոյն ինքն Բանն Աստուած Հոգով գիտութեամբ եւ կատարելութեան երեւեալ, եւ ո՛չ Հոգով անգիտութեան եւ պակասութեան: 3 Քանզի զիա՞րզ ի նմին գոլ կարէր կատարելութեամբ եւ պակասութիւն, գիտութիւն եւ անգիտութիւն, ճշմարտութիւն եւ մոլորութիւն, լոյս եւ խաւար, կարողութիւն եւ անկարողութիւն. զի սոքա բարձաւղք են միմեանց, որպէս լոյս եւ խաւար ի նմին համանգամայն ո՛չ երբէք լինիցին. այլ եթէ լոյս, ո՛չ եւս խաւար. եթե կարողութիւն, ո՛չ եւս անկարողութիւն. եթե ճշմարտութիւն, ո՛չ մոլորութիւն. եթե լիութիւն, ո՛չ պակասութիւն. եթե գիտութիւն, ո՛չ անգիտութիւն. եթե կատարելութիւն, եւ ո՛չ բնաւ իւրիք թերաբայութիւն:

1 Մրբոյն մերոյ լուսաւորչին Գրիգորի՝ ի չարչարանսն Քրիստոսի:

2 Համարձակութիւն 2 առին աշակերտքն հարցանել զՏէրն ի Ձիթենեաց 3 լեւրինն. Ասա՛ մեզ, ասեն. ե՞րբ լինիցի այդ, կամ՞ զի՞նչ նշան իցէ քոյ գալստեանդ՞ եւ վախճանի աշխարհի՞: 3 Իսկ նա թեպէտ

եւ հրածարէր, թե՛ վասն շաւուրն եւ ժամուն ո՛չ ոք գիտէ՝ ո՛չ ջրեշտակի եւ ո՛չ Որդի, բայց միայն Հայրէ. եւ՞ 10 Առաքելագործ մատենին՝ 11 Ո՛չ, ասէ, ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր Հայր եդ յիրում իշխանութեան¹². Իսկ ո՞ ալ ոք իցէ իշխանութիւն Հաւր, եթե ո՛չ Որդին¹³. սակայն առեալ¹⁴ մանրապատում նշանաւք վասն ահաւոր եւ ամպախաղաց գալստեանն իւրոյ՝ աշակերտացն ուսուցանէր: 4 Տեսանե՞ս, զի գիտակ է¹⁵ Որդի ո՛չ միայն աւուրն եւ 16 ժամուն, այլ եւ կերպարանաց իւրոյ գալստեանն ոչինչ¹⁷ իւրիք անտեղեակ. բայց վասն թերահաւատ լսաւղացն ըստ ժամանակի զիջանելով¹⁸ խաւսէր:

5 19 Երանելոյն Աթանասի, Եպիսկոպոսի Աղեքսանդրո՛ւ ի թղթոյն, որ առ Եւսեբիոն եւ Ղուկիփերէ եւ Աստերոն:

6 Վասն որոյ 20 եւ ալ էր նախ քան զԱբրահամ Որդին, 21 եւ ո՛չ ալ որ յետ Աբրահամու. 22 ո՛չ ալ յարուցիչն Ղազարու²³,

1 Ագաթ., էջ 231 (ՄՀ, հտ. Բ, էջ 1517)
2 առին հարցանելոյ
3 լեւրինն, յորժամ վասն քակելոյ գեղեցիկ տաճարին վնիոն ետ.
4 եւ կամ
5 գալստեանն
6 աշխարհիս
* Մատթ. ԻԿ 3

7 ավուրն այնորիկ
8 հրեշտակի երկնից
* Մատթ. ԻԿ 36. Մատթ. ԺԿ 32
9 եւ Ղուկաս
10 մատենին առակաւ մեկնէր
11 Ո՛չ է ձեզ, ասէ, քննել զժամանակս եւ զժամս
12 իշխանութեանն
* Մատթ. Լ 7
13 ինքն Որդի
14 մանրապատումն նշանակօք
15 էր
16 այլեւ ժամուն եւ
17 ոչ
18 եւ զիջանելով
19 Տիմոթէոս, էջ 111
20 եւ ո՛չ այդ
21 եւ ո՛չ յետ Աբրահամու
22 եւ ո՛չ այդ.
23 գՂազարոս

իսկ այլ հարցաւզն վասն նորա. այլ նոյնն¹ էր՝ իբրեւ մարդկաւրէն² ասելովն. Ո՞ւր քեղիք գլազարոս³, իսկ աստուածաբար զնա յարուցանելով:

1 Երանելոյն Կիրդի Երուսաղեմացոյ եպիսկոպոսի, որ ի՝ Տէ՛ր, ո՞ հաւատաց, ի բանէն՝ Պարծանք սրբութեան:

2 Վասն այսորիկ առ յանձն զդատապարտութիւն, զի լուծցէ զվճիռ դատաստանի զառաջնոյ դատապարտութեանն:

3 Եւ վասն այսորիկ թաղեցաւ, զի երկիրն, որ ընկալաւ զանէծս զառաջինս, փոխանակ նզովիցն զաւրհնութիւն ընկալցի:

4 Առ ժամանակ մի մեղացն պատսպարան զտերեւ թղզենոյն կարկատեալ զգենուին. վասն այնորիկ Յիսուս ի վախճանի նշանացն ամենայնի զթղզենին դնէր. զի իբրեւ դիմեալ զայր ի ժամանակի չարչարանացն, նզովեաց զթղզենին՝ ո՛չ զամենայն թղզենի, այլ զմինն միայն առ աւրինակէ, եւ ասէ. Այսուհետեւ ամենայն ոք ի քէն պտուղ մի՛ նաշակեսցէ:

5 Արդ, լուծեալ լիցի, ասէ, այսուհետեւ վճիռ դատապարտութեան եւ անցցէ պատիժ պատուհասից:

6 Արդ, որովհետեւ զթղզենին առին արկին զիւրեամք, եկն ի ժամա[նա]կի, յորում ո՛չ էր ժամ պտղոց. իսկ ո՞վ է, որ ո՛չ գիտէ, եթէ ի ժամանակս ձմերայնոյ պտուղ ի թղզենոյ ո՛չ գտանի, բայց միայն տերեւով զարդարեալ կայ. արդ զոր ամենեքեան գիտեն՝ Քրիստոս ո՛չ գիտէր. նա գիտէր եւ զայր պահանջել, ո՛չ եթէ չգիտէր, զի գտցէ. այլ զսաստ նզովիցն տերեւովն չափ կամէր առնել, եւ ո՛չ պտղովն:

1 նոյն
2 մարդկաւրէն
3 գլազարոս եղիք
* Յ՝ՎԸ՝ԺԵ 34
ք Տէ՛ր Մ՝քթ՝ ԻԵ 19 Մ՝քթ՝ ԺԵ 14:

1 Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացոյ՝ ի Պարունակաց է:

2 Իսկ եթէ դարձեալ ասիցէ. Ո՞ւր եղիք գլազարք, մարդկապէս վասն տեռատեսին եթէ՝ Ո՞վ մերձեցաւ յիս^ք, եւ կամ՝ Զո՞ խնդրէք, եւ՝ Զո՞ գլինէն ասիցեն մարդիկ, զՈրոյ մարդոյ՞, եւ կամ թե՛ Մանուկն անէր եւ գաւրանայր, կամ՝ Յառաջանայր անմամբ եւ իմաստութեամբէ, եւ կամ՝ Յառաջ

քան զգիտել մանկանն զհայր եւ զմայրք, ո՛չ տեսանես ի սոյն իսկ պատճառաց զառաւել զիտութիւնն. զի ի մարմնոյ եւ ի մարդկութենէ զպատմութիւնն:

3 Զի որքա՛ն ի Հին Կտակարանսն յերեսաց Աստուծոյ Հաւր՝ խոնարհեալ առ ի Հաւանումն մարդկան, ըստ անգիտութեան ասացեալս. բայց ո՛չ գորով անգէտ Աստուծոյ զայս, եկեալ սուրբ Բանն ելից, կատարելով զասացեալսն. Հայր իմ գործէ, եւ ես գործեմ^ք:

4 Քանզի որպէս հարցանէրն Յիսուս՝ զյառաջագիտութիւն ունելով, եւ ինքն Քրիստոս յաւրէնսն հարցանէր. ես ինքն եի միշտ, եւ ո՛չ այլ ոք^ք:

5 Քանզի որ ասացն Մովսիսի. Զի՞նչ է այդ, որ ի ձեռնն քու՞մ է՞ք, նա՛ ասաց, որ տեսանեին թե՛ ես եմ Որ էնն^ք, եւ՝ Ո՞ւր եղիք զՂազարէ:

6 Ոչ աւետարանն անգէտ է եւ ո՛չ Հին կտակարանքն անգէտ էին. քանզի՝ Ո՞ւր եղիք զՂազարն, ասէ՛ յանդիմանեալ կամեցեալ, որ ո՛չ զհաւասար հաւատոյ Սովմանիտեցոյն ունէին. զի թեպէտ նա առ մարդ ունէր, իսկ Մարթայեանքն ունեին առ Աստուած. եթե ասէ՛ Ո՞ յիս մերձեցաւ, զի ըն-

գ Յ՝ՎԸ՝ԺԵ 34
դ Ղ՝Կ՝ Ը 45. քե՛ս Մ՝քթ՝ Ե 30:
ե Յ՝ՎԸ՝ԺԵ 4
զ Մ՝քթ՝ ԺԹ 13
է Ղ՝Կ՝ Ը 80. քե՛ս նաեւ Ի 52:
ը Ե՝ Ը 4
թ Յ՝ՎԸ՝ Ե 17
ժ Հ՝մք՝ Ի Օր. ԼԲ 39. Ե՝ Ի Ե 5:
ժ* ԵԼ Գ 2
ժք ԵԼ Գ 14

քէնէ նա խոստովանեսցի, զի մի՛ վասն ըն-
քեան ինքն կացցէ վկայ Որդին Աստուծոյ,
այլ զի յայլոց խոստովանեսցի: 7 Եւ թե ա-
սիցէ. Ունի՞՞ Գկանակս ընդ ձեզ՞, զի զսա-
կաւուրիւն նկանակացն յայլոց նշանակես-
ցի. վասն որոյ առնելոց էր զնշանագործու-
թիւնն ի հինգ նկանակէն՝ զհինգ հազարս
յագեցուցանելով արս: 8 Եւ թե ասիցէ՝ Զո՞
խնդրէք, զի ցուցցէ զխնդրաւզսն պատ-
րեալս՝ զՅիսուս խնդրել, զբժիշկն թարգմա-
նեալ եւ զՓրկիչն. զի յորժամ տեսցեն զսա՝
ի սորա փրկութենէն մերժեալ գտցին:
9 Որպէս վասն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ուսուցաք ո՛չ անմասն յառաջ
գիտութեան գոլով. քանզի որ ասէր զՄար-
թայեանսն՝ Ո՛ւր եղիք զնա, մաւտ էր ի գե-
րեզմանն, եւ մաւտ եղեալն վասն մաւտա-
ւորացն հարցանէր. որ ի կողմանց Գալի-
լէացոց ի հեռաստանէ ցուցեալ յնքենէ թե՛
Ղազարոս մեռաւ՞, մաւտ եղեալ ի տեղին՝
տգիտանա՞յր. այլ կամէր ցուցանել, զի
զայն առնէր, եւ ո՛չ ոք կատարելապէս նմա
հաւատայր, զի ցուցցէ նա մեզ զիւր խնա-
յուամնն եւ զբազում մարդասիրութիւնն:

1 Կնորհն Եպիփանու՝ ի բանէն, որ յա-
ղագս Սուրբ Երրորդութեանն:

2 Ինքն այսուհետեւ՝ 2սուրբ Բանն
կենդանի, որ ինքն էր էութեանս, ինքնա-
կացութեանս, թագաւորն երկնային, հարա-
զատն Որդի, միշտ ընդ Հաւր՝ ի Հաւրէն
ծնեալ 3անամանակն, ի Հաւրէն յառաջ ե-
կեալ՝ բացափայլութիւն⁴ փառաց, գծաւո-
րութիւն⁵ էութեան⁶, կերպն ելով Հաւր
ճշմարտութեամբ, աթոռակիցն Հաւր, դա-

« Տէ՛* Մ*բ* ժ*Ե 34* Մ*բ* Գ 38, Ը 5:
բ Յ*վ* ժ*Ե 14
1 Տիմոթէոս, էջ 17
2 սուրբն Բան, կենդանին, որ ներէութեանն
3 անմարմնական ի Հաւրէ եւ
4 բացափայլութիւնն
5 գրծաւորութիւնն
6 Տէ՛* Ե*բ* Ը 3:

տաւոր⁶ կենդանեաց եւ մեռելոց, կեանք⁷ ի
կենաց, էակն իմաստութիւն յիմաստութե-
նէ, աղբիւր ելով յաղբիւրէ՞. Զի զիս, ասէ,
լիին թողիւն⁹ աղբիւր ջրոյ կենդանոյ՞, եւ
փորեցին իւրեանց գուբս ծակոտկէնս¹⁰.
գետն յաւետախաղ¹¹ ուրախ արար զիմուա-
ծոպն զքաղաքն Աստուծոյ՝ յաղբերէն յա-
ռաջ եկեալ, յորմէ գետի¹² յորովայնէ նորա
հոսիւնէ. մանկանն Դաւթեան, արմատն ¹³Ե-
սայիական, ծաղիկն զ՛ի նմանէն, առիւծն՝
թագաւորն, յագգէն¹⁴ Յուդայ, ոչխարն բա-
նական, քարն կենդանի, մեծին խորհրդոյ
հրեշտակ, մարդն ճշմարտութեամբ եղեալ՝
Աստուածն ճշմարտապէս¹⁵ ելով, ո՛չ յեղեալ
զբնութիւնն, ո՛չ այլայլելով զաստուածու-
թիւնն. ծնեալն մարմնով, մարմնացեալն
Աստուած¹⁶ Բանն մարմին եղեալ, ունաւդն
ընդ մէջ եղելոյ զմարմինն¹⁷: 3 Զի Բանն
ո՛չ ասաց եղեալ, այլ յետ ասելոյն Բան ա-
նորոշաբար՝ զնէ¹⁸ զմարմինն, իսկ յետ
մարմնոյն ասէ եղեալ¹⁹, զի եղեւն ²⁰ի Մա-
րիամայ նորագործ իցէ. զի Բանն ի վե-
րուստ առ ի Հաւրէ ծնանիցէ²¹: 4 Այս
սուրբ կենդանի Բան՝ առ Հաւրն Աստուած,
մեծին խորհրդոյ հրեշտակ²², ²³պատմաւղ

6 դատաւորն
7 կեանքն
8 յաղբերէ
9 չիբ
Գ Եբ* Բ 13
10 ծակոտկէս
11 յաւետաղոյղ
12 յորովայնէն իւրմէ
Ե Յ*վ* Ը 38
13 Յեսեական, ծաղիկ զ՛ի նմանէ, առիւծն
14 յագնէն
15 ճշմարտութեամբ
16 չիբ
17 զմարմին
18 ասէ
19 եղև
20 ի Մարիմայ ներգործիցի
21 ծանցիցի
22 հրեշտակս
23 պատմաւղ խորհրդոյ Հաւրն

խորհրդոյն Հար, հայրս հանդերձելոյ յաւիտեանին՝ ¹Ինքն Քրիստոս ասաց. ²Ո՛չ ոմ գիտէ զաւրն եւ զժամն², եւ ո՛չ հրեշտակք յերկնի, քանզի ³եւ ո՛չ գիտեն, եւ Որդին. իմացումնակի զայս ասէ, եթե միայն Հայր: ⁵ Արդ, եթե այսուհետեւ գիտէ Որդին զՀայրն, իսկ մեծագոյն Հայրն քան ⁴զաւրն եւ զժամն, եւ ո՛չ ոք հակաճառէ, ի՞բր ⁵մեծագոյնն գիտաւղն զնուազն անգիտանայ. գի ո՛չ ոմ գիտէ Հայրն, եթե ո՛չ Որդին, ⁶եւ ո՛չ ոմ գիտէ զՈրդին, եթե ո՛չ Հայր⁶: ⁶ Արդ, որպէս մեծ է Հայրն, որ գիտէ զՈրդին, այսպէս Որդին մեծ, զի գիտէ զՀայրն: ⁷ Եթե գիտէ այսուհետեւ ⁷զՀայր՝ մեծագոյնն, զփոքրն ի՞բր անգիտանայ, այս է՝ զաւրն եւ զժամն⁸. որոնեա՛յ զԱստուածային Գրեցեալսն⁹ եւ ուսի՛ր ¹⁰զՀոգոյն զաւրութիւնն, եւ ինքն Հոգին գիտակն զՀայր¹¹ եւ զՈրդին բացայայտեսցէ քեզ զԲանին՝ զՈրդւոյն Աստուծոյ զգիտութիւնն. գի մի՛ մոլորիցես¹² ի ճշմարտութենէն եւ կորուսցես ¹³զքոյին անձնդ:

1 ¹⁴Երանելոյն Գրիգորի, եղբարն Բարսղի, որ առ յարութիւնն:
 2 Այլ թերեւս ոք առ լուծեալ եւ քակտեալ մարմինն¹⁵ հայեցեալ, եւ առ չափ իւրոյ զաւրութեանն, զԱստուածութիւնն դատիցի, զյարութեանն Բան ¹⁶անկարելի ասէ, եւ դադարել որք այժմ¹⁷ շարժին եւ յառնել որ այժմ ո՛չ շարժին՝ ո՛չ հնար եւ մարթասելով: ³ Այլ այսպիսոյ¹⁸ նախ առաջին եւ մեծարացուք¹⁹ հաստատուն նշանակ ըստ յարութեան ճշմարտութեանն, զնոյն ²⁰ի քննաքարոցին զարժանահաւատալին:
 4 ²¹... ասացելոցն հաւատ յայլ եւս յառաջագոյն ասացելոցն, որ եղեն, ²²զհաստատութիւնն ունի. քա[ն]զի բազումս եւ ²³զանազանս աւարտեաց Աստուածային Գիրն. կարէ, որպէս ²⁴զի արդեւք ունիցի ստութեան կամ ճշմարտութեան, զայլ եւս զասացելոցն²⁵ տեսեալ ի ձեռն նոցա զյաղագս²⁶ յարութեանն աւրէնս՝ տեսանելով իմանալ: ⁵ Զի²⁷ թե յայլսն սուտ են բանքն եւ ²⁸սխալեալք ի ճշմարտութենէ՝ յանդիմանին, եւ ո՛չ այս ամենայն իրաւք արտաքս քան զստութիւնն²⁹ է. իսկ թէ այլքն ամենայն վկայ ունին ճշմարտութեանն փորձն³⁰, կարգաւորէ սոքաւք եւ զյաղագս

« Հմմտ. Եւ. Թ. 6:
 1 ինքն եասաց
 2 եւ՝ Ո՛չ ոմ գիտէ զՈրդին, եթ՛ ոչ Հայրն): Արդ, որպէս մեծ Հայրն, զի գիտէ զՈրդին, եւ ոչ հրեշտակքն
 2 Տէ՛* Մարգ. ԻԳ. 36. Մարգ. ԺԳ. 32:
 3 եւ ոչ
 4 զաւրն եւ զժամ
 5 զմեծագոյնն գիտաւղն
 6 չի՛ք եւ ո՛չ ոմ ... զՈրդին
 7 Տէ՛* Մարգ. ԺԼ. 27. Գ. 4. Ժ. 22:
 7 զՀայրն՝ զմեծագոյնն
 8 զժամ
 9 գրիցեալսն
 10 Սրբոյ Հոգոյն զարութիւն
 11 զՀայրն
 12 մոլորեցիս
 13 զփոյինդ անձն:

14 Հմմտ. Ժ, ք. 165r. Ի յիշատակի հանգուցելոց ի Քրիստոս. երանելոյն Գրիգորի Նիւսիա եպիսկոպոսի՝ Ի Մարդոյ կազմութենէ, Յաղագս յարութեան մեռելոց. նոյնը՝ 2, ք. 55 եւ Թ, ք. 212v:
 15 մարմին
 16 անկարելիապէս ասել
 17 այժմ
 18 այնպիսին
 19 մեծ արասցէ
 20 ինքն զբարոզին
 21 Իսկ ասացելոցն
 22 ունի զհաստատութիւն
 23 ամենազանս առադրեաց բանս
 24 զիա՞րդ արդեւք ունիցին
 25 ասացելոցն
 26 եւ զյաղագս
 27 Քանզի
 28 սղալեալք ի ճշմարտութենէն
 29 ստութիւն
 30 փորձ

յարութեան¹ ասացուածս ճշմարիտ համարել: 6 Իսկ² յիշեսցուք մի կամ երկուս յառաջագոյն պատմելոցն եւ ընդդէմ դիցուք³ յառաջն ասացելոցն զլինելն, որպէս զի գիտել ի ձեռն այնց, զի առ ճշմարտութիւնն բանն հայի: 7 ⁴Ո՞վ ո՞չ գիտէր, զիս⁵ ըզ ծաղկէր գուարճանայր, յդիպեցալ էր յիսկզբանն⁵ անգ՝ Իսրայելեան ժողովուրդն, ընդդէմ ամենայն աշխարհիս գաւրութեանց հակառակ յարուցեալ: 8 Որպիսի էր արքունիքն Երուսաղէմացոց քաղաքին. որպիսի աշտարակաւքն⁶ տաճարին մեծագործութիւն, ⁷որ եւ արժանի զարմանալոյ եղեւ եւ աշակերտացն Տեառն, եւ հայել տեսանել աղաչեն զՏէրն⁸ հրաշապէս յերեւելիսն տրամադրեալք, որպէս աւետարանին ⁹պատմումն յայտ առնելով ասէ. Որպիսի՛ գործ¹⁰, որպիսի՛ շինուածն¹¹: 9 Իսկ նա զլինելոցն ի տեղին ¹²զաւերումն՝ զապականումն գեղեցկութեանն այնորիկ, որ առժամայն¹³ զարմացեալն էին՝ ցուցանէր, ոչինչ յերեւելեացն յետ սակաւ միոյ¹⁴ մնալ ինչ. այլ եւ զայն, որ յաղագս չարչա-

րանացն¹⁵ ժամանակն էր: 10 Կանայքն զհետ երթային՝ ողբալով զանիրաւն ի վերայ նորա վճիռ¹⁶ մահու, քանզի չեւ եւս ի լինելոցն մատակարութիւն¹⁷ հայեին, իսկ նա խրատ տայ զայն, ¹⁸որ ի նայն լինի՝ լուռ լինել, զի¹⁹ ո՞չ էր ²⁰արժանի արտասուացն. բայց ²¹ընկենու զողբան եւ զկոծն ի ճշմարիտ արտասուաց²² ժամանակ, յորժամ փակեսցի ²³քաղաքն պաշարողաւք եւ յայնչափ ճեպ տազնապի եկեսցէ անցք չարչարանացն, մինչ զի երանելի համարել զոչն եղեւ²⁴. յորս եւ զմանկակերն զեկոյց ²⁵զպղծութիւն՝ ասել. Երանի յայնս աւուրս անպտուղ որովայնոց²⁶: 11 Արդ, ո՞ւր են արժանիքն այն. ո՞ւր²⁷ տաճարն, ²⁸ո՞ւր պարիսպն, ո՞ւր ²⁹աշտարակաց պատուարքն, ³⁰ո՞ւր Իսրայէլացոց բռնաւորութիւնք. ո՞չ ոմանք ընդ ամենայն³¹ փոքր ինչ պիտի ասել աշխարհս այլ այլուր քայքայեցան, եւ սոցա կործանմամբ ³²ընդ նմին աւերեալ արքունեան տաճարն: 12 ³³Ձի ինձ թուի զայսպիսիքն զայս նախ զեկուցանել Տէր ո՞չ յաղագս իրացն³⁴.

1 գյարութեանն
 2 իսկ ապա
 3 յառաջագոյն ասացելոցն զլինելն. իբրու զի գիտելի է ի ձեռն նոցա, թե առ նշմարտութեան չի՞՞ ո՞վ ո՞չ ... Քանզի թէ ուրու՞ մշակի ընդարձակ պարբերութիւնը պակասում է յիշեալ երեք ձեռագրերում եւս. շարունակութիւնը համեմատել ենք Գ. (թ. 78) ձեռագրով, որ պարունակում է **Գրիգորի Նիսացու** Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն գրուածն ամբողջութեամբ եւ Յաղագս բնութեան մարդոյ:
 5 էր ի սկզբան
 6 պարիսպն, աշտարակն
 7 որ եւ աշակերտացն Տեառն արժանի զարմանալոյ համարեալ եղև
 8 զՏէր
 9 պատմութիւն յայտնէ՝ ասելով առ նա
 10 գործն եւ
 11 շինուածն
 * **Մ․Գ․ ԺԳ․ 1**
 12 զաւերութիւն եւ զապականութիւն զգեղեցկութեանն
 13 առ այն ժամ
 14 մի

15 չարչարանաց
 16 զվճիռ
 17 մատակարարութիւնս
 18 որ ի նայն
 19 փակել
 20 արտասուաց արժանի
 21 զընկենու զկոծն եւ զողբս
 22 արտասուացն
 23 պաշարողաւքն փակեալ
 24 եղեալ
 25 պղծութիւն՝ ասելով երանի տալ յաւուրսն յայնոսիկ
 26 որովայնի:
 * **Տէ՛․Պ․ ԺԳ․ 29:**
 27 ո՞ւր է
 28 ո՞ւր են պարիսպն
 29 աշտարակացն պատուարք
 30 ո՞ւր է Իսրայելացոցն բռնաւորութիւն
 31 ամենայն
 32 ընդ նոսա աւերեցաւ եւ
 33 Քանզի թուի ինձ զայսոսիկ եւ զայսպիսիս յառաջագոյն
 34 իրաց

րոյ ¹քահանայապետն տիրասպան ազգին յակամայ մարգարէացաւ, ասէ². Լաւ է մեզ, զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, եւ մի ամենայն ժողովուրդս³ կորիցէ⁴. քայց նա ո՛չ ասի⁴ ի վերայ ազգին միայն, ⁵այլ զի զամենայն որդիսն Աստուծոյ՝ զցրուեալսն ի բաժանել ազգացն, ժողովեացէ ի մի: ⁹ Վկայեաց եւ Պաւղոս եւ ասէ. Յայտնեաց Աստուած զւերն իւր ի մեզ. զի մինչդեռ Պեթանոսն եւ, Քրիստոս վասն մեր մեռաւ⁶, եթե՛⁷ Ի ժամանակի ի վերայ ամբարշտաց մեռաւ⁸: ¹⁰ Եւ արդ, եկեալ աշակերտաւքն ի լեառն Զիթաստանեաց, զի կատարեսցի մարգարէութիւնն⁸, որ ասէ. Եկեսցէ հասցէ Տէր Աստուած մեր, եւ ամենայն սուրբ ընդ նմա, եւ կացցեն ոտք նորա յաւուր այնմիկ ի վերայ լերինն Զիթեանեաց՝ հանդէպ Երուսաղեմի, յարեւելից կուսէ⁹. եւ տաւնական⁹ աւուրն աւրինականացն¹⁰ գայ աշակերտաւքն կատարել զաւրէնսն եւ յայտնել զխորհուրդ¹¹ հոգեւորական տաւնին, եւ յառաջ քան զչարչարանսն զփրկութիւնագործ զմարմինն¹² իւր եւ զարիւնն¹³ պարգեւէ աշակերտացն: ¹¹ Տեսանե՞ս, զի կամաւ, եւ ո՛չ ի բռնութենէ չարչարի Որդին Աստուծոյ, որ յառաջագոյն քան զչարչարանսն¹⁴ ճաշակեալ

լինի: ¹² Յետ այսորիկ աղաւթս առնէր¹⁵ խորհրդիւ ի լերինն առ Հայր, ո՛չ վասն իւր զանգիտելով¹⁶, այլ զի ցուցցէ, եթէ միակամ ընդ Հաւր զառաջի եղեալսն գործեսցէ¹⁷. վասն որոյ բազում անգամ ասացեալ յառաջագոյն, եթե ոչինչ յանձնէ խաւսիմ եւ ո՛չ յանձնէ ինչ գործեմ, այլ ¹⁸Հայրն, որ բնակեալ է յիս¹⁸. ¹⁹մանաւանդ թե ընու զմարգարեականն, եթե՛ Փոխանակ սիրոյ իմոյ մատնեին զիս, այլ ես յաղաւթս կայի՞ եւ յայտ արարեալ աշակերտացն ²⁰միակամութիւնն ընդ Հաւր, եւ ապա իջանէ ի լեռնէն՝ փութացեալ վասն անհաւատիցն զնել զանձն:

1 Երանելեացն ՅԺԸ. սուրբ հարցն ի Նիկիայ ժողովոյն՝ յերախայից վարդապետութենէն, ի հինգերորդ զլիսոյն:

2 Արդ, ընթերցեալ ի վախճանի աւետարանացն, ազդէ վախճանն զ'ի մարդկութեան գործս եւ զիրս Տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ, Փրկչին մերոյ. զի ի սկզբան աւետարանին լուարուք՝ զիա՛րդ ի կուսէն իբր զմարդ ծնաւ, եւ զկնի այնորիկ ընթերցեալ եղեւ ձեզ սակաւ ինչ յաստուածագան եւ ի փառաւոր գործոց նորա. իսկ ի կատարածի ընթերցուածոցն հինգերորդի լուարուք եւ զյաղագս կրից մահու նորա. քայց ուսեալք լինի՛ջիք եւ յետ այսորիկ յերկինս վերանալոյ մարդկութեան նորա: ³ Մեք անդուստ առնումք սկիզբն զյառաջգիտութեանն եւ զճմարտութեանն, այլ եւ զմիւսոյ գեղեցիկ վարուց զհոգեւորականի կենացս զառհաւատչեայ

1 քահանայապետ ազգին տիրասպանուաց ակամայ
 2 թէ
 3 ազգս
 4 Յ՝ՎԸ. ԺԼ. 50
 4 ասէ
 5 զի եւ
 6 մեղաւորքն էաք
 7 Վ՝ՄԸ. Լ. 8
 7 եւ թէ
 8 Վ՝ՄԸ. Լ. 6
 8 զմարգարէին
 9 Չ՝Վ. ԺԳ. 5, 4
 9 ի տօնական
 10 օրինականաց
 11 զխորհուրդս
 12 զմարմին
 13 զարիւն
 14 զչարչարելն

15 առնէ
 16 ինչ զանգիտելոյ
 17 գործիցէ
 18 Հայր, որ բնակեալն է յիս՝ նա գործէ
 է Տէ՛ս Յ՝ՎԸ. ԺԳ. 10, ԸճճԳ. նաեւ Լ՝ 28:
 19 մանաւանդ լնու
 2 Ս՝ՄԸ. ՃԼ 4
 20 զմիակամութիւնն իւր

ընկալեալ յանձինս՝ զժառանգութեան փառաց հանդերձելոյ յանվախճան յաւիտենին: 4 Աստուած ելով Քրիստոս՝ մարդ եղեւ, զի զսուգս եւ զողբս մարդկայինս ի ձեռն հողմակիր մարմնոյն ապրեցուցէ եւ փրկեացէ զսա յընթանողէն մոլորութեան եւ մեղաց. քանզի ո՛չ կամեցաւ Տէր իբրեւ զՏէր ի վերայ յարձակիլ, իբր թե զաւրութեամբ իւրոյ աստուածութեանն քակել եւ խափանել զգաւրութիւնն զայն, որ զաւրացեալ շահեալ ունեին մեղաւքն. այլ իբրեւ զմարդ ի դուրս գոլ եւ յառաջ անցանել կամեցաւ, զի զիշխանին մեղաց զգաւրութիւնն տկարացուցէ՝ ի կարութենէ մարդկան յաղթահարեալ, իսկ զմարդիկ ուսուցէ. զի կարէ մարդկային բնութեամբս հերքել զամենայն զաւրութիւն մեղաց եւ զչարութիւն դաւաճանողաց: 5 Եւ մարդ եղեալ Տէրն, եւ էր դարձեալ Աստուած, որպէս էրն յառաջ քան զմարդանալն, որպէս եւ է Աստուած եւ Տէր ամենեցուն եւ թագաւոր յաւիտենից եւ արարիչ. բայց վասն զի իբրեւ մարդ երեւեցաւ եւ իբրեւ մարդ ի կենցաղիս յայսմիկ վարեցաւ, պարտ էր նմա մեռանիլ իբրեւ զմարդ, զի մի՛ ինչ թողցէ յորմէ կամաւք յանձն էա՞ն ի տկարութենէ մահկանացու բնութեանս մերոյ: 6 Եւ այլազգ դարձեալ զիտել պարտ է, զի հարկաւորապէս մեռաւ, զի մի կարծեսցի նոյն ինքն մարդկութիւն Փրկչին երկնչիլ ի մահուանէ. այլ առաւել յանցանէ, յորոց ինքն զչարչարանսն կրեաց, ըստ տկարութեան մարդկութեան սովաւ ուսուցէ զմարդիկ: 7 Արդ, աւրինակ տացէ ի նա հաւատացելոց կենաց աշխարհիս այսորիկ ոչինչ հոգ տանել, իբր զի սակաւ է եւ դժնդակ է եւ յոյժ տրտմազին, եւ քամահել զմարմնական մահու՝ վասն հանդերձելոց գեղեցիկ յաւիտենական կենացն եւ վասն ի նա Քրիստոսի համբերեցելոյ յուսոյն հանդերձելոյ անպականի եւ փառաւոր երանութեանն. եւ որպէս զհարդ իւրաքանչիւր ոք ի հաւա-

տացելոցն իւրով ըստ յանձին առաքինութեանն արութեամբն քամահիցէ զմարմնական մահուն, սովաւ քակտեսցէ եւ խափանեսցէ զքաջալերութիւնն եւ զսպառնումն եւ զխրոխտանս՝ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, որպէս զի եւ զմրցական ընթացեալ՝ տարցի զընդդէմ թշնամոյն յաղթութիւն, որ է յերկինս պսակ փառաց հրեշտակաց:

1 ¹ Երանելոյն Ագաթանգեղոսի Հոռմայեցոյ, ատենական դպրի մեծի արքային Տրդատայ, որ զգիրս սրբոյն Գրիգորի մատենագրեաց, ի բանէն, որ զլեռնակեաց անապատասէր վարուց նգնագգեաց սրբոյն Գրիգորի պատմէ:

2 Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւնս՝ կանոն աշակերտելոցն դնել. եւ՝ մանաւանդ յուշ առնելով տէրունականն՝ զմիոյն զմիայնին՝ զիմաստնոյն Աստուծոյ. քանզի ասէ. Սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել՝. ⁶ ուր եւ բազում անգամ ժողովեալ՝ զաշակերտսն ուրոյն, եւ աննիազական անձամբ՝ աւրինակ կատարելոցն լինէր. յորժամ ի Թաբաւրական լերինն զաւետեացն զերանութիւնն՝ տայր, ¹⁰ կամ յոր ի նմին լերինն զկեանսնականն՝ աղաւթսն առնէր, մինչդեռ աշակերտքն ի Տիբերական ծովուն նաւեին: 3 Եւ դարձեալ՝ յա-

1 Ագաթ., էջ 444 (ՄՂ, հտ. Բ, էջ 1710)
 2 առաքինութիւն
 3 չի՛
 4 գտէրունականն
 5 զմիայնոյն
 6 Գ. ք. Ը 1
 7 Որոյ
 8 առեալ
 9 անձամբն
 10 զերանութիւն
 11 եւ կամ յորժամ
 12 զկանոնական

ւուր¹ Բաղարշակերացն յաւրինական տաւ-
նին ²զգիչերական աղաւթսն երիցս անգամ
ի Զիթաստանեաց լերինն առանձին³ մա-
տուցանէր: ⁴ Ուստի յայտ է եւ առանց
հետեւելոյ⁵, եթե ո՛չ վասն անձին Ամենա-
տէրն ⁶զայն առնէր, այլ համաշխարհի յու-
սումն զայն առնէր⁷ աւրէն⁸ աւրինակ
հնազանդեցելոցն⁹. վասն որոյ ասէրն¹⁰
իսկ. Արթո՛ւն կացե՛ք եւ ¹¹աղա՛ւթս արարե՛ք,
զի մի՛ մտջի¹² ի փորձութիւն¹³: ⁵ Իսկ
արդ, եթե թեթեւագոյն արուեստից պակա-
սագոյն ¹³ի գիտութենէն ազգք երկրա-
ծնաց, ¹⁴ո՞րչափ եւս առաւել այնմ արուես-
տի տգէտք են որ ընդ աստուածախաւսս¹⁵
կատարի բան, որում եւ երանելին Պաղոս
ամենեցուն տգիտանալ ասէ. վասն որոյ եւ
զամենակեցոյց Հոգիւն ի թիկունս հասանել
անմոռնչ հեծութեամբ բարեխաւս գիտե՛ք:
⁶ Իսկ արդ, յորժամ լսիցեմք եթե՛ Սկսաւ
Յիսուս առնել եւ ուսուցանել, ապաքէն
առնել՝ զի ուսուցէ, ¹⁶ո՛չ զի պարզեւեցի՛
իմանալի է. եւ ¹⁷բարեխաւսելն՝ որ ինչ
վասն սրբոցն, եւ բարեխաւսելն¹⁸ Հոգոյն
Սրբոյ՝ առ ի վարդապետելոյ մեզ, ¹⁹զի եւ

մեք միմեանց բարեխաւս իցեմք, ո՛չ²⁰ եթե
առ բարձրագոյնն²¹ ոք Միածնին կամ Հո-
գոյն Սրբոյ բարեխաւսելն գիտելի է. քան-
զի ²²մի պատիւ է աստուածականն, եւ ո՛չ
բազում²³:

1 Երանելոյն Աթանասի եպիսկոպոսի
Աղեփանդրու՝ ի բանէն, որ յաղագս
խաչիւն:

2 Մատնի Տէրն, եւ մատնելով ո՛չ
զանգիտեաց եւ ո՛չ զարհուրեցաւ ի մա-
հուանէ, այլ յաւէտ մերկացաւ առ նա եւ
հալածէր զփախուցեալ աւճն, զի ո՛չ իբրեւ
մեռանելով Տէրն, այլ իբրեւ զմահ հալա-
ծելով, եւ այսպէս իսկ զՊիղատոս ապաբա-
նեալ²⁴ ոչինչ էր, եթե ո՛չ դատեցեալն գոլ
Աստուած, զի եւ դատապարտեալ ի Պիղա-
տոսէ՝ տեսեամբ երեւեալ լինէր նորին
կնոջն. զի լուութեամբն զաւրութիւնն
հիասցի, իսկ հարցկութեամբն ծանիցի, եթե
ո՛չ զմարդ դատիմ, այլ զԱստուած:

3 Վասն որոյ երկուցեալ դատաւղն ի դա-
տիցելոյն եւ յաւէտ ինքն դատապարտեալ
երկիւղիւ դատեցելոյն. քանզի դատելով
զՏէրն՝ ինքն զարհուրէր, վասն որոյ լուա-
ցեալ զձեռն՝ ասէր. Անպարտ եմ ես յարեմէ
յայսմանէ²⁵:

4 Նորին՝ ի ծնունդն եւ ի չարչա-
րանսն:

5 Զի եւ փրկութիւն զիա՞րդ լինէր, ե-
թե ո՛չ յԱստուծոյ պատկերին եկեալ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: ⁶ Արդ,
ի ձեռն հրեշտակաց ո՛չ էր հնար փրկել,
քանզի նոքա ո՛չ են իսկ պատկեր, եւ ո՛չ
էր հնար հրեշտակաց զփրկութեան գործ
գործել, բայց միայն Բանին Աստուծոյ
փրկել, որ արար զմարդն ի պատկեր Աս-

1 յաւուրս
2 զգիչերոյն աղօթս
3 առանձինն
4 Ուստի եւ յայտ իսկ է
5 վեհերելոյ
6 չի՞ր գայն առնէր
7 գործէր
8 որ է
9 հնազանդելոց
10 եւ ասէրն
11 յաղօթս կացե՛ք
12 մտանիցե՛ք
13 Մատթ. Ի.Չ. 41. Մատթ. Ժ.Գ. 38. Գե.՝ Ղ.Կ. ԻԲ. 40:
14 ի գիտութեմէ եմ
15 ո՞րչափ այնմ արուեստի ոք համարիցի ան-
գիտանալ
16 աստուածախոսսն
17 Մատթ. Լ. 26:
18 եւ ոչ եթէ զի
19 բարեխոսելն նորա վասն սրբոց
20 բարեխոսել
21 զի ընդ

20 եւ ոչ
21 բարձրագոյն
22 միապատիւ
23 բազմաբար
24 Լուսանցեալմ պատասխանեալ
25 Տե՛՛՛ Մատթ. ԻԷ. 24:

տուծոյ, որ յերեւելն մարմնով գդեւան ամենայն հալածականս առնէր ի մարդկանէ, եւ ինքն ո՛չ էր փրկեալ ընդ երկիւղիւ ուրուք, այլ զամենայն արարածս ընդ իւրով երկիւղիւն փրկեալս ունէր. վասն զի զաւրութիւն էր, վասն այնորիկ նուանէր ընդ ընթեամբ զարութեամբ Հար իւրոյ յաստուածեղէն գալստեանն իւրոյ զգոյսս ամենայն, եւ հանէր յաղթութիւն զիրաւունս՝:

7 Քանզի ո՛չ եթե ի ծնանելն ի Կուսէն լլկեալ ինչ լինէր, եւ կամ յորժամ ի մէջ մարդկան էր՝ առնոյր ինչ յումեքէ, այլ ինքն կենագործէր զամենայն, որպէս ի սկզբանց նոր յաւիտենից: 8 Արդ, յորժամ ասիցեն աւետարանիչքն, եթէ ծնաւ ի կուսէ, կեր եւ արբ, ո՛չ եթե այլոյ ուրուք էր մարմինն, այլ նորուն Տեառն մեր. զի նոյն ինքն եղեւ մարդ եւ ճշմարտութեամբ մարմին գգեցաւ, եւ ո՛չ կերպարանաւք: 9 Այլ եւ ցուցանէր զփառս աստուածութեանն ի յինքեան՝ սաստէր ի վերայ դիւանցն, եւ ո՛չ կարեին Հանդուրժել, այլ ի փախուստ դառնային. քանզի հզար էր Տէրն, եւ ո՛չ տկարանայր բան զաւրութեանն Աստուծոյ, այլ, եւ ո՛չ մարմնոյն մարթ էր տկարանալ, վասն զի ո՛չ էր այլ ուրուք մարմին, այլ նորուն մարմինն եւ զաւրութիւնն: 10 Վասն այնորիկ անվայելուչ էր նմա փախչել ի մահուանէ եւ ընդ երկիւղիւ արարածոց անգանել, այլ առաւել յանձն առնուլ, զի ջնջեսցէ զմահ եւ բարձցէ զերկիւղ նորա ի մարդկանէ: 11 Վասն այնորիկ ո՛չ էր տկարութեամբ մահն Տեառն, այլ զաւրութեամբ. զի որ զամենեցունց տկարութիւն բառնայր՝ ինքն զիա՞րդ տկարանայր. այլ որպէս քաղցիւն եւ ծարաւովն եւ մահուամբն զմարդկութիւնն ստուգէր, նոյնպէս եւ նշանաւք եւ զաւրութեամբ զաստուածութիւնն յայտ առնէր:

« Հմմտ. Մատթ. ԺԻ 20:

1 Երանելոյն Կիրդի, Երուսաղեմի եպիսկոպոսի՝ ի մեկնութենէ ընթերցուածոցն. Տէ՛ր, ո՞վ հաւատաց. ի բանէն՝ Պարծանք սրբութեան:

2 Ո՛չ բանիւք յանցեաւ Քրիստոս, ո՛չ գործովք մեղաւ, ո՛չ խորհրդովք նենգեաց, զի՝ Մեղս, ասէ, ո՛չ արար եւ ո՛չ գտաւ նեմագութիւն ի բերան նորա՞. որ ընդ հայհոյելն ուրուք Հայհոյէր, որ ընդ չարչարելն ուրուք չսպառնայր. որ եկն ի տեղի չարչարանաց ո՛չ ակամայ կամաւք, այլ կամաւք կամաւորութեան: 3 Զի թէ ոք հրաժարէր եւ ասէր. Քա՛ւ քեզ, Տէ՛ր, մի՛ եղիցի քեզ այդ, սաստէր նոցա՝ Յեսս ե՛րթ, զի ո՛չ խորիս զԱստուծոյ, այլ զմարդկանց: 4 Իսկ արդ, կամի՞ս գիտել դու, եթե կամաւք կամակարութեամբ եկն ի չարչարանաց տեղին. այլ ակամա մեռանին, եւ ո՛չ գիտեն իսկ: 5 Իսկ սա յառաջագոյն ասէր վասն չարչարանացն. Ահաւասիկ ելանեմք յերուսաղեմ, եւ Որդի Մարդոյ մատնիցի ի խաչ ելանել՞: 6 Բայց գիտե՞ս դու, թէ ընդդէ՞ր ո՛չ խաւսէր ի մահուանէ անտի Մարդասէրն. զի մի՛ միանգամայն տիեզերք աշխարհի կորիցեն: 7 Եւ դարձեալ հաստատեաց զերեսս իւր՝ դէմ եղեալ զայր յերուսաղէմ. եթե փառս իւր համարէր զխաչն Յիսուս, լո՛ւր դու նմա, զի ասէր, եւ մի՛ յինէն համարիս ուսանել: 8 Մատնէր զնա Յուդայ՝ զրկող եղեալ առ տանուտէրն, որ արդեւք ել ի սեղանոյ անտի եւ զաւրհնութեան բաժակն առեալ էր, եւ փոխանակ ուտելոյն եւ ըմպելոյն՝ զարիւն արդար կամէր հեղուլ. Որ եկեր զիս նորա յանախեսաց ի վերայ նորա առնել զխաբէութիւնն. այն ինչ անդէն ձեռքն կարկառեալ զաւրհնութիւնն առնուին, եւ անդէն առ նմին վասն արծաթոյ մատնութիւն մահուանէր:

բ Տէ՛ս Մատթ. ԼԼ 2. Հմմտ. Բ Կոր. Ե 21:
 գ Տէ՛ս Մատթ. ԺԳ 22-23:
 զ Տէ՛ս Մատթ. Ի 18. Մարկ. Ժ 33. Հմմտ. նաեւ՝ Գուգ. ԺԲ 31-33:
 է Տէ՛ս Մատթ. ԽԸ 10. Յով. ԺԳ 18:

պատրաստէր. եւ թեպէտ յանդիմ[ան]եցաւ եւ լուաւ թե՛ Դու ասացեր՞, դարձեալ անդրէն ի նոյն ելանեն. ապա ասէ Յիսուս. եկն եհաւ ժամ, զի փառաւորեացի Որդի Մարդոյ՞: 9 Իսկ արդ, Յիսայի սղոցել չամաչէր, եւ Քրիստոս ի վերայ աշխարհի մեռանել ամաչէ՞ր. Այժմ փառաւորեցաւ Որդի Մարդոյ՞, ասէ. իբրեւ ո՛չ թէ յառաջ չունէր գիտան, զի փառաւորեալ է փառաւօր յառաջ քան զարարածս՞, այլ փառաւորեալ էր յառաջ իբրեւ զԱստուած, բայց այժմ առաւել փառաւորեցաւ. զի զհամբերութեան պսակն յանձն իւր առնուլ հաւանեցաւ. ո՛չ բռնադատութեամբ ինչ թող յիւրմէ գկենդանութիւնն եւ ո՛չ բռնազբաւսութեամբ ինչ գենաւ. զի լո՛ւր դու, զի՛նչ ասէ. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ յիս՞. կամաւք թոյլ տամ թշնամոյն. զի թե ես ո՛չ կամէի, այս ո՛չ լինէր, որ լինին: 10 Այլ սա աւանիկ կամաւք կամակարութեամբ եկն ի տեղի չարչարանացն. խնդալով գայր ի տեղի չարչարանացն՝ քաջութեամբ. ժմբտելով գայր ի տեղի պսակացն, ուրախութեամբ գայր ի փրկութիւն ամենայն մարդկան. չէր ինչ ամաչեցեալ յերկնից, զի զփրկութիւն բարձեալ բերէր ամենայն արարածոց իւրոց. զի ո՛չ եթե մարդ ոք էր դուզնաքեայ, որ չարչարեցաւն, այլ Աստուած, որ մարմին զգեցաւ եւ զհամբերութեան պսակն առեալ՝ ճգնութեամբ պատերազմէր:

11 Ի նոյն քանէ:

12 Զի որպէ՞ս պարտ եւ պատշաճ էր ինձ զաւրացուցանել զիմ աշակերտսն, եւ թե որ ի վերայ ճշմարտութեանն մահն էր, եւ ես զանգիտեալ խուսափեի. զի ես ինձէն

ասէի թե՛ Որ սիրէ զանձն իւր կորուսանէ զնա՞ւ արդ, եթե կենասէր լեալ էի, ապաքէն ո՛չ առնեի զոր ուսուցանեին: 13 Արդ, ինքն Աստուած իսկ էր, եւ ի վերայ մարդկան այսց անցից յանձն առնուլ, զի առ յապա մարդիկ ի վերայ մարդկան չարչարանս յանձն առնուլ մի՛ ամաւթ համարեսցին:

1 Երանելոյն Եպիփանու Կիպրացոյ, եպիսկոպոսի Կոստանդեայ քաղաքի՝ ի պարունական խաւսիցն, ի բանէն, որ գլուկիանոսացն:

2 Ինքն իսկ Փրկիչն ասէ. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ առնուլ զնա՞ւ, եւ՛ ես եմ հովիւ քաջ, որ դնեմ զանձն իմ ի վերայ ոչխարաց. եւ՛ Անձն իմ խռովեալ է, ասէ, եւ զի՞նչ ասացից. իբր յերկուանալով ասէ. Զի՞նչ ասացից, Հայր, ապրեցո՛յ զիս ի ժամէս յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս. զի ցուցցէ, եթե կամաւ նորա աստուածութիւն նորա յայս եկն. բայց խռովեցաւ, զի տեսիլ ճշմարտութեան մարմնով իւրով գալստեանն մի՛ պակաս երեւեսցի. քանզի ո՛չ կարծեաւք էր մարմնով գալուստն: 3 Այլ եւ վասն նմանութեան թագաւորի մեծի՛ ունելով պատերազմ առ կրսերագոյն քան զինքն, եւ ծանուցեալ, թէ նա հրաժարէ եւ ի փախուստ դառնա, եւ ապականէ յետ փախստին բազում գաւառ հնազանդելոց իւրոց. իսկ իւր իմաստութեամբն պատճառից թիկունս շրջել եւ փախչել, մինչեւ նա առցէ զքաջալերումն՝ կարծելով, թե մեծ թագաւորն ի յերկիւղէ ի փախուստ դարձաւ, եւ հալածեսցէ զնա. եւ դարձցի թագաւորն իւրով զաւրութեամբն եւ զամենայն ընդ ձեռամբ ըմբռնեսցէ՝ զտկարագոյնն եւ զընդդիմացեալս: 4 Սոյնպէս եւ

« Մատթ. Ի. 9. 25
 բ Յովն. Ժ. Բ. 23. Գե' ս նաեւ Ժ. Գ. 31:
 գ Յովն. Ժ. Գ. 31. Հմմտ. նաեւ Ժ. Լ. 5:
 դ Հմմտ. Յովն. Ժ. Լ. 5:
 ե Յովն. Ժ. 18

չ Մատթ. Ժ. 39. Գե' ս Մարկ. Ը. 35. Գ. 4. Թ. 24. Ժ. Լ. 32:
 է Յովն. Ժ. 18
 զ Յովն. Ժ. 11
 զ Յովն. Ժ. Բ. 27

Տէրն մեր ո՛չ երկնչէր ի մահուանէ, որ յառաջ քան զգալն իւր ի չարչարանս նշանակեաց ի ճանապարհորդութեան թէ՛ Պարտ է Որդոյ Մարդոյ մատնել, ի խաչ ելանել եւ յերիւր աւուր յառնել¹։ 5 Եւ ի Պետրոսի յասելն թե՛ Քաւ լիցի, Տէ՛ր, ընկալեալ ի նմանէ զցասումն, թե՛ Յետս ե՛րթ իմ, սա՛տանայ, զի ո՛չ խորհիս դու զԱստուծոյ, այլ զմարդկանց²։

6 Իսկ զիա՞րդ սա զկնի աղաւթս առնէ՞ զանց առնել զբաժակն, զի մի՛ արբցէ, որ ասել՝ յառաջ քան զժամ մահուն. զէթ վասն կարծմանն զնա ո՛չ կարէր աղաւթել անցուցանել զինքեամբ զբաժակն, այլ յառաջ կոչէ ի ձեռն այսպիսի դիմաց զկրտսերադոյն ընդդիմակացն. զի նորա կարծելով փախուցեալ եւ երկուցեալ զՓրկիչն՝ մահապարտ աստիցէ որք ի մահ զնա ածեն, որ լիցի ի մահուանէ նորա փրկութիւն եւ անմահութիւն³։

1 Երանելոյն Գրիգորի Աստուածաբանի Նագագացոյ, ուստի Աղբատուրեան, ի բանէն՝ Ա՛րբ եղ[ր]արբ։

2 Բարեաւք է աղաւթք ի տքնութիւն, եւ հաւանեցուցէ զքեզ Աստուած տքնել նախ քան զչարչարանսն եւ աղաւթելն։

3 Կորնթիոնցի յերրորդ գրքի բանն լուծանէ, ի բանէն՝ Վասն զի քեզ ընդ խորհրդոցն։

4 Եւթներորդ ասացի իջանելն ի² յերկնէ Որդոյ, ո՛չ զի արասցէ զկամս իւր, այլ զԱռաքչին։ 5 Արդ, եթէ³ ի ստորինս իջելոյն յինքենէ⁴ այստքիկ ասացեալ եին, ⁵ասէաք թերեւս արդեաւք՝ իբր ի մարդոյ

տպաւորեալ⁶ զբանն, որ ըստ Փրկչին իմանի. քանզի նորա կամելն ո՛չ ընդդէմ Աստուծոյ է՝ յԱստուծոյ բովանդակն, ⁷այլ իբրեւ զմեզ մարդկային ախորժակացս, որ ⁸ո՛չ զհետ երթայ աստուածայնոյն, այլ ընդդէմ կայ, որպէս բազում ուրեք⁹, եւ մարտնչի, զի զայնոսիկ ¹⁰այսպէս իմասցուք. Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս. սակայն ո՛չ որպէս ես կամիմ, այլ քո գաւրասցի¹¹ կամիմ²։ 6 Իբր¹² ո՛չ եթե կարողութիւն է¹³, կամ ո՛չ կարողութիւն՝ զանգիտանալ¹⁴ ի դէպ էր, եւ ո՛չ կամացն հակառակ ի ներքս ածել կամս, այլ զի ¹⁵առողին է բանս, որ էջն, եւ ո՛չ որ առան. այսպէս հանդիպեցուք, ¹⁶իբրեւ ո՛չ եթե Հաւր, այլ որպէս թե ո՛չ իցէ՞ բանս է, զի լինիցի այսպէս եւ իմն ժողովումն. Ո՛չ զի արարից զկամս իմ¹⁷. զի ո՛չ իսկ¹⁷ են իմն ¹⁸ի քումէդ բաժանեալ, այլ հասարակաց իմ եւ քոյ են, որպէս մի Աստուածութիւն, նոյնպէս եւ կամք, վասն զի յոլովք յայսպէս ասացելոցն ի հաւասարէն ասին։

7 Կորնթիոնցի առ ի յերկրորդ հարցմանէն լուծմանն։

8 Այսպիսի իմն ինձ երեւի, եւ՝ Աստուած՝ Աստուած, հայեաց յիս, եւ՝ Ընդէ՞ր

¹ Գլ. 1. Ի. 7. Հմմտ. Մատթ. Ժ. 9. 21. Ժ. 1. 21, Ի 18. Մատթ. Թ. 30, Ժ 33։
² Մատթ. Ժ. 9. 22-23
³ Հմմտ. Ն, ք. 65v:
⁴ չի՞ք
⁵ ո՛չ ի ստորինս
⁶ յընթեմէ
⁷ ասեալ թերեւս արդեւք իբրեւ

6 տպաւորել
 7 այլ ըստ մեզ իբրեւ մարդկային
 8 ո՛չ ամենայն իրաւ գիտ երթա աստուածայնոյն
 9 ուրով
 10 իմասցում այսպէս
 11 գորասցին
 2 Տէ՛ր Մատթ. Ի. 9. 39. Մատթ. Ժ. 1. 36. Գլ. 1. Ի. 42։
 12 իբրեւ
 13 իցէ
 14 այն անգիտելի
 15 առաջին է բանս այս
 16 իբրեւ ո՛չ եթե առանձին ինչ իցէ Որդոյ կամիմ քան
 7 Թ. 1. 9. 38
 17 չի՞ք
 18 ի քումմէդ
 19 Ն, ք. 57v

եիր, եթե հանդերձեալ ես վասն մեր մահու համբերել. զի եւ դու իսկ ասեիր թե՛ Պարտ է Որդոյ մարդոյ մատնիլ եւ խաչիլ եւ յերրորդ աւուր յառնել¹⁰: 10 Եւ ընդէ՞ր այժմ մերձ եկեալ ի խաչն՝ հրաժարես. եթե կարողութիւն է՝ բաժակս անցցէ. եթե զայդ ախորժեիր, ընդէ՞ր աշակերտին քում Պետրոսի, որ խափանէրն, սաստեիր, յորժամ ասեիրն. Պարտ է Որդոյ Մարդոյ խաչիլ եւ յերրորդ յաւուր յառնել. եւ Պետրոս ասէր. *Քա՛ւ լիցի քեզ, Տէ՛ր. մի՛ լիցի քեզ այդ. որում սաստե[լով] ասացեր.* Ե՛րթ յետս իմ, սա՛տանայ, գայթակղութիւն իմ ես դու ինձ. զի ո՛չ խորհիս դու զԱստուածոյսն, այլ զմարդկանս¹¹: 11 Եւ արդ, եթե նմա սաստեցեր յայնժամ, իբր մարդկաւրէն իմն խաւսողի, ընդէ՞ր այժմ հայցես, զոր նա յայնժամ խափանէրն, եւ ասես՝ Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս: 12 *Ջքեզ ստացող երեւելեացս, եւ ո՛չ երեւելեացս միայն՝ ուսանիմք գոլ. զի եւ ի հիւանդս մերձեցուցանելով զձեռնդ բժշկեցեր եւ զմեռելոց զլուծեալ պնտեցեր բանիւ, եւ զքղանցիւք հանդերձիցդ զաղբիւր արեանն ցամաքեցուցեր, ի հինգ հացէ զհինգ հազար ժողովրդեան կերակրեցեր, հողմու եւ ծովու սաստեցեր, եւ ամենեքեան քեզ հնազանդեցան դողալով:* 13 *Այդքան սքանչելեաց գործանեայ եւ մահու լուծի՛չ, այժմ ի մահուանէ երկնչի՞ս, եւ ասես. Հա՛յր, եթե հնար է, անցցէ բաժակս:* 14 *Եթե դու երկնչիս ի մահուանէ, զիա՞րդ ասեիր. ես եմ կեանք եւ յարութիւն¹². վասն զի կեանք եւ յարութիւն ո՛չ երկնչի ի մահուանէ:* 15 *Եւ զի՞նչ է զոր ասեսդ. Հա՛յր, եթե կր. անց. բաժակս. անգէ՞տ ես, որ գիտես զամենայն՝ նախ քան զամենայնն լինել. անգիտանա՞ս, եթե կարողութիւն է կամ անկարողութիւն անցանել*

բաժակին. եւ զիա՞րդ ասես. Ո՛չ ոք գիտէ զՀայր, եթե ո՛չ Որդի¹³. եւ արդ, զՀայր գիտես, քան զոր ո՛չ ոք է մեծ, իսկ բաժակդ, եթե կարողութիւն է անցանել՝ ո՞չ գիտես: 16 *Ջիա՞րդ եւ դու, Պաւղո՛ս, ասես եթե՛ Ո՛չ է արարած աներեւոյթ առաջի նորա, այլ ամենայն մերկապարանոցաւ առաջի աչաց նորա է, առ որ մեր բանքս եմէ՛:* 17 *Վասն զի ասեիր այսպէս. Կենդանի է Բանն Աստուծոյ եւ զաւրաւոր եւ հատու քան զամենայն սուր երկսայրի եւ անցանէ միցնել յորոշումն շնչոյ եւ ոգոց եւ յաւդից եւ ուղղոց, եւ քննողական խորհրդոց եւ մտածութեան սրտից¹⁴, եւ ոչինչ է ստացուած աներեւոյթ առաջի նորա, այլ ամենայն մերկ եւ բաց պարանոցաւ աչաց նորա է, զորմէ մեր բանքս են:* 18 *Արդ եթե ամենայն մերկ եւ բաց պարանոցաւն աչաց նորա է, առ որ բանդ է, զիա՞րդ իբրեւ այժմ անգիտանալով ասեն. Հա՛յր, եթե հնար է անցանել բաժակին. եթե ո՛չ իցէ ծածկեալ խորհուրդ բանիցդ, ո՛չ վայել էր քեզ բանդ այդ. քանզի Աստուած ես՝ Աստուծոյ Որդի եւ Բան իմաստութեան, զաւրուութիւն, լոյս, արեգակն արդարութեան, աղբիւր անմահութեան, կեանք յաւիտենականք, յարութիւն մեր մեռելութեանս մեղաւք, եւ ասես. Հա՛յր, եթե կարողութիւն է անցանել բաժակիս. ո՛ր, զիա՞րդ դժուարահասանելի է բանս եւ դժուար որսալի եւ դժուար որոշելի. ո՛վ, զիա՞րդ նեղ եւ անձուկ առ բազումս ի մարդկանէ. ուսո՞յ մեզ զխորհուրդս բանի քո, վասն զի քոյ եմք եւ ի քեզ հաւատացաք:* 19 *Մի՛ բարձրացի հայհոյութեամբ հսկայն Եւնոմիոս եւ մի՛ թշնամանեսցէ զբանակ Տեառն Իսրայելի. նա զմեզ թշնամանէ, եւ ի քեզ, Տէ՛ր, հասանեն լուտանքն. զարթո՛յ որ կանս ի սրտի մերում միտքս՝ իբրեւ հեզոյն Դաւ-*

10 Գ.Վ.Ի.Պ. 7
 11 Մատթ. Ժ.Գ. 22-23
 12 Յով. Ժ.Ը. 25

13 Մատթ. Ժ.Ը. 27. Գ.Վ.Ի. Ժ. 22
 14 Եբր. Դ. 13
 15 Եբր. Դ. 12

թի. տո՛ւր մեզ բան բարի, զի նովաւ պարսեալ զգլուխ ամբարշտութեան նոցա՝ լուծցուք, զի ծանիցէ ամենայն բանակս այսաւր, թե դու միայն ես Տէր ի վերայ ամենայն երկրի: 20 Յոլովք ես ի վերայ ժողովք հերձուածողաց, դովին այդուիկ բանիւ պատերազմին. զի՞նչ ասելով՝ տեսանես՝ զիա՛րդ երկնչիմ, տեսանես, զի աղաւթեմ առ Հայր, ասելով, Եթե կարողութիւն է, բաժակս այս անցցէ: 21 Այժմ Եւնոմիոս գուարճանայ, այժմ Արիոս հրճուի, որպիսի՛ս գտեալ նետս բանից հայհոյութեան, եւ հակառակին ճշմարտութեանն չըշնջելով: 22 Այլ մի՛ ուրախանայք, ամենայն այլազգիք, վասն զի խորտակեցաւ լուծն հարկանողացն զմեզ. Ընդ մեզ Աստուած, զիտասցո՛ւմ հեթանոսք եւ պարծեցարո՛ւմ, եւ հզարացեալիդ պարտեսջիք. զի թեպէտ զարանայք, դարձեալ պարտեսջիք. քանզի գոր խորհեցայք խորհուրդ՝ ցրուեսցէ Տէր՞. զի բերան Տեառն խաւսեցաւ զայս: 23 Հա՛յր, եթե կարողութիւն է, անցցէ բաժակս այս. ո՛վ բաժակ, կենաւք եւ անմահութեամբ լցեալ, գոր առնլով Եւնոմիոս եւ Արիոս, իւրեանց չար հաւատովքն պղտորեցին եւ ընկերաց իւրեանց արբուցին զխտորումն. որք զքաղցրն խառնումն նորին մաւրն դառն գոլ կարծեցին, եւ ո՛չ յաւաղական բանէն երկեան, գոր ասէն էսսախաս. Վա՛յ, որ արբուցանէ ընկերի իւրում խտորումն պղտորէ. Վա՛յ, որ ասէ զբաղցրն դառն եւ զդառնն քաղցր, որք դնիցեն զոյսն խաւար եւ զխաւարն լոյս. վա՛յ որ իմաստնոցն յնքանցն եւ առաջի իւրեանց հանճարեղացն: 24 Մեք, սիրելի՛ք, զբաժակն Տեառն մերոյ առնլով, որ ի նմանէ լցեալ վարդապետութիւնն փափազանաւք արասցուք անձին. Հա՛յր, եթէ կարողութիւն է, անցցէ բաժակս այս. ո՛չ

որպէս դուդ կարծես, ո՛վ Արիոս, եթե երկնչի Տէրն եւ զարհուրի ի մահուանէ՛ զայդ ասելով. քան որպէ՛ս ար[դ]եաւք երկնչէր, որ իշխանութիւն ունէր մեռանել եւ ո՛չ մեռանել, որպէս եւ ասէր. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, եւ իշխանութիւն ունիմ դարձեալ առնուլ զնա՞. վասն զի, թե հարցեալ յու՞մքէ լինէր, բարիոք արդեւք ասէիր նմա զարհուրիլ. իսկ այժմ ինքն ասէր. Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, ոչ հարկիմ յու՞մքէ, ապա թե ո՛չ, չասեր՝ իշխանութիւն ունիմ անձին իմոյ դնել եւ առնուլ. այլ որպէս զիս ինքն թափեսցէ՝ զկերպարանս ծառայի առնլով՝ ո՛չ ուրուք ինձ հարկ արարեալ, ես զիմ մարմինս ինձէն շինեցի. քանզի իմաստութիւն շինեաց իւր տունէ. նոյն աւրինակ կարեմ եւ լուծանել զիմ մարմինս մահուամբ, եւ կենաւք վերստին յարուցանել. ես եմ, որ ասեմն. Քակեցէ՛ք գտանարս զայս, եւ զերիս աւուրս կանգնեմ զաա՞: 25 Որպէս զի ո՛չ երկնչելով եւ զարհուրելով ի մահուանէ՛ ասէ. Հա՛յր, եթե կարողութիւն է անցանել բաժակիս, այլ ծածկեալ բան իմաստուն առաջի արկանեմ. զայս բանս առաջի արկանելով բանսարկուն՝ պարտ է ինձ բանիւք այսոքիւք զնա որսալ: 26 Ետես զիս սատանայ բազում նշանս արարեալ. զի ի հիւանդս մերձեցուցանելով զձեռն՝ բժշկեցի, զգուռնդս դիւացն փախուցի բանիւ, զմեռելոցն բազմութիւնս յարուցի բանիւ, զլուծեալ զծնունդս բանիւ պնդեցի. հողմոց եւ ծովուց սաստեցի, եւ ամենեքան հնազանդեցան դողալով. եւ ի նոցունց իրաց տեսեալ՝ զիս Որդի Աստուծոյ կարծեաց: 27 Եթե ես խաչեցայց, նա կորնչի. եթե ես իջից ի

ա՝ Տէ՛․ Ե՛․ Ը՛ 9-10:
 բ՝ Ը՛․ Բ՛ 7:
 գ՝ Տէ՛․ Ե՛․ Ը՛ 20-21:

դ՝ Յ՛․ Ը՛․ Ժ՛ 18
 է՝ Յ՛․ Ը՛․ Ժ՛ 18
 զ՝ Հ՛մ․ Փ․ Լ․ Բ՛ 7:
 ի՝ Ը՛․ Կ․ Բ՛ 1
 յ՝ Յ՛․ Ը՛․ Բ՛ 19․ Գ՛․ Բ՛․ Մ․ Գ՛․ Բ՛ 61․ Մ․ Գ՛․ Ժ՛ 58:

սանդարամետս, զնիզս նորս գերկաթե-
 դէնս խորտակեցից եւ զդրունս պղնձիս
 փշրեցից³². եւ զայս ամենայն զմտաւ ածե-
 լով՝ զարհուրեալ փախչի. կալ մնալ բազ-
 մապատիւ զաւրութեան խաչին իմոյ ո՛չ
 կարէ: 28 Եւ արդ, զի՞նչ առնեմ. իբրեւ զի-
 մաստուն ձկնորս՝ կարծեցուցանեմ զերկչո-
 տութիւն, վստահացուցանեմ զարհուրե-
 լովս ի մահուանէ եւ ասեմ. Հա՛յր, եթե կա-
 րողութիւն է, անցցէ բաժակս. զի եւ նա
 յայդպիսի նուաստ բանից իմոց կարծեսցէ
 մարդ, զարհուրեալ եւ փախուցեալ ի մա-
 հուանէ, ճեպեսցէ կանգնել ի մէջ երկրի
 զփայտն՝ հաստատել զխորհուրդս խաչին,
 որպէս կարծեն՝ հակառակ ինձ: 29 Պարտ է
 ինձ, իբրեւ զիմաստուն ձկնորս՝ հնարել
 ընդդէմ նորս ամենեւին վասն ամենեցուն
 փրկութեան. զի թե մեքենեաց հակառակ
 Ադամա կորստեանն, առաւել եւս արուես-
 տեցից վասն ամենեցուն կենաց. բանիւք
 նենգութեամբն խաբեաց զԱդամ, բանիւք
 աստուածունաւք խաբեցից զնենգաւորն.
 Հա՛յր, եթե կար. անց. բաժակս: 30 Եթե ո՛չ
 ձկնորսն, յորժամ ընկեսցէ զկարթն ի ծով,
 երբեմն թողացուցանէ զկարթն եւ երբեմն
 իբրեւ փախուցեալ զորդնն ցուցանէ՝ ձե-
 ւամբ ձգելով, ձկունքն ո՛չ յարձակին ի
 վերայ. շուրջ եղի կարթիս իմոյ աստուա-
 ծութեանս զորդն մարմնոյն, կախեցի
 զկարթն ծածկաբար որդամբ մարմնոյս ի
 խորս աշխարհիս այսորիկ. եթե ո՛չ որդն
 իբրեւ զորդն շարժիցի, զոր պարտ է ինձ
 որսալ՝ ո՛չ յարձակի ի վերայ: 31 Արդ,
 պարտ է եւ արժան է ինձ իբրեւ զորդն ձե-
 ւանալ եւ խաւսել. վասն զի՝ ես որդն եմ,
 եւ ո՛չ եմ մարդ³³. նա ի վերայ զիմեսցի եւ
 մերձեսցի ի կարթն, եւ ձգեցից յինէն, եւ
 գտցի զգրեալսն Յոբայ՝ Ածցես զվիշապն
 կարթիւ³⁴. եղէց իբրեւ զկարթ փախուցեալ

ի մահուանէ եւ ասացից. Տրտում է անձն
 իմ միմչեւ ի մահ³⁵. ասացից. Հա՛յր, եթե
 կարողութիւն է, անցցէ բաժակս այս:
 32 Լսելով զբանս զայս՝ խնդա եւ ուրախ
 լինի, եւ ճեպի զհակառակ ինձ գործել. զի
 յորժամ լսէ. Հա՛յր, եթե կարողութիւն է
 անցանել բաժակիս, զուարճանա, եւ զի՞նչ
 ասէ յինքեան. եւ սա մարդ է. կլի զԱբրա-
 համ եւ զԻսահակ եւ զՅակոբ եւ զհայրա-
 պետս եւ զմարգարէս, կլից եւ զսա. զի ա-
 հա իբրեւ մարդ զարհուրի, մարդ է, կլից
 զսա. կլցէ զիս իբրեւ զմարդ, եւ գտցէ յո-
 րովայնի իւրում զիս իբրեւ զԱստուած
 գործեալ: 33 Հա՛յր, եթէ հնար է, անցցէ
 բաժակս. կլցէ իբրեւ զանգուած մարմնոյ,
 եւ գտցէ իբրեւ զանշէջ կայծակն գաս-
 տուածութիւնս, որ դժնդակապէս ի ներքս
 այրիցէ. քանզի՝ Հուր եկի արկանել յեր-
 կիր³⁶. խաւսեցայ իբրեւ զգառն, ո՛չ կամիմ,
 եթէ տեսցէ նա փայլատակեալ զսուսեր
 աստուածութեանն, զի մի՛ փախիցէ գայլն.
 կլցէ զիս իբրեւ զգառն, եւ ի ներքոյ երեք-
 սայր սրովն խոցեցից զնա. զի ո՛չ եկի խա-
 դադութիւն արկանել նմա, այլ սուր³⁷. խաւ-
 սեցայ իբրեւ զգառն, ո՛չ կամիմ, եթե տես-
 ցէ զծածկեալ հովիւս զԱստուած ի գառին
 մարմինս. ո՛չ ախորժեմ յայտնել զհովիւս,
 զի մի՛ փախիցէ գայլն, այլ խաւսեցայ իբ-
 րեւ զգառն, որ ո՛չ ունիցի հովիւ, զի եղի-
 ցի՝ Իբրեւ զմարդ առանց աւզնականի³⁸.
 կլցէ զիս իբրեւ զգառն, եւ ի ներքոյ հո-
 վիւս բրով խորտակեցից. ծամեսցէ զիս իբ-
 րեւ զհատ մանանխոյ, եւ գտցէ զդժնդա-
 կութիւն աստուածութեանս, որ դժնդակա-
 պէս զնա չարչարեսցէ. ծամեսցէ զիս իբրեւ
 զմարդ, եւ գտցէ զկարծր վէմն, որ յոգնա-
 պէս զնորս զատամունսն փշրեսցէ, զի
 ուսցի մի՛ եւս ծամել զմարդիկ, եւ լցցի

32 Տէ՛ * Ե* ԽԵ 2:
 33 Սաղմ. ԻԼ 7
 34 Յոբ. Խ 20

35 Սաղմ. ԻԳ 38. Սաղմ. ԺԳ 34
 36 Ղուկ. ԺԲ 49
 37 Սաղմ. Ժ 34. Գե՛ * Ղուկ. ԺԲ 49:
 38 Սաղմ. ԶԷ 5

գրեալն. Աստուած խորտակեացէ զատա-
մուցն նորա ի բերանս նորա^ա: 34 Հա՛յր,
եթե կարողութիւն է, անցցէ բաժակս. եթե
գիտէր, ո՛րպիսի է բաժակս, յորմէ ես պատ-
ճառեմ հրաժարելովս, նա՛ արդեւք անցա-
նել. վասն զի հակառակ նորա է, նմայ է
խոցոտիչ եւ իմոցն փրկութիւն: 35 Յոր-
ժամ կլցէ, յայնժամ գիտասցէ զոր եկուլն,
յայնժամ տեսցէ վասն իմ գարեգակն խա-
ւարեալ, յայնժամ դառնասցի եւ գտցէ
զգրեալն. Գժոխօք ի ներքուստ դառնացան ի
պատահելն քեզ^բ: 36 Մի՛ գայթակղեսցեն
զքեզ բանքս այսոքիկ. իմաստութեամբ ա-
սեմք, անսայցէ՛ք եւ տեսէ՛ք զկատարումն
բանիս, եւ յայնժամ զարմասջիք ընդ ի-
մաստութիւնս բանիս. կարծէ յիմարութիւն
լինել զարուեստ իմ, եւ ո՛չ գիտէ թե՛ Յի-
մարն Աստուծոյ իմաստնագոյն է քան
զմարդիկ^գ. վարկանի ի բանիցս տկար զիս
գոլով, եւ ո՛չ ճանաչէ եթե՛ Տկարն Աստու-
ծոյ զաւրագոյն է քան զմարդիկ. ո՛չ գիտէ
նա, թէ՛ ես ըմպեմ զբաժակն, եւ նա ըմպես-
ցէ եւ թմբրեսցի, եւ իմքն զար[թ]իցեն:
37 Այժմ զուարճանայ՝ լսելով զայսպիսի
բանս խոնարհութեամբ. բայց յորժամ կլա-
նիցէ զիս, յայնժամ տեսցէ, զի վեմք պա-
տառին, եւ զշիրիմս եւ զգերեզմանս բա-
ցեալ, եւ զինքն երգիծեալ, եւ զմեռեալսն ի
բաց վազեալս^դ եւ յերկինս խայտացեալս.
յայնժամ զղջասցի եւ ողբասցէ որովք
այժմ զուարճանայր բանիւք. ո՛չ գիտէ, ե-
թե զոր հաստատէ՛ զորոգայթն իւր կազմէ,
եւ ինքն անգանի, ըստ գրեցելոյն. Գուրն,
զոր փորեաց եւ պեղեաց՝ ի նոյն անգցիմէ.
ո՛չ գիտէ, եթե զոր հանդերձեալն է կազմել
զխաչն՝ ինձ առագաստ է եւ նմա խաչ, ինձ
հարսնարան եւ նմա մահ. ո՛ բաժակ՝ սա-

տանայի խոցոտիչ, մեղաց խուսող, մեղա-
ւորաց հաշտարան, անմահութեան աղ-
բիւր. բաժակ՝ կենաց գործաւնեայ. Սակայն
ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու:
38 Ծանեաւ թշուառականն, եթե որքան
ինչ ասացին եղեւ. լուաւ յինէն յասելն.
Գոհանամք զԲեմ, Հա՛յր, զի յամենայն ժամ
լուար ինձ, եւ ես գիտէի, եթե յամենի լսես
իմձ՝ այժմ յաղաչելս իմում անցանել բա-
ժակին, թոյլ լիցի յիրս խաչին՝ զաղաւթից
իմոց զկատարումն յերկուանալի առնես,
եւ ասեմ. Բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ
որպէս դու. Հաւրն իմոյ ընձեռեմ զիշխա-
նութիւն՝ դնել զանձն իմ, եւ իշխանութիւն
ունիմ առնուլ զնա. թաքուցանեմ զաս-
տուածութեանս իմոյ զպատիւ, տերեւաւք
բանիցս ծածկեմ զաստուածական բանս
աստուածութեանս՝ բանիւք մարդկայնովք,
եւ ասեմ. Բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ
որպէս դուդ: 39 Ո՛չ գիտէ կոյրն, եթե իմ
կամք եւ Հաւրն մի են, եւ զոր ունի Հայր՝
իմ էէ, եւ՝ ես եւ Հայր իմ մի եմք. սակայն՝
ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու. կա-
խեցից զհատ ցորենոյն, եւ յորժամ կլցէ
զիս, տեսցէ զինքն յերեքկին լարոյն դառ-
նապէս խեղդեալ: 40 Այլ թերեւս ասիցէ
ոք արդեւք ի լսողացն. եւ արդ Քրիստոս
խա՞ղ արար զսատանայ, եւ կամ արժա՞ն
իցէ նմա խաղալ. առ որ ասեմք. ընթերցի՛ր
զԳիրս, եւ գտցես զնոյն ինքն Հայրն, որ
ասէր Մովսիսի. Տեսե՞ր, որքան խաղացի Ե-
գիպտացովքն. նոյնպէս եւ Տէր խաղաց
Սատանելիւ դիւաւքն: 41 Վասն զի պարտ
եւ արժան էր նմա իբրեւ անմտի խաբեալ
լինել, որ մեծաբանէրն եւ ասէրն. Զարու-
թեամբ արարից եւ իմաստութեամբ ձեռաց
իմոց բարձից զսահմանս հեթանոսաց, եւ
զաշխարհս բովանդակ իբրեւ գրոյն առից

ա Սաղմ. ԾԷ 7
բ Ես. ԺԳ 9
գ Լ ԿԳ Ը 25
դ Հմմտ. Մատթ. ԻԷ 51-52:
ե Սաղմ. Լ 16

զ Տէ՛ր Յիւ՛ճ. ԺԸ 41-42:
է Յիւ՛ճ. ԺԳ 15
ը Յիւ՛ճ. Ժ 30
բ Եւ. Ժ 2

եւ իբրեւ զմնացեալ ձուս բարձից, եւ ո՛չ ոք իցէ, որ ընդդէմ ասիցէ ինչ ինձ^ա: 42 Արդ, պարտ էր նմա խաղ լինել եւ դիւաց նորա, զի ցուցցէ զայնպիսի պանծացեալսն քան զմանգունս եւս անմտագոյնս, յաղագս որոյ ո՛չ ճանաչեին զոր առնեինն. Զի եթե եր ծանուցեալ, ո՛չ արդեաւ գՏէրն փառաց ի խաչ հանեիմ^ք: 43 Զայնէ եւ մարգարէն յաղագս վիշապին այնորիկ, եւ զի խաղ լինելոց էր՝ ասէր. Զվիշապն, զոր ստեղծեմ, խաղալ նովաւ^ք: 44 Այլ զի մի յաւէտ երկայնելով զբանս՝ կարծիցեմք խափանել որք զկնի մեր կամին պայծառագոյնս զիմաստ Գրոցն ընձեռել, աստանաւր լուծեամբ զբանս մեր անփոփեմք. վասն զի յառաջ մատեալք ասելոյն զայս զգլուխ, ո՛չ իբր կարողք անկարաւտաբար ասել, այլ ըստ մերում կարողութեան ասել եւ պատճառս տալ ուսումնասիրացն. քանզի՝ Տո՛ւր պատմառս իմաստնոյն, եւ իմաստնագոյն լիցի^ք: 45 Եւ դուք, սիրելի՛ք, ի Գրոց ընտրելով՝ ի հաւասարութիւն յառաջասացելոցդ մեծապէս պիտացուցէ՛ք զզժուարատեսանելի միտոդ. զի ո՛չ երկչոտութեան աղաղաւ Տէր մեր, որպէս ասացաք, աղաւթեաց բաժակին անցանել, այլ աստուածային իմն տնաւրէնութիւն. զի իմոց սուղ բանիցս եւ յիմաստիցդ եւ ի ձեռոց աշխատութեանցդ փառք Քրիստոսի վերառաքեսցին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

1 Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի, Եպիսկոպոսի Կոստանդինուպալսի՝ ի մեկնութենէ Եսայեա մարգարէի, ի բանէն՝ Եւ բղիսեսցէ:

2 Ամաչեսցեն Հերձուածողքն, որ հրայերէն կամեին տեսանել զսուրբ Գիրս.

Հոգի խորհրդոյ եւ զարուքեան, հոգի գիտութեան եւ աստուածաշարտութեան^ք, եւ այլք երկիւղ եւս յաւելուն, եթե՛ Լցցէ զնա հոգի երկիւղիւ Աստուծոյ՝ Ակիւղաս եթե՛ Հոտոտեսցի նա երկիւղիւն Տեառն. Սիմաքոս եւ Թէոդիտոն եթե՛ Հոտոտեսցի երկիւղիւն Տեառն: 3 Եւ արդ, ընդէ՞ր ընուցու Հոգւովն զԱստուած՝ գրեսցուք. եթէ ի Հաւրէ երկնչեսցի, որպէս եւ դուք հայհոյէք, Հոգւովն եւս զի՞նչ կարաւտէր, զոր դուքդ իսկ ասէք, թե փոքր է քան զնա. այլ վասն մեր յիւր շնչական եւ ի մարմնական մարմինն ընդունի զհոգին՝ զիմաստութեանն եւ զհանճարոյ, եւ զգիտութեան եւ զաստուածաշարտութեան, զի մեզ ինքեամբք ցուցցէ զաւրինակն, եթե մեք կարաւտ եմք այնպիսի պարգեւաց Հոգոյն Սրբոյ Աստուծոյ, եւ ո՛չ նմա, որ Տէրն, կարաւտ ինչ իցէ Հոգի ընդունելոյ. այլ նմա երեւելով՝ մեզ լիցի երախտիք: 4 Զի որպէս մարդն լինելով՝ ո՛չ եթե կարաւտ ինչ էր, եւ վասն այնորիկ եղեւ մարդ, այլ զի ի մարդ լինել արասցէ զմարդիկ որդիս Աստուծոյ, նոյնպէս եւ յընդունել զՀոգին ո՛չ եթե իբրեւ զկարաւտ ոք ընկալաւ, այլ զի կարաւտելոց ինքեամբ բաշխեսցէ զպարգեւս Հոգոյն: 5 Զի թէ ամենայն ինչ Հաւր նորա է՛, որպէս եւ ասէն իսկ. Ամենայն ինչ, որ իմ է՝ քո է, եւ որ քոյ է՝ իմ է, յայտ է, թե եւ Հոգին Հաւր նորա բնակից է: 6 Եւ որպէս զանձն եդ վասն խաշանց իւրոց, նոյնպէս եւ զՀոգին զիւր բնակիցն ետ կենդանութիւն աշխարհի՝ կամաւք Հաւր եւ նորին իսկ Հոգոյն Սրբոյ: 7 Եւ ո՛չ ասէ, եթե մասամբ ինչ ընկալաւ զՀոգին, այլ ամենեւին ասէ՝ Լցցէ զնա Հոգի Տեառն. զի որպէս չէ ոք բաւական Հաւր, բայց միայն անձն Որդոյ, եւ ո՛չ Որդւոյ, եթե ո՛չ ծոց Հաւր, նոյնպէս եւ ո՛չ Հոգոյն Սրբոյ, եթե

ա Վճար. Ե.՝ Ժ 13-14:
 բ Ը Կ՝ Բ. Բ՝ 8
 գ Ս՝ Գ՝ 26
 դ Ը՝ Կ՝ Թ՝ 9

է Ե՝ Ժ՝ Ը 2
 զ Ե՝ Ժ՝ Ը 3
 է Տ՝ Գ՝ Թ՝ 10:

ո՛չ Որդի, որ նորին բնակիցն իսկ է: 8 Հոգի, ասէ, իմաստութեան եւ աստուածաշատութեան, եւ հանճարոյ եւ խորհրդոյ, եւ գիտութեան եւ երկիւղի Տեառն. զի ուր երկիւղ Տեառն է, անդ ամենայն ինչ է: 9 Զի որ եցոյց յանձին զՀոգին հանդերձ ամենայն պարգեւաւք, յայն սակս եցոյց, զի յերկիւղ աստուածաշատութեան մերձեցուցէ զմեզ. զի զանձնէ ո՛չ երբեք ասաց, եթե ես երկեայ ի քէն, այլ թե ես սիրեցի զքեզ. քանզի Որդոյ սէր վայել է, եւ ո՛չ երկիւղ:

10 Նորին Յովհաննու՝ ի Սաղմոսաց մեկնութենէն, ժե. Սաղմոսէն՝ Պահեա՛ գիս, Աստուա՛ծ իմ՞:

11 Որչափ ինչ մարմնեղէն դիմաւք ասեն Գիրք զՔրիստոսէ, վասն մերոյ վարդապետութեան ասեն, ո՛չ վասն բնութեան աստուածութեանն. քանզի եղեալ Որդին Աստուծոյ մարդ՝ զամենայն ինչ ըստ մերում բնութեանս ասէ եւ խաւսի, եւ իւրով մարմնովն առնէ պատասխանի:

1 Նորին Յովհանն[ու]՝ ի Մեկնութեմէ աւետարանին Մատթեոսի գլխոյն, ի բանէն՝ *Իբրեւ ել Յիսուս ի կողմանս Փիլիպպեցւոց, որ կոչի Կեսա[րա]-ցոց*՞:

2 Յայնժամ ասէ ցաշակերտսն. եթե ոք կամիցի զկնի իմ գալ, ի բաց ուրացի զանձն իւր եւ աոցէ զխաչ իւր, եւ եկեացէ զհետ իմ՞:— 3 *Յայնժամ, ե՞րբ. յորժամ Պետրոս ասաց. Քա՛ւ լիցի, մի՛ լիցի քեզ, եւ լուա՛ւ՝ Ե՛րթ յետս, սա՛տանայք. իսկ աստ յաճախագոյնս արկեալ ի կիր՝ ո՛չ միայն յինքն հարկանէ զբանն, թե պարտ է մեռանել, այլ ի նոսա. քանզի այնպիսի են շնորհք իրացն, զի եւ առ ձեզ իսկ, ասէ.*

« Սաղմ. ժ. Է 1
 բ Մաթթ. ժ. Գ 13
 գ Մաթթ. ժ. Գ 24
 դ Տէ՛ս Մաթթ. ժ. Գ 22-23:

չկամելն մեռանել կարի դժնդակութիւն է, եւ հանապազ նմա պատրաստական կալ՝ կարի լաւութիւն է: 4 *Եւ թուի թե՛ մի ինչ իցէ, զոր ասացն, այլ երեք բանք են. եթե՛ ուրացի զանձն իւր, եւ թե՛ աոցէ զխաչ իւր, եւ թե՛ եկեացէ զկնի իմ:* 5 *Եւ իբրեւ երկեցոյց [ահ]աւորաւքն, ապա եւ բարկութեան ճառիւքն մխիթարեաց. զի՛ Գալոց է Որդի Մարդոյ փառաւ չաւր իւրոյ, հանդերձ հրեշտակաւ իւրով, եւ յայնժամ հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր՞:* 6 *Տեսանե՞ս, որպէ՛ս մի փառքն են Հաւր եւ Որդոյ, եւ եթե փառք մի իցեն, ապա եւ կարի յայտ իցէ, եթե եւ տէրութիւնն մի իցեն:*

7 ՄԱՒԷՆ ասեմ ձեզ, զի եմ ոմանք ի սոցանէ, որք մի՛ ճաշակեցեմ զմահ, մինչչեւ տեսցեմ զՈրդի Մարդոյ եկեալ արքայութեամբ եւ փառաւ իւրով: 8 *Քանզի բազում ինչ զվշտացն ճառեաց, եւ զմահուանէ եւ զչարչարանաց իւրոց յայտնէր եւ ցուցանէր նոցա, զի մի՛ այնուհետեւ ընդ իւրեանց եւ մի՛ ընդ նորա մահն տրտմեցին:* 9 *Եւ արդ՝ առեալ զգլխաւորսն, հանէ ի լեռն մի բարձր առանձինն, եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան՝ երեսն գործ իբրեւ զարեգակն, եւ Յանդերձ նորա եղեւ սպիտակ իբրեւ զլոյս, եւ երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա, որ խաւսեին ընդ նմա՞:* 10 *Զնոսա, որք երկու իրաւք պայծառագոյն քան զայլսն եին ի հնումն, ածէ ի մէնջ:* 11 *Եւ միւս եւս՝ պատճառէ՛ ասելով, զի դու ուսանիցիս, եթե մահու եւ կենացն Տէր է, եւ զվերինսն*

է Մաթթ. ժ. Գ 27
 1 Հմմտ. Ոսկեքերան, Յաւետարանագիրն, էջ 3. որտեղից այս մի պատառիկը քաղուած է: Դնում ենք կարեւոր տարբերութիւնները միայն:
 2 Մաթթ. ժ. Գ 28
 3 փայլեցին
 4 հանդերձ նորա եղեմ որպէս
 է Տէ՛ս Մաթթ. ժ. Է 1-3:
 4 պատճառ է ասել

եւ զներքինս առհասարակ ունի ընդ իշխանութեամբ. վասն այնորիկ զմինն վախճանեալ եւ զմիւսն չեւ եւս այնպիսի ինչ չարչարեալ ի մէջ ածէ: 12 Եւ զհինգերորդ պատճառսն՝ 1 աւետարանչին յայտնեալ է, զի մխիթարեսցէ զՊետրոս եւ զայլսն, որք ի չարչարանացն զանգիտեին, եւ զարթուցանէ՝² զմիտս նոցա: 13 ³Եւ եկեալ Մովսիսեանցն՝ չկային, ասէ, լուռ, այլ խաւսեին վասն փառաց, զոր կատարելոցն էր յերուսաղէմ, այսինքն՝ զչարչարանսն եւ զխաչն, զոր միշտ փառս կոչէ. Ահա ամպ մի լուսաւոր հովանի եղի ի վերայ անցա, ձայն եղի յամպոյն եւ ասէ. Դայ է Որդի իմ սիրելի, ընդ որ համեցայ, դմա լուարո՛ւք՝. եւ իբրեւ բարբառն եկն, նոքա անհետ լինեին: 14 Եւ զի՞նչ ասիցէ բարբառն. Դայ է Որդի իմ սիրելի. եւ եթե սիրելիս իցէ, զի՞ այդչափ զանգիտես, Պե՛տրէ, պարտ եւ պատշաճ էր քեզ յանձնէ իսկ ի վաղուց հետէ եւ զաւրութեանն զիտակ լինել եւ առ յարութեանն հաստատուն. բայց քանզի չառեր ի միտ, գոնեայ ի Հաւր բարբառոյն քաջալերեա՛ց. զի եթե զաւրաւոր իցէ Աստուած, որպէս եւ է իսկ, կարի իսկ յայտ է, եթե եւ Որդին այնպիսի է: 15 Եւ արդ մի՛ ինչ զանգիտեր ի չարչարանացն. ապա եթե չեւ ինչ վստահ լինիցիս, գեթ զայն ածըն՛ր զմտաւ, զի ե՛ւ Որդի եւ սիրելի Որդի. Դա է, ասէ, սիրելի իմ Որդի. եթե սիրելի իցէ, ապա չէ պարտ զանգիտել, քանզի ո՛չ ոք սիրիցէ զՈրդի եւ տարապարտ երաշխի տայցէ: 16 Եւ արդ, մի՛ ինչ խռովիցիս. զի թեպէտ եւ բերապատիկ սիրիցես, ո՛չ այնչափ ինչ սիրեսցես, որչափ ծնաւորն ինչ սիրեսցէ. ընդ որ հաճեցայդ, ասէ, որ զի ծնաւն սիրէ. այլ զի հաւասար նորին է ամենայնիւ, եւ համակամ, համատիպ, եւ

այնու իսկ երեւի կրկին սէրն, մանաւանդ թե երեքկին իսկ. զի Որդի է, եւ սիրելի Որդի, եւ ընդ նա եւ եթէ է հաճեալ. եւ զի՞նչ է՝ ընդ նայն հաճեալ, որպէս զի ասիցէ, թե ի նա հանգուցեալ եմ, եւ վասն այնորիկ ամենայնիւ նորին զուգական եւ նորին համեմատ եւ ընդ նմին միաբան, եւ կամք նորա՝ եւ Հաւրն. եւ կա մշտնջենաւոր մի Որդի ընդ միւս Ծնաւորին: 17 Դմա, ասէ, լուեսջիք. որպէս զի եւ ի խաչ կամիցէ ելանել, մի՛ ինչ ընդդէմ դառնայցէք: 18 Եւ իբրեւ լուան զայս, ասէ, անգան ի վերայ երեսաց իւրեանց եւ երկեան յոյժ, եւ մատուցեալ Յիսուս՝ բուռն եհար գնցանէն եւ ասէ. Մի՛ երկնչիք. ամբարձիմ զաչս իւրեանց, եւ ո՛չ զոք տեսիմ, բայց միայն զՅիսուսէ՛. զմտաւ ած, զի ի խաչ ելանելոց էր Քրիստոս, վասն իւր ուրախ էր եւ վասն խաչահանուցն տրտում էր: 19 Նոյնպէս եւ մեզ պարտ է լինել. որչափ զրկիցիմք, զզրկիչսն աշխարհացուք. զի մեզ անդի բազում բարութիւնք են, եւ նոցա հակառակն:

20 ⁴Նորին, ի բանէն՝ Իբրեւ ելանէր յերուսաղէմ:

21 Յայնժամ մատեան որդիքն Զերեղեայ եւ ինդրեին զգահերէց զիսաւորութիւնն. Կամիմք, ասեն, զի մի ընդ աջմէ փումմէ, եւ մի ընդ ահեկէ նստիցիմք:— 22 Կարէ՞ք, ասէ, զբաժակն ըմպելի՞, եւ զմկրտութիւն կոչել զմահն. զի ցուցցէ՝ որչա՛փ սրբութիւն լինելոց է ի չարչարանացն նորա ամենայն աշխարհի. եւ նոքա ասեն. Կարեմք. առ յաւժարութեանն վաղվաղակի յանձն առնուին. եւ չեւ եւս ⁵Իմա-

1 ւետարանիչն իսկ յայտ առնէ՝ զխաչին փառաւորութիւնն
2 զարթուցանիցէ
3 եւ եկեալքն
* Մատթ. ԺԷ 5

բ Մատթ. ԺԷ 7-8

4 Հմտ. նոյնը՝ Ոսկեքերան, Յաւետարանագիրն, էջ 42-49. որտեղից այս ամբողջ կտորը փառաւորութեան յատուց է բերուած: Դնում ենք մի քանի համեմատարար կարեւոր տարբերութիւններ:

բ Տէ՛* Մատթ. Ի 20-22:

5 իմանային զոր ինչ

ցան զոր ասացն, այլ ակն ունեին լինել զոր խնդրեինն: 23 Իսկ նա զի՞նչ. Զբաժակն ըմպիցե՛ք եւ զմկրտութիւնն, զոր եւ մկրտելոց եմ, մկրտեսցի՛ք. բայց նստուցանել ընդ աջմէ եւ ահեկէ ո՛չ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ ի Հաւրէ իմէ՞: 24 Յայնժամ տասուցմն բարկացան ի վերայ երկուցն. եւ առ այն զի՞նչ Քրիստոս. կոչեաց զնոսա առ իմնն եւ ասէ. Հեթանոսաց իշխանն իւրեանց տիրեն, եւ առ իս որ կրտսերն է, նա է երեց՞. եւ զի ո՛չ վայրապար ինչ ասեմք զայս, արդեամբքն իսկ, զոր յառնիցեմք եւ չարչարիցեմք, առնուցուք աւրինակ զբանիցդ, 2 զի եւս մեծամեծս արարի. զի թագաւոր եմ վերին զաւրութեանցն, յանձն առի լինել մարդ եւ արհամարհել եւ թշնամանել, եւ չհամարեցայ զայն ամենայն³ բաւական, այլ եւ ի մահ եւս եկի. վասն որոյ եւ ասեի իսկ, եթե որպէս՝ Որդի Մարդոյ ո՛չ եկն պաշտաւն յումեմէ առնուլ, այլ պաշտել եւ տալ զանձն իւր 4 փրկութիւն փոխանակ բազմաց՞: 25 Եւ ընդ որպիսեա՞ց ուրուք. ընդ թշնամեաց եւ ընդ ատելեացն Աստուծոյ. դու 5 թե խոնարհեսցիս, ասէ, վասն քո խոնարհիս, իսկ ես ո՛չ վասն իմ ինչ, այլ վասն քո: 26 6 Եւ արդ, մի՛ ինչ կասկածեսցիս, եթե պատիւ բառնալոց է վասն խոնարհութեանն. զի որչափ խոնարհիս, ո՛չ այնչափ ինչ կարիցես իջանել, որչափ ինչ Տէրն քո էջ. այլ սակայն իջանելն նորա ելանել ամենեցուն եղեւ եւ փառաց նորա եւս առաւել յայտնութիւն: 27 Զի մինչչեւ 7 մարդն

լինէր՝ ի հրեշտակացն եւ եթ ճանաչիւր. իսկ յորժամ մարդն եղեւ եւ ի խաչ ել, ո՛չ միայն ի փառացն չնուագեաց, այլ եւ միւսն եւս ի վերայ նորին՝ առ ի յաշխարհս⁸ ճանաչելոյ:

1 Նորին Յովհաննու՝ ի Մեկնութենէ Առաքելոյն, յերրայեկոցոց թղթոյն, ի բանէն՝ Հաւատովք արար զատիկն՞:

2 Եւ որ ոք ասէր, թե եւ Քրիստոս տրտմէր եւ հոգայր եւ որպէս մարդ կայր յաղաւթս, ո՛չ դանդաղեի ասել, եթե Քրիստոս վասն աշխարհի կայր յաղաւթս եւ վասն անհաւատիցն տրտմէր եւ հոգայր, եւ ո՛չ վասն անձին ինչ: 3 Քրիստոս ո՛չ կարաւտանայր Հաւր, այլ ճոխութեամբ առնէր զինչ կամէր: 4 Դու նախ զայն խոստովանեա՛յ, թե չկարաւտանայր Հաւր, ապա եւ ես ցուցից քեզ, եթե յաղաւթսն կալ զիջանելով էր ըստ մեզ: 5 Որպէս ոք ի վարդապետաց, յորժամ զանուն գրոյն ըստ տղայական բարբառոյն ասիցէ, չասես թե չգիտաց. յորժամ հարցանիցէ, թե՛ ո՞ւր է այս նիչ զիր, չասես եթե՛ անտեղեակ է: 6 Ոչ առ կարաւտութեան ինչ կայր յաղաւթս, այլ վասն զմեզ յորդորելոյ ի հանապազորդ յաղաւթսն. առ մերոյ աւրինակի էր ամենայն խոնարհութիւն նորա, եւ զիւր ինչ հայցուածս ընոյր ի Հաւրէ, զի չէր ինչ նմա հարկ ի խաչ ելանելն. եթե չէր կամեցեալ, ո՛չ էր խաչեալ, այլ կամեցեալ փրկել զմեզ՝ ինքնական կամաւք խաչեցաւ:

« Մատթ. Ի 23
 ք Հմմտ. Մատթ. Ի 24-27:
 1 առնիցեմ եւ չարչարիցեմ
 2 ես եւս
 3 միայն
 4 փրկանս ընդ բազմաց
 5 Մատթ. Ի 28
 6 եթե խոնարհիս
 7 եւ արդ մի՛ կարծիցես, եթե զպատիւն բառնայցես
 8 մարդ լեալ

1 Երանելոյն Եւսեբէի եպիսկոպոսի Եմացոյ՝ ի խաւսիցն, որ յերուսաղէմ, վասն հաւատոց՝ ի Զարչարանաց նառէն, ի բանէն՝ Իսկ զչարչարանացն լոնել ինչ պարտիցիմ:

2 Գրեալ է՝ Յետ պատառոյն եմուս սատանայ՞. ո՛չ եթե հացն զաւրացոյց ի

8 յաշխարհէ
 ք Եբբ. ԺԼ 28

նմա զկամս թշնամոյն, այլ շնորհքն յանդիմանեցին զանարժանն իբրեւ զչար արժանաւոր. երթեալ մատնէր այնուհետեւ ի չար որս՝ յանձին կորուստ, եւ ո՛չ եւս լսէր, թե մի՛ արասցես, այլ թե՛ Զոր առնելոց ես արա՛ վաղվադակի՞ք. պատրաստ ես ամենայնի ամենեւին: 3 Եւ ո՛չ էր Յիսուս մարմնով աստ ի ներքս, այլ արտաքոյ. փութայր մտանել այսր, զի հաստատեսցէ, կանգնեսցէ նշանակ յաղթութեան, զի աստ խայտառակեալ կշտամբեսցէ զթշնամին եւ սկիզբն փրկութեան արասցէ աշխարհի. աշակերտքն արգելուին, եւ նա ո՛չ անսայր, թեպէտ եւ բազում անգամ խոյս տայր, ո՛չ զանգիտեալ կամ երկուցեալ, այլ ժամանակի սպասեալ. ո՛չ զի զժամանակս խտրեսցէ, այլ զի խորհուրդն, յորում ժամանակս կատարեսցի՝ զատիկ ընդ զատիկ, զենումն ընդ զենման. զի գառնն փոխանակ ոչխարաց մատնիցի, արիւն ընդ արեան, փայտ փոխանակ փայտի: 4 Մինչ ոչն սպանանին՝ խայտայր. յորժամ իմացաւ, ժամանակն արգուին, եւ ո՛չ անսայր. մի՛ ինչ զանգիտել եւ մի՛ ինչ խռովել ընդ ճառս չարչարանացն. մի՛ ումեք ասել, որպէս Պետրոսն ասաց թե՛ Քա՛ւ լիցի քեզ, Տէ՛ր. զի մի լուիցէ թե՛ Ե՛րթ յետս, սա՛տանայք. զի որ ընդ չարչարանս Քրիստոսի դժկամակ լինի, զմահն սատանայի ո՛չ կամի: 5 Մատնիչքն ելեալ ի խնդիր իբրեւ զմատնիչ, եւ նա երթեալ կայր կազմ՝ ո՛չ ի զանխուլ տեղիս, այլ զոր եւ մատնիչն ճարտար գիտէր. առ ձեզ է տեղին, եւ զի՞նչ ինչ այն, որ ո՛չ առ ձեզ իցէ. եւ մաւտ ի տեղին, զոր դուքն այլում ցուցանէք, եկեալ հասանէր մատնիչն. բազում ամբոխ ունել եկեալ որդին սատանայի իւրով հարբն՝ չարութեամբ: 6 Քանզի նա առ Ադամ իբրեւ զբարեկամ մատեալ, եւ

մատուցանէր իբրեւ զգործ թշնամոյ. իբրեւ զմարդ խաբեաց, պատրեաց եւ յաղթեաց, եւ սա զնենգութիւնն համբուրելովն թաքուցանէր, այլ յանդիմանեալ կշտամբէր. Համբուրելով, ասէ, եկիր մատնել. չհրաժարեմ, արա՛յ զոր կամիսդ. դու քեզն եղեր պատճառ չարեաց. զայս առ մատնիչն, եւ յունաւղսն ասէ. Զո՞ խնդրէք. – ԶՅիսուս նազարացի. – ես եմք, ասէ. չհրաժարեմ, չփախչիմ, քանզի յայդ եկի եւ ի սոյմ ծնեալ եմք եւ ընդ բարբառելն զարկան առհասարակ մատնչաւն հանդերձ զգետնի, զի յայտնի լիցի, թե կամաւ եկն յունել. զի եթե բարբառոյն չհանդուրժեցին, զիա՞րդ կարեին ակամայ ունել: 7 Լային դասերքն Երուսաղեմի ի դէպ ժամանակի, եւ ո՛չ գիտեին՝ զո՞ արժան է լալ. Լացէ՛ք, ասէ, գճեզ եւ զորդիս ձերք, մի՛ զիս. զի ես զոր ինչ կամեցայ՝ զայն կատարեմ: 8 Ծառէ ոք զմեր փրկութենէն ուրախութեամբ ելեալ Յիսուս երթայր ի մէջ երկուց աւազակաց, զի կատարեսցէ զայն, թէ՛ Ընդ [ան]աւրեմս համարեսցիք. երախտաւորն ընդ աւազակս, անմեղն ընդ մեղաւորս՝ բարիոք եւ գեղեցիկ եին խառնուրդքն, եւ աւր խաչելութեանն՝ աւր յանցանացն Ադամայ: 9 Ի վեցերորդ աւուրն ստեղծաւ Ադամ, ի նմին աւուր յանցեաւ. հնազանդ եղեւ Յիսուս կրել զչարչարանս, զի յորում ժամու պարտեցաք, ի նմին եւ յաղթեսցուք: 10 Փայտ ի դրախտին՝ փայտ խաչի. անդ կին, որով մեղք մտին յաշխարհ, եւ աստ կոյս, որ կայր եւ լսէր՝ Սա մայր քոք: 11 Զգեաց Ադամ յայսմ աւուր չարաչար զձեռն իւր, պարզեաց եւ Յիսուս գեղեցիկ զսուրբ բազուկն. Ադամ մերձեցաւ ի ծառն եւ փայտն չարաչար, եւ Յիսուս բեւեռեաց զոտս եւ

ա 3*ՎԸ. ԺԳ. 27
 բ 3*ՎԸ. ԺԳ. 27
 գ ՏԵ՛՝Մ՝ԳԷ. Ժ.Գ. 22-23:

դ Ղ.՝Կ. ԻԲ 48
 է 3*ՎԸ. ԺԸ 4-5. 7
 զ ՀմԳ. 3*ՎԸ. ԺԸ 37:
 ի ՏԵ՛՝Ղ.՝Կ. ԻԳ 28:
 ը Ե՝՝Ն՝Գ. 12. Մ՝ԳԷ. ԺԵ 28
 ր 3*ՎԸ. ԺԹ 27

զձեռս ի խաչին. բարիոք Ադամ առ ցան-
գութեանն ճաշակեաց զպտուղ ծառոյն, եւ
Քրիստոս ճաշակեաց զքացախ եւ զլեղի
դառնութեան: 12 Ադամ լուաւ եթե՛ Փուշ
եւ տատասկ բերցէ քեզ երկիր՞, եւ Յիսուս
պսակ ի փշոց ընկալաւ. Ադամ ընկալաւ ա-
նէծս, եւ Յիսուս աւրհնեալ ընդ այլոց ա-
նիծից՝ կախեցաւ իբրեւ զանիծեալ զփայ-
տէ. իրք կարեւորք, զի ուսցուք, թե ո՛րպէս
մարդիկ մեռանին, եւ ո՛րպէս Աստուած
կամաւք, եւ ո՛չ ակամա մեռանի: 13 Որ
ընդ բնութեան կարեաւք եին՝ նոցա
բարձքն խորտակեցան, զի ըստ բնու-
թեանն նոյնպէս եւ զմահն կրեցին. իսկ որ
իշխանութիւն ունէր դնել զանձնն, եւ նա
ո՛չ էր ըստ բնութեան կարեաւք. որպէս ի
կուսէն կամաւ, եւ ո՛չ ակամայ՝ առ մար-
մին, նոյնպէս ի խաչին կամաւ, եւ ո՛չ ա-
կամայ՝ արար որոշումն իւր հոգոյն ի
մարմնոյն. Հայր, ասէ, ի ձեռն քո աւանդեմ
զիդի իմ՞: 14 Եւ ո՛չ ամբարշտացն, զոր
վերն ի վայրն պարսաւեն՝ այն են զար-
մանք, զի կամաւ եւ ո՛չ ակամայ մեռանի,
այլ եթե ցաւոց բռնութեամբ, կամ այլ ու-
րուք հարկաւ. իսկ որ ինքն հրաման տացէ
մահու, յորժամ ինքն կամաւ արձակէ զհո-
գին, եւ արդ, իցէ՞ արդեւք Միածին յամե-
նայնի. զի որպէս ի Հաւրէ միայն ծնաւ եւ
ի Կուսէ ըստ մարմնոյ ծննդեանն, նոյնպէս
եւ ի մահուանն միայն՝ կամաւ, եւ ո՛չ ա-
կամա մեռաւ:

15 Նորին եւսերի, առ որ ասեցն եթե՛
Ընդէ՞ր Քրիստոս մարմնով երեւեալ. ի
բանէն՝ Մի՛ ո՛ր ասիցէ, եթե ընդէ՞ր եկն
Քրիստոս:

16 Մի՛ զերխտաւորութիւն մարդա-
սիրութեանն ապախտ համարել. մի՛ զի
վասն մեր անսայ լինել մարդ՝ արհամար-
հիցեմք զբնութիւն աստուածականս:
17 Հայիս ի ծառայական կերպարանս, այլ

տե՛ս զնորին զաստուածագործ զսքանչե-
լիսն. Հայիս ի մեռեալն, այլ տե՛ս նորին
յարուցեալ զմեռեալն չորեքաւրեայ. Հայիս
քաղցեալ, այլ տե՛ս նորին յագեցուցեալ
զբանակս հազարաւորս: 18 Հայիս, որ չո-
գաւն ի հարսանիսն, այլ տե՛ս նորին փո-
խեալ զջուրն ի գինի՝ իբրեւ զԱստուած.
Հայիս ննջեալ ի նաւին, այլ տե՛ս նորին
սաստեալ ալեացն եւ կարկափեցուցեալ.
Հայիս ընդ այն, որ յերկրին գնայր, այլ
զարմացի՛ր ընդ նորին, զի ի վերայ ա-
լեացն շրջէր: 19 Հայիս ընդ այն, որ ետ
հարկս, այլ տե՛ս զայն, որում ծովն հար-
կատու լինէր իբրեւ Տեառն. Հայիս ընդ
մկրտելն ի Յովհաննու, այլ լո՛ւր՝ ով ինչ
Յովհաննէս զնմանէն, եթե՛ Որ ի վերուստն
եկեալ է, նա ի վեր է քան զամենայն՞. ո՛չ
քան զիս միայն, այլ եւ քան զամենայն.
ո՛չ քան զհրեշտակս եւ զհրեշտակապետս
միայն, այլ եւ քան զամենայն երեւելիս եւ
աներեւոյթս: 20 Լսես, եթե՛ ծնաւ իբրեւ
զմանուկ, այլ եւ զայն իմացի՛ր, զի ի Կու-
սէ եւ կուսական ծնունդն. եւ թեպէտ եւ
խանձարրապատ եղեւ եւ ի մտուր եղաւ,
այլ աստղն իբրեւ Տեառն յերկնից գուշա-
կէր: 21 Եւ թեպէտ ի Հերովդէէ խնդրեցաւ
սպանանել, այլ եւ ի մոգուցն առնոյր պա-
տարագս եւ երկրպագութիւնս: 22 Եւ թե-
պէտ աճէր եւ զարգանայր հասակաւ իբրեւ
զմարդ, այլ մտեալ յիւր տաճարն՝ ուսու-
ցանէր զվարդապետսն աւրինաց իբրեւ
զԱստուած: 23 Եւ թեպէտ գայր առնուլ
կնիք ի Յովհաննէ, այլ լսէր ի նմանէ. Ինձ
պիտոյ է ի քեզ մկրտի, եւ դու առ ի՞ս
գասս: 24 Եւ թեպէտ եւ մտանէր ի տունն
մեղաւորաց, այլ ոչ ինչ առյարէր ի նա
պղծութիւնքն՝ առ ամենասուրբն: 25 Եւ
թեպէտ եւ մերձեցաւ ի կինն մեղաւոր, ո-
չինչ հպեցաւ առ նա մեղքն, այլ եւ բազ-
մապատիկ ի մեղացն առնէր հալածականս

« Եւ. Գ. 18
բ Գ. 4. Ի Գ. 46

գ Յ. 1. Գ. 31
դ Մ. 7. Գ. 14

ի մեղաւորացն զաւրութիւն նորա: 26 Եւ թեպէտ ունեին եւ կապերն, զի կանխասացն կատարեսցի, կամեցաւ, եւ կալան. յաւժարեցաւ, եւ կալան եւ ածին. վկայէ բարբառն, որով յետս երթալովն զարկան զգետնի. ո՛չ եթե յերկինս ելին եւ կալան, այլ ինքն կամեցաւ եւ եկն յերկիր ի կալանս. կալան՝ ո՛չ իբրեւ զպարտեալ եւ զյաղթեալ, այլ զինքնակամն յաւժարեալ՝ ըստ յառաջագոյն ասացելոցն: 27 Կալեալն յաղթէր, կապեալն ունէր. հարկանեին, զի զոր ինքն ասաց կատարեսցեն. խաչեին՝ զկամեցեալն, խաչեին՝ զյաւժարեալն, որ բանիւք եւ արդեամբք յառաջագոյն գուշակեալ: 28 Հայեին ի խաչն խաչհանուռնքն, դղրդեին ամենայն արարածք, երկինք սգային, արեգակն խաւարէր, աւգք մթանային, երկիր շարժէր, վէմք պատառեին, գերեզմանք բանային, մեռեալք յառնեին, հոգին զվարագոյրն պատառէր եւ վերանայր:

29 Պիտառէ այսմ խորհրդոյս երանելին Կիրեղ Ադեֆսանդրլոյցի եպիսկոպոսն, զոր գրէր առ Թէոդորիտոն հերձող Կիրոս քաղաքի՝ ԲԺ.ամ գլխոյն նզովիցն եւթներորդ բանն, հանդերձ մեկնութեամբն. գտցեալ յիրում տեղուք: 30 Զուգակցէ ի նոյն խորհուրդն երանելոյն Փիլիֆսիանոսի՝ նարբոկայ եպիսկոպոսի, նախագրեալն ի խորհուրդն, եթե ո՛չ յախտիցն ընկալաւ Քրիստոս յերեսելն մարմնով՝ ԻՆ. բանէն, որ ունի զայս ինչ. Վասն զի ամենայն խաշիմն հոգեւորք:

1 Երանելոյն Յովհաննու Մայրագոմեցոյ՝ ի հաւատոյ բանէն:

2 Զամենայն կեանս մարմնականս՝ ի ցաւակերպ իջիցն մինչեւ ի նստելն ընդ աջմէ Հաւր, ամենակար զաւրութեամբն է տեսանել՝ ըստ Աստուածային Գրոց, եւ ո՛չ տկարութեամբ, որպէս եւ ասէ մարգարէն. եթե տկարանայցէ՞ ինչ առաջի մնացորդաց ժողովրդեանս այսմիկ, եւ թե առաջի ի՞մ

տկարանայցէ՞: 3 Քրիստոս Աստուծոյ զարութիւն՝ զաւրութիւն Աստուծոյ եղեւ, ի փրկութիւն ամենայն հաւատ[աց]ելոց. զաւրութիւն Բարձրելոյն հովանի եղեւ ի վերայ Կուսին՝ Աստուծոյ զաւրութեանն երեւեցելոյ մարմնով. երգեին հրեշտակք՝ որոյ յառաջ քան զարեւ Էր՞, հրաշապէս եւ սփանչելի յամենայն երկրի՞. որում հովիւքն երկրպագաւք, մոգք պատարագաբերք, որոյ փախուստն զեգիպտական աստուածսն առհասարակ տապալեաց, զՀերովդէս տղայակոտորումն՝ յորդիսն նորա, եւ զնոյն ինքն որդնատրոր դառն ախտիւ սատակեաց: 4 Նշդեհանալովն ի Նազարեթ եւ պանդխտանալովն ի Կապիառնաումն՝ զմարգարէութիւնս լնոյր. մկրտելովն Յորդանան զվերնակամարն երկնից փեռեկէր. Հոգին Սուրբ աղանակերպ երեւմամբն պիտառոցէր, Հայր ի վերուստ վկայէր. Դու ես Որդի իմ սիրելի՞: 5 Ի վերայ Կարապետին հրամանք Աստուածութեանն բարձրանային՝ գոչել, աղաղակել եւ զամենայն տարերքս լցուցանել աւետեաւք գալստեան Որդոյն, զորոյ գէական փառսն զաստուածավայելուչսն յերկիր երեւեցոյց: 6 Եւ Մովսէս աւետարանէր Իսրայելի ի նա դաւանմամբն եւ ասէր. Տէր Աստուած ի միջի քում՞ մեծ եւ հզաւր. յերկնից լսելի եղեւ բարբառ նորա, եւ յերկրի եցոյց քեզ զՀայր իւր մեծ: 7 Ըստ այսմ դիմաց եւ զաւրութեան են կարգք տնաւրէնութեանն Քրիստոսի եւ ի փորձանսն սատանայի, յոր եռամարտիկ բանագիրնութեամբ զԴիապաւղոսն. եւ յառնելն զՋուրն գինի եւ յագեցուցանել զխումբս ժողովրդոցն դոնիւ հացիւքն. եւ ի գնալն ի վերայ ծովուն, ի սաստել ա-

՞ .Ձ.Վ. Ը 6
 ՚ Ը Կ.Բ. Ը 24
 ՚ Ս.Պ. Ը 17
 ՚ Տէ՛ս Ս.Պ. Ը 10:
 է Մ.Պ.Բ. Գ. 17. Պ.՛՛ Մ.Պ.Գ. Ը 11. Գ.՛՛ Գ. 22:
 շ Բ Օ.՛. Գ 15

լեացն, ի սաստել զիւացն, ի բժշկել զհիւ-
 ւանդս, ի կենսագործել զմեռեալս, եւ յամե-
 նայն գործսն, զոր արարն, ասէ աւետարա-
 նագիրն թե՛ Իշխանութեամբ էր բանն նո-
 րա՞: վասն որոյ եւ ասէ իսկ. Թեեւ ինձ ո՛չ
 հաւատայք, սակայն գործոցն հաւատա-
 ցէ՛ք: 8 Արդ, ըստ տեսակին եւ ըստ տար-
 րական գոյացութեանն հաւաստեալ գի-
 տեմք՝ եւ ճշմարիտ մարդ է. եւ վասն Հաւր
 եւ Հոգոյն սքանչելեացն, զոր արար, հա-
 ւատամք, եթե նոյն ինքնն եւ Աստուած
 ճշմարիտ է. ամենայն գործք նորա զաւ-
 րութեամբ են: 9 Բայց զայն ինչ, որ ո՛չ
 աստուածութեանն պատշաճի եւ ո՛չ մարդ-
 կութեան նորին, զայն ո՞ւմ աւլարեսցուք,
 զո՞ր արասցուք պարտ. քանզի արեւա-
 քիրտն լինել արտաքոյ է ամենայն բնու-
 թեանց, ո՞ր մարթի հաւատալ. քանզի Աս-
 տուած եւ մարդ եւ եթ գիտեմք զՔրիստոս,
 եւ այլ ոչինչ, եւ այս ո՛չ յԱստուած յարի
 եւ ո՛չ ի մարդութիւն, ո՛չ ի նշանս եւ ո՛չ ի
 կարիս եւ ո՛չ ի հաւատոյ լրութիւնս: 10 Ահա նախ
 Դաւիթ իսկ Հոգովն Սրբով
 յայտնէ գերկիւղէն, թե պարսաւանաց
 մասն՝ ասելով ցԱստուած. Ատեցեր զայն-
 սիկ, որ պահեմ գերկիւղ սնտոի՞. եւ Յով-
 հաննէս ասէ. Որ երկնչի՛ ո՛չ է կատարեալ՞.
 եւ Եսայիաս ասէ. Յիշեա՛ զիմչ ոմ եիր, եւ
 երկեար ի մահկանացուէ մարդոյ՞: 11 Արդ,
 զպարսաւ երկիւղի եւ զանկատարելու-
 թեան մեք ի վերայ Քրիստոսի ո՛չ դնեմք,
 բայց միայն գովութիւն: 12 Նոյնպէս եւ
 վասն տրտմութեան տեսցուք, եթե ո՛չ
 վասն իւր ըմբռնելոյն ի զբաժակ մահուն
 տրտմեցաւ, այլ եթե վասն անհաւատից
 կորստեան. առաքեալ ասէ թե՛ Որ ըստ Աս-
 տուծոյ տրտմութիւն է, ապաշխարութիւն ի
 փրկութիւն առանց զղջանալոյ գործէ. իսկ

որ ըստ աշխարհիս տրտմութիւն՝ մահ
 գործէ՞: 13 Արդ, յայտ է. եթե վասն իւր
 տրտմեցաւ՝ մահածին է տրտմութիւնն, իսկ
 եթե վասն աշխարհի տրտմեցաւ՝ կենսա-
 ծին. անգեղջագործ փրկութեամբ եհատ
 զամենայն արտաւար յերեսաց ամենայն.
 վասն այնորիկ ասէ սուրբն Գրիգոր. Ցան-
 գալի եղեւ մահ մահուամբ Աստուծոյ մե-
 րոյ: 14 Վասն այնորիկ ասէ մարգարէն.
 Պատուական է առաջի Տեսոն մահ սրբոց
 իւրոցէ. վասն քաջութեան եւ առանց եր-
 կիւղի մեռանելոյ ասաց զմահ սրբոց յաչս
 Տեսոն պատուական. եթե սրբոց այնքան
 փառաւորութիւն գործեաց առանց երկիւ-
 ղի մեռանելն, ո՛րչափ եւս առաւել Որդոյն
 Աստուծոյ մեծ վայելուչ էր, եւ յաւէտ պա-
 տուական յաչս Հաւր՝ քաջութեամբ, ա-
 ռանց երկիւղի մեռանելն: 15 Այսուհետեւ
 զքաջութիւնն Քրիստոսի պատմեսցուք եւ
 գերկիւղէ եւ զանգիտելոյ մի՛ ճառեսցուք,
 զի մի՛ հաւասարեալ գտցուք Սիմոնի եւ
 Սամոստացոյն, եւ նոցին նմանեաց: 16 Ա-
 հաւանիկ երկեան աշակերտքն ի նաւին, եւ
 Տէրն անգոսնեաց զնոսա, վասն զի չեւ եւս
 առեալ էին զՀոգին Սուրբ լրութեան, ա-
 սէր. Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք,
 սա՛կաւահաւատք: 17 Եւ Պետրոս առանց
 երկիւղի գնայր ի վերայ ջուրցն, եւ ի դի-
 զանել փորձչին զկոհակածեւ ալիսն ի վե-
 րայ նորա՝ երկեաւ, եւ ընդ երկնչելն ապա
 սկսաւ ընկղմել. զի երկիւղն մերկ արար
 զնա ի հաւատոցն. վասն այնորիկ եպե-
 րեաց զնա Տէրն եւ ասէ. Թե՛րախաւատ, ըն-
 դէ՞ր երկմտեցերք: 18 Արդ, յայտնի է, զի
 երկիւղ ի թերահաւատութենէ է, եւ ո՛չ ի
 հաւատոց, եւ որ չեն ի հաւատոց՝ հեռի են
 յԱստուծոյ, եւ որ հեռի է յԱստուծոյ՝ մերձ
 է ի Բելիար: 19 Ապա ուրեմն հեռի է ի

ա Գուգ. Գ. 32. Հմմտ. Մարթ. Է. 29. Մարկ. Լ. 22:
 բ Յով. Ժ. 38
 գ Մարկ. Լ. 7
 դ Լ. Յով. Գ. 18
 ե Ես. Ծ. Լ. 12

զ Բ. Կ. Գ. Լ. 10
 է Մարկ. Ծ. Ժ. 15
 զ Մարթ. Բ. 26. Մարկ. Գ. 40
 ը Մարթ. Ժ. Գ. 31

Քրիստոսէ երկիրդ, զի ամենեւին Աստուած է եւ տուող հաւատոց եւ յաղթող յամենայնի: 20 Այսպէս ամենայաղթ զաւրութեամբն պատմեն աւրէնք եւ մարգարէք եւ կենդանատուր աւետարանն, եւ առաքեալքն եւ հարքն՝ զամենայն գործսն Քրիստոսի, զոր արար ի նշանս եւ զոր կատարեաց ի փրկութիւն մարդկան, եւ երկիրդ, որ զամենայն արութիւնս քաջութեանց մեղկեալ լուծանէ՝ ո՛չ ասացին ունել նմա:

1 1Երանելոյն Սեբերիանոսի սրբական եպիսկոպոսի, ի բանէ աւետարանի՞ն՝ Հա՛յր, եթե հնար է, անցցէ բաժակս այս յինէն՞, ի ճառէն՝ Յորժամ մեզ, ե՛ղբարք, վասն ողորմութեան քարոզելին արեւմտեան, յորժամ վասն աղբարտութեան եւ հիւրընկալութեան:

2 Եւ արդ, եկեսցուք ի բանն. Հա՛յր, ասէ, եթէ հնար ինչ իցէ, անցցէ յինէն բաժակս: 3 Բագում խնդրով՞ լի է բանս եւ 3սաստիկ ախտ բերէ հերձուածողացն՝ ո՛չ առ ի չարաչար ասելոյն⁴, այլ ի չարաչար իմանալոյ զայն՝ եթե հնար ինչ⁵ իցէ: 4 Ոմանք անվրէպ իմն առանց անցանելոյ հրամանս կարծեցին ի համբաւել ⁶ի մարմնեղէն, որ է բաշխ եւ բախտ եւ յառասպելանուն ծննդեանն հարկէ, թե այնպէս իւրաքանչիւր ումեք բաշխել⁷ ինչ իցէ ⁸ի ծննդեանէն: 5 Եւ ոմանք այլազգ թշնամանեն զպատիւ Միածնին. ծառայաբար ⁹իմն

հնազանդութիւն կցեցին յՈրդոյ¹⁰ Հաւր. քանզի ընդ իշխանութեամբ ¹¹Հաւր էր, ասեն, վասն այնորիկ ի կիր¹² արկանէ զայսպիսի¹³ պաղատանս: 6 Ո՞ր բան պատշաճ իցէ¹⁴ մեզ խնդիրս¹⁵ լուծանելոյ. ո՞ր միտք բաւական իցեն բա՛¹⁶ ¹⁷զմահաշունչ հերձուածողացն առասպելս առեղծանել. չմարթի այլ ուստեք, եթե ո՛չ անդատին ի ճշմարտութենէն առաւել: 7 Ա՛ւն, առ ¹⁸աստուածեղէն ի բարձրութիւնս իսկ ընթացուք, անդ՝ ի վերին Կենարարին տնտեսութիւնսն¹⁹, որ զամենայնս²⁰ առնէ եւ զբնաւ բարբառի, ո՛չ միայն ըստ պատուոյն, որ նմա վայել է, ²¹այլ ըստ տնաւրէնութեանն, որ մեզ պատշաճ է: 8 Եւ զի կարճառաւտ²² կտրեցից, եւ քանզի միշտ համառաւտս սիրեմ հասանել²³ եւ զբազումս սակաւուք առնուլ, յառաջագոյն գիտէր Կենարարն, եթե կարի կարեւոր են չարչարանքն. յառաջագոյն ճանաչէր, եթե ի փրկութիւն աշխարհի հաստատի խաչն, մահ կշտամբի եւ յարութիւն մատա[կա]րարի, եւ այնպէս գիտէր, մինչեւ յառաջագոյն ասէր աշակերտացն. Ահաւսիկ ելանեմք յերուսաղէմ, եւ Որդի մարդոյ մատնեսցի մեղաւորաց²⁴, եւ ձաղեսցեն զմա եւ իսախեսցեն, եւ յերիբ աւուր յարիցէք: 9 Այս բարբառ Աստուծոյ է, որ յա-

1 Տե՛ս Զ, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ 164:
 * Մ՝աբ. Ի.Չ 39. ԳԵ՛՝ Մ՝աբ. Ժ.Ղ 36. Ղ՝ու. ԻԲ 42:
 2 խնդրոք
 3 բագում սաստիկ ախտս
 4 ինչ ասելոյ
 5 չիք
 6 ի մարմնեղէն, որ է բախտ եւ բաշխ
 7 բաշխեալ
 8 ի ծննդեանէ
 9 հնազանդութիւն իմն

10 որդոյն
 11 ասեն, հօր էր
 12 չիք
 13 գայնպիսի
 14 է
 15 զխնդիրս
 16 չիք
 17 զբազմահունչ հերձուածողաց
 18 յաստուածեղէն բարձունս
 19 տնտեսութիւն
 20 զամենայն
 21 այլ եւ ըստ տնտեսութեանն
 22 կարճառոտս
 23 հատանել
 24 ի ձեռս մեղաւորաց
 * Տե՛՛ս Մ՝աբ. Ի 18-19. Մ՝աբ. Ժ 33-34. Ղ՝ու. ԺԸ 31-33. Հմմտ. Մ՝աբ. Ժ.Չ 21:

ու[ջա]գոյն գիտէ զհանդերձեալսն. Աստուծոյ, ¹որ նախ զփորձն գիտէ զիրացն Աստուծոյ, որ զմարդկեղէն իրս մատակարարիցէ: ¹⁰ Անդրէն ճայնատու լինի նմա առ այս Պետրոս՝ զնդացեալ խնայեալ ի մարմինն. Քա՛ւ լիցի, ^{ասէ}, Տէ՛ր, մի՛ լիցի քեզ այդ՞. եւ առ այն զի՞նչ Կենարարն. զայրանայ² ընդ տարածամ գուլթն, ³եպերէ զնա՝ անժամխնամն. Յետս ե՛րբք, ^{ասէ}⁴, յի՛նէն, սա՛տամայ. զի ո՛չ խորհիս զԱստուծոյ⁵, այլ զմարդկանէ՞: ¹¹ Բարիոք⁶ պատահէ բանին, եւ դու քննեա՛, եւ դէտակն ի վերայ դիցես. զի ⁷եթե լոկ ի բանիցն ծառասցես, ⁸բազում ինչ խրախ տես զԿենարարին՝ ո՛չ միայն տկարութիւն, այլ⁹ աստանդուլութիւն խորհրդոց բամբասես: ¹² Ո՛Տէր բարերար, ¹⁰Պետրոս յարածամ ըղձանայր թե՛ Քա՛ւ ¹¹լիցի քեզ, Տէ՛ր, մի՛ ի խաչ ելանիցես, եւ դու նախատեիր, եւ արդ, դու զնո՞յն աղաչես, որում մեղադիրն լինեիր, ¹²որ ոչ այս միայն ո՛չ վայել է, այլ եւ ո՛չ մարդոյ Հաստատնոյ: ¹³ Ո՞վ ¹³գովիցէ զզաւրավարն, որ յառաջ քան զպատերազմ բազում ինչ խոստանայցէ¹⁴ եւ մեծաւ համարձակութեամբ ¹⁵զթշնամիսն գոռասցէ, եւ ¹⁶ի խառնուրդս ճակատուն ի փախուստ դառնայցէ, եւ վատութեամբ զաւրութիւնն

աղարտեսցէ¹⁷: ¹⁴ Մինչչեւ եկեալ Քրիստոս¹⁸ ի չարչարանս՝ զայն, որ քաւէրն զնա ի չարչարանացն, ասէր. Ե՛րթ յետս¹⁹ յինէն, սա՛տանայ, զի ո՛չ խորհիս դու զԱստուծոյ, այլ զմարդկան. եւ որ ²⁰անարժանս զայսպիսի խորհուրդս Աստուծոյ համարէր՝ ի՞նքն իւր արդեաւք զայն²¹ ընտանեցուցանէր եւ աղաւթս ²²վասն այնր առնէր: ¹⁵ ²³Ո՛ հաստատութեանն, մանաւանդ եթե ամբարհաւաճութեամբ²⁴ այնոցիկ, որ լոկ բանիցն ծառայեն²⁵ եւ զամենայն յախուռն յանդգնիցին²⁶, եւ զաստուածականսն ²⁷այլ ընդ այլ ժպրհիս մեկնել, եւ զայն չկամիցին դիտել²⁸, եթե լոկ զբանն²⁹ ընդունելով՝ ո՛չ միայն քան զչայր խոնարհագոյն ցուցանեն զնա, որպէս փութանն, այլ եւ քան զբազումս³⁰ իմաստունս եւ զարդարսն³¹ նուազագոյնս, ³²եւ եթե բնաւ չունիցի իսկ զհաստատութիւն մարդկան: ¹⁶ Ո՞ք իմաստուն կամ արդար, կամ այլ ոք³³ ի մարդկանէ՞ ³⁴քաջութիւն վկայեաց, ուրանայցէ զանձինն³⁵ առաքինութիւն եւ թշնամանեսցէ³⁶ զխոստացեալ եւ ³⁷զյառաջագոյն խրոխտեալ

1 որ կանխէ բան զփորձ իրացն
 * Մատթ. Ժ. 9, 22
 2 զայրանայր
 3 եպերէր զանժամ խնաման
 4 չիք
 5 դու զԱստուծոյ
 ք Տէ՛ր * Մատթ. Ժ. 9, 23 :
 6 բարութ
 7 թէ լոկ բանիցն
 8 զբազում ինչ խախտես
 9 այլ եւս
 10 յորժամ Պետրոս
 11 լիցի, զի մի՛
 12 որ ո՛չ այս միայն չվայելէր
 13 գոչէ զգորաւոր
 14 խոստանայ
 15 ընդդէմ թշնամոյն գոռայցէ
 16 ի խառնուրդս ճակատուն

17 աղարտիցէ
 18 Քրիստոսի
 19 չիք
 20 անարժան այսպիսի
 21 զնո՞յն
 22 վասն այնորիկ
 23 Ո՛հ անմտութեանն
 24 ամբարհաւաճութեանն
 25 ծառայեսցեն
 26 յանդգնեսցին
 27 այլ ընդ այլոյ ժպրհիցեն
 28 գիտել
 29 զբանս
 30 զբազում
 31 արդարս
 32 եւ թէ բնաւ իսկ չունի
 33 ո՛ր ամենեւից
 34 ի բաշտութիւնս վկայեալ
 35 զանձին
 36 թշնամանիցէ
 37 զառաջագոյն խրոխտեալ զօրութիւնն

զգաւորութիւնն: 17 ¹Նոյնպէս եւ վատթար եւ ²ապաժամանակեայ է, որ մինչեւ ³զայլս խիզախեալ եւ յանձին ունել ⁴եւ զայլ խորհել՝ ի փորձոյ իրացն զանգիտեսցէ⁵. ո՛ր մահ սպառնայր մահու, ⁶այլ զյարութիւնն աւետիս տայր, ինքն զի⁶րդ էր, զի զանգիտէր ի խաչէն:

18 Զայս ամենայն ասացի առ ի յանդիմանութիւն այնոցիկ, որ⁷ բանիցն ⁸ծառայեն, եւ զճշմարտութիւնն վաճառեսցեն⁹: 19 Եւ արդ, զի⁹նչ յայտ ընդդէմ հակառակութիւն¹⁰ բանիցն կամիցի առնել, յորժամ ¹¹ճշմարտութիւնն անձինն միաբան գտանիցի հանապազ: 20 Եւ զի⁹նչ իսկ բնաւ միաբանութիւն ճշմարտութեանն առ կռիւ բանիցն իմանայցի¹². բանքն արդարեւ կռուին իսկ ընդ միմեանս, բայց միաբանութիւն աստուածեղէն պատգամացն կա մնա հաստատուն: 21 Եւ արդ, զլուծումն խնդրոյս¹³, որ ¹⁴առաջիկայս է, ինձ աշխատասէր բարութեւ պարտ է ասել, եւ ձեզ ուսումնասէր մտաւք լսել: 22 Յորժամ Տէրն ¹⁵ի խաչելութեանն մերձեցաւ ի կատարումն ամենայն տնտեսութեանն, յառաջագոյն զիտէր երանելին եւ միայն ¹⁶հզաւր եւ թագաւոր թագաւորաց եւ տէր¹⁷ տերանց, եթե բազում հերձուածողք

¹⁸յառնեն ընդդէմ ճշմարտութեանն եւ որոշեսցեն զաստուածեղէն ¹⁹զչարհարանսն, եւ աւտարոտի ինչ գործս ստաբանիցեն: 23 Եւ մանաւանդ անուանակիրք մոլորութեանն՝ ²⁰զՄանինէացոցն ասեմ աշակերտաց, որ յանդգնեցան ասել, թե ստուեր իմն եւ առաջաւք ցնորք եին Քրիստոսի չարհարանքն, որպէս ²¹թե ո՛չ մարմին առ իսկ, եւ խաչն կերպարանաւք էր եւ մարմինն ստուեր ²²ինչ եւ նմանութիւն, եւ ամենայն իսկ մատակարարեալքն կերպարանեաւք²³ եւ հովանի եւ ցնորք եւ առաջաւք եին, վասն այնպիսի հերձուածական²⁴ մոլորութեանն, զի²⁵ յառաջագոյն կարկեցոցանիցէ²⁶ զբերանս հերձուածողացն²⁷ եւ յայտ արասցէ, թե զայս մարմին, որ ընդ բազում կարեաւք մտանէ, սգեցաւ²⁸: 24 Որ զանգիտես ի չարհարանաց, ²⁹որ դողաս ի բռնութենէ մահու, որ խռովիս եւ տրտմիս ընդ վախճան կենաց՝ Այժմ, ասէ, անձն իմ խոռովեալ է՞, եւ դարձեալ. ³⁰Տրտում է անձն իմ մինչեւ ի մահէ. եւ դարձեալ. Հա՛յր, ³¹եթե հնար ինչ իցէ, անցցէ բաժակս այս յինէն³²: 25 ³²Մի՛տ դիր հաստատուեթամբ, եթե ստուերք ³³եւ ցնորք առաջաւք էր, ընդէ՞ր խռովէր, եւ³⁴

1 Ո՞ այնպէս
2 ապաժաման կայցէ
3 զայլ խիզախել եւ յանձն
4 եւ ի փորձոյ
5 զանգիտել
6 եւ զյարութեան աւետիսն
7 որք
8 ծառայիցեն, եւ զՏէրն թշնամանիցեն
9 վանառիցեն
10 հակառակութեան
11 նշմարտութիւնն անձինն
12 իմասցի
13 խնդրոցս
14 առաջի կայ
15 ի խաչելութիւն
16 հզորն, թագաւորն
17 տէրն

18 ընդդէմ նշմարտութեանն յանցելոց եմ
19 չարհարանսն, եւ օտար զգործս
20 գմանիկեցոց աշակերտացն ասեմ, որ եւ
21 թե եւ ո՛չ մարմին իսկ առ
22 ինչ էր
23 կերպարանոց
24 հերձուածողական
25 գմանիկեցոց աշակերտացն ասեմ, զի
26 կարկեսցէ
27 հերձուածողաց
28 զգեցաւ
29 որ դողայս ընդ վախճան
* Յ՝ՎԸ. ԺԻ՝ 27
30 եթէ անձն իմ տրտում է
բ՝ Մ՝ԳԷ. ԻՊ. 38. Մ՝ԷԳ. ԺԳ՝ 34
31 եթէ հնար ինչ իցէ, հայր, անցցէ յինէն բաժակս
գ՝ Մ՝ԳԷ. ԻՊ. 39. ԳԷ՝ Մ՝ԷԳ. ԺԳ՝ 36. ԳԷ՝ ԻԲ՝ 42:
32 չի՛ր Միտ դիր հաստատութեամբ
33 եւ առաջոք եւ ցնորք էին
34 չի՛ր

եթե կերպարան ինչ իրքն էին, որ գործեին¹, վասն է՞ր զանգիտէր. քանզի ի ստուերէ ոք չերկնչին², եւ ո՛չ ի լոկ կերպարանաց խռովի: 26 Կամի՞ս, զի³ ի պատմութենէ իմեքէ ցուցից հաստատագոյն զճշմարտութիւնն. մտին հրեշտակք ի Սողոմ, մարդիկ եին⁴ երեսաւք, եւ հրեշտակք եին բնութեամբ. յանդգնեցան Սողոմացիքն բռնադատել զնոսա իբրեւ զարս յաղտեղութիւն եւ յանարժան⁵ խարդաւանութիւն. եւ⁶ արդ, զի՞նչ գործեն հրեշտակքն. քանզի գիտեին հրեշտակքն⁷, թե չունէին մարմին, որ ընդ բնութեամբ մտանեին⁸, չխռովեցան, այլ կաց մնաց բնութիւն հրեշտակացն առանց խռովութեան եւ չկրեաց ինչ աղմուկ ի բքոյ կարեաց մարմնոց⁹. բայց Ղովտ, ¹⁰քանզի արդեւք արս համարէր, խռովեցաւ, թե գուցէ բռնադատութիւն¹¹ ինչ կրեսցեն, աղաչէր զկատաղեալսն:

27 ¹²Յետ սղի:

28 Եւ գայս ամենայն առ ո՞ր եղեւ ասել. զի չիք ինչ հաղորդութիւն ¹³առաջին ճառիս ընդ այժմուս, այլ զի ցուցից, ¹⁴թե ուր կերպարանք են, անդ երկիւղ չիք, եւ ուր ճշմարտութիւն է, անդ ստուեր չիք: 29 ¹⁵Բայց զի ամենեւին յայտ արասցէ¹⁶

Կենարարն, թե յո՞ր սակս ասաց զբանն եւ կտրեսցէ¹⁷ զմիտս հերձուածողացն, եւ տնկեսցէ¹⁸ զկրաւնն ճշմարտութեանն՝ ասէ ցառաքեալսն. Հոգիս յաւժար է, բայց մարմինս տկար է. նա զտկարութիւն մարմնոյն իւրում¹⁹ համարի, եւ դու զաստուածութեամբ²⁰ նորա ընկենուս զկարիս²¹. այլ թե ո՛չ փութաս²² գտանել զմիտս բանիդ²³, ²⁴գտանիցես թշնամանեալ զՔրիստոս:

30 ²⁵Յետ սղի:

31 Զի²⁶ ճշմարտութիւն ո՛չ երբեք արատի: 32 Եւ արդ, եթե մեկնութեանն միտ չդնես²⁷, այլ բանիցն²⁸ եւ եթ ծառայեսցես, գտանիցես զՔրիստոս վատասրտեալ եւ յոյժ խոնարհագոյնս²⁹ բարբառեալ՝ ո՛չ միայն քան զիւր ³⁰պատիւն, այլ եւ քան զառաքելոցն արութիւն. զի Քրիստոս ասէ. Այժմ ոգիս³¹ խռովեալ է. եւ Պաւղոս յորժամ³² չոգաւ ի կողմանս Պաղեստինացոց³³, եկն անդ մարգարէ ³⁴մի, որում անուցն էր Ագաբոս, եւ ասէ. Այսպէս ասէ Հոգից Սուրբ. զայրցն զայն, որոյ ³⁵գաւտիս է, կապեսցեն ³⁶Հրեայքն եւ տարցեն յերուսաղէմ³⁶. եւ իբրեւ արգելուին եղբարքն ամե-

1 գործէին
 2 չերկնչի
 3 զի եւ
 4 երեսէին
 5 յանարժանաց
 6 իսկ
 7 չիք
 8 մտանիցէ
 9 մարմնոյ
 10 քանզի արս արդարս
 11 բռնութիւն
 12 Տե՛ս Զ, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ 168:
 13 առաջին ճառին
 14 եւ ուր ստոյգ մարմին, անդ երկիւղ եւ տրտմութիւն
 15 բնաւ իսկ զի
 16 անիցէ

17 կտրեաց
 18 տնկեաց
 19 իւր
 20 զաստուածութեամբն
 21 զկարիսն
 22 փութասցիս
 23 բանին
 24 գտանիս իսկ թշնամանեալ զՏէրն
 25 Տե՛ս Զ, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ 169:
 26 քանզի
 27 չդնիցես
 28 բանից
 29 նուագագոյն
 30 պատիւ, նա եւ
 31 ոգի իմ
 32 իբրեւ
 33 պաղիստինացոց
 34 մի Ագաբոս անուցն
 35 գտիս այս իցէ, այսպէս
 36 հրեայք յերուսաղէմ
 * Տե՛ս Գ. Գրք. ԻԸ 10-11:

նեքեան զՊաւղոս եւ աղաչեին չերթալ յԵրուսաղէմ, ¹պատասխանի ետ արութեանն բարբառովն, մանաւանդ եթե քաջութեան եւ առաքինութեան ոգով՝ չկամեցուցիչսն. ²Զի՞ գործէք, զի կապանաց, այլ եւ մեռանելոյ պատրաստ եմք վասն անուանն Քրիստոսի: ³Պաւղոս այնչափ վստահութեամբ, այնպիսի խորխտանաւք, այնչափ համարձակութեամբ, ձայնատու լինի մահու, ²եւ առ ոտն հարկանէ եւ խշրէ զարհաւիրս մահու, եւ Պաւղոսի Տէրն ասէր. ³Այժմ ոգիս խոռովեալ. եւ ⁴Պաւղոսի սիրտն ճմլէր, իսկ Քրիստոս ⁵ոգւովն չափ խոռովէ՞ր արդեւք: ³⁴ Պաւղոս եւ պարծէր եւս⁶ ի նեղութիւնսն. Ո՛չ այսչափ միայն, ասէ⁷, այլ եւ պարծիմք եւս ի նեղութիւնս. քանզի գիտեմք, եթե ⁸նեղութիւն համբերութեան գործէ՞. ⁹եւ Պաւղոսի Տէրն ասէ. Տրտում է անձն¹⁰ իմ մինչեւ ի մահ. զի՞նչ տրտմութիւնն¹¹ պարծանաց իցէ. Պաւղոս պարծանս համարէր զչարչարանս, եւ որ զայն¹² զաւրացուցանէրն՝ Քրիստոս, տրտմութիւնն ինչ արդեւք զտնտեսութիւնն հաշուէր:

35 ¹³Յետ սղի:

36 Քանզի ո՛չ եթե նմա ինչ¹⁴ վնաս

չարչարանքն գործէին, այլ զայլս գայթակղեցուցանեին: ³⁷ Յաղաթս կացէ՛ք, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւնք. չասաց թե՛¹⁵ մի՛ մտանիցիմք ի փորձութիւն, այլ զի մի՛ մտանիցէք. ի ձեզ ¹⁶խնայեմք, այլ ո՛չ եթե ¹⁷զանձն կամիմ ապրեցուցանել ի չարչարանաց. զիտեմ զհանդերձեալսն, չեմ անտեղեակ տնտեսութեանն, որ ¹⁸կատարելոցն եմ. չեմ երախտ բարերարութեանն, որ ծաղկելոցն են¹⁹ ամենայն մարդկան. այլ²⁰ յառաջ քան ²¹զդէմս իրացն, որ երեւինդ, գայթակղեցուցանեն զձեզ, ասեմ ձեր բանիւ, եթե հնա՞ր ինչ իցէ անցանել չարչարանացն²²: ³⁸ Ո՛չ եթե բռնութիւն²³ ինչ անվրէպ եւ առանց անցանելոյ եւ սահման անհրաժեշտ յայտ առնիցէ²⁴, որպէս ոմանք կարծեցին: ³⁹ Եւ կամիս հաստատութեամբ ²⁵ուսանել, եւ չկայր ինչ հարկ եւ սահման ²⁶ի վերայ ի վերուստ Կենարարին, այլ իւր իսկ ամենիմաստ²⁷ տնտեսութիւն է, եւ իւրովք կամաւք զամենայնն²⁸ կատարէ: ⁴⁰ Լո՛ւր հաստատութեամբ՝ զիա՛րդ ինքնին ²⁹Տէրն իսկ լուծանէ զկարծիս հարկին եւ ³⁰յայտ առնէ զիւր կամացն ճոխութիւն, ասէ. Ո՛չ

1 պատասխանի տայր արութեան բարբառով, մանաւանդ եթէ արութեան եւ առաքելութեան ոգով ասէր ցկասեցուցիչսն զի՞նչ գործէք, զի՞ լայր եւ նմանեցուցէք գաւրտս ի ներսս, զի եւ ոչ միայն կապանաց, այլ եւ մեռանել պատրաստ եմ
 2 եւ արհամարհէ եւ իշտրէ
 3 եթէ այժմ ոգի իմ խոռովեալ է
 4 չի՞ք
 5 ոգով չափ խոռովեալ էր
 6 չի՞ք
 7 չի՞ք
 8 նեղութիւն գհամբերութիւն գործեն
 * Հ.Մ.Մ. Ե. 3
 9 եւ Քրիստոս Տէրն Պաւղոսի ասէր
 10 ոգի
 11 նմանութիւն
 12 զնայն
 13 Տե՛ս 2, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ 171:

14 չի՞ք
 * Մ.Մ.Ք. Ի.Չ 41. Մ.Մ.Ք. Ժ.Գ. 38
 15 եթէ զի
 16 խնայեմք, եւ
 17 զանձն ինչ կամիմ ի չարչարանացն ապրեցուցանել
 18 կատարելոց է
 19 է
 20 այլ զի
 21 զդէպս իրացդ
 22 Յաջորդող մօտ երկու տող բաց է թողած:
 23 բնութեանս
 24 առնել
 25 ունել, եթէ
 26 իվերուստ ի վերայ
 27 ամէնիմաց
 28 զամենայն
 29 տէրն յառաջագոյն ելոյծ
 30 յայտ արար զիւրոց կամացն զնոխութիւնն

ոմ առնու զհոգի¹ իմ յինէն. իշխանութիւն ունիմ² զհոգի իմ, եւ իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա³. *եւ զարձեալ՝ Յակեցե՛ք ինձ գտանարդ⁴ եւ յերիս աուրս կանգնեմ զդա՛:* 41 *եւ եթե իշխանութիւն ունիս, ընդէ՞ր ի կիր արկանիցես զայդպիսի բանսդ. եթե հնար ինչ իցէ⁶, աւես, անցցէ յինէն բաժակս⁷. վասն ձեր, ճասէ, տկարացդ, եւ ո՛չ իմ, որ հզաւրս եւ ամենազաւրս եմ, եւ յամենայն տկարութենէ ի վեր, եւ բարձրացեալ⁹:*

42 ¹⁰Յետ սղի:

43 *Բայց ընդէ՞ր իսկ¹¹ զչարչարանսն բաժակ կոչէ. առնուլ¹² ընծայի աստի ի¹³ միւս եւս այլ խնդիր, եթե զչարչարանսն բաժակ ընդէ՞ր կոչէ¹⁴. 15*այս է, եւ սովորութիւն է միշտ Գրոց, զխրատ, որ յԱստուծոյ գայցէ ի վերայ յանցաւորաց՝ բաժակ կոչել: 44 *Լե՛ր¹⁶ իմաստուն լսող, մի՛ յառաջագոյն յափշտակել զբանն¹⁷, այլ անսալ մնալ¹⁸ մտացն. 19*քանզի եւ առաքեալքն զրպարտեցան յոմանց²⁰, որպէս թե անպի-

տան ինչ խաւսեցան. լո՛ւր²¹ Պաւղոսի, որ²² կրեաց²³ զգրպարտութիւն ի քարոզութեանն. Մի՞թէ որպէս հայիոյիմքն, ասէ, եւ որպէս համբաւենն²⁴ զմէնչ ոմանք ասել²⁵ արասցո՛ւք չարիս²⁶, զի²⁷ եկեսցէ բարին, որոց դատաստանն յիրաւի է՞. զի²⁸ զոր ո՛չ լուանն իբրեւ զլուեալ բամբասեցին²⁹. զի զոր ո՛չ³⁰ լուանն ի վարդապետաց՝ յառաջ բերեն: 45 Այլ³¹ որ առաջիկայս է՝ յայս եկեսցուք: 46 Առանձին բարք են միշտ Գրոց՝ զխրատս եւ զպատիժս, որ ի վերայ մեղաւորաց գայցեն, բաժակ անուանել. այլ մի՛ վաղվաղակի խձբծիցէ³² զբանս թշնամի ոք եւ լրտես եւ ասիցէ³³. մի՞թէ եւ Քրիստոս մեղաւ, զի³⁴ զպատիժն մեղաւորացն կրեաց. քա՛ւ լիցի զայն ասել. նա չպարտէր³⁵ ինչ պատիժս, այլ³⁶ մեք ընդ պատժաւք³⁷ էաք, եւ³⁸ վասն պատժապարտացս յանձին կալաւ զմահ:

47 ³⁹Յետ սղի:

48 *Նմին իրի իսկ⁴⁰ երանելին Դաւիթ զվրէժսն, որ ի վերայ մեղաւորացն⁴¹ գայ-*

1 ասէ, զոգի
 2 եւ գնել զոգի
 3 **ՏԷ՝ՅՅՎԸ՝Ժ 18:**
 4 եւ եւ յերիս աուրս յարուցից
 5 **ՅՅՎԸ՝Ի 19**
 6 ընդէ՞ր արկանես զայդպիսի բան
 7 է
 8 բաժակս
 9 ասեմ տկարաց
 10 բարձր
 11 *Տե՛ս Զ, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ 172. անմիջական շարունակութիւն է նախընթացի:*
 12 անուանեաց զչարչարանսն բաժակ
 13 Առնու
 14 չիք
 15 կոչեաց
 16 Այո, ասէ
 17 Մի՛տ դիր հաստատութեամբ եւ լե՛ր
 18 զբանս
 19 եւ մնալ
 20 *Այստեղ եւս 4 տող քաց է բողոք:*
 21 չիք

21 եւ լո՛ւր
 22 ո՛րքան
 23 զրպարտութիւն ի քարոզութիւնն
 24 համբաւենն
 25 ասել եթէ
 26 զչարիս
 27 եկեսցեն բարիք
 28 **ՀՆ՝Դ՝Գ 8**
 29 որ ոչ լուան
 30 բամբասեն
 31 լուան ի վարդապետաց զրպարտութիւն վարդապետացն
 32 որ ինչ առաջիս կայ՝ յայն
 33 խձբծեցէ
 34 ասացէ
 35 զպատիժս մեղաւորաց կրեսցէ
 36 ո՛չ պարտ էր
 37 ո՛ն անդր, փարգաստ, այլ
 38 պատժով
 39 վասն մեր դատապարտելոցս ընդ մեղոք եւ պատժապարտացս ընդ տանջանոք
 40 *Տե՛ս Զ, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ 173:*
 41 եւ երանելոյն Դաւթայ
 42 մեղաւորաց

ցեն, դրոշմեալ՝ ասէ. Բաժակ ի ձեռին Տեառն, անապակ գինով լի խառնեալ. արբցեմ ¹մեղաւորք երկրի²։ 49 Եւ դարձեալ յորժամ Աստուած իսկ սպառնայր պատիժս², ասէր ցերեմիայ. Ա՛ն բաժակ, ³խառնեա՛ եւ տո՛ւր ամենայն ազգաց եւ Երուսաղեմի. ասացես ցնոսա. Արբէ՛ք եւ արբեցարո՛ւք եւ թմբեցարո՛ւք⁴. Զի՞նչ իցէ թմբեցարուքն. ի թմբուրութիւն ածէ զբազումս Աստուծոյ խրատն⁴ եւ բազում անգամ եւ ի Հիացուրութիւն իսկ, մանաւանդ յորժամ տեսանիցեն զարդարսն⁵ ընդ մեղաւորս ըմբռնեալ, որպէս եւ այժմ իսկ եպերեն յամենայն երկրի, թէ ընդէ՞ր ⁶բահանայք կոտորեցան ի սեղանս. վասն է՞ր սուրբ կուսանքն ի լլկանս մատնեցան. յո՞ր սակս ⁷այնչափ եւ այսպիսի չարիք գործեցան. ընդէ՞ր ո՛չ պաշտպանեաց Աստուած իւրոցն։ 50 Եւ քանզի այսպիսի⁸ վիշտք ի թմբուրութիւն ածեն եւ ի մտաց Հիացուրութիւն, եւ⁹ յիրաւի ասէ, թե արբէ՛ք եւ յիմարեցարո՛ւք եւ թմբեցարո՛ւք¹⁰ եւ զեխեցարուք։ 51 Դարձեալ եւ Կենարարն, յորժամ յառաջագոյն ճառեաց զչարչարանաց¹¹ իւրոց առ ¹²Յակոբոս եւ Յովհաննէս. Կարէ՞ք, ասէր¹³, ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ¹⁴, փոխանակ ասելոյ թե՛¹⁴ կարէ՞ք զչարչարանսն¹⁵ կրել, զոր ես կրելոց

եմ, եւ նոքա ասեն. Այո՛։ 52 Բայց երանելին Դաւիթ ի միւսում վայրի յայտնի իսկ եցոյց, եթե մահ, որ վասն աստուածպաշտութեան ¹⁶ի վերայ գայցէ՛ բաժակ կոչէ¹⁷. Զի՞նչ, ասէ¹⁸, տաց տրիտուր Տեառն ընդ ամենայնի, զոր ետ ինձ¹⁹. ¹⁹Իբրեւ կարի շնորհակալ ծառայ, ետես բղխեալ շուրջանակի գերախտիսն Աստուծոյ, խնդրէ եւ ինքն²⁰ սակաւ ինչ տրիտուր տալ՝ մտադիւրութիւն²¹ ընդ անբաւ երախտեացն. ²²որպէս աղքատ, յորժամ զմեծատունն ի վանս տանիցի, ի վարանս մտանէ, թե զի՞նչ կազմած կարիցէ²³ յուրախութիւն մեծատանն առնել։

53 ²⁴Յետ սղի։

54 Իսկ²⁵ իբրեւ յամենայնէ չքաւորեցաւ, մի ինչ միայն եզիտ, եւ²⁶ ո՛չ եթե ըստ Աստուծոյ բարերարութեանն, այլ ըստ նորա յաւժարութեանն արժանի է. ²⁷Բաժակ փրկութեան ընկալա՛ւ, ասէ. եթե կարացից²⁸ վասն աստուածպաշտութեանն չարչարանս ընդունել²⁹, եթէ ձեռնհաս եղէց վասն Աստուծոյ մեռանել. Բաժակ փրկութեան ընկալայ³⁰, եւ գանուն Տեառն կարդացից³¹։ 55 ³¹Եւ զի՞նչ էր բանն յայտնի, այլ դաւղեալ եւ զեղչեալ՝ յաջորդաւքն

1 ամենայն մեղաւորք
 * Տէ՛ * Սաղմ. ԼԳ՝ 9:
 2 պատիժս հեթանոսաց
 3 խառնեալ եւ տո՛ւր ըմպել
 ք Տէ՛ * Լեւի. ԻԼ՝ 15, 27:
 4 այն խրատ
 5 զարդարս
 6 կոտորեցան քահանայքն
 7 այնքան
 8 այնպիսի
 9 չիք
 10 չիք
 11 զչարչարանացն
 12 Յակովբայ եւ Յոհաննու
 13 ասէ
 ք Մաթթ. Ի 22. Մարկ. Ժ 38
 14 չիք
 15 զչարչարանս

16 գայցէ ի վերայ
 17 կոչի
 18 չիք
 ք Սաղմ. ՃԺԵ 12
 19 եւ իբրեւ զկարի
 20 ինքն
 21 մտադիւրութեամբ
 22 որպէս եւ աղքատ ոք զմեծատուն
 23 կարասցէ
 24 Տե՛ս Զ, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ 174:
 25 չիք
 26 եւ այն
 27 ընկալայց։ Զի՞նչ յայտ բաժակն իցէ
 է Սաղմ. ՃԺԵ 13
 28 կարացից, ասէ
 29 կրել
 30 ընկալայց
 ք Սաղմ. ՃԺԵ 15
 31 եւ քանզի չէր

մեկնէ. բաժ[ակ] փրկութեան ընկ[ալ]այց եւ զանուն Տեառն կարգացից. ածէ ¹զնովիմբ եւ ասէ. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց¹:

56 ²Յետ սղի:

57 Եւ այլուր ³բազում հարուածովք վէրս ի վերայ եղեալ՝ արկին ի բանտ եւ պնտեցին զոտան ⁴ի կոճեղս. այլ առաքինի նահատակն աստուածաշտուութեանն եւ որ ⁵ընդ նմայն էր՝ Սիղաս, յաղթեին սգաստութեամբ⁶ վշտացն, պարտեին առաքինութեամբ զչարչարանսն: 58 Եւ զայս բարեոք⁷ իմն նշանակեալ, որ զպատմութիւնն գրեաց՝ ⁸ի հասարակ գիշերի, ասէ, Պաղոս եւ Շիղա⁹ արիւնէիմ զԱստուած¹⁰, ¹⁰ո՛չ թե աղաւթս մատուցանեին Աստուծոյ, այլ թէ՛ աւրհնէին. զի աղաւթք թերեւս ¹¹առ նեղութեան սրտին ¹²լինիցի, իսկ աւրհնութիւնն առ խնդութեանն մտացն: 59 Աւրհնութիւն ¹³ոգոց բերկրեցելոց նշանակ էին. սուրբքն, որ¹⁴ կամեին ¹⁵զոգոց ցնծութիւնս յայտ առնելով՝ ո՛չ աղաւթս մատուցանեին, իբրեւ զնեղեալս, այլ աւրհնեին իբր զընդարձակեալս¹⁶: 60 Պաղոս եւ Սիւղուրիանոս¹⁷, որ բնութեամբ

մարդիկ էին, առաքինի ոգիս ի չարչարանսն ցուցանեին, եւ Քրիստոս, որ ¹⁸թագաւորն էր սրբոցն, անկարծութեան բանս պատշաճե՞ս. որ վասն տեսչութեան են ասացեալ՝ ի քակտումն պատուոյ նորա առնո՞ւս: 61 Ա՛ւն անդր, ¹⁹ի բա՛ց յայնպիսի մտաց. մի՛ ոք թշնամանեցէ զսրբութիւնն²⁰. մի ոք զրպարտեցէ ²¹զաստուածային բանսն. մի՛ ոք ամբարշտութիւն ջանայցէ²² ի բանից Կենարարին կազմել, եւ ²³անկարծութիւն տնտեսութիւնն համարել: 62 Այլ պահանջէ ի մէնջ լսաւդն զկարգն. բարիոք, ասէ, ²⁴ուսուցանէր, եւ տնտեսութեան իսկ բանք էին. այլ եւ զարութեան²⁵ տնտեսութեանն մեկնեա՛յ. ընդէ՞ր ²⁶բնաւ ի կիր արկանես զայնպիսի բանս. վասն է՞ր ասաց. Եթէ հնար ինչ իցէ ²⁷անցանել բաժակիս: 63 Եթէ հնար ինչ իցէ, եղբա՛րք, ո՛չ զհրամանաց ինչ հարկ մուծանէ, եւ ո՛չ առասպել²⁸ անուն ծննդեանն²⁹, եւ ո՛չ վատարտութեան բանք³⁰ են, եւ ո՛չ զանգիտել ինչ ասաւդին բամբասի այնու, այլ մարդկեղէն տնտեսութեանն կերպարանք, եւ խնայելոյ յայնոսիկ, որ գայթաղելոց³¹ էին. քանզի գիտէր, եթե չարչարանքն զբազումս ³²կարող է գայթաղեցուցանել, մանաւանդ զայնոսիկ, որ ³³խորհրդոյ տնտեսութեանն չէին

1 զնովեմբ, եթէ
* Սաղմ. ԸԺԵ 15
2 Տե՛ս Զ, ք. 305. տպ. Վեներտիկ-Ս. Ղազար, 1850, էջ 170:
3 բազում հարուածս ի վերայ եղեալ՝ արկին գնա ի կոճեղ
4 ընդ նմա էր Շիղաս
5 զգաստութեամբ
6 բարիոք
7 ասէ ի հասարակ գիշերի
8 Շիղաս
9 Գործ. Ժ.Գ 25
10 Այստեղ 4 տող բաց է թողած:
11 առ նեղութիւն
12 լինին, եւ օրհնութիւն առ խնդութիւն սրտից (դարձեալ 2 տող բաց է թողած):
13 ոգոց բերկրեցելոց նշանակ է
14 որք
15 զոգոցն ցնծութիւն յայտ առնել
16 ընդարձակեալք
17 Շիղաս

18 թագաւոր է սրբոց, անկաճութեան
19 ի բաց լեր
20 գարբութիւնս
21 գաստուածեղէն բանս
22 ջանացէ
23 անկաճութիւն գտնտեսութիւնն
24 ուսուցեր, արդարեւ
25 զգորութիւն իսկ
26 բնաւ իսկ արկ ի կիր
27 անցցէ յինէն բաժակս այս
28 գտնասպել
29 զծննդեան
30 ինչ բանք
31 գայթակղեցելոցն
32 կարեն գայթակղեցուցանել, եւ
33 խորհրդոց տնտեսութեան

ակահ, ըստ այնմ եթե՝ Կարոզեցուի գիտա-
չելեալն Քրիստոս, Հրեից գայթակղութիւն
եւ Հեթանոսաց յիմարութիւն՝: 64 Արդ ա-
ռեալ զդէմս մարդկան, որ զամենայն ինչ
իմաստութեամբ մատակարարէ:

65 2Յետ սղի:

66 Բայց թէ 3ընդէ՞ր բաժակն չարչա-
րանք կոչին. քանզի չէ ինչ նման բաժակ
մահու. զի խրատքն, որ ի վերայ գայցեն,
խիստ իմն եւ անհնարին եւ դժուարին
թուին4: 67 Նմանագոյն5 Աստուածեղէն
Գիրք զվիշտս6 բաժակ անուանեն, զի յայտ
լիցի, եթե Աստուած ո՛չ իբրեւ զխիստ դա-
տաւոր տանջէ եւ ո՛չ յանխնա կոտորէ, այլ
իբրեւ զբժիշկ 7զցաւսն բժշկէն, եւ իբրեւ
զանդեղայս8 սաստիկ մաղձոյ տա ի ներքս
զխրատ9: 68 Եւ արդ, փրկութեան բա-
ժակն10 խրատուցն առ ճաշակել դառն է եւ
առ 11բժշկելն աւգտակար. յանդիման կա-
ցուցանէր Բանն զբարերարն Աստուած՝
բաժակաւն խրատիչ եւ բարերար իբրեւ
զՀայր, եւ տանջիչ եւ պատժիչ իբրեւ
զԹագաւոր. ո՛չ իբրեւ զԹշնամի հարկանէ,
այլ իբրեւ զբժիշկ կսկծեցուցանէ: 69 Զոր
աւրինակ, յորժամ բժիշկ12 գերկաթսն ի
գործ արկանէ եւ խարանս 13ի մարմինս
դնիցէ, ո՛չ այնու ընդ մարդոյն կռուի, այլ
ընդ ցաւսն մարտնչի. նոյնպէս եւ Աս-

տուած, յորժամ 14ածէ զխրատն՝ ո՛չ զիւր
ստեղծուածն պատժէ, այլ զմեղսն սրբէ:

70 Յետ սղի:

71 Եթե չէ խառն ընդ արդարութեանն
եւ ի ձեռն բազում իրաց հաւանեցուցեալ
զանձինս յաղագս մեծամեծացն եւ աս-
տուածագան գործոցն՝ փառաւորացն ի վե-
րայ երկրի Փրկչին, ի ձեռն որոյ ծանաւթ
եղեւ գոլ ճշմարիտ Աստուած, յորոց իրաց
հիացեալք հաւատացին ի նա: 72 Բայց
այսպէս ընտանեբար մտերմութեամբ հա-
ւատացին ի նա, մինչ զի յաղագս անուան
նորա եւ ի նոյն խոստովանութեան ի մահ
զանձինս մատնել ճշմարտութեամբ թշնա-
մեաց. զի նա իսկ եւ ի նոցունց իսկ հաւա-
տոց ի նա բազում քարոզք աւետարանիչք
ամենայն աշխարհի եղեն՝ յաղագս Քրիս-
տոսի աստուածութեանն եւ ի նմա մարդա-
սէր փրկութիւնն: 73 Իսկ ի խաչին մահն
Քրիստոսի խորհուրդ էր աստուածեղէն՝
յԱստուած ծածկեալ յաւիտեանցն եւ ի
դարուցն, զոր ի վերջնումն դարի, մանա-
ւանդ եւ յըստ մեզ՝ յայտնեալ լինի այնո-
ցիկ, որ մտերիմ ընտանութեամբ յԱս-
տուածն ուսանին:

1 15Երանելոյն Յուլիայ, եպիսկոպոսին
Հոռմայ, ի թղթոյն, որ առ Պրոսպո-
կիոն:

2 Իսկ մեզ վայել է պահել զաստուա-
ծային աւանդութիւնն, եւ մի՛ զմարդկային
հակաբանութիւն. քանզի ո՛չ 16ի հակաբա-
նութիւն հաւատացաք, այլ յաստուածայ-
նոց բանիցն առ մեզ բերեցելոցն 17վկայու-
թիւն առաքելոցն, որք տեսեալ զգերաբնա-
կան փառս18 Տեառն մերոյ եւ գերկնային
զվկայութիւնն19 լուեալ՝ արտաքս քարոզե-

1 մեք Կարոզեցուի գ՝Քրիստոս ի՛ խաչ ելեալ
* Լ Կ * Լ 23
2 Տե՛ս 2, ք. 305. տպ. Վենետիկ-Ս. Ղազար, 1850, էջ
175:
3 ընդէ՞ր իսկ բաժակ չարչարանքն կոչեցան
4 լինին
5 նմանագոյնս
6 զվիշտսն
7 զցաւս բժշկէ
8 զանդեղեայ
9 զխրատսն
10 բաժակ
11 բժշկել օգտակար է
12 բժիշկն
13 ի մարմինն դնէ

14 զխրատսն ածէ
15 Տիմոթէոս, էջ 265
16 ի հակաբանութեանցն
17 վկայութեամբ երանելեաց
18 զփառս
19 վկայութիւնն

ցին¹ աշխարհի զԱստուած² մարմնացեալ, զԲանն մարմին եղեալ՝ հոգի ³կենդործ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, անհայր ըստ յերկրէ ծնելութեան⁴. վասն զի Աստուած յերկնուստ իջեալ էր, ո՛չ մարդ ⁵ի մարդկանէ սերման բուսեալ. որդի⁶ մարդոյ կոչեցեալ, իսկ ⁷Աստուծոյ իշխանութիւն ցուցանելով, երկնայնոցն հարստելով, աթոռ երկնային ունելով, ի հրեշտակաց երկրպագելով⁸: 3 Նախ Արքայ Հոգոյն փառաւորելոյ⁹ որոց ¹⁰մոռացեալ զվաղն հասուցեալ մեծ վտանգ՝ երանեալ¹¹, ասէ, որ ո՛չ գայթաղեցի յիս^ա. եւ գայթաղեցի¹², որ վասն մարմնոյ եւ սորա կրիցն փոխեաց¹³ զՓրկիչն, եւ զմարդն ի թերէ Աստուծոյ ախորժէ: 4 Քանզի մարդ¹⁴ ասելով զծնիցեալն, մարդ զխաչեալն¹⁵ մարդ ի թերէ Աստուծոյ փոփոխեցաւ, ո՛չ կարացեալ զտանել ի յերկնուստ առ ի յԱստուծոյ փրկութիւն: 5 Քանզի ցածուցանէ¹⁶ որ կրեացն, կեցուցանէ որ ¹⁷ի կնոջէ ծնաւն՝ ի ձեռն ծննդեանն արագ զկնի¹⁸, զի կենդանութիւն պտղաբերեաց աշխարհի. իսկ ¹⁹ի ձեռն առն, զի այս յայտ եղեւ՝ զայրն ի ծառայութիւն իւրոյն եած կենդանութեան,

եւ մահուամբ զմահն քակեալ եւ փոխաբերեալ ²⁰առ ի յարութեանն կենդանութիւն: 6 ²¹Ապա ուրեմն, եթե Աստուծոյ ապրեցուցանելն, եւ նորոգելն զաշխարհս²² ո՛չ միւսոյ ուրումն է²³. իսկ ապրեցուցանէ ²⁴ծնեալն եւ խաչեալն. ո՛չ մարդ էր, զոր ծնաւն Մարիամ, եւ ո՛չ մարդ, զոր ²⁵խաչեցին Հրեայքն, այլ զԱստուած, ծնիցեալն ի կնոջէ՝ Աստուած խաչեալ²⁶ ի Հրեիցն:

7 ²⁷Նորին՝ յաղագս աստուածային մարմնաւորութեանն:

8 ²⁸Զի փրկութիւնն մեզ առթէ աւետարանն, ե՛ղբարք, յորմէ ուսանիմք զԱստուած²⁹ եկեալ յաշխարհ, եւ զմարդկային ³⁰իսկ փոխարկեալս ի փառս աստուածականս՝ յերկնային բարձրութիւնն³¹, յերկնային թագաւորութիւնն³², յերանութեան ³³կենդանութիւնն եւ յարարած կազմելով նոր: 9 Քանզի ³⁴որք ի Քրիստոս նոր արարած, եւ ամենքեան հաւատացեալք ի Քրիստոս նմանին Քրիստոսի, եւ տեսանելով զնորա փառսն՝ ձեւակցեմք³⁵ նմա. Քանզի փոխաձեւացուցէ, ասէ, զմարմին խոնարհութեան³⁶ մերոյ կերպակից մարմնոյ փառաց իւրոց՝ ըստ ներգործութեան, որ ի կարել զմա եւ հնազանդեցուցանել մմա զամենայն³⁷: 10 Մի՛ ոք այսուհետեւ

1 պատմեցին
 2 զԱստուածն
 3 կենագործակ զՏէրն
 4 ծնելութեան
 5 ի մարդկայնուց սերմանց
 6 եւ Որդի
 7 անուամբ իւրով զաշխարհ կեցուցանելով, երկնայնուցն
 8 երկրպագեալ
 9 փառաւորեալ
 10 մոռանալ զվաղսն
 11 երանեալ է
 ա Մատթ. ԺԼ՝ 6
 12 գայթաղի
 13 փոխէ
 14 մարդն
 15 զխաչեցեալն
 16 կեցուցանէ
 17 ի կնոջէն ծնաւ
 18 զկնին
 19 ի ձեռն, զի այր յարս եղեւ՝ զայրն ի հաւասարութիւն

20 առ յարութեան
 21 Ապ՝ ուրեմն եթ՝ ապրեցուցանելն Աստուծոյ
 22 զաշխահ
 23 չի՞ր
 24 ծնիցեալն եւ խաչեցեալն
 25 խաչեցինն հրեայք, այլ Աստուած
 26 խաչեցեալն
 27 **Տիմոթէոս**, էջ 266
 28 Զփրկութիւն
 29 զԱստուածն
 30 իրս փոխարկեալ
 31 բարձրութիւն
 32 թագաւորութիւն
 33 կենդանութիւն եւ արարած կազմեալով
 34 որ ո՞ր ի Քրիստոսի
 35 ձեւակցեմք
 36 նուաստութեանս
 37 զամենայն
 բ Փլա. Գ՝ 21

1ի մարմնական ձեռունն եւ ի մարմնականի ախտակրութեան գայթաղեցի եւ մարդ² սակա այսոցիկ զՔրիստոս կարծիցէ³, 4զի մեզ փրկութիւնն կորուսցէ. քանզի մարդ⁵ ո՛չ ապրեցուցէ գաշխարհ, մարդոյ ախտակրութիւնն ո՛չ սրբէ⁶ զի նայն մկրտեալսն. Ամենեքեան իսկ Պի Քրիստոս մկրտիմք՝ ի մահն^ա, Հաւատովք, եթե Քրիստոսի մահն կենդանութեան⁸ Հաւակ է, զմեր մահն փոխարկելով առ յարութիւն. Քանզի իսպիսկն գմահ Քրիստոս, իսկ լուսաւորէ զկենդանութիւնն եւ զանապականութիւնն, որպէս եւ գրեալ էք. եւ ո՛չ ոք ի մարդկանէ խափանել կարէ զմահ եւ ո՛չ լուսաւորել զկենդանութիւնն, որպէս եւ Դաւիթ ասէ. Ո՞վ է մարդ, որ կեցցէ, եւ ո՛չ տեսցէ գմահ, կամ⁹ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոցէ: 11 Իսկ որ զինքն փրկել չկարէ¹⁰ ի՞բըր զայլսն ապրեցուցանէ¹¹. եւ որ զմի ոք զաւրել առ ի¹² յապրեցուցանել ո՛չ կարէ, ի՞բըր զաշխարհս¹³ կարէ ապրեցուցանել: 12 Եւ վասն զի¹⁴ բնական են ի մարդ մեղք, հետեւանայ եւ մահ. Թագաւորեաց¹⁵, ասէ, մահ յԱդամա մինչեւ ցՄովսէս եւ առ ո՛չ մեղուցեալսն՝ նմանութեամբ զանցաւորութեամբն¹⁶ Ադամա՞. քանզի

յորմէ աւրէ¹⁷ մեղաւ Ադամ, եւ¹⁸ մեղուցեալն ծնաւ ըստ նմանութեան իւրում, յայնմանէ մու սահման Աստուծոյ զամենեցուն՝ ասելով. Երկիր երկիր¹⁹, եւ յերկիր տարագնասցես: 13 20Չմահ Մովսէս ո՛չ կարէ լուծանել, այլ եւ²¹ մահ ինքն գրաւեցաւ, եւ ամենեքեան, որ²² ընդ թագաւորաւ եւ ընդ աւրինաւ՝ թագաւորեցան մահուամբ: 14 Իսկ Քրիստոս եւ Քրիստոսի շնորհն²³ սկիզբն ետ կենդանութեանն²⁴, քանզի հոգի²⁵ կենդանածնական տա Քրիստոսի Հաւատն՝ զոր յետ յարութեանն²⁶ փչեաց ետ Հոգի Սուրբ: 15 Իսկ Հոգին²⁷ Սուրբ Աստուծոյ պարգեւ²⁸ է, եւ ո՛չ մարդոյ:

16 Հաւատասցուք այսուհետեւ արժանապէս ի Քրիստոս, իբրեւ²⁹ յՈրդի Աստուծոյ մարմնով երեւեալ՝ Տէր մարգարէիցն, Տէր հրեշտակաց, վասն որոյ հնազանդին³⁰ նմա երկնայինքն եւ երկրայինք եւ ստորերկրեայք³¹: 17 Քանզի³² ո՛չ եթե միայն հնազանդին երկնային պետութիւնքն³³ եւ իշխանութիւնք եւ զաւրութիւնք³⁴, այլ Աստուծոյ եւ³⁵ ամենայն ծուր կրկնի՝ երկ-

1 ի մարմնականի ձեռուն
 2 մի՛ մարդ
 3 կարծեսցէ
 4 զի մի՛ գփրկութիւնն
 5 ո՛չ ապրեցուցանէ
 6 զի նայնսն մկրտեալս
 7 ի Քրիստոսի մահն մկրտիմք, հաւատալով
 ա չմահ. չմահ. Գ 3:
 8 կենդանութիւն
 բ Տէ՛ր Բ՛ Տէ՛ր. Լ 10:
 9 եւ
 գ Ս՝զմ. ՉԸ 49
 10 ո՛չ կարէ
 11 ապրեցուցէ
 12 ապրեցուցանել ո՛չ զարէ
 13 զաշխարհ
 14 բնակեն
 15 թագաւորեաց իսկ
 16 զանցաւորութեանն
 ՚ չմահ. Ե 14

17 ասէ
 18 մեղուցեալ ծնաւ զմեզ
 19 երկիր
 Է չմահ. Ծ՛ն. Գ. 19:
 20 Մովսէս զմահն լուծանել ո՛չ կարէր
 21 ինքն մահուամբ
 22 որք
 23 շնորհն
 24 կենդանութեանն
 զ չմահ. չմահ. Լ 25:
 25 կենածական տայ
 26 փչեալ էր
 27 Հոգի
 28 պատկեր
 29 որպէս
 30 հնազանդի
 31 ստորերկրիք
 32 ո՛չ մարդոյ
 33 պետութիւնք
 34 կարութիւնք
 35 ամեն ծուր խոնարհի

նայնոցն եւ երկրայնոցս¹ եւ սանդարամբ-տականաց, եւ ²ամենայն լեզու խոստովան լիցի, թե Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հայր³: 18 *Քանզի Քրիստոս Աստուած ելով, ի մարմնի երեւելով³, եւ խաւսեցաւ⁴ իբրեւ զԱստուած եւ գործեաց զամենայն իբրեւ⁵ զԱստուած. Որդի ելով Աստուծոյ ճշմարիտ, ինքն աւրինադրեաց եւ ասաց. ես ասեմ ձեզ⁶, եւ Հրաման տալով⁶ Հողմոց եւ աււոց անմաքրից, իսկ մարդիկ առննդունելով⁷ եւ Աստուծոյ զաւրութիւն՝ ո՛չ աւրինադրեսցեն ⁸յինքեանց անձամբ, եւ ո՛չ Հրամայեսցեն: 19 *Վասն այնորիկ⁹ Պաւղոս ասէ. Ասեմ¹⁰ ո՛չ ես⁷. ի Քրիստոսէ բերելով զՀրամանն, ո՛չ յիւրմէ, եւ ո՛չ¹¹ խորհրդակցէ յիւրմէսն, ո՛չ իբրեւ¹² զիւր ինչ խորհրդակցէ, ¹³այլ զողբին տուեալ նմա ի Քրիստոսէ, ասելով. Բայց թուիմ ես¹⁴ Հոգի Աստուծոյ ունելով¹⁵. եւ դարձեալ՝ եթէ ¹⁶զփորձ ինչ խնդրէ՞մ զիս խաւսաւորին Քրիստոսի¹⁷:**

20 *17*Որ ոք ասէ, եթե Քրիստոս մարդ էր, Աստուած ունելով յինքեան՝ ամբարշ-

տէ¹⁸, մի ի ծառայիցն առնլով¹⁹ եւ զճշմարտութիւն աստուածութեան նորա փոխարկելով՝ ²⁰իբրեւ զԱստուած գործեցելոց, ո՛չ իբր Աստուած ելոյ ճշմարիտ²¹. եւ զփրկականն մեր երկրպագութիւն անգոսնէ՝ երկրպագաւորացս²² զՔրիստոս. վասն զի Աստուած է, եւ վասն զի ո՛չ Աստուած բնակէր²³ ի նմա, եւ ²⁴ո՛չ զԱստուծոյ: 21 *Զի՞նչ արդեւք Տէր, կամ զի՞նչ ծառայ, կամ²⁵ զի՞նչ փրկիչ, զի՞նչ ապրեցուցիչ, զի՞նչ ոգի կենդանարար²⁶, որպէս է Քրիստոս ըստ առաքելոյ, եւ անձն կենդանի, ²⁷որպէս Ադամ. զի՞նչ Հողական²⁸ եւ յերկնուստն, գտեալն ձեւով իբրեւ զմարդ՝ սակս մարմնոյն, որ ²⁹ի Կուսէն, իսկ զաւրութեամբ ելով Աստուած, սակս ³⁰Հողոյն, որ ի վերուստ, որ է ի վերայ ամենեցուն Աստուած՝ որում փա՛ռք յաւիտեանս:*

1 ³¹Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսին Աղեփսանդրու, որ ի Տաւնականէն՝ ի յերրորդ գլխոյն, որ առ Դեռնկեալն ասէ:

2 *Տեսանիցէք զկենդանութիւնս³² ձեր կախեալ առաջի աչաց ձերոց: 3 Ո՞վ արդեաւք իցէ այն³³, եթե ո՛չ ասաւղն. ես եմ կենդանութիւնէ. ինքն էր³⁴, որ ի Հրեիցն*

1 երկրայնոց
 2 ամեն լեզու խոստովանեսցէ, եթե
 3 Փ.Լ. Բ. 10-11
 4 երեսեցաւ
 5 իբր
 6 Մ.Գ.Բ. Ե. 22
 7 հողմոց եւ ծովու եւ հոգւոց եւ անմաքրոց
 8 Աստուած առննդունելով
 9 յմեանց
 10 այսորիկ
 11 ոչ ես, այլ Տէրն
 12 Ը. Կ. Գ. Է. 10
 13 ուր
 14 իբր
 15 այդ զՀոգին
 16 եւ ես
 17 ունել
 18 Տէ.Պ. Ը. Կ. Գ. Է. 40:
 19 փորձ խնդրէ՞մ զիս խաւսաւորին
 20 Բ. Կ. Գ. Ժ. Գ. 3
 21 Տիմոթէոս, Էջ 268. Նորին վերնագրով բաժանուած առանձին հատուած է այս:

18 ամպարիշտ է
 19 առնելով զՏէրն
 20 իբր Աստուածագործեցելոյ
 21 ճշմարտի
 22 երկրպագաւորաց
 23 բնակէ
 24 ո՛չ զգայ
 25 չի՞մ
 26 կենարար
 27 որպէս է
 28 հողականն
 29 ի Կուսէ
 30 Հողոյն որ յերկնուստ, որ էր ի վերայ իւր
 31 Տէ.Պ. Ը. Կ. Գ. Է. 5
 32 զկենդանութիւն
 33 այս
 34 է Տէ.Պ. Յ. Գ. Ժ. Ը. 25, Ժ. Գ. 6:
 35 է

անհաւատացեալ, եւ ի դահճացն մերկացեալ¹ եւ ²ի զինաւորացն բաժանեալ:

4 Նորին, ի յերրորդ Տաւնականէն:

5 Քանզի կենդանութիւն ³ելով՝ մեռանի, զի զմեզ կենդանացուցէ⁴. բան ելով՝ ի մարմնի եղեւ, ⁵զի զմարմնականս բանիւ խրատեսցէ. զի այսուիկ ի տաւն զմեզ կոչեսցէ՝ ասելով. եթե ոք ծարաւի է, եկեսցէ առ իս եւ արբցէ⁵:

6 Նորին Գ. Դիոկղիտանէ:

7 Քանզի ո՛չ եւս ո՛չ ժողովուրդ Աստուծոյ⁶, ո՛չ⁶ ազգ սուրբ, այլ իշխանք Սողոմոնացոյ⁷ եւ ժողովուրդ⁸ Գոմորացոյ⁷ անուանին, յաղթելով ⁹այսոցիկ եւ Սողոմայեցոցն չարութեան, որպէս¹⁰ մարգարէն ասէ. Արդարացաւ Սողոմ ի քեզ⁷. Քանզի ¹¹Սողոմայականքն ի հրեշտակսն յանցեան, իսկ այսօրիկ¹² զՏէրն եւ զԱստուածն¹³ եւ զթագաւորն ամենեցուն¹⁴, եւ զամենեցուն ¹⁵հրեշտակաց Տէրն խոխողեալ ձեռնարկեցին, ո՛չ գիտելով, եթե ¹⁶կենդանութիւն ի

նոցանէ խոխողեալն Քրիստոսէ. իսկ ¹⁷մեռանն որ նենգեցին, Հրեայքն՝ Տեառնն¹⁸:

8 Նորին ի ԺԱ. Տաւնականէն:

9 Ընդէ՞ր ¹⁹պանծացան ազգդ եւ ²⁰ժողովուրդդ խորհեցան սնոտի⁵. Քանզի ունայն²¹ խորհուրդ Հրեիցն՝ մտածաւղացն զմահ²² զկենդանութենէն եւ խորհաւղացն անբանս զԲանէն Հաւր:

10 Նորին, որ յաղագս խաչին:

11 Քանզի եւ այս ո՛չ նոցա, այլ կախեցելոյ Փրկչին գործ. Քանզի կախեցեալ իբրեւ զմարդ՝ զիշխանութիւնս հալածէր եւ զբանսարկուն ժամանէր:

12 Յետ այլոց:

13 Զեհաւ՝ ո՛չ յայլ մասն, այլ ի կողմն, ուստի հոսեցաւ արիւն եւ ջուր. զի եւ վասն զի նախկինն ի ձեռն կողիցն ստեղծելոյ ի ներքս եմուտ խաբեութիւնն, այսպէս կողիւք երկրորդին Ադամա լուացումն եւ մաքրութիւն. առաջնումն եղիցի ի լուացումն արեամբն, իսկ մաքրութիւն ջրովն, եւ այս ո՛չ ըստ կամաց պատահէր բանսարկուին. Քանզի գոր երկնչէրն եղանել մահ՝ մեռաւ Տէրն, եւ նա կողոպտեցաւ. կարծեցեալ ունել զՔրիստոս մահուն՝ յաւետ ինքն ցուցաւ մեռեալ, որ պարծեցեալ մարդ դարմանեալ, եւ արար ճանաչել, թէ Աստուած է: ¹⁴ Քանզի Համանգամայն մեռաւ, արարածս անարեգակն եղեւ, իսկ վարագոյր տաճարին ցելաւ, երկիր սասանեցաւ, վէմք հերձան, զինուորքն հանդերձ դռնատեսաւքն դժխոց զաւղեսցին. յոր էր տեսանել ո՛չ մարդ, այլ ճշմարտապէս Աստուած ի մարմնի. սակա որոյ եւ տեսաւքն ասեին. Ճշմարիտ սա է Որդին

1 մերկացուցեալ
2 ի զինուորացն
3 գոլով մեռաւ
4 կենսագործեսցէ
5 կենսագործեսցէ. աղբիւր գոլով ծարաւեցաւ զմերն ծարաւ, զի այսուիկ եւ ի տաւնն զմեզ յառաջ կոչեսցէ.
6 Յ՝ՎՃ. Է՝ 37
7 Հ՝ՄՄ. Ո՝Վ՝. Ը՝ 9-10:
8 եւ ո՛չ
9 Սողոմոնացոյ
10 ժողովուրդ
11 Հ՝ՄՄ. Է՝ 10:
12 յայտսիկ եւ սողովմականացն
13 որպէս եւ
14 Հ՝ՄՄ. Է՝ 48. 51-52:
15 սողովմականք ի հրեշտակս յանդգնեցան
16 սոքա
17 զԱստուած
18 ամենայնի
19 հրեշտակացն Տէր սպանանել
20 կենդանութիւն է սպանեալն ի նոցանէ Քրիստոս

17 մեռան, որք
18 զՏէր
19 պանծացան ազգ
20 ժողովուրդ պարապեցին ունայնս
5 Ս՝ՄՄ. Բ՝ 1
21 ունայն էր
22 մահ

Աստուծոյ՞: 15 Քանզի բազում շիրիմք բացան, եւ յարեան որ ի նոսա մեռեալք:

16 1Նորին, ի բանէն, որ զԱրիանոսսացն:

17 Արդ, 2եթե այլոյ մարմինն այնորիկ՝ թերեւս 3ասիցէ ոք եւ ախտակրութիւնս. իսկ եթէ 4Բանին մարմինն, քանզի Բանն մարմին եղեւ, Հարկ է եւ զմարմնոյն ախտակրութիւնս5 ասել նորա, որոյ6 մարմինն է. իսկ որոյ ասի ախտակրութիւնն, որպիսի է դատապարտիլն եւ Հարազանիլն եւ ծարաւելն, եւ խաչ եւ մահն, եւ այլք մարմնոյ7 նուաստութիւնք, 8նորին եւ ճոխագործութիւնք եւ շնորհն է: 18 Սակա այսորիկ եւ այլքն9 ըստ կարգի վայելչաբար ո՛չ այլոյ10, այլ Տեառնն այսպիսի11 ախտակրութիւն. զի եւ 12շնորհ առ ի նմանէն իցէ, եւ մի՛ 13այլոյ պաշտաւնեայ լինիցի ոք, այլ ճշմարտապէս աստուածապաշտք, եւ մի՛ ոք յեղեղուցու եւ մի՛ 14զհասարակական զոմն մարդ, 15այլ զԱստուծոյն բնութեամբ եւ ճշմարտապէս16 Որդին՝ զսա եղեալ17 մարդ, ոչինչ նՀատ զնա Տէր եւ Աստուած եւ Փրկիչ եւ ճշմարիտ Որդի:

1 18Երանելոյն Գրիգորի Նիւսացոյ՝ Առ ի մարդանալն Տեառն:

2 19Չայս խորհիցի, ասէ, 20ի ձեռք որ է ի Քրիստոս, որ ի կերպի Աստուծոյ ելով՝ ո՛չ յափշտակութիւն համարեցաւ զգոլն հանգէտ Աստուծոյ, այլ զինքն թափեաց, զկերպ ծառայի առեալէ:– 3 21Զի՞նչ աղքատագոյն ի վերայ Աստուծոյ, քան 21զծառայի զկերպն. զի՞նչ նուաստագոյն առ թագաւորն բոլորեցունց22, բայց զի ի կցորդութիւն 23աղքատութեանս մերոյ բնութեան կամաւորաբար գոլ. եւ 24թագաւորն թագաւորաց եւ 25Տէրն տերանց զծառայականն զգեցու զկերպս. դատաւորն 26ամենեցուն Հարկարար Հարստացելոցն եղանի. 27արար[ած]ոցս Տէր յայրին իջաւանի. որ զամենայն ի բռան ունի, ո՛չ [գտան]է տեղի իջաւանին28, այլ ի մտուր 29անբանից առնկեցաւ. մաքուրն եւ անարատն զմարդկայնոց բնութեանս յանձն առնու աղտ եւ, ընդ ամենայն աղքատութեանս մերոյ անցանելով, մինչեւ30 մահու ժամանեաց փորձութիւն: 4 Տեսանէ՞ք զկամաւոր աղքատութեանն զչափն. կեանքն զմահ31 ճաշակէ, դատաւորն ի դատաստան ածի, կենաց էականացս Տէրն ընդ Համարով դատչի լինի. 32ամենայն գերաշխար-

« Մատթ. Իւլ 54. Մատթ. ԺԵ 39
1 Տիմոթէոս, էջ 157
2 եթ՝ այդոյ մարմինս
3 ասիցի ուրեք եւ ախտակրութիւնն
4 Բանի մարմինս
5 ախտակրութիւնս
6 որոյ եւ
7 մարմնոյն
8 սորին եւ ցահագործութիւն
9 այժմ
10 այդոց
11 ասի այսպիսի
12 շնորհն առ ի նմանէ
13 այդոց պաշտաւնեայ լինիցիմք
14 զի մի գոք յեղելոց, եւ մի՛ զհասարակ ոմն
15 այլ զԱստուծոյն
16 նշմարիտ
17 եւ եղեալ

18 Հմմտ. Տիմոթէոս, էջ 25. որ եւ տարբեր թարգմանութեամբ տե՛ս Կիրեոյ, Պարապմանց, էջ 454:
19 Այս խոհեցի
20 ի ձեզ որ ի Քրիստոս Յիսուս
ք Փլա. Ի՛ 5-7
21 զծառայի կերպ
22 բոլորեցուն
23 աղքատութեան մերոյս
24 թագաւորեցելոցն
25 Տէրն տիրացելոցն զաղախնականն կերպ զգեցու
26 ամենայնի հարկարար
27 արարածոյս տէրն յայրի իջաւանէ
28 յիջաւանին
29 անբանիցն առնկեցանի
30 մինչ ի
31 մահու
32 ամենայնց գերաշխարհականց

Հականացս զաւրութեանց թագաւորն
1 զգրահճաց ո՛չ մղէ զձեռս: 5 Առ այս քեզ,
ասէ, աւրինակն նուաստախոհութեանն
հայեսցիս չափ:

1 2Երանելոյն Բարսղի, եպիսկոպոսի
Կեսարու՝ ի բանէն, որ յաղագս Հո-
գոյն:

2 Քանզի ո՛չ այսքան երկին եւ 3երկիր
եւ երկարութիւն ծովու եւ ի ջուրսն պարե-
նաբուծեալք, եւ 4ցամաքային կենդա-
նեացն, եւ բոյսք եւ աստեղք եւ աւր5 եւ
6ժամանակք, եւ պծեալ ամենայնիս զար-
դարումն՝ զգերունականն զաւրութեանն
բաղկացուցանեն, որք անկարեն զԱս-
տուածն անտեսանելին 7անախտաբար ի
ձեռն մարմնոյ գրկախառնիլ մահուանն8,
զի զմեզ իւրով ախտակրութեամբն զա-
նախտութիւն շնորհեսցէ:

3 9Նորին, որ ի վկայն Յուդիտեայ:

4 Եւ զի10 եւս զամենայն զփոքունսն
ասել վասն ապականեալ մարմնոյն՝ Բանն
մարմին եղի եւ բնակեաց ի մեզ11. Ընդ
անշնորհակալուսն բարեգործն, ընդ գե-
րեալսն ազատարարն, առ նստեալսն ի
խաւարի արեգակնն արդարութեան. ի վե-
րայ խաչին անչարչարելին, առ ի մահ
կեանքն, առ դժոխս լոյսն, յարութիւնն
վասն անգելոցն:

1 դահնացն ո՛չ բաց մղէ ձեռս
2 Հմմտ. Տիմոթէոս, էջ 21. նոյնը՝ տարբեր թարգ-
մանութեամբ՝ Կիւրեղ, Պարապմանց, էջ 454:
3 երկիր եւ մեծութիւն ակեացն
4 ցամաքային կենդանեաց
5 աւրք
6 ժամանակք եւ զարմաղան ամենայնիս յարդա-
րումն զգերունակ հարստութեանն առկա-
ցուցէ
7 անախտաբար մարմնով
8 մահուան
9 Հմմտ. Տիմոթէոս էջ 22, որ տարբեր թարգմա-
նութիւն է:
10 Յ՝ՎՃ՝ Լ՝ 14

1 10Երանելոյն Գրիգորի Աստուածարա-
նի, Նագագացոյ եպիսկոպոսի, ուստի
առ Արիանոսս յառաջին բանէն, որ
գրորդոյ, գոր մինչ ասիցէ ոք արդեալ:

2 Քանզի սա, որ այժմս ի քէն է ար-
համարհեալ, էր երբեմն, յորժամ գեր ի վե-
րոյ էր քան զքեզ. որ 11այժմ մարդն ա-
ռանց ի բազմաց գոյացեալ՝ եկաց մնաց որ
էրն, եւ գոր12 ինչ ոչն էր13 եառ: 3 14Ի
սկզբանէ էր առանց պատճառի. քանզի ո՞
է պատճառն15 Աստուծոյ. այլ եւ յետոյ լի-
նի յաղագս 16պատճառին, եւ էր հնար
զքեզ փրկել՝ զթշնամանողդ, որով17 յա-
ղագս այդոցիկ արհամարհես զաստուա-
ծութիւնն, զի զքո թանձրութիւնդ ընկա-
լաւ միջնորդաւ մտաւք, 18միաւորեցաւ ընդ
մարմնի եւ եղեւ մարդ, որ խոնարհ19 էր
Աստուած. վասն զի խառնեցաւ ընդ աս-
տուածութեանն եւ եղեւ մի՝ վեհագունին
յաղթելով, զի եղէց այնքան Աստուած, որ-
քան նա մարդ: 4 20Ծնաւ, այլ ի կնոջէ,
սակայն եւ ի Կուսէ. այսոքիկ մարդկա-
յինք, եւ այնոքիկ աստուածայինք. ան-
հայր աստի, անմայր21 անտի՝ բովանդակ
այս աստուածութեանն. յղեցեալ22 եղեւ,
այլ 23ծանուցանի մարգարէիցն յղութիւնն.
այլ եւ խայտաց բանիւ, յաղագս որոյ լի-
նէրն24: 5 Պատեցաւ ի խանձարուրս, այլ ի

10 Հմմտ. Ն, Թ. 32:
11 այժմս մարդ առանց բազմաց
12 որ
13 էրն
14 ի սկզբանն
15 պատճառ
16 պատճառի եթե
17 որովք
18 եւ միաւորեցաւ ընդ մարմին
19 ի խոնարհ
20 այլ եւ եղի ի կնոջէ. սակայն
21 այլ եւ անմայր
22 յղացեալ
23 ծանուցաւ մարգարէին եւ նմին որ ի յղութեան
էր, որ եւ
24 լինէր

բաց պատուեաց զպատանիս¹, ի գերեզմանէն յարեալ². ի մտուր եղաւ, այլ սակայն ի հրեշտակաց փառաւորեցաւ, եւ աստեղքն գուշակելով³, եւ ի մոգուցն երկրպագեցաւ. զի ա՞րդ դու ⁴գայթակղիս երեւելովդ, ո՛չ տեսանելով զիմա[նա]լիսն: 6 Փախեալ յԵգիպտոս, զի փախստական արասցէ ⁵զԵգիպտացոց մոլորութիւնն: 7 Ո՛չ ունէր տեսութիւն եւ ո՛չ գեղեցկութիւն ⁶առ Հրեայս^ա, այլ եւ վայելուչ էր գեղեցկութեամբ քան զորդիս մարդկան. այլ եւ ի լերինն փայլատակէր եւ քան զարեգակն լուսաւորագոյն լինէր՝ ⁷ի հանդերձեալ խորհուրդն ածելով: 8 Մկրտեցաւ իբրեւ զմարդ, այլ ⁸ելոյծ զանէծս իբրեւ զԱստուած, զի սրբեսցէ զՅուրսն⁹. փորձեցաւ իբրեւ զմարդ, այլ յաղթեաց իբրեւ զԱստուած, այլ եւ վստահանալ հրամայեաց, որպէս յաղթեալ¹⁰ աշխարհի^է: 9 Քաղցեալ, այլ կերակրեաց զհազարս, այլ եւ հաց է կենդանական երկնաւոր¹¹: 10 Ծարաւեաց¹², այլ աղաղակեաց. Թե ոք ծարաւի է՝ եկեսցէ առ իս եւ արբցէ. աղբիւրանալ խոստացաւ հաւատացելոց^է: 11 Վաստակեցաւ, այլ ¹³աշխատելոց եւ բեռնաւորաց է հանգիստ: 12 Ծանրացաւ քնով, ¹⁴այլ եւ հողմոց

սաստեաց. այլ եւ զՊետրոս ¹⁵թեթեւացուցանէր՝ զընկղմեալն: 13 Ետ մաքս ¹⁶ի ձկանէ, այլ թագաւոր է պահանջողացն. Սամարի¹⁷ կոչեցաւ եւ դիւահար^է, սակայն փրկեաց որ ¹⁸յերուսաղեմէ իջանէրն՝ անգեալն ի ձեռն աւագակաց. այլ եւ ¹⁹ի զիւլաց ծանուցաւ, եւ ի բաց հալածեաց զգեւան, եւ զլեզէոն²⁰ ախոցն խորասոյգ արար, եւ իբրեւ ²¹փայլակն ետես անգեալ զառաջնորդն դիւաց^է: 14 ²²Քարկոծեալ, այլ ո՛չ ըմբռնեալ. աղաւթէր, այլ լսելի լինէր. արտասուէր, այլ ²³դադարեցուցանէր զարտաւար: 15 ²⁴Հարցանէր. Ո՞ւր Ղազարոս^է, վասն զի մարդ էր, այլ յարուցանէր զՂազարոս, ²⁵քանզի Աստուած էր: 16 ²⁶Վաճառեցաւ, եւ յոյժ դիրազիյն՝ արծաթոյ երեսնի, այլ գնեաց ²⁷զաշխարհս մեծագին իւրով արեամբն: 17 Իբրեւ զոչխար ի սպանումն ածաւ^է, այլ հովուէր զԽորայէլ, բայց այժմ եւ զամենայն աշխարհ. իբրեւ ²⁸գորոջ անձայն^է, այլ բան է ²⁹ձայնի բարբառեցելոյ՝ յանապատի աւետարանեալ: 18 Չարչարեցաւ, խոցեցաւ, այլ բժշկեաց զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս. ³⁰ի փայտի բեւեռե-

1 զպատանսն
 2 յարուցեալ
 3 գուշակեցաւ
 4 գայթակղես երեսելեալ
 5 գեգիպտացոցն մոլորութիւն
 6 առ Հրեայսն, այլ Դաւթայ
 Գ Տէ՛* Ե* Կ* Գ* 2:
 7 ի հանդերձեալն խորհուրդ
 8 զմեղս ելոյծ
 9 զընրս
 10 յաղթեաց
 Ը Հմմտ. Յ*ՎԸ. Ժ. Գ. 33:
 11 եւ երկնային
 Գ Հմմտ. Յ*ՎԸ. Գ. 35, 41, 48, 50
 12 ծարաւեցաւ
 Կ Յ*ՎԸ. Է. 37, Հմմտ. նաեւ 38:
 13 աշխատելոցն եւ բեռնաւորացն
 14 այլ ի վերայ խորոցն թեթեւացաւ, այլ եւ հողմոցն

15 թեթեւացոյց յընկղմելն
 16 այլ ի ձկանէ, այլ եւ
 17 Սամարացի
 Է Հմմտ. Յ*ՎԸ. Է. 20, Ը. 48
 18 յերուսաղեմէն իջանէր եւ յաւագակացն ձեռն անկաւ
 19 ի դիւացն
 20 զլեզեոնն
 21 զփայլակն անկեալ զառաջնորդ դիւացն
 Ը Հմմտ. Գ*Վ. Ժ. 18:
 22 Քարկոծի, այլ ոչ ըմբռնի, աղաւթէ
 23 դադարեցոյց զարտասուս
 24 հարցանէ, թէ ո՞ւր է Ղազար
 Է Տէ՛* Յ*ՎԸ. Ժ. Է. 34:
 25 վասն զի Աստուած է
 26 վանառեցաւ յոյժ դիրազիին՝ երեսուն արծաթոյ
 27 զաշխարհ մեծագին
 Ը Ե* Կ* Գ* 7
 28 զարոջ անձայն է
 Թ Ե* Կ* Գ* 7
 29 աւետարանեալ ձայն բարբառեցելոյ յանապատի
 30 ի փայտն վերացաւ

ցաւ, այլ զփայտն կենաց այսրէն դարձուցանէ. ¹այլ եւ փրկեաց զաւագակն խաչակից, այլ եւ խաւարեցուցանէ զամենայն երեւելիս²: ¹⁹ Քացախ արբ, լեղի եկեր՝ ո՛, որ զՉուրն ի գինի փոխեաց, որ դառնութեան ճաշակացն էր լուծիչ, որ քաղցրութիւնն էր եւ բոլորովին փափագումն. մատնեաց զանձն, այլ իշխանութիւն ունէր դարձեալ³ առնուլ զնա. այլ ⁴զվարագոյր տաճարին պատառէր, քանզի ⁵գեր ի վերոյսն ցուցեալ լինէր. այլ վէմն պատառէր, այլ մեռեալք յառնեին: ²⁰ Մեռանէր, սակայն կենագործէր եւ լուծանէր մահուամբ⁶ զմահ. ⁷թաղեալ ի գերեզմանի, այլ ի դժոխս էջ, ⁸այլ եւ վերածեալ զհոգիսն, այլ եւ յերկինս համբարձաւ. այլ եկեացէ ի վախճանի՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս:

1 Պորթին Գրիգորի՝ Որ ի սուրբ պատմագրայն, ի բանէն՝ Ի պահու իմում կացից, ասէ սփանչելին Ամբակում:

2 Եւ յաղագս գաւազանին այսպէս ուսանիմ¹⁰. եւ վասն նորին ¹¹առակին զմինն ի յենուլ ¹²գիտես, եւ զմիւսն հովուական եւ վարդապետական եւ զբանաւոր ոչխարսն դարձուցանող: ³ Այլ ¹³այժմ քեզ զյենուլն աւրէնքն հրամայեն, զի մի՛ ուրեք¹⁴ խորհրդովն թիւրեցիս՝ արիւն Աստուծոյ ¹⁵լսելով եւ չարչարանս եւ մահս.

մի՛ ուրեք ի վայր անգանիցիս¹⁶ անաստուածաբար, իբրեւ Աստուծոյ ջատագով, այլ առանց ամալթոյ եւ յերկուանալոյ կե՛ր զհացն, ա՛րբ զարիւնն, եթե կենաց փափագիցես. ¹⁷մի՛ ինչ որ յաղագս մարմնոյ¹⁸ են բանք ո՛չ հաւատացես, եւ մի՛ որ¹⁹ վասն չարչարանացն են²⁰ վնասեալ. յեցեալ կացցես հաստատուն, անշարժ, եւ ո՛չ ի միոջէ իմեքէ դրդուեալ յընդդիմակցացն²¹, եւ ո՛չ հաւանական բանիւք ի վայր քարչեալ. ²²ի բարձրութենէ նորակացցես ի գաւիթս՝ յերուսաղէմ. կացուցես ²³գոտն քո ի վերայ վիմին յեցոյ, զի մի՛ սահեսցին²⁴ քո ըստ Աստուծոյ զնացքդ²⁵:

4 ²⁶Յետ սղի:

5 Այժմ կարեւոր է մեզ այսպիսի²⁷ գլխաւորել զբանս: ⁶ Եղաք²⁸, զի բարի կրեսցուք. բարի կրեցաք, վասն զի եղաք²⁹. դրախտն հաւատացեալ եղեւ մեզ, զի փափկանայցեմք. պատուիրան առաք, զի հաճոյ լինիցիմք. զնա ո՛չ պահեցաք՝ ո՛չ անգիտանալով Աստուծոյ, որ ինչ³⁰ լինելոցն էր, այլ ³¹աւրէն դնէր զինքն իշխանութեամբ: ⁷ Խաբեցաք, վասն զի խանդացաւ³² ընդ մեզ չարն. արտաքս ³³անգեալ եղաք, վասն զի անցաք զպատուիրանաւն.

1 այլ փրկէ
2 երեւելիսս
3 միւսանգամ
4 զվարագոյրն
5 ի գերիվերոյսն
6 մահու
7 թաղեցաւ, այլ յարեաւ
8 այլ ի վեր եած գոգիս, այլ
9 Հմմտ. Ժ, ք. 392:
10 ունիմ
11 առակի գմին
12 գիտեմ եւ գմիւսն
13 Բեզ այժմ
14 չիք
15 եւ չարչարանս լսելով եւ մահ

16 անկցիս
17 մի՛ որք
18 մարմնոյն
19 որք
20 չիք
21 յընդդիմակացցն
22 ի բարձրութեան նորակացչի ի գաւիթսն
23 գոտս
24 սասանեսցին
25 գնացք
26 Ժ, ք. 394
27 այսպէս
28 եղեաք
29 եղեաք
30 չիք
31 արիւնադրէր զինքն իշխանութիւնն
32 խանտացաւ
33 անկեալք եղեալք

պահեցաք, վասն զի ո՛չ պահեցաք ¹ի փայտէն գիտութեան, ընդ որով ըմբռնեցաք: ⁸ Սկզբնաւորագոյն էր պատուի[ր]անն, եւ մեզ ժամանակակից հոգւոյն ²դաստիարակութիւն եւ փափկութիւն ողջախոհութիւն էր. հրաման ընկալաք իրաւացի, զի զոր ո՛չ պահելով ի բաց ընկեցաք, պահելով այսրէն առցուք: ⁹ Կարաւտացաք³ Աստուծոյ մարմնանալոյ եւ մարդանալոյ, ⁴զի կեցցուք. ընդ նմա յարեաք, վասն զի մեռաք ընդ նմա. փառաւորեցաք ընդ նմա, վասն զի ընդ նմին յարեաք: ¹⁰ Յոլովք⁵ են ժամանակիս այսորիկ սքանչելիք. Աստուած խաչեալ եւ արեգակն խաւարեալ, եւ դարձեալ լուսաւորեալ. վասն զի պարտ եւ արժան էր ընդ Արարչին չարչարակից լինել եւ արարածոցս. վարագոյր տաճարին պատառեալ, արիւն եւ ջուր ի կողիցն հոսեալ⁶ միւսն⁷ իբրեւ մարդոյ, եւ միւսն առաւել քան զմարդոյ⁸. երկիր շարժեալ, վէճք պատառեալ, մեռեալք յարուցեալ⁹ ի հաւատ վերջնոյ հասարակաց յարութեանն: ¹¹ Ի վերայ գերեզմանին նշանք, որ¹⁰ յետ գերեզմանին, զորս արժանապէս ո՞ ոք գովեսցէ. բայց ոչինչ է իբրեւ սքանչելիս¹¹ իմոյ փրկութեանս. շիթք դուզնաքեայ արեան զաշխարհս¹² ամենայն վերստին ստեղծանէ¹³, եւ լինին իբրեւ խախաց կաթին ամենայն մարդկան, ի միասին զմեզ կապելով եւ ժողովելով:

1 ի փայտէ գիտութեանն
 2 դաստիարակութիւն իմն եւ փափկութիւն ոգւոյ ողջախոհութիւնն
 3 կարատեցաք
 4 մեռաք ընդ նմա, զի մարդիցիմք, ընդ
 5 յոլովագոյնք
 6 հեղեալ
 7 միւսն
 8 զմարդ
 9 յարուցեալք
 10 որք
 11 զսքանչելիս
 12 զաշխարհ
 13 ստեղծանեն

1 ¹⁴Երանելոյն Յովհաննու եպիսկոպոսի Կոստանդինուպոլսի ի կդ թարմամանութենէն աւետարանին Յոհաննու:

2 Ո՛վ անբաւութեանն, որ յայլ ամարանոցն մահուն յաղթելով՝ մահու մատնել կարծեցին եւ ասեն. Զի՞նչ արասցուք, զի մարդս այս նշանս բազումս առնէ*:

3 Մարդ տակաւին զնա կոչես՝ այդչափ առեալդ ապացոյցս նորա աստուածութեանն. զի՞նչ արասցուք. հաւատալ պարտ է եւ ծառայել եւ երկրպագել, եւ ո՛չ եւս կարծել մարդ:

4 Նորին, որ առ Կորնթացիս յառաջի գլխոյն՝ ի չորրորդ բանէն:

5 Այսպէս եւ ա[ռաւել?] ո՛չ նմա մնալ ի սա[հմանի?] մեռելոցն. քանզի լուծանելն զմահն հրաշափառագոյն էր: ⁶ Մի՛ այսուհետեւ ասեր. հի՞մ ո՛չ փրկեաց զինքն ի խաչէն. քանզի նմա զրկախառնիլ փութայր մահուամբն. ո՛չ ապա էջ ի խաչէն՝ ո՛չ զի ո՛չ կարէր, այլ վասն զի ո՛չ կամէր. քանզի բռնաւորութիւնն ո՛չ ստորըմբռնեաց մահուամբ, զիա՞րդ բեւեռք խաչին ստորըմբռնել կարեին. այլ մեզ զիտելի, իսկ անհաւատիցն ո՛չ եւս:

7 Ի նմին գրոց՝ ի Բ. նառէն:

8 Զոր աւրինակ որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնն. եւ այսպէս կորնչին եւ վախճանեցին: ⁹ Զոր աւրինակ եւ երկնաւորքն՝ այսպէս մնան անմահք եւ պայծառացեալք: ¹⁰ Զի՞նչ ապա, եւ ո՛չ եւ նա մեռաւ. այո՛, մեռաւ, այլ ոչինչ անդուստ վնասեցաւ. այլ եւ զայսորիկ զմահն ելոյծ:

14 Հմմտ. Մեկնութիւն ս. աւետարանին, որ ըստ Յոհաննու, 4. Պոլիս, 1717, էջ 711: Այստեղ յառաջ բերածը բաղաձայն է եւ տարբեր բարգմանութեամբ. տե՛ս նաեւ Ոսկեքերան, Մեկնութիւն, էջ 608:

* ՅՊՎԸ. ԺԵ 47

11 Նորին, ի բանէն՝ Այսուհետեւ, եղ-
բա՛րք իմ, զաւրաւո՛րք ի Տէր:

12 Ասեին Փարիսեցիքն ցառաքեալսն.
Կամի՞՞ք անել ի վերայ մեր գարիւն մարդոյն
այնորիկ՞. զի թե մարդ է սոսկ, զի՞ երկեար
ի նմանէ. իսկ եթե Աստուած է, է՞ր վասն
ո՛չ երկրպագես. ո՞չ դու եիր, որ յառաջա-
գոյն ասեիր. Արիւն դորա ի վերայ մեր եւ ի
վերայ որդոց մերոց՞. ուստի՞ ապա երկեար
յարենէ նորա. ո՞վ ոք զքո միտսդ շար-
ժեաց: 13 Ո՞չ կապեցեր, ո՞չ տանջեցեր, ո՞չ
խաչեցեր, ո՞չ մեռեալ տեսեր իջուցեալ ի
խաչէն, ո՞չ թաղեալ տեսեր եւ երկրաւ
ծածկեալ, ո՞չ նշանակ ինչ կնքոյ եղեր ի
վերայ թաղմանն. ո՞չ զգուշացուցեր
զգաւրականսն, ո՞չ համբաւ տրտմական
սերմանեցաւ ի քէն, եթե գողացան աշա-
կերտք նորա. զի՞ երկեար այժմ եւ դողաս
յարենէ նորա: 14 Տեսանես զճշմարտու-
թիւնն յարածամ պայծառացեալ, թէ Աս-
տուած է, որ խաչեցաւն, եւ վասն այսորիկ
յարենէ նորա:

15 Նորին՝ ի ներքողեան խաչին:

16 Զայս ասէ Աստուած՝ ո՛չ զի զմեզ
դատեսցէ՞, այլ զի մի՛ ծոյլս գտցուք. զի
3եթե կար մեր զմեզ կորուսանել՝ ո՛չ զա-
րիւն իւր հեղոյր վասն մեր: 17 Մեռաւ, զի
քեզ անմահութիւն շնորհեսցէ. քաղցեաւ,
զի 4քեզ զիւր մարմինն ջամբեսցէ. ծարա-
ւեաց, զի քեզ զիւր արիւնն արբուցէ.
նստաւ 5ի նաւի, զի զքեզ ի վերայ քերով-
բէից նստուցէ. մկրտեցաւ, զի զքեզ լու-
սաւորեսցէ. ապտակեցաւ, զի զքեզ ազա-
տեսցէ. աշխատեցաւ, զի զքեզ հանգուցէ,

6անց ընդ ծով, զի զքեզ աներկիւղ արաս-
ցէ. ննջեաց 7եւ հանգեաւ, զի զքեզ ան-
հոգս արասցէ: 18 8ի կնոջէ ծնաւ, 9զի
զանցանելն զպատուիրանաւն ի դրախտին՝
ողորմեսցի. կոչեցաւ մարդ, զի զքեզ 10ա-
րասցէ Աստուած. կոչեցաւ Որդի՞ Մարդոյ,
զի դու կոչեսցիս Որդի Աստուծոյ: 19 12Առ
զմերս, եւ ետ զիւրն. կաց յաղաւթս, զի
զքեզ 13 ուսուցէ, որպէս 14առ Ղազարոսն
ասէր. Հա՛յր, 15փառաւոր արա՛ գորդի քո,
զի եւ Որդի քո փառաւորեսցէ 16զքեզ. եւ լի-
նէր ձայն 17յերկնից, ասէ. Փառաւորեսցի.
Գիտեմ, զի հաւնապագ լսես ինձ, այլ վասն
բազմութեանս18, որ շուրջ 19կան զինեւ,
առնեմ, զի հաւատացեմ, թե դու առաքե-
ցեր զիս: 20 Զոր ինչ20 միանգամ յանձին
կրեաց՝ ո՛չ վասն իւր ինչ եւ ո՛չ վասն
Հաւր իւրոյ21, այլ զի ապրեցուցէ խաչիւն
զամենայն ազգս մարդկան:

1 Երանելոյն Կիւրիղի, Աղէփանդրացոյ
եպիսկոպոսի, ի մեկնութենէ Կորն-
թացոց առաջին գլխոյն ի Ե.րդ բանէն:

2 Եւ հարկաւորապէս իսկ22 23առ ըն-
թերակայս ո՛չ մեռանել միայն, 24այլ թա-

« Գործ. Ե 28
բ Մարտ. Ի 25
1 Հմմտ. նոյնը՝ Ոսկեքերան, Մեկնութիւն (Ի Ա. Խաչն Քրիստոսի), էջ 700:
2 դատեսցէ
3 եթէ կամէր գկորուստ մեր, ո՛չ հեղոյր գարիւնն ի վերայ մեր
4 քեզ տացէ գմարմին իւր յուտել. ծարաւեցաւ
5 ի յովանակի

6 ել ի ծով
7 չիք եւ հանգեաւ
8 ի կուսէն
9 զի զմնունդս կանանց ազատեսցէ ի մեղաց
10 աստուածս արասցէ
11 եւ որդի
12 էտ գմեր
13 զքեզ
14 առ Ղազարաւն
15 փառաւորեա
16 զքեզ եղեւ
17 յերկնից՝ փառաւորեցի եւ դարձեալ փառաւոր
արարից
18 ժողովորեանս
19 կան՝ զի
բ Տէ՛ն Յովգ. ԺԵ 41-42. ԺԲ 28. ԺԻ 1:
20 չիք
21 չիք
22 չիք
23 առ արդեան ժամանակս
24 այլ եւ թաղիլ ասի

ղեալ ասեն զնա. ¹զի քան Հաւատացուցանելով զմեռանելն ²ըստ ճշմարտութեանն Եմանուէլն, զտանի եւ ի շիրմի, սակայն³ վերակենցաղեաց, ⁴որպէս ասացին այժմ եւս ի ձեռն զմեռանելոյն մարմնով Հաւատացուցանելով, եթե եղեւ մարմին, ⁵եւ այն՝ զի Աստուած ելով Բան. իսկ ⁶ի ձեռն կոխելոյ զմահ, եթե Աստուած ըստ բնութեան է՝ լրջապէս բացայայտէր. քանզի որպէս է մարդկային⁷ պիտակրելն, ⁸այլսպէս աստուածական յաղթել զմահն:

3 ⁹Նորին, որ առ թագունին մատնեցին:

4 Իսկ Յիսուս դարձեալ աղաղակեաց¹⁰ ձայնի մեծաւ եւ արձակեաց զոգիւն, եւ որ զկնի՞:— 5 *Եթե Հասարակական մարդ էր* ¹¹*Քրիստոս, ի՞նչ սիրեցելոյ նորա այսքան էր ի տարերսն խոռվութիւն. քանզի արեգակն զճառագայթս*¹² *իւր ամփոփեաց, եւ* ¹³*նաւորդ խաւար գործեցաւ. իսկ երկիր զիւր Տէրն տեսանելով ի Հրեիցն այպանեալ՝ հերձանիւր, արձակեաց* ¹⁴*իսկ զսրբոց անձինսն ի դժոխոց:* 6 ¹⁵*Եւ զայս առնելով արդեաւք ո՛չ Աստուծոյ. քանզի Աստուած էր ի մարմնի, որում եւ արարածս թշնամանեցելոյ, յեղանակ իմն իմն միաբանեալ՝ բարկանայր:*

1 Բանգի հաւատացուցանէ
 2 ըստ ճշմարտութեան եմանուէլ զնանի
 3 բայց
 4 որպէս եւ ասացի այժմ
 5 եւ թեպէտ
 6 ի ձեռն
 7 մարդկայնոյն
 8 այսպէս աստուածականն
 9 *Հմմտ. Տիմոթէոս, էջ 291:*
 10 աղաղակեալ
 11 *Մատթ. Իւլ 50. Մարկ. ԺԵ 37, 39*
 12 Քրիստոս՝ մեռեցելոյ
 13 զնաւագայթն
 14 նաւոր խաւարագործեցաւ
 15 եւ դժոխս սրբոցն անձինս
 16 ո՞չ զայս առնելով արդեւք, եթ՝ ոչ Աստուծոյ

1 Երանելոյն Պրոկղի, եպիսկոպոսի Կիլիկեայ՝ ի խաւսիցն, որ յԱնթիմեայ եկեղեցոցն է:

169 Հայրապետն ասէ. Դուք ոչ ընդունիք բնաւ²¹:

170 Կոմիտաս ասէ. Ոչ, զի ոչ ժողովեցան, ²²որ զհաւատն հաստատեցեն, այլ

ժողովեցան, ²³զի զառաջին սուրբսն խոտեացեն եւ զՆեստորին ընկալցին, որպէս եւ արարին իսկ, զի զբուն սուրբսն հալածեցին եւ գայլս կոչեցին:

171 Հայրապետն ասէ. Վասն զի զնոր իրս արինադրեցին, վասն այնորիկ²⁴ նգովեն զնոսա եւ զձեզ խառն:

172 Կոմիտաս ասէ. Մի՛ յարձակիք ի մեզ ²⁵զի մի ատամաթափ լինիցիք, զի մինչ ժողով արարէք ի հայք ընդէ՞ր ոչ արձակեցէք, որպէս Կոստանդինոս՝ առ սուրբն Գրիգոր եւ Կոստանդինուպաւլսացիքն՝ առ զսուրբն Ներսէս կամ գալ ի ժողովն կամ տալ գիր հաւանութեան, իսկ յեփեսացիքն Կիրղիւ²⁶ գրեալ առ սուրբսն երկիցս զգուշանալ ի Նեստորէ: 173 Արդ, դուք, զո՞ր հերձուած²⁷ խլեցիք կամ թէ հերձուած կայր ասդ²⁸ առնել ի հայք, ²⁹կամ յառաջ կամ յետոյ, այլ դուք լծրնկեցք³⁰ լեալք զերդամբ հայոց թագաւորացն Կոստանդինոսի³¹ եւ Տրդատայ նա եւ զձեր հայրապետսն սպանէք: 174 Իսկ թէ որ «Խաչեցարն» ասեմք ոչ յանձնէ, այլ ի ձերոց գրոց եմք ուսեալ, որպէս եւ գրեալ է Ներտառիոս³² Հռոմայեցի, եթէ չեղեւ Հնար Յովսէփայ³³ զմարմինն Քրիստոսի իջուցանել ի Խաչէն, յորժամ զբեւեռան³⁴ ի հանեալ էր, զի փայլատակունք ի փորուածէն³⁵ բեւեռացն հատանէին, եւ ոչ կարէր ժուժել:

175 Ապա ի ձեռս ի վեր տարածեալ կամ հանգրիճեալ պարէգաւտեալ աղաւթէ այս-

1 A չթողիք
 2 B ժողովուն
 3 B եպիսկոպոսոսն
 4 ՆԲՅ չիք քացախադաւան
 5 ՆԲՅ չիք խմորակեր
 6 ՆԲՅ չիք ջրապղտոր
 7 ՆԲՅ չիք նստորասէր
 8 B չիք երեսամաչ
 9 B չիք ատենապատկառ
 10 ՆԲՅ չիք հաւատապատառ
 11 ՆԲՅ չիք գայլասիրտ
 12 B չիք իւնձագգեստ ... ցանկապատառ
 13 ՆԲՅ չիք փարախավազ
 14 B չիք խրամակարկատ
 15 ՆԲՅ չիք հովուատեաց
 16 B չիք ընդդէմ ... դաւղաջողք
 17 ՆԲՅ չիք մարկիոնապաշտք
 18 B չիք նորափառ ... Նեստորի
 19 A արկանէք
 20 B չիք սրբոցն
 21 B բնութիւն փխ բնաւ
 22 B չիք որ ... ժողովեցան

23 A չիք զի ... իսկ
 24 A այնր
 25 B չիք զի մի ... լինիցիք
 26 A Կիրղիւ
 27 B հերձուածք
 28 B աստ
 29 B չիք կամ յառաջ կամ յետոյ
 30 A լծրնկեցք
 31 A կոստանդինոս
 32 B Նեստատիոս
 33 A Յովսէփայ (այսպէս եւ այլուր)
 34 B բեւեռսն
 35 A փորուածէ

պէս. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզար, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»¹: 176 Երիցս անգամ զայս ասացեալ ըմբռնեաց զնա եւ իջուցեալ թաղեաց¹: 177 Իսկ առաքեալքն ի ժամանակս ²ժամանակս յաւուր չորէքշաբաթու եւ ուրբաթու ի ժամ պատարագին նախ զայս ասէին կցորդիւ, եւ ապա գիրս ընթերցեալ պատարագ մատչիւր³: 178 Բայց, որպէս ասացի, ոչ թէ յաւրէնս եղին, այլ ըստ աւուրց եւ ըստ ժամուց հանդիպմանց, որպէս մարգարէի եւ զսպասաւորի Քրիստոսի պատիւ արարեալ: 179 Իսկ ի փոխեալն⁴ Աստուածածնին մահուամբ եղեալ ի գերեզմանի յետ երից աւուրց խնդրեալ ի գերեզմանի ոչ գտին: 180 Ապա⁵ ի Հոգոյն ազդեալ ի նոյն աւուր առաքեալն Թովմայի ասացեալ աղաւթս, զոր եւ այլ առաքեալքն ուսեալ եղին զհետ աղաւթիցն Յովսէփու, որ է Սուրբ Աստուածն այսպէս. Փառաւորեալ ⁶եւ աւրհնեալ միշտ սուրբ կոյսդ Աստուածածին Մարիամ. Մայր Քրիստոսի, մատոյ զաղաչանս մեր Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ: 181 «Խաչեցարն» է, եւ այս սոքիկ կայ ի գիրսն Աւրեղիանոսի⁷ Հռոմայեցւոյ, որ Կանոնաց լրմունք⁸ կոչին վասն յիշատակի եկեղեցւոյ Աստուծոյ: 182 Զնոյն բանս գրէ եւ⁹ Որոգինէս ի գիրն¹⁰ Զատկացն, զոր ընթերցեալ Յոհան Ոսկիբերանն¹¹ կարգէր յիւր ժամանակսն, զոր արգելուին Թէոփիլեանքն¹², թէ զՈ-

րոգինին խորհի¹³: 183 Եւ առ ժամանակս ինչ¹⁴ դադարեաց բանքն: 184 Ապա եւ Կիւրեղ ընդդէմ Նեստորի կարգեաց ի ժողովն՝ Միածին Որդի եւ բանդ Աստուած եւ անմահ էութիւն: 185 Սոյնպէս եւ զսուրբ Աստուածն միախմբեալ երկու հարիւր հարքն ի Հոգւոյն ազդմանէ ձայնիւ կատարեցին, զոր եւ ասորիք ստոյգ ունին յայնմ աւրէ եւ աստ¹⁵: 186 Զայս եւ Դէոսկորոս ասաց¹⁶: 187 Բայց ի ժողովն եւ ոչ յեկեղեցի ուրէք, եւ ի լինել ժողովոյն Քաղկեդոնի հալածական արարին զվեցեքեանն զայն, զոր աճապարեալ Պետրոսի Անտիոքացւոյ գրէ գեղեալ իրսն ի հայս զամենայն, եւ զպատառումն յունաց ի մահուանէն Քրիստոսի, զգուշացուցանէ պինտ կալ ի խոստովանութիւն առաջին սուրբ հարցն, զի նոքա, ասէ, զԱթանասի¹⁷ ումեմն ապականագործի զխմոր եւ ջուր ընկալեալ¹⁸ ի վերայ Քրիստոսի տնաւրէնութեան յաւրեցին, բայց եւ¹⁹ «զԽաչեցարն» չընկալեալ բարձին եւ զՄարիամու գովեստն արհամարհելով ²⁰յայնմ տեղւոյ որոշեցին բարձրավզութեամբ: 188 Զայսոսիկ լուեալ մեր եպիսկոպոսունքն ժողովեցան ի Դուին, եւ ի²¹ Մանծկերտ եղին սահման. Եթէ որ ոք ոչ ասէ զԽաչեցարն²², նզովեալ եղիցի: 189 Մեր պատճառ «Խաչեցարիդ» այդչափ երեւի:

190 Հայրապետն ասէ. Եւ չէ^o ինչ պարսաւանք ամենայն աւուր ասել:

1 Հմմտ. ԳԹ, էջ 508:
 2 B չի՞ ժամանակս յաւուր
 3 B մատչէր
 4 B փոխել
 5 A Ահա փիս Ապա
 6 A չի՞ եւ արհնեալ
 7 B Աւրեղիանոս
 8 B լրումն
 9 B չի՞ եւ
 10 B գիրս
 11 B Ոսկեբերանն
 12 A Թէոփիլեանն

13 Տե՛ս Սոկրատայ Սեդիստիկոսի եկեղեցական պատմութիւն, աշխ. Մ. վրդ. Տէր-Մովսիսեան, Վաղարշապատ, 1897, էջ 465:
 14 B ինչս
 15 B ստոյգ փիս աստ
 16 B ասէ
 17 B զԱթանասիոս
 18 A ընդալեալ (այսպէս եւ այլուր)
 19 B չի՞ եւ
 20 B յայցման փիս յայնմ տեղւոյ
 21 B չի՞ ի
 22 B զաչեցան

191 Կոմիտաս ասէ. *Ջոր աւրինակ թա-
գաւոր երթալ որդովն ի վերայ ապստամ-
բեալ ծառայից իւրոց, որ բռնացեալ ունէր
ի կապանս զնախարարս նորա եւ զերկիրն¹
բաւանդակ, եւ յաղթեալ նմա ի մարտի,
հանէ², զորս ընդ ձեռամբն նորա³ էին, եւ
զնա սպանանէ: 192 Եւ իբրեւ դառնա որդի
թագաւորին արեամբ թաթաւեալ, եւ գե-
րիքն առաջի կացեալ ամենայն աւուր ա-
սեն, եթէ որ վասն մեր հեղեր զարիւն քո
սուրբ եւ հանէր ի կապանաց, ողորմեայ
մեզ. «Խաչեցարն» է: 193 Ասա ինձ, նա-
խատի՞նս համարեր զայն իւր թագաւորն
եւ որդի նորա, թէ՞ պարծանս:*

194 Հայրապետն ասէ. *Եթէ որդին իմ
միով գանիւ գոք փրկէր՝ պատիւ էր գան՝⁴
թող թէ զբազումս:*

195 Կոմիտաս ասէ. *Ջնոյն եւ մեք ա-
սեմք, զի թէ ծնաւ եւ թլփատեցաւ եւ
մկրտեցաւ, մահ ոչ խափանեցաւ եւ արգե-
լեալքն ոչ ելին: 196 Իսկ իբրեւ ի Խաչին
եհեղ զարիւնն վասն կենդանեաց եւ մեռե-
լոց եւ այն աւր զվճիռ պատառեաց եւ ա-
զատ գտաք յաւիտեան, զիա՞րդ համարիմք
ամաւթ լեալ եւ կամ նա որ զսպիսն վասն
մեր դեռ ընդ իւր ունի⁵ առ Հայր, զոր չէ
հնար ումեք⁶ զոք գնել⁷ արեամբ, բայց
նմա, որ Խաչեալն է⁸:*

197 Հայրապետն ասէ. *Բագումք յու-
սացեալք յայդ⁹ եւ գիտեն իսկ,¹⁰ որպէս եւ
ես իսկ գիտեմ, եթէ զամենայն ինչ գիտեմ:
198 Արդ, ասա եւ զայլ ինչ. ջուր գիտեմ,*

*զի չէ աւրէն, բայց¹¹ խմոր եւ աղ ընդէ՞ր ոչ
արկանէք, զի Աւետարանիչն ասէ, թէ՛ Մա-
նուկն Յիսուս անէր եւ զաւրանայր՝:*

199 Կոմիտաս ասէ. *Այն, որ ասէ, թէ
ընդ բանս խռովեցաւ Մարիամ կարծեմ ե-
թէ խմոր եբեր ի¹² Կոյսն կամ թէ՛ ես եմ
հացն իջեալ երկնից՞. մի՞թէ խմորն էր¹³,
ապա ի վեր խմորահատք կան եւ քացա-
խոցք, այլ զոր աւրինակ վարդն եւ մանու-
շակն անապական են եւ այլ ծաղիկքն¹⁴
խառնեալ ի նա անապական ոչ կարէ տալ
զհոտն, զի վարդին խմոր արմատն է եւ ցո-
րեանն ի ձեռն մշակին, իսկ եթէ ես եւ դու
մեծ քննութեամբ անապական հող ի խո-
տոյ եւ ի սերմանէ արկանեմք ի վերայ
բարձրապառաժ աւազի եւ անդ բուսանի
հատ ցորենոյ¹⁵ ատոք հասկ եղեալ, զոր ոչ
յերկնից եւ ոչ յերկրէ չեւ եղեալ ոք անդ
սերմն, եւ բուսանի որպէս որթն անսերմ ի
փայտէն: 200 Նոյնպէս ցորենահատն լեալ:
201 Արդ, զո՞վ ասեմք նմա խմոր, զի չէր:
202 Եւ¹⁶ արդ, եթէ ի հողոյ խմորոյն պատ-
ճառք:*

203 Հայրապետն ասէ. *Ի հարկէ անա-
պական պարտիմք ասել, ¹⁷եւ որ ոչ այսպէս
ասէ, անմիտ է նա:*

204 Տէր¹⁸ Կոմիտաս ասէ. *Այսպէս
խոստովանեայ զկոյսն հող ի հողոյ, եւ ա-
նապական Յորեան ի նմանէ՛ զէմա-
նուէլն¹⁹: 205 Բայց յայտնողն երկու բնու-
թեանց ²⁰մեծ ի հերձուածողս պիղծն Յոր-*

1 B գերկիմ
2 B եւ հանէ
3 B որ փխ նորա
4 B քան
5 B չի՞ր առ Հայր
6 B ումեք
7 B դնել
8 A չի՞ր է
9 B յայտ
10 B չի՞ր որպէս եւ ... գիտեմ

11 B խմորեալ փխ խմոր եւ աղ
... Գ.՝. 4. Բ 40
12 B չի՞ր ի
Ք Յ.՝. 4. Չ 41
13 A է
14 B ծաղիկ
15 B ատոքահատ փխ ատոք հասկ
16 B չի՞ր եւ
17 A չի՞ր եւ ... քան
18 A չի՞ր Տէր
19 A զէմանիւէլն
20 B չի՞ր մեծ ի... պիղծն

նաղ¹ գրեաց ի յիւր² պարապմունսն ի յուրթ ճառին, եթէ ոչ է պարտ դնել խմոր ամենայն աւուր, զի ցորեանն ինքն³ խմոր ունի ինքեան զծնանելն⁴ ցորեանն ասաց աղ, այլ⁵ երկու խմոր չէ գովելի⁶ եւ այլ պարտ է եւ չէ պարտ, զի ցորենահատն ի միմեանս եկեալ⁷ զհամեղուրթիւնսն լնուն զպարկեղտիցն զտեղի աղի, յորում ոչ գտանիցես: 206 Բայց զի ժողովն Քաղկեդոնի այսպէս եղին սահման. չիշխէ ոք կոխել զսահման խմորոյն սրբոյ զայսոսիկ նա: 207 Իսկ մեք⁸ հարցանեմք զձեզ. մինչ յախտից անման չէր մարմին Քրիստոսի եկամուտ յառն բնութենէ՞ դուք զիա՞րդ իշխէք եկամուտ համեղութեամբն անապական աճումն կոչել մարմնոյն Քրիստոսի:

208 Հայրապետն ասէ. Քրիստոս ի վերնատունն ի՞նչ հաց⁹ եկեր:

209 Կոմիտաս ասէ. Յառաջին աւուրն բաղարճակերացն ասեն աւետարանիչքն, եթէ էր Յիսուս ի տուն Յովսէփու¹⁰ հրէի եւ աւրինապահի, եւ հրեայքն անգամ¹¹ ի ծակս մկանցն¹² յուզէին զխմորն եւ ի տունն չմարթի ասել, թէ կայր, զի չէր հնար, եւ Յիսուս դեռ չէր աւանդեալ զաւրէնսն: 210 Եւ Յուդա տարեալ զպատառ¹³ առ հրեայսն ասէր. Ո՞վ հրեայք զաւրինաց բաղարճի ի գինի թացեալ ետ մեզ եւ ասէ. թէ՛ Այս է հացն՝ իջեալ է յերկնից՞, եւ եթէ՛

մարմին իմ է՞ : 211 Արդ, հանէք զնա ի ինչ եթէ իւր կեանս կարէ տալ, ապա եւ ձեզ տա բաղարճ աւրինացս: 212 Զայս գրէ Լեւոն¹⁴ յիւր ի Չորրորդ գիրսն¹⁵. «Քրիստոս աւանդեաց զբաղարճ զպասեքին: 213¹⁶ Բայց պարտ է մեզ խմոր դնել, զի լիցի ախտակիր մարմնոյն Քրիստոսի կատարեալ մարդկութիւն»¹⁷:

214 Հայրապետն ասէ. Ապա այժմ պարտ է զսրբասացութիւն Որդւոյ տալ ինչեցար եւ առանց խմորոյ բաղարճ կագմել:

215 Կոմիտաս ասէ. «Սուրբ Աստուած», որ ծնար ի Կուսէն, որպէս Աստուած «սուրբ եւ հզաւր», որ զդժոխս հզաւրեղապէս գերեցեր, «սուրբ եւ անմահ», որ ոչ թողաւ մարմին Քրիստոսի ի դժոխս¹⁸, «ողորմեա մեզ» ոչ որ թաղեցար կամ ապտակեցար, զի մի՛ աւազակք երեւեսցին¹⁸, այլ որ պարզեցար ի ինչին իշխանապէս, «ողորմեայ մեզ»: 216 «Սուրբ Աստուած» առանց մեղաց մարմինդ, զի Աստուած է, «սուրբ եւ հզաւր» ի գիրս Կիւրղին¹⁹ անբաժ, զի «հզաւր ես, սուրբ եւ անմահ», զմիացեալն²⁰ Բանի, որ ինչիւ խոստացար եւ փրկեալ զքո հաւատացեալքս, «ողորմեա մեզ»:

217 Հայրապետն ասէ. Երեք տիւր²¹ եւ երեք գիշերք²² յո՞յր վայր կատարեցան¹:

1 B Յորնաղ հերձուածողն
2 A չի՛ր յիւր
3 B չի՛ր ինքն
4 B չի՛ր ցորեանն ասաց աղ
5 A եւ չի՛ր այլ
6 B չի՛ր եւ այլ պարտ է
7 B կեալ
8 A չի՛ր մեք
9 A չի՛ր հաց
10 A Յեսեփու
11 B անկամ
12 B փմանցն
13 B պատառն
14 Յովսէփ. Չ. 50

15 Յովսէփ. Չ. 52
16 B ի յիւր փիս յիւր ի
17 B գիրս
18 B չի՛ր Բայց ... մարդկութիւն
19 Հատուածս բացակայում է յունարեկից եւ լատիներեկից կատարուած հայերէն թարգմանութեան մէջ. Սկզբնագիրք տումարի սրբոյն Լեւոնի եւ սահմանի Ս. ժողովոյն Քաղկեդոնի, աշխատասիրեալ յաշակերտաց մեծին Միսիթարայ Արքաեօր, Վենետիկ-Ս. Ղազար, 1805:
20 Հմմտ. Սահմ. ժ. 10. Գործ. Բ. 27, 31:

ԹՈՒՂԹ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ՊԱՐՍՍ

1 Ամենայն բան ջանիլ^ա, ասէ ուրեմն ժողովողն ի խաւսն իւրում, իմաստունն Սողոմոն, մանաւանդ խաւսել բանս մտաւորս եւ լսել յումեքէ զհանճարով ասացեալն, որք են աշխարհական զբաւսանաց եւ ցնորից երկրի խաւսք՝ ի մարդկանէ ասացեալք: 2 Ո՛րչափ եւս առաւել ի Գրոց սրբոց բերանովք արժանաւոր մարդկան՝ սպասաւորաց պատգամացն Աստուծոյ, ճառք գտցին ապաշխարութեամբ լի լսողաց իմանալ, քան թէ սոցա ասել՝ Հոգւոյն շնորհիւ: 3 Վասն որոյ կարաւտանամ յոյժ շնորհիւ Քրիստոսի ես ասաւղս, զոր մարդոյ բերանով ոչ է արժան ումեք խաւսել, բայց թէ բերան Աստուծոյ ոք կարասցէ լինել՝ զպատուականն հանելով յանարգէ, եւ կամ որպէս միւսն, թէ եղ զբերան իմ՝ սուր սուսեր. ապա համարձակեսցի խաւսել հրամանաւ Տեառն եւ ոչ լռել, զի ժողովուրդ բազում լիցի Քրիստոսի:

4 Եւ մանաւանդ յոյժ դժուարին է լինել հասկաքաղ ի հոռնձս եւ ճռաքաղ ի կուլթս՝ զայլոց յառաջագոյն զբանս գրոց ասացեալ մեծաւ քննութեամբ, ոմանց թերեւս եւ ի գիրս տպաւորեալ է զիմաստսն, վասնզի բազմաժամանակեայնն եւ հինն որպէս գինի ախորժելի է յարբմունս քան զնորս. նոյնպէս եւ տարրացեալ զբանն զբազում ժամանակս ի լսողացն միտս, մանաւանդ զի եւ ոչինչ սխալանք ուղիղ հաւատոյ գտանիցին յառաջագոյն ասացեալն, եւ ոչ աննշանից ոմանց կամ սակաւուց վարդապետութիւն բանից իցէ լինել: 5 Իսկ իմ յաստուածայինսն թեւակոխելով մտածութիւնս՝ զյառաջաբերութիւն բանիցն ընծայեցից, եւ զայս ոչ նորոգածեւութեամբ,

յաղագս վերին եւ լուսաշաւիղ գանձուն պատուականի, որ է փրկութիւն աշխարհի, թէպէտ եւ յաման ծածկեալ ըստ Առաքելոյն ձայնի, վասնզի չէ ծագեալ առ նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի^բ, բայց ո՛չ թաքչի ի սիրողաց իւրոց, Հասանէ առ ցանկացաւղս իւր^գ, զի զմտաւ ածելով զնմանէ՝ կատարեալ իմաստութիւն է աւարտել զանուն նորա ուղիղ հաւատովք. արմատ անմահութեան ըստ Սողոմոնեան բանին, առաւել որ ի մահ Որդւոյն Աստուծոյ կենդանացեալք հաղորդեցան անճառաբար, զՀոգւոյն Սրբոյ զյորդեգրութեանն շնորհս յինքեանս բերելով:

6 Գրեալ է, թէ իմաստունն ի ժամանակին յայնմիկ լռեսցէ, բայց այժմ ժամանակս զիս պահանջէ վասն արտաքնոցն, որք ոչ են յայսմ գաւթէ, եւ համարձակութիւն տայ, թէ Գնացեմ մինչ զոյսն ունիմ^դ ի բարեաց գործոց առաքինութիւնս անխափան, եւ թէ Յամենայն ժամ պարտ է ի բարիս նախանձաւոր լինել^ե, եւ դարձեալ՝ Խաւսեցայ զվկայութիւնս Քո առաջի թագաւորաց եւ ոչ ամաչեցի^զ առանց դանդաղանաց մեք եղիցուք փոխանակ բազմաց սատարութիւն աղաւթից իմոցս հաւտի, քաջալերեալք հասցուք ի կատարումն բարեաց, եւ ի նշանակեալ նպատակ երանելոյն Պաւղոսի, որոյ պարծանք՝ խաչն, եւ ազատութիւն՝ յերկինս, եւ կատարիչն՝ Յիսուս: 7 Եւ դարձեալ, թէ Յիշեցեմ գառաջնորդս ձեր, որք խաւսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալ յես զնացից նոցա, նմա-

բ Ի Կոր. Գ 4

գ Ի մատթ. Գ 14

դ Յովհ. Ժ 35

ե Գաղ. Գ 18

զ Առաք. Ն ԺԲ 46

ա Ժող. Ը 8

1 Օրինակ՝ որպէս սուսեր սուր

նաղբ եղերո՛ւք հաւատոցն նոցա[»]. Եւ դարձեալ, թէ Նախանձաւոր լերո՛ւք շնորհացն որ լաւն ենք[։]

8 Եւ մի՛ տարրասցի յիմս խորհրդեան լռութեամբ պատուել զսակաւ բնութիւնս իմ, եւ մի՛ յուլացեալ լքայց զտգիտութիւնս բաղբաղելով, եւ մի՛ քան զեղեալն աւտարածայնեալ, այլ որպէս բանս է՝ թէ Հաստատուն հիմն Աստուծոյ կայ[»] եւ ունի զկնիքս զայս: 9 Քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ, եւ հաստատեալն եմ, թէ կարող է զաւանդն իմ պահել, եւ զդաւանութիւնս ուղղափառութեան հաւատոյ. զի ո՛չ նոր սքանչելիք, ուր զի եւ հովուացն ընդունել շնորհս մարգարէութեան, եւ ձկնորսաց լինել աւետարանիչ բանին Աստուծոյ, եւ Սարեփթուհի ի սովի կերակրի մարգարէիւ, եւ բանի եւ աղբիւր ջրոյ կենդանւոյ անձին Սամարուհւոյ:

10 Ունիմ եւ յոյս քաջալերութեան յԱստուածաշունչ գրոց յարմարական տեսողութեամբ ըստ զանազան դիմաց, ընդ միտս ածելով զայնոսիկ, որք այսպիսեաւ քս վարեցան, առ որս առատապէս զեղան շնորհք մարգարէութեանն Քրիստոսի. քանզի նոյն Տէր է բաւական բոլորեցուն, որ կարգան առ նա: 11 Պարզեւեցցի եւ ինձ բան ի Բանէն, բանալ բերանոյ իմոյ, խաւսել զխորհուրդն Քրիստոսի, պապանձեցուցանել զթշնամիսն ուղղափառ հաւատոյ: 12 Քանզի են ոմանք, ըստ աւետարանին պատմութեան, ունելով զգեստս զառանց, եւ զլեզուս իւրեանց սրեալ ի հայհոյութիւն Սուրբ Երրորդութեանն, յորմէ հրաժարեցոյց զմեզ Որդին Որոտման՝ ո՛չ ընդունել ի տուն եւ ո՛չ ողջունել բանիւ, եւ զնոցին վարդապետութիւնս անուանել ամպս անջրգիս, ծառս պտղակորոյսս, կրկնամեռս, նիւթս կիզման հրոյն

յաւիտենականի, որք վառեն անձանց զհուր զեհենին, սնուցանեն զորդնն անմահ:

13 Արդ՝ ոչ եւս յամել ի նախերգութեանս, այլ պատրաստաբար եւ խոհականագոյնս յաստուածայինսն վերածգել զմիտս:

14 Ես եւ հաւատացեալ ինձ հաւատս այսպէս հաւատամք եւ խոստովանիմք, որպէս եւ հանգիտապատիւ սուրբն Գրիգորիոս, հայրապետ Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստան աշխարհիս, ուսոյց մեզ:

15 Հաւատամք ի Հայր՝ ի Տէր, Արարիչ երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից. եւ ի Միածին Որդին Աստուծոյ, որ ի Հաւրէ եւ առ Հաւր, եւ ընդ Հաւր. եւ ի Սուրբ Հոգին, որ ի նոցունց էութենէ, եւ նովաւ արար զամենայն, որ է մի տէրութիւն, մի զաւրութիւն, մի աստուածութիւն. Հայր յանձնէ, Որդի ի Հաւրէ, Հոգի ի նոցունց ի նոսին իսկութեամբն, էութեամբն, աստուածութեամբն. երեք անձինք, մի կատարեալ կամք, հարթ հաւասար, հասարակ, ի բարձրութիւնս, ի խորութիւնս, ի լայնութիւնս, յերկայնութիւնս. մի բնութիւն Աստուածութեանն, մի պսակ Երրորդութեանն, եւ լի են երկիրք եւ երկիր փառաւք Նորա:

16 Այսպէս հաւատամք եւ խոստովանիմք եւ երկրպագեմք Սրբոյ Երրորդութեանն ի Միութիւն անդր, նոյնպէս եւ սրբոյ Միաւորութեանն յԵրրորդութիւն անդր՝ անարատք, անխառնք, անսկզբունք, համագոյականք: 17 Զի որպէս անխառնելի է Սուրբ Երրորդութիւնն նոյնպէս եւ անբաժանելի. անխառնելի է յաղագս իւրաքանչիւր յատուկ անձնաւորութեանն, իսկ անբաժանելի՝ վասնզի ամենակալ է Հայր, ամենակալ Որդի, ամենակալ Հոգին Սուրբ, մի բնութիւն Աստուածութեանն, մի իշխանութիւն, մի զաւրութիւն, մի պետութիւն:

» ԵճԳ. Ժ. Գ. 7

բ Ե. Գ. Գ. Ժ. Բ. 31

գ Բ. Տ. Գ. Բ. 19

18 Եւ ի վերջին ժամանակս Միածին Որդին Աստուծոյ, կամաւք Հաւր եւ Իւր եւ Սրբոյ Հոգւոյն, վասն մեր եւ վասն մերոյ փրկութեան խոնարհեցոյց զերկինս եւ էջ յարգանդ կուսին, եւ ա՛ն մարմին ի Մարիամայ սրբոյ Կուսէն Աստուածածնէ, եւ միացոյց զանմեռն ընդ մեռոտն, եւ զապականացուն եւ զմահականացուն ընդ անմահ աստուածութեան իւրոյ, խառնեաց եւ միացոյց, եւ արար անապական, զի առանց հակառակութեան՝ նուազն ի լաւէ անտի աւրհնեսցի: 19 Աստուածավայելչաբար ծնաւ ի Սրբոյ Կուսէն, որոյ հետք կուսութեանն ոչ ապականեցան, եւ ի խանձարուրս պատեցաւ կաթնասուն լեալ, եւ յետ երկոտասան ամի եկն ի տաճարն, զի յայտնի արասցէ զիւր աստուածութիւնն. ի վերայ երկրի երեւեցաւ, եւ ընդ մարդկան շրջեցաւ, միաւորութեամբ տնաւրէնութեանն, քաղցեաւ եւ ծարաւեցաւ՝ ոչ սոսկ մարդկային բնութեամբ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն աստուածավայելչաբար:

20 Եւ յետ երեսուն ամի եկն ի մկրտութիւն. մկրտեցաւ ի Յորդանան ի Յովհաննէ, վկայեցաւ ի Հաւրէ. Դա է Որդի Իմ սիրելի: 21 Պահեալ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր՝ յետ այսորիկ փորձեցաւ ի սատանայէ: 22 Բանն մարմնացեալ քաղցեաւ եւ ծարաւեցաւ: 23 Բանն մարմնացեալ զկոյրս լուսաւորեաց եւ զգիշերն ի տիւ փոխեաց: 24 Զչորեքաւրեայ զսիրելին, զՈւր եղիքն ձայնին զուգընթաց արար: 25 Բանն մարմնացեալ ապտակեցաւ եւ չարչարեցաւ՝ ո՛չ սոսկ մարդոյն ասեմ զչարչարանսն, զխաչն եւ զմահն, եւ ո՛չ զնշանագործութիւնսն միայնում Բանին Աստուծոյ, այլ միաւորութեամբ տնաւրէնութեանն. քանզի Բանին Աստու-

ծոյ մարմնացելոյ են ամենայն բարձրագոյնքն եւ խոնարհագոյնքն:

26 Եւ այսպէս, կամաւք եկն ի խաչ, մեռաւ եւ թաղեցաւ, եւ յերրորդ աւուր յարեաւ՝ ըստ Գրոց, զի տիրեսցէ կենդանեաց եւ մեռելոց: 27 Եւ յետ քառասուն տուրնջեան եւ քառասուն գիշերոյ համբարձաւ յերկինս, որպէս տեսին առաքեալքն, եւ նստաւ ընդ աջմէ Հաւր, որպէս ետես սուրբն Ստեփանոս, ի վկայելն իւրում՝ ասէ. Տեսանեմ զերկինս բացեալ եւ զՅիսուս, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ: 28 Եւ գալոց է նովին մարմնովն եւ փառաւք՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:

29 Եւ յետ այսորիկ՝ որպէս Նազիագովն Գրիգոր Աստուածաբանն ասէ. Մի է Աստուած՝ Հայր կենդանի՝ Բանին էական իմաստութեանն եւ զաւրութեան կերպարանին Իւրոյ, կատարեալ՝ կատարելոյ ծնաւդ, Հայր Որդւոյ Միածնի, մի միայն ի միայնոյ, Աստուած յԱստուծոյ՝ կերպարան եւ պատկեր Աստուածութեանն. Բան գործաւոր, իմաստութիւն պարառական, ամենեցուն ընդ լինելութեամբ անկելոցս զաւրութիւն, եւ բոլորիցս արարող. Որդի ճշմարիտ անտեսանելոյն, անապականին, անմահ անմահին, մշտնջենաւոր մշտնջենաւորին: 30 Մի Սուրբ Հոգի՝ Աստուծոյ զէութիւնն ունելով՝ եւ Որդւով երեւեալ յայտնապէս մարդկան. պատկեր Որդւոյ, կատարեալ ի կատարելոյ, պատճառ կենդանութեան, սրբութիւն՝ սրբութեանց շնորհաւդ, որով ծանուցանի Հայր, որ ի վերայ ամենեցուն եւ յամենեսին, եւ Որդի Աստուած, որով ամենեքեան:

31 Երրորդութիւն կատարեալ՝ փառաւք եւ մշտնջենաւորութեամբ եւ թագաւորութեամբ, անբաժանելի եւ անաւտարելի՝ ոչ ստեղծական ինչ եւ ո՛չ ծառայական

« Մատթ. Գ. 17. Ժ. 15. Մարկ. Թ. 6

բ. Գործ. Է. 55

յերրորդութեանն, եւ կամ ներքսածական, որպէս թէ յառաջագոյն ոչ եղելոյ, զկնի ի ներքս ածաւ. եւ ո՛չ երբեք նուագեաց Որդի ի Հաւրէ եւ ոչ յՈրդւոյ Հոգի, այլ անփոփոխելի եւ անայայլելի է միշտ Երրորդութիւնն: 32 Եւ մեք երկրպագեմք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Աստուած՝ զՀայր, Աստուած՝ զՈրդի, Աստուած՝ զՍուրբ Հոգի, մի բնութիւն երից առանձնաւորութեանցն իմանալեաց, կատարելոց, ըստ ինքեանց էութիւնս, բաժանելոց թուով, ո՛չ բաժանելոց աստուածութեամբն:

33 Ընդունիմ եւ գերկոտասան գլուխսն երանելոյն Կիւրղի, որ ընդդէմ Նեստորի ասացեալ է այսպէս, թէ Որ ոչն հաւատայ, թէ Բանն Աստուած չարչարեցաւ մարմնով, խաչեցաւ մարմնով, ճաշակեաց զմահ մարմնով, եւ եղեւ անդրանիկ ի մեռելոց. քանզի միշտ կենդանի է եւ կենդանացուցանէ զամենեանս որպէս Աստուած՝ եղիցի նզովեալ:

34 Եւ յետ այսորիկ որպէս Աստուածաբանն Գրիգոր, եւ Գրիգոր Նէոյկեսարիու, եւ Բասիլիոս Կեսարու եպիսկոպոս, եւ Աթանասիոս, եւ Կիւրիղոս հայրապետ Աղեքսանդրի, եւ սուրբն Գրիգոր Պարթեւ, հայրապետ Հայոց Մեծաց, ուսումնասիրութեամբ եւ գիտութեամբ Աստուծոյ ճանաչեալ զՀին եւ զՆոր Կտակարանս, այսչափ հասու եղեալ մի բնութեան Աստուածութեանն, երից առանձնաւորութեանցն:

35 Ըստ որում ես եւ հաւատացեալ ինձ հաւտս այսպէս խոստովանիմք աներկբայելի հաւատով, եւ զարդարիմք երիւք ժողովովքս այսոքիւք՝ ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեանն, սահմանաւ, զոր եղեալ է ՅՓԸ. աստուածաշունչ սուրբ հարցն որ ի Նիկիա, որոց գլխաւոր սուրբն Ռատակէս հայրապետ Հայոց Մեծաց, եւ ասացին այսպէս վասն Բանին մարմնացելոյ, թէ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնեալ եւ ո՛չ արարեալ, իջեալ ի յերկնից,

մարմնացեալ եւ մարդացեալ ի Սրբոյ Կուսէն Մարիամայ, չարչարեալ՝ այսինքն խաչեալ, թաղեալ, եւ յերրորդ աւուր յարուցեալ, համբարձեալ յերկինս, եւ գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ է վախճան:

36 Նոյնպէս եւ զամենայն աղանդս նզովեցին եւ արտաքս ընկեցին ի կաթողիկէ առաքելական Եկեղեցւոյ: 37 Նախ առաջին զԱրիոս, որ զՈրդի արարած կոչէ, եւ ոչ զԲանն մարմնացեալ ի Սրբոյ Կուսէն, այլ, ասէ՝ Նա է անդրանիկ ամենայն արարածոց եւ նովաւ արար զամենայն: 38 Ըստ նմին եւ ՃԾ. սուրբ հայրապետքն, որ ի Կոստանդնուպաւլիս ժողովոյն, որք [Մակեդոն] մարտնչէին ընդ Հոգին Սուրբ, նզովեցին եւ ի բաց ընկեցին:

39 Նոյնպէս եւ Մ.¹ սուրբ հայրապետքն, որ յԵփեսոս ժողովեցան եւ զամբարիշտն Նեստորիոս նզովեցին եւ արտաքս ընկեցին ի կաթողիկէ Եկեղեցւոյ, որ անդուռն բերանով ասէ. Ո՛չ է պարտ եւ արժան զՄարիամ սուրբ կոյս՝ Աստուածածին խոստովանել, այլ մարդածին, եւ ոչ զխաչեալն Քրիստոս՝ Աստուած, այլ տաճար եղեալ Աստուծոյ Բանին, եւ զԲանն ո՛չ խոստովանել մարմին եղեալ ըստ աւետարանին աւանդութեանց՝ այլ ի մարմնի բնակեալ, այսինքն ի Քրիստոսին՝ ի Մարիամայ ծնիցելոյ մարդոյն, զուգապատիւ զնա կամեցեալ ցուցանել, կամ սակաւ ինչ մեծագոյն, միում ի սրբոց եւ հոգեկիր արանց. եւ բազում եւ այլ հայհոյութիւնս խաւսեցաւ, զի յորժամ զսորա աղանդակցաց բանս ի մէջ բերցուք՝ պատմեսցուք զբովանդակն:

40 Նզովեցին եւ զԵւտիքէս, որ էր վանական ի Կու կղզի, որ զմարմինն տէրունական առ աշաւք խոստովանի, եւ ոչ ի մարդկային բնութենէս, այլ ինքն իսկ

1 Օրինակ՝ երկերիւրքն

մարդ կերպարանեցաւ, ասէ, յարգանդի Կուսին, ոչի՛նչ առնլով ի բնութենէ Կուսին:

41 Նզովեցին եւ զՍաբելիոս Լիբէացին, որ զՍուրբ Երրորդութիւնն մի դէմ խոստովանի, եւ ո՛չ երիս անձինս կատարեալս:

42 Նզովեցին եւ զԱպողինարոս Լաւորիկեցի, որ մասն ինչ առեալ ասէ Քրիստոսի, այսինքն մարմին միայն, եւ ո՛չ բովանդակ մարդ եղեալ. աստուածային էր, ասէ՛ հոգեւորութեամբ հոգիացեալ եւ պէտք ինչ ոչ էին նմա մարդկեղէն հոգւոյ:

43 Նզովեցին եւ զՄարկիոն Պոնտացի, որ ասաց, թէ Աստուած, որ զամենայն արար, չէ բարերար, եւ ոչ հայր բարերարին Քրիստոսի, այլ, այլ ոմն է արդար. եւ ստոյգ Քրիստոս մարմին ի մէնջ ոչ էառ:

44 Նզովեցին եւ զՄարկեղոս եւ զՓոտինոս եւ զՍոփրովինոս, որ զԲանն ազդումն ասեն, եւ զազդումն բնակեալ յայնմ, որ ի զաւակէն Դաւթի եղեւ, եւ ո՛չ էութիւն ինչ անձնաւոր:

45 Նզովեցին եւ արտաքս ընկեցին ի կաթողիկէ առաքելական Եկեղեցւոյ զՊաւղոս Սամոստացի, եւ զտումարն Լեւոնի, եւ զժողովն Քաղկեդոնի, զի ասացին երկուս բնութիւնս եւ երկուս կերպարանս ի Քրիստոս Յիսուս յետ միաւորութեան տնաւրէնութեանն ի Սուրբ Կուսէն, որ լինին յայտնապէս երկու անձինք:

46 Նզովեցին եւ զՍեւերոս, որ ասաց թէ մարմինն Քրիստոսի ապականացու էր մինչեւ ցյարութիւնն, եւ յետ յարութեանն արար զնա անապական:

47 Նզովեցին եւ զՄոնտանոս, որ զինքն Հոգին Սուրբ անուանէ եւ կախարդութեամբ եւ պոռնկութեամբ վարի:

48 Նզովեցին եւ զՄակեդոնիոս, որք զհայր եւ զՈրդի խոստովանին, եւ զՀոգին Սուրբ ուրանան¹:

49 Նզովեցին եւ զՄելքիսեդեկիտան, որ զՄելքիսեդեկ Աստուած անուանեն՝ թէ նա է Որդին Աստուծոյ:

50 Նզովեցին զԳայինոսս, որ զմարդկայինն բնութենէ ասեն՝ զրի որպէս մոմ մատանեալ. եւ շուրջ գան ոգիք՝ փոփոխմամբ եւ ցանկութեամբք ի միմեանս իջանեն:

51 Նզովեցին եւ զՀերովդիանոսս, որ ասեն թէ Հերովդէս էր Քրիստոսն, եւ արդ նմա մնան:

52 Նզովեցին եւ զԱրքանդեղիտան, որ զհրեշտակապետն Աստուած գոյ ասեն, թէ նա՛ մարմնացաւ ի Սուրբ Կուսէն:

53 Նզովեցին եւ զՆաւատիանոսս, որ զապաշխարութիւնն ո՛չ ընդունին:

54 Նզովեցին եւ զՎաղէնտիոն եւ զՄանի եւ զԿոմորուկիոս², եւ զԹէոդորոս [Մամուկեստացի, եւ զԴիողորոս] Տարսոնացի, եւ զԹէոդորիտոս, որ եպիսկոպոս էր Կիւրոս քաղաքի, եւ զԱկակ եւ զԲարծուժա Ընծիհնացի, որ զբնութիւն Որդւոյ յերկուս բաժանեն եւ աստուածութեամբն անչարչարելի ասեն՝ զխաչն եւ զմահն մարդոյն միայն կազմեն, եւ ոչ միաւորութեան տնաւրէնութեանն խոստովանին:

55 Ընդ նմին նզովեմք ես եւ հաւատացեալ ինձ ժողովուրդս, եւ արտաքս ընկենումք ի սրբոյ Եկեղեցւոյ, զամենայն հերձուածաւդս, զորս նզովեալ է սուրբ եւ աստուածահաճոյ հարցն իմոց եւ վարդապետացն. քանզի գրեալ է, թէ Զգոյշ լերո՛ւֆ ի չար մշակացն³, եւ գիտասջիք զայնպիսիսն, որ այնպէսն զնայցեն, արտաքոյ

1 Վերջին երկուսը պակաս են 2, 58 ձեռագրում:
 2 Օրինակ՝ Կոմորիկիոս, որ եւ ուղիղն է՝ իսկապէս Մանիի երկրորդ անունը:
 3 Փլ. Գ. 2

վարդապետութեանն զոր դուքն ուսարուք. եւ դարձեալ, թէ Զգոյշ կացե՛ք անձանց եւ ամենայն հաւտիդ, յորում եղ զձեզ Հոգիմ Սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն՝:

56 Արդ, եւ ես գոհացայ զԱստուծոյ ի վերայ այսոցիկ, որ ասացանս յիմ նուաստիմաստ գիտութենէս, եւ աղաչեսցուք զմարդասէրն Քրիստոս տալ զգուշութիւն առ ի պահել զոր ինչ լուաքս եւ ծանեաք՝ զուղիղ հաւատս, զի եւ մեք եւ դուք ուրախ լիցուք, եւ հերձուածաւղքն զամաւթ զգեցցին: 57 Խնդրեսցուք ի Տեառնէ, զի ընդ հաւատոյս եւ վարս արժանաւորս շնորհեսցէ մեզ՝ զի ի Նորա փառս կեցցուք, եւ մի՛ աստեալս վրիպիցեմք ի յաւիտեանական հանգստեանցն, զոր պատրաստեալ է ընտրելոց Իւրոց: 58 Այլ եւ բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին եղիցուք նմանաւղք այնոցիկ, որք հաւատովք եւ երկայնամտութեամբ ժառանգեցին զաւետիան Աստուծոյ: 59 Նմա փա՛ռք Ամենատեառնն, որ վասն մերոյ փրկութեան մարդացաւ եւ մարդակերպ շրջեցաւ, եկեր իբրեւ զմեզ եւ արբ, տանջեցաւ, չարչարեցաւ, խաչեցաւ, բեւեռեցաւ, սպանաւ, թաղեցաւ, կենդանացաւ, յարեաւ, եւ վերացաւ, եւ նստաւ ընդ աջմէ Հաւր՝ ծնաւղին իւրոյ: 60 Եւ Հայր կենդանացոյց զամենեսեան, որ ի նա հաւատացին, եւ հաղորդեցան աստուածեղէն փառացն, եւ նորոգեցան ի փառս անպատումս. եւ իշխանութիւն ետ որդիս Աստուծոյ լինել, եւ եցոյց նոցա Հայր շնորհաց զԾնաւղն իւր, եւ հրաման ետ մեզ Հայր կոչել զԱստուած:

61 Արդ՝ ճշմարիտ Որդւոյն Աստուծոյ եղբարք անուանեալ, զորս առեալ Որդւոյ առ Հայր մատուցանէ, թէ Ահաւասիկ ես եւ մանկունմ իմ, զոր ետուր ինձ, Հայրք: 62 Եւ դարձեալ ասէ. Պատմեցից զանուն

Քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ աւրինեցից զՔեզ: 63 Որպէս վասն բարեաւք դաւանութեանն Պետրոս՝ զՔրիստոս Որդի Աստուծոյ ծանուցեալ, ըստ որում եւ գերանութեան անուն ժառանգեաց, եւ թէ Դու ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ, եւ դրունմ դժոխոց զնա մի յաղթահարեսցեն: 64 Ընդ նմին հաւատացան նմա փականք արքայութեանն երկնից, կապել եւ արձակել յերկինս եւ յերկրի, որոյ եղերուքն դուք որդիք եւ ժառանգաւորք նորին աթոռոյ, ուղիղ հաւատով եւ բարիաւք խոստովանութեամբ՝ Կամբիչոյ մետրապալիտ, Պաւղոս Արուեստան եպիսկոպոս, Գաբրիէլ Տաճկաց եպիսկոպոս, Յովնան Հերթայ եպիսկոպոս, Սիման Նինուէի եպիսկոպոս, Գաբրիէլ Քարմա եպիսկոպոս, Սաբասիոյ Կոհինիճորական եպիսկոպոս, Բենիամին Սրբնգի եպիսկոպոս, Ստեփանոս Արզնոյ եպիսկոպոս, եւ այլ բազում եպիսկոպոսունք, եպիսկոպոսակցաւք եւ սարկաւագաւք եւ ուխտիւ սրբոյ Եկեղեցւոյ, որք խնդրեցէք զհաւատ քրիստոսասէր Հայոց՝ որք ի դրան արքունի հասեալ կայիք:

65 Ի խնդրոյ ձերմէ, հրամանաւ տերանց, ես Կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս, որ յաջորդեցայ ի կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց, ետու զյետկարս զայս բոլորով սրտիւ եւ աներկբայելի հաւատով, առաջի բազում նախարարաց Հայոց եւ այլ ազգաց քրիստոնէից, որ ի դրան արքունի հասեալ էին, մանաւանդ առաջի մեծի տանուտեառն Խոսրովչնումն կոչեցելոյ, որոյ ճանաչիւր անուն Սմբատ, յազգէ Բագրատունեաց, շինեալ ես եւ հաւատացեալ ինձ հաւատս ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, եւ սրբոյն Գրիգորի՝ կենդանի մարտիրոսին Քրիստոսի, եւ որք ըստ նմանէ սուրբ Հարքն: 66 Որով եւ մեք ո՛չ խո-

* Գործ. Ի 28

բ Ե. Բ 18

գ Ս. Գ. Ի 25

դ Ս. Գ. Ի 18

տորիցուք քան գասացեալ հաւատս գտուրք եւ գաստուածաշունչ հարցն՝ ոչ յաջ եւ ո՛չ յահեակ. զի ճշմարիտ գովելին Աստուծոյ միայն վայել է գիտել, եւ որոց յայտնէ Սուրբ Հոգի մարդկան, այլազգ զաւղեալ բանիւք, վասն անբաւ լայնութեան ծովու յիմաստութեան: ⁶⁷ Սակայն ի մեզ մին եւեթ պահեսցի զգուշութեամբ, ուղիղ հաւատովք եւ առաքինի գործովք հասանել ի նաւահանգիստն խաղաղութեան երկնից արքայութեանն, անշարժ կալ ի հնազան-

դութեան Հաւրն հաւատոյ [անմարմնոյն], եւ կամարար մարմնականացն. եւ ճայնակցելով մեզ ուղիղ հաւատով, մի հաւտ լիցուք քաջ Հովուին, եւ կամ որդիք, ըստ աւետարանին բանին, զի յերեւել ճշմարիտ Հովուապետին, արժանի եղիցուք ընդունել զմեզ յաւթեւանս եւ առնուլ զանթառամ փառաց զպսակն:

⁶⁸ Միասնական Սուրբ Երրորդութեանն փա՛ռք յանարժան բերանոյս, ամէն:

ՄՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԹՈՒՂԹ ԱՌ ԿԻՐԻՈՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌ ՄՈՎՍԵՍ

ՁԵՌՆԱՐԿ՝ ԶՈՐ ԽՆԴՐԵԱՑ ՄՄԲԱՏ ՎՐԿԱՆ ՄԱՐԶՊԱՆ, ՑԱՅՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ, ՈՐՔ ԴԱՐՁԵԱԼ ԺՈՂՈՎԵՑԱՆ ՆՈՐԻՆ
ՀՐԱՄԱՆԱԲ Ի ԴՈՒՆՆ՝ ԿԱՐԳԵԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ, ՅԵՏ
ՄԱՅՈՒՄՆ ՄՈՎՍԵՍԻ

ՍՄՔԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՒ ԻՐ ԹՂԹԵՐԸ

Սմբատ Բագրատունեաց իշխանը (աւելի շատ Վրկանից մարզպան կոչուած) ապրել է Զ դարի վերջին եւ է դարի առաջին տասնամեակներին: Եղել է Հայաստանի մարզպանը մօտաւորապէս 600 թ.: Եթէ ճիշտ է կայսերական զօրքերի կազմում Վահրամ Չուբինի դէմ կռուած եւ կայսեր խանդին արժանացած Բագրատունի Սմբատի հետ նոյնացման ենթադրութիւնը (ըստ Սեբէոսի առասպելականացուած ներկայացման), ապա իր գործունէութիւնը սկսել է նախ Բիւզանդիայում, հետագայում (Աֆրիկայի աքսորից յետոյ) անցել Սասանեան Իրան: Է դարի առաջին տարիներին նշանակուել է Վրկանի մարզպան, եւ յաջողութեամբ պաշտպանել տէրութեան միջինասիական սահմանները: Այդտեղ էլ ստացել է իր միւս պատուանունները՝ Տերանց զինուոր, Խոսրով Շում (Շնում), Բարեյաղթ:

607 թ. ուղարկուել է Հայաստան՝ ըստ ամենայնի՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից հնազանդութիւնը Բիւզանդիայի դէմ հերթական անգամ պատերազմող Սասանեան տէրութեանն ապահովելու առաքելութեամբ: Նպաստել է թափուր կաթողիկոսական պաշտօնում Աբրահամ Աղբաթանեցու ընտրութեանը՝ երկաբնակութեան դատապարտման հողի վրայ: Մեծ ջանքեր է գործադրել Վրաց կաթողիկոսութիւնը եւս քաղկեդոնականութիւնից հեռու պահելու համար, սակայն, հանդիպելով Վրաց եկեղեցու եւ իշխանների համառ դիմադրութեանը, ըստ երեւույթին, ստիպուած է եղել բաւարարուել Սասանեան տէրութեանը վրացիների քաղաքական հնազանդութեան ապահովումով: Մասնակցել է 615 թ. Տիգրանում այսպէս կոչուած Պարսից ժողովին, որտեղ Սասանեան Իրանի քրիստոնեայ բնակչութեան համար միակ ընդունելի ուղղութիւն հռչակուեց միաբնակ հաւատամքը:

Գիրք Թղթոցի-ում պահպանուել են Սմբատի երկու նամակները (Յուրտաւի եպիսկոպոս Մովսէսին եւ Վրաց Կիւրիոն կաթողիկոսին), ինչպէս նաեւ աւանդաբար նրա անուան հետ կապուող երկու հաւատոյ «ձեռնարկներ»: Դրանցից առաջինը կազմել եւ կնքել են Դուինում հաւաքուած կաթողիկոսական ընտրութեան մասնակից աշխարհականները եւ հոգեւորականները՝ Սմբատ Վրկան Մարզպանի եւ Մանասէ Բասենի եպիսկոպոսի գլխաւորութեամբ (տե՛ս ստորեւ՝ Սմբատի երկու թղթերից յետոյ): Իսկ երկրորդը, արդէն Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի ընտրուելուց յետոյ կազմուել է երկաբնակութիւնը եւ միւս աղանդները ժողովի այն մասնակիցների կողմից մերժելու մասին, որոնք նախկինում (591 թ. մինչեւ Իրանի յաղթանակի արդիւնքում Հայաստանի արեւմտեան կէսի վերամիաւորումը իրանահպատակ կէսի հետ) ենթակայ են եղել Բիւզանդիային (վերնագրում ձեւակերպուած է՝ «որք էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց ի թագաւորութեանն Մաւրկան»): Քանի որ այդ ձեռնարկը դժուար է ուղիղ կապել Սմբատ Բարեյաղթի հեղինակութեան հետ, բայց միւս կողմից՝ այն նրա ղեկավարած հակաբիւզանդական դաւանական գործողութեան էական մասն է, յարմար ենք գտել «Մատենագիրք Հայոցում» այդ բնագիրը գետեղել ոչ թէ Սմբատի երկերի շարքում, այլ ստորեւ՝ սոյն ներածականում:

Ձեռնարկ՝ գոր ետուն Աբրահամու Դայոց կաթողիկոսի ի միաբանութեանն աշխարհիս Դայոց այլոքիկ, որք էին ընդ իշխանութեամբ Դոռոմոց ի թագաւորութեանն Մաւրկան

Եւրք եւ տասներորդ ամի Ապրուէզ Խոսրովու արբայից արբայի, իմ՝ Աբրահամու Հայոց կաթողիկոսի, եւ աթոռակցաց իմոց՝ Մանասէի՝ Բասենոյ եպիսկոպոսի, Քրիստափորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, Յովանիսի՝ Ամատունեաց եպիսկոպոսի, Գրիգորի՝ Անանեաց

ցեաց եպիսկոպոսի, Սիովնի՝ Գողթան եպիսկոպոսի, Ահարոնի՝ Մեհնունեաց եպիսկոպոսի, Ներսէսի՝ Բուժունեաց եպիսկոպոսի, Յոհանկայ՝ Էդոյ եպիսկոպոսի, Թաղէոսի՝ Առնաւնայ եպիսկոպոսի, եւ իշխանաց մերոց՝ Տեառն Սմբատայ՝ Վրկան մարգապանի եւ տերանց զինուորի, եւ Գիգա Դաշտկարանի, եւ Վարդապետի՝ Հայոց Շարսաղարի, եւ այլ իշխանաց եւ աշխարհականաց ուղղափառաց առաջի կացեալ՝ Թեոդորոս՝ Սեպիական գնդին եպիսկոպոս, Ստեփանոս՝ Բագրաւանդայ եպիսկոպոս, Մովսէս՝ Խոռխոռունեաց եպիսկոպոս, Քրիստափոր՝ Ապահունեաց եպիսկոպոս, Ներսէս՝ Վանանդայ եպիսկոպոս, հանդերձ վանից երիցամբքս այսոքիւք. Աբրահամ՝ Սրբոյ կաթողիկէի վանից երէց, Սամուէլ՝ Սրբոյ Հոսիսիմէի, Բաբիլաս՝ Սրբոյ Յովհաննու վանաց երէց, Խոսրով՝ Աւշականու, Յաւիտեան՝ Եղիվարդայ, Դաւիթ՝ Երեւանայ, Իսմայէլ՝ Գառնոյ, Յունանէս՝ Աւանի, Իսրայէլ՝ Պողապանից, Ջոջիկ՝ Արամունից, Յովհանիկ՝ Արտաւազդայ ապարանից, Աբաս եւ Որդեակ եւ Աբրահամ՝ Փարպիոյ, Միհայէլ՝ Աղցից, Գրիգորիս՝ Արմոյ, Կոզմաս՝ Ուրդայ, Մայէն՝ միւս Արմոյ, Յովհանիկ՝ Արծափաց, Սիմոն՝ Դարունից, Սամոտ՝ Բագարանի, եւ այլ վանից երիցամբք հանդերձ, եկեալ յանդիման մեր՝ զբարեպաշտութիւն խոստովանեցին, նզովելով նոյնաձեւս ըստ երանելի հարցն մերոց զամենայն հերձուածոցս, եւ զԱրիոս, եւ զՄակեդոն, եւ զՆեստոր, եւ զԵւտիֆոս, եւ զչար ժողովն Քաղկեդոնի, եւ զպիղծ տումարն Լեւոնի, եւ աղաչանս մատուցանելով առաջի մեր՝ խառնել զինքեանս ի միաբանութիւն եկեղեցւոյ ճշմարիտ հաւտին Քրիստոսի: Եւ ասացին միաբանութեամբ ամենեքեան, թէ զխոստովանութիւն եւ զսահման հաւատոյ, զոր հաստատեցին երանելի հարքն մեր, անշարժ պահեսցուք առաջի Աստուծոյ եւ հոգեւոր հարանցոյ մերոց, եւ զապաշխարութիւն, զոր տայք մեզ, յաւժարութեամբ ընդունիմք եւ կամաւ կատարեմք, եւ ի հաղորդութենէ նզովելոցն ամենեւին հեռանամք, եւ թէ խաբէութիւն ինչ իցէ ի կամս ուրում, նզովեսցի հոգւով եւ մարմնով յԱմենասուրբ Երրորդութենէն: Եւ ընկալեալ զնոսա ապաշխարութեամբ, բեռն ինչ եւ մեր բառնալով զնոցա՝ ըստ գրեցելումն կնեցաւ ձեռնարկս այս ի նոցանէն յանդիման մեր ամենեցուն, վկայութեամբ Սրբոյ Երրորդութեանն, որում փառք յաւիտեանս. ամէն:

Նշուած ձեռնարկները պահպանուած են միայն «Գիրք թղթոցի» զմամուեան գրչագրում եւ հրատարակուած թիֆլիսեան տպագրում (մենք վերահրատարակում ենք Նորայր արքեպ. Պողարեանի պատրաստած երուսաղէմեան երկրորդ տպագրից): Իսկ երկու թղթերը բացի զմամուեան գրչագրից՝ պահպանուած են նաեւ այսպէս կոչուած «Էջմիածնական Գիրք թղթոցի» ձեռագրերում (ՄՄ թիւ 3062 եւ 2966), որոնք մանրամասնօրէն համեմատել ենք ԳԹԷ₁, ԳԹԷ₂ տառանիչերով (թիֆլիսեան տպագրիրը նշուած է ԳԹԹ):

Պարոյր Մուրադեան, Ալեքսան Յակոբեան

ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Հ. Ն. Ակիմեան, Կիրիլոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910
2. Գիրք թղթոց, Երուսաղէմ, 1995
3. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Աբգարեանի, Երեւան, 1979
4. Ուխտանէս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871
5. Մ. արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա.

ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՍՄԲԱՏԱՅ՝ ՎՐԿԱՆ ՍԱՐԶՊԱՆԻ, ԱՌ ԿԻՐՈՆՆՆԵՐՆԵՐԻՆ՝ ՎՐԱՑՑ

ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍ

1 Սրբասիրի Տեառն Կիւրոնի՝³ Վրաց կաթողիկոսի, եւ այլ եպիսկոպոսաց աթոռակցաց ձերոց, եւ իշխանաց աշխարհիդ՝ Ատրնեքսեհի եւ ամենայն լաւաց, ի Սմբատայ⁴ Գուրկան մարզպանէ եւ տերանց⁵ զինուորէ, եւ ի Գիգայ Դաշտկարանէ⁶, եւ ի Վարդապետէ՝ Հայոց Շարսաղարէ, եւ յայլ ազատորերոյ⁷ խոնարհութեամբ եւ սիրով ողջնին:

2 Քանզի որպէս⁸ յառաջագոյն հարանցն⁹ մերոց եւ ձերոց եւ վարդապետաց աշխարհիս միաբանութեամբ գլխին կարգս ոմանց եւ զատելի վարս տեսել, որ աննման եւ թիւր էր մեր հաւատոյ եւ կանոնաց, մերժեալ էր զնոսա նզովիւք, եւ վասն հեռաւորութեան մեր եւ նոցա աշխարհաւ եւ ոչ խիղճն այն առ ամենեսեան ի¹⁰ մտի էր, բայց առ սակաւս ոմանս հաստատուն կայր: 3 Իսկ մինչ մեղաց յաճախութիւն եղեւ եւ առ¹¹ միմեանս եհաս կեալ¹² ապստամբեալք¹³ ի բնիկ տերանց, ապա թէ՛¹⁴ վասն հաւատոյ էր, եւ կամ վասն կարգաց եւ¹⁵ վարուց նոցա¹⁶: 4 Եւս

քաջ ի վերայ հասաք, զի¹⁷ աննմանք եւ թիւրք էին ամենեւիմք¹⁸ մեր կարգաց¹⁹, այլ տեսանէաք եւ յԱրեաց աշխարհին, որ²⁰ քրիստոնեայքն ուղղափառք էին՝ զնոյն պայման մեր եւ ձեր հարանցն²¹ եւ նոցա տուեալ քաջ²² պատուիրանաւ: 5 Ապա առաւել եւս հասաք ի վերայ, թէ՛ որք ի մէնջ²³ էին եւ միաբանեցան²⁴ ընդ նոսա՝ պակասամիտք եւ լոյծք²⁵ ուրեմն էին յառաքինութենէ եւ ի հաւատոց, եւ այս պատերազմս²⁶, որ ընդ հաստատունսն եւ ընդ լոյծսն²⁷ էր, չար եւ դառնագոյն թուէր քան զամենայն չարիս²⁸:

6 Եւ յորժամ մարդասէրն Աստուած ողորմեցաւ, եւ արքայից արքայ բարերարութեամբ արար եւ զմեզ յաշխարհարձակ՝ հաւատոյ եւ եկեղեցեաց կարգի աւելագոյն²⁹ պատուէր ի վերայ արար, զի ընդ միմեանս խաղաղութիւն եղիցի, քանզի էր ինչ, որ լուաւ: 7 Եւ մինչ բարեաւ յաշխարհս հասաք, առաջնորդութեամբ³⁰ Սուրբ Հոգւոյն հայրապետ կարգեցաւ, եւ այն ամենայնի հակառակութեան եւ թերութեան ուղղութիւն³¹ եղեւ, Քրիստոս

1 ԳԹԹ Կիրիոն
2 ԳԹԷ չի՛ք Վրաց
3 ԳԹԷ, Կիրիոն
4 ԳԹԷ Սմբատա
5 ԳԹԷ տէրանց
6 ԳԹԷ Դաշտկարնէ
7 ԳԹԷ, ազատորերոյ
8 ԳԹԹ չի՛ք որպէս
9 ԳԹԷ հարանց
10 ԳԹԷ ի ստոյգ ի
11 ԳԹԹ չի՛ք առ
12 ԳԹԹ չի՛ք կեալ (գրչագրի վնասուած հատուած)
13 ԳԹԷ ապստամբեալ
14 ԳԹԹ չի՛ք (ա)պա թէ (վնասուած հատուած)
15 ԳԹԹ չի՛ք (կար)գաց եւ (վնասուած հատուած)
16 ԳԹԷ սոցա

17 ԳԹԹ չի՛ք զի (գրչագրի վնասուած հատուած)
18 ԳԹԷ ամենեւիմ
19 ԳԹԹ չի՛ք (կար)գաց (վնասուած հատուած)
20 ԳԹԹ չի՛ք (աշխարհի)ն որ (վնասուած հատուած)
21 ԳԹԷ հարանց
22 ԳԹԹ չի՛ք տուեալ ք(աջ) (վնասուած հատուած)
23 ԳԹԷ մէնջ
24 ԳԹԹ միաբանեցին
25 ԳԹԷ ծոյլք
26 ԳԹԷ պատերազմ
27 ԳԹԷ ծոյլսն
28 ԳԹԹ չարս փիս չարիս
29 ԳԹԷ, առաւելագոյն
30 ԳԹԷ, յառաջնորդութեամբ, ԳԹԷ, առողջութեամբ փիս առաջնորդութեամբ (ԳԹԹ)
31 ԳԹԷ, խաղաղութիւն փիս ուղղութիւն

Աստուած փառաւորի, որպէս յառաջագոյն ուսուցին մեզ երանելի վարդապետքն, եւ եղեաք ամենեքեան մի հաւատ¹, որ ընդ արքայից արքայի իշխանութեամբ² եմք:

8 Զնոյն հարկաւորեցաք գրել եւ առ ձեր սրբասիրութիւն³, զմերս պատմել ձեզ, եւ զձեզ ընդ մեզ միաբանել, որպէս եւ մեր հարքն էին: 9 Քանզի միոյ իսկ վարդապետի աշակերտ եւ վիճակ⁴ եմք լեալ⁵ եւ մեզ նովին հաւատով՝ որպէս եւ հարքն մեր, եւ զհաւատ առ Աստուած ունել, եւ զսէր առ միմեանս: 10 Բայց է եւ⁶ ինչ լուր, որ յաշխարհականաց⁷ լուայ⁸ եւ սակայն չհաւատայի⁹: 11 Իսկ հաւաստի¹⁰ յեպիսկոպոս¹¹ Յուրտաւայ, որ աստս է, լուաք եւ կարի դժուարացաք: 12 Քանզի մեր եւ այդ աշխարհի ազատորերոյ¹² թէպէտ արիւն¹³ եւ հարազատութիւն ի միջի կայր, բայց հաստատութիւն եւ վստահ լինել մեզ որպէս յերդումն ինչ՝ այդ սուրբ վկայարան¹⁴, որ ի Յուրտաւ, պատուական եկեղեցիդ հաստատեցաւ: 13 Եւ պաշտաւն¹⁵ եւ կարգդ¹⁶

հայրենի¹⁷ ձեր միջի էր, եւ փոխելդ թշնամութիւն իմն¹⁸ ի մէջ արկանէ¹⁹, մանաւանդ թէ եւ թերութիւն, արգելուլ եւ մեզ աստի²⁰, որք կամին գալ եւ²¹ երկիր պագանել²² սրբոյ խաչիդ, եւ ոչ տալ մտանել, որք այտի²³ գան ի սուրբ Կաթուղիկէ եկեղեցիս²⁴ եւ յայլ²⁵ վկայարանս յաղաւթել:

14 Եւ այսմ մեծի պարգեւի²⁶, որ յԱստուծոյ տուան մեզ եւ ձեզ, խափանիչ²⁷ թէ ոք յանխրատից եւ կամ ի²⁸ տգիտաց լինէր, ձեզ պարտ էր խրատել վարդապետութեամբ զայնպիսին եւ պատուհասել²⁹, որ հակառակութիւն ի միջոյ բառնայր, թող թէ ձեզ առնել զայդ, որ կարի անհնարին եւ չար է: 15 Կամէաք եպիսկոպոսունս հանդերձ քերթողաք³⁰ արձակել, զկիրթան, որ գիտեն³¹ զչարութիւն հերձուածոյ³², որ զձեզ ի վերայ հասուցանէին: 16 Բայց ապա առ ժամս բաւական համարեցաք, ի ձեռն ազատ արանցդ նախ թղթով³³ զկամս ձեր գիտել:

17 Ո՛ղջ լերուք³⁴:

1 ԳԹԷ հաւտ փիս հաւատ
2 ԳԹԷ իշխանութեամբ արքայից արքայի փիս արքայից արքայի իշխանութեամբ
3 ԳԹԷ₁ սրբութիւնդ ԳԹԷ₂ սրբասիրութեանդ
4 ԳԹԷ աշակերտի եւ վիճակի
5 ԳԹԷ կեալ
6 ԳԹԷ չի՞ եւ
7 ԳԹԷ յաշխարհականացս
8 ԳԹԷ₂ լուա
9 ԳԹԹ սակաւ ինչ հաւատացի փիս սակայն չհաւատայի (ԳԹԷ)
10 ԳԹԷ հաւաստիւ
11 ԳԹԷ յեպիսկոպոս
12 ԳԹԷ ազատաց որերոյ փիս ազատորերոյ
13 ԳԹԷ եւ արիւն
14 ԳԹԷ վկայարանդ
15 ԳԹԹ պաշտաւնդ
16 ԳԹԷ₁ կարգ

17 ԳԹԹ հայերէն ի փիս հայրենի
18 ԳԹԹ չի՞ իմն
19 ԳԹԷ արկանէմ
20 ԳԹԹ աստ
21 ԳԹԷ չի՞ գալ եւ
22 ԳԹԷ₂ երկրպագանել փիս երկիր պագանել
23 ԳԹԷ այդի
24 ԳԹԹ եկեղեցի
25 ԳԹԷ այլ
26 ԳԹԷ պարգեւ
27 ԳԹԷ եւ խափանիչ
28 ԳԹԷ չի՞ ի
29 ԳԹԹ պատուհասեալ
30 ԳԹԹ ԳԹԷ₂ քերթողալ
31 ԳԹԷ գիտել փիս որ գիտեն
32 ԳԹԹ հերձուածոց
33 ԳԹԷ₂ թխտովս
34 ԳԹԷ չի՞ Ողջ լերուք

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՍՄԲԱՏԱՅ ԱՌ ՄՈՎՍԵՍ

1 Զգիր ողջունի սրբութեան ձերոյ՝
ընկալաք եւ ի Քրիստոս ուրախացաք:

2 Որ վասն թղթոյն² պատասխանեաց
զարմացեալ էք, զոր³ առ մեզ գրեալ էր
Վրաց կաթողիկոսն⁴, մեք աւելի զարմա-
ցեալ կայաք յերկոցունց կողմանց. յա-
ղագս նորա, եթէ զիս⁵ զայսպիսի բաներ
մահաբեր⁵ սուտ գրէր առ մեզ, եւ վաղիւ
յանդիմանէր⁶ ի մէնջ. եւ զձէնջ, թէ զի⁷
յանձն⁷ չէր վստահ աստանաւր ի մաւտ,
զիս⁸ զիս կայր արդեւ⁸ եւ զմեզ յորդորէր
եւ թողիմս տայր առնել յաշխարհն, եւ
զինքն ինքեամբ յանդիմանէր: 3 Բայց⁹
ապա էր ինչ, որ յառաջագոյն իսկ յաշ-
խարհականաց լուեալ էր յաղագս սրբու-
թեան ձերոյ, եւ այժմ ի Վրթանիս¹⁰ Քեր-
թողէ¹¹ աւելի տեղեկացաք, թէ որպէս հա-
լածեցայք եւ եկիք այսր. եւ մանաւանդ՝
վասն հոգեւոր իրաց, որում Տէր կաթողի-
կոս ի վերայ հասեալ է եւ տեղեկացեալ եւ
զձեզ ընկալեալ: 4 Մեզ աւելի քննութիւն
առնելոյ զի¹²նչ պէտք են:

5 Արդ՝ զիս ահաւասիկ¹² փութով ի
դուռն խնդրեալ է արքայից արքայի¹³. քեզ
վաղ ասացի, թէ գրեմ առ արքայից
արքայ, որ բարերարութեամբ հրաման
տայ, եւ¹⁴ երթաս ի քո եկեղեցւոյն¹⁵ նստիս

եւ քո հաւատով զքո ժողովուրդս ունիս¹⁶:
6 Դու ասես՝ ես Ատրնեսոսն եւ Վահանայ
եղբա՞րց ինչ եմ¹⁷, եւ ոչ կարեմ սուր առ-
նուլ¹⁸ եւ ընդ ամենայն Վիրս կռուել:
7 Արդ՝ քո հոգի եւ գործդ նախ ողորմու-
թեանն Աստուծոյ յանձն լիցի, եւ ապա՝
Տեառն կաթողիկոսի: 8 Թո՛ղ զի գրէ եր-
կիցս եւ երիցս անգամ, ո՛ր գիտէ, թէ¹⁹ զան
յուզղութիւն:

9 Ապա թէ ի²⁰ նոյն յամառութեան
կան, զի ի²¹ նորա ի թղթին իսկ աւանիկ
գրեալ էր, ասէ՝ հարքն մեր եւ ձեր զերու-
սաղէմի հաւատն ունէին եւ սուրբն²² Գրի-
գոր զայն ետ նոցա, եւ մեք զնոյն ունիմք.
արդ՝ այդում պատասխանի Տէր կաթողի-
կոսն²³ առնէ: 10 Եւ եթէ²⁴ ի նոյն խելագա-
րութեան²⁵ կան եւ ի միաբանութենէ մերմէ
հեռանան, զարիւն նոցա ի գլխոց իւ-
րեանց²⁶ խնդրեսցէ Տէր Աստուած, եւ մեք
անպարտք եղիցուք: 11 Բայց սակայն
զիս²⁷ զգործդ ի գլուխ երթայ, գրեցէ՛ք²⁷
առ իս: 12 Թէ զանհնազանդութենէ լսեմ,
եւ տայ Տէր Աստուած ժամ յաջող, ո՛ր գիտէ,
թէ եւ աստէն իսկ ընդունի հատուցումն
յԱստուծոյ ի ձեռն մարմնաւոր տերանց:

13 Ո՞ղջ լեր ի Տէր²⁸:

1 ԳԹԹ՝ Բն փխ ձերոյ

2 ԳԹԷ՝ Թխտոցն ԳԹԷ՝ Թրթոցն

3 ԳԹԷ՝ զի փխ գոր

4 ԳԹԹ՝ կաթուղիկոսին

5 ԳԹԹ՝ մահաբեր բաներ փխ բաներ մահաբեր

6 ԳԹԷ՝ յանդիմանի

7 ԳԹԷ՝ յանձնն

8 ԳԹԷ՝ արդեւաւ

9 ԳԹԹ՝ չի՞ Բայց

10 ԳԹԷ՝ Վրդանիսէ

11 ԳԹԹ՝ Քերթողէ

12 ԳԹԹ՝ ԳԹԷ՝ աւասիկ

13 ԳԹԷ՝ չի՞ արքայից արքայի

14 ԳԹԹ՝ եւ որ

15 ԳԹԹ՝ եկեղեցւոյ

16 ԳԹԷ՝ չի՞ եւ Բն հաւատով ... ունիս

17 ԳԹԷ՝ ի չեմ փխ ինչ եմ

18 ԳԹԷ՝ սուր առնուլ կարեմ փխ կարեմ ... առնուլ

19 ԳԹԹ՝ թող զի փխ թէ

20 ԳԹԷ՝ չի՞ ի

21 ԳԹԷ՝ չի՞ ի

22 ԳԹԷ՝ սուրբ

23 ԳԹԷ՝ կաթուղիկոս

24 ԳԹԹ՝ թէ

25 ԳԹԷ՝ խելարութեան ԳԹԷ՝ խելարութեան

26 ԳԹԷ՝ գլխոյ փխ գլխոց իւրեանց

27 ԳԹԷ՝ գրեցէ՛ք եւ

28 ԳԹԷ՝ չի՞ Ողջ լեր ի Տէր

**ՁԵՌՆԱՐԿ՝ ՉՈՐ ԽՆԴՐԵԱՑ ՍՄԲԱՏ ՎՐԿԱՆ ՄԱՐԶՊԱՆ, ՅԱՅՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ, ՈՐՔ ԴԱՐՁԵԱԼ ԺՈՂՈՎԵՑԱՆ ՆՈՐԻՆ ՅՐԱՄԱՆԱՒ Ի
ԴՈՒՆ՝ ԿԱՐԳԵԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ, ՅԵՏ ՄԱՅՈՒԱՆՆ ՄՈՎՍԵՍԻ. ԵՒ
ՉԱՅՍ ՁԵՌՆԱՐԿ ԵՏ ՆՈՑԱ:**

1 Ամենագովելոյ եւ փառաւորելոյ եւ աստուածաշնորհ պատուովք պայծառացելոյ Տեառն Սմբատայ Վրկան մարգպանի եւ տերանց զինուորի, եւ Տեառն Գիգայ Դաշտկարանի, եւ Վարդապետի՝ Հայոց Շարսաղարի. ի Մանասէ՛ Բասենոյ եպիսկոպոսէ, ի Քրիստափորէ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ, յԱբրահամայ՝ Ռշտունեաց եպիսկոպոսէ, ի Յովհանէսէ՝ Ամատունեաց եպիսկոպոսէ, ի Գրիգորէ՝ Անձեւացեաց եպիսկոպոսէ, ի Սիրովնէ՝ Գողթան եպիսկոպոսէ, ի յԱհարոնէ՝ Մեհնունեաց եպիսկոպոսէ, ի Ներսիսէ՝ Բուժունեաց եպիսկոպոսէ, ի Յոհանկայ՝ Եղոյ եպիսկոպոսէ, ի Թաղէոսէ՝ Առնոյ եպիսկոպոսէ, Տերամբ ողջոյն:

2 Եւթն եւ տասներորդ ամի Ապրուէզ Խոսրովու արքայից արքայի, յամսեանն մարերի, որպէս փառաւորութիւնդ ձեր յայս եպիսկոպոսաց, զոր ի վերոյդ գրեալ է, որ ի ժամուս ի Դու[ը]նի ի սուրբ եկեղեցւոջս դիպաք, ձեռնարկ խնդրեցէք վասն սուրբ եւ ուղղափառ հաւատոյ, զոր մեր հարանցն եւ երանելի վարդապետացն կալեալ է, եւ այժմ ունիմք կամաւքն Աստուծոյ:

3 Արդ՝ որպէս յառաջագոյն հայրապետացն Հայաստան աշխարհիս, եւ եպիսկոպոսացն եւ քահանայից եւ իշխանաց եւ աշխարհականաց, սոսկալի նզովիւք մերժեալ եւ ի բաց ընկեցեալ է զամենայն հեր-

ձուածողս՝ զԱրիոս եւ զՄակեդոն, եւ զանյիշելին Նեստոր եւ զԵւտիքոս, եւ զժողովն Քաղկեդոնի եւ զպիղծ տուժարն Լեւոնի, եւ հեռանամք ի հաղորդութենէ նոցա ճշմարտութեամբ: 4 Ապա եթէ խաբէութեամբ ինչ իցեն բանքն մեր, նզովեալ եղիցուք յԱմենասուրբ Երրորդութենէն:

5 Ըստ բանիդ ձերում նոյնպէս եւ ես՝ Սմբատ Վրկան մարգպան եւ տերանց զինուոր, եւ Գիգ Դաշտկարին, եւ Վարդապետ՝ Հայոց Շարսաղար, նզովեմք զնզովեալսդ ի ձէնջ, որպէս հարքն մեր երանելիք նզովեցին զնզովեալսն ի ձերոց հարանցն, եւ աւրհնեմք զաւրհնեալսն ի ձէնջ, որպէս եւ հարքն մեր աւրհնեցին զաւրհնեալսն ի ձերոց հարանցն երանելեաց եւ վարդապետաց աշխարհիս: 6 Եւ յայս ուղղափառ հաւատոյս վերայ հաստատուն եւ անշարժ կացցուք, ի կեալ եւ ի մեռանել ընդ ձեզ: 7 Ապա թէ խաբէութեամբ ինչ իցեն բանքս մեր, նզովեալ եղիցուք յԱմենասուրբ Երրորդութենէն:

8 Եւ կնքեցաք զձեռնարկս զայս, եւ եղաք ի սուրբ եկեղեցւոջս Դունայ: 9 Ես՝ Մանասէ Բասենոյ եպիսկոպոս՝ իմ աթոռակցաւք հանդերձ, որոց անուանքն ի վերոյդ յիշատակեալ են: 10 Եւ Սմբատ Վրկան մարգպան եւ տերանց զինուոր՝ իւր եղբարաւք հանդերձ, առաջի Ամենասուրբ Երրորդութեանն, նախ սրտիւք մերովք եւ ապա մատանեաւք մերովք:

ՅՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՈՄԵՑԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՒ
ՈՐ Ի ՆՄԱ ՅԱՐԻՆԵԱԼ ԿԱՐԳԱՑ

ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՑ ԵՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՆԱՊԱՇԽԱՐ ՄԵՂԱՒՈՐԱՑ

ՅՈՎՅԱԼ ՄԱՅՐԱԳՈՍԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Ծնունդ է, հաւանաբար, 2 դ. վերջին քառորդին, իր ուսումն ու կրթութիւնը ստացել Դուրնի կաթողիկոսարանի նշանաւոր դպրեվանքում: Կոմիտաս (615-628 թթ.), Քրիստափոր (628-630 թթ.), Եզր (630-641 թթ.) կաթողիկոսների օրօք եղել է Դուրնի Ս. Գրիգոր եկեղեցու փակակալը՝ նրանց բացակայութեամբ ստանձնելով նաեւ կաթողիկոսական տեղապահութիւնը:

Յովհան Մայրազոմեցին սկզբունքորէն դէմ էր «ի գին դաւանական նահանջի»՝ Եզր կաթողիկոսի վարած քաղաքականութեանը: Չհանդուրժելով Յովհան վարդապետի անտեղիտալի ընդդիմութիւնը՝ Եզրը նրան հեռացնում է կաթողիկոսարանից: 638 թ. Յովհանը քաշուում է Մայրազոմ վանքը, այստեղից էլ հալածուելով՝ գնում է Գարդմանք, ուր եւ վախճանուում է:

Ըստ Ստեփաննոս Ասողիկի՝ Յովհան Մայրազոմեցին հեղինակ է երեք աշխատութիւնների՝ Խրատ վարուց, Հաւատարմատ, Նոյեմակ:

ա. Խրատ վարուցը 23 ճառերից կամ թղթերից կազմուած ժողովածոյ է, որ մի խումբ ձեռագրերում ընծայուած է Յովհան Մանդակունուն, իսկ ձեռագրերի մէկ այլ խմբում՝ Յովհան Մայրազոմեցուն: Այս ժողովածոյի Յառաջագրի համաձայն՝ ճառերի ընդհանուր թիւը եղել է 44, որոնցից Ի Խրատ հաւատոյ ճառաշարի ճառերի թիւը եղել է 21: Դրանք, ամենայն հաւանականութեամբ, ընդօրինակուած են եղել առանձին հատորի մէջ, որը, ցաւօք, մեզ չի հասել:

բ. Պէտք է ենթադրել, որ Կոմիտաս կաթողիկոսի օրօք Մայրազոմեցու կողմից կազմուած Հաւատարմատ կամ Ամարտանակ դաւանաբանական ժողովածոն այժմ յայտնի Կնիք հաւատոյի առաջին խմբագրութիւնն է եղել:

գ. Ըստ Նորայր արքեպիսկոպոս Պողարեանի՝ Նոյեմակ անունը գոյացել է «Հաւատոյ նամակ» բառերի աղաւաղումից: Ամենայն հաւանականութեամբ, ցարդ անյայտ այս աշխատութեան առանձին մասերն են ներկայացնում Մայրազոմեցու Բան հաւատոյ երկի 4 հատուածները, որոնք հետագայում ներմուծուել են Կնիք հաւատոյի մէջ: Այս ժողովածոյի միջոցով պահպանուել եւ մեզ են հասել նաեւ Մայրազոմեցու հետեւեալ երկերի հատուածները՝ Վասն տնարեւոյթեան Փրկչին, Ի տնարեւոյթիւնն Քրիստոսի (4 հատուած), Վասն չարչարանաց եւ աներկիւղ մատնել զանձն իւր ի մահ վասն արարածոց (տե՛ս աստ, էջ 84-86, 148-150, 228-229, 247, 253, 279-281, 305-306):

դ. Յովհան Մայրազոմեցու Ողբ ի վերայ անապաշխար մեղաւորաց երկը, որը նախկինում վերագրուում էր Յովհան Մանդակունուն, հրատարակուած է ըստ Ն. Պողարեանի կազմած գիտական բնագրի¹:

ե. Մայրազոմեցու անունով յայտնի է մի այլ աշխատութիւն՝ Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յարիւնեալ կարգաց խորագրով: Այն հայ եկեղեցաբանական մտքի վաղագոյն նմոյշներից է: Այստեղ տրուած է եկեղեցու ներքին տարածքի նուիրապետական արժեւորումն ու ճարտարապետական առանձին մասերի եւ սրբազան անօթնե-

1 Տե՛ս Ն. Եպս. Ծովական, Ողբ ի վերայ անապաշխար մեղաւորաց, «Սիոն», 1963, էջ 86-87:

րի այլաբանական վերլուծումը¹: Ստորեւ հրատարակուած է երկի՝ Ն. Պողարեանի կազմած գիտական բնագիրը²:

Յակոբ Քեոսեան

Յովհան Մայրագոմեցու Առ Դաւիթ Մեծ Կողմանց եպիսկոպոս թուղթը պահպանուել է միայն ժ դ. վերջի հեղինակ Մովսէս Դասխուրանցու (ուշ ձեռագրերու եւ գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) Պատմութիւն Աղուանից երկի երկրորդ գրքի վերջին գլուխներից մէկում (ԽԶ): Գլխագրից եւ սկզբում շարադրուած մի բացատրական առաջաբանից իմանում ենք, որ Թուղթը Մայրագոմեցուն է եւ ուղղուած է Արցախի Մեծ Կողմանք (Մեծ Կուէնք) գաւառի եպիսկոպոս Դաւթին: Առաջաբանն, ըստ ամենայնի, գրուած է բուն Թղթից շատ աւելի ուշ կա՛մ Մովսէս Դասխուրանցու, կա՛մ, որ աւելի հաւանական է, Աղուանից կաթողիկոսարանում գտնուած Գիրք Թղթոցի նման մի ժողովածոյ կազմողի կողմից: Այդ ժողովածոն ժ դ. կէսին մատուցուել է Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսին նրա՝ Արցախ կատարած այցելութեան օրերին (948 թ.), իսկ դարավերջին եղել է Մովսէս Դասխուրանցու ձեռքի տակ եւ մեծապէս օգտագործուել նրա կողմից, Պատմութիւն Աղուանիցը շարադրելիս:

Մեծ Կողմանք գաւառի Դաւիթ եպիսկոպոսի մասին բաւականին տեղեկութիւններ են հաղորդուած 684 թուականի պատմութեան մէջ, որից գիտենք, որ նա վախճանուել է 680 թ.: Քանի որ 632 թ. յետոյ Յովհան Մայրագոմեցին վտարուել է Հայոց կաթողիկոսարանից եւ այլեւս չի մօտեցել պաշտօնական հարցերին: Ուսումնասիրողները արդարացիօրէն ենթադրում են, որ այս Թուղթն ուղղուած է եղել ոչ թէ Աղուանից Ուխտանէս (668-680 թթ.) կաթողիկոսի ժամանակակից Դաւիթ Մեծկողմանց եպիսկոպոսին, այլ աւելի վաղ ապրած մի անձնաւորութեան: Հայր Ներսէս Ակինեանի կարծիքով, Թղթի հեղինակը ոչ թէ Յովհանն է, այլ նրանից մի քանի տասնամեակ աւելի վաղ յայտնի Վրթանէս Քերթոզը, որը նաեւ մի ընդարձակ երկ է գրել պատկերամարտութեան դէմ: Սակայն այդ մօտեցումը հնարաւոր չէ ընդունել, քանի որ վերջինիս ժամանակաշրջանում (Զ դ. վերջ, է դ. առաջին տասնամեակ) Աղուանից կաթողիկոսութիւնը յարել է քաղկեդոնականութեանը, իսկ Թղթում այն ներկայացուած է իբրեւ հակաքաղկեդոնական (632 թ. տեղի ունեցած Կարինի եկեղեցական ժողովից յետոյ Հայոց Եզր Արահեղացի կաթողիկոսի հետ միասին Աղուանքը վերստին ինչ-որ ժամանակով յարեց երկաբնակութեան մի տարատեսակին՝ մոնոթելիզմին): Ըստ այսմ՝ Թղթի ստեղծման ամենահաւանական ժամանակը պէտք է ենթադրել Հայոց Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի դահակալութեան տարիները (615-628 թթ.): Աղբիւրներից յայտնի է, որ նրան յաջողուեց Աղուանից կաթողիկոսութիւնը միաբնակութեան վերադարձնել: Միաժամանակ հէնց այդ տարիներին է Հայոց կաթողիկոսարանում ամենամեծ հեղինակութիւն վայելել Յովհան Մայրագոմեցին:

Թուղթը պարունակում է Զ-է դդ. սահմանագծի ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների հաւաստի եւ անպաճոյճ շարադրանքը՝ հաղորդելով մի շարք ե-

1 Տե՛ս Յ. Քեոսեան, Դրուագներ հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութեան, էջ 71-82:

2 Տե՛ս Ն. Եպս. Մովսէս, Յովհան Մայրագոմեցի. Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յարինեալ կարգաց, «Սիոն», 1967, էջ 70-75:

զակի եւ աղբիւրագիտական մեծ արժէք ներկայացնող տեղեկութիւններ: Օրինակ՝ ամենայն լրջութեամբ պէտք է ընկալել նրա այն վկայութիւնը, որ Մօրիկ կայսեր ջանքերով նոր բաժանման ենթարկուած Արեւելեան Հայաստանը Խոսրով Պարուէզի ռազմական յաջողութիւնների ժամանակաշրջանում «միաւորուել է»: Դաւանաբանական մօտեցումների հետագայ փոփոխութիւնների արդիւնքում, փաստօրէն, մոռացութեան է մատնուել նաեւ համոզուած հակաքաղկեդոնական Յովհան Մայրազոմեցու (այդպէս նաեւ՝ Վրթանէս Քերթոզի) դրական վերաբերմունքը Հայոց եկեղեցական շէնքերի պատկերազրման հարցում: Այնինչ, վաղ միջնադարի գրեթէ բոլոր եկեղեցիները պատուած են եղել հոյակերտ որմնանկարներով (Նիկոլայ Քոթանջեանի կարծիքը), որոնց տարբեր աստիճանի պահպանուածութեամբ նմոյշներն ունենք Միծեռնափանքում (Բ փուլ, Ե դ. կէս), Կոչում (Զ դ.), Թալինի մեծ եկեղեցում, Արուճում, Լմբատափանքում, Եղվարդում (Զօրաւոր), Միսաւանում եւ Աշտարակի Կարմրաւորում (Է դ.):

Պատմութիւն Աղուանիցի ձեռագրերի երկու խմբերի (*a* ձեռագիր, *bclr* ձեռագրեր՝ *bl* եւ *cr* ենթախմբերով) օգտագործմամբ կազմուած Յովհան Մայրազոմեցու Թղթի քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա եօթերորդաբան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Պատմութիւն Աղուանիցի երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են վերը նշուած հինգ ձեռագրերից որեւէ մէկից եւ չեն կարող օգտակար համարուել հեղինակի ինքնագրի վերականգնման հարցում: Բնագրի տողատման եւ կէտադրման խնդրում էապէս օգտուել ենք Պատմութիւն Աղուանիցի համեմատական հրատարակութեան հեղինակ Վարագ Առաքելեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հ. Բարսեղ Սարգիսեան**, Քննադատութիւն Յովհան Մանդակունուոյ եւ իւր երկասիրութեանց վրայ, Վենետիկ-Ս. Ղազար, 1895:
2. **Կարապետ եպս. Տէր-Մկրտչեան**, Յովհան Մանդակունի եւ Յովհան Մայրազոմեցի, «Շողակաթ», 1913, էջ 84-113:
3. *Կնիք հաւատոյ*, 52-55, 142-146, 253-256, 327-330, 363-364:
4. **Նիկողայոս Աղոնց**, Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու, «Անահիտ», Փարիզ, 1939, թիւ 4-5:
5. **Ասատուր Մնացականեան**, Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, Երեւան, 1966:
6. **Յովհան Մայրազոմեցի**, Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յարիւնեալ կարգաց, հրատ. Ն. եպս. Ծովական, «Սիոն», 1967, թիւ 1-2, էջ 70-75:
7. **Հ. Ներսէս Ակիմեան**, Մովսէս Դասխուրացի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970:
8. **Հներիկ Սազեան**, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» աղբիւրները, ՊԲՀ, Երեւան, 1972, թիւ 2:
9. **Համբարձում Քենդերեան**, Յովհան Մայրազոմեցի, Երեւան, 1973:

10. **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, ֆնական բնագիրը եւ ներածութիւնը՝ Վ. Առաքելեանի, Երեւան, 1983:
11. **Ալեքսան Թակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*, ԲՄ, թիւ 15, Երեւան, 1986:
12. **Թակոբ Քէնսէեան**, *Դրուագներ հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութեան*, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1995:
13. **Ալեքսան Թակոբեան**, *Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը, նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը*, ՀՍ., Վիեննա, 2000:
14. **Նիկողայոս Ադոնց**, *Պատկերների խնդիրը*, աշխատասիրեց, ծանօթագրեց եւ ներածութիւնը գրեց Պ. Հ. Յովհաննիսեանը, Երեւան, 2003:
բողջ պահելոյ առանձնաւորապէս զերկաքանչիւրոց բնութեանն», զոր ոչ ընդունին Աստուածաշունչ զիրք եւ ո՛չ վարդապետք հոգեւորք եւ նշանաւորք, որ եղեալ են յիւրաքանչիւր ժամանակս աստուածաբեալք եւ աստուածախաւք՝ վկայեալք յեկեղեցեաց Աստուծոյ, որ ընդ տիեզերս, քանզի զերկուս բնութիւնս ի մէջ բերելով համարէին լուծանել զԵւտիքէսի հայհոյութիւնն: 5 Պարտ էր նոցա զերանելեացն հարանց ի կիր առնուլ զամենապայծառ եւ զհրաշափառագոյն յաղագս մարմնաւորութեանն Տեառն զասացուածս՝ զԱթանասի Աղեքսանդրացւոյ, զԲարսղի Կեսարիացւոյ, զԳրիգորի Նազիանզացւոյ, զԳրիգորի Նէոկեսարացւոյ Սքանչելագործի, զԳրիգորի Նիւսացւոյ՝ եղբաւր Բարսղի, զՊրոկլի եւ զայոց նախեղեալ վարդապետաց, քանզի Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ, յերկուց բնութեանց մի Աստուած խոստովանեցան, որք բաւական են վեր ի վայր տապալել զԵւտիքեայ հայհոյութիւնն: 6 Իսկ եթէ բաժանեալ ի միմեանց երկու բնութեամբ վարեցան, ընդդէմ ուրեմն նախասացելոց վարդապետացն են, զի այլ ոմն զՔրիստոս Յիսուս ասելով եւ այլ ոմն՝ զԲանն Աստուած, եւ գործ առանձին իւրաքանչիւր՝ յերկուց որդոց հայհոյութիւնս անկան, որ ո՛չ Երրորդութիւն, այլ մանաւանդ չորրորդութիւն, որք են վատափառ եւ չարահաւատ ըստ հրէամիտ նեստորի. քանզի եւ յառաջնորդսն Քաղկեդոնի ժողովոյն լինել ասեն զԹէոդորիտոս, եւ զԻբայ զգուգախտացողսն նեստորի: 7 Եւ զի այս այսպէս է, թէ կամիցիք լսել՝ յայտնի է ճշմարտութեամբ, քանզի Յոբնաղ անուն Երուսաղէ-

մի եպիսկոպոս ի Քաղկեդոնի ժողովումն էր, եւ եկեալ անտի զԵրուսաղէմացւոց ընթերցուածն կարգեաց, զոր մեր պահեալ է մինչեւ ցայժմ, որք զՔաղկեդոնի ժողովն խոտեն, հերձուածողս կոչեն զնոսա եւ այսպէս բամբասեն, եթէ «Աստուած խաչեալ» ասեն եւ «անմահ խաչեալ» ասեն, եւ ինքեանք այսպէս գրեն առ մեզ, եթէ «Յիսուս է, որ չարչարեցաւն, Քրիստոս, ասեն խաչեցաւ», եւ գիրք նոցա կան առ մեզ: 8 Եւ ոչ կարեն յուրաստ լինիլ, յորմէ բազումք եւ յայս կողմանս թիւրեցան, եւ ոչ կամին «Աստուած խաչեցեալ» եւ «անմահ խաչեցեալ» ասել, զի չարչարեցաւ անչարչարելին չարչարելեաւն եւ մեռաւ անմահն մահկանացուաւն, այսինքն է՝ անչարչար Բանն Աստուած մեռաւ իւրով մարմնովն, վասն այնորիկ Համարձակիմք ասել «Աստուած խաչեցեալ» որպէս տէրունականն ունի բան, եթէ՝ Այնպէս սիրեաց Աստուած գաշխարհ, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ՝: 9 Եւ առաքեալն Պաւղոս ասէ, եթէ՝ էր ծանուցեալ ոչ արդեաւ գՏէրն փառաց ի խաչ հանէինք, զոր Յովհանն Կոստանդնուպալսի եպիսկոպոս մեկնէ, թէ՝ գՏէրն փառաց մարդ սոսկ ասել եւ ոչ դեմ յանդգնինք, որոյ Համաձայն եւ ճշմարիտ Հարքն բարբառին, Յովհանն, որ Երուսաղէմի քաղաքին կացեալ եպիսկոպոս, թէ՝ Աստուած ի Կուսէ ծնեցեալ, եւ Աստուած խաչեալ¹, եւ Գրիգոր Նազիանզացին, թէ՝ «Աստուած խաչեցաւ եւ երկիր շարժեցաւ», եւ դարձեալ յայլում վայրի, թէ՝ Որ զԿոյսն Աստուածածինն ոչ խոստովանեցի, հետի է յԱստուածութենէն, եթէ ոք խաչելոյն երկիր ոչ պագանէ՝ ընդ աստուածասպանսն կարգեցի²:

10 Քանզի որ ոչ ասէ «Աստուած խաչեալ»՝ ոչ խոստովանի եւ զԱստուած ի Կուսէ ծնեալ, եւ ոչ զԿոյսն՝ Աստուածածինն, որպէս Նեստոր: 11 Քանզի ո՛չ այլ ոմն Յիսուս Քրիստոս եւ այլ ոմն Աստուած Բանն, այլ նոյն եւ մի Աստուած՝ ծնեցեալ ի Կուսէն, նոյն անչարչարելի իւրով Աստուածութեամբ, նոյն անմահ, եւ նոյն մեռեալ իւրով մարմնովն, որպէս Աթանաս Աղեքսանդրու եպիսկոպոսն ասէ. «Յաղագս որո՞յ մոլորին. որք ասեն, եթէ այլ ոմն է, որ չարչարեցաւն եւ այլ ոմն է, որ ոչ չարչարեցաւ, բայց ոչ այլ ոք էր քան զԲանն, որ չարչարեցաւ եւ զմահ ընկալաւ, բայց նոյն ինքն անչարչարելի եւ անմարմին Բանն լինելով, մարմին մարդկային Համարելով՝ զամենայնն ելից»:³ 12 Եւ Գրիգոր Նէոկեսարացի Աբանչելագործն. Որ ոք ասէ՝ այլ ոք ախտակրեալն է եւ այլ՝ ոչ ախտակրեալն, եւ ոչ խոստովանեցի զնոյն անախտակիր Աստուածն Բան մարմնովն ախտակրեալ, որպէս եւ գրեալ է, նզովեցի³:

13 Արդ, եթէ ըստ նոցա բանից այլ ոմն Քրիստոս Յիսուսն է, եւ այլ ոմն՝ Բանն Աստուած, եւ ոմն ի նոցանէ զախտ եւ զչարչարանս կրէ՝ ծնեալ ի Կուսէն, եւ ոմն ի նոցանէ պայծառանայր նշանաւք եւ արուեստիւք, որ է Բանն Աստուած՝ Հեռացուցանելով զնա ի տնաւրէնութեանն խորհրդոյն, որպէս կայ ի տոմարին Լեւոնի, զոր ժողովն Քաղկեդոնի ուղղափառ կոչէ⁴, եւ որպէս ի վերայ խարխալեալ եւ շարժուն Հիման զիւրն շինէ շինուած, եթէ այդպէս է՝ որպէ՞ս աղքատացաւ մեծատունն վասն մեր՝ ասասցե՞ն մեզ, որ բաժանեն զմարդն յԱստուծոյ Բանէն, եւ զմիացեալն որոչեն որոշութեամբ բնու-

« ՅՎԸ. Գ. 16
 Բ Լ ԿՊ. Բ 8
 Գ ՀՄԳ. Լ ԿՊ. Բ 8:
 1 Տե՛ս Յովհ. Բ Երուսաղեմացի, երկեր:
 2 Տե՛ս Գրիգոր Նազիանզացի, Ի սուրբ Պատմայ. Առ Կղեդոնիոս:

3 Տե՛ս Գրիգոր Մեանչելագործ, երկոտասան նզովեցի:
 4 Տե՛ս Սկզբնագիրք Տումարի սրբոյն Լեւոնի եւ սահմանի սուրբ ժողովոյն Քաղկեդոնի, Վեներտիկ-Ս. Ղազար, 1805:

Թեանցն: Որ զերկուս ոմանս ասեն զՔրիստոս եւ զմին իմացութեամբ միայն՝ եւ առատաբանութիւն¹ բերեն, քանզի՝ «վասն ձեր աղքատացաւ մեծատունն, ասէ առաքեալն, զի դուք նորա աղքատութեամբն մեծասլիք», այսինքն՝ անմարմին Բանն Աստուած՝ ի Հաւրէ յառաջ քան զյաւիտեանս ծնեալ՝ էակից եւ բնակից Հաւր եւ Սուրբ Հոգւոյն, ի վերջին ժամանակս էջ եւ մարմնացաւ ի սուրբ Կուսէն Մարիամայ՝ ըստ աւետարանչին Յովհաննու, թէ՛ Բանն մարմին եղև եւ բնակեաց ի մեզ՝ մարդ եղեալ ճշմարտապէս ամենայնիւ ըստ նմանութեան մեր առանց մեղաց: 14 Ի խանձարուրս պատեցալ՝ եղաւ ի մսուր, որ ի վերայ քերովբէից, շրջէր ի գիրկս մաւր, գգուեցաւ, կաթն արբուցաւ, զարգացաւ հասակաւ, ճանապարհորդեցաւ ընդ ամենայն կիրս կենցաղոյս, մատնեցաւ Հրէից, չարչարեցաւ եւ խաչեցաւ, թաղեցաւ եւ յարեաւ անապականաբար, զի ոչ թողաւ ոգի նորա ի դոժոխս, եւ ոչ մարմին նորա ետես զապակաճութիւնս², որպէս առաքեալն Պետրոս ասէ, զոր եւ Աթանաս Աղէքսանդրացի ի Հաւատոյ բանին ասէ. «էառ մարմին յապականացուացս, զի զգեցուցէ զանապականութիւն, էառ մարմին ի մահկանացուացս, որպէս զի մահկանացուս զգեցցի զանմահութիւն, որպէս եւ այժմ ի ձեռն մահուան եւ յարութեան իւրոյ շնորհեաց մեզ զկեանս եւ զանապականութիւն»²:

15 Արդ, եթէ ըստ նոցա Բանիցն եղանի՝ ոչ թափեաց զինքն էն Աստուած, ոչ կերպարանս ծառայի էառ եւ ոչ կերպարանաւք գտաւ իբրեւ զմարդ, եւ զիա՞րդ գտնաւրէնութեանն խորհուրդ բովանդակ կատարեսցէ, քանզի ոչ աստուածային

բնութիւնն առանձինն եղեալ ի կնոջէ եւ մտեալ ընդ աւրինաւք եւ աղքատանալ ի մեծութենէ եւ աւժումն ընկալեալ որպէս եւ ոչ մարդկային բնութեանս յատուկ Որդի Բարձրելոյն գոյ եւ աթոռ ունել յաւիտեական, այլ ըստ անճառ միաւորութեան երկուց բնութեանցն: 16 Քանզի յետ երկուց զմին խոստովանին ճշմարիտ քրիստոնեայք, որպէս Պրոկղոս ասէ, թէ՛ «Յորում աստուածապէս դրոշմեալ ի միաւորութեանն պատմուճանս»³: 17 Եւ Բասիլիոս առ Ապողինար, յորժամ ընդդիմադրէր Ապողինար զվիճումնն, թէ՛ «երկու կատարեալ Աստուած եւ մարդ մի կատարեալ ոչ լինին», նա պատասխանի տայ. «Առ մարդկան արդեաւք անկարելի, բայց Աստուծոյ կարելի», [Ի լուծումն Բարսղի]. որպէս Կուսի ծնանելն, որպէս ի վերայ ծովու գնալն, որպէս դրաւքն փակելովք մտանելն մարմին՝ թանձրամած ի մարմնոյ եւ յոսկերաց հաստատեալ. զոր աւրինակ այն կարելիք Աստուծոյ⁴ նոյնպէս եւ այս»: 18 Եւ այսպէս Գիրք վկայեն զաստուածավայելուչսն եւ զմարդկայինսն նմին Տեառն մերոյ Աստուծոյ. զոր եղ ժառանգ ամենայնի Հայրն՝ վասն կամաւորութեանն եւ անդրանիկ ի ներքս յաշխարհս ի բազում եղբարս, նա՛ վկայի զյաւիտեանս արարող, որ է բայցափայլումն փառաց եւ նկարագիր էութեան նորա՝ եւ նոյն ի կերպարանս ծառայի երեւեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ. եւ ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ Յիսուս Քրիստոս՝ ի վերջինսն ի Կուսէն ծնեալ եւ ի սկզբանն հաստիչ աշխարհի ընդ Հաւր: Որպէս ասէ Պաւղոս. Այլ մի է Աստուած Հայր, յորմէ աւմեայն եւ մեք ի նա, եւ մի՛ Տէր Յիսուս

¹ Ուղղելի է առակաբանութիւն

» Յ՝ՎԸ՝ Ը՝ 14

է Գ՝ՊԶ՝ Ժ՝Գ՝ 36

² Տե՛ս Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի նառն, թուղթի եւ ընդդիմասացութիւնն, Վեներատիկ-Ս. Ղազար, 1899:

³ Տե՛ս Թ. Տասնապետեան, Աստուածամկ մասին, Անթիլիաս, 1996, էջ 226:

⁴ Տե՛ս Կնիք հաւատոյ. Բարսղի եպիսկոպոսի եւ Ապողինարի հերձուածողի վիճարանութիւն, էջ 87:

Քրիստոս, որով ամենայն եւ մեք նովաւ՝ նա՛ զտնաւրինականսն համբերելով՝ քաղցնոյր, եւ նա՛յն կերակրէր զբազմահամար ժողովուրդսն, նա՛յն ծարաւեալ, եւ նոյն ինքն՝ արբուցանող ծարաւեաց, նոյն՝ զմարդկայինսն բարբառելով, նոյն՝ զաստուածավայելուչսն ասող առ աշակերտսն. Հայր իմ մեծ է քան զիսէ, եւ նա՛յն՝ ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ գոյ հաւասար Աստուծոյ՞. նա՛ ի ժամ խաչին աղաչող զԱստուած Հայր, թէ՛ «հնար իցէ, անցցէ զինեւ բաժակս», նոյն ինքն կամաւորութեամբ եկեալ ի ժամն այն՝ ասէ. «Ես անձամբ իմով զնեմ զանձն իմ, եւ իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնայ». առաջի Պիղատոսի դատեալ եւ ի հրեշտակաց սպասաւորեալ, բեւեռեալ ընդ փայտի եւ ընդ աջմէ Հաւր յերկինս բազմեալ, թաղեալ ի գերեզմանի եւ աւերեալ զդժոխս, յարուցեալ ի մեռելոց եւ ի վեր երթեալ յերկինս, ուր էր զառաջինն ըստ նորուն Տեառն: 19 Բարբառոյ[ն], զորմէ եւ Պաւղոս ասէ՝ Որ էջն նոյն է եւ որ ելն ի վերոյ քան զամենայն, եւ գայ դատել զկենդանիս եւ զմեռեալս՞:

20 Սա՛ Աստուած ամենայնի, թագաւոր յաւիտենական, երկրպագեալ ընդ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս, վասն որոյ եւ նախեղեալ առաջին վարդապետացն՝ Դիոնիսիոսի եւ Պիղատոսի, եւ Յուլիոսի Հռոմայ եպիսկոպոսաց, եւ Դիոնիսիոսի եւ Պետրոսի վկայի եւ Թէոփիլեայ, եւ յետ նոցա Աթանասի եւ Կիւրղի եւ Գրիգորեանց եւ այլոց բազմաց յերկուց բնութեանց մի Աստուած խոստովանեալ է: 21 Բայց զի Քաղկեդոնի ժողովին պատճառանաւք բաժանմամբ զերկուս բնութիւնս ասացին այսպէս. «ապրեցելոյ եր-

կաքանչիւրոյ բնութեանն իւրոյ յատկութիւն», ոչ ընկալան զնա ոմանք ի ձերոց ճարտարացդ առաջնորդք Աղեքսանդրացւոց, այլ եւ յայտարարութեամբ ընդդիմադրութիւնս բազումս արարին: 22 Եւ Հայոց արուեստաւորաց, որ յԱղեքսանդրիա եւ յայլ քաղաքս բազում ժամանակաւք ի հրահանգս կացին, ոչ է ընկալեալ զնոսա եւ ոչ հաղորդութեամբ միաւորեցան ընդ ձերում աշխարհիդ:

23 Իսկ այժմ աւելագոյն այսպէս ասեն, հաղորդութիւն առնուն անխտիր, որ է անհնարին չար, զի Տէրն ասէ թէ. ես եմ հացն իջեալ ի յերկնիցէ. եւ ես եմ հացն կեցաց, եւ Մարմին իմ նշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ՝ նշմարիտ ըմպելի, եւ որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեցի եւ ես ի նմա՛, եւ Որ ուտէ զհացս զայս, կեցցէ յաւիտեանք: 24 Եւ Պաւղոս բազում երկիւղիւ զգուշացուցանէ. Քննեսցէ մարդ զանձն իւր եւ ասա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ, զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ՝ ի դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ոչ խտրէ զմարմին Տեառն, եւ եւս սուկալի՝ եթէ անարժանութեամբ հաղորդեալքն պարտական եղիցին մարմնոյ Տեառնէ՞, զոր ստուգեաց հաւասարապէս կանոնն ընդհանրական՝ չափ ժամանակաց սահմանելով առանձինն իւրաքանչիւր յանցանաց, յորս պնդագոյն ապաշխարութեամբ սրբեալք ի մեղաց՝ արժանաւորին հաղորդութեանն: 25 Իսկ այժմ ընկեցեալ երեւին ի բաց զտէրունական հրամանն, եւ զկանոնս ուղղագոյնս անփոյթ արարեալ՝ ստէպ ստէպ մեղանչելով եւ լուացմամբք մարմնոյ վաղվաղակի անարժանք ի հա-

ա Լ Կ՞՞ Բ 6
 բ Յ՞՞ Ժ՞ Գ՞ 28
 գ Փ Լ՞՞ Բ 6
 դ Հ՞՞ Գ՞ Ժ՞ Գ՞ 9:

ե Յ՞՞ Գ՞ 41
 զ Յ՞՞ Գ՞ 35-48
 է Յ՞՞ Գ՞ 56-57
 ը Յ՞՞ Գ՞ 51
 բ Լ Կ՞՞ Ժ՞ Ե 27-30

զորդուծիւն գան. զորս խոտէ Տէրն յԱւետարանի անդ ասելով զՓարիսեցիսն՝ զարտաքին զբաժակին եւ զսկաւառակին լուանայք եւ ներքինն ձեր լի է պղծութեամբ²⁶։

26 Եւ Պաւղոս ստէպ ստէպ զմկրտութիւնն Հրէից մարմնոյ արդարուծիւն կոչէ, որ յառաջ քան զժամանակն ուղղութեանց էին զտկարագոյն միտս։ Կապտեն պաշտանեայքն եւ այլ եւս հայհոյութեան բանիւք, եթէ «մարմին եւ արիւն Տեառն ի քաւութիւն մեղաց է»։

27 Գեղեցիկ է, թէ այդպէս է, եւ ոչ անարժանութիւն իսկ, եւ սուտ գտանիցի առաքեալն եւ կանոնք՝ համաձայն, որ ասեն անարժան գոլ զմեղուցեալս եւ ոչ ապաշխարեալս եւ համարձակ եւս վայելել ի ճաշակմանէ մարմնոյ եւ արեան Տեառն եւ ի սեղանոյ դիւաց։

28 Այլ մի՛ ոք խաբեսցի, զի մարմին եւ արիւն Տեառն արդարեւ ստոյգ ի քաւութիւն

մեղաց է, այլ՝ ապաշխարելոցն եւ հեռացելոցն ի մեղաց, եւ ոչ՝ միշտ թաթաւելոցն ի մեղս, զի սպառնայ այնպիսեացն Տէրն առնլով վրէժ անհնարին տանջանաւք ի թաթաւելոցն դատաստանի մեծի աւուրն։

29 Եւ ոչ պարծիմք զմեզ սուրբս լինել, այլ սակայն ոչ անխտիր ի հաղորդութիւն դիմեմք. այլ ահացեալք՝ բազում երկիւղիւ մեկուսանամք։

30 Այլ զԵւտիքէս եւ զնմանիս նորա՝ զառաջին եւ զվերջին հերձուածողս նգովեալ եմք եւ նգովեմք։

31 Բայց զժողովն, որ զբաժանեալ զբնութիւնսն պահէ եւ ոչ տայ ասել՝ «Աստուած խաչեցեալ», որպէս եւ այլք բազումք ի Հռոմոց, յորոց ոմանք եւ ի մերմէ կողմանէս թիւրեցան, ոչ կարեմք ընդունել, եւ ոչ ընդ այնոսիկ, որք փոքր կացուցանեն զմարմին եւ զարիւն Տեառն՝ հաղորդել, զի ոչ ունիմք այդպիսի սովորութիւն։

ՄՈՎՍԷՍ ՍԻԲՆԵՑԻ

ՅԱՂԱԳՍ ԿԱՐԴԱՎԱՌԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍԱՅԱԿԱՅ

ՅԱՂԱԳՍ ԿԱՐԳԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՔ

Ի ՅԵՐԳՍ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՅՆ

ՄՈՎԱԷՍ ՍԻՆԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Մովսէս Սիւնեցին ծնունել է հաւանաբար է դարի 60-70-ական թթ.: 701 թ. յիշուում է արդէն իբրեւ վարդապետ եւ Ստեփաննոս Սիւնեցու ուսուցիչ: 725-731 թթ. եղել է Սիւնեաց եպիսկոպոսական աթոռի գահակալը:

Բացի վարչական, ուսումնակրթական գործունէութիւնից, զբաղուել է նաեւ մատենագրութեամբ: Նրա գրչին պատկանում կամ վերագրւում են հետեւեալ երկերը.

ա. Յաղագս Վարդավառին խորհրդոյ: Այստեղ ընդարձակօրէն մեկնաբանուած է պայծառակերպութեան խորհուրդը՝ հինկտակարանեան արժէքների համադրումով (Սինթաբար, Մովսէս-Քրիստոս) եւ նորկտակարանեան արժէքների բացարձակեցումով: Երկի աստուածաբանական այս կարեւորութեան թելադրանքով այն օգտագործուած է Սարգիս Կունդի (†1176 թ.) Կաթողիկէ թղթոց խմբագիր մեկնութեան մէջ: Երկը ստորեւ վերահաստատակուում է ըստ Մովսէս Խորենացու Մատենագրութիւնի հատորում վենետիկեան մի քանի ձեռագրերի համեմատութեամբ կազմուած բնագրի¹:

բ. Պատասխանի թղթոյն Սահակայ. Յորում եւ բան մարգարէականի եւ վասն փոխման Աստուածածնին թէ որպէս եղեւ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն եւ թէ յոյր ձեռն եւ զինչ եղեւ պատնաոֆ խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Հայս: Վերահաստատակուում է վենետիկեան տպագրութիւնից²:

գ. Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացայայտութիւնի: Այստեղ հեղինակը փորձում է աստուածաշնչային ակունքներով բացատրել Սաղմոսարան-ժամագրքի ութ-ձայնի համակարգն ու դրա ծագումը, ինչպէս նաեւ՝ խօսում էրից մանկանց («Ի յերգս երից մանկանցն») օրհնութեան մասին: Այստեղ տրուած է «Երից մանկանց» սխրանքի բարոյախորհրդաբանական ուշագրաւ մեկնութիւնը, որը սերտ յարաբերութեան մէջ է հայրախօսական աւանդների հետ: Ինչպէս երեւում է, ի մտի ունենալով նրա այս արժանիքը, Մովսէս Քերթովի անունով տուեալ աշխատութիւնը օգտագործուած է Խոսրով Անձեւացու ժամակարգութեան մեկնութեան մէջ³, որից էլ կատարուած է մեր վերահաստատակութիւնը:

Յակոբ Քեոսեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնի, Վենետիկ-Ս. Ղազար, 1865:**
2. **Գրիգորիս Բորեպիսկոպոս Արշարունի, Մեկնութիւն ընթերցուածոց, աշխատութեամբ Ք. Զրաբեանի, Վենետիկ-Ս. Ղազար, 1964:**
3. **Հ. Վարդան Հացունի, Պատմութիւն հայոց Աղօթամատոյցին, Վենետիկ-Ս. Ղազար, 1965:**

1 Տե՛ս Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնի, Վենետիկ-Ս. Ղազար, 1865, էջ 326-338:

2 Տե՛ս նոյն տեղում, էջ 283-296:

3 Մեկնութիւն ժամակարգութեան՝ արարեալ երանելւոյն Խոսրովայ Անձեւացեաց եպիսկոպոսի եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի, Կ. Պոլիս, 1840, էջ 76-77. հմմտ. Յովհաննու Իմաստասիրի Աւանցւոյ Մատենագրութիւնի, Վենետիկ-Ս. Ղազար, 1833, էջ 19:

4. **Նիկողոս Թահմիզեան**, *Մովսէս Սիւնեցիին եւ նրա «Յաղագս կարգաց» գրուածքը*, «Լրաբեր» (հասարակական գիտութիւններ), 1972, թիւ 11, էջ 85-94:
5. **Հ. Պօղոս Անանեան**, *Մովսէս Քերթոզահայր եւ Մովսէս Խորենացի*, «Բազմավէպ», 1991, թիւ 1-2, էջ 7-25:
6. **Աննա Արեւշատեան**, *Հայ միջնադարեան «Զայնից» մեկնութիւնները եւ Մովսէս Սիւնեցու «Յաղագս կարգաց» գրուածքը*, Հայաստանը եւ Քրիստոնեայ Արեւելքը, Երեւան, 2000, էջ 203-210:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ա - Հատուկտիր քանի եւ նաո՛ր ի մատենագրութեանց նախնեաց ի վերայ ժամասացութեանց եւ պատարագին, Վենետիկ-Ս. Ղազար, 1910 (հրատարակուած է Ա. Ղազարի ձեռ. թիւ 475, ժամանակ՝ ԺԱ. դ.):
- Բ - **Յ. Քիրտեան**, *Երաժշտութեան մասին երկու հատուածներ նախնեաց մատենագրութենէն*, «Անահիտ», 1935, թիւ 1-2, էջ 30-32 (Միօրբարեանց Վենետիկի մատենադարան, Յ. Քիրտեանի անձնական հաւաքածոյ, ձեռ. 40, թթ. 117ա-120բ, ժամանակ՝ 1605 թ.):

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՂԱՎԱՌԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ

1 Լուսաւոր եւ պայծառ է խորհուրդ մերձաւոր տաւնիս, եւ տիեզերական ցնծութեան աւետիս հնչեցուցանէ ընդ երկնաւս: 2 Գերապայծառ ճառագայթեալ լուսով ընդհանուր զուարթ եւ ուրախ տեսանեմ զհաւատացելոցդ գումարեալ զքրիստոսասէր դաս: 3 Նորահրաշ արփիափայլ լուսով պսակեալ՝ գտաւնիս յաւէտ հրաշացուցանելով պայծառ ձայնիւ զխորհուրդ, զարթուցանել ընդ մեզ յերգս ցնծութեան եւ վերին Սիրովնի գերկնագումար զպարս առաջին լուսաւոր բնութեանցն, յետ առաջնոյ անտի աղբերացեալ եւ ստորնայնոցն ՚ի վերինն պարակցեալ խումբս՝ զբոլորից փրկութեան համախմբեալ վայելչացուցանեն բերկրալից ձայնիւ զհրաշս:

4 Տինա ոչ միայն մերասերիցս բնութիւն բանաւորական, եւ հրեշտակք առաջին միտք եւ մաքուրք զսորայս հոգակեն զգովեստ, այլ գրեթէ բոլոր իսկ տարերքս ՚ի միասին լեալ ընծայաբերք զթագաւորականի աւուրս պայծառակերպեալ հրաշագարդեն զփառս: 5 Վասն զի ամենայն ինչ ՚ի բարի տաւնիս ՚ի միասին գեղեցկապէս ընթացեալ զբնաւս զուարճացուցանեն զմիտս եւ զզգայութիւնս՝ հանդերձ որք բոլորովին են անշունչք եւ անշարժք: 6 Զի այսաւր հրեշտակական դասուցն քաղցրանուագ հնչեն աւրհնութիւնք ՚ի նոր Սիրովն պայծառահրաշ լուսով. եւ փայլումն գալըստեանն Քրիստոսի զհաւատացելովքս փարի: 7 Նորոգին երկինք, եւ երկիր լրիւ իւրով ըստ մարգարէին. եւ լերինք՝ ցնծան առաջի Տեառն: 8 Ոչ միայն կենդանի լուսոյն ընդ բնութիւնս մեր խառնմամբ աղբերացեալ աւրհնու-

թեամբքն¹ տարամերժին անէծք, եւ տարերք յուսով յառաջինն նորոգին ՚ի հրաշափառութիւն, այլ գրեթէ ակնյայտ² երեւակի բոլորեցունց վայելչագարդեալ բնութիւնք՝ զպայծառս զայս պսակեն գտաւն իմանալի եւ զգալի փառաւք: 9 Վասն զի այժմ երկին ՚ի վերուստ պայծառագգեստեալ լուսաւորացն յինքն ընթացիւքն՝ ջահավառէ ընդհանուր վճիտ եւ մաքուր լուսով զգալի զայս աշխարհ: 10 Իսկ հաւատոյն բարձրացեալ խորան ըստ երկնի կամարածեւ զհաւատացեալսն շրջափակելով³ զանապական ճառագայթ անստուեր լուսոյն ՚ի մտաւորս բացափայլեալ աշխարհ բանական բնութեանս:

11 Այժմ արեգակն պայծառաւոյս⁴ ՚ի վերինն հասեալ կամար հրաբորբոք ճառագայթիւք վանեալ զհիւսիսին՝ տապացուցանէ զընդ երկնաւս կենդանածնելով զբնութիւնս ՚ի զգալիս: 12 Իսկ արդարութեան արեգակն ՚ի հաւատոյն փայլեալ խորան լուսաբորբոք հոգեռանդն բոցով հրավառէ գտարփողս անթիւրելի հաւատոցն յէականն կենդանագրեալ լուսոյ տիպ: 13 Այժմ լուսնի բոլորակն⁵ լուսավառեալ⁶ եւ աստեղացն պար մաքրեալ՝ զերկնայինն հրաշագարդեն բուրաստան, եւ գտիեցերս ՚ի գնացս իւրեանց ճառագայթակերպեն լուսարշաւ⁷ ընթացիւք: 14 Իսկ հաւատոյն լուսոյ արմատ եւ աղբիւր՝ մերունակ բնութեանս պտուղ բարեբանեալն Աստուածածին ընդ երկնաւս

1 Երկու օրինակում՝ օրհնութեանցն

2 Մի օրինակում՝ յայտնի երեւակ

3 Մի օրինակում՝ շրջապատելով

4 Երկու օրինակում՝ պայծառագոյն

5 Մի օրինակում՝ բոլորն

6 Երկու օրինակում՝ լուսով լցեալ

7 Մի օրինակում՝ լուսաշաւիղ. այլ օրինակում՝ լուսանշան

մաքրապայծառ լուսով կուսութեանն ընդ իւր զհոգեւորսն վառեալ զամբարաջահ¹ զսրբոցն զաստեղս զԵրրորդութեանն լուսոյ ընդ տիեզերս չրջափայլէ հրաշապայծառ ճառագայթ: 15 Այժմ ամպք՝ տէրունւոյն սպասահարկեալ հրամանի լուսատեսակք յարեւելից ոսկեճաճանչք՝ ՚ի հիւսիսոյ զմիմեամբք կուտակեալք՝² ՚ի միգագոյն թանճրութիւն փայլակնացայտ որոտընդոստ ցաւղաբողիս առատութեամբք զտիեզերս արբուցանեն: 16 Եւ աւղք շնչեալ մաքրագոյն բիւրակերպեան ծաղկացն եւ տնկոցն երփն երփն զարդուք զաշխարհս պայծառագարդեալ պսակեն: 17 Իսկ առաքելական ամպոցն ընդ երկնաւս լեռնացեալ բազմաճառագայթ կուտակք աւետարանին ահեղ որոտմամբ փայլակնաբորբոք հրակէզ³ զաւրութեամբ մատուակեն զանճրեւ ողորմութեան գիտութեանն Աստուծոյ ՚ի հովիտս բնութեան մերոյ դաշտի. շնչեն եւ զհոգւոյն կենդանարար աւղ յաճումն բարութեան բանաւոր բուսոցն եւ առ ծաղիկս անուշահոտս վայելչացեալ քաղցր պտղովն:

18 Այժմ երկիր վայելչացեալ պայծառակերպի յերեւման Աստուծոյ մերոյ պսակակապ թագագարդեալ⁴ տերեւազգեստ ծաղկագարդեալ բուսովքն եւ տնկովքն. եւ լերինք ծաղկաւէտեալք ծիրաներփնեան⁵ ցնծացեալք ընդ առաջ Տեառն: 19 Անուշահոտանան եւ խաղք, եւ կենդանեացն խայտան հոյք ՚ի դալարավայրս. եւ հաւուցն յաւրս վայելչացեալ երեւմամբք՝ քաղցրանուագ հնչեցուցանեն զանտառս: 20 Իսկ բանաւոր բնութեանս մերոյ երկիր լուսագարդեալ ցնծայ ընդ գալուստ Աստուծոյ մշտագուարճ առաքինութեանն

ծաղկաւք նորափետուր զարդարեալ, եւ ՚ի հաւատոցն բարձրեալ լեռոն՝ պսակէ գտաւնասէրս ոսկեճաճանչ իմաստութեանն ծաղկաւք. եւ աստուածգիտութեան բուրումն զերկնախոհիցն պարալնու անուշահոտութեամբ գիմաստս: 21 Կթին եւ պտուղք անմահութեան զհոգւոյն քաղցրացուցանել սրբութեամբ զգգալիսն: 22 Յնծացեալ պարեն յեկեղեցւոյ՝⁶ շուշանագարդ վայրս եւ մաքրագգեստիցն լուսատեսակ դասք, եւ աւետարանին քաղցրաճայնութեան նուագք ըստ հաւուցն երգոց աւետալուր հնչեցուցանեն զընդհանուրս:

23 Այժմ ծով ՚ի բարձրադէզ⁷ լեռնակուտակ ալեացն զնստեալ վրդովմանց՝⁸ ասպարէզ ընթացից զկոհակս տէրունւոյն յարդարէ ոտից. եւ գետոց յարձակմունք առաւելապէս հոսին ընդ տիեզերս. եւ ականակիտ աղբերացն քաղցրաբողիս ծաւալմամբ բնութիւնք զովացեալ հրճուին, զի Աստուած եկեալ է յաշխարհ: 24 Իսկ իմաստութեան ծով բնութեան մերոյ խորք՝ ՚ի չար հողմոց երբեմն անդնդապտոյտ փրփրատեսակ ալեացն հանդարտեալ, գնացս յինքեան անվայրափակ յարդարէ բնութեանս՝ հոգւոյն ՚ի վերուստ շողացեալ ճառագայթիւք. եւ աւետարանական գետոցն տիեզերագնաց ծաւալմամբ ՚ի կենաց աղբերէն զանմահութեանն անհատաբար յորդեալ հոսանս զտիեզերս պարածածկեն ողջունիւ խաղաղութեամբ յերեւել Աստուծոյ մերոյ:

25 Այսոքիւք տաւնիս նկարագրի պայծառակերպութիւն այսպիսեաւք հրաշիւք: 26 Արդարեւ սա է աւր ցնծութեան եւ ուրախութեան զոր արար Տէր. սա է աւր ծագման մեծի փառացն Աստուծոյ, որ է նոր արքայութեան սկիզբն եւ տեսչու-

1 Մի օրինակում՝ դամպարաշար
 2 Մի օրինակում՝ ի միագոյն թանճրութեան
 3 Մի օրինակում՝ հրաղէզ
 4 Մի օրինակում՝ տերեւազգեստ եւ ծաղկագարդ
 5 Մի օրինակում՝ ծիրաներփն

6 Մի օրինակում՝ շուշանացեալ վայրս
 7 Մի օրինակում՝ ՚ի բարկացայտ
 8 Մի օրինակում՝ ասպարէզընթաց

թիւն էական լուսոյն եւ նկարագիր յուսոյն յաւիտենից: 27 Սա է աւր սուրբ միաշաքարթուն պսակեալ լուսով տէրունական յարութեամբն. յորում եւ էջք Հոգւոյն Սրբոյ 'ի վերնատունն պայծառ լուսով շրջափայլեալ՝ զերկնախմբիցն 'ի նմա հրաշագարդեաց զգասս:

28 Սա 'ի Մովսէսէ անուանեցաւ աւր մի յորում սկզբնածինն լուծաւ խաւար, եւ 'ի լոյս ամենայն վայելչացաւ բնութիւնս: 29 Իսկ 'ի մարգարէէն աւր ութերորդ, որ նշանակէ նոյն մի. եւ ութերեակ վասն միոյ մեծ եւ աներեկ աւուրն, որ 'ի միում ճշմարիտ աշխարհին յարատեւակ աստուածային լուսով մաքրեցելոցն զանլուծանելին ընձեռէ կեանս. որոյ ճառագայթք պայծառութեան¹ անդ լուսաւորելոցն յայսմ փայլէ աւուրս, յորում փրկիչն մերունակ կերպիւ զաստուածութեանն 'ի Թափաւր ճառագայթեաց զլոյս՝ փրկական փայլման լուսոյն առ հաւատչեայ 'ի յարութեան սրբոց² աստուածանմանակերպութեամբ, զոր եւ տաւնէ եկեղեցի հրաշապայծառ ցնծութեամբ:

30 Սա է տաւն տաղաւարահարացն աւրինադրեալ Մովսէսի յետ ելիցն Իսրայէլի 'ի Հնգետասան աւուր ամսոյն եաւթներորդի. յորում զեաւթներեակն 'ի տաղաւարս բնակեալ համախմբեալ տաւնէր Իսրայէլ, բարձեալ ունելով կողերս արմաւենեաց եւ ձողս հագնեաց եւ զոստս եւ զուռս սաղարթագուարճս առ 'ի յիշատակ խորանաչու ընթացիցն որ 'ի Սինա եւ ընծայաբերութեան գոհութիւն աստուածական երախտեացն, զոր³ բարձիւ կրեցին, յաւետեացն աստուածակերպ բուրաստանատեսակ ժամանեալ աշխարհ: 31 Այս առ նոսա ստուերական աւրինադրեալ տաւն,

որ զաւետարանին նախագրէր զճշմարտութիւն. քանզի այն ինչ լքանելով մեր զիմանալի Եգիպտոս, ⁴զողողողն ասեմ մարմնոյս 'ի խաւարաբնակ աղտեղութեանց ախտից տիղմ, աւետարանին լուսոյ առաջնորդեալ մեզ հրափայլ սեամբ՝ Հոգւոյն հովանացեալ ամպով, 'ի հոգեւորն բարձրանամք աստուածգիտութեան լեռն, յորում է Աստուած որ զամենայն նիւթականս 'ի նմա հրով բոցակիզէ: 32 Ի նմա զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝ 'ի նոյն լուսոյ կենդանակերպիմք, եւ փառաց 'ի փառս ճառագայթեալ աւրինադրիմք զկենցաղոյս լքանել նիւթական շինուած, եւ յաննիւթն փութացեալ յարկ՝ զքակտելիս զայս մարմնոյ անդամս առաքինութեան յարդարել խորան: 33 Ի սմա որպէս 'ի տաղաւարս տաւնեմք յեաւթներորդում ամսեանս ըստ յաւիտենիս այսորիկ եաւթնեակ շրջագայութեամբ 'ի Հնգետասաներորդում աւուր ամսոյն՝ զգայութեանցս երիցս ընկալեալ մաքրութիւն. յորս գայթակղելն եւ ընդ որս պատերազմ 'ի ներքս ընդունեալ զխայթոց մեղացն: 34 Եւ տաւնեմք զեաւթներեակն 'ի տաղաւարս, կողերս բարձեալ արմաւենեաց, եւ զոստս եւ զուռս կանաչագգեացն. որ է զբոլորս զայս եաւթնեակ շրջագայութեան կենաց հոլովս արտաքսելով այսմ աշխարհի՝ կեալ ըստ Աստուծոյ Հոգւով, եւ անմարմնական առաքինութեանց ոստոցն աճմամբ առ ամբարձումն հրեշտակաց բարձրածայրեալ որպէս արմաւենիս 'ի գաւիթս Աստուծոյ ծաղկիմք առ վերինն հրաւիրեալ երկիր աւետեաց 'ի Սիովն քաղաք Աստուծոյ 'ի մայր կենդանեաց եւ 'ի բանակետղ անմահից 'ի լուսոյն առագաստ յանքակտելի խորան, ուր տաւնողացն է Հնչումն յարագուարճ խնդրութեամբ:

1 Մի օրինակում՝ աստուածութեանն
2 Երկու օրինակում՝ յաւելուն գոյգ
3 Երկու օրինակում՝ գոր բարին կամ գորս գրարին կրեցին

4 Երկու օրինակում՝ գախալոյ մարմնոյս ասեմ խաւարաբնակ

35 Այսօրիկ մեզ յաւրինակ կանխաւ տպաւորեալք. գոր ինքեամբ ելից՝ որ գրոյն է լուծիչ Քրիստոս եւ կատարիչ խորհրդոյն, ՚ի սմին աւուր տաւնի աշակերտացն ՚ի լերինն անմերձենալի զաստուածութեանն նազելի փառացն յայտնեաց զծայրագոյն լուսոյ ծագումն ՚ի կենդանարար աղբերացեալ մարմնոյն փայլակնատարած ճառագայթարձակ փայլմամբ: 36 Եւ էր տեսանել զԹափաւր նոր գոմն Սինա լեռն սուրբ եւ վայր աստուածաբնակ լուսեղէն, վառեալ հրով եւ ամպով. այլ եւ երկին նոր ՚ի վերայ երկրի բարձրացեալ աստուածութեանն ճառագայթիւք՝ պայծառագգեստ պսակեալ արփիափայլ հրաշիւք: 37 Ի նմա եւ զաւրբ հրեշտակաց բերաւոր բանակք սերովբէից գումարեալք. որք ՚ի ներքոյ տէրունւոյն ոտից սոսկացեալ՝ հրափայլ թեւաւքն պարփակեալ զարքայական աթոռովն: 38 Զի ուրանաւր վերանստեալն, անդ եւ աթոռ նորա, անդ եւ պարք բարերջանկացն՝ պայծառ եւ մեծ առաքելոցն եւ մարգարէից լուսազգեստ զասք հպաւորութեամբ անմերձենալի լուսոյն աստուածակերպեալք¹, բացաւ երեսաւք առ Աստուած հայելով աստուածացեալք. ճշմարտագոյնս ասել, Աստուած ընդ Աստուածս միաւորեալ եւ ծանուցեալ: 39 Անդ սիւնք եկեղեցւոյ պայծառագգեստ վառեալք աստուածածագ հրոյն բորբոքմամբ միացեալք ՚ի լոյսն անշիջանելի. սուրբք որք փայլեն ընդ տիեզերս աւետարանին լուսոյ աշխարհարձակ ճառագայթիւք: 40 Անդ Մովսէս նախահայելի արեգականն անորակի եւ անմատոյց լուսոյն առաջին ծագումն ՚ի մեզ փառացն Աստուծոյ, զտենչալին իւր տեսեալ լոյս՝ մարմնոյ ծածկեալ վարագուրաւ, ցնծացեալ՝ յարութեամբ եկեալ ողջունէր նոյնահրաշ կերպիւ, աւետաւորելով մեզ ՚ի նոյն կենդանակերպիլ ՚ի նորոգումն

աստուածորդւոյն յարութեամբ, զնա վկայեալ մահու եւ կենաց տէր: 41 Եւ Եղիա հրոյն վերամբարձեալ կառաւք, ՚ի կենդանեացն վայրէ յողջոյն եկեալ մերատիպ հական լուսոյն, վկայելով՝ թէ տէր է վերնոց եւ ներքնոց, խաւսէր վասն փրկութեան ելիցն որ յերուսաղէմ, մեզ աւետարանեալ ՚ի յուսացեալ յարութեանն կառավարիլ ամպովք եւ ելանել ՚ի վայր աստուածութեանն հրոյ: 42 Անդ հազարապետն մեծ հայրական խորոցն՝ փակողն եւ բացող վերին արքունեացն լուսոյն առագաստեալ խորանաւն՝ զերրորդութեանն պակուցեալ վերածայնէր զխորհուրդն, եռակի տաղաւարաւքն եւ տիեզերագոչ փողով հրաւիրէր զընդհանուրս ՚ի խորան լուսոյ վերինն Երուսաղէմի: 43 Անդ զաւրբ զաւրութեանց վերին արքային թագաւորք ազգաց եւ իշխանք աշխարհաց որդիքն Որոտման, որք հոգւոյն հովանացեալ ամպով, զհայրականն ընդ տիեզերս հնչեցին ՚ի բարձանց ձայն ահեղ որոտմամբ՝ արբուցանել ծարաւեաց ցաւով աւրհնութեամբ զանմահութեան հոսանս: 44 Եւ զի՞ եւս, համառաւտագոյն ասացիցանդ Երրորդութեանն բոլոր գերակայ փառացն բացածագումն: 45 Վասն զի հոգին հովանացաւ լուսեղէն ամպովք, եւ Աստուած հայր փառաւք որոտաց, եւ Բանն մարմնացեալ զհայրաբուն² փառացն հական ճառագայթ անդանաւր փայլեցոյց ՚ի կենդանարար տնաւրինեցելոյ մարմնոյն. վասն զի ընդ իւր միաւորեաց զմարմինն, որպէս է ասել՝ ՚ի Հայր եւ ՚ի Հաւրէ Աստուած Բանն, էն յէականէ անտի, լոյս ՚ի լուսոյ, կեանք ՚ի կենաց, երանելին եւ միայն բարին. առ որ ամենայն հայի, որում ամենայն բաղձայ, յորում ոչ է այլայլումն եւ փոփոխումն: 46 Նոյն բնութիւն Հաւր, ճառագայթ փառաց, կերպարան էութեանն եւ պատկեր բարերարու-

1 Երկու օրինակում՝ պայծառակերպեալք

2 Մի օրինակում՝ գիրարուն

թեանն. որ էն եւ միշտ էն՝ պատճառ ունելով զմիշտ էն, ՚ի վեր քան զմիտս եւ զբանս. զմերս զթածաբար կամեցեալ փրկագործել զբնութիւն՝ կերպակից մեզ եղանի, ոչ արտակացեալ ՚ի գոյոյն Աստուած: 47 Վասն զի միացաւ ՚ի մարմնի բնութեամբ ընդ ինքեան զնա խառնելով եւ աստուածացուցանելով, կալով մնալով որպէս էրն, ոչ շփոթեալ եւ ոչ անխառն մնացեալ, այլ՝ եւ խառնեալ եւ միացեալ բնութեամբ անշփոթաբար եւ անբաժանելի ՚ի վեր քան զմտածութիւն էիցս: 48 Վասն զի յորովայնի կուսին զանփոփոխելի լուսոյն ճառագայթ զփոփոխականաւն փայլատակեաց զնիւթով. կայծակն իմն անդուստ նոյնակերպ հրաշաբուսեալ, զբաւանդակ զմեր հոգի եւ զմարմին եւ զմիտս անապական եւ աստուածախառնութեամբ միաբուն գործելով էմմանուէլ ՚ի կուսէն ծնաւ անանջատաբար ՚ի Հաւրէ բոլոր յերրորդութեանն գոլով եւ անորիշ յերկրէ. զի եւ ՚ի գիրկս կուսին աստուածացեալ մարմնովն՝ եւ զսրովբէական կառսն պարալունու մարմնացեալ աստուածութեամբն: 49 Վասն զի յամենայնի ելով լի են նովաւ երկինք եւ երկիր. որ անդրն է քան զամենայն, ընդ ամենայնսն մեր ճանապարհորդեաց հոգեկան եւ մարմնական կիրս առանց մեղաց եւ ապականութեան միով դիմաւք միով կամաց շարժութեամբ, մի եւ նոյն Աստուած մարմնացեալ եւ անդր քան զբոլորս. որոյ անհատ միութիւն գերակատար լրութեամբ յայսմ բացածագեաց աւուր, ՚ի նոյն ՚միակերպ աստուածացեալ մարմնոյն զէականն աղբերացուցեալ փայլատակող ճառագայթ, զմերս լուսակերպելով մթացեալ խաւարային բնութեանս զսեաւ աղջամղջին տեսակ ինքեամբ միացուցեալ առ Հայր, ըստ որում եւ ասաց. Որպէս դու Հայր յիս եւ ես ՚ի քեզ, զի եւ նո-

ւա ՚ի մեզ իցեմ^ա: 50 Վասն զի ելանելով ՚ի լեառնն՝ ՚ի վեր տանէր զմեզ ինքեամբ ՚ի Հայրական աթոռն. եւ զմերասեր մարմնոյն արեգակնափայլ լուսագարդելով զդէմս՝ զմերս աստուածակերպէր խոնարհութեան զմարմին նմանութեամբ մարմնոյ փառաց իւրոց. ըստ որում եւ կամարածեւ շրջափակմամբ լուսեղէն ամպոյն՝ զմերս առագաստէր ՚ի սրբութիւն սրբոցն ընդ ինքեան զբնութիւնս ՚ի ներքոյ վարագուրին, որպէս ասացն՝ թէ «Ուր եսն եմ, անդ եւ պաշտանեայն իմ եղիցի»^բ: 51 Եւ Հայրականն ձայն զինքն ՚ի վերուստ վկայեալ որդի սիրելի, զորդեգրութեան մեր զառհաւատչեայ տայր աւետիս հրաւիրելոցն ՚ի լոյս. նա եւ զառաքելոցն եւ զմարգարէիցն խմբիւք զծայրագոյնն իւր ճառագայթելով լուսափառս² զբոլորիցն նշանակէր զվերնոց եւ զներքնոց կենդանեաց եւ մեռելոց տեսանել զինքն ՚ի վերջին աւուրն ընդ ամպս եկեալ զաւրութեամբ եւ փառաւք՝ Աստուածն ՚ի մէջ աստուածացելոց, զանդերանութեանցն աստ մաքրեցելոցն տալով զփառս. որ ՚ի մեծի ահաւոր աւուրն լուսահրաշ փառաւք տաւնս այս պսակեալ արեգակնակերպ փայլէ ընդ երկնաւս յինքեան ունելով զերեքպայծառեան լուսոյն եզաբուն ճառագայթ, զոր միածինն այսաւր ՚ի թափաւրական լերինն զերրորդութեանն բոլոր յինքն փայլեաց զլոյս, ճառագայթելով զարարածս. որով երկինք ցնծացան եւ երկիրս պայծառացաւ, վերնայարկք երկնից բացան եւ լոյս ՚ի ստորինս հոսեաց խորան. Հայրականն ընդ երկնաւս հնչեաց ձայն. տիեզերք որդեգրեցան. ճառագայթ հոգւոյն ծագեաց. երկրածինքս լուսագեցեան³. հրեշտակացն խումբ յերկրի պարեաց. հողեղինացս դասք

^ա Յ՝ՎԸ՝ԺԷ 21

^բ Յ՝ՎԸ՝ԺԸ 26

² Մի օրինակում՝ գլուսոյ փառս. եւ միւսն՝ զլոյս

³ Մի օրինակում՝ լուսագեցեսեցան. այլ օրինակում՝ լուսաւորեցան

1 Մի օրինակում՝ մերակերպացեալ մարմնոյն

մտին ընդ դրունս երկնից. աւրհնութիւնք յերկնից յերկիր հնչեաց. երկիր երկնանման զարդարեցաւ. դրախտին դրունք բացան, արտաքսեալն անդրէն պարեաց 'ի նմա. հոտ ծառոյն կենաց բուրեաց. երկիր զանմահութեան բուսոյց ծաղիկս. կենաց լոյսն ծագեաց. մահու ստուերն փախեաւ. արդարութիւն թագաւորեաց. իշխանութիւն մեղացն լուծաւ. աւետարանական փողն գոչեաց, տիեզերք 'ի քնոյ զարթեան, զԱստուած մարմնով եկեալ տեսին, եւ ընդ նմա աստուածացան:

52 Այսոցիկ մեզ բիւր բարեաց փոխանակ այս տաւն մեծ եւ պաշտելի: 53 Եւ եւս յոյժ վայելուչ է անուն տաւնիս զոր կոչէ եկեղեցի. զի վարդավառ ասի, որ է արդ աւար, եւ կոչի վարժարան: 54 Այլ վասն զի յոյնն զսա պայծառակերպութեան եւ պսակաց կոչէ տաւն, իսկ ազգհայաստանեայց վարդավառ, նոյն եւ մի զսորայս ձայնէ հրաշափառ պայծառութիւն, զոր կանխաւ բանն տպաւորեաց: 55 Ի սմա բովանդակ երկիր ծաղկաւտեալ, եւ բնութիւնս մեր յաւիտենական փթթեալ ծաղկաւք, եւ ճառագայթարձակ փայլմամբ փառացն Քրիստոսի. եկեղեցիք պսակեալ պայծառագգեստ վայելչութեամբ եւ առաքինութեանն լուսահրաշ վարդիւք եւ շուշանաւք՝ տաւնասիրացն ոսկեվարսեալ վայելչանան գլուխք. ըստ այսմ յիրաւի վարդավառ զսա ձայնէ եկեղեցի, եւ պայծառակերպութեան եւ պսակաց տաւն: 56 Իսկ արդ աւարն եւ վարժարանն յայլ բարձրագոյն տրամագրի խորհուրդ, զոր տրամախոհիցն 'ի հոգւոյն է գիտել: 57 Քանզի այն ինչ ծագեալ 'ի մեզ յարութեանն Քրիստոսի լոյս 'ի գլուխ սրբոյ յիսնեկիս, հոգւոյն յառաքեալսն 'ի վերնատանն զեղան շնորհք. յորում աւուր աստուածագիծ աւրինացն տառ 'ի Սինա ընձեռեալ Մովսէսի զոր տաւնէր Իսրայէլ ամ յամէ՝ պենտեկոստէ զսա առձայնեալ, 'ի նմին աւուր եւ հոգւոյն յառաքեալսն

զիւրն կենդանագրեալ շնորհս՝ տեղի տայր գիրն, եւ աւետարանին բազմաձայն լեզուաւք 'ի մի հնչեցեալ ձայն զլսողացն աշակերտէր հինգհարեան խմբիցն հոյլս՝ նոր Իսրայէլ զնոսա գրելով. առաջին քրտունք երկնաւոր մշակին եւ ծաղիկք առաքելական ոստոցն, որք զգրոյն 'ի բաց մերկացեալ զպատրուակ՝ հոգւոյն զգեստաւորեցան լուսով, աւետարանին հնազանդեալք աւրինադրութեանց՝ զոր առաքելական հրամանն զնոսա յերկրորդս յայս փակեալ յիսնեքեակ՝ որպէս 'ի վարժարանի վարժէր զնոսա 'ի հրահանգս վարժից հոգեւոր կրթութեանց ըստ իսրայէլեան երբեմն շրջացանական մաքրութեանն յերեման Աստուծոյ: 58 Սայապէս եւ սոցա սրբութեամբ աղաւթից մաքրութեան աւագանին լուսով որդեգրութեանն արժանաւ շնորհի, ըստ այսմ վարժարան զսա կոչել ոչ ինչ եպերելի է: 59 Իսկ արդ աւարն քանզի յանկման առաքելական աւրինադրութեանցն 'ի սմին յայսմ աւուր տաւնի տաղաւարահարաց առաջին յերուսաղէմ զեկեղեցւոյ կանգնեցին խորան, 'ի նմա զնորընծայս լուսացմամբ աւագանին որդեգրեալ հաւրն լուսոյ՝ փոփոխելով զհնութիւն ահարոնեան ծերացեալ պաշտամանն 'ի նորոգութիւն Քրիստոսի քահանայութեանն, եւ զկերպ գրոյն 'ի հոգւոյն շնորհս, եւ զթլփատութիւն մարմնոյն 'ի մտաց մաքրութիւն, եւ զառաւրեայ լուսամունս 'ի մշտնջենաւոր աւագանին մաքրութիւն հոգեւոր լուսացմանցն, եւ զգոհիցն եւ զպատարագացն ընծայս 'ի բանաւոր պաշտաւնս հաւատացելոցն բոլորապատու զանձինս Բանին Աստուծոյ 'ի վերայ վերնագունի ընծայեալ սեղանոյ: 60 Ըստ այսմ եւ զտաւնիս զաւրինակն՝ աւետարանին լուսով պայծառակերպեցին զխորհուրդ, փոխակերպելով զստուերին տաղաւար 'ի ճշմարտութեանն առագաստ, եւ

1 Մի օրինակում՝ գօրինակացն

¹զանճշմարտութեանն ոստասաղարթ եւ ծաղկագոլարճ գտաւնախմբելն Իսրայէլի ՚ի ծայրս լեռանց տաղաւարեալ՝ ՚ի հաւատոյն աւրինադրեցին նորածնելոցն բարձրանալ ՚ի լեառն, Երրորդութեանն պսակեալ լուսով, ծիրանիս արկեալ զհոգւոյն ճառագայթ, եւ երկնածաղիկ առաքինութեանն լուսասաղարթ ոստովք քաջուղէշ եւ յարափթիթ պտղաւէտեալք միշտ զփրկութեանն տաւնել զելս ՚ի խորանն լուսոյ նոր Սիրովնի որպէս արդարեւ տղայացեալք արդարութեամբ, եւ ՚ի կատարեալ գութ եկեալ՝ պայծառ հաւատով² հոգիացեալք. եւ մանկունք ³հարսանեաց լեալք եւ ՚ի ճաշ մտեալ ընդ անմահ փեսային ճաշակեն ՚ի լուսոյ հարսնարանին զանմահութեան զկեանսն, եւ ընդ անմահիցն դասագրեալ երամս՝ առագաստի երգեն զերգս Աւրինեալ եկեալ յանուն Տեառն՝. եւ թէ Տէր Աստուած մեր երեսեցաւ մեզ, արարե՛ք տաւն ուրախութեամբ⁴:

61 Այսպէս սրբոց առաքելոցն ըստ ակնարկութեանն ՚ի բարձանց զամենայն ստուերատեսակ երեւմունս աւրինացն քակտեալ՝ զճշմարտութեանն յայսմ տաւնի բացածագեցին լուսոյ խորհուրդ պայծառ ճառագայթիւք. յորում աւուր եւ զհոգին Սուրբ յայտնապէս հաւատացեալքն⁴ տեսին խմբիւք եկեալ յաւազանն լուսոյ եւ ՚ի սեղանն սուրբ ՚ի վերայ կենարար աստուածային խորհրդոյ փրկական մարմնոյ եւ արեան Աստուածորդւոյն. ընդ նմին եւ այլ աստուածաշնորհ պարգեւս առաքելահրաման նորընծայ պատարագաց աղին աւրհնութեան. եւ բովանդակ զամենայն աստուածապարգեւ աւետեացն յերուսա-

ղէմ կատարեալ զխորհուրդ: 62 Ի սմին յայսմ տաւնի բաժանեցին ՚ի մէջ իւրեանց զտիեզերս ամենայն կալ իշխանս ՚ի ներքոյ երկնից ըստ կանխասացութեան Հոգւոյն Սրբոյ Ի գումարել երկնաւորին զթագաւորս⁵, առնուլ յաւարի զընդհանուրս: 63 Ուստի առ միմեանս գոչէին միախումբ երկնաւոր նահատակացն աշխարհագոչ փողովք ասելով. Արդ աւար է, ելե՛ք ընդ տիեզերս գերել զգերութիւն, առնուլ աւար, բաշխել պարգեւս եւ տալ որդւոց մարդկան⁶. որպէս գրէ խորհրդագետն աշտոցիկ Պաւղոս, եթէ Գերեմի գամեմայն միտս ՚ի հնազանդութիւնն Քրիստոսի⁶: 64 Աստանաւր ցուցաւ թէ արդ աւար է տաւնս, զոր վարդավառ զսա ձայնէ եկեղեցի, առաքինութեան ՚ի սմա լուսերանգ եւ յուսահոտ⁵ բոցատերեւ վարդիւք հարսնազգեստ պսակեալ եւ հրճուեալ: 65 Սա առաջին յեկեղեցւոջ աւրինադրեցաւ յառաքելոցն տաւն աւետաբեր, որ ոչ մտանէ ՚ի շրջանս ընթերցուածոցն ընդ այլսն յորս աստուածային տնաւրէնութեանն վերաձայնաբար տաւնի խորհուրդ մարգարէիւք նախապատմեալ. զի ոչ զանցելոցն որպէս զնոսա, այլ զհանդերձեալ յաւիտենին յինքն բարձեալ ունի մշտապայծառ փառաց գերակայութիւն յարագուարճ ցնծութեամբ. որ եւ ոչ մարգարէքն ծանեան զայնս զոր անդն պատրաստեաց Աստուած սիրողաց ինքեան. զի սա ըստ ութերեակ աւուրն ⁶որպէս առաջինն այն եւ վերջին մշտնջենահոտ լուսով անթառամ պսակեալ տաւն յաւետահրաշ եւ ճառագայթաւէտ, սկիզբն առեալ ՚ի դատողական ատենէն, եւ տեւէ մինչեւ յանսպառ մշտանորոգ յաւիտեանսն զտաւնասիրացն բացախմբից⁷

1 Մի օրինակում՝ զպայծառագգեստ. միւս այլ՝ զպտղաւէտ սաղարթ զծաղկագոլարն
 2 Մի օրինակում՝ հոգւոյն լուսով
 3 Մի օրինակում՝ հարսնացեալի՝ ՚ի ցաշ
 4 Մ. Գ. Բ. 39. Գ. 4. Ժ. Գ. 35
 5 Մ. Գ. Ը. Ժ. 1-27
 6 Երկու օրինակում՝ հաւատացելոցն

6 Մ. Գ. Կ. 15
 7 Տէ՛՛՛՛ Մ. Գ. Կ. 19:
 8 Բ. Կ. Բ. Ժ. 5
 9 Մի օրինակում՝ բերկրահոտ
 10 Մի օրինակում՝ որ է առաջին ցոյց եւ վերջին
 11 Մի օրինակում՝ ՚ի բաց խմբիցն

միացեալ պար յիւրն լուսաթաղանթ առա-
գաստեալ ծոց, զանգրաւական ուրախու-
թեանցն տրոհելով աստ մաքրեցելոցն յա-
րատեւողութիւն ընդ էին՝ աստուածացեալ
եղելոց, զոր ոչ ոք կարէ ասել զայն զի ե-
ղիցի Աստուած ամենայն յամենայնի:

66 Իսկ մեր զաստուածահրաշ լուսա-
ւորութեանցս տաւնախմբեալ զաւր՝
կնքեսցուք զբանս. պայծառագգեաց պսա-
կեալ լուսով փառացն Քրիստոսի ընդ
սրբոց առաքելոց եւ մարգարէից պարս՝ ա-
րարչական սպասաւորեսցուք տնաւրէնու-
թեան, զլուծանելի մարմնոյս տաղաւար՝

մաքրութեան առնել խորան. յորում զմի
եւ զնոյն ինքն զՔրիստոս ընդունելով,
զերրորդութեանն ՚ի սիրտս մեր անպարա-
զիր ընկալցուք լուսաւորութիւն. եւ սա-
պէս ընդ լուսերամիցն յափշտակեսցուք
ամպովք ընդ առաջ Տեառն յաւգս նոյնա-
տիպ աստուածացեալ կերպիւ՝ զուարթ եւ
պայծառ կալ յառաջագահ¹ դասուն, ²զոր-
դեգրութեանն առեալ պարգեւս ընդ թա-
գաւորեալսն ՚ի լոյս ՚ի նոյն ինքն ՚ի Քրիս-
տոս Յիսուս ՚ի Տէր մեր. որում փառք յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

1 Մի օրինակում՝ յաչագահ

2 Մի օրինակում՝ զերրորդութեանն առեալ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՍԱՅԱԿԱՅ

Յորում եւ բանք մարգարեականք եւ վասն փոխման Աստուածածնին թէ որպէս եղէ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն եւ թէ յոյր ձեռն եւ զինչ եղէ պատճառք խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Յայս

1 *Զյորդութիւն առատութեան աստուածային հոգւոյն շնորհաց, որ 'ի վերայ քո անդուլ մտացդ, որ վասն գրոց ծանալթութեան եւ սիրոյ առ Աստուած, յառաջ քան գտեսութիւն 'ի ձեռն համբաւուց լուեալ իմ զխոհականութիւն մեծի հզաւրիդ ծանեայ, եւ այժմ 'ի ձեռն արժանափայլ խնդրոյս յառաջ քան զնկարագիր պատկերիդ եւ զտիպ մարմնոյդ, տեսեալ 'ի վրէժխնդրութիւն հոգւոյդ, գիտացի որ 'ի վերին շնորհացն է այս: 2 Վասն որոյ եւ ինքն բանն Աստուած 'ի ստեղծանելն զմարդն բանիւ զարդարեաց առ 'ի յաւրհանել եւ 'ի ճանաչել զերախտագործն, յորս ասէ. Աւրիմեա անձն իմ, զՏէր, եւ մի' մոռանար զգործս նորա^ա: 3 Յայտոսիկ ուրախ լինի տէրն, եւ երանէ զայնոսիկ որ յաւրէնս տեսաւ խորհեսցի 'ի տուէ եւ 'ի գիշերի. զի եղիցի նա որպէս ծառ 'ի գնացս ջուրց անթառամ, որ զպտուղ իւր 'ի ժամու տացէ: 4 Զի թէպէտ եւ երկիրս զիւրն սիրէ, սակայն ոչ է գովելի, զի եղծանելի է. զի Աստուած ստեղծ զմարդն յանմահութիւն որպէս ասացն, այլ ստեղծականաւն կերակրեալ մահացաւ: 5 Վասն որոյ զբանին վառ եւ բորբոք պահելով զկայծակն անմահանամ: 6 Ասացից քեզ 'ի բազմաց զերկուց քերց զիրս միայն, զի երկոքեանն ջերմութեամբ զտէրն ընկալան: 7 Մարթա կերակրելովն, այլ գովելի է Մարիամ, զի ասացաւ յաստուածեղէն բերանոյն. Աստ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ^բ:*

8 *Յայսցանէ գիտացի լեալ զքեզ, մեծ իշխանդ Վասպուրականի, որ թէպէտ եւ 'ի նախարարս ես թուեալ, սակայն 'ի տանէ թագաւորազուն, եւ ազգաւ ես քաջ եւ նախնական, եւ արգասաւոր սերունդ եւ զարմ. ոչ բանիւ միայն ուռճացեալ, այլ եւ 'ի գործ պատերազմաց ընդ առաջինսն թուեալ: 9 Զի որպէս երկուց մարդոց լինելութեամբ երկիրս հաստատեցաւ, յայսպէս 'ի ձեռն երկուց տանցդ, արծրունեաց եւ բազրատունեաց, այս աշխարհիս սերունդք բնակեն: 10 Եւ որպէս երկու աչք զբոլոր մարմին զարդարէ, այսպէս երկու կողմանքդ արեւելից եւ հիւսիսոյ լուսաւորին. եւ որպէս երկու ձեռք միացեալ 'ի գործ պիտոյանան, այսպէս եւ երկիրս Հայոց 'ի ձէնջ գոյանան: 11 Եւ որպէս 'ի վերայ երկուց ոտից բոլոր մարմինն հաստատի, այսպէս եւ 'ի ձեռն երկուց տանց ամենայն ազգք Հայոց հնազանդ լինելով 'ի մի մարդ կատարեալ 'ի Քրիստոս լինին: 12 Եւ դուք երկոքին ցեղք ընդ միմեանս միացեալ անշարժ կայք:*

13 *Քեզ ասեմ իշխանդ արծրունեաց, եցոյց ինձ տէր, զի յորդուց քոց երեք եղբարք վասն Քրիստոսի 'ի մահ մատնեալք, երկուքն արեամբ վկայք լինին Քրիստոսի, եւ մինն վրիպեալ 'ի նոցանէ եւ ոչ յայսմ վայելէ: 14 Վասն նոցա Աստուած զթագն թագաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ յերկարածգէ յերկրի: 15 Եւ բազրատունուոյդ ասեմ. յիշէ տէր զբանն իւր, եթէ թագաւորք 'ի քէն ելցեն, եւ թագաւորէք 'ի Դուին. եւ այլ ինչ չունիմ ասել ձեզ յորժամ տէր տացէ տեսանել:*

^ա Սաղմ. ճԻ 2-3

^բ Ղուկ. Ժ 42

16 Այլ ընդ գովասանական բանիցդ շնորհակալ եմ. եւ երկիր ոչ պագանեմ, զի զայր ծեր հնացեալ մեղաւք՝ հրեշտակաց նմանեցուցէք. երանի թէ աշակերտ նոցա արժանի լինէի կոչել, թող թէ փոխանորդ:

17 Զի հանապազ յիշելով զվարս նոցա հալիմ, զիս ոչ գիտելով արժանի. այլ զի արժանի զիս առնէք յիշել առ հատուցանողն, երկիր պագի, եւ ձեզ հատուցէ Աստուած առատապէս զաւրհնութիւն:

18 Այլ չձանրանամ ձեզ յերկրի, աստուածասէր իշխանք. հոգևով եւ մտաւք միացիք ընդ իս 'ի Քրիստոս. զի ոչ խնդրեմ ինչ զձեր, այլ զձեզ:

19 Այլ զխնդիր աստուածասէր իշխանիդ, որ վասն պատուական պատկերի Տիրամաւրն, անմահ քոյին ազգի թողում յիշատակ. զի եւ զուարճանամ 'ի յիշատակի Տիրամաւրն, որ զարեգական արդարութեան յերկիր ծագեաց, ճշմարիտ արեւելք եղեալ արեգականն արդարութեան. զի 'ի նմանէ փրկութիւն, 'ի նմանէ կենդանութիւն, 'ի նմանէ եւ Քրիստոս ըստ մարմնոյ՝ որ է Աստուած աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

20 Որ պատուիրեալս էիք զբան ձերոյ քահանայիս վասն Բեթղեհէմի շինութեանն՝ թէ ո՛վ, կամ յու՛մմէ՛. եւ զի Ղուկաս զՆաթան, եւ Մատթէոս զՍաղմոն յիշեն նախնիք կուսին. եւ զի ոմանք գտիւ եւ ոմանք զգիշեր երիցուցանէն, գրեմ ձեզ, այլ այժմ ոչ ժամանեմ առ հզաւր իշխանսդ 'ի տեսութիւն, մինչեւ կատարեսցի տաւն իսկուհւոյն, գրեմ այժմ աստուածասէր անձինդ զպատճառս տեղւոյն:

21 Բեթղեհէմ տուն հացի թարգմանի, որպէս ասացաւ 'ի տեսունէ, ես եմ հացն կենաց. եւ տեղիս այս հեթանոսաց էր, եւ 'ի նահապետէն գնեցաւ, զի լիցի հեթանոսաց ճանապարհ առ կենդանութիւն. զի հեթանոսաց էր երկիրն՝ յորում ծնաւ Քրիստոս: 22 Բեթղեհէմ տուն էր նահա-

պետաց. զի Փարէս ծնաւ 'ի Յուդայէ եւ 'ի Թամարայ, Փարէս ծնաւ զԵզրոն, Եզրոն զԱրամ, Արամ զԱմինադաբ՝ որ էր սպարապետ զաւրուն Յուդայ, 'ի հանելն Մովսէսի գորդիսն Իսրայէլի յԵգիպտոսէ: 23 Սա ծնանի զՆաասոն, որ էր իշխան բերաւորացն Յուդայ յանապատին, եւ դուստր Ամինադաբայ եղեւ կին Եղիազարու, որդւոյ Ահարոնի քահանայապետի, յորմէ ծնաւ Փենեհէս: 24 ՅԱմինադաբայ բղխեաց աւրհնութիւն քահանայութեան եւ թագաւորութեան. թագաւորութիւնն 'ի Նաասոնեայ, եւ քահանայութիւնն 'ի ծննդենէ քեռն Նաասոնի, որ ծնաւ զՓենեհէս, որ ցածոյց զբարկութիւնն Աստուծոյ նախանձախնդիր լինելով. եւ Նաասոն ծնանի զՍաղմոն: 25 Այս Սաղմոն իշխան էր ցեղին Յուդայ, յորժամ անցոյց Յեսու ընդ Յորդանան գորդիսն Իսրայէլի, զերկոտասան ցեղիցն բանակս: 26 Եւ 'ի կործանման Երիքովի, ապրեցուցեալ Յեսու զԲաբելոնս, եւ քաղաք շինէր սա ինքեան զԲեթղեհէմ 'ի գետինս Յուդայ, եւ 'ի սմանէ ծնանէր զԲոոս: 27 Եւ Բոոս առ կին զՀուլթ մովաբացի, եւ 'ի նմանէ ծնանէր զՈվբեդ, եւ Ովբեդ ծնանի զՅեսսէ, Յեսսէ ծնանի զԴաւիթ: 28 Սա է մարգարէին հոգեխառն խոստովանութիւնն. Ոչ ինչ կրսեր ես յիշխանս Յուդայ: 29 Իսկ Եփրաթա՝ թարգմանի բացումն, վասն զի 'ի սմա եւ Սամուէլ աւծեալ իւղով զԴաւիթ, զոր մարգարէն նախաճառեալ, Ի Բեթղեհէմ ինչ իշխանս որ հովուեսցէ գողովուրդ իմ գիւրպայէ՛:

30 Մեծի նահապետին լցաւ աւրհնութիւն, անպակաս ասացեալ պետ 'ի Յուդայէ, մինչեւ 'ի գալ՝ որոյ իւր է թագաւորութիւնն, եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց: 31 Ոչ վասն Դաւթայ ճառեալ զայս մարգարէացաւ, այլ վասն որ 'ի զաւակէ

« Մարթ. Բ՝ 6

բ Մարթ. Բ՝ 6

Դաւթի ճշմարիտ էառ զմարմնաւորութիւնն: 32 Ծնաւ 'ի սուրբ կուսէն 'ի Բեթղեհէմ որ Դաւթի կոչեցաւ քաղաք: 33 Ի սմա բանայր դուռն տեսութեան տիեզերաց, զարարչական Բանին մարմնանալ ճշմարիտ, որ առաջին է, եւ ոչ կրսեր քաղաք գաւազանին Յուդայ: 34 Ի Բեթղեհէմ 'ի կուսէ ծնիցելոյ, եւ տիրեալ տիեզերաց աստուածաբար: 35 Եւ զի մի՛ չրեայքն ճոխասցին միայն ինքեանց զմարմնաւորութիւնն հաւատալով, զի եւ 'ի հեթանոսաց անմաքուր կանայք դստերաց Իսրայէլի յաջորդեցին մաքրութիւն, Թամար, Բախաբ, Հուլթ: զի եւ հեթանոսաց պարծեսցի ժողովարան, այսպիսի ունելով նախարարս սրբոյ կուսին: 36 Զի որպէս չրեայք պարծին թագաւորաւք եւ նահապետաւք, նոյնպէս եւ եկեղեցի սուրբ խնդասցէ տեղեաւն, Թամարաւն, Բախաբաւն, Հուլթաւն: 37 Եւ գերեւելի փրկութիւնս նոցա առնելով ընդ թագաւորս եւ ընդ նահապետս, որպէս զմեծ եւ զառաքինի կանայս, զԲեթղեհէմ հասարակաբար զաստուածընկալ այրն, հաւատապէս զաստղն, անջատակի զմաւզան, անորիչ զմարմնացեալ Բանն: 38 Յերկակողմ մասանց, յանառաքինի կանանցն որք 'ի հեթանոսաց, 'ի թագաւորաց եւ 'ի նահապետաց որք յԻսրայելէ, 'ի սրբոյ կուսէն հասարակաց փայլեալ անմուտ արեգակնն, ջահաւորեաց զընդհանուր տիեզերս:

39 Արդ մի՛ ոք անուսուժն զմեզ համարելով վասն կրկնաբանելոյ զասացեալս 'ի մէնջ, այլ վասն աստուածասէր անձինդ գրեմ գրեաւն 'ի գիրս յայս: 40 Վասն այսորիկ առ Բոոս կին զՀուլթ մովաբացի, զի նովաւ եղիցի հաղորդ ակրհնութեան արդարոց: 41 Եւ 'ի Հուլթայ ծննդենէն ծնաւ

ազգ տանն Դաւթի, եւ 'ի նորա զաւակէ ծնաւ Քրիստոս արքայ: 42 Կահաթ ծնաւ զԱմրամ, եւ անուն կնոջն Կահաթու Ովրաբ, դուստր Դեւեայ, որ ծնաւ զՍաղա յԵգիպտոս, եւ Սաղա ծնաւ յԱմրամայ զԱհարոն եւ զՄովսէս եւ զՄարիամ քոյր նոցա: 43 Ութսնամեան էր Մովսէս, եւ Ահարոն եղբայր նորա ութսուն եւ երից՝ յորժամ խաւսեցան ընդ Փարաւոնի: 44 Եւ առ Ահարոն, ասէ, որդւոյ իւրոյ կիմ գեղիսաբեթ գղուստր Ամինադարայ, զոյր նասսոնի յազգէ Յուդայ: ուստի քահանայութեան եւ թագաւորութեանն ցեղքն ընդ միմեանս խառնեցան խնամութեամբ: 45 Վասն որոյ Մարիամ մայր Յիսուսի թէպէտ եւ յազգէ Յուդայէ, վասն խնամութեամբ ընդ միմեանս խառնելոյ քահանայիցն եւ թագաւորացն, կոչի ազգատոհմ Եգիպտեթի կնոջ Զաքարիայի: 46 Զի որ 'ի նմանէ ծնանելոց էր, քահանայ էր եւ թագաւոր:

47 Իսկ Ղուկաս աւետարանիչ, ոչ ըստ բնութեան զազգահամարն կարգէ, այլ ըստ աւրինացն: 48 Զի յորժամ մեռանէր եղբայր անորդի, միւս եղբայր առնոյր զկինն, եւ յարուցանէր զաւակ յանուն եղբաւրն: 49 Եւ է որ միաւորեալ է ըստ բնութեանն, որ յերանսն գայր Քրիստոս, եւ անդէն այլ ոչ բաժանէր. եւ թուէ մինչեւ յԱդամ եւ յԱստուած: 50 Իսկ Մատթէոս աւետարանիչ թուէ յԱբրահամէ մինչեւ 'ի Քրիստոս, զի 'ի նորա զաւակացն ծնանելոց էր Քրիստոս եւ ընդ նոցա երանսն գայր: 51 Մատթէոս զՍաղմոն ասէ, եւ Ղուկաս զՆաթան, զի 'ի Նաթանայ իջանէր ազգն 'ի Յովսէփ, եւ 'ի Սաղմոնէ իջանէր 'ի Մարիամ ըստ բանի հրեշտակապետին. Յովսէփ որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ Բեզ զՄարիամ: 52 Ասէ եւ Եպիփան կիպրացի մեծ վարդապետն այսպէս. Սուրբ կոյսն Մա-

« Մատթ. Բ 6

բ Տե՛* Եւ. 9 23:
գ Մատթ. Լ 20

րիամ աստուածածին, դուստր էր Յովակիմայ եւ Աննայի. իսկ Յովակիմ որդի Բարեայ, որ կոչի Պանթեո, եղբայր Մեղքեայ, որպէս կայ յաւանդութեանն Հրէից: 53 Որդի Ղեւեայ ՚ի գաւակէ Նաթանայ, եւ Սաղմոնի ՚ի ցեղէ Դաւթի յազգէ Յուդայ: 54 Իսկ Մեղքի որդի Ղեւեայ ՚ի վախճանելն Մատթանայ հաւր Յակոբայ, առ զկին Մատթանայ որ էր այրի, զմայր Յակոբայ. որ եւ գնաց զհետ մաւր իւրոյ Յակոբ առ Մեղքի եղբայր Բարեայ որ կոչի Պանթեո հայր Յովակիմայ, որ եւ սնաւ ՚ի տան Մեղքեայ: 55 Իսկ ՚ի կնոջէ Մատթանայ ծնան երկու եղբարք, ՚ի Մատթանայ Յակոբ, եւ ՚ի Մեղքեայ Հեղի: 56 Եւ էին Յակոբ եւ Հեղի եղբարք, համամայր յայլ եւ այլ հաւրէ: 57 Իսկ ՚ի վախճանելն Հեղեայ, յետ մնալոյ իւրոյ անզաւակ, հարկեալ Յակոբ ըստ աւրինացն, առնու զկին եղբաւր իւրոյ յարուցանել նմա զաւակ: 58 Եւ այսպէս ծնաւ Յակոբ ՚ի կնոջէն Հեղեայ զՅովսէփ եւ զԿղէտովաս, ծնունդք ըստ բնութեանն Յակոբայ, եւ որդիք Հեղեայ ըստ աւրինացն: 59 Իսկ Յովակիմ հայր Մարիամու, եւ նորին հայր Պանթեո, եղբայր Մեղքեայ, էին որդիք Ղեւեայ, ազգակիցք Յակոբայ, որպէս ցուցանեն երբայցուոցն աւանդութիւնքն: 60 Որպէս զի գոլ Մարիամու դուստր Յովակիմայ, թոռն Պանթեոայ եղբաւր Մեղքեայ, որդւոյ Ղեւեայ, որ առ զկինն Մատթանայ: 61 Իսկ կին Հեղեայ, տուեալն Յակոբայ ծնաւ զՅովսէփու, որպէս յառաջագոյն ասացաք: 62 Որպէս զի գոլ Մարիամու, որ եղեւն Յովսէփ այր, ըստ երկուց նահապետութեանցն, Նաթանայ եւ Սաղմոնի, յազգէ Դաւթի ըստ հաւր, իսկ ըստ մաւր Հեղեայ, եղբաւր նորին հաւրն Յովակիմայ, եւ ըստ քահանայութեանն ազգակից Եղիսաբեթի:

63 Եւ ինքն սուրբ կոյսն սքանչելի վարուք սրբութեամբ առաւելեալ քան զամենայն ոք, ըստ բանին Սողոմոնի, Բագում դստերք ստացան զԲեթուփիւն, բայց դու ա-

ռաւել եղեր՞, որպէս աւետարանեցաւ ՚ի Նազարեթ ՚ի Գաբրիէլէ, միահամուռն ամենայն ամբ կենաց նորա վաթսուռն ամ. ՚ի տասն եւ հինգ ամին ծնաւ զփրկիչն աշխարհի, եւ երեսուռն եւ երեք ամ մինչեւ ՚ի խաչելութիւն փրկչին: 64 Իսկ յետ համբառնալոյ յերկինս փրկչին երկոտասան ամ, որ լինի ՚ի սկզբանէ կենաց նորա մինչեւ ՚ի հրաշալի փոխումն վաթսուռն ամ:

65 Սուրբ կոյսն եւ Եղիսաբեթ եւ Սողոմէ, երեք քեռ երեք դստերք էին սոքա. եւ Մարիամ Կղէտովայ քոյր ասի Աստուածածնին, զոր ասէ՝ կային առ խաչին Յիսուսի: 66 Այլ եւ Յովսէփ այր Մարիամուռնէր որդիս չորս, զՅակոբոս, զՍիմոն, զՅուդա, զՅովսէս. ունէր եւ դստերս երիս, զՄարթա, զԵսթեր, զՍողոմէ՝ որ էր մայր Յակոբայ եւ Յոհաննու եւ կին Ջեբեղեայ: 67 Եւ Յոհաննէս կոչի քեռորդի փրկչին. զի որպէս որդիքն Յովսէփու եղբարք ասին փրկչին, այսպէս եւ դստերքն քոյրք: 68 Յովսէփ քառասունամեայ էր մինչ կոյսն յանձնեցաւ նմա, եւ յերեսուռն եւ մի ամի կենարարին հանգեաւ ՚ի Նազարեթ ՚ի տան իւրում. եւ սպասաւորէր սրբոյ կուսին Յակոբ արդարն ՚ի Յովսէփայ յանձնեալ, զի եւ առ Յովսէփաւ նա հոգայր ծառայապէս, հեզն եւ արդարն, մինչեւ ՚ի Քրիստոսէ Յոհաննու յանձնեցաւ:

69 Եւ սուրբ կոյսն բազում չարչարանս կրեաց եւ վտանգ ՚ի Կայիափայ, եւ հալածանս ՚ի Հրէիցն: 70 Զի ոչ տային նմա գնալ ՚ի գերեզմանն կալ յաղաւթս, կամ ՚ի Գեթսեմանի յայտնապէս, կամ յայլ տեղիս տնաւրինականս փրկչին, բայց

« Ընդ. ԼԵ 29

1 Առ բագումս ՚ի վարդապետաց տարածեալ կարծիքն յաղագս ՚ի կարգ աշխարհի մտելոյ Յովսէփայ կանխաւ եւ որդիս եւ դստերս ծնանել, դադարեաց ՚ի Հերոնիմեայ եւ այսր. եւ հասարակաց վարդապետութիւն է արդ մշտնջեմաւորն լինել կուսութեան նորա. գեղարար տեսնոն ասացեալն յաւետարանի՝ զազգականս նորա իմացեալ, կամ որդիս եղբոր Յովսէփայ:

միայն գաղտնի: 71 Եւ հալածեալ զեղբայր տեառն զՅակոբ, երթեալ հուր հարին տանն յորում կայր սրբուհին, եւ շրջապատեալ հուրն զՀրեայն, կիզեաց արս եաւթն, եւ զԿայրափա եւ զԱննա եւ զՂեւի քահանայապետք, ոչ ինչ վնասեալք տանն: 72 Եւ երկուցեալք, այլ ոչ եւս իշխէին համարձակել 'ի սուրբ անձնն:

73 Յաւուր մկրտութեանն տեառն, խաժամոժ ամբոխ Հրէիցն զնացեալ հրոսակք 'ի Յորդանան ըմբռնել զՏիրամայրն եւ զՅովհաննէս: 74 Իսկ հրեշտակ Աստուծոյ եղ զնոսա յայնկոյս գետոյն. եւ Հրեայքն անցանել կամեցեալ, արս քսան 'ի նոցանէ կորոյս Յորդանան: 75 Եւ յաւուր համբարձմանն տեառն, 'ի լեառն ձիթենեաց յախուռն քարամբք հասեալ Հրեայքն 'ի վերայ սրբուհոյն սատակեցին յինքեանց արս յիսուն քարավրէժս: 76 Այլ զի բազում հալածանս գրելով զՏիրամաւրն, ճառս ձանձրասցի յընթեռնուլ, այսուհետեւ 'ի խնդիր սրբոյ պատկերին դարձայց:

77 Հրաւիրեալ սրբուհին 'ի փոխումն առ որդին իւր, յայտնեալ աւետարանչին զփայտն կիւպարիս, յորմէ կենսաբեր խաչն, մեծաւ թախանձմամբ կերպածեւէ զպատկեր Տիրամաւրն առ 'ի մնալ նշխար կենաց մերոց, առ անձուկ սրտին իւրոյ յոյժ բազձացեալ աւետարանիչն: 78 Քանզի յետ համբառնալոյ փրկչին մերոյ, նովաւ մխիթարէին աշակերտքն, զսուրբ կոյսն տեսանելով որպէս զորդին իւր. նա եւ Պետրոս եւ Պաւղոս բազում անգամ ելանէին յԵրուսաղէմ տեսանել զսուրբ տեղիսն, եւ 'ի տեսութիւն իսկուհոյն:¹

1 Տօնապատեառ յաւելու. Յաւուր միում տեսիլ երեսեալ Աստուածածնին՝ եթէ փոխելոց ես յաշխարհն կենդանեաց, եւ հայցէր 'ի տեսնել տեսանել զսուրբ առաքեալսն, քանզի երթեալ էին յորոտս տիեզերաց քարոզել զաւետարանն փրկութեան. եւ տէր ամպով յափշտակեաց զաստուածագան սուրբ առաքեալսն յիւրաքանչիւր զաւտաց յակամ թօթափել համագումար միաբանութեամբ:

79 Արդ 'ի ժողովել աշակերտացն համագումար միաբանութեամբ 'ի յղարկել զաստուածամայրն իւրեանց, ըստ բանին տեառն, եթէ ուր մարմին է՝ անդ եւ արծուիք ժողովեցին. որք թէպէտ եւ 'ի ժամ խաչելութեանն ցրուեցան, այլ 'ի ժամ յարութեանն ժողովեցան. քանզի ասաց տէրն, քակեցէք զտաճարս զայս եւ ես յերիս աւուրս շինեցից զսա: 80 Զոր մարգարէն ասէ, շինէ զԵրուսաղէմ տէր, եւ զցրուեալսն Իսրայէլի ժողովէ: 81 Խորհեցեալ այնուհետեւ եւ Յոհաննու ընդ այլ առաքեալսն աղաչել զՏիրամայրն իւրեանց, զնել զփայտեղէն անաւթն 'ի վերայ աստուածատիպ պատկերին իւրոյ, եւ աւրհնել զնա, եւ խնդրել 'ի տեառնէ բարի առնել երկրի 'ի փոխմանն իւրում. քանզի ախտ բորոտութեան մեծապէս² ցասմամբ եռայր յերկրի, բայց յԵրուսաղէմ առաւել եւս: 82 Երթեալ Պաւղոսի եւ Յոհաննու, հանդերձ միաբան զնդիւն աղաչել զՏիրամայրն, ասէ Պաւղոս ցամենաւրհնեալ սուրբ կոյսն. Անարատ առագաստ Աստուծոյ Բանին, աղաչեմք զքեզ, ընկալ զփայտեղէն պատկերս զայս զնկարեալս 'ի Յոհաննէ 'ի սուրբ ձեռս քո, եւ աւրհնեա զսա, եւ տուր զսա նշան կենաց աշխարհի. եւ աղաչեա զորդին քո եւ զԱստուածն մեր, բառնալ 'ի ձեռն պատկերիս զբորոտութիւն յորդուց 'ի մարդկանէ, որք ապաւինին 'ի քո բարեխաւսութիւնդ:

83 Պատասխանի ետ ամենաւրհնեալ սուրբ կոյսն եւ ասէ ցնոսա. Եւ զիա՞րդ - հարկեցուցանէք զիս զաղախին տեառն առնել յանուն իմ իրս որ չէ արժան:

84 Դուք աշակերտք զուով արարչին մերոյ Քրիստոսի, ձեզ շնորհեաց իշխանութիւն հալածել զգեւս, եւ բժշկել զախտս եւ զհիւանդութիւնս, կոխել զանբերեոյթ գազանն, եւ բառնալ յաշխարհէ զկուսապաշտութիւն: 85 Դուք վասն որո՞յ իրիք եւ

2 Տօնապատեառ՝ չարապէս

կամիք, աղաչեցէք զտէր ձեր եւ զԱստուածն, եւ լինիցի ձեզ. զի թէ գերկինս փակել իշխանութիւն առէք յերկրի, եւ կարգեցայք իշխանք ընդ ոլորտս տիեզերաց, եւ զձեզ բարեկամս իւր կոչեաց տէր, եւ նշանք հրաշալիք վասն ձեր լինին, եւ՛ ուր ոտք ձեր հասանեն ոչ ինչ անհար լինիցի ձեզ: 86 Այլ զիս աղաւթիւք ձերովք յղարկեցէք, եւ միաբանեալ ընդ իս սիրով խաղաղութեամբ՝ հասուցէք յանխռով նաւահանգիստն: 87 Ասէ Պաւղոս. Կոյս սուրբ եւ մայր Աստուծոյ, մեք ծառայք անպիտանք եմք արարչին աշխարհի, որ հաճեցաւն ՚ի քէն մարմնանալ. արժանաւորեալք եւ մեք յորդոյն քուամէ եւ յԱստուծոյն մերոյ առաքելական շնորհիս այսմիկ զոր ունիմք. իսկ դու տիրամայր գոլով մեր, եւ մեք հրովարտակք ընդ աշխարհս. դու հարսն Երրորդութեանն, եւ մեք փողք հնչեցեալք զանճառ ծնունդ որ ՚ի քէն. աղաչեմք զքեզ, արա մեզ նշան զպատկերս զայս, որպէս եւ միածին որդին քո, որ զփայտ մահուն իւրոյ անմահութեան գործարան ետ աշխարհի, եւ գանձ կենաց, հալածիչ դիւաց: 88 Եւ այժմ շնորհեա, զի սա լիցի բժիշկ վիրավորեցելոց, եւ նշխար հաւատացելոց. զի տեսանելով զսա, որք փափագեն տեսանել զքեզ, լցեալ եղիցին խնդրուածք իւրեանց:

89 Յայնժամ առեալ ամենաւրհնեալ սրբուհւոյն զպատկերն նկարեալ ՚ի սուրբ ձեռս իւր, տարածեաց զաստուածընկալ ձեռս իւր յերկինս եւ ասէ. Տէր Աստուած ամենակալ, հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, բարերար եւ բազումողորմ, որ առաքեցեր զմիածին որդիդ քո վասն կենաց աշխարհի, մարմնանալ յանարժան աղախնոյս քո, որ կատարեաց ՚ի մարմնի իւրում զգրեալսն աւրինաց եւ մարգարէից,

եւ դարձեալ համբարձաւ առ քեզ ՚ի հայրենի քո փառսդ, աղաչեմ զքեզ այժմ եւ խնդրեմ ՚ի քէն, բարձ տէր զախտ բորոտութեան ՚ի մարդկանէ ՚ի ձեռն այսր նկարեալ փայտեղէն պատկերիս, զգաւրութիւն երրորդութեանդ տպաւորելով ՚ի սմա ՚ի ձեռն իմոյ աղաչանացս եւ խնդրոյս, որ բարձեր զյանցանս առաջին մարդոյն ՚ի ձեռն միածնի որդւոյ քո տեառնդ մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որ կատարեաց ՚ի մարմնի իւրում զկամս առաքողիդ հաւր, կատարեա եւ այժմ զխնդիր արանց ընտրելոցս այսոցիկ՝ որ բանիւ քո առաքեցան ՚ի փրկութիւն աշխարհի, աւետարանել զԵրրորդութիւնդ սուրբ. զի քեզ լիցին երկրպագուք եւ փառաբանիչք հաւր եւ որդւոյ եւ սուրբ հոգւոյդ յաւիտեանս. ամէն:

90 Եւ ասացեալ առաքելոցն զամէնն, նոյն ժամայն կամար լուսեղէն եկաց ՚ի վերայ սրբուհւոյն, եւ լոյս ամպեղէն խաչանման կաթեաց ՚ի սուրբ պատկերն: 91 Եւ երեալ սրբուհւոյն զսուրբ պատկերն ՚ի վերայ երեսաց իւրոց, եւ թացեալ յորդառատ արտասոււաւքն զոր հեղոյր առաջի տեառն: 92 Եւ առեալ առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի զպատկերն ՚ի ձեռաց սրբուհւոյն, եւ ամենեքեան երկրպագեցին:

93 Իսկ յորժամ աւանդեաց զհոգին իւր սուրբ անարատ կոյսն ՚ի ձեռս տեառն, ամբոխ Հրէիցն յուզէր. եւ հասեալք ՚ի վերայ առաքելոցն, կամելով յափշտակել զմարմին կուսին, եւ հարան ամենեքեան կուրութեամբ: 94 Իսկ այր ոմն անուն Սոփոնիա բուռն եհար, քանզի առաքելոցն բարձեալ տանէին ՚ի հանգստեան սուրբ տեղին ՚ի կոչեցեալն Գեթսեմանի, եւ մնաց ձեռք Սոփոնիայ կախեալ յարմկացն զմահճաց. լայր եւ աղաչէր այրն, եղուկ զինքն կոչելով մինչեւ ՚ի գերեզմանն:

95 Ասէ Պետրոս. Ո՛վ մոլորեալ Հրեայք, մինչեւ ցե՞րբ կայք մոլորեալ եւ յամա-

1 Տօնապատման՝ եւ յոտից ձերոց տուեալ լինի շնորհիւ ամենեցուն, ապա ամենայն ինչ ձեզ հնարաւոր է. այլ զիս

ուեալ, զիա՞րդ ոչ զղջանայք յանզեղջ սիրտս ձեր, այլ կայք յետս հետեալք որպէս հայրն ձեր սատանայ: 96 Եւ լալիւն մեծ էր Հրէիցն: 97 Ասէ Պաւղոս. Դարձարուք առ տէր, եւ խոստովանեցէք Աստուածաձին զսուրբ կոյսն եւ զթասցի 'ի ձեզ: 98 Աղաղակեաց ամենայն ամբոխն եւ ասեն. Խոստովանիմք զՔրիստոս որդի Աստուծոյ հաւր, որ էառ մարմին անճառապէս 'ի սուրբ կուսէդ, զոր մեքն խաչեցաք անգիտութեամբ, հակառակ Աստուծոյ կարծելով. միայն զթասցի 'ի մեզ: 99 Եւ առեալ զձեռանէ նորա Պետրոսի, եբեր մերձեցոյց 'ի հատուածս ձեռացն, եւ միացեալ յարեցան իբրեւ զառաջինն: 100 Եւ լուսաւորեցան խաւարեալքն, եւ մկրտեցան Հրեայք եւ հեթանոսք յոյժ յոյժ բազմութեամբ. եւ բորոտք որ էին 'ի քաղաքին, զային առ առաքեալսն եւ աւծանէին իւղով, եւ տեառնագրէին սուրբ պատկերաւն, եւ առ ժամայն բժշկէին յախտիցն. եւ ամենայն ախտաժետք զային 'ի համբաւն 'ի ննջման տիրուհւոյն, եւ լինէին նոյնժամայն ողջացեալք, մինչ զի եւ համբաւն ընդ ամենայն հրէաստան ընթանայր ծագման լուսոյն:

101 Արդ Բարթողոմէոս առաքեալ մի յերկոտասանիցն ոչ գոյր ընդ նոսա 'ի զուգահաւաքման կուսին. վասն զի կամք էին տեառն այսմ այսպէս լինել, զի ընդ Թովմայի 'ի հնդիկս էր երթեալ: 102 Եւ եկեալ նա յետոյ առ առաքեալսն, բռնագրասեաց զնոսա, ցուցանել նմա զգանձն աստուածային զմարմին ամենաւրհնեալ կուսին: 103 Եւ յաւժարեալ նոցա լնու զփափագ տենչանաց եղբաւրն իւրեանց, բացեալ այնուհետեւ զսուրբ գերեզմանն, գտին ունայն յաստուածակիր մարմնոյն: 104 Եւ հիացեալք իմացան թէ 'ի դադարել աւրհնութեան հրեշտակացն եւ սաղմոսերգութեանցն զկնի երից աւուրց 'ի նոցանէ փոխադրեցաւ մարմինն սուրբ 'ի ձեռն նոցին հրեղինաց դասուցն: 105 Ապա յոյժ

սգացեալ Բարթողոմէոս, զի ոչ ժամանեաց նա տեսութեան սուրբ կուսին, եւ ոչ լուսազաւրհնութիւնսն վերջին որպէս զայլ առաքեալսն եւ զաշակերտսն տեառն, եւ ոչ 'ի գերեզմանին եգիտ, տրտմէր առաւել քան զառաւել:

106 Զայն տեսեալ երանելի առաքեալքն, մխիթարել զեղբայրն իւրեանց կամեցեալ, ետուն նմա զպատկեր Տիրամաւրն որ էր 'ի փայտն նկարեալ, բնաւորեալ զաւրութեամբն: 107 Զոր առեալ Բարթողոմէոսի զուարճացաւ, եւ իբրեւ ընդ կենդանույ համարեալ նայէր: 108 Ապա մեծաւ փութով ել 'ի Հայս հրամանաւ սուրբ հոգւոյն, զի զԹադէոս առաքեալ սպանեալ էր Սանատրուկ արքայ յԱրտագ գաւառի Հայոց: 109 Իսկ նա եկեալ 'ի Հայս, զնաց յերկիրն մոգուց եւ Պարսից. եւ հասեալ 'ի քաղաք թագաւորութեան նոցա, որոյ այժմ ասի Խորասան բարբառովն իւրեանց. եւ արար ընդ մէջ կրակարանին սիւն լուսոյ հրեղէն, եւ կալեալ զսուրբ պատկերն ընդդէմ արեգականն, եւ արգել զճառագայթս նորա, եւ խաւարեցոյց զվեց ժամն. եւ ոչ հաւատացին, բայց միայն ութ 'ի մոգուցն յայնցանէ, որք երկրպագեցին փրկչին, եւ եկեալ մկրտեցան յառաքելոյն, զորս հանեալ ընդ իւր 'ի միջոյ ամբարշտացն, եւ բերեալ 'ի Հայս: 110 Եւ եկեալ յաշխարհն Անձաւացեաց 'ի համբաւ քարի միոջ, քանզի դեւք բազումք բնակեալ էին անդ, եւ պատրէին զմարդիկ տեղւոյն, տուեալ յայնմ տեղւոյն դեղս ախտականս առ 'ի կատարել զպղծութիւնսն ախտից, կռանաձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք արհաւիրս գործէին. յորս մարդիկ աշխարհին սովորեալք, անդ առքրային դեգերէին, առեալ 'ի չաստուածոցն ծրարս թարախածորս 'ի պատիր ախտիցն, որպէս զծրարսն Կիպրիանոսի առ 'ի պատիր Յուստինեայ կուսին. եւ անուանէին զանուն տեղւոյն այնորիկ Դարբնաց քար: 111 Հասեալ սուրբ առաքեալն Աս-

տուձոյ անդ, հալածեաց զդարբինսն զգործաւնեայս չարին, եւ զկուռսն փշրեաց որ յանուն Անահտայ էր: 112 Յոր ժողովեալ բազմութիւն դիւացն 'ի վերայ լերինն բարձու 'ի հիւսիսոյ կողմանէ, քարածիգս առնելով անթիւ բազմութեամբ յոյժ, եւ ձայնս եւ ճիչս եւ գոչիւն սաստիկ արձակէին: 113 Իսկ սուրբ առաքեալն տեառնազրեաց խաչ մի փոքրիկ, եւ կանգնեաց 'ի վերայ քարի լերինն, եւ անդէն դեւքն չիք լինէին¹: 114 Ձոր յետոյ սուրբ հայրապետն Գրիգորիոս զխաչն առաքելական ընդ իւր շրջեցուցանէր, մինչեւ 'ի թողուլ նորա գաշխարհս: 115 Իսկ յետ ժամանակի եղաւ 'ի վերայ գերեզմանին Տրդատայ արքային Հայոց: 116 Եւ է տեղին այն յորում դեւքն էին, լեռնամէջ վիմաց, 'ի վերայ գետոյն մեծի՝ որ կոչի Տիգրիս, հուպ 'ի բերդն ամուր որ կոչի Կանգուար, եւ միւսոյն Ագուաւաց քար, ուստի ջուրք բազումք հոսին 'ի լերանց ամրոցին ըստ գարնանային մասանցն, գան անցանեն ընդ հիմունս տաճարի տիրուհւոյն, եւ խառնեալ աւժանդակեն զգետն մեծ Տիգրիս: 117 Անդ հիմնարկեալ սուրբ առաքեալն զհիմն տաճարի սրբուհւոյն իւրովք իսկ ձեռաւքն, շինեալ եկեղեցի փոքրագոյն, եւ անուանեաց զնա Սուրբ Աստուածածին, եւ եղ 'ի նմա զպատկեր տիրուհւոյն, եւ տայ զնա սուրբ կանանց. եւ զլուխ կացուցանէ անդ զքոյր Յուսկանն, եւ զքոյրն Որմզդատայ, եւ զՄաքովորի, եւ զայլ կանայսն ընդ ձեռամբ նոցա կացուցանէ. շինէ խրճիթս վանիցն, եւ տեսուչս հրամայէ լինել հաւատացելոցն, եւ քահանայ կացուցանէ անդ յիւրոց աշակերտացն, եւ անուանէ զտեղին Հոգեաց վանս յանուն Տիրամաւրն եւ

սուրբ կուսին, զի բազում սքանչելիս կատարէր Աստուած 'ի ձեռն սուրբ կուսին յայնմ տեղւոջ:

118 Եւ ինքն սուրբ առաքեալն ելեալ աւետարանել 'ի Հայս, եւ կատարեցաւ յՈւրբանոս քաղաքի, 'ի Բարմա անուանեալ տեղւոջն յանուն առաքելոյն: 119 Իսկ քոյր Յուսկանն Մարիամ կոչեցեալ՝ անցանէր յայնկոյս գետին մեծի, շինէր իւր խրճիթ առ ստորտով քարին փոքրագունի, եւ միայնացեալ կատարեցաւ: 120 Եւ 'ի նմին տեղւոջ կացուցանէ տեսուչս տեղւոյն, զքոյրն զԱննա եւ զՄարթա, եւ զքոյր Որմզդատայ եւ Մաքովորի: 121 Իսկ Աննա շինէր իւր խրճիթ յայնկոյս ձորոյն որ Դարբնաքարն կոչեն. միայնացեալ անդ կատարեցաւ, տուեալ զտեսուցութիւն տեղւոյն Մարթայի: 122 Եւ բազում նշանս եւ սքանչելիս կատարէր Աստուած 'ի ձեռն սուրբ կանանցն: 123 Ձոր եկեալ յետոյ սրբոյն Գրիգորի, վանս հաստատեաց զտեղին, շինեալ եկեղեցիս. բայց զտաճար սրբուհւոյն ոչ քակեաց, զի ձեռագործ առաքելական էր, թողեալ զնա 'ի փառս եւ 'ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն. եւ կայ մինչեւ ցայսաւր ժամանակի, յորում բժշկութիւնք բազումք լինին, եւ ուրախութիւնք ոչ սակաւք: 124 Եւ լուսաւորէ զախտացեալս ամենայն, որ գան առ նա հաւատով եւ յուսով, ունելով բարեխաւս զծնաւդ միածնի Բանին առ ծնեալն 'ի նմանէ տէրն իւր եւ Աստուած բոլորից, ընուցուն պարգեւաւք եւ ողորմութեամբ հոգւոյն սրբոյ, փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1 Տօնապատեան՝ չփոտեցան

ՄՈՎԱԵՍԻ ԲԵՐԹՈՂԻ ՅՎՐԱԳՍ ԿԱՐԳԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՔ

Շարադրութիւն շարամանու Յոգեւոր երգարանիս ըստ երաժշտական չափոց՝ շտամբաձայնութեան, ստեղնաչափութեան, ութամասնեայ պատկանաւոր ձայնից պատճառք

1 ¹²Եւ արդ, քանզի նախկին Հնչեաց բարբառն աստուածային՝ թէ Ո՞ւր եւ Ա-դամ¹. եւ երկրորդ՝ թէ Ո՞ւր է Աբել եղբայր Բն². ³Եւ երրորդ՝ թէ Ո՞ւր է Սառա կիմ Բն³. արդ այս ամենայն ձայնքս Հարագատք են առաջի ձայնին, որոց՝ սրբոց Սրովբէիցն Հնչուան յերկրիս՝ երկրորդ յաւրինեցան փառաբանութեան երգքն: 2 Քանզի յառաջին փառաւորչացն, յառաջին Հրաշափառական ձայնիւ Հնչեաց բարբառն յասելն՝ եթէ Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւնն⁴: 3 Իսկ կողմն նորին՝ զողորմական մաղթանս ունի, եւ զերկրածագական աղաւթան՝ երգ Մովսէսեան յերկրորդում խորանին վկայութեան, ըստ որում Համաձայնի աւրհներգութիւն Մարիամայ՝ քեռն Ահարովնի՝ յերգելն ի Կարմիր ծովուն, թէ Արիմեսցում զՏէր զի փառաւ է փառաւորեալ⁵:

4 Իսկ երկրորդ ձայնն՝ զխմբական աղաչողութիւն ունի, զառ ի վտանգից ասրեցելոցն, եւ զբոցախմբեցելոց Հրախաղաց զերից մանկանցն զաւրհներգութեան երգսն ի մէջ Հնոցին, յաղագս երկուց փրկութեան, մարմնոյ ասեմ եւ Հոգւոյ. որ-

պէս ասի յերկրորդ ձայնիւ երգեալ՝ յերկրորդ ժամու աւուրն: 5 Իսկ կողմն նորին՝ ողբերգական ձայն. սովաւ յաւրինեցան Սաղմոսք ի սուրբ ի պաշս քառասնորդացն եւ Քրիստոսի Հարչարանաց աւուրն, ըստ երկրորդի զղջման ապաշխարողացն, զառաջին զբարեգարգութիւնն ոչ ունելով:

6 Իսկ երրորդ ձայն՝ զիգական աղաչողութիւնսն ունի. սովաւ յաւրինեցան քարողութիւնք տուրնջեան եւ զիշերոյ, ըստ առ ի յերրորդական տուողութեանն, ըստ երից ամանակաց պիտոյից, ըստ մարմնոյ եւ շնչոյ եւ Հոգւոյ: 7 Իսկ կողմն նորին՝ բերկրալից ձայն, որ եւ վառ իսկ կոչի, այսինքն է՝ խիստ ձայն: 8 Սովաւ յաւրինեցան Սաղմոսք աւուրն Արմաւենեաց, ի մտանելն Յիսուսի յերուսաղէմ. որոց եւ Համաձայնի աւրհներգութիւն տղայոցն, յասելն՝ եթէ Արիմեսալ եկեալ անուամբ Տեառնն⁶:

9 Իսկ չորրորդ ձայն՝ զընդհանուր զքարողութիւնն յայտնէ ըստ չորս անկիւնս աշխարհի, ըստ չորից ժողովոցս եւ ըստ չորից բաղկացութեան մարդոյս: 10 Իսկ կողմն նորին՝ ուրախալից ձայն. սովաւ շարագրեցան⁷ ստողոգիականք Սաղմոսք ի սուրբ Պասեքին, ի Յարութեանն Քրիստոսի, ի մի պարունակութիւն երկնայնոցն եւ երկրաւորացս, ըստ առաջին բաղկացութեանն:

11 Արդ, Աստուած անեղ՝ անուն արարչական ասի, եւ Տէր դատողական, որ զիմանալի աշխարհն բաղկացոյց, տասն

1 Բ բնագրի խորագիրն է սա (լոկ մէկ սրբագրութեամբ. Քերթողի փխ Քերթողահաւրն), որ եւ աւելի անաղարտ է, ինչպէս նշեցինք վերջ: 2 Ա բնագրի առանձնայատկութիւնն է սա՝ ենթախորագրի յստակ տարանջատումը յաջորդ շարադրանից: 3 Ե՛ն. Գ. 9 4 Ե՛ն. Գ. 9 5 Բ չի՞ եւ երրորդ ... կիմ Բն 6 Ե՛ն. ԺԼ. 9 7 Գ՛ն. Բ. 14 8 Ե՛ւ. Ժ. 21

7 Մ՝ԳԹ. ԻԼ. 9. Մ՝ԳԹ. ԺԼ. 9 8 Բ շարադասեցան

Թուովք աւրհնաբանիչս իւր կարգապետեաց¹ իմանալի խորանին. յորոց մինն ստոր անկեալ, յաւրհնելոյն զԱստուած անարժան գտաւ: 12 Իսկ ինն դասուցն անդադար ի Հոգւոյն Սրբոյ կան ի փառաբանութիւն իւրեանց Արարչին: 13 Ձոր եւ ի նմին Հոգւոյ ուսեալ մարգարէիցն՝ ուսուցին եւ ծանուցին որդւոց մարդկան գերաժտական երգս աւրհնութեան: 14 Իսկ զգալի աշխարհս՝ տասն աստիճանաւք պատուեալ, զոր ի գանազան ժամանակս ուսոյց Հոգին Սուրբ՝ տասնաղեալ սաղմոսարանաւ սաղմոսել Տեառն:

15 Իսկ յապառնի ժամանակին՝ առաջին ձայնիւ հնչեցեալ լինի փողն Գաբրիէլեան, եւ գերեզմանք բանան, եւ մեռեալք յառնեն:

16 Երկրորդ ձայնիւ լսի բարբառ՝ եթէ Փեսայ գայ, արի՛ք ելե՛ք² ընդառաջ նորա³:

17 Երրորդ ձայնիւ մարգարէքն վառին որպէս սպառազէնս առաջի նորա. եւ կողմն արդարոցն վերաբերի՝ հանապազ ընդ Տեառն լինելով:

18 Չորրորդ ձայնիւ կարգի Յատեանն ահագին, եւ նստի դատաւորն յաթոռն՝ դատել զաշխարհս արդարութեամբ:

19 Իսկ կողմն առաջին՝ լալումն եւ կոծումն մեղաւորաց ի դժոխս:

20 Իսկ երկրորդի կողմն՝ գետ հրոյ յորդեալ ելանէ առաջի նորա:

21 Իսկ երրորդի կողմն՝ նովաւ լսին բարբառք դիմադարձացն եւ անհաւատիցն՝ եթէ երթայի, անիծեալի, ի հուրն յաւիտեանից, որ պատրաստեալն է սատանայի եւ հրեշտակաց նորա⁴:

22 Իսկ չորրորդի կողմն՝ ուրախալից ձայն. նովաւ կոչին արդարքն՝ եթէ եկայի աւրինեալի Հաւր իմոյ, ժառանգեցե՛ք գարբայութիւնն, պատրաստեալ ձեզ ի սկզբանէ աշխարհի⁵:

23 Իսկ երկրորդի ստեղն՝ զորս գտեալ հրոյն, ճարակ եւ կերակուր իւր առնէ գամենեսեան:

24 Իսկ վերջին ստեղն՝ պատրաստէ սիրելեաց իւրոց բաժակ փրկութեան եւ անմահութեան յարքայութեանն երկնից:

25 Այս է պատճառք ձայնից երաժշտականաց:

26 Եւ եթէ ընդէ՞ր ութ կանոնիւք կարգեալ են Սաղմոսք Դաւթի, որով հանապազ կատարեմք զպաշտամունս եկեղեցւոյ, ինձ այսպէս թուի՝ թէ եւթն կանոնն՝ ըստ եւթն դարուն, իսկ ութն՝ ըստ ութ դարուն կարգեալ է. զոր եւ իմաստունն Սողոմոնն ի զգաւնութեան խրատուն տարացոյց տայ յասելն՝ եթէ Տո՛ւր բաժինս եւթանց, այլ եւ ութից⁶. եւ դարձեալ ի Սաղմոսն Դաւթի յասելն՝ եթէ Սաղմոս վասն ութերորդի⁷:

27 Արդ, որպէս վերագոյն ասացաք, եթէ եւթն կանոն՝ յաղագս եւթն դարուն, իսկ ութերորդն՝ ըստ ութ դարուն խորհուրդն բերէ յինքեան, զոր եւ ի վերայ դարձի գերութեանն կարգեալ է ի Բաբելոնէն յերուսաղէմ. իսկ ըստ իմանալի տեսութեանն՝ յերկրէ յերկինս եւ յերկիր աւետեաց նախաշաւիղ ի վերելք: 28 Վասն զի աւրինակ էր նոցայն մերոցս. Երուսաղէմն՝ դրախտին, Նաբուգաւզաւնոսոր՝ սատանայի, բաբելացիքն՝ դիւաց, երեք մանկունքն՝ մարդկային բնութեանս, հնոցն հրոյն՝ հանդերձեալ հրոյն:

1 Ա կարապետեաց / Բ կարապետել
 2 Բ չի՛ք ելե՛ք
 3 Մարգ. ԻԵ 7
 4 Բ ատեան դատաստանիմ
 5 Մարգ. ԻԵ 41

6 Մարգ. ԻԵ 34
 7 Ժող. ԺԸ 2
 8 Սաղմ. ԺԸ 1

ՄՈՎԱՍԵՍԻ ՔԵՐԹՈՂԱՅԱՐ՝ Ի ՅԵՐԳՍ ԵՐԻՑ ՄԱՆԿԱԼՅՆ

1 Երեք մանկունքն արինակ էին մարդկային բնութեանս, եւ հնոց հրոյն՝ հանդերձեալ հրոյն: 2 Իսկ զերգս երից մանկանցն հանապազ յառաւաւտուն երգել յեկեղեցւոջ. զի որպէս նոքա գերեալք ՚ի բաբելոնական բռնաւորէն ՚ի հնոցն անկանէին, նոյնպէս եւ մեք ՚ի հնոցի կենցաղոյս գերեալք յաներեւոյթ բռնաւորէն, եւ ըմբռնեալք պէս պէս ախտիւք, եւ լուցկիք եղեալ յաւիտենական հրոյն, աստանաւր գողցես իմն հրեշտակական ազգամամբ ՚ի թառամեցուցանաւ քնոյն զարթուցեալք, աւուր աւուր ընդ առաւաւտն զերգս երից մանկանցն ՚ի բերան առեալ ասեմք, Աւրինեա՛լ ես Տէր Աստուած հարցն մերոց. արինեալ փառաւորեալ անունն քո յաւիտեան՝:

3 Եւ որպէս նոքա ՚ի փրկութիւն անձանց իւրեանց առ իւրեանց փրկիչն մատուցեալ, եւ որպէս առ երկինս ՚ի հնոցէն ՚ի վեր գոչէին, յորդորելով զամենայն արարածս ՚ի փառաբանութիւնն Աստուծոյ: 4 Ըստ նմին արինակի եւ մեք իբրեւ անդամք ՚ի մարմնոյ նորա եւ յոսկերաց նորա, ՚ի վերայ մեր եւ ՚ի մեզ բերելով զգլուխն, վերագոչեալ աղաղակեմք առ

ընդհանուր տեսակս արարածոց թէ, Աւրինեցէ՛ք ամենայն գործք Տեառն զՏէրք: 5 Իբր զի ազատեալք ՚ի մեղացն՝ եւ ազատութեանն մերոյ հաղորդ լեալք ամենայն բնութիւնք արարածոց, հարկաւորին ամենայն իրաւք եւ նոքա ընդ մեզ արհնել եւ փառաւորել զԱստուած. զայն՝ որ ազատէն զամենեսեան:

6 Բայց պա՛րտ է նախ ապաշխարութեամբ ՚ի մեղացն արդարանալ, եւ ապա հրաման տալ արարածոց զալ ՚ի փառաբանութիւնն Աստուծոյ:

7 Նախ ասել թէ, Մեղաք՝ անաւրինեցաք, յանցեաք: 8 Եւ ապա համարձակիլ եւ ասել թէ, Աւրինեցէ՛ք ամենայն գործք Տեառն զՏէրք: 9 Նախկին թէ, Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քոյ. ըստ բազում գթութեան քոյ, քանի որ զանարեւոյթիւնս իմ: 10 Առաւել լուա՛ զիս յանարեւոյթեմէ իմմէ. եւ ՚ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս: 11 Եւ ապա՛ համարձակիլ եւ ասել, Աւրինեցէ՛ք զՏէր յերկնից, արինեցէ՛ք զնա ՚ի բարձանց: 12 Աւրինեցէ՛ք զնա ամենայն հրեշտակք նորա. արինեցէ՛ք զնա ամենայն զարուրթիւնք նորա: 13

ՄԵԲԷՈՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԵՔՆՈՒՆԸ ԵՒ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աշխատութեան վերնագիրը չի պահպանուել. որոշուում է պայմանականօրէն՝ ելնելով երկի բովանդակութիւնից: Հեղինակի անունը առաջին անգամ տալիս է Ստեփանոս Տարօնացին (Ասողիկը), այսինքն՝ ԺԱ դ. սկզբին, այնուհետեւ Սեբէոսին յիշում են եւս մի շարք պատմիչներ: Հեղինակի նոյնացումը Դուրինի եկեղեցական ժողովի (645 թ.) մասնակից, Բագրատունեաց եպիսկոպոս Սեբէոսի հետ հաւանական է, բայց մնում է լուկ ենթադրութիւն: Սեբէոսը հանդէս է գալիս որպէս նկարագրուած դէպքերի ժամանակակից. դրանցից վերջինը տեղի է ունեցել 661 թ., ուստի պատմութիւնը գրուել է այդ թուականից յետոյ:

Ներկայ վիճակով այդ աշխատութիւնը մաս է կազմում պատմական մի ժողովածոյի, որը պարունակում է՝ ա. Հայկի ու Բէլի առասպելը, Շամիրամի ու Արա Գեղեցիկի առասպելը եւ աւարտուում է Պարսից Արշակունիների պետութեան հիմնադրումով (գլ. Ա, բաժանումը ըստ 1979 թ. հրատարակութեան). բ. Պարթեւ Արշակունիների համառօտ ժամանակագրութիւնը մինչեւ վերջին թագաւոր Արտաւանը եւ հայ Արշակունիների հերթականութիւնը մինչեւ Արշակի որդի Պապը, իւրաքանչիւրի իշխանութեան տեւողութեան նշումով (գլ. Բ). գ. Պարթեւ Արշակունիների հերթականութիւնն ու տեւողութիւնը (գլ. Գ), Մամիկոնեան տոհմի ծագումը (գլ. Դ), Պարսից, Յունաց եւ Հայոց թագաւորների գոլգոհահեռ հերթականութիւնը եւ տեւողութիւնը՝ մինչեւ Սասանեան վերջին թագաւոր Յազկերտ Գ (գլ. Ե-Զ), Հայաստանում եւ Պարսկաստանում տեղի ունեցած պատմական անցքերը հայ Արշակունիների վերացումից մինչեւ Խոսրով Բ-ի գահ բարձրանալը, Հայաստան ժամանած պարսից մարզպանների ցանկը (գլ. Է-Թ): Այս բաժինը պատկանում է, ըստ երեւոյթին, բուն պատմութեանը՝ ծառայելով որպէս իւրատեսակ ներածութիւն: Բուն պատմութիւնը (գլ. Ժ-ԾԲ) սկսում է Վահրամ Միհրեանդակի ապստամբութիւնից (590 թ.) եւ աւարտուում 661 թ. անցքերով: Հեղինակը ներկայացնում է Բիւզանդիայի եւ Սասանեանների, այնուհետեւ արաբների հակամարտութիւնը եւ այդ հետնախորքի վրայ շարադրում Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւնները:

Սեբէոսը յենուում է յիշողութիւնների, բանաւոր եղանակով ձեռք բերած տեղեկութիւնների վրայ, շարագրանքը հակիրճ է եւ առարկայական: Այս երկի միջոցով հասած տեղեկութիւնները շատ դէպքերում եզակի են: Դա վերաբերում է մասնաւորապէս Վարդան Մամիկոնեանի պատմութեանը 571-572 թթ.: Միաժամանակ Սեբէոսի երկը վաղուց ի վեր ճանաչուել է որպէս ողջ Մերձաւոր Արեւելքի եւ Բիւզանդիայի պատմութեան կարեւոր սկզբնաղբիւր: Ստորեւ վերահրատարակում է Գ. Վ. Աբգարեանի կազմած Սեբէոսի Պատմութեան գիտական բնագիրը (Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1979):

Կարէն Իւզրաշեան

ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1979:

2. **R. W. Thomson**, *A bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*, Brepolis-Turnhout, 1995, pp. 196-198

ա. ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ԶԵՆԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ա - ՄՄ ձեռ. թիւ 2639, ժամանակ՝ 1672 թ.
 Բ - ՄՄ ձեռ. թիւ 2965, ժամանակ՝ 1850 թ.
 Գ - ՄՄ ձեռ. թիւ 6454, ժամանակ՝ 1850-1852 թթ.
 Դ - ՄՄ ձեռ. թիւ 2867, ժամանակ՝ 1850-1852 թթ.
 Ե - ՄՄ ձեռ. թիւ 3122, ժամանակ՝ 1852 թ.
 Զ - ՄՄ ձեռ. թիւ 2679, ժամանակ՝ 981 թ. (հատուածական ընդօրինակութիւն)
 Երից. - ՄՄ Երիցեանի արխիւում (թերթ 153, վաւերագիր՝ 124) պահուող հատուածական ընդօրինակութիւնը, ժամանակ՝ մինչեւ 1852 թ.
 Զամ. - Զամինեանի սրբագրութիւնները, որոնք պահուում են ՄՄ Անհատական արխիւների ֆոնդում (թերթ 232բ, վաւերագիր՝ 133):
 Հ - Միհրդատեանի օգտագործած եւ այժմ կորած հին ձեռագրերը, ժամանակ՝ ժՁ դ.
 Պատան. - ՄՄ պատանիկ թիւ 1343, ժամանակ՝ ժՁ դ.
 Վ - Վիեննայի Միսիթարեան մատենադարանի ձեռ. թիւ 86, ժամանակ՝ 1851 թ.

բ. ՏՊԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Բոլ. - բոլոր տպագիրները եւ ձեռագրերը միասին
 Մալխ. - *Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն*, չորրորդ տպագրութիւն՝ բաղդատու-թեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երեւան, 1939: Սոյն հրատարակութիւնը նշուած է նաեւ ՍեՊ համառօտագրութեամբ:
 Միհրդ. - *Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն*, հրատ. Թ. Միհրդատեանի, Կոստանդնուպոլիս, 1851
 Պատկ. - *Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն (եւ սկիզբն նորագիտ Պատմութեան Միսիթարայ Անեցոյ)*, ի լոյս ած Ք[էրովբէ] Պ[ատկանեան], Ա. Պետերբուրգ, 1879
 ՏՏ - *Սեբէոսի Պատմութիւնը* պարունակող բոլոր տպագիր հրատարակութիւնները
 Մալխ. - *История епископа Себеоса*, перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц, Ереван, 1939.
 Մալխ. - *История императора Иракла*, сочинение епископа Себеоса, писателя VII века. Перевод с армянского [Перевел К. Патканьян]. Санктпетербург, 1862.
 Հիւսչ. - *Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebeos.* [Übersetzt von] Dr. Heinrich Hübschmann, [Leipzig, 1875].
 Մալ. - *Histoire d'Heraclius par l'évêque Sebêos*, traduite de l'arménien et annotée par Frédéric Macler, Paris, 1904.

ՊԱՏՄՈՒԹԻՆ ՍԵԲԵՈՍԻ

¹ԳԼՈՒԽ Ա.

1 Խոստարանութիւն յառաջիկայ պատմութեանց: 2 Մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ: 3 Ագաթանգեղեան արձանագրութիւն: 4 Հայկ եւ Բէլ: 5 Պայազատ Լայկայ: 6 Մամիրամ եւ Արայ Գեղեցիկ: 7 Հայք ընդ իշխանութեամբ Ասորեստանեայց, Մարաց եւ Մակեդոնացւոց մինչեւ ցամբարձումն Պարթեաց:

8 Եւ եղեւ ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանստորագրեալ² ժամանակ եւ զնախնի քաջացն ձեռնարկելով զըրոշմել վիպասանութիւնս³, զիմն յիշատակել զառասպելս⁴, եւ ի նոյն շարագրելով ասացից զառ ի յապայսն եղելոյ. եւ ցուցից Համառատիւք զարդեաց ժամանակացս զաղէտիցս վերաբերութիւնս⁵ զամս եւ զաւուրս Հին⁶ թագաւորացն յիշատակելով:

9 Անդ⁷ Հայելով ի մատեանս⁸ Մարաբայ⁹ փիլիսոփայի Մծուրնացւոյ¹⁰, զոր եզիտ զըրոշմեալ ի վերայ արձանի ի Մծբին¹¹ քաղաքի, յապարանսն Սանատրուկ¹² ար-

քայի, Հանդէպ զբան¹³ արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն:

10 Քանզի զսիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից, եւ բացեալ զաւերածն վասն սեանցն՝ աստ դիպան¹⁴ արձանագրին, զըրոշմեալ ի վերայ վիմի զամս եւ զաւուրս Հին¹⁵ թագաւորացն Հայոց եւ Պարթեւաց յունարէն դպրութեամբ. զոր իմ գտեալ ի Միջագետս¹⁶ ի նորին աշակերտացն կամեցայ¹⁷ ձեզ զըրոցակարգել. քանզի այս¹⁸ ունէր վերնագիրն այսպէս. –

11 «Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիւանէ արքունի»: 12 Զոր փոքր մի եւ ապա յիւրում տեղւոջն տեսցես զպատճէնն:

13 Բայց ես նախ առաջին զվէպս յազեղն արքայ եւ յարին¹⁹ այրն սկսայց ասել, նախ զնախնեացն պատմութիւնս, ուստի եղեւ սկիզբն ամենայն երկրի շինուածոյ²⁰ լրմանց. եւ անտի ի սոյնս²¹ պատուաստելոյ²² յաւրել զզըրոցակարգութեան վէպս Հսկայագանցն եւ զառասպելս ունայնս անհանձար զաւրացն. զոր ի մեծ երկանցն աշտարակին յղութիւն ծնանելով

1 Այս եւ յաջորդ բոլոր խորագրերը հեղինակային չեն. բաղել ենք Ստ. Մալխասեանցի հրատարակութիւնից (հատուկէնտ բացառութիւնները կնշուեն իրենց տեղերում):

2 ՀԱԲ գանստարագրել / Գ գայնստարագրել / Դե գանստորագրել

3 ԱԲԳԴԵ վիպասանութիւն

4 Ե յիշատակելով գառասպելութիւն

5 Բոյ. վերաբերութեան

6 Բոյ. հինգ փ/ս. հին

7 Մալ/ս. անդր

8 Մալ/ս. մատեանն

9 Միհրդ. Մարաբբայ

10 ԱԳ Մըծուրնացւոյ

11 ԱԲ Մըծբին

12 Ե Սանատրուկ

13 Ե չիք դրան

14 ԶԶ, Միհրդ., Պատկ. ըստ դիպան փխ աստ դիպան / Մալ/ս. ըստդիպան

15 Բոյ. հինգ փխ հին

16 ԱԲԳԴԵ չիք ի Միջագետս (որը գտնուել է Հ ձեռագրում)

17 Ա կամեցա

18 Բոյ. այսու

19 Ա յարաբին, ապա ԱԲ ջնջել բողոյ եւ յար ին / Մալ/ս. յարի Ե յարաբին

20 Միհրդ., Պատկ. շինուածոց,

21 Միհրդ., Պատկ. ի սոյն

22 Ե պատուաստելոց

ցրէր ընդ մեծ անապատ անթիւ, որ ի կայս անլուրս ձայնից անդադար ի վերայ առն ընկերի առնոյր սուրն Տիտան¹. յորում առաջին թագաւորեաց ի վերայ երկրի:

14 Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր զինքն քան զամենայն ազգս մարդկան, զիւրն ոչ ճանաչելով զբնութիւնն, այլ զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր: 15 Ապա յայնմ ժամանակի² Հայկն Աբեթածին ոչ կամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բէլայ արքայի. արհամարհեաց զնա աստուած կոչել: 16 Անդ Բէլ ի վերայ Հայկին յարձակեալ մարտիւ, իսկ Հայկն արի՝ աղեղամբ հալածեաց զնա:

17 Արդ՝ այս է Հայկն, որ ծնաւ զԱրամենակ³ զորդի իւր ի Բաբելոն⁴: 18 Եւ ծնաւ Արամենակ ուստերս եւ դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամայիս: 19 Եւ ծնաւ Արամայիս ուստերս եւ դստերս բազումս, յորոց անդրանիկն Ամասիա: 20 Եւ ծնաւ Ամասիա⁵ ուստերս եւ դստերս բազումս, յորոց անդրանիկն Գեղամ: 21 Եւ ծնաւ Գեղամ ուստերս եւ դստերս բազումս, յորոց անդրանիկն Հարմայ⁶: 22 Եւ ծնաւ Հարմայ ուստերս եւ դստերս բազումս, յորոց անդրանիկն Արամ: 23 Եւ ծնաւ Արամ ուստերս եւ դստերս բազումս, յորոց անդրանիկն Արայն Գեղեցիկն:

24 Արդ՝ այս են անուանք ազգածինն արանց, անդրանկելոցն⁷ ի Բաբելոն, զնացելոցն⁸ ընդ կողմանս հիւսիսոյ յերկիրն

Արարադայ: 25 Զի չուեաց խաղաց⁹ զնաց Հայկն ի Բաբելոնէ կնաւն եւ որդւովքն եւ ամենայն աղխիւն հանդերձ, եւ չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ¹⁰ հարբն եւ եղբարբքն հանդերձ:

26 Եւ ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան Կաղմեայ¹¹ թոռին իւրում որդւոյն Արամենակայ: 27 Եւ ինքն չուեաց զնաց անտի եւս ի հիւսիսակողմն եւ չոգաւ¹² բնակեցաւ ի բարձրաւանդ դաշտավայրի միոջ. եւ կոչեցաւ անուն դաշտին այնորիկ Հարք, յանուն Հարցն:

28 Իսկ երկիրն ըստ նմին պատշաճի կոչեցաւ անուն Հայք, որ են հայազամբք հանդերձ:

29 Եւ արդ՝ այս Հայկ հզաւր զաւրուութեամբ եւ բարի անձամբ եւ կորովի աղեղամբ եւ մարտիկ յոյժ:

30 Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Տիտանեան, ճոխն չաստուածացեալ, որոյ հզաւր զաւրութեամբ եւ սաստիկ յոյժ զեղ պարանոցի իւրոյ: 31 Եւ էր իշխան ամենայն ազգացն¹³, որ սփռեցան ի վերայ երեսաց ամենայն երկրի: 32 Որոյ արարեալ առաջաւք կախարդութեամբ հնարս, եւ հրամանս թագաւորականս¹⁴ ամենայն ազգաց. եւ հպարտութեամբ ամբարտաւանութեան իւրոյ կանգնեաց զպատկերն իւր, եւ ետ երկիր պագանել իբրեւ¹⁵ աստուծոյ, եւ զոհս մատուցանել:

33 Եւ վաղվաղակի կատարէին ամենայն ազգքն զհրամանս նորա. բայց մի

1 Ա տիտան. յուսանցում աւելացուած է եան

2 Աե՛Գ ժամանակ

3 Միհրդ. Զարամանեակ

4 ԱԲԳԴԵ Բաբիլոն

5 Ա Ամայսիայ

6 Միհրդ., Պատկ. Հարմա (նաեւ յետոյ)

7 Ա անդրանգելոցն

8 Ա-ի յուսանցում՝ գնացելոցն / Գե չի՛ գնացելոցն / Միհրդ. գնացելոցն փակագծերում է եւ տողատակին ծանօթագրուած է. «Միւս օրինակն ոչ ունէր փակագծի եղեալ բառոյ»:

9 Ա ախիւն

10 Բոյ. Զրուանայ հաւրն՝ եւ եղբարբքն հանդերձ

11 ԶԶ Կաղմայ

12 Միհրդ., Պատկ. չոգաւ

13 Ա ազգաց

14 ԱԲԳԴԵ Թագաւորական

15 Աե՛Գ իբր

ոմն Հայկ անուն, նահապետ ազգացն, ո՛չ հնազանդեցաւ ի ծառայութիւն նորա. եւ ո՛չ կանգնէր ի տան իւրում զպատկեր նորա, եւ ո՛չ մեծարէր զնա աստուածաւորէն շքով:

34 Եւ էր անուն նորա Հայկ, ընդ որում ծնաւ արքայի Բէլայ յիսութիւն մեծ:

35 Եւ զաւրածողով լինի Բէլ արքայ ի Բաբելոն՝ եւ դիմէ գնայ ի վերայ Հայկայ սպանանել զնա:

36 Գայ հասանէ յերկիրն Արարադայ ի տունն, որ էր նոցա հայրենի, զոր շինեալն էր ի լեռնոտին. եւ Կադմոս փախստական գնաց ի Հարք առ հայր իւր ազդ առնել նմա. եւ ասէ. «Դիմեալ գայ Բէլ արքայ ի վերայ քո, եւ եկն եհաս մինչ՝ ի տուն անդր. եւ ես կնաւ իմով եւ որդւովք ահաւասիկ գամ՝ փախստական»:

37 Առնու Հայկն զԱրամենակ եւ զԿադմոս զորդի իւր. եւ զորդիս նոցա եւ զորդիս եւթանեցունց՝ զատերաց իւրոց, արս հսկայս եւ նուազունս՝ թուով:

38 Եւ ի դիմի հարկանի Հայկն՝ Բէլայ արքայի. եւ ոչ կարաց զղէմ ունել բազմութեան արանց հսկայից սպառազինաց:

39 Անդ ի դիմի հարկանի Հայկն Բէլայ, եւ կամեցաւ ըմբռնել զնա Բէլ ի բուռն իւր: 40 Խոյս ետ Հայկն յերեսաց նորա, եւ գնայր՝ նա փախստական. եւ Բէլ զհետ նորա երթայր պնդազոյն հանդերձ զինակրաւն իւրով:

41 Զտեղի կալաւ Հայկն եւ ասէ ցնա. «Զի՞ պնդեալ գաս զհետ իմ. դարձի՛ր անդրէն ի տեղի քո, զի մի՛ մեռանիցիս այսաւր ի ձեռաց իմոց. քանզի ոչ վրիպի նետ

իմ իմիք»: 42 Պատասխանի ետ Բէլ, եւ ասէ. «Վասն այնորիկ, զի մի՛ անկցիս ի ձեռս մանկտույ՞ իմոյ եւ մեռանիցիս. այլ ե՛կ ի ձեռս իմ, եւ կեա՛ց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսականս»:

43 Պատասխանի ետ նմա Հայկն եւ ասէ. «Շո՛ւն ես դու եւ յերամակէ շանց՝ դու եւ ժողովուրդ քո: 44 Եւ վասն այնորիկ թափեցից իսկ այսաւր ի քեզ զկապարճս իմ»: 45 Եւ արքայն Տիտանեան սպառազինեալ, եւ վստահացեալ ի կուռ սպառազինութիւն անձին իւրոյ:

46 Եւ Հայկն Աբեթայն մերձենայր եւ ունէր ի ձեռին իւրում զաղեղն, որպէս հեծան հզաւր մայրափայտեայ: 47 Եւ Հայկին զտեղի կալեալ պատրաստի ընդդէմ նորա աղեղմամբ: 48 Եւ կանգնէ զկապարճսն ի գետնոյ ընդ ինքեան յաւղ՝ սկայաւորէն կամարին, եւ ընդ գիրկս մտեալ՝ զաւրութեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս, եւ ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մտեղէն արձանն, յերկիր խարսխեալ վտարեալ նետն. եւ վաղվաղակի յերկիր կործանեալ զաստուածակարծեալ՝ հսկայն. եւ զաւրք նորա փախստական լինէին: 49 Եւ նոքա զհետ մտեալ թափեցին ի նոցանէն՝ երամակս ձիոց եւ ջորեաց եւ ուղտուց:

50 Եւ Հայկն դարձաւ ի տեղի իւր. եւ չոգաւ կալաւ Հայկն զերկիրն Արարադայ, եւ բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչեւ ցայժմ: 51 Եւ ի ժամանակի մահուան իւրոյ ետ գնա կալուած ժառանգութեան Կադմեայ թոռին իւրում, որդւոյ՝ Արամե-

1 Ա. Բաբելովն
2 Դ, Միհրդ., Պատկ. մինչեւ
3 Միհրդ., Պատկ. կամ փիս գամ
4 Ա. եաւթանեցունց
5 Ա. հսկայս նուազունս
6 Պատկ. չի՛ Հայկն
7 Ա. Գ. չի՛ զնայր

8 Ա. մանկտոյ
9 Ա. մայրափայտեաց Դ. Գ. մայր փայտեայ
10 Միհրդ. յաղեղն փիս յաւղ. Պատկանեանը հետեւել է Միհրդատեանին, չնայած իր ձեռագիրն ունեցել է յաւղ:
11 Ա. գաստրւածակարծեալ
12 Միհրդ., Պատկ. ի նոցանէ
13 Ա. որդոյ

նակայ եղբաւր Հարմայի: 52 Եւ Արամե-
նակայ հրամայեաց երթալ ի հիւսիսա-
կողմն, ուր ինքն իսկ դադարեաց զառա-
ջինն:

53 Եւ եղեւ յետ մահուանն Հայկայ
առ Արամենակ զորդիս իւր եւ զգոտերս
իւր եւ զարս նոցա, եւ զքորս եւթանեսին¹
եւ զարս նոցա, զուստերս եւ զգոտերս նո-
ցա եւ զամենայն աղիս իւր, եւ չոգաւ բնա-
կեցաւ անդէն յառաջնումն գաւառին, զոր
կոչեցին յանուն հարց իւրեանց՝ Հարք:

54 Ապա գնայ անտի եւս Արամենակ ի²
հիւսիսակողմն, եւ երթեալ իջանէ յերկիր
մի խորին դաշտավայր, որ կայ ի մէջ
բարձրաբերձ լեռանց. եւ հատանէ անցանէ
ընդ մէջ նորա գետ յորդահոսան. որով
անցեալ Արամենակ բնակէ անդ, եւ շինէ
գերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ՝
զվայրն լեռնակողմն եւ զառապար:

55 Զկնի Արամենակայ որդի նորա Ա-
րամայիս շինէ իւր ի վերայ գետեզրն տուն
բնակութեան, եւ անուանէ զանուն նորա
ըստ անուան իւրոյ Արամայի: 56 Եւ որ-
դիքն նորա սկսան բազմանալ եւ լնուլ
գերկիրն³: 57 Եւ շինեցին գաւառք:

58 Մեռաւ եւ Արամայիս⁴, եւ կալաւ
գերկիրն որդի նորա Ամասիա: 59 Եւ ապա
յետ նորա Գեղամ: 60 Մեռաւ Գեղամ, եւ
տիրեաց որդի նորա Հարմայ. ապա որդին
Հարմայի⁵ Արամ: 61 Ապա որդի նորա Ա-
րայն Գեղեցիկ, որով անուն իսկ դաշտին
այնորիկ կոչեցաւ յանուն Այրարադ:

62 Եւ Շամիրամ կինն Ասորուոց արքա-
յին Նինոսի քանզի լուաւ վասն գեղեցկու-
թեան նորա՝ եւ կամեցաւ առնել ընդ նմա
բարեկամութիւն, որպէս զի կատարեսցէ

զկամս նորա պոռնկութեամբ. քանզի ըստ
լրոյ համբաւոյ յոյժ տուփեալ էր ի վե՛րայ
անձին եւ գեղայ նորա գեղեցկութեանն,
զի ո՛չ գտանէր յայնմ ժամանակի նման
նորա այր ոք ամենեւին՝ այր պատկերա-
ճոխ: 63 Յղէ առ նա հրեշտակս պատարա-
գաւք եւ կոչէ զնա առ ինքն ի Նինուէ:
64 Իսկ Արայն ո՛չ զպատարագ նորա ըն-
կալաւ եւ ո՛չ յանձն առնու երթալ ի Նի-
նուէ առ Շամիրամ: 65 Ապա առնու
զգաւրսն իւր Շամիրամ, եւ գնայ ի վերայ
նորա ի Հայս: 66 Գայ հասանէ ի դաշտն
Արայի, եւ տայ պատերազմ ընդ Արայի,
հարկանէ զգաւրն, եւ սպանանէ զԱրայ ի
պատերազմին:

67 Եւ հրամայէ Շամիրամ տանել զզի
նորա ի վերնատունն ապարանից իւրոց, եւ
ասէ «Եւ ասացից աստուածոց լեզու⁶
զվէրս նորա⁷, եւ կենդանասցի»:

68 Իսկ իբրեւ նեխեցաւ զի նորա ի
վերնատանն՝ հրամայեաց զաղտնի ընկե-
նուլ ի վիհ եւ ծածկել: 69 Եւ զարդարէ
զմի զոմն ի հոմանեաց իւրոց այր պատշա-
ճող. եւ համբաւ հանէ՝ զԱրայի լեզու⁸
աստուածոցն եւ յարուցանել: 70 Ունի ի
ծածուկ. եւ ոչ ումեք ի ծանաւթից նորա
ցուցանէ զնա. եւ այսպէս⁹ հանէ համբաւ
արալեզաց¹⁰ տիկինն Շամիրամ:

71 Յայնժամ տիրեաց Շամիրամ ի վե-
րայ երկիրն Հայաստանեայց¹¹, եւ յայնմ-
հետէ Ասորեստանեայց¹² թագաւորքն տի-
րեցին մինչեւ ցմեռանելն Սենեքարիմայ¹³.
ապա ապստամբեցին յԱսորուոց թագաւո-
րացն ծառայութենէ:

1 ԱԵԳ գոյրսն գեաւթանեսին Բ գոյրսն եաւթա-
նեսին
2 Ե արամենեկի ի
3 Ա գերկիր
4 Ա Արամայիս
5 Դ, Միհրդ., Պատկ. որդի նորա փիս որդին Հար-
մայի

6 Միհրդ., Պատկ. լիզուլ
7 Ա դորա փիս նորա
8 Ա լիզուլ
9 Միհրդ., Պատկ. այնպէս
10 Ա արա լիզաց Գ յարալեզաց
11 Ա Հայաստանեայց
12 Ա Ասորեստանեայց
13 Մալիս. Սենեքարիմայ

72 Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամենակայ, այր զաւրաւոր եւ կորովի աղեղամբ. ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնաւազ:

73 Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. եւ Բագարատ ծնաւ զԲիւրատ¹, եւ Բիւրատ ծնաւ զԱսպատ: 74 Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին:

75 Այս Փառնաւազ Հնազանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն:

76 Եւ ապա յայնմհետէ Բաբելացոց եւ Մարաց թագաւորքն տիրեցին մինչեւ ցԱղեքսանդր² Մակեդոնացի, որ զամենայն տիեզերս Հնազանդեցոյց ի ծառայութիւն:

77 Եւ ծառայեցին Մակեդոնացոց մինչեւ ցապատամբութիւնն Պարթեւաց ի Մակեդոնացոց³, եւ ցհամբարձումն Արշակունեաց թագաւորութեանն: 78 Քանզի զսոյն ճառէ ժամանակագիրն այդպէս, որպէս առաջիկ կայ:

79 (Ի Դամասկոսէ ասեն գնացեալ զՄարսեակն զընդոծինն Աբրահամու, փախստական լեալ յԻսահակայ, եւ եկեալ բնակեցաւ առ ոտամբ երկուց լերանցն որ հային Հանդէպ մեծի դաշտին Արայի, յԱրագած կատար եւ ի Գեղ լեան:

80 Եւ անուանէ զլերինս յանուն իւր, ⁴որում Ազատն կոչեն լեան: 81 Եւ լինին

նորա երեք որդիք, Փառոխ, նա է Եղիազար, եւ Փառոխտ կոչեն զտեղի բնակութեանն, եւ Փառականն դաշտ որսոց⁵ եւ արշաւանաց նոցին, որ խառնին յազգ Արամենակայ):

ԳԼՈՒԽ Բ

1 Սպաստամբութիւն Պարթեւաց որ եղեւ ի յայս ժամանակի:

2 Եւ եղեւ յետ մահուանն Մակեդոնացոց ծառայեցին Պարթեւք Մակեդոնացոց ամս ԿԱ:

3 Քանզի թագաւորեաց Սեղեւկիոս Նիկանովր⁶ ի Բաբելոն ամս ԼԲ⁹: 4 Անտիոքոս Սոտեր՝ ամս ԺԹ: 5 Անտիոքոս Թէոս՝ ամս Ժ:

6 Եւ յամի մետասաներորդի Անտիոքայ արքայի ապստամբեալ ի բաց կացին Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացոց: 7 Եւ թագաւորեաց Արշակ Մեծ, որդի արքային Թէտալացոց, ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց, որում ամենայն ազգք¹⁰ արեւելից եւ հիւսիսոյ Հնազանդեցան ի ծառայութիւն:

8 Չուեաց խաղաց գնաց Արշակ արքայն ամենայն զաւրաւքն հանդերձ յարեւելից երթալ ի Բաբելոն, յառաջին թագաւորացն կալուածսն. զի անդ հաստատեսցէ զթագաւորութիւն իւր. եկն եհաս ի Բաբելոն¹¹:

9 Իսկ Անտիոքոս իբրեւ ետես, զի անչափ բազմութեամբ եկեալ հասեալ էր ի վերայ նորա Արշակ արքայն Պարթեւաց, այնուհետեւ ոչ կարացեալ վստահանալ

1 ԶԶ, Միհրդ. այստեղ եւ յետոյ Բագարատ եւ Բիւրատ անուններն ամէնուրեք գրուած են Բագարամ, Բիւրամ:
2 ԱԲԳԴԵ ցաղէկսանդր
3 ԶԶ, Միհրդ., Պատկ. եւ Մակեդոնացոց փիս ի Մակեդոնացոց
4 ԱԲԳԴԵ եւ լինին նորա երեք որդիք, Փառոխ՝ նա է Եղիազար, որում ազատն կոչեն լեան փիս ո-

րում Ազատն կոչեն լեան: Եւ լինին նորա երեք որդիք, Փառոխ նա է Եղիազար
5 Ա որսաց
6 Վերնագիրը ձեռագրիցն է:
7 ԱԲԳԴԵ Աղէկսանդրու կայսեր մակեդոնացոյ
8 Միհրդ., Պատկ. Սելեւկիոս / բոլ. Նիսանովր
9 Բոլ. ամս ԼԲ փիս ամս ԼԲ
10 ԱԲԳԴԵ ազգ
11 ՏՏ Բաբելոն

յիւր զաւերացն բազմութիւն ի դիմի հարկանել վիրազին¹ այնմիկ՝ խոյս² ետ յերեսաց նորա. փախեալ եւ գնաց յԱսիաստան: 10 Եւ թագաւորէ ի վերայ Ասիաստանի³ ամս Ե. եւ ապա մի ըստ միոջէ թագաւորեն Մակեդոնացիքն յԱսիաստան ի ժամանակս ինչ⁴: 11 Եւ Արշակ արքայ Հնազանդեցոյց ի ծառայութիւն զԱսորեստանեայս, որ ըստ Անտիոքայ, եւ զԲաբելոնացիս եւ զՊարսիկս եւ զՄարս, եւ զերկիրն Հայոց մինչեւ ցլեառն մեծ Կապիոհ, եւ ի յեզր ծովուն մեծի Արեւմտից⁵: 12 Թագաւորէ Արշակ ի Բաբելոն ամս բազումս:

13 Եւ եղեւ յամին հարիւր եւ տասներորդի չորրորդի Արշակայ արքայի Պարթեաց, ի չորրորդում ամի թագաւորութեան⁶ Դեմետրեայ ի վերայ Ասիաստանի եւ Ասորւոց, մինչեւ Արշակ արքայ գնաց յարեւելս՝ զաւերաժողով լեալ եւ Դեմետրիոս չոգաւ կալաւ զԲաբելոնի:

14 Իբրեւ ետես Դեմետրիոս, զի այնչափ բազմութեամբ եկն եհաս ի վերայ նորա Արշակ՝ տեղի ետ նմա եւ գնաց մինչեւ ցԱնտիոք. եւ անդ ճակատեցաւ ընդդէմ Արշակայ ի պատերազմ: 15 Եւ եղեւ պատերազմ մեծ առ Անտիոք քաղաքաւ: 16 Հարկանեն եւ սրբաջունջ առնեն զզաւրն Դեմետրեայ. եւ ձերբակալ առնեն զԴեմետրիոս: 17 Կապէ գնա Արշակ արքայ ոտիւք եւ ձեռաւք, եւ առնու գնայ յարեւելս ի Բահլ Շահաստան:

18 Իբրեւ ետես Անտիոքոս եղբայր Դեմետրեայ, եթէ ըմբռնեցաւ Դեմետրիոս ի ձեռս Արշակայ արքայի՝ ինքն թագաւորէ ի վերայ Ասորւոց եւ Ասիաստանի.

զաւերաժողով լինի եւ գնայ ի Բաբելոն, զկնի տասն ամի: 19 Ազգ լինի սորին, եթէ թագաւորեաց Անտիոքոս եղբայր Դեմետրեայ եւ եկն ի Բաբելոն:

20 Լուծանէ Արշակ զԴեմետրիոս զկնի տասն ամի եւ արձակէ առ եղբայրն, որպէս զի⁷ խաւսեսցի ինչ առնել նմա. եւ Դեմետրիոս ոչ գնաց առ եղբայրն իւր ի Բաբելոն, այլ յԱսիաստան անցանէ: 21 Ապա խաղայ գնայ Արշակ⁸ ի Բաբելոն երեքտասան բիւրովք⁹:

22 Յամի հարիւրերորդի քսաներորդի ութերորդի թագաւորութեան իւրոյ իբրեւ մաւտ եղեւ ի Բաբելոն՝ անկանի ի վերայ նորա Անտիոքոս յանկարծակի ի ձմեռն¹⁰ ժամանակի՝ ի նեղ վայրի: 23 Եւ ոչ կարեն զաւրել. սպառեն զզաւրն. զարկանեն եւ ընկենուն¹¹ զԱնտիոքոս ի խոնարհ եւ սպանանեն. եւ ձերբակալ առնեն զՍելեւկիոս¹² զորդին Անտիոքայ, զոր ունէր, ասէ¹³, արքայ ի դրանն իւրում թագաւորութեան¹⁴:

24 Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին¹⁵ քաղաքի: 25 Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուաստան առ երկրաւն Տաճկաց եւ առ երկրաւն Ասորւոց, եւ զԿապուտկեայ¹⁶ առ Կիւղիկեաւ, մինչեւ ցեզր ծովուն մեծի Արեւմտից¹⁷. եւ ցհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արեւելից եւ անցանէ առ սահմանաւն առ ամուր

1 Միհրդ. վայրագին
 2 Միհրդ., Պատկ. եւ խոյս փխ խոյս
 3 Միհրդ., Պատկ. ի վերայ Ասիաստանու
 4 Ա. յասիաստանի ժամանակս ինչ / Ե յասիաստանի ի ժամանակս ինչ
 5 Բոլ. արեւմտից փխ Արեւմտից
 6 Ա. թագաւորութեանն (նաեւ յետոյ)

7 ԱեԳ որպէս փխ որպէս զի
 8 Ա Աշխակ փխ Արշակ
 9 Ա. բիւրոյ
 10 ԱեԳ ձեռն փխ ձմեռն
 11 Ա. զարկանեն ընկենուն
 12 Ա. զՍելեւկիոս
 13 Վ. ասեն փխ ասէ
 14 ՁԶ, Միհրդ., Պատկ. թագաւորին
 15 Ա. Մծբին
 16 Ա. կապուտկիայ
 17 Ա, բոլ. արեւմտից

աշխարհաւն Մարաց, եւ հասանէ ի լեառն Զարասպ, եւ անցանէ առ Նոր Շիրակ երկրաւն:

26 Եւ յուղարկէ զնա ի Մրծանայ¹² ընդ յարեւմուտս զաւրու մեծաւ եւթանասուն հազարաց սպառազինաց. եւ մեծամեծ իշխանաւք նախարարաց հազարաց բերաւորաց, որում ոչ ոք կարէր զգէմ ունել պատերազմաւ: 27 Սմա ընդ առաջ ելանէ Բագարատն Փառագեան յորդոցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ զաւրու: 28 Մատուցանէ նմա պատարագ ոսկի եւ արծաթ. եւ զարդարէ զնա ի սնդր եւ ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի. եւ նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ գահոյիցն. եւ տայ նմա զգուստր իւր ի կնուլթեան:

29 Զսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան եւ հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, եւ հայր արքայի, եւ եղբայր. որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ: 30 Նա կոտորեաց զհսկայսն, որ զաւրաժողով եղեն ի վերայ նորա ի Միջագետս Ասորոց:

31 Եւ այս են իշխանք Պարթեւաց, որք թագաւորեցինն զկնի Արշակայ հաւր իւրեանց ի Բահլ Շահաստան յերկիրն Քուշանաց: 32 Որդիք չորք³ ասեն լեալ Արշակայ արքայի Պարթեւաց. զառաջինն ասեն թագաւորեցոյց Թետալացոց⁴ աշխարհին. զերկրորդն ի վերայ Կիլիկեցոց. զերրորդն ի վերայ Պարթեւաց. զչորրորդն ի Հայաստան աշխարհին⁵:

33 Եւ լինին ամենայն ամք Արշակայ կենաց իւրոց⁶ ձլ ամ. ⁷եւ թագաւորեաց ամս յիսուն եւ վեց: 34 Զկնի նորա թագաւորէ որդի նորա Արշակ ի վերայ Պարթեւաց ի Բահլ Շահաստանի յերկիրն Քուշանաց՝ ամս Հ: 35 Ապա որդի նորա Աշնաշ՝ ամս ԼԲ: 36 Ապա Արշէն՝ ամս ԻԲ: 37 Ապա Արշաւիր՝ ամս ԽԵ: 38 Ապա Արտաշէս՝ ամս ԼԴ: 39 Ապա Դարեհ՝ ամս Լ: 40 Ապա Արշակ՝ ամս ԺԵ: 41 Ապա Արտաշիր՝ ամս ԽԶ: 42 Ապա Պերոզ՝ ամս ԿԴ: 43 Ապա Վաղարշակ՝ ամս Ծ: 44 Ապա Արտաւան՝ ամս ԼԶ: 45 ⁸Ապա լինին ամենայն ամք Պարթեւաց տէրութեանն ամք ՇՀԳ:

46 Եւ այս են թագաւորք Արշակունիք, որք թագաւորեցին Հայաստան երկրի զկնի Արշակայ Մեծի:

47 Արդ՝ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝ յամի հարիւրերորդի քսան եւ իններորդի թագաւորութեանն Արշակայ հաւր իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին⁹ քաղաքի, եղբարք իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս՝ ամս ԽԲ: 48 Ապա Արշակ՝ ամս ԺԳ: 49 Ապա Արտաշէս՝ ամս ԻԵ: 50 Ապա Արտաւան եւ Արշաւիր՝ ամս ԺԲ: 51 Ապա Արշակ որդի Արշաւիր՝ ամս ԼԵ: 52 Ապա Երուանդ որդի Արշակայ՝ ամս ԻԱ: 53 Ապա Արտաշէս եղբայր նորին՝ ամս ԾԲ¹⁰: 54 Ապա Տիրան որդի Արտաշէսի՝ ամս ԻԲ: 55 Ապա Տիգրան եղբայր նորին՝ ամս ԽԲ: 56 Ապա Արշամ՝ ամս Ի: 57 Ապա Աբգար որդի Արշամայ՝ ամս ԼԸ: 58 Ապա Սանատրուկ քեռորդի Աբգարու՝ ամս Լ: 59 Ապա Արտաշէս որդի Սանատրուկոյ՝ ամս ԽԱ: 60 Ապա Արտաւազդ եւ ապա Տիգրան, որդիք Արտաշէսի՝ ամս ԻԴ:

1 Վ Մծրանայ
2 Ա ի կնուլթեանն / Միհրդ., Պատկ. ի կնուլթիւն
3 Ա Դ որդիք փխ Որդիք չորք
4 ԱԲԳԴԵ թէտալացոց
5 Վ ի վերայ Հայաստան երկրին փխ ի Հայաստան աշխարհին

6 ԱԲԳԴԵ թագաւորութեանն փխ կենաց իւրոց
7 ԱԲԳԴ չիք եւ թագաւորեաց ամս յիսուն եւ վեց
8 Ե չիք Ապա լինին ... Արտաւան՝ ամս ԼԶ (Գ 19)
9 Վ Մծրին փխ Մրծուին
10 ԱԲԳԴԵ ամս ԿԲ փխ ամս ԾԲ Վ ամս ՀԲ

61 Ապա Վաղարշ որդի¹ Տիգրանայ՝ ամս
 Ի: Ապա Քաջն Խոսրով որդի Վաղարշու՝
 ամս ԽԸ²: 62 ³Ապա Մեծն Տրդատէս որդի
 Խոսրովայ՝ ամս ԾԶ: 63 Ապա Խոսրով որ-
 դի Տրդատայ՝ ամս Թ: Տիրան որդի Խոսրո-
 վայ՝ ամս ԽԸ⁴: 64 Արշակ որդի Տիրանայ՝
 ամս Լ⁵: 65 Շապուհ արքայ Պարսից՝ ամս
 ԺԲ⁶: 66 Պապ որդի Արշակայ՝ ամս Է:

ԳԼՈՒԽ Գ⁷

1 Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ո՛վ ընթեր-
 ցասէր, երկրորդեցից ի պատմագրացն
 Մովսիսի⁸ Խորենացւոյ եւ Ստեփանոսի
 Տարաւնացւոյ, Հաւաստի եւ ճշմարիտ մա-
 տենագրաց՝ զորդի ի հաւրէ ճանաչել:

2 Յետ մահուանն Աղեքսանդրու թա-
 գաւորէ Արշակ Քաջ ի Բահլ Շահաստանի,
 յերկիրն Քուշանաց. կեցեալ ամս ՃԼ, թա-
 գաւորեաց ամս ԾԷ: 3 Յետ նորա որդի նո-
 րա Արտաշիր՝ ամս ԼԱ: 4 Յետ նորա⁹ թա-
 գաւորէ նորին որդի Արշակ, որ կոչեցաւ
 Մեծ՝ ամս ԾԲ:

5 Սա թագաւորեցոյց զեղբայր իւր
 զՎաղարշակ ի վերայ աշխարհիս հայոց:
 6 Արդ՝ այսպէս զատուցեալ երեւէին երկու
 ցեղքն թագաւորութեանց՝ Պարսից եւ Հա-
 յոց:

7 Արշակ Քաջ նախնեաց երկուց ցե-
 ղից՝ թագաւորեցելոյ Պահլաւկանին¹⁰ եւ
 Արշակունւոյն, ամենայն քաջութեամբ
 թագաւորեաց ամս ԾԷ: 8 Յետ որոյ որ-
 դիքն¹¹ զատուցեալք թագաւորք Պարսից.

Արշակ Մեծ՝ ամս ԾԲ: 9 Արշական՝ ամս Լ:
 10 Արշանակ՝ ամս ԼԲ: 11 Արշէս՝ ամս Ի:
 12 Արշաւիր՝ ամս ԽԶ: 13 Արտաշէս՝ ամս
 ԼԱ: 14 Դարեհ՝ ամս Լ: 15 Արշակ՝ ամս
 ԺԹ: 16 Արտաշէս՝ ամս Ի: 17 Պերոզ՝ ամս
 ԼԳ: 18 Վաղարշակ՝ ամս Ծ: 19 Արտաւան՝
 ամս ԼԶ:

20 Զսա սպանեալ Ստահրացւոյն¹²
 Արտաշիր որդւոյ Սասանայ՝ եբարձ զտէ-
 րութիւն Պահլաւաց, ¹³յերկրորդ ամին Փի-
 լիպպեայ թագաւորին Հոռմայ: 21 Աստա-
 նաւր դադարէ թագաւորութիւնն Պարթե-
 ւաց յազգէն Պահլաւկաց սկսեալ¹⁴ յերե-
 սուն ամի թագաւորութեանն Փիլեղելփոս
 Պտղոմէոսի¹⁵, կալեալ նոցա¹⁶ ընդ ամե-
 նայն ամս՝ ՆԾԷ:

22 Յետ որոյ նուաճեալ Ստահրացւոյն
 Արտաշրի որդւոյ Սասանայ զամենայն Ա-
 րիս եւ զանարիս, եւ զբազումս ի նոյն ազ-
 գէ թագաւորութեան Պարթեւաց եւ Պահ-
 լաւկաց՝ թագաւորէ ինքն, եւ յետ նորա
 պայազատք նորին ¹⁷զնոյն ձեւ աւրին.....

.....

1 ԱԲԳԴԵ որդի
 2 Վ Ը փխ ԽԸ
 3 ԱԲԳԴԵ չի՛ր ապա մեծն
 4 ԱԲԳԴԵ Ը փխ ԽԸ
 5 Բոյ. ամս է փխ ամս է
 6 Բոյ. ՀԳ փխ ԺԲ
 7 Վերնագիրը ձեռագրինն է:
 8 Ա Մովսէսի
 9 Ա սորա փխ նորա
 10 Ա պահլաւկանին
 11 Ա որդի

12 Ա Ըստարիացւոյն
 13 Բոյ. չի՛ր յերկրորդ ... յազգէն Պահլաւկաց. լրաց-
 րել ենք՝ քաղելով Աստղիկից:
 14 ԱԳ սկսեալ Լ ամի / Դ սկսեալ Ե Լ ամի
 15 ԱԵԳ Փիլիղելփոս Պտղոմէոսի / Դ Փիլիղելփոսի
 Պտղոմէոսի
 16 ԱԲԳԴԵ սոցա փխ նոցա
 17 ԱԴԵ գնոյն ձեւ արինադրէ զՄամիկոնէիցն
 սակս զգագաց գնեղութիւնն / ԲԳ գնոյն ձեռ-
 նադրէ զՄամիկոնէից սակս զգագաց գնեղու-
 քիւնն / Միհրդ., Պատկ. գնոյն ձեւ արինադրէն
 Մամիկոնէիցն սակս ազգաց գնեղութիւնն /
 Մալխ. գնոյն ձեւ արինա(կի) ... դրէն զՄա-
 միկոնէիցն սակս ազգաց գնեղութիւնն
 Կիսատ մնացած վերջին բառին յաջորդող կէ-
 տերով նշուած տեղում բնագիրը պակասաւոր
 է: Տե՛ստը բաժանել ենք տարբեր գլուխների եւ
 աւելացրել ենք Ծննդաբանութիւնն ազգին
 Մամիկոնէից խորագիրը:

ԳԼՈՒԽ Դ

1 Ծննդաբանութիւն ազգին Մամիկոնէից:

2ազրէ զՄամիկոնէիցն սակս ազգաց զնեղութիւնն: 3 Քանզի ոչ են սոքա որդիք ազգածնինն Արամենակայ, այլ են եկեալ ի ձենաստանէ յամս Արտաւանայ՝ արքայի Պարթեւաց եւ Մեծին Խոսրովու արքայի Հայոց. որպէս լուայ յառնէն՝ մեծէ, որ եկեալ էր՝ Տրեշտակութեամբ ի ձենաց թագաւորէն առ արքայն Խոսրով. յոր իմ հարցեալ ի դրանն արքունի, եթէ «Ազգ մի մեծ ի Հայաստան երկրի կայ, զորմէ ասեն եթէ ի ձերմէ աշխարհէն գնացեալ են»: 4 Եւ նա ասաց ինձ. «Ասեն, ասէ, գուսանք եւ ի մերում աշխարհին յերգս իւրեանց զՄամիկն եւ զԿոնակն, արս երկուս լեալ քաջս եւ գլխաւոր եղբարս հարազատս, որդիք Կառնամայ նախարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեանն ձենաստանի: 5 Որոյ յետ՝ մահուանն առնս այսորիկ, առ զկին սորին թագաւորն նոցին ի կնութիւն: 6 Եւ եղեւ ի նմանէ որդի, որ զկնի մահուան հաւր իւրոյ յաջորդեալ նստաւ յաթոռ հայրենի թագաւորութեանն: 7 Եւ նոքա, երկու եղբարք՝ նորա ի մաւրէ եւ ոչ ի հաւրէ, ապստամբեալ ի բաց կացին ի նմանէ. եւ միաբանեալ ընդ ինքեանս՝ զմասն մի ի նախարարացն եւ ի զաւրացն՝ առնեն ուխտ միաբանութեան: 8 Որոց խորհեալ խորհուրդ չարութեան՝ սպանանել զեղբայրն իւրեանց, զթագաւորն աշխարհին ձենբակուր, եւ առնուլ զթագաւորութիւնն նորա: 9 Եւ զաւրածողով լինէին Մամիկն եւ Կոնակն ի վերայ նորա ի միում տեղուջ աշխարհին իւ-

րեանց. եւ բաժանի զաւր աշխարհին յերկուս: 10 Ազգ լինի ձենբակուրի՝ գումարէ եւ նա զզաւրս՝ իւրոյ կողմանն, եւ գնայ ի վերայ նոցա ի պատերազմ: 11 Եւ յարձակին ի վերայ միմեանց, հարկանեն սրով սուսերի, եւ սպառեն զզաւրն ապստամբական: 12 Փախստական լեալ Մամիկն եւ Կոնակն գնան առ արքայն Արշակունի, որ նստէր ի Բահլ Շահաստանի, յերկիրն Քուշանաց: 13 Եւ էր խաղաղութիւն ի մէջ երկոցունց թագաւորութեանցն այնոցիկ:

14 Յայնժամ մեծաւ աղերսիւ խնդրեալ զնոսա ձենբակուրի յարքայէն Պարթեւաց, «զի բարձցէ ի միջոյ. ապա թէ ոչ՝ լուծցի ուխտ խաղաղութեանն՝՝ որ ի միջի մերում»: 15 Իսկ նորա խնայեալ՝ յարան՝ ոչ ետ զնոսա ի ձեռս՝ նորա, այլ գրէ առ նա սիրով. «Անդրէն ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ, հաստատո՛ւն կացցէ ի միջի մերում, զի երդուեալ եմ առ նոսա, զի նոքա մի՛ մեռցին. այլ ետու տանել զնոսա ի մուտս արեւու եւ յեզր երկրի, ի տեղին՝ յայն, ուր արեգակն՝ ի մայրն մտանէ»:

16 Յայնժամ հրամայէ արքայն Պարթեւաց զաւրաց իւրոց տանել զնոսա զգուշութեամբ մեծաւ, կնաւ եւ որդուովքն իւրեանց եւ ամենայն աղխիւն իւրեանց յերկիրն Հայոց առ ազգական իւր արքայն Արշակունի, որ էր թագաւոր Հայաստան երկրին, ուր եւ սերեալ բազմացան յոյժ, եւ եղեն յազգ մեծ Մամիկայ՝ եւ ի Կոնակայ»: 17 Յայնմանէ այն է սպարապետ:

1 ԱԲԳԴԵ Արտեւանայ
2 ԱԲԳԴԵ յառնէն
3 ԱԲԳԴԵ էր եկեալ փ/ս. եկեալ էր
4 ԱԲԳԴԵ չի՛ք յետ
5 Ա եղբայրք
6 Վ ընդ միմեանս փ/ս ընդ իմեանս

7 Վ ձենբակուրի (լուսանցում՝ ձենբակ)
8 ԱԲԳԴԵ գորս (կանւ յետոյ)
9 Ա խաղաղութեան
10 Ա իմանեալ
11 ԶԶ ի ձեռն
12 Ա ի տեղի
13 ԱԲԳԴԵ որ (փ/ս ուր) արեգակն
14 Բոր. Մամիկոնայ

ԳԼՈՒԽ Ե

1 Թագաւորք Հայոց, Պարսից եւ Յու-
նաց:

.....

2 Եւ եղեւ յետ մահուանն Արտեւա-
նայ, որդւոյ Վաղարշու արքային Պարթե-
ւաց, թագաւորեաց Արտաշիր որդի Սասա-
նայ միահեծան տէրութեամբ ի վերայ Բա-
բելացոց եւ¹ Ասորոց եւ Մարաց եւ Պար-
սից եւ Պարթեւաց, ամս Ծ:

3 Յամի երրորդի Եղիանոսի կայսեր,
եւ յամս Լ-երրորդի առաջի² Մեծին³ Խոսրո-
վայ արքային Հայոց՝ փոփոխուան թագա-
ւորութեանն այսորիկ լեալ: 4 Եւ էր⁴ Խոս-
րով ԼԱ ամս⁵: 5 Եղիանոս՝ երրորդն. Ար-
տաշիր՝ զառաջինն:

6 Յամին Լ-երրորդի չորրորդի⁶ Մեծին
Խոսրովայ, եւ չորրորդ ամի արքային
Պարսից Արտաշրի թագաւորէ Տերենտիա-
նոս ամիսս վեց. քանզի փութանակի վախ-
ճանի:

7 Յամին ԼԵ-երրորդի ⁷Խոսրովայ ար-
քայի, եւ ի հինգերորդ ամի Արտաշրի
Պարսից արքայի թագաւորէ Պրոպոս ամս
Ձ: 8 Խոսրով ԼԵ: 9 Արտաշիր՝ Ե: 10 Պրո-
պոս՝ զառաջինն:

11 Եւ եղեւ յամին ԽԱ-երրորդի Մեծին
Խոսրովայ, եւ ի ԺԱ ամի Արտաշրի թագա-
ւորէ Յունաց Կարոս, հանդերձ որդւովքն
իւրովք Կարինաւ եւ Նոմերիանոսիւ⁸ ամս
է: 12 Խոսրով ԽԱ: 13 Արտաշիր՝ ԺԱ:
14 Կարոս՝ զառաջինն⁹:

15 Յամին ԽԼ-երրորդի Խոսրովայ, ԺԸ
Արտաշրի, մինչ արքայ Խոսրով ի Միջա-
գետս էր, Կարոս կայսր գումարէ ամբոխ
զաւրաց բազմաց, եւ դիմէ ի վերայ արքա-
յին Խոսրովայ: 16 Անտի աճապարեալ
ընդդէմ նորա ելանէ ¹⁰Կոռնակ սպարապետ
մեծին Խոսրովու հաւրն Տրդատայ: 17 Ա-
սեն զսմանէ յերկարեալ զամս կենացն ՃԿ
եւ ունել ի ժամ մահուանն¹¹ զհերս եւ
զաչս եւ զլսելիս եւ զգաւրութիւնն եւ
զթեթեւութիւն¹² մանկութեանն:

18 Եւ ապա յայնժամ¹³ եղեւ պատե-
րագմ մեծ ի մէջ Խառանու եւ Ուրհայի.
Հարկանեն եւ վանեն զգաւրն Յունաց. եւ
մեռանի Կարոս ի պատերազմին հանդերձ
միով որդւովն Կարիանոսիւ: 19 Եւ ի նմին
ամի թագաւորէ Յունաց Դիոկղետիանոս¹⁴
ամս ԻԲ: 20 Խոսրով ԽԼ¹⁵: 21 Արտաշիր՝
ԺԸ: 22 Դիոկղետիանոս՝ զառաջինն:

23 Յամի Ի-երրորդի առաջներորդի Ար-
տաշրի Պարսից արքային ի չորրորդում ա-
մի Դիոկղետիանոսի կայսեր՝ մեռանի
Քաջն Խոսրով ի վատանուն Անակայ:
24 Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց
Արտաշիր արքայ Պարսից ամս ԺԱ:
25 Դիոկղետիանոս՝ զչորրորդն:

26 Յամին ԼԲ-երրորդի¹⁶ Արտաշրի,
հնգետասաներորդի Դիոկղետիանոսի,
կայսերակերպ¹⁷ չքեղութեամբ Տրդատիոս

1 Պատկ. չիք եւ
2 Ա. Գ-երրորդի յառաջի / Բ. Լ-երրորդի առաջին / Միհրդ., Պատկ. Լ-երրորդի ա
3 ՏՏ Մեծի
4 ԱԲԳԴԵ եւ ես փխ եւ էր
5 Միհրդ. ԼԱ ամաւ
6 Ա չորրորդին փխ չորրորդի
7 Ա Խոսրով արքայի
8 ԱԲԳԴԵ նոսերիանոսիւ
9 ԱԲԳԴԵ զառաջին

10 Ա լրացուած է ԺԹ դ. գրչութեամբ՝ Կոռնակ
սպարապետ ... եւ ունել (Ե 17). միւս ձեռագրե-
րում այդ բառերը բացակայում են: Միհրդա-
տեանը պակասը գտել է Հ ձեռագրում եւ գետե-
ղել փակագծերի մէջ՝ ծանօթագրելով. «Փակա-
գծիւ եղեալն ոչ գոյր ի բնագրին, գոր լցուցաք ի
միւս օրինակէն»: Պատկանեանը հետեւել է
Միհրդատեանին:
11 Ա մահուն
12 Մալխ. չիք եւ գրեթեւութիւն
13 ԱԳԵՏՏ ժամ փխ յայնժամ
14 Միհրդ., Պատկ. Դիոկղետիանոս (նաեւ յետոյ)
15 ԱԳԴ Խոսրով ԻԸ
16 Բոյ. Լ-երրորդի փխ ԼԲ-երրորդի
17 Միհրդ. կայսերապսակ

ելանէ ախոյեան ընդդէմ արքային Գդաց¹:
 27 Եւ անդէն ձերբակալ² արարեալ զախոյեանն անարի զթագաւորն Գդաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի. եւ անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: 28 Գուժարէ ի ձեռս սորա զաւրս բազումս եւ արձակէ յիւրական իշխանութիւն աշխարհին Հայոց: 29 Որ տիրէ ամենայն քաջութեամբ եւ բարեպաշտութեամբ ամս Հ³: 30 Եւ է այսպէս. Արտաշիր՝ ԼԲ: 31 Դիոկղետիանոս՝ ԺԵ: 32 Տրդատէս՝ զառաջինն:

33 43 Յամին Թ-երորդի Տրդատայ արքային Հայոց թագաւորէ ի վերայ Յունաց աշխարհին Կոստանդիանոս, որ շինեաց զԲիւզանդիա⁵ ամս Թ: 34 Արտաշիր՝ զԽ: 35 Տրդատիոս՝ իններորդ: 36 Կոստանդիանոս՝ զառաջինն:

37 Յամին ԽԹ-երորդի Արտաշրի արքային Պարսից, եւ ԺԹ ամ⁶ Տրդատայ արքային Հայոց թագաւորէ Շապուհ որդի Արտաշրի ի վերայ աշխարհին Պարսից ամս ՀԳ: 38 8Եւ ի սոյն ամի ⁹վախճանի կայսրն Յունաց Կոստանդիանոս եւ թագաւորէ Մաքսիմիանոս եւ Գալիանոս ամս ԺԸ, եւ տայ պատերազմ ընդ Շապուհ որդու Արտաշրի ի Միջագետս ի Խառան. եւ լինի անդ կոտորած մեծ, մինչեւ ի նեղ ան-

կանել զաւրուն Պարսից յերկիրն Ուրհայոյ: 39 Եւ տեսեալ Շապուհ զպարտութիւն իւր զաւրուն, զիջանի առնել խաղաղութիւն ընդ կայսեր. եւ նա առեալ զզանձս եւ զաւարս բազումս դառնայ ի տեղի իւր: 40 Տրդատէս՝ Ի: 41 Մաքսիմիանոս եւ Գալիանոս՝ զերկրորդն: 42 Շապուհ՝ զառաջինն¹⁰:

43 Յամին ԼԷ-երորդի Տրդատայ արքային, ԺԸ-երորդի Շապուհ արքայի թագաւորէ Յունաց Մաքսիմիանոս որդի Մաքսիմիանոսի՝ ամս ԺԳ: 44 Տրդատէս՝ ԼԷ: 45 Շապուհ՝ ԺԸ: 46 Մաքսիմիանոս՝ զառաջինն:

47 Յամին Ծ-երորդի Տրդատայ արքային՝ թագաւորէ Յունաց Կոստանդէս՝ ամս ԺԷ: 48 Տրդատէս՝ Ծ¹¹: 49 Շապուհ՝ ԼԱ: 50 Կոստանդէս՝ զառաջինն:

51 Յամին ԿԷ-երորդի Տրդատայ արքայի Հայոց, ԽԸ ամի Շապուհ¹² արքային Պարսից¹³ թագաւորէ Կոստանդիանոս որդի Կոստանդեայ ամս ԼԲ: 52 Տրդատ՝ ԿԷ: 53 Շապուհ՝ ԽԸ: 54 Կոստանդիանոս՝ զառաջինն:

55 Յամին ԾԲ-երորդի Շապուհ արքային Պարսից, Ե-երորդի ամի բարեպաշտին Կոստանդիանոսի կայսեր, վախճանի երանելին Տրդատէս. եւ թագաւորէ Խոսրով որդի նորա ամս ԺԷ: 56 Շապուհ՝ ԾԲ¹⁴: 57 Կոստանդիանոս՝ Ե-երորդն: 58 Խոսրով՝ զառաջինն:

59 Յամին ԿԹ-երորդի Շապուհ արքային Պարսից¹⁵, ԻԲ Կոստանդիանոսի կայսեր՝ թագաւորէ ի վերայ Հայոց Տիրան, որդի Խոսրովայ, ամս ԺԲ: 60 Շապուհ՝ ԿԹ:

1 Միհրդ., Պատկ. Գթաց
 2 Ա ձերբակ
 3 Դ ամս Ե փիս ամս Հ
 4 ԱԲԳԴԵ յամին ԽԹ յերորդի ամի Տրդատայ
 5 ԱԲԳԴԵ զԲուզանդիա
 6 ԱԲԳԴԵ Ժ ամ փիս ԺԹ ամ
 7 Միհրդ. ԺԹ դ. գրչութեամբ՝ թագաւորէ ... ի տեղի իւր (Ե 39). միւս բոլոր ձեռագրերում այս բառերը պակասում են:
 8 Միհրդատեանը վերցրել է փակագծերի մէջ՝ Ե ի սոյն ... ի տեղի իւր (Ե 39), եւ ծանօթագրել. «փակագծիւ եղեայն ոչ գոյր ի բնագրիս. գոր լցուցա՛մ ի միւս օրինակէ»:
 9 ԶԶ, Միհրդ., Պատկ. վախճանի կայսրն յունաց Մաքսիմիանոս, եւ թագաւորէ Գալիանոս:

10 Ա զառաջին
 11 ԱԵ Տրդատէս՝ զԾ
 12 Ա յամի Շապուհ
 13 Ա արքայի Պարսից
 14 Ա Շապուհ՝ զԾԲ
 15 Ա արքայի Պարսից

61 Կոստանդիանոս՝ ԻԲ: 62 Տիրան՝ զառաջինն:

63 Յամի ԻԷ-երորդի Կոստանդիանոսի կայսեր, ի Զ ամի Տիրանայ արքային Հայոց՝ թագաւորէ Ներսէ՛՛՛՛՛՛ որդի Շապհոյ ի վերայ Պարսից ամս Թ: 64 Կոստանդիանոս՝ ԻԷ: 65 Տիրան՝ Զ: 66 Ներսէ՛՛՛՛՛՛ զառաջինն:

67 Յամի ԺԲ-երորդի¹ Տիրանայ արքայի Հայոց թագաւորեն Կոստանդիաս եւ Կոստաս, որդիք Կոստանդիանոսի² բարեպաշտի՝ ամս ԺԴ: 68 Տիրան՝ ամս ԺԲ: 69 Ներսէ՛՛՛՛՛՛ է: 70 Կոստանդիաս եւ Կոստաս՝ զառաջինն:

71 Յամին ԺԲ-երորդի³ Տիրանայ, ⁴եւ Է-երորդ ամի Ներսէ՛՛՛՛՛՛՛ի արքային Պարսից, եւ Ա ամի Կոստանդի⁵ եւ Կոստասայ, որդւոց⁶ Կոստանդիանոսի բարեպաշտի Հռովմայ՝ եկն ի վերայ նորա ի Բասեան գաւառի ի գեաւղն Յոսիայ, մինչ դարձուցանել նմա զՏիրան արքայ ամենայն գերութեամբն հանդերձ, եւ զորդի նորա Արշակ թագաւորեցուցանել եւ արձակել⁷ ի Հայս: 72 Ներսէ՛՛՛՛՛՛՛՛՛ զութերորդն: 73 Կոստանդիաս⁹ եւ Կոստաս՝ զԲ: 74 Արշակ՝ զառաջինն:

75 Յամի չորրորդի Կոստանդեայ եւ Կոստասու, եւ յերրորդի¹⁰ ամի Արշակայ թագաւորեաց Պարսից Որամազդ որդի

Շապհոյ ամս Գ¹¹: 76 Կոստանդիաս եւ Կոստաս՝ Դ¹²: 77 Որամազդ՝ զառաջինն:

78 ¹³Յամի Զ-երորդի Արշակայ արքային Հայոց թագաւորէ ի վերայ Պարսից Շապուհ որդի Որամազդայ՝ ամս Հ¹⁴: 79 Կոստանդիաս եւ Կոստաս՝ Է-երորդն: 80 Արշակ՝ Զ-երորդն¹⁵: 81 Շապուհ՝ զառաջինն:

82 Յամի Թ¹⁶ եւ Ժ-երորդի Շապհոյ արքայի Պարսից, Ի-երորդի չորրորդի ամի Արշակայ արքայի Հայոց, թագաւորէ Յունաց Յուլիանոս՝ ամս Բ: 83 Արշակ՝ ԻԴ: 84 Շապուհ՝ ԺԹ: 85 Յուլիանոս նգովածն՝ զառաջինն: 86 Սա որդի է քեռ մեծին Կոստանդիանոսի. թողեալ զքրիստոնէութիւնն եւ եղեւ կռապաշտ: 87 Ի նոյն աւուրս երանելին Աթանաս հալածեցաւ յԱրիանոսացն, զոր Սոկրատն պատմէ: 88 ¹⁷(Ի սուրբն Կոստանդիանոսէ սկսանի եւ մինչ ի Փոքր Թէոդոսն զանսրբոց եւ զսրբոց գործքն եւ զհայրապետացն զուղղափառութիւնս: 89 Յուլիանոս եւ Գաղիանոս, որդիք Դաղմատիոսի ումեմն, մնացին որբ ի մէկ հաւրէ եւ ոչ ի մաւրէ, զոր սնոյց Կոստանդ բարեպաշտն. յետոյ¹⁸ եղեն կռապաշտ:

90 Կոստի քոյր թագաւորին Կոստանդէ, կին Լիկիանէ թագաւորին, որ ի բռնագբաւսելն մեռաւ):

91 Յամին ԻԶ-երորդի Արշակայ թագաւորին Հայոց եւ ի ԻԱ-երորդի ամի¹⁹ Շապուհ²⁰ արքային Պարսից՝ թագաւորէ

1 Ա ԲԺ աներորդի փխ ԺԲ-երորդի
2 Բոյ. որդիք Կոստանդի
3 Ա յամի ԲԺ աներորդի փխ ԺԲ-երորդի
4 Ա եւ Գ ամի Ներսեհի փխ եւ Է-երորդ ամի Ներսեհի
5 ԱԳԵ եւ Ա Կոստանդին փխ եւ Ա ամի Կոստանդի
6 ԱԴԵ որդւոյ
7 ԱԵ արձակիլ
8 Ա Ներսեխ
9 Ա Կոստանդիա փխ Կոստանդիաս
10 Ա Դ երրորդի փխ եւ յերրորդի

11 Մալխ. ամս Դ (վրիպակ) փխ ամս Գ
12 Ա Կոստա՝ զչորրորդն փխ Կոստաս՝ Դ
13 ԱԲԳԴԵ յամին Է-երորդի Արշակայ
14 Բոյ. ամս Հ / Մալխ. ուղղելի՝ ամս ՀԴ (ծնթ.)
15 ԱԳԵ Արշակ գէ-երորդն / Դ Արշակ գ. երրորդն
16 Ա յամին Թ
17 Փակագծերի մէջ վերցուած հատուածն ընդմիջարկութիւն է:
18 Ա, Միհրդ. եւ սնոյց յետոյ փխ յետոյ
19 ԱԲԳԴԵ Ի ամի փխ ԻԱ-երորդ ամի
20 Ե Շապիոյ

Վաղենտինանոս եւ Վաղէս՝ ամս ժԳ: 92 Արշակ՝ ԻԶ: 93 Շապուհ՝ ԻԱ: 94 Վաղենտինանոս¹ եւ Վաղէս՝ զառաջինն:

95 ²Յամի ԼԴ-երորդի Շապուհոյ արքային Պարսից, ³ԼԹ ամի Արշակայ արքային Հայոց՝ թագաւորէ Յունաց Գրատինանոս զառաջինն:

96 Յամի ԽԴ-երորդի Շապուհոյ արքային Պարսից ⁴(եւ Յուլիանոսի պղծոյ) ըմբռնի Արշակ Հայոց արքայ ի Շապուհոյ արքայէն Պարսից: 97 Եւ տիրէ Շապուհ ի վերայ Հայոց ամս ժԲ սրով եւ հրով եւ գերութեամբ: 98 Ապա ⁵թագաւորէ Յունաց Թէոդոս՝ ամս ժԹ: 99 Շապուհ ⁶ԾԱ, ի տէրութեան ⁷ի վերայ Հայոց՝ զեւթներորդն⁸: 100 Թէոդոսն Մեծ զառաջինն:

101 Յամին ԾԶ-երորդի Շապուհոյ արքային Պարսից, եւ ի Զ-երորդի ամի թագաւորութեանն Թէոդոսի Մեծի, թագաւորեցոյց Թէոդոս զՊապ որդի Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց: 102 Տիրէ ամս ժԳ: 103 Շապուհ՝ ԾԶ⁹: 104 Թէոդոս՝ Զ: 105 Պապ՝ զառաջինն:

106 Յամի ԿԹ-երորդի Շապուհոյ արքային¹⁰ Պարսից, ժԹ-երորդի Թէոդոսի Մեծի, թագաւորէ ի վերայ Հայոց Վարազդատ՝

ամս Զ: 107 Շապուհ՝ ԿԹ: 108 Վարազդատ՝ զառաջինն:

109 Յամի Հ-երորդի Շապուհոյ արքային Պարսից, երկրորդ ամի Վարազդատայ արքայի Հայոց՝ թագաւորէ Յունաց Արկադէոս որդի Թէոդոսի ամս ժԹ: 110 Շապուհ՝ Հ: 111 Վարազդատ՝ զերկրորդն: 112 Արկադէոս՝ զառաջինն:

113 Յամի Ե-երորդի¹¹ Արկադեայ կայսեր, ի Զ-երորդ Վարազդատայ արքայի Հայոց, թագաւորէ Պարսից Արտաշիր որդի Շապուհոյ՝ ամս Դ: 114 Արկադէոս¹² Ե: 115 Վարազդատ՝ Զ: 116 Արտաշիր՝ զառաջինն:

117 Յամի Զ-երորդի Արկադեայ կայսեր, յերկրորդի ամի Արտաշրի արքային Պարսից, թագաւորեն ի վերայ Հայոց Արշակ եւ Վաղարշակ՝ ամս Ե: 119 Արկադէոս՝ Զ: 120 Արտաշիր՝ Բ¹³: 121 Արշակ եւ Վաղարշակ՝ զառաջինն:

122 Ապա թագաւորէ Պարսից Վռամ ամս ժԱ: 123 Արկադէոս¹⁴ ամս Թ: Արշակ եւ Վաղարշակ՝ Դ: 124 Վռամ զառաջինն:

125 Յամի երկրորդի Վռամայ, մետասաներորդի ամի Արկադեայ կայսեր, թագաւորէ ի վերայ Հայոց Խոսրով ոմն հրամանաւ Պարսից արքային՝ ամս Գ: 126 Արկադէոս՝ ժԱ: 127 Խոսրով՝ զառաջինն:

128 Յամի ժԴ-երորդի Արկադեայ կայսեր, եւ ի Զ-երորդի ամի Վռամայ Պարսից արքային՝ թագաւորէ Հայոց Վռամշապուհ արքայ ամս¹⁵ Ը: 129 Արկադէոս՝ ժԴ: 130 Վռամ՝ Զ-երորդն: 131 Վռամշապուհ՝ զառաջինն:

1 Ա Վաղէտինանոս
2 ԱԲԳԴԵ յամին ԼԴ Շապուհոյ (Դ Շապուհ) արքայի
3 ԱԳԵ Լ եւ Թ ամի Արշակայ, Դ եւ Թ ամի Արշակայ
4 Եւ Յուլիանոսի պղծոյ բառերն ընդմիջարկութիւն են
5 Ե թագաւորէ Յունաց բառերից յետոյ երկու տող բաց է թողած, որից յետոյ շարունակում է Թէոդոսն մեծ զառաջինն
6 Ա ԾԱ ամ փի ԾԱ
7 ԱԴ չիք ի վերայ Հայոց / Միհրդ., Պատկ., Մալխ. ի վերայ Հայոց բառերը վերցրել են փակագծի մէջ՝ ելնելով Միհրդատեանի հետեւեալ ծանօթագրութիւնից. «Ի միւս օրինակին ոչ գոյ փակագծիւ եղեալն»:
8 Բոլ. գերկոտասաներորդ փի զեւթներորդն
9 Ա Շապուհ ԾԳ
10 ՏՏ արքայի փի. արքային

11 ԱԲԳԴԵ յամի Ե-երորդի
12 Ա Արկադիոս (եաւ յետոյ)
13 Ա Արտաշիր՝ գԲ
14 Ա Արկադեա
15 Ա Ե չիք ամս

132 Յամին ժԱ-երորդի Վռամայ¹ Պարսից արքայի թագաւորէ Յունաց Ոնորիոս՝ ամս ԻԲ: 133 Վռամշապուհ՝ է: 134 Յագկերտ՝ զառաջինն:

135 Յամի երկրորդի Յագկերտի որդ-ւոյ Վռամայ, եւ յամի երկրորդի Ոնորեայ² կայսեր բարձաւ թագաւորութիւնն Հայոց, որ տեւեաց ամս ՆԵ³: 136 Եւ վախճանեցաւ եւ վճարեցաւ:

ԳԼՈՒԽ Զ

1 ⁴Եւ արդ՝ երկակի կանոնաւ զՊարսից⁵ եւ զՅունաց⁶ հաստատելով նշանակեցից զթագաւորութեան ժամանակն:

2 Արդ՝ թագաւորէ Պարսից Յագկերտ ամս ԻԱ: 3 Եւ Ոնորիոս թագաւորէ Յունաց ամս ԻԲ: 4 Յագկերտ՝ զառաջինն: 5 Ոնորիոս՝ զառաջինն:

6 Յամի Ի-երորդի երկրորդի Ոնորեայ կայսեր թագաւորէ Վռամ որդի Յագկերտի՝ ամս ԻԲ: 7 Եւ յամի երկրորդի Վռամայ թագաւորէ Յունաց Թէոդոս ամս ԻԲ: 8 Եւ Ոնորիոս՝ ԻԲ: 9 Վռամ՝ Բ: 10 Թէոդոս՝ զառաջինն:

11 Յամի Ի-երորդի Թէոդոսի Փոքու թագաւորէ Պարսից Յագկերտ որդի Վռամայ ամս ԺԹ: 12 Եւ յամի Յագկերտի թագաւորէ Յունաց Կոստանդիաս՝ ամս Ա: 13 Յագկերտ՝ զառաջինն:

14 Յամի երկրորդի Յագկերտի թագաւորէ Յունաց Վաղենտիանոս՝ ամս Լ: 15 Յագկերտ՝ զերկրորդն: 16 Վաղենտիանոս՝ զառաջինն:

17 Յամի ԺԸ-երորդի Վաղենտիանոսի⁷ կայսեր թագաւորէ Պարսից Վաղարշ որդի Յագկերտի՝ ամս Դ: 18 Վաղենտիանոս՝ ԺԸ: 19 Վաղարշ՝ զառաջինն:

20 Յամի Ի-երորդի երկրորդի Վաղենտիանոսի կայսեր թագաւորէ Պարսից Պերոզ՝ ամս ԽԸ: 21 Վաղենտիանոս՝ ԻԲ: 22 Պերոզ՝ զառաջինն:

23 Յամի Ժ-երորդի Պերոզ թագաւորէ Յունաց Նարկիսոս ամս Զ: 24 Պերոզ՝ Ժ: 25 Նարկիսոս՝ զառաջինն:

26 Յամի ԺԷ-երորդի Պերոզ արքայի թագաւորէ Յունաց Վռափնոս՝ ամս Գ: 27 Պերոզ՝ ԺԷ: 28 Վռափնոս՝ զառաջինն:

29 Յամի Ի-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Մարկիանոս ամս Ե: 30 Պերոզ՝ Ի: 31 Մարկիանոս՝ զառաջինն:

32 Յամի ԻԵ-երորդի Պերոզի՝ թագաւորէ Լեւոն զառաջինն: 33 Յամին Լ-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Անթիմոս, ամս՝ Զ: 34 Պերոզ՝ ԼԱ: 35 Անթիմոս՝ զառաջինն:

36 Յամի ԽԴ-երորդի⁸ Պերոզ թագաւորէ Յունաց Ուլիմպոս⁹ ամ մի: 37 Եւ ի միւսուամ մի մեւս Զենոն՝ ամ մի: 38 Եւ ի ԽԶ-երորդին Պերոզի՝ թագաւորէ Զենոն ի վերայ Յունաց՝ ամս ԺԷ: 39 Պերոզ՝ ԽԶ: 40 Զենոն՝ զառաջինն:

41 Յամի չորրորդի Զենոնի թագաւորէ Պարսից ¹⁰Զամասպ՝ Բ: 42 Զենոն ի վերայ Յունաց՝ զչորրորդն: 43 Զամասպ՝ զառաջինն:

44 Եւ ի վերայ Ե-երորդի¹¹ ամի Զենոնի կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ՝

1 ԱԲԳԴԵ յամի Ե-երորդի Յագկերտի փիւ յամին ժԱ-երորդի Վռամայ
2 Ա Ոնորիայ
3 Ա չորեքհարիւր եւ հինգ փիւ ՆԵ
4 Վերնագիրը ձեռագրինն է:
5 Ա զպարսիցն
6 Ա զյունաց փիւ զՅունաց

7 Ա Վաղենտիանոս զԺԸ
8 ԱԴԵ յամի ԽԴ-երորդի ամի / Միհրդ., Պատկ. յամի Խ. եւ չորրորդի
9 ԱԳ Ուլիմպոս
10 ԱԳԵ Զամասա / Դ ջԱմասպ / բոյ. Զամասպ Ը փիւ Զամասպ Բ
11 Ա ի վերայ երրորդի

ամս *ԽԱ*: 45 *Զենոն՝ Զ*: 46 *Կաւատ՝ զառաջինն*:

47 *Յամի ԺԳ-երորդի Կաւատայ թագաւորէ Յունաց Անաստաս՝ ամս ԽԵ*: 48 *Կաւատ՝ զԺԴ*: 49 *Անաստաս՝ զառաջինն*:

50 *Յամի Խ-երորդի Կաւատայ թագաւորէ Յունաց Յուստիանոս ամս ԼԸ*: 51 *Կաւատ՝ զԽ*: 52 *Յուստիանոս՝ զառաջինն*:

53 *Յամի երրորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Խոսրով որդի Կաւատայ ամս ԽԸ¹*: 54 *Յուստիանոս՝ զերրորդն*: 55 *Խոսրով՝ զառաջինն*:

56 *Յերեսուն եւ եաւթն ամի Խոսրովայ թագաւորէ Յունաց Յուստիանոս՝ ամս ԺԲ*: 57 *Խոսրով՝ ԼԵ*: 58 *Յուստիանոս՝ զառաջինն*:

59 *Յամի ԺԲ-երորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Պարսից Որմիզդ² որդի Խոսրովայ ամս ԺԲ*: 60 *Յուստիանոս՝ ԺԲ*: 61 *Որմիզդ՝ զառաջինն*:

62 *Յամի երկրորդի Որմզդի թագաւորէ Յունաց Տիբերոս՝ ամս Գ*: 63 *Որմիզդ՝ զերկրորդն*: 64 *Տիբերոս՝ զառաջինն*:

65 *Ի Հինգերորդի ամի Որմզդի թագաւորէ Յունաց Մաւրիկ՝ ամս ԻԱ*: 66 *Որմիզդ՝ Ե*: 67 *Մաւրիկ՝ զառաջինն*:

68 *Յամի Է-երորդի Մաւրկայ³ կայսեր Պարսից Խոսրով որդի Որմզդի՝ ամս ԼԵ*: 69 *Մաւրիկ՝ զԷ-երորդն⁴*: 70 *Խոսրով՝ զառաջինն*:

71 *Յամի ԺԴ-երորդի Խոսրովայ թագաւորէ Յունաց Փոկաս՝ ամս Ը*: 72 *Խոսրով՝ ԺԴ*: 73 *Փոկաս՝ զառաջինն*:

74 *Յամի Ի-երորդի Խոսրովայ Պարսից արքային թագաւորէ Յունաց Երակղոս որ-*

դի Երակղի՝ ամս Ը: 75 *Խոսրով՝ ԻԲ*: 76 *Երակղոս՝ զառաջինն*:

77 *Յամի ԺԷ-երորդի ⁵Երակղի կայսեր թագաւորէ⁶ Պարսից Կաւատ որդի Խոսրովայ՝ ամս Ա*: 78 *⁷Երակղոս՝ ԺԷ*: 79 *Կաւատ՝ զառաջինն*:

80 *Ապա Արտաշիր՝ ամս Գ*: 81 *Երակղոս՝ ամս Ի*: 82 *Արտաշիր՝ զառաջինն*:

83 *Ապա Բթոր բամբիշն դուստր Խոսրովայ՝ ամս Բ*: 84 *Երակղոս՝ ԻԱ*: 85 *Բամբիշ՝ զառաջինն*:

86 *Ապա Յագկերտ՝ ամս Ի*: 87 *Երակղոս՝ ԻԳ*: 88 *Յագկերտ՝ զառաջինն*:

89 *Յամի ԻԴ-երորդի երանելոյն Երակղի կայսեր, եւ ⁸յերկրորդ ամի Յագկերտի⁹ Պարսից արքայի միաբանեալ Իսմայելացիքն¹⁰ ելին արտաքս ի Սինէ անապատէ Հրամանաւ Աստուծոյ՝ առնել անապատ միանգամայն զամենայն երկիր*: 90 *Երակղոս՝ ԻԴ*: 91 *Յագկերտ՝ զերկրորդն*: 92 *Ամռ, արքայ Իսմայելի՝ զառաջինն*:

93 *Բայց զամս եկամտիցն եւ ծառայիցն թագաւորելոցն, որպէս Խոռեմայն եւ զԽոռոս Որմզդին եւ Խոսրովայն եւ զՈրմիզդն, որք բռնութեամբ կալան զթագաւորութիւնն, եւ էր որ ընդ պատառել ազգացն Հակառակութեամբ, ի սոյնս յաւելեալ կարգեցից թիւ. որպէս զկէս ամին*

1 Բռլ. որդի Կաւատայ ամս ԽԵ
2 ԱԴԵ Որմզդի
3 ԱԲԳԴԵ յամին երրորդի մօրկա
4 ԱԲԳԴԵ Մօրիկ՝ զիններորդն

5 Գ չիք Երակղի կայսեր / Ե գրիչը բաց է թողել Երակղի կայսեր թագաւ... բառերը եւ շարունակել է կիսատ մնացած թագաւորէ բառի ...որէ մասնիկից՝ որէ Պարսից Կաւատ
6 Ա որէ փխ թագաւորէ
7 ԱԲԳ Երակղոս / ԺԳ չիք Երակղոս ԺԷ: Կաւատ՝ գառաջինն: Ապա Արտաշիր՝ ամս Գ: Երակղոս՝ ամս Ի: Արտաշիր՝ գառաջինն:
8 ԶԶ յերկրորդ ամի միաբանեալ Պարսից արքայի ընդ իսմայելացիսն արտաքս ի Սինէ անապատէ / Միհրդ., Պատկ. ԶԶ-ին աւելացնում են որ ելին (արտաքս բառից յետոյ) / Մալխ. երկրորդ ամի Յագկերտի Պարսից արքայի միաբանեալ Հրեից ընդ Իսմայելացիսն ..., որ ելին արտաքս ի Սինէ անապատէ
9 ԱԲԳԴԵ յագկերտ գառաջինն
10 ԱԴԵ Իսմայել

Խոռեմայ ի կէս ամին Կաւատայ յաւել եւս ասացից ամ մի:

94 Յամի Թ-երորդի¹ Պարսից արքայի Յագկերտի վախճանի երանելին Երակղէս, եւ թագաւորեն որդիք նորա Կոստանդին եւ Երակղակ: 95 2^ի նմին ամի մեռաւ Կոստանդին դաւեալ ի մաւրէն: 96 Եւ թագաւորէ Երակղակ: Դարձեալ փոխեցաւ Երակղակ, եւ թագաւորէ Կոստաս³ որդի Կոստանդեայ, որ կոչեցաւ յանուն հաւր իւրոյ Կոստանդին: 97 Յագկերտ՝ Ժ-երորդ⁴: 98 Կոստաս՝ զառաջինն:

99 Եւ թագաւորեաց Յագկերտ ի վերայ աշխարհին⁵ Պարսից ամս ի: Յագկերտ՝ ի: 100 Կոստանդին⁶ ԺԱ: 101 Արքայն Իսմայելի՝ ԺԹ⁷:

102 Յերկոտասան ամի Կոստանդի, եւ ի Ի-երորդ ամի Իսմայելացւոց տէրութեանն՝ բարձաւ տէրութիւնն Պարսից որ կալաւ ՇԼԲ ամ⁸:

ԳԼՈՒԽ Է

1 Հայք գկնի բառնալոյ տէրութեանն Արշակունեաց: 2 Բովանդակութիւն անաշխիկայ պատմութեան, յապստամբութենէն Վահանայ մինչեւ ցյառնելն Իսմայելացւոց եւ տիրել յեգիպտոսէ մինչեւ ի Պարսիկս:

3 Եւ եղև ի նուազիլ⁹ ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վռամ-

շապուհ արքայի՝ տիրէ ի վերայ սորա ազգն Կարքեղովմայեցի¹⁰ իշխանութեանն:

4 Խորհուրդ ի ձեռն առեալ ահեղ եւ ահագին՝ հանդերձ միաբանութեամբ դառնաշուք եւ մեծամեծ քաղէիցն եւ ամենայն գլխաւոր նախարարաւքն թագաւորութեան իւրոյ՝ բառնալ ի Հայաստան աշխարհէ զբարեպաշտութեան պտուղս: 5 Ուստի ոչինչ աւգտեցաւ, այլ յոյժ վնասեցաւ, եւ բարեպաշտութիւնն եւս քան զեւս ծաղկեալ պայծառացաւ:

6 Արդ՝ զժամանակս թագաւորութեանն չարագործին Յագկերտի. եւ եթէ ո՛րպէս նա կամէր զաստուածայինն եղծանել կարգս, եւ կամ ո՛րպէս քաջ նախարարացն Հայոց եւ նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպառազէն նիզակակից ընկերաւքն եւ զաւրաւք իւրեանց կազմեալ զինեցան ի պատերազմ, առեալ ի ձեռն զվահանն հաւատոյ, եւ զգեցեալ իբրեւ զգրահ ամրութեան զնախանձն աստուածային բանին, գողցես թէ առաջի աչաց իսկ ականատես դէմ յանդիման տեսանելով ¹¹զ՛ի վերուստ առաքեալ նոցա զպսակն. վասն որոյ արհամարհեալ զմահ, եւ առաւել լաւ համարեալ ¹²մեռանել ի վերայ աստուածային պողոտային. եւ թէ¹³ որպէս ի վերայ նոցա եկին¹⁴ զաւրքն պարսիկ սաստիկ բռնութեամբ, եւ կամ ո՛րպէս ի դիմի հարեալ զիւրեանց կատարեցին զնահատակութիւն, եւ կամ որպէս ի ձեռս հեթանոսաց ըմբռնեալ սուրբ վկայքն Քրիստոսի՝ կատարեցին զնահատակութիւնս իւրեանց յԱպր Շահր մերձ ի Նիւշապուհ քաղաքի, ի տեղւոջն, որ կոչի Թէարքունի – այն ամենայն

1 ԱԲԳԴե յամին իններորդի / Միհրդ., Պատկ., Մալխ. յամի Զ-երորդի
2 Ա. Գմին փխ ի Գմին
3 Բռլ. Կոստոս
4 ԱԳե յագկերտի Ժ-երորդի / Դ ագկերտ ի Ժ-երորդի / Միհրդ., Պատկ., Մալխ. Յագկերտ՝ Է-երորդ
5 Ա. աշխարհիս
6 Աե Կոստանդին / Դ Կոստանդես
7 Բռլ. արքայն Իսմայելի՝ Թ
8 Միհրդ. ՇԼԲ ամ (աշխարհի) / Ա ՇԼԲ ամ: Ե:
9 Մալխ. ի նուազել

10 Ա. Կարբեղովայեցի
11 Ա. զի ի վերուստ. հետագայում՝ զը ի վերուստ
12 Ա. զվեռանել ի վերայ աստուածայեանն / Միհրդ. տեսանել փխ մեռանել
13 Միհրդ., Պատկ. եթէ փխ եւ թէ
14 Բռլ. Էին փխ եկին

ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն:

7 Բայց զայն ամենայն, որ ի Պերոզի ժամանակն եղեալ չարութիւն, եւ զառ ի Խոսրովայ զապստամբութիւնն¹ զՎարդանայ, եւ զգաւրացն Պարսիցն զապստամբելն ի յՈրմզդէ², զմահն Որմզդէի³ եւ զԹագաւորելն Խոսրովայ. զմահն Մաւրկայ եւ զԹագաւորելն Փոկասայ. զառնուլն Եգիպտոսի. զկոտորածն Աղեքսանդրի. զդիմելն Հերակղի⁴ ի կողմանս հիւսիսոյ առ արքայն Թէտալացոց. զյուզարկումն անհուն բազմութեանն ազգաց. զասպատակն Յունաց յԱտրպատական, զառ եւ զաւար, եւ զդարձն ընդ Փայտակարան. զեկ գաւրացն Պարսից յարեւելից զդիմի հարկանել նմա. զպատերազմն որ յաշխարհին Ադուանից. զդարձ կայսերն ի Նախճըւան քաղաքն եւ զկոիւն Արճիշոյ. զզնայն կայսեր անդէն ի սահմանս իւր. զմեւս եւս այլ դիմելն ի վերայ Խոսրովայ. զգործ պատերազմին որ ի Նինուէ. զասպատակն որ ի Տիսբոն քաղաք. զդարձն յԱտրպատական. զմահն Խոսրովայ. զԹագաւորելն Կաւատայ. զհաշտութիւն՝ որ ի մէջ Թագաւորացն երկոցունց. թզողուլն անդրէն ի բաց զսահմանն Յունաց. զդարձ աստուածեան⁵ խաչին ի քաղաքն սուրբ: 8 Յետ այսորիկ զարթուցեալ անհուն բարկութիւն, եւ զվերջին աղէտս հինին⁶ որ ի կողմանս հարաւոյ, եւ թէ ո՛րպէս յանկարծաւրէն շարժեցան բանակքն Իսմայելի, եւ ի վայրկեան ժամանակի վանելով զգաւրութիւն Թագաւորացն երկոցունց⁷ կալան յՅեգիպտոսէ մինչեւ յայսկոյս գետոյն մեծի Եփրատայ եւ ցսահման Հայաստա-

նեայց, եւ յեզերէ ծովուն մեծի Արեւմտից⁸ մինչեւ ի դուռն Թագաւորութեանն Պարսից զամենայն քաղաքս Միջագետաց Ասորւոց եւ զՏիսբոն եւ զՎեհ Արտաշիր եւ զՄարանդ, զՀամադան⁹ մինչեւ զԳանձակ քաղաք եւ ցՀրատն մեծ՝ որ յԱտրպատական գաւառի – զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ ¹⁰կարճառաւտիւ ձեզ վիպասանել:

ԳԼՈՒԽ Ը

1 Ապստամբութիւն Վահանայ ի Պերոզէ: 2 Մահ Պերոզի եւ թագաւորել Կաւատայ: 3 Վահան կարգի մարգպան Հայոց: 4 Մահ Կաւատայ եւ թագաւորել Անուշրուվան Խոսրովայ: 5 Ապստամբութիւն Վարդանայ: 6 Պատերազմ ընդ նմա Խոսրովայ եւ պարտութիւն:

7 Եւ եղեւ յամս Պերոզի արքայի Պարսից բարձումն ամենայն¹¹ իշխանութեանցն եւ կարգաց եւ աւրինաց քրիստոնէութեան, եւ այնպիսի վտանգ նեղութեան հալածանաց եւ քամահանաց ի վերայ հասեալ իշխանաց, մինչ զի ի բաց ընկեցին յինքեանց զլուծն ծառայութեան: 8 Եւ ապստամբեալ ¹²Մամիկոնեանն Վահան՝ հալածեաց զՊարսիկս¹³ եւ բռնաբարայն¹⁴ գրաւեաց զիշխանութիւնն:

9 Յայնժամ արձակէ ի վերայ նորա Պերոզ արքայ՝ Հոնաց զաւր յոյժ: 10 Եւ հրաման տայ խիստ սաստիւ՝ սպանանել զապստամբն, եւ հարկանել զամենայն արու սրով սուսերի: 11 Ընդդէմ սորա աճապարեալ Վահան սպարապետ Լ հազարաւ

1 Պատկ. զապստամբութիւն
2 Բոյ. զապստամբելն ի յՈրմզդիէ
3 Բոյ. գմահն Որմզդայի
4 Ա. Հերակղի
5 Ա. աստուածայեան
6 Ա. հեմին
7 Ա. երկոցունցն

8 Բոյ. արեւմտից փիս Արեւմտից
9 Ա. եւ գՀամադան / ՏՏ գՀամատան
10 Ա. կարճառաւտի ձեզ / ՏՏ կարճառաւտ ձեզ
11 Ա. սսեմ այն փիս ամենայն
12 Ա. Վահան Մամիկոնեան փիս Մամիկոնեանն Վահան
13 Ա. գՊարսիկն
14 Ա. բռնաբար այն

ընտիր¹ վառելոց, կարգին² գունդ առ գունդ եւ ճակատ առ ճակատ, եւ յարձակին ի միմեանս ի ձայն փողոյ տազնապաւ ի դաշտին Գերանայ:

12 Անդ յաւզնութիւն հասեալ աստուածեան Բանն, հողմն սաստկացուցեալ զմրրիկ փոշւոյն՝ զգաւրաւքն. Պարսից հեղոյր, իբրեւ զմութ խաւարի զնոսա պատէր ի միջաւրեայ³ ժամանակի: 13 Սաստիկ կոտորած լինէր երկոցունց կողմանցն, եւ ոչ գոյր ընտրել⁴ զզի անկելոցն, ո՛չ զպարսիկ եւ ո՛չ զհայ զաւրական: 14 Բայց սակայն զաւրացեալ զաւրն Հայոց վանեցին անդ կոտորածով զզաւրն Պարսից, եւ զմնացեալսն փախստական արարեալ հալածական տանէին. եւ դարձան յաղթութեամբ մեծաւ:

15 Այս Վահան ժողովեաց եւ զհարկս աշխարհիս⁵ Հայոց եւ շինեաց զեկեղեցիս⁶ մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի⁷ եւ ի Դըւնի եւ ի Մզրայս եւ ի բազում տեղիս աշխարհիս Հայոց: 16 Եւ շինեալ զերկիրս⁸ նորոգեաց վերստին:

17 Իսկ Պերոզի արքային Պարսից, թէպէտ եւ կամեցաւ վերստին զաւրս գումարել ի վերայ աշխարհիս Հայոց, ո՛չ եղեւ նմա պարապ. զի համբաւք թշնամեացն ստիպէին զնա ի կողմանցն Քուշանաց եւ յայնմ մարզէ⁹. զի ինքն իսկ արքայն Քուշանաց խողացեալ գայր ի վերայ նորա զաւրու մեծաւ:

18 Եւ նորա գումարեալ զաւրս իւր՝ զնաց ընդդէմ նորա տազնապաւ մեծաւ: 19 Ասէ. «Երթայց նախ առաջին զնանցից, եւ ապա պարապաւ դարձեալ զնացից ի Հայս, եւ մի՛ խնայեսցէ սուր իմ ի նոսա, յարս¹⁰ եւ ի կանայս»:

20 Եւ ինքն անցեալ փութանակի եհաս ընդդէմ թշնամւոյն յարեւելս. եւ եղեւ պատերազմն սաստիկ. հարին եւ կործանեցին զբազմութիւն զաւրացն Պարսից, մինչեւ ո՛չ մնաց ի նոցանէն ապրեալ եւ փախստական: 21 Եւ մեռաւ Պերոզ արքայ ի պատերազմին հանդերձ եւթանեքումբք որդւովքն:

22 Եւ ապա յայնժամ թագաւորեաց Կաւատ որդի նորա ի վերայ աշխարհին Պարսից: 23 Եւ զի բեկեալ էր զաւրութիւն բազմութեանն զաւրաց իւրոց, ո՛չ ընդ ումեք կամեցաւ ունել գործ պատերազմի, այլ արար խողաղութիւն յամենայն կողմանց. առնէ եւ ընդ Հայոց հաշտութիւն, եւ կոչէ զՎահան ի դուռն, եւ մեծարէ զնա մեծապէս պատուով: 24 Եւ տայ նմա զմարզպանութիւն աշխարհին եւ զՄամիկոնեաց տէրութիւնն¹¹, եւ երդում առ բազում¹² ի ծառայութիւն, եւ արձակէ բարեաւ յերկիր իւր:

25 Յետ Վահանայ կալաւ զիշխանութիւնն Վարդ Պատրիկ եղբայրն նորա սակաւ ինչ ժամանակ, եւ մեռաւ: 26 Զկնի նորա եկին մարզպան պարսիկք. ապա ո՛չ կարացին պատերազմիլ¹³ Հայք, ի հնազանդութեան¹⁴ կացին մինչեւ ցՍուրէնն մարզպան եւ ցՎարդանն Մամիկոնէից տէրն:

27 Եւ եղեւ ի ԽԱ ամի թագաւորութեան Խոսրովայ որդւոյ Կաւատայ՝ ապս-

1 Ա ընդիր
2 Ա կարգեմ
3 Ա ի մէջ արեւ
4 Ա ընդրել
5 Միհրդ., Պատկ. աշխարհիմ
6 Միհրդ., Պատկ. եկեղեցիս
7 Բռլ. քաղաք
8 ՏՏ գերկիրմ
9 Միհրդ., Պատկ. Քուշանաց: Եւ յայնմ մարզէ / Ա մարզէ փիւ արեւ. յետոյ սրբագրուել է մարզէ / Պատկ. արեւ, բայց հետեւելով Միհրդատեանիմ տպագրել է մարզէ:

10 Ա յարս փիւ յարս
11 Ա, Պատկ., Միհրդ. տէրութիւն
12 Ա արդ բազում փիւ առ բազում
13 Մալիս. պատերազմել
14 Ա ի հնագանդութիւն

տամբեաց Վարդան եւ ի բաց եկաց ի ծառայութենէ թագաւորութեանն Պարսից հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեաւք: 28 Սպանեալ զՍուրէնն մարդպան յանկարծաւրէն ի Դուին¹ քաղաքի՝ առին զաւար բազում եւ գնացին ի ծառայութիւն Յունաց:

29 Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, եւ խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զգիւան աշխարհին Սիւնեաց ի Դըւնայ ի Փայտակարան քաղաք, եւ կարգեսցէ զքաղաքն ի շահմար Ատրպատականի, զի մի՛ եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: 30 Եւ կատարէր հրամանն:

31 Իսկ առ Հայոց երդնոյր թագաւորն Յունաց, եւ հաստատէր զնոյն ուխտ՝ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց, երանելոյն Տրդատայ եւ Կոստանդիանոսի. եւ տայր նոցա զզաւրսն կայսերական յաւգնութիւն: 32 Եւ նոցա առեալ զզաւրն՝ դիմեցին ի վերայ քաղաքին Դըւնայ եւ պաշարեալ կործանեցին ²ի վերուստ մինչեւ ի վայր, եւ հալածեցին զզաւրն Պարսից որ ի նմա կային:

33 Բայց եհաս ի վերայ նոցա յանկարծաւրէն խռովութիւն մեծ, զի զեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արարեալ համբարանոցս Պարսիկքն³, հարին հուր եւ այրեցին. վասն որոյ եղեւ նոցա խռովութիւն մեծ:

34 Գայ ապա ի վերայ նորա Միհրանն⁴ Միհրեւանդակ ի հազարաւ զաւրու եւ փղաւք բազմաւք: 35 Եւ եղեւ պատերազմ մեծ ի դաշտին Խաղամխեայ. եւ հարեալ զզաւրն Պարսից անհնարին հարուա-

ծովք մաշէին ի սուր սուսերաց, զփրղսն զամենայն թափէին: 36 Եւ Միհրանն⁵ սակաւուք պրծեալ գնացին յերկիրն իւրեանց:

37 Այս այն Վարդան է, յորոյ⁶ վերայ եկն ինքն արքայն Պարսից, կոչեցեալ Անուշ Ըռուան Խոսրով, հանդերձ բազմութեամբ սպառազէն զաւրացն⁷ եւ փղաւք բազմաւք, եւ ճանապարհ կալեալ ընդ գաւառն Արտազու՝ գնաց ընդ Բագրեւանդ, զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւ: 38 Եւ կալեալ ճանապարհ գնաց ի Մեղիտինէ⁸ եւ բանակեցաւ դէմ յանդիման նորա:

39 Եւ ի վաղուեան առաւաւտուն հապճեպ ստիպով կարգեն գունդ առ գունդ եւ ճակատ առ ճակատ, եւ բաղխէին զմիմեանս պատերազմաւ: 40 Եւ սաստկացաւ պատերազմն ի վերայ երեսաց երկրի, եւ խմբեցաւ պատերազմն յոյժ. եւ մատնեաց Տէր ի պարտութիւն զթագաւորն Պարսից եւ զաւրս նորա զամենայն: 41 Եւ խորտակեցան առաջի թշնամեացն սրով սուսերի, եւ փախեան յերեսաց նոցա սաստիւ տագնապաւ. ո՛չ գիտելով զճանապարհս փախստեան իւրեանց՝ երթեալ ամացան⁹ ի գետն մեծ, որ կոչի Եւփրատէս: 42 Եւ ուռուցեալ ի վեր ջուրն՝ խաղացոյց զբազմութիւն փախստականացն իբրեւ զբազմութիւն մարախոյ, եւ ո՛չ կարացին յաւուր յայնմիկ ճողոպրել բազումք: 43 Բայց թագաւորն մազապուր ¹⁰պրծեալ սակաւուք՝ ի փրղս եւ ի ձին ապաստան¹¹

1 Միհրդ., Պատկ. ի Դըւին
2 Պատկ., Մալխ. չիփ ի վերուստ միւնչեւ
3 Ա. պարսիկսն
4 Ա. Միրիանն (ճաւի այլուր)

5 Ա. Միրիանն. այսպէս է ճաւի Պատկ. ճեռագրում:
6 Ա. յորոյ
7 Ա. զորաց
8 ԶԶ, Միհրդ., Պատկ. տեղի մի փխ Մեղիտինէ
9 ԶԶ, Միհրդ., Պատկ. ամրացան փխ ամացան
10 Ա. փրծեալ սակաւուք ի փեղս
11 Ա. ապստամբ փխ ապաստան (այսպէս է ճաւի Միհրդատեանի միւս օրինակը)

եղեալ, փախստական ընդ Աղձնիսն անդ-
րէն ի կայեանս¹ իւր երթայր:

44 Եւ նորա առին զբանակն ամենայն
Հանդերձ արքունական գանձիւքն: 45 Եւ
կալան զբամբիշն եւ զբանուկան² եւ թա-
փեցին զմաշապերճանն³ ամենայն, դես-
պակն ոսկեղէն բազմաքանքար, որ էր ա-
կամբք⁴ պատուականաւք եւ մարգարտաւ
յաւրինեալ, որ անուանեալ կոչէր ի նո-
ցունց դեսպակ փառաց: 46 Առաւ եւ
Հրատն, զոր ընդ ինքեան շրջեցուցանէր
թագաւորն Հանապազորդ յաւգնականու-
թիւն իւր, որ մեծագոյն համարեալ էր քան
զամենայն կրակ, որ կոչէր ի նոցունց Ա-
թաշ. հեղձաւ ի գետն Հանդերձ մովպետան
մովպետաւ եւ այլ բազմութեամբ մեծա-
մեծ⁵ աւագաց: 47 Յամենայն ժամ աւրհ-
նեալ է Աստուած:

ԳԼՈՒԽ Թ

1 Ի Քրիստոս հաւատալ եւ մկրտիլ
Անուշրոուան Խոսրովայ: 2 Մարգ-
պանք եւ զաւրավարք Պարսից որ
եկին ի Հայս յետ Վարդանայ մինչեւ
ցրարձումն Սասանեան տէրու-
թեանն:

3 ⁶Այս Խոսրով, որ կոչեցաւ Անուշ Ը-
ռուան՝ ի ժամանակս իւրոյ թագաւորու-
թեանն, յառաջ քան զապստամբութիւնս⁷
զայս, հաստատեաց զերկիր, քանզի էր
խաղաղասէր եւ աշխարհաշէն: 4 Եւ ի լի-
նել ապստամբութեանն այնորիկ, յայնմ
հետէ ընդոստուցեալ զարթեալ ի բարկու-
թիւն, զանձն անվնաս համարեալ իբր թէ՛

«Հայր էի ամենայն երկրի⁸, եւ ոչ տէր, եւ
անուցեալ զամենեսեան իբրեւ որդի եւ սի-
րելի: 5 Եւ արդ՝ ասէ, ի նոցանէ խնդրեսցէ
Աստուած զարիւնս զայս»: 6 Այս Խոսրով
ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն կա-
պեաց զՊահակն⁹ Ճորայ եւ Աղուանից.
կալաւ ձերբակալ զարքայն Եգերացւոց, եւ
առ մարտիւ զԱնտիոք Պիսիդացւոց, եւ
գերեալ նստոյց առ թագաւորական կայա-
նին:

7 Շինեալ քաղաք եւ անուանեալ զնա
Վեհ Անջատոք Խոսրով, զոր անուանեալ
Շահաստան-ի Նոկ-նոյ¹⁰ կոչեն: 8 Եւ առ
սա զԴարա եւ զԿաղնիկոս, գերեաց աս-
պատակաւ եւ զկողմանս Կիւղիկէացւոց:

9 Կալաւ սա զթագաւորութիւնն ամս
ԽԸ: 10 Եւ ի ժամ վախճանին¹¹ ծագեալ
փայլականացեալ զնովաւ լոյս աստուածա-
յին Բանին. քանզի հաւատաց ի Քրիստոս,
ասելով այսպէս. «Հաւատամ ի միայն Աս-
տուած, յայն՝ որ արար զերկինս եւ զեր-
կիր, զոր քրիստոնեայքդ պաշտել խոստո-
վանին, Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ. զի
նա միայն է Աստուած, եւ այլ ո՛չ գոյ
¹²բաց ի նմանէ, զոր քրիստոնեայքն պաշ-
տեն»:

11 Եւ հրաման տուեալ սպասաւո-
րացն՝ զմոզպետն արձակել արքունի ի հե-
ռագոյն տեղիս ի գործ, եւ զայլսն մերժեալ
յարքունական կայենիցն, եւ կոչեալ զե-
պիսկոպոսապետն, որ Երան¹³ կաթողիկոս
անուանի, մկրտեցաւ ի նմանէ, եւ հրամա-
յեաց ժամ առնել ի սենեկին, եւ ընթեռնուլ
զտէրունական Աւետարանին զպատգամս,
եւ հաղորդեցաւ կենդանարար¹⁴ մարմնոյ
եւ արեանն Տեառն, եւ հրաժարեալ ի կա-

1 Միհրդ., Պատկ. ի կայանս (նաեւ այլուր)
2 Բոլ. գրանակն փխ գրանուկան
3 ՏՏ Մաշապերճանն (մեծատառով)
4 Ա. ակամք
5 Միհրդ., Պատկ. մեծամեծաց
6 Ա. Այս Խոսրով որ կոչեցաւ բառերի դիմաց լու-
սանցում կարմիր քանաքով գրուած է է տառը,
որի նշանակութիւնը ձեռագրում յայտնի չէ:
7 Ա. զապստամբութիւն

8 Ա. յերկիր փխ երկրի
9 Պատկ., Մայլս. զպահակն
10 ՁՁ, Միհրդ., Պատկ. Շահաստանին Ոկնոյ
11 Միհրդ., Պատկ. վաղճանին (եւ այլուր)
12 Ա. բայց ի նմանէ
13 ՁՁ, Միհրդ. էր անդ փխ երան
14 Բոլ. ի կենդանարար փխ կենդանարար

թողիկոսէն¹ եւ ի տէրունեան Աւետարանէն՝ եւ արձակեն զնա յիւր տեղին:

12 Եւ ապա զկնի սակաւ ինչ աւուրցննջեաց ի բարւոք ծերութեան իւրում. եւ բարձեալ զմարմին² նորա քրիստոնէիցն՝ տարեալ եղին ի շիրիմս թագաւորացն: 13 Եւ թագաւորէ Որմիզդ որդի նորա յետ նորա:

14 Եւ արդ՝ այս են զաւրավարք արքային Պարսից, որ եկին մի ըստ միոջէ յերկիրս Հայոց՝ յապստամբութենէ Վարդանայ Մամիկոնէից տեառն որդւոյն Վասակայ, մինչեւ ցայսաւր ժամանակի: 15 Ոմանք մեռան ի պատերազմի, եւ ոմանք պատերազմեցան, եւ ոմանք յաղթութիւն գործեցին եւ գնացին:

16 Յորժամ սպանին զՍուրէն մարդպան՝ ի նմին ամի եկն Վարդան Վշնասպ ոմն, եւ գործ ինչ ո՛չ կարաց գործել³. եկաց ամ մի եւ գնաց:

17 Ապա եկն եւ Գողոնն Միհրանն ի հազարաւ զաւրաց սպառազինաց եւ փղաւք բազմաւք, եւ ունէր նա⁴ ընդ ինքեան սատարս բազումս ի ճամբարէ անթիւ ազգացն, որ բնակեալն են ընդ⁵ լեռնակողմամբն Կովկասու ազգք Հոնաց, եւ հրաման յարքայէն՝ զի անճետս արասցեն զարս ի յաշխարհէն Հայոց, խլել, բրել, յատակել եւ անխնայ⁶ յերկիր կործանել: 18 Եւ եկեալ նա, բայց եթէ ուրեք յանմատոյց ամրոցաց ուրեմն մնացեալ ապրեցան մարդիկ եւ կամ թէ՛ ուրեք ի հեռագոյն աշխարհս փախստական գնացին: 19 Բայց սակայն ո՛չ կարացին բազումք ճողոպրել. քանզի զորս գտանէին՝ սուր ի վերայ ե-

ղեալ սատակէին: 20 Սա արար կռիւ մի ի Վիրս, եւ պարտեցաւ: 21 Եկն ի Հայս, եւ առ զԱնկղ սուտ երգմամբ:

22 Փիլիպպոս, Սիւնեաց տէր. արար կռիւ մի ընդ քաղաք եւ ընդ Խաղամախիս. եւ [վերստին]⁷ կռիւ մի ի Վանանդ, ի յՈւթմսու գեղ, եւ յերկոսեանն պարտեցաւ. եկաց նա ամս է եւ գնաց:

23 ⁸Ապա եկն ինքն արքայն Անուշ Ըռուան Խոսրով, որպէս ասացի, եւ արար պատերազմ մի մեծ ի Մեղիտինէ⁹, յորում պարտեցաւ եւ գնաց:

24 Ապա եկն Տամ Խոսրով, եւ արար երկու կռիւս, մի՝ ի Բասեան ի Բոլորապահակի, ուր Մուրց եւ Երասխ խառնին, եւ մի՝ ի Բագրեւանդ, ի Կըթնի: 25 Եւ յերկոսինն յաղթութիւն գործեաց մեծամեծ. եկաց երկուս ամս եւ գնաց:

26 Ապա եկն Վարազ¹⁰ Վզուրն եւ արար կռիւ մի ի Վանանդ ի յՈւթմսու գեղ, որ եւ նախ վանեցաւ, եւ ապա յաղթեաց. եկաց ամ մի եւ գնաց:

27 Ապա եկն ասպետն մեծ պարթեւն եւ պահլաւն¹¹, եւ արար կռիւ մի ի Շիրակաւանին¹² եւ յաղթեաց. եկաց եւթն ամ եւ գնաց:

28 Ապա Հրահատն մարդպան, որ գնաց ի Մրծունին իւրայնոցն սատար ի պատերազմ. եւ անդ¹³ նոքա պարտեցան եւ ապա յաղթութիւն ստացան: 29 Եւ անտի դարձեալ՝ արար կռիւ մի ի Բզնունիս ի

1 Ա կաթաղիկոսէն (միշտ)
2 Ա գմարմինս
3 Դ, Միհրդ., Պատկ. ոչ գործեաց փիս ոչ կարաց գործել
4 Ա սա փիս նա
5 ՁՁ, Միհրդ., Պատկ. ընդ որ բնակեալն են փիս որ բնակեալն են ընդ
6 Պատկ. անխնայ փիս եւ անխնայ

7 Բոլ. չի՛վ վերստին:
8 ՁՁ, Միհրդ., Պատկ. Ապա եկն ին՛քն արքայն Անուշ Ըռուան Խոսրով, որ բառերից յետոյ խախտուած է տեքստի ընդօրինակութեան հերթական յաջորդականութիւնը, եւ բնագիրն ընդօրինակուած է հտեւատառութեամբ: Վերջինս կարգաւորել է Մայխասեանցը:
9 Բոլ. Մեղիտինէ
10 Ա Վարազն
11 Ա պալիւան
12 Միհրդ., Պատկ. ի Շիրակ աւանին
13 Ա անդի

Ծաղկաջուրն եւ յաղթեաց. եկաց չորս ամիս՝ եւ գնաց:

30 Ապա եկն Հրատրին Դատան՝¹ մարդպան: 31 Ապա այնուհետեւ ոչ կարացին Պարսիկք պատերազմաւ գրէմ ունել զաւրացն Յունաց²: 32 Առ սովաւ սպանաւ Որմիզդ, եւ թագաւորեաց որդի նորա Խոսրով: 33 Եկաց ամս երկու եւ գնաց:

34 Ապա եկին սահմանակալք պարսիկք մինչեւ ցսպառումն խաղաղութեանն՝

որ ի մէջ Պարսից եւ Յունաց եւ ի մէջ թագաւորացն երկոցունց՝ Մաւրկայ եւ Խոսրովայ:

35 Եւ ապա Վընդատականն: 36 Ապա Խորականն: 37 Զսա սպանին զաւրք Պարսից ի Գառնի, եւ ինքեանք ապստամբեալք գնացին ի Գեղումս: 38 Ապա Մերակբուտն: 39 Ապա Յազդէնն: 40 Ապա Բուտմազ: 41 Ապա Հոյիմանն:

1 Ա Հրարտին Տատան

2 Ա յունացն

ՄԱՏԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԵԱՆ

Պատմութիւն թագաւորական

1 Վէպ արիական, վանուան տիեզերական, հէն Սասանական՝ յԱպրուէզն խոսրովեան, որ հրդեհեալ բոցացոյց զառ ի ներքոյս ամենայն, դղորդեալ զծով եւ զցամաք, զարթուցանել զկործանումն¹ ի վերայ ամենայն երկրի:

2 Եւ արդ՝ ես ճառեցից զեղելոցն յերկրի զանցից կործանմանն² առասպելս վիպասանելով, զի վերուստ³ զարթուցեալ⁴ սրտմտութիւն, եւ զառ ի ներքոյ բորբոքեալ զբարկուցիւն. զհրոյն եւ զարեան հեղեղս⁵ եւ զհինիցն⁶ արշաւանս. եւ զմահաբերն ասպատակ, զգոչիւն դիւաց եւ զաղաղակ վիշապաց, զագանց քաւեաց եւ զարանց հսկայազանց, քաջաց սպառազինաց հեծելոց, յարեւելից յարեւմուտս, ի հիւսիսոյ ի հարաւ: 3 Եւ զՀարաւայինն զարթուցեալ⁷ մեծաւ բորբոքմամբ⁸ յարձակեալ ի վերայ միմեանց, եւ կատարել⁹ զհրամանն բարկութեան Տեառն ի վերայ ամենայն երկրի. որք իբրեւ զմրրիկ աւզոյ թռուցեալ փոթորկեալ ընթացեալ՝ ապականել զառ ի ներքոյս ամենայն, աւարել զլերինս եւ զբլուրս, պատառել զղաշտս վայրաց¹⁰, եւ խորտակել զվէմս եւ զքարինս ի ներքոյ գարշապարաց երիվարաց եւ յառաթուր սմբակաց:

4 Եւ արդ՝ ասացից զվէպս ի կործանիչն եւ յապականողն խոսրով, յԱստուծոյ անիծեալն:

ԳԼՈՒԽ Ժ

1 Թագաւորել Որմզդի եւ կոտորել զնախարարս. Վահրամ Միրիեւանդակ հարկանէ զՄասուրս: 2 Որմիզդ զչարի ընդ սակաւ աւարամասնն: 3 Զարի Վահրամայ ապստամբին յՈրմզդէ եւ առնեն իւրեանց թագաւոր զՎահրամ: 4 Դիմումն Վահրամայ ի վերայ Որմզդի: 5 Նախարարի սպանանն զՈրմիզդ եւ կացուցանեն թագաւոր զորդի նորա զԽոսրով: 6 Փախուստ Խոսրովայ յերեսաց Վահրամայ:

7 Եւ եղեւ յետ մահուանն խոսրովայ որդւոյ Կաւատայ, եւ թագաւորել որդւոյ նորա Որմզդի ի վերայ աշխարհին Պարսից. որոյ մայր իւր դուստր էր Խաքանայ մեծի արքային Թետալացոց, կին խոսրովայ. հաւր սորա անուն Կայէն, որ թէպէտ¹¹ ի հայրենեաց մեծագոյն՝ եւս առաւել մեծագոյն եւ զագանագոյն ի մայրենեաց կողմանէ:

8 Քանզի եբարձ սա զամենայն նախարարս եւ զնախնիս եւ զտունս բնակագոյնս յաշխարհէն Պարսից: 9 Սպան սա զասպարապետն մեծ, զպարթեւն եւ զպահլաւն, որ էր ի զաւակէ Անակայ մահապարտի. զոր առեալ դայեկաց ի հինէ անտի խոսրովայ արքայի Հայոց՝ փախուցին ի դուռն արքունի¹² իւրեանց՝ ի կողմանս Պարսից: 10 Եւ կատարեաց արքայն ի վե-

1 Ա զկործումն

2 Ա կործանման

3 Ա վիպասելով զի վերուստ

4 Բոյ. զարթուցանել

5 Բոյ. հեղեղել

6 Ա զհեցիցն

7 Ա Միրիզդ. եւ զարթուցանել փխ զարթուցեալ

8 Ա բորբոքմամբ մեծաւ

9 Միրիզդ, Պատկ. կատարեալ

10 Ա վայրեաց

11 Ա թէպէտ եւ

12 Ա արքունին

բայ նորա զպարգեւան խոստացեալս հաւրն նորա Անակայ զբուն իսկ զպարթեւական զպալհաւն անդրէն դարձուցեալ¹ թագ կապեալ մեծարեաց, եւ արար իւր երկրորդ թագաւորութեանն:

11 Եւ էին երկու որդիք սպարապետիս այսորիկ, անուն միոյն Վնդոյ եւ երկրորդին՝ ²Վստամ. զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի, եւ Վստամ պրծեալ³ գնաց փախստական. եւ ո՛չ սակաւ ինչ պատերազմունս զարթոյց սա յաւուրսն⁴ յայնոսիկ շուրջ զիւրեաւ:

12 Եւ եղև ի ժամանակին յայնմիկ⁵ Վահրամ ոմն Մերհեւանդակ, իշխան արեւելից կողմանց աշխարհին Պարսից, որ հարկանէր քաջութեամբ իւրով զգաւրս թետալացւոց եւ բռնութեամբ ունէր զԲահլ եւ զամենայն երկիրն Քուշանաց, մինչեւ յայնկոյս գետոյն մեծի, որ կոչի Վեհոտ, եւ մինչեւ ցտեղին, որ կոչի Կաղբիոն: 13 Քանզի զանց արար յայնկոյս նիզակի քաջին Սպանդիատայ, զորմէ ասեն բարբարոսքն, եթէ հասեալ նա պատերազմաւ⁶ մինչեւ ցայս վայր, ցցեալ զնիզակ իւր ի գետնի:

14 Յայնժամ արարեալ Վահրամայն այնորիկ պատերազմն ընդ⁷ մեծի արքային Մազքթաց, որ էր ի կողմանն⁸ յայնմիկ, յայնկոյս գետոյն⁹ մեծի՝ եհար զբազմու-

թիւն զաւրացն, եւ սպան զթագաւորն ի պատերազմի. եւ ըմբռնեալ յափշտակեաց զամենայն զգանձս¹⁰ թագաւորութեանն այնորիկ:

15 Յայնժամ առաքէ առ արքայն Պարսից ի ձեռն հրեշտակաց իւրոց հրովարտակա աւետաւորս¹¹, եւ սուղ ինչ աւարամասն¹² ի մեծամեծ գանձուցն հասելոց յաւարէ ասպատակին, նշանակ թագաւորութեանն ի պատուական իրացն, եւ զամենայն զգանձն զաւրուն շնորհէ ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան:

16 Արդ՝ իբրեւ տեսեալ թագաւորին Որմզդի զհրեշտական եկեալս աւետաւորս, եւ ընթերցեալ զգիրս ողջունի զաւրացն, եւ ընկալեալ զընծայսն աւարամասն ի պատուական յարքունական¹³ գանձուցն, թէպետ եւ ինդացեալ վեր ի վերոյ զմարդկան զմիտս հաճէր՝ այլ ի ներքուստ ցասմամբ բարբառեալ ասէր. «Ընթրիքն առաւել մեծագոյն, եւ զնշանն ի պատառոյս¹⁴ ճանաչեմ. բայց յայնչափ սաստիկ գանձուցն ոչ էր արժան այնչափ¹⁵ հասանել յարքունիս»:

17 Յայնժամ փոխանակ աւետաւոր հրովարտակին հրամայէ գրել¹⁶ հրովարտակ առաւել ցասմամբ, եւ արձակէ ի գնդէն համահարզանց եւ փուշտիպանացն արքունի, զի երթիցեն առ զաւրն, եւ զգանձն զամենայն ի միջի արասցեն:

18 Եւ նոցա երթեալ սկսան պահանջել:

19 Յայնժամ ընդոստուցեալ զաւրն ամենայն, սպանին զհաւատարիմս արքային, եւ ի բաց կացեալ ի ծառայութենէ նորա՝ զՎահրամ նստուցին թագաւոր իւ-

1 ԶԶ, Միհրդ., Պատկ. փախուցեալ փխ դարձուցեալ
2 ԶԶ, Միհրդ., Պատկ. Վստամ բառին յաջորդում է ոչ թէ զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականի եւ նրանց յաջորդող բառերը, այլ մեզ հասած ձեռագրերում ետեւադաստիկութեամբ դասաւորուած թերթերի տեքստը: Թիւ 2639 ձեռագրում Վստամ բառով վերջանում է ձեռագրի 501ր թերթի երկրորդ սիւնակի 8-րդ տողը:
3 Ա. փրծեալ
4 Ա. յաւուրն
5 Բոյ. յայնոսիկ փխ յայնմիկ
6 ԶԶ, Միհրդ. պատե բազմաւ փխ պատերազմաւ
7 Ա. չիբ ընդ
8 Միհրդ., Պատկ. ի կողմանս
9 Ա. գետնի

10 Միհրդ., Պատկ. զգանձ
11 Բոյ. աւետաւոր
12 ԶԶ, Միհրդ., Պատկ. աւարաւն փխ աւարամասն:
13 Միհրդ., Պատկ. արքունական
14 ԶԶ, Միհրդ., Պատկ. ի պատուոյս փխ ի պատառոյս:
15 Ա. յանչափ
16 Ա. գրով փխ գրել

րեանց: 20 Երդուժն կնքեցին ըստ աւրինի իւրեանց. միաբանեցան եւ դարձան յարեւելից եւ դիմեցին յԱսորեստան, զի սպանցեն զԹագաւորն իւրեանց զՈրմիզդ, եւ բարձցեն զտունն Սասանական, եւ հաստատեսցեն զՎահրամ յաթոռ Թագաւորութեանն: 21 Եւ փութանակի ժողովեալ եւ առեալ գնացեալ զբազմութիւն քաջ եւ մարտիկ ազգացն արեւելից:

22 Արդ՝ մինչեւ ցայս այսպէս շփոթ ամբոխի ի մէջ Պարսից աշխարհին լեալ՝ Յովհան պատրիկ¹ եւ զաւրք Յունաց պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն Դըւնայ, մարտուցեալ ընդ նմա մեքենայիւքն՝ մերձ էին ի կործանել զպարիսպն: 23 Իսկ² իբրեւ եհաս լուրս այս՝ թողին գնա եւ գնացին. ճանապարհ կալեալ յԱտրպատական՝ լաստեցին զերկիրն ամենայն, հարեալ զամենայն³ զայր եւ զկին բերանով սրոյ իւրեանց, առեալ զամենայն առ եւ զգերի եւ զաւար՝ դարձան յերկիրն իւրեանց:

24 Արդ՝ իբրեւ եհաս լուր աղաղակիս այսորիկ ի դուռն Սասանականին, առ Որմիզդ⁴ Թագաւորն Պարսից՝ ոչ սակաւ ինչ երկունք ասի պատեցին գնա: 25 Եւ կոչեցեալ գնախարարս որ ի դրանն արքունի եւ զգունդս համահարզանց եւ զփուշտիպանացն⁵, եւ խորհուրդ արարեալ՝ առնուլ զգանձն Թագաւորութեան եւ զամենայն ամբոխ դրանն արքունի, եւ անցանել յայնկոյս գետոյն մեծի Դգղաթայ⁶ ընդ զոմ ի Վեհկաւատ, եւ հատանել զլարսն կամրջացն⁷. եւ խորհէր իւր ապաւէն առ-

նել զբազմութիւն ամբոխին արքային Տաճկաց:

26 Իսկ այս ոչ այսպէս պատկանէր. քանզի խորհուրդ արարեալ խորհին արանց եւ համահարզանց⁸ եւ փուշտիպանաց արքային, զի սպանցեն զՈրմիզդ եւ նստուցեն Թագաւոր զորդի նորա զԽոսրով:

27 ⁹Արդ՝ վասն զի մայր շապհոյ դուստր ասպարապետին ¹⁰այնորիկ, որ էր նախարար տանն Պարթեւաց, որք մեռեալ էին, քոյր Վնդոյի եւ Վստամայ. եւ ինքն Վնդոյ էր այր իմաստուն եւ խորհրդական եւ սրտիւ արիագոյն՝ խորհուրդ արարեալ լուծանել գնա եւ առնել իւրեանց առաջնորդ եւ գործոյն զլխաւոր: 28 Եւ գնացեալ ի բերդն Գրուանդականի, լուծին գնա եւ զամենայն կալանաւորսն ընդ նմա, եւ արձակեալ¹¹ զոմն սուրհանդակ հաւատարիմ երագագոյն երիվարաւք, եւ գրեալ առ Վստամ եղբայր, զի սաստիկ ստիպով վաղ հասցէ ի տեղի գործոյն. եւ եկեալ նա փութանակի:

29 Եւ ժողովեցան ամենայն նախարարք եւ զաւրագլուխք եւ զաւրք ի դահլիճն արքունի, որ ի ժամուն յայնմիկ հանդիպեցան անդ. եւ մտեալ ի սենեակ արքայի՝ կալան զԹագաւորն Որմիզդ, եւ անդէն վաղվաղակի փորեցին¹² զաչս նորա եւ ապա սպանին: 30 Եւ նստուցին զորդի նորա Թագաւոր ի վերայ աշխարհին Պարսից.

1 Ա պարսիկ փխ պատրիկ
 2 SS չի՛ Իսկ
 3 Միհրդ. չի՛ Իսկ հարեալ գամեմայն
 4 Բոյ. առ Որմիզդի
 5 Ա փուշտիպանացն
 6 Ա Դկղաթայ (եւ հետագայում) / SS Դգղաթայ (եւ հետագայում)
 7 Ա Կարմնջացն (նաեւ յետոյ)

8 Ա խորի արանց եւ համահարզաց
 9 22, Միհրդ., Պատկ. չի՛ Իսկ ... սրտիւ արիագոյն (ԺՄ. 14) բառերից յետոյ վերջանում է տեքստի ետեւանաչ ընդօրինակութիւնը եւ կարգաւորում է հերթականութիւնը:
 10 ԱՔԳԴԵ այնորիկ որք մեռեալ էին եթէ էր նախարար տանն պարթեւաց, քոյր (այսպէս է նաեւ Միհրդատեանի միւս օրինակը)
 11 Ա եւ արձակել
 12 Ա պորեցին փխ փորեցին

եւ սկսան առնել պատրաստութիւն փախստեան յայնկոյս գետոյն մեծի Դգդաթայ¹:

31 Եւ ոչ յետ բազում աւուրց Վահրամն եկն եհաս փութանակի իբրեւ զխոյանալ արծուոյ: 32 Եւ քանզի մանուկ տղայ էր խոսրով ի թագաւորել իւրում՝ առին զնա քեռիքն իւր Վնդոյ եւ Վստամ, եւ անցին յայնկոյս գետոյն մեծի Դգդաթայ ընդ գոմ, եւ հատեալ ի բաց զլարսն կամրջացն: 33 Եւ եկեալ Վահրամն էառ զամենայն զտուն եւ զգանձ եւ զկանայս արքունի, եւ նստաւ ի գահոյս թագաւորութեանն²: 34 Եւ հրամայեաց կապել զլաստս փայտեղէնս, եւ անց զգետովն առ ի յմբռնել զխոսրով:

35 Բայց նորա յերկրւղէն ոչինչ կարաց ունել զտեղի: 36 Իբրեւ անցին զնացին փախստական, եւ խորհեալ ի ճանապարհի, թէ ո՞ր³ լաւագոյն իցէ, երթալ առ արքայն Տաճկա՞ց, եթէ առ թագաւորն Յունաց:

37 Ապա լաւ համարեցան առնել իւրեանց ապաւէն զթագաւորն Յունաց: 38 «Զի թէպէտ եւ է, ասեն, թշնամութիւն ի միջի, սակայն քրիստոնեայ են եւ ողորմած. եւ յորժամ երդնուն՝ ստել երդման ոչ կարեն»: 39 Եւ զնացեալ ընդ արեւմուտս գուղիղ ճանապարհ հրթեալ մտին ի քաղաքն՝ որ կոչի Խաղաբ. եւ դադարեցին անդ:

40 Եւ սա թէպէտ անց զգետովն՝ ոչ կարաց հասանել. յետս⁴ դարձան անդրէն ի Տիսբոն:

ԳԼՈՒԽ ԺԱ.

- 1 Թուղթ Խոսրովայ առ Մարիկ կայսր: 2 Խորհուրդ Սինկղիտոսին: 3 Մարիկ առաքե Խոսրովայ գաւր

1 Ա. Դիղաթայ / ՏՏ Դգլաթայ
 2 Միհրդ., Պատկ. Թագաւորութեան
 3 Ա. եթէ ո՞ր փխ թէ ո՞ր
 4 Ա. յետ փխ յետս

յաւզնականութիւն: 4 Կրկին թուղթ Վահրամայ առ Մուշեղ եւ պատասխանի սորա: 5 Պատերազմ, յորում հարկանի գաւրն Վահրամայ: 6 Փախուստ եւ մահ Վահրամայ:

7 Յայնժամ յղէ Խոսրով արքայ առ թագաւորն Մաւրիկ արս ճոխս պատարագաւք, եւ գրէ այսպէս. «Տուր ինձ զգահ եւ զտեղի թագաւորութեան հարց⁵ եւ նախնեաց իմոց, եւ արձակեա՛ ինձ զաւր յաւգնութիւն, որով կարացից հարկանել զթշնամին իմ, եւ կանգնեա՛ զթագաւորութիւն իմ, եւ եղէց քոյ որդի: 8 Եւ տաց քեզ զկողմանս Ասորոց⁶ – զԱրուաստանն ամենայն մինչեւ ի Մծբին քաղաք, եւ յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտէրական իշխանութեանն մինչեւ ցԱյրարատ⁷ եւ ցԴուրին⁸ քաղաք, եւ մինչեւ ցեզր⁹ ծովուն Բզնունեաց եւ ցԱռեստաւան¹⁰. եւ զմեծ մասն Վրաց աշխարհին՝ մինչեւ զՏփլիս քաղաք. եւ կալցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր մինչեւ ցմահ¹¹ երկոցունցս, եւ անշուշտ լիցի այս երդումն ի միջի մերում եւ ի մէջ որդւոց մերոց, որ թագաւորելոց իցեն յետ մեր»:

9 Արդ՝ ժողովեալ թագաւորին զամենայն սնկղիտոսն, հարցանէր ցնոսս խորհուրդ, եւ ասէր. «Ապանին Պարսիկք զՈրմիզդ զթագաւորն իւրեանց եւ նստուցին զորդի նորա թագաւոր: 10 Եւ զաւրք թագաւորութեանն նստուցին զայլ ոմն թագաւոր յԱրեւելս. եւ եկեալ նա զաւրու մեծաւ յինքն յափշտակեաց զթագաւորութիւնն. եւ մանուկ որդի նորա փախստա-

5 ԶԶ, Միհրդ. Հայոց փխ հարց. Պատկանեանք վրիպակն ուղղել է ըստ Թ. Արծրունու:
 6 Միհրդ., Պատկ. գԱսորուց
 7 Միհրդ., Պատկ. ցԱրարատ
 8 Ա. ցԴուրին
 9 Ա. յեզր փխ ցեզր
 10 Ա. յԱռեստաւան փխ ցԱռեստաւան / Միհրդ. ցԱռեստաւան / Մալխ. ցԱռեստ աւան
 11 ՏՏ մինչ ցմահ

կան գնացեալ եկն առ մեզ, եւ խնդրէ ի մէնջ զաւրս յաւգնականութիւն, եւ խոստանայ առնել այսպէս: 11 Արդ՝ զի՞նչ արասցուք, ընդունի՞մք. արժա՞ն է ընդունել, թէ ոչ»: 12 Իսկ նոքա ասեն. «Ոչ է արժան ընդունել, զի ազգ մի անաւրէն են եւ ամենեւին՝ սուտ. ի նեղութեան իւրեանց խոստանան առնել, եւ յորժամը յանդորր ելանեն՝ ստեն. բազում չարիս կրեալ է մեր ի նոցանէ. թո՛ղ սպառեցեն զմիմեանս, եւ մեք հանգիցուք»:

13 Անդ թագաւորն խոսրով կայր ի մեծ վտանգի, եւ տեսանէր զմահ առաջի աշաց. զի գերծեալ էր ի բերանոյ առիւծու՝² եւ անկեալ ի բերան թշնամեաց, ուստի փախուստ ոչ գոյր:

14 Իսկ թագաւորն մերժեալ զխորհուրդս անկղիտոսացն՝ յինքենէ յղէր զՓիլիպիկոս³ զփեսայ իւր եւ տայր տանել պատասխանի ընդունելութեանն. առնոյր ի նմանէ երդումն, եւ տայր նմա զաւր կայսերական յաւգնականութիւն՝ զՅովհանն Պատրիկ ի Հայոց կողմանէ, եւ զՆերսէս ստրատելատ յԱսորուոց եւ զզաւրս նոցա. անցեալք ի հանդիսի, երեք հազար հեծեալ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւչից իւրեանց:⁴

15 Եւ զզաւրս աշխարհին Հայոց ընդունէին գումարել, որք ի ժամուն առ ձեռն գտեալ. եւ անցեալք ի հանդիսի իբրեւ հազարք հնգետասանք, իւրաքանչիւր գունդք նախարարաց՝ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւչուց իւրեանց: 16 Ամենեքեան սոքա սպառազէնք, ընտիրք⁵ պատերազմողք,

վառեալք քաջութեամբ՝ իբրեւ զհուր, որ ո՛չ զանգիտեն եւ ոչ զթիկունս դարձուցանէին: 17 Դէմք առիւծու⁶ դէմք նոցա, թեթեւութիւն ոտից իբրեւ զթեթեւութիւն այծեմանց երազութեամբ ի վերայ դաշտաց: 18 Մտադիւրութեամբ⁷ եւ ամենայն հնազանդութեամբ չու յուղի անկեալ գնացին:

19 Արդ՝ առեալ ապստամբին միհրացելոյն զզաւրս իւր, զփիղոս⁸ եւ զամենայն զգանձս թագաւորական, չու արարեալ գնայ հասանէ յԱտրպատական. եւ բանակեցան սակաւ մի հեռագոյն ի միմեանց ի Վարարատ⁹ գաւառին:

20 Արդ՝ գրէ Վահրամն հրովարտակ առ Մուշեղ եւ առ այլ նախարարս Հայոց, որ ունէր այսպէս.—

21 «Ես այսպէս կարծէի, եթէ ես յորժամ ընդ թշնամիս ձեր մարտնչիմ, եւ դուք ի կողմանէ այտի եկեալ՝ ինձ աւգնական լինիցիք. զի ես եւ դուք միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունն¹⁰ Սասանայ: 22 Իսկ դուք աւաղիկ¹¹ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ յաւգնականութիւն¹² դմա՛: 23 Այլ ես ո՛չ երկեայց ժողովելոց երիցանցդ Հռովմայեցուցդ¹⁴, որ եկեալ են ի վերայ իմ: 24 Բայց դուք, Հա՛յք, որ տարածամ ցուցանէք զտիրասիրութիւն. ո՞չ ապաքէն տունդ Սասանական եբարձ գերկիրդ ձեր եւ զտէրութիւն¹⁵: 25 Եւ կամ ընդէ՞ր բնաւ ապստամբեցին հարքն ձեր եւ գնացին ի ծառայութենէ նոցա, մինչեւ ցայսաւր պատերազմեալ ի վերայ աշխար-

1 Ա ամենեւինն
 2 Միհրդ., Պատկ. առիւծոյ
 3 ՁՁ, Միհրդ., Պատկ. գփիկղիպիկոս
 4 ՁՁ ըստ գնդից, ըստ դրաւչից իւրեանց բառերից յետոյ կարգաւորում է ետեւառաջ ընդօրինակուած տեքստը:
 5 Ա ընդիրք

6 Ա առեւծու
 7 Մալխ. մտադրութեամբ
 8 Ա գօրս իւր գփիւղս
 9 Ա ի Վար առաստ / Միհրդ. ի Վարարաստ
 10 Ա գտուն
 11 Ա աւաղիք
 12 Միհրդ., Պատկ. յաւգնութիւն
 13 Ա նմայ փխ դմա
 14 Մալխ. Հռովմայեցուցդ
 15 Ա զտիրութիւն

հին ձերոյ: 26 Եւ արդ՝ դիմեալ գայք¹ ի վերայ իմ կորուսանել զայնչափ վաստակս ձեր. զի թէ խորով յաղթեալ էր՝ երկոքին դոքա միաբանեալ բարձցեն զձեզ ի միջոյ: 27 Բայց զի հաճոյ թուեսցի ձեզ ի բաց կալ ի դոցանէ եւ միաբանել ընդ իս, եւ ձեռն տալ ինձ յաւգնականութիւն: 28 Եւ թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Արամագդ, եւ յԱրեգակն տէր եւ ի Լուսին², ի Հուր եւ ի Ջուր, ի Միհր³ եւ յամենայն աստուածս, եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն. գո՛ր եւ դուք կամիք՝ արասջիք ձեզ թագաւոր: 29 Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց⁴ մինչեւ ցԿապկոհ եւ ցԳուռն Աղուանից. եւ յԱսորոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄրծուին⁵ եւ զՆոր Շիրական մինչեւ ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. եւ ընդ արեւմուտս մինչեւ ցԿեսարիա⁶ Կապադովկացոց: 30 Եւ ես մի՛ իշխեցից քան զԶարասպ⁷ անցանել յայնկոյս. եւ գանձն Արեաց թագաւորութեանս բաւական համարեալ լիցի ինձ եւ ձեզ, եւ այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչեւ ձեր թագաւորութիւնդ հաստատեսցի»:

31 Եւ ըստ իւրեանց կարգի՝ էր աղ ծրարեալ եւ կնքեալ ընդ հրովարտակին:

32 Եւ առեալ նոցա զհրովարտակն եւ ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի. եւ ոչ իսկ ասացին բազմաց, զի երկնչէին յանմիաբանութենէ իւրեանց:

33 Եւ արդ՝ ճգրէ նա անդրէն դարձեալ թուղթ երկրորդ:⁹

34 «Գրեցի առ ձեզ ի բաց կալ ի նոցանէ, ինձ եւ ձեզ բաւական համարելով զամենայն աշխարհս եւ զամենայն գանձս թագաւորութեանս այսորիկ. ուրեմն ոչ կամեցարուք լսել, զի ոչ արարէք բանիցն պատասխանի»: 35 «Ես զձեզ ապաշաւեմ, ասէ. ¹⁰Քանզի վաղիւ առաւաւտուն ցուցանեմ ձեզ փիղս վառս, եւ ի վերայ, զաւրս սպառազինեալս քաջաց, որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս ձեռքաճգութեամբ¹¹, եւ շաւառունս¹² մուխս պողվատիկս սլաքաւք՝ ի հաստաճիգ աղեղանց. արս երիտասարդս հզաւրս սպառազէնս վատնելոց, եւ երիվարս տաճիկս եւ երագունս, տապարս եւ սուսերս մուխս եւ պողվատիկս¹³ եւ կռուփս՝ որչափ խորովայ եւ ձեզ պիտոյ իցէ»:

36 Առնէ նմա Մուշեղ պատասխանի ¹⁴այսքան. «Առ Աստուծոյ է թագաւորութիւնն, եւ ում կամեցաւ՝ ետ. բայց դու պարտիս յանձն քո ապաշաւել եւ ոչ ի մեզ: 37 Եւ ծանեայ զքեզ պոռոքաբան¹⁵. եւ ոչ խրախուսես յԱստուած, այլ ի քաջութիւն եւ ի փղաց զաւրութիւն: 38 Այլ ես ասեմ քեզ. եթէ Աստուած կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեւ պատերազմ քաջաց, եւ ճայթեսցեն ի վերայ քո եւ ի վերայ բազմութեան փղացդ իբրեւ զամպս երկնից գազանագոյնս¹⁶ քան զամենեսեան: 39 Եւ ի վերուստ ահագին ճայթէ եւ փայլատակէ եւ յարձակին քեզ սպառազէնք

1 Բոլ. գայ
 2 Ա ի Լուսինն
 3 Ա Միրի
 4 Ա գերկիրն ամենայն հայոց
 5 Պատկ. չիք զՄրծուինն
 6 Ա ցԿեսարիայ
 7 ՁՁ գարասպ / Միհրդ., Պատկ. գԱրասպ / Մալխ. Զարասպ
 8 ՁՁ, Միհրդ., Պատկ. գրեմ անդրէն / Արծր. գրէ դարձեալ

9 Միհրդ. ծանօթագրում է. «Ի միւս օրինակին թուղթ մի անկեալ էր»:
 10 ՁՁ, Միհրդ., Պատկ. այլ վաղիւ, քանզի լինի առ Սասանայ փիլս քանզի վաղիւ առաւաւտուն
 11 ՁՁ, Մալխ. ձեռքարձգութեամբ
 12 Միհրդ., Պատկ. շառաւունս
 13 Ա եւ մուխս եւ պողպատիկս փիլս մուխս եւ պողվատիկս
 14 Բոլ. «Այսքան առ աստուծոյ է մարդասիրութիւնն» փիլս այսքան. «Առ Աստուծոյ է քաղաւորութիւնն»
 15 Մալխ. պոռոտաբան
 16 Ա գազանագոյն

ճերմակ երիվարաւք եւ բռնալիր նիզակաւք, եւ անցանեն ի մէջ բազմութեանն՝ իբրեւ ¹գփայլատակունք հրոյ շանթելոյ, զի ցաւղանայցեն ի յերկնից ի յերկիր, եւ այրեսցեն զխռիւս դաշտաց, զանտառս զգալարս եւ զգաւսացեալս: 40 Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զգաւրութիւնդ² քո իբրեւ զփոշի, եւ գանձ արքունի յարքունիս զնայ»:

41 Էին ընդ նոսա Վնդոյն այն եւ Վստամ, զոր վերագոյն ասացի. եւ զաւրք պարսիկք իբրեւ ութ հազար հեծեալ:

42 Եւ եղեւ ի վաղուեան առաւաւտուն, մինչդեռ արեւն զծայրս հարկանէր, կարգէին ճակատ առ ճակատ, եւ բաղխէին³ զմիմեանս պատերազմաւ: 43 Ուժգին լինէր խուժք եւ խառնուրդ, եւ սաստիկ լինէր կոտորածն ի մէջ տարուբերին: 44 Եւ մարտուցեալ յայդուէ մինչեւ ցերեկոյ՝ յաւգնեցան երկոքին կողմեանքն ի պատերազմին:

45 Եւ այնչափ սաստիկ լինէր կոտորածն, մինչեւ զի⁴ խաղացեալ վտակաց սաստկութիւն արեանցն առգանէր գերկիրն ամենայն: 46 Եւ ոչ կարացեալ⁵ զգէմ ունել փախստական լինէր զաւրն ապստամբական առաջի զաւրացն Յունաց: 47 Իսկ նոցա զհետ մտեալ մինչեւ զքաջ մթանալ երեկոյին՝ ցիրս դիմաւալ կացուցանէին զդաշտաւքն եւ զճանապարհաւքն. զբազումս սատակէին ի սուր սու-

սերի իւրեանց. եւ զբազումս ձերբակալ⁶ արարին, եւ կապեալ զձեռս⁷ ի վերայ թիկանց՝ բերեալ կացուցանէին առաջի թագաւորին:⁸

48 Եւ բազմութիւն փղացն դիմեալ զնային⁹ բռնաբար: 49 Ապա զհետ արշաւեալ ազատագունդ սպառազինացն՝ ներքուստ ի վեր ծակոտէին զսպառազէնս հեծելոց, որ կային ի նիւս փղացն. եւ աներկիւղ անվեհեր կռուէին, եւ սատակեալ զբազում փիղս¹⁰ եւ զհեծեալս եւ զփղապանս՝ դարձուցանէին անդէն¹¹ բռնաբար եւ զբազմութիւն փղացն: 50 Եւ եկին ամին յանդիման թագաւորին:

51 Եւ անդէն¹² դիմեալ ի բանակատեղն զաւրացն Վահրամայ: 52 Եւ կայր ի խորանին գանձ արքունի եւ ամենայն գանձք թագաւորութեանն անթիւ եւ անհամար պատուականք. զամենայն աւար հարկանէին. եւ զբազում գահոյս ոսկիապատս չքնաղ եւ զանազան կազմութեամբ մանրէին սուսերաւք իւրեանց, եւ անցանէին ի կողմանս փաղանդ փաղանդ զբեռինս բարձեալ ուղտուց եւ ջորուց բազմութեանն: 53 Եւ լցան ամենեքեան բազում եւ մեծամեծ աւարաւ: 54 Ժողովեցին ապա եւ զաւրն Պարսից ի ճապաղուածէ գանձուցն ոչ սակաւ իրս, եւ հասուցին անդրէն յարքունիսն իւրեանց: 55 Եւ զաւրացաւ յաւուր յայնմիկ արքայ Նոսրով ի ձեռն յաղթութեանն այնորիկ քան զամենայն զթշնամիս իւր, եւ հաստատեցաւ թագաւորութիւն նորա:

1 Բռ. գփայլատակունք գանտառս զղալարս եւ զգաւսացեալս հրոյ շանթելոյ, զի ցաւղանայցեն ի յերկնից ի յերկիր, եւ այրեսցեն զխռիւս դաշտաց փիս գփայլատակունք հրոյ շանթելոյ, զի ցաւղանայցեն ի յերկնից ի յերկիր, եւ այրեսցեն զխռիւս դաշտաց գանտառս զղալարս եւ զգաւսացեալս
2 Ա ըզօրութիւնդ
3 Ա բախէին
4 Ա մինչ զի
5 Բռ. ոչ կարացաւ

6 Միհրդ., Պատկ. ձեռքակալ
7 Պատկ. ձեռս
8 Միհրդատեանը ծանօթագրում է. «Ի միւս օրինակին մինչեւ այդ տեղն պակաս էր, վասն ընկելոյ թղթոյն գոր ի վերն ասացաք»:
9 Ա գնաին
10 Ա փիւղս
11 ԶԶ, Միհրդ., Պատկ. անդրէն
12 Միհրդ., Պատկ. անդրէն

56 Եւ զբազմութիւն ձերբակալաց¹ ձիահեծելոց եւ փղահեծելոցն հրամայէր մերկացուցանել եւ կապել զձեռս ի վերայ ուսոց եւ արկանել կոխան ի ներքոյ ոտից փղացն: 57 Եւ ոչ ուրեք կարացին գտանել զհետ Վահրամայ². զի զերծաւ եւ գնաց այսպէս փախստական, եւ չոգաւ³ եւ անկաւ ի Բահլ Շահաստան⁴, ⁵ուր եւ ի բանէն Խոսրովայ սպանաւ ի նոցունց իսկ:

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Նեմգութիւն Խոսրովայ ընդդէմ Մուշեղի: 2 Ամբաստանութիւն իշխանացն Յունաց զԽոսրովայ առ Մաւրիկ կայսր: 3 Մաւրիկ պաշտպանէ Խոսրովայ եւ զՄուշեղ կոչէ ի պալատն: 4 Խոսրով տայ կայսեր զաշխարհսն ըստ ուխտի խոստմանն:

5 Եւ եղև ըստ աւուրց ինչ յետ անցանելոյ պատերազմին այնորիկ մեծի, մինչդեռ արքայն Խոսրով նստէր ի մէջ խորանին իւրում, եւ զաւրն Պարսից շուրջ զնովաւ բանակեալ, եւ զաւրն Յունաց հեռագոյն ի նոցանէ աւթիւ միով, ուրոյն⁶ բանակեալ հոծ բազմամբոխ լիութեամբ աւարաւ իւրեանց, եւ կային զառաջեաւ արքային ամենայն մեծամեծք նախարարք իւր – իսակսն սկսաւ արքայն եւ ասէ. «Իցէ՞ ոք արդեաւք լեալ ի թագաւորաց աշխարհի, որ կարող է ըմբռնել զմեւս այլ թագաւոր զթշնամի իւր, զաւերիչ թագաւորութեան իւրոյ, եւ ոչ սպանցէ զնա եւ ջնջեսցէ զամենայն արու յաշխարհէ նորա, այլ առնիցէ՛ զնա յորդեգիրս. թագ կապեալ նմա եւ ծիրանեաւք զարդարեալ մե-

ծարիցէ, վանեալ զթշնամիս նորա, եւ հաստատեսցէ զնա յաթոռ թագաւորութեանն, եւ տուել նմա գանձ արքունական ի գանձուց իւրոց, արձակէ զնա բարեաւ զնալ զճանապարհ իւր: 6 Այսպիսի⁷ պարգեւս շնորհեաց ինձ Մաւրիկ թագաւոր հայր իմ, զոր ոչ ոք կարէ ի մարդկանէ շնորհել որդւոյ իւրում սիրելւոյ»: 7 Պատասխանի ետուն⁸ ոմանք ի նոցանէ, եւ ասեն. «Արքայ, յաւիտեա՛ն կեաց. մեք ոչ գիտեմք, արժա՞ն իցէ շնորհ ունել եւ թէ ո՛չ⁹: 8 Զի ամենայն թագաւորութիւն գանձիւք հաստատեալ կայ. եւ դոքա զամենայն գանձս թագաւորութեան աւա՛ր վարեցին»:

9 Պատասխանի ետ արքայն եւ ասէ. «Զգանձս թագաւորութեան իմոյ ընդ կողս դոցա այսրէն արտաքս քարչեցից հանդերձ նոցունց աղխեալ գանձիւք, քանզի իմ է¹⁰ այն ամենայն: 10 Բայց ինձ այս կարի է, զի ապրեցաւ տիրատեսացն այն եւ գնաց: 11 Այլ քաջ է նա եւ վերստին այլ զաւրս գումարէ ի քաջաց ազգաց արեւելից»:

12 Պատասխանի ետուն նմա եւ ասեն. «Զտիրատեսացն գայն նոքա զերծուցին, քանզի մերով աչաւք իսկ տեսաք, զի կալաւ զնա Մուշեղն այն Մամիկոնեան¹¹, եւ ետ նմա երիվար եւ զէն, եւ արձակեաց»:

13 Զայս ասացին՝ զի կամեցան ի վերայ նորա չարիս: 14 Քանզի տեսանելով զհաւայս նորա չարաչարս՝ զարհուրեալ խոտորեցան սիրտք իւրեանց ի նմանէ: 15 Եւ ոչ ինչ էած զմտաւ¹² արքայն, եթէ զի՛նչ իցէ բանն այն. քանզի մանուկ տղայ էր եւ խակ: 16 Եւ ոչ ինչ յիշեաց զխոսովութիւն այնպիսի զաւրացն. այլ հաստատեաց

1 Միհրդ., Պատկ. ձեռքակալաց
 2 Ա. Վահրամայ
 3 Միհրդ., Պատկ. չոբաւ
 4 Ա. շահրստան
 5 Բոլ. որպէս ի բանէն փխ ուր եւ ի բանէն
 6 Ա. որոյն փխ ուրոյն

7 Միհրդ., Պատկ. այնպիսի
 8 Միհրդ., Պատկ. այսպէս պատասխանի ետուն փխ պատասխանի ետուն
 9 Ա. եւ եթէ ոչ
 10 Ա. մի է փխ իմ է
 11 Ա. Մամիկոնեայն
 12 Ա. արեւայն զմտաւ

զմիտս իւր ի վերայ բանիցն ստուգեան, եւ ասէ. «Կոչեսցի այսր Մուշեղ, եւ կապեսցի ոտիւք եւ ձեռաւք, մինչեւ ես վասն նորա ծանուցից կայսեր»:

17 Ի նմին ժամու հրամայէ¹ գրել նա յետկար, եւ արձակու² զմի ի սուրհանդակացն առ Մուշեղ. «Փութով եկ, ասէ, գործ հասեալ է կարի կարեւորագոյն»:³ 18 Եւ հրաման ետ փուշտիպանացն³ իւրոց եւ ասէ. «Պատրաստ լերուք, զի յորժամ եկեսցէ նա, եւ ես ձեռամբ նշանակեցից ձեզ՝ յանկարծակի զձեռս նորա յետս⁴ կալարուք եւ կապեցէ՛ք զնա. բայց պատրաստ լիջիք, զի այր քաջ է նա, եւ մի՛ թէ կամ ինքն մեռանի, կամ զիս սպանանէ: 19 Եւ թէ ինքն իսկ⁵ մեռանի՝ ես պատասխանի տաց կայսեր վասն նորա»:⁶ 20 Սոյնպէս⁶ եւ բարապանացն պատուէր ետ, ասէ. «Զգոյշ կացէք, զի յորժամ եկեսցէ Մուշեղ ի դուռն խորանին իմոյ՝ ի բաց լուծէք ի միջոյ նորա զկամարն եւ զսուսերն, ասելով, եթէ «Ոչ է աւրէն զինու հանդերձ մտանել յանդիման թագաւորին»:

21 Արդ՝ մինչդեռ առնէր նա համար հանդիսի ի մէջ զաւրաց իւրոց, տեսանել զթիւ կենդանեացն եւ մեռելոց, որք անկան ի պատերազմին՝ եկն եկաց առաջի նորա սուրհանդակն եւ ասաց նմա ողջոյն, եւ մատոյց նմա զթուղթն: 22 Իսկ Մուշեղայ առեալ զթուղթն՝ ասէ ցնա, եթէ «Ողջոյն իցէ եւ խաղաղութիւն»:⁷ 23 Պատասխանի ետ սուրհանդակն եւ ասէ. «Ողջոյն է եւ խաղաղութիւն, եւ զայլազգ ինչ ես ո՛չ գիտեմ, բայց միայն զի հրամայեցաւ ինձ փութանակի կոչել զքեզ»:⁸ 24 Եւ անդէն վաղվաղակի պատրաստեցաւ նա որ-

պէս ի պատերազմ, քանզի արկ ի միտս իւր, եթէ գուցէ հասեալ ինչ իցէ գործ պատերազմի, կամ շնորհ ինչ իցէ պարգեւս փոխանակ վաստակոցն: 25 Եւ առնու ընդ իւր արս երկու հազարս ի սպառազինաց՝ յազատաց եւ յանազատաց, զորս գիտէր արժանիս պատուոյ, եւ վստահ էր հեծելութեամբ:

26 Էր գրեալ վասն նորա եւ առ Պատրիկն Յովհան, զի արձակեցէ զնա, եւ նորա դարձեալ հրաման տուեալ նմա երթալ այնպէս պատրաստութեամբ, եւ հրամայեաց ամենեցուն նոցա արկանել զանձամբ ՚գիրաքանչիւր զսպառազինութիւն: 27 Արկաւ եւ ինքն զանձամբ զսպառազինութիւն իւր⁸: 28 Վառեցան եւ գնացին:

29 Եւ եղեւ իբրեւ մտին ի մէջ բանակին եւ մերձ եղեն մաւտ ի մաշկապերճանն արքունի, եւ հրաման հասանէր ընդդէմ, մի՛ երթալ այնքան⁹ բազմութեամբ, այլ բացագոյն նստուցանել զնոսա, եւ նմա սակաւ արամբ¹⁰ յանդիման լինել արքայի:

30 Եւ նորա ոչ առեալ յանձին առնել այնպէս, այլ գնաց զաւրութեամբ մաւտ ի դուռն խորանին արքունի. եւ զաւր Պարսից կացին շուրջ զխորանաւն սպառազինեալք. եւ իջեալ յերիվարէն՝ գնաց ի դուռն խորանին Մ արամբք: 31 Եւ զաւրն կային այնպէս զինեալ իւրաքանչիւր երիվարաւք: 32 Զարհուրեցաւ արքայն, եւ ամենայն զաւրք նորա. եւ սկսան ծածկել զնենգութիւնն: 33 Եւ եղեւ իբրեւ եհաս ի դուռն խորանին՝ մատեան բարապանք դրանն եւ ասեն. «Լո՛յժ զկամարդ եւ զսուսերդ ի միջոյ քումմէ՛¹¹, եւ մերկեա՛ ի քէն

1 Ա. հրամաէ
2 Միհրդ., Պատկ. արձակէ
3 Ա. փուշտիպանաց
4 Ա. յետ
5 Միհրդ., Պատկ. եւ մի կամ թէ ինքն / Միհրդ., Պատկ. իսկ ինքն փիս ինքն իսկ
6 Ա. նոյնպէս փիս Սոյնպէս

7 Պատկ. իւրաքանչիւր զսպառազինութիւն իւր փիս զիւրաքանչիւր զսպառազինութիւն
8 Պատկ., Մայիս. չի՛ արկաւ եւ ինքն զանձամբ զսպառազինութիւն իւր
9 Ա. այստան
10 Ա. արամբ
11 Ա. բումէ:

զսպառազինութիւն քո. զի ոչ է արէն մտանել առաջի թագաւորին»։ 34 Անկաւ կասկած ի սիրտս նորա, սկսաւ պատրաստել եւ կազմել զինքն յարձակումն։ 35 Պատասխանի ետ բարապանացն եւ ասէ. «Ի մանկութենէ իմմէ սննդակիրց եղեալ եմ թագաւորաց ի նախնեաց իմոց եւ հաւուց, եւ այժմ հասեալ կամ ի դուռն¹ արքունի, ի տեղի հանդիսի։ 36 Ես զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ ի բա՞ց մերկացայց, եւ լուծի՞ց զկամարս եւ զգաւտիս յանձնէ իմմէ, զոր ո՛չ երբէք լուծանեմ² ի տան իմում յուրախութեան։ 37 Եւ կամ ի՞նձ³ արժան իցէ գիտել զչարութիւնդ Պարսից»։ 38 Եւ հրաման ետ միում ընթանալ մանկանցն, զի յառաջ մատուցէ զգաւրն յաւազութիւն. եւ ինքն դարձաւ անդրէն ի գնալ։

39 Ազդ եղեւ արքայի, եթէ ոչ կամեցաւ այնպէս մտանել, այլ դարձաւ անդրէն եւ գնաց։ 40 Եւ սկսաւ թագաւորն ծածկել զչարութիւնն եւ ասէ. «Թողցի արդ ի բաց խորհուրդն այն. թող եկեսցէ, որպէս եւ կամեսցի»։ 41 Քանզի ինքն մանուկ էր, եւ զաւրութիւն զաւրացն սուղ ինչ եւ սակաւ։ 42 Կոչեն անդրէն եւ ասեն. «Հրաման ետ մտանել որպէս եւ կամիս»։ 43 Նա դարձաւ եւ ասէ. «Թող տեսից, եթէ զի՞նչ բարի խորհեսցի տալ ինձ արքայից արքայ»։

44 Եւ եմուտ ի խորանն, գառաջեալ արքայի եւթն արամբք⁴, եւ խոնարհեցաւ ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ արքայի, եւ կանգնեցաւ։ 45 Եւ արքայ ոչ ձգեաց զձեռն իւր որպէս երեկն⁵ եւ եռանդն՝ ընդունել զնա եւ ողջունել, այլ

կայր այնպէս յամառացեալ⁶. եւ անդ կացին այսպէս յամառացեալք⁷։

46 Երկեալ արքայ եւ զանգիտեաց, եւ ոչ կարաց տալ հրաման՝ որպէս խորհեալ էր, եւ ասել ՝ կամ մեծ կամ փոքր՝ յերկիւղէն։ 47 Եւ նա դարձեալ ել փութանակի ի խորանէն. մատուցին նմա զերիվարն, հեծաւ եւ գնաց։ 48 Եւ եղեւ իբրեւ ետես զայն արքայ՝ յոյժ երկեալ, եւ կամեցաւ ծածկել զվնաս իւր. յոտն եկաց ի գահոյիցն եւ ընթացաւ ի դուռն խորանին, ել արտաքս եւ արձակեաց⁹ զհետ նորա զոմն գլխաւոր նախարար։ 49 Ետ տանել աղկնքեալ՝ երդումն, եւ կոչել անդրէն, «զի պատուով եւ մեծարանաւք գնասցես, ասէ, աստի, եւ մի՛ համարիր ի միտս քո ¹⁰խորհել վասն քո այլազգ ինչ»։

50 Եւ նորա ո՛չ կամեցեալ, այլ գնաց ճանապարհ իւր։ 51 Արդ՝ նա խորհեալ նոցա զայս՝ յերրորդ ժամու դիմել ի վերայ խորանին եւ սպանանել զնա։ 52 Եւ հրաման տուեալ զաւրացն՝ որք¹¹ սպառազինեալ շուրջ զխորանաւն խորհովու կային։ 53 Վասն զի եկեալ ի զգացումն¹² եւ զաւրաց նորա զխուովութիւն դադարեցին ի խորհրդոյն եւ գնացին։

54 Եւ եղեւ մինչդեռ երթային նոքա՝ ի դիմի հարաւ սոցա մի ոմն ի փուշտիպանաց¹³ արքայի, եւ ըմբռնեալ¹⁴ զնա՝¹⁵ առին

1 Ա ի տուն փխ ի դուռն
 2 Միհրդ. ոչ երբեք լուծեալ է իմ փխ ոչ երբեք լուծանեմ / ՀԱ լուծանել փխ լուծանեմ
 3 ՀԱ ի՞նչ փխ ինձ
 4 Ա եաւթն արամբ
 5 Ա երեկն

6 Ա այսպէս ամառացեալ փխ այնպէս յամառացեալ
 7 Միհրդ. կացին այնպէս / Ա ամառացեալիք
 8 Ա կամի մեծ փխ կամ մեծ
 9 Ա արձակեաց բառը գրուած է կիսատ (արձակ...) եւ կողմը տեղ է բաց բողմուած լրացնելու համար։ Միհրդ. արձակէ / Պատկ. արձակեաց, որին եւ հետեւել է Մալխասեանցը եւ մեմբ։
 10 Միհրդ. չի՞ր խորհել վասն քո
 11 Ա որ փխ որք
 12 Ա զգայումն
 13 Ա ի փուշտիպանաց
 14 Մալխ. ըմբռնեալ (վրիպակ)
 15 Ա զնոսա փխ զնա

զնացին ընդ իւրեանս¹. եւ սպառնացաւ նմա Մուշեղ երդմամբ, զի եթէ ոչ պատմեսցէ նմա զեղեալն վասն նորա խորհուրդ՝ մեռցի:

55 Իսկ նորա երդմնեցուցեալ զնա, զի մի՛ տացէ զնա ի ձեռն արքայի. եւ պատմեսց զամենայն: 56 Ապա ի միւսում աւուրն ընդ առաւաւտնն զնացեալ ի դուռն Պատրկին Յովհաննու², ետես զնա եւ խաւսեցաւ զամենայն չարիսն, ունելով առաջի³ գոտիկանն փուշտիպանն, որ եւ նա եկաց եւ խաւսեցաւ զամենայն եղեալ բանս: 57 Խոռվեցան իշխանքն եւ ամենայն զաւրն. բայց եւ նոցա յիշելով զերդումն եւ զխոռվութիւնն կայսերն, ոչ ինչ ի վեր հանին զբանսն: 58 Ասացին զրել առ թագաւորն եւ ծանուցանել նմա զամենայն չարիսն: 59 Բայց ասաց Մուշեղ յանդիման ամենեցուն. «Եթէ ոչ մեռցի այրն այն՝ ի նորա ձեռն կորնչելոց է ամենայն երկիր Հռովմայեցոց տէրութեանդ»:

60 Յայնմ ժամանակի գործեցին ընծայս, մեծ աւարմասն թագաւորին իւրեանց, պսակս եւ խոյր մի ի զմրուխտս⁴ եւ ի մարգարիտս յաւրինեալս, ոսկի եւ արծաթ բազում յոյժ, եւ ականս պատուականս չքնաղագիւտ, եւ հանդերձս պճնեալս ի զգեստուց⁵ որ է զարդ իւրեանց յաւրինեալ թագաւորացն Պարսից, երիվարս արքունականս հանդերձ նոցուն⁶ իսկ արքունական կազմուածովքն: 61 Եւ զործեալ ընծայս, եւ առաքեն հանդերձ աւետաւոր հրովարտակաւ, զրեալ եւ ամբաստանութիւն զարքայէն Խոսրովայ, եւ գումարեն զհետ ընծային հեծեալս չորեք հարիւր: 62 Ազդ լինի Խոսրովայ, եթէ ե-

տուն տանել ի գանձուց քոց՝ գանձ աւարամասն թագաւորին իւրեանց, եւ զրեցին զքեն ամբաստանութիւն: 63 Եւ ընդոստուցեալ դառնութեամբ Խոսրով՝ արձակէ զկնի նոցա զաւր, զի հասցեն ի ճանապարհի եւ կորուսցեն⁷ զՄուշեղն յանկարծաւրէն գաղտաբար. եւ առեալ զգանձն արքունի՝ հասուցեն առ նա: 64 Այսպէս իմն փութանակի գիտացեալ եւ վասն իրացն եւ իշխանքն յունականք՝ եւ նոցա առաքեալ զկնի նոցա զաւր բռնագոյն. եւ հասեալ անդէն ի մաւտոյ՝ ոչ ապրեցուցին ի նոցանէ եւ ո՛չ մի: 65 Եւ բանն ի վեր ոչ էլ. եւ զաւարն⁸ տարեալ հասուցին⁹ ի պաղատն մեծաւ խնդութեամբ:

66 Ընկալաւ թագաւորն զընծայսն, եւ առաքէ հրովարտակ մեծաւ շնորհակալութեամբ ի ձեռն իւրոյ հրեշտակի, եւ զրէ առ նոսա ի բաց կալ ի խորհրդոյն յայնմանէ, զոր ամբաստանեալ զթագաւորէն: 67 «Եթէ ոչ զգուշանայցէք անձին դորա՝ ի ձեռաց ձերոց խնդրեցից զդա»: 68 Գրէ եւ առ արքայն՝ գոհութեամբ արձակել զամենեսեան:

69 Յայնժամ արքայն Խոսրով ետ ամենեցուն ըստ իւրաքանչիւր չափուց պարգեւս, եւ արձակեաց յիւրմէ: 70 Եւ իւր չու արարեալ յԱտրպատականէ՝ զնաց յԱսորեստան, ի բնիկ թագաւորական կայեանս իւր: 71 Եւ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան. եւ զխոստացեալ պարգեւսն կայսերն կատարեաց. ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչեւ ցՄծբին, եւ զերկիրն Հայոց. որ ընդ իւրով¹⁰ իշխանութեամբն էր, գտունն¹¹ Տանուտերական մինչեւ զգետն Հուրագղան¹², եւ զգաւառն

1 Ա իւրեան
2 Ա Յոհաննու
3 Միհրդ., Պատկ. գառաջի
4 Ա գմբուխտս փխ ի գմբուխտս
5 Ա ի սգեստուց
6 ՁՁ ցուն փխ նոցուն / Միհրդ., Պատկ. չիբ նոցուն

7 Ա կորուսանեն
8 Բոյ. զգաւրն փխ գաւարն
9 Ա հասուցանեն
10 Ա իւրեալ
11 Ա գտուն
12 Միհրդ. Հոագղան

Կոտէից մինչեւ ցաւանն Գառնի եւ ցեզր ծովուն Բզնունեաց, եւ ցԱռեստաւան եւ զԳոգովիտ¹ գաւառ մինչեւ ցՀացիւն եւ ցՄակու: 72 Եւ կողմն Վասպուրական գնդին² էր ի ծառայութիւն Պարսից արքային: 73 Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կողմանէ եւ սակաւք՝ ի Պարսից: 74 Ետ եւ զմեծ մասն³ Վրաց աշխարհին մինչեւ ցՏփիսիս քաղաք: 75 Բայց զՄուշեղն զայն կոչեաց թագաւորն ի պաշտոն. եւ այլ ո՛չ ետես զերկիրն:

ԳԼՈՒԽ ԺԳ

1 Բարեպաշտութիւն Շիրին քագուիւոյ: 2 Հրաման Խոսրովայ՝ հաստատուն կալ եւ մնալ ի հայրենի արեւնս:

3 ⁴էին սորա կանայք բազում ըստ աւրինի մոգութեան իւրեանց, բայց առ սա եւ կանայս քրիստոնեայս, եւ սորա կին քրիստոնեայ յոյժ գեղեցիկ ի Խուժաստան աշխարհէ, անունն⁵ Շիրին: 4 Սա է բամբիչն, տիկնաց տիկին: 5 Շինեաց վանս եւ եկեղեցի մերձակայ արքունական կայենիցն, եւ բնակեցոյց ի նմա քահանայս եւ պաշտաւնեայս. կարգեաց ռոճիկս եւ հանդերձագինս⁶ յարքունուստ, զարդարեաց ոսկով եւ արծաթով: 6 Եւ բարձր ի գլուխ համարձակութեամբ քարոզէր զաւետարանն արքայութեան ի դրանն արքունի. եւ ոչ ոք իշխէր ի մեծամեծաց քաւզէիցն⁷

բանալ զբերան իւր եւ ասել բան մի մեծ կամ փոքր ընդ քրիստոնէի:

7 Բայց ապա յորժամ լցան աւուրք եւ եհաս ի կատարեալ ժամանակի՝ զբազումս ի մոգուց որ դարձան ի քրիստոնէութիւն՝ սպանմամբ կատարեալ մարտիրոսութեամբ ի տեղիս տեղիս:

8 Եւ հրաման ետ, ասէ. «Մի՛ ոք յանաւրինաց իշխեսցէ դառնալ ի քրիստոնէութիւն, եւ մի՛ ոք ի քրիստոնէից դարձցի յանաւրինութիւն, այլ իւրաքանչիւր ոք յիւր հայրենի յաւրէնս պինդ կացցէ: 9 Եւ որ ոչն կամիցի ունել զհայրենի դէն, այլ ապստամբեալ ի բաց կացցէ յիւր հայրենի աւրինացն՝ մեռցի»: 10 Բայց ի մեծ տաւնի ողոգոմեանն՝ երթային ի վանաց Շիրինայ, եւ որ այլ քրիստոնեայք՝ ի դուռն սենեկին արքայի, պաշտմամբ ընթեռնուին զաւետարան, եւ առնուին պարգեւս ի թագաւորէն եւ գնային: 11 Եւ ոչ ոք իշխէր խաւսել⁸ ինչ ընդ նոսա:

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Խնդրել կայսերն Մաւրկայ ի Խոսրովայ գմարմին Դանիէլի մարգարէին. նշանք՝ որ եղեն ի տանելն գմարմինն:

2 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ խնդրեաց թագաւորն Յունաց ի թագաւորէն Պարսից զմարմին մեռելոյ առն այնորիկ, որ կայր ի Շաւշ քաղաքի, ի գանձուարքային, եղեալ ի պղնձի աւազանի, զոր պարսիկն անուանէ Կաւ Խոսրով, եւ քրիստոնեայքն ասեն զԴանիէլի մարգարէի:

3 Եւ արքայն Խոսրով հրամայէ տալ նմա զխնդիրն: 4 Իսկ տիկինն Շիրին⁹ յոյժ խռովեալ էր ի վերայ իրացն. իբրեւ ոչինչ կարաց առնել զկամս թագաւորին դարձուցանել՝ հրաման ետ ամենայն քրիստո-

1 Միհրդ., Պատկ. գԱռեստաւան եւ ցԳոգովիտ
 2 Ա գնդի
 3 Ա մասնն
 4 Ա էին սորա կանայք բառերի դիմաց, լուսանցեում, բնագիրն ընդօրինակող գրչի ձեռնով գրուած է ժԱ. գլխահամարը: Այստեղից սկսած գլուխները համարակալուած են (որոշ ընդհատումներով) մինչեւ ձեռագրի ԼԲ գլուխը: Գլուխներն ամէնուրեք սկսուում են կարմիր գլխատառերով:
 5 Ա անուն
 6 Ա անդերձագինս
 7 Ա փոթիցն

8 Ա ինչ խաւսել
 9 Ա Շիրինն

նէից աշխարհին, զի պահաւք եւ աղաւթիւք խնդրեսցեն՝ ի Քրիստոսէ, զի մի՛ շարժեալ գնասցէյաշխարհէն ²չնորհն այն:

5 Եւ ժողովեալ ամենայն երկիրն ի տեղին յայն, ուժգին խնդրուածովք եւ արտասուազոչ ողբովք խնդրէին ի Քրիստոսէ արգելուլ: 6 Եւ ածեալ նմա ջորիս, եւ բերեալ նմա դեսպակ արքունի, եւ առին գնացին: 7 Իսկ իբրեւ ելին ընդ դուռն քաղաքին, յանկարծաւրէն ցամաքեցան աղբիւրքն, որ ելանէին ի մէջ քաղաքին եւ հոսէին արտաքս. եւ ամենայն երկիրն վայիւ եւ աղաղակաւ գնային զհետ նորա:

8 Եւ եղեւ իբրեւ մեկնեցան³ ի քաղաքէն ասպարէզս երիս՝ յանկարծակի գտեղի առին ջորիքն որ ի դեսպակին. եւ ոչ ոք կարաց զնոսա շարժել ի տեղւոջէն: 9 Եւ դարձեալ անդրէն յանկարծակի բռնաբար սուր սուր⁴ հարկանելով զամբոխն պատանեցին եւ զգուռնքն բռնութեամբ, եւ ընթացան անդրէն ի քաղաքն. եւ եղեւ իբրեւ մտին ընդ դուռն քաղաքին՝ անդրէն արձակեալ բղխեցին ջուրք գետոյն, եւ հոսէին ջուրքն արտաքս լի յորձանաւք ջուրք իբրեւ զառաջինն:

10 Գիտութիւն արարին կայսերն վասն նորա փութանակի: 11 Եւ նորա տուեալ տանել նմա պատարագս՝ հրամայեաց առնել որպէս եւ նայն կամեցաւ. թողին գնա եւ գնացին ի բաց:

ԳԼՈՒԽ ԺԵ

1 Նենգաւոր խորհուրդ Մարկայ՝ թափուր իշխանաց Հայոց կացուցանել զՀայս: 2 Փախուստ բազում

իշխանաց յունական մասինն Հայոց առ Պարսիկս:

3 ⁵Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստանութեան⁶ վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց եւ զաւրաց իւրեանց⁷: 4 «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորեն: 5 Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել: 6 Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: 7 Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»:

8 Միաբանեցան երկոքին: 9 Եւ սկսաւ կայսրն⁸ հրաման տալ, զի ժողովեսցեն զամենեսեան⁹ եւ ի Թրակէ գումարեսցեն¹⁰. եւ սաստիկ տագնապէր՝ հրամանն կատարէր: 10 Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ եւ գալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր: 11 Իսկ նա զամենեսեան ընդունէր մեծարանաւք եւ մեծամեծ պարգեւս քան զկայսր պարգեւէր նոցա. մանաւանդ իբր տեսանէր զփախուստ նոցա ի կայսրէն՝ եւս առաւել մեծապէս սիրով կամէր զամենեսեան¹¹ կորզել առ ինքն:

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Գալ համարակարին գանձու մեծաւ առ յանկուցանել զիշխանս Հայոց ի բաժնէն յունաց. յափշտակել իշխանաց զգանձն: 2 Միաբանու-

1 Ա խնդրէ՛ք փխ խնդրեսցեն
2 Ա շնորհն այն բառերի դիմաց յուսանցում գրուած է գ՛րանիէլ մարգարէին շնորհ ոչ կարացին տեսանել
3 Միհրդ., Պատկ. մեկնեցաւ
4 ՁՁ սուր սուր բառերից մէկն աւելորդ է թւում:

5 ՁՁ Յայնմ ժամանակի բառերի դիմաց յուսանցում գրուած է ԺԳ գլխահամարը:
6 Բոյ. ամբաստան փխ ամբաստանութեան
7 Միհրդ., Պատկ. նոցա փխ իւրեանց
8 Ա կայսր
9 Միհրդ., Պատկ. զամենեսեանսն
10 Ա գումարեցին
11 ՏՏ չի՛ր զամենեսեան

թիւն երկոցունց թագաւորաց ընդ-
դէմ յափշտակչաց: 3 Հաշտութիւն,
երթալ ոմանց յիշխանացն առ
Պարսիկս եւ այլոց առ Յոյնս:

4 ¹Արդ՝ իբրեւ տեսանէր թագաւորն
Պարսից զմարդկան փախուստ ի կայսերէն՝
արձակոյր ի Հայս զՎասպուրականն հա-
մարակարն² հանդերձ գանձու բազմաւ եւ
մեծամեծ պատուովք. զի այնպէս նուա-
ճեալ անցէ գնոսա ի ծառայութիւն իւր. եւ
գնայր համարակարն ի Հայս, եւ ընդ նմա
գանձ ուղտուք³ բազմաւք:

5 Եւ մինչ Սամուէլ Վահեւունի հան-
դերձ այլովք ընկերաւք⁴ իւրեանց գնացին
ընդդէմ նորա եւ պատահեալ նմա⁵ ի սահ-
մանս Ատրպատական աշխարհին՝ հանին
զգանձն, եւ համարակարին զարեւն պար-
գեւ շնորհեցին: 6 Եւ էին այսոքիկ. Ատատ
Խորխոռունի⁶, Սամուէլ Վահեւունի եւ
Մամակ Մամիկոնեան, Ստեփանոս Սիւնի
եւ Կոտիտ⁷ Ամատունեաց տէր եւ Թէոդո-
րոս⁸ Տրպատունի, եւ հեծեալք իբրեւ երկու
հազարք: 7 Եւ զայս եղեալ ի մտի՝ եթէ
գանձուղ այդուիկ զՀոնս⁹ մե՛ր արասցուք.
Եւ առեալ ի սոցանէ աւգնականութիւն¹⁰
պատերազմեսցուք ընդ երկոսին թագա-
ւորսդ, եւ բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ
դարձուցուք: 8 Եւ հասեալ ի Նախճաւան
քաղաք՝ քակտեցան խորհուրդք միաբա-
նութեան. ո՛չ հաւատալով միմեանց ի բաց
բաժանեցին զգանձն, եւ բանակեցան եւ
նստան ի շամբին, որ կոչի Ճահուկ:

1 Ա Արդ իբրեւ տեսանէր բառերի դիմաց լուս-
անցում գրուած է ԺԴ գլխահամարը
2 Ա համակարն
3 Միհրդ., Պատկ. ուղտաւք / Ա ուղտովք
4 Միհրդ., Պատկ. ընկերովք / Ա ընկերովք
5 ՏՏ չի՛ք նմա
6 ՏՏ Խորխոռունի
7 Պատկ. կատից փխ Կոտիտ
8 Բոլ. Թէոդոս
9 ՁՁ, Միհրդ., Պատկ. այդորիկ զՀայաստան փխ
այդուիկ զՀոնս
10 Միհրդ., Պատկ. աւգնութիւն

9 Նա աւանիկ համարակարն երթեալ
ի դուռն՝ պատմեաց թագաւորին զամե-
նայն եղեալսն¹¹ եւ բանք կայսերն արդա-
րացան: 10 Յայնժամ հրամայէ գրել խոս-
րով արքայ հրովարտակ առ կայսր, եւ
խնդրէ զաւր յաւգնականութիւն, եւ ար-
ձակու¹² անդրէն¹³ զՎասպուրական համա-
րակարն ի Հայս: 11 Յայնժամ հրամայէ
Հերակղի զաւրավարի, որ նստէր ի Հայաս-
տան երկրի, առնուլ զզաւրս իւր եւ գնալ ի
վերայ նոցա ի պատերազմ: 12 Եւ արդ՝
երթեալ միացան երկուց թագաւորացն
զաւր ի Նախճաւանն քաղաքի: 13 Եւ եղեւ
ի գումարել ի վերայ նոցա զաւրացս այսո-
ցիկ՝ սկսան արձակել առ նոսա պատգամս,
զի մի՛ լիցի պատերազմ եւ արիւնհեղու-
թիւն¹⁴ ի մէջ քրիստոնէից, այլ ի բաց կաց-
ցեն ի յամառութենէն յայնմանէ, եւ նուա-
ճեսցին¹⁵ անդրէն ի ծառայութիւն թագա-
ւորին, եւ երգմամբ հաստատեալ առ նոսա,
եթէ ո՛չ երկիւղ է ձեզ ի թագաւորէն:
14 Ասէր եւ համարակարն, եթէ «Ձիս ար-
քայից արքայ առ ձեզ արձակեաց, եւ ես
ձեզ իսկ բերի զգանձն, եւ չի՛ք ինչ ձեզ
երկիւղ յարքայից արքայէ», եւ ցուցանէր
նոցա երգումն ըստ աւրինի իւրեանց:

15 Սկսան նոքա քակտել եւ բաժանել
ի միմեանց. ի բաց եկաց ի սոցանէ Մա-
մակն Մամիկոնեան եւ Կոտիտն Ամատու-
նեաց տէրն եւ Ստեփանոս եւ այլք եւս
ընդ նոսա, գանձինս անվնաս ցուցանելով
համարակարին¹⁶ նուաճեցին զզաւրս իւ-
րեանց ի ծառայութիւն արքային Պարսից:
16 Իսկ Ատատն Խորխոռունի¹⁷ եւ Սա-
մուէլն Վահեւունի զաւրաւքն իւրեանց

11 Ա եղեալն
12 Միհրդ., Պատկ. արձակէ
13 Ա անդէն
14 Ա արիւնհեղութիւն
15 Ա նուանեսցեն
16 Ա համակարին
17 Մալխ. Խորխոռունի

փախստական գնացին ընդ ¹քաղաքա-
գեւղն կոչեցեալ Սաւղայ, հասանէին յաշ-
խարհն Աղուանից, ի Հոնս դէմս արարեալ,
եւ անցեալ ընդ գետովն որ կոչի Կուր՝ բա-
նակէին առ գետեզերքն:

17 Հասեալ եւ սոքա յափն գետոյն՝
բանակէին աստի կողմանէ: 18 Եւ իբրեւ
ոչ կարացին նոքա վստահանալ ի ճամ-
բարս² Հոնաց, յայնժամ ապա երդուին
խնդրեալ ի թագաւորէն Յունաց, եւ գնա-
ցին ի ծառայութիւն նորա: 19 Գնացին ո-
մանք առ համարակարն, եւ դարձան անդ-
րէն յերկիրն իւրեանց: 20 Եւ ժողովեալ
համարակարին զամենայն իշխանս եւ
զգաւրս Հայոց, որ ի Պարսից կողմանէ՝ ո-
ղոքաւ եւ եւս քաղցր բանիւք յորդորեալ
զամենեսեան միաբանեաց, արար գունդս
գունդս: 21 Եթող անդրէն յաշխարհին
սակաւուք եւ գնաց. «Մինչեւ ես ծանու-
ցից, ասէ, վասն ձեր, եւ հասցէ անտի հրա-
ման դադարել անդ»: 22 Զի գմտաւ իսկ
ածեալ էր³ նորա եւ զայլոց գալն առ նոսա
եւ զբազմանալն:

23 Իսկ զԱտատն Խորխոռունի⁴ փու-
թանակի հանդերձ գաւրուն իւրոյ կոչէ
թագաւորն ի պաղատն⁵, եւ մեծարէ շքով
եւ պատուով. եւ տայ ինչս բազումս եւ
գումարէ ի Թրակացիս:

ԳԼՈՒԽ ԺԷ

1 Ապստամբութիւն իշխանաց ո-
մանց յունական մասինն եւ կատա-
րած նոցին: 2 Թշնամիք ի Թրակաց-
ոց կուսէ սպառնան քաղաւորու-
թեանն Յունաց:

3 ⁶Ապստամբէին դարձեալ ի կող-

մանցն⁷ Յունաց սեպուհքն⁸ Վահեւունիք
– Սամուէլն զոր ասացի եւ Սարգիս եւ
Վարազ Ներսէհ եւ Ներսէս եւ Վստամ եւ
Թէոդորոս Տրպատունի: 4 Եւ խորհէին
սպանանել զկորատորն՝ մինչդեռ նա
նստէր ի ջերմկի⁹ բժշկել ի հիւանդութենէ,
մերձ ի քաղաքն Կարնոյ: 5 Իսկ նա ուս-
տեմն իրագեկ¹⁰ եղեալ՝ փախստական ի
քաղաքն անկանէր. եւ նոցա արշաւեալ ի
ջերմուկն՝ ոչ դիպան նմա: 6 Ապա աւա-
րեալ զոր ինչ ի դիմի հարկանէր՝ առին ա-
ւար բազում, եւ գնացին յերկիրն ամուր
Կորդուաց. եւ կամեցեալ զամուրսն զայն
ունել:

7 Ապա գհետ նոցա լինէին գաւրն
Յունաց, Հերակղ գաւրավար եւ Համա-
գասպ Մամիկոնեան. եւ նոցա հասեալ
մերձ յամուրն՝ անցին զգետովն՝ որ կոչի
Ջերմաց ընդ կամուրջն¹¹, որ անուանեալ
կոչի Դանիէլի կամուրջ, եւ ի բաց ընկեցին
զկամուրջն եւ ամրացեալք յանձուկն¹²
պահէին զտեղի կամրջին¹³: 8 Կային առ
գետեզերքն¹⁴, եւ խորհէին՝ թէ զի՛նչ ար-
ժան է առնել: 9 Եւ իբրեւ ոչ գտին հուն,
եւ կամեցան դառնալ ի բաց՝ յանկարծակի
ի դիմի հարկանէր սոցա երէց մի ուղեւոր.
Եւ կալեալ նոցա զերէցն¹⁵ ասեն նմա.
«Յո՛յց մեզ գհուն գետոյս, ապա թէ ոչ
սպանցուք զքեզ»: 10 Եւ նորա առեալ
զգաւրն՝ եցոյց գհունն ի ներքոյ անդ:
11 Եւ անցեալ գաւրն ամենայն զգետովն՝
ոմանք ի թիկանց զամուրն պահէին, եւ ո-
մանք զկամրջախելն¹⁶ եւ զճորաբերանս

1 Ա. Բաղաբազեզն կոչեցեալ Սողա
2 Ա. ի ջամբարսն
3 Բոյ. ածեալ է փիս ածեալ էր
4 Մայիս. Խոռխոռունի
5 ՏՏ պալատն
6 Ա. Ապստամբէին բառի դիմաց յունացիութիւն
գրուած է ԺԵ գլխահամարը:

7 Միհրդ., Պատկ. ի կողմանց
8 Մայիս. սեպուհն (վրիպակ)
9 ՁԶ, Միհրդ., Պատկ. ի ջերմի փիս ի ջերմկի
10 Ա. իրագիկ
11 ՁԶ Կարմունջ (նաեւ յետոյ)
12 Ա. յամուկն
13 Ա. կարմնջին
14 Ա. գետեզերն
15 Ա. Էրէց / Ա. գերեցն
16 Ա. զկարմնջախելն

ունէին, եւ այլք մտեալ յամուրն՝¹ ընդ նոսա մարտնչէին, եւ չարաչար լինէր կոտորածն. բայց սակայն սպառէին գնոսա:

12 Արդ՝ գներսէս եւ զՎստամ եւ զՍամուէլ սպանին ի պատերազմին, որք ոչ սակաւ արարին շուրջ զնովաւ զկոտորածն. բայց զՍարգիս եւ զՎարազն ներսէ՛հ ձերբակալ արարին հանդերձ այլովք ոմամբք³. եւ տարեալ ի Կարնոյ քաղաք, եւ ապա գլխատեցին: 13 Որ ի ժամ գլխատելոյն ասէր Վարազ ներսէ՛հ ցՍարգիս. «Վիճակ արկցուք, թէ զո՛ առաջի սպանցեն»: 14 Իսկ Սարգիս ասէր. «Ես այր ծեր եմ եւ մեղաւոր, աղաչեմ զձեզ, զպարգեսագ այդ ինձ շնորհեցէք. թո՛ղ զի փոքր մի հանգեայց, եւ ոչ իսկ տեսից զմահս⁴ ձեր»: 15 Ապա գնա յառաջ գլխատեցին: 16 Բայց թէոգորոսն Տրպատունի փրծեալ փախստական գնաց ի դուռն արքային Պարսից: 17 Եւ նորա կապել⁵ հրամայեաց եւ տալ ի ձեռս թշնամեացն⁶, զի մեռցի. եւ սաստիկ աղետիւք վտանգեցոյց:

18 ⁷Եւ թշնամիքն որ էին ի Թրակացւոց կողմանէն, աւար առին զթագաւորութիւնն⁸, անհուն զաւրացն բազմութեամբ ի ձեռն հապճեպ պատերազմացն զթագաւորութիւնն եւ զազգս Հռովմայեցւոց⁹ տէրութեանն կամեցեալ բառնալ, եւ թագաւորութեանն տիրել անձամբ ի վերայ թագաւորանիստ քաղաքին:

ԳԼՈՒԽ ԺԸ

1 Մարիկ գումարէ զաւրս ընդդէմ Թրակացւոց. կացուցանէ զաւրա-

գլուխ զՄուշեղ Մամիկոնեան:

2 Զառաջինն հարկանեն Յոյնք զթշնամիս, յերկրորդումն նուագի հարկանին մեծաւ կործանմամբ:

3 Սպանումն Մուշեղի:

4 ¹⁰Յայնժամ թագաւորն Յունաց հրաման տայր՝ ժողովել զաւրաց իւրոց զամենայն որ յարեւելից կողմանէ. վասն զի խաղաղութիւն էր, եւ բանք ինչ ոչ գոյին նորա ընդ Ասորիսն ի Պարսից տէրութենէն: 5 Հրաման ետ անցուցանել զամենեսեան ընդ ծով, եւ գումարել ի կողմանս Թրակացւոց ընդդէմ թշնամւոյն¹¹: 6 Հրաման ետ դարձեալ ժողովել զամենայն այր եւ ձի ի Հայաստանեայց¹² եւ զիշխանս նախարարացն, որք հմուտ էին եւ կարող զդէմ ունել՝ կռուել ռազմ ի նիզակամուխ ճակատի: 7 Եւ հրաման ետ դարձեալ վերստին զաւր հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, զամենեսեան կամով եւ ընտրով¹³ հասակի. կազմել գունդս¹⁴ զարդու եւ զինու վառեալ եւ անցուցանել զամենեսեան¹⁵ յաշխարհն Թրակացւոց¹⁶ ընդդէմ թշնամւոյն. եւ Մուշեղ Մամիկոնեան զաւրագլուխ նոցա:

8 Արդ՝ երթեալ նոցա ի վերայ ազգացն, որ ունին զկողմանս արեւմտից ի յեզր մեծի գետոյն Դանուբայ: 9 Եւ եղև պատերազմ սաստիկ ի վերայ երեսաց երկիրն այնորիկ. խորտակեցաւ զաւրութիւն թշնամւոյն այնորիկ առաջի երեսաց զաւրացն Յունաց, եւ փախստական արարեալ յայնկոյս գետոյն Դանուբայ: 10 Եւ ինքեանք մեծաւ յաղթութեամբ հրեշտակ ա-

1 Ա ի յաւուրն փխ յամուրն
2 Ա Վարագ ներսէս (նաեւ յետոյ)
3 Ա ոմանք փխ ոմամբք
4 Միհրդ., Պատկ. գմանն
5 Ա կապեալ
6 Ա թշնամեաց
7 Ա եւ զթշնամիսն որ էին ի թիրակացոց
8 Բոլ. զթագաւորութեանն
9 Ա հռովմայեցոց

10 Ա Յայնժամ թագաւորն Յունաց բառերի դիմաց լուսանցեում գրուած է ժՁ գլխահամարը:
11 Ա թիրակացոց ընդդէմ թշնամւոյն
12 Ա Հայաստանեաց
13 Ա ընդրով
14 Միհրդ., Պատկ. զարդս փխ զարդու
15 Միհրդ., Պատկ. զամենեսեանն
16 Ա թիրակացւոց

ւետաւոր կայսերն եւ ամենայն պաղատոյն¹ փութանակի առաքէին:

11 Եւ գնացեալ ինքեանք ի ներքին կողմն աշխարհին² ասպատակաւ, եւ անցին ի նեղ ինչ տեղիս, աւերէին գերկիրն ամենայն, եւ հասեալ ի դիմին՝ եղեւ պատերազմ մեծ. հարին զՅոյնն եւ խորտակեցին կործանմամբ մեծաւ, եւ փախստական վարեցին առաջի իւրեանց: 12 Եւ կալեալ գնեղ վայրն առաջի նոցա թշնամւոյն՝ վանեցին զնոսա սրով սուսերի, եւ ճողոպրեալ³ հազիւ հազ գերծանէին յամուրս աշխարհին թրակացւոց: 13 Եւ ձերբակալ արարին զՄուշեղն Մամիկոնեան, կապեցին զբարձրաբերձ տնկոյ անտառին եւ սպանին: 14 Եւ բազմութիւն նախարարացն եւ զաւրացն Հայաստանեայց յաւուր յայնմիկ կործանեալ սատակեցան:

15 Ապա վերստին դարձեալ այլ զաւրս գումարեալ՝ հրամայեաց թագաւորն միայն զգուշանալ անձանց:

ԳԼՈՒԽ ԺԹ

1 Հրաման կայսերն Մաւրկայ՝ քարոզել գտողովն Քաղկեդոնի յեկեղեցիս Հայաստանեայց: 2 Բաժանումն արժոյն հայրապետութեանն:

3 ⁵Հրաման ելանէ դարձեալ ի կայսերէն վերստին այլ՝ քարոզել գտողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի, եւ միաւորել հաղորդութեամբ ընդ զաւր⁶ իւր: 4 Իսկ մանկունք ուխտի եկեղեցեացն⁷ Հայոց փախստական գնացեալ յաւտար երկիր վարէին: 5 Եւ բազմաց առ ոչինչ համարեալ զհրամանն՝ գտեղի կա-

լան եւ անշարժ մնացին: 6 Եւ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան աւրինաւք⁸: 7 Բաժանեցաւ ապա եւ աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մովսէս, եւ միւսոյն՝ Յովհանն⁹: 8 Մովսէս ի Պարսից կողմանէ, եւ Յովհանն՝ Յունաց:

9 Եւ Յովհան ընդ նոսա հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենեւին ոչ լինէր ի նոսա հուպ: 10 Եւ սպասք ամենայն եկեղեցւոյն որ ի Դըւնի սրբոյն Գրիգորի, զոր տարան եղեալ ի պահեստի ի Կարնոյ քաղաքի: 11 Ուստի վարեցաւ ինքն այսուհետեւ ի գերութիւն յերկիրն Պարսից, յԱհմատան շահաստան:

ԳԼՈՒԽ Ի

1 Հրաման դարձեալ ի կայսերէն՝ ժողովել գաւրս ի Հայոց եւ առաքել ի ձեռն Սահակայ Մամիկոնեանի եւ Սմբատայ Բագրատունւոյ. դառնալ Սմբատայ անդրէն յետս եւ խորհուրդն ապստամբութեանն:

2 Սմբատ ըմբոնի եւ ածի ի Կոստանդնուպոլիս. հատանի վնիո ի վերայ նորա՝ արկանել ի կիւնիկն:

3 Նահատակութիւնք Սմբատայ անդ եւ գտանել ողորմութիւն. գկնի աքսոր նորա յԱփրիկէ:

4 ¹⁰Յայնմ ժամանակի¹¹ դարձեալ հրաման ելանէր ի կայսերէն՝ վերստին քննել եւ խնդրել յաշխարհէն Հայոց զայր եւ զճի արս ընտիրս¹² սպառազէնս ԲՆ հեծելոց, եւ տալ յերկուս արս հաւատարիմս եւ արձակել մեծաւ ստիպով:

1 Ա. պաղատայիւն / ՏՏ պաղատայիւն
2 Միհրդ., Պատկ. չիք աշխարհիւն
3 Ա. նողոպրեալք
4 Ա. Հայաստանեացն
5 Ա. Հրաման ելանէ բառերի դիմաց լուսանցում գրուած է ժէ գլխահամարը:
6 Միհրդ., Պատկ. գաւրս
7 Ա. եկեղեցեաց

8 ԶԶ, Միհրդ., Պատկ. արիւնաւորք փի արիւնաւ
9 Բոյ. միւսոյն Յոնան
10 Ա. Յայնմ ժամանակի բառերի դիմաց լուսանցում գրուած է ժԸ գլխահամարը:
11 Ա. ժամանակաւ
12 Ա. ընդիրս

5 Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս ԲՆ սպառազէնս եւ ետուն ¹երկու հազարս ²յերկուս արս հաւատարիմս, մի հազար ցՍահակ Մամիկոնեան եւ մի հազար ի ձեռն Սմբատայ³ Բագրատունւոյ, որդւոյ Մանուէլի: 6 Եւ ոչ ընդ մի ճանապարհ արարեալ նոցա զչուն, այլ զՍահակ⁴ Մամիկոնեան արձակեն միով հազարաւ ընդ Սեբաստիա, եւ զՍմբատ Բագրատունի միւսովն ընդ կողմանս Խաղտեաց: 7 Եւ Սահակ գնացեալ տանի հասուցանէ⁵ զգաւրն ի պաղատն, եւ յանդիման լինի թագաւորին:

8 Իսկ Սմբատ հասեալ ի Խաղտիս՝ բռնանայ. քանզի երկեաւ զաւրն ի ճանապարհի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զհետ թագաւորին խնդրոյ: 9 Ազգ լինի թագաւորին եղեալ իրքն⁶. ապա ի ձեռն հրովարտակաց եւ հաւատարիմ հրեշտակաց երդմամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանակի արձակել յերկիրն իւր: 10 Եւ զաւրուն խոստանայր պատիւս մեծամեծս եւ ինչս, եւ այնպէս ողորեալ ածէ ի հաշտութիւն: 11 Եւ գնացեալ միաբանութեամբ յանդիման լինէին թագաւորին: 12 Եւ թագաւորն սպառազինէ զգաւրն եւ զարդարէ եւ գումարէ ի սահմանս Թրակացոց, եւ զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք:

13 Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, եւ խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին եւ նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի՛ եւ նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացոց, այլ կեալ եւ մեռա-

նել ի վերայ աշխարհին իւրեանց: 14 Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր զմիաբանութիւն իրին յինքեանս⁷ հաստատեալ, այլ ոմանք ի նոցանէ շոգմոզութեամբ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին, եւ ինքեանք այսր եւ անդր սորսորեալ խուսափէին:

15 Յայնմ ժամանակի հասանէին դեսպանք արքունականք հրովարտակաւք, եւ կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամբք ⁸եւթն արամբք եւ տարան յանդիման թագաւորին: 16 Եւ քննեալ զնոսս ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել եւ ընկենուլ ի կիւնիկն:

17 Եւ էր սա այր անհեղեղ⁹ անձամբ եւ գեղեցիկ տեսեամբ, եւ բարձր եւ լայն հասակաւ, եւ բուռն եւ ցամաք մարմնով: 18 Յայնժամ¹⁰ հզաւր եւ պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւնն եւ զբռնութիւն: 19 Այս է զաւրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց եւ զաւրաւոր ծառոց, ի վերայ յաղթանդամ եւ հզաւր երիվարին, եւ յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր, եւ կծկեալ¹¹ ուժգին երանաւքն եւ ոտիւք զմէջ երիվարին՝ վերացուցանէր երանաւքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զաւրացն տեսեալ ահաբեկ լինէին ի զարմացմանէ:

20 Եւ արդ՝ մերկացուցեալ զնա եւ ագուցեալ անդրավարտիս եւ ընկեցեալ ի կիւնիկն, զի կուր լիցի գազանաց:

21 Եւ արձակեալ ի վերայ նորա¹² արջ: 22 Եւ եղեւ՝ իբրեւ դիմեաց ի վերայ նորա արջն՝ նա աղաղակեաց մեծաձայն եւ ըն-

1 Միհրդ., Պատկ. չի՛ երկու հազարս

2 Ա. յերկուս արս

3 Ա. Սմպատայ

4 Բոլ. Սահակ

5 Բոլ. հասուցանել փխ հասուցանէ

6 Ա. իրսն փխ իրքն

7 Ա. ի յինքեանս

8 Ա. եաւթն արեամբք

9 Միհրդ., Պատկ. անհեթեթ

10 Դ. յայնժամ քառք ջնջուած դարձուած է յոյժ:

11 Միհրդ. կծեալ փխ կծկեալ

12 Ա. նոցա փխ նորա

Թացաւ ի վերայ արջոյն, եւ զարկեալ բռամբ իւրով զճակատն, եւ անդէն¹ սատակէր զնա ի տեղւոջն:

23 Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ: 24 Իսկ նորա բռուն հարեալ զեղջերացն² ցլուռն... եւ զաղաղակ հզաւրին... եւ յաւգնեալ ցուլն ի մարտին՝ գելոյր զպարանոցն եւ խորտակէր զերկոսին եղջիւրսն ի վերայ գլխոյն. թուլանայր ցուլն եւ յետս-յետս³ գնալով ի փախուստ դառնայր: 25 Իսկ նորա զհետ ընթացեալ՝ բռուն հարկանէր յագին եւ ի կճղակն ազդեր միոյ ոտին նորա, եւ թափեալ զկճղակսն՝ մնայր ի ձեռին նորա: 26 Եւ ցուլն գնայր ի նմանէ⁴ փախստական, միով ոտամբն բոկ:

27 Դարձեալ երրորդ անգամ արձակեցին⁵ ի վերայ նորա առիւծ: 28 Եւ եղեւ՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն⁶ այնպէս իմն յաջողեալ նմա ի տեսանէ, բռուն հարեալ յականջ առիւծուն⁷ հեծաւ ի վերայ նորա: 29 Եւ անդէն բռուն հարեալ զխոչափողիցն՝ խեղդէր զառեւծն եւ սպանանէր: 30 Անդ աղաղակ բազում ամբոխին զերկիրն լնուին, եւ խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն:

31 Եւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր ի վերայ առիւծուն մեռելոյ, զի փոքր մի հանգիցէ: 32 Անդ եւ կին թագաւորին անկեալ առ ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն այրն այն թագաւորին եւ կնոջ նորա, եւ անուանեալ էր զնա⁸ Իւր

յորդեգիրս: 33 Եւ նա զարմացեալ ընդ զաւրութիւն եւ ընդ պնդութիւն առնն եւ լուեալ⁹ պաղատանաց կնոջն եւ ամենայն պաղատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն:

34 Յայնժամ տարան զնա ի լուացումն ի բաղանիս. լուացին զնա եւ զգեցուցին, եւ կոչեցին զնա յընթրիս արքունի, դարմանեցին զնա կերակրովք: 35 Եւ զկնի սուղ ինչ անցելոց, մանաւանդ եթէ ոչ ի չար ինչ կամաց թագաւորին, այլ ի նախանձորդաց չարախաւսութենէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ եւ աքսորել ի կղզիս հեռաւորս. եւ ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ, (եւ առնել նոցա անդ ի մէջ նոցա)¹⁰ եւ առնել զնա անդ ի մէջ զաւրացն, որ էին անդ՝ տրիբուն¹¹:

ԳԼՈՒԽ ԻԱ

1 Խոսքով հրովարտակաւ կոչէ ի դուռն գնախարարսն՝ գոբս թողեալ էր համարակարին. ցուցանէ նոցա պատիւս մեծամեծս եւ զգաւրս նոցա նստուցանէ ի Սպահան քաղաքի:

2 ¹²Իսկ որ ի Պարսից կողմանէ էին նախարարքն եւ զաւրք, զորմէ վերագոյն ասացի, եթէ եթող համարակարն եւ գնաց. թէ մինչեւ հասցէ հրամանն արքունի:

3 Յայնժամ եկին հասին պէշասպիկք¹³ հրովարտակաւք կոչել զնոսա միաբանութեամբ ի դուռն արքունի: 4 Եւ այսոքիկ են նախարարք եւ զաւրք, որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր գնդովք եւ դրաւչու ի դուռն թագաւորին Պարսից Խոսրովու, յամի վեցերորդի թագաւորութեան նորա: 5 Առաջին՝ Գագիկ

1 Միհրդ., Պատկ. անդրէն
2 Ա զեղջրուացն
3 Մալխ. յետս փխ յետս-յետս
4 Ա փախստական յետս յետս գնալով միով ոտամբն բոկ
5 Ա արձակէ
6 Ա, Մալխ. առեւծ / Ա առեւծուն
7 Ա առեւծուն (նաեւ յետոյ)
8 Ա ընդ որդեգիրս եւ նա զարմացեալ էր փխ իւր յորդեգիրս: Եւ նա զարմացեալ

9 Ա լսեալ
10 22 եւ առնել նոցա անդ ի մէջ նոցա բառերն աւելորդ են:
11 22, Միհրդ., Պատկ. ի բուն փխ տրիբուն
12 Ա Իսկ որ ի Պարսից բառերի դիմաց լուսանց-
-ոււմ գրուած է ԺԹ՝ գլխահամարը:
13 22, Միհրդ., Պատկ. պէշասպիկ

Մամիկոնեան որդի Մանուէլի. երկրորդն՝ Պապ Բագրատունի որդի Աշոտայ ասպետի. երրորդն՝ Խոսրով Վահեուհեաց տէր. չորրորդն՝ Վարդան Արծրունի. հինգերորդն՝ Մամակ Մամիկոնեան. վեցերորդն՝ Ստեփանոս Սիւնի. եւթներորդն՝ Կոտիտ Ամատունեաց տէր, եւ այլք ընդ նոսա ի նախարարաց: 6 Եւ հասեալ նոցա յԱսորեստան ի տեղի արքունական տանն եւ յանդիման եղեն թագաւորին: 7 Իսկ նա խնդութեամբ ընկալաւ զնոսա, եւ երեւելի շքեղութեամբ մեծացոյց պատուովք. եւ զմեծամեծ իշխանսն¹ հրամայէ պահել ի դրանն արքունի, կարգել նոցա ռոճիկս յարքունուստ՝ տալ ի տունս իւրաքանչիւր, եւ կոչել յամենայն աւուր յընթրիս արքունի: 8 Եւ զաւրաց նոցա հրաման տայր նստել² ի Սպահան աշխարհի, եւ դարմանել զնոսա սիրով եւ ամենայն կամակարութեամբ:

ԳԼՈՒԽ ԻԲ

1 Սպանումն Վնդոյի. փախուստ եւ ապստամբութիւն Վստամայ եւ երթնորա ի կողմանս Պարթեւաց:

2 ³Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր Խոսրով արքայն՝ խնդրել զքէն վրիժուց մահուան հաւր իւրոյ ի ձեռաց նախարարացն այնոցիկ, որք սպանին զնա: 3 Եւ նախ կամի դատել զքեռիս իւր: 4 Հրաման տայ ունել զՎնդոյ, զայն որ վերագոյն ասացի, կապել եւ սպանել: 5 Իսկ եղբայր նորա Վստամ ոչ հանդիպեցաւ ի ժամուն յայնմիկ⁴ ի դրանն արքունի: 6 Եւ թէպէտ եւ⁵ կոչեալ պատրանաւք եւ բազում ողորքանաւք, իբր թէ ոչ գիտիցէ նա զմահ եղբաւրն իւրոյ, սակայն նա ուստեմն իրա-

զեկ⁶ եղեալ՝ ոչ անկանէր ի պատրանս խաբէութեան նորա, այլ ապստամբեալ անկանէր յամուր երկիրն Գեղմայ⁷, եւ գումարեալ նուաճէր ընդ ինքեան զամենայն զաւրս նոցա:

7 Եւ ելեալ ի կողմն Ռէոյ ասպատակաւ, եւ աւար հարկանէր զամենայն զբազում աշխարհս թագաւորութեանն Պարսից: 8 Յայնժամ արքայն Խոսրով առնոյր զզաւրս ⁸իւր եւ զնայր ի վերայ նորա. եւ զաւր կայսերն⁹ էր ընդ նմա: 9 Եւ մարտ եղեալ կռուով ընդ միմեանս յՌէհ աշխարհին: 10 Եւ յայնմ պատերազմի ոչ փոքր ինչ քաջութիւն գործեալ հայակոյտ զաւրացն. զոր տեսեալ թագաւորն՝ առաւել զարմանայր:

11 Իսկ իբրեւ ոչ կարաց ընդդէմ ժուժկալել ապստամբն՝ ի լեռնակողմն ապաւինեալ ամրանայր: 12 Եւ այնպէս ոչ յաղթահարեալք ի միմեանց՝ ի բաց դառնային ¹⁰յիւրաքանչիւր տեղի: 13 Գնայր եւ ապստամբն Վստամն յամուր յերկիրն Գեղմայ, որ եւ ապա անտի չու արարեալ երթայր ի կողմանս Պարթեւաց, ի բուն երկիրն իւրոյ իշխանութեանն, զի նուաճեցուցէ ընդ ինքեան զզաւրս կողմանն այնորիկ եւ դարձցի նոյնպէս»:

14 Եւ թագաւորին չու արարեալ յԱսորեստան՝ հասանէր ի բուն կայսեանս¹¹ իւրոյ արքունականս, եւ իշխանք նախարարացն Հայոց ընդ նմա:

ԳԼՈՒԽ ԻԳ

1 Մահ նախարարացն Հայոց որ յԱսորեստանի: 2 Սպանումն Կոտիտայ Ամատունոյ սադրանաւ

1 Ա. գիշխանսն
 2 Միհրդ., Պատկ. նստիլ
 3 ՁՁ Յայնմ ժամանակի բառերից առաջ լուսանց-
 փում գրուած է Ի գլխահամարը:
 4 Ա. յայնուսիկ փխ յայնմիկ
 5 Միհրդ., Պատկ. թւպէտ փխ թւպէտ եւ

6 Ա. իրագիկ
 7 Միհրդ. Գեղամայ
 8 Մալխ. իւր գնայր փխ իւր եւ գնայր
 9 Ա. թագաւորին փխ կայսերն
 10 Ա. յիւրաքանչիւր իւր տեղի
 11 Միհրդ., Պատկ. կայսանս

Խոսրովայ: 3 Ապստամբութիւն գաւրուն Հայոց որ նստէրն ի Սպահան: 4 Յափշտակութիւն գանձու համարակարին եւ անկանել ումանց յերկիրն Պարթեւաց առ Վստամ:

5 ¹Յայնժամ հասեալ մահ իշխանացն Հայոց, մեռան ի դրանն արքունի մահուամբ իւրեանց՝ Գագիկ Մամիկոնեան եւ Խոսրով Վահեռունեաց տէր: 6 Իսկ Մամակ Մամիկոնեան արձակեալ ի Հայս վասն զաւրուն. եւ նորա իսկ եւ իսկ հասեալ ի Դուին² քաղաք, կեցեալ սակաւ ինչ աւուրս՝ մեռանէր: 7 Իսկ Ստեփանոս Սիւնոյ պայքարեալ³ վասն տանուտէրութեան (լեալ)⁴ ընդ հաւրեղբաւրն իւրում Սահակայ: 8 ⁵Իսկ Սահակ գրէր ի վերայ նորա գիր մահապարտութեան, եւ կնքէր մատանեաւ իւրով եւ տանն եպիսկոպոսի, եւ մատանեաւք այլ եւս իշխանաց Սիւնեաց, յիշեցուցանել⁶ թագաւորին զվնաս նոցա ապստամբութեանն:

9 Յայնժամ հրաման ետ արքայն կապել զՍտեփանոս եւ դնել ի բանտ. եւ զլիատեցին զնա ի բուն աղուհացսն⁷ ի զատկին շաբաթուն:

10 Եւ զԿոտիտ արձակեալ⁸ ի Մրծուին դեսպան՝ հրաման ետ հեծելոցն դարանամուտ լինել ի դաշտի, եւ աւազակաբար յարձակեալ ի վերայ՝ սպանին զնա ի ճանապարհին: 11 Իսկ զաւրն նոցա որ նստէին ի Սպահան աշխարհին, իբրեւ լուան զեղեալսն՝ ասպատակեալ աւերեցին

զերկիրն. ⁹առին եւ զգանձն արքունի որ ի տանն ¹⁰համարակարին, որ ի հարկաց ժողովեալ աշխարհին այնորիկ. եւ ճանապարհ կալեալ զնացին յամուրն ի յերկրին Գեղմայ: 12 Եւ զհետ սոցա հասանէին զաւրն պերոզական¹¹. զոմանս ի նոցանէ սրով սատակէին, եւ ոմանք ընդ իւրեանս իսկ սուր ելեալ՝ զի մի՛ լիցին ձերբակալեալ¹². եւ ոմանք մազապուր¹³ պրծեալ անկանէին յամուր երկրին Գեղմայ: 13 Եւ իբրեւ անդ ոչ դիպէին Վստամայ՝ ճանապարհ կալեալ զնացին յերկիրն¹⁴ Պարթեւաց, եւ երթեալ¹⁵ կային առաջին նորա:

ԳԼՈՒԽ ԻԴ

1 Սմբատ Բագրատունի կարգի մարզպան Վրկանայ, նուանէ զապստամբսն, բարեկարգէ զաշխարհն Վրկանայ:

2 ¹⁶Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունուոյ յաչս Խոսրովու արքային. տայ ի նա¹⁷ զմարզպանութիւն երկրին Վրկանայ, առնէ զնա իշխան ի վերայ¹⁸ ամենայն կողմանն այնորիկ, առաւել մեծացուցանէ պատուովք եւ իշխանութեամբ. լնու զնա ոսկւով եւ արծաթով, զարդարէ ի հանդերձս պատուականս եւ յերեւելիս: 3 Տայ նմա զկամարն եւ զսուսերն լեալ հաւր իւրոյ¹⁹ Որմզգի. գումարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկս եւ զհայաստանեայս եւ

1 Ա. Յայնժամ հասեալ մահ բառերի դիմաց լուսանցում գրուած է ԻԱ. գլխահամարը:
2 Ա ի Դուին
3 Մալխ. պայքար փխ պայքարեալ
4 ՁՁ լեալը աւելորդ է:
5 ՁՁ Միհրդատեանը ԻԳ 8 նախադասութիւնը վերցրել է փակագծերի մէջ եւ ծանօթագրել. «Փակագծիւ եղեալն՝ գերծեալ էր ի միւս օրինակին»:
6 Ա յիշեցուցանելով
7 Բոլ. աղուհացն
8 Ա արձակել

9 Պատկ. առին զգանձն փխ առին եւ զգանձն
10 Ա համակարին ի հարկաժողովեալ զաշխարհին
11 Ա պերոզական
12 Ա ձերբակալեալ
13 Ա մազապուր
14 Ա յերկրին
15 Մալխ. երթալ (վրիպակ)
16 Ա եւ եղև ի ժամանակին բառերի դիմաց լուսանցում գրուած է ԻԲ գլխահամարը:
17 ԱԲԳ մայ ի նա / Դ տայ ի նա / Միհրդ., Պատկ. տայ նմա
18 Բոլ. եւ ի վերայ
19 Ա իւրում փխ իւրոյ

հրամայէ¹ գնալ յերկիր իշխանութեանն իւրոյ:

4 Էին ապստամբ ի ժամանակին յայնմիկ յարքայէն Պարսիկ երկիրքն, որ աւուականալ կոչի Ամազ, Ռոյեան, Զրէճան² եւ Տապարաստան. զորս վանեալ նորա պատերազմաւ՝ հարկանէր սրով սուսերի եւ ի ծառայութիւն արքային Պարսից կացուցանէր, եւ շինեալ հաստատէր զամենայն երկիր իւրոյ մարզպանութեանն, քանզի էր երկիրն աւերակ: 5 Կային յաշխարհին յայնմիկ ազգն գերեալք ի Հայաստան երկրէ, եւ նստուցեալ առ ստորոտով անապատին մեծի, որ ի Թուրքաստանի եւ ի Դելհաստան կողմանէ. զլեզու իւրեանց մոռացեալ³ եւ դպրութիւն նուագեալք⁴ եւ կարգ քահանայութեանն պակասեալք: 6 Կային անդ եւ ազգ Կողրեացն, որք գերեցան մերովքն արամբք⁵: 7 Կային անդ եւ յիշխանութենէն Յունաց եւ յԱսորոց⁶ կողմանէ ոչ սակաւք:

8 Էին ազգ Կողրեացն անհաւատք. բայց ի վերայ քրիստոնէիցն ծագէր լոյս մեծ. հաստատէին ի հաւատս եւ ուսանէին զդպրութիւն եւ զլեզու⁷. եւ հաստատէին ի կարգ⁸ քահանայութեան յաշխարհի անդ⁹ երէց ոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Աբէլ¹⁰:

ԳԼՈՒԽ ԻԵ

1 Դիմելն Վստամայ յԱսորեստան ի վերայ Խոսրովու եւ մեռանել յուղուոչ ի նենգութենէ Պարիովկայ ար-

բային Քուշանաց: 2 Յրուել զաւրաց Վստամայ: 3 Պատերազմ Սմբատայ մարզպանի ընդ Գեղուսն եւ պարտութիւն:

4 ¹¹Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ նուաճեալ ընդ ինքեան Վստամայ զերկուսին թագաւորսն Քուշանաց, զՇաւկն¹² եւ զՊարիովկն. եւ գումարեալ զամենայն զաւրսն կողմանց Արեւելից՝ դիմեաց գնաց յԱսորեստան զաւրու մեծաւ եւ հզաւր յոյժ, զի սպանցէ զԽոսրով եւ առցէ յինքն զթագաւորութիւն նորա: 5 Եւ զաւրք նորա կային¹³ յաջմէ եւ յահեկէ բացագոյն¹⁴ ի նմանէ. եւ արքայն Քուշանաց Պարիովկն ի թիկունս նորա զկնի նորա: 6 Յայնժամ արկեալ ի միտս իւր նենգաւոր արքային Քուշանաց՝ երթեալ անցանէր զառաջեաւ նորա սակաւ արամբք, եւ իջեալ յերիվարէն երկիր պագանէր ի վերայ երեսաց իւրոց եւթն անգամ: 7 Եւ մատուցեալ սա յառաջ՝ հրամայեաց հեծանել անդրէն յերիվարն իւր: 8 Եւ դարան գործեալ էր նմա ի ճանապարհի: 9 Ասէ ցնա¹⁵ Պարիովկն. «Հրամայեա՛ արձակել ի քէն զամբոխդ, զի խաւսեցայց ինչ ընդ արքայի բանս ինչ խորհրդեան»: 10 Որոյ¹⁶ ոչ զգացեալ զնենգութիւն նորա՝ հրամայեաց մարդկանն երթալ յինքենէ: 11 Եւ եղեւ մինչդեռ երթային նոքա զճանապարհն եւ խաւսէին՝ ելին յանկարծակի դարանակալքն ի տեղւոջէն իւրեանց, եւ հարեալ սպանին զՎստամ: 12 Եւ ժամադիր լեալ զաւրացն իւրոց Պարիովկն՝ ազգ առնէր նոցա փութանակի, եւ նոցա զհետ արշա-

1 Միհրդ., Պատկ. հրամայէ փխ եւ հրամայէ
2 Պատկ. Զրէնանը ուղղել է Զրէնան. նրան հետեւել է նաեւ Մայիսանցը:
3 Բոյ. մոռացան
4 Ա. նուաղեալք
5 Ա. մրաւն արամբ / Դ մսերով մրաւ ֆնարամբ
6 Ա. յԱսորոց փխ եւ յԱսորոց
7 Բոյ. դպրութիւն եւ լեզու
8 Ա. կարգ փխ ի կարգ
9 Ա. անտ
10 Պատկ. Աբել

11 Ա. եւ եղի բառերի դիմաց լուսանցում գրուած է ԻԳ զլխահամարը:
12 Ա. զշօկն / Պատկ. Շօկն, բայց Պատկանեանը եւ Մայիսանցը, հետեւելով Միհրդատեանին, դարձրել են զՇաւկն:
13 Ա. գային փխ կային
14 Ա. բայցագոյն
15 Պատկ., Մայիս. ասէ փխ ասէ ցնա
16 Ա. որոց

ւեալ հասանէին եւ կալեալ զկին Վստամայ եւ զամենայն աղիս¹ եւ զկարասի նորա՝ դարձան փութանակի եւ գնացին:

13 Անագան ուրեմն եւ ապա յետ աւուրց ինչ անցելոց ազդ լինէր ամենայն զաւրացն. եւ նոքա լքեալ² քակտեցան ի միմեանց, եւ մեկնեալ գնացին յիւրաքանչիւր ի տեղիս: 14 Գնացին նոյնպէս եւ զաւրն Գեղուճն որ ընդ նմա, եկեալ հասեալ փութանակի յամուրս աշխարհին իւրեանց, եւ արքն³ այն հայաստանեայք, որ ապստամբեալ էին ի Սպահան⁴ եւ գնացեալք առ Վստամ⁵ ընդ նոսա: 15 Իբրեւ գնացին նոքա յերկիրն որ կոչի Կոմշ⁵, որ կայ անդրէն ի թիկանց Վրկանի, յայնմ կողմանէ սարոյն, որ անցանէ ընդ մէջ նոցա, եւ հասին ի գեւղն⁶, որ կոչի⁷ Խեկեւանդ⁸ ընդդէմ ելանէր նոցա Շահր Վահրիճ, եւ Սմբատ Գուրկան մարզպան հանդերձ բազմաւ: 16 Եւ զաւրք Գեղուճք ոչ աւելի քան զերկուս հազարս: 17 Եւ պատերազմ ի վերայ երկրին այնորիկ: 18 Հարին զզաւրն⁹ Պարսից, եւ փախստական արարեալ հալածական տանէին. զբազումս սպանեալ¹⁰ եւ զբազումս ձերբակալ արարեալ դարձան անդրէն եւ բանակեցան մաւտ ի տեղի պատերազմին եւ արքն¹¹ այն հայաստանեայք¹² ընդ նոսա: 19 Մեռան բազումք եւ ի զաւրացն եւ ի հայաստանեայցն, որ ընդ մարզպանին Սմբատայ:

1 Ա ախղ
2 Միհրդ., Պատկ. լքեալք
3 Միհրդ., Պատկ. այնք
4 Բռլ. ի Սմբատայ փխ ի Սպահան
5 Միհրդ. կոմշ
6 Ա ի գեւաղն
7 Պատկ., Մալխ. կոչին
8 Ա Խիկեւանդ / Մալխ. Խեկեսանէ (վրիպակ)
9 Ա ըզօրն փխ զզաւրն
10 Ա զբազում սպանեալ
11 Միհրդ., Պատկ. այնք
12 Ա հայաստանայք

ԳԼՈՒԽ ԻԶ

1 Գիւտ մասին տէրունեան խաչին ի ձեռն տեսլեան:

2 Արդ՝ անկեալ ի միտ առն միոջ երազիւր¹³ երեք ամսաւք յառաջ քան զլինելն պատերազմին այնորիկ. եւ անուն առն Յովսէփ: 3 «Այր մի, ասէ, սքանչելատեսիլ, եկեալ ասէր ցիս՝ պատերազմ լինի զկնի երից ամսոց, եւ անկանին բազումք ի պատերազմին. բայց դու երթիջի՛ր ի տեղի պատերազմին. եւ նշան լիցի քեզ այս, զի տեսանիցես այր մի անկեալ ի վերայ երեսաց երկրի, եւ մարմին նորա պաղպաղէ ի մէջ ամենայն դիականցն, եւ դու երթեալ որ ինչ գտանիցես առ նմա, առցես ի քեզ: 4 Եւ զգոյշ լեր, ասէ, մի՛ մոռանայցես¹⁴ զչնորհն այն զի նա է սքանչելի»: 5 Եւ յարուցեալ գնաց. եւ իբրեւ հասեալ ի տեղին՝ գտանէ նոյնպէս, որպէս ի տեսլեանն ասացեալ էր, զի մերկացուցեալ էր գնա եւ զամենայն դիակունսն: 6 Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն¹⁵ ուս ընդ անութ իւր: 7 Ապա կայր մարմին նորա ի մէջ դիականցն. եւ մատուցեալ՝ առ յինքն զշագոյրն. եւ տեսանէր զի կայր ի նմա տուփ մի արծաթեղէն եւ խաչ մի ի մէջ նորա, յորում կայր մասն մեծ ի տէրունեան խաչէն: 8 Կնքէր զինքն նովաւ, եւ առեալ գնայ զհետ ընկերաց իւրոց:

9 Չուեցին ամենայն զաւրքն ի տեղուոջն յայնմանէ, եւ երթեալ հասանէին յամուրս աշխարհին իւրեանց: 10 Յայնժամ զՎահրիճն խնդրէր թագաւորն ի տուն, եւ առ Սմբատ առաքէր շնորհակալութիւն մեծ, զի միամտութեամբ մարտուցեալ վանեցաւ, եւ ոչ եթող զտեղին, եւ ապա յետոյ ամենեցուն գնայր եւ նա փախստական:

13 Միհրդ., Պատկ. երազ իւր
14 ԱՏՏ չիք զչնորհն այն
15 Ա ուս ընդ ութ իւր / ՏՏ ընդ ուս իւր

ԳԼՈՒԽ ԻԷ

1 Դարձեալ պատերազմ Սմբատայ ընդ թշնամիս ի Տապարաստանի եւ յաղթել: 2 Մեծանալ Սմբատայ պատուով քան զամենայն մարգպանս: 3 Եկն Սմբատայ ի Հայս. շինութիւն եկեղեցւոյն Ս. Գրիգորի ի Դուիւն: 4 Կաթողիկոսութիւն Աբրահամու Ռշտունւոյ:

5 *Եւ եղեւ ի գալ միւս ամի՝ ժողովէին ամենայն գունդքն թշնամեաց, եւ երթեալ բանակէին² ի Տապարաստան³ զաւառի. գումարէ եւ Սմբատ զամենայն զաւրսն իւր եւ ի դիմի Հարկանի նոցա պատերազմաւ: 6 Եւ մատնեաց տէր Աստուած զզաւրս թշնամեացն ի ձեռն Սմբատայ, եւ սատակեաց զամենայն սրով սուսերի. եւ ապրեալքն զնացին փախստական ի տեղիս իւրեանց: 7 Իսկ այնք⁴, որ էին ընդ նոսա, խնդրեցին երզումն եւ պայման եւ եկին կացին առաջի Սմբատայ, եւ Յովսէփն այն ընդ նոսա: 8 Ապա ունէր Յովսէփ զգիւտն իւր առաջի նորա եւ պատմէ զտեսիլն, եւ բազում նշանս, զոր արարեալ էր ի մէջ բարբարոսացն, պատմէր: 9 Յայնժամ յարուցեալ Սմբատ ծունր կրկնէր առաջի նորա, եւ առեալ յինքն՝ կնքէր զինքն նովաւ. եւ տայր ի ձեռն Միհրուի ուրումն առն երանելոյ, զոր եւ կարգեալ էր ի վերայ տանն իւրոյ Հաւատարիմ եւ կամակատար, որ ի տանէ Դիմաքսենից, եւ տայր յեկեղեցին զոր ունէին երիցունք գրան նորա:*

10 Յայնժամ առաքէ առ նա թագաւորն Հրովարտակ մեծապէս գոհութեամբ⁵, պատուով մեծացուցանէ ի վեր քան զամե-

նայն մարգպանս իւրոյ տէրութեան⁶ առնելով, եւ զամենայն անաւթս մատուակացն առաքէ նմա ոսկի, եւ Հանդերձս թագաւորականս, արտախուրակս ոսկեզաւծս եւ զանգապանակ⁷ ակամբք եւ մարգարտովք⁸ կարգեալ. եւ զորդի⁹ նորա, որոյ անունն էր Վարագաթրոց¹⁰, զոր էր սնուցեալ նորա իբրեւ զմի յորդուց իւրոց եւ էր մեծարու ամենայն դրանն արքունի՝ կարգէր ի մատուակութեան, պաշտել զգինի անձին արքայի:

11 Եւ կալաւ Սմբատ զմարգպանութիւն¹¹ աշխարհին այնորիկ ամս Ը: 12 Յետ այսորիկ Հրաման Հասանէ կոչել զնա բազում մեծարանաւք ի դուռն արքունի, եւ Հրամայէ երթալ տեսանել զերկիր իւր՝ յամի ութ եւ տասներորդի իւրոյ թագաւորութեանն:

13 Արդ՝ խնդրէ նա Հրաման յարքայէն շինել զեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ էր ի Դուիւն¹² քաղաքի: 14 Եւ վասն զի վախճանեալ էր Մովսէս կաթողիկոսն¹³ երանելի, եւ ոչ զոյր վարդապետ ի տեղուջն յայնմիկ¹⁴ եւ եւս փութացաւ խնդրել յարքայէն Հրաման. եւ Հասեալ Հրաման յերկիր իւր՝ առնէ խնդիր վասն աթոռոյն մեծի, զի կարգեսցեն ի վերայ նորա տեսուչ խնամող եկեղեցւոյն եւ առաջնորդ փրկութեան իւրոյ: 15 Եւ նստուցին զԱբրահամ զՌշտունեաց եպիսկոպոսն յաթոռ Հայրապետութեան¹⁵: 16 Ապա սկսան արկանել Հիմն եկեղեցւոյն. ժողովեաց ճարտարապետս քարի, եւ կացոյց ի վերայ նոցա Հա-

1 22 Եւ եղեւ ի գալ միւս ամի քառերի դիմաց յուսանցում գրուած է Ին գլխահամարը:
 2 Բոլ. բնակէին
 3 Ա Տապարաստան
 4 Ա այն
 5 Ա գոհութիւն

6 Ա տէրութեանն
 7 Ա զանգապակ
 8 Ա մարգարտով
 9 Ա զորդին
 10 Ա Վարագաթրոս
 11 Բոլ. մարգպանութիւն
 12 Ա Դուիւն
 13 Ա կաթողիկոսն (միշտ այսպէս)
 14 Բոլ. յայնուսիկ փխ յայնմիկ
 15 Ա հայրապետական

ւատարիմ գործակալս, եւ հրաման ետ փութանակի հասուցանել ի կատարումն:

17 Եւ գրեալ գիր ամբաստանութեան¹ բերդակալին եւ մարզպանին առ արքայ, եթէ «Կարի մերձ է առ բերդն, եւ վնասակար է ի թշնամույն²»: 18 Հրաման³ հասեալ յարքայէ⁴, եթէ «Բերդն քակեսցի, եւ եկեղեցին անդրէն ի նմին տեղւոջն շինեսցի»: Ամէն:

ԳԼՈՒԽ ԻԸ

1 Սմբատ կոչի անդրէն ի դուռն Պարսից, պատուի տանուտերութեամբ՝ որ անուանեալ կոչի Խորով-Շում եւ առաքի ընդդէմ Քուշանաց: 2 Նախարարք Հայոց՝ որք ընդ նմա: 3 Գունդ մի սակաւածեռն Պարսից պաշարի ի Քուշանաց եւ հարկանի յանլսողութենէ Դատոյեցնի: 4 Սպանումն Դատոյեցնի: 5 Սմբատ ի մեծամարտի սպանանէ զարքայն Քուշանաց: 6 Փախուստ զարուսն Քուշանաց: 7 Զարն Պարսից յաւարի առնու զաշխարհ մոցա: 8 Մեծաւ շքով կոչի Սմբատ ի Դուռն:

9 ⁵Եւ եղեւ՝ յանցանել ձմերայնուոյն, ի զալ զարնայնուոյն⁶ ժամանակի՝ հասանէին սուրհանդակքն հրովարտակաւք, եւ կոչեն զնա մեծաւ շքեղութեամբ ի դուռն արքունի: 10 Եւ երթեալ յանդիման լինի⁷ թագաւորին ի Մեծ անուանեալ Դաստակերտին եւ ելեալ արտաքս ի դահլիճն, նստի ի բոր

եւ ի բահղակ⁸:

11 Յայնժամ տայ նմա արքայ զտանուտէրութիւն՝ որ անուանեալ կոչէր Խորով Շում, զարդարէ ի չքնաղս, ի գտակ եւ ի պատմուճան⁹ բեհեգեայս յոսկւոյ աւծեալ, մեծացուցանէ ահագին պատուաւք ի ճամբար¹⁰ ականակապ եւ ի գումարտակ, եւ ի գահս արծաթիս. ¹¹արծակու ի նա զվաճառն փոքր, զդիւան աշխարհին: 12 Տայ նմա զփողսն չորեքճայնեանս եւ պահապանս զբանն նորա ի հետեւակաց արքունի. գումարէ նմա զաւր մեծաւ ահեղութեամբ յարեւելս յերկիրն Քուշանաց. եւ հրամայէ նմա առնել մարզպան՝ զոր ինքն կամեսցի: 13 Իսկ սորա զնացեալ անտի՝ ¹²եկն եհաս ի մերձակայ երկիրն առաջին իւրոյ իշխանութեան՝ Կոմշ¹³, եւ կոչէ առ ինքն ի Վրկանէ զբուն ձեռական զաւրսն իւր զհամաշխարհիկ եւ զնայ¹⁴ ուղղորդ յԱրեւելս:

14 Եւ այս են իշխանք նախարարացն Հայոց, որ ընդ նմա իւրաքանչիւր գնդաւ եւ զբաւշու¹⁵. Վարազշապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Արտաւազդ եւ Վստամ եւ Հմայեակ¹⁶ Ապահունի, Մանուէլ Ապահունեաց տէր, Վռամ Գողթնեաց¹⁷ տէր, Սարգիս Դիմաքսեան¹⁸, Սարգիս Տրպատունի, եւ այլք ի նախարարացն: 15 Եւ զաւրք նորա իբրեւ երկու հազար հեծեալ՝ յաշխարհէն¹⁹: 16 Ետես զի զաւրքն Քուշանաց ասպատակեալ սփռեալ էին ի վե-

1 ԱՊ ամբաստանութիւն փխ գիր ամբաստանութեան
2 Դ, Միհրդ. ի թշնամին
3 Ա եւ հրաման փխ հրաման
4 Ա ի յարձայէ
5 ՁԶ եւ եղեւ յանցանել ձմերայնուոյն բառերի դիմաց լուսանցում գրուած է ԻԶ գլխահամարը:
6 Ա գարնանուոյն
7 Բոր. լինել

8 Ա պահղակ / Միհրդ., Պատկ. ի Բոր եւ ի Բահղակ
9 Միհրդ., Պատկ. պատմուճանս
10 Ա ի նանբար
11 Միհրդ. արձակէ նմա
12 ՁԶ, Միհրդ. եկն ի Հայս փխ եկն եհաս
13 Դ հետագայ մի սրբագրող ջնջել է կոմշը:
14 Ա գնաց
15 Ա դրոշաւ
16 Ա Հմայեակ
17 Ա գողթեան
18 Ա դիմակսեան
19 Ա յաշխարհն

րայ երեսաց ամենայն երկրին. եւ իբրեւ լուսան զլուր համբաւոյ նորա՝ ժողովեցան եւ գնացին. եւ սա պնդեալ զհետ նոցա հասեալ՝ փութանակի հասանէր: 17 Իսկ նոքա իբրեւ տեսին զնա զհետ նոցա հասեալ՝ դարձան¹ ընդդէմ ճակատեցան, եւ բաղխեցին զմիմեանս պատերազմաւ. անտի ի փախուստ դարձան զաւրքն Քուշանաց, եւ վանեցան առաջի զաւրացն Խոսրով Շնոյ, բազումք ի նոցանէ մեռան եւ բազումք փախստական գնացին: 18 Եւ նա դարձեալ բանակեցաւ ²յԱպր Շահր՝ ի Տոս գաւառի. եւ ինքն նստէր երեք հարիւր արամբք³ ի քաղաքագեւղն որ կոչի Խոսիստ⁴:

19 Յայնժամ թագաւորքն Քուշանաց խնդրեցին իւրեանց աւգնական ի Մեծէն Խաքանայ արքայէ⁵ կողմանցն հիւսիսոյ: 20 Եւ եկն ել ամբոխ Լ բիւրոյ ի թիկունս աւգնականութեան նոցա, անց զգետովն որ կոչի Վեհուտ (որ ելանէ ի Թուրքաստանէ՝ յերկրէն Եւրատայ⁶, զԳիմնոսոփեստեայս⁷, զՇամնն եւ զԲրահմնն⁸, եւ հոսի ի Հնդկիս): 21 Եւ բանակեալ⁹ ի վերայ գետեզրն՝ ասպատակս սփռեցաւ ընդ արեւմուտս, եւ հասեալ յանկարծարէն պատեցին պաշարեցին զգիւրքաղաքն¹⁰, զի ունէր գեւղն¹¹ պատուար ամրութեան շուրջ զիւրեաւ շուրջանակի:

22 Յայնժամ հրաման տայ Ամբատ երեք հարիւրոց անկանել ի բերդակն, որ ի մէջ գիւրքաղաքին. եւ ինքն հեծեալ յերկար երիւք արամբք, որոց էին անուանք այսոքիկ՝ Սարգիս Դիմաքսեան եւ Սարգիս Տրպատունի եւ ոմն մի ի զինակրացն գեղջու հեծեալ, անուն Ամբատիկ. եւ դիմեալ յանկարծարէն՝ ի դուռն ¹²հասին, հատին զամբոխին զաւրութիւն եւ գնացին: 23 Եւ երեք հարիւրքն անկեալ ընդ բերդակն որ ի մէջ գիւրքաղաքին՝ դիմեցին ի վերայ զաւրաց նորա: 24 Եւ էր հրամանատար¹³ զաւրուն նորա պարսիկ ոմն իշխան՝ անուն Դատոյեան, հրամանաւ արքունի:

25 Արդ՝ թէպէտ եւ արձակու¹⁴ առ նա Ամբատ որ է Խոսրով Շումն¹⁵, խոյս տալ ի նոցանէ, նորա ո՛չ կամեցեալ լսել՝ ել ընդդէմ նոցա¹⁶ պատերազմաւ. եւ հարեալ¹⁷ նոցա զզաւրս Պարսից՝ փախստական արարին զԴատոյեան, եւ ինքեանք ասպատակ սփռեալ՝ արշաւեցին մինչեւ ի սահմանս Ռէոյ եւ Ասպահան գաւառի, եւ աւերեալ զերկիրն ամենայն՝ դարձան անդրէն ի բանակն իւրեանց: 26 Եւ հրաման հասեալ ի Մեծէն Խաքանայ առ ձեմբուխ՝ անցին զգետովն եւ դարձան անդրէն ի տեղի իւրեանց:

27 Ապա հասեալ քննող յարքունուստ Ամբատայ եւ¹⁸ Դատոյեանայ, այր ոմն գլխաւոր նախարար, որում անունն էր Շահրապան Բանդական: 28 Իսկ արդարացուցին զաւրն ամենայն մնացեալն զԱմբատ. եւ Դատոյեան տարեալ ի դուռն կապանաւք՝ սպանաւ յարքայէ:

29 Յայնժամ Ամբատ ժողովէ զզաւրն եւ վերստին սպառագինէ, գումարէ եւ այլ

1 Ա դարձաւ
 2 Ա յապրշահր տոս գաւառի / Միհրդ. յԱպր Շահրտոս գաւառի / Պատկ. Յայր Շահր եւ ի Տոս գաւառի
 3 Ա արամբ
 4 ՁՁ խրոխստ
 5 Ա արբայի
 6 Պատկ. եւ ի դատայ փխ եւիդատայ
 7 Ա գիփոնոս, եփեստեայս / ՏՏ գիփոնոս եփեստեայս փխ գիմնոսոփեստեայս
 8 ՏՏ գՇամնն եւ գԲրամնն / Միհրդ. գՇամնն եւ գԲրահմնն:
 9 Բոլ. բնակեալ
 10 Ա զգեւղաքաղաքն
 11 Ա գեղն

12 Ա հասին փխ հասին, հատին
 13 Ա հրամատար
 14 Ա արձակ / Միհրդ., Պատկ. արձակէ
 15 Ա ըշումն
 16 Ա նորա փխ նոցա
 17 Մալխ. ի հարեալ փխ եւ հարեալ
 18 Միհրդ., Պատկ. չիբ եւ

զաւրս բազումս յաւգնութիւն իւր, եւ դիմեալ գնայր ի վերայ ազգին Քուչանաց եւ արքային Հեփթաղեայ: 30 Եւ նա անտի՛ մեծաւ կազմութեամբ ընդդէմ ելանէ նորա. եկին Հասին ի տեղի մարտին եւ ճակատեցան դէմ յանդիման միմեանց: 31 Արդ՝ պատգամ յղէ առ Սմբատ արքայն Քուչանաց եւ ասէ. «Զի՞նչ աւգուտ է այսպէս խառնամբոխ մտանել ի պատերազմ՝ սպառել զաւրս մեր: 32 Եւ կամ ի՞նչ ծանիցի իմ եւ քո քաջութիւնդ: 33 Բայց ե՛կ, ես եւ դու միայն մարտիցուք, ելեալ ես աստի ախոյեան, եւ դու՛ ալ ալի. զի այսաւր ծանիցի քեզ քաջութիւն իմ»: 34 Իսկ նորա ձեռն յանձին Հարեալ՝ ասէ. «Ահաւասիկ պատրաստ եմ ի մեռանել»: 35 Եւ յարձակեալք աստի եւ անտի մեծաւ տագնապաւ ի միմեանս Հասանէին. եւ ի մէջ երկուց ճակատուցն մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին. եւ ոչ կարէին վաղվաղակի զմիմեանս յաղթահարել, զի արք սկայազաւրք² էին երկոքինն եւ կռու սպառազինեալք: 36 Ապա ի վերուստ իմն Հասեալ աւգնութիւն՝ պատառի վերտամուտ³ բահլիկ եւ կռու զրահին ամրութիւն արքային Քուչանաց ի նիզակէն Սմբատայ. զի հարեալ գնա զաւրութեամբ դիմաւալ յերկիր կործանէր: 37 Եւ զաւրքն նորա իբրեւ տեսին զարքայն իւրեանց՝ զարհուրեցան եւ դարձան գնացին⁴ փախստական. եւ սոքա զհետ արշաւեալ Հասին ասպատակաւ մինչեւ ի Բահլ⁵ շահաստան Քուչանաց, եւ աւար հարեալ գերկիրն ամենայն, զՀարեւ⁶, զՎատագէս, զՏոխորոստայն⁷ ամենայն եւ զՏաղական. առնոյր եւ զբերդս

բազումս եւ գնոյնս⁸ քանդեալ աւերէր, եւ դառնայր յաղթութեամբ մեծաւ եւ բազում աւարաւ, եւ երթեալ բանակէր⁹ ի Մարգ եւ ի Մարգոտոտ¹⁰ գաւառի:

38 Յայնժամ հրեշտակք աւետաւորք փութով Հասանէին առ արքայն Խոսրով, լիով զեղեալսն պատմէին քաջութիւն: 39 Իսկ արքայն Խոսրով զուարճանայր զուարթանայր մեծաւ խնդութեամբ, եւ հրամայէր զարդարել փիղ մի մեծ եւ ածել ի դահլիճն. հրամայէ եւս¹¹ հանել ի վեր զորդի նորա զՎարագտիրոց, որ անուանեալ կոչէր յարքայէ Ջավիտեան Խոսրով: 40 Եւ հրամայէ գանձս¹² ցանել ամբոխին. եւ զրէր առ նա հրովարտակ մեծապէս գոհութեամբ¹³. եւ կոչէր գնա ի դուռն մեծաւ պատուով եւ շքեղութեամբ:

ԳԼՈՒԽ ԻԹ

1 Մահ Սմբատայ: 2 Ապստամբել Գախարարացն Հայոց ի Պարսից եւ երթալ ի ծառայութիւն Խախանայ:

3 Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ աւթիւ միով ի դուռն արքունի՝ հրաման տայ արքայ ամենայն նախարարացն եւ զաւրաց իւրոց ելանել ընդ առաջ նորա, եւ աւժանդակացն հրամայէ նժոյգ տանել ընդ առաջ նորա յախոռէ արքունի՝ արքունական կազմուածով¹⁴. եւ երթեալ մեծաւ շքով եւ փառաւք յանդիման եղեւ թագաւորին:

4 Իսկ նորա տեսեալ խնդութեամբ ընկալաւ գնա, եւ ձգեաց առ նա զձեռն իւր. եւ նորա համբուրեալ զձեռն նորա՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց: 5 Յայնժամ ասէ ցնա արքայ. «Միամտութեամբ վաստակե-

1 Ա. անդի
 2 ԶԶ, Միհրդ., Պատկ. սակաւագարբ
 3 ԶԶ, Միհրդ., Պատկ. վերեւամուտ / Մալխ. վերտ եւ ամուր
 4 Միհրդ., Պատկ. եւ գնացին փխ գնացին
 5 Ա. Բահլ
 6 Բոլ. Հար եւ փխ Հարեւ
 7 Միհրդ. գՏոխորոստայն

8 Ա. գնոյն
 9 Բոլ. բնակէր
 10 Ա. Մարգոտոտ / Բ մադոտոտ / Միհրդ. Մարգա-
 նոտ, իսկ միւս օրինակում՝ Մարգոտոտ
 11 Ա. չիբ եւս
 12 ԶԶ գանձու / Միհրդ. գանձ
 13 Ա. գոհութիւն
 14 Ա. կազմածով / Մալխ. կազմածով

ցար, եւ մեք աւելի գոհ եմք զքէն. եւ արդ՝
 յայսմհետէ աւելի մի՛ լինի աշխատ ելանել
 ի պատերազմն, այլ կա՛ց աստէն մերձա-
 կայ, ա՛ռ, կե՛ր եւ ա՛րբ, եւ ուրախութեան
 մերուժ պարապեա՛: 6 Եւ էր նա երրորդ
 նախարար ի տաճարի թագաւորութեանն
 Խոսրովայ արքայի, եւ կացեալ ժամանակս
 սակաւս՝ վախճանեցաւ յամի՛ ԻԸ-երրորդի
 թագաւորութեանն նորա: 7 Իսկ զմարմին
 նորա մեռեալ՝ տարան ի Հայաստան երկիր
 ի բնիկ հանգստարանսն, եւ եղին ի տա-
 պանի ի գիւղն՝ Դարիւնս, որ է ի Գոգովիտ
 գաւառի:

.....

8 Ապա ապստամբեալ զնացին ի ծա-
 ռայութիւն Մեծին Խաքանայ՝³ արքայի
 կողմանցն հիւսիսոյ, ի ձեռն ճենաստանն
 ձեպետխոյ՝⁴ ապա զնացեալ յարեւելից յա-
 րեւմուտս ընդ կողմանս հիւսիսոյ՝ խառնել
 ընդ գաւրացն ձեպետխոյն՝⁵ այնորիկ հրա-
 մանաւ թագաւորին իւրեանց Խաքանայ:
 9 Եւ ելեալ ընդ Պահակն՝⁶ ձորայ գաւրաւք
 բազմութեան՝ զնացին յաւգնականութիւն
 թագաւորին Յունաց:

ԳԼՈՒԽ Լ

1 Փախչել Ատատայ Խոռխոռունոյ
 ի ծառայութեմէ Յունաց եւ անկանել
 առ Խոսրով եւ մեծարել ի նմանէ. ա-
 պա ապստամբութիւն ի Խոսրովէ եւ
 սպանումն: 2 Սահմանակալք Պար-
 սից եւ Յունաց ի Հայաստան աշ-
 խարի յամս հաշտութեան քաղա-
 տրացն երկոցունց:

3 Իսկ արդ՝ զի՞նչ եւս զԱտատ Խոր-

խոռունոյ՝⁷ ասացից եւ զմիւսանգամ
 զապստամբութիւնն: 4 Էր սա պատրիկ
 մեծ, վասն որոյ հրաման տայ թագաւորն
 կոչել զնա ի պաղատն, եւ զնացեալ ՝ի նա
 եւթանասուն արամբք՝⁹ եւ մեծարեալ շքե-
 ղացոյց զնա եւ որ ընդ նմայն ըստ արժա-
 նի վայելչական ընդունելութեանն: 5 Ետ
 նմա անաւթս ոսկիս եւ արծաթիս եւ
 գանձս բազում՝¹⁰ յոյժ:

6 Եւ հրաման ետ երթալ ի Թիրակի՝¹¹
 առ գաւրս իւր. եւ հրաժարեալ ի թագաւո-
 րէն եւ գնաց: 7 Եւ մինչդեռ գնայր ի ճա-
 նապարհի՝ արկ նա ի միտս իւր ապստամ-
 բել եւ գնալ առ թագաւորն Պարսից: 8 Եւ
 ստերիւրեալ՝¹² ի ճանապարհէն՝ գնաց ի ծո-
 վեղերն եւ հանդիպեալ նաւի միոջ՝ ասէ
 նաւորդացն. «Անցուցէ՛ք զիս յայնկոյս, զի
 ի գործ կարեւոր առաքեալ եմ ես ի թագա-
 ւորէն»: 9 Եւ հրապուրեալ զնաւորդսն՝
 անցուցին զնա, եւ գնաց փութանակի՝¹³
 ճեպեալ հասանէր ի Հայաստան երկիր:
 10 Եւ ոչ ոք վաղագոյն իմացաւ զճանա-
 պարհի՝¹⁴ գնալոյ նորա, մինչեւ բազում աւ-
 թեւանաւք մեկնեալ հեռացաւ ի ծովեզե-
 րէն: 11 Ապա ուստեմն՝¹⁵ իրազեկ՝¹⁶ լինէին
 գնալոյն. եւ ելեալ ընդդէմ սորա քաղա-
 քաց քաղաքաց գաւրք՝ եւ ոչ կարէին զդէմ
 նորա ունել, եւ ընդ ութ եւ տասն տեղի ա-
 րարեալ նորա պատերազմն ի ճանապարհի՝
 յաղթող ամենայնի գտանէր, թէպէտ եւ
 իւր գաւրականն պակասեալ նուազէր, եւ
 այնպէս գնացեալ փութանակի հասանէր ի
 Նախճաւան: 12 Եւ ընկալեալ զնա Պար-

1 Բոյ. յամս
 2 Ա. գեւղն
 3 Ա. ախանայ փ/ս Խախանայ
 4 Ա. նեպետլիսոյ
 5 Ա. նեպետլիսոյն
 6 Ա., Միհրդ., Պատկ. Պահարակն

7 Մալխ. Խոռխոռունոյ
 8 Ա. նմա փիս ի նա
 9 Ա. արամբ
 10 Ա. բազումս
 11 Միհրդ. Թրակայ
 12 Ա. ըստերիւրեալ
 13 Միհրդ. փութանակի գնացիւք փ/ս գնաց փու-
 քանակի
 14 Ա. գնանապարհն
 15 Ա., Միհրդ., Պատկ. ուրեմն Հ ուստեմն (նիշտ)
 16 Ա. իրազիկ

սիցն ի բերդն ամրանայր: 13 Յայնժամ ժողովէր զամենայն զաւրս իւր ստրատելատն¹, եւ երթեալ պաշարէր զբերդն շուրջանակի զամէնն:

14 Ազդ լինի արքային Խոսրովու եղեալ իրքն², եւ արձակէ ի վերայ նոցա զՊարսայնպետ Հանդերձ զաւրու: 15 Իբրեւ եկն մերձեցաւ զաւրն՝ թողին նոքա զքաղաքն եւ գնացին. եւ նորա փութացեալ գնաց առ թագաւորն Պարսից: 16 Իսկ նա սիրով ընկալաւ զնա, մեծացոյց պատուովք, եւ ետ նմա զգանձս³, եւ հրամայեաց ոռճիկ յարքունուստ:

17 Եւ եղև զկնի ամի միոյ մեռանել Մաւրկայ, եւ թագաւորել Փոկասայ: 18 Արկ սա ի միտս իւր ապստամբել եւ գնալ առ թագաւորն Յունաց: 19 Սկսաւ պատրաստել երիվարս տաճիկս եւ կազմել սպառազինութիւն, յանկուցանէ⁴ յինքն արս սրիկայս⁵: 20 Լուր եհաս ի լսելիս արքային բանն, հրաման ետ կապել զնա ոտիւք եւ ձեռաւք, եւ բրաւք սպանանել:

21 Եւ այս են սահմանակալք տէրութեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի եւ Դուին⁶ քաղաք: 22 Վնդատական⁷, Նիխորական. զսա սպանին զաւրքն Պարսից ի Դուին⁸, եւ ինքեանք ապստամբեալ գնացին ի Գեղուս: 23 Ապա Մերկուտ. ապա Յագղէն⁹. ապա Բուտմազ. ապա Յեմանն¹⁰: 24 Իսկ ի Յունաց կողմանէ՝ նախ Յովհան Պատրիկ. ապա Հերակղ¹¹. ապա Սորմէն¹² զաւրավար.

մինչեւ լցան ամք երեքտասանք հաշտութեանն:

25 Եւ հրաման ելանէ ի կայսերէ. «Երեսուն հազար հեծեալ վզենակալ է, ասէ, իմ ի վերայ աշխարհին Հայոց: 26 Արդ՝ ԼՌ երգաւոր ժողովեսցին ինձ անտի եւ նստուցին ի Թիրակացւոց¹³ աշխարհին»: 27 Եւ արձակոյր զՊրիսկոս¹⁴ ի Հայս վասն գործոյն այնորիկ: 28 Մինչդեռ¹⁵ եկեալ հասանէր համբաւն խռովութեան մեծի, եւ Պրիսկոս¹⁶ յարուցեալ գնայր անհնարին տազնապաւ:

ԳԼՈՒԽ ԼԱ.

1 ¹⁷Սպանումն Մաւրկայ կայսեր եւ թագաւորել Փոկասայ: 2 Ապստամբութիւն ի Փոկասայ Երակղի եւ Ներսիսի զաւրավարաց: 3 Պաշարումն Ուռհայի ի զաւրաց Փոկասայ, եւ Դարայի՝ ի զաւրաց Խոսրովայ: 4 Հասանել Խոսրովայ յաւգնականութիւն Ուռհայի, առնուլ զփաղաքն եւ դարձ հանդերձ Թէոդոսի որդւովն Մաւրկայ: 5 Առումն եւ կործանումն Դարայի ի Խոսրովայ: 6 Առումն Ուռհայի ի զաւրացն Փոկասայ եւ սպանութիւն Ներսիսի:

7 Եւ եղև յամի չորեքտասաներորդի Խոսրովայ արքայի, ¹⁸ի քսաներորդ ամի Մաւրկայ թագաւորութեանն՝ ապստամբեալ ի բաց կացին ի կայսերէ զաւրն Յունաց, որ ի Թրակացւոց¹⁹ կողմանէ, եւ նստուցին իւրեանց թագաւոր զայր ոմն անուն Փոկաս կոչեցեալ: 8 Եւ գնացեալ

1 Ա զամէն ստրատելատ զգօրս իւր
2 Ա իրսն
3 Ա գանձս
4 Միհրդ., Պատկ. յանգուցանէ
5 ՁՁ սրիկասէր
6 Ա Դուին
7 Ա վրնդատական
8 Ա Դուին
9 Ա յեզդեան
10 Ա յիմանն
11 Ա Հերակղ
12 Ա գՍուրմէն / Միհրդ., Պատկ. Սուրմէն

13 Միհրդ., Պատկ. ի թերակացւոց
14 Ա զՊրիսկոս
15 Ա մինչեւ փխ մինչդեռ
16 Ա պրիսկոս
17 Սպանումն Մաւրկայ... խորագիրը ձեռագրիմն է: Խորագրի դիմաց ձեռագրի լուսանցում գրուած է ԻԹ գլխահամարը:
18 ՁՁ ի ԻԳ ամի / Միհրդ. Ի Բասն եւ Երեմ ամի փխ ի Բասներորդ ամի
19 Ա ի թիրակացւոց

միաբանութեամբ ի Կոստանդնուպոլիս՝ սպանին զՄաւրիկ թագաւոր եւ զորդիս նորա, եւ նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեանն: 9 Եւ գնացին ինքեանք անդէն ի կողմանս Թրակացւոց աշխարհին ի դէմ թշնամւոյն: 10 Եւ էր որդի մի կայսերն Մաւրկայ, անուն նորա Թէոդոս: 11 Լուր համբաւոյն ելեալ տարածանէր ընդ ամենայն երկիր, եթէ զերծաւ Թէոդոս եւ գնաց առ թագաւորն Պարսից: 12 Ապա ոչ սակաւ ինչ խռովութիւն լինէր ի մէջ Հռովմայեցւոց² տէրութեանն անդէն ի թագաւորանիստ քաղաքին, եւ յԱղեքսանդր³ քաղաքի յԵգիպտոս, եւ յԵրուսաղէմ եւ յԱնտիոք, եւ յամենայն կողմանս երկրի⁴ առեալ սուր զմիմեանս սատակէին:

13 Հրաման ետ թագաւորն Փոկաս սատակել զամենայն ապստամբ՝ որ երկմտեալ էին ի նորին թագաւորութենէ: 14 Բազումք սատակեցան անդէն սրով ի թագաւորանիստ քաղաքին: 15 Եւ առաքեալ զԲոնոս ոմն իշխան հանդերձ զաւրու ի վերայ Անտիոքայ եւ յԵրուսաղէմ եւ յամենայն կողմանս աշխարհին. եւ նորա երթեալ եհար զԱնտիոք եւ զԵրուսաղէմ սրով սուսերի, եւ զամենայն իսկ զբազմութիւն քաղաքաց երկրին այնորիկ սպառեաց սրով:

16 Յայնժամ ապստամբեալ ի բաց եկաց ի Փոկասայ Երակլէս զաւրավար զաւրու⁵ իւրով, որ էր ի կողմանս Աղեքսանդրի⁶, եւ բռնացեալ ի բաց կալաւ զերկիրն Եգիպտացւոց: 17 Եւ յԱսորւոց կողմանէ ապստամբեալ Ներսէս զաւրավար ի Միջագետս Ասորւոց, եւ հանդերձ զաւրու իւրով մտեալ բռնանայ յՈւրհայ քաղաքի: 18 Եւ

եկեալ զաւր ի վերայ նորա՝ պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն հանդերձ զաւրու:

19 Եւ եղեւ՝ իբրեւ լուաւ արքայն Խոսրով զլուր համբաւոյն այնորիկ՝ ժողովեալ զուժարեաց զամենայն բազմութիւն զաւրաց իւրոց, եւ գնաց ընդ արեւմուտս, եւ հասեալ 7ի Դարա քաղաք՝ նստաւ շուրջ զնովաւ եւ պաշարեաց զնա⁸, եւ մարտ եղեալ կռուէր ընդ նմա: 20 Եւ ընդ կողմանս Հայոց զուժարեալ զաւրս, եւ զՋուան⁹ Վեհ ոմն իշխան մեծ զաւրագլուխ նոցա: 21 Յայնժամ արքայ Խոսրով բաժանէ յերկուս մասուս. զմի մասն եթող անդէն շուրջ զքաղաքան, եւ միւսով մասամբն գնաց¹⁰ ինքն ի վերայ զաւրուն, որ պատեալ պաշարեալ պահէին զՈւրհայ: 22 Եւ հասեալ ի վերայ նոցա յանկարծաւրէն ի ծագել առաւաւտուն՝ զոմանս սատակէր սրով, զոմանս փախստական արարեալ, կէսքն ամացեալ¹¹ ի գետն Եւփրատ¹² մեռանէին, եւ կէսքն գնային հալածական: 23 Իսկ արքայն Խոսրով մատուցեալ ի դուռն քաղաքին, զի բացցեն նմա եւ մտցէ ի ներքս. իսկ նոքա բացին զդուռն: 24 Բայց մանուկ մի զարդարեալ թագաւորական հանդերձիւ, եւ եղեալ ի վերայ զլիսոյն նորա պսակ, եւ եհան արձակեաց առ նա Ներսէս, ասէ. «Դա է որդի թագաւորին Մաւրկայ, Թէոդոս, եւ արասցես ի վերայ դորա ողորմութիւն, որպէս եւ հայր դորա ի վերայ քոյ»:

25 Եւ մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնա Խոսրովայ¹³ արքայի, դարձաւ անդ-

1 Ա ի Կոստանդնուպոլիս

2 Ա հռովմայեցւոց

3 Ա յԱղեքսանդր

4 Ա երկրին

5 Ա գորիւ

6 Ա Աղեքսանդրի

7 Ա ի Դար քաղաք

8 Պատկ. գա փխ զնա

9 ԱԲ, Միհրդ. զՋուվանան / Հ, Պատկ., Մայիս. զՋուվան / Դ զՋուվանան. ուղղուել է զՋուվան

10 Միհրդ., Պատկ. զնայ

11 Բոյ. կէսն ամացեալ / 22, Միհրդ., Պատկ. ամրացեալ

12 Ա Եւփրատ

13 Ա Խոսրով

ըէն եւ գնաց ի Դարա քաղաք, եւ ունէր գնա առ իւր թագաւորական պատուով. եւ նստաւ նա շուրջ զԴարայիւ գտարի մի եւ կէս¹, եւ փորեցին զհիմունս քաղաքին ի ներքոյ պարսպին, եւ կործանեալ զպարիսպն² նորա՝ առին զքաղաքն, եւ սուր ի վերայ եղեալ մաշեցին զամենայն սրով սուսերի: 26 Եւ առեալ զառ եւ զաւար քաղաքին, դարձան անդրէն ի Տիգրոն, քանզի էր զաւր նորա աշխատեալ եւ լքեալ ի պատերազմէ քաղաքին: 27 Եւ հասեալ ի վերայ Ուրհայի այլ զաւր ի Յունաց կողմանէ՝ մարտեան ընդ քաղաքին եւ առին գնա. եւ կալեալ զՆերսէս սպանին եւ արիւն հեղին:

ԳԼՈՒԽ ԼԲ

1 Պատերազմ ի դաշտին Եղիվարդայ եւ պարտութիւն Պարսից. այլ պատերազմ ի դաշտին Շիրակայ եւ պարտութիւն Յունաց: 2 Երրորդ պատերազմ ի Ծաղկոտն: 3 Անձնատուր լինել Թէոդոսի Խորխոռունոյ զաւրավարին Պարսից. երթեալ ի դուռն արբուցի եւ ապա սպանանել:

4 Իսկ Ջուանն Վեհ, զոր արձակեաց ի կողմանս Հայոց հանդերձ զաւրու³ իւրով երթեալ հասանէ յԱյրարատ⁴ գաւառ եւ ի Դուին⁵ քաղաք ի ձմերային⁶ ժամանակի, եւ դադարեալ հանգուցանէ զզաւրս իւր մինչեւ ի գալ հասանել գարնայնոյ⁷ ժամանակի:

5 Յայնժամ ապա եւ զաւրն Յունաց ժողովեալ գումարեցան ի քաղաքագեւղն Եղեվարդ⁸. եւ հասեալ ի վերայ նոցա

զաւրն Պարսից՝ եղեւ պատերազմ ի դաշտին Եղեվարդայ⁹. հարին զզաւրն Պարսից եւ կործանեցին կործանմամբ մեծաւ. եւ սպանին զզաւրավարն ի պատերազմին. եւ զմնացեալսն փախստական արարեալ հալածական տանէին: 6 Եւ առեալ զառ եւ զաւար զբանակին Պարսից՝ դարձան ի բանակետղն¹⁰ իւրեանց, որ կայ ի վերայ գետեզերն, որ կոչի Հոռոմոց մարգ:

7 Եւ եղեւ ի գալ ամին միւսոյ, մինչդեռ արքայ Խոսրով մարտնչէր ընդ Դարա քաղաքի, գումարեցաւ այլ զաւր Պարսից ի կողմանս Հայոց, եւ Դատոյեան զաւրագլուխ նոցա: 8 Եւ զաւրն Յունաց գումարեցան ի դաշտն Շիրակ եւ ի գեւղն¹¹, որ կոչի Շիրակաւան: 9 Եւ անդ գետեղեալ դադարեցան աւուրս ինչ, եւ ինքեանք տագնապեալք յընտանի¹² պատերազմէն եւ զարհուրեալք յարձակմանէ աւտար թշնամոյն: 10 Եւ զաւրն Պարսից հասեալ ի վերայ նոցա իբրեւ զխոյանալ արծուոյ: 11 Իսկ նոցա թողեալ գտեղի բանակին իւրեանց՝ անցին յայնկոյս գետոյն ի դաշտն, որ կոչի Ականից. եւ զաւրն Պարսից հետամուտ եղեալ հասանէին¹³ նոցա: 12 Եւ լինի պատերազմն ի գեւղն որ կոչի Գետիկ: 13 Եւ մինչդեռ սոքա ճակատեալ էին դէմ յանդիման գալ եւ մերձենալ առ միմեանս, իսկ բնակիչք գաւառին, որ էին ժողովեալ ի բերդն Երզինայի¹⁴, եւ ելեալ անտի բազմութեան մանկուոյ գերանդեալք¹⁵ եւ սրիանալք¹⁶ անկան ի վերջոյ նոցա, եւ գործեցին մեծ աւճիւր¹⁷ վնասուց, թողին վիրաւորս, եւ առեալ զառ եւ զա-

1 Ա. գկէս
2 Ա. գպարիսպ փիս գպարիսպն
3 Ա. գորաւ
4 Ա. յարայրատ
5 Ա. Դըլիկն
6 Ա. ի ձմերայն
7 Ա. գարանույ
8 Ա. ֆաղաֆագեղն Եղեվարդ

9 Ա. ի դաշտին Եղիվարդայ
10 Ա. բանակետղ
11 Ա. ի գետն
12 Ա. յընդանէ
13 Ա. հասանեն
14 Գ. Եգիւնոյի
15 ՏՏ գերանդաւփ
16 Գ. սրիանեօփ / Դ. չիփ սրիանաւփ
17 ՏՏ աւնիոն

ւար եւ զկապուտ՝ զնացին ի բերդն իւրեանց:

14 Եւ նոցա բաղխեալ¹ պատերազմաւ՝ փախստական լինէր զաւրն Յունաց առաջի նոցա: 15 Իսկ նոցա զհետ մտեալ կոտորէին զբազումս ի դաշտացն եւ ի ճանապարհացն ²ցիր եւ թաւալ կացուցանէին: 16 Եւ սակաւք մնացեալք փախստեայս զնացին: 17 Իսկ ³նոցա առեալ զառ եւ զաւարն՝ զնացին ի բանակն իւրեանց: 18 Եւ իբրեւ տեսին զեղեալ չարութիւնն՝ Համագունդ արշաւեալ ի բերդն՝ առեալ զնա, զբազումս սրով սատակեցին. եւ բազումք զահալէժ լինէին յահէ անտի. եւ կէսքն ելեալ ընդ դուռնն՝ որ բանայր ի կողմն գետոյն՝ փախստական գնային, եւ զայսն ամենայն ի գերութիւն վարեցին: 19 Եւ գերեցան յաւուր յայնմիկ ի բերդէն յայնմանէ գեղք ԼԳ: 20 Եւ զամենայն նոյնպէս ի գերութիւն վարեցին, եւ ժողովեալ զամենայն զառ եւ զաւար զաւառին. եւ զաւրքն⁴ դարձան եւ զնացին յԱտրպատական⁵:

21 Ապա եկն Սենիտամ Խոսրով: 22 Եւ զաւրն Յունաց գումարեալ նստան ի Ծաղկոտանն, մերձ ի գեղն որ կոչի Անգղն⁶, ընդ որ անցանէ գետն Արածանի. եւ ի միւս կողմանէ քակեալ զգեղն՝ ածին ամրութիւն շուրջ զինքեամբ: 23 Եւ զաւրագլուխ նոցա Թէոդոս Խորխոռունի⁷: 24 Եւ զաւրն Պարսից եկեալ բանակեցան մերձ առ նոսա ի թիկանց կողմանէ. եւ նոքա զարհուրեալ խաւսեցան ընդ նոսա, նախ ի խաղաղութիւն, ասացին ոչ ունել պատերազմ, այլ թողուլ զբերդն եւ երթալ խաղաղութեամբ: 25 Ապա միաբանք ե-

ղեալ՝ ոչ հաստատեցաւ բանն, այլ վստահացեալ յամրութիւն իւրեանց կարծէին առնել ինչ: 26 Եւ եղեւ ի վաղիւ անդր դիմեաց զնաց ի վերայ նոցա զաւրն Պարսից: 27 Եւ ոչ ոք արկանէր ի նոցանէն զէն զանձամբ իւրով, եւ կամ թամբէր զերիվար իւր: 28 Եւ թէ ոք⁸ զինէր զանձն կամ թամբէր զերիվար՝ հասանէին մանկուք⁹ իշխանացն, եւ հանեալ ի բաց ձգէին զզէնն, չարաչար տանջելով զարսն, եւ զգաւտիս երիվարացն սրով հատանէին: 29 Եւ եկեալ զաւրն Պարսից ճակատեցան մերձ առ նոսա դէմ յանդիման ի դաշտին կողմանէ, եւ ձգեալ բազմութեանն զաւրու աղեղնաւորացն, եւ թափեցին ի նոսա զկապարճս իւրեանց, եւ ծակոտէին նետիւք իւրեանց առ հասարակ զամենայն արս եւ զերիվարս: 30 Եւ ընդոստուցեալ¹⁰ ամենայն երիվարք, որ կապեալ էին առ մսուրս առ իւրաքանչիւր դրան խորանաց, ընթաղեալ առաթուր հարկանէին զխորանսն եւ զբանակսն ամենայն: 31 Եւ թշնամուոյն հատեալ զամրութիւնն¹¹ անկաւ ի բանակն, եւ անհնարին լինէր կոտորածն. եւ նոցա հատեալ զտեղի մի, ոմանք հետեւակք եւ ոմանք հեծեալք յանկումուղի¹² ձի, ելին եւ զնացին փախստական: 32 Եւ Թէոդոս Խորխոռունի¹³ անկեալ ի բերդն ամրանայր. եւ նստան նոքա անդէն յայնմ գիշերի ի նոցուն բանակատեղն: 33 Եւ եղեւ ընդ առաւաւտն, պատգամ արձակէին, զի թողցեն զբերդն եւ զնասցեն իւրեանց կարասեաւն¹⁴ եւ ամենայն կազմածովն: 34 Եւ յանձին կալեալ նոցա առնել այնպէս: 35 Եւ յաւուրն երրորդի բացին զդուռն քաղաքին, եւ ելին զնացին

1 Ա. բախեալ

2 Ա. ցիրդ ի թաւալ

3 Միհրդ., Պատկ. նոցա գառ եւ զաւարն առեալ

4 Ա. գորն փխ զաւրքն

5 Մալխ. Ատրպատական (վրիպակ)

6 Ա. Անկղն

7 Միհրդ., Մալխ. Խոռխոռունի

8 Ա. ոք որ փխ ոք

9 Ա. մանգուրն

10 Ա. ընդոստուցեալք

11 Պատկ. զամրութիւն

12 Միհրդ., Պատկ. յանկումուղի

13 Միհրդ., Մալխ. Խոռխոռունի

14 Ա. կարասասաւն / Պատկ. կարասաւան

ամենեքեան ըստ ասացելումն բանին: 36 Իսկ զԹէոդոսն Խորխոռունի կոչէր զաւրավարն Պարսից եւ ասէր ցնա. «Ո՛չ ունիմ իշխանութիւն արձակել զքեզ առանց արքունի հրամանի, այլ տաց տանել զքեզ ի դուռն, եւ գրեցից վասն քոյ առ արքայ զամենայն բանս բարութեան, եթէ ո՛րպէս միամտութեամբ եւ տիրասիրութեամբ գործեցեր, զի զզաւրս նոցա ի ձեռս մեր այնպէս մատնեցեր, եւ ապա զբերդդ առանց աշխատութեան ո՛րպէս ետուր մեզ, եւ երկիր կամաւք¹ քովք ի ծառայութիւն»:

37 Եւ գրեաց ըստ նմին բանի, եւ ետ տանել զնա ի դուռն: 38 Եւ արքայ Խոսրով սիրով ընկալաւ զնա, եւ կարգեաց նմա ոռճիկս եւ Հանդերձագինս յարքունուտ:

39 Բայց յապա ժամանակիս եղեալ կարծիս նենգութեան՝ հրամայեաց սպանանել: 40 Իսկ ի բերդին Անգեղ նստուցեալ բերդակալ, եւ գումարեալ զզաւրս իւր զնաց ինքն ի ներքսագոյն եւ նուաճեաց զերկիրն ի ծառայութիւն:

41 Եւ եղեւ յետ այնորիկ միւսանգամ պատերազմն ի կողմանս Բասենոյ, եւ եհար զՅոյնն եւ հալածեաց. եւ փախստական² արարեալ ընկենոյր յերկիրն իւրեանց³: 42 Եւ կալաւ նա քաղաքս՝ զԱնգղ եւ զԳայլատուս, զԵրզինայ, եւ ի Դարային⁴ զքաղաքն Ծխնկերտի⁵: 43 Եւ հրաման հասեալ յարքայէն՝ զնաց:

ԳԼՈՒԽ ԼԳ

1 Արձակել Խոսրովայ զԽոռեամբ բազմաձեռն գնդաւ յԱսորեստան եւ զԱշտատ հանդերձ Թէոդոսիւ որդւով Մաւրկայ ի Հայս: 2 Ամենայն Ասորեստան եւ Միջագետք հնագան-

դիւն ի ծառայութիւն Պարսից: 3 Աշտատ հարկանէ գՅոյնս, երթայ ի վերայ Կարնոյ: 4 Թէոդոս յայտնէ գանձն իւր Կարնեցոց. անձնատուր լինել Կարնոյ: 5 Գալ գաւրավարին Շահեմայ ի Կարին. գաղթեցումն բնակչաց Կարնոյ յԱհմատան: 6 Վախճան կաթողիկոսացն Յովհանու եւ Աբրահամու: 7 Նստել յաթոռ Կոմիտասայ: 8 Առումն Կեսարիոյ Կապադովկացոց ի Շահեմայ եւ սպանումն Վասակայ Արծրունոյ:

9 ⁶Յայնժամ արքայ Խոսրով զարձաւ ի Դարայէ եւ Հանգոյց զզաւրս իւր վերստին, եւ այլ եւս բազմութիւն զաւրաց ժողովեալ գումարեաց, եւ արձակէր ընդ կողմանս Ասորեստանի զաւր մեծ⁷ հզաւր յոյժ, զԽոռեամ, որ Ըռագմանն⁸ անուանեալ, զաւրագլուխս նոցա: 10 Եւ հրաման⁹ տայր նոցա այսպէս, եթէ «Որք եկեսցեն ի ծառայութիւն՝ սիրով ընկալ, եւ ի խաղաղութեան եւ ի շինութեան պահեսչիր. եւ որ ընդդէմ դարձցին եւ պատերազմեսցին՝ սրով սատակեսցին»:

11 Եւ ընդ կողմանս Հայաստանի արձակէր զԱշտատ զՅեզտայար Հանդերձ զաւրու մեծաւ. եւ զԹէոդոս կայսր զանուանեալ որդին Մաւրկայ ընդ նմա գումարէ:

12 Եւ Խոռեամ¹⁰ առեալ զզաւրացն բազմութիւն զնաց ի կողմանս Ասորեստանի, եւ հասեալ ի Միջագետս Ասորեոց, պատեալ պաշարեն զՈւռհայ¹¹ քաղաք, եւ մարտ եղեալ¹² կռուի¹³ ընդ նմա: 13 Իսկ

1 Ա կամօֆ ֆո
 2 Պատկ. փախստականն
 3 Մալխ. իւրեաց (վրիպակ)
 4 Ա, Միհրդ., Պատկ. ի Տարային
 5 Միհրդ. Ծխակերտի

6 Ա Յայնժամ արքայ Խոսրով բռնորդ զիմաց լուսանցում գրուած է ԼԱ գլխահամարը:
 7 Ա, Պատկ., Մալխ. մեծ եւ փխ մեծ
 8 Միհրդ. Ըռագմանն փխ որ Ըռագմանն
 9 Ա հրամանն
 10 ՁԶ, Միհրդ. զԽոռեամ / Պատկ. Խոռեամ / Մալխ. Խոռեմայ փխ եւ Խոռեամ
 11 Միհրդ. գՈւրիայ
 12 Մալխ. մարտ եղեալ
 13 Միհրդ. կռիւ առնէ փխ կռուի

նոքա ի բազմութենէ՛ զաւրացն եւ ի մարտիցն յաղթութենէ՛¹ եւ զի ոչ ուստեք գոյր նոցա ակնկալութիւն փրկութեան՝ խաւսեցան ի խաղաղութիւն, եւ խնդրեցին երդումն, զի մի կորուսցեն զքաղաքն, եւ բացեալ զդուռն քաղաքին հնազանդեցան ի ծառայութիւն: 14 Նոյնպէս եւ Ամիթ եւ Թելա եւ Ռաշայենայ² եւ ամենայն քաղաքք³ Միջագետաց Ասորուց կամաւք հնազանդեալ ի ծառայութիւն՝ պահեցան ի խաղաղութեան եւ ի շինութեան: 15 Եւ գնացեալ նոցա յԱնտիոք քաղաք՝ հնազանդեցան եւ նոքա կամաւք ի ծառայութիւն հանդերձ ամենայն քաղաքաւք եւ բնակչաւք իւրեանց, փախստականք լեալ ի սրոյն Փոկասայ:

16 Իսկ Աշտատ Յեգտայար եկն ի սահմանս Հայոց⁴ յամի ութ եւ տասներորդի թագաւորութեանն: 17 Եւ զաւրն Յունաց գումարեալ ժողովեցան ի գաւառն Բասենոյ⁵, եւ եւս ահագին դիմեալ յարձակեցան ի վերայ նորա. եւ եղեւ պատերազմ մեծ ի Դու եւ յՈրդրու⁶: 18 Հարին զաւրն Յունաց եւ խորտակեցին կործանմամբ մեծաւ: 19 Բազումք մեռան ի պատերազմին, եւ ոչ գոյր թիւ սպանելոցն ի դաշտին: 20 Հալածեաց գնոսա մինչեւ ի քաղաքն Սատաղացուց, եւ ինքն գումարեալ բանակեցաւ շուրջ զԿարնոյ քաղաքաւ, եւ կալաւ ընդ նմա գործ պատերազմի. ընդդիմացան ի ներքուստ ինչ. եւ ոչ սակաւ լինէր կոտորածն վնասուց յարտաքնոցն: 21 Ապա յառաջ մատուցեալ Թէոդոս կայսրն⁷ ասելով, եթէ «Ես եմ⁸, ասէ⁹, թա-

գաւորն ձեր»:¹⁰ 22 Յայնժամ հաւանեալ բանային. ելին գլխաւորքն քաղաքին եւ ընծայեցան նմա, եւ դարձեալ անդրէն հաւանեցուցին զքաղաքն, թէ նոյն ինքն է Թէոդոս, որդին¹⁰ Մաւրկայ: 23 Յայնժամ բացեալ զդուռն՝ հնազանդեցան ի ծառայութիւն¹¹: 24 Եւ կարգեալ ի նալ պահպանս, գնաց եւ կալաւ զքաղաքն Հաշտենից՝ զՋիթաոի¹² եւ զՍատաղ եւ զԱռաստիայ եւ զՆիկոպալիս¹³ եւ գնաց:

25 Ապա եկն Շահէնն Պատգոսապան եւ զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւն. եւ յոստանն Դըւնայ¹⁴ եկն մարզպանութեանն Շահրայեանպետ¹⁵: 26 Իսկ Շահեանն երթեալ հանդիպէր զաւրացն Յունաց ի Կարին գաւառի: 27 Եւ արարեալ պատերազմ՝ հարկանէր գնոսա սրով սուսերի եւ փախստական արարեալ հալածական առնէր յաշխարհէն:

28 Իսկ յամին քսաներորդի առաջնորդի արքային Խոսրովայ հրաման ետ նմա՝ փոխել զբնակիչս ի Կարնոյ քաղաքէ եւ տանել բնակեցուցանել յԱհմատեան շահաստանի. ընդ նոսին ըմբռնեալ եւ երանելի ծերունի կաթողիկոսն Յովհանն ի գերութիւն վարեցաւ հանդերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն: 29 Եւ անդէն վախճանեալ բերաւ մարմին նորա ի գիւղն Աւան, յեկեղեցին, զոր ինքն շինեաց: 30 Եւ ի նմին ամի վախճանեցաւ երանելին Աբրահամ կաթողիկոսն: 31 Եւ յետ սորա յաջորդէ զաթոռ հայրապետութեանն Կումիտաս Տարոնոյ եպիսկոպոսն¹⁶, որ ի գեղջէ Աղցիցն աւանէ, եւ առ սովաւ կատարի շինուած եկեղեցւոյն սրբոյն Գրիգորի:

1 Բոյ. յաղթութիւնն փխ յաղթութեանն

2 Ա. քիդա եւ ըռաշաւենայ

3 Ա. քաղաք

4 Ա. յամի Ը ու Ժ երորդի

5 Ա. Բասենույ

6 Բոյ. Յորդրու

7 Ա. կայսր

8 Ա. ԲԳ ասէ փխ եւ եմ

9 Դ, Պատկ., Մալխ. չիք ասէ

10 Միհրդ., Պատկ. որդի

11 Ա. ծառայութիւնն

12 Ա. զիթաոի / Միհրդ., Պատկ. Ջիթաոի

13 Ա. զնիկոպոլիս

14 Ա. Դունայ

15 Ա. շահրաւեանպետ

16 Միհրդ., Պատկ. Տարոնայ եպիսկոպոս

32 Եւ յամին քսաներորդի Խոսրովայ արքայի ասպատակ արարեալ Շահենայ՝ արշաւեաց ի կողմանս արեւմտից եւ գնացեալ ի Կեսարիա Կապադովկացւոց¹. Իսկ բնակիչք քաղաքին քրիստոնեայք ելին ի քաղաքէն եւ գնացին. բայց Հրէայքն ընդ առաջ երթեալ հնազանդեցան ի ծառայութիւն. եւ նստաւ նա ի քաղաքին յայնմիկ զտարի ...ան զՎասակն Արծրունի զորդի Սահակայ նահապետին Արծրունեաց, եւ սպանին զնա հանդէպ դրանն քաղաքին ի վերայ փայտի. որ թէպէտ եւ բազում աւճիբս² վնասուց գործեալ էր նորա ի գաւրուն Պարսից, սակայն ամենայն գաւրն Պարսից ողբայր զնա վասն քաջութեան եւ արիւթեան, եւ մանուկ ուժեղ եւ բարձրահասակ³: 33 Մանաւանդ զի սնեալ եւս էր ի մէջ նոցա, եւ վարժեալ⁴ եւս էր ի նոցանէն հրահանգաւ: 33 Այսպէս եւ սա:

ԳԼՈՒԽ ԼԳ

1 Խոսրով մերժէ առնել հաշտութիւն. պատերազմ առ Կեսարեաւ, փախուստ Յունաց. Շահէն առնու զՄելիտիսն: 2 Զաւրավարք պարսիկք ի Հայս: 3 Փիլիպպիկոս արշաւէ յԱյրարատ եւ դառնայ ի փախուստ: 4 Նստուցանել Հերակլի զԿոստանդին զորդի իւր յաթոռ թագաւորութեանն եւ երթալ յԱտրեստան: 5 Պարտութիւն նորա առ Անտիոք քաղաքաւ: 6 Երկիրն Պաղեստինացւոց հնազանդի ի ծառայութիւն Պարսից: 7 Ապստամբութիւն Երուսաղէմ քաղաքի, առումն եւ կոտորած անհնարին: 8 Գերումն խաչափայտին: 9 Հրաման յարձակելն

1 Ա Կեսարիայ Կապադովկացոց
2 ՏՏ աւելիս
3 Ա բարձր հասակ
4 ՏՏ եւս (փխ. եւս էր) ի նոցանէն

Խոսրովայ՝ շինել անդրէն գերուսաղէմ:

10 ԽՈՍՐՈՎ ԻԲ, ԵՐԱԿՂՈՍ ԶԱՌԱ-ՋԻՆՆ.

11 Թեւ եղեւ ի ժամանակին յայնմիկ գումարել զաւրս Երակլի՝ որ ի կողմանս Եգիպտացւոց, յամի քսաներորդի երկրորդի⁷ թագաւորութեանն Խոսրովայ, եւ նաւեալք ընդ ծով՝ հասին ի Կոստանդնուպոլիս⁸, եւ սպանեալ զՓոկաս թագաւոր՝ նստոյց զՀերակղոս զորդի իւր⁹ յաթոռ թագաւորութեանն, եւ արար յամենայն երկիրն խաղաղութիւն:

12 Եւ եղեւ իբրեւ թագաւորեաց Հերակղոս¹⁰ արձակեաց հրեշտակս մեծապէս գանձիւք¹¹ եւ հրովարտակաւք առ արքայ Խոսրով՝ խնդրել զխաղաղութիւն մեծաւ թախանձանաւք: 13 Որում ոչինչ կամեցաւ լսել արքայ Խոսրով ասելով. «Իմ է թագաւորութիւնն այն, եւ ես զԹէոդոս զորդին Մաւրկայ նստուցի թագաւոր: 14 Եւ նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, եւ զմեր գանձն¹² մեզ ընծայս մատուցանէ. բայց ես ոչ դադարեցից՝ մինչեւ առից զնա ի բուռն իմ»: 15 Եւ առեալ զգանձն՝ հրամայեաց սպանանել զհրեշտակս նորա, եւ բանից նորա ո՛չ արար պատասխանի:

16 Յայնժամ գումարել Երակլի զգաւրս իւր՝ բանակեցաւ շուրջ զքաղաքաւն եւ արգել զնոսս յարշաւանաց իւրեանց: 17 Եւ գումարեալ զգաւրն ի ձեռն

5 Ա Խոսրով ԻԲ, երակղոս գառաչինն բառերը ձեռագրինն են:
6 Ա եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ բառերի դիմաց լուսանցում գրուած է ԼԲ գլխահամարը:
7 Միհրդ. չիք երկրորդի
8 Ա Կոստանդնուպոլիս
9 Ա յաթոռ թագաւորութեան եւ արար խաղաղութիւն ամենայն երկրին
10 Ա Հերակղոս
11 Ա գանձուք
12 Ա գանձս

կուրատորի ուրումն¹, հրաման ետ գգու-
շանալ, եւ ինքն զնաց ի տեղի իւր:

18 Եւ պաշարեցին զքաղաքն Կեսա-
րացւոց տարի մի, եւ նեղեցաւ զաւրն Պար-
սից ի կերակրոյ. եւ զի ոչ գոյր խար երի-
վարացն բազմութեան: 19 Եւ եղեւ իբրեւ
հասին յաւուրս ամառնային ջերմու-
թեանն, եւ լցեալ սեռնեցան վայրքն բու-
սով դալարոյ՝ հրդեհեցին զքաղաքն հուրբ,
եւ ելեալ զնացին բռնութեամբ, հարեալ
զՅոյնն եւ փախստական արարեալ յե-
տուստ իւրեանց. եւ ինքեանք երթեալ ի
սահմանս Հայոց: 20 Եւ ձմերեալ զաւրն
Պարսից ի Հայաստան աշխարհին:

21 Կոչի Շահէն փութանակի ի դուռն
թագաւորին Պարսից, եւ հրաման տայ նմա
արքայ երթալ անդրէն ընդ արեւմուտս
փութանակի: 22 Իսկ նորա առեալ
զզաւրս² իւր յաւուրս ամարայնոյ զնա-
ցեալ հասանէ ի Կարնոյ քաղաք, եւ դի-
մեալ ի վերայ Մելտինոյ, առնու զնա եւ
հնազանդէ ի շառայութիւն: 23 Եւ ինքն
զնացեալ³ միանայր⁴ զաւրն Խոռեմայ, որ
էր ի Պիսիդացւոց կողմանէ:

24 Եւ յոստանն Դրւնայ եկն փոխա-
նակ Շահրայենպետի՝ Պարսեանպետ Պար-
չընազդատ ապա Նամդար Վշնասպ⁵. ապա
Շահրապդական: 25 Սա արար կռիւ մի ի
Պարս եւ յաղթեաց. ապա Ըռոծ⁶ վեհան: 26 Սա
հետամուտ լեալ զհետ թագաւորին
Երակղայ ի Հայս⁷ մինչեւ ի սահմանս Ա-
սորեստանի, մինչ եղեւ⁸ պատերազմ մեծ ի

Նինուէ, յորում անկաւ ինքն եւ ամենայն
զաւրք իւր:

27 Իսկ թագաւորն Երակղոս⁹ գումարէ
զՓիլիպիկոս¹⁰ գոմն երէց ի զաւրավարու-
թիւն: 28 Եւ էր լեալ Փիլիպիկոսս այս փե-
սայ կայսերն Մաւրկայ, եւ բազում ժամա-
նակաւ արարեալ զաւրավարութիւն՝ գոր-
ծէր գմարտից¹¹ յաղթութիւն: 29 Եւ ապա
յանկարծաւրէն արկեալ ի միտս իւր անդ-
րէն յաւուրս Մաւրկայ թագաւորութեանն,
կտրեալ զհերս գլխոյ իւրոյ եւ զգեցեալ
զքահանայութիւն՝ զինուորեցաւ յուխտ ե-
կեղեցւոյ: 30 Արդ՝ զսա բռնադատեալ Հե-
րակղի, կարգէ զաւրավար եւ արձակէ ի
կողմանս արեւելից զաւրու մեծաւ: 31 Եւ
նորա դիմեալ ընդ Կեսարիա¹² Կապադով-
կացւոց՝ երթեալ հասանէր ի Հայաստան
երկիր, ի գաւառ Այրարատայ¹³, եւ բանա-
կի ի դաշտին Վաղարշապատ քաղաքի:

32 Հապճեպ ստիպով ի ձեռն թեթե-
ւընթաց երազոտն սուրհանդակաց հրա-
ման թագաւորին հասաւ. մեծաւ վտանգաւ
ստիպէր զզաւրս իւր հասանել զհետ նորա
եւ անյիշատակ ի միջոյ ի բաց բառնալ
զզաւրն: 33 Եւ նոքա երթեալ մեծաւ ստի-
պով հասին ի գաւառն Այրարատայ եւ
բանակեցան ի վերայ գետեզերն Երասխայ,
կամեցեալ առ վաղիւն խմբել զգործ պա-
տերազմին: 34 Ի նմին ժամու ի գիշերին
զնացեալ ի վերայ, Փիլիպպոսի¹⁴ ի Նիգ
գաւառի եւ պատեալ զթիկամբք¹⁵ լերինն
Արագածայ՝ երթեալ անցանէ ընդ Շիրակ
եւ ընդ Վանանդ մերձ քաղաքաւն Կարնոյ
եւ երթեալ հասանէ ի սահմանս իւր: 35 Իսկ
զաւրն Պարսից, քանզի յաւգնեալ էր ի հեռաւոր
եւ յայնպէս վտանգաւոր ու-

1 Ա կուրատուրի որումն
2 Ա գորս
3 Ա գնաց երթալ փխ գնացեալ
4 ՁՁ, Միհրդ., Պատկ. ի գաւրն Խոռեմայ, որ էր ի
Պիսիդացւոց կողմանէ եւ յոստանս Դրւնոյ: Եկն
փոխանակ Շահրայենպետի
5 Բոլ. Նամգարուն Շոնագպ (Շնասպ) փխ Նամ-
դար Վշնասպ
6 Բոլ. Յոռն
7 Ա ի հայոց
8 Միհրդ., Պատկ. մինչեւ եղեւ

9 Ա Հերակլոս
10 Ա զՓիլիպիկոս
11 Ա զմարտիցն
12 Ա Կեսարայ
13 Ա Այրարատոյ (նաեւ յետոյ)
14 Ա Փիլիպպոսի
15 Ա զթիկամբ

դեաց¹ ճանապարհին,— քանզի բազումք մեռան ի ճանապարհին ի զաւրացն, եւ բազմաց երիվարք սատակեալ՝ անկանէին հետիոտս՝— ոչ կարացեալ հապճեպ ստիպով զկնի նոցա լինել հետմուտ: 36 Այլ դադարեալ աւուրս ինչ. ապա գնացեալ հանգստիւ, երթեալ անցանէ ի կողմանս Ասորեստանի: 37 Եւ բանակեցան անդէն ի տեղոջն, ուր էին գառաջիհնն եւ լայնեալ յաջ եւ յահեակ իւրեանց՝ լաստեցան եւ կալան գերկիրն ամենայն:

38 Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Հերակղոս² գորգի իւր զԿոստանդին, ետ գնա ի ձեռն սընկղիտոսին, եւ յանձնեալ ամենայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց գնա յաթոռ թագաւորութեան իւրոյ: 39 Եւ իւր առեալ յանձն գանուն զաւրավարութեան, հանդերձ եղբարքն իւրով թէոդոսիւ գումարեալ ժողովեաց զբազմութիւն զաւրացն, եւ անցեալ գնաց յԱսորեստան ի կողմանս Անտիոքացւոց: 40 Եւ եղեւ պատերազմ մեծ ի կողմանս Ասիացւոց եւ բռնացեալ հոսեցաւ արիւն զաւրականացն³ առ Անտիոք քաղաքաւ: 41 Սաստիկ լինէր խումբ եւ խառնուրդ, եւ անբաւ կոտորածն ի մէջ տարուբերին. եւ յաւգնեալ վանեցան ի մարտին երկոքին կողմանքն: 42 Բայց սակայն զաւրացեալ Պարսիկն՝ փախուցեալ զՅոյնն հալածեաց, եւ ստացաւ հանդերձ քաջութեամբ զյաղթութիւն: 43 Եւ եղեւ միւս եւս այլ պատերազմն մաւտ ի նեղուց մտին ի Կիւլիկեայ⁴. եհար Յոյնն զՊարսիկն ի ճակատուն ԸՌ արանց սպառազինաց: 44 Եւ ինքն դարձեալ փախստական գնաց. եւ զաւրացեալ զաւրն Պարսից՝ անցեալ կալաւ զՏարսաւն քաղաք եւ զամենայն բնակիչս Կիւլիկեացւոց գաւառին:

1 Ա ուղղեաց
2 Ա երակլոս
3 Բոլ. գաւրավարցն
4 Ա մտին Կիւլիկեայ

45 Յայնժամ ապա ամենայն երկիրն Պարստինացւոց կամաւք հնազանդեցան ի ծառայութիւն արքային Պարսից. մանաւանդ մնացորդք ազգին Հերրայեցւոց, ապստամբեալք ի քրիստոնէից եւ առեալ ի ձեռն գնախանձ հայրենի՝ մեծ աւճիրս վնասուց գործէին ի մէջ բազմութեան հաւատացելոցն: 46 Երթեալ առ նոսա միաւորեցան խառն ի միաբանութիւն⁵: 47 Յայնժամ զաւրն արքային Պարսից նստէր ի Կեսարիա Պարստինացւոց, եւ զաւրավարն նոցա անուանեալ⁶ Ռագմիոզան⁷, որ է Խոռեամ⁸, խաւսէր ընդ Երուսաղէմի, զի կամաւք հնազանդեցին ի ծառայութիւն, եւ ի խաղաղութեան եւ ի շինութեան պահեսցին⁹:

48 Արդ՝ նախ միաբանեալ հնազանդեցան ի ծառայութիւն, եւ մատուցին զաւրավարին¹⁰ եւ իշխանացն¹¹ պատարագս մեծամեծս, եւ խնդրեալ ոստիկանս արս հաւատարիմս՝ նստուցին առ իւրեանց առ ի պահպանութիւն քաղաքին: 49 Եւ յետ անցանելոյ ամսոց, մինչ միաբանեալ ամենայն ռամիկ կաճառացն մանկունք քաղաքին սպանին զոստիկանս թագաւորին Պարսից եւ ինքեանք ապստամբեալք ի բաց կացին ի ծառայութենէ նորա: 50 Յայնժամ եղեւ պատերազմն ի մէջ բնակչացն քաղաքին Երուսաղէմի, հրէին եւ քրիստոնէին. եւ զաւրացեալ բազմութեան քրիստոնէիցն՝ հարին սատակեցին զբազումս ի հրէիցն: 51 Եւ մնացեալքն ի հրէիցն անկեալ¹² ի պարսպացն՝ գնացին ի զաւրն Պարսից: 52 Յայնժամ ժողովեաց

5 Միհրդ. միաբանեցան փխ միաւորեցան
6 Ա անուանեալն
7 ՀԱԲԳ, Միհրդ. Գագմիոզան / Դ Խագմիոզան փխ Ռագմիոզան
8 Ա Խոռեամ / Դ Խոռեամ
9 Դ պատմեցին (փխ պահեսցին), ապա ջնջուած է եւ դարձրած պատահեսցին (փխ պահեսցին)
10 Ա, Միհրդ. գպարավարին փխ գաւրավարին
11 ԶԶ, Միհրդ., Պատկ. գիշխանացն
12 Ա անկեալք

Խոռեամ¹, որ է Ըռազմիրողան², զգաւրս իւր եւ երթեալ բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ եւ պաշարեաց զնա. եւ կալաւ ի վերայ նոցա գործ պատերազմի զաւուրս ԺԹ: 53 Եւ փորեալ ի ներքոյ զՀիմունս քաղաքին՝ աւերեցին զպարիսպն:

54 Եւ եղև յաւուրն ԺԹ-երորդի յամսեանն մարգաց, որ աւր 3ԻԸ էր ամսոյն, յամի 4ԻԵ-երորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովայ, զկնի տասն աւուր անցելոյ յետ զատկին, առին զաւրքն Պարսից զԵրուսաղէմ, եւ սուր ի գործ արարեալ մինչեւ ցերիս աւուրս՝ սպառեցին զամենայն մարդիկ քաղաքին. եւ 5նստան ի ներքս քաղաքին 6ԻԱ աւր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին եւ այրեցին զքաղաքն հուրբ: 55 Եւ համարեցին⁷ համար անկելոց դիականացն, եւ եղև թիւ սպանելոցն Ժէ⁸ հազար մարդ: 56 Եւ զորս կալան կենդանիք՝ ԼԵ հազար մարդ: 57 Կալան եւ զհայրապետն, որում անուն էր Զաքարիա, եւ զխաչապանն. եւ ի խնդիր անկեալ կենսաբեր խաչին՝ սկսան զնոսա տանջել. եւ զբազումս ի պաշտանէից կառափնատեալ⁹ սատակէին ի ժամանակին յայնմիկ: 58 Ապա ցուցին զտեղին, ուր ծածկեալ կայր. զոր առեալ վարեցին ի գերութիւն. եւ զարծաթ եւ զոսկի քաղաքին ձուլեալ խաղացուցին ի դուռն թագաւորին:

59 Ապա վասն անկելոց ձերբակալացն հրաման հասեալ ի թագաւորէն՝ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքա-

ղաքն, եւ զնոսա անդրէն հաստատել յիւրաքանչիւր կարգ: 60 Եւ զհրեայսն հրամայէ հալածական առնել ի քաղաքէն. եւ անդէն¹⁰ վաղվաղակի մեծաւ ստիպով կատարեն զհրամանն արքունի: 61 Եւ կարգեցին երիցապետ զոմն ի վերայ քաղաքին, անուն Մողեստոս¹¹, որ գրէ ի Հայաստան երկիր աւրինակ այսպէս. –

ԳԼՈՒԽ ԼԵ

1 Առ Տէր Կոմիտաս¹²
 2 Տեառն իմոյ ամենայն բարութեան եւ երանութեան եւ հոգեւորի Կոմիտասայ արքեպիսկոպոսի եւ մետրապալտի աշխարհիդ Հայոց, Մողեստոս նուաստ երէց եւ տեղապահ Երուսաղէմի:
 3 Աւրհնեալ է Աստուած եւ հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեանց եւ Աստուած ամենայն մխիթարութեանց, որ մխիթարեաց զմեզ մխիթարութեամբ բազմաւ ի վերայ ամենայն նեղութեանց մերոց ի գալստեան ձերոյ հաւտիդ¹³: 4 Քանզի ո՞չ¹⁴ մխիթարեաց զմեզ¹⁵ ի գալստեան դոցա. նախ՝ յիշեցուցանելով մեզ զառաջին երթեւեկն, զոր առնէին ի պատուական տեղիս Երուսաղէմի: 5 Երկրորդ՝ զի հաճեաց զմիտս մեր ի գալստեան դոցա, եւ ծանեաք, զի ոչ իսպառ մերժեաց զմեզ Աստուած: 6 Այլ արդարեւ սոյն Աստուած մեր ի մեզ է, ցուցանելով մեզ ի ձեռն նոցուն իրաց զմեծամեծս իւր՝ որ յառաջ քան զյաւիտեանս մինչեւ ցայժմ կատարելով. եւ զգաւրուութիւն նորա եւ սքանչելիս նորա աւրհնելով եւ մեր զՊաւղոսին ասասցուք. Ո՛րպէս մե-

1 Դ Խոուրիեան
 2 Բոյ. Ըռամիրողան (Ռամիրողան)
 3 Միհրդ., Պատկ. Իէ էր ամսոյն
 4 Միհրդ. Իէ-երորդի թագաւորութեանն
 5 Ա. նստան ի քաղաքին
 6 Բոյ. չի՞ ԻԱ աւր ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին
 7 Պատկ. հրամայեցին ի/ս համարեցին
 8 Պատկ. Ծէ ի/ս Ժէ
 9 Ա կառափնեալ

10 Պատկ. անդրէն ի/ս անդէն
 11 ԶԶ, Միհրդ. Մոգեստոս
 12 ԶԶ Առ տէր Կոմիտաս / Գե չի՞ Առ տէր Կոմիտաս
 13 Դ հօտիդ ջնջուած է եւ ուրիշ բանաբով ուղղուած հայրապետիդ
 14 ՀԱ, Պատկ., Մալիս. քանզի ոչ / Միհրդ. քանզի ոչ
 15 Պատկ. զմեզ ի/ս մեզ

ծացան գործք քո, Տէր. զամենայն իմաստութեամբ արարերք⁷: 7 Արդարեւ անբնիմ¹ են դատաստանք և՛ նորա, եւ առանց զնմելոյ են նամապարիք և՛ նորա: 8 Զի ո՞վ ծանեալ զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհրդակից եղել նմա, կամ ո՞վ ետ նմա փոխ եւ հատուցանել նմա, զի ի նմանէ են եւ նովար եւ ի նամենայն: 9 Նմա փառք յաւիտեանս, ամէնէ: 10 Արդ՝ զի զհակառակորդսն մեր սիրելի արար, եւ ետ զմեզ ի գլխութիւն եւ յողորմութիւն առաջի ամենայն գերջաց մերոց. որ զտիրասպանունս եւ զհրէայս², որք կարծէին չարչարանաւք սորա դարձեալ թշնամանել զայն, որ չարչարեցաւ վասն մեր, զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ զճշմարիտ Աստուածն մեր, որք համարձակեալ պատերազմեցան իսկ, եւ այրեցին զպատուական տեղիս զայս՝ հաճեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն զնոսա աւտարացուցանել³ ի քաղաքէն սրբոյ⁴ իւրմէ Երուսաղէմէ: 11 Որք կամէին բնակիչ առնել ինքեանց⁵ լսեն բովանդակ չբնակել, եւ տեսանել ո՛չ արժանաւորին, եւ զպատուական եւ գերկրպագու չարչարանս եւ զսուրբ եւ զկենսաբնակալ նորա գերեզմանս եւ զսուրբ Գողգոթայ մեծափառ նորոգեալ ճանաչեն, հատուցեալ զիւրաքանչիւր փառս. բազում վերագրութեամբ⁶ զաստուածային պաշտանն⁷ եւ զմայր եկեղեցեաց Սիովնն⁸, եւ զվերացումն նորա եւ միանգամայն իսկ ասացեալ՝ զամենայն երկրպագու տեղիս նորոգեալ լսելով՝ նախանձաբերին, ոչ ի բարի, այլ ի բնիկ նա-

խանձանք⁹ հայրենական հաւր նոցա կայենի: 12 Քանզի բազում անգամ ջանացան, բազում կաշառաւք հրաման խնդրէին մտանել ի սուրբ քաղաքն, եւ ոչ արժանաւորեցան՝ յԱստուծոյ¹⁰ արգելեալ, որ եւ խրատեաց¹¹ զմեզ ոչ ըստ գործոց մերոց, այլ հայրական գլխութեամբն դարձուցանել զմեզ ի նորոգութիւն:

13 Բայց եւ զհրաշալիս գրելով ուրախ առնեմք զքեզ. ոչ յանիրաւութենէ եւ կամ յաւերանաց շինութիւնք երկրպագու տեղեացս այսոցիկ լինին, այլ ի ձեռն նորա ողորմութեանն, որով բարձրացոյց զաշխարհս եւ զառ ինքն ծանաւթութիւն շնորհեաց:

14 Արդ՝ որպէս ասացեալդ, թէ շնորհիւ¹² Աստուծոյ ի ձեր սուրբ աղաւթիցդ ամենայն եկեղեցիքս Երուսաղէմի կարգաւորեցան եւ պաշտին: 15 Եւ խաղաղութիւն քաղաքիս Աստուծոյ եւ սորին շրջեկիս, որպէս դէմ յանդիման պատմեն ձեզ, որպէս տեսին զայս քրիստոսասէր մարդիկ ձեր: 16 Քանզի զայս ամենայն ի նորին յաւրինողին՝ եւ միայն ի մարմնի են գործքն, եւ ոչ ի մարդկային ձեռաց է զաւրութիւն, զի մի՛ պաճեսցի ամենայն մարմին առաջի նորա: 17 Քանզի նա է խաղաղութիւն մեր որ առնէ զամենայն, որպէս ասացեալդ է, եւ վերստին նորոգէ որպէս այժմիկ մարտեալ¹³ ուրախ արասցէ զմեզ ի ձեռն սուրբ աղաւթից ձերոց, քարոզելով զսորին խաղաղութիւն սուրբ եկեղեցեացն եւ շնորհելով մեզ հովիւս եւ առաջնորդս եկեղեցեաց նորա: 18 Եւ արկցէ ի միտս ձեր՝ անդադար աղաւթելով վասն մեր, եւ մի՛ պակասել ամենեւին ի յիշել եւ

7 Սաղմ. ԸԳ՝ 24
 1 ԶԶ, Միհրդ., Պատկ. անբնիմ
 2 Հաղմ. ԺԼ՝ 33-36
 3 Մայիս. գիրեայս
 4 Բոլ. աւարացուցանել
 5 Ա ի Բաղաթ Իւրոյ սրբոյ
 6 Ա իւրեանց փխ ինքեանց
 7 Ա պայծառութեամբ փխ վերագրութեամբ
 8 Ա պաշտամունս
 9 ՏՏ Սիւանն

9 Ա նախանձ փխ նախանձանք
 10 Ա Աստուծոյ
 11 ՀԱ, Պատկ. խրամատեաց փխ խրատեաց
 12 Ա շնորհիւ
 13 ԶԶ մարտեալ (աղաւաղուած)

նայել¹ ի մեզ եւ յաղքատս Երուսաղէմի, եւ որ ինչ պիտոյ է ընուլ: 19 Եւ եթէ Հնար իցէ զաստուածասէր ձեր նախանձը եւ ի ձեռնտուութիւն շինածոյ կենարար չարչարանացն ձգել. զի եւ այսմ բարւոյ եւ փափագելի պարգեւաց Հանդիպիմք: 20 Բայց եւ զայս աղաչեմ զՀայրական զձեր սրբութիւնդ եւ որք ընդ ձեր² սրբասուն եպիսկոպոսունսդ են, առաջի նոցա ընթեռնուլ զթուղթղ³:

ԳԼՈՒԽ ԼԶ

1 ⁴Եւ այս է թղթոյն պատասխանի՝ գոր գրեցիմ Հայր⁵ յԵրուսաղէմ առ Մողեստոս⁶:

2 Ձայն աւետաւոր փողոյ մեծի ի հրեշտակէն գոչէ մեզ ի ձեռն թղթոյս այսորիկ, Հասելոյ յաստուածակերտ քաղաքէ այտի, որ աւետարանէ մեզ ուրախութիւն մեծ:

3 Վասն այսորիկ ուրախ լինին երկինք, եւ ցնծասցէ երկիր, զուարճասցին փառաւք իւրովք եկեղեցի եւ մանկունք իւր: 4 Եւ արդ՝ մեք ամենեքեան⁷ միաբան զոչմամբ զհրեշտակական փառաբանութիւնսն երգեսցուք ասելով. Փա՛նք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն⁸:

5 ՊԱՏԱՍԽԱՆԻՆ Տ. ԿՈՒՄԻՏԱՍԱՅՑՑ:

6 Շնորհիւն Աստուծոյ յեպիսկոպոսապետէս⁹ եւ յամենայն ուղղափառ եպիսկոպոսացս եւ յերիցանցս, ի սարկաւազացս եւ ի դպրացս, եւ յամենայն ժողովրդոց

1 Միհրդ., Պատկ. նայիլ
 2 Միհրդ., Պատկ. ընդ ձեզ փիւ ընդ ձեր
 3 Ա. գրուխտ
 4 Վերնագիրը ձեռագրիմն է: / Ե չիք վերնագիր
 5 ԱԲԳ Հայոց փիւ Հայր / Դ ի Հայոց
 6 ՁԶ առ կայսր փիւ առ Մողեստոս
 7 Ա. ամենեքիմ
 8 Դ. Կ. Բ. 14
 9 Ա. կումիտասայ փիւ Տ. Կումիտասայ
 Ա. եպիսկոպոսապետէ

աշխարհիս Հայոց՝ ձեզ նեղելոցդ եւ վշտացելոցդ¹⁰, գանալից եղելոցդ¹¹ եւ խրատելոցդ, յանձանձելոց եւ գգուելոց¹², սփոփելոցդ եւ սիրեցելոցդ ի Հարէն երկնաւորէ¹³. Եղբայր պատուական Մողեստոս¹⁴, քեզ եւ ամենայն եկեղեցեացդ որ յԵրուսաղէմի. շնորհիք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ սէրն Աստուծոյ եւ խաղաղութիւն բազմացիք⁵:

7 Նախ՝ գոհանամք¹⁵ զԱստուծոյ ի վերայ մխիթարութեանց, ընդ որ մխիթարեաց զձեզ¹⁶, որպէս զի եւ դուք կարող լինիջիք մխիթարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցենք⁷: 8 Զի ահաւասիկ մեք իսկ ի ձեռն մխիթարութեան ձերոյ որ եհասս առ մեզ մխիթարեցաք ի բազում վշտացս եւ ի սաստիկ նեղութեանցս եւ ի դառն կտտանացս որ նեղէին¹⁷ զմեզ: 9 Այլ հաւատարիմ է Աստուածէ, որ սփոփեաց Հայրական զթութեամբ¹⁸ իւրով զամենայն Հաւատս¹⁹ Հաւատացելոց ի ձեռն այդորիկ, եւ մոռացոյց զտրամուծիւնս մեր ուրախութեամբ²⁰ լրոյս եւ ձայնիւ շինութեամբդ եւ խաղաղութեամբդ Երուսաղէմի: 10 Բայց առ մեզ գոչէ մարգարէն, աղաղակէ եւ ասէ. Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, ասէ Աստուած, քահանայդ իսրայէլացարո՛ւմ ի սիրտ Երուսաղէմի, եւ մխիթարեցէ՛ք զդա, զի լի եղև

10 Պատկ., Մալխ. վշտացելոց
 11 Ա. Միհրդ. եղելոց
 12 Ա. Պատկ. գգուելոցդ
 13 Ա. երկնաւորէն
 ք. Հ. Կ. Բ. Բ. Կ. Բ. Բ. 25:
 14 ՁԶ, Միհրդ. Մողեստոս
 ք. Հ. Կ. Բ. Բ. Կ. Բ. Բ. 7:
 15 Միհրդ., Պատկ. գոհանամ
 16 Բոյ. զմեզ փիւ զձեզ
 ք. Բ. Կ. Բ. Բ. 4
 17 Բոյ. նեղէ փիւ նեղէին
 ք. Հ. Կ. Բ. Բ. Կ. Բ. Բ. 9, Բ. 13:
 18 Ա. Միհրդ. գրութեամբն
 19 Ա. Հ. հաւատս փիւ հաւատս
 20 Ա. ուրախութիւն

տառապանաւ^ա: 11 *Իբրեւ յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած, քանզի* գոր սիրէ Տէր, խրատէ^բ. 1^ո *իցէ որդի, զոր ոչ խրատեսցէ զնա հայր իւր.* զի նորա վիրաւն բժշկեցաւ, եւ խրատ² խաղաղութեան մերոյ ի նմա^գ: 12 *Բայց գիտեա՛ դու զայս, ո՛վ եղբայր սիրելի, ո՛չ սակաւ մխիթարութիւն գործէին եւ մերոյ ժողովրդեանս յերթեակէ այդ ճանապարհացդ:* 13 *Նախ՛ զի մուսանային զամենայն³ վիշտս եւ զտրտութիւն աշխարհիս:* 14 *Երկրորդ՝ զի սրբէին զմեզ իւրեանց ի ձեռն ապաշխարութեան, պահոց եւ ողորմութեան, տքնութեամբ զտիւ եւ զգիշեր անհանգիստ ուղեգնացութեամբ:* 15 *Երրորդ՝ զի մկրտէին զմարմինս ի ջուր սրբութեան ի Յորդանանու յորձանսն հրադէզս, որ յամենայն տիեզերս աղբերացաւ⁴ շնորհքն աստուածային.* զի սփռէին զանձուկ սրտի զաստուածամերձ Սինէական լեռամբն առ Մովսիսիւ, զմարգարէականն (ասելով)⁵ ընկեր ցընկեր. եկա՛յք ելցո՛ւք ի լեռն Տեառն եւ ի տունն Աստուծոյ Յակովբայ⁶: 16 *Այլ եւս զմեծագոյնն ասասցուք ըստ առաքելական ձայնի – զմատչելն ի Սիովն լեռն եւ ի քաղաք Աստուծոյ կենդանոյ, յերուսաղեմն յերկինս⁷ եւ ի բերաւոր բանակս հրեշտակաց եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոցն յերկինս, զսթոռն Աստուծոյ ի վերայ երկրի տեսանել, եւ զդատաւորն ամենեցուն զԱստուած տեսանելով բազմեալ յերկնաւոր խորանի եւ ի վերայ աստուածընկալ խարսխիդ:* 17 *Իսկ իբրեւ դարձոյց Բարձ-*

րեալն զերեսս իւր ի մէնջ, եւ նայեցաւ ի մեզ խեթիւ⁶ արեգակնն⁷ եւ հետեւով հետեցան անձինք մեր եւ խռովեցաք: 18 *Տեառն Աստուծոյ մերում արդարութիւն, եւ մեր ամաւթ երեսաց:* 19 *Այլ յորժամ կամեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն ի վերայ կործանելոցդ սաստկութեամբ առնել բարերարութեամբ քաղցրութիւն, ընկղմեցաք ի խորութիւն բարձրութեան:* 20 *Եւ ի վերայ այսր աւետաբեր նկարագրի՝ անդադար բերանովք անհանգիստ լեզուաւք զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զբարերարն եւ զսքանչեղագործն եւ զպարգեւաբաշխն աւրհնեսցուք. զի թէպէտ եւ այնպէս ահա գին եւ սաստիկ էր սուրակոխ եւ հրակէզ⁸ աւրն դատաստանին քոյ, այլ ճարտարապետն իմաստուն, որ ընտրեացն եւ սրբեաց⁹ զնեզ որպէս ոսկի ի բովս՝⁹ նոյն նորոգեսցէ՛ վերստին զփառս իւր ի վերայ քոյ, եւ զարմանալի արասցէ մխիթարութիւն իւր ի քեզ:*

21 *Այլ զայս ամենայն սիրելին մեր¹⁰ յառաջագոյն պատմեաց մեզ յասելն իւրում զէջ Սիովնի յերիքով, – զանկեալդ ի ձեռս աւագակացն, որք մերկացուցին զդա, եւ վերս ի վերայ վիրաց եղեալ թողին կիսամահ եւ գնացին. տեսանել զդա քահանայից նախարհորդաց՝ եւ առնել զանց. տեսանել զդա հրէից եւ դետացուոց եւ ամբարշտաց՝ եւ առնել զանց. զիրովին նախարհորդելդ, գթութեամբդ մատչելդ, պատել զվեր դորա եւ արկանել ի դա գործութիւնն եւ զարիւն կենարար:* 22 *Ասէ ձեք եւ գինի արկանել ի վերայ դորա եւ պատել՝ զի բժշկեսցի¹¹:* 23 *Որ ահաւասիկ*

ա ԼԵ՛. Խ 1-2
 բ ԼԵ՛՞՞. ԺԻԻ 6
 1 Միհրդ. զի նորա վիրաւն բժշկեցաւ. ո՞ իցէ որդի, գոր ոչ խրատեսցէ զնա հայր իւր
 2 Ա, Միհրդ. եթէ խրատ փիս խրատ
 3 Լ՝ ՊԵ՞՞. Ի 24. ԼԵ՛. ՆԵ՛՞՞ 5
 4 Պատկ., Մալխ. չի՞ գամենայն
 5 Ա աղբերացաւ
 6 ՁՁ չի՞ ասելով
 7 ԼԵ՛. Ի 3. ՄԻ՛՛. ԳԻ 2
 8 ԼԵ՛՞՞. ԺԻԻ 22-23

6 Ա, Միհրդ., Պատկ. ի քեզ խեթիւ
 7 ՁՁ, Միհրդ., Պատկ. արեգականն
 8 Ա հրադէզ
 9 Ա սրբեացն
 շ ԼԵ՛՞՞. ՅԵ՞՞. ԳԻ 18:
 10 Ա այն փիս մեր
 11 Ա բժշկեսցէ

տեսան¹ անեալ ի պանդոկի յայդ եւ դարմանել եւ գերիս դահեկանս, որ ետ ի պանդոկապետն՝ ահաւասիկ դու ունիս² ի ձեռս Բոյ դարման առատ: 24 Եւ գոր ինչ ծախեսցես ի դա՛ ի միւսանգամ իւրում³ գալստեանն հատուցէ քեզ՝:

25 Մի՛ այսուհետեւ⁴ ողբասցէ Սիովն⁵, եւ մի՛ զգեցցի սուգ Երուսաղէմ, քանզի աւաղիկ եկեալ հասեալ է արքայն Քրիստոս փրկել եւ մխիթարել. այլ պսակ մխիթարութեան քո ի ծաղկացու չարչարանաց⁶ նորա բոլորի, եւ մահ նորա թագ մխիթարութեան եղիցի ի վերայ գլխոյ քոյ: 26 Յոյժ հաշէին եւ մաշէին⁷ չարքդ որդիքդ հրէից, ո՛վ սիրելի, զի ծառքդ քրիստոսեանք, զորս հատին տապարաւք կատաղութեամբն իւրեանց ի ձեռն անմիտ փայտահարաց՝ ճահաւաղիկ արձակեցին շառաւեղք եւ բազմացան: 27 Եւ ելից զդա Բարձրեալն ձիթենեաւք եւ արմաւենեաւք, զոր խաչահանուացդ մանկունք⁹ եւ տեսանել անգամ մի՛ արժանաւորեսցին:

28 Բայց դուք¹⁰, եղբարք, ըստ առաքելոյ ձայնին՝ ողջ լերուք ի Տէր, հաստատուն կացէք, միխիթարեցարո՛ւք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք, եւ Աստուած խաղաղութեանց եւ սիրոյ եղիցի ընդ ձեզք. ամէն:

1 Միհրդ. հեսան փի տեսան / Մալխ. ուղղելի՝ տեսանի
2 Ա ունիս դու
3 ՏՏ չիք իւրում
* Հմմտ. Ղ.Ն.Վ. Ժ 30-37:
4 Մալխ. այնուհետեւ
5 ՏՏ Սիան / Ա Սիոն
6 Ա չարչարանացն
7 Ա մարշէին փի մաշէին
8 Ա ահաւասիկ / Միհրդ. ահաւասիկ արձակեսցեն շառաիղս
9 Ա մանկունս / Միհրդ. սանկունս
10 Ա դու
Է Բ ԿՊ. ԺԳ. 11

ԳԼՈՒԽ ԼԷ

1 ¹¹Շինումն տանարին Հոփսիմեայ:

2 Եւ եղեւ յամի ԻԸ-երորդի¹² թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու քակեաց կաթողիկոսն¹³ Կումիտաս զմատուռ սրբոյն Հոփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած եւ մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ Հայրապետի Հայոց կաթողիկոսի, որդւոյ¹⁴ սրբոյն Ներսիսի:

3 Արդ՝ մինչդեռ քակէին զորմն մատրանն¹⁵ երեւեցաւ¹⁶ յանկարծակի լուսաւոր եւ չքնաղագիւտ արքունական մարգարիտն, այսինքն կուսական մարմին¹⁷ սրբոյ տիկնոջն Հոփսիմէի: 4 Եւ քանզի անդամ անդամ յաւշեցին զնա, յաւշեալ ի միմեանց. ¹⁸եւ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի եւ մատանեաւ երանելոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի, զոր նա ոչ համարձակեցաւ բանալ: 5 Եւ կնքեալ իւրով եւս մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել զայսպիսի մարգարիտ երից հաւատարմաց երրորդ մատանեաւք:

6 Ո՛վ մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ, եւ սնեալ ի գիրկս սրբութեան եւ նուիրեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարք, եւ խանդակաթ էր ի սէր քոյ երանելին Կումիտաս:

7 Չափ հասակի էր երանելոյն ինն թղաւ եւ չորս մատունս: 8 Եւ դղրդեալ ամենայն կողմն հիւսիսոյ գայր յերկրպագութիւն. եւ բազում ախտաժետաց լինէր

11 Ա.Գ.ե չիք Շինումն տանարին Հոփսիմեայ
12 Ա չիք-երորդի
13 Ա կաթաղիկոսն
14 Ա որդւոյն
15 Ա մատրեանն
16 Ա չիք երեւեցաւ
17 Ա մարմնոյ
18 Բոյ. եւ երանելի սրբոյն Գրիգորի կնքեալ մատանեաւ իւրով փի եւ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի

բժշկութիւնն ամենայն ցաւոց: 9 Շինեաց զեկեղեցին, եւ զերանելին եթող ի բացեայ վասն գիջութեան որմոցն¹, մինչեւ ցամաքել կրոյն: 10 Ապա ամփոփեցաւ ի կայանս² իւր:

11 Վերացոյց եւ զփայտայարկս սրբոյ կաթուղիկէին. նորոգեաց եւ զխախուտ. որմոյն. շինեաց զքարայարկսն: 12 Այս եղև յամս Յովհանկան վանաց երիցու սրբոյ կաթուղիկէին:

ԳԼՈՒԽ ԼԸ

1 Գալ Խոռեմայ առնուլ զԿոստանդնուպոլիս. ողորմանք Հերակղի. հրաման ի Խոսրովայ՝ առնուլ զֆաղաֆն:

2 Ի նաւամարտի բեկանի գաւրութիւն Պարսից: 3 Ժպիրի հրովարտակ Խոսրովայ առ Հերակղ:

4 Նստուցանել Հերակղի զԿոստանդիին յաթոռ թագաւորութեանն եւ գնալ ի Կեսարիա: 5 Արշաւել անտի ի Հայս եւ առնուլ զԴուրիս, զՆախնաւան եւ զԳանձակ: 6 Հասանել Խոռեմայ ի վերայ Հերակղի: 7 Ճարտար շարժումք Հերակղի եւ կոտորել զՊարսիկս մասն առ մասն:

8 Եւ եղև յայնմ ժամանակի դիմեաց զնաց Խոռեմա զաւրու³ իւրով ի Քաղկեդոն, եւ բանակեցաւ⁴ դէմ յանդիման Բիւզանդիայ⁵, եւ խնդրէր անցանել եւ զերել⁶ զքաղաքն թագաւորանիստ:

9 Արդ իբրև ետես կայսրն Երակղոս⁷ զհէնն, որ եկն ի կործանել⁸ զթագաւորութիւն նորա՝ ակամայ բարեկամանայ եւ մե-

ծարէ զնոսա իբրև զվաստակաւորս եւ զսիրելի հիւրս. եւ ընդ առաջ նորա պատարագաւք, եւ տայր զաւրավարին եւ իշխանացն մեծամեծ ընծայս: 10 Եւ բաշխէր զաւրացն հոռոս, եւ ճաշ եւ ընթրիս ամենայն զաւրացն մինչեւ ցելթն աւր. եւ ինքն նստեալ ի վերայ նաւու՝ կայր ի մէջ ծովուն եւ խաւսէր ընդ նոսա այսպէս. «Ձի՞նչ կամիք առել, կամ է՞ր եկիք ի տեղիս յայս. մի՞թէ զծով իբրև զցամաք համարիք՝ մարտնչել ընդ նմա⁹: 11 Կարող է Աստուած, եթէ կամի, ցամաքեցուցանել զսա առաջի ձեր. բայց զգոյշ լերուք՝ գուցէ ոչ հաճեսցի Աստուած եւ խնդրեսցէ ի ձէնջ զվրէժ անդունդք ծովուն¹⁰: 12 Քանզի ոչ եթէ վասն աստուածապաշտութեան ձերոյ ետ յաղթութիւն, այլ վասն մերոյ անաւրէնութեան. մեղք մեր արարին զայս, եւ ոչ թէ քաջութիւնն ձեր: 13 Եւ կամ զի՞նչ խնդրէ թագաւորն ձեր յինէն, որ ոչ առնէ ընդ իս զհաշտութիւն. բառնա՞լ կամիցի զթագաւորութիւնս իմ. մի՛ ջանասցի¹¹, քանզի զսա Աստուծոյ հաստատեալ է, եւ բառնալ զսա ոչ ոք կարէ, բայց եթէ յԱստուծոյ այնպէս ինչ թուեսցի, կամք Աստուծոյ կատարեսցին: 14 Եւ կամ ասիցէ, եթէ ես նստուցից ձեզ¹² թագաւոր. արասցէ զո՞վ եւ կամեսցի, եւ մեք ընդունիմք: 15 Այլ զքէն արեան Մաւրկա՞յ խնդրիցէ. խնդրեաց Աստուած ի ձեռաց Փոկասայ ի ձեռն հաւր իմոյ ¹³Հերակղի... այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեամբ: 16 Մինչեւ յե՞րբ ոչ յագեսցի արեամբ. միթէ ո՞չ կարէին Հոռոմք սպանանել զնա եւ բառնալ զտէրութիւնն Պարսից, յորժամ ետ զնա Աստուած ի ձեռս մեր. այլ արար ի վերայ նորա ողորմու-

1 Միհրդ., Պատկ. որմոյն
2 Ա. ի կայանս
3 Ա. գաւրուն
4 Բոյ. բնակեցաւ
5 Ա. Բիւզանդիայ
6 Ա. գերել փիս եւ գերել
7 Ա. երակղոս
8 Ա. եկն կործանել

9 Ա. ընդ սմա փիս ընդ նմա
10 Պատկ. ծովուն
11 ՁԶ, Միհրդ. ջանասցի փիս մի՛ ջանասցի
12 Ա. ձեր փիս ձեզ
13 Ա. երակղի. այս բառից յետոյ բնագրում՝ զգացուով է պակաս:

թիւն: 17 Եւ ես զնոյն խնդրեմ ի նմանէ, զհաշտութիւն եւ զսէր: 18 Եւս ես խնդրեմ ի ձէնջ երիս ինչս, եւ լուարո՛ւք ինձ. ի բաց արարէք յաշխարհէս զհուր եւ զսուր եւ զգերութիւն. եւ յերիցունցդ¹ աւգուտ գտանէք, զի ոչ դուք նուազիք ի սովու, եւ ոչ հարկք արքունի կորնչիցին²: 19 Եւ ես առաքեմ աւասիկ թագաւորին³ ձերոյ հրովարտակ պատարագաւք, խնդրել ի նմանէ զհաշտութիւն եւ ընդ իս զխաղաղութիւն»: 20 Եւ նոցա ընկալեալ զընծայսն՝ հաւանեցան առնել ըստ խնդրոյ նորա:

21 Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալ ի կայսերէ, եւ զհրեշտակսն անդրէն⁴ ոչ արձակէր: 22 Եւ հրաման տայր զաւրաց իւրոց նաւաւք անցանել ի Բիւզանդիա⁵: 23 Եւ կազմեալ նաւ սկսաւ պատրաստել նաւամարտութիւն ընդ Բիւզանդիայ: 24 Եւ ելին ընդ առաջ նորա ի Բիւզանդիոյ զաւրք նաւամարտիկ: 25 Եւ եղեւ պատերազմ ի մէջ ծովուն, ուստի դարձան ամաւթով զաւրքն Պարսից. եւ կորեան Դ հազար մարդ նաւաւք, եւ այլ ոչ եւս համարձակեցան ի նոյն գործ:

26 Եւ եղեւ յամի ԼԴ-երորդի Խոսրովայ արքայի՝ զրէ առ Երակղոս հրովարտակ այսպէս.—

27 «Աստուածոց պատուական եւ ամենայն երկրի տէր եւ թագաւոր եւ ծնունդ մեծի Արամազդայ Խոսրով՝ առ Երակղոս⁶ անմիտ եւ անպիտան ծառայդ մեր:

28 «Ոչ կամեցեալ տալ զանձն ի ծառայութիւն մեզ⁷, այլ տէր եւ թագաւոր կոչես զքեզ. եւ զանձ իմ որ առ քեզ են, ծա-

խես, եւ զծառայս իմ պատրես, եւ զզաւրս աւագակաց ժողովեալ՝ չտաս ինձ հանգչել: 29 Ո՞չ ապաքէն սպառեցի զՅոյնս: 30 Եւ դու ասես վստահանալ յԱստուածն քոյ. վասն է՞ր ոչ փրկեցին զԿեսարիա եւ զԵրուսաղէմ եւ զԱղեքսանդրիա⁸ մեծ ի ձեռաց իմոց: 31 Միթէ եւ այժմ ո՞չ գիտես, եթէ զծով եւ զցամաք ինձ հնազանդեցուցի. իսկ արդ՝ միայն զԿոստանդնուպալի⁹ ոչ կարացից բրել: 32 Բայց արդ՝ զամենայն յանցանս թողում քեզ. արի՛, ա՛ն զկին քո եւ զորդի եւ ե՛կ այսր: 33 Եւ տաց քեզ ագարակս, այգիս եւ ձիթենիս, որով կեցցես. եւ մեք սիրով նայեսցուք ի քեզ: 34 Մի՛ խաբեսցէ զքեզ սնտոի յոյսն ձեր. զի⁹ Քրիստոսն այն, որ զանձն իւր¹⁰ ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ սպանին կախեալ¹¹ զփայտէ, զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: 35 Զի եթէ իջանիցես յանդուհուս ծովու՝ ձգեցից զձեռն իմ եւ ըմբոնեցից զմեզ¹². եւ ապա տեսցես զիս, որպէս դու ոչ կամիցիս»:

36 Եւ առեալ Երակլի կայսեր զհրովարտակն՝ հրամայեաց ընթեռնուլ առաջի հայրապետին եւ մեծամեծացն: 37 Եւ մտեալ ի տունն Աստուծոյ՝ տարածեցին զհրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն. անկան ի վերայ երեսաց իւրեաց յերկիր առաջի Տեառն, եւ լացին դառնապէս, զի տեսցէ զնախատինսն, զոր նախատեցին զնա թշնամիք նորա⁵:

38 Հաճոյ թուեցաւ Երակլի եւ ամենայն սինկղիտոսացն¹² նստուցանել զԿոստանդոս որդի Երակլի յաթոռ թագաւորութեանն, որ էր մանուկ փոքր: 39 Եւ Երակ-

1 Պատկ., Մայիս. յերեցունցոյ
 2 Հ կորնչիցեն / Միհրդ. կորնչելոց են
 3 ՏՏ թագաւորի
 4 ՁՁ, Միհրդ., Պատկ. անդէն
 5 Ա ընդ Բիւզանդիայ
 6 ՏՏ Երակլէս
 7 Միհրդ., Պատկ. չի՞ր մեք

8 Ա զԱղէկսանդրիայ / Մայիս. Աղեքսանդրիա
 9 Ա չի՞ր գի
 10 Ա չի՞ր իւր
 11 Բոյ. կապեալ փիս կախեալ
 * Հմմտ. Ս աղմ. ՃԼԹ 10:
 ք Հմմտ. Ե. Լ. Չ. Լ. Է:
 12 Ա սրնկղիտոսացն

լի հանդերձեալ զինքն՝ առնուլ զկին իւր եւ զնալ ընդ արեւելս¹. ապա յայնժամ աւելի եւս հաստատեցին զԿոստանդին ի պատիւ թագաւորութեան ըստ առաջին բանին:

40 Ապա պատրաստեցաւ Երակլոս կնաւն եւ ներքինեաւքն եւ իշխանաւք դրանն եւ արար զզատիկն ի Կոստանդնուպաւլիս², եւ զայգոյ գատիկն³ նաւեաց ի ծով ի Քաղկեդոն: 41 Հրաման տայ զաւրաց իւրոց ժողովել ի Կեսարիա Կապադովկացոց. եւ ինքն չու արարեալ ի Քաղկեդոնէ՝ եկն ի Կեսարիա, եւ եհար զխորան իւր ի մէջ բանակին, եւ կոչել հրամայեաց զամենայն զաւրսն եւ ընթեռնուլ զհրովարտակն առաջի նոցա, եւ պատմէր զելն իւր առ նոսա: 42 Իսկ զաւրն թէպէտ եւ ընդ բանսն խռովեցան, սակայն խնդութեամբ ուրախ եղեն ի վերայ գալստեան նորա: 43 Աւրհնեցին նմա զյաղթութիւնն եւ ասեն. «Ամենայն ուրեք ո՛ւր եւ երթիցես՝ ընդ քեզ եմք ի կալ⁴ եւ ի մեռանել. եւ եղիցի ամենայն թշնամիք քոյ հող ի ներքոյ ոտից քոց, ի ջնջել զնոսա յերեսաց երկրէ տեառն Աստուծոյ մերոյ, եւ ի բառնալ⁵ զնախատինս իւր ի մարդկանէ»: 44 Չուեաց զնաց Երակլոս ձի հազարաւ՝ երթալ⁶ ի դուռն թագաւորին Պարսից. եւ ճանապարհ կալեալ ընդ կողմանս հիւսիսոյ՝ ել դէպ ուղիղ ի Կարնոյ քաղաք, եւ հասեալ ի Դուրին⁷ այրարատեան՝ աւերէ զնա եւ զՆախճաւան: 45 Եւ դիմեալ ի Գանձակ Ատրպատականի⁸ կործանէ եւ

զբազինս Հրատին մեծի, որում ⁹Վշնասպն կոչէին:

46 Եւ արքայ Խոսրով փութացուցանէր զգաւրս իւր որ ի Յունաց գաւառին, զի հասցէ նմա յաւգնականութիւն: 47 Զի թէպէտ եւ կազմեցին զերիվարս իւր, եւ ետ ի ձեռս Շահենայ պատգոսապանի, այլ նուազ էր զաւրն եւ չկարացին ունել զդէմ. զգանձս իւր ամբարէր ի Տիգրոն, եւ ինքն պատրաստէր ի փախուստ:

48 Իսկ զաւրն Պարսից փութանակի հասանէին ի Մրծուին: 49 Ազդ լինի Երակլի կայսեր, եթէ եկն Խոռեամ ի Մրծուին առնու զգաւրս իւր եւ գերութիւն, եւ դառնայ առ ամուր աշխարհաւն Մարաց. զայ հասանէ ի Փայտակարան: 50 Ազդ եղեւ Խոսրովու, եթէ դարձաւ Երակլոս եւ եհաս ի Փայտակարան, եւ կամի ընդ Աղուանս անցանել ի Վիրս. հրաման ետ զաւրավարի իւրոյ Շահր Վարազայ, զի զառաջն կալցի: 51 Եւ նա փութով հասանէ յԱյրարատ¹⁰, եւ անցանէ ի Գարդման ընդդէմ նորա, եւ բանակի ի միւս Տիգրանակերտի¹¹ յանդիման նորա: 52 Եւ Շահէնն Լիւս հասեալ բանակեցաւ ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի: 53 Եւ էին սոքա աստի, եւ նոքա անտի բանակեալ: 54 Եւ բանակն Երակլի ի մէջ նոցա երկոցունց:

55 Իբրեւ ետես Երակլոս, եթէ ի մէջ արկին զնա՝ դարձաւ ի վերայ զաւրուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճեպ¹² զաւրութեամբ եհար զնա եւ խորտակեաց եւ զնաց ընդ Ծղուկս. եւ թափեցաւ ընդ լեռնակողմն¹³ ի դաշտն Նախճաւանի¹ ի ձմեռան ժամանակի:

1 Միհրդ., Պատկ. յարեւելս փխ ընդ արեւելս
2 Ա. Կոստանդինուպոլիս
3 ՁՁ, Միհրդ., Պատկ. գատիկն
4 Մալխ. կալ. ուղղելի՝ կեալ
5 Ա. ի բառնալ փխ եւ ի բառնալ
6 Բոլ. եւ երթեալ փխ երթալ
7 Ա. Դուրին
8 ՁՁ, Միհրդ., Պատկ. արի գիւղն (գեաւղն) այն փխ Ատրպատականի

9 Ա. Վնասպն կրէին փխ Վշնասպն կոչէին / Միհրդ. Վշնասպն կրէին / Մալխ. Վշնասպն կոչէին
10 Ա. յԱրայրատ
11 Ա. Տիգրանակերտի
12 Միհրդ., Պատկ. հապճեպ
13 Ա. լեռնակողմն

56 Եւ Շահր Վարազ զաւրու իւրով, եւ Շահէնն իւրովք զերծելովք զնացին զհետ նորա: 57 Իսկ նորա հասեալ անցանէ ընդ հուն գետոյն Երասխայ՝ յաւանն Վրնջունիս եւ բանակի յանդաստանս նորա: 58 Եւ զաւրն Պարսից հասեալ՝ ոչ կարացին անցանել զգետովն այն աւրն: 59 Հասանէ Երակլոս ի Բագրեւանդ եւ անցանէ յԱպահունիս, եւ բանակի ի գեւղն, որ կոչի Հրճմունք: 60 Եւ Շահր Վարազ սփռէր զզաւրս իւր. յԱղիովիտ², եւ ինքն այրընտիր³ եղեալ Զ հազար սպառազինաց վառելոց քաջաց, եւ երթեալ նստի յԱրճէշ գաւառի՝ դարանամուտ լինել, որպէս զի ի մէջ գիշերի անկցի ի վերայ բանակին Երակլի:

61 Ազդ լինի Երակլի ի ձեռն արձակելոյ լրտեսաց, եթէ եկն խոռեամ եւ դարանակալ եղեւ ի վերայ քոյ: 62 Յայնժամ Երակլոս ըստ նմին աւրինակի ⁴այրընտիր եւ ձիւրնտիր առնէ, եւ յարձակի ի վերայ նորա քսան հազարաւ, եւ հասեալ յԱղի, գտանէ զարսն⁵ յառաջմարտիկ⁶ հինգ հարիւրի: 63 Նախ՝ զնոսս կոտորէ. եւ զերծեալ մի ոմն ի հեծելոցն՝ հասեալ ի յԱրճէշ գոյժ արկանէ խոռեմայ⁷, եթէ հասեալ է թշնամին ի վերայ քոյ, եւ կոտորեցին զզաւրն պէշոպա յԱղի: 64 Եւ բարկացաւ խոռեամ ի վերայ առնն, հրամայեաց զնա կապել ոտիւք եւ ձեռաւք, եւ ասէ. «Երակլոս ցարդ յինէն փախստական գնայր. արդ եկեալ հասեալ եմ այսպիսի գինու, եւ նա յինէն ո՞չ փախիցէ»: 65 Այնինչ նորա բանքն ի ճերան էին, եւ նոքա հասին

ստիպով ի վերայ նոցա, պատեցին զքաղաքն ⁹երեք կուսէ, եւ բորբոքեցին զնա հուրք եւ այրեցին զզաւրացն բազմութիւնս: 66 Են եթէ ելանէր ոք ի նմանէն ի փախուստ՝ անդրէն ըմբռնեալ սատակէին. եւ ապրեալ ոչ ոք ել ի նոցանէ, զի զամենեւին եկեր հուր ահագին: 67 Բայց Շահր Վարազ զերծաւ¹⁰ նստեալ ի վերայ նուաստ երիվարի. այնպէս զերծեալ զնաց առ զաւրս իւր, զոր ժողովեալ էր յԱղիովիտ գաւառի:

68 Իսկ Երակլոս առ զաւար եւ զկապուտ բանակի նոցա, դարձաւ յաղթութեամբ մեծաւ, եւ երթեալ հասանէ ի կողմանս Կեսարացոց. եւ¹¹ Շահր Վարազ զնաց զհետ նորա փութանակի: 69 Բայց զի յաւգնեալ էր զաւրն՝ խորհեցաւ բազում գաւառս ընդ մէջ արկանել, զի հանգիցէ զաւրն եւ կազմիցի. եւ զնացեալ ի կողմանս Ասիացոց՝ անդ սփռեալ դադարեցին:

70 Յայնժամ առեալ Երակլի զզաւրս իւր՝ դարձաւ յերկիրն Հայոց, անցեալ ընդ Շիրակ հասանէ ի հուն գետոյն Երասխայ, եւ անց ընդ գետաւն առ Վարդանակերտաւն աւանաւ, երթեալ թափեցաւ ի Գոգովիտ գաւառ: 71 Եւ ¹²Ռոճ Վեհանայ եւ զաւրուն Պարսից կարծեցեալ զնոսս փախստական գնալ: 72 Իսկ նորա ճանապարհ կալեալ ի Հեր եւ ի Զարեւանդ գաւառ, դէպ ուղիղ ի Տիգրոն¹³ ի վերայ խոսրովու: 73 Եւ իբրեւ միջամուխ եղեւ ի սահմանս Ատրպատական գաւառի՝ ապա ուրեմն լուր եղեւ Ռոճ Վեհանայ. առ զզաւրս իւր եւ զնաց զհետ նորա ի Նախճաւան¹⁴ քաղաք: 74 Այնպէս փութով

1 Բոյ. Նախնուանն փխ Նախնուաննի

2 Ա. յԱղովիտ

3 Ա. այրընդիր

4 Ա. այրընդիր եւ ձիւրնդիր

5 Միհրդ. գաւրսն / Մալիս. գաւրսն. ուղղելի՝ գաւրսն

6 Միհրդ. Բաջամարտիկ փխ յառաջմարտիկ

7 Ա. խոռեամ

8 Ա. բարանն էին

9 Ա. Գ-կուսի

10 Ա. զերծեալ

11 Ա. չի՛ք եւ

12 Բոյ. Ռոնիկ Վահանայ

13 Ա. Գիգպոն փխ Տիգրոն

14 Ա. Գ Նախջուան / Բ Նախնուան / Ե Նախջուան

գնացեալ գտիւ եւ զգիշեր, մինչեւ չոգաւ եհաս մերձ ի նա: 75 Եւ նորա անկեալ յայնկոյս լերինն Զարասպայ յերկիրն Ասորեստանեայց¹: 76 Եւ սոքա պնդեցան զհետ նորա. եւ նոցա դարձեալ ընդ արեւմուտս՝ գնաց ի Նինուէ: 77 Եւ եկեալ այլ զաւրս յաւգնականութիւն Ռոճ Վեհանայ ի դրանէ արքային² արք ընտիրք³ յամենայն թագաւորութենէն, եւ խառնեալ ի միմեանս՝ հետամուտ եղեն Երակլի: 78 Իսկ Երակլոս ձգեաց զնոսա մինչեւ ի դաշտն Նինուէի, եւ դարձ ետ ի վերայ նոցա սաստիկ զաւրութեամբ. եւ էր բալ ի վերայ դաշտին: 79 Եւ ոչ գիտացին զաւրն Պարսից զդարձն Երակլին ի վերայ նոցա, մինչեւ երթեալ խառնեցան ընդ միմեանս:

80 Եւ այնպէս զաւրացոյց տէր զողորմութիւն իւր ի վերայ Երակլի յաւուր յայնմիկ, մինչեւ հարեալ սատակեցին զնոսա իբրեւ զայր մի եւ սպանին զգաւրավարն ի պատերազմի: 81 Եւ զմնացեալսն շրջափակ արարեալ՝ կամէին զամենեսեան սատակել: 82 Իսկ նոցա բողոք կայեալ, թէ «Աստուածասէր եւ բարերար տէր, արա՛ ի վերայ մեր ողորմութիւն, ⁴թէպէտ եւ չեմք արժանի ողորմութեան»: 83 Յայնժամ Երակլոս հրամայեաց զնոսա թողուլ ի բաց: 84 Եւ ինքն հրամայեաց Երակլոս ասպատակել ի վերայ երկրին:

ԳԼՈՒԽ ԼԹ

1 Փախուստ Խոսրովայ ի Վեհկաւատ. առնուլ Հերակլի զՏիգրոն եւ դառնալ յԱտրպատական: 2 Դարձ Խոսրովայ անդրէն ի Տիգրոն եւ սպանումն: 3 Թագաւորել որդւոյ Գորա Կաւատայ եւ առնել հաշտու-

թիւն ընդ Հերակլի, ունելով երկաւանջիւրոց զիին սահմանս իւրեանց:

4 Իսկ Խոսրով արքայ Պարսից փախստական գնաց՝ անցանել ընդ Դելաթ⁵ գետաւ ի Վեհկաւատ, հատեալ զլարս նաւակամրջացն⁶: 5 Եւ Երակլոս հասեալ բանակեցաւ առ դուրս⁷ մերձ Տիգրոն⁸ քաղաքի, եւ այրեաց զամենայն ապարանս թագաւորականս շուրջ զքաղաքաւն: 6 Եւ ինքն գնաց յԱտրպատական ամենայն աղիւսին⁹ եւ բազմութեամբ իւրով, զի էին միտք Երակլի զարհուրեալ ի Խոռեմայ¹⁰: 7 Իսկ Խոռեմ ոչ եկն Խոսրով արքայի յաւգնականութիւն, այլ եկաց անդէն ուր էրն ի կողմանս արեւմտից: 8 Եւ Խոսրով արքայ դարձաւ անդրէն ի տուն, եւ հրամայեաց կազմել զնաւակամուրջսն¹¹: 9 Բայց տիկնայքն եւ որդիքն արքայի եւ գանձն եւ ախոռն արքունի երիվարացն էին ի Վեհկաւատ:

10 Ակաւ Խոսրով ժողովել զմնացեալ նախարարսն. եւ խաւսէր ընդ նոսա ահագին դատաստանաւք, եթէ. «Ընդէ՞ր եւ ոչ դուք մեռարուք ի տեղոջ պատերազմին, քան եթէ գալ առ իս. արդեաւք զԽոսրով մեռեա՞լ կարծէիք»: 11 Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ասեն. «Թէպէտ ի թշնամեացն ապրեցաք, բայց ի ձեռաց դորա ոչ գոյ մեզ ապրել. այլ եկայք իմասցուք ինչ»: 12 Յայնժամ երդուան առ միմեանս, եւ գնացեալ ի գիշերի ընդ գոմն ի Վեհկաւատ, կալան գնա եւ կարգեցին ի վերայ նորա պահապանս եւ թագաւորեցուցին զկաւատ զորդին նորա. նաեւ զերիվարսն որով եկեալ էր Խոսրով ի

1 Ա. Ասորեստանեաց
2 Ա. արբայի
3 Միհրդ., Պատկ. ընտիրք
4 Միհրդ., Պատկ. չիք թէպէտ եւ չեմք արժանի ողորմութեան

5 Ա. դելաթ
6 Ա. նաւակարմրջացն
7 Պատկ. դուս փխ դուրս
8 Ա. ի Տիգրոն փխ Տիգրոն
9 Ա. ախիւն
10 Ա. խոռեմայ Ա. խոռեամ
11 Ա. նաւակարմուրջսն

Տիգրան¹ հանին գաղտաբար: 13 Իսկ յորժամ եհաս գոյժ աղաղակին այսորիկ առ Խոսրով՝ ընդոստուցեալ յահէն՝ զարհուրեցաւ. խնդրեալ երիվար, եւ մտեալ յասպաստանն ոչ գտին: 14 Եւ արքայ Կաւատ եկն անց ամենայն զաւրաւքն իւրովք: 15 Եւ արքայ Խոսրով յայլակերպս եղեալ եմուտ ի բուրաստանն արքունի, եւ մտեալ ընդ թաւ թփով ծաղկոցին՝ զաւղեալ դարբասց: 16 Եւ եկեալ Կաւատ արքայ հրամայեաց խնդիր առնել, եւ գնացեալ ի բուրաստանն՝ գտին գնա. կալան գնա եւ ²ածին ի դահլիճ անդր: 17 Եւ հրամայեաց Կաւատ արքայ, եւ սպանին գնա: 18 Եւ վասն որդուցն Խոսրովու ասեն նախարարքն. «Ոչ է արժան ապրել նոցա. զի խռովութիւն յարուցանեն»: 19 Յայնժամ հրաման ետ արքայ Կաւատ, եւ սպանին զամենեսին ի միում ժամու արս Խ. եւ խնդրեաց յինքն գտիկնայս եւ զգանձս եւ զախոռ³ արքունի:

20 Ապա սկսաւ արքայ Կաւատ խորհուրդ առնել ընդ նախարարս թագաւորութեանն իւրում, եթէ «Պարտ է հաշտութիւն առնել ընդ կայսեր, եւ ի բաց թողուլ զամենայն սահմանս թագաւորութեան նորա. եւ ընդ ամենայն կողմանս հաշտութիւն արասցուք»: 21 Եւ հաւանեցան միաբանութեամբ առնել այնպէս: 22 Յայնժամ հրամայէ Կաւատ արքայ գրել առ Երակլոս հրովարտակ ողջունի. եւ թողու ի բաց զամենայն սահմանս նորա: 23 Եւ տայ տանել նմա երգումն. աղկնքել եւ տանել ընդ հրովարտակին. արձակէ ⁴գոթաշնան ոմն իշխան մեծամեծ ընծայիւք՝ հաստատել գնա ի վերայ միաբանութեանն այնորիկ:

24 Արդ՝ իբրեւ եհաս Ռաշնայն⁵ եւ ետ աւետիս եւ մատոյց զհրովարտակն, եւ կալաւ զառաջեաւ զընծայսն՝ մեծապէս գոհացան զԱստուծոյ Երակլոս արքայ եւ ամենայն⁶ զաւրք իւր: 25 Յայնժամ հրաման ետ արքայ Երակլոս արձակել զբազմութիւն գերութեանն եւ զաւարն ամենայն ի բաց տալ: 26 Եւ գրէ կտակ աւրհնութեան, եւ հաստատէ խաղաղութիւն հանդերձ երդմամբ, եւ արձակէ զոմն յիւրոց գլխաւոր նախարարացն, որում անունն էր Յուստաթ, հանդերձ մեծամեծ ընծայիւք: 27 Եւ գոթաշնայն մեծարեալ՝ լնու պատուական գանձիւք եւ արձակէ: 28 Եւ իւր չուեալ խաղաղութեամբ գնաց ի տեղի իւր:

29 Եւ Յուստաթ երթեալ ընծայիւք առաջի Կաւատայ արքայի, եւ մատուցանէ զհրովարտակն, եւ առաջի ունի զընծայսն: 30 Իսկ արքայ Կաւատ խնդութեամբ ընկալաւ գնա. եւ դարձեալ վերստին հաստատէ առ նմա զբանս խաղաղութեան եւ սահմանացն հատելոց երդմամբ հրովարտակաց. եւ ⁷կնքեաց աղ ըստ առաջին աւրինակին ընդ Յուստաթ, ըստ առաջին թագաւորաց: 31 Եւ յանդիման նորա հրամայէ գրել առ Շահր Վարագ, զի ժողովեցէ զզաւրն եւ եկեցէ անցցէ յերկիրն Պարսից, եւ ի բաց թողցէ զսահմանս Յունաց. թէպէտ եւ նա ոչ կամեցաւ լսել հրամանին այնմիկ: 32 Եւ զՅուստաթ արձակեցին լի գանձիւք, եւ գնաց:

ԳԼՈՒԽ Խ

1 Վարագատիրոց կարգի մարգպան Հայոց: 2 Նստել յաթոռ կաթողիկոսութեան Քրիստափորի եւ գկնի նո-

1 Ա. Տիսրոն

2 Ա.Ձ.Ձ, Միհրդ., Պատկ. անիմ դահիմ անդր փխ անիմ ի դահիլիմ անդր

3 Ա. գախոռոս

4 Ա. գոթաշն ոմն

5 Ձ.Ձ, Միհրդ., Պատկ. Ռաշն այն փխ Ռաշնայն

6 Ա. ամենայնի

7 Բոյ. եւ կնքեալ աղ ըստ առաջին օրինակին զՅուստաթ ըստ առաջին թագաւորաց փխ կնքեաց աղ ըստ առաջին օրինակին ընդ Յուստաթ, ըստ առաջին թագաւորաց

րա եզրի: 3 Մահ Կաւատայ. թագաւորել Արտաշրի մանկան: 4 Խոռեամբ սոտ խորհրդոյ եւ աւգնականութեամբ Հերակլի առնու գՏիգրոն, սպանանէ զԱրտաշիր եւ ինքն թագաւորէ. զիսչն տէրունեան դարձուցանէ Յունաց: 5 Սպանումն Խոռեամբ, թագաւորել Բորոյ դստեր Խոսրովայ, Ագարմիդիտոյ եւ Որմգրի սակաւ ժամանակս եւ ապա Յազկերտի, որդւոյ Կաւատայ: 6 Պատակտումն տէրութեանն Պարսից:

7 Յայնժամ կոչէ արքայ Կաւատ զՎարագատիրոց զորդի ¹Սմբատայ Բագրատունւոյ Խոսրով Շում կոչեցելոյ, եւ տայ նմա զիշխանութիւն տանուտէրութեանն². առնէ զնա մարգպան եւ արձակէ ի Հայս հանդերձ ամենայն ընչիւք հայրենի, զի գաշխարհն ի շինութեան պահեսցէ: 8 Եւ իբրեւ եկն նա ի Հայս՝ խնդութեամբ ընկալան զնա ամենայն աշխարհն Հայաստանեայց: 9 Բայց զի մեռեալ էր երանելին Կոմիտաս³ կաթողիկոսն եւ կայր տեղին անհրամանատար՝ խորհուրդ առնէր ընդ ամենեցուն տեսանել զոմն արժանաւոր: 10 Յայնժամ առաջադրութեամբ⁴ Թէոդորոսի Ռշտունեաց տեսան ընտրեցին զոմն անապատական՝ յԱբրահամեան տանէ, որում անուն էր Քրիստափոր: 11 Զնա նստուցին կաթողիկոս, եւ նա դիպաւ այր հպարտ եւ ամբարտաւան, որոյ լեզու իւր էր իբրեւ զսուր սուսեր: 12 Սա բազում խոռովութիւն յուզեաց եւ արկ սուր ի մէջ ընդ ասպետ եւ ընդ եղբայր իւր Հարախաւսութեամբ: 13 Կալաւ սա զաթոռ հայրապետութեան ամս Բ. եւ յամին երրորդի եղին ի վերայ նորա բամբասանս: 14 Եւ

ժողովեալ զամենայն⁵ եպիսկոպոսունս եւ իշխանս արարին քննութիւն: 15 Եւ եկեալ արք երկու ի նորին ընտանեաց եւ վկայեցին զնմանէ⁶ առաջի ամենայն բազմութեանն: 16 Ապա արձակեալ զոմանս յեպիսկոպոսաց անտի՝ եւ առին ի նմանէ զփակեղն⁷ պատուոյ քահանայապետութեան, եւ ընկեցին զնա ի կարգէն եւ հալածեցին զնա անարգանաւք: 17 Եւ անդէն փութանակի նստուցին կաթողիկոս զԵզր ի Նիգ գաւառէ, որ էր առ երանելոյն Կոմիտասաւ կարգեալ փակակալ սրբոյն Գրիգորի. եւ սա էր այր խոնարհ եւ հեզ, որ ոչ կամէր զոք ցասուցանել, եւ ոչ ելանէր ի բերանոյ նորա բան տգեղ:

18 Եւ արդ՝ մինչդեռ խորհէր Կաւատ արքայ շինութեան աշխարհի, եւ կամէր ընդ ամենայն կողմանս խաղաղութիւն առնել, կեցեալ ամիսս վեց՝ վախճանեցաւ: 19 Եւ նստուցին թագաւոր զԱրտաշիր զորդի նորա. եւ նա էր մանուկ տղայ: 20 Յայնժամ Երակղոս գրէ առ Խոռեամ այսպէս. «Կաւատ թագաւոր ձեր վախճանեցաւ, եւ քեզ հասեալ է՝⁸ թագաւորութեանն այն աթոռ. եւ ես քեզ տամ զնա, եւ զաւակի քո յետ քո: 21 Եւ եթէ զաւր պիտոյ է՝ արձակեցից յաւգնականութիւն որչափ եւ պիտոյ իցէ քեզ, եւ ուխտ դիցուք ի մէջ իմ եւ ի մէջ քո հանդերձ երդմամբ, գրով եւ կնքով»: 22 Յայնժամ զիւրաւ հաւանեալ Խոռեմայ¹⁰ թողու ի բաց զԱղեքսանդրիա¹¹, եւ առեալ զամենայն զաւրս իւր եւ ի մի վայր գումարեաց, եւ թողեալ զնոսա, եւ ինքն սակաւուք զնաց ի ժամադիր տեղին, ուր ասացեալ էր նմա Երակղի: 23 Եւ տեսեալ զմիմեանս ուրախ

1 Ա Սմբատա Բագրատունո խոսրով Շումբն
 2 Ա տանատիրութեանն
 3 Ա, Պատկ. Կոմիտաս
 4 Ա առաջնորդութեամբ փխ առաջադրութեամբ

5 Բոյ. ամենայն փխ գամենայն
 6 Ա զմմանէն
 7 Ա զփակեղն
 8 ՏՏ հասեալ փխ հասեալ է
 9 Ա, Միհրդ. թագաւորութեանն աթոռոյ
 10 Ա խոռեամայ
 11 Ա զաղէկսանդրիայ

լինելին մեծապէս: 24 Յայնժամ երգուաւ նմա Երակլոս՝ տալ զթագաւորութիւնն զայն, եւ խոստանայ նոյնպէս որդւոց նորա յետ նորա, եւ զաւր որչափ եւ պիտոյ իցէ: 25 Եւ խնդրէր առաջին խնդիր ի նմանէ՝ զխաչն կենսաբեր, զոր¹ գերեաց նա յԵրուսաղէմէ: 26 Յայնժամ երգուաւ նմա Խոռեամ եւ ասէ. «Յորժամ Հասից ի դուռն արքունի՝ նոյն ժամայն խնդիր արարից խաչին եւ տաց բերել առ քեզ: 27 Այլ եւ պայման սահման եղից՝ ցոր վայր եւ դու կամիցիս. արա՛ վասն նորա Հաստատութիւն գրով եւ կնքով եւ աղիւ²»: 28 Եւ խնդրեաց ի նմանէ զաւր սակաւ, եւ մեկնեցան զնացին ի միմեանց:

29 Իսկ Խոռեմայ առեալ զբազմութիւն զաւրաց իւրոց՝ զնաց ի Տիգրոն, եւ Հրաման տուեալ ոմանց՝ սպանին զտղայ թագաւորն զԱրտաշէր, եւ ինքն երթեալ նստաւ յաթոռ թագաւորութեանն. եւ զամենայն արս գլխաւորս, որ ի դրանն կամ որ ի զաւրուն³, յորում ոչ կարէր վստահանալ՝ Հրաման ետ սրով սատակել զնոսա, եւ զայլս կապանաւք ետ տանել առ Երակլոս: 30 Յայնժամ արձակեաց երանելին Երակլոս արս Հաւատարիմս առ Խոռեամ վասն տէրունեան խաչին: 31 Եւ նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով՝ Հագիւ Հագ ետ ցարան, որ եկեալ էին: 32 Եւ նոքա առեալ զնացին փութանակի: 33 Եւ ետ նոցա ինչս ոչ սակաւս⁴. եւ մեծաւ ուրախութեամբ արձակեաց զնոսա պատուով:

34 Իսկ Խոռեամ յաւուր միում զգեցեալ էր Հանդերձ⁵ թագաւորական եւ նստեալ ի վերայ երիվարի շրջէր ի մէջ զաւրուն ցուցանել զինքն. յանկարծակի ի թիկանց կուսէ յարձակեցան ի վերայ նո-

րա, Հարին զնա եւ սատակեցին: 35 Եւ թագաւորեցուցին զԲորն⁶, դուստր Խոսրովայ, որ էր կին նորին, եւ կարգեցին Հրամանատար⁷ ի դրանն զԽոռոխ Որմիզդ, որ էր իշխան կողմանց Ատրպատականի: 36 Արդ՝ Խոռոխն այն յգէ առ բամբիչն⁸, ասէ. «Լե՛ր ինձ կին». եւ նորա յանձին կալեալ ասէ⁹. «Ե՛կ միով արամբ Հասարակ գիշերի, եւ ես արարից զկամս քո»: 37 Եւ յարուցեալ Հասարակ գիշերի միով մանկամբ զնաց. եւ իբրեւ եմուտ ի տաճարն արքունի՝ յարեան ի վերայ նորա պահպանք դրանն եւ Հարեալ սպանին զնա: 38 Եւ կալաւ բամբիչն զթագաւորութիւն ամս Բ եւ մեռաւ: 39 Յետ նորա¹⁰ Խոսրով ոմն յագգէ Սասանայ: 40 Եւ յետ Խոսրովայ՝ Ազարմիդուխտ դուստր Խոսրովայ: 41 Եւ յետ սորա Որմիզդ¹¹, թոռն Խոսրովայ, զոր խեղդամահ արարին զաւրն Խոռեմայ¹²: 42 Եւ ապա թագաւորէ Յագկերտ որդի Կաւատայ, թոռն Խոսրովայ, որ ունէր զթագաւորութիւնն երկեղիւ, զի պատուեալ բաժանեցան զաւրք աշխարհին Պարսից՝ յերիս մասունս: 43 Զաւր մի այն՝ որ ի Պարսից եւ ի յարեւելից կողմանէ, եւ զաւր մի Խոռեմայ՝ որ յԱտրեստանեայց կողմանէ, եւ զաւր մի՝ որ յԱտրպատական կողմանէ: 44 Բայց թագաւորութիւն նորա էր ի Տիգրոն¹³, եւ ամենեքին միաբան պատուէին զնա միաբանութեամբ: Ամէն¹⁴:

ԳԼՈՒԽ ԽԱ

1 Դարձ տէրունեան խաչին յերուսաղէմ: 2 Կաթողիկոսն Եգր ըստ

1 Ա որ փխ գոր
2 Ա աղիւ փխ եւ աղիւ
3 Մալխ. գաւրսն փխ գաւրսն
4 Պատկ., Մալխ. սակաւ
5 Միհրդ., Պատկ. գհանդերձ

6 Բոյ. գԲրորն
7 ՏՏ հրամանատար
8 Ա բանբիչն (նաեւ յետոյ)
9 Միհրդ., Պատկ. քէ փխ ասէ
10 Ա յետ սորա
11 Բոյ. Որմզդի փխ Որմիզդ
12 Ա Խոռեմայ
13 Ա ի Տիգրոն
14 ԶԶ ասէ (կամ այս է) փխ ամէն

հարկելոյ Մժէժի Գնունոյ ընդունի
 գժողովն Քաղկեդոնի եւ առնու
 պարգեւ զաղն Կողբայ: 3 Գժտու-
 քիւն Վարագտիրոցի ընդ իշխանս
 Ատրպատականի. խորհուրդ Մժէժի
 սպանանել զնա. փախուստ նորա
 առ Հերակլ եւ մեծարել ի նմանէ:
 4 Դավանանութիւն Աթալարիկոսի
 ընդդէմ հար իւրոյ Հերակլի. չմիա-
 քանել Վարագտիրոցի ընդ դաւա-
 նանսն. ախոր նորա: 5 Դաւիթ Սա-
 հառունի կարգի կիրապաղատ:
 6 Թէոդորոս Ռշտունի պահէ գաշ-
 խարին Հայոց յապահովի:

7 Իսկ զտէրունեան սուրբ խաչն ըն-
 կալեալ երանելի աստուածասէր եւ երջա-
 նիկ թագաւորին Երակլի՝ գումարէ զգաւր
 իւր յորդոր եւ խնդալից սրտիւ: 8 Եւ չու
 յուղի անկեալ Հանդերձ ամենայն թագա-
 ւորական սպասաւորութեամբն, պատուե-
 լով զսուրբ¹ հրաշալի եւ զերկնաւոր
 զիւտն, եւ տարեալ հասուցանէ² ի քա-
 ղաքն սուրբ Հանդերձ ամենայն սպասուք³
 եկեղեցոյ, որ ապրեալ էր ի ձեռաց թշնա-
 մեացն ի Բիւզանդիա⁴ քաղաքի: 9 Ապա
 անդ ոչ սակաւ ինչ լինէր ուրախութիւն⁵
 յաւուր յայնմիկ ի մտանել նոցա յերուսա-
 ղէմ: 10 Ձայն լալոյ եւ ողբոյ եւ հեղումն
 արտասուաց ահագին բորբոքման սրտից
 նոցա խանդաղատանաց, եւ կսկծելոյ⁶ ա-
 ղեացն թագաւորին եւ իշխանացն եւ զաւ-
 րացն ամենեցուն եւ բնակչացն այնոցիկ
 որ ի մէջ քաղաքին: 11 Եւ ոչ ոք կարէր
 երգել զտէրունեան երգս յահագին եւ յա-
 ղիողորմ խանդաղատանացն թագաւորին
 եւ ամենայն բազմութեանն: 12 Եւ կար-

գեալ հաստատեաց ի տեղի իւր. եւ զամե-
 նայն սպասս եկեղեցեացն եղ յիւրաքան-
 չիւր տեղիս, եւ բաշխեաց ամենայն եկեղե-
 ցեացն եւ բնակչաց քաղաքին աւրհնու-
 թիւն եւ գինս խնկոց:

13 Եւ զնաց ինքն զճանապարհս իւր
 դէպ ուղիղ ի Միջագետս Ասորւոց, զի կա-
 լեալ հաստատեացէ ընդ ինքեան զքաղաքս
 սահմանացն: 14 Եւ սահման հաստատե-
 ցաւ նոյն՝ որ առ Խոսրովալ եւ Մաւրկաւ
 հաստատեալ էր: 15 Եւ եկաց խաչն տէ-
 րունական յաստուածակերտ քաղաքին
 մինչեւ ցմեւանդամ⁷ առածն Երուսաղէմի
 յորդուոցն Իսմայելի, եւ ապա զնաց փախս-
 տական ի քաղաքն թագաւորանիստ հան-
 դերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն:

16 Եկն ապա զաւրավարն Յունաց
 Մժէժ⁸ Գնունին ի Հայաստան երկրէն, եւ
 ինքն կալաւ զամենայն երկիրն ըստ ասա-
 ցելումն սահմանին: 17 Ասէ ցկաթուղի-
 կոսն ցեզր՝ երթալ նմա յերկիր սահմա-
 նացն Յունաց⁹ եւ հաղորդել աւրինաւք
 ընդ կայսեր. ապա թէ ոչ՝ արասցուք մեզ
 այլ կաթուղիկոս¹⁰. եւ դու կա՛լ զիշխանու-
 թիւնդ քոյ ի Պարսից կողմանէ: 18 Իսկ
 կաթուղիկոսն իբրեւ ոչ կարաց թողուլ
 զերկիր իշխանութեան իւրոյ՝ խնդրեաց
 ձեռնարկ հաւատոյ ի թագաւորէն: 19 Եւ
 վաղվաղակի առաքեցաւ նմա տումար
 գրեալ ձեռամբ թագաւորին, եւ նզովեալ
 զնեստոր եւ զամենայն հերձուածողս,
 բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղկեդոնի:
 20 Եւ զնաց կաթուղիկոսն յերկիրն Ասո-
 րեստանի, ետես զթագաւորն եւ հաղորդե-
 ցաւ ընդ նմա աւրինաւք: 21 Եւ խնդրեալ
 ի թագաւորէն պարգեւս¹¹ զաղն Կողբայ,
 եւ առեալ զպարգեւն՝ դարձաւ մեծաւ շքով

1 Ա. չիբ գտուրբ
 2 Ա. հասուցանէր
 3 Միհրդ., Պատկ. սպասիւք
 4 Ա. ի Բուզանդիայ
 5 Ա. ուրախութիւնի
 6 Ա. կսկծելոց

7 Ա. միւսանգամ
 8 Ա. Մեծեթ (նաեւ յետոյ)
 9 Ա. յունացն / Միհրդ., Պատկ. չիբ յունաց
 10 Ա. կաթաղիկոս (նաեւ յետոյ)
 11 Ա. առեալ զպարգեւսն

ի տուն իւր: 22 Եւ ապա յայնմհետէ նստէր ի մէջ բանակին Յունաց, մինչեւ զաւրավարին հաճոյանալ ՚ըստ կամաց նորա կարգէր զկարգս զինուորացն եւ բաշխումն շտեմարանաց ի վերայ ամենայն երկրին:

23 Իսկ Վարազտիրոց ասպետ, անուանեալ ի թագաւորաց Ջաւխտեան Խոսրովու, որդի մեծին Խոսրովայ Շումն, շինեաց բոլորովին զամենայն աշխարհն Հայոց: 24 Բայց ոչ նուաճեալ հնազանդեցաւ իշխանին մեծի որ յԱտրպատական աշխարհին, որում Խոսրով Որմիզդն² կոչէին: 25 Նա եւ ոչ յետ նորա որդւոյ նորին Ռոստոմայ³, որ էր իշխան ի կողմանս Ատրպատականի. եւ էր խոռովութիւն մեծ ի մէջ երկոցունց⁴: 26 Ապա եւ զաւրավարն Յունաց Մժէժ սկսաւ եւ նա առնել չարախաւսութիւն զասպետէ առ Ռոստոմայ⁵ իշխանին, որ յԱտրպատական աշխարհին: 27 «Մի՛ կացցէ սա ի Հայս. ապա թէ ոչ՝ խոռովութիւն մեծ լինիցի ի մէջ երկոցունց թագաւորացն»: 28 Եւ արձակեալ նորա զեղբայր իւր դարիքպետ⁶, զի երթեալ ձմերեացէ ի Դրենի, եւ ապա կապեսցեն զասպետ եւ առեալ գնացան: 29 Արդ՝ զի ամենայն զաւրն Պարսից սիրէին զասպետ՝ մի ոմն յիշխանաց անտի մեծ ազգ արար նմա եւ ասէ. «Տե՛ս զանձն քոյ, զի վաղիւ կապելոց են զքեզ»: 30 Իսկ ասպետ առեալ զկին իւր եւ զորդիս՝ փախեաւ ի գիշերի, եւ ճանապարհ կալեալ գնաց ի Տարոն: 31 Եւ անդ երթեալ ժողովեաց զզաւրս իւր. եւ խնդրեալ երդումն ի թա-

գաւորէն Երակլէ, զի մի՛ հեռացուցէ զնա յաշխարհէն իւրմէ, եւ ընկալեալ երդումն հաւատարիմ՝ երթեալ յանդիման լինէր նմա յԱսորեստանեայց⁷ աշխարհին: 32 Յայնժամ երդուաւ⁸ նմա թագաւորն Երակլոս եւ ասէ. «Կացցես առ իս սակաւ ժամանակս, ապա արձակեցից զքեզ պատուով մեծաւ յերկիր քոյ»: 33 Եւ մեծացոյց զնա քան զամենայն պատրիկսն որ էին ի թագաւորութեան նորա: 34 Եւ գնացեալ ի պաղատն՝ ետ նմա ապարանս թագաւորականս եւ գահոյս արծաթի եւ գանձս բազումս⁹ յոյժ: 35 Եւ որդի նորա Սմբատ էր սիրելի սենեկապետին Երակլի:

36 Եւ այս է չարութիւն եղեալ յորդի կայսերն Երակլի՝ ի յանցս մեծս, որում անուն էր Աթաղարիկոս¹⁰, որ եւ խողխողեաց¹¹ զսիրտ հաւրն եւ խրամատեաց զհրաշալի անձն, եւ յերեսաց նորա զգեղեցկութիւնն, եւ պատճառք կորստեան¹² իւր անձին եւ բազմաց: 37 Քանզի միաբանեալ սա եւ Թէոդորոս եղբաւորդի Երակլի, անուանեալն Մագիստրոս¹³, եւ բազումք ի մեծամեծաց քաղաքին, եւ Վահան Խորխոռունի¹⁴. սոքա ամենեքին¹⁵ միաբանեալ սպանանել զԵրակլոս, եւ զորդի նորա զԱթաղարիկոս նստուցանել յաթոռ թագաւորութեանն: 38 Գտաւ ի խորհրդեանն յայնմիկ լեալ Վարազտիրոց, որդի Խոսրովայ Շումն¹⁶ Սմբատայ. բայց չէր միաբանեալ սպանման թագաւորին եւ որդւոց նորա. այլ ասէ. «Դուք ասէք զնոսա տեղապահս Աստուծոյ, ապա ոչ է

1 Բոյ. ըստ կամաց նորա: Կարգէր փխ ըստ կամաց նորա կարգէր
 2 Բոյ. Որմիզդն. ուղղում ենք Որմիզդն ըստ յաջորդ գլխում հանդիպող այդ նիշտ ուղղագրութեան:
 3 Ա. Ռատումայ / Միհրդ. Ռատումայ
 4 Ա, Միհրդ. երկոցունցն
 5 Ա. Ըստումայ / Միհրդ. Ռատումայ. ուղղելի՛ Ռատում
 6 Բոյ. Գարիբպետ

7 Ա. ասորեստանեայց
 8 Ա. երդումն փխ երդուաւ
 9 Ա. բազում
 10 Բոյ. Աթալարիկոս
 11 ՁԶ որ եւ Խոռխոռունեաց / Միհրդ., Պատկ. որ ի խոր վիրաւորեաց / Մայլս. որ ի խոր խոցեաց
 12 ՁԶ չիք կորստեան
 13 Միհրդ. մարգիստրոս
 14 Ա. Խորխոռունին
 15 Ա. ամենեքեան
 16 Ա. շնումն

պարտ լինել այդմ բանի, եւ յայդմ խորհրդի ոչ միաբանիմ ընդ ձեզ»։ 39 Եւ բանք խորհրդեանն պատմեցաւ լիով յունկն թագաւորին յումմանէ կորատորէ, որ էր լեալ ի խորհրդեանն։ 40 Իբրեւ հաւաստութեամբ ի վերայ եհաս թագաւորն՝ հրամայեաց ընդ առաւաւտն՝ ունել զորդի իւր եւ զեղբարորդի եւ զամենեսեան² որք ընդ նոսա էին. կտրել զքիթս եւ զաջոյ ձեռնն ամենեցուն։ 41 Բայց արձակեալ պատգամ առ սպետ՝ ասէ. «Փոխանակ զի արարեր դու այդպիսի առ իս, եւ ոչ կամեցար արկանել զձեռն քոյ յարիւն իմ եւ յարիւն որդւոց իմոց, եւ ես ոչ արկից զձեռն իմ եւ քեզ եւ յորդիս քոյ։ 42 Բայց ե՛րթ կա՛ց ուր եւ հրամայեցից քեզ, եւ արարից ի վերայ քոյ ողորմութիւն»։ 43 Եւ թէպէտ բազում անգամ աղաղակեցին կողմանքն³ թէ «մեռցի», սակայն նա ոչ կամեցաւ լսել նոցա։ 44 Այլ հրամայեաց տանել զնա եւ զկին նորա եւ զորդիս նորա ի կղզի եւ ի քաղաքն նեղութեանն, որում Աքսորն⁴ կոչեն։

45 Գտաւ լեալ ի խորհրդեանն յայնմիկ եւ Դաւիթ Սահառունի, զոր կապեալ Մծեծայ⁵ առաքէ ի պաղատն։ 46 Եւ հատեալ նմա զկապանս իւր ի ճանապարհին՝ սատակէ զարսն որք տանէին զնա։ 47 Եւ դարձեալ անդրէն միաբանէ ընդ ինքեան զզաւրս Հայոց, յարձակի ի վերայ Մծեծի Գնունւոյ զաւրավարին Յունաց, հարեալ սատակէ զնա եւ զՎարազ Գնել Գնունի։ 48 Եւ առ յինքն զաւրավարութիւնն կամակցութեամբ եւ սիրով ամենայն զաւրացն։

49 Իսկ թագաւորն առնէ ըստ խնդրոյ իշխանացն զնա իշխան ի վերայ⁶ ամենայն աշխարհացն, եւ տայ նմա պատիւ կիւրպաղատութեանն⁷, եւ հաստատէ զնա ի ծառայութիւն իւր, եւ կալեալ զիշխանութիւնն ամս Գ ամենայն ճոխութեամբ մեծապէս։ 50 Ապա անարգեալ ի զաւրացն՝ հալածեցաւ, եւ անմիաբան լեալ ամենայն ազատացն՝ կորուսին զերկիրս Հայոց։ 51 Բայց միայն աստուածասէր եւ քաջ իշխանն Ռշտունեաց գաւառին Թէոդորոս կազմէր զզաւրս իւրոյ կողմանն հանապազ եւ զգուշանայր զտիւ եւ զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեանն, ոչ սակաւ աւճիրս գործէր ի թշնամեացն։ 52 Եւ շինեալ զԱղթամար կղզի՝ անդ ապրեցուցանէր զբազում գաւառս։

ԳԼՈՒԽ ԽԲ

1 Տարձումն Սասանականին, որ կալաւ զիշխանութիւնն ամս ՇԽԲ։
 2 Դիմել Հրէից առ Իսմայելացիս. երեւել Մահմետի եւ միաբանել զԻսմայելացիս։ 3 Առաջին պատերազմ ի մէջ Յունաց եւ Իսմայելացւոց յԱրաբիս։ 4 Պարտութիւն Յունաց. փախուցանել զխաչափայտն ի Կոստանդնուպոլիս։ 5 Իսմայելացիք տիրեն Եգիպտոսի։ 6 Այլ գաւր Իսմայելացւոց առնու զՏիգրոն։ 7 Նուագումն թագաւորութեան Պարսից։ 8 Մահ Հերակլի եւ թագաւորել որդւոյ նորա Կոստանդին։ 9 Մուտ որդւոցն Իսմայելի յաշխարհս Հայոց։ 10 Առումն Դունայ եւ գերումն Լեւ հագար արանց ի Դունայ։ 11 Պատրկութիւն Թէոդորոսի

1 Ա ընդ առաւօտուն
 2 Ա գամենեսիմ
 3 Միհրդ., Պատկ. կողմունքն
 4 Ա ախորս / Մալիս. ախորն (փոքրատառով)
 5 Ա մեծեծայ (եւ յետոյ)

6 ՏՏ չիբ ի վերայ
 7 Ա կորպապաղատութեան
 8 ՁԶ Բարձումն սասանականին, որ կալաւ զիշխանութիւնն ՇԽԲ ամ։ Եւ մուտ որդւոյն Իսմայելի յաշխարհս Հայոց

Ռշտունույ: 12 Իսմայելացիք յաւարի առնուն գրագում աշխարհս մինչեւ ի սահմանս Հնդկաց:

13 Աբրահամեանն ճառեցից զգաւակէ, ոչ զագատէն, այլ զայն՝ որ յաղախնոյ ծնեալ, յորոյ վերայ անսուտ կատարեալ աստուածային բանն, եթէ «ձեոք՝ նորա յամենեսեան, եւ ամենեցուն ձեոք ի նա»¹:

14 Յայնժամ երթեալ ժողովեցան յեղեսացւոց քաղաքն երկոտասան ազգք² ամենայն ցեղիցն Հրէից: 15 Եւ եղեւ իբրեւ տեսին, թէ գնաց մեկնեցաւ ի նոցանէ³ զաւրն Պարսից, եւ թողին ի բաց զքաղաքն խաղաղութեամբ՝ փակեցին զգոռն եւ ամրացան ի նա. եւ ոչ ետուն մտանել ի նոսա զաւրացն Հռովմայեցւոց տէրութեանն: 16 Իսկ թագաւորն Յունաց Երակոս հրաման ետ պաշարել զնա: 17 Եւ իբրեւ գիտացին սոքա, եթէ ոչ կարեն⁴ ունել զղէմ նորա պատերազմաւ՝ խաւսեցան ընդ նմա ի խաղաղութիւն: 18 Եւ բացեալ զգոռն քաղաքին՝ երթեալ կացին առաջի նորա: 19 Յայնժամ հրաման ետ նոցա երթալ դադարել յիւրաքանչիւր⁵ ի բնակութիւն. եւ գնացին նոքա: 20 Եւ կալեալ զճանապարհս անապատին գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայելի, կոչեն զնոսա իւրեանց յաւանականութիւն, եւ ծանուցանեն նոցա զհարազատութիւն իւրեանց Գրոց կտակաւ: 21 Իսկ նոցա թէպէտ եւ հաւանեալ վասն մերձաւոր հարազատութեանն՝ այլ ոչ կարէին առնել հաւանութիւն ի մէջ բազմութեան նոցա, եւ զի էին պաշտամունք նոցա բաժանեալ ի միմեանց:

22 Յայնժամ ժամանակի այր ոմն ի նոցունց իսկ յորդոցն Իսմայելի, որում անուն էր Մահմէտ, թանգար⁶, որպէս ի հրամանէն Աստուծոյ երեւեալ նոցա քարոզ՝ ճշմարտութեանն ճանապարհ, զԱբրահամեանն ուսուցանէր նոցա ճանաչել զԱստուած. մանաւանդ զի հմուտ եւ տեղեակ եւս էր Մովսիսական պատմութեանն: 23 Արդ՝ չգի ի վերուստ էր հրամանն ի միողէ հրամանէ ժողովէին ամենեքեան ի միաբանութիւն աւրինացն: 24 Եւ թողեալ զունայնութեան պաշտամունսն՝ դառնային առ Աստուած կենդանի, որ երեւեցաւ հաւրն նոցա Աբրահամու: 25 Արդ՝ աւրինադրէ զնոսա Մահմէտ՝ ոչ ուտել մեռելոտի, եւ ոչ ըմպել զինի, եւ ոչ խաւսել սուտ, եւ ոչ խառնակել ի պոռնկութիւն: 26 Եւ ասէր. «Երդամբ խոստացաւ Աստուած զերկիրն զայն Աբրահամու եւ զաւակի նորա յետ նորա մինչեւ յաւիտեան: 27 Եւ կատարեաց որպէս խաւսեցան առ այնժամ ժամանակաւն, մինչեւ սիրէն զԻսրայէլ: 28 Իսկ արդ՝ դուք էք որդիք Աբրահամու, եւ կատարէ Աստուած զխոստումն Աբրահամու եւ զաւակի նորա ի վերայ ձեր. այլ միայն սրտիւ⁸ սիրեցէ՛ք զԱստուածն Աբրահամու եւ երթա՛յք կալարո՛ւք զերկիրն ձեր, զոր ետ Աստուած հաւր ձերում Աբրահամու, եւ ոչ կարէ ոք⁹ ընդդէմ ձեր կալ պատերազմաւ, զի Աստուած ընդ ձեզ է»:

29 Յայնժամ ամենեքեան ժողովեցան միաբան յԵւիւլայ¹⁰ մինչեւ ցՍուր, ¹¹որ է յանդիման Եգիպտոսի¹¹, եւ գնացին յանապատէն Փառանու երկոտասան ցեղ՝ ըստ ցեղի տանց նահապետաց իւրեանց: 30 Եւ

1 Ա. ձեոք

2 Ի. Ժ. 11-12

3 Ա. Միհրդ. ազգ

4 Ա. նոցանէն

5 Բոյ. կարեմք

6 Միհրդ., Պատկ. իւրաքանչիւր

6 Ա. Միհրդ., Պատկ. քանկանգար

7 Ա. Միհրդ. զի վերուստ / Պատկ. գի վերուստ

8 ՏՏ չիք սրտիւ

9 Ա. չիք ոք

10 Ա. յԵւիւլայ

11 Բոյ. եւ յանդիման փ/ս որ է յանդիման

2 Ի. Ժ. 18

բաժանեցին ժԲ հազար արանց, 1 որպէս յորդոցն Իսրայելի ի ցեղան իւրեանց, հազար 2 այր ի ցեղ մի՝ առաջնորդել անցա յերկիրն Իսրայելի³։ 31 Եւ չուեալք գնացին բանակք բանակք ըստ իւրաքանչիւր նահապետութեանց – Նաբեուք, Կեդար, Արդիւղ, Մաքսամ⁴, Մասայ, Իդումա⁵, Մասէ, Քոդդադ⁶, Թեման, Յետուր, Նափէս եւ Կեդմայ⁷։ 32 Այս են ազգք Իսրայելի⁸։ 33 Եւ հասեալ յԸռաբոլթ Մովաբու ի սահմանս Թուբէնի. զի բանակն Յունաց բանակեալ էին յԱրաբիա, եւ անկեալ ի վերայ նոցա յանկարծակի՝ հարին զնոսա ի սուր սուսերի, եւ փախստական արարին զԹէոզոս եղբայր կայսերն Երակղի, եւ դարձեալ բանակեցան յԱրաբիա։

34 Եւ ամենայն մնացորդք ժողովրդեան որդոցն Իսրայելի ժողովեալ միաբանեցան ի միասին, եւ եղեն զաւր մեծ։ 35 Եւ եղեւ յետ այնորիկ⁸ արձակեցին պատգամս առ Թագաւորն Յունաց, եւ ասեն այսպէս. «Հաւր մերուս Աբրահամու ետ Աստուած զերկիրդ զայդ ի կալուած ժառանգութեան եւ զաւակի նորա յետ նորա։ 36 Եւ մեք եմք որդիք Աբրահամու. շատ լիցի քեզ ունել զերկիրդ մեր. ի բաց թող խաղաղութեամբ, եւ մեք ոչ եկեսցուք յերկիր քոյ. ապա թէ ոչ՝ տոկոսիւք պահանջեսցուք ի քէն զկալեալն»։

37 Իսկ կայսրն ոչ առնոյր յանձն, եւ ըստ պատգամին պատշաճի ոչ առնէր նոցա պատասխանի, այլ ասէ. «Իմ է երկիրս, եւ քոյ վիճակ ժառանգութեան՝ անա-

պատն. ե՛րթ գնա՛ խաղաղութեամբ յերկիր քոյ»։ 38 Եւ սկսաւ գունդս կազմել իբրեւ ՀՌ, եւ ետ նոցա զաւրովար՝ զոմն մի ի հաւատարիմ ներքինեաց իւրոց, 9 եւ հրաման ետ երթալ նոցա յԱրաբիա. եւ պատուիրեաց չառնել պատերազմ ընդ նոսա, այլ զգուշանալ անձանց, մինչեւ իւր այլ զաւրս գումարեալ արձակեսցէ յաւգնականութիւն նոցա։ 39 Իսկ նոցա հասեալ ի Յորդանան եւ անցին յԱրաբիա, եւ թողեալ զբանակս իւրեանց ի գետեզերին՝ հետիոտս¹⁰ գնացին ի վերայ բանակի նոցա։ 40 Իսկ նոցա զմասն ինչ ի բանակէն դարանակալ արարեալ աստի եւ անտի, եւ կարգեալ զբազմութիւն խորանացն շուրջ զբանակաւն, եւ ածեալ զուղտերամական՝ մակաղեցին շուրջ զբանակաւն եւ զվրանաւքն, եւ կապեցին չուանաւք զոտս նոցա. այս է ամբողջութիւն բանակի նոցա։ 41 Եւ սոքա յաւգնեալք ի ճանապարհին՝ ուր ուրեմն կարացին հատանել զամբողջութիւն բանակին, եւ սկսան սատակել զնոսա։ 42 Յանկարծակի յարեան դարանակալքն ի տեղուղէ իւրեանց եւ յարձակեցան ի վերայ նոցա. եւ անկեալ ահ Տեառն ի վերայ զաւրացն Յունաց, եւ ի փախուստ դարձան առաջի նոցա. եւ ոչ գոյր նոցա փախուստ ի Թանճրութենէ աւագոյն, զի Թաղէին ոտքն մինչեւ ի սրունսն, եւ տագնապ մեծ յարեգականն ջերմութենէն, եւ սուր թշնամուոյն զհետ¹¹ նոցա։ 43 Արդ՝ անկան ամենայն զաւրավարքն¹² եւ կործանեցան։ 44 Եւ եղեւ թիւ անկելոցն աւելի քան զերկու հազարս։ 45 Եւ սակաւք ի նոցանէ ապրեալքն փախստական անկանէին ի տեղի ապաստանի։

1 Բոլ. որ յորդոցն փխ որպէս յորդոցն
 2 Բոլ. այր մի ի ցեղ մի փխ այր ի ցեղ մի
 3 Միհրդ. Երուսաղէմի փխ Իսրայելի
 4 Հմմտ. Թեմ. 1, Ը 3-5:
 5 Բոլ. Մոսամբ-Մաստ փխ Մաքսամ
 6 ԱԲԳԵՏՏ Իդովմայ / Դ Եդովմայ
 7 Բոլ. Քոդդատ
 8 Ա եկեղմա փխ եւ Կեդմայ
 9 Ին. ԻԼ 13-16
 10 Ա այսորիկ

9 Ա չի՛ք եւ հրաման ետ երթալ անցա յԱրաբիա
 10 Ա հետիոտս
 11 Միհրդ., Պատկ. ի վերայ փխ գիետ
 12 Ա զորաւորքն փխ զաւրավարքն

46 Եւ նոքա անցեալ¹ ընդ Յորդանան՝ բանակեցան յԵրիքով: 47 Յայնժամ անկաւ ահ նոցա ի վերայ բնակչաց երկրին. եւ հնազանդեցան ի ծառայութիւն նոցա ամենեքեան: 48 Յայնմ գիշերի եւ երուսաղէմացիքն փախուցեալ զտէրունեան խաչն եւ զամենայն սպասս² եկեղեցեացն Աստուծոյ, եւ արկեալ ի ծով³ նաւաւք յուղարկեցին ի պաղատն Կոստանդնուպալսի: 49 Եւ ապա խնդրեալ նոցա⁴ երդումն ի նոցանէ՝ հնազանդեցան ի ծառայութիւն նոցա:

50 Իսկ թագաւորն Յունաց այլ ոչ եւս կարաց գումարել զգաւրս իւր ընդդէմ նոցա: 51 Եւ նոքա բաժանեցին զգաւրս իւրեանց յերիս մասունս: 52 Մասն մի յեգիպտոս, որ երթեալ կալան մինչեւ ցԱղեքսանդրիա⁵: 53 Եւ մասն մի ի հիւսիսոյ⁶ կողմանէ, ընդդէմ թագաւորութեանն Յունաց: 54 Եւ յական թաւթափել կալան ի վերջնոյ ծովուն մինչեւ ցեզր գետոյն մեծի Եւփրատայ⁷. եւ յայնմ կողմն գետոյն՝ զՈւրհայ եւ զամենայն քաղաքս Միջագետաց: 55 Եւ մասն մի յարեւելս՝ ի վերայ թագաւորութեանն Պարսից:

56 Եւ նուազեցաւ թագաւորութիւնն Պարսից ի ժամանակին յայնմիկ, եւ զաւրք⁸ նոցա բաժանեալ յերիս մասունս: 57 Յայնժամ զաւրացն Իսմայելի, որ էին գումարեալ ի կողմանս արեւելից⁹ երթեալ պաշարեցին զՏիգրոն¹⁰, զի անդ նստէր թագաւորն Պարսից: 58 Եւ զաւր աշխարհին Մարաց գումարեալ ի ձեռն զաւրա-

վարին իւրեանց Ռստոմայ¹¹ ՁՌ վառելոց՝ ժողովեցան եւ զնացին ի վերայ նոցա ի պատերազմ. յայնժամ թողեալ զքաղաքն՝ անցին յայնկոյս գետոյն Դգլադայ¹²: 59 Եւ զնացին եւ անցին նոքա զգետաւն եւ պնդեցան զհետ նոցա, եւ նոքա ոչ դադարեցին մինչեւ ի սահմանս իւրեանց, ի գեղդն¹³ որ կոչի Հերթիճան: 60 Եւ սոքա պնդեալք զհետ նոցա՝ եւ չոգան բանակեցան ի դաշտին: 61 Էր անդ եւ Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի, զաւրավարն Հայոց երեք հազար սպառազինաւք, եւ Գրիգոր իշխանն Սիւնեաց տէրն՝ Ռարամբ: 62 Եւ եղեւ յարձակումն ի վերայ միմեանց. եւ փախեան զաւրն Պարսից առաջի նոցա. իսկ նոքա զհետ մտեալ հարին զնոսա ի սուր սուսերի իւրեանց: 63 Եւ մեռան ամենայն նախարարքն զխաւորք. մեռաւ եւ զաւրավարն Ռոստամն. սպանին եւ զՄուշեղ երկու քեռորդւովքն, եւ զԳրիգոր Սիւնեաց տէր միով որդւով: 64 Եւ այլքն զերծեալ զնացին փախստական յաշխարհն իւրեանց: 65 Եւ¹⁴ իբրեւ եկին հասին մնացորդք զաւրացն Պարսից յԱտրպատական՝ գումարեալ ժողովեցան ի մի վայր, եւ նստուցին իւրեանց զաւրավար զԽոռոխագատ. եւ փութացեալ ի Տիգրոն¹⁵ էառ զամենայն գանձս թագաւորութեանն եւ զբնակիչս քաղաքացն եւ զթագաւորն իւրեանց. եւ փութացաւ հասուցանել յԱտրպատական. եւ իբրեւ մեկնեալ հեռացան՝ յանկարծակի եհաս ի վերայ նոցա զաւրն Իսմայելի: 66 Եւ նոքա զարհուրեալ թողին զգանձս եւ զբնակիչս քաղաքին¹⁶ եւ փախեան. փախեաւ եւ թագաւորն իւրեանց, եւ անկաւ ի զաւրն հարաւոյ:

1 Միհրդ., Պատկ. անցեալք

2 Ա. սպաս

3 Մայլս. ծով փխ ի ծով

4 Ա. նոցա խնդրեալ

5 Ա. ցԱղէկասնդրիայ

6 Ա. ի հիւսիսոյ

7 Ա. եփրատայ

8 Ա. զորս

9 ՁՁ, Միհրդ., Պատկ. յարեւելից

10 Ա. գտիզպովն

11 Ա. Ռստոմվայ

12 Ա. Դկլաթայ

13 Ա. գեղդն

14 Պատկ. չի՛ք իբրեւ եկին հասին

15 Ա. ի Տիգրոն (նաեւ յետոյ)

16 Միհրդ. քաղաքաբն

67 Իսկ նոցա առեալ զգանձն¹ ամենայն դարձան ի Տիզբոն, առին եւ զբնակիչսն քաղաքացն, եւ աւերեցին զամենայն երկիրն:

68 Յայնժամ կատարեալ երանելոյն Երակլի զկեանս իւր բարւոք ծերութեամբ. եւ էին աւուրք իւրոյ թագաւորութեանն ամբ Լ: 69 Երզմնեցուցանէ զորդի իւր զԿոստանդին՝ առնել ողորմութիւն ի վերայ ամենայն յանցաւորացն, զորս² հրամայեալ էր առնել յաքսորսն, ի դարձուցանել զնոսա յիւրաքանչիւր տեղիսն: 70 Երզմնեցուցանէ եւ վասն ասպետի՝ ածել զնա եւ զկին նորա եւ զորդիս նորա, եւ հաստատել ի կարգն առաջին: 71 Եւ եթէ կամեսցի զնալ յաշխարհն իւր՝ երդուեալ եմ նմա, մի՛ եղիցի սուտ երդումն իմ: 72 Արձակեա՛ զնա³, եւ թո՛ղ երթայ խաղաղութեամբ:

73 Մեռաւ Երակլոս, եւ թագաւորեաց որդի նորա Կոստանդին: 74 Եւ ոչ ոք ընտրեցաւ զաւրավար յաշխարհին⁴ Հայոց. քանզի անմիաբան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց:

75 Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Ջորոյ⁵ յաշխարհն Տարաւնոյ. առին զնա եւ զԲզնուներս եւ զԱղիովիտ: 76 Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ որդսպոյ եւ ընդ Գոգովիտ⁶ թափեցան յԱյրարատ: 77 Եւ ոչ ոք կարաց ի զաւրացն Հայոց արկանել գոյժ ի Դուին աւան. բայց արք երեք իշխանացն, որք երթային ժողովել զզաւրն ճապաղական, Թէոդորոս Վահեւուներ, եւ Խաչեան Առաւելեան, եւ Շապուհ Ամատունի: 78 Որք զնացեալ

փախստական ի Դուին⁷, եւ հասեալ ի կամուրջն Մեծամաւրի՝ ի բաց աւերեցին, եւ ինքեանք անցեալք գոյժ արկանել ի յաւանին: 79 Եւ ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ⁸ աշխարհին, որ եկեալ էին ի կութս այգեստանին: 80 Բայց Թէոդորոսն զնացեալ ի Նախճաւան քաղաք:

81 Եւ հասեալ թշնամին (Բուշայն)⁹ ի կամուրջն Մեծամաւրի ոչ կարաց անցանել. բայց ունէին առաջնորդ իւրեանց զՎարդիկ իշխան Մոկաց որ կոչէր Ակնիկ: 82 Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամաւրի՝ հարին ասպատակաւ զամենայն երկիրն, եւ ժողովեալ զաւար եւ զգերութիւն բազում յոյժ, եւ եկեալ բանակեցան ի յեզր մայրւոյն Խոսրովակերտի¹⁰:

83 Եւ եղեւ յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ չուրջանակի, մերժեցին ծխովն եւ նետաձգութեամբն զպահապանս պարսպին, եւ կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն եւ անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին: 84 Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին, եւ առեալ զաւար եւ զկապուտ քաղաքին՝ ելին եւ բանակեցան ի նմին բանակետեղն¹¹, որ աւր Ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի: 85 Եւ դադարեալ աւուրս ինչ՝ ելին եւ զնացին ընդ նոյն ճանապարհ, ընդ որ եկեալն էին: 86 Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն¹² ԼՅ հազար ոգի¹³: 87 Իսկ իշխանն Հայոց Ռշտունեաց տէրն դարանակալ եղեալ ի Գոգովիտ գաւառի՝ դիմէ ի վերայ նոցա սակա-

1 Ա. զգանձս
2 Միհրդ., Պատկ. գոր
3 Միհրդ., Պատկ. գրա փխ գնա
4 Ա. յաշխարհէն
5 Բոլ. ձորոյ
6 Ա. Գոգովիտ

7 Ա. Դուին
8 Ա. մարդիկ
9 Միհրդ. Բուշայն
10 Հ Խոսրովակերտի. միւս ձեռագրերը եւ Միհրդ., Պատկ. Խոսրակերտի
11 Ա. բանակետղն. լուսանցքում՝ բանակատեղն
12 Ա. գերւոյն փխ գերւոյն
13 ՏՏ հոգի

ւուք: 88 Եւ ոչ կարաց զդէմ ունել նոցա. փախստական լինի առաջի նոցա. եւ նոքա զհետ մտեալ նոցա՝ սատակէին զբազումս ի նոցանէն. եւ ինքեանք չոգան անցին յԱսորեստան: 89 Եւ եղեւ այս յամս Եզրի կաթուղիկոսի¹:

90 Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռչտունեաց տեառն՝ հանդերձ պատրկութեան² պատուով:

91 Այս ամենայն լինի ի ձեռն կաթուղիկոսին Ներսիսի³, որ յաջորդեցաւ ի նմին ամի յաթու կաթուղիկոսութեան⁴ փոխանակ Եզրի կաթուղիկոսի:

92 Բայց յորժամ ելին յարեւելք որդիքն Իսմայելի ի Սին անապատէն ոչ ել ընդ նոսա եւ թագաւորն նոցա Ամո. այլ իբրեւ յաղթեցին պատերազմաւք, վանեալ զերկոսին թագաւորութիւնն, կալան յեզիպոստէ մինչեւ ցլեառն մեծ Տորոս, եւ ի ծովէն Արեւմտից⁵ մինչեւ ցՄարս եւ Խուժաստան՝ ապա ելին արքունական բանակաւքն ի բուն սահմանս կալուածոցն Իսմայելի: 93 Եւ հրաման ետ արքայ ժողովել զնաւ եւ⁶ զնաւորդս բազումս, եւ անցանել ընդ ծով ի հարաւակողմն յարեւելս, ի Պարսս, եւ ի Սակաստան⁷, եւ ի Սընտ եւ ի Կրման⁸, յաշխարհն Կուրան⁹ եւ ի Մակուրան¹⁰, մինչեւ ի սահմանս Հնդկաց:

95 Իսկ զաւրացն փութանակի պատրաստեալ՝ զհրամանսն կատարէին. եւ այրեցին զամենայն երկիրն, եւ առեալ զաւար եւ

զկապուտ՝ դարձան անդրէն, արշաւանս դնելով ի վերայ ծովուն մկանանցն հասանէին ի տեղիս Իւրեանց:

96 Զայս լուաք յարանց գերելոց ի Խուժաստան Տաճկաստանէ, որոց ինքեանք իսկ ազանատես եղեալ պատմեցին մեզ զայս բան:

ԳԼՈՒԽ ԽԳ

1 Վասն Հրէից եւ չար խորհրդոց նոցա¹¹:

2 Ասացից եւ զՀրէիցն զապստամբողացն զխորհուրդսն, որ սակաւ ժամանակս աւզնականութիւն գտեալ ի Հագարացւոցն՝ առին խորհուրդ շինել զտաճարն սողմոնի: 3 Եւ գտեալ զտեղին, որ կոչի Սրբութիւն¹² սրբութեանց՝ շինեցին զնախարսխով¹³ շինուածով տեղի աղաւթից Իւրեանց: 4 Եւ նախանձեալ ընդ նոսա Իսմայելացւոցն՝ մերժեցին զնոսա ի տեղուջէ յայնմանէ, եւ անուանեցին զնոյն տուն¹⁴ աղաւթից Իւրեանց: 5 Նոքա յայլուժ տեղուժ անդէն յատակս տաճարին շինեցին այլ տեղի աղաւթից Իւրեանց: 6 Եւ անդէն առաջի արկեալ զԻւրեանց չարութեան խորհուրդ, լնուլ կամեցեալ զերուսաղէմ ծայր ի ծայրէ¹⁵ արեամբ, ջնջել զամենայն քրիստոնեայան յերուսաղէմէ:

7 Արդ՝ այր ոմն ի մեծամեծացն Իսմայելի երթայր յերկրպագութիւն ի տեղի աղաւթից Իւրեանց միայն: 8 Ի դիմի հարան մա արք երեք հրէայք ի գլխաւորաց նոցուց, որոց էին սպանեալ խոզս երկուս եւ տարեալ եղեալ ի տեղի աղաւթիցն, եւ զարիւնն հեղեալ զորմովքն¹⁶ եւ զյատա-

1 Ա կաթաղիկոսի
2 Ա պատրութեան փխ պատրկութեան
3 Ա կաթաղիկոսի Ներսէսի
4 Ա կաթաղիկոսութեան (նաեւ յետոյ) / Մալխ. կաթուղիկոսութեան (վրիպակ)
5 Բոլ. արեւմտից փխ Արեւմտից
6 Ա և փխ եւ
7 Միհրդ., Պատկ. Սագաստան
8 Բոլ. Սրման փխ Կրման
9 Բոլ. Տուրան փխ Կուրան
10 Ա Մակուրան փխ ի Մակուրան

11 Վերնագիրը ձեռագրիցն է:
12 Բոլ. սրբութիւն փխ Սրբութիւն
13 Ա խարխով փխ խարսխով
14 ԶԶ, Միհրդ. չի՛ տուն
15 Ա ծայր ի ծայր
16 Ա զորմո՛քն

կաւք¹ տանն: 9 Եւ եղեւ իբրեւ ետես² զնոսա այրն՝ զտեղի էառ եւ խաւսեցաւ ընդ նոսա զինչ եւ խաւսեցաւ. եւ նոքա պատասխանեալ նմա զանց արարին զնովաւ եւ զնացին: 10 Եւ նա իսկոյն մտեալ ի ներքս կալ յաղաւթս՝ ետես զչարիս, եւ դարձաւ փռթանակի, զի կալցի զարսն: 11 Եւ իբրեւ ոչ եգիտ զնոսա լուռ եղեւ եւ զնաց ի տեղի իւր. եւ ապա բազումք մտեալ տեսին զչարիսն, եւ գոյժ արկին քաղաքին: 12 Եւ ուսուցին հրեայքն իշխանին, թէ քրիստոնեայք³ պղծեցին զտեղի աղաւթիցն: 13 Հրաման ետ իշխանն, եւ ժողովեցին զամենայն քրիստոնեայսն: 14 Եւ մինչ կամէին զնոսա սրով սատակել՝ եկն այրն եւ եկաց յանդիման, ասէ. «Ընդէ՞ր հեղոյք⁴ զայդչափ արիւն ի տարապարտուց. հրամայեցէ՛ք ժողովել զամենայն հրէայսդ⁵, եւ ես ցուցից զմահապարտան»: 15 Եւ եղեւ իբրեւ ժողովեցին զամենեսեան, եւ մտեալ ի մէջ նոցա ծանեաւ զարսն զերիսն, որ դիպեցան նմա: 16 Եւ կալեալ զնոսա՝ դատեցին ահագին դատաստանաւք, մինչեւ յայտնեցին զխորհուրդն: 17 Եւ զի իշխան նոցա էր ի հրէից անտի՝ հրամայեաց սպանանել արս վեց, զգլխաւորս խորհրդեանն. եւ այլոցն թոյլ ետ զնալ ի տեղի իւրեանց:

ԳԼՈՒԽ ԽԳ

1 Մեռանել Կոստանդնի եւ քագաւորել Երակլոսի որդւոյ Հերակլի յերկրորդ կնոջէն: 2 Գալ Վաղենտինի ի Կոստանդնուպոլիս եւ նստուցանել քագաւոր զԿոստաս զորդի Կոստանդնի: 3 Պատերազմ Պարսից

եւ Իսմայելացոց ի Մարսս գաւառի եւ պարտութիւն Պարսից: 4 Հէնն իսմայելեան ըստ կանխասացութեան Դանիէլի մարգարէին: 5 Ապիրատ խորհուրդ Վաղենտինի եւ մահ նորա: 6 Դարձ յախորէ ասպետի, որդւոյ Շումն Խոսրովայ: 7 Թումաս նենգութեամբ ըմբոնէ զԹէոդորոս եւ առաքէ կապանաւ ի Կոստանդնուպոլիս: 8 Արդարանայ Թէոդորոս եւ դառնայ ի Հայս պատուով զարավարութեան: 9 Ասպետ փախչի ի Կոստանդնուպոլսոյ եւ դարձեալ մտանէ ի ծառայութիւն Յունաց պատուով կիրապաղատութեան. մահ նորա: 10 Բաժանել զարուն Իսմայելի յերիս առաջս եւ արշաւել յԱյրարատ, ի կողմանս Սեպհական գնդին եւ յԱղուանս:

11 Եւ եղեւ ի մահուանն Երակլի թագաւորեաց Կոստանդին որդի նորա, եւ կարգէ ի վերայ զաւրաց իւրոց զաւրավարս զՎաղենտինոսն, որ կոչէր Արշակունի: 12 Եւ հրամայեաց իւրոց երթալ յարեւելս:

13 Եւ սակաւ ինչ աւուրս թագաւորեալ Կոստանդին, դաւեալ ի Մարտինեայ մաւրուէ⁶ իւրմէ, ի կնոջէն Երակլի՝ մեռանէր: 14 Եւ թագաւորէ Երակլոս, որդի Երակլեայ, որ ի Մարտինեայ⁷ Աւգոստեայ⁸. քանզի Կոստանդին էր յառաջին կնոջէն⁹: 15 Եւ ¹⁰Վաղենտինի [լուեալ] զգործեցեալ իրս զնայ ի վերայ նորա զաւրու իւրով ի Կոստանդնուպալիս¹¹: 16 Եւ կալեալ

1 Ա գատակոփ
 2 Միհրդ. եհաս փիս ետես. 22 լուսանցում ժԹ դ. գրչութեամբ գրուած է. «Սերէնս ժամանակակից ա Իսմայելեաց»:
 3 Ա քրիստոնեայքն
 4 Միհրդ., Պատկ. հեղուփ
 5 Մալխ. հրեայսդ (վրիպակ)

6 Բոյ. մարէ փիս մարուէ: Տե՛ս մեր աշխ. (Սերէնսի Պատմութիւնը եւ Անանունի առեղծուածք, էջ 185):
 7 Բոյ. ի Մարտինեայ փիս ի Մարտինեայ
 8 Մալխ. աւգոստեայ (վրիպակ)
 9 Ա կնոջէն
 10 Բոյ. Վաղենտինի գործեցեալ իրս փիս Վաղենտինի [լուեալ] զգործեցեալ իրս
 11 Ա Կոստանդնուպոլիս

զՄարտինէ՝ կտրէ զլեզու նորա եւ ապա սպանանէ զնա հանդերձ երկու որդւովք նորա: 17 Եւ նստուցանէ թագաւոր զԿոստաս զորդի Կոստանդնի, եւ անուանէ յանուն հաւրն իւրոյ Կոստանդին: 18 Եւ ինքն գումարէ զգաւրսն, եւ գնայ ընդ արեւելս:

19 Եւ եղև յառաջնումն ամի Կոստանդեայ¹ թագաւորին Յունաց, եւ յամի տասներորդի Յագկերտի արքային Պարսից՝ գումարեցան զաւրքն Պարսից ընդ Իսմայելի ԿՌ արանց վառելոց սպառազինաց: 20 Եւ Իսմայելացւոցն ճակատեցան ընդդէմ նոցա ԽՆ արանց սուսերամերկաց, եւ բաղխեցին² զմիմեանս պատերազմաւ ի Մարսս գաւառի: 21 Մինչև յերիս աւուրս յերկարեալ պատերազմն, մինչև նուագեալ երկոցունցն կողմանցն հետեւակն³ մարտին: 22 Յանկարծակի ազդ եղև զաւրացն Պարսից, եթէ եկն զաւր յաւգնականութիւն Իսմայելացւոցն: 23 Եւ փախեան զաւրն Պարսիցն ի բանակէն զգիշերն ամենայն. եւ մնացորդքն զաւրուն Իսմայելի գնացին ի վերայ նոցա ընդ առաւատն: 24 Եւ ոչ զոք գտին ի բանակին. եւ ասպատակ սփռեալ ընդ ամենայն երեսս երկրի՝ հարին զմարդ եւ զանասուն սրով. եւ առեալ բերդս ԻԲ⁴ սատակեցին զամենայն կենդանի որ էր ի նոսա:

25 Բայց զահագին աղէտս հէնին Իսմայելի, որ բորբոքեաց հրդեհեալ զծով եւ զցամաք, ո՞վ կարիցէ պատմել⁵: 26 Բայց երանելին Դանիէլ կանխաւ գուշակէ մարգարէութիւնն զայսպիսի նեղութիւնս⁶ որ եկն եհաս ի վերայ երկրի. որ չորս գազանաւք նշանակէ զչորս թագաւորութիւնսն,

որ յառնելոցն էին ի վերայ երկրի: 27 Եւ նախ առաջին զԱրեւմտից թագաւորութիւն, զմարդացեալ գազանն, որ է Յունաց. եւ յայտ անտի⁷ է՝ ասէ. Թափեցան վարագաթեմն եւ ջնջեցաւ յերկրէ՞: 28 Զդիւական կռամոլութեանն ասէ զՋնջումն⁸: 29 Եւ եկաց իբրեւ ի վերայ ոտից մարդոյ, եւ սիրտ մարդոյ տուաւ մմա՞: 30 Եւ ահա գազանն երկրորդ նման արջոյ, եւ եկաց ի կողմն մի, յարեւելից կողմանէ. զՍասանականին ասէ զթագաւորութիւն: 31 Եւ կողմ երեք ի բերան ունելով⁹ զՊարսից եւ զՄարաց եւ զՊարթեւաց թագաւորութիւնն: 32 Եւ յայտ անտի է՝ որ ասէին ցնա. արի՛, կե՛ր գմարմինս բազմաց¹⁰: 33 Որպէս եւ եկեր իսկ ամենեցուն գիտելով: 34 Իսկ զագանն⁹ երրորդ իբրեւ զիմն, եւ չորք թեմ թոչնոյ ի վերայ նորա, եւ չորք գլուխ գագանիմէ. զՀիւսիսային ասէ զթագաւորութիւն, Գոգ եւ Մագոգ, եւ երկու ընկերք նոցին, որոց տուաւ իշխանութիւն թոչել զաւրութեամբ ի ժամանակի իւրում ի կողմանս հիւսիսոյ: 35 Իսկ զագանն չորրորդ ահեղ եւ զարմանալի, եւ ժանիք նորա երկաթիք, եւ մագիլք նորա պղնձիք. ուտէր եւ մանրէր եւ զմնացուածսն առ ոտն¹⁰ կոտորէր¹¹: 36 Այս չորս, յարուցեալ ի Հարաւոյ¹¹ կողմանէ՝ Իսմայելեան թագաւորութիւնն. որպէս հրեշտակապետն մեկնեաց, եթէ Գագանն¹² չորրորդ թագաւորութիւն¹ չորրորդ

1 Ա. Կոստանդինեա
2 Ա. բախեցին
3 Ա. հետեւակն
4 Ե ի բուս փխ ԻԲ
5 Միհրդ. պարտել փխ պատմել
6 Միհրդ., Պատկ. նեղութեանս

7 Ա. անդի
8 Գ. ան. Է 4
9 Ա. ջնջումն
10 Գ. ան. Է 4
11 Գ. ան. Է 5
12 Գ. ան. Է 5
9 Ա. զագան
10 Գ. ան. Է 6
10 Երկր. ոտս փխ ոտն
11 Տէ՛. Գ. ան. Է 7:
12 Բոյ. չորրորդ թագաւորութիւնն (թագաւորութեանն) կացցէ փխ չորրորդ թագաւորութիւն չորրորդ կացցէ

կացցէ, որ առաւել իցէ քան զամենայն թագաւորութիւնս, եւ կերիցէ զամենայն երկիր: 37 Եւ ժ եղջիրք² ժ թագաւորք յարիցեն, եւ զկնի նորա յարիցէ այլ՝ որ առաւել է չարեաւք քան զամենայն առաջիկանս³։ Եւ որ ի կարգին է:

38 Եւ եղև յերկրորդում ամի Կոստանդին, թոռին երանելոյն Երակլի՝ խորհէր³ Վաղենտին ի միտս իւր՝ ճարտարութեամբ խաբել զսինկղիտոսն⁵, եւ համբառնալ զինքն ի պատիւ թագաւորութեանն, որպէս⁶ զի պսակեալ զինքն այնպէս արասցէ զաւրավարութիւն⁷: 39 Եւ ծանրացոյց զլուծ ծառայութեան ի վերայ բնակչաց քաղաքին, եւ զայն երեք հազար սպառազէնս⁸, զոր ընդ ինքն⁹ տարաւ, եւ զաւրա բազումս այլ միաբանեալ՝ իւր թիկունս հաստատէր: 40 Յայնժամ ժողովեցան արք քաղաքին ի սուրբ եկեղեցին Աստուծոյ առ հայրապետն, եւ ծանուցանեն նմա բառնալ զծառայութիւն զայն, եւ նա ոչ կամեցաւ լսել: 41 Եւ անդ էր մի ոմն յիշխանացն, որում անունն էր Անտոնինոս. ասէ ցՎաղենտին. «Զի՞նչ է նոցա միաբանութիւնն այն եւ խորհուրդն. կամ զի՞ իսկ իշխեցին համարձակաբար արձակել առ քեզ զայսպիսի բանս. բայց եթէ հրամայեսցես ինձ՝ ես երթայց եւ քակտեցից զմիաբանութիւնն նոցա եւ զխորհուրդն: 42 Եւ հալածեմ զնոսա յիւրաքանչիւր տեղիս, զի կատարեսցին կամք

քոյ»: 43 Եւ ասէ. «Ե՛րթ եւ արա որպէս ասացերդ»: 44 Եւ նա յարուցեալ զնաց արամբք հազարաւք, եւ իբրեւ եմուտ յեկեղեցին՝ սկսաւ պատուհասել զգլխաւորսն գանիւ: 45 Յոտն եկաց հայրապետն. եւ ասէ. «¹⁰Շատ եւ ոչ է իրաւացի առնել ի տեղուջս յայսմիկ այդպիսի ինչ¹¹»: 46 Եւ յարձակեալ Անտոնի՝ ած ապտակ ի ծնաւտ նորա, եւ ասէ. «Ե՛րթ կա՛լ գտեղին քոյ»: 47 Յայնժամ խռովեալ ամբոխն՝ յարձակեցան ի վերայ նորա: 48 Եւ ըմբռնեալ զնա քարչեցին զոտանէ ի մէջ քաղաքին, եւ այրեցին հրով: 49 Ազդ եղև Վաղենտինի, եւ դողումն կալաւ զնա: 50 Եւ անդէն վաղվաղակի հեղաւ ամբոխն ի վերայ նորա, եւ քարչեալ արտաքոյ տանցն՝ գլխատեցին. եւ տարեալ ի տեղին, ուր այրեցին զԱնտոնինոս¹² ի նմին տեղուջ այրեցին եւ զնա: 51 Եւ զԿոստանդին հաստատեցին յաթոռ թագաւորութեանն: 52 Եւ արարին զաւրավար զԹէոդորոս զոմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց¹³ որ ի Յունաց կողմանէ:

53 Սա իբրեւ առ զաւրավարութիւնն՝ աղաչեաց զթագաւորն եւ խնդրեաց պարգեւս՝ առնել ողորմութիւն այնոցիկ, զորս էր աքսորեալ յԱփրիկէ: 54 Եւ մանաւանդ վասն ասպետի, որդւոյ Սմբատայ Խոսրով Շում¹⁴ կոչեցելոյ: 55 Եւ քաղցրացոյց Աստուած զսիրտ թագաւորին, եւ հրամայեաց ածել զնոսա ի քաղաքն թագաւորական: 56 Եւ ընկալաւ զնոսա իբրեւ զսիրելիս թագաւորութեանն, եւ զորդի նորա¹⁵ զՍմբատ առաջին սպաթար ի մէջ ամենայն սպաթարացն, եւ կանտիտատ: 57 Եւ

1 Ա. թագաւորութիւնն / Երից. թագաւորութեան
2 Ա. եղջերք նորա փխ եղջերք
3 Գ. ան. Լ. 23-24
4 Ե խորհէր անդի փխ խորհէր
5 Ա. էնտին փխ Վաղենտին / Ե ի միտս իւր ճարտարութեամբ Վաղենտին փխ Վաղենտին ի միտս իւր ճարտարութեամբ / Միհրդ., Պատկ. Վաղենտին անտի փխ Վաղենտին
6 Ա. զսնկղիտոսն
7 Երից. թէպէտ զի փխ որպէս
8 Երից., Միհրդ., Պատկ. զգաւրավարութիւն
9 Ա. սպառազէն
10 Երից. ընդ ինքեան

10 Միհրդ. շատ ոչ է / Երից. շատ ոչ է. ջնջուած է եւ դարձուած գայոյ ոչ է
11 Ա. ինչ առնել փխ ինչ
12 Ա. զԱնտոնինոս / Պատկ. զԱնտոնինոս
13 Ա. հայնց փխ յայնց
14 Ա, Երից. շում
15 Բոյ. առաջին սպաթար զՍմբատ փխ զՍմբատ առաջին Սպաթար

անդէն կարգեաց ի կարգն առաջի յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ: 58 Նոյնպէս եւ զՎահանն խարխոռունի եւ զայլ եւս: 59 Եւ արձակեաց ի Հայս այր ոմն իշխան, անուն թուամ: 60 Սա եկեալ ոչ կամէր եղծանել զուխտն, որ ի մէջ կայսեր եւ իշխանին Մարաց. միաբանեաց զամենայն իշխանսն ընդ ինքեամբ եւ գնաց առ իշխանն Մարաց եւ խաւսեցաւ ընդ նմա ի խաղաղութիւն: 61 Եւ առ ի նմանէ ինչս բազումս եւ խոստացաւ նմա երդմամբ, զի տացէ տանել զթէոդորոս կապանաւք ի պաղատն, զի նա էր իշխան աշխարհիս Հայոց: 62 Եւ դարձաւ եկն անդրէն ի զաւրս Հայոց: 63 Եւ իբրեւ եկն յերկիրն Կոտէից, յանկարծակի յարձակեցան ի վերայ նորա, կալան գնա եւ կապեցին, եւ ետուն տանել յանդիման թագաւորին: 64 Իսկ արքայ Կոստանդին իբրեւ լուաւ խռովեցաւ յոյժ. զի ոչ էր ի հրամանէ նորա կապելն. եւ հրամայեաց լուծանել գնա ի կապանացն, եւ ընթեռնուլ զգիրս ամբաստանութեանն: 65 Եւ ծանուցեալ գնենգութիւնն՝ հրամայեաց կոչել զառաջեալ եւ ընկալաւ գնա սիրով, եւ նորին իշխանութեամբն պատուով: 66 Եւ կարգեաց նմա ռոճիկ եւ ընդունելութիւն յարքունուստ: 67 Ապա հրամայէ կոչել զթումաս ոմն եւ ոչ հրամայեցաւ նմա մտանել յարքունիս, այլ արտաքոյ քննութիւն առնել. եւ արդարացուցին զթէոդորոս Ռչտունեաց տէրն ի բանս իւր. եւ եղեն իրաւունս ի վերայ նորա: 68 Իսկ զթումաս անարգեալ ի բաց ընկեցին պատուոյն: 69 Յայնժամ տեսին զմիմեանս ասպետ եւ թէոդորոս Ռչտունեաց տէրն, եւ հեղուին արտասուս ի վերայ պարանոցի իւրեանց, զի էին սննդակիցք միմեանց ի դրանն խորովայ արքային Պարսից:

70 Բայց ասպետ ոչ կարաց նուաճել ընդ իշխանութեամբն Յունաց, այլ արկ ի միտս իւր նենգութիւն. եւ հրամանս խնդրեաց ի թագաւորէն Կոստանդեայ², զի արձակեսցէ արս չորս յընտանեաց³ իւրոյ ի Հայս՝ տանել առ նա գինչս իւր: 71 Եւ հրամայեաց թագաւորն տալ նմա զհրամանս. իսկ նա այլակերպեալ գինքն՝ առ ընդ իւր արս երիս, եւ հասեալ ի ծովեզր՝ եցոյց զհրամանն արքունի: 72 Ել ի նաւն եւ էանց ընդ ծովն, եւ հապճեալ գնացեալ ի նմանութիւն⁴ թռչնոյ՝ եկն եհաս փութանակի ի Տայս եւ ամրացաւ⁵ անդ. քանզի ընկալան գնա Տայեցիքն խնդրութեամբ:

73 Յայնժամ ժամանակի ոչ սակաւ յուզմունք լինէին ի մէջ աշխարհիս Հայոց. քանզի փութանակի եկն եհաս հրամանն արքունի առ զաւրավարն Հայոց՝ ունել զամենայն անցս ճանապարհացն, եւ յուզել յամրոցս⁶ աշխարհին: 74 Ապա ազդ լինէր, եթէ եկն եւ ամրացաւ ի Հայս ի Տայս⁷:

75 Յայնժամ հրաման ետ զաւրավարն Յունաց թէոդորոս հանդերձ իշխանաւքն զաւրուն եւ նախարարաւքն Հայոց՝ արձակել զՆերսէս կաթողիկոս առ ասպետ, եւ տանել նմա երդումն հաւատարմութեան, ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին, եւ ածել նմա զկին իւր եւ զորդիսն:

76 Եւ գնաց կաթողիկոսն, հաստատեաց առ նմա զերդումն, զի մի՛ այլ ուրեք կալցի ճանապարհ. եւ դարձաւ եկն անդրէն: 77 Եւ գրեցին նոքա առ թագաւորն Կոստանդին առնել նմա ըստ երդ-

1 Ա. Բայց ասպետ բառերի դիմաց լուսանցում գրուած է ՀԲ գլխահամարը:

2 Ա. Կոստանդինեա

3 Ա. յընդանեաց

4 Ա. ի նմանու

5 Ա. ամիացաւ

6 Ա. յամրոց

7 Ա. Հայս Տայս (թում է ի Հայսը սխալ կրկնութիւնն է ի Տայսի)

մանն, զոր խոստացաւ. քանզի էր գրեալ ասպետ առ թագաւորն այսպէս, եթէ «Մառայ քոյ եմ, եւ ոչ ուրեք երթամ ի ծառայութենէդ ձերմէ. բայց զի ասացին ցիս ոմանք, եթէ անդրէն երթալոց ես ուստի եկիրն՝ վասն այնորիկ զահի հարայ եւ փախեայ: 78 Բայց արդ եթէ արժանի համարիք՝ միամտութեամբ վաստակիմ, եւ կեամ եւ մեռանիմ ի վերայ ձերոյ աստուածպատուութեանդ»: 79 Յայնժամ հրամայեաց թագաւորն Կոստանդին առնել զնա կիրապաղատ¹, եւ տալ նմա պսակ² պատուոյն եւ զիշխանութիւն աշխարհին: 80 Եւ հրամայեաց արձակել զկինն եւ զորդիսն մեծաւ շքով, եւ ետ տանել զգահոյս արծաթեղէնս հանդերձ այլովք մեծամեծ ընչիւք:

81 Արդ՝ մինչդեռ գայր հրովարտական եւ պատիւն առնել զնա կիրապաղատ³ յանկարծակի եհաս նմա հիւանդութիւնն եւ մեռաւ: 82 Եւ բարձին զմարմինն նորա եւ տարան թաղեցին առ հաւրն իւրում ի Դարիւնս: 83 Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անուն⁴ էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ. տուեալ նմա զիշխանութիւնն⁵ բնիկ տանուտէրութեանն ասպետութեան, եւ արար զնա դրունգար⁶ զաւրաց իւրոց: 84 Ետ նմա կինն ի տանէն Արշակունեաց եւ յիւրոց մերձաւորաց⁷, եւ... արձակեաց ի բանակն առ զաւրս իւր: 85 Եւ յետ այսորիկ արձակեաց զԹէոդորոս Ռշտունեաց⁸ տէրն ի Հայս մեծաւ պատուով, եւ ետ նմա զնոյն իշխանութիւնն զաւրավարութեան, եթէ կամիցին իշ-

խանքն Հայոց եւ եթէ ոչ կամիցին: 86 Եւ եկն կարգեցաւ ի նոյն իշխանութեանն:

87 Եւ եղեւ ի գալ միւսում ամի⁹ եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, եւ բաժանեցան յերիս: 88 Առաջ մի յԱյրարատ¹⁰, եւ առաջ մի ի Սեպհական¹¹ գնդին կողմանսն. եւ առաջի մի յԱղուանս: 89 Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան¹² եւ հարեալ¹³ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար եւ զգերութիւն: 90 Եւ եկին ժողովեցան ի Հէրեւան¹⁴, եւ մարտեան ընդ բերդին, եւ ոչ կարացին առնուլ: 91 Եկին ի յՈրդսպու¹⁵, եւ ոչ նմա ինչ կարացին առնել: 92 Գնացին անտի եւ բանակեցան յԱրծափս, հանդէպ բերդին առ ջրովն: 93 Եւ սկսան պատերազմել ընդ բերդին, եւ բազում աւճիրս վնասուց գործեցին անդ ի¹⁶ բերդէն: 94 Արդ՝ էր նոցա ի թիկանց կողմանէ ել ի գլուխ անդր յԱտրեանայ կողմանէ՝ որում Կախանակտուցն կոչեն: 95 Արդ՝ իջին ընդ այն¹⁷ արք ի վայր ի բերդէն՝ երթալ խնդրել ի բերդէն Դարաւնից զաւր¹⁸ յաւգնականութիւնն իւրեանց: 96 Եւ ետ նոցա Սմբատ Բագրատունի, որդի Վարազ Սահակայ՝ արս Խ: 97 Եւ գնացեալ ի գիշերի ելին ի բերդն եւ ոչ զգուշացան տեղւոյն: 98 Եւ գիտացին Իսմայելացիքն զտեղին, եւ գնացեալ¹⁹ ի նոյն հետին ելին ի բերդն, եւ

1 Ա կորապաղատ (նաեւ յետոյ)
 2 Ա գսակ փխ պսակ
 3 Միհրդ. կորապաղատ
 4 Բոյ. անունն
 5 Պատառ. զիշխանութիւն
 6 Ա, պատառ., Միհրդ. Դրունգար
 7 Պատառ. մերձաւորացն
 8 Ա, պատառ. զընդշտունեաց

9 Պատառ. ամիսն
 10 Պատառ. յարայրատ
 11 Միհրդ., Պատկ. ի սեփհական (նաեւ յետոյ)
 12 Պատառ. սփռան
 13 Պատառ. հարեալ փխ եւ հարեալ
 14 Պատառ., Ա Հէրեւան / ԲԳԴԵՏՏ, Երից. յերեւան. մեր կարծիքով, նախնական բնագրում Հէրեւան եւ ի փոխարէն եղել է Հէր եւ անդ (ժողովեցան ի Հէր եւ անդ մարտեան ընդ բերդին):
 15 Պատառ. էին ի Աղսպու փխ եկին ի յՈրդսպու / Երից. յՈրդսպու
 16 Պատառ. ի նա փխ անդ ի
 17 Պատառ. ի վայր արք
 18 Պատառ. գաւրս
 19 Պատառ. նոյն հետոյն փխ ի նոյն հետին

կալան զտեղին մինչեւ ցառաւաւտն¹:
99 Եւ արս ժ² պահապանս տեղւոյն ըմբռ-
նեցին ի քուն եւ սպանին:

ԳԼՈՒԽ ԽԵ

1 Թէոդորոս Ռշտունի հարկանէ
գիւմայելացիս եւ թափէ զաւարն եւ
զգերին, զոր առեալ էր նոցա յԱր-
ծափս: 2 Այլ զար Իսմայելացւոց
հարկանէ սրով յԱյրարատայ մինչեւ
ի սահման Տայոց, Վրաց եւ Ա-
դունից: 3 Նաւամարտութիւն առ
Կոստանդնուպոլսով եւ չարաչար
պարտութիւն Իսմայելացւոց:
4 Կոստանդին կայսր առնէ հաշ-
տութիւն ընդ Մաւեայ: 5 Ծինութիւն
Եկեղեցւոյն յանուն Զուարթնոց:
6 Ամբաստանութիւն զարուն Յու-
նաց զՀայոց վասն իրաց հաւատոյ:
7 Հրաման ի Կոստանդինէ՝ առնել
միաբանութիւն հաւատոյ ընդ
Հոռոմս: 8 Ժողով Եկեղեցական
վասն ինդրոյ միաբանութեան:

9 Եւ եղեւ յամին երկրորդի Կոստանդ-
նի³, յամսեանն Հոռի, որ աւր ԻԳ էր ամ-
սոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս՝
ճչեցին Իսմայելացիքն ի բերդին վերջոյ եւ
առաջոյ⁴, եւ Հարին զնոսս սրով սուսերի:
10 Եւ բազումք⁵ գահավէժ լեալ սատա-
կէին: 11 Եւ զկանայս եւ զմանկունս իջու-
ցին ի բերդէն, կամէին սատակել. եւ ոչ
գոյր թիւ գերւոյն, եւ անասուն պաճա-
րացն բազում յոյժ: 12 Եւ եղեւ ի վաղիւ
առաւաւտուն⁶ եկն Եհաս ի վերայ նոցա
Շգաւրավարն Հայոց ⁸Թէոդորոս զաւրու

իւրով եւ յարձակեցաւ ի վերայ նոցա եւ Ե-
հար զնոսս անհուն կոտորածով: 13 Եւ
էին նոքա երեք Հազար ընտիր սպառա-
զէնս յամենայն զաւրացն Իսմայելի, եւ ոչ
ոք գերծաւ ի նոցանէ. բայց սակաւ ճողոպ-
րեալք Հետեւակք երթեալ ամրացան ի
Շամբին⁹: 14 Եւ ապրեցոյց տէր յաւուր
յայնմիկ զբազմութիւն գերւոյն ի ձեռաց¹⁰
Իսմայելացւոցն. եւ զԻսմայել խորտակեաց
կործանմամբ մեծաւ. եւ մեռան Բ իշ-
խանքն Իսմայելի, Աւթման եւ Ոգբայ¹¹:
15 Եւ եղեւ յաղթութիւն մեծ զաւրավարին
Հայոց: 16 Եւ ետ տանել զաւրավարն Հա-
յոց զընծայս¹² Կոստանդինի¹³ ի պատերազ-
մէն զընտիր ընտիր¹⁴ երիվարացն ճ ձի.
զոր առեալ արքայի ուրախ եղեւ ինքն եւ
ամենայն պաղատն, եւ արձակեաց անդրէն
չնորհակալութիւն մեծ:

17 Իսկ այն զաւրն, որ ի կողմանս Այ-
րարատեան¹⁵, Եհար սրով մինչեւ ի կող-
մանս Տայոց, Վրաց եւ Ադուանից, առ զա-
ւար եւ զգերութիւն¹⁶ եւ եկն էանց ի Նախ-
ճաւան առ այն զաւր, որ մարտ եղեալ
կռուէին ընդ բերդին Նախճաւանի¹⁷:
18 Բայց սակայն ոչ կարացին առնուլ
զնա: 19 Առին զբերդն Խրամայ եւ սատա-
կէին զնոսս սրով, եւ զկանայս եւ զման-
կունս¹⁸ գերի վարեցին:

20 Իսկ որ ի կողմանս Պաղեստինաց-
ւոցն¹⁹ Հրամայեաց կազմել նաւատորմիլս

1 Պատառ. գառաւաւտն
2 Պատառ. շարժին փխ արս ժ
3 Ա Կոստանդինի
4 Երից. ի վերջոյ եւ յառաջոյ
5 Ա բազում
6 Պատառ. առաւաւտին
7 Ա չիբ գաւրավարն Հայոց

8 Բոյ. չիբ Թէոդորոս գաւրաւ իւրով եւ յարձակե-
ցաւ ի վերայ նոցա
9 Մալխ. շամբին
10 Պատառ. ի ձեռացն
11 Բոյ. Ոգոմայ փխ Ոգբայ
12 Պատառ. ընծայս
13 Ա, Միհրդ. Կոստանդին
14 Պատառ. զընդիր ընդիր
15 Պատառ. Այրարատու / Ա Արայրատան
16 Պատառ., Ա գերութիւն
17 Պատառ. Նախճաւան
18 Պատառ. զմանկախս
19 Պատառ. պաղեստինացւոց

բազումս¹ եւ եմուտ ի նաւ, եւ կալաւ գործ պատերազմի ընդ Կոստանդնուպալիս: 21 Եւ ոչ յաջողեցաւ նմա նաւամարտութիւնն. քանզի ելին ընդդէմ նորա զաւրացն բազմութիւն նաւաւք. եւ կործանեցին զնոսա ի խորս ծովուն, եւ զբազումս վանեցին հրով, եւ զբազումս փախստական արարեալ հալածեցին: 22 Բայց սակայն զարհուրեցաւ արքայն Կոստանդին. լաւ համարեցաւ տալ սակ, եւ առնել հաշտութիւն պատգամաւորաւք. ²եւ մնալ ժամանակի իւրում զի թերեւս եւ Աստուծոյ հաշտութեամբ հայեցի յերկիր եւ ողորմեցի նոցա: 23 Եւ սկսաւ խաւսել ի հաշտութիւն պատգամաւորաւք. եւ փութացուցանէին Իսմայելացիք զՅոյնս³, զի կատարեսցեն⁴ զբան հաշտութեանն: 24 Իսկ թագաւորն Յունաց Կոստանդին, քանզի մանուկ էր, ոչ իշխեաց կատարել առանց կամաց զաւրուն, եւ գրէ առ Պոռկոպ⁵, զի երթիցէ⁶ ընդ նմա ի Դամասկոս առ Մաւրիաս իշխանն զաւրուն Իսմայելի, եւ կատարեսցէ զպայման հաշտութեան ըստ զաւրուն կամացն: 25 Արդ՝ իբրեւ ետես Պոռկոպ զհրամանն⁷ արքունի եւ լուաւ բանս ի զաւրացն՝ գնաց զհետ նոցա ի Դամասկոս առ Մաւրիաս իշխան զաւրուն Իսմայելի. եւ յայտնեաց ⁸զչափ սակին եւ ասաց զսահմանն, եւ առ զհաշտութիւնն⁹ եւ գնաց:

26 Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթողիկոսն¹⁰ Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորում, ասեն, ընդ առաջ եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: 27 Շինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երեւեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն: 28 Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք եւ չքնաղ զարմանալեաւք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: 29 Ած ջուր եւ եբեր զգետոյն եւ արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս եւ ծառատունկս, եւ շուրջանակի պատուարեաց զբնակութեամբն գեղեցկադիր յաւրինուածով բարձր պարսպաւ ի փառս Աստուծոյ:

30 Այլ ոչ դադարեաց վիշապն այն ապստամբ, այլ թէ եւ աստուածամարտ լինել կամեցաւ յիւրոց խորամանկութենէ. այլ երկնէր յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեացն Հայաստանեայց աշխարհին: 31 Քանզի յամս Կոստանդինայ թագաւորի թոռին Երակլի արկ ի գործ զխորամանկութիւն իւրոյ չարութեանն, արբանեակս իւր կալաւ ¹¹զգաւրս Յունաց որ ի Հայաստան աշխարհին: 32 Քանզի ո՛չ երբէք ընդունէին Հայք ¹²զՀոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ եւ արեան տեառն: 33 Եւ արդ՝ գրեն նոքա ամբաստանութիւն առ թագաւորն Յունաց Կոստանդին եւ հայրապետն, թէ «Իբրեւ զանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ: 34 Քանզի անարգանս համարին Քրիստո-

1 Պատառ. նաւատորմեղս բազումս / Ա նաւատորմիղս բազում / ՏՏ նաւատորմիղս բազում
 2 Ձ չի՛ք եւ մնալ ժամանակի իւրում զի թերեւս եւ Աստուծոյ հաշտութեամբ հայեցի յերկիր եւ ողորմեցի նոցա: եւ սկսաւ խաւսել ի հաշտութիւն պատգամաւորաւք
 3 Պատառ. գոյնսն / Ա գոյն
 4 Պատառ. կատարեսցին
 5 Ա պոռկոպ / Երից. Պոռկոպ
 6 Պատառ. երթիցի
 7 Պատառ. զհրամանսն
 8 Պատառ. զսահման եւ ասաց զչափն սակի փխ զչափ սակին եւ ասաց զսահմանն
 9 Պատառ. զհաշտութիւն

10 Պատառ., Ա կաթողիկոսն
 11 ՀԱԲԳԵ, Միհրդ., Պատկ. զգաւրսն որ ի Յունաց աշխարհին փխ զգաւրս Յունաց որ ի Հայաստան աշխարհին / Դ գգորսն աշխարհին որ ի Յունաց աշխարհէն
 12 Ա զհոռովմի հաղորդութիւն փխ զՀոռոմն ի հաղորդութիւն / Միհրդ., Պատկ. զՀոռոմի հաղորդութիւն

սի Աստուծոյ գժողովն Քաղկեդոնի եւ զտուժարն Լեւոնի¹, եւ նզովեն զնոսա»:
 35 Յայնժամ հրաման ետ թագաւորն հայ-
 րապետաւն հանդերձ, եւ գրեն հրովար-
 տակ առ Հայս, զի միաբանութիւն հաւա-
 տոյ արասցեն ընդ Հոռոմի, զի մի՛ խոտե-
 ցեն գժողովն եւ զտուժարն զայն: 36 Եւ
 էր անդ այր մի ²ի Բագրեւանդ գաւառէ, ի
 Բագաւան գեղջէ, որ էր ուսեալ զարուեստ³
 փիլիսոփայութեան, եւ անուն նորա Դա-
 ւիթ: 37 Ձնա հրամայեաց արձակել ի
 Հայս, զի երթեալ ի բաց հատցեն⁴ զհակա-
 ոակութիւնն: 38 Եւ ժողովեցան ամենայն
 եպիսկոպոսունքն⁵ եւ նախարարքն Հայոց
 ի Դուին⁶ առ քրիստոսասէր կաթողիկոսն
 Ներսէս եւ առ բարեպաշտ զաւրավարն
 Հայոց Թէոդորոս Ռշտունեաց տէրն: 39 Եւ
 տեսին զհրամանս թագաւորին, եւ լուան
 զբանս փիլիսոփային, որ ուսուցանէր զեր-
 րորդութիւնն բաժանմամբ ըստ տուժարին
 Լեւոնի: 40 Եւ իբրեւ լուան՝ չառին յանձն
 փոխել զճշմարիտ վարդապետութիւնն
 սրբոյն Գրիգորի՝ ըստ տուժարին Լեւոնի:
 41 Հաճոյ թուեցաւ ամենեցուն առնել
 թղթոյն պատասխանի:

ԳԼՈՒԽ ԽԶ

1 ⁷Պատնէն պատասխանի թղթոյն ե-
 կելոյ ի Հայս ի Հոռոմոց թագաւորէն
 Կոստանդինայ, զոր գրեցին Հայոց
 եպիսկոպոսունքն եւ կաթողիկոսն⁸
 Ներսէս հանդերձ նախարարաւքն եւ

զաւրավարաւն⁹ Թէոդորոսի
 Ռշտունեաց տեառն:

2 ^ճճշմարիտ եւ ուղղադաւան նամակ
 Նիկիական:

3 Աղաչեմ զքեզ, ընթերցի՛ր՝ որ
 զքրիստոնէական հաւատն ունիս, աս-
 տուածասէր:

4 Հոգիւնկալ մարգարէիցն եւ յառա-
 քելոցն Քրիստոսի ունիմք զպատուէր՝ առ-
 նել աղաւթս խնդրուածովք ի վերայ աս-
 տուածասէր թագաւորութեանդ եւ ամե-
 նայն իշխանացն եւ զաւրաց, եւ բոլորովին
 ամենայն աստուածապահ պաղատոյդ¹⁰,
 յոր սէրն Աստուծոյ հանգուցեալ է, եւ
 շնորհք¹¹ աստուածային պարգեւացն
 յայտնի են ի վերայ ձեր:

5 Ձի ահա թագաւորութիւն մեծ եւ
 հզաւր քան զամենայն թագաւորութիւնս,
 որ ոչ ձեռամբ¹² մարդկան, այլ Աստուծոյ
 աջովն պսակեալ, զոր ոչ ոք կարասցէ փո-
 խանորդել՝ բայց Քրիստոսի թագաւորու-
 թիւն: 6 Նոյնպէս եւ քահանայապետու-
 թիւն սուրբ՝ շնորհիւն Աստուծոյ, նախա-
 րարք եւ զաւրք քրիստոսասէրք: 7 Եւ մեր
 պանծացեալ ի լոյս աստուածասէր թագա-
 ւորութեանդ՝ անշարժ մնացաք ի մէջ չար
 եւ անաւրէն թագաւորացն Պարսից: 8 Ձի
 յորժամ բարձին զթագաւորութիւնն եւ կո-
 ռուսին զամենայն զաւրս աշխարհին Հա-
 յաստանեայց¹³, եւ ի գերութիւն վարեցին
 զարս եւ զկանայս, իսկ ի մնացելոցն վե-
 րայ սուր եղեալ եւ շողացուցեալ՝ ջանա-
 ցան դարձուցանել ի մոլորութիւն, այլ ոչ
 կարացին շարժել, նաեւ ամաչեցին եւս ա-
 նաւրէնք յունայնութեան իւրեանց¹⁴:

9 Մինչեւ հրաման տալ Կաւատայ արքա-

1 Բ Լուսնի փիւ Լեւոնի
 2 ՁԶ, Միհրդ., Պատկ. ի Բագրաւան գեղջէ փիւ ի
 Բագրեւանդ գաւառէ, ի Բագաւան գեղջէ
 3 Ա զարուեստն
 4 Պատկ. հատցէ
 5 Ա եպիսկոպոսունքն
 6 Ա Դըլին
 7 Վերնագիրը ձեռագրինն է:
 8 Ա կաթողիկոսն

9 ՁԶ, Միհրդ., Պատկ. զաւրավարին
 10 Ա պաղատոյդ
 11 Ա շնորհս
 12 Բոյ. զոր ոչ ձեռին
 13 Ա հայաստանեաց
 14 Ս ...դ. ԻԳ 4

յի եւ որդւոյ նորին խոսրովու, եթէ «Իւրաքանչիւր ոք զիւր հաւատս կալցի¹, եւ զՀայս նեղել ոք մի՛ իշխեսցէ. ամենեքին մեր ծառայք են, մարմնով մեզ ծառայեսցեն², իսկ վասն հոգւոցն³, որ ⁴զհոգիսն դատի՛ նա գիտէ»։ 10 Ապա դարձեալ խոսրով Որմզդի՛ յետ գերութեանն Երուսաղէմի, հրաման ետ ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արեւելից⁵ եւ Ասորեստանի ժողովել ի դուռն արքունի եւ ասէ. «Լսեմ եթէ երկու կողմանք են քրիստոնէիցն, եւ մին զմիւսն ⁶նզովէ. վասն զի չհամարին իրաւացի։ 11 Արդ՝ միաբանութեամբ ժողովեսցին ի դուռն արքունի, զի զուղիղն հաստատեսցեն եւ զթիւրն ի բաց մերժեսցեն»։ 12 Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոսունք եւ երիցունք եւ ամենայն հաւատացեալք կողմանցն այնոցիկ. եւ կացոյց ի վերայ նոցա ոստիկանս⁷ զՍմբատ Բագրատունի, զանուանեալն խոսրովայ Շընումն, եւ զբժշկապետն արքունի։ 13 Եւ անդ էր ի գերութեանն եւ Զաքարիաս հայրապետն Երուսաղէմի եւ այլ բազում իմաստասէրք, ⁸զորս գերեալ էր Աղեքսանդրացւոց⁹ քաղաքէն. որոց հրաման ետ արքայ խոսրով՝ արդարութեամբ ի վերայ հասանել, եւ զճշմարիտն ծանուցանել արքայի։

14 Եւ ժողովեցան ամենեքեան ի դահլիճն արքունի, եւ եղեւ աղաղակ. քանզի էին ոմանք ¹⁰ուղղափառութեան հաւատով, եւ գրով եւ կնքով հին թագաւորացն։

15 Եւ այլ նեստորականք, եւ ¹¹այլ բազում խառնիճաղանճ աղանդոցն¹²։ 16 Նաեւ հրէապետն¹³, իսկ յառաջ մատուցեալ ասէր. «Մի՛ կոչեսցի Աստուած այրն այն»։ 17 Եւ ծանուցին զբանս թագաւորին։

18 Պատասխանի ետ թագաւորն եւ ասէ. «Ո՞ր հրամանաւ եկն նա ի տեղին յայն. արդ գանալից լիցի եւ գնասցէ»։ 19 Նոյնպէս եւ այլ բազմութիւն աղանդոց հրամայեաց հանել յատենէն. բայց միայն զՆիկիականն եւ զԿոստանդնուպաւսին եւ զԵփեսոսին եւ զՔաղկեդոնին հրամայեաց քննել։

20 Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոսք¹⁴ յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս¹⁵ վասն բռնութեան աշխարհին էին արձակեալ, զի ծանուցեն¹⁶ թագաւորին, Կուժիտաս Մամիկոնէից եպիսկոպոս եւ Մատթէոս¹⁷ Ամատունեաց։ 21 Ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի։ 22 Եւ հրամայեաց թագաւորն հարցանել, եթէ «Յորո՞ց թագաւորաց ժամանակս եղեն ժողովքդ այդոքիկ»։ 23 Եւ նոքա ասացին, եթէ «Նիկիոյ¹⁸ ժողովն առ Կոստանդիանոսիւ եղեւ, իսկ Կոստանդնուպաւսին¹⁹ առ Թէոդոսիւ Մեծիւ, եւ Եփեսոսին առ Փոքր Թէոդոսիւ, եւ Քաղկեդոնին առ Մարկիանոսիւ»։ 24 Պատասխանի ետ թագաւորն եւ ասէ. «Երից թագաւորաց հրամանքն ճշմարիտ թուի լինել՝ քան միոյն» Եւ ի վերայ հասեալ թագաւորն եւ վասն նեստո-

1 Միհրդ., Պատկ. կալցէ
 2 ՁՁ, Միհրդ., Պատկ. չի՛ մեզ ծառայեսցեն
 3 Ա հոգոցն
 4 Միհրդ. գոգիսն դատէ / Պատկ. գոգիսն դատէ
 5 Ա յարեւելից
 6 ՁՁ, Միհրդ., Պատկ. նզովէ զինչ համարին
 7 ՁՁ, Միհրդ., Պատկ. ոստիկան
 8 ՁՁ, Միհրդ., Պատկ. գորս եւ գերեալ էր
 9 Ա յԱղէկսանդրացւոց
 10 ՁՁ, Միհրդ., Պատկ. ուղղափառ հաւատով՝ գրով

11 Ա այլ բազում
 12 ՁՁ, Միհրդ., Պատկ. ժողովրդոց փխ աղանդոցն / Մալխ. աղանդոյն
 13 ՁՁ հայրապետն փխ հրեապետն
 14 Միհրդ., Պատկ. եպիսկոպոս
 15 ՁՁ, Միհրդ., Պատկ. գոր փխ գորս
 16 Ա ծանուցանեն
 17 Ա Մաթէոս
 18 Ա Նիկիայ
 19 Ա Կոստանդիանուպոլիս

ըի, թէ ո՛ր, կամ ուստի՛, կամ յորո՛ւմ ժողո՜վի, եւ թէ՛ զի՛նչ խաւսեցաւ, եւ հրամայեաց զՆեստորականսն¹ հանել յատենէն անտի արտաքս: 25 Նոյնպէս եւ վասն Քաղկեդոնի ժողովոյն հարց, եթէ «ո՞րք² էի՛ն գլխաւորք»: եւ ծանուցին նմա զամենայն եւ ասացին, եթէ ինքեանք իսկ ի Նիկիայ եւ Կոստանդնուպաւսի թագաւորքն Կոստանդիանոս եւ Թէոդոս Մեծն, իսկ յԵփեսոս³ Կիւրեղ Աղէքսանդրու եպիսկոպոսն. եւ ի Քաղկեդոնի՝ Թէոդորեոս⁴ եպիսկոպոսն, որ զՆեստորին խորհէր»:

26 Էր անդ Երան⁵ անուանեալ կաթողիկոսն⁶, եւ այլ եպիսկոպոսունք յԱսորեստանէ եւ յԱրուստտանէ եւ ի Խուստտանէ, եւ յայլոց աշխարհաց. վասն որոյ հրաման ետ արքայ Խոսրով քանդել զամենեցունց նոցա զեկեղեցիսն եւ սրով սատակել զնոսա, թէ ո՛չ դարձցին ի մոլորութենէն եւ ելանիցեն⁷ յարքայական պողոտայն:

27 Իսկ որք զՔաղկեդոնին զՎիրոյ⁸ զԱղուանից կաթողիկոսն, եւ այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, եւ իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին, որով եւ զփայքարն⁹ իսկ հրամայեաց տալ. բայց խնդրեաց յետկար¹⁰ ի կողմանցն երկոցունց, զՆիկիայն՝ որ առ Կոստանդիանոսիւ, եւ զԿոստանդնուպաւսին¹¹ որ առ Մեծն Թէոդոսիւ, եւ զԵփեսոսին՝ որ առ Փոքր Թէոդոսիւ, եւ զՔաղկեդոնին՝ որ առ Մարկիանոսիւ, եւ

զամենայն քննել եւ ի վերայ հասանել: 28 Եւ իբրեւ ծանեալ¹² զամենայն հաւատեալ, եւ ճշմարտութեամբ ի վերայ եհաս՝ եհարց ցնոսա եւ ասէ. «Նոքա երեքին ընդէ՞ր ոչ ասացին երկուս բնութիւնս բաժանմամբ որպէս զսոսայս. յայտ է եթէ պարտ է եւ զմեզ յերկուս բաժանել եւ երկուս ասել թագաւորս, եւ ոչ մի: 29 Զի եւ ես յերկուց բնութեանց եմ, թէպէտ ի հաւրէ եւ ի մաւրէ թէպէտ ի հոգւոյ եւ ի մարմնոյ: 30 Բայց աստուածութիւնն,¹³ թէ յամենայն տեղւոջ ոչ է, եւ զի՛նչ կամի զամենայն լինել կամ առնել ո՛չ կարէ, աստուածութիւնն զի՞նչ է»:

31 Ապա հրամայեաց հարցանել զԶաքարիաս հայրապետն Երուսաղէմի եւ զիմաստասէրն¹⁴, որ յԱղէքսանդրացւոց քաղաքէն, զի զարդարն ասացեն երդմամբ: 32 Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. «Եթէ ոչ էաք մեք խոտորնակա զնացեալ առ Աստուծոյ՝ եւ ոչ նա բարկութեամբ խոտորնակա զնացեալ էր առ մեզ. բայց արդ՝ երկուցեալ յԱստուծոյ՝ առաջի ձեր զճմարիտն ասեմք: 33 Հաւատ ճշմարիտայն է՝ զոր ի Նիկիայն ասացին առ երանելոյն Կոստանդիանոսիւ: 34 Եւ նմին միաբան Կոստանդնուպաւսին եւ Եփեսոսին. եւ նոցին միաբան Հայոց հաւատն ճշմարտութեամբ: 35 Իսկ Քաղկեդոնի ասացեալն ոչ է միաբան նոցին, որպէս ձեր բարերարութիւնդ ծանեալ»:

36 Եւ հրաման տուեալ թագաւորն խնդիր առնել¹⁵ ի գանձու տեղւոյն, եւ գտին գրեալ զՆիկիայն հաւատս ճշմարիտս, եւ ի վերայ հասեալ ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեալ Կաւատայ արքայի եւ

1 Ա զնեստորայեանքն / Միհրդ., Պատկ. զնեստորեանքն
 2 Ա չիք ոյք
 3 Միհրդ., Պատկ. Եփեսոս
 4 Ա Թեոդորիտոս
 5 Ա, Երից., Միհրդ. չիք Երան
 6 Ա կաթողիկոսն
 7 Միհրդ., Պատկ. Ելանիցին
 8 Ա զվիրոյ / Երից., Միհրդ., Պատկ. զվրաց փյ զվիրոյ
 9 ԶԶ, Միհրդ., Պատկ. չըփայքարն
 10 Ա, Երից. յետիկար
 11 Ա զԿոստանդնի պոլսին (նաեւ յետոյ)

12 Ա հաւատեալ զամենայն
 13 Մայլս. որ յամենայն տեղւոջ է փխ թէ յամենայն տեղւոջ ոչ է
 14 Ա ցիմաստասէրն
 15 Աստղիկ ի գանձու արքային փխ ի գանձու տեղւոյն

որդւոյ նորա խոսրովու: 37 Յորոյ վերայ հրաման ետ արքայ խոսրով, եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին: 38 Եւ որք միաբանին ընդ Հայոց հաւատոյն ի կողմանս Ասորեստանեայց, Կամյիշով մետրապոլիտ, եւ այլք տասն եպիսկոպոս. եւ աստուածասէր թագուհին Շիրին, եւ քաջն Սմբատ. եւ բժշկապետն մեծ: 39 Իսկ զպատճէն ուղիղ խոստովանութեանն արքայ խոսրով հրամայեաց կնքել իւրով մատանեաւն եւ տալ ի գանձս արքունի:

40 Իսկ արդ՝ զի եհան զմեզ Աստուած ի ծառայութենէ խաւարային իշխանութեանն եւ արժանի արար երկնաքաղաքացի թագաւորութեանդ, ո՞րչափ եւս առաւել չքան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան, որ եւ պարտիմք խնդրել ի Քրիստոսէ Աստուծոյ վասն բարեպաշտ եւ աստուածասէր թագաւորութեանդ՝ անշարժ մնալ մինչեւ յաւիտեանն, իբրեւ զաւուրս երկնից ի վերայ երկրի հանդերձ յաղթութեամբդ բազմաւ, տիրելով ամենայն տիեզերաց, ծովու եւ ցամաքի, որ թէպէտ եւ մարմնով էք ի մարդկային յազգէ, այլ ունիք զտեղիք աստուածային ասթոռոյն. եւ լոյս փառաց աստուածասէր թագաւորութեանդ լցեալ ունի զառ ի ներքոյս ամենայն, պսակեալդ յերկնուստ, պարծանքդ ամենայն քրիստոնէից զաւրութեամբ աստուածային խաչին նշանաւն, նմանեալդ աստուածասէր, աստուածապաշտ, աստուածաշնորհ, քաջ եւ յաղթող փրկութենագործ երջանիկն Երակլի հաւուեն² քոյ, որ փրկեացն զամենայն երկիր ի դառն դահճէն: 41 Եւ այժմ զնոյն շնորհեսցէ Քրիստոս Աստուած ի ձեռն բարեպաշտութեան քոյ:

1 ՁՁ, Միհրդ., Պատկ. չի՛ք քան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան, որ եւ
2 Բոլ. հաւրն (հօր) փիս հաւուեն

42 Եւ որ վասն միաբանութեան հաւատոյ խնդիր հրամայեալ էր առնել, եւ զգիր բարեպաշտութեան խոստովանութեան արձակեալ էր առ մեզ անարժան ծառայոս, զոր իբրեւ տեսաք՝ երկրպագութիւն մատուցաք, եւ մեծաւ խնդութեամբ փառաւորեցաք զՔրիստոս, եւ աւրհնեցաք զբարերարութիւնն: 43 Եւ արդ՝ այսպէս ուսաք զհաւատոցն ճշմարտութիւն: 44 Յովհաննէս աւետարանիչն ասէ. Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն⁴: 45 Եւ նոյն դարձեալ ի Կաթողիկէին³ իւրում ասէ. Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուսնն, որում աւկանատես իսկ եղաք, ընդ որ հայեցաք, եւ ձեռք մեր շաւշափեցիմ ի վերայ Բանին կեցնաց⁵: 46 Ահա մարմին եղիւ բանն⁶. եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտեանական կեցնացն՝ որ էր առ Հաւր, եւ երեսեցաւ մեզ⁷: 47 Եւ նոյն Յովհաննէս ասէ յաւետարանին թէ ՁԱստուած ուրում չի՛ք տեսեալ⁸: 48 Եւ Պաւղոս ասէ. Զոր ոչ ոք ետես ի մարդկանէ, եւ ոչ տեսանել կարող է՝: 49 Իսկ զիս⁹ րդ ասէ, եթէ Ակնատես իսկ եղաք, եւ եթէ՝ Ընդ որ հայեցաք եւ ձեռք մեր շաւշափեցիմ ի վերայ Բանին կեցնաց, եւ եթէ՝ Որ էրն առ Հաւր, եւ երեսեցաւ մեզ¹⁰: 50 Այն կարի ահագին, որպէս պարտ իսկ է՝ ըստ աստուածութեանն. եւ այս կարի խոնարհագոյն եւ մարդասիրաբար՝ ըստ մարդկային բնութեանս: 51 Բայց յայտ իսկ է. զի զմարմնանալն Աստուծոյ պատմէ, որպէս տէրունականն պատմէ բան, եթէ Որ ետես զիս՝

4 Յ՝ՎԸ՝ Ը 1
3 Ա կաթողիկէիմ
4 Ը Յ՝ՎԸ՝ Ը 1
5 Յ՝ՎԸ՝ Ը 14
6 Ը Յ՝ՎԸ՝ Ը 2
7 Ը Յ՝ՎԸ՝ Գ 12
8 Ը ՏԻ՛. Գ 16
9 Ը Յ՝ՎԸ՝ Ը 1
10 Ը Յ՝ՎԸ՝ Ը 2

ետես գՀայր^ա: 52 «Ջիս»¹ ասաց. որպէս
 գմի, եւ ոչ «գմեզ», որպէս գերկուս:
 53 Անդ գաստուածութենէն միայն ասէ Որ
 միայն ունի գանմահութիւն բնակեալ ի լոյս
 ահեղ եւ անմատոյց^բ, շիսկ աստ՝ գմարդ-
 կութենէն եւ գաստուածութենէն, զի ան-
 տեսանելին ոչ երեւէր, այլ ի տեսանելումն
 տեսանէին զանտեսանելին. զի ի տեսանե-
 լումն՝ հայրենի բնութիւնն աստուածային
 եւ մայրենի բնութիւնն մարդկային:
 54 Ջի հայրենի բնութիւնն Յի մարդկային
 բնութիւնն միացաւ անփոփոխելի միու-
 թեամբ: 55 Եւ ծնաւ մի տեսակ – Աս-

Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա⁶: 71 Եւ դարձեալ՝ եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեաւ զՏէրն փառաց ի խաչ հանէին⁷: 72 Եւ դարձեալ՝ եթէ Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց՝ եւ վասն մեղաց. եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ⁸: 73 Զի՞նչ իցէ «դատապարտեացն». այն է, զի խափանեաց զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն զսատանայ: 74 Իսկ զի՞նչ եւ առ մշակս այգւոյն ասիցէ Տէրն, եթէ Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյն՝ առաքեաց զծառայս իւր առ մշակս² առնուլ զպտուղ նորա. եւ կալեալ մշակացն զծառայս նորա՝ զոմանս տանջեցին, զոմանս քարկոծեցին, զոմանս սպանին. յետոյ առաքեաց զորդի իւր՝ ասէ. թերես ամաչեսցեն յորդոյ աստի իմմէ³: 75 Իսկ մշակն իբրեւ տեսին զորդին՝ ասեն. սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, եւ մեր եղիցի ժառանգութիւնն⁴: 76 Եւ հանել զնա արտաքոյ այգւոյն սպանին⁵: 77 Արդ՝ ոչ միայն բանն է Որդի Աստուծոյ, այլ եւ բանն մարմինն. եւ մարմին բանին ի միասին. զի թէպէտ եւ մարդ է մարմինն, այլ եւ Աստուած է: 78 Արդ՝ որք ի սկզբանէ ականատեսք եւ սպասուորք եղեն Բանին՝ աշակերտաց իւրոց յայտնապէս ուսուցին: 79 Եւ նոքա դարձեալ իւրեանց աշակերտաց զնոյն աւանդեցին, եւ դարձեալ զնոյն աւանդութիւն գրով հաստատեցին: 80 Եւ բազումք յառաքելոցն ընկալան զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան, որպէս զՅովսէփիանոս եւ զԵնանկլիտոս եւ զԿղեմենտոս ի Հռոմ, եւ զԱնա-

նիաս յԱղեքսանդրիա, եւ զՇմաւոն Կղէովպեանց յԵրուսաղէմ, զԴիոնէսիոս Արիսպագացի յԱթէնս եւ զմիւս Դիոնէսիոս⁵ ի Կորնթոս, եւ զմիւս Տիմոթէոս յԵփեսոս եւ զՏիտոս ի Կրետէս, եւ զՊաւղիկարպոս ի Զմիւռնիա⁶ Ասիացւոց, եւ զԵւոզիա⁷, որ է Պետրոս՝ յԱնտիոք, եւ Երենիոս Գալիլեացի աշակերտ Պաւղիկարպոսի յեկեղեցւոջն Լաւողիկեցւոց⁸: 81 Եւ այլ եւս անթիւ բազմութիւն սքանչելի եպիսկոպոսաց եւ քահանայից եւ հոգեկիր ճարտասանից, փիլիսոփայից եւ սքանչելի մանկանց եկեղեցւոյ, որք զճշմարիտ հաւատս եկեղեցւոյ ըստ առաքելական ձայնին գրով գրողմեցին յիւրաքանչիւր եկեղեցիս:

82 Յայտնի ի Նիկիական ժողովոյն է, զի եւ նոքա լիով էին ամենեքին աշակերտք, որք յառաքելոցն ընկալան, եւ ի Նիկիայ զնոյն հաստատեցին: 83 Քանզի ասացին զՈրդւոյ, եթէ «Նոյն բնութիւն Հաւր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի. որ յաղագս մեր մարդացաւ եւ յաղագս մերոյ փրկութեան»: 84 Այսպէս եւ սուրբն Գրիգոր յառաջնոցն ուսեալ՝ մեզ վարդապետեաց, եթէ «Որ ի մարմինն հաւատացին՝ ծանոյց նոցա զաստուածութիւնն իւր. եւ որք ի մարմնոյն զթեցին՝ ուրացան զբնութիւն նորա: 85 Քանզի մարմնացաւ ի մի բնութիւն, եւ խառնեաց միացոյց զմարդկութիւնս ընդ իւրում աստուածութեանն, զանմահն ընդ մեռելոտւոյս⁹, զի զամենայն մարդիկ անքակ արասցէ յանմահ աստուածութենէ իւրմէ»: 86 Արդ ունիմք մեք հաւատս ոչ ի նորագունից սահմանեալ, այլ որպէս ընկալաք մեք ի սուրբ առաքելոցն ի ձեռն հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի,

6 Լուսն. Բ՝ 32
 7 Լուսն. Բ՝ 8
 1 Միհրդ., Պատկ. վասն մեղաց (աշխարհի)
 2 Լուսն. Բ՝ 3
 3 Բող. չիք առ մշակս
 4 Ա իմէ
 5 Ա ժառանգութիւնն
 6 Մատթ. ԻԼ 34-39

5 Մալխ. զմեւս եւս Դիոնէսիոս
 6 Ա ի զըմփուեայ
 7 Ա զԵսդեայ փիլ զԵւոզիա
 8 Դ լաւորիկեցւոց
 9 Ա ընդ մեռոտսս / 4 մեռելոտս

վարդապետելով զՏրդատ արքայ եւ զիշխանսն¹ Հայոց աշխարհին, գողցես եթէ Լամաւք յառաջ քան զԿոստանդիանոս: 87 Նաեւ սուրբն Ղեւոնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու, ուր սնեալ եւ ուսեալ էր սուրբ Գրիգորիոս, որ եւ ձեռնադրեացն իսկ զնա ի քահանայապետութիւն, եւ նա զնոյն Հաստատեաց զաւանդութիւն: 88 Երկրորդ անգամ դարձեալ ի Նիկիայն ժողովեցան սուրբ եւ ճշմարիտ Հարքն Հրամանաւ աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի, եւ ի բաց բարձին² դամբարիչտ աղանդոյն մոլեգնութիւնն, եւ սերմանեցին Հաւատս ճշմարիտս ընդ ամենայն տիեզերս: 89 Ուստի եւ մերն Հանդիպեալ անդ սուրբն Ռատակէս³ որդի սրբոյ Գրիգորի, որ ընկալաւ զհրամանս Հաւատոյ ի սուրբ ժողովոյն եւ ի մեծ թագաւորէն Կոստանդիանոսէ, բերեալ մատոյց առաջի քրիստոսասէր թագաւորին Տրդատայ եւ սուրբ քահանայապետին Գրիգորի Հանդերձ Հրամանաւք երջանիկն Կոստանդիանոսի: 90 Եւ ի վերայ այնորիկ Հաստատեալ կամք, եւ բաւական Համարիմք զնոյնս ի վարդապետութիւն ուղիղ Հաւատոյս ըստ ասացելումն. «Մի՛ փոփոխեր զսահմանս Հաւատոյ՝ զոր Հաստատեցին Հարքն քոյ»:

91 Եւ դարձեալ երրորդ⁴ անգամ յորժամ Հանդերձեցաւ թագաւորն Տրդատ, եւ առ ընդ իւր զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս եւ զնորին որդին զՌատակէս եպիսկոպոս, եւ ի զինուորական կողմանէն զչորեսին գահերէցս իւրոյ տաճարին, եւ Հանդերձ⁵ Հազար արանց ընտրելոց գլխաւորաց յամենայն սահմանացն իւրոց՝ զնաց ի

Հոռոմ տեսանել զԿոստանդիանոս:⁶ 92 Որ իբրեւ տեսին զմիմեանս՝ առաջի կալաւ Կոստանդիանոսի զսուրբն Գրիգորիոս. եւ նա խոնարհեալ յոտս սրբոյն Գրիգորի, զի աւրհնեցի ի նմանէ: 93 Յայնժամ միջնորդ կալան զհաւատսն՝ որ ի Տէր Յիսուս Քրիստոս, եւ երգամբ միաւորեցան երկոքին թագաւորքն, անշուշտ ունելով զխաղաղութիւն ընդ միմեանս մինչեւ յաւիտեան ի մէջ թագաւորացն երկոցունց: 94 Եւ եւս Հաստատեցին առ մեզ զհաւատոցն ճշմարտութիւնն⁷, զոր Հիմնադրեաց մեզ Սուրբ Հոգին:

95 Զայլ ժողովս ուրեք լեալ մեք ոչ գիտեմք. եւ մեք այսպէս Համարիմք, եթէ այդ աստուածասէր պալատանդ յերանելոյն Կոստանդիանոսէ եւ ի ժողովոյն Նիկիոյ⁸ ունի զհաւատոցդ Հիմնադրութիւն: 96 Եւ ամենայն որ աւելի քան զայն ունի, թէ եւ յերկնից հրեշտակ իցէ՝ նզովեալ եղիցի: 97 Արդ ամենայն վարդապետք եկեղեցոյ, որք փլիխսփայական արուեստիւ գերազանցեալք եւ աստուածային տեսութեանն Հասու լեալ⁹, ճշմարիտ Հիմնադրութիւն ընկալեալ ի սուրբ առաքելոցն՝ այտի ի ձէնջ աւետարանեցին ընդ ամենայն տիեզերս: 98 Սուրբ եւ ճշմարիտ կաթողիկոսն մեր Գրիգորիոս ի Կեսարիա Կապադովկացոց սնեալ եւ ուսեալ վարդապետեաց մեզ, յոր Հիմնացեալ¹⁰ անշարժ կամք մինչեւ ցայժմ, եւ ի վերայ նորին¹¹ ունիմք վարդապետս զսուրբ Հարսն ճշմարտապատումս, որ ամենեքեան զՆիկիայն խաւսեցան – Յուստիանոս, Դիոնէսիոս եւ Բեկտովր¹² Հոռոմայ¹ եպիսկոպոսք,

1 Ա զիշխանն

2 Ա երարձ փխ բարձին

3 Ա զՌատակէս (նաեւ յետոյ)

4 Բոլ. երկրորդ փխ երրորդ

5 Ա ՀՌ հազարաց արանց

6 Միհրդ. ծանօթագրում է. «Ի միւսում օրինակին անկեալ էր թուղթ մի ի՛ տեղուջէս յայսմանէ»:

7 Միհրդ., Պատկ. զնշարտութիւնն

8 Ա Նիկիայ

9 Ա լիեալք փխ լեալ

10 Միհրդ., Պատկ. հիմնեցեալ

11 Միհրդ., Պատկ. նորա

12 Ա Բիկտովր

պոսք, եւ Դիոնէսիոս Աղեքսանդրացի, եւ Պետրոս վկայ, եւ Թէոփիլոս, եւ Աթանաս, եւ Կիւրեղ Աղեքսանդրացի եպիսկոպոս, եւ Բարսեղ Կեսարու եպիսկոպոս, եւ Գրիգոր Նազիազու, եւ Գրիգորն Նէոկեսարու սքանչելագործ, եւ Գրիգոր Նիւսացի, եղբայր Բարսղի, եւ այլ անթիւ հովիւք ուղղափառութեան՝ համաբարբառք նոցին, որոց պատմութիւնքն յայտնի են:

99 Արդ՝ զի թշնամիք աստուածաշտուութեանն բազում անգամ արշաւեալ կորուսին զերկիրս մեր. եւ որպէս զմարդիկ երկրիս² կորուսին՝ եւ ³զկտակարանս եկեղեցւոյ եւ զվարդապետս նոյնպէս սպառեցին: 100 Եւ արդ՝ կտակարանս եւ վարդապետս ոչ գոն. զգիրս եւ զգրութիւն մեք ոչ գիտեմք. բայց որչափ ինչ մնացեալ են ի տեղիս տեղիս վարդապետական⁴ պատմութիւնք՝ ուսուցանեն մեզ այսպէս ⁵զհաւատոցն ճշմարտութիւնսն, որ ի Նիկիայն աւետարանեցաւ լոյս, յորս փութով հասանէր Ռատակէս, որդի սրբոյն Գրիգորի. եւ այսպէս քարոզեցաւ ձայն սիւնհոդոսական ժողովոյն Նիկիայ. –

101 ⁶ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ

102 Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ, յարարողն երկնի եւ երկրի, երեսելեաց եւ աներելութից:

103 Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ, ծնեալ յԱստուծոյ Հաւրէ միածին, այս ինքն յեղութենէ⁷

Հաւր: 104 Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ. Աստուած նշմարիտ յԱստուծոյ

նշմարտէ, ծնեալ եւ ոչ արարեալ:

105 Նոյն բնութիւն Հաւր. որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ յերկրի երեսելիք եւ աներելոյթ: 106 Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն Սրբով: 107 Որ եւ էաո⁸ հոգի, եւ մարմին, եւ միտք, եւ ամենայն որ ինչ է ի մարդ՝ նշմարտապէս եւ ոչ կարծեալ: 108 Չարչարեալ, այսինքն խաչեալ, թաղեալ, եւ յերիւաւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս՝ նովին մարմնով ⁹նստաւ ընդ աջմէ Հաւր: 109 Գալոց է նովին մարմնովն եւ փառաւ Հաւր դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: 110 Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին յանեղ եւ ի կատարեալ, որ խաւսեցաւ յաւրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքելսն, եւ բնակեցաւ ի սուրբս: 111 Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն¹⁰ յաւիտեանից հոգւոց եւ մարմնոց, յարմարութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտեանականս:

112 Իսկ ոյք ասեն՝ Էր երբեմն յորժամ ոչ Էր Որդի, կամ Էր երբեմն յորժամ ոչ Էր Սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն¹¹, կամ յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ ասեն լինել զՈրդի Աստուծոյ կամ զՍուրբ Հոգին, կամ փոփոխելի, կամ այլայլելի՝ զայնպիսիսն նշմարեմք. զի եւ

1 Ա եպիսկոպոս կապուպետ (հաւանարար՝ եպիսկոպոսապետ)
2 Ա զմարդիկ երկիրս / Միհրդ., Պատկ. մարդիկ երկիրս
3 Ա զկտակարանս եւ զվարդապետս
4 Ա վարդապետականք
5 ՏՏ նշմարութիւնսն հաւատոց
6 ՉՉ վերնագիր չունեն:
7 Ա ի գոյութենէ փխ յեղութենէ

8 ՉՉ չիք էաո
9 ՉՉ չիք նստաւ ընդ աջմէ հաւր: Գալոց է նովին մարմնովն եւ
10 Ա ի դատաստանսն
11 Ա եղեւ

զնոսա նգոյվէ կաթուղիկէ առաքելա-
կան եկեղեցի:

113 Իսկ մեք փառաւորեսցու՛մ որ յա-
ռաջ քան զյաւիտեանս, երկիր պագա-
նելով Սրբոյ Երրորդութեանն եւ
միասնական Աստուածութեանն Հար
եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից. ա-
մէն:

.....

114 Եւ ապա կոչեցան ի Հռովմ, եւ
յանդիման եղեն Կոստանդիանոսի արքա-
յի, եւ ուսուցին նմա զհաւատս ճշմարիտս,
եւ վկայութեամբ հաստատեցին զհիմնա-
դրութիւն հաւատոյն:

115 ¹Յամի երեքտասաներորդի կենա-
րարին եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստո-
սի թագաւորէ Դիոկղետիանոս² երեք ըն-
կերաւքն թագաւորութեանն Հռովմայեց-
ւոց: 116 Եւ յարուցին³ հալածանս ի վերայ
քրիստոնէից, եւ աւերեցին զամենայն եկե-
ղեցիս յամենայն տէրութեան իւրեանց:

117 Եւ յամի եւթանասուն եւ հինգերորդի
կենացն⁴ մեռաւ Կոստանդէս, եւ թագաւո-
րեաց Կոստանդիոս որդի իւր ի Գալլիա⁵ եւ
ի Սպանիա. եւ էր քրիստոնէայ ճշմարիտ:

118 Ետ ճակատ ընդ Մաքսիմիանոսի եւ
ընդ Մաքսիմիանոսի որդւոյ նորա, եւ ընդ
Լիկիանոսի եւ ընդ Մարկիանոսի, եւ յաղ-
թեաց նոցա, եւ կոտորեաց զնոսա. քանզի
հաւատաց ի մի Աստուած տէր ամենայնի
եւ յՈրդի նորա Յիսուս Քրիստոս, եւ գի-
տաց, եթէ նա ետ նմա զյաղթութիւնն:
119 Եւ հրաման ետ քրիստոնէիցն շինել

զեկեղեցիս եւ ազատել զտեղիս՝ ուր եղեալ
էին մարտիրոսք, եւ մեծաւ պատուով մե-
ծարէր զքրիստոնէայն: 120 Եւ հրաման
ետ ամենայն եպիսկոպոսաց ժողովել ի Նի-
կիա քաղաք. եւ ժողովեցան եպիսկոպո-
սունք եւ սուրբք բազումք: 121 Եւ եղեն
անդ աւուրս ժԵ. եւ ապա եմոյժ զնոսա ի
պաղատն: 122 Եւ մինչ ժողովեալ կային
միահամուռ յոսկեաւծ պատշգամի միոջ՝ ե-
մուտ եկաց ի մէջ նոցա, եւ խոստովան ե-
ղել, եթէ «Քրիստոնէայ եմ եւ ծառայ
Տեառն Աստուծոյ ամենակալի, եւ Յիսուսի
Քրիստոսի Որդւոյ նորա սիրելւոյ»: 123 Եւ
եղել խնդիր ամենայն եպիսկոպո-
սաց վասն հաւատոյ առաջի Կոստանդիա-
նոսի արքայի. քննեցին զգիրս, եւ գրեցին
հաւատս ճշմարիտս, որ ի Նիկիայն աւե-
տարանեցաւ մեզ:

124 Արդ՝ ի Ներովնէ կայսերէ մինչեւ
յերջանիկն Կոստանդիանոս, եւ ի Կոստան-
դիանոսէ մինչեւ ի Մարկիանոս թագաւոր,
ամենայն վարդապետաց զլիսաւոր առաջ-
նորդաց եկեղեցւոյ, ի քաջէն Թէոփիլէ՛՛՛ ի
մեծ ճարտարապետէն⁶ սկսեալ, արուեստա-
ւոր քաղաքացն Եգիպտացւոց եւ Աղեք-
սանդրացւոց եւ Հռոմայեցւոց եւ Կոս-
տանդնուպալսեցւոց⁷ եւ Անտիոքացւոց
եւ Կեսարացւոց եւ Աթենացւոց եւ Կիւղի-
կեցւոց եւ միանգամայն ընդհանուր⁸ ամե-
նայն վարդապետաց եկեղեցւոյ... յաւուրս
Մարկիանոսի ի ձեռն տումարին Լեւոնի
Թէոդորիտոս գլուխ Քաղկեդոնի ժողո-
վոյն, զոր նայն հաստատեաց չարափա-
ռութեամբ⁹:

125 Եւ մեզ մի¹⁰ լիցի պարծել բայց
միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի

1 Ա, Պատկ., Մալխ. յամի ժԳ երեքտասաներորդի / երից., Գ, Միհրդ. յամի երեքտասաներորդի / Միհրդ., Պատկ. յամի (երեկերիւր ութսուն եւ չորրորդի)
2 Ա Դեոկղիտիանոս
3 ՁՁ յարուցին փխ եւ յարուցին
4 ՁՁ չի՛ կենացն
5 Ա ի Գալլիա փխ ի Գալլիա

“ Հմմտ. Գ. Կ. Ը 3:
6 երից. հայրապետէն
7 Ա Կոստանդիանու պոլսացւոց
8 Ա ընթանուր
9 Պատկ., Մալխ. չառափառութեամբ
10 Ա չի՛ մի՛

Քրիստոսի՞: 126 Նաեւ Դաւիթ իսկ պարծի ի խաչ Որդւոյ իւրոյ, եւ ոչ անարգանս Համարեցաւ աստուածութեանն. այլ երբեմն կառք Աստուծոյ ասաց Տէր, ¹եւ երբեմն լեառն Սինեայ, եւ երբեմն բարձրութիւն երկնից: 127 Քանզի ասէ. Կառք Աստուծոյ քիրապատիկի, հազարք ուղղիչք², եւ Տէր ի նոսա ի Սինէ սրբութեան: 128 Ել ի բարձունս եւ գերեաց զգերութիւնք, եւ զայլն եւս: 129 «Կառք Աստուծոյ բերապատիկք, հազար ուղղիչք, եւ Տէր ի նոսա», զի բերապատիկ է զաւրութիւն եւ փառք խաչին Քրիստոսի, որ բարձեալ ի վեր ունէր³ զԱրարիչն երկնի եւ երկրի: 130 Եւ հազարքն ի Հրէից կանգնեցին զնա: 131 «Եւ Տէր ի նոսա ի Սինէ սրբութեան»: 132 Յո՞յս⁴ արդեաւք «ի նոսա». յայտ է, ⁵եթէ ի բարձունսն, յորս ել Որդին Աստուծոյ, ի բերապատիկ զաւրութիւն եւ փառս⁶ խաչին. ուստի եւ զգերութիւնն⁷ թափեաց. եւ վասն այնորիկ մեք ոչ ամաչեմք ասել ցորդին Աստուծոյ. «⁸Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ եւ անմահ⁹, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

133 Իսկ վասն տէրունեան խորհրդեանն, զոր մեծաւ զգուշութեամբ բաշխեմք՝ այսպիսի ինչ է¹⁰. վասն զի ոչ ունիմք իշխանութիւն զսուրբն յանսուրբան մատակարարել¹¹: 134 Վասն զի ունիմք

մեք ¹²կանոնս համաշխարհականս վասն կարգաց եւ աւրինաց, արանց եւ կանանց. զի որք կուսութեամբ զուգին՝ համարձակութեամբ վայելեն ի տէրունական մարմնոյն, ըստ այնմ, թէ Պատուական է ամուսնութիւն ամենեւիմք, եւ սուրբ եւ անկողիմք: 135 Իսկ երկրորդեանքն, եւ եթէ մին կոյս իցէ, եւ միւսն երկրորդական՝ հրամայէ ապաշխարել երկոցունցն ի միասին զերեամ¹³ մի, եւ ապա հաւասարել աւրինաց: 136 Իսկ զերրորդեանսն եւ զչորրորդեանսն¹⁴ ոչ ընդունի եկեղեցի, եւ ոչ իսկ իշխեն տալ ¹⁵զանուն հաղորդութեանն. ըստ այնմ թէ Որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ. զի ոչ խորէ զմարմինն Տեառնք: 137 Եւ աստուածայինն բողոքէ ձայն՝ Մի՛ տալ զսրբութիւն¹⁶ շանցէ: 138 Նաեւ ի տախտակսն¹⁷ քարեղէնս զմի ի տասն պատգամացն զմի՛ շնարն¹⁸ իւրով մատամբն գրեաց:

139 Այլ տեսանեմք, զի եւ կարի իսկ ի հինսն եւ յառաջին փիլիսոփայսն պիղծ եւ գարշելի համարեալ էր պոռնկութիւնն: 140 Զի Սողոմնի¹⁸ Աթենացւոյ աւրէնս եղեալ¹⁹ աթենացւոցն՝ ի բաց կալ ի պոռնկութենէ եւ ոչ ընդունել զպոռնկորդին ի ժառանգութիւն: 141 Ղիկուրգոս²⁰ Ղակե-

« Հմմտ. Գաղ. Զ 14:
 1 Ա. եւ իբրեւ երբեմն լեառն
 2 Ա. ուղիղի փիս ուղղիչք
 ք Սաղմ. ԿԸ 18-19
 3 Բոյ. ունի փիս ունէր
 4 ԶԶ, Միհրդ., Պատկ. յոյս
 5 Բոյ. չիք եթէ ի բարձունսն յորս ել որդին Աստուծոյ
 6 Զ ի փառս փիս փառս
 7 Ա. զգերութիւնն փիս եւ զգերութիւնն
 8 Բոյ. չիք սուրբ աստուած, սուրբ եւ հզաւր
 9 Ա. անմահ փիս եւ անմահ
 10 Բոյ. այսպիսի ինչ փիս այսպիսի ինչ է (ձեռ. Զ)
 11 Զ մատակարարել այսպիսի հրամանով փիս մատակարարել

12 Բոյ. կանոնի համաշխարհականի կարգաց փիս կանոնս համաշխարհականս վասն կարգաց (ձեռ. Զ)
 ք Եքր. ԺԳ 4
 13 Ա. զերկեամ փիս զերեամ
 14 Ա. կամ չորրորդականսն
 15 Զ զանունն հարկանել զհաղորդութեանն
 ք Ը Կր. ԺԸ 29
 16 Ա. զսրբութիւնս
 է Մաք. Լ 6
 17 Ա. ի տախտակն
 ք ԼԸ Ի 14
 18 Ա. Սողոմոնի փիս Սողոմնի
 19 Ա. եղ փիս եղեալ
 20 ԶԶ զի կուրդոս / երից. զի կուրդոսը ջնջել զարձրել է Լիկուրդոս

դովմայեցի¹ աւրէնս եղ զակեղովմացւոց՝ ի բաց կալ ի պոռնկութենէ, եւ ոչ թաղել իսկ զպոռնկորդին:

142 Զթէանով² ոմն զկին մարդ զաշակերտ Պիլթագորայ հարցեալ եղեւ, թէ յետ քանի՛ աւուր մերձաւորութեանն ի կին մարդ արժան է յարքունիս մտանել: 143 Եւ նա ասէ. «յիւրմէն նոյն աւրին³. յաւտարէն եւ ոչ բնաւ»:

144 Իսկ եթէ նոցա այնպէս զողջախոհ-հոլթիւնն⁴ համբուրեալ, ո՞րչափ եւս առաւել երկիրդիւ արժան իցէ եւ մեզ զառաքելականն կատարել զձայն, եթէ Փախերո՛ւֆ ի պոռնկութեանն⁵. զի թէպէտ եւ ոչ ոք է արդար եւ ոչ մի⁶, այլ ոչ եթէ պարտ իցէ ի ձեռն յանդգնութեան զաստուածային զմարմինն թշնամանել: 145 Զի՞ պիղծն մերձեցի բերան, կամ ⁵զիա՞րդ դողումն ոչ կալցի զճաշակողն՝ ի հուրն կենդանի աներկիրաբար մերձենալ, ⁶զոր ոչ սերովբէն իսկ ձեռաւքն համարձակէր մերձենալ, այլ ունելեաւք, եւ ոչ մարգարէն արժանաւոր լինէր ճաշակել զնա, այլ միայն մերձենալով ի շրթունս նորա անդէմ ընկալաւ զմաքրութիւնն⁷:

146 Իսկ արդ՝ արժա՞ն իցէ անսրբոցն եւ պղծոցն յերկրաւորացս յանդգնել յարքունիս: 147 Եւ կամ ո՞չ իսկ թոյլ տացէ մտանել, եւ կամ թէ ո՞չ հալածականս փախիցէ. այլ մանաւանդ եթէ եւ կամեսցի եւս յարքունական սեղանոյն վայելել:

148 Ո՞րչափ եւս առաւել յերկնաւոր թագաւորին յարքունիս ունիցի ոք համարձակութիւն մտանել՝ ոչ ունելով ⁷զհանդերձ մաքրութեան, եւ աներկիր լրբութեամբ մատիցէ ի հուրն կենդանի, եւ ճաշակեսցէ յարքունական եւ յերկնային սեղանոյն, այլ ոչ տարահալած լեալ արտաքս մերժեսցի, ըստ այնմ, թէ Ի բաց կացե՛լ յինէն ամենեմբեան՝ ոյ՛ք գործե՛ք զանարեւնութիւնն⁸:

149 Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ եւ յաստուածասէր թագաւորացն՝ ի Կոստանդիանոսէ⁸ եւ ի Տրդատայ, եւ յետ այնորիկ ապա կարգեցաւ մեզ Նիկիական լոյսն ի ձեռն նորին իսկ երջանիկն Կոստանդիանոսի, եւ ի նորին աւանդութեան վերայ հաստատեալ կամք, եւ ոչ խոտորիմք ի նմանէ ո՛չ յաջ եւ ոչ յահեակ:

150 Եւ վասն այլ ժողովոց, որպէս եւ վերագոյն ասացաք՝ ճշմարտիւ ինչ մեք ոչ գիտեմք, բայց որպէս հին վարդապետացն ասացեալ է՝ սուրբ եւ ճշմարիտ ասացեալ է զժողովն որ ի Կոստանդնուպաւլիս ժողովեցան ի խափանումն Նեստորի:

151 ԶՔաղկեդոնի ժողովն չասացին ճշմարիտ. քանզի ասացին՝ առաջնորդք ժողովոյն այնորիկ որ յեփեսոս՝ զմիտսն Նեստորի ունէին, բայց ոչ իշխէին ի վեր հանել: 152 Եւ թէպէտ եւ արարին զժողովն Եւտիքի ամբարշտութեանն՝ նման նորին այլանդակութեանն՝ զիւրեանց հաստատեցին չարափառութիւն. քանզի Եւտիքոսն այն վրիպեալ ասէր, թէ «Յերկնից եբեր Քրիստոս զմարմինն». իսկ նոքա զմի Քրիստոսն յետ միանալոյ Բանին եւ մարմնոյ՝ յերկուս բնութիւնս բաժանեցին, եւ ետուն կարծիս՝ զՍուրբ զԵրրորդութիւն

1 Ա զաղեղովմացոց
2 Ա Զթէանով / Միհրդ., Պատկ. Աթէանով
3 ԶԶ, Միհրդ., Պատկ. արեւն է փիս նոյն արիւն
4 Ա գողջախոսութիւն
5 Ը Կ՞ր. Զ 18
6 Հ՞ր. Գ. 10. Ս՞ր. Ժ. 3
7 Միհրդ. զիարդ դողումն ոչ կալաւ / Պատկ. զիանդ դողումն ոչ կալաւ / Մալխ. զիա՞րդ ոչ դողումն կալաւ փիս զիա՞րդ դողումն ոչ կալցի (ձեռ. Զ)
8 Բոյ. չի՛ք գոր ոչ սերովբէն իսկ ձեռաւքն համարձակել մերձենալ
9 Հ՞մ. Կ. Լ. Զ 5-7:

7 Բոյ. հանդերձ
8 Ս՞ր. Զ 9
8 Միհրդ., Պատկ. Կոստանդիանոսէ փիս ի Կոստանդիանոսէ

չորրորդութիւն յաւելլով¹: 153 Քանզի գտեալ զտուժարն Լեւոնի արձան չարափառութեան իւրեանց՝ ի վերայ նորին հաստատեցին զիւրեանց դժնդակութիւն, եւ ասացին զմի Տէր Յիսուս Քրիստոս յերկուց բնութեանց, ոչ ինչ բարձեալ բնութեանցն զանագանութիւն, վասն միանալոյն առաւել ողջախոհել զաւրութիւն երկաքանչիւր բնութեանց, եւ զերկաքանչիւրսն ի մի մի դէմս միաւորեալ՝ ո՛չ աստուածային բնութեանն² տալ զմարդկային³ բնութեանն նուաստութիւնս, եւ ոչ մարդկային բնութեանն՝ զաստուածային բնութեանն ճոխութիւն: 154 Անարժան եւ անկարելիս համարել⁴ Աստուծոյ մարդ լինել, եւ կնոջէ ծնանել, եւ զամենայն կրել զմարդկային կիրս, եւ ի խաչին բեւեռել եւ մեռանել:

155 Արդ՝ եթէ այդ ամենայն անկարելի էր՝ լինել ըստ մարմնոյ իւրոյ Բանին Աստուծոյ՝ անկարելի էր ապա կուսին առանց առն յղանալ, եւ անապական ծնանել զմարդացեալն Աստուած, եւ անկարելի էր մարդումն հինգ նկանակէ զհինգ հազարսն կերակրել, եւ զջուրն ի գինի փոխել, եւ թքովն զաչս կուրին բանալ, եւ ի վերայ ջրոյն շրջել, եւ զգեւս հալածել, եւ զմեռեալս յարուցանել, եւ զայլն եւս⁵: 156 Իսկ մեք եւ ամենեքին որ զուղիղն խոստովանիմք, զի չէր լոկ մարդկային մարմինն, այլ աստուածութիւնն էր ի մարմինն: 157 Իսկ զայնոսիկ, որ յետ միաւորութեանն պատառեն բաժանմամբ՝ խոտեմք եւ նզովեմք ըստ երանելւոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ որ ասէ, «Եթէ ոք ոչ խոստովանեսցի, եթէ Աստուած է ճշմարտութեամբ էմամանուէլ, վասն որոյ

Աստուածածին կոյսն Մարիամ ծնեալ ընդ մարմնոյ զմարմնացեալ զԲանն Աստուած՝ նզովեալ լիցի»: 158 «Եթէ ոք ոչ խոստովանեսցի ի մարմնի բնութեամբ միանալ Բանին Աստուծոյ, եւ մի Քրիստոս զնոյն հանդերձ մարմնով Աստուած միանգամայն եւ մարդ՝ նզովեալ լիցի»: 159 «Եթէ ոք զմի Քրիստոս բաժանեսցէ յերկուս դէմս յետ միանալոյն, եւ միայն մերձաւորութիւն եւ յարելութիւն ասիցէ, իբրեւ պատուով եւ կամ ճոխութեամբ զաւրութիւն գտեալ, եւ ոչ միութիւն բնութեամբ՝ նզովեալ լիցի»: 160 Եւ մեզ տէրունականն բողոքէ ձայնն. «Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան», այսինքն հաւատոյն ճշմարտութիւն, որպէս զի տեսանիցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւոր առնիցեն զչայր ձեր որ յերկինս է՞:

161 Իսկ մեք որպէս ընկալաք զհրամանս երկնաքաղաքացի եւ բարեպաշտ քո թագաւորութեանդ, քաջ յարանց⁶ արքայ Կոստանդին, լաւագոյն համարեցաք զսահմանադրութիւնն ուղղափառ հաւատոյն, զոր ընկալանն հարքն մեր ի բուն առաջին վարդապետացն՝ գրով⁷ ծանուցանել առաջի աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորութեանդ ի ձեռն պատճենիս⁸: 162 Զի եւ մեր անարժանութեանս⁹ շնորհեսցէ Աստուած արժանաւորապէս խնդրել յԱստուծոյ զգիտութիւն բարւոյ, եւ աւրհանել զաստուածասէր եւ զբարերար տէրութիւնդ, զի յաւիտեան տիրեսցես ի վերայ ամենայն երկրի, ծովու եւ ցամաքի, յաղթութեամբ բազմաւ:

1 Ա յաւելով
 2 Ա բնութեն
 3 Ա ոչ զմարդկային
 4 Մալխ. ուղղելի՝ համարեալ
 5 Միհրդ., Պատկ. եւ զայլսն եւս

6 Մաթթ. Լ 16
 7 Բոյ. արանց
 8 Բոյ. գործով փխ գրով
 9 Միհրդ., Պատկ. պատմէնիս
 10 Ա անարժանութիւնս

ԳԼՈՒԽ ԽԷ

1 Յարձակումն Իսմայելացոց ըստ տեսլեան Դանիէլի: 2 Իրք խոռվութեան ի Կոստանդնուպալիս. սպանումն երեսելի արանց:

3 Ճառեցից դարձեալ զրուցելով զբանս ըստ չարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի, վասն պատառման առազատին հին հաւատոյ, եւ շնչել ի մեզ մահաբեր խորշակին, որ տապախառն արարեալ զմեծամեծ վարսաւոր, զգեղեցիկ¹ ծառս մատաղատունկս բուրաստանաց. եւ այս յիրաւի, զի Տեառն մեղաք, եւ բարկացուցաք զսուրբն Իսրայելի: 4 Եւ թէ ախորժիցիք եւ լուիջիք ինձ, աւէ, զբարութիւնս, երկրի կերիջիք. ապա թէ ոչ կամիջիք լսել ինձ՝ սուր կերիցէ զձեզ, զի բերան Տեառն խաւսեցաւ զայս²: 5 Զսոյն իսկ մրրիկ ի վերայ Բաբելովն² տեսանի, այլ եկեալ հասեալ ի վերայ ամենայն երկրի. վասն զի մայր է ամենայն ազգաց Բաբելովն, եւ թագաւորութիւն նորա թագաւորութիւն կողմանց հիւսիսոյ:

6 Իսկ հարաւային անդ³ քան զնոսա, այսինքն Հնդկիք⁴ եւ ի նոսին կողմանէ ազգք բնակեալք յանապատին մեծի, ուրանաւր որդիքն Աբրահամու, որ ի Հագարայ⁵ եւ ի Քետուրայ ծնեալք՝ Իսմայել, Ամրամ, Մադամ, Մադիամ, Յեֆսամ, Յեսբոկ, Մելիսաւէ⁶ եւ որդիքն Ղովտայ՝ Ամոն եւ Մովաբ. եւ որդիքն Եսաւայ, այսինքն է Եդոմ⁵, եւ այլք եւս, որ էին ի հարաւակողմն Հնդկաց, նոցին ի հիւսիսոյ կողմանէ, ի մեծ եւ յահագին անապատէն, ուրանաւր Մովսէս եւ որդիքն Իսրայելի բնակեալ

էին, զոր ասաց մարգարէն, եթէ Որպէս մրրիկ ի հարաւոյ ընթացի, յանապատէ զնացեալ յահեղ տեղուղէ⁷, այն է անապատն մեծ եւ հագին, ուստի մրրիկ ազգացս այսոցիկ փոթորկեալ եւ եւ կալաւ զամենայն երկիր, կոխեաց եւ եհար զնա: 7 Եւ կատարեցաւ ասացեալն, թէ Գագանն չորրորդ՝ չորրորդ թագաւորութիւն կացցէ ի վերայ երկրի, որ առաւել է չարեաւք քան զամենայն թագաւորութիւնս, որ արար անապատ զամենայն երկիր⁸:

8 Եւ արդ⁶ զի՞նչ եւս զՀոռովմոց թագաւորութեանն⁷ ասացից զխռովութիւն եւ զաղէտս կործանման, որ ոչ երբէք դադարեաց յընտանի⁸ պատերազմէն⁹ եւ հեղումն արեան կոտորածոյ արանց գլխաւորաց եւ խորհրդականաց ի թագաւորութեանն, զոր ասացին խորհել խորհուրդ մահու¹⁰ ի վերայ թագաւորին: 9 Եւ վասն այսորիկ կոտորեցին զամենայն արս գլխաւորս, եւ ոչ մնաց ի թագաւորութեանն այր խորհրդական. զի միահամուռ կոտորեալ սպառեցան բնակիչք աշխարհին եւ իշխանքն որ ի թագաւորութեանն: 10 Սպանին եւ զԳէորդ Մագիստրոս¹¹, եւ զՄանուէլ զայրն առաքինի, որ էր աներ Սմբատայ ասպետի, ¹²որդւոյ Վարագտիրոցի որդւոյ մեծին Սմբատայ Խոսրովայ Շումն¹³ կոչեցելոյ: 11 Զորմէ ասացին ոմանք՝ տեսանել ի զիշերի ճրագունս լուցեալս ի տեղուջ սպանման նորա: 12 Եւ արկին զՍմբատ յաքսորս¹⁴. վասն զի պարտաւորեցին զնա զաւրն իւրեանց ի յապս-

1 Միհրդ., Պատկ. գեղեցիկ
* Եւ. Ը. 19-20
2 Ա. Բաբելովնի
3 Միհրդ., Պատկ. անդր
4 Ա. հնդիք
5 Հմմտ. Նոն. Ժ. 9:
6 Հմմտ. Նոն. Ի. 1-6:
7 Միհրդ., Պատկ. այսինքն՝ եդոմ

7 Եւ. Ը. 1
8 Գ. 23
9 Ա., երից. չիք արդ
10 Ա. թագաւորութիւնն
11 Ա. ընդամի
12 Բոյ. պատերազմին
13 Միհրդ., Պատկ. ի թագաւորին վերայ
14 Ա. Մագիստոս / երից. Մագրեստոս
15 Բոյ. չիք որդւոյ Վարագտիրոցի
16 Ա., երից. շնումն
17 Միհրդ., Պատկ. յախորն

տամբուլթեան յետ իրացն եղելոց, զի ասացին զնմանէ ընդ թագաւորին, թէ «Ասէր նա, թէ պարտ է արեան Մագիստրոսին խնդիր առնել»: 13 Եւ Մագիստրոս էր² իշխան զաւրուսն որ յայնմ կողմանէ եւ սիրելի ամենայն զաւրացն: 14 Եւ Սմբատ էր իշխան զաւրու թրակացւոց իշխանացն. եւ Մանուէլ գործէր ի Կոստանդնուպոլիս³ զգործ մագիստրէի⁴: 15 Եւ ոչ կոչեաց⁵ թագաւորն զՄագիստրոսն Համարձակապէս իշխանութեամբ, երկուցեալ յապստամբութենէ զաւրացն. այլ կոչեաց առ ինքն զասպետն Սմբատ եւ երզմնեցոյց զնա ի խաչն տէրունական, որ ընդ անձին իւրում⁶ զի մի՛ ումեք Հանցէ զբանսն ի վեր, եւ արձակեաց զնա ի զաւրս իւր, եւ զի խաւսեսցի ընդ Մագիստրոսն խաղաղութեամբ՝ տարցի զնա խաբելով: 16 Իսկ նա երթեալ ոչ կարաց զնա խաբել, եւ մանաւանդ զի ոչ թագուցաւ ի նմանէ բանն: 17 Ապա խաւսեցաւ ընդ ամենայն իշխանս զաւրուսն, եւ ետ նմա Հրամանն արքունի: 18 Իսկ նոքա եւ ամենայն զաւրն իբրեւ ոչ կարացին ընդդիմանալ արքունի Հրամանին՝ ետուն զնա ի ձեռս նոցա. զոր կալեալ կապեցին զնա եւ տարան յանդիման թագաւորին: 19 Եւ վասն այսորիկ զաւրք թրակացւոց իշխանացն խորհեցան ի վերայ նորա մահ, եւ ասացին զնմանէ պատճառս ապստամբութեան խորհելոյ, զի մեռցի. բայց արքայն խնայեաց ի նա, եւ մերժեալ ի նոցանէ ապրեցոյց զնա:

ԳԼՈՒԽ ԽԸ

1 Պատերազմ Իսմայելացւոց ընդ Պարսիկս: 2 Մահ Յագկերտի: 3 Բարձումն Սասանեան տէրութեանն: 4 Հայք մտանեն ի ծառայութիւն Իսմայելացւոց առաջնորդութեամբ Թէոդորոսի Ռշտունւոյ: 5 Գալ Կոստանդինի կայսեր ի Հայսրագումբ յիշխանացն Հայոց գան առնա եւ ցուցանեն զմիամտութիւն իւրեանց: 6 Եւ եղեւ⁷ ի քսաներորդի ամի⁸ Յագկերտի արքայի Պարսից, ի մետասան ամի Կոստասի կայսեր, որ կոչեցաւ յանուն Հաւր իւրոյ Կոստանդին, եւ յամին ժծեւորորդի Իսմայելացւոց տէրութեանն, զաւրն⁹ Իսմայելացւոց, որ էին յերկրին Պարսից եւ Խուժաստանի՝ զնացին ընդ արեւելս ի կողմանս Պահլաւն կոչեցեալ¹⁰ երկրի, որ է երկիր Պարթեւաց, ի վերայ Յագկերտի արքային Պարսից: 7 Եւ փախեաւ Յագկերտ յերեսաց նոցա¹¹, եւ ոչ կարաց ճողոպրել. քանզի Հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուչանաց, եւ կոտորեցին զամենայն զաւրս նորա: 8 Եւ փախուցեալ անկաւ ի զաւրս Թէտալաց, որ էին ի կողմանցն եկեալ նմա յաւանականութիւն: 9 Եւ իշխանն Մարաց, զորմէ վերագոյն ասացի, եթէ զնաց յարեւելս առ արքայն իւրեանց եւ ապստամբեալ¹² ի տեղի մի ամրացաւ, եւ խնդրեաց երդումն յԻսմայելացւոցն, եւ զնաց յանապատն ի ծառայութիւն Իսմայելացւոցն: 10 Իսկ զաւրացն Թէտալաց կալեալ զՅագկերտ սպանին, որ կալաւ զթագաւորութիւնն ամս Ի: 11 Եւ

1 Ա Մագրիստոսին (երից. Մագրիստուէն) խնդիր առնել
 2 ՁՁ, Միհրդ., Պատկ. չիք Մագիստրոս էր
 3 Ա Կոստանդինուպոլիս
 4 Երից. մագեստրէի
 5 Ա կոչեաց փխ ոչ կոչեաց
 6 Ա անձին իւր

7 Երից. չիք եղեւ
 8 Ա չիք ամի
 9 Ա Իսմայելայ որ էին
 10 Ա երկիր / Միհրդ., Պատկ. երկրի որ էր
 11 Ա նորա փխ նոցա
 12 Միհրդ., Պատկ. ապստամբեալ փխ եւ ապստամբեալ

բարձաւ տէրութիւնն Պարսից եւ ազգին Սասանայ, որ կալան զթագաւորութիւնն ամս ՇնԲ:

12 Արդ՝ իբրեւ ետես արքայն Իսմայելի զյաջողումն յաղթութեանս, եւ զի բարձաւ թագաւորութիւնն Պարսից, իբրեւ լցան ամք Գ պայմանի խաղաղութեանն՝ ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւն¹ ընդ թագաւորն Յունաց, այլ հրաման ետ զաւերաց իւրոց ունել գործ պատերազմի ընդ ծով եւ ընդ ցամաք, զի բարձցէ եւ զայն եւս թագաւորութիւն յերկրէ, յերկոտասաներորդ² ամի թագաւորութեանն Կոստանդի:³

13 Եւ ի նմին⁴ ամի ապստամբեցին Հայք եւ ի բաց կացին ի թագաւորութեանն Յունաց եւ հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի, եղին ուխտ ըմդ մահու, եւ ընդ դժոխոց դաշինս կոեցին Թէոդորոս⁵ Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց, ի բաց ընկեցեալ զաստուածային դաշնաւորութիւնն: 14 Արդ՝ խաւսէր ընդ նոսա իշխանն Իսմայելի եւ ասէր. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս եւ ընդ ձեզ՝ որչափ ամաց եւ դուք կամիջիք. եւ ոչ առնում ի ձէնջ⁶ սակ զերեւամի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ եւ դուք կամիջիք: 15 Եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժե հազար, եւ հաց յաշխարհէն տուք, եւ ես ի սակն արքունի անգարեմ⁷. եւ զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց⁸ այլ ուր եւ հրամայեմ՝ պատրաստ լիցին ի գործ. եւ ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, եւ ոչ տաճիկ սպայ՝

ի բազմաց մինչեւ ցմի հեծեալ: 16 Թշնամի մի՛ մտցէ ի Հայս. եւ եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւերս յաւգնականութիւն՝ որչափ եւ դուք կամիջիք⁹: 17 Եւ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»: 18 Եւ այնպէս քակեալ պատուեաց զնոսա ի Հոռոմոց¹⁰ նեռին արբանեակն, զի թէպէտ եւ բազում աղաչանս եւ պաղատանս գրեաց առ նոսա կայսրն եւ կոչեաց զնոսա առ ինքն, եւ ոչ կամեցան լսել նմա: 19 Ապա ասէ. «Ես գամ ի Կարնոյ քաղաք, եւ եկայք դուք առ իս»: 20 Եւ կամ՝ «Ես գամ առ ձեզ, եւ տամ ձեզ աւգնութիւն¹¹ ՀՌ ոգի, եւ խորհիմք ի միասին, եթէ զինչ արժան իցէ առնել». սակայն եւ այնպէս ոչ կամեցան լսել նմա:

21 Եւ ամբաստանութիւն ամենայն զաւերացն Հոռոմին եւ տրտունջ զՌշտունեաց տեառնէն¹² լինէին եւ զՀայոց՝ առաջի թագաւորին իւրեանց վասն հարուածոց՝ որ եղեն ի Մարդոցէսն: 22 Զի ասացին, թէ «Միաբանեցան ընդ Իսմայելացիսն. զմեզ վստահացուցին եւ զզաւերսն ճապարհել ետուն յասպատակ յԱտրպատական, եւ զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի, եւ հարկանել ետուն զմեզ. եւ մեր ամենայն ինչ անդ անկաւ. բայց թող երթամք ի Հայս եւ մեր իրացն խնդիր առնեմք»:

23 Յայնժամ արքայ Կոստանդին հաւանեցաւ առնել զկամս զաւերացն: 24 Եւ առ զզաւերս իւր եւ գնաց ի Հայս ը հազարաւ: 25 Եւ իբրեւ եհաս ի Դերջան¹³ ընդ առաջ եղեն նմա արք իսմայելացիք եւ մատուցին նմա թուղթ յիշխանէն իւրեանց, որ էր գրեալ այսպէս, թէ «Հայք իմ են, անդ մի՛ երթար¹⁴. ապա թէ երթաս՝ ես

1 Միհրդ., Պատկ. գիտադաւորութիւն
2 Ա. երկոտասաներորդ
3 Միհրդ. (=2) աւարտուել է թագաւորութեանն Կոստանդի բառերից յետոյ:
4 երից. ի սմին փխ ի սմին
5 Ա. Թէոդորոս
6 Միհրդ. սակ (վերկի) է ամի
7 Դ չիք անգարեմ
8 Միհրդ., Պատկ. այլուր եւ հրամայեմ

9 Մալխ. կամիցիք
10 Միհրդ. չիք նեռին արբանեակն
11 ԱԲԳԴԵ աւրիւնութիւն փխ օգնութիւն (որն ունեն երից., Միհրդ.)
12 Ա. տեռնէն
13 Միհրդ. թերջան
14 Միհրդ., Պատկ. մի երթար

զամ ի վերայ քոյ, եւ առնեմ զքեզ որ անդրէն¹ փախչել ոչ կարես»: 26 Իսկ արքայ Կոստանդին ասէ. «Աշխարհն ²իմ է՝ ես երթամ. դու եթէ գաս ի վերայ իմ՝ Աստուած արդարութեան դատաւոր է»:

27 Եւ անտի գնացեալ եկն ի Կարնոյ քաղաք. յամի ³ԺԲ-երորդի թագաւորութեան իւրում, ի քսան ամի Իսմայելացւոց տէրութեանն:

28 Եւ նստաւ արքայ Կոստանդին⁴ ի Կարնոյ քաղաքի աւուրս ինչ. անդ ընդ առաջ եղեն նմա իշխանք եւ զաւրք Չորրորդն կոչեցեալ Հայոց, եւ այլ ամենայն զաւրք եւ իշխանք, որ յայնմ կողմանէ գնացեալ էին յՌշտունականէն: 29 Ընդ առաջ ելին նմա Սպերացիքն, իշխանքն Բագրատունեաց, եւ Մանաղայքն, եւ Դարանաղայքն, եւ ոյք յԵկեղեաց⁵ գաւառէ, եւ ամենայն զաւրք տեղեացն⁶ այնոցիկ, եւ Կարնացիք, եւ Տայեցիք, եւ Բասենացիք: 30 Եւ անդ ընդ առաջ եղեն նմա իշխանք Վանանդայ Հանդերձ գաւրուն իւրեանց, եւ Շիրակացիք, եւ Խորխոռունի⁷, եւ արք տանն Դիմաքսենից: 31 Անդ ընդ առաջ եղեւ նմա Մուշեղ Մամիկոնեան Համագգեաւքն իւրովք Հանդերձ եւ այլովք ոմամբք իշխանաւք, եւ զաւր ըստ Այրարատայ⁸ կողմանէ. Առաւելեանք, եւ Առանեանք եւ Վարաժնունիքն, եւ Գնթունիք, եւ Սպանդունիք, եւ այլք ընդ նոսին: 32 Ընդ առաջ եղեւ նմա կաթողիկոսն Ներսէս, եկեալ ի Տայոց: 33 Եւ պատմեցին ամենայն իշխանքն թագաւորին եւ զմիտս եւ զկամս ապստամբութեան Ռշտունեաց տեառն, եւ փութանակի երթե-

ւեկս առ նա դեսպանացն Իսմայելի: 34 Յայնժամ նզովեաց թագաւորն եւ ամենայն զաւրք իւր զՌշտունեաց տէրն, եւ լուծին զնա ի պատուոյ իշխանութեանն⁹, եւ արձակեցին այլ այր փոխանակ նորա, եւ Խ այր ընդ նմա: 35 Որ իբրեւ չոգան Հասին առ նա՝ կալան զնոսս եւ կապեցին, եւ ետուն տանել ի բերդն Բաղիշոյ¹⁰, եւ զոմանս ի կղզիս Բզնունեաց. եւ ինքն չոգաւ եմուտ յԱղթամար¹¹ կղզի. եւ զաւրացն կողմանցն այնոցիկ ետ Հրաման երթալ ամրանալ յԻւրաքանչիւր գաւառի: 36 Եւ էին ընդ նմա միաբան Վրացիքն եւ Աղուանն եւ Սիւնիքն, որք ըստ Հրամանի նորա գնացին յԻւրաքանչիւր աշխարհս եւ ամրացան ի նմին: 37 Իսկ Թէոդորոս Վահեունեաց տէրն կալաւ զբերդն Արփայս. եւ Գրիգոր որդի նորա որ էր փեսայ¹² Ռշտունեաց տեառնն. եւ Վարազ Ներսէհն Դաշտկարին ամրացան ի բացւոյն, եւ բռնացան ի վերայ գանձուցն. զի անդ էին ամենայն գանձքն աշխարհին, եկեղեցւոյ եւ իշխանաց եւ վաճառականաց:

38 Իսկ արքայ Կոստանդին իբրեւ զայն լուաւ՝ կամեցաւ առնուլ աւար զզաւրացն բազմութեան, եւ երթալ¹³ ձմերել ի Հայս, զի բարձցէ գերկիրն ի միջոյ: 39 Եւ անդէն անկան ի վերայ երեսաց իւրեանց կաթողիկոսն եւ Մուշեղ ամենայն իշխանաւքն Հայոց, եւ մեծաւ աղաչանաւք եւ արտասուալից պաղատանաւք խնդրեցին ողորմութիւն, զի մի՛ ըստ նոցա յանցանացն իսպառ բարկացի եւ գերկիրն կորուսցէ: 40 Լուաւ արքայ պաղատանաց նոցա եւ արձակեաց անդրէն զզաւրացն բազմութիւնն. եւ ինքն գնաց յԱյրարատ¹⁴ Ի Հազարաւ: 41 Եւ երթեալ ի Դուին՝

1 Ա. անդէն փխ անդրէն
 2 Բոյ. իմ փխ իմ է
 3 Պատկ. ԲԺ-երորդի
 4 Ա. Կոստանդինի
 5 Ա., Միհրդ. յեկեղեց
 6 Ա. տեղացն
 7 ՏՏ Խոռխոռունի
 8 Ա. Արայրատոյ

9 Միհրդ., Պատկ. իշխանութեանն
 10 Ա. Բաղաղիշոյ
 11 Ա. յաղթարմար
 12 Բոյ. էր փեսայ փխ որ էր փեսայ
 13 Ա. երթեալ
 14 Ա. յԱրայրատ

նստաւ ի տան կաթնղիկոսին: 42 Եւ արար արքայ զՄուշեղ Մամիկոնէից տէր՝ իշխան Հայոց հեծելոցն, եւ արձակեաց զնա ի կողմն Սեպհական¹ գնդին Գ հազարաւք: նոյնպէս արձակեաց ի զաւրաց իւրոց ի Վիրս եւ յԱղուանս եւ ի Սիւնիս՝ քակտել զնոսս ի միաբանութենէ: 43 Այլ զաւրքն նստէին շուրջ զԱրփայիւ² ի լեռնակողմանն եւ ³ի դաշտակողմանն: 44 Վիրք թէպէտ առ ժամանակ մի ոչ կամեցան հնազանդել, սակայն յետոյ նուաճեալ ի ծառայութիւն: 45 Բայց ⁴Աղուանն եւ Սիւնին եւ գունդն Սեպհական ոչ հնազանդեցան, զորոց գերկիրն աւար առեալ տարան զինչ եւ գտին, եւ դարձան անդրէն առ արքայ:

ԳԼՈՒԽ ԽԹ

1 Վասն Հայոց կաթողիկոսին Ներսիսի. հաղորդել նորա եւ այլոց եպիսկոպոսաց ընդ Հոռոմս առ երկիւղի: 2 Մի ոմն յեպիսկոպոսաց բոնադատի ի կայսերէն՝ հաղորդել ընդ կաթողիկոսին: 3 Դարձ Կոստանդինի ի Կոստանդնուպոլիս: 4 Փախուստ Ներսիսի յերեսաց իշխանացն Հայոց: 5 Թէոդորոս Ռշտունի հարկանէ զգաւրս Յունաց, առնու զՏրապիզոն, երթայ առ Մաւիաս եւ ընդունի զիշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց, Աղուանից եւ Սիւնեաց: 6 Պատրաստութիւն Իսմայելացւոց առ ի առնուլ զԿոստանդնուպոլիս:

7 Արդ՝ ասացից փոքր մի ի շատէ վասն Հայոց կաթողիկոսին Ներսիսի, զի

էր նա բնակութեամբ ի Տայոց, ի գեղջէն, որում իշխանն կոչեն: 8 Եւ սնեալ ի մանկութենէ յաշխարհին Յունաց եւ ուսեալ զլեզուս եւ զգրութիւն Հոռոմին, եւ շրջեալ ընդ աշխարհս զաւրու կարգաւք զինուորութեան. եւ հաստատեալ զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի եւ ի վերայ տումարին Լեւոնի: 9 Եւ ոչ ումեք ի վեր հանէր զխորհուրդս ամբարշտութեանն, մինչեւ եհաս յեպիսկոպոսութիւն յաշխարհին, եւ անտի կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան: 10 Եւ էր այր առաքինի վարուք⁵, պահաւք եւ աղաւթիւք: 11 Բայց ի սրտի իւրում ծածկեալ ունէր զթիւնս դառնութեան, եւ խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղկեդոնի ժողովոյն, բայց ի վեր հանել զբանն⁶ ոչ համարձակէր: 12 Մինչեւ եկն արքայ Կոստանդին եւ նստաւ ի տան կաթողիկոսին, եւ քարոզեցաւ յեկեղեցւոջն սրբոյն Գրիգորի ժողովն⁷ Քաղկեդոնի յաւուր կիւրակէի⁸: 13 Եւ մատեաւ պատարագ հոռոմերէն ի Հոռոմ երիցուէ⁹, եւ հաղորդեցաւ թագաւորն եւ կաթողիկոսն եւ ամէն եպիսկոպոսունքն, ո՛ր կամաւ եւ որ աւամայ: 14 Եւ ասպէս շարժեաց կաթողիկոսն զճշմարիտ հաւատս սրբոյն Գրիգորի, զոր¹⁰ կալեալ էր ամենայն կաթողիկոսացն հաստատուն հիմնադրութեամբ ի սրբոյ յեկեղեցւոջն ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցայսաւր: 15 Եւ զսուրբ եւ զվճիտ եւ զականակիտ աղբերացն պղտորեաց զՂուրս, զոր ի վաղնջուց իսկ ունէր ի միտս իւր կաթողիկոսն, եւ ոչ իշխեաց յայտնել մինչեւ ցայն աւր: 16 Եւ ապա գտեալ ժամանակ՝ կատարեաց զկամս իւր. մատնէր զմի մի յեպիսկոպոսացն, եւ բեկանէր ահիւ: 17 Մինչ զի առ մահուն

1 Միհրդ., Պատկ. սեփհական
 2 Ա., երից., Միհրդ., Պատկ. գարեայիւ փիս գԱրփայիւ
 3 Բոյ. ի դաշտակողմանն, իսկ փիս ի դաշտակողմանն: Վիրք
 4 Միհրդ., Պատկ. յԱղուանն եւ ի Սիւնին եւ գունդն սեփհական

5 Ա վարիւք
 6 Ա գրանսն
 7 Ա ժողովոյն
 8 Ա կիրակէի
 9 Ա իրիցուէ
 10 Բոյ. զի փիս գոր

երկիրը և ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին. մանաւանդ զի մեռեալ էին երանելիքն, որք էին հիմնաւորագոյնք:

18 Բայց յուժեմնէ եպիսկոպոսէ ըմբերանեալ առաջի թագաւորին՝ պապանձէր: 19 Քանզի յառաջագոյն ձեռն արկեալ էր նորա եւ ամենայն եպիսկոպոսացն, նզովէր գծողովն Քաղկեդոնի եւ գտումարն Լեւոնի, եւ մերժէր ի հաղորդութենէ Հոռոմին. եւ կնքեալ զնա մատանեալ կաթողիկոսին եւ ամենայն եպիսկոպոսացն եւ մեծամեծ իշխանացն մատանեալքն. եւ ետուն առ նա զի պահեսցէ յեկեղեցւոյն: 20 Իսկ յորժամ մատեալ պատարագն, եւ հաղորդեցան ամենայն եպիսկոպոսունքն՝ եպիսկոպոսն այն, զորմէ վերագոյն ասացի՝ ոչ հաղորդեցաւ, այլ չոգաւ էջ ի բեմբէն, եւ ծածկեցաւ յամբոխին:

21 Եւ իբրեւ կատարեցին զգործ հաղորդութեանն եւ եմուտ թագաւորն ի սենեակն¹ մատեալ կաթողիկոսն եւ Հոռոմ երիցունքն² եւ արարին ամբաստանութիւն³ զեպիսկոպոսէն զայնմանէ, եթէ «Ոչ նստաւ յաթոռ, եւ ոչ հաղորդեցաւ ընդ մեզ, անարժան համարեցաւ զմեզ եւ զձեզ, չոգաւ էջ ի բեմբէն, եւ ծածկեցաւ յամբոխին»: 22 Եւ խռովեցաւ թագաւորն եւ հրաման ետ երկու արանց, զի կալցեն զնա, եւ տարցեն յանդիման նորա ի սենեակն:

23 Պատասխանի ետ թագաւորն եւ ասէ. «Քահանայ ես»: 24 Ասէ եպիսկոպոսն. «Եթէ կամի Աստուած եւ ձեր փառք»: 25 Ասէ թագաւորն. «Եւ զի՞նչ ես դու, որ ես՝ քո թագաւոր, եւ դա՝ քո կաթողիկոս եւ հայր մեր. եւ դու ոչ արժանի համարիս զիս ընդ քեզ հաղորդութեանն, եւ ոչ զդա»: 26 Ասէ եպիսկոպոսն. «Ես

այր մեղաւոր եմ եւ անարժան, չեմ արժանի ընդ ձեզ հաղորդութեան, բայց թէ Աստուած արժանի առնէր՝ ընդ ձեզ համարէի թէ ընդ Քրիստոսի ի սեղանոյ եւ ի նորին ձեռացն վայելեցայց»: 27 Ասէ թագաւորն. «Թո՛ղ զայդ եւ զայս ասա ինձ, եթէ դա Հայոց կաթողիկոս է, թէ ոչ»: 28 Ասէ եպիսկոպոսն. «Այնպէս որպէս զսուրբն Գրիգոր»: 29 Ասէ թագաւորն. «Ունի՞ս զդա առ կաթողիկոս»: 30 Ասէ «Այո՛»: 31 Ասէ թագաւորն. «Հաղորդի՞ս ընդ դմա՞»: 32 Ասէ. «Այնպէս՝ որպէս ընդ սրբոյն Գրիգորի»: 33 Ասէ թագաւորն. «Իսկ այսաւր վասն է՞ր չհաղորդեցար»: 34 Ասէ. «Բարերար թագաւոր, մեք զձեզ մինչ ի յորմս⁶ նկարեալ տեսանէաք դողումն ունէր զմեզ, թող թէ ահաւասիկ դէմ յանդիման տեսանեմք, եւ բերան ի բերան խաւսիմք: 35 Մեք մարդիկ եմք տգէտ եւ տխմար, ո՛չ լեզու գիտեմք եւ ոչ դպրութիւն, բայց եթէ նախ ուսանիմք՝ եւ ի վերայ հասանիմք. այլ զբարերար հրամանսդ շարժեալ ով իշխէ: 36 Այս աշխարհ ամենայն կարգաց հրամանք յայս տեղոյս եւ ի դմանէ ի դուրս ելանէ: 37 Յառաջ քան զայս չորս ամալք՝ ժողով արար դա, եւ զամենայն եպիսկոպոսունս այսր ժողովեաց, եւ վասն հաւատոյ գիր ետ առնել, եւ կնքեաց նախ իւրով մատանեալն, եւ ապա մեր, եւ ապա ամենայն իշխանացն մատանեալք⁸: 38 Եւ գիրն այն այժմ առ դմա է. հրամայեցէ՛ք խնդրել եւ տեսանել»: 39 Եւ նա կայր պապանձեալ: 40 Եւ գիտացեալ թագաւորն զնենգութիւն նորա՝ յանդիմանեաց զնա բանիւք բազմաւք ի լեզու իւր: 41 Եւ հրաման ետ թագաւորն

1 Ա ի սինիակն
2 Ա իրիցունքն
3 Միհրդ., Պատկ. գամբաստանութիւն

4 Ա համարի թէ ընդ Քրիստոսի սեղանոյ եւ նորին
5 Ա սմա փիս դմա
6 Միհրդ., Պատկ. ի յորմն
7 Միհրդ., Պատկ. բուժելով իշխէ փիս սրուժել ո՞վ իշխէ
8 22, Պատկ. մատենեալ փիս մատանեալ

երթալ հաղորդել ընդ կաթողիկոսին: 42 Եւ իբրեւ կատարեաց եպիսկոպոսն զհրամանս թագաւորին՝ ասէ՛. «Աւրհնեսցէ Աստուած զբարերար եւ զաստուածասէր թագաւորութիւնդ յաւիտեան, տիրելով ի վերայ ամենայն ծովու եւ ցամաքի հանդերձ յաղթութեամբ բազմաւ»: 43 Աւրհնեսց եւ թագաւորն զեպիսկոպոսն եւ ասէ. «Աւրհնեսցէ Աստուած զքեզ. այնպէս արարեր՝ որպէս վայել է քո իմաստութեանդ, եւ ես շնորհակալ եմ»:

44 Եւ սաստիկ ստիպով փութացուցանէին զարքայ ի Կոստանդնուպալիս վաղ հասանել անդր, եւ գնաց փութանակի: 45 Եւ արար իշխանն՝ Հայոց զՄորիանոս ոմն հանդերձ հայ գաւրուն՝ որ ի նոցուն կողմանէ:

46 Իբրեւ գնաց արքայ Կոստանդին ի Դըւնայ՝ գնաց եւ կաթողիկոսն ընդ նմա: 47 Եւ երթեալ դադարեաց ի Տայս, եւ այլ ոչ դարձաւ ի տեղի իւր. զի իշխանն Ռչտունեաց եւ այլ իշխանքն որ ընդ նմա՝ անհնարին՝³ ցասմամբ փքացեալ էին ի վերայ նորա:

48 Իսկ Թէոդորոս Ռչտունեաց տէր դարանակալ եղեւ յԱղթամար կղզի, ինքն եւ փեսայ իւր Համազասպ Մամիկոնէից տէր. եւ խնդրեաց յիւր զաւրս ի յիսմայելացւոցն, եւ եկն է հազար այր յաւգնականութիւն նմա, եւ նստոյց գնոսա յԱղիովիտ⁴ եւ ի Բզնունիս, եւ ինքն առ նոսա ելեալ⁵, կայր ի մէջ նոցա:

49 Եւ իբրեւ անցին աւուրք ձմերայնոյն, մերձ ի գատիկն մեծ՝ փախեալ Հոռոմ եւ անկաւ ի Տայս. եւ հանին անտի. եւ ոչ ուրեք կարաց զետեղել, այլ գնացին փախստական մինչեւ մերձ ի ծովեզրն:

50 Եւ աւերեցին զամենայն երկիրն. առին եւ զՏրապիզոն քաղաք, եւ խաղացուցին առ եւ աւար եւ գերութիւն բազում յոյժ:

51 Յետ այսորիկ գնաց Թէոդորոս Ռչտունեաց տէրն առ Մաւիաս իշխանն Իսմայելի ի Դամասկոս եւ ետես զնա մեծամեծ ընծայիւք: 52 Եւ ետ նմա իշխանն Իսմայելի հանդերձս ոսկեղէնս եւ ոսկեթելս, եւ վառ մի նորին աւրինակաւն: 53 Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս եւ զՎիրս եւ զԱղուանս եւ զՍիւնիս, մինչեւ ցԿապկոհ⁶ եւ ցՊահակն⁷ ձորայ, եւ արձակեաց զնա պատուով: 54 Եւ նորա պայման էր եղեալ նմա՝ ածել գերկիրն զայն ի ծառայութիւն:

55 Եւ եղեւ յամին մետասաներորդի Կոստանդի լուծումն լինի հաշտութեանն՝ որ ընդ Կոստանդին եւ ընդ Մաւիաս իշխանն Իսմայելի: 56 Եւ հրաման ետ արքայն Իսմայելի ժողովել զամենայն զաւրս իւր ի կողմանս արեւմտից, եւ ունել զգործ պատերազմի ընդ Հոռոմոց թագաւորութեանն, զի առցեն զԿոստանդնուպալիս, եւ ի բաց բարձցեն այն եւս թագաւորութիւնն:

ԳԼՈՒԽ Ծ

- 1 ՅՅուդթ արքային Իսմայելի առ թագաւորն Յունաց Կոստանդին:
- 2 Գալ Մաւիասայ ի Քաղկեդոն:
- 3 Մրրիկ հողմոյ խորտակէ եւ ցրուէ գնաւատորմն Իսմայելացւոց. գաւրն Իսմայելացւոց թողու գՔաղկեդոն:
- 4 Այլ բանակ Իսմայելացւոց, որ արշաւէր ի Վիրս՝ հերքի ի բոյն ամերայնոյ: 5 Իշխանք Հայոց միաբանին եւ

1 Միհրդ. ամէն փխ ասէ / երից. ասեմ
 2 Միհրդ., Պատկ. իշխան
 3 Միհրդ., Պատկ. անհնարինն
 4 Ա. յաղովիտ
 5 Ա. ել փխ ելեալ

6 Ա. գկապկոխ
 7 Միհրդ., Պատկ. ցՊարիակն, Մալիս. գպարիակն
 8 ԶԶ ՅՅուդթ արքային Իսմայելի առ թագաւորն Յունաց Կոստանդին / ԱԲ, երից. այդ բառերին աւելացնում են որ ունէր գայս ինչ գրեալ

բաժանեն գՀայս ի միջի իւրեանց:

6 Աղէտ ժողովրդեանն:

7 «Եթէ կամիս, ասէ, խաղաղութեամբ ունել զկեանս քոյ՝ ի բաց կաց յընդունայն պաշտամանէդ յայդմանէ, զոր ուսեալդ ես ի մանկութենէ: 8 Ուրացի՛ր զՅիսուսն զայն եւ դարձի՛ր առ Աստուածն մեծ, զոր եսն պաշտեմ, զԱստուած հաւր մերում Աբրահամու: 9 Եւ զբազմութիւն զաւրաց քոց արձակե՛ա ի քէն յիւրաքանչիւր տեղիս: 10 Եւ ես արարից զքեզ իշխան մեծ ի կողմանսդ յայդոսիկ, եւ արձակեմ ի քաղաքդ ոստիկանս, եւ քննեմ զամենայն գանձս եւ հրամայեմ բաժանել ի չորս մասունս. երեքն՝ ինձ եւ մի՝ քեզ: 11 Եւ տամ քեզ զաւրս որչափ եւ կամիցիս, եւ առնում ի քէն սակ՝ որչափ եւ դու կարես տալ: 12 Ապա թէ՛ ոչ՝ Յիսուսն այն, զոր դու Քրիստոս կոչես, մինչ գանձն ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, զքեզ զիս՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց»:

13 Եւ ժողովեցան ամենայն զաւրքն, որ ի կողմանս արեւելից, ի Պարսից՝ եւ ի Խուժաստանէ եւ ի կողմանէն Հնդկաց եւ յԱրուաստանէ եւ յԵգիպտացուց կողմանէ առ Մաւրաս իշխան զաւրուն, որ նստէր ի Դամասկոս: 14 Եւ կազմեցին նաւս պատերազմականս յԱղեքսանդրիա եւ յամենայն քաղաքս ծովեզերեայս². Եւ լցին զինուոր եւ մեքենայիւր զնաւս³. Գձ նաւս մեծամեծս, առ մի նաւն հազար այր յընտիր ընտիր հեծելոց: 15 Եւ հրամայեաց գործել նաւս թեթեւս հինգ հազարս: 16 Եւ գումարեաց ի նոսա արս սակաւս⁴ վասն թեթեւութեան, առ մի նաւ արս հարիւր, զի արագապէս ճախրեսցեն⁵ սլանալով առ մեծամեծ նա-

ւաւք շուրջանակի ի վերայ մկանանց⁶ ծովուն. եւ արձակեաց զնոսա ընդ ծով: 17 Եւ ինքն առ զզաւրս իւր որ ընդ իւր, եւ գնաց ի Քաղկեդոն: 18 Իբրեւ եհաս ի վերայ ամենայն երկրի՝ հնազանդեցան ամենայն շքեակիչք աշխարհին ի ծառայութիւն՝ որ զծովեզերքն եւ լեռնականս եւ դաշտականս: 19 Իսկ բազմութիւն զաւրաց Հոռոմին չոգան մտին ի Կոստանդնուպաւլիս պահապան քաղաքին. եւ ապականիչն⁸ չոգաւ եմուտ ի Քաղկեդոն, յամի երեքտասաներորդի Կոստանդնու: 20 Կազմեալ ունէր յեզր⁹ ծովուն նաւս բազումս թեթեւս, զի յորժամ ծանրագոյն նաւքն¹⁰ հասանիցեն¹¹ ի Քաղկեդոն¹² նա փութանակի հասցէ յաւանականութիւն¹³ նոցա: 21 Եւ զթուղթ¹⁴ արքային իւրեանց ետուն տանել ի քաղաքն առ Կոստանդին:

22 Եւ առ արքայ զթուղթն եւ եմուտ ի տունն Աստուծոյ, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ ասէ. «Տե՛ս, Տէր, զնախատինսս¹⁵, զոր նախատեցին զքեզ Հագարացիքս այս. եղիցի՛ ողորմութիւն քոյ, Տէր, ի վերայ մեր, որպէս յուսամք ի քեզ: 23 Լի՛ց զերեսս նոցա, անարգանաւք, եւ խնդրեսցեն գանուն քո, Տէր ամաչեցեալ խռովեսցին յաւիտեանս յաւիտենից, եւ ամաւթալից կորիցեն. ծանիցեն զի անուն քոյ Տէր է, եւ դու միայն բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի»: 24 Եւ վերացոյց զպսակն ի գլխոյ իւրմէ, եւ մերկացաւ զծիրանիսն եւ զգեցաւ փուրձ, եւ նստաւ ի վերայ մոխրոյ, եւ հրամայեաց պահս քարոզել

1 Ա ի պարսաց
2 Ա ծովեզերայս
3 Ա զնաւսն
4 Բոլ. Սակաւ փխ սակաւս
5 Ա նախարեսցեն

6 Ա մկանաց
7 Միհրդ., Պատկ. աշխարհիցն բնակիչք
8 Միհրդ. չիք ապականիչն
9 Ա զեզր
10 Ա նաւսն փխ. նաւքն
11 Միհրդ., Պատկ. հասանիցիցն
12 Բոլ. քաղկեդովն
13 Ա յօգնութիւն
14 Ա թուխտ (նաւս յետոյ)
15 Միհրդ., Պատկ. զնախատինս

ըստ արիմակիմ Նիմուէի՝ ի Կոստանդնուպալիս^ա:

25 Եւ ահա եկին Հասին ի Քաղկեդոն նաւք մեծամեծք յԱղեքսանդրացւոց կողմանէ Հանդերձ ամենայն փոքր նաւովքն եւ ամենայն կազմուածովքն իւրեանց, զի էր կազմեալ ի վերայ նաւացն մանգղիոնս, եւ մեքենայս հրացանս, եւ մեքենայս քարընկէցս, աղեղնաւորս եւ պարսաւորս. զի յորժամ Հասանիցեն ի պարիսպ քաղաքին՝ ի վերուստ ի գլխոյ աշտարակացն դիւրեաւ ելեալ ի պարիսպն՝ անկցին ի քաղաքն: 26 Եւ հրամայեաց զնաւսն կարգել ճակատ առ ճակատս, եւ դիմել¹ ի վերայ քաղաքին:

27 Եւ իբրեւ մեկնեցան ի ցամաքէն իբր երկու ասպարիզաւք² անդ էր տեսանել զգաւրութիւն ահին Տեառն. զի ակնարկեաց Տէր յերկնից սաստիկ հողմոյ բռնութեամբ, եւ յարեաւ հողմն, մրրիկ մեծ, եւ դղրդեցաւ ծովն ի ներքուստ անդնդոց ի վեր, եւ բարձրացեալ դիզանային ալիքն նորա իբրեւ զկատարս բարձրաբերձ լերանց, եւ հողմն փոթորկեալ ի վերայ նոցա ճայթէր իբրեւ զամպ եւ գոչէր, եւ խոխոջիւն յանդնդոց լինէին: 28 Եւ անկան աշտարակքն³, կործանեցան մեքենայքն⁴, քակտեցան նաւքն⁵, եւ ընկղմեցան բազմութիւն զաւրացն ի խորս ծովուն. եւ մնացեալքն ի վերայ տախտակացն ցնդեցան ի վերայ ալեաց ծովուն, եւ տարաբերեալ այսր եւ անդր⁶ յեւեէջս ալեացն կործանեցան. զի եբաց ծովն զբերան իւր, եւ եկուլ զնոսա. եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի: 29 Եւ ասպրեցոյց Աստուած յաւուր յայնմիկ բարձրացեալ բազ-

կաւ զքաղաքն ի ձեռն աղաւթից աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի, եւ ոչ դադարեաց հողմոյն բռնութիւնն եւ ծովուն խռովութիւնն մինչեւ ցվեց աւուրս:

30 Եւ եղեւ իբրեւ տեսին Իսմայելացիքն զձեռն ահի Տեառն՝ բեկաւ սիրտ նոցա. եւ ելեալ ի գիշերի ի Քաղկեդոնէ՝ գնացին ի տեղի իւրեանց: 31 Եւ միւս զաւրն, որ նստէր ի կողմանս Կապուտկացւոց՝ արար պատերազմ ընդ զաւրացն Յունաց. զոր եհար Յոյնն⁷, եւ գնաց փախստական ի կողմանս Արուաստանի, հարեալ աւար զՉորրորդ Հայս:

32 Եւ եղեւ յետ անցանելոյ աշնանային ժամանակին, ի մերձեալ ձմերայնոյ՝ եկն զաւրն Իսմայելի եւ նստաւ ի Դուին. եւ խորհէր երթալ հարկանել զՎիրս սրով սուսերի: 33 Խաւսէր ընդ նմա ի ձեռն պատգամի սպառնալեաւք, զի կամ եկեսցեն ի ծառայութիւն նոցա, եւ կամ ի բաց թողցեն զերկիրն եւ գնացեն: 34 Իսկ նոքա չառին յանձն առնել այնպէս, այլ պատրաստեցան ընդդէմ նոցա ի պատերազմ: 35 Եւ գնաց Իսմայելացին ի վերայ նոցա պատերազմաւ՝ երթալ սատակել զնոսա իսպառ:

36 Այն ինչ⁸ եղեւ նոցա ի ճանապարհ ելանել՝ անկաւ ի վերայ նոցա ցուրտ եւ ձիւն ձմերայնոյ. վասն որոյ չոգան փութանակի եւ գնացին ի կողմանս Ասորեստանի, եւ ի Հայս անիրաւութիւն ինչ ոչ գործեցին:

37 Իսկ իշխանքն Հայոց որ ի Յունաց եւ որ ի Տաճկաց կողմանէ, Համազասպ եւ Մուշեղ, եւ այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, եւ արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր եւ արիւնհեղութիւն, եւ անցու-

^ա Հմմտ. Յվն. 9. 7:

1 Ա. դիմեալ

2 Ա. ասպարիսոփ

3 Ա. աշտարակսն

4 Ա. մեքենայսս

5 Ա. նաւսն

6 Ա. այսր անդր

7 Ա. յունն

8 Ա. այս ինչ փխ այն ինչ

ցին խաղաղութեամբ զաւուրս ձմերայնոյն, զի եւ զշինականսն ապրեցուցանեն:

38 Քանզի Ռշտունեաց տէրն անկաւ յախտս հիւանդութեան, եւ չոգաւ անկաւ յԱղթամար կղզի: 39 Եւ ոչ գոյր նմա լինել կարողութիւն ելանել արտաքս կամ խորհել ինչ: 40 Եւ բաժանեցին զերկիրն ըստ թոռոյ իւրաքանչիւր հեծելոց, եւ կարգեցին հարկապահանջս ոսկւոյ եւ արծաթոյ:

41 Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զաւրէն հիւանդաց, յորժամ տազնապեցի ցաւն, եւ հատանիցի ի խաւսից՝ այնպիսի ինչ եղեն. զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի եւ թագստեան, եւ ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով՝ եւ ելս ոչ կարիցէ գտանել:

42 Իսկ իբրեւ զայն ետես Ռշտունեաց տէրն՝ խնդրեաց յիւր¹ զաւրս յիսմայելացւոցն, զի հարցէ զՀայն եւ հալածական արացէ, եւ զՎիրս սատակեացէ ի սուր սուսերի:

ԳԼՈՒԽ ԾԱ.

1 Ապստամբութիւն Մարաց յիսմայելացւոց: 2 Բեկումն գաւրութեան իսմայելացւոց յայնկոյս Ճորայ Պահակին եւ փախուստ մնացելոցն ընդ դժուարս լերինն Կովկասու:

3 Յայսմ ամի ապստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայելի եւ սպանին զիշխանն հարկապահանջին արքային Իսմայելի, ապաւէն եւ թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորածորս, զվիհս, զվիմուսս, եւ զխորածորս դժնդակս՝ որ զգետովն Գագայ եւ զլերամբն² Մարաց, զժիր եւ զքաջ ազ-

գացն զաւրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գելն³ եւ Դելումն:

4 Քանզի ոչ կարացին համբերել դառն եւ դժնդակ ծառայութեանն եւ հարկին ծանրութեանն որ ի վերայ նոցա, զի անդրէն ի նոցանէ միոյ միոյ ամի առնուին ՅԿԵ պայուասիկ⁴ դրամ. եւ որ ոչն կարէր տալ՝ առնուին ընդ միոյ միոյ դրամի մարդ մի, եւ ի բաց բարձին զհեծելութիւն եւ զիշխանութիւն աշխարհին: 5 Վասն այնորիկ տուեալ նոցա զանձինս իւրեանց ի կշիռս՝ լաւ համարեալ զմահ քան զկեանս. զմի յերկուցն գտանել, կամ մեռանել՝ եւ կամ ազատել ի չար ծառայութենէն: 6 Եւ սկսան զմնացեալ մարդիկն զաւրս ժողովել, եւ գունդս գունդս կազմել, եւ թերեւս կարասցեն զերծանել ի ծանեաց վիշապին եւ դառնաշունչ գազանէն:

7 Արդ՝ իբրեւ ետես բազմութիւն զաւրացն Իսմայելի, եթէ ոչ յաջողի նոցա գործն ի կողմանէ ամուր լերանցն Մարաց. քանզի ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա (Կեթրուս եւ Սկիւթեայ)⁶, որ են Գեղք⁸, Դելումք, հանդերձ ամենայն ամրաբնակ բազմութեամբն: 8 Եւ բազումք ծախեցան՝ յամուրս եւ ի խորածորս գահավէժ լինելով, եւ բազումք խոցոտեալ նետիւք ի խարձան դժկոտս ի քաջ եւ արի պատերազմողացն՝ ոստուցեալ ի բաց ի կողմանցն յայնցանէ, դէմ եդին երթալ ի կողմանս⁹ հիւսիսոյ, յազգն՝ որ ըստ Կասբիական դրացն: 9 Չոգան հասին ի կապանս Ճորայ: 10 Եւ անցեալ ընդ ներքս

1 Բոյ. իւր փխ յիւր
2 Ա զլերամբնն

3 Բոյ. Դելն (Դէլն) փխ Գելն
4 Միհրդ. պայուասիկ
5 Միհրդ. չիւ ժանեաց վիշապին եւ դառնաշունչ գազանէն
6 Ա կեթրուս, եսիկիւթիայ / Միհրդ. կեթրուս եսիկիւթեայ
7 Երից. որ են գետի ի Դելամի
8 Բոյ. գետի փխ Գեղք
9 Ա ի կողմանսն

ընդ կապանն՝ աւերեցին զամենայն կողմանս աշխարհին որ առ լեռնոտամբն. եւ ելեալ ընդդէմ նոցա զաւրս սակաւս, որում Հոնաց դուռն կոչեն, հարին զնոսա, զի էին կողմնապահք տեղւոյն:

11 Եկն այլ զաւր ի կողմանցն Թետաւաց, եւ բաղխեցին զմիմեանս զաւրութեամբ սաստիկ, եւ ի պարտութիւն մատնեցաւ զաւրն Իսմայելի առաջի զաւրացն Թետաւաց: 12 Եւ հարին զնոսա եւ սատակեցին սրով սուսերի: 13 Եւ ապրեալք փախստական ոչ կարացին ճողոպրել ընդ կապանն, զի եկն այլ զաւր նոցա ի թիկանց. եւ նոցա դէմս ի լեռնն արարեալ ի դժուարս մեծի լերինն Կաւկասու, ելին ընդ կողածս լերինն հազիւ հազ, սակաւք ճողոպրեալք մազապուրծ, մերկ եւ բոկ, հետեւակ եւ վիրաւոր, չոգան անցին ի կողմանս Տիգրոնի, յերկիր բնակութեան իւրեանց:

ԳԼՈՒԽ ԾԲ

- 1 Մուշեղ Մամիկոնեան մտանէ ի ծառայութիւն Իսմայելացւոց:
- 2 Թէոդորոս Ռշտունի եւ այլ իշխանի հնազանդին ի ծառայութիւն Իսմայելացւոց:
- 3 Պատերազմ Յունաց եւ Իսմայելացւոց ի Նախնաւանի եւ բեկումն Յունաց:
- 4 Առումն Կարնոյ, աւերումն երկրին Հայոց, Ադուանից եւ Սիւնեաց ի ձեռն Իսմայելացւոց եւ տալ պատանդս:
- 5 Մահ Թէոդորոսի Ռշտունւոյ:
- 6 Համագասպ Մամիկոնեան կարգի իշխան Հայոց:
- 7 Կաթողիկոսն Ներսէս դառնալ յաթոռ կաթողիկոսութեանն եւ կատարել գշիմուած եկեղեցւոյն Զուարթնոց:
- 8 Հայր ապստամբին յԻսմայելացւոց. կոտորումն պատանդացն:
- 9 Մուշեղ Մամիկոնեան ի բաց կայ ի ծառայութեան Իսմայելացւոց եւ կոչի ի պաղատն:
- 10 Խոռվութիւն ի

մէջ զաւրացն Իսմայելի բաժանել Լոցա ի չորս մասունս եւ կոտորել զմիմեանս: 11 Յաղթել Մաւիասայ հակառակորդաց, միապետել եւ առնել խաղաղութիւն: 12 Վերջաբան:

13 Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէրն ապստամբեալ ի Յունաց կողմանէն՝ հնազանդեցաւ ի ծառայութիւն Իսմայելի. եւ ի նմին ամի զաւրն Իսմայելի որ ի Հայաստան աշխարհի՝ կալան ի ծագաց ի ծագս գերկիրն ամենայն: 14 Եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն եւ ամենայն իշխանքն աշխարհին միաբանեալ հնազանդեցան ի ծառայութիւն, եւ ամենայն իրաւք փութային զկամս նոցա կատարել, զի երկիւղանհնարին մահու կայր ի վերայ նոցա:

15 Յամին յայնմիկ ի ձեռն նախանձու եղբար իւրոյ մատնեցաւ երանելի այրն աստուածասէր Արտաւազդն Դիմաքսեան¹ եւ տուաւ ի ձեռն անողորմ դահճի Հաբիբն անուանեալ զաւրավարի, որ նստէր յԱրուճն Աշնակի: 16 Եւ սպան զնա սատակմամբ չարաչար մահուամբ:

17 Եւ էին աւուրք ցրտաշունչ ձմերայնոյն, եւ նեղէր զնոսա Յոյնն. եւ նոքա ցրտոյն ոչ կարէին ելանել եւ տալ պատերազմ ընդ նոսա, այլ ելին յանկարծակի եւ գնացին անցին զգետովն, եւ չոգան ամրացան ի Զարեհաւանի: 18 Իսկ Յոյնն իբրեւ ետես զայն՝ ոչ ինչ փոյթ արար վասն նոցա, այլ աւարեաց զբերդն Դըւնայ², եւ գնաց ի Նախնաւան³, եւ մարտեաւ ընդ բերդին, զի աւարեսցէ զնա եւս: 19 Եւ էր զաւրավար զաւրուն Յունաց Մաւրիանոս ոմն, զոր ասէին այր հաւատարիմ:

20 Արդ՝ ի հասանել ժամանակի գարնայնոյն՝ կազմեցաւ պատրաստեցաւ⁴ ի

1 Միհրդ., Պատկ. Դիմակսեան

2 Ա. Դունայ

3 Ա ի Նախնաւան

4 Ա եւ պատրաստեաց

պատերազմ ըմդ գաւրուն Իսմայելի: 21 Եւ Մաւրիանոս¹ յամառեալ՝ զիւրն խորհէր կատարել զգործ: 22 Եւ արշաւեաց Տաճիկն ի վերայ Յունին, որ մարտ եղեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանի. եհար զնոսա եւ սատակեաց ի սուր սուների, եւ զմնացեալսն փախստական արարեալ: 23 Եւ գնաց Մաւրիանոս փախստական, եւ չոգաւ անկաւ ի Վիրս: 24 Իսկ գաւրն Իսմայելի դարձաւ ի նոցանէ եւ պաշարեաց զԿարնոյ քաղաք, եւ մարտ եղեալ կռուեցաւ² ընդ նոսա. իսկ նոքա ոչ կարացին զղէմ ունել նոցա պատերազմաւ, բացին զղուրս քաղաքին, եւ հնազանդեցան ի ծառայութիւն: 25 Եւ նոցա մտեալ ի քաղաքն ժողովեցին ոսկի եւ արծաթ եւ զամենայն բազմութիւն ընչից քաղաքին. եւ կողոպտեաց³ զամենայն երկիրն Հայոց, զԱղուանս, զՍիւնիս, ⁴եւ մերկացոյց զամենայն եկեղեցիս: 26 Եւ կալաւ պատանդ զգլխաւոր իշխանս աշխարհին եւ զկանայս եւ զուստերս եւ զզստերս բազմաց:

27 Եւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն համազգեաւքն իւրովք գնաց ընդ նոսա. եւ տարեալ իջուցին զնոսա յԱսորեստան: 28 Անդ մեռաւ Թէոդորոս Ռշտունեաց տէրն, եւ մարմին նորա բերաւ ի գաւառ իւր, եւ թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց:

29 Եւ ունէր զիշխանութիւն Հայոց աշխարհիս Համազասպ Մամիկոնէից տէրն, որդի Դաւթի, այր առաքինի յամենայն դէմս: 30 Բայց ընդանեսուն եւ ընթերցասէր եւ ուսումնասէր, եւ ոչ ըստ հայրենի ազգին վարժ եւ կիրթ հրահանգաւք զինուորական վարժից, ո՛չ մտեալ⁵ ի ճակատ եւ ոչ տեսեալ զդէմս թշնամեաց:

1 Ա. Մուրիանոս
 2 Միհրդ., Պատկ. կռուեցան
 3 Երից. կողոպտեցաւ
 4 Միհրդ., Պատկ. եւ զամենայն եկեղեցիս մերկացոյց
 5 Միհրդ. որ մտեալ փիս ոչ մտեալ

31 Եւ արդ՝ սկսաւ նախանձել ի բնութիւն հայրենի տանն քաջութեանն, ջերմեռանդ փութով կատարել եւ զգործ քաջութեան ըստ նախնեացն վարժից լիապէս կատարել, ի վերուստ խնդրելով զառաջնորդութիւն եւ զյաջողութիւն անձին քաջութեանն կատարել:

32 Իսկ կաթուղիկոսն⁶ Հայոց Ներսէս գնաց ընդ թագաւորին, որպէս վերագոյն ասացի, եւ չուեաց ընդ նմա ի Կոստանդնուպաւլիս⁷: 33 Եւ ընկալաւ զնա անդ պատուով. եւ ետուն նմա ինչս եւ արձակեցին անդրէն ի տեղի իւր, եւ եկն դադարեաց ի Տայս մինչեւ մեռաւ Ռշտունեաց տէրն, դադարեաց ասպատակ Տաճիկն. եւ ապա յետ վեցերորդի ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր. եւ հաստատեցաւ յաթոռ կաթուղիկոսութեան. փութայր կատարել զչինուած եկեղեցոյն, զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի⁸:

34 Ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայելացւոցն, եւ հնազանդեցան անդրէն ի ծառայութիւն թագաւորին Յունաց: 35 Եւ արար արքայ Կոստանդին զՄամիկոնէից տէր զՀամազասպ՝ կիւրապաղատ⁹, եւ ետ նմա գահոյս արծաթիս եւ զիշխանութիւնն աշխարհին Հայոց, եւ պատիւս այլոց իշխանացն, եւ գանձս զաւրացն:

36 Յայնժամ ետես արքայն Իսմայելի, եթէ ի բաց կացին Հայք ի ծառայութենէ նոցա, զամենայն զպատանդսն, զոր տարեալ էին յերկրէն¹⁰, ոգիս իբրեւ ՌՉՀԵ,

6 Ա. կաթաղիկոսն
 7 Ա ի Կոստանդինուպոլիս
 8 Բոյ. Վաղարշապատ Բաղափի բառերին յաջորդում է Արդ թէպէտ եւ վայրապար գրուցեալ (ԾԲ 55) ... եւ այս եւս կատարեսցի ի ժամանակի իւրում (ԾԲ 64) հատուածը, որը մենք տեղափոխել ենք Պատմութեան վերջը՝ որպէս նրա վերջաբանը:
 9 Ա կորապաղատ
 10 Ա ի յերկրէն

սատակեցին զամենեսեան ի սուր սուսերի. եւ մնացորդքն սակաւք, թուով իբրեւ ԻԲ, որք ոչ դիպեցան ի տեղւոյն, այն միայն ապրեցան:

37 Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէր, վասն զի էին նորա չորս որդիք¹ ի պատանդի առ Իսմայելացւոցն, վասն այնորիկ ոչ կարաց ի բաց կալ ի ծառայութենէ նոցա: 38 Եւ էր ²Համագասպայ եղբայր մի ի պատանդի: 39 Բայց զայն՝ եւ այլ եւս յիշխանացն Հանդերձ կանամբք իւրեանց խնդրէին առ ինքեանս յԱսորիս: 40 Վասն այնորիկ լաւ Համարեալ զմահ քան զկեանս՝ ի բաց կացին ի ծառայութենէ նոցա, եւ Հապճեպ երթեւեկով Հնազանդեցան ի ծառայութիւն թագաւորին Յունաց, Հանդերձ միաբանութեամբ իշխանացն եւ զաւրացն Աղուանից եւ իշխանացն³ աշխարհին Սիւնեաց Հանդերձ աշխարհաւն իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշխարհագիրն Ատրպատականի, մինչեւ բարձաւ թագաւորութիւնն Պարսից եւ տիրեաց Իսմայելացին, նոքա անդրէն նուաճեալ միաբանեցան ընդ Հայոց: 41 Եւ ձերբակալ արարեալ զՄուշեղ եւ զայլ եւս յիշխանացն որ էին ընդ նմա: 42 Արդ՝ զայլ իշխանսն, զորս ձերբակալ արարեալ էին՝ Հրամայեաց թագաւորն թողուլ ի բաց, բայց զՄուշեղ առ ինքն խնդրեաց:

43 Արդ՝ առաքեաց Աստուած խոովութիւն ի մէջ բանակացն որդւոցն Իսմայելի, եւ պատառեցաւ միաբանութիւն նոցա, եւ խառնեցան⁴ ընդ միմեանս, եւ բաժանեցան ի չորս մասուսն: 44 Մասն մի այն՝ որ ի Հնդկաց կողմանէն. մասն մի այն՝ որ ունին զԱսորեստանն եւ զկողմանս Հիւսիսոյ. մասն մի այն՝ որ յԵգիպտոս եւ ի կող-

մանս Թետալացւոց. մասն մի ի կողմանս Տաճկաց եւ յԱսկարաւն⁵ կոչեցեալ տեղւոջ: 45 Եւ սկսան կռուել ընդ իրեարս, եւ անհուն կոտորածով զմիմեանս սատակէին: 46 Արդ՝ միաբանեալ այն որ յԵգիպտոս եւ որ ի կողմանս Տաճկաց՝ սպանին զթագաւորն իւրեանց, եւ աւար Հարին զբազմութիւն գանձուցն, եւ այլ թագաւոր նստուցին: 47 Եւ ինքեանք⁶ գնացին յիւրաքանչիւր տեղիս:

48 Իսկ այն իշխանն որ ի կողմանս Ասորեստանի էր, Մաւիաս անուն իշխան նոցա, որ էր երկրորդ թագաւորին իւրեանց, իբրեւ ետես զեղեալսն՝ միաբանեալ զզաւրս իւր, գնաց եւ նա յանապատն եւ սպան զայն եւս արքայ, զոր նոքայն նստուցեալ էին, եւ ետ մարտ ընդ զաւրացն որ ի Տաճկաց կողմանէ, եւ եհար գնոսս կոտորմամբ մեծաւ: 49 Եւ դարձաւ անդրէն յաղթութեամբ յԱսորեստան: 50 Իսկ այն զաւրն որ յԵգիպտոս, միաբանեալ ընդ թագաւորին Յունաց, եւ արար Հաշտութիւն, եւ միաւորեցաւ: 51 Եւ բազմութիւն զաւրաց իբրեւ Հնգետասան Հազարաց Հաւատացին ի Քրիստոս եւ մկրտեցան: 52 Եւ սաստկացաւ արիւն կոտորածին անհուն բազմութեանց ի մէջ բանակացն Իսմայելի. եւ գործ պատերազմին տագնապէր գնոսս՝ զմիմեանս սատակելով: 53 Եւ ոչ կարէին դադարել փոքր մի ի սրոյն եւ ի գերութենէն եւ ի սաստիկ պատերազմացն՝ որ ի ծովու եւ ի ցամաքի, մինչեւ զաւրացաւ Մաւիաս եւ յաղթեաց ամենեցուն: 54 Եւ Հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ՝ եւ թագաւորէ ի վերայ կալուածոց⁷ որդւոցն Իսմայելի, եւ առնէ խաղաղութիւն ընդ ամենեսին⁸:

1 Ա որդիս
2 ՁԶ երեք Համագասպայ եղբայր մի / Միհրդ., Պատկ. երեք (որդիք) Համագասպայ (եւ) եղբայր մի
3 Ա իշխանս
4 Ա խառնակեցան փխ խառնեցան

5 Ա յԱսկարոն
6 Ա իւրեանք փխ ինքեանք
7 Ա կալուածոյ
8 Միհրդ., Պատկ. ամենեսին (ամէն) փխ ամենեսին

55 Արդ՝ թէպէտ եւ վայրապար զրուցեալ տողեցից զբանս ի կարգի պատմութեանս ըստ անհանճար խորհրդոյ մտացս իմոց¹, եւ ոչ ըստ արժանաւոր շնորհի գիտութեան. այլ սակայն անդր հայեցեալ ի կարգս ուսումնասիրացն, եւ հաստատեցից մարգարէական բարբառովն, որ ըստ հրամանի Տեառն խաւսեցեալ: 56 Զի թէ եւ յառաջինս կանխաւ կատարեալ՝ այլ սակայն եւ ի վերջինսս մինչեւ յաւիտեան² կատարեսցի ըստ բանին Տեառն³ որ ասէ. երկինք եւ երկիր անցցեն՝ եւ բանք իմ մի անցցեն⁴: 57 Զի հուր բորբոքեսցի, ասէ, ի բարկութենէ իմմէ⁴, այրեսցէ եւ իջցէ մինչեւ ի դժոխս ներքինս⁵: 58 Եւ զի զնոցանէն ասէ՝ յայտ է, զի ասէ, եթէ Վառեսցին հրով, բորբոքեսցին հիմունք լերանց նոցա⁶, այսինքն զմեծամեծ իշխանացն զբռնութիւնսն: 59 Եւ թէ՛ Կուտեցից չարիս ամենայն ի վերայ նոցա, եւ նետիւք իմովք սպանեցից զնոսա⁷: 60 Զի որպէս

նետք թռուցեալք ի գրկաց առն կորովոյ ի լայնալիճ աղեղանէ⁶ ի նպատակ՝ այսպէս եւ սոքա ի Սին անապատէ որ ի վերայ ամենայն երկրի կատարեալ սովով եւ սրով եւ ահիւ մեծաւ: 61 Եւ զի ի կողմանս անապատին բորբոքեցաւ հուր՝ այսպէս յայտնապէս ցուցանէ այնու զի ասէ. Լարս առանց բժշկութեան արձակեսցես ի վերայ նոցա, զգազանս անապատի, որք այսր եւ անդր քարշեսցեն զնոսա ընդ երկիրէ: 62 Զորմէ գոչէ⁷ մարգարէն Դանիէլ, եթէ «Գագանն չորրորդ ահեղ եւ զարմանալի, եւ հզար յոյժ. ժանիք նորա երկաթիք, եւ մագիլք նորա պղնձիք⁸. ուտէր եւ մանրէր, եւ զմնացեալսն առ ոտն կոտորէր»⁹ Եւ զայլն: 63 Եւ ասա յելս բանիցն ասէ. «Մերձ է ար կորստեան նոցա, հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ նոցա»¹⁰: 64 Որ եւ այս եւս կատարեսցի ի ժամանակի իւրում:

1 Ա իմոյ
 2 Ա յաւիտեանս
 3 Ա չիք տեսան
 4 Մ արք. ԻՊ 35
 4 Ա իմէ
 5 Բ Օր. ԼԲ 22. ԳԵ՝ ԿՆԵ-Երեմ. ԺԵ 14:
 6 ՏԵ՝ Բ Օր. ԼԲ 22:
 5 Ա եթէ փխ եւ թէ
 Գ ՏԵ՝ Բ Օր. ԼԲ 23:

6 Ա աղեղնէ
 Է ՏԵ՝ Բ Օր. ԼԲ 24:
 7 Միհրդ., Պատկ. կոչէ
 8 Ա պղնձիք
 9 Դ. Կ. Լ 7
 9 Ա, Միհրդ., Պատկ. եւ այլն եւս ասա / Մալխ. եւ այլն եւս եւ ասա
 Է ՏԵ՝ Երեմ. Խ. 9 21:

ՆԵՐՍԷՍ Գ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՅԵՑԻ

ԿԱՆՈՆ ԴԵԻՆԱՅ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ

ՆԵՐՍԷՍ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՅԵՑԻՆ ԵՒ ԴՈՒՆԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ներսէս Գ. Տայեցի (Շինող) կաթողիկոսը աթոռակալել է 641-661 թթ.՝ Հայաստանի եւ Հայոց Եկեղեցու համար ամենաբարդ մի դարաշրջանում: Նրա օրօք տեղի են ունեցել մի շարք եկեղեցական ժողովներ, որոնցից մէկում ընդունուած կանոնները յայտնի են «Կանոնք սուրբ ժողովոյն Դնայ» անուանումով: Սովորաբար այդ ժողովը թուագրուած է 645 թ., թէպէտ բացառուած չէ նաեւ 648 թ., երբ Բիւզանդիայի Կոնստանտ Բ. կայսրը պահանջեց Հայերից միանալ Քաղկեդոնի տիեզերական ժողովի երկաբնակ բանաձեւին եւ նորից մերժում ստացաւ:

Դուինի հինգերորդ ժողովի բովանդակալից կանոնները բազմաթիւ ուսումնասիրութիւնների առարկայ են դարձել, դեռ մէկ դար առաջ արժանացել համեմատական հրատարակութեան: Սակայն անգամ Վազգէն Յակոբեանի՝ շուրջ յիսուն ձեռագրերի հիման վրայ կազմուած նրանց համեմատական բնագրում որոշ ուղղումների անհրաժեշտութիւն նկատուեց: Մասնաւորապէս, ժողովի բուն արձանագրութեան բնագրից փակագծերով անջատեցինք առաջաբանը, գլխացանկը եւ վերջաբանը, որոնք, ամենայն հաւանականութեամբ, աւելացուել են Հայոց կանոնագրի կազմողներից մէկի կողմից Յովհաննէս Օձնեցուց մինչեւ ժ դարի կէսն ընկած ժամանակահատուածում: Նշենք նաեւ, որ առաջաբանի տեղեկութիւնների համար, հաւանաբար, հիմք են ծառայել ժողովի բուն արձանագրութեան փաստաթղթի վրայ եղած ինչ-ինչ նշումներ: ԺԲ դ. իր Դատաստանագիրքը կազմելիս այս կանոններից էապէս օգտուել է Մխիթար Գօշը:

Դուինի ժողովի կանոնները պահպանուել են Հայոց կանոնագրի Ա խմբի ձեռագրերում՝ ԼԸ, իսկ Բ խմբի օրինակներում՝ ԼԹ թուահամարի տակ: Ինչպէս ձեռագրերի մանրակրկիտ քննութեամբ պարզաբանել է Վազգէն Յակոբեանը, Կանոնագրքի շուրջ 200 օրինակների՝ մեզ հասած երկու ձեռագրախմբերը ծագում են ժ դ. վերջում (992-997 թթ. միջեւ) կազմուած մէկ ընդհանուր մայր տարբերակից, որն ունեցել է 40 կանոնախումբ: Նրանից են ծագում Հայոց կանոնագրքի հնագոյն երկու ձեռագրերը՝ A գրչագիրը՝ արտագրուած 1098 թ., («տէր Խաչիկի օրինակից»․ Նոր Զուղայի ձեռագիր), եւ B գրչագիրը՝ արտագրուած ըստ ամենայնի միեւնոյն մայր օրինակից ԺԳ դ.: Դրանցից կատարուած տասնեակ ընդօրինակութիւնները կազմում են Հայոց կանոնագրքի ձեռագրերի Ա խումբը (մենք նկատի չենք ունեցել դրանք): Ժ դ. վերջի այդ տարբերակից են արտագրուել նաեւ Հայոց կանոնագրի Բ խմբի մեզ հասած երեք ենթախմբերի մայր գրչագրերը: Այդ մայրերից ոչ մէկը մեզ չի հասել, ուստի Բ խմբի մայր օրինակի ընթերցումները վերհասնելու համար անհրաժեշտ է նախապէս վերականգնել բոլոր երեք ենթախմբերի ձեռագրերի մայր գրչագրերի ընթերցումները՝ այդ ենթախմբերից իւրաքանչիւրի բոլոր օրինակների տուած նիւթի համեմատական քննութեամբ: Կատարելով այդ աշխատանքը (Վ. Յակոբեանի համեմատական հսկայածաւալ աշխատանքի օգնութեամբ)՝ ենթախմբերը պայմանականօրէն անուանել ենք՝ K_a (acdkmprsv ձեռագրեր՝ ԺԶ-ԺԷ դդ.), K_b (befpq ձեռագրեր՝ ԺԶ-ԺԸ դդ.) եւ K_r (hloru ձեռագրեր՝ բոլորը ԺԷ դ.): Ընդհանուր առմամբ, Վ. Յակոբեանի մանրակրկիտ համեմատական աշխատանքի շնորհիւ, իւրաքանչիւր ենթախմբի նախնական ընթերցումների վերհասնումը լուրջ խնդիրներ չի յարուցում (որոշ կասկածելի դէպ-

քերում շահագրգիռ ընթերցողն ինքը կարող է դիմել Վ. Յակոբեանի քննական-համեմատական հրատարակութեան տողատակերի մատուցած սպառիչ նիւթին):

Կանոնագրքի ձեռագրախմբերի ընթերցումների համադիր օգտագործմամբ կազմուած Դուինի ժողովի կանոնների քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա եօթերորդարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Կանոնագրքի առանձին ձեռագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են *A*, *B* ձեռագրերից կամ *Բ* խմբի ձեռագրախմբերի (վերականգնուած) մայր օրինակներից, ուստի չեն կարող օգտակար համարուել Կանոնների ինքնագրի վերականգնման հարցում: Հայոց կանոնագրքի կազմող գրիչների կողմից աւելացուած վերնագիրը եւ յօդուածացանկը վերցրել ենք փակագծերի մէջ: Իբրեւ է դարի բնագրի վերականգնում, բնականաբար, բաց են թողնուած կանոնագրքային ընդհանուր գլխակարգութեան յօդուածահամարները: Բնագրի տողատման եւ կէտագրման խնդրում էապէս օգտուել ենք Հայոց կանոնագրքի քննական հրատարակութեան հեղինակ Վազգէն Յակոբեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Ա. Զամինեան**, Հայոց եկեղեցու պատմութիւն, հտ. Ա-Բ, Նոր Նախիջեւան, 1908-1909:
2. **Կանոնագիրք Հայոց**, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, հտ. Ա, Երեւան, 1964. հտ. Բ, Երեւան, 1971:
3. **Հ. Վ. Հացունի**, *Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութեան*, Վեներտիկ-Ս. Ղազար, 1927:
4. **Մխիթար Գօշ**, *Գիրք Դատաստանի*, աշխատասիրութեամբ Խ. Թորոսեանի, Երեւան, 1975:
5. **Մխիթար Վարդապետ, Ա. Տիգրանեան**, *Կանոն Դուայ ս. ժողովոյն*, Վաղարշապատ, 1905:
6. **Ա. արքեպս. Մխիթարեանց**, *Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց*, Վաղարշապատ, 1874:
7. *Պատմութիւն Սերէնոսի*, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արգարեանի, Երեւան, 1979:
8. **Մ. արքեպս. Օրմանեան**, *Ազգապատում*, հտ. Ա:
9. **А. А. Аюпян**, *О хронологии последних событий в "Истории 684 года"*, "Кавказ и Византия", выпуск 6, Ереван, 1988.
10. **С. Аревшатын**, *Каноны четвертого Двинского собора*, ԲՄ, թիւ 6, Երեւան, 1961.

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԾ ԶԵՆԱԳՐԵՐԻ

A - Նոր Զուղայի ձեռ. թիւ 131 (ՄՄ լուսանկարների հաւաքածոյ, թիւ 203), ժամանակ՝ 1098 թ.

B - ՄՄ ձեռ. թիւ 6409, ժամանակ՝ ԺԳ դ.

K_a, *K_b*, *K_r* - Հայոց կանոնագրքի Բ խմբի ձեռագրախմբերի վերականգնուած մայր օրինակների ընթերցումներ (ըստ Վազգէն Յակոբեանի համեմատած նիւթի)

[ԼԸ¹. ԿԱՆՈՆ ԴԸԻԱՅ² ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ]

1 [Զոր յամի³ չորրորդի⁴ Կոստանտինոսի⁵ կայսեր⁶՝ բարեպաշտ⁷ թագաւորի⁸ Հոռոմոց⁹, այս գիր ի¹⁰ հաստատութիւն գրեցաւ յուղիղ կարգի եւ կանոնաց սրբոյ¹¹ եկեղեցւոյ¹² եւ առաջնորդաց եւ ժառանգաւորաց, հրամանաւ երանելւոյ¹³ կաթողիկոսին¹⁴ Հայոց¹⁵ Ներսէսի¹⁶ Շինողի եւ այլոց եպիսկոպոսաց, որոց անուանքն¹⁷ դրոշմեալ կան գրով ի կատարման կանոնացդ¹⁸, գլուխս¹⁹ ժԲ:

2 Ա. Վասն առաջնորդաց:

3 Բ. Վասն եպիսկոպոսաց, թէ չէ²⁰ պարտ յայլոյ²¹ վիճակի²² սեղան հաստատել:

4 Գ. Եպիսկոպոսի²³ որ զայլոյ վիճակ յափշտակէ:

5 Դ. Վասն եպիսկոպոսի իւր վիճակին²⁴ տեսչութիւն առնել²⁵:

6 Ե. Վասն շնորհի եւ ժառանգութեան²⁶:

7 Զ. Վասն ժառանգաւորաց, որք²⁷ թողուն զտեսչութիւն եկեղեցւոյ²⁸:

8 Է. Վասն որք գերեցան յանաւրինաց:

9 Ը. Վասն որ²⁹ ամուլ լինի³⁰ կանանց³¹ ժառանգաւորաց եկեղեցւոյ³²:

10 Թ. Վասն ազատաց զերդ եւ զմարդ բաժանելոյ:

11 Ժ. Վասն ազատաց որ³³ ի վերայ վանաց իշխանութեամբ վարին եւ փոխեն զվանաց երէցսն³⁴:

12 ԺԱ. Վասն ազատաց դարձեալ, որք³⁵ հարկապահանջ են³⁶ ի տկարանոցաց:

13 ԺԲ. Վասն ազատաց եւ ռամիկ հեծելոց, որք իջավանս³⁷ առնեն ի վանս³⁸:

1 K_{abr} ԼԹ փխ ԼԸ

2 A Դրւնի, K_b Դու փխ Դրւնայ (BK_{ar}) (ուշ ձեռագրերում՝ Կանոնի Դրւնայ, որը մտել է հրատարակութիւնների մէջ)

3 K_r ամի

4 K_b չիք Զոր յամի չորրորդի

5 BK_{abr} Կոստանդինոսի փխ Կոստանտինոսի (K_A)

6 K_b կայսերէ

7 K_r բարեպաշտութիւն փխ բարեպաշտ

8 K_b թագաորին K_r չիք թագաւորի

9 K_a Հոռովայ, K_b Հոռոմոց փխ Հոռոմոց

10 K_b է գիր փխ գիր ի

11 K_b սուրբ փխ սրբոյ

12 K_{br} եկեղեցոյ

13 K_{ar} երանելոյ

14 K_a կաթողիկոսի

15 A Հայոց փխ Հայոց (BK_{abr}) (գուցէ Զ դարի բնօրինակին է յանգում հէնց այս Հայոց ընթերցումը, որն արձանագրուած է, օրինակ, Արունի կաթողիկէի շինարարական վիմագրում. «...ի ձեռն Գրիգորի Մամիկոնեանի Հայոց իշխանի...»)

16 AB Ներսիսի փխ Ներսէսի (K_{abr})

17 K_{ar} անուանիք

18 K_a կանոնիդ փխ կանոնացդ

19 K_a գլուխի, BK_{br} գլուխ փխ գլուխ (A)

20 K_{abr} ոչ է փխ չէ (AB)

21 B յայլոց K_r այլոյ

22 K_{abr} վիճակ փխ վիճակի (AB)

23 B վասն եպիսկոպոսի

24 K_r վիճակի փխ վիճակին

25 K_b առնել փխ առնել

26 K_{ar} ժառանգաւորութեան, K_b ժառանգաւորաց փխ ժառանգութեան (AB)

27 K_b որ

28 K_r եկեղեցոյ

29 K_a որք B չիք վասն որ

30 K_a լինին

31 K_{abr} ի կանանց

32 K_a եկեղեցւոյն K_b չիք եկեղեցւոյ

33 K_{ar} որք

34 K_b չիք եւ փոխեն զվանաց երէցսն

35 K_b որ

36 B հարկ պահանջեն K_{ar} հարկս պահանջեն, K_b հարկապահանջոյ են փխ հարկապահանջ են (A)

37 K_{ab} իջեալս փխ իջավանս (ABK_r)

38 K_b չիք առնեն ի վանս

14 Ա. Զի առաջնորդաց¹ սրբոյ² եկեղեցւոյ³, այսինքն է՝⁴ եպիսկոպոսաց, ըստ կանոնի սրբոց հարցն է գնալ արժան⁵ սրբութեամբ եւ արդարութեամբ յամենայն ճանապարհս արդարութեան, զի ամենայն քրիստոնեայք⁶ նոքաւք⁷ յաղեսցին եւ համեմեսցին, գուցէ անհամեալք ընկեսցին արտաքս եւ եղիցին կոխան⁸ ի մարդկանէ, այդ⁹ լինել աւրինակ հաւտին ամենայն բարեձեւութեամբ, զի յերեւել մեծի հովուապետին՝ ընդունիցին¹⁰ զանթառամ փառաց պսակն:

15 Բ. Եպիսկոպոս յայլոյ¹¹ վիճակի սեղան հաստատել կամ քահանայ ձեռնադրել մի՛ իշխեսցէ¹² ըստ կանոնի սուրբ¹³ հարցն, բայց եթէ ոչ գոյ եպիսկոպոս՝ հրամանաւ եպիսկոպոսապետին արասցեն մերձակայ եպիսկոպոսքն, բայց հասքն նոյն¹⁴ վիճակի եկեղեցւոյն¹⁵ եղիցին, որպէս եւ կանոնեալ է:

16 Գ. Եպիսկոպոս զայլոյ եպիսկոպոսի վիճակ մի՛ յափշտակեսցէ, եւ զսովորական աւրընթրիսն, որ ոչ է նմա անկաւոր՝ մի՛ առցէ: 17 Եւ եթէ¹⁶ պայքար ինչ իցէ ի մէջ եղբարցն՝ հաշիւ դիցեն, այդ¹⁷ բռնութեամբ մի՛ իշխեսցեն առնել կամ յափշտակութեամբ:

18 Դ. Եպիսկոպոսք իւրաքանչիւր վիճակաց՝ վանաց¹⁸ եւ անապատից¹⁹ տեսչութիւն եւ հոգաբարձութիւն արասցեն. ի լոյս եւ ի պաշտաւն եւ ի դպրոցս հայել, եւ իւրեանց պաշտաւնէիւքն կերակրել եւ վայելել ի սրբոցն շնորհէ, այլ բռնութեամբ եւ զաւշաքաղութեամբ ինչ²⁰ մի՛ իշխեսցեն առնել: 19 Նոյնպէս եւ ի տկարանոցս հայել եւ տեսչաւորել, եւ զպոռնկացելոցն եւ զայլոց²¹ յանցաւորաց²² զտուգանս առնուլ եւ ի նոսա մատակարարել, այլ զաւշաքաղութեամբ ինչ եւ բռնութեամբ ի տկարանոցացն մի՛ իշխեսցեն առնուլ, այլ²³ մանաւանդ յանձանձել եւ մխիթարել զտկարացն չքաւորութիւն: 20 Նոյնպէս եւ վանաց²⁴ երիցունքն եւ քահանայքն վարդապետին ի հնազանդութեան²⁵ կացցեն: 21 Ապա եթէ ոք յեպիսկոպոսաց կամ ի քահանայից անհնազանդեալ արհամարհիցէ²⁶ զեղեալ կանոնս նախահարցն՝ ընդ կանոնական պատուհասիւք եղիցին:

22 Ե. Վասն շնորհի եւ ժառանգութեան սահմանեցաք, թէ ի սկզբանէ որպէս ի²⁷ հրամանէ սրբոյն Գրիգորի լիեալ²⁸ նոյնպէս եղիցի. որոյ²⁹ շատ է ժառանգութիւնն³⁰ զշատն³¹ կերիցէ, որոյ³² սակաւ³³

1 ABK, գառաջնորդաց փ/ս զի առաջնորդաց (K_{ab})
 2 K_{ar} սրբոց փ/ս սրբոյ (ABK_b)
 3 K_b եկեղեցոյ
 4 B չիբէ
 5 K_b գնալ արժան է փ/ս է գնալ արժան
 6 A ամենայֆ փ/ս ամենայն քրիստոնեայֆ (BK_{abr})
 7 B նովաւ փ/ս նովաւֆ (BK_{abr})
 8 B կողան
 9 AK_{abr} այլ փ/ս այլ (B)
 10 K_b ընդունիցիֆ փ/ս ընդունիցին
 11 K_r այլոց փ/ս յայլոյ
 12 AB իշխեսցէ ձեռնադրել (կրկն.)
 13 K_a սրբոց փ/ս սուրբ
 14 K_b ի նոյն K_r այն փ/ս նոյն
 15 K_{br} եկեղեցոյն
 16 K_r թէ
 17 AK_{abr} այլ փ/ս այլ (B)

18 K_{abr} վանից փ/ս վանաց (AB)
 19 K_b անապատից, K_r անապատաց փ/ս անապատից
 20 K_{abr} չիբ ինչ
 21 K_r զայլոցն
 22 K_{ab} յանցաւորացն
 23 AK_{abr} այլ փ/ս այլ (B)
 24 K_{ar} վանից փ/ս վանաց
 25 K_r հնազանդութիւն փ/ս հնազանդութեան
 26 K_a արհամարհէ, K_r արհամարհեսցէ փ/ս արհամարհիցէ
 27 AK_{ab} չիբ ի (BK_r)
 28 K_{abr} լեալ փ/ս լիեալ (AB)
 29 K_{abr} որ փ/ս որոյ (AB)
 30 K_{br} ժառանգութիւն
 31 K_b շատ փ/ս զշատն
 32 K_b որ
 33 K_{br} զսակաւ

զսակաւն կալցի: 23 Եւ մի՛ ըստ ծախից՝
բաժանեսցեն զշնորհն, զի ժառանգութիւն
սրբոյ եկեղեցւոյ՝ իբրեւ զազատութիւն է,
զոր երանելոյն³ սրբոյն Գրիգորի եւ թա-
գաւորին Տրդատայ գատուցեալ⁴ են:
24 Արդ՝ զիւրաքանչիւր հարանց զժառան-
գութիւն⁵ կալցեն⁶ եւ սրբոյ եկեղեցւոյ⁷
պաշտամանն հպատակ կացցեն եւ վարդա-
պետին⁸ ի հնազանդութեան⁹ ամենայն
յաւժարութեամբ: 25 Արդ՝ եթէ¹⁰ ոք յուղա-
նայցէ¹¹ եւ զլոյս եւ զպաշտաւն եկեղեց-
ւոյն¹² խափանեսցէ¹³ եւ զմանկունս ուխ-
տին¹⁴ ի դպրոց ոչ տացէ¹⁵, իշխանութիւն
լիցի եպիսկոպոսին խրատել եւ ածել ի
կարգ ուղղութեան:

26 Զ. Ոմանք յուխտէ եկեղեցւոյ¹⁶
զկարգ եւ զպաշտաւն թողին եւ հեծելու-
թիւն ստացան: 27 Արդ՝ եթէ դառնան ի
չար ճանապարհէն՝ աւրհնեալք են ի
Տեառնէ եւ ընկալեալք ի մէնջ: 28 Ապա ե-
թէ¹⁷ ոչ, իշխանութիւն լիցի վարդապետին
զշնորհս եկեղեցւոյն¹⁸ հանել յայնպի-
սեացն¹⁹ եւ արժանաւոր քահանայից եւ
պաշտաւնէից²⁰ եւ մերձաւորաց տալ, որք

սրբոյ եկեղեցւոյ²¹ զգուշութեամբ զկարգն
կատարեն²²: 29 Այդ²³ եւ ժամ դիցեն այն-
պիսեացն Գ ամս. եթէ չդառնան ի նան-
րութեան ճանապարհէն, իշխանութիւն լի-
ցի եպիսկոպոսին զայնպիսին²⁴ գրով եւ
կնքով իսկ²⁵ մերժել ի շնորհացն²⁶ եւ տալ
մերձաւորաց նոցա²⁷:

30 Է. Այդ²⁸ վասն մերոյ²⁹ մեղաց յոր-
ժամ աշխարհս գերեցաւ ի թշնամեաց, բա-
զում արք եւ կանայք ի գերութեան էին³⁰,
նոցա ամուսինքն առանց վարդապետին
հրամանի³¹ կանայս առին եւ արանց եղեն:
31 Վասն այնպիսեացն³² սահմանեցաք
այսպէս. թէ յառաջ քան զէ³³ ամն մինչ
զուզակիցն ի գերութեան³⁴ էր եւ նոքա
յանդգնութեամբ այդ³⁵ ամուսին առին,
այնպիսեացն³⁶ ամուսնութիւնն ի պոռն-
կութիւն է. եւ³⁷ գան եւ պատուհաս կրես-
ցեն, յընչից³⁸ եւ ի ստացուածոց նոցա
հրամայեցաք առնուլ վարդապետաց եւ
յաղքատս բաշխել եւ զնոսա զատուցանել
ի միմեանց, եւ ապաշխարել է ամ: 32 Իսկ
յետ է³⁹ ամին, թէ⁴⁰ ամուսինքն⁴¹ դարձեալ
լինին ի գերութենէն, անդէն հրամայե-

1 AB ծխաց փխ ծախից (K_{abr})
2 K_{br} եկեղեցոյ
3 K_{abr} երանելոյն
4 K_b ազատացեալ փխ զատուցեալ
5 K_b ժառանգութիւն
6 ABK , կալցին փխ կալցեն (K_{ab})
7 K_{abr} եկեղեցոյ
8 K_a վարդապետութեան, K_r վարդապետութեամբ
փխ վարդապետին (ABK_b)
9 K_{abr} չիբ ի հնազանդութեան
10 K_b մի փխ եթէ
11 K_{ab} յուղանայցէ փխ յուղանայցէ (ABK_r)
12 K_a եկեղեցւոյ, K_{br} եկեղեցոյ փխ եկեղեցւոյն
13 B խափանեսցէ եկեղեցւոյն փխ եկեղեցւոյն խա-
փանեսցէ
14 K_b ուխտի
15 BK_r տայցէ փխ տացէ
16 K_{br} եկեղեցոյ
17 K_{abr} եթէ փխ եթէ
18 K_b եկեղեցոյ, K_r եկեղեցոյն փխ եկեղեցւոյն
19 K_b այնպիսեացն
20 K_b չիբ եւ պաշտաւնէից

21 K_{br} եկեղեցոյ
22 B կատարեսցեն փխ կատարեն
23 AK_{abr} այլ փխ այդ (B)
24 K_a զայնպիսին փխ զայնպիսին
25 K_r չիբ իսկ
26 K_b շնորհաց
27 K_b չիբ նոցա
28 AK_{abr} այլ փխ այդ (B)
29 K_b մերոց
30 K_{ab} չիբ բազում արք եւ կանայք ի գերութեան
էին
31 K_b հրամանին
32 K_b այնպիսեացն փխ այնպիսեացն
33 K_a գեաւթն փխ գէ
34 K_b գերութիւն
35 K_{abr} այլ փխ այդ (AB)
36 A այնպիսեաց փխ այնպիսեացն (BK_{abr})
37 K_b չիբ եւ
38 AB յնչից
39 A յէ փխ յետ է
40 A եթէ փխ եթէ (BK_{abr})
41 K_a ամուսինիբ

ցաք դառնալ յիւրաքանչիւր ամուսինս¹, ապա թէ² ոչ՝ կալցին, զոր առինն, եւ նոքա որ դարձանն³ ւարճնութեամբ⁴ այլ կանայս առցեն⁵, եւ այլ⁶ արանց լիցին⁷, եւ կրկին ապաշխարութիւն ի վերայ եղիցի⁸: 33 Իսկ որ համբերեացն⁹ զէ ամն, առցէ ւարճնութեամբ¹⁰, առանց տուգանի¹¹ եւ պատուհասի, եւ կրկին ապաշխարութիւն ի վերայ եղիցի¹²:

34 Ը. եթէ ոք այր կամ կին ի սրբոյ եկեղեցւոյ¹³ ի ժառանգաւորաց անորդի իցէ, ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն¹⁴ ունել¹⁵ զամենայնն¹⁶, եւ անցեալ ըստ ինքն՝ ի մերձաւորացն մի՛ իշխեսցէ հեռացուցանել զհող եւ զջուր եւ զշնորհս¹⁷ եկեղեցւոյն¹⁸: 35 Եւ մերձաւորքն եթէ¹⁹ բազումք են եւ նա կամիցի զմի²⁰ ոք առնել իւր յորդեգիրս՝ իշխան է առնել, որ նմա ըստ կամս զնայցէ²¹ եւ դիւր լինիցի, բայց հեռաւորի եւ աւտարի չիշխէ տալ, բայց զշարժուն ոք եւ զհրտակ ում²² կամի տալ՝ արժան է, եւ եթէ²³

վաճառել կամի կամ²⁴ հոգեաց տալ՝ իշխան է: 36 Իսկ եթէ որդեգրեալն²⁵ արժանասցի քահանայութեան՝ գեաւղջն²⁶ վկայութեամբ կամ որ²⁷ որդեգրեացն զնա, եւ չէր անկ նմա քահանայութիւն²⁸, սակայն զկէս շնորհին կալցի²⁹ յաղագս ձեռնադրութեանն, ազատ ի հարկէ եւ ի բեկարէ³⁰, եւ զկէս շնորհին եւ զհող եւ զջուր բաւանդակ³¹ սրբոյ եկեղեցւոյն³² թողցէ վախճանեալ³³ քահանայն եւ կին նորա: 37 Ամենայն իսկ շնորհն մերձաւորացն³⁴ եղիցի, եթէ ոչ որդիս կամ³⁵ թոռունս ունիցին, զի չվայելէ³⁶ զսրբոյ³⁷ եկեղեցւոյ³⁸ զժառանգութիւն³⁹ յարժանաւոր մերձաւորացն աւտարացուցանել եւ տալ հեռաւոր աւտարաց⁴⁰: 38 Բայց եթէ անկաւորացն կամաւորութեամբ վաճառել⁴¹ իսկ թողացուցէ վարդապետն, եւ զայն⁴² մի՛ շինականի ումեք, այդ⁴³ յուխտէ եկեղեցւոյն⁴⁴, թէեւ⁴⁵ հեռաւոր իցէ, իշխան է վարդապետն եւ մերձաւորին⁴⁶ չմերձաւորեցուցանել⁴⁷: 39 Իսկ եթէ գեաւղջն⁴⁸ երիցուն դիպի¹

1 K_{ar} ամուսին փխ ամուսինս
 2 AB եթէ փխ թէ (K_{abr})
 3 B դարձան
 4 K_{abr} չի՞ ւարճնութեամբ
 5 K_r առնեն փխ առցեն
 6 K_r չի՞ այլ
 7 K_r լինին փխ լիցին
 8 K_{abr} դիցեն փխ եղեցի
 9 K_{ab} համբերեաց փխ համբերեացն
 10 A չի՞ ւարճնութեամբ (հետագայում աւելացուած է այլ գրչի կողմից)
 11 K_r տուգանաց
 12 K_r դիցեն փխ եղեցի
 13 K_{br} եկեղեցոյ
 14 K_{ab} ինքն իշխան լիցի փխ իշխան լիցի ինքն
 15 K_b առնել փխ ունել
 16 K_{br} զամենայն
 17 K_{ab} զամենայն շնորհս փխ զշնորհս (ABK_r)
 18 K_{br} եկեղեցոյն
 19 K_{ab} թէ փխ եթէ
 20 K_{ab} առն զմի
 21 K_{br} զնայցէ փխ զնայցէ (ABK_a)
 22 K_{abr} ում եւ
 23 ABK_r թէ փխ եթէ (K_{ab})

24 K_{abr} եւ փխ կամ
 25 K_b յորդեգրեալն
 26 B գեղջն K_a կամ գեաւղջն
 27 K_{abr} չի՞ որ
 28 K_a քահանայութիւնն
 29 K_{ab} ընկալցի, K_r կալցին փխ կալցի (AB)
 30 K_r պէկարէ փխ բեկարէ
 31 AK_{abr} բովանդակ փխ բաւանդակ (B)
 32 K_{br} եկեղեցոյն
 33 K_b վաղմանեալ K_r վաղջանեալ
 34 K_b մերձաւորաց
 35 K_{abr} եւ փխ կամ
 36 K_{ab} զինչ վայելէ փխ զի չվայելէ (ABK_r)
 37 K_{ar} սրբոյ
 38 K_{br} եկեղեցոյ
 39 K_r ժառանգութիւն
 40 K_b հեռաւորաց փխ հեռաւոր աւտարաց
 41 B կամ հանելով փխ վանառել
 42 K_{abr} չի՞ եւ զայն
 43 AK_{abr} այլ փխ այդ (B)
 44 K_{br} եկեղեցոյն
 45 K_a թէ փխ թէեւ
 46 K_r մերձաւորի
 47 BK_{ar} չմերձեցուցանել փխ չմերձաւորեցուցանել
 48 B գեղջն, K_{ab} գեաւղջ, K_r գիւղջ փխ գեաւղջն (A)

ժառանգութիւնն մնալ, եղիցի ժառանգութիւնն² սրբոյ աթոռոյն, եւ ում կամեսցի՝ շնորհեսցէ վարդապետն միայն՝ արժանաւորաց եւ գիտնոց:

40 Արդ՝ այս սահմանադրութիւն եկեղեցւոյ³ ի Հերակղէ⁴ Հոռոմոց⁵ թագաւորէ եւ ի Խոսրովայ Պարսից արքայէ⁶ աւուրցն եւ այսր եղիցի. իսկ ինչ որ յառաջ քան զնոցա ժամանակն գործեցեալ է, մի՛ շարժեսցի, զի չգտեմք ինչ հաստատուն, թէ որպէս կալեալ: 41 Բայց յայսմ հետէ այսպէս կալցին⁷, որպէս սահմանեցաք յանուն Տեառն, եւ մի՛ ոք իշխեսցէ փոփոխել զայս սահմանադրութիւն⁸:

42 Թ. Յորժամ ազատք զիւրեանց զերդումարդ⁹ բաժանեն, յոլովք չարակնութեամբ առնեն, զժառանգաւորս¹⁰ եկեղեցւոյ¹¹ ջանան ի ծառայութիւն եւ ի¹² ստրկութիւն¹³ արկանել՝ մոլեալք եւ մոլորեալք ի հաւատոց¹⁴ քրիստոնէից¹⁵: 43 Զի երանելոյն¹⁶ Գրիգորի եւ սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյ¹⁷ մանկունս ընդ ազատաց տոհմին¹⁸ են կարգեալ, եւ ազատ

էին¹⁹ սրբոյ եկեղեցւոյ²⁰ հող եւ ջուր: 44 Նաեւ ի²¹ Պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ եւ չէ խառնեալ²² ի շնական իշխանութեամբ, զերիցունեաց²³ տունսն²⁴ ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասան տալ յարքունիս: 45 Արդ՝ եթէ ոք ազահութեան²⁵ ակամբ հայեսցի եւ զազատ մանկունս եկեղեցւոյ²⁶ ի²⁷ բաժին եւ ի վիճակ եւ ի²⁸ ծառայութիւն արկեցն, այնպիսիքն ի սուրբ Լուսաւորչի²⁹ աւրհնութենէն եւ ի մերմէ ժողովոյս հեռի եղիցին, եւ մի՛ եղիցի իշխանութիւն վարդապետի³⁰ եւ քահանայից³¹ զայնպիսեացն պատարագն աւրհնել: 46 Այլ³² եւ ոմանք յազատաց³³ ըստ իւրաքանչիւր կամաց բաժանեն զշնորհս եկեղեցւոյ³⁴ եւ զառաջնորդաց զիշխանութիւն³⁵ եւ զգործ³⁶ յափշտակեն, եւ վարդապետաց հրամանի եւ մեր կանոնիս ունկնդիր չլինին³⁷. այնպիսի յանդգնեալքն³⁸, որ գործեն զտարահաճելիսն³⁹ Աստուծոյ, հեռի եղիցին ի սրբոց եւ ի մեր աւրհնութենէ⁴⁰:

1 K, մերձեցուցանել դիպի
 2 K_b չի՛ մնալ եղիցի ժառանգութիւնն
 3 K_{br} եկեղեցոյ
 4 K_b ձերակլէ
 5 K_a Հոռովոց K_b Հոռոմոց
 6 K, թագաւորէ փխ արքայէ
 7 B չի՛ կալցին (յետոյ աւելացուած է ուրիշ ձեւագրով)
 8 K_{ab} սահմանադրութիւն կանոնաց (K_b կանոնացս)
 9 K_{ab} երդ եւ մարդ, K_r երդումարդ փխ գերդումարդ (AB)
 10 B գժառանգորս
 11 K_{abr} եկեղեցոյ
 12 K_a չի՛ ի
 13 B ի ստրկութիւն եւ ի ծառայութիւն փխ ի ծառայութիւն եւ ի ստրկութիւն
 14 K_{ar} հաւատոյ
 15 K_a քրիստովնէից
 16 K_{abr} երանելոյն
 17 K_r եկեղեցոյ
 18 K_a տոհմի

19 K_b է փխ էին
 20 K_{abr} եկեղեցոյ
 21 K_b չի՛ ի
 22 K_r խառնեալ փխ չէ խառնեալ
 23 K_a գիրիցունեաց
 24 K_b տունս
 25 K_{ab} յազահութեամբ, K_r յազահութեան փխ ազահութեան (AB)
 26 K_{br} եկեղեցոյ
 27 K_b չի՛ ի
 28 K_b չի՛ եւ ի
 29 K_{ab} Լուսաւորչին
 30 K_r վարդապետին
 31 K_a քահանայի
 32 AK_{abr} այլ փխ այլ (B)
 33 K_b ազատաց
 34 K_b եկեղեցոյ K_r եկեղեցոյն
 35 K_r գիշխանութիւնն
 36 K_r գգործս
 37 K_r չի՛ ինչիցն չլինին
 38 K_r անդգնեալքն
 39 K_r զտարահաճելիս
 40 K_b արհնութենէն

47 Ժ. Ոմանք յազատաց ի վերայ վանաց¹ ի իշխանութիւն առնեն, եւ վանական, զոր կամին, հանեն եւ արկանեն, զոր չէ արժան եւ աւրէն. եւ ոմանք ընտանեաւք ի վանքն² նստին՝ արհամարհեալ զեկեղեցաւն Աստուծոյ անպատկառելի անամաւթութեամբ: 48 Արդ՝ եթէ լուեալ մերոյ հրամանիս՝ դարձցին եւ թողցեն յառաջնորդս³ զտեսչութիւն եկեղեցւոյն⁴ կարգել⁵ եւ յաւրինել ըստ հաճոյիցն Աստուծոյ, այնպիսեացն յառաջագոյն⁶ գործելեաց⁷ յանցանացն⁸ թողութիւն լիցի եւ ի մեր միաբան ժողովոյս աւրհնեալ եղիցին: 49 Եւ ժողովրդեամբ եւ պտղաբերութեամբ եւ ուխտաւորեալ եւ նուիրեալ ընծայիւք երթիցեն ի վանսն եւ աղաւթեսցեն, որպէս արժանն⁹ է յիւրեանց հարանց վաստակս, բայց ժլատութեամբ մի՛ ի իշխեսցեն, զի եղիցին աւրհնեալ յԱստուծոյ եւ ի մեր¹⁰ ժողովոյս:

50 ԺԱ. Ոմանք յազատաց ի վերայ տկարանոցաց ի իշխանութիւնս¹¹ առնեն, եւ որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն եւ ի կերակուրս եւ յըմպելիս¹² զիւրեանց գործակալս մատուցանեն, կռուով եւ պատուհասիւ նեղեն եւ զողորմելի եղբարսն չարչարեն անխղճաբար, որում պարտ եւ արժան էր հոգալ եւ խնամել յիւրաքանչիւր վաստակոց՝ ի կալոյ եւ ի հնձանէ եւ յամենայն արմտեաց տալ մասն եւ բաժին, եւ մխիթարել զսիրտս¹³ նոցա եւ բժշկել

1 K_{ar} վանից փխ վանաց
 2 K_r վանսն
 3 K_r առաջնորդս
 4 K_{br} եկեղեցոյն
 5 K_r կարգեալ
 6 K_r գործելոյ K_b չի՛ գործելեաց
 7 B գործելեացն փխ գործելոյ յանցանացն
 8 K_{ab} արժան փխ արժանն (ABK_r)
 9 K_a մէնջ փխ մեր
 10 AB ի իշխանութիւն փխ ի իշխանութիւնս (K_{abr})
 11 K_b որպէս ի կերակուր փխ ի կերակուրս
 12 A յմպելիս
 13 K_a զսիրտ

զվէրս նոցա, զի եղիցին արժանաւորք մեծաց վարձուց եւ պարգեւաց ի փառաւոր¹⁴ գալստեան որդւոյն¹⁵ Աստուծոյ:

51 ԺԲ. Ոմանք յազատաց եւ յռամիկ¹⁶ հեծելոց հասանելով ի գեաւղս¹⁷ ուրեք, թողեալ զգեաւղն¹⁸ ի վանսն առնեն զիջավանսն¹⁹ եւ ի²⁰ յարկս սրբոցն, եւ գուսանաւք եւ վարձակաւք պղծեն զնուիրեալ տեղիսն Աստուծոյ, զոր²¹ սոսկալի է քրիստոնէից լսել²², թո՛ղ թէ առնել: 52 Արդ՝ զվերագրեալ կանոնս²³ սահմանադրութեան մերոյ խաւսեսցին ի լսելիս լսողաց վարդապետք եւ երիցունք եկեղեցւոյն²⁴, եւ որք միանգամ ունկնդիրք լիցին²⁵ եւ հրամանակատարք, աւրհնեսցին ի Քրիստոսէ եւ ի սրբոց վարդապետաց եւ ի²⁶ մեր միաբան ժողովոյս: 53 Իսկ եթէ ըմբոստացեալք²⁷ եւ ամբարտաւանեալք արհամարհիցեն, այնպիսիքն եղիցին արհամարհեալք²⁸ ի սրբոց վկայիցն եւ տարագրեալք յամենայն հոգեւոր²⁹ աւրհնութենէ: 54 Զի վանքդ անուն հանգստարանք են սրբոց եւ աւթեմանք³⁰ եպիսկոպոսաց եւ քահանայից, սարկաւագաց³¹ եւ արեղայից եւ աղքատաց: 55 Եւ եթէ երբեք ուրեք ազատք բարեպաշտք եւ տիկնայք աստուածա-

14 K_a փառաւորեալ փխ փառաւոր
 15 K_r որդոյն
 16 K_r ռամիկ
 17 B գեղս, K_{ar} ի գեաւղ, K_r գեաւղ փխ գեաւղս (A)
 18 B զգեղն
 19 K_a զիջեւանսն, K_r զիջեւանն փխ զիջավանսն (ABK_b)
 20 AB չի՛ ի
 21 K_r որ
 22 K_{ar} լսել քրիստոնէից
 23 AB կանոն
 24 K_r եկեղեցոյն
 25 BK_a լինիցին փխ լիցին (AK_{br})
 26 K_r չի՛ ի
 27 K_r ընդ ոստուցեալ փխ ըմբոստացեալ
 28 K_a արհամարհեալ
 29 B չի՛ հոգեւոր
 30 K_{ar} արեւանն փխ արեւանն (ABK_b)
 31 K_a եւ սարկաւագաց

սէրք¹ կոչեսցին ի սպասաւորաց սուրբ տեղեացն, մեծաւ² երկիրդիւ երթիցեն նուիրական ընծայիւք լինել հաղորդ պաշտաման եւ աղաւթից եւ աւրհնութեանց, պատրաստելոց ի տան Տեառն³ Աստուծոյ, արդարեւ ըստ այնմ, թէ⁴ «Մտից ի տուն քն պատարագաւք եւ տաց քն, գոր խոստացան քն շրթունք իմ»⁵, եւ կամ թէ՛ «Մի՛ ունայնաձեռն երեսեսցիս առաջի իմ»⁶, այդ⁷ որ ինչ բարին է, ընդ քեզ բերձիր⁸:

56 Արդ՝ զայս Բժ-ան⁹ գլուխս¹⁰, զոր սահմանաւ եղաք¹¹, ոչ մտացածին ինչ, այդ¹² ըստ հրամանի Հոգւոյն Սրբոյ եւ¹³ ըստ սահմանի¹⁴ սրբոց հարցն եւ սրբոյն Գրիգորի եւ բարեպաշտ թագաւորին Տրդատայ եւ նորին սրբոյն Գրիգորի լուսաւոր զաւակացն: 57 Եւ որք լսողք¹⁵ լինին հնազանդք եւ կատարիչք այսմ կանոնի՝ եղիցին¹⁶ աւրհնեալք ի Հոգւոյն Սրբոյ եւ յամենայն սրբոց Աստուծոյ եւ գտցին ժառանգաւորք անվախճան¹⁷ կենացն երկնից¹⁸ արքայութեանն¹⁹ յաւիտեանս յաւիտենից²⁰. ամէն:

58 Ես՝ Ներսէս շնորհիւն Աստուծոյ նուաստ կաթողիկոս Հայոց²¹, վասն վե-

րագրեալ²² կանոնիս ամենայն աթոռակցաւք մերովք՝ սուրբ եպիսկոպոսաւք Հայոց²³ ձեռն արկեալ, կնքեցաք ըստ²⁴ հրամանի եւ սահմանի²⁵ Հոգւոյն Սրբոյ եւ ընտրելոց նորա:

59 Ա. Տէր Յովհաննէս²⁶ Ոստան եւ Մարդպետական եպիսկոպոս.

60 Բ. Տէր Ներսէս Հարքայ եպիսկոպոս.

61 Գ. Տէր Քրիստոսատուր Բասենոյ եպիսկոպոս.

62 Դ. Տէր Իսրաէլ²⁷ Տայոց եպիսկոպոս.

63 Ե. Տէր Յովհաննէս²⁸ Մարդաղոյ եպիսկոպոս.

64 Զ. Տէր Յովհան²⁹ Բզնունեաց եպիսկոպոս.

65 Է. Տէր Գրիգոր Արշարունեաց եպիսկոպոս³⁰.

66 Ը. Տէր Սեբէոս³¹ Բագրատունեաց եպիսկոպոս.

67 Թ. Տէր Գրիգոր Խոռխոռունեաց³² եպիսկոպոս.

68 Ժ. Տէր Սիմէովն³³ Ռշտունեաց եպիսկոպոս.

69 ԺԱ. Տէր Իսրաէլ³⁴ Վանանդայ³⁵ եպիսկոպոս.

1 A աստուածաւոր
2 K, եւ մեծաւ
3 K_{ar} չի՛ք Տեառն
4 K, եթէ
5 Ս աղ. Կ Ե 13
6 Հ աղ. Բ Օ ր. Ժ. Գ 16:
7 AK_{abr} այլ փիս այդ (B)
8 K_{ar} բերցես փիս բերջիր (ABK_b)
9 K_a երկոտասան փիս Բժ-ան
10 K, գլուխ
11 K, սահմանեցաք փիս սահմանաւ եղաք
12 AK_{abr} այլ փիս այդ (B)
13 K_a չի՛ք եւ
14 K, չի՛ք Հոգւոյն Սրբոյ եւ ըստ սահմանի
15 K_a լսաւդ
16 K, եւ եղիցին
17 K, անվաղման
18 K, յերկնից
19 K, արքայութեան
20 K_a չի՛ք յաւիտենից
21 A Հայոց (տե՛ս սկզբում, տողատակ 15)

22 B վերագրեալ վերոյ
23 K_a չի՛ք վասն վերագրեալ ... եպիսկոպոսաւք Հայոց
24 K, ըստ սահմանի
25 K_a չի՛ք եւ սահմանի
26 AB Յովաննէս
27 K_{ar} Իսրաէլ K_b Իսրայէլ
28 ABK, Յովաննէս
29 K, Յոհան
30 K_b չի՛ք նոցա եւ բժշկել ... Արշարունեաց եպիսկոպոս (երեբ՛ էջ)
31 K_b Սեբիոս
32 BK_a Խորխոռունեաց
33 BK_{br} Սիմէոն
34 K_{br} Իսրաէլ
35 K_b Վանանդայ

- 70 ԺԲ. Տէր Թէովփիղոս¹ Աշմունեաց² եպիսկոպոս.
 71 ԺԳ. Տէր Ասայէլ³ Ամատունեաց եպիսկոպոս.
 72 ԺԴ. Տէր Գրիգոր Անձաւացեաց⁴ եպիսկոպոս.
 73 ԺԵ. Տէր Թէոդորոս⁵ Գնունեաց եպիսկոպոս.

- 74 ԺԶ. Տէր Յակովբոս⁶ Պալունեաց⁷ եպիսկոպոս.
 75 ԺԷ. Տէր Սամուէլ⁸ Մեհնունեաց եպիսկոպոս⁹.
 76 [Այս են սուրբ ժողովն¹⁰ Հայոց¹¹, որք ի Դւին ժողովեցան¹² ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:]

1 AB Թեովփիղոս, K_{br} Թեովփիլոս փիս Թեովփիղոս (K_a)
 2 K, Աշմունեաց
 3 B Ասայել
 4 K_a Անձնացեաց
 5 K_a Թաղէոս, K_b Թաթէոս, K_r Թեոդէոս փիս Թեոդորոս (AB)

6 K_r Յակոբոս
 7 K_a Պաղունեաց K_b Ալունեաց փիս Պալունեաց
 8 B Սամուել
 9 K_b չի՛ր Մեհնունեաց եպիսկոպոս
 10 K_a ժողով, K_r ժողովն փիս ժողովն (ABK_b)
 11 K_r Հայոց անուանի (Վ. Յակոբեանը վերականգնելի է համարում ժողովոյն հարց անուանին փիս ձեռագրերի՝ ժողովն Հայոց, իրօք, ոչ այնքան սպասելի ընթերցման)
 12 K_b ժողովեցան ի Դւին փիս ի Դւին ժողովեցան (Վ. Յակոբեանը վերականգնելի է համարում 'Դուին' ըստ մի բանի ուշ ձեռագրերի ընթերցման)

**ՅՈՎՍԷՓ ԲՐՏԻԱՅՐԵՑԻ
(ԱՆԱՊԱՏԱԿԱՆ)**

[«ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ»]

ՅՈՎԱԷՓ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ «ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ»

Յովսէփ Անապատականի (Բրտիայրեցու) գրութիւնը պահպանուել է միայն Ժ դ. վերջի հեղինակ Մովսէս Դասխուրանցու (ուշ ձեռագրերում եւ գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) Պատմութիւն Աղուանից երկում (գիրք Բ, գլուխ Ծ): Այն մի փոքրիկ պատմութիւն է Արցախ նահանգի («գաւառի») Յղերկս գիւղի եկեղեցում գտնուող սուրբ նշխարների հաւաքման մասին: Իր ոճով ձեռագրի յիշատակարան է յիշեցնում, սակայն իրականում այդպիսին չէ. ունեցած նշխարների մասին նմանատիպ փոքրիկ գրութիւններ շարադրում էին միջնադարեան հոգեւոր կենտրոններում եւ վանական տնտեսութեան մասին պատմող ուրիշ նիւթերի հետ միասին պահուում վանքերի ժողովածոյ-մատեաններում՝ քեթովներում: Մենք պայմանականօրէն անուանում ենք երկը Յիշատակագրութիւն:

Յիշատակագրութիւնը անպաճոյճ ոճով հաւաստի եւ ազբերագիտական մեծ արժէք ներկայացնող տեղեկութիւններ է շարադրում ոչ միայն սուրբ նշխարների հաւաքման, այլեւ ժամանակի պատմական իրողութիւնների մասին (օրինակ՝ այս երկի շնորհիւ են արձանագրում տուեալ ժամանակաշրջանում Աղուանքի միաբնակ լինելու հանգամանքը, պատմական շատ անձանց անուններ): Իր տեղափոխութիւնը Սիւնիքի Գեղաքունի (Գեղամայ) գաւառի Բրտի այրք վանքից Արցախի Յղերկս գիւղ Յովսէփ Անապատականը թուագրում է Հերակլ կայսեր, Յագկերտ արքայից արքայի, Սիւնեաց Գրիգոր եւ Աղուանից Վարազ Գրիգոր իշխանների, Հայոց եզր Արահեզացի կաթողիկոսի եւ Սիւնեաց եպիսկոպոս Մաթուսաղայի ժամանակով, այսինքն՝ 632-636 թթ. միջեւ ընկած տարիներով (ըստ Հ. Ն. Ակինեանի՝ մօտաւորապէս 634 թ.): Դրանից յետոյ նա յիշատակում է Յղերկսի շրջակայ գաւառի (անունը չի տրուում, բայց, հաւանաբար, դա զարգացած միջնադարում եւս յիշատակուող «Տանձեաց» գաւառակն է՝ կենտրոնական Արցախի արեւմտեան հատուածում, Տրտուի հովտում, որտեղից էր Յովսէփի գործընկեր Մխիթար անապատականը) եպիսկոպոս Միհրի՝ 12 տարի անց տեղի ունեցած վախճանի եւ նրան յաջորդած Անդրէաս եպիսկոպոսի 11-ամեայ իշխանութեան մասին, որը թոյլ է տալիս թուագրել Յիշատակագրութիւնը 650-ական թթ. երկրորդ կէտով:

Պատմութիւն Աղուանիցի ձեռագրերի երկու խմբերի (a ձեռագիր եւ bclr ձեռագրեր՝ b1 եւ cr ենթախմբերով) օգտագործմամբ կազմուած Յովսէփ Անապատականի Յիշատակագրութեան քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա եթերորդարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Պատմութիւն Աղուանիցի երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի տարընթեցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են վերը նշուած հինգ ձեռագրերից որեւէ մէկից եւ չեն կարող օգտակար համարուել հեղինակի ինքնագրի վերականգնման հարցում: Բնագրի տողատման եւ կէտադրման խնդրում էապէս օգտուել ենք Պատմութիւն Աղուանիցի համեմատական հրատարակութեան հեղինակ Վարազ Առաքելեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Ն. Ադոնց**, *Քննություն Մովսէս Կաղանկատուացու*, «Անահիտ», Փարիզ, 1939, թիւ 4-5:
2. **Հ. Ն. Ակիմեան**, *Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմություն Աղուանից, Վիեննա*, 1970 :
3. **Կ. Ղահրամանեան**, «*Պատմություն Աղուանից աշխարհի*» երկի աղբիւրները (թեկնածուական ատենախօսություն), Երեւան, 1974:
4. **Ասատուր Մնացականեան**, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը*, Երեւան, 1966:
5. **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմություն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983:
6. **Ալեքսան Թակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան»* ձեռագրերը, ԲՄ, Երեւան, 1986, թիւ 15:
7. **Հ. Ս. Սլազեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» աղբիւրները*, ՊԲՀ, Երեւան, 1972, թիւ 2:
8. **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987.
9. *The History of the Caucasian Albanians by Movsés Dasxuranci*. Translated by C. J. F. Dowsett, London, 1961.

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԾ ՁԵՆԱԳՐԵՐԻ

a - ՄՄ ձեռ. թիւ 1531, ժամանակ՝ 1289 թ.

b - ՄՄ ձեռ. թիւ 1725, ժամանակ՝ 1675 թ.

c - ՄՄ ձեռ. թիւ 2561, ժամանակ՝ 1664 թ.

l - Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Ա.-Պետերբուրգի բաժանմունքի գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյ, թիւ С 59, ժամանակ՝ 1678 թ.

r - Բրիտանական թանգարանի թիւ Or 5261, ժամանակ՝ ժէ դ.

**ՎԱՍՆ ՅՈՎԱԵՓԱՒ¹ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ, ԲՆԱԿԵԼՆ² ՅԱՐՑԱՆ ԵՒ ԵՐԹՆ
ՅԵՐՈՒՍԱՂԵՍ, ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ ԲԵՐՈՒՄՆ ՆՇԽԱՐԱՅՆ³ ՍՐԲՈՅ]**

1 Ի թագաւորութեանն Հերակղի⁴ եւ ջախջախ թագաւորութեանն Պարսից Յագկերտի⁵, ի կաթողիկոսութեանն⁶ Հայոց Եգրի⁷ եւ ի սպարապետութեանն⁸ Մուշեղի, ի⁹ Սիւնեաց տէրութեանն Գրիգորի, յեպիսկոպոսութեանն Մաթուսաղայի¹⁰ եւ յԱղուանից իշխանութեանն Վարազ Գրիգորի՝ Գարդմանա¹¹ տեառն, գնացի ես՝ Յովսէփ անապատական, ի գաւառէ Գեղամա՝¹² յանապատէ Բրտի այրեաց¹³ վասն չար նեղութեան¹⁴ ժամանակի¹⁵, որ¹⁶ անիրաւք գաւրացեալք¹⁷ առ ոտսն¹⁸ կոխեցին գեկեղեցիս¹⁹ եւ զտառապեալսն²⁰ հարկապահանջ եւ անառակ գնացիւք աւերեցին: 2 Մանաւանդ արիւնարբու ազգն Տաճկաց սկսաւ զաւրանալ եւ եղ զամենայն աշխարհս իբրեւ զհող ի կոխումն: 3 Յայսպիսի նեղութեանց խոյս տուեալ իմ՝ եկի²¹ ի

գաւառս Արցախա²², ի գեաւղս²³ Յղերկս առ ծերունի եպիսկոպոսն Միհր²⁴: 4 Եւ նորա ընկալեալ զիս՝ զանարժանս, խնդրեաց ի գեղջեացն²⁵ զայս տեղի, շինեաց²⁶ գեկեղեցիս, եւ կացեալ իմ ի սմամս երկոտասան, ապա զնա Աստուած յաւել²⁷ առ հարս իւր:

5 Եւ յաջորդեաց²⁸ զաթոռ նորին Անդրէաս, որ կալաւ զիշխանութիւնն ամս մետասան, նմա յանձն արարեալ զիս Տեառն իմոյ, որոյ²⁹ բարեսէր մտաւք ամենայնիւ զտեղիս հաստատեալ: 6 Բայց ոչ կային³⁰ նշխարք Սրբոցս³¹ ի վայրքս: 7 Իսկ Մխիթար ոմն անապատական ի Տանձեաց, ցանկացեալ սրբոյ քաղաքին Երուսաղէմի՝ երկու³² ընկերաւք գնացեալ երկրպագէ ամենայն սրբութեանցն, եւ զմի ամ կացեալ անդ՝³³ շնորհեաց նմա Քրիստոս ի նշխարաց սրբոյն³⁴ Ստեփաննոսի եւ սրբոյն Գէորգա³⁵ ի ձեռն հաւատաւորի միոյ՝ Հոռմաշինեցոյ³⁶, որ սակս իւր մերձաւորաց էր պահեալ, եւ ի սպառել³⁷ նոցա՝³⁸ ես

1 a Յուսիփայ, c Յովսեփայ, l Յովսեփայ փիս Յովսեփայ (br)
2 l բնակիլն bcr բնականալն փիս բնակելն
3 bclr նշխարաց
4 clr Հերակղի
5 ab Ագկերտի փիս Յագկերտի
6 bcr կաթողիկոսութեանն l եւ կաթողիկոսութեանն
7 a Էգրի
8 b սպարապետութիւնն
9 l եւ ի
10 c Մաթուսաղի r Մաթուսաղաի
11 l Գարդմանայ
12 bclr Գեղամայ
13 cr Պրտի այրեաց
14 cr չարութեան փիս չար նեղութեան
15 b ժամանակիս
16 l որք
17 a զայրացեալք փիս զաւրացեալք
18 bclr ոտն փիս ոտսն
19 c յեկեղեցիս
20 bclr զտառապեալս
21 cr զնացի փիս եկի

22 a յԱրցախ փիս Արցախա
23 cr գեւղս, l գիւղս փիս գեաւղս (ab)
24 bclr Միհրի փիս Միհր
25 cr գեղջեացն, l գեղջեան, b գեղ փիս գեղջեացն
26 l եւ շինեաց
27 b յաւելաւ
28 b աջորդեաց
29 a որո
30 a կացին փիս կային
31 c սրբոց
32 l եւ երկու
33 l անո
34 c սրբոյ r սրբոց
35 c Գէորգայ, b Գեորգեա, l Գեորգեա, r Գեորգայ փիս Գէորգա (a)
36 bc Հոռմայ շինեցոյ, l Հոռմայ շինեցոյ փիս Հոռմաշինեցոյ (ar)
37 l սպառիլ
38 b նոցա

զսուրբսն ցՄխիթար¹: 8 Եւ ասէ. «Տարցես զսոսա² յաշխարհն մեր եւ յարժանաւոր բնակեցուցես տեղւոջ³», եւ նորա մեծաւ փութով առեալ զգանձն՝ չոգաւ⁴ ընդ Հոռոմս⁵ կոյս յերկիւղէ թշնամւոյն⁶: 9 Հասանէր ի լեառն Տաւրոսի, ի վկայարանս սրբոյն Անդրէի, որ բազում ընկերաւք վկայեաց ի Սելեւկոսէ⁷ թագաւորէ, եւ անդ մեծահայց եղեալ նմա՝ խնդրեաց ի նշխարացն⁸ Անդրէի ի⁹ սպասաւորէն թումասայ¹⁰: 10 Հաւանեալ եւ նա աղաչանացն՝ տա¹¹ նմա զխնդիրն:

11 Յայնժամ ընկալեալ զպատուական գանձն՝ դա¹² հասանէ ի կողմանս Արցախայ¹³: 12 Զորոյ¹⁴ լուեալ զհամբաւն իմ՝ Յովսեփայ, ելի ընդ առաջ նոցա¹⁵, ըստ¹⁶ արժանի սրբոցն հանգուցի գայն աւր եւ ի վաղիւն հարցի զՄխիթար, թէ ո՞ւր կամիս զսուրբսն տանել¹⁷: 13 Նա ասէ. «Ուր Աստուած կամի, եւ դոքա բնակեն»: 14 Իսկ իմ յորդորեալ ի սէր սրբոցն՝ ասեմ ցնա. «Գիտեմ, զի անարժան ի սպասաւորել դոցա դամ¹⁸, այլ քեւ հանդերձ, Մխիթար, վստահ լինիմ ի սպասաւորել զամենայն աւուրս կենաց մերոց»¹⁹: 15 Յայնժամ հա-

ւանեալ նորա²⁰ հանգուցանէ զսուրբսն ի վկայարանի²¹, զոր շինեաց Փռքրիկ հիւսն եւ որդի իւր Յոհան՝ նպաստաւորեալ եւ Բախտանէր²² դարբին²³: 16 Զամս երիս ըստ կանոնաց զնոցայն կատարեցաք զյիշատակ:

17 Յետ այսորիկ²⁴ տնկեցաւ ի սիրտ իմ ցանկութիւն՝ ստանալ ի նշխարաց²⁵ սրբոյն Յովհաննու, որ մեծ²⁶ ի ծնունդս կանանց ի Փրկչէն վկայեալ: 18 Եւ հանդերձեալ իմ աշակերտաւք²⁷ Քրիստոսատրով²⁸ եւ Գրիգորով եւ Սարգսով²⁹, գնացի ի խնդիր Կարապետին³⁰, հրամանաւ եւ թոշակաւ³¹ Անդրէի³² երիցու եւ հաւանութեամբ ընտանեացն³³ իմոց Յովհաննայ³⁴ եւ Մխիթարայ³⁵ կրաւնաւորաց: 19 Եւ չոգա³⁶ հասի ի սուրբ³⁷ քաղաքն Երուսաղէմ, եւ զերկրպագութիւն³⁸ անդ կատարեալ՝ մեծաւ տրտմութեամբ դարձա³⁹, վասն զի ամենեքեան էին ներկեալ⁴⁰ եւ հաւանեալ⁴¹ աշխարհակործան ժողովոյն⁴²: 20 Որոց ողջոյն անգամ ոչ տուեալ՝ եկի ի գաւառն իմ

1 a Մխիթար փիս ցՄխիթար
 2 a գնոսա փիս գոսսա
 3 bcr տեղոջ
 4 b չոգաւ
 5 a Հոռոմս փիս Հոռոմս
 6 bcr թշնամոյն
 7 c Սելեւկոսէ
 8 a նշխարաց
 9 br չիք ի
 10 cr Թումասայ, b Թումասայ, I Թումասու փիս Թումասայ
 11 cr տայ փիս տա (ab)
 12 I գայ փիս գա
 13 a Արցախայ
 14 a գորո cr գոր փիս գորոյ
 15 b նորա
 16 I եւ ըստ
 17 I տանիլ
 18 I չիք գամ
 19 cr իմոց փիս մերոց

20 cr նմա փիս նորա
 21 b ի վկայարանի
 22 a Բախտանէր, b Բախտանէս, I Բախտանէլ փիս Բախտանէր (cr)
 23 b արբին
 24 a այսրիկ փիս այսորիկ
 25 I նշխարի
 26 b ի մեծի փիս մեծ
 27 b աշակերտոս
 28 a Քրիստոսատրաւք
 29 I չիք եւ Սարգսով
 30 I Կարապետի
 31 b թոշակաւ
 32 a Անդրէ փիս Անդրէի
 33 cr ընտանեաց b ընդանեաց
 34 cr Յովհաննայ bI Յովհաննու փիս Յովհաննայ (a)
 35 cr Մխիթարայ
 36 bcr չոգա I չոգայ փիս չոգա (a)
 37 b չիք ի սուրբ
 38 b զերկրպագութիւն
 39 I դարձայ
 40 I ներկեալք
 41 I հաւանեալք
 42 a ժողովրդոյն փիս ժողովոյն

Գեղաքունի¹ ի Պուհավանս², որոյ³ տեղեակ ի մանկութենէ⁴ էի⁵ լինել⁶ անդ⁷ մասին ի նշխարացն Յովհաննոս: 21 Եւ յոյժ տենչանաւք հայցեցի ի Գրիգորիկայ⁸ սպասաւորէն սրբոյն, եւ ողորմութեամբն Աստուծոյ⁹ հաւանեալ¹⁰ նորա՝ եբաց¹¹ գտապանակն¹² եւ գտաք անդ¹³ գսուրբ Մկրտիչն եւ զԹումաս առաքեալ եւ զնախավկայն Ստեփաննոս, զորս առաջնոց հարանցն բերեալ էին յուղղափառացն¹⁴ Սրբոյն Երուսաղէմի: 22 Ընկալեալ իմ Յովսեփա¹⁵ բերի ի նոյն վկայարան, եւ մե-

ծապէս լցեալ խնդութեամբ մեր¹⁶ ընդ¹⁷ առաջ մեր եկին¹⁸: 23 Եւ այսպէս հանգուցաք ի տեղիս եւ կարգեցաք զյիշատակ¹⁹ սոցա²⁰ ըստ հրամանի Կիւրղի Երուսաղէմացւոյ²¹, որ զընթերցուածսն եցոյց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

24 Յետ այսր եղելոյ հաճեցան Սուրբքն²² ամենայն, որ ի գաւառին Գեղամայ²³, բերին իւրաքանչիւր ոք²⁴ անուամբ եւ զրով եւ եզին ի նմին եկեղեցւոջ²⁵: 25 Որոց բարեխաւսութեամբն Տէր Աստուած աշխարհի ողորմեսցի:

1 I Գեղարփունի փ/ս Գեղափունի
 2 a Պուհաւանս փ/ս Պուհավանս
 3 a որո
 4 acr մանգութենէ փ/ս մանկութենէ (bl)
 5 cr էիմ փ/ս էի
 6 I լինիլ
 7 I անտ
 8 a Գրիգորիկա
 9 a չի՞ր Աստուծոյ
 10 a ի հաւանել փ/ս հաւանեալ
 11 a էբաց
 12 b գտապանն
 13 I գտիմք անտ փ/ս գտաք անդ
 14 bcr յուղղափառացն
 15 bl Յովսեփայ

16 I մեր խնդութեամբ փ/ս խնդութեամբ մեր
 17 cr եւ ընդ
 18 cr եկին ամենեքեան
 19 cr գյիշատակս
 20 bcr նոցա փ/ս սոցա (ac)
 21 bcr Երուսաղէմացոյ
 22 I սուրբք
 23 a Գեղամա
 24 a իւրաքանչիւր փ/ս իւրաքանչիւր ոք
 25 bcr եկեղեցոջ

ԱՆԱՆԻԱ ՀԻՐԱԿԱՑԻ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԻԵՉԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼԲ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

- 46 ԽԶ. Զի՞նչ է՝ որ երթամք ԻԸ.ԻԸ.՝ յորժամ է.երեակ առնեմք:
- 47 ԽԷ. Զի՞նչ է գնալն ԻԸ.ԻԸ.ն եւ զԴ. մասն ի վերայ բերել:
- 48 ԽԸ. Զի՞նչ է՝ որ երթամք ԺԹ.ԺԹ. յորժամ վերադիր առնեմք հոռմի:

49 *ԽԹ.* Ձի՞նչ է՝ որ ի Ժ.երորդ կանոնին թիւ մի յաւելու:

50 *Ծ.* Ձի՞նչ է բազմապատկեալն յաւելու:

51 *ԾԱ.* Ձի՞նչ է ըստ նահանջիցն պակասեցոյ:

52 *ԾԲ.* Ձի՞նչ է ըստ ԹԺ.երեկաց յաւել:

53 *ԾԳ.* Ձի՞նչ է Ը. հանապազորդ երթն:

54 *ԾԴ.* Ձի՞նչ է երթն Լ.Լ.:

55 *ԾԵ.* Ձի՞նչ է Գ. ի վերայ բեր կամ Դ. ի բաց երթ:

56 *ԾԶ.* Ձի՞նչ է՝ որ աւրն ԻԴ. ժամ է:

57 *ԾԷ.* Ձի՞նչ է՝ որ ժամն Լ. մասն է:

58 *ԾԸ.* Ձի՞նչ է՝ որ թաւալմամբ գնայ արեգակն:

59 *ԾԹ.* Ո՞րպէս գիտացին թէ թաւալի արեգակն:

60 *Կ.* Ձի՞նչ է՝ որ Շ. ասպարէզ է Ա. առաջխաղացումն արեգական:

61 *ԿԱ.* Ձի՞նչ է՝ թէ մինչ Ա. թաւալի արեգակն՝ մէկ մասն անցանէ յաւրէն եւ մինչ Լ. թաւալի՞ ժամ մի:

62 *ԿԲ.* Ձի՞նչ է՝ որ ի գիշերի ընդ երկրաւ դառնայ արեգակն:

63 *ԿԳ.* Ձի՞նչ է՝ որ ամսամտին ասէ՛ կալ թիւ մի:

64 *ԿԴ.* Ձի՞նչ է կալ հանապազ Լ.:

65 *ԿԵ.* Ձի՞նչ է՝ որ ասէ կալ հանապազ *ԽԵ.*:

66 *ԿԶ.* Ձի՞նչ է՝ կալ ԺԳ. եւ գնահանջն:

67 *ԿԷ.* Ձի՞նչ է՝ որ յայտնութեան ոչ ասէ արկանել ի վերայ, այլ ասէ՛ կալ գնահանջն եւ տուր մեհեկի:

68 *ԿԸ.* Ձի՞նչ է որ ասէ՛ կալ Լ. գվերադիրն երթ առանց կիսակի:

69 *ԿԹ.* Ձի՞նչ է կալ *ԽԶ.*:

70 *Հ.* Ձի՞նչ է որ ասէ՛ թէ քան զհասարակածն աւելի է ի նոյն ամսեան է լրումն եւ թէ պակասէ՛ յառաջին ամիսն ելանէ:

71 *ՀԱ.* Ձի՞նչ է թուական հռոմայեցոց:

72 *ՀԲ.* Ձի՞նչ է՝ կալ մինչեւ յԼԴ. ամն Յուստիանոսի կայսեր եւ ցԴԴ. Խոսրովու պարսից:

73 *ՀԳ.* Ձի՞նչ է տեսանել գնահանջ կամ ԺԹ.երեակ:

74 *ՀԴ.* Ձի՞նչ է ած ի վերայ ԹԺ.երեկին:

75 *ՀԵ.* Ձի՞նչ է երթ ըստ նահանջիցն Ա. եւ թող:

76 *ՀԶ.* Ձի՞նչ է ԺԷ.ն ապրիլի եւ կամ ԻԵ.ն մարտի. ո՛չ նահանջ՝ եւ ոչ բազմապատիկ:

77 *ՀԷ.* Ձի՞նչ է՝ որ ի մարտի եւ յապրիլի լինի ԺԳ.աներորդն զատկաց:

78 *ՀԸ.* Ձի՞նչ է՝ որ ի փետրուարի վերջին աւուրն անկանի աւրն նահանջի:

79 *ՀԹ.* Ձի՞նչ (է) Ա. թիւ որ յաւելու յԷ.երեակն:

80 *Ձ.* Ձի՞նչ է բոպէն:

81 *ՁԱ.* Ձի՞նչ է Ե.երորդ աւուրն աւելեաց:

82 *ՁԲ.* Ձի՞նչ է՝ որ ի մարտի Ի. է հասարակածն միշտ:

83 *ՁԳ.* Ձի՞նչ է լոյսն գերազանց:

84 *ՁԴ.* Պատմութիւն յաղագս գերազս գիտելոյ սաղմոսիւք՝ եւ մեկնելոյ:

ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒՆՈՅ ԱՌ ԽՈՍԱՑԵԱԼՍՆ
(ընդարձակ խմբագրութիւն)

1 Ա. ԱՌ ԽՈՍԱՑԵԱԼՍՆ

2 *Զխոստացեալսն մեր հատուցուք զբան՝ յարտաքնոցն առեալ զառարկութիւն¹. որպէս զի յետոյ յեկեղեցականն ելեալ մեր՝ զեղեցիկ հետեւեսցի շարադասեալ ընդունակք: 3 Զի եւ աւրինակն այսպէս եւ ճշմարտութիւն կարգաւորեցաւ: 4 Արդ՝ ես կամիմ ուսանիլ յարտաքնոցն յա՛յնցանէ, ուստի Պաւղոս ինձ հրամայէ. եւ զանց առնել զհեթանոսական խելագարութեամբն՝ բանդագուշեալ² իմաստնոցն ճառիւք, որք զԱստուած³ ո՛չ կամեցան ճանաչել. եւ պատճառս լինելութեան զհիւղէ ասացին եւ նիւթ գոյիցս եղելոց: 5 Զորոց ո՛չն երկրորդեսցուք ճշդիւ, եւ ո՛չ ընդդիմադրեսցուք իբր արդարեւ զարհուրելիս: 6 Բաւական է նոցա կշտամբութիւնն⁴ որ ի Սրբոց Հարցն: 7 Բայց հաւանիմ յիսկզբանն փոքր ինչ յիշատակել եւ զանաստուածիցն բարբաջանս՝ եւ ի նոյն լքանել եւ այս՝ զի քաջալաւութիւն վեհագունիցն առաւել զեղեցկապէս երեւեսցի: 8 Եւ եթէ յայլուսմ ուրեք վայրի յիշեսցուք զառ ի նոցանէն ճառեալ⁵ բան ինչ դուզնաքեայ, նոյն պատճառ է վասն ճոխացուցանելոյ զլաւացն՝ վատթարացն յիշատակաւ: 9 Այլ ինձ ասելի է յարտաքնոցն բարեաց վկայութեանց, ըստ սրբոյն Պաւղոսի ճառել յաստուածածան իմաստնոցն՝ որք զմի աստուածութիւնն խոստովանեցին՝ անեղ եւ ամենակատար, պատնառ ամենայն*

եղելոց՝ երեւելեաց, եւ իմանալեաց⁶: 10 Ռմանք ասացին թէեւ Սրբոյ Երրորդութեան⁶ իմացան նոքա զխորհուրդս. զոր եւ երանելի աստուածաբանն Գրիգոր յիշէ ասելով, թէ յորժամ յաղագս առաջնոյ եւ եւս երրորդի պատճառին իմաստասիրէրն՝ զայս ոմանք կարծեցին Սրբոյ Երրորդութեանն լինել խորհուրդ: 11 Բայց ես ո՛չ հաւանիմ, քանզի աստուածային առաքեալն ասէ. Զխորհուրդն որ ծածկեալ էր յամենայն յաւիտեանցն՝ որ այժմ յայտնեցաւ: 12 Եւ ինքն փրկիչն ասէ. Գոհանա՛մ զԲէն, Հա՛յր, տէ՛ր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց⁷ եւ ի գիտնոց⁸: 13 Իսկ մարգարէիցն բանք որ ինչ յաղագս Սրբոյ Երրորդութեան են Աստուածային հոգւոյն ազդումն⁸: 14 Բայց մարդկայինն⁹ իմաստութիւն այնմ մեծութեան ո՛չ եղեւ հասու: 15 Բայց զմիինն ճշմարտապէս ծանեան զԱստուած. եւ փառաւորեցին բանիւ եւ գործով: 16 Բանիւ խոստովանել գովելով զարարիչն ամենայնի, եւ գործով մաքուր լինել յախտից եւ յամենայն ցանկութեանց եւ ի զբաղմանց աշխարհականաց ազատեալ¹⁰ առանց ամուսնութեան միանձուկք զմիայնաւորութեան կալեալ զվարս. որք զորովայնս դաստիարակեցին պարկեշտութեամբ: 17 Քանզի ո՛չ միս եւ ո՛չ ձուկն ուտէին՝ եւ ասէին. մի՛ արասցուք զորովայնս մեր զերեզման այլոց կենդանեաց. այլ միայն բանջարաւ եւ պտղով

1 Ա զառակութիւն
2 Ա բանդայգուշեալ
3 Ա զամենայն փիս զԱստուած. բնագրումն եղել է զած, գրիչը սխալմամբ կարդացել է զամ, այն է՝ զամենայն:
4 Բ կշտամբութիւն
5 Ա ետեւել

⁶ Հմմտ. Հռոմ. Ժ 9-10:
6 Ա երրորդութեանն
7 Տէ՛ս Կող. Ը 26:
7 Ա իմաստնոց
8 Մատթ. ԺԸ 25. Գող. Ժ 21
8 Ա ասղումն
9 Ա մարդկային
10 Ա ազատել

ծառոց կերակրէին. նոքա միշտ զհետ բարեաց գործոց երթային. պարապէին զանազան իմաստից քննել եւ ճառել: 18 Յորոց եւ մեր առեալ նիւթ ի մերուս շարադրեսցուք բանի, սկսեալ յերկնէ եւ եկեալ յերկիր: 19 Եւ դարձեալ անդրէն ի յերկին համբարձեալ՝ խորհրդով զարդուն հրճուեցայց յառաջ խաղացուցեալ զբանս՝ ճառ զճառից ելեւել արարից:

1 Բ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻ

2 Ճշմարտիւ թուի ինձ եւ ամենեցուն որք են ի տեսական ուսումնասիրութեան, եւ ի քաջ առաջնոցն ասացեալքն բանի ո՛չ ինչ անճառելի է. եւ մտաց ո՛չ ինչ անհասանելի է: 3 1Իսկ արդ՝ որովհետեւ ի մտաւորն եկաք բան, հարկաւոր է թէ եւ յանմարմինն ելցուք տեսակ². ապա ուստի արժանն է՝ սկսանելի է: 4 Իսկ սկսանելին ասի յանսկիզբնէ ումեմնէ. ապա³ ուրեմն անսկիզբն անասաց⁴ եւ անճառելի մտաց, սակայն իմանալեան իմանի: 5 5Իսկ որ իմանի՝ ապաքէն մտացն իմանի: 6 Իսկ միտքն զիտ⁵ զկարասցեն⁶ հասու լինել անճառելոյն⁷, եթէ ո՛չ ունիցի յանգուլթիւն ի նմին իմանալոյն: 7 Իսկ որ ունին յանգուլթիւն, բերէ եւ զնորին⁸ ճշմարտութիւն⁹: 8 Արդ՝ եթէ ինքն իմանալին կամեսցի, նորունն յանգակցի¹⁰ մտացն եկեսցէ ի ճառելին¹¹: 9 Ո՛չ զորպիսութիւնն¹² զիտելով, այլ զէութիւն գոյութեանն իմա-

նալով: 10 Քանզի որ իմանալին է՝ եւ անեղ է: 11 Իսկ որ անեղն¹³ է՝ նոյն եւ անարար է. իսկ որ անարարն¹⁴ է՝ նոյն եւ ատեղի է. ինքն է տեղի ամենեցուն: 12 Եւ որ անարարն է, արարիչ է բոլորեցուն: 13 Ասացաք զնա եւ անեղանելի. ապա յայտ է թէ եղեալքս¹⁵ ի նմանէ սկիզբն առին լինելոյ. իսկ յորմէ սկիզբն առին, նա գեր ի վերոյ մնաց քան զսկսեալս: 14 Այսպէս փիլիսոփայքն բարիք¹⁶ միաստուածութիւն խոստովանելով հրէաբար ասացին՝ թէ¹⁷ որպիսութիւն¹⁸ նորա ո՛չ մտաւք նկատի¹⁹ եւ ո՛չ բանիւ բովանդակի²⁰. եւ նա՛ է սկիզբն եւ արարիչ²¹ երեւելեաց եւ իմանալեաց: 15 Եւ եղեալքս ի նմանէ են թուով չորք²²: 16 Առաջինն²³ հուր: 17 Երկրորդն²⁴ հողմ: 18 Երրորդն²⁵ հող: 19 Չորրորդն²⁶ ջուր: 20 Եւ զհողին փչումն աստուածային²⁷ ասացին եւ ո՛չ նիւթական արարած՝ այլ աննիւթ, թէպէտ եւ արարած²⁸. եւ զիտելի է նմա՛ միայնոյ²⁹ որ արար զնա: 21 Այլ երկինք եւ երկիր եւ որ ի³⁰ միջոցիս են հաստատութիւնք ամենայն որ ի նոսա, յա՛յս նիւթոց³¹ կազմեցան՝ հրամանաւ արարչին³². եւ ունին³³

1 Պ տեխտը սկսում է՝ Արդ որովհետեւ ի մտաւորն եկաք բան
 2 Ա՛ տեսակ / Պ տեսակ
 3 Պ ապաքէն փխ ապա
 4 Ա՛ չի՛ անասաց
 5 Ա՛ չի՛ իսկ որ իմանի՝ ապաքէն մտացն իմանի
 6 Պ կարիցեն
 7 Պ ասելոյն փխ աննառելոյն
 8 Պ գնոր փխ գնորին
 9 Պ զնշմարտութիւնն
 10 Պ յանգակցի / Ա՛ ուղղում եմք՝ յանգակցի
 11 Պ անառելին փխ ի անառելին
 12 Բ որպիսութիւն

13 Պ անեղ փխ անեղն / Բ որ անեղ է
 14 Պ անարար
 15 Պ յումմէ սկիզբն առին
 16 Պ բարի փիլիսոփայքն փխ փիլիսոփայքն բարիք
 17 Պ եթէ փխ թէ
 18 Պ տեսութիւն
 19 Պ կամ փխ եւ ոչ
 20 Ա բովանտակի
 21 Պ ամենայնի փխ երեւելեաց եւ իմանալեաց
 22 Պ չորս
 23 Պ չի՛ առաջինն
 24 Պ չի՛ երկրորդն
 25 Պ չի՛ երրորդն
 26 Պ չի՛ չորրորդն
 27 Պ աստուածային փչումն
 28 Պ Դ արար աստուած փխ արարած
 29 Ա միայնոյ / Պ միայն
 30 Պ չի՛ միջոցիս... որ ի
 31 Պ ի նիւթից փխ յայս նիւթոց
 32 Պ որ արարն գնա
 33 Պ ունի

խառնուածս միաբանութեան առ միմեանս
 հաղորդութեամբ¹: 22 Եւ է հրոյ բնու-
 թիւն² ջերմ եւ ցամաք: 23 Եւ աւդոյ բնու-
 թիւն³ ջերմ եւ խոնաւ: 24 Եւ ջրոյ բնու-
 թիւն՝ խոնաւ եւ ցուրտ: 25 Եւ հողոյ բնու-
 թիւն՝ ցուրտ եւ ցամաք: 26 Եւ ի հաղոր-
 դելն⁴ ընդ միմեանս՝ առնուն եւ ի բնութե-
 նէ միմեանց: 27 Արդ՝ սոցա արարիչն յա-
 ռաջագոյն նախախնամութեամբն տեղի ոչ
 պատրաստէր, քանզի մարմին գործէր:
 28 Իսկ մարմնոյ դիրք հաստատութեամբ⁵
 պիտոյ էին. իսկ հաստատութիւն նախ եւ
 առաջին⁶ որ գտեղին⁷ ունիցի. եւ այլ ե-
 րեքն եւս ըստ նովաւ⁸ յարմարեալ պատ-
 կանիցին: 29 Արդ՝ ահա՛ հասաք ի կէտն՝
 ո՛չ⁹ ի դուզնաքեայ, այլ ի մեծ¹⁰ եւ ահա-
 գին երկինն¹¹ վերին, որում յոյնք¹² եթերն¹³
 կարդացին. եւ հելլենացիք¹⁴ հուր թաղ-
 կեալ ասացին, զորս¹⁵ եւ բագումք յեկե-
 դեցւոյ¹⁶ հաւանեցան: 30 Թէպէտ եւ չա-
 րաց փիլիսոփայիցն¹⁷ ո՛չ թուեցաւ հաճոյ.
 18. քանզի կէսքն ի նոցանէ երկինս բագումս
 եւ աշխարհս անհամարս ասացին: 31 Եւ
 կէսք ի նոցանէ ի մի տարր երկնի գերկինս
 ամենայն ձուլեալ ասացին. եւ զնիւթոյն

ասացին՝ եթէ է այլ իմն բնութիւն պարզ,
 աւտար ի չորից բնութեանց, զի ո՛չ հուր է
 եւ ո՛չ աւդ, ո՛չ հող եւ ո՛չ ջուր, այլ ա՛յլ
 իմն է ասեն, լուսաւոր եւ խիստ, որպէս
 գբնութիւն¹⁹ պաղպաղակի. եւ կամ որպէս
 զվանակնէ, ասեն, եթէ ի ջրոց որ պաղեալ
 խստանան՝ մեծաւ հաստատուն կցուածով
 առնու փոփոխումն՝ ²⁰գալ ի կերպարանս
 ականց պատուականաց. եւ ասեն՝ եթէ վա-
 նակն պայծառ լուսաւորութեամբն եւ
 պաղպաղակն մաքուր եւ յատկ գեղեցկու-
 թեամբն՝ նման են լուսաւորութեան աւդոյ
 եւ ջրոյ, յորոց առնուն նորա զաւրինակն
 նիւթոյ հաստատութեան²¹: 32 Բայց ինձ
 արդարեւ ծաղու եւ եպերանաց արժանի
 թուին, որք զանձինս առ իմաստունս ու-
 նէին եւ յիմարեցան: 33 Որք գերկին եւ
 գերկիր անսկիզբն եւ անկատար ասացին,
 որպէս ոք զի տեսանիցէ զիր բոլորակ
 դրոշմեալ յումէ²² եւ իցէ. եւ վասն զի ո՛չ
 էր ինքն ի տեղն²³, յորժամ հանաւ գիրն
 բոլորակ. եւ չերեւի թէ ուստի՞ իցէ սկսեալ.
 եւ կարծիցէ թէ անսկիզբն է: 34 Բայց
 պարտ է նկատել²⁴ մտաւք, եթէ որ եհանն²⁵
 զնա անդէն, արար նմա սկիզբն. եւ նոյն
 բովանդակեաց զնա կատարմամբ: 35 Եւ
 արդ՝ աւելորդ է մեզ²⁶ վասն նոցա յերկա-
 րաբանել²⁷, լքեալ թողցուք զխոտեալսն եւ
 դարձցուք անդրէն ի կէտն ահաւոր, որ է
 երկինն վերին²⁸, որում յոյնք եթերն²⁹ կար-
 դացին եւ հելլենացիք³⁰ հուր թաղկեալ³¹

1 Պ հաղորդութեան
 2 Պ բնութիւն հրոյ
 3 Պ չիբ բնութիւն
 4 ԱԲ հաղորդեալն
 5 Պ հաստատութեան
 6 Պ եւս փիս եւ առաջին
 7 Պ գտեղի
 8 Ա ընդ նովաւ. ըստ գործիականով անսովոր է,
 բայց պահեցին, որովհետեւ բնագրում այդպէս
 էր:
 9 Ա ոչ է
 10 Պ մեծն
 11 Պ յաեագին յերկինն
 12 Գ տեխտն սկսում է՝ արդ յոյնք...
 13 Պ եթեր
 14 Ա հելլենացիք / Պ ֆաղեացիք փիս հելլենա-
 ցիք
 15 Պ որում փիս գորս
 16 Ա եկեղեցոյ
 17 Ա փիլիսոփայոցն
 18 Պ չիբ ֆանգի... եւ արդ՝ (նախ. 35)

19 Ա գբնութեան
 20 Բ գգալ ի կերպարանս
 21 Ա հաստատութեանն
 22 ԱԲ յումէ փիս յումմէ
 23 ԱԲ ի տեղն փիս ի տեղուցն
 24 Ա նկատեալ
 25 ԱԲ էհանն
 26 Պ մեզ աւելորդ է
 27 Պ զնոցայն մտով փիս վասն նոցա յերկարա-
 բանել / Ա երկարաբանեալ
 28 ՊԳ չիբ որ է երկինն վերին
 29 ԱՊ եթեր
 30 ՊԳ ֆաղեացիք փիս հելլենացիք
 31 ԱԲ քախկեալ

ասացին: 36 Եւ է նա մարմին անչարչարելի, հուր պարզ, ո՛չ յուժեքէ եւ ո՛չ ոք ի նմանէ, ինքն յինքենէ, ինքն առանձինն¹ մարմին անհատ, անտեղիտալի, անկորանալի, անխորշ, անփոթ², անգոգ, պատ³ առեալ զամենայնիւ, փակեալ զգոյսս⁴ ընդ իւրեւ⁵ տարածեցաւ, կալաւ բոլորն բոլորակ երկնից թաղուն սերտութեամբ զտարերս ընդ իւրեաւ⁶. եւ բաւական եղեւ մեծատարած⁷ շրջան նորա՝ որ պատեաց զամենայն արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորուածի նորա բոլորակ գնդաձեւ՝ զոր նոքա⁸ կատարեալ⁹ ձեւ յաւիտենական¹⁰ կոչեն՝ շրջագայ¹¹ անդադար երազութեամբ անչափելի եւ անթուելի եւ անտեսանելի¹². միայն իմանալի. ո՛չ ամենեցուն՝ այլ միայն¹³ որ¹⁴ զիմանալիսն իմանան. ո՛չ որպէս կամին, այլ որպէս ի գոյացութիւն¹⁵ շրջագայութեան, զոր եւ պրկումն անուանեն: 37 Եւ ի ներքոյ պրկմանն ըստ նմին ձեւացեալ կայ հաստատութիւնդ՝ զոր կոչեմք երկին, եւ ասեն զգմանէ¹⁶ թէ ջուր է եւ աւղ: 38 Ո՛չ պաղեալ եւ ո՛չ թանձրութեամբ խստացեալ¹⁷: 39 Այլ ջուր է ճշմարիտ լոյծ բնութեամբ՝ որպէս զաստիս¹⁸. եւ

աւղոյն փչեալ ուռուցեալ գոգեաց¹⁹ որպէս պղպջակք²⁰ որ փչեալ բոլորին²¹ աւղով եւ ի խոնաւութենէ անձրեւաց, եւ առնուն կերպարանս ըստ աւրինակի զմբեթաց. նոյնգունակ եւ հաստատութիւնդ փչեալ աւղով բոլորեալ պատ առեալ զերկրաւ. եւ աւղ թանձր եւ թաղուն, եւ ամենեւին²² բնութիւն ցուրտ առաւել ի ներքոյ²³ մտեալ ի մէջ նորա շուրջ զերկրաւ պրկեալ²⁴ ունի: 40 Եւ²⁵ ի ներքոյ պրկմանն արգելեալ սաստկութիւն հողմոց վերնոց եւ ներքնոց²⁶ եւ ի մէջ առեալ փակեաց զմեծ մարմինս զայս²⁷ զերկիրս: 41 Քանզի ըստ ձեւոյ բուն երկնին²⁸ եւ սա բաղկացաւ՝ զկատարեալ ձեւն²⁹ առեալ եւ սա՝ շրջագայ անդադար ի նմանէ հարկաւորեալ: 42 Եւ ձեւ բոլոր շրջագային՝ բաժանի յերկուս կիսագունդս, զի իցէ մին ի վերոյ եւ միւսն հայեցի ի ներքոյ: 43 Եւ հայեցուածք երկուց կիսագնդիցն հանդիպութեամբ կշիռ³⁰ ուղիղ³¹ ի վերին եւ ի ներքին տրամագիծսն: 44 ³²Քանզի յորժամ պատ էառ վերին շրջագայութիւնն զմեծ զաշխարհաւս զայս՝ մնաց արտաքոյ եղելոց նիւթոցս եւ ո՛չ ինչ, եւ ամենայն որ ընդ նովաւ ըստ նորին ձեւոյ բաղկացեալ: 45 Ո՛չ միայն երկրորդ երկին զոր կոչեմք հաստատութիւն, այլ եւ աւղն թաղուն որ ընդ նովաւ, եւ զարդն որ յաւղն. եւ միանգամայն ամենայն մինչեւ ցներքին ա-

1 Ա առ առանձինն փխ առանձինն
 2 Պ անփոփ փխ անփոթ
 3 ԱԲ պար փխ պատ
 4 Ա զգոյսս
 5 Գ իւրեալ փխ իւրեալ
 6 ԱԲ ինեալ փխ իւրեալ. Թերեւս բնագրում՝ ինքեամբ
 7 Բ մեծարարած
 8 ՊԳ չի՛բ ցո՛քա
 9 ՊԳ տարածեալ փխ կատարեալ
 10 ՊԳ ձեւ յաւիտեան
 11 Դ շուրջ գայ փխ շրջագայ
 12 ՊԳ չի՛բ եւ անտեսանելի
 13 ԱԲ չի՛բ միայն
 14 Դ Պ որք փխ որ
 15 Ա Պ գոյացութեան
 16 Ա եւ Բ չի՛բ զգմանէ
 17 ՊԳ խտացեալ փխ խստացեալ
 18 ՊԳ որպէս զաստիս լոյծ բնութեամբ / Ա զաստիս

19 ՊԳ գոգացեալ փխ գոգեաց
 20 ՊԳ պղպջակ
 21 ՊԳ բոլորովին փխ բոլորին
 22 ՊԳ ամենայնիւ փխ ամենեւին
 23 ՊԳ ի ներքոյ փխ ներքոյ
 24 ՊԳ պատեալ փխ պրկեալ
 25 ՊԳ չի՛բ եւ
 26 ՊԳ հողմոյն վերոյ եւ ներքոյ
 27 ԱԳԲ չի՛բ գայս
 28 ՊԳ երկնի փխ երկնին
 29 ՊԳ կատարեալ զձեւն
 30 ԱԲ կշիռն
 31 Ա ուղիղ փխ ուղիղ
 32 ՊԳԴ չի՛բ Քանզի... երբ ձեւ (նախ. 46)

նաևարութիւն¹ աւղոյս: 46 Եւ եթէ ոք դժուարեցի՛ր եւ կամիցի աւրինակ ցուցական խնդրել², տեսցէ՛ զի լոյժ բնութիւն ջուրց անձեւ է եւ անորակ. եւ եթէ կամիցի ոք զնա ձեւացուցանել ի տեսիլս ինչ՝ այսպէս, եթէ արկանիցես է տիկ նոխազաց՝ զնորին եբեր ձեւ: 47 Նոյնպէս եւ ըստ նմանութեան բուն երկնի՛ եւ ջուրն եւ աւղն ձեւացան³: 48 Ձայտասիկ արտաքինքն ասացին՝ եւ ես հաւանիմ նոցա. մի՛⁴ վասն շուրջ գալոյն երկնից, զի եւ աստուածային գիրք վկայեն. որպէս Յովբայն ասաց տէր. գիտիցե՞ս զշրջանս երկնից: 49 Եւ դարձեալ մին վասն երկու երկին եղելոյ⁵. որում նոյնպէս աստուածային գիրք վկայեն՝ երկինք երկնից ասելով⁶, որպէս յիսկզբանն յայտնապէս ցուցանէ երկու լինել զոր կոչեն արտաքինքն երկին եւ բուն երկին: 50 Բայց վասն նիւթոյ հաստատութեանդ միւսոյ երկնիդ ջուր եւ աւղ լինելոյ՝ բազումք յեկեղեցոյ վկայեն նոցա, որպէս հայաստանեայցս վարդապետ Սուրբն Գրիգորիոս ասէ՝ ջրեղէն հաստատութիւն⁷ երկնից: 51 Եւ⁸ երանելին Բասիլիոս⁹ ի վեցաւրեայ գրին իւրում¹⁰ ասէ, թէ զվերին վայրս աւղոյն հանդերձ խոնաւութեամբ ջրոյն երկին¹¹ կոչէ¹², ըստ այնմ զի ասէ¹³ թռչունս¹⁴ երկնից: 52 Արդ՝ զի՞ ասէ¹⁵ թռչունք երկնից՝ ի յերկրէ լեալք եւ կերակրեալք, եւ ի սմա մեռեալք, զիա՞րդ

իցեն թռչունք¹⁶ երկնից: 53 Եթէ ո՛չ զվերանալն ի յաւղս¹⁷ կոչէ: 54 Եւ դարձեալ ասէ նոյն ինքն Բասիլիոս¹⁸, եթէ յորժամ աւրհնէրն¹⁹ Մովսէս զագգն Յովսեփայ՝²⁰ ասէր ի ցաւոյ երկնից՝: 55 Եւ յորժամ դնէր անէծս Իսրայելի՛ ասէր. Արարից ի վերայ քո գերկիցս պղնձի: 56 Եւ զի՞նչ իցեն²¹ միտք բանին՝ եթէ ո՛չ ամենեւին երաշտութիւն: 57 Զի յաւրինուածոյ պտղոց²² երկրի պատճառք²³ աւղոյն ²⁴խոնաւութիւն է՝ որ անուանեցաւն²⁵ երկինք, որպէս ասէ²⁶ ի ցաւոյ երկնից, զխոնաւութիւն ջուրցն յայտ առնէ՝ զոր ունի աւղն վերին²⁷, որպէս ցանի²⁸ զաշխարհաւ ի պարզ ժամանակի: 58 Ձայս ասէ²⁹ Բասիլիոս: 59 ³⁰Բայց զնիւթոյ բուն երկնէ³¹ բազումք բազում ինչ ասացին. որք եւ³² յեկեղեցոյ³³ ոմանք վկայեն նոցա: 60 Եւ ոմանք այլ ինչ ասեն հանգոյն Փիլոնի՛ թէ³⁴ միտք են եւ ո՛չ նիւթական ինչ: 61 Եւ վասն երրորդ երկնի արտաքինքն ո՛չ հաւանին, եւ ³⁵ո՛չ բնագիր ինչ մեզ յայտնեաց: 62 Բայց վասն ի Պաւղոսէ կոչելոյ՝

1 Բ անցարութիւն
2 Ա խնդրեալ
3 ԱԲ ձեւացաւ
4 ԱԲ միւն
5 ՊԳԴ լինելոյ փիս եղելոյ
6 ՊԳԴ չի՛ր երկնից երկնից ասելով
7 Պ հաստատութիւնդ
8 Պ չի՛ր եւ
9 ՊԳ Բարսեղ փիս Բասիլիոս
10 ՊԴ չի՛ր գրին իւրում
11 ՊԴ երկնից փիս երկնից
12 ՊԴ կոչեաց փիս կոչէ.
13 ՊԴ թէ փիս զի ասէ
14 ՊԴ թռչունք
15 Պ չի՛ր զի՞ ասէ

16 ՊԳ չի՛ր թռչունք
17 ՊԴ յոյն փիս յաւղս
18 ՊԳ Բարսեղ փիս Բասիլիոս
19 ՊԴ օրհնէր
20 ՊԳ Յովսեփոս
* Ն. Ի. 28. 39
Բ Տէ՛ս Ղ. Ե. Ի. 9. 19:
21 ԱԲ իցէ
22 ՊԴ պտղոյ
23 ՊԴ պատճառ
24 Պ խոնաւութիւնն է
25 ՊԳ անուանեցաւ
26 ՊԴ ասելով փիս ասէ
27 ՊԴ օղն ի վեր փիս աղն վերին
28 ՊԴ ցանէ
29 Ա եւ Բ չի՛ր ասէ
30 Գ չի՛ր Բայց... յերկնից իմանի (նախ. 63)
31 ՊԴ երկնից փիս երկնէ
32 Ա որ փիս որք եւ / ՊԴ չի՛ր եւ
33 Ա յեկեղեցոյ
34 ՊԴ եթէ փիս թէ
35 Պ բնագիրք ինչ ոչ յայտնեցին մեզ

ես այսպէս հաւանիմ եթէ¹ զերկրէս ասէ², զի ուր Աստուած է՝ նա երկին կոչի: 63 Եւ Փրկչին մերոյ Քրիստոսի Աստուծոյ ի վերայ երկրի շրջելով՝ երկին³ ասեմ կոչիլ ի Պաւղոսէ. մանաւանդ զի դրախտն յերկրի՛ս եւ ո՛չ յերկինս իմանի:

1 Գ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՐԻ

2 Զերկիր ոմանք յարտաքնոց⁴ բարեաց փիլիսոփայիցն ասացին թէ՛ ձեւացեալ է իբր սկուտեղ: 3 Եւ ոմանք ասացին իբր զգունդ⁵: 4 Եւ ոմանք որպէս քուեայ յերկեռեակ⁶ դիմի⁷, եւ ի միջոցի⁸ երկնի կառուցեալ՝ սաստկութեան⁹ հողմոյ ի ներքոյ մտեալ համբարձեալ ունի զերկիր¹⁰ ի վեր. եւ ընդ անգայտութեան¹¹ ցան եւ ցիր հողոյն երկրի խառնեալ մանրասիկ խոնաւութիւն ջուրց. եւ հողմոյն¹² սաստկութեամբ ի վեր փչելով, եւ երկրիս թանձրահող ծանրութեամբ¹³ ի վայր կալով կափչի հողն յիրեարս, եւ ճնշի իբր¹⁴ ի մամուլս՝ մանրասիկ խոնաւութիւն¹⁵ ջուրցն ի վեր կոյս. եւ խտանայ¹⁶ երկրային մարմինս ի ներքոյ ջուրցն՝ եւ լինի սալայատակ հաստատրամ¹⁷ անփապելի¹⁸ եւ անպայթելի¹⁹.

նեցուկ անվթար զբազմութիւն ջուրցն²⁰ յինքեան ունելով. զոր եւ ծով անուանեմք: 5 Եւ քանզի երկիրս²¹ չորեքկուսի ի միջոցի երկնի կառուցաւ, ո՛չ թոյլ տայ սմա երկին իւրով երազութեամբն ի ներքին կիսագունդն խոնարհել²²: 6 Քանզի երկիր իւրով ծանրութեամբն հակէ ի վայր իջանել՝ եւ հողմն իւրով ուժգնութեամբն ջանայ ի վեր բերել զնա: 7 Եւ ո՛չ ծանրութիւն երկրիս թողացուցանէ ի վեր²³ բերել²⁴. եւ ո՛չ ուժգնութիւն հողմոյն թոյլ²⁵ տայ ի վայր իջանել: 8 Եւ այնպէս զհասարակալչիո կէտն կալեալ կայ: 9 Եւ յերկոցունց հակառակաց²⁶ միջոցն²⁷ զտրամագիծն²⁸ ունի: 10 Իսկ կայեան սորա ի տրամագիծ²⁹ անդր³⁰ զուղղանկիւնսն չորեքսին³¹ առ միմեանս հայեցուցանէ, եւ ի հայել ուղղանկիւնեացն³² առ տրամագիծն³³ միջին՝ զամենայն հարթադակ³⁴ զուգամասն³⁵ զլեռնայինն եւ զդաշտայինն եւ զծովայինն յարմարեալ անվնաս պահէ: 11 Զի որք այսսեն³⁶ անկասկած առցեն զլինելութիւն հրամանաւ արարչին: 12 Եւ եթէ ոք կամիցի³⁷ աւրինակ տեսական գարտաքնոցն լսել՝ իբր թէ գկայս երկրի նմանեցուցեալ³⁸, ինձ ի դէպ թուի ասացեալն՝ իբրեւ¹

1 ՊԴ ԹԷ փԻՍ ԵՔԷ
2 ՊԴ ԱՍԻԳԷ փԻՍ ԱՍԷ
3 ՊԴ ԵՐԿԻՆԻՖ փԻՍ ԵՐԿԻՆԻ
4 ՊԴ չԻՐՅԱՐՏԱՖԻՆՈՑ
5 Պ ԻՐՐԵՆ ԳԳՈՒՆՈ
6 Պ ԵՐԿԵՌԱԿ
7 Պ չԻՐ ՊԻՄԻ
8 Պ ՄԻՋՈՑԻՆ
9 Բ ՍԱՍԿՆՈՒՔԻՆ
10 Պ ԳԵՐԿԻՆՍ փԻՍ ԳԵՐԿԻՐ
11 Պ ԱՆԳԱՅՏՈՒՔԻՆ
12 Պ ԽՈՂՄՈՑ
13 Պ ԲԱՆՃՐՈՒՔԵԱՄԲ ԽՈՂՈՅՆ փԻՍ ԲԱՆՃՐԱԽՈՂ ԾԱՆՐՈՒՔԵԱՄԲ
14 Պ ԻՐՐԵՆ փԻՍ ԻՐՐ
15 ԱԲ ԽՈՆԱՒՈՒՔԵԱՆՆ
16 Դ ԽՍՏԱՆԱՅ փԻՍ ԽՍՏԱՆԱՅ
17 ԱԲ ԽԱՍՏԱՏԱՏՐԱՄ. ՈՒՂՂՈՒՄ ԵՆԻՐ՝ ԸՍՏ Պ-Ի:
18 Պ ԱՆՊԱԽԵԼԻ փԻՍ ԱՆՓԱՊԵԼԻ
19 Ա ԱՆՊԱՅԹԵԼԻ

20 Պ ԳՐԱԳՈՒՄ ՋՈՒՐՍ
21 ԱԲ ԵՐԿՐԻ
22 Բ ԽՈՆԱՐԽԻԼԻ
23 Ա ՎԱՅՐ
24 Ա ԲԵՐԻԼԻ
25 ԱԲ չԻՐ ԹՈՅԼ
26 Պ ԽԱԿԱՌԱԿԱՅՆ
27 Պ չԻՐ ՄԻՋՈՑԻՆ
28 ԱԲ ԳՏՐԱՄԱԳԻԾՍՆ
29 Պ ՏՐԱՄԱԳԻԾԻ
30 Պ ԱՆՂ
31 Պ չՈՐԵՍԵԱՆ
32 Պ ՈՒՂԻՂ ԱՆԿԵԱՆԳՆ
33 Պ ՏՐԱՄԱԳԻԾՍՆ
34 Դ ԽԱՐՔ ԱՐՂԱԿ
35 Պ ԳԼՆՈՆԱՅԻՆ ԵՎ ԳՂԱՇՏԱՅԻՆ ԵՎ ԳԾՈՎԱՅԻՆ
36 Պ Ի ԱՅՍ ԵՆ / ԱԲ ԱՅՍԵՆ. ԱՆՂՈՂՏ ԽՏՔԱՐՈՒՍԾ ԲԱՌ
37 Պ ԿԱՄԵՍԿԻ
38 Պ ՆՄԱՆԵՑՈՒԿԱՆԵԼԻ

րեւ¹ ձու. որպէս նորա դեղինն² ի միջին զնդաձեւ³ կառուցեալ կայ եւ սպիտակն շուրջ զնովաւ, եւ խեճեպն պատ առեալ զամենայնիւ: 13 Նոյնպէս երկիրս ի միջոյ⁴ կառուցեալ կայ, եւ աւղ⁵ շուրջ զնովաւ, եւ երկին պատ առեալ զամենայնիւ: 14 Դարձեալ եթէ առցէ ոք աման խեցեղէն, եւ արկցէ անդր⁶ ջուր, ձէթ⁷ եւ աւազ, ահա յայտնի երեւեցաւ: 15 Աւազն կալաւ զներքին կողմն ամանոյն⁸, եւ ձէթն զվերինն, իսկ ջուրն հարկաւորեալ ի միջոցին⁹ կառուցաւ, եւ մարմին ամանոյն¹⁰ պատ առեալ զամենայնիւ: 16 Իսկ եթէ տարերքս այսպիսիք¹¹ ունին նմանութիւն ցուցական արարածոցս, ո՞րչափ եւս առաւել արարիչն ամենայնի կամի զի արարածքս այսպէս յաւրինեալ կազմեցին¹² բնական բերմամբք¹³: 17 Իսկ որ ինչ ի չար¹⁴ փիլիսոփայիցն յաղագս երկրի եղեալ է աւրինակ՝ ատելի է ինձ, ի նոցանէ ասից¹⁵ ճառել բան¹⁶ բովանդակ¹⁷: 18 ¹⁸Այլ զի կամիմ որպէսզի փոքր ի շատէ եւ զնոցայն իմացուցից ձեզ: 19 ¹⁹Աւրինակ առնուն զփամփուշտ արջառոյ, փչեն եւ ընկենուն ի նա հատ կորեկի մեծի որ լինի բոլոր ամենեւին. եւ յոչինչ հասանելով ի միջին կառչի: 20 Դարձեալ այլ աւրինակ ասեն զյարկ ա-

ղամանդեայ գմբեթին որ ի Կրիտէ²⁰. եւ զանդրին երկաթի՝ որ ի մէջ աւղոյն կառուցեալ կայ՝ ո՛չ ոք²¹ հաստատելով²². զի ծանրութիւն երկաթոյն ի վայր հակէ եւ զաւրութիւն աղամանդին ի վեր քարչէ, եւ այնպէս կախեալ կայ հնարագիտութեամբ ճարտարին: 21 Ջոր առաջինքն կրետացւոց գլուխ մեհենեաց²³ ունէին: 22 ²⁴Արգ՝ թէպէտ եւ արտաքինքն յաղագս երկրի այսպէս ասացին, եթէ չարքն եւ եթէ բարիքն հանգոյն նոցին՝ թէպէտ եւ սակաւիկ ինչ մաքրագոյն: 23 Բայց ես ոչ հաւանիմ նոցա, յիշելով զաստուածային բանն որ առ Յովբն ասէ. Յե՞ք²⁵ վերայ հաստատեալ²⁶ են աղիս դորա՞: 24 Ես արդարեւ անգիտելի վարկանիմ զայն ի մարդկանէ զի թէպէտ եւ լսեմ ի սաղմոսէն²⁷ թէ ի վերայ ծովու հիմունս արկ²⁸ նմա²⁹ք. կարծեմ թէ վասն զի խառն ընդ սանդարամետս է ջուրն՝ զայնմէ³⁰ ասիցէ. զի³¹ ջրոց³² ի վեր ունել զերկիր տարակուսին միտքս թէ զիա՞րգ ի վերայ այնչափ բնութեան ջուրց կայցէ³³ անչափ ծանրութիւն երկրիս³⁴ եւ ո՛չ ընկղմի, եւ ո՛չ զերծեալ փրծանի յամե-

1 ԱԲ չիբ իբրեւ
2 Բ դեղին
3 Դ գնդատեսակ
4 Ա միջոց / Պ միջոցին
5 Պ ապա փխ աւղս
6 Պ անդ
7 Պ եւ ձէթ
8 Դ ամանին
9 Ա ի միջին
10 Պ ամանոյն մարմինն
11 Պ այսպիսի
12 Ա կազմեցին
13 Պ բերմամբ
14 Պ չարաց փխ չար
15 Պ ասիցն
16 ՊԳ չիբ բան
17 Պ գրովանդակն
18 Պ չիբ Այլ... արքինակ (նախ. 20)
19 Հմտ. եզնիկ, II, ԻԶ (տե՛ս ՄԶ, հատոր Ա, էջ 483):

20 Ա Կրետէ / Պ Կրետէս
21 Պ յոք փխ ոք
22 Պ հաստատելով փխ հաստատելով
23 Ա մեհենացն
24 Գ չիբ Արդ... սիւնք նորա դողան (նախ. 49)
25 ԱԲ Յեք. ուղղում ենք՝ Յեք
26 Պ հաստատեղան
27 Յ՞ք. ԼԸ 6
28 Պ Սաղմոսարանին
29 Դ Էարկ փխ արկ
30 Պ երկրի փխ նմա
31 Ս՞ք. ԻԳ 2
32 Պ զայնմանէ / ԱԲ զայնմէ. թեւ գրաբարում զայնմէ ձեր գոյութիւն չունի եւ կայ միայն զայնմ կամ զայնմանէ, բայց որովհետեւ սպասելի էր զայնմէ հնագոյն ձեր, պահեցինք այս ձեւով:
31 Պ չիբ գի
32 Պ ջրոյ փխ ջրոց
33 Ա կայցցէ
34 Պ երկրի

նայն կողմանց երկրէ սորեալ¹ եւ ընկղմեալ² ի ջուրս: 25 Արդ՝ ես հաւատամ բանի³ միւսոյ⁴ սաղմոսին, որ ասէ թէ⁵ ես հաստատեցի զսիւնս նորա⁶: 26 Իբր թէ հրաման աստուածային կարող է ունել զարարածս յերաքանչիւր կարգի, եւ ի մարդկանէ անգիտելի է: 27 Ասեն արտաքինքն զբնակութիւնս կենդանեաց յերկրի⁶ աստի եւ անտի. եւ թէ⁷ գոն ի ներքոյ երկրի մարդիկ⁸ եւ այլ կենդանիք, որք ընդդիմոտունք են մեզ՝ որպէս ճանճք⁹ զխնձորով¹⁰ պատեալք: 28 Նոյնպէս եւ մարդիկ¹¹ զերկրաւ, եւ յամառեալ պնդին ասելով՝ եթէ ո՛չ էին մեզ¹² ընդդիմոտունք ներքոյ յարեակք¹³, ո՞ւմ արդեալք¹⁴ արեգակնդ¹⁵ տայր լոյս զկէս աւուրն¹⁶, յորժամ ստուերաւն զմեզ գիշերացուցանէ. զի յանաւգուտս¹⁷ արեգակն¹⁸ ծախել զընթացս¹⁹ անհնար է ասել: 29 Անմտութիւն մեծ եւ առաւել²⁰ սխալանք²¹ թուին ինձ առ ի նոցանէ ասացեալքս. զի²² թողում ասել զյանդիմանութիւն որ յաստուածային

զրոյ: 30 Բայց յորժամ մարդկային իմաստիւք հայեսցիս²³, յայտնապէս երեւի անմտութիւն ճառից նոցա: 31 Զի թէ²⁴ աստէն իսկ յաշխարհի²⁵ բազում այն է՝ որ անբնական եւ անկենդանեաց տայ արեգակն լոյս քան որ բնաւորքս են տեղիք²⁶ եւ յորում գոն կենդանիք: 32 Որպէս հիւսիսայինն ի սառնամանեացն է անկենդանի: 33 Եւ կամ հարաւային երկիրն²⁷ ի յաւելորդ ջերմութենէն՝ զոր այրեցական գաւտին կոչեն: 34 Կամ անապատն²⁸ արեւելից՝ յորում եւ ի զեռնոց անգամ ո՛չ երեւին²⁹: 35 Բայց պարտ է մեզ զերկբայանալ խորհրդոցս իմոց³⁰ պատմել ձեզ, որ ինչ յաղագս այսր եղեւ: 36 Թէպէտ եւ լսէի ի մարգարէից եւ յամենայն աստուածային զրոյց, ի վարդապետաց եկեղեցոյ³¹, եթէ ո՛չ գոն այլ ներքոյարեակք³² կենդանիք, սակայն ես ³³հաւանեալ էի ընդդիմոտունս մեզ լինել: 37 Եւ ըստ իմոց ³⁴խորհրդոցս զաստուածային բանսն ձեւանալ համարէի: 38 Եւ արդ մի՛ զիս եպերէք, սիրելիք, գիտէ՛ ծածկագէտն, զի ո՛չ ստեմ: 39 Մինչդեռ էի ³⁵յաղաւթս առ առաւատուն ի վկայարանի Սրբոյն Եւզինեայ եւ միտք իմ³⁶ յա՛յս խորհուրդս³⁷ ծփէին, քուն էառ զիս: 40 Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ³⁸ յերկիր իջա-

1 ԱՒ սորել. ուղղում ենք՝ ըստ Պ-ի:
 2 Պ անկանի փխ ընկղմեալ
 3 Պ չի՛ք բանի
 4 Պ միւսում
 5 ԱՒ չի՛ք թէ
 6 Ս աղմ. Հ՛Գ 4
 6 Պ չի՛ք յերկրի
 7 Պ եթէ փխ թէ
 8 Բ մարդիկի
 9 Ա. նանջ / Բ նանն
 10 Ձեռագրերում խնձորով. ուղղում ենք՝ զխնձորով
 11 Պ մարդիկ փխ եւ մարդիկ
 12 Պ չի՛ք մեզ
 13 Պ չի՛ք ներքոյարեակի
 14 ԱՒ արդեոֆն (!)
 15 Պ արեգակն
 16 Պ օրն փխ աուրն
 17 Պ անօգուտ / ԱՒ անօգուտս. ուղղում ենք՝ յանաւգուտս
 18 Պ արեգակն
 19 Պ զընթացս իւր ծախել փխ ծախել զընթացս
 20 Պ աւելի փխ առաւել
 21 Պ չի՛ք սխալանք
 22 Պ չի՛ք զի

23 Պ հայիցիս
 24 Դ եթէ փխ թէ
 25 Դ աշխարհիս
 26 Պ բնականորֆն են տեղեօֆ
 27 Պ հարաւայինն երկիր
 28 Բ անապատ
 29 Պ ոչ գտանի փխ ոչ երեւին
 30 Ձեռագրերում իմոյ. ուղղում ենք՝ իմոց
 31 Ա եկեղեցոյ
 32 Պ ներքոյարեակ
 33 Ա հաւանել էի
 34 Պ խորհրդոց զաստուածային զբանն
 35 Պ առաւատին յաղօթսն
 36 Պ չի՛ք իմ
 37 Դ խորհրդածէին
 38 Պ խոնարհէր

նէր¹: 41 Եւ ես յառաջն² ընթանայի եւ ի գիրկս ընդունէի³ զնա. եւ նա էր պատանի անմուրուս⁴, ոսկէգլխակ⁵, եւ շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկով լինէր ոծեալ. եւ ինքն սպիտակս եւ փայլունս զգեցեալ⁶ հանդերձս. եւ լոյս սաստիկ ելանէր ի բերանոյն⁷: 42 Եւ ես⁸ ասացի ցնա՝ եթէ⁹ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բան. արդ՛ ադէ պատմեա ինձ¹⁰ եթէ յորժամ ի մէնջ ծածկիրս¹¹ ո՞ւմ տաս լոյս, գո՞ն այլ¹² կենդանիք ի ներքոյ երկրի¹³ եթէ¹⁴ ոչ: 43 Եւ նա ասէ ոչ, այլ լերանց եւ ափափայից¹⁵ ձորոց եւ անձաւաց անկենդանեաց տամ լոյս: 44 Եւ իմ պատմեալ զայս վարդապետին իմում. եւ նա ասէ ցիս¹⁶ ընդէ՞ր ոչ հարցանէիր զայդ՛ եւ նա¹⁷ եցոյց ինձ զճառս երանելոյն Ամփիլոքիոսի¹⁸, որ մեկնէր զգիրս¹⁹ Յովբայ. եւ ի խաւսան տեառն որ²⁰ ասէր այսպէս. Զի՞նչ վայր՛ իցեմ ուր ծածկեմ ես զարեգակն²¹ ի գիշերի յերեսաց ամենայն կենդանեաց՝: 45 Արդ՛ պարտիմք հաւատալ մեծի վարդապետին²²

եւ նորուն նմանեաց արանցն²³ աստուածայնոց. եւ ո՛չ արտաքնոցն²⁴: 46 Եւ զշարժմանց երկրիս ²⁵որ լինին ի տեղիս տեղիս, զերկինս պատճառս ասեն աստեղացս այսպէս արտաքինքն, եթէ հուրն վերին է հարկաւոր շարժումն, եւ վերաբերի բնութիւն շրջագայ կազմութիւն բոլորակ գնդաձեւ տեսակ, ապաքէն եւ զհողմ ընդ իւր ձեւացոյց. քանզի է յանկութիւն հրոյ եւ հողմոյ առ միմեանս. եւ ի շրջագայանալն իւրում յառնէ հողմ փոթորկեալ ի նմանէ եւ բախէ գներքին կողմ սանդարամետաց. եւ ուրանաւր բախէն՝ շարժի ի վերայ նորա երկիրն: 47 Բայց ես ո՛չ հաւանիմ այսմ, թէպէտ եւ յառաջագոյն գիտեն նոքա զլինելն: 48 Այլ ես հաւատամ բանի²⁶ սաղմոսին որ ասէ. Ո՞ հայի յերկիր եւ տայ²⁷ դողալ սմաէ: 49 Կամ որպէս ի Յովբն պատմի՛ թէ²⁸ Ո՞վ շարժէ գառ ի ներքոյն²⁹ երկնից ի հիմանց. եւ սիւնն նորա դողանէ:

1 Դ. 30ՅԱՂԱԳՍ ԾՈՎՈՒ

2 Զծովէ ասեն խելագարեալ փրկիսփայլքն հեթանոսաց՝ թէ պատ առեալ զերկրաւ, եւ ի միջի ծովու է երկիր որպէս³¹ կղզի մի. եւ ջուր ի վերայ աւզոյ եւ ի կողմանէ: 3 Իսկ որ ի վերայ երկրիս³² են ծովք, ընդ որ շրջին մարդիկ. գոյ³³ նոցա

1 Պ իջանել
2 Պ յառաջս
3 ՊԴ ընդունի
4 ՊԴ անմուրուս
5 Պ ոսկէգլխակ
6 Պ ունէր փիս զգեցեալ
7 Պ բերանոյ նորա
8 ԱԲ չի՛ք եւ ես
9 Պ թէ փիս եթէ
10 Պ չի՛ք ինձ
11 Պ ծածկիրս ի մէնջ
12 ԱԲ չի՛ք այլ
13 Պ երկրիս
14 Պ թէ
15 Պ անփայից / Ա փայլացայից / Բ փայլայից. ուղղում ենք՝ ըստ ՆՀԲ-ի:
16 Պ գիս
17 ԱԲ չի՛ք նա. ուղղում ենք՝ ըստ Պ-ի:
18 Պ Ամփիլոքիոսի. յուն.՝ Ἀμφίλοκος
19 Պ զգիրսն
20 Պ չի՛ք որ
21 Բ արեգակն
՝ Հմմտ. Յ՞ք. ԼԸ 19:
22 Դ մեծ վարդապետն

23 ՊԴ արանց
24 ՊԴ արտաքնոց
25 ՊԴ չի՛ք որ... զհաւասարութիւն պահէ (գլուխ Ե, նախ. 19)
26 Պ չի՛ք բանի
27 Դ եւ կամ փիս եւ տայ
՛ Ս՞ք. ՆԳ 32
28 Պ եթէ փիս թէ
29 Պ ներքոյս
՛ Յ՞ք. Թ՝ 6
30 Դ չի՛ք Յաղագս ծովու... ի բուն ծովէն
31 Պ իբրեւ փիս որպէս
32 Դ երկրի
33 Ա կայ փիս գոյ

եզեր սպառուած¹ և բովանդակած. ի նմա² են ձկուռք և այլ կենդանիք բազումք: 4 Իսկ ի ծովուն որ շրջապատեն գերկիր³ ո՛չ գոնե⁴ ի նմա կենդանիք և ո՛չ եզեր սպառուածի⁵. քանզի ո՛չ երկիր և ո՛չ այլ ինչ կայ զնովաւ, և ո՛չ արեգակն անցանէ զնովաւ, այլ ընդ եզեր նորա առ երկրաւ մտանէ և ելանէ: 5 Փիլիսոփայքն բարիք⁶ ասացին զծովէ՝ եթէ այս իսկ է, որ ի վերայ երկրի է և ի մէջ, ընդ որ շրջին մարդիկ, և ո՛չ գոյ այլ ծով արտաքոյ երկրի: 6 Եւ այս ծովակք⁷ թէպէտ և սահմանաւ⁸ զատեալք⁹ են ի միմեանց, այլ են մի¹⁰, զի ծակք են¹¹ ի միմեանս ի ներքոյ երկրի¹², և յատակք¹³ ամենեցուն ի միմեանս հային. թէպէտ և յոյժ հեռի են վերին սահմանաւք¹⁴ ի միմեանց: 7 Բայց¹⁵ ևս հաւանիմ¹⁶ այսմ զոր աստուածային գիրքն¹⁷ հանգոյն սոցա ասաց¹⁸: 8 Ժողովեսցին ջուրքը¹⁹ ի ժողով մի. յորմէ մարթէ ուսանել²⁰ թէ խառնին ի միմեանս և զուգեալ լինին մի: 9 Եւ դարձեալ ասէ²¹ զժո-

ղովս ջուրցն կոչեաց ծովս. ահա յայտ է թէ որոշեալ սահմանաւք եցոյց զխորշս գոգոցն, որ են յամենայն կողմանս²² երկրի. և ունին իւրաքանչիւր խորշքն առանձին կերպարանս, եթէ ծովն հարաւոյ, եթէ ծովն արեւելից, եթէ ծովն հիւսիսոյ, եթէ ծովն արեւմտից: 10 Եւ անուանս²³ ևս ունին իւրաքանչիւր գոգք²⁴ բազումք ծովուց: 11 Զի մինն անուանեալ կոչի Պոնտոս և Եւքսինոս²⁵. և միւսն²⁶ Պրոպոնտոս²⁷ և Հելեսպոնտոս. և միւսն Եգէոս և Յոնէոս²⁸. և միւս ծովն Սարգոնիկէ²⁹ աշխարհին. և միւս ծովն³⁰ Սիկիլիայ աշխարհին. և միւսն Տիւրոսի, հանդերձ այլևս բազում անուամբք՝ որ անցանեն ըստ³¹ թիւ և ըստ³² համար: 12 Են և³³ այլ բազում ծովակք որ³⁴ ո՛չ են յաշխարհածովէ³⁵, թէպէտ և զաղի և զգառն ճաշակս ունիցին, և աւազաւք³⁶ սահմանեալ գտանիցին ըստ աւրինակի կերպարանաց մեծի ծովուն³⁷, սակայն ոչ է մարթ զծովակսն ծովս կոչել: 13 Ո՛չ գԱսպղատիտէս³⁸ ծովակ որ մաւտ յաշխարհն Հրէաստանի է. և ո՛չ գԱերբոնիտէս³⁹ ծովակ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհի⁴⁰ միջի⁴¹. և գայ հասանէ ի կողմանս արա-

1 ՊԻ սպառուածն փխ սպառուած / ԱԲ եզերս պառուած. ուղղում ենք՝ եզեր սպառուած
 * Հմմտ. Դ. Թ. ագ. Ժ. Թ. 23:
 2 Պ սմա փխ նմա
 3 Պ շուրջ պատին գերկրաւ
 4 ԱԲ գոյ փխ գոն
 5 Պ սպառուածի փխ սպառուածի / Ա. եզրս պառուածի
 6 Ա. բարիքն
 7 Պ ծով փխ ծովակք
 8 Պ սահմանաւ փխ և սահմանաւ
 9 Պ գատեալ
 10 Պ մի ևն փխ ևն մի
 11 ԱԲ ծածկեն փխ ծակք են. ուղղում ենք՝ ըստ Պ-ի:
 12 Պ երկրիս
 13 Դ յատակ
 14 Դ սահմանօքն
 15 Պ և փխ Բայց
 16 Դ այսր փխ այսմ / Դ այս այսպէս զի աստուածային...
 17 Պ գիրքն
 18 Պ ասէ փխ ասաց
 19 Պ ջուրքն
 20 Պ իմանալ փխ ուսանել
 21 Դ ասէ քէ

22 ԱԲ կողմունս. ուղղում ենք՝ կողմանս
 23 Դ անուանին փխ անուանս
 24 Պ գոգքն
 25 ԱԲ Եւքսինոս. ուղղում ենք՝ ըստ Պ-ի:
 26 Պ մին փխ միւսն
 27 Պ Պրոպոնտոս
 28 Պ Յունիոս
 29 Պ Սարգոնիկեայ
 30 Պ չիք ծովն
 31 Պ չիք ըստ
 32 Պ չիք ըստ
 33 Պ և ևն
 34 Դ որք փխ որ
 35 Պ յաշխարհածովէն
 36 ՊԴ աւազով
 37 ՊԴ ծովուցն
 38 Դ գԱսփատէս / Պ գԱսփալղէս
 39 ՊԴ գԱերբոնիտիս
 40 Պ չիք աշխարհի
 41 Ա միջի

բացոց: 14 Եւ ո՛չ մեր աշխարհիս ծովակ¹ գոր կոչեմք Բզնունեաց², եւ ո՛չ այլքն³ 4որ յարեւելս են նոյնանմանք: 15 Զի⁵ սոքա, գորս թուեցաքս⁶, ծովակք են եւ ո՛չ ծովք: 16 Թէպէտ եւ ասեն ոմանք⁷ գծովէն որ ա- նուանեալ կոչի Հիւրկանիա. ⁸Եւ զնորուն ընկերն որ անուանեալ կոչի Ասպիայ⁹ թէ¹⁰ զատեալ մեկնեալ են սահմանաւք¹¹ ի բուն ծովէն: 17 Այլ որ փոյթ անձին¹² կալան ի դիր առնուլ զաշխարհ ամենայն, որպէս յառաջն ասացի, ասեն թէ ծակ¹³ ի մի- մեանս են ծովքն եւ երթան կցին յիրեարս ի¹⁴ ներքոյ երկրի, որպէս զի լինել ըստ աս- տուածային գրոց ժողով ջրոցն¹⁵ ծովու մի: 18 Բայց վասն միակշիռ կալոյ ծովու¹⁶ եւ ո՛չ լնլոյ ի գետոց եւ յուղից¹⁷ ըստ բա- նին Սողոմոնի¹⁸, որ ասէ¹⁹ թէ ամենայն ուղիս²⁰ ծով գնան եւ ծով ո՛չ լնու²¹։ 19 ²²Այսպէս ասեն չար փիլիսոփայքն թէ անդատին ի նմանէ ելանեն գետք եւ ա- կունք աղբերաց. եւ վասն այնորիկ ո՛չ լնուն. զի որպէս ելանեն, նոյնպէս եւ մտանեն: 20 Եւ վասն աղի եւ դառն հա-

մոյն ասեն՝ թէ վասնզի ո՛չ ելանէ ջուր ի վերայ երկրի որ պարզէ զմրրութիւն նորա եւ պղտորութիւն, վասն այնր է դառն եւ աղի: 21 Իսկ փիլիսոփայքն բարիք այս- պէս²³ ասացին վասն միակշիռ կալոյ ծո- վու. թէ ջերմութիւն արեգականն ծծէ եւ քարչէ²⁴ զքաղցունս եւ զնորբուն եւ զթե- թեւսն գոլորշեան²⁵ հանէ յաւդն²⁶: 22 Եւ թանձունքն եւ ծանունքն անդէն մնան, ²⁷այսինքն է մրրեալքն եւ պղտորեալքն: 23 Եւ որ անդէնն մնան, են աղիքն եւ դա- ոինքն²⁸: 24 Եւ վասն այնր²⁹ է ծով միա- կշիռ եւ ժահահոտ³⁰, զի գոլորշին որ ձգե- ցաւ ջերմութեամբն արեգական՝ պակասե- ցոյց զյաւելուածն եւ տարաւ զքաղցրու- թիւնն: 25 Եւ աւրինակ տան զսանս եւ զկաթսայս³¹ լի ջրով եռացուցեալս ի հրա- տի. եւ միտ դիր թէ զհարզ լինի³² թերու- թիւն ջուրցն³³ գոլորշեան որ ելանէ ի նմանէ. զի թէ յերկար թողցես ի բորբո- քեալ հրատին եւ ո՛չ յաւելցես³⁴ ածել ի նա ջուր, ամենեւին սպառի: 26 Նոյնպէս եւ ծով ասեն³⁵ զուգեալ կայ յաւելոյ գետոց եւ յուղից³⁶: 27 Եւ ի պակասելոյ գոլոր- շոյն³⁷ գոր ձգէ արեգակն տապովն իւրով՝ հանէ յաւդն: 28 Ասեն աւրինակ եւ³⁸ ի նաւավարաց ³⁹որոց պակասի ջուր ի ծովու, առնուն ասէ ջուր ծովուն զաղին եւ

1 ՊԴ ծովակս
2 Ա Բրբզնունեայ
3 ՊԴ այլք
4 ՊԴ որ կոչին նոյնանմանք / ԱԲ չիք որ կոչին
5 Դ Բանգի փիս զի
6 ՊԴ գոր ասացաք փիս գորս բուեցաք
7 Պ ամանք
8 Ա եւ զնորուն ընկերն որ անուանեալ կոչի Ասպիայ
9 Դ սապես փիս Ասպիայ
10 Դ եթէ փիս թէ
11 Պ չիք սահմանաւք
12 Ա Պ յանձին
13 Պ ծակք են
14 Պ չիք ի
15 ՊԴ ջուրցն
16 Բ չիք ծովու
17 ԱԲ յուղից
18 Ա Սողոմոնի
19 Պ ասէ
20 ԱԲ ուղիս
21 ՊԴ է լնու
22 Դ չիք Այսպէս... փիլիսոփայքն

23 Պ չիք այսպէս
24 Պ քարչէ փիս քարչէ
25 Պ գոլորշեան
26 Դ յաւդն
27 Պ այսինքն պղտորեալքն եւ մրրեալքն
28 ՊԴ աղի եւ դառնք
29 Դ այն
30 Պ ժահահոտ փիս ժահահոտ
31 Պ զկաթսայս եւ զսանս
32 Պ ելանէ փիս լինի
33 ՊԴ ջրոյն
34 Պ յաւելցես
35 Պ չիք ասեն
36 Պ ուղից
37 Պ գոլորշոյն
38 Պ չիք եւ
39 Պ որոց թէ պակասէ ջուրն

զգառն եւ արկանեն¹ ի կաթսայ եւ եռացուցանեն ի հրատի, եւ դնեն սպուռնգս մեծամեծս խփուռնս կաթսայիցն. եւ ի խոնաւութենէն զոր առնուռն սպուռնգքն ի գորշուրշուրն² ջուրս քաղցուռնս ժողովեն ի նոցանէ³ քամելով. եւ այսպիսի հնարիւք առնին դարմանք կենաց նոցա ի նեղութենէ⁴ ջուրցն նուազութեան յորժամ պակասիցի⁵ ի ծովու: 29 Արդ՝ թէպէտ եւ աւրինակս հաւանական⁶ տան արտաքինքն, սակայն ինձ ո՛չ է հաճոյ. քանզի հաւատացեալ եմ թէ հրամանն⁷ աստուածային է, որ ունի գծով արգելեալ միակշիռ. ըստ բանի սաղմոսի⁸ որ ասէ՝ սահման եղեր⁹ եւ ո՛չ անցանքն եւ ո՛չ եւս դառնան ի¹⁰ ծածկել զերկիր՝ որպէս զառաջինն: 30 Քանզի ինքն ասէ տէ՛ր, փակեցի գծով դրամբք, եղի նմա սահմանս¹¹. ասացի ցայդ վայր եկեսցես՝ եւ այլ մի անցցե՛ս¹². եւ այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո: 31 Արդ՝ յայտ է¹³ 14թէ գնալոյ¹⁵ ջրոց ծովու յերեսաց երկրէ¹⁶ ո՛չ արեգական եղեւ պատճառք¹⁷, այլ հրաման¹⁸ աստուածային. զի յառաջ իսկ քան զլինել արեգական¹⁹ ժողովեցան²⁰ ջուրքն ի տեղի ծովու, եւ ցամաքեցաւ երկիր: 32 Ապա

յայտ է թէ այժմ²¹ ի հրամանէ Աստուծոյ արգելեալ կայ ծով²² միակշիռ, զի մի դարձցի²³ ի ծածկել զերկիր:

1 Ե. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ԶԱՐԴՈՒՑ

2 Որ ինչ յաղագս երկնային զարդուց ի մէջ քաղդէացուց²⁴ պատմին բանք բաշաղանաց²⁵, աշխատութիւն անշահ համարիմ ճշդիւ²⁶ պատմել: 3 27Բայց վասն ի գիտութիւն²⁸ ձեզ հասուցանելոյ՝ ասացից փոքր ի շատէ: 4 Յառաջինսն վարժ դպրութեան եւ այլոց արուեստից բազմաց որք յիմաստասիրութեան են, մանաւանդ աստեղաբաշխութիւն²⁹, ի քաղդէացիս երեւեցաւ. եւ ապա եզրպտացոց եւ հելլենացոց ուսեալ՝ առաւել եւս զաւրացուցին: 5 Եւ թէպէտ եւ ջանացան զհետ իմաստից լինել, ո՛չ քաջ գինքեամբ պարատեսեալ, չկարացեալ վերաբերիլ եւ անցանել ըստ տեսութեան զարդուդ ի վեր, եւ առ պատճառաւն վերին ո՛չ կարացեալ հասանել. զդոսին իսկ տեսեալ զլուսաւորս եւ զխումբս զարդուդ՝ զի արարողք են, եւ աստուածս կարդացին: 6 Եւ բաշխս բախտից³⁰ բաժանեցին. եւ ծննդոց իշխանութիւն ետուն սոցա. զոմանս ի բարեբախտութիւն, եւ զոմանս ընդդէմ նոցին ի թշուառութիւն. եւ զայլսն եւս կարգաւ մի ըստ միողէ, զոր չէ՛ մեզ հարկաւ ի թիւ արկանել. այլ սակաւս ի բազմաց, զի իմասջիք եւ դուք զնոցա սխալանսն որ առ ի յոյժ վրիպանացն ասացին զտունջենային եւ զգիշերային ծնելութիւնս ի տանուտեառնէ աստեղէ՝ շրջագայիկ եւ հետեւա-

1 ԱՊ արկանեն
 2 ԱՊ գոլորշոյն
 3 Պ չի՛ր ի նոցանէ
 4 Պ նեղութեան
 5 Պ նուազի փխ պակասի
 6 Պ հաւանականս
 7 Պ հրաման
 8 Պ սաղմոսին
 9 Պ եղ փխ եղեր
 10 Պ չի՛ր ի
 11 Սաղմ. ճՊ. 9
 12 Պ սահման
 13 Պ անցանիցես
 14 ԱՊ չի՛ր յայտ է
 15 Պ եթէ գնալոյ ջուրցն յերեսաց ծովու
 16 ԱԲ գնալն
 17 Պ չի՛ր երկրէ
 18 Պ պատճառ
 19 Պ հրամանն
 20 Պ աւելացուած է «իսկ» «արեգականից» առաջ:
 21 ՊԴ ի ժողովս իւրեանց

21 Պ չի՛ր այժմ
 22 Պ կան ծովի
 23 ՊԴ դարձցին
 24 Ա Բաղագուց / Պ Բաղդագուցն
 25 ԱԲ քաղաքանաց
 26 ԱԲ նշտիմ. ուղղում ենմ՝ նշդիւ
 27 Պ չի՛ր Բայց... զիրք շարավանգեմ (նախ. 97)
 28 Ա գիտութեան
 29 Ա աստեղաբաշխութիւնս
 30 ԱԲ եւ բախտից

գայիկ աստեղք վիճակեալք ի ժամադիտէն բաշխեն ի մասունս եւ ի կրկնամասունս, ի մանրամանակս¹ եւ ի մանրերկրորդս եւ ի մանրամասունս² բազումս: 7 Եւ ո՛չ միայն շնորհ ասեն տալ եւ թշուառութիւն՝ այլ եւ կեանս թուով ասեն տալ՝ ոմանց յուով եւ ոմանց³ նուազս: 8 Եւ ամենայն բարուց եւ բնութեանց կամաց եւ գործոց՝ բարեաց եւ չարեաց՝ որ ինչ միանգամ ի մեզ իրք կրին, զաստեղող դենն պատճառ: 9 Արդ՝ ասեն երկոտասան աստեղատանցք բաժանեալ գերկին զոր կենդանակերպ անուանեն. եւ է մոլորակացք իշխանութեամբ շրջել, եւ ո՛չ ի բաժնի կալ. վասնորոյ եւ ընթացողս կոչեն: 10 Իսկ այլ ախտաբք եւ ապախտաբք ըստ ԲԺ.իցք ասեն բաժանեալ: 11 Զխոյէ ասեն թէ՛ գլուխ է աստեղատանց ԲԺ.անիցն, եւ շնորհատու. զի եւ խոյ⁴ գլուխ է հաւտի եւ պարգեւատու. զի առանց տրտմութեան մերկանայ յասուէն իւրմէ, եւ դարձեալ անդստին իւրմէ բնութեանէն գգենու հանդերձ հանապազորդ: 12 Նոյնպէս եւ զաստեղատունն ասեն ըստ նորին նմանութեան: 13 Ասեն թէ՛ որ ի նմայն ծնանի գեղեցիկ լինի եւ փարփառ, գանգրահեր, ծաւի, զուարթատես, բարեբարոյ⁵, մեծ եւ ճոխ լինի: 14 Զցլէն ասեն թէ՛ ըստ նմանութեան ցլու զաւրաւոր եւ անձնեայ է, եւ որ ի նմայն⁶ ծնանի առակել ուժեղ եւ մեծահասակ լինի, եւ հնազանդ եւ գործունեայ՝ ըստ նմանութեան եզին որ միշտ ընդ լծով հնազանդեալ կայ ի գործ: 15 Զերկաւորէն⁷ ասեն՝ թէ՛ որ ի նմայն⁸ ծնանի ճոխ եւ սնափառ, անհաստատ եւ երկմիտ լինի: 16 Զխեցգետնէն ասեն՝ թէ՛

որ ի նմայն ծնանի տառապեալ եւ մուրական եւ վէս, եւ այսր եւ անդր լինի՝ ըստ աւրինակի խեցգետնոյ՝ որ այսր եւ անդր գնայ. զի եւ աստեղատունն ասեն՝ թէ՛ զըստ նմին շարժի: 17 Զառիւծէն ասեն՝ թէ՛ որ ի նմայն ծնանի քաջասիրտ եւ հպարտ լինի: 18 Զկուսէն ասեն՝ թէ՛ որ ի նմայն ծնանի հեղ, նիհար եւ ագահ լինի: 19 Զկռէն ասեն՝ թէ՛ որ ի նմայն¹⁰ ծնանի արդար լինի ըստ աւրինակի կռոց, որ զարդարութիւն եւ զհաւասարութիւն պահէ: 20 Զկարճէ ասեն՝ թէ՛ որ ի նմայն ծնանի չարախոհ եւ մարդասպան ըստ աւրինակի կարճի որ հանապազ հարկանել կազմ կայ: 21 Զադեղնաւորէ ասեն՝ թէ՛ որ ի նմայն ծնանի կորովի եւ ահարկու մաւտաւորաց եւ բացէից լինի, ըստ աւրինակի ադեղնաւորի: 22 Զայծեղջերէ ասեն՝ թէ՛ որ ի նմայն ծնանի խոհեմ, գոռոզ եւ դաւաճան լինի: 23 Զջրհոսէ ասեն՝ թէ՛ որ ի նմայն ծնանի անխորհուրդ եւ առատատուր լինի: 24 Զձկանէ¹¹ ասեն՝ թէ՛ որ ի նմայն ծնանի ընչաւէտ եւ անժոյժ լինի: 25 Բայց կարեւորն ի ծնելութիւնս զընթացող ասեն վիճակեալս. եւ յորում լինի ասեն նշանակել այսպիսի ինչ: 26 Արեգակն բնութեամբ իսկ բաստ է, այսինքն երջանկութիւն բարուց, խոհականութիւն զաւրու ամենայնի իշխանականէ. եւ է երբեմն զի յաղագս բանին գործակից լինի: 27 Լուսինն բնութեամբ իսկ պատահար է, ամենայն որ ինչ մարմնոյ. եւ որ ինչ կենցաղոյ¹² բաղձանք են, ստացուածոց եւ փառաց եւ նախաբարձութեանց¹³ յայտնիչ է: 28 Լուսաբերն բնութեամբ իսկ տարփանք է, շնորհի պատճառք, ի գեղեցկութիւն եւ ի սիրելութիւն, այսինքն՝ ողողեալ յանառակ ցանկութիւնս: 29 Փայլածուն բնութեամբ իսկ

1 ԱԲ մանտրամանակս
2 ԱԲ մանտրամասունս
3 Ա. ոմայնց
4 Ա. խու փ/ս խոյ
5 Ա. բարեփարոյ
6 Ա. նմա
7 ԱԲ գեկաւոր. ուղղում ենք՝ գերկաւոր
8 Ա. նման

9 Ա. ընդ նմին
10 Ա. նմայ
11 ԱԲ գձուկն. ուղղում ենք՝ ըստ նշխ-ի:
12 Ա. կենցաղիս
13 Ա. նախաբարձութեան

Հարկաւորութիւնն է, այսինքն՝ թաղծ, եւ անհնազանդութիւնս¹ եւ մարտս եւ խազմս եւ թշնամութիւնս եւ ատելութիւնս եւ ամենայն բուռն իրք զիպին մարդկան՝ ծնանի եւ առնէ: 30 Հրատն բնութեամբ իսկ համարձակութիւնն է, այսինքն՝ յաւգնութիւն, ուժաւորութիւն, դաւաճանութիւն, եւ խարդախութիւն ամենայնի պատճառք: 31 Ասեն թէ՛ եւ երբեմն ի վերայ այլոց աստեղատանց անցանելով աստղս այս՝ շփոթմունս եւ խանգարմունս² գործէ: 32 Լուսնթագն բնութեամբ իսկ յաղթութիւնն է, այսինքն՝ հաւատոյ, բարի յուսոյ, մրցման, եւ ամենայն հաղորդութեան, նա եւս եւ ձեռնարկութեան, եւ զիպողութեան պատճառք են: 33 Երեւակն բնութեամբ իսկ դատաստանն է, այսինքն՝ երկրաւորաց եւ ծածկեցելոց ամենայնի ապացուցի³ եւ զաւրութեան եւ փախչողութեան⁴, եւ կորսոյ եւ որակութեան: 34 Իսկ զժամադիտակն ասեն՝ թէ մատակարարէ ի միջի նոցա հիմն լեալ ամենայն աշխարհի: 35 Եւ զմաղարովթ⁵ աստեղէ ասեն թէ յորժամ նա գերկին հասարակէ եւ ամենայն փառաւք լցեալ լինի, այսինքն՝ բարերար աստեղքն զոյգ ընդ նմա երեւին. եւ որ ի ժամուն յայնմ ծնաւ անվրէպ թագաւորէ: 36 Շատ լիցի մեզ ասել զանհամ պատմութիւնս, այսուհետեւ լքցուք որ ինչ յաղագս աստարաց եւ ապախտարաց են ասացուածք, եւ կամ սպանողաց աստեղացն եւ մահաբերից. եւ կամ որովք զյառաջագիտութիւնսն ասեն ուսանել. եւ կամ զգիւթականն զայն արմատոց ընդ աստեղս հրճուումն կաստաղեա՛ մոլորութիւն⁶: 37 Քանզի չէ ձեզ յաւգուտ զայն ամենայն մանրամասնաբար պատմել՝ գուցէ

պակասամտաց տեսեալ, հաւանիցին յայն: 38 Արդ՝ ես այսպէս ասեմ թէ՛ քաղղէացիք ո՛չ միայն վասն անձանց մեղացն տան պատիժս, զայս յարմարելով խորհուրդս, այլեւ վասն այնոցիկ, որ զկնի նոցա լինիցին⁷ մոլորութեամբ: 39 Կորեան ընդ մեղացն Ռոբովամու⁸ որդւոյ⁹ Նաբաթու՝ որ յանցոյց զԻսրայէլ, եւ ո՛չ միայն զինքն կորոյս, այլ եւ զկնի իւր զբազումս, որք նորա մեղաւքն վարկանեցան. ըստ առաքելական բանին որ ասէ՛ թէ Եմ մեղք որ յառաջոյ երթան, եւ Եմ մեղք որ զկնի գան ի դատաստան¹⁰: 40 Քանզի ի քաղղէացուցն¹⁰ ծնաւ արուեստ աստեղաբաշխութեան, եւ յաստեղաբաշխութեանն ծնաւ զիւթական մոլորութիւնն, որ ¹¹զարմատոյ եւ զբանջարոյ՝ յաստեղացն տանին հաղորդութեան բարբաժմամբքն, եւ ինքեանք որպէս ասեն կերպս ի կերպս լինին ընդդէմ աստեղացն. եւ դեւք կերպարանաւք աստեղաց իջանեն առ նոսա մինչեւ ի մեր ժամանակս: 41 Ոմանք ի հեթանոսաց¹² պարուց ընդ մեզ վիճին՝ եթէ գոն մարդիկ ախտարմախք որ զլուսին իջուցանեն յերկիր դիւթեալ վհկաւ¹³: 42 Որոց զսաղմոսին¹⁴ բանն առաջի դիցուք որ ասէ՛ տեսից գերկինս զգործս մատանց քոց զլուսին եւ գաստեղս զորս դու հաստատեցեր¹⁵: 43 Արդ՝ զոր եւ Աստուած հաստատեաց՝ մարդք կախարդասարք զիա՛րդ կարեն իջուցանել: 44 Ա՛ւն անդր եւ ի միտ անգամ ուրուք մի՛ եկեսցէ այսպիսի անկարգութիւն առասպելական բանից: 45 Այլ նմա-

1 Ա. հնագանդուրիւն
 2 Ա. խանգահմունս
 3 Ա. ապացուցից
 4 Ա. քաղչողութեան
 5 Ա. Բ. զնագարաւք
 6 Ա. մոլորութիւնն

7 Ա. լինիցին
 8 Ա. Բ. Ռոբովամ
 9 Ա. որդոյ
 10 Ս. Ե՛. Ա. Տ. Բ. Ե. 24:
 11 Ա. քարմատս եւ զբանջարս
 12 Ա. հեթանոցաց
 13 Բ. վահկաւ
 14 Բ. սաղմոսին
 15 Ս. Ե. Բ. 4

նեսցուք մեծին Աբրահամու՝ զի նա ազգաւ քաղղէացի էր եւ հմուտ աստեղաբաշխութեան, եւ հանապազ բացաւթեայ կայր ի հաւտի. եւ զնա հանապազ խիղճ մտաց իւրոց խիթացուցանէր, տեսանելով զարարածս ընդ ապականութեամբ եւ ընդ սխալանաւք. ասէր չե՛ն սոքա աստուածք՝ ո՛չ լուսաւորքս մեծ եւ ո՛չ փոքունքս. եւ ո՛չ նոյն ինքն երկին եւ ո՛չ երկիր: 46 Զի ընդ սխալանաւք եւ ընդ ապականութեամբ են եւ ի հզաւրագունէ իմն ումեմնէ՝ շարժին հարկաւոր, յորմէ յայտ է թէ՛ ալ ոմն է նոցա արարիչն, որ կարող է զամենայն գոյսս շարժել՝ եւ նա՛ է Աստուած. եւ հանապազ աղաւթէր եւ ասէր՝ Աստուած արարիչ ցո՛յց ինձ գբեզ: 47 Տեսեալ Աստուծոյ զհաւատս նորա՝ յայտնեաց զինքն նմա եւ եհան զնա յերկրէն եւ յազգէն իւրմէ: 48 Զայս պատմէ մեզ Փիլոն եւ հաւատարիմ է պատմութիւնս. զի եթէ միտ դիցես՝ բնագիրն զայն ակնարկէ: 49 Քանզի ասէ վասն Նոյի թէ՛ Նոյ այր արդար կատարեալ յազգի անդ իւրում, եւ հաճոյ եղեւ Նոյ Աստուծոյ՝: 50 Եւ ապա ասէ լինել առ նա յայտնութեան՝ Աստուծոյ, եւ առնուլ հրաման վասն տապանին: 51 Իսկ վասն Աբրահամու ո՛չ յառաջ ինչ ճառէ որպէս Նոյի եւ ալ նահապետացն, ալ միայն թէ՛ ասաց Աստուած Աբրահամ, ե՛լ յերկրէ փումփեւ եւ յազգէ: յայտ է թէ՛ յաստղաբաշխութեանէ՝ ծանեալ զԱստուած Աբրահամ, վասն որոյ եւ Աստուած եհան զնա ի միջոյ չարեացն, եւ խոստացաւ լինել նմա եւ զաւակի նորա Աստուած մինչեւ յաւիտեան: 52 Բայց ես կշտամբեցից գքաղղէացուցն՝

ծննդաբանութիւնսն՝ որում՝ բազումք հաւանեցան. եւ յունաց եւ այլոց ազգաց՝ վարժիլ սնոտիւք, եւ կշտամբեցից ո՛չ իմ բանիւ՝ ալ սրբոյն Բարսղի, որ ասէ այսպէս. Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա. քանզի ի հաւատարեան՝ ճշմարտութենէս մերմէ կշտամբեալ գտանին: 53 Եւ արդ դարձցուք՝ անդրէն զնոքիմբք վերստին: 54 Եւ ահա սկսանիմ ասել իբր ո՛չ եթէ զիմ բանս ինչ խառնեմ ի ներքս, ալ ի նոցուն բանից երկրորդեմ ընդդէմ նոցա կշտամբել զնոսս անդստին յիւրեանց բանիցն: 55 Եւ որ ո՛չ իցեն գայթակղեալ անկեալ ի պատրանս նոցա՝ զգուշութիւն ստասցին: 56 Զի յայնպիսի բանս եւ որ նման սոցին իցեն մի՛ յաւժարեցին անկանել: 57 Արդ՝ ահա տեսանեմք, զի եւ ի գիտողաց աստեղագիտութեան եւ ի մեկնչաց աստեղատանցն ուստի զծնունդն բաշխեն՝ բազում իբր վրիպեն յորժամ սկսանին համարել այնպէս: 58 Զի ո՛չ ինքեանք իւրեանց արուեստին բաւական են հասանել, զի զչափ ժամանակացն անհամար ըրպէիւք ժամուցն համարեցան. քանզի այսպէս մասունս կոտորեցին զըրպէսն, այսինքն է զթաւթափել ական, ըստ այնմ զոր Առաքեալ ասէ թէ՛ յանկարծակի իբրեւ յակամ քաւթափեալ: Զի տեղի բազում ժամուց է ընդ ծնունդն եւ ընդ ժամս իւր, եւ որ ծնանի ի յայն ի մի ասեն ընդ աղաւտ, որպէս ժամուն ճոխ լինի ասեն՝ գլխաւոր քաղաքաց, մեծատուն եւ զաւրաւոր: 59 Են միւսն ասեն որ ծնանի, ի միւսում ի սակաւիկ ինչ փոխել ակնարկելով ժամուն՝ տա-

1 Ա Աբրահամու
2 Բ Իմումն է
3 Ե.Պ.Չ 9
4 Ա յայտնութեանն
5 Ե.Պ.Չ 1
6 Բ աստղաբաշխութեան
7 Ա փաղղէացոցն

6 Բ յորում
7 Ա՛ յայլոց յազգաց. ուղղում եմք՝ այլոց ազգաց
8 Ա հաստարուն
9 Ա դարձրցում
10 Ա՛ իրաց. ուղղում եմք՝ բանիցն
11 Լ.Պ.Չ. Գ. Գ. Թ. 18:

ուպեալ եւ մուրաւղ լինի, եւ այնպէս թափառական շրջի տունն ի տանէ եւ տեղի ի տեղւոջէ. եւ հագիւ կարէ ժողովել¹ գաւուրն ուծիկ: 60 Եւ զբոլորակ² պատկերացն աստեղատանցն, Բժ.ան մասն բաժանեն. քանզի ըստ թուոյ, Լ. աւուր կազմեալ է զբոլորակն. եւ արեգակն տարւոյ ի տարի յոր գայ ի շուրջ զԲժ.ան աստեղատամբքն բոլորակին: 61 Արդ զԲժ.ան մասն յերեսուն մասն բաժանեն եւ զմի մի³ յԼ. մասանցն Կ. մասն կոտորեն. եւ զմի մի ի Կ. ժամուցն յերեսուն վայրկենի հատանեն: 62 Եւ այսու անճամուքս անհամար եւ յանկարծածին ըրպէիւք սահմանեցին զծնունդս այնոցիկ որ ծնեալն լինին: 63 Արդ՝ աղէ տեսցուք եթէ կարիցեն կալ ի վերայ երագախաղաց⁴ վայրկենեաց ժամուցն իւրեանց. ծնանի մանուկն դժուարին երկամբք մաւր նորա ծնանին, եւ կամ⁵ մանկաբարձն դեգերեալ տեսանել թէ արուիցէ մանուկն թէ էք. եւ կտրել⁶ (!) կայ լսել զբարբառ մանկանն՝ զի այն է նշանակ կենաց նորա, եւ ի լալոյ անտի⁷ իմանայ եթէ կենդանի իցէ որ ծնաւն: 64 Արդ՝ գայնչափ ժամս քանի՞ արդեաւք ըրպէս համարիցիք անցանել ի մասանց միոյ միոյ Կ.իցն⁸. զի մի մի ի Կ. մասանցն, ունի Կ.իցս Կ. ըրպէ. այսինքն էական թաւթափեալ: 65 Եւ յետ այսչափ անցեալ ըրպէից ասացաւ աստեղագիտին յընտանեաց այնր, որ ծնաւն: 66 Արդ որչափ ժամս վայրկենեաց եւ ըրպէից համարիցի անցանել աստեղագէտն, մինչ կայր ուշ ունէր մանկաբարձն լալոյ մանկանն: 67 Դարձեալ այլուր եւս

դիպիցի ժամաբաշխն եւ ըրպէահամարն⁹ արտաքոյ տանն, ուր ծնաւ մանուկն, եւ նմին ժամաբաշխն ըրպէահամար աստեղագիտին պարտ եւ պատշաճ էր բազում փոյթ յանձին ունել, առ ի գիտել ճանաչել զժամ մանկանն, որ ծնաւն թէ՛ ի գիշերի իցէ, թէ ի տունջեան: 68 Եւ թուի ինձ, թէ այլ բազում ժամք անհամար ըրպէիւք անցանեն, մինչ յայց ելեալ խնդրէ աստեղագէտն գտանել զժամ ծննդեան մանկանն, թէ ո՞ր ժամու իցէ. եւ դարձեալ թէ ո՞ր աստեղատանց է տուիչ ժամուն եւ յորո՞ւմ ի մասանց Բժ.ան աստեղատանցն երեւեցաւ ժամն նորա, եւ յորո՞ւմ կարգի թուոցն նոցա եկաց ժամն առ ի ճանաչել: 69 Եւ ո՞ր իցէ երագընթաց ժամն առ ի յիւրաքանչիւր Կ. վայրկենեացն, յորոց լինին Կ.իցս Կ. ըրպէք. եւ այս ասեն նուրբ եւ առանց հասանելոյ գիւտք անհամար ժամուք ի իւրաքանչիւր աստեղացն որ անուանեալ կոչին մոլորեցուցիչք¹⁰. լինին եւ ի սիրոյ եւ ի մերձաւորութենէ, զոր ունին ընդ աստեղան չմոլորեցուցիչս, որ անուանեալ կոչին աստեղատունք. եւ վասն այսորիկ է ասել մերձենալն եւ պատահել նոցա առ միմեանս. եւ ծննդաբաշխն ծննդոցսն հաստատեսցեն, եւ մեծաւ փութով զոր ունին՝ յանձինս վրիպեցուցեալ ի կորուստ մատնեն զժամսն իւրեանց. քանզի ընդ վայրկենիս եւ ընդ ըրպէս յաճախեալ բազմանան ի վերայ նոցա փոփոխմունք ժամուցն եւ աստանդին. քանզի վրիպեալ զարտուղին խորհուրդք նոցա բազմութեամբ երագախաղաց ժամունքն իւրեանց. զի երագութիւն երագափոխան ազգութեանց նոցա յապուշ եւ յիմարութիւն կործանեաց զնոսա, եւ լինելոյ յայպն կատականաց դատարկացոյց մշտնջենաւորութեան ի սնոտիս: 70 Եւ ես զարմանամ թէ զիա՞րդ

1 Ա ժողովեալ
 2 Ա բորակ
 3 Ա միյ
 4 ԱԲ երախաղաց. ուղղում եմԲ՝ երագախաղաց
 5 Ա կա փիս կամ
 6 ԱԲ կտրել
 7 Ա անդի
 8 Ա կից

9 Բ ըրպէ համարն
 10 Բ մոլորեցուց ինչք

այնպէս դատարկացեալք¹ ի գործոյ են միշտ գհետ սնոտեաց առանց ամալթոյ եւ պատկառութեան: 71 Եւ առաւել սքանչանամ ընդ այնս որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբարեաց դէմս նոցա: 72 Տոփաբանք եւ թանճրասիրտք են, զի ո՛չ իմանան թէ՛ գորո՛յ² գհետ երթան՝ եւ ո՛ւմ հաւատան զանձինս իւրեանց մեկնել թէ՛ զինչ կեանք լինիցի նոցա յաշխարհի: 73 Եւ ո՛չ մինչ ցայս վայր միայն ձգեն զանհամ պատմութիւնս, այլ մինչեւ ցա՛յս եւս որ ամենեցուն յայտնի է, զի տեսք եմք մտաց եւ գործոց մերոց, եւ այսմ ժպրհին լինել խափանիչք, յասելն թէ՛ բարիք եւ չարիք ո՛չ ի կամաց մարդոյն լինին, պատճառք նոցա զերկնից կախին, զի անտի ասեն լինել մարդիկ չարք³ եւ բարիք: 74 Դարձեալ եւ ընդդէմ այսց ասել որ այսչափ ծաղու աւելի են գործք արժանի համարեալք: 75 Բայց զի բազումք ըմբռնեալք եւ կապեալք կան ի մոլորութիւն նոցա, չէ՛ պարտ եւ պատշաճ անփոյթ առնել եւ լռել: 76 Այլ նախ քան զայս հարցցուք եւ որպէս հանապագ բիւր ազգի կերպարանս փոխիցեն աստեղքն առ միմեանս. զի յորս մոլորեցուցիչսն կոչեն՝ հանապագորդ գնացս ունին: 77 Եւ կէսքն արագընթաց⁴ գնացիւք հասանեն միմեանց: 78 Եւ կէսքն մեղմագնացիւքն յամեն եւ անագանեն, եւ ի միում յանկարծ երեւեաց⁵ ժամու տեսանեն զմիմեանս, եւ դարձեալ ասեն դաւղեալ թաքչին ի միմեանց. եւ որպէս ասեն, զաւրութիւն իմն մեծ ունին եւ գնացք նոցա, եւ ծննդաբաշխս ծննդոցս կազմեն. եւ է տեղի ասեն որ տեսանէ աստղն բարի զընկեր իւր՝ զծննդենէ բարեգործի յայտ առնէ. եւ ի

միւսում տեղի՝ ո՛չ ասէ ուր դիպեցի աստղն չար իւրումն ընկերի զծննդենէ չարագործի⁶ յայտ առնէ: 79 Եւ է՛ ասեն միւս եւս տեղի⁷, եթէ դէպ լիցի անդ երեւեալ՝ բարիք աստեղն առնեն զերեւել բարի աստեղն ծնունդ թշուառականի. եւ յորժամ ո՛չ կարեն հասու լինել ըրպայից ստայաւդ⁸ ակնարկութեանց իւրեանց, ածեն եւ դիպեցուցանեն զբարի աստեղն ծննդեան թշուառականին⁹: 80 Եւ արդ զի՞նչ արարից, զի իբրեւ հարկ իմն համարիմ երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա: 81 Քանզի որպէս վրիպեալ են ստայաւդ ճառք նոցա ի մտաց ճշմարտութենէ, նոյնպէս անչափ բազում են ամբարշտութիւնք նոցա. զի ո՛չ ածեն զմտաւ իմանալ, թէ՛ արդարեւ, որպէս ասեն, աստեղք իցեն պատճառք չարեաց՝ առ այն որ արարն գնոսա ընթանան պատճառք չարութեան նոցա. զի թէ ի բնէ չարք իցեն՝ յոյժ չար է արարիչն որ արարն գնոսա: 82 Եւ թէ արձակ կամս ունիցին լինել չարք, թէ՛ այդպէս է, կենդանութեամբ ունին զչարժումն եւ հանճար ընտրողութեան¹⁰ ի գնացս իւրեանց. ապա եւ նահանջեն զգնացս յանդուգն չարութեան իւրեանց՝ կարող են եւ զայս ասել գաստեղաց, եւ այսպիսի իրաւք բամբասել զանշունչսն: 83 Մորոտութիւն մեծ է որչափ ինչ արդեաւք վրիպեալ գտան վարդապետք անհամ եւ անուսման ստայաւդ արուեստին. զի բարիքն եւ չարիքն ասեն ո՛չ որպէս արժանի իցեն որ առնուն գնոսա բաշխին, այլ որպէս դիպեցի¹¹ աստղն որ եւ իցէ ի տեղու¹² յորում եւ իցէ բարեգործ լինելոց է ասեն որ ծնանիցի ի սակաւիկ ինչ ըրպէ այնր ժա-

1 Բ դատարկեցեալք
2 Ա գոյր
3 Ա չարիք
4 Ա երագընթաց
5 Ա՞ յանկարծ երեւեաց. ուղղում՝ եմք՝ յանկարծ երեւեաց

6 Ա՞ չարագործի. ուղղում՝ եմք՝ չարագործի
7 Բ եւս տեղի փխ եւ ստեղի
8 Ա ըրպայիցս տայ օղ
9 Ա՞ բշուառակին
10 Ա ընտրողութիւն
11 Ա դիպեցի
12 Ա տեղիոչ

մու: 84 Եւ քանզի ընդ այլ կողմն լինին հայեցողածք նորին աստեղ¹, չարագործ լինելոց է ասեն որ ծնանիցի ի փոխել միւսոյ եւս ըրպէի. եւ դարձեալ թէ սակաւիկ ինչ թիւրեսցի նոյն աստղ, զչարժումն եւ զգէմս իւր փոխէ² ասէ չարագործաբաշխն ըրպէն: 85 Արդ եթէ այնչափ անհամար ըրպէիւք եւ անչափ եւ վայրկենեաւք արագափոխն³ ժամուց լինիցի ի փոփոխումն կերպարանաց աստեղացն ի բիւրազգի գնացս եւ ի շրջանս, ո՞րչափ արդեաւք թագաւորք ծնանին հանապազ ի փոփոխմանցն որ լինին ստէպ ստէպ⁴ կերպարանաց աստեղացն, ընդէ՞ր ո՛չ հանապազ ծնանէին թագաւորք: 86 Եւ վասն էր ի հարց առ որդիս⁵ ի կարգի գայ ժառանգութիւն թագին թագաւորաց, քանզի ո՛չ ոք երբէք ի թագաւորաց պահեաց գտանել զժամ որդւոյն⁶ իւրոյ աստեղաւք՝ տեսանել թէ հասանիցէ՞ նմա թագաւորութեան վիճակ թէ ո՛չ: 87 Եւ ոչ ի ծառայից ոք երբէք եղեւ տէր. թէ զայս այսպէս տեսանիցեմք: 88 Այլ ահաւասիկ տեսանեմք՝ զի Ոգիայ ծնաւ գՅովաթամ, եւ Յովաթամ զԱքազ. եւ Աքազ ծնաւ Զեզեկիայ: 89 Եւ զի՞ արդեաւք ո՛չ պատահեաց ժամ ծննդեան ծառայութեան միում ումեք այնց թագաւորաց՝ որ կարգ ըստ կարգէ թագաւորեցան: 90 Եւ թէ դարձեալ ասեն եթէ բարեաց եւ չարեաց ո՛չ ի մէնջ իցէ յաւժարութիւն, եւ ո՛չ առ ի մէնջ լինիցի սկիզբն նոցա. այլ ի ծննդաբաշխն ծննդոցացն ակամայ եւ ո՛չ կամաւք մերովք⁷. թէ այդպէս իցէ, ապա աւելորդ են արէնք, որ դնեն սահման եւ պատուիրան, զոր ինչ արժան է գործել եւ զոր ինչ ո՛չ: 91 Աւելորդ են դարձեալ եւ

դատաւորք, որ պատուեն զբարեգործն, եւ առնեն զպատիժս չարագործացն արդար դատաստանաւք, քանզի ըստ բախտից ծննդոցն ժպրհուլթիւն⁸ եւ չարութիւն գողոյն իւրեանց կամացն, եւ ո՛չ անարէնութիւն սպանողին իւրով յաւժարութեամբն, զի ո՛չ թէեւ կամէր արգելուլ զձեռս իւր ի սպանելոյ (!), կարէր ապրել ի չարիսն գործելոյ. զի բնութիւն ծննդեանն իւրոյ հարկ առնէր նմա գալ ի գործ սպանութեան: 92 Նաեւ մեծավաստակն արուեստագիտաց ⁹ընդունայնասոյր է եւ վայր՝ եւ աշխատութիւն մշակացն անազուտ էր, զի իբրու ոչ կարկառուցուն զձեռս իւրեանց ի գործ գայցէ դարման կենաց իւրեանց առանց մուրկան շրջելոյ. եւ վաճառականին այն կամք էին թէ գայցեն դիպիցեն նմա շահք բազումք մեծութեանց յորժամ խաղաղ նստիցի յաշխատութենէ ճանապարհաց, եթէ ի բաշխից բախտից ժողովէին նմա մեծութիւնքն ձրի. եւ թէ ընդ արդարութեան զոր գործէին մարդիկ ո՛չ լինէր նոցա պատիւ եւ պարգեւ, եւ ո՛չ պատիժ եւ դատապարտութիւն չարագործացն. ապա իզուր եւ ընդունայն են յոյս քրիստոնէից, եւ առանց նահանջելոյ¹⁰ անձանց ընթանային¹¹ ամենեքեան յամբարշտութիւն, զի ո՛չ գոյր վրէժխնդիր, որ խնդրէր վրէժ չարեացն¹² գործոց: 93 Քանզի ո՛չ մերով կամաւ լինին, որպէս ասեն մոլորեալքն. եւ զոր ինչ ո՛չ յիւր կամս ոք գործիցէ, զիա՞րդ կրիցէ¹³ ընդ այնր պատուհաս. եւ ուր հարկ եւ ծննդաբաշխ բախտն ունիցի¹⁴ իշխանութիւն, չի՛ք տեղի վրէժխնդրու-

1 ԱԲ աստեղք. ուղղում ենք՝ աստեղ
 2 ԱԲ փոխի. ըստ ՆՀԲ-ի ուղղում ենք՝ փոխել
 3 Ա արագայփոխն
 4 Ա ըստ պէտս պէտս
 5 Ա յորդիս
 6 Ա որդոյն
 7 Ա մերովք

8 Ա ժպրուլթիւն
 9 ԱԲ ընդունայնասոյր է եւ վայր. ենթադրում ենք, թէ պէտք է ուղղել՝ ընդունայն, իգուր եւ ընդ մայր
 10 Ա նահանջելոյս
 11 Ա ընթանալիս
 12 Ա չարեանց
 13 Բ կարիցէ
 14 ԱԲ ուխտն ունիցի. ըստ ՆՀԲ-ի ուղղում ենք՝ բախտն ունիցի

թեան անաւրէնութեան թէ ըստ արժանի գործոց իւրոց առնուցու հատուցումն չարագործն արդար դատաստանաւքն: 94 Շա՛տ բաւական լիցին մինչեւ ցայս վայր: 95 Զայս՝ Բասիլիոս: 96 Արդ՝ որովհետեւ կշտամբեցի զչար իմաստասէրսն, զմոլորեալսն ի բաշխումն բախտից ծննդաբանութեանց յանդիմանել զնոսա բանիւ Սրբոյ հաւրն: 97 Ճառեցից այսուհետեւ որ ինչ ի բարի յիմաստասիրացն ասացեալ է յաղագս երկնային զարդուդ. գոր սրբոց հարցն մերոց եւ վարդապետաց ընկալեալ յեկեղեցի առին. որում եւ աստուածային գիրք շարավանգեն¹: 98 Յառաջ ժամանակաւ մարդիկ² իմաստասէրք, որք զանձինս իւրեանց ի սկզբանէ մանկութեան իւրեանց³ ետուն ի դեգերումն երկնային տեսութեան, եւ զբնութիւն իմաստութեան ի վայր արկին, հասու եղեալ ամենայնի, գեր ի վերոյ երկնաճեմք երեւեցան. եւ պսակս եւ աշխարհս եւ գոհութիւնս ի մեծամեծ թագաւորաց ընկալան: 99 Իսկ վարդապետք եկեղեցւոյ⁴ ուսումնասիրութեան զանձինս իւրեանց⁵ տուեալ անցին ընդ ամենայն ճգնութիւնս, պահելով զաստուածային հաւատս, մկրտեցան ի խորս գիտութեան. քանզի եւ⁶ գրիւ աւրէնքս⁷ ո՛չ ընդդէմ են բնական իմաստութեան⁸, ապա եթէ միաբանութիւն է, դաստիարակ⁹ եղեն մեզ առաջի¹⁰ իմաստասէրքն, զի նոցա տես¹¹ քննութեամբն յորոց

ճշմարիտքն ասացան: 100 Եւ մեր¹² հոգեւոր հարանցն¹³ առաջնոցն ընկալեալ ի նոցանէ զտրամագիր ասացեալսն¹⁴. զի յերկոցունց յարմատոյն¹⁵ եւ ի ծայրէն պահելով զմեզ¹⁶ զաստուածային հաւատսն, պտղով ծայրին առցեալք եւ հաստատուն արմատովն միշտ դալարաբերք¹⁷ պտղաբերք¹⁸ գտցուք¹⁹ ի գիտութեան: 101 Արդ՝ ահա Ե պարունակք ասեն շրջագայց²⁰ ընդ հրային կամարաւն²¹ երկնի, ընդ որ շրջին աստեղք ի նոսա եղեալ դիզեալք²² զմիմեամբք ի մէջ միմեանց աստիճանեալք. ²³եւ այսպէս ասեն դիրք եւ գնացք աստեղացն (ի մէջ միմեանց աստիճանեալք)²⁴: 102 Եւ այսպէս յամենեսեան գնան աստեղքն հակառակ ընդդէմ: 103 Ի ներքնումն²⁵ լուսինն բերի յիւրում գաւտուջն²⁶: 104 Եւ ի վերայ նորա²⁷ Ե. աստեղք մոլորականք²⁸ բերին յիւրեանց գաւտուջն: 105 Եւ ի վերայ նոցա բերի²⁹ արեգակն յիւրում գաւտուջն եւ ի վերայ ամենայնի է. անմոլոր աստեղքն բերին ի վերնում գաւտուջն³⁰: 106 Եւ են ամենեւին³¹ ցրտութիւն. եւ միջնորդեն արեգական եւ արփոյ³². եւ զանչէջ տոչո-

1 Ա շարավանգեան
2 ՊԴ մարդք
3 ԱԲ չի՛ր իւրեանց
4 Ա եկեղեցոյ
5 ԱԲ չի՛ր իւրեանց
6 Պ չի՛ր եւ
7 Պ գրաւոր օրէնք փիւ գրիւ արեւնքս
8 Պ ընդիմանան բնական գիտութեանց փիւ ընդդէմ են բնական իմաստութեան
9 Ա միաբանութեան դաստիարակ
10 Պ առաջին
11 ՊԴ տեսակ փիւ տես

12 Պ մերոց
13 Պ հարցն
14 Պ գտրամագիծսն ասացեալս
15 Պ յարմատոցն
16 Պ մեզ
17 Պ դալարաբերեալ
18 ԱԲ չի՛ր պտղաբերք
19 Պ լիցուի փիւ գտցուի
20 Պ հարկաւոր շրջագայց
21 Պ կամարին
22 Պ դիզեալ
23 Պ չի՛ր եւ... աստիճանեալք
24 ԱԲ փակագծեալ մասը թւում է, թէ կրկնուած է:
25 Պ ներքնումն
26 Ա գտտուջն
27 ԱԲ չի՛ր նորա
28 Պ մոլորակիք
29 Պ չի՛ր բերի
30 Ա գտտուջն
31 Պ ամենեցուն փիւ ամենեւին
32 Պ արփոյցն

րումն արփոյն՝¹յիւրեանց բնական սաստիկ ցրտովն բարեխառնութիւնս առնելով² արեգական մատուցանեն աւգնութիւն: 107 Իսկ արեգական առեալ հեղու ի ներքին գաւտիսս³. եւ ի ձեռն մոլորականաց սփռեալ տարածանեն⁴ ընդ երկիր աւզով եւ լուսով: 108 Զի աւգն ունիցի գհովութիւն եւ լոյսն զարեգակնային մասն հրոյն. եւ ի ձեռն⁵ այս երկոցունց նուրբ եւ անաւսր⁶ տարերացս կենդանածնեալ լինի երկիր աւգնականութեամբ ծովային ջրով բոյսք խոտոց եւ պտուղք ծառոց. եւ շարժուն կենդանատեսակք շնչաւորք⁷. եւ ամենայն սողուն եւ հետեւակք⁸, թռչուն եւ սեռականք, գազանք, անասունք⁹, նուազութիւնք եւ աճմունք, ապականութիւնք մարմնոյ, լրմունք եւ պակասութիւնք ուղղոց անասնոց եւ մարդկան, նոյնպէս արեանց եւ շնչոց առ ի լինելութիւն եւ ապականութիւն. զի լինելութիւնն իցէ¹⁰ սկիզբն ապականութեան¹¹, եւ ապականութիւն դարձեալ անդրէն իցէ¹² սկիզբն լինելութեան: 109 Զի այսմ անվնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ գտեւողութիւն:

1 Զ. ՅԱՂԱԳՍ ՈՐ Ի ՄԷՋ ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԵՆ ՇԱՐԺՄՈՒՆՔ ԵՒ ՏԵՍՈՒԹԻԻՆՔ¹³

2 ¹⁴Ամենայն արարածքս առ ի յաւգուտ մարդկան եղեն ըստ բարերարու-

1 Պ իւրեանց բնական ցրտովն սաստիկ բարեխառնութիւն
 2 Ա առել
 3 Պ գոտիսն
 4 Պ տարածանէ
 5 Պ երկուցս այս նուրբ եւ անօսր տարերցս
 6 Բ անօսր
 7 Պ կենդանի շնչաւոր
 8 Պ հետեւակ
 9 Պ եւ անասուն
 10 Պ չի՛ր իցէ
 11 Պ ապականութիւնն
 12 Պ չի՛ր անդրէն իցէ
 13 Պ Ե չի՛ր եւ տեսութիւնք
 14 Դ չի՛ր Ամենայն... մատակարարութեանն

թեան եւ մարդասիրութեանն Աստուծոյ. զի որպէս պատճառք ճշմարիտ արարչութեանն¹⁵ նոյնպէս եւ անսխալ մատակարարութեանն¹⁶: 3 Արդ՝ է բնութիւն մի հողմ, ամպ¹⁷, ձիւն, եղեամն¹⁸, աւղ, եւ ծիածան եւ ձայն որոտման նոցին սակի է, ¹⁹եւ շանթիք²⁰, եւ ցոլմունք. է՛ ի սոցանէ որ սեռական է՝ եւ պատճառք առ ի պէտս աշխարհի կելոյ. եւ են ի սոցանէ, որ հետեւանք են սեռից, եւ գոյք²¹ առ ի տեսութիւն եւ երեւմունք նշուլից: 4 Արդ՝ հողմ²² սեռ ցրտութիւն. ²³Իսկ մասունքն ի բաժանմունս բազումս թանձրութիւն գործի, համբառնալով զծովային ջուրսն²⁴ եւ լեռնայնոյն եւ դաշտայնոյն ²⁵զառ ի հասարակութիւն մատակարարելով: 5 Իսկ առ ի յոյժ ցրտութեան ձմեռնային ժամանակին ինքն ամպն²⁶ կոտորոտի հանդերձ խոնաւութեամբն բաժանի, բրդի, դնի, դիզու, ի բարձրաւանդակ²⁷ վայրսն՝ զոր եւ ձիւն անուանեմք: 6 Իսկ ի նոյն ցրտութենէ ի պարզ ժամանակի յորժամ ջինջ երկին լինիցի ի խոնաւութենէն²⁸ վերնոյ՝ ձիւնակերպիկ²⁹ իջեալ սփռմամբ նաւսր³⁰ բնութեամբ հողմոյն՝ զոր սերոնսիրդ կոչեմք՝ դնի ի վերայ երկրի, զոր եղեամք³¹ անուանեմք: 7 Իսկ ի պարզութիւն անուշութեան

15 Ա չարութեան. տեխտը հաւանաբար խանգարուած է:
 16 ԱԲ մատակարարութեան
 17 Պ ամբ
 18 ԱԲ եղեմն. ուղղում ենք՝ եղեամն
 19 Դ չի՛ր եւ... նշուլից
 20 ՊԴ շանդիք
 21 Պ գոյնք
 22 Պ հողմոց
 23 Դ չի՛ր իսկ... մատակարարելով
 24 Պ ջուրս
 25 Պ առ ի
 26 Ա ամբն
 27 Ա բարավանդակ
 28 Պ խոնաւութեան
 29 Պ ձիւնակերպ
 30 Պ անօսրութեան
 31 Պ եղեամն / ԱԲ եղեմն

Հողմոյն ի ձեռն հրային մասինն սփռի տարածանի առ երկրաւս, առ ի ծծումն կենդանութեան ամանց եւ նուազութեանց՝ զոր եւ աւզդ¹ սովորեցաք ասել: 8 Իսկ ի գարնանային ժամանակին յուրվք լինին անձրեւք. եւ արեգակն ի հարաւոյ ի մէջաւրեայ մերձեալ², եւ ջերմութիւն եւ խոնաւութիւն յիրեարս խառնեալ եւ փարատեալ անձրեւին յորդեն³ ներքոյ⁴ ի վեր գոլորշիք⁵ խոնաւութեան, ընդդէմ ձգման արեգակնային նշուղիցն սփռմամբ անաւարութեամբ աւզոյն, եւ զգենու զգոյնս զանազանս եւ ըստ երկնային գնդին երեւի ի տեսիլս⁶ կամարածեւ ողորկակող⁷, զոր եւ մարդիկ աստուածակամար կարդացին. եւ է նշանակ դադարման եւ փարատման⁸ յորդ անձրեւաց: 9 Բայց եթէ կրկին երեւեսցի երփն երփն գունաւք զգաւազանսն ձգելով՝ զսաստիկ անձրեւաց եւ զգողացուցիչ յորդութենէ⁹ յայտ առնէ: 10 Իսկ մեկինն¹⁰ զգաղարումն եւ զփարատումն, քանզի է՛ր սա ի սկզբանէ ընդ երկնի. զի ¹¹հետեւանք են նուրբ տարերց որպէս մաղդուլութիւն¹² ծխոյ, առ ի պարզիլ քամիլ գէջ խոնաւութեան ի հրային կերակրոյն, եւ ապա յիստակիլ սրբիլ լուսատեսիլ բոցոյն: 11 Արդ՝ ի սկզբանէ լինելութեան երկնի եւ երկրի, եւ ի սկսմանէ անձրեւացն բերի տեսիլ նշանի այսորիկ, յորում մարդիկ¹³ յիշատակեցին զգարձումն եւ զգաղարումն յորդ անձրեւաց: 12 Զսոյն զսա

յաւուրս¹⁴ առեալ արկածից անչափ անձրեւացն՝ որով դատեցաւ զդարն առաջին, դնել ուխտ ընդ արդարոյն, զի այնպիսի¹⁵ հեղեղ բարկութեան այլ մի՛ եկեսցէ յերկիր: 13 Իսկ սովորական անձրեւն որ յառաջ քան զմեծ ջրհեղեղն էր, եւ ձգումն երեւմանն որ էր յառաջ քան զջրհեղեղն՝ լիցի եւ զկնի ջրհեղեղին անձրեւք եւ նշոյլք, յորմէ բաղկանայ ձեւ կամարին իբրեւ զբազմատեսիլ երանգոց. եւ մարդիկ հայեցեալ ընդ այս ակնկալութիւն յուսոյ լիցի ըստ առաջին յարմարական արարածոյն¹⁶: 14 Իսկ որոտումդ որ լինի յանկարծակի յեղանակ երից ժամանակաց, եւ երբէք ի ձմերայնի¹⁷ ո՛չ լինի: 15 Այլ ի գարնան¹⁸ յաճախ եւ սաստկագոյն: 16 Ասացից ո՞րպէս է¹⁹ եւ թէ վասն է՞ր է: 17 Քանզի ի ձմերայնի ստերջ²⁰ են ամպք, եւ որ բերինն ի խոնարհ՝ ինքեանք են այնք, հանդերձ ջրային խոնաւութեամբն²¹, վասն որոյ եւ ո՛չ ձայն կարեն արձակել²²: 18 Իսկ ի գարնանային ժամանակին աւղն պարարի խոնաւութեամբն, եւ յարեգակնային ջերմութենէն ջլանայ զհարստութիւն. եւ առ²³ ի յո՛յժ փոթորկեալն²⁴ խոնարհի ի ծով, եւ բերանացեալ համբառնայ զջուրն ի վեր՝ եւ ի սաստիկ արբամանէն ծանրութեամբ²⁵ յառաջ խաղայ: 19 Իսկ այլ հողմք շուրջ պատեալ գնովաւ գաւրէն կառավարի գերասանակս ի ձեռս առաւել ստիպաւ²⁶ անցանէ յերկնային ասպարիսին, իբր առաջին

1 Պ օդ
 2 ԱԲ մերժեալ
 3 Պ յօդէն
 4 Պ ի ներքուսդ
 5 ԱԲ գոլորշիք
 6 Պ չի՛ր տեսիլ
 7 Պ ողորկակալ
 8 Պ փարատելոյ
 9 Պ յորդութեանց
 10 ԱԲ մէկինն. ուղորում ենք՝ մեկինն
 11 Դ հետեւակիցն են
 12 ՊԴ միտուութիւն
 13 ԱԲ մարդիկ / Պ մարդիկ. դնում ենք՝ ըստ Պ-ի, թէպէտ կասկածելի է երեսում:

14 Պ յաւուրսն յառաջինս
 15 Պ թէ այսպիսի
 16 ՊԴ արարածին
 17 Պ ձմերանի
 18 Պ գարնանայնի
 19 Պ որպէս են
 20 Պ ստերջանան
 21 Ա խոնաւութեամբն
 22 Ա արձակեալ
 23 ԱԲ եւ ի առ. ի-ն քաց ենք թողնում:
 24 Պ փոթորկելն
 25 Բ ծանրութեամբ
 26 Պ առեալ ստիպելով

եւ միջին եւ վերջին բախմունս եւ ճայթմունս գործեն¹. Հկարացեալ ընդ անգայտութիւն² մարմնոյն միանգամայն հոսեալ զբազմութիւն ծովային ջուրցն³, զաւրէն դժուարածին կանանց բարձրածիչ ճայն արձակեն: 20 Զորոտումնդ ասեմք եւ այս ոչ դուզնաքեայ եւ կամ դատարկ իրաւք: 21 Քանզի ի կենդանի ծննդոց⁴ մարդական որք յո՛յժ դժուարին, շիկնելն եւ շառագունելն եւ մեծածայն աղաղակելն ո՛չ այլ ինչ է, այլ որչափ զոգին⁵ յինքն քաղէ զճայնն ի վեր բարձրացուցանէ, շնչերակքն ի խոնարհ կողմ⁶ զմարմինն ճնշէ, զի որ ի ներքսն⁷ իցէ բռնադատեալ⁸ ուժով ի վայր բերցի: 22 Իսկ եթէ առ մասն⁹ այս¹⁰ բնական հնարիւք վարիցեմք, ո՞րչափ եւս առաւել մեծ մարմինն ամպոյ որ է պատճառ ծննդոց¹¹ երկրային թանճրախիտ մարմնոյս: 23 Քանզի ձմեռնային ժամանակաւ պաղեաց ձուկեաց սառեալ ընդարմացոյց¹² զբերրի դէմսն¹³ զարգաւանդեայ հող¹⁴ տեղեացն. սոյնպէս եւ զամենայն առապարս: 24 Արդ՝ ո՛չ միայն կարաւտ է սա ջերմութեան եւ խոնակութեան՝ այլ եւ ճայնի արձակելոյ¹⁵ յերկնուստ. զի ի սաստիկ ճայթմանէ աւղոյն շարժմամբ խտացեալ թանճրութիւն հողոյս թուլասցի, եւ ի դալարա-

բեր արմատոյն¹⁶ բոյսքն խոտոցն ի վեր ընձիւղիցին¹⁷: 25 Սոյնպէս եւ պտուկք ծայրից ծառոց բացեալ փթթիցին. եւ այլքն ըստ իւրաքանչիւր կարգի զձմեռնային ծանրատաղտուկ թախճութիւնն¹⁸ ի բաց ընկենուցուն, զարթուցեալք եւ զուարթացեալք յոյժ պայծառութեամբ երկիր առնուցու զվայելչութիւն: 26 Ապա թէ լինիցին ինչ¹⁹ հետեւանք վնասուց ի սաստիկ որոտալոյ, իբր թէ կարկուտ²⁰ եւ հրաձգութիւնք, այս ի վրէժխնդրութիւն անգգամաց²¹ եւ ի խրատ այնոցիկ որ զահ եւ զերկիւղ արարչին չունին ի հոգիս իւրեանց²²: 27 23-Քանզի մարդկան իշխանաց գործիք են տանջանաց զաւազանք, չարիք, շղթայք, պէսպէս մեքենայք, եւ մարդիկ սպասաւորք եւ սկուռք²⁴: 28 Ո՛չ զի մարդատեացք²⁵ իցեն թագաւորք, այլ յառաջահոգակք, շինիչք եւ խաղաղասէրք, կարգիչք եւ յաւրինիչք գեղեցկադիր աւրինաց: 29 Իսկ վերին թագաւորն²⁶ արարչական զաւրութեամբն բարերար եւ մատակարար²⁷ եւ մարդասէր: 30 Իսկ դատողականաւն խրատիչ եւ կագմիչ. եւ լսեն ամենայն տարերքս եւ ահաւորութեամբ կան ի սպասու. 28-անչափութիւնք անձրեւաց ողողեն, եւ երաշտութիւնք զերկիր դալարաբեր ցամաքեցուցանեն, ժանտախտս գործեն²⁹, սուր հիւանդութիւնս, մինչեւ հարկանիլ մարդ եւ անասուն առ-

1 Պ գործեն
 2 Պ գայտութիւն
 3 Ա ջուցն գորոտումնդ
 4 Պ ի կենդանածննդոց
 5 Դ գիտցին
 6 Դ կոյս փխ կողմ
 7 Գ ներքոյ
 8 Ա բռնադատել
 9 ԴՊ ոմանս փխ առ մասն
 10 ԴՊ այսպիսի
 11 ԴՊ չի՞ծննդոց
 12 ԴՊ ընդարմացոյց / ձեռագրերում՝ ընդամբացոյց փխ ընդարմացոյց. ուղղում ենք՝ ըստ նշխ-ի:
 13 ԴՊ չի՞ դէմս
 14 Պ արգաւանդահող
 15 ԴՊ արձակման

16 Ա արմատոցն
 17 ԴՊ ընձիւղեցին / ձեռագրերում՝ ընձիւղեցին
 18 Ա թաղծութիւնն. ուղղում ենք՝ թախճութիւն
 19 Ա ինձ
 20 ՊԴ կարկուտ
 21 Ա անսգամաց
 22 ՊԴ յանձինս իւրեանց
 23 Գ չի՞Քանզի...
 24 Պ ստրուկ / Դ ստկուտ
 25 Ա մարդատեայց
 26 ԱՔ չի՞ թագաւորն
 27 ԱՔ չի՞ եւ մատակարար
 28 Պ անչափութիւն անձրեւաց ողողանեն
 29 Պ չի՞ գործեն

Հասարակ: 31 Իսկ յորժամ յանհնարին ցասումն ումեք բրդիցի, որպէս երբեմն ուրեմն ի վերայ Սողոմայեցոցն¹ ի յերկնէ ի հրեղէն մարմնոյն կոտորոտեալ ի վայր հոսէր². զոր եւ այսաւր ի նմին մարմնոյ անկեալ յերկիր շանթիս³ անուանեմք, եւ հասեալ իբր կենդանի եւ մտաւոր զբարկութեան հրամանսն կատարէ⁴. եւ չդադարելովն ծակէ զթանճրութիւնն երկրի թափ անցանէ, ի ներքին կիսագունդն⁵ Հասանէ⁶. զի ուստի հատաւ՝ անդրէն զտեղի առցէ: 32 Եւ 7նորին հրոյն սակի իցէ, զոր ցումունս աստեղացդ ասեմք⁸: 33 Քանզի առ ի յոյժ բախման շրջագայ պարունակացդ շարժելով զյարմարական⁹ գնացսն, երեւումն լինի վերին լուսոյն իբրեւ ընդ անաւարափապարս¹⁰ ինչ աւգեղէնս, եւ յազամողեալ¹¹ լուսոյն առ ի ցրուեալ¹² ուժգնութեան աւգոյն. եւ վաղվաղակի ժողովումն ծածկութիւնն անդրէն լինի: 34 Եւ մեք հայեցեալ ի հեռաստանէ, չկարացեալք ճշմարտութեամբ ի վերայ իրացն հասանել հաստատութեամբ, աստեղ թափելոյ նշան առնեմք զայն. եւ ո՛չ լուսոյն վերնոյ, որ է ճշմարիտ: 35 Բայց ոմանք ի փիլիսոփայիցն որ յեկեղեցւոջն, ասեն¹³ թէ հողմ սառնային եւ թանճր՝ որ եւ գնա եթեր կոչեմք, նա խոնարհի յամպ եւ զջուրն իբր ոլուն¹⁴ սառոյց գնդէ, եւ այն է կարկուտ: 36 Ասեն թէ եւ զորոտումն այն

հողմ առնէ, եւ զփայլատակմունսդ¹⁵: 37 Զի ամենայն արարածք բնութեամբ ունին յինքեանս հուր՝ եթէ ցամաքայինք¹⁶ եւ եթէ խոնաւայինք: 38 Եւ ի բախել հողմոյն այնմ զամպն, հուր ելանէ յամպոյն եւ ձայն ճայթման¹⁷ ըստ բախման հողմոյն: 39 Զի եթէ սակաւ բախէ, սակաւ ելանէ ձայնն եւ հուրն, եւ անդրէն ընդ ամպսն ցանի ի վեր բերելով աւգոյն: 40 Եթէ ուժգին բախէ հողմ՝ ուժգին եւ ձայնն, եւ հուր ելանեն¹⁸, եւ չզաւրէ աւգն ի վեր ցանել գնա ընդ յամպն ի խոնարհ անկանի. եւ ի տեղին, յոր անկանի՝ խաղաղութեան ակն ո՛չ ունիմք: 41 Բայց մեք որ յառաջ հուրն տեսանեմք եւ ապա զորոտումն լսեմք, այս է պատճառն, զի թէպէտ եւ յամպոյն գոյգ ելանէ ձայնն եւ հուրն, այլ մեզ հուրն առաջոյ երեւի, վասն զի ակն երազ է քան զուռնկն, եւ ակն փոյթ կարէ տեսանել ի հեռին¹⁹ զհուրն յորժամ յամպոյն ելանէ: 42 Իսկ զձայնն ունկն²⁰ ոչ կարէ լսել ի հեռին, մինչեւ ո՛չ ի մաւտ հասանէ: 43 Իսկ զցումանէ աստեղացդ ասեն՝ թէ հողմն այն ի պարզ ժամանակի բախէ ինքն զինքն եւ հուրն ելանէ որպէս յամպոյն²¹, բայց նաւար²² ելանէ ի հողմոյն եւ ո՛չ որպէս յամպոյն: 44 Եւ աւգոյն վերաբերեալ անդրէն²³ ամփոփի:

- 1 Է. ՅԱՂԱԳՍ ԿԱԹԻՆ ԾՐՈՅ
 2 Զկաթին²⁴ ծիր²⁵ որ անուանեցին՝ ո՛չ այնպէս²⁶ որպէս չար փիլիսոփայքն ա-

1 Դ Սոտումայ
 2 ՊԴ հոսեցուցանէր փխ խոսէր
 3 Զեռագրեքում, նշՔ՝ շանթիք. ուղղում ենք՝ շանթիս
 4 ՊԴ հրամանն կատարէր
 5 Ա կիսագունտն
 6 Պ չի՞հասանէ
 7 ՊԴ սորին հրոյ սակի է
 8 Պ անուանեմք փխ ասեմք
 9 ԱԲ գարմարական
 10 ՊԴ անօսր փապարս
 11 ՊԴ յաղամողել
 12 ՊԴ ցրուել
 13 ՊԴ ասացին փխ ասեն
 14 Բ ոլուն ոլուն

15 ՊԴ զփայլատակմունս
 16 Դ ցամաքայինք
 17 ՊԴ նայթմանց
 18 ՊԴ հուրն ելանէ
 19 ՊԴ չի՞հի հեռին
 20 ԱԲ ակն
 21 Բ յամպոյն
 22 Պ անօսր փխ նաւար
 23 Պ անդէն
 24 Դ կաթինդ
 25 Ա ծիր
 26 ՊԴ ոչ այնպէս է

ուսպելաբանեցին բազում բանիւք: 3 ¹Ձի ոմանք ասացին զզմանէ՝ թէ ճանապարհ է դա՛ հին արեգական հետք²: 4 Իսկ այլք տգիտագոյն³ քան զնոսա ⁴ասեն թէ՛ առագաստն է Պեռսեփոնեայ⁵, զոր սպիտակ սուգն⁶ կոչեցին Աթենացիքն: 5 Այլք ի նոցանէ ասեն՝ թէ Հերակլէս զանդէն⁷ գերոնեա⁸ ընդ այդ⁹ շաւիղ վարեաց: 6 Նաեւ այլ եւս ըստ նոցին արուեստի ասեն թէ՛ տարածումն է ստեանցն Հերեայ¹⁰, կնոջն Արամագղայ: 7 Դարձեալ ոմանք յառաջնոցն հայոց ասացին թէ՛ ի խիստ ձմրան Վահագն¹¹ նախնի¹² հայոց գողացաւ զյարդ Բարշամայ¹³ ասորեստանեայց¹⁴ նախնոյ¹⁵, զոր եւ մեք սովորեցաք բնախաւսութեամբ յարդգողի հետ անուանել: 8 Թողէ՛ք զայդ¹⁶ ի բաց, ո՛վ ամասէրք եւ¹⁷ մի՛ դուք զայդպիսի բանս¹⁸ լսէք. քանզի փիլիսոփայքն բարիք ասացին զզմանէ թէ խիտ¹⁹ աստեղք են բազումք, նուազք եւ²⁰ յոյժ ընդ աղաւտ երեւմանէն միաւոր լոյսն տեսանի: 9 Իսկ մեք, որ եմք աշակերտ վարդապետաց եկեղեցոյ՝²¹ ասեմք թէ ամենայն գոյացութիւնք²² վերինք եւ ներ-

քինք խառնուած միաբանութեան ունին գաւտեացն²³ առ իրեարս. եւ է դա՛ անգայտութիւն գաւտեաց²⁴ վերնոց, զթաղկեալս²⁵ հրոյն նշոյլս հեղլով ի վայր երեւումն գործ է տեսողացն, այս է նորա պատճառն ճշմարիտ:

1 Ը. ՅԱՂԱԳՍ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍՏԵՂԱՑԴ²⁶

2 Զաստեղաց զոր կոչեն բեւեռ երկնի²⁷, որ ի տեղն գան շուրջ եւ ո՛չ ծագեն յելից եւ գան ի մուտս: 3 Եւ սայլք²⁸ աստեղացդ, որք դէմ ընդ դէմ զաւրէն անուոյ հոլովին, եւ այլ խումբքն²⁹, որ շուրջ զնոքաւք են մշտակայ երեւմամբ շրջագայանան: 4 Ո՛չ երկրորդեցից զանհամ նոցա³⁰ ճառս, զի ի յոլով ասելոյ³¹ զսուտսն ճանձրոյթ ձեզ լինի: 5 Այլ ասացուք որում հաւատացեալ եմք: 6 Են դոքա նշանակ տեսական, զի երեւակի են եւ ³²իմացական գանտեսին զարփոյն բերեն զնմանութիւն շրջագայութեան ծառայական³³ հասարակութիւն գործելով, բաժանել երից հատուածոց³⁴ ուղեգնացութեամբ ծովային ճանապարհաւն միաբանութիւն առնելով ցամաքայնոյն³⁵ եւ կղզայնոյն³⁶: 7 Քանզի թէ ո՛չ է տուեալ եւ ո՛չ կարէր³⁷ առնուլ. եւ կարի գեղեցիկ, քանզի ի մէջ³⁸ բաժանեցելոցն կարաւսութիւն գործեցաւ: 8 Իսկ ի

1 ՊԴ Բանգի փխ գի / Գ չի՛ք Զի... Բանգի (նախ. 8)
 2 ՊԴ հետ փխ հետք
 3 ԴՊ տգիտագոյնք
 4 Պ առագաստ ասեն
 5 Պ Պերսեփոնայ
 6 ՊԴ սուգ
 7 Պ գանդէս
 8 Պ գէրիոնի / Դ գիրիոն
 9 Պ չի՛ք այդ
 10 Ա.Դ Ներեայ
 11 Ա Վահակն
 12 ԴՊ նախնիք
 13 Պ Բարշամայ / Դ Բարշամայ
 14 ՊԴ ասորոց
 15 ՊԴ նախնոյն
 16 ԱԲ չի՛ք գայդ
 17 ԱԲ չի՛ք եւ
 18 ՊԴ բան
 19 Պ խիտ
 20 ՊԴ չի՛ք նուագք եւ
 21 Ա յեկեղեցոյ
 22 Պ գոյութիւնք

23 ԱԲ չի՛ք գաւտեացն
 24 ՊԴ գոտեացն
 25 ՊԴ գթաղկեալ
 26 Պ աստեղաց
 27 ՊԴ բեւեռս երկնից
 28 Ա եւս այլք փխ եւ սայլք
 29 Ա խումբքն
 30 ՊԴ գանհամոցն փխ գանհամ նոցա
 31 Պ յոլովս ասել
 32 Պ միայնական գանտեսի գարփոյ բերէ
 33 Ա նառական
 34 Պ հատածաց
 35 ՊԴ առնել ցամաքայնոյցս
 36 ՊԴ չի՛ք եւ կղզայնոյն
 37 ՊԴ չի՛ք կարէր
 38 ՊԴ չի՛ք մէջ

ձեռն նաւավարութեան զիւրաքանչիւր պիտոյան դիւրամատոյցս մերձեցոյց, որում տեղեակն են¹: 9 Եւ սովորութիւն է անսուտ բանիւք զճշմարիտն ասել². զցերեկ³ ասեն յածեալ մոլորի նաւն, եւ ի գիշերի ի ձեռն երկնային արջոցդ⁴ ապա⁵ երթեալ⁶ ելանէ յուղիղ ճանապարհ⁷: 10 Եւ այս ո՛չ փոքր⁸ նախախնամութիւն է արարողին բոլորեցունց, զի ի ձեռն սայլիցդ ո՛չ ապրի միայն նաւն այլ եւ նաւավարքն. այլ եւ բազում բիւրք ի նաւահանգիստն զիւրաքանչիւր կարաւտութիւնս բարձեալ տանին ի տունս իւրեանց: 11 Ապա թէ այդ⁹ այդպէս իցէ¹⁰, ո՛չ ինչ է յէսդ երկնից վայրապար եւ դուզնաքեայ, այլ առ ի մեծ աւգտութիւնս մարդկան [եւ ի փառս արարչին]¹¹:

1 12Թ. ՅԱՂԱԳՍ ԼՈՒՄՆԻ

2 Զերկրորդ լուսաւորէդ բիւր բանք ճառեալ են յարտաքնոց եւ յեկեղեցականաց, բայց մեզ որ ինչ ¹³միաւորեալն է բան յերկոցունցն¹⁴, յայնց հաճոյ թուեցաւ ասել: 3 Նիւթ ամանոյ¹⁵ լուսնին նմա միայն¹⁶ է գիտելի, որ արարն զնա: 4 Բայց առաջինքն, որք ջանացան հասու լինել նմա, ասացին այսպէս՝ թէ լուսնին տարր

է¹⁷ սեղմ, խիստ¹⁸, մաքուր, գնդաձեւ: 5 Եւ ոչ ունի զլոյսն¹⁹ բնութեամբ, այլ հազորդութեամբ յարեգականէ առեալ, որպէս զհայելի ընդդէմ արեգական ունելով, եւ նա ճառագայթս բացարձակէ²⁰ յիւրմէ, նոյնպէս եւ²¹ զլուսինդ ասեն: 6 Բայց երկու²² ոմանք յեկեղեցոյ²³ ասացին, թէ առանձին²⁴ ունի լուսինն զլոյսն եւ ո՛չ յարեգականէ: 7 Զի որպէս ամանն լուսնի այլ իմն է, նոյնպէս եւ լոյս նորա այլ իմն է: 8 Եւ ասեն թէ չէ՛ ծանր Աստուծոյ զլոյսն բաժանել ի բազում կերպս: 9 Զի լոյսն արեգական ա՛յլ ունի կերպ եւ լուսնի ա՛յլ աւտար ի նմանէ: 10 ²⁵Դարձեալ լոյս աստեղացն աւտար յերկոցունց լուսաւորացն. եւ լոյս հրոյն ե՛ւս առաւել աւտար յամենեցունց²⁶: 11 Նաեւ է՛ ճճի մի որ անուանի փոսուռայ²⁷ եւ ունի լուսաւորութիւն ի տտանն, որ եւ զգիրս մարթ է նովաւ ընթեռնուլ ի վերայ կարգի գրոյն²⁸ տանելով: 12 Արդ՝ եթէ ի գեռուենն յայն արհամարհեալ եդ Աստուած լուսաւորութիւն յատուկ որ ո՛չ յումեքէ առնու, այլ հաստատեալ կայ յիւրում մարմնին²⁹ աւտար յամենայն լուսոյ, որ ո՛չ սպիտակ է եւ ո՛չ լուրջ, ո՛չ դեղին եւ ոչ կարմրագոյն³⁰, այլ կանաչ իմն գոյն է լուսնին մեղմ³¹, ըստ իւրում տկարութեան, համայն

1 ՊԴ որում որք տեղեակն են
 2 ՊԴ ասել
 3 Ա. զցերակ
 4 ՊԴ արջոյդ / Ա. արջոցս
 5 ՊԴ չի՛ր ապա
 6 Պ երթայ
 7 Պ յուղորդ ցանապարհն
 8 ՊԴ դոյզն փխ փոքր
 9 ԱԲ չի՛ր այդ
 10 ԱԲ չի՛ր իցէ
 11 Ա. եւ ի փառս. նոր է աւելացրած
 12 Դ շարունակում է տոմարական մի աշխատութեան հատուածով:
 13 ՊԴ միաւորեալ է
 14 ՊԴ յերկոցունց
 15 Պ ամանոյն
 16 Պ միայնոյ

17 ԱԲ չի՛ր է
 18 Պ խիտ փխ խիստ
 19 Ա զլուսն
 20 Պ բազումս արձակէ փխ բաց արձակէ
 21 Պ նոյնպէս եւ
 22 Պ երկուք
 23 Պ յեկեղեցոյ
 24 Պ առանձինն
 25 Պ եւ հրոյ եւս առաւել փխ դարձեալ լոյս աստեղացն
 26 Պ ի նոցանէ յերկուց փխ յամենեցունցն
 27 Դ փոսուռայ
 28 Պ գրոցն
 29 Պ մարմինն
 30 ՊԴ կարմիր
 31 ԱԲ մեղմն

յատուկ ասեն¹, ո՞րչափ² եւս առաւել պարտիմք հաւանել՝ թէ լուսնի ետ լոյս Աստուած առաձնական, եւ յո՛չ ոք³ արար կարաւտ ապաստանի: 13 ⁴Բայց ես հաւանիմ բազմաց իմաստասիրութեան յարեզականէ ասել. իսկ որ սեւ նշանքն երեւին ի լուսնին⁵ իբր գիծք⁶ իմն դրոշմի, ասացին զնմանէ⁷ արտաքինքն՝ թէ խոյլք⁸ են խոռոչաց, որպէս յական յակնթի, եւ վասն զի ո՛չ անգեզ⁹ ունի զլուսաւորութիւն¹⁰, այնր աղագաւ ո՛չ կարէ տալ լոյս որպէս զարեզակն: 14 Զի եւ գունդս բիւրեղ որ գեղն¹¹ ունիցի կամ սպի ունի, ո՛չ կարէ հեղուլ բորբ շող լուսոյն: 15 Իսկ եկեղեցականքն ասացին թէ այն¹² որ երեւին ի լուսնի, երկիր է այն¹³ եւ ծով, զի որպէս հայելի զամենայն ընդդէմ կացելոց իւր ցուցանէ յինքեան զնմանութիւն, նոյնպէս է լուսինն¹⁴ ցուցանէ յինքեան զերկիր եւ զծով, ըստ բանին, որ ասէ՝ թէ լուսին է հայելի աշխարհի¹⁵, զի մեծ իսկ է միանձնութեամբ իբրեւ զերկիր: 16 Եւ ես ցուցից քեզ ի սակաւ նմանութեանց առնուլ աւրինակ: 17 Ուսիր ի քաղաքաց որ ընդ ամենայն տիեզերս շինեալ են ի միմեանց հեռիք, հայեաց ընդ հրապարակսն եւ ընդ փողոցսն¹⁶ որ ուղղորդ ընդ արեւելս հայիցին¹⁷, զիա՞րդ միանգամայն լուսաւորես-

ցին¹⁸, եւ միով¹⁹ կերպարանաւք տեսանես, զի լուսաւորէ զամենայն նուրբ փողոցս եւ զամրաստանս²⁰: 18 Եւ զիա՞րդ է այս, եթէ ո՛չ առ ամենեսեան է մեծութեամբ. եւ կշիւռ²¹ (!) յերեսս ամենեցուն արձակէ զլոյսն: 19 Եւ²² արդ՝ ի տկարութենէ ճրագի ուսիր զմեծութիւն լուսնի ի լուսոյն իւրմէ, ²³քանզի յոյժ տկար է լոյսն որ տարածանի ի ճրագէ, այնպէս զի յորժամ գտանիցին բազումք ի միում տան, եւ մի ոմն որ կացցէ ուղիղ ընդդէմ ճրագին եւ այլոց ստուերքն այսր անդր ձգին եւ խուսափեն, եւ այն ոչ միով կերպարանաւ, զի չիք մեծութիւն լուսոյ նորա, վասն այնորիկ ո՛չ կարէ տալ միակերպ ստուերս ամենեցուն, զի որ ի մաւտոյ²⁴ կայ՝ զնորայն մեծացուցանէ զստուեր²⁵, եւ որ²⁶ հեռագոյն²⁷ զնորայն փոքրացուցանէ²⁸: 20 Արդ՝ եթէ ո՛չ մեծ էր լուսինն, ո՛չ հաւասար կարէր ծագել եւ միակերպ տալ ստուերս²⁹ ամենեցուն, որ բնակալեն ի հիւսիս կամ ի հարաւ: 21 Այլ վասն զի մեծ է միանձնութեամբ ըստ աստուածային գրոց, որ ասէ³⁰, թէ արար լուսաւորս մեծամեծս ի նշանս³¹, ի ժամանակս, յաւուրս եւ ի տարիս: 22 Յոյժ պիտոյ են մարդկան նշանք, որ լինին ի լուսաւորացդ, եթէ ոք ըստ կէտ սահմանին ո՛չ ելանէ³² աւտարտի քննութեամբ, զի որ միտ եղեալ ընտ-

1 ՊԴ չի՞ ասեն
 2 ՊԴ որչափ-ից առաջ աւելացուած է Արդ
 3 ՊԴ ոչ յո՞ք
 4 ՊԴ չի՞ Բայց... ասել
 5 ՊԴ նշանն երես ի լուսնի
 6 ՊԴ որպէս գիծ փխ իբր գիծք
 7 Պ չի՞ Գնմանէ
 8 Ա խոյլք / Պ ելք փխ խոյլք
 9 Դ անկէզ
 10 ՊԴ գրոլորութիւնն
 11 Ա գունդ փխ գեղն
 12 ՊԴ չի՞ Կայն
 13 ՊԴ չի՞ Կայն
 14 ՊԴ լուսինն
 15 ՊԴ լուսինն հայելի է երկրի
 16 ՊԴ հրապարակս եւ ընդ փողոցս
 17 ՊԴ նայիցին

18 ՊԴ լուսաւորին
 19 ՊԴ միով
 20 ՊԴ չի՞ եւ զամրաստանս
 21 ՊԴ կշիւռ
 22 Ա՞ Կի՞ եւ
 23 ՊԴ չի՞ Բանզի... այնորիկ
 24 ՊԴ մտն փխ ի մաւտոյ
 25 Ա՞ Կի՞ զստուեր. ուղղում ենք՝ ըստ Պ-ի:
 26 ՊԴ որոյ փխ որ
 27 ՊԴ հեռագոյնն է
 28 ՊԴ փոքր կացուցանէ
 29 ՊԴ ստուեր
 30 ՊԴ ասաց
 31 Ա՞ իշխանս փխ ի նշանս
 " Հմբ. Ն. Ը 14 :
 32 ՊԴ ելանիցէ

րեսցէ զգեղեցիկ փորձ նոցա եւ ո՛չ խառնեսցէ ի ներքս զամբարշտութիւնն¹, ազգի ազգի ²Հնարս աւգտութեան գտանէ ի նշանաց անտի: 23 Ձի վասն խոնաւոյ գծամանակաց³ բազում անգամ⁴ վարդապետք լինին մեզ աւդոցն⁵ պղտորութեան եւ դառնաշունչ⁶ հողմոց սառնամանեաց: 24 Ձի յերեքաւրեայ ժամանակի յորժամ վճիտ երեւեսցի՝ գյտտակ պարզոց⁷ յայտ առնէ: 25 Եւ յորժամ ի մահիկեղջերն⁸ զնշան կարմրութեան կամ զմթարութեան⁹ ունիցի, ջուրք բազումք¹⁰ յամպոց յերկիր հեղուն, եւ հարաւ յորդաշունչ բռնութեամբ յաւդս բարբառի: 26 Եւ յորժամ շուրջ բակ ունիցի ¹¹լուսինն յամպոց, եւ ի նմին աւուր ունի մռայլ զարեգակն յամպոց. ջուրք բազում յաւդոց յերկիր առաքին, կամ զարամուր փքոց եւ ¹²զգառնացուցիչ հողմոց ամբոխելոց յայտ առնէ: 27 Ձի յընծայման¹³ լուսնին բազում անգամ յորժամ յիստակ եւ խաղաղ իցէ աւդն, յանկարծակի խռովութիւն¹⁴ սաստիկ հողմոյ յայտնի¹⁵ ի նմա մրրկեալ: 28 Եւ ամպք ի վերայ ամպոց զիգանին¹⁶, յահ եւ յերկիւղ մեծի տազնապի: 29 Եւ յայսու ամենայնիւ յայտ է, թէ նշանք որ լինին ի լուսաւորացի¹⁷, ի շահ աւգտութեան¹⁸ աշխարհի է:

30 Նաւավարն զգուշացի եւ մի՛ խառնեսցէ¹⁹ զնաւն ի ծով²⁰, այլ անդէն գտեղի²¹ առեալ պահեսցէ²² ի նաւահանգստին²³, զի մի՛ պաշարեալ գտցի²⁴ ի մէջ²⁵ ծովուն ի շնչել²⁶ հողմոցն ամբոխելոց²⁷: 31 Եւ ճանապարհորդն զգուշացի, զի մի՛ ելեալ²⁸ ի տանէ երթալ աշխատել²⁹ ի բքայոյզ եւ կամ յանձրեաց ժամանակի: 32 ³⁰Սոյնպէս եւ մշակն յառաջագոյն իմասցի սերմանել եւ տնկել ի պատշաճ ժամանակի: 33 Ձի ի փոփոխմունս³¹ որ լինին ի լուսնի³², անասունք զլիութիւն առնուն. եւ տունկք աւգնականութիւն գտանեն³³ անման սննդեան իւրեանց: 34 Ձի մի՛ մաշելն³⁴ լուծութիւն³⁵ եւ ունայնութիւն գտանի ի նոսա. եւ յաճելն լիութիւն եւ պնդութիւն առաւելու ի նոսա: 35 Քանզի լուսին ի ջերմութենէ եւ ի խոնաւութենէ ունի խառնուած, եւ յայ³⁶ լիցի քեզ նշան, զի որք լուսնակի ննջեն, խոնաւութիւն լինի ի գլուխս նոցա, եւ զմիս դալար եթէ ի լուսնակի կախեսցես³⁷, վաղվաղակի³⁸ հոտի եւ ապականի: 36 Եւ ի ջրայինս պակասութիւն եւ լիութիւն գտանի. սապէս եւ ի սիրտս³⁹ ծառոց: 37 Եւ գնացք իմն են ա-

1 Ա. գանբարբշտութիւն
2 ՊԴ հնարագտութեան, գտանեմ
3 ՊԴ խոնաւոյ գծամանակն
4 ԱԲ չի՛ք անգամ
5 ՊԴ աւդոյն փխ աւդոցն
6 Պ դառնաշունչ
7 ՊԴ պարզոյ
8 ՊԴ ի մահիկ եղջիրսն
9 ԱԲ մթարութիւն. ուղղում ենք՝ ըստ ՆՀԲ-ի:
10 ՊԴ բազումք
11 ՊԴ չի՛ք լուսնն... գարեգակն յամպոց
12 Ա. դառնացուցից հողմոց
13 Ա. յնծաման
14 ՊԴ չի՛ք խռովութիւն
15 ՊԴ աւդոյն յայտնին
16 ՊԴ դիգանին
17 Ա. լուսաւորացի
18 ՊԴ օկտութեան

19 ՊԴ խառնիցէ
20 ՊԴ ի ծովն
21 ՊԴ գետեղ
22 ՊԴ պահիցէ
23 ՊԴ նաւահանգստի
24 ՊԴ գտանիցին
25 ՊԴ չի՛ք ի մէջ
26 ՊԴ շնչելոյ
27 ՊԴ հողմոյն ամբոխելոյ
28 ՊԴ ելանիցէ
29 ՊԴ աշխատեալ
30 ՊԴ չի՛ք Սոյնպէս... ժամանակի
31 ՊԴ փոփոխմունսն
32 ՊԴ ի լուսնին
33 ՊԴ գտանեմ
34 ՊԴ ի մաշելն
35 ՊԴ ապականութիւն փխ լուծութիւն
36 Բ այլ փխ այս
37 ՊԴ կախիցես
38 ՊԴ չի՛ք վաղվաղակի
39 ՊԴ ի սիրտս

սեն յաշխարհին Եւրոպացւոց¹ յՈվկիանոս, որ երբեմն ցուցանեն յաւելուած² լիութեան, եւ երբեմն գիջանին ի լիութենէ անտի. եւ այս ասեն ըստ գնացից լուսնի փոփոխին³: 38 Ի սկզբան⁴ ծննդեան լուսնի անշարժական ասեն⁵ գնացք խաղացիցն եւ ըստ աճելն⁶ լուսնի՝ սկսանին շարժել եւ գեռալ⁷: 39 Եւ դարձեալ՝ յայնմ ծովու որ անուանեալ կոչի Երեկորեայ⁸, նմանութեան որակաց է ասեն ի միջին, իբր թէ ձգեն⁹ եւ ծծեն, խոնարհին եւ պակասին ընդ պակասելն լուսնի. եւ յորդաբուխ վերանան¹⁰ ընդ լնուլն¹¹ լուսնի: 40 Այս են նշանք եւ զաւրութիւնք նորա ի յերկրի եւ ի ծովու: 41 Իսկ զժամանակս, զաւուրս եւ զտարիս՝ որոշէ եւ սա Հանգոյն արեգական, աւր ԻԴ. ժամ ընթանալով ընդ տիւ եւ ընդ գիշեր, ամիս յընծայմանէն յընծայումն. եւ երիցս կատարելով առնէ արեգակն¹² 13 ժամանակ յեղանակի: 42 Եւ ԲԺ. անիցս կատարելով՝ առնէ տարի ըստ աւրինակի թուոց եբրայեցւոց, որ կատարեն զընթացս տարւոյն ի հին կտակարանաց: 43 Իսկ իշխանութիւն գիշերոյ՝ ցուցանել ի նմա զլոյսն իւր: 44 Քանզի կարակնահատք բոլորութիւնք անուշաձեւք երկուց տարեբոց՝ մին առանձին ունի զբոլոր բազմութիւն լուսոյն¹⁴: 45 Իսկ առ միւսն առ նոյն Հանդիպի՝ ընդունելով մասն գիշերային լուսոյն. եւ նա Հանապազաւր անխա-

փան գնացիւքն՝ առ սակաւ սակաւ մատուցանէ զմասունս երեւակի լուսոյն աճմամբ եւ նուազութեամբ: 46 Քանզի ո՛չ եթէ ¹⁵Հանապազորդ ընդ նմին շաւիղն գնայ արեգական¹⁶ յորժամ ի Հարաւակողմ կոյս նահանջիցի¹⁷, եւ կամ այսրէն ի միջաւրէդ¹⁸. նոյնպէս¹⁹ եւ լուսին ի ձեռն այս երկուց ²⁰փոփոխմանց տալոյ եւ առնելոյ լինի աճումն եւ մաշումն: 47 Վասն զի լուսինն բերի ի ներքնում պարունակիս, եւ արեգակն ի վերոյ նորա ի Ե. երորդ պարունակին. եւ ի շրջագայանալն երկոցունց Հանապազ տեսանեն զմիմեանս: 48 Եւ յորժամ արեգակն²¹ գնայ²² ի մաւտ ի լուսինն՝ նուազութիւն լինի լուսոյ լուսինն. զի վերին կողմ գնդին լուսնի ունի զբոլորութիւն լուսոյն որ²³ ընդդէմ արեգականն Հայեսցի, զի ի վերոյ նորա է: 49 Եւ կէս գնդին լուսնի, որ ի խոնարհ յերկիր կոյս Հայի²⁴ ²⁵անլոյս՝ ներքին կողմն գնդին լուսնի երեւի ծածկեալ յիւրում ստուերին²⁶: 50 Եւ յորժամ Հեռանայ լուսինն²⁷ յարեգականէն, մեծանայ լնու լոյսն լուսնի. վասն զի Հեռանալով յարեգականէ, լուսաւորի ներքին կողմ (!) գնդին լուսնի, եւ ստուեր տարերն իւրոյ ի ներքին կողմն Հալածի ի վեր փոխելով: 51 Քանզի այս է²⁸ յայտնի պատճառ. վերին եւ ներքին կիսագունդքն առ է. պարունակացդ գեր ի վերոյ երկրիս յերկուս բաժանեալ գիշերոյ

1 Դ Եւրոպիա
 2 Ա գիսայելուած
 3 ՊԴ փոփոխի
 4 Ա սկիզբն / ՊԴ իսկ գսկիզբն
 5 ԱԲ անշարժական ասեն
 6 ՊԴ յաճելն
 7 ԱԲ գեռուլ
 8 ՊԴ Երեկորեայ
 9 ՊԴ ձգեն
 10 ՊԴ բղխեն, յորդեն, եւ վերանան
 11 Ա լնուլն
 12 Ա չի՞ արեգակն
 13 ՊԴ չի՞ ժամանակ... առնէ (նախ. 42)
 14 ՊԴ լուսոյն

15 ՊԴ հանապազ ընդ մի շաւիղ
 16 ՊԴ ընթանայ արեգակն
 17 ՊԴ նահանջիցի
 18 ՊԴ մէջօրեայդ
 19 ՊԴ Սոյնպէս փխ նոյնպէս
 20 ՊԴ լինի փոփոխումն անման եւ մաշելոյ
 21 ՊԴ չի՞ արեգակն
 22 ՊԴ երթայ փխ գնայ
 23 Պ որ. ԱԲ չի՞ որ
 24 ՊԴ հայի
 25 ՊԴ անլոյս բոլոր ներքին կոյս
 26 ՊԴ ստուերի
 27 Ա լուս
 28 ԱԲ չի՞ է

եւ տունջեան քառեակ Զ.եկաւք: 52 Եւ երբեմն հասանելով¹ յարեւմուտս ի ներքին կիսագունդն զերկուս վեցեակս արեգական ունիցի զիշերային մասամբն զառ ի ներքոյս շրջագայութեան²: 53 Իսկ ընդդէմ նմին զերկուս վեցեակսն լուսինն ունիցի ի վերայ երկրիս եւ ընդ կողմն հիւսիսոյ մատուցանէ արեգակն լրումն լուսոյ ունակութեան լուսնի, ո՛չ հանապագորդ³ լիով մատուցանէ⁴, այլ ըստ⁵ մաւտելոյ եւ ըստ հեռանալոյ յարեգակն, երբեմն կատարեալ լի՛ ի բոլորն բոլորակաւ երեւի լոյս իւր, եւ երբեմն մաշեալ եւ պակասեալ ի լուսոյն զպակասութիւն իւր նախ ցուցանէ լուսին ի վերայ միոյ միոյ կողմանց իւրոց: 54 Զի յորժամ աճէ մի՛ կողմ, միւս կողմ (!) զնշանակ աղջամղջի⁶ ցուցանէ: 55 Եւ դարձեալ յորժամ սկսանի պակասել միւս կողմն, ամփոփի ինքն յինքն, զի ծածկեաց⁷ ի միւս կողմն. եւ յորժամ սկսանի երեւել յարեւմտից յարեւելս կոյս՝ ցուցանէ զհայեցուածս⁸ բոլորն բոլորակին: 56 Եւ յորժամ յարեւելից սկսանի⁹ մաշիլ՝ յարեւմուտս կոյս սկսանիցի ցուցանել զմահիկեղջիւրսն¹⁰, եւ այնպէս լուսաւորի կողմ¹¹ (!) զնդին լուսնի՝ որ ի յարեգականէ կուսէ¹² լինի: 57 Եւ որ ի միւս կողմանէ լինի, կէս զնդին լուսնի առանց լուսոյ երեւի ծածկեալ¹³ ի ծոց իւրոյ հովանոյն. զի պակասումն լուսոյ¹⁴ լուսնի ստուեր տարերն իւ-

րոյ է ինքն յինքեան ունելով հովանի: 58 Իսկ յորժամ համաւրէն այն որ ետն՝ ի բաց¹⁵ հանցէ ի նմանէ¹⁶ գլոյսն, եւ սուղ ծածկութիւն լինի մինչեւ անդրէն ծնցի զնա նովին լուսովն: 59 Դարձեալ եթէ դիպեսցի ժամանակ լուսնի կամ ի լրումնս¹⁷ կամ ի միջոցի կամ մերձ ի հինսն, եւ լուսին իցէ ի վերին կիսագնդին, ¹⁸եւ արեգակն հանգոյն նմին ի ներքնում կիսագնդին, եւ երկոքին¹⁹ դիպեսցին հասարակաւորութեամբ միջին տրամագծին ի միումս²⁰ ժամու, ո՛չ կարէ արեգակն մատուցանել ընդ հիւսիսային կողմ զսովորական ձգումն մասին լուսոյն լոկ մնացեալ²¹ ի գիշերային անիւն՝ ի լուսոյ կորնչել լուսնի կարգացաք. եւ կարի քաջ լուսոյն կորուստ ասացաք եւ ո՛չ տարերն, զի ամենեցուն յայտնի²² երեւի բոլորածիրն ի տեղուջն, եւ առ երազ շարժմունս վերնոյ եւ ներքնոյ²³ անցանել ի բաժանել տեղեաւն անդրէն զսովորականն²⁴ ընդունի լուսին²⁵, վասն զի անցանէ զնովաւ ստուեր ²⁶երկրի, որ ծածկեաց եւ խաւարեցոյց զնա: 60 Արդ ամենայն եղեալքս անկեալ են ընդ յարմարական մասամբքն²⁷ եւ ընդ ապականագործ հետեւանաւք: 61 Եւ այս ո՛չ դուզնաքեայ նախախնամութիւն արարողին, զի մի՛ ոք զարարածս տեսեալ առանց ապականութեան զսոսա իսկ արարիչս կարծիցէ: 62 Այլ զի հանապազ յերեւելի տարերս վայելեսցէ զերկրաւոր սպասաւորութիւնս,

1 ԱՒ հոսելով փ/ս հասանելով
 2 Ա շրջագայութեանն
 3 ՊԴ հանապազ
 4 ԱՒ չի՞ մատուցանէ
 5 ՊԴ չի՞ ըստ
 6 ՊԴ աղջամղջին
 7 ՊԴ ծածկեացի
 8 ՊԴ գհայեցուածն
 9 ՊԴ սկսանի
 10 ՊԴ գմահիկն եղջիւրս
 11 ՊԴ կողմն
 12 ՊԴ կուսէն
 13 Դ ծածկել
 14 ՊԴ լուսոյն

15 Ա բայց
 16 ՊԴ չի՞ ի նմանէ
 17 ՊԴ ի լրման
 18 ՊԴ չի՞ եւ... կիսագնդին
 19 Ա երկոքինն
 20 ՊԴ ի միջնում
 21 ԱՒ սնացեալ
 22 ԱՒ քաջայայտնի
 23 ՊԴ վերնոյն եւ ներքնոյն
 24 ՊԴ անցանել զսովորական
 25 ՊԴ ընդունի լոյս լուսին
 26 ՊԴ չի՞ երկիր որ ծածկեաց եւ
 27 ՊԴ մասամբք

եւ զարարիչն ամենայնի գեր ի վերոյ գիտիցէ¹:

1 Ժ. ՅԱՂԱԳՍ ԱՐԵԳԱԿԱՆ

2 Յո՛յժ սիրելի է ինձ ի միաւորութեանց նոցա բանից յիմուամս² ճառի³ առնել զառասուլիսնս⁴ բանից, որ ինչ⁵ յազազս առաջնոյ եւ մեծի լուսաւորիդ է բան. եւ արդ ասացից նոյնպէս եթէ⁶ նիւթ ամանոյ արեգականն Արարչին միայնոյ է գիտելի: 3 Իսկ պատուականք յարարածս մարդիկ այնչափ միայն գիտացին զնա, թէ է՛ տարր սեղմ, խիստ⁷, մաքուր, գնդաձեւ, բոլոր ամենեւին, անգեղն եւ անսպի, ինքն է ցուրտ բնութեամբ. զՋերմութիւն եւ զլուսաւորութիւն յարփոյ առեալ հեղու յաւդս, որով լուսաւորի եւ ջեռնու երկիր: 4 Եւ հաւանեցուցանէ զքեզ աւերնակ⁸. գունդ բիւրեղ յորժամ յարեւու ունիցիս, տես զի ինքն ցուրտ է⁹ ամենեւին, իսկ որ շողն կաթէ ի նմանէ, պայծառ է առաւել քան զլոյս արեգական¹⁰, եւ ուրանաւր¹¹ կաթէ, լուցանի¹². քանզի ի կաթուած շողոյ նորա հուր ծնանի, թէպէտ եւ ինքն ցուրտ է բնութեամբ: 5 Նոյնպէս եւ զարեգակնդ իմա՛: 6 Բայց երկուք (!) ոմանք յեկեղեցւոյ՝ ո՛չ այսպէս, այլ ասացին, թէ ինքն իսկ արեգակն ունի զլոյս իւր բնութեամբն¹³ յինքեան բնակեալ. ո՛չ յարփոյ¹⁴ եւ ո՛չ յայլ ումեքէ առնու¹⁵: 7 Այլ ասեն թէ

լոյսդ արեգական այն լոյսն է՝ որ յառաջ քան զեղանիլ լուսաւորացդ էր. վասն զի լուսաւորքդ արարած են յաւուրն Դորդի: 8 Իսկ երից աւուրցն նախագունից լոյսն ցիր բնութիւն էր, եւ արեգակն աման եղեւ այնր լուսոյն, եւ ժողովեաց եւ արկ Աստուած ի դա զլոյսն զայն, զորմէ ասացի թէ ցիր բնութիւն էր. եւ ժողովեալ ունի զնա յինքեան արեգակն, որպէս ճրագ զհուր, ¹⁶զոր աւերնակ այլ իմն հուրն է եւ այլ իմն ճրագն. զի մինն ունի յարարածի իւրում զաւրութիւն լուսոյ. եւ միւսն յարդարեալ կազմի առ ի լուսաւորել: 9 Սոյնպէս եւ լուսոյն առաջնոյ կազմեցան լինել ամանք¹⁷ լուսաւորքդ: 10 Արդ՝ թէպէտ հոգեւորք են եւ սոքա, սակայն ես հաւանիմ¹⁸ սրբոց հարցն բազմաց միաբանելոցն՝ զոր¹⁹ եւ բարի փիլիսոփայքն արտաքնոցն համաձայնեն յարփոյ ունել զլուսաւորութիւն եւ զՋերմութիւն: 11 ²⁰Թողում զչար փիլիսոփայիցն ճառս, որ ասեն թէ ի չփելոյ երագ ընթացիցն իւրոյ առնու Ջերմութիւն եւ աւուրս բերեալ տարածէ զաշխարհաւ: 12 Բայց իմաստուն յայսոսիկ խորհողաց յայտնի է թէ յարփոյ է, եւ լոյսն եւ Ջերմութիւն որպէս առաջնոցն հաճոյ թուեցաւ ասել: 13 Եւ վասն ընթացից լուսաւորացդ ի մտից յելս կոյս²¹ ընդդէմ երկնի մի՛ ումեք անհաւատ թուեցեալ յամառեցի²², ասելով²³ թէ մեք տեսանեմք զլուսաւորսդ ելեալ յարեւելից եւ եկեալ մինչեւ յարեւմուտս՝ ²⁴եւ կամ զանուանսդ ինչ կարծեսցէ վկայս. այլ գիտասցէ թէ²⁵ երկիրն

1 ՊԴ ամենայն գիտասցէ
2 ՊԴ յիմում
3 ՊԴ ճառս
4 ՊԴ գառատութիւնս
5 ԱԲ չի՛ր ինչ
6 ԱԲ չի՛ր եթէ
7 ՊԴ չի՛ր խիստ
8 ՊԴ օրինակն
9 ԱԲ չի՛ր է
10 ԱԲ զարեգակա
11 Ա ուրանուր
12 ՊԴ լուցանի
13 ՊԴ բնութեամբ
14 ՊԴ յարփոյն
15 ՊԴ առեալ

16 ՊԴ չի՛ր գոր... լուսաւորել
17 ՊԴ աման
18 ՊԴ հաւանեալ եմ
19 ՊԴ որում փիլսոփայ
20 ՊԴ չի՛ր Թողում... ասել (Ճախ. 12)
21 ՊԴ յետկոյս
22 ՊԴ չի՛ր յամառեցի
23 ՊԴ ասիցէ
24 ՊԴ չի՛ր եւ կամ... վկայս
25 ՊԴ զի փիլսոփայ

է այն, որ հանէ զնոսա յելից¹ եւ բերէ ի մոռտս. քանզի անչափ է երազութիւն շրջագայութեան երկնի: 14 Արդ՝ որք միտս ունիցին՝ դիւրին է ի տեսութեանցն² իմանալ, թէ յարեւելս կոյս³ գնան արեգակն եւ լուսին եւ⁴ բազումք յաստեղաց, որք ո՛չ կցեալ⁵ խմբաւք ունին գետեղակալութիւնս: 15 Եւ չէ՛ ինչ պիտոյ եթէ ի մըջենէ կամ ի նոյն նմանեաց առնուցումք արիւնակս գնացից լուսաւորացդ: 16 Քանզի ասեն արտաքինքն, եթէ մըջիւնն լիցի քեզ արիւնակ, առեալ գմըջիւն դիր⁷ ի վերայ երկանի. եւ տես թէ զիարդ ընթանայ ընդդէմ երկանին⁸ եկիցն: 17 Վասն զի ո՛չ ի կողմն կարէ ընթանալ եւ ո՛չ գոյգ ընդ երկանին ընթացից: 18 Քանզի երկանն⁹ երագ է քան զընթացս մըջեանն եւ գլորէ¹⁰ գնա, վասն այնորիկ¹¹ հարկաւորի¹² ընդդէմ երկանին եկիցն¹³ ընթանալ: 19 Իսկ երկանն իւրով երազութեամբն ընդ իւր բերեալ գնա յոր կոյս ինքն գայ ի շուրջ: 20 14Դարձեալ թէ կռուեցուցանես գմըջիւն յանուի ի կողմանէ հեցին, նոյնպէս ընդդէմ անուոյն ընթանայ, բայց զի յոյժ երագ է անիւն, փոյթ փոյթ բերէ գնա ընդ իւրեալ, չժամանէ մըջիւնն եւ ոչ գերիւր մասն հեցի միոյ ընթանալ, մինչ անիւն հանէ եւ իջուցանէ գնա երագ երագ ածելով ընդ իւր: 21 Արդ՝ թէպէտ եւ նման քաջ է օրինակս, սակայն

մեզ անարգանք են ուսանել զընթացս լուսաւորաց ի փոքունց եւ ի մթին արիւնակաց¹⁵. 16 սապէս եւ զլուսաւորաց իմա. այլ որ ոք ուշիւմ միտ եղեալ հայեսցի, 17 դիւրեալ է ուսանել ի լուսնոյ. 18 թէպէտ յարեգականէ ո՛չ կարես գիտել վասն առաւել լուսափայլ ճառագայթիցն, մանաւանդ¹⁹ թէ ի կենդանի ձայնէ յումեքէ ո՛չ վարժիցիս: 22 Այլ հայեսցեալ ի լուսին, տե՛ս յընծայման նորա, զիարդ ի մտանել արեգականն երեւի լուսինն մաւտ ի մոռտս, եւ յամենայն աւուր հայեա՛ (!) ի նոյն ժամու եւ տե՛ս թէ զիարդ աւր քան զաւր զարեւելիւք²⁰ երեւի. եւ զիտեա՛ ո՞րչափ տեսեր գտեղին ուր ժամէ ի ժամ փոխեցաւ 21 յառաջ ընդ յարեւելիւք՝ այնչափ²² է նորա ընթացք աւուրն: 23 Եւ ուսիր թէ երազութիւն երկանին է այն որ ածէ գնա յաւուր պատել զաշխարհաւ եւ ո՛չ թէ իւր ընթացքն: 24 Եւ զարեգակն թէպէտ եւ ո՛չ կարես տեսութեամբ ուսանել, այլ իմացիր ի կենդանակացդ անուանեցելոց յաստեղատանցդ: 25 Ահա²³ տեսանես զիարդ կարգեալ կան կցեալ գմիմեանց եւ ծագեն յելից, նախ խոյն²⁴, եւ ապա ցուլ, եւ ապա երկաւորի, եւ որ ի կարգին, եւ արեգական կատարեալ զխոյն փոխի ի ցուլն, եւ ի նմանէ յայլսն²⁵ ընդդէմ երկնի ընթանալով յարեւելս կոյս: 26 26 Հաւանեսցի իբրեւ զիս առաջնոցն վասն ընթացից արեգական եւ այլոց լուսաւորացդ թէ ո՛չ հոլովելով ըն-

1 ՊԴ յելիցն
 2 ՊԴ ի տեսութեանցն
 3 ՊԴ չի՛ կոյս
 4 ՊԴ լուսին, եւ
 5 ՊԴ կցեալ
 6 ՊԴ չի՛ եւ... լուսաւորացդ
 7 ՊԴ դիցես փի դիր
 8 ՊԴ երկայնիմ փի երկանիմ
 9 ՊԴ չի՛ երագ է քան զընթացս մըջեանն
 10 ՊԴ գլէ
 11 ՊԴ չի՛ վասն այնորիկ
 12 ՊԴ նա հարկաւորեալ
 13 ՊԴ չի՛ երկանիմ եկիցն
 14 ՊԴ չի՛ Դարձեալ... արիւնակաց (նախ. 21)

15 ԱԲ, նձԲ մթիւնակաց. ուղղում եմ՝ մթին արիւնակաց
 16 ԱԲ չի՛ սապէս եւ զլուսաւորաց իմա
 17 ՊԴ դիւրին է
 18 ՊԴ չի՛ թէպէտ... ի լուսին (նախ. 22)
 19 Ա մանաւանդ
 20 Ա զարեւելիւք. ուղղում եմ՝ զարեւելիւք
 21 ՊԴ յառաջ ընդ յարեւելիւք
 22 Բ անչափ
 23 ՊԴ չի՛ ահա
 24 Ա խոյն
 25 Ա յայլսն
 26 Պ չի՛ Հաւանեսցի... բանս (նախ. 27)

թանան, այլ պտուտաբար շուրջ գոլով որպէս զանգոյ զպտոյտ հարել ի տապեղ: 27 Այսուհետեւ շատացեալ որ ինչ յազագս ընթացից է բանս, երթիցուք յաստուածային գրոց ճառս որ ասէ՝¹ եղիցի ի նշանս, ի ժամանակս, յաւուրս եւ ի տարիս: 28 Բազում նշանս² ունիմք ուսանել յարեգականէ, եթէ ո՛չ առնուցումք³ զխելագարեալ խորհուրդս աստեղաբաշխիցն, որ ինչ պատահման վիճակաց եւ ծննդաբանութեան⁴ է: 29 Քանզի զմի ինչ իրս որ երեւին⁵ յարեգականէ. եւ փրկիչն մեր յայտնեաց յաւետարանին՝ թէ յորժամ տեսանէք⁶ զի գայ ամպ յարեւելիցս, ասէք թէ անձրեւ լինի. եւ լինի այնպէս⁷: 30 Եւ յորժամ հարաւ շնչէ, ասէք թէ խորշակ ընթանայ, եւ լինի այնպէս: 31 Ըստ սմին աւրինակի, այլ եւս բազում կերպարանաւք⁸ փորձիւ յայտ լինի, զի յորժամ ընդ ծագել արեգական⁹ մթազոյն ելանիցէ՝ արեան եւ կայծական նշանակ ունիցին ճառագայթքն ըստ փոփոխման խստաշունչ աւդոց¹⁰. եւ եթէ ի նմին¹¹ կերպարանս կացցէ¹² եւ աւզն պղտորեալ եւ յուզեալ ո՛չ յստակեսցի¹³ եւ գոյն մթազին ո՛չ լրթասցի, եւ հողմք եւս խստաշունչք¹⁴ յուզեսցին, եւ ամպն եւս քան զեւս յաւելեսցի¹⁵, զերկար խոնաւալուզից¹⁶ եւ զսաստիկ անձրեւաց յայտ առ-

նէ: 32 Եւ դարձեալ յորժամ ամպոց¹⁷ յամպ մտանիցէ եւ ելանիցէ արեգակն զջերմակիծ շող ամբն¹⁸ յերկիր առաքելով, զխոնաւութենէ աւդոյ յայտ առնէ: 33 Դարձեալ¹⁹ յորժամ լինիցի ծագումն գյառաջեւսն խանձելով զառաւրեայ անձրեւածումն նշանակէ²⁰: 34 Իսկ²¹ յորժամ ի մուտս գլետոյն խանձիցէ զերկինս կարմրացուցանելով՝ զառաւրեայ պարզոց յայտ առնէ: 35 Մեկնութիւն նշանաց²² եղեւ առաջին բանիւքը: 36 Ասասցուք արդ՝ վասն ժամանակաց²³ որ են փոփոխմունք աւդոց եւ գնացք ժամու²⁴ եւ երեւել սառնամանեաց ձմերայնոյ²⁵, եւ քաղցրախառն շնչելոյ աւդոյ գարնայնոյ, եւ բոցախառն հրատք²⁶ տապոյն ժամանակաց ամարայնոյ, եւ մեղմախառն ցրտութեան ժամանակաց աշնանոյն²⁷: 37 Զի այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աստիճանաց արդար գնացիւք արեգականէն՝ շրջին²⁸ անցանեն ի վերայ մեր կարգ ըստ կարգի, յաւրինեալ յարդարմամք՝ ըստ ականարկելոյ զաւրութեանն, որ պատշաճեաց զնոսա²⁹ յիւրաքանչիւր կարգս եւ ի ժամանակս: 38 Զի ձմեռն այսպէս լինի. յորժամ հեռանայ մերժի յիջանել արեգակն ի հարաւ, եւ անդէն մշտնջենաւորէ³⁰ զգնացս իւր, յայնժամ յաճախեալ³¹ բազմանայ աստ ի մերում կողմանս երկայնութիւնք ստուերաց

1 ՊԴ ասեմ
 2 ԱԲ բագում նշանս
 3 ԱԲ առնուցումք
 4 ՊԴ վասն եւ ծննդաբաշխութեան
 5 ՊԴ լինի փխ երեւիմ
 6 ՊԴ տեսանիցէք
 7 Ա չիք այնպէս
 8 ՊԴ փորձի՝ յայտ լինի
 9 ՊԴ արեգականն
 10 ՊԴ օդոյն
 11 ՊԴ ի նոյն
 12 ՊԴ կայցէ
 13 ԱԲ յուզել ոչ իստակիցի / ՊԴ յստակիցի
 14 ՊԴ խստագոյնք
 15 ՊԴ յաւելցէ
 16 Դ խոնաւալուզիցէ

17 ՊԴ յամպոյ
 18 ՊԴ շող ամպոյն փխ շողամբն
 19 ՊԴ եւ փխ Դարձեալ
 20 ՊԴ նշանակելով
 21 ՊԴ եւ փխ Իսկ
 22 Դ նշանացոյ
 23 ՊԴ որք են
 24 ՊԴ ժամուց
 25 Դ ձմերայնոյն
 26 ՊԴ հրատ
 27 ՊԴ աշնանոյ
 28 ՊԴ շրջանիմ
 29 Ա զնս
 30 ՊԴ մշտնջենաւորել
 31 Ա յորժամ յաճախեալ

գիշերոյն¹ որ է խաւար: 39 Եւ յիջանել արեգական ի հարաւակոյս կողմանս, շնչեն ցրտաշունչ սառնամանիք ընդդէմ աւդոց², որ տարածեալ կայ առ երկրաւս. եւ ի պատճառոյ³ խոնաւութեանն, որ գարթնուն ի վերայ երկրի, առնին անձրեւա-յոյզք եւ թաւնընկէցք⁴ եւ բալաձիգք եւ ձիւնաբերք: 40 Դարձեալ յորժամ սկսանի արեգակն աստիճանել ելանել ի հարաւա-կողմ կողմանց՝ գալ հասանել ի հասարա-կած երկնից, զհաւասարութիւն տունջեան եւ գիշերոյ կատարէ: 41 Մեծ սքանչե-լեաւք բաժանի կարգ ժամանակացն⁵. որ-չափ վերասցի ելցէ արեգակն փոփոխելով զգնացս իւր ի ծագելն յերկիր, եւ ի նոսին զետեղ առեալ դադարեսցէ: 42 Եւ այսպէս քաղցրախառն խառնուածովք յարդարի գարունն իւրով մեծագեղ վայելչու-թեամբն⁶. զի ի նմա արմատք արձակեն զբոյսս, մարգք զուարճանան, ծաղիկք պայծառանան, տունկք ցցուիցին, ծառք արձակեն զբողբոջսն, եւ⁷ անասունք հան-դերձ թռչնաւք եւ ծովային ջրածնունդ⁸ գեռնաւք. եւ ամենեքեան ըստ իւրաքան-չիւր ազգի գան ի ծնունդ⁹, ի սէր եւ ի սնունդ: 43 Եւ յետ այսորիկ սկսանի մաւ-տել գալ արեգակն ի փոփոխմունս ամա-րայնոյ¹⁰. եւ երեւեցուցանել զգնացս իւր ի կողմանս հիւսիսոյ, ձգել եւ երկայնացու-ցանել զտիւս. եւ քանզի յամրագնաց ժա-մաւք անցանէ զաւդովք, յերկարաձիգ գնացիւք ջեռուցանէ ի վերայ աւդոյ¹¹. եւ

ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, եւ առնի գործակից եւ վաստակակից սեր-մանց ի պաշտել զպէտս նոցա պարարեալ¹² պնդէ¹³ զի հասցեն¹⁴ ի չափ սննդեան իւ-րեանց¹⁵. նոյնպէս եւ զպտուղս ծառոց: 44 Եւ յորժամ ի վերին բարձանց ծագես-ցէ¹⁶ արեգակն, փոքրկանան ստուերք տա-րերց երկրի, եւ կարծին շուքք հասակաց ի մէջաւրեայ ժամանակի, տիւքն երկայնք լինին: 45 Եւ յորժամ ստուերքն երկայնին՝ աւուրքն փոքունք լինին, եւ աստ առ մեզ, որ ի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք, այ-լազգ անկանին ի մէջ ստուերք. եւ յայ-լում աշխարհի միոջ այլազգ, զի Բ. աւուրս յամենայն տարոջ ի մէջաւրեայ ժամանակի առանց ստուերի լինի. քանզի կշիռ ի վե-րայ գլխոյ ամենեցուն կան ճառագայթք¹⁷ արեգականն, եւ հասարակ յամենայն կող-մանց¹⁸ արկանէ գնչոյլս պայծառութեանն ի վերուստ մինչեւ ընդ ներքին¹⁹ խորս ջրհորոց ընդ նեղ եւ ընդ նուրբ բերանս²⁰ մտանէ շող եւ լուսաւորէ. եւ անուանեն զաւուրսն անստուեր միջաւրեայ: 46 Եւ այլք որ ի հեռաւոր աշխարհին Հնդկաց բնակեալ են, եւ անդր եւս քան զՍինդ եւ զՍմրղանդ²¹ ստուերք հասակաց մարդկան յերկոցունց²² կողմանց երեւի. եւ կոչեն իսկ երկստուերեան²³ աւուրս: 47 Եւ այս ամենայն ի²⁴ փոփոխելոյ գնացից արեգա-կան լինի: 48 Եւ իբրեւ հասուցանէ զսեր-

1 ՊԴ գիշերոյ
 2 ՊԴ օդոյ
 3 ՊԴԱ պատճառս
 4 Ա թունընկիցք. ուղղում ենք՝ թաւնընկէցք
 5 ՊԴ կատարին կարգ ժամանակաց
 6 ՊԴ վայելչութեամբ
 7 ԱԲ չի՞ք եւ
 8 Դ ջրասնունդ փխ ջրածնունդ / Ա ջրածնունտ
 9 Ա ծնունտ
 10 Դ ամարայնոյն
 11 ՊԴ ի վերայ երկրի գոյս / Ա գոյս / ձեռագրերում՝ գոյոյ

12 Դ պարարել
 13 Ա պնդէ
 14 Դ հասցէ
 15 Դ սննդեան իւրոյ
 16 ՊԴ բարձանցն ծագեցէ
 17 ԱԲ ցառագայթք. ուղղում ենք՝ ցառագայթք
 18 Դ կողմանցն
 19 ՊԴ ցնեքին փխ մինչեւ ընդ ներքին
 20 Ա երանս
 21 Դ զՍմրղան փխ զՍմրղան / ձեռագրերում՝ զՍնդ եւ զՍմրղան
 22 Դ յերկոցունց
 23 Ա երկստուերսն / ՊԴ երկստուերեան
 24 ԱԲ ամենայնի. ուղղում ենք՝ ամենայն ի

մանս¹ եւ զմիրգս² ի կատարեալ չափսն, ապա սկսանի սակաւ սակաւ մեղմանալ ի բոցաճաճանչ³ տապոյն: 49 Սկսանի այնուհետեւ⁴ մերձենալ աշունն, ցուցանել նմա զմեղմախառն գնացս իւր, եւ գայ Հասանէ քաղցրախառն խառնուածն, որ ունի զմիջնորդութիւն. եւ ըստ աստիճանելոյ սկսանի երեւել նշանակ ցրտոյ կարգին մտանելոյ ի սառնամանիս⁵ ձմերայնոյ. ի շրջելոյն արեգական՝ որ իջանէ մեղմով ի կողմանց հիւսիսոյ⁶, երթալ երեւեցուցանել զգնացս իւր ի կողմանս հարաւոյ: 50 Եւ այսպէս ի փոփոխել արեգական զգնացս իւր կատարէ⁷ ժամանակս յեղանակաց: 51 Եւ եղիցին յաւուրս՝ որպէս եւ Սաղմոսն վկայեաց՝ թէ իշխանակամ տունջեան⁸. եւ ի⁹ իւր իցէ իշխանական տունջեան՝ եթէ⁸ ո՛չ գնացիւքն ցուցանել ի նմա զլոյս իւր. յորժամ ի վեր քան զկէս գնդին առնիցէ զգնացս իւր, հալածելով զխաւարն եւ լուսաւորելով զաւղս որ կոչեցաւ տիւ: 52 Եւ արդ՝ յայտ է թէ տիւ ի լուսոյ արեգականէ լինի⁹: 53 Իսկ գիշեր ո՛չ եթէ յուժեքէ, այլ ուր ո՛չ գոյ լոյս, անդ խաւար է, եւ գիշեր է ստուերաբոյս¹⁰ որ անկանի ի տարերէ երկրիս¹¹. զի ամենայն ինչ որ կայ ընդդէմ լուսոյն, նա է պատճառք երեւելոյ խաւարի: 54 Որպէս ստուերք¹² երկրի պատճառ է գիշերոյ: 55 Եւ հաւանեցուցանէ զքեզ աւրինակն¹³, որպէս թէ հարկանիցես տաղա-

ւար ի սաստիկ լուսաւորութեան ի մէջաւրեայ¹⁴ ժամանակի՝ եւ պատիցես պնդիցես ամենեւին արտաքուստ, զի մի՛ մնասցէ¹⁵ նմա նշոյլք լուսոյ եւ հայեցեալ¹⁶ տե՛ս որպէս խաւար թանձրամած մթացեալ¹⁷ գտանի ի նմա: 56 Եւ գիտեա՛, թէ դու ես արարող խաւարին՝ եւ տաղաւարն է պատճառք¹⁸: 57 Զի ամենայն¹⁹ վայրք որ առանց լուսոյ են, խաւար մածեալ գտանի ի նմա²⁰: 58 Նոյնպէս եւ գիշեր՝ յորժամ ի ներքին կիսագունդն խոնարհեսցի արեգակն, եւ պակասիցէ²¹ ՚ի յաւերոյս լոյս, եւ անկանիցի զնովաւ²² ստուեր տարեր երկրի. քանզի ստուերս զոր տեսանեմք ի տուէ՛²³ նա է խաւարն գիշերոյ ի փոփոխելոյ ճառագայթից արեգական: 59 Զի²⁴ յորժամ յարեւելից երեւեսցի լոյսն՝ ստուերն յարեւմուտս կոյս²⁵ ձգի: 60 Եւ յորժամ ի հարաւ անցանէ լոյսն՝ ստուերն ի ²⁶հիւսիս կոյս փոխի: 61 Իսկ յորժամ յարեւմուտս փոխի լոյսն՝ ստուերն ուղղորդ²⁷ յարեւելս անկանի: 62 Եւ ի մտանել արեգական՝ ստուեր տարեր²⁸ երկրի յաւուրս վերանայ. եւ այնպէս մտանէ խաւար տիրել յաշխարհի²⁹, որ անուանեցաւ գիշեր: 63 Դարձեալ եւ ի տարիս եղաւ լինել արեգակն ըստ աւրինակի թուոց յունաց որ յաւանդութենէ հարցն³⁰ իւրեանց համարին գտարի արե-

1 Դ գսերմանսն
 2 ՊԴ գմիրգսն
 3 Դ բոցամանանց
 4 Ա այսուհետեւ
 5 Ձեռագրերում՝ սառնամանիք
 6 Ձեռագրերում՝ հիւսսոյ
 7 ՊԴ եւ կատարէ
 8 Սաղմ. ՃԼԵ 8
 8 ՊԴ քէ փխ եթէ
 9 Պ իցէ
 10 ՊԴ ստուեր աւղոյս
 11 Ձեռագրերում, նձԲ՝ երկիրս
 12 ՊԴ ստուեր
 13 ՊԴ օրինակն

14 ՊԴ լուսաւորութեան միջօրեայ
 15 ՊԴ մի՛ մոցեմ
 16 ՊԴ հայեա՛ եւ
 17 ՊԴ չի՛ մթացեալ
 18 ՊԴ պատճառ
 19 ՊԴ չի՛ ամենայն
 20 ՊԴ ի նոսա
 21 ՊԴ պակասեսցէ
 22 Ա գնուաւ
 23 ՊԴ չի՛ ի տուէ
 24 Դ եւ փխ Զի
 25 ՊԴ չի՛ կոյս
 26 ՊԴ հիւսիսակողմ փոխի
 27 ՊԴ չի՛ ուղղորդ
 28 ՊԴ չի՛ տարեր
 29 Պ տիրել երկրի
 30 ՊԴ եւ ի հարցն

զական, ի հաստատեալ կիտէն մինչեւ
ցմիւս կէտն նշանակել¹. եւ ըստ ընթացից
շարժմանն² զոր ունի արեգակն, նոյնպէս
առնի կատարումն տարոյն իւրոյ: 64 Եւ
արար, ասէ, Աստուած լուսաւորս մեծա-
մեծս, եւ զնովիմբ ածեալ՝ ասէ³ թէ զլուսա-
ւորն մեծ: 65 Միտք բանիցս այսպիսի իմն⁴
են, իբրու թէ՛ ինչ մի միանձնութեամբ
մեկնակ⁵ մեծ է ըստ միանձնութեան երկ-
նից, երկրի, եւ ծովու: 66 Իսկ այլքն եւս⁶
որ կոչին մեծք, ըստ աւրինակի բնու-
թեանցն⁷, որ գտանին առ մեզ, ոմն մեծ
քան զընկեր իւր, որպէս զի մեծ է ձի քան
զձի, եւ եզն քան զեզն: 67 Ո՛չ եթէ ըստ
մեծութեանն այլ ինչ տարր էր, այլ ըստ
համեմատութեան իւրոյ⁸ ընկերին ասի մե-
ծութիւն նոցա⁹: 68 Արդ՝ ո՛չ այսպէս է մե-
ծութիւն լուսաւորացո՞¹⁰, որպէս մեծ իցէ¹¹
աստղ քան զաստղ. այլ այնպէս իմն մեծա-
տարած մեծութիւն¹² ունին որ բաւական
են առհասարակ¹³ լուսաւորել զամենայն՝
ծագեալ ծաւալեալ¹⁴ համասփիւռ յերկինս
յերկրի եւ ի ծովու. եւ շուրջանակի¹⁵ յամե-
նայն ծագս երկրի: 69 Եւ քանզի զամե-
նայն¹⁶ բոլորակն երկնից տարածի¹⁷ ունի
լուսաւորող ի ծագելն¹⁸ եւ ի մտանելն իւր¹⁹.
եւ զամենայն միջավայրս վայրեացն՝ իբ-

րու զմի²⁰ ինչ ունի միանգամայն զամե-
նայն: 70 Վասն այսորիկ միապէս միով
կերպարանաւք երեւի ամենայն մարդկան,
որ բնակեալ են յամենայն ծագս երկրի:
71 Եւ գիտեա՛ թէ ամենայն մեծ իրք ի հե-
ռաստանէ փոքունք երեւին, եւ յորժամ եր-
թաս մաւտիս, ապա ²¹ստուգես՝ թէ մեծ է
եւ ո՛չ փոքր: 72 Իսկ առ արեգակն չէ՛ ոք
որ մաւտ իցէ կամ հեռի. այլ միով հաւա-
սարութեամբ ամենայն մասանց աշխար-
հիս տեսանի, եւ այս է աւրինակ ճշմարիտ.
զի որ ²²բնակեալն իցէն անդը²³ ի Հնդկաց
աշխարհին, կամ անդը²⁴ ի Բրիտանիայ²⁵
աշխարհին, միով հաւասարութեամբ տե-
սանեն զծագելն եւ զմտանելն արեգա-
կանն. զի ո՛չ յորժամ գտանէ առ արեւմ-
տեայնս նուազի ինչ ի մեծութենէ անդի
առ արեւելեայնս. եւ ո՛չ յորժամ ծագէ առ
ի բնակչացն արեւելեայց թերի ինչ եւ պա-
կաս երեւեսցի բնակչացն արեւմտեայց:
73 Եւ ո՛չ յորժամ զայ հասանէ ի հասարա-
կած երկնից փոխի ինչ ի կերպարանացն
զոր ունէր: 74 Արդ մի՛ խափեսցէ զքեզ
սակաւ տեսիլ նորա՝ որ քան զչափ կանգ-
նոյ²⁶ միոյ երեւի. եւ կարծիցես թէ այն-
չա՛փ իցէ: 75 Քանզի ²⁷մեծամեծ ինչ իրք
որ ի բացեայ ի հեռուստ տեսանէր, իբր
փոքունք երեւին. վասն զի²⁸ քայքայի²⁹
սակաւ տեսիլն³⁰ ականն ի տկար զաւրու-
թենէ³¹ լուսոյն զոր ունի. քանզի³² չլինի

1 ՊԴ նշանակեալ
2 ՊԴ շարժմանցն
3 ԱԲ չի՛ ասէ
4 ՊԴ չի՛ իմն
5 ՊԴ չի՛ մեկնակ
6 ՊԴ չի՛ եւս
7 ՊԴ բնութեան
8 Դ չի՛ իւրոյ
9 ՊԴ նորա փիւ նոցա
10 Ա լուսաւորացտ
11 ՊԴ չի՛ մեծ իցէ
12 ՊԴ մեծատարած մեծ լուսաւորութիւն
13 ՊԴ չի՛ առհասարակ
14 ՊԴ ծաւալել. ուղղում ենք՝ ծաւալեալ
15 ՊԴ եւ ի շրջանակի
16 ԱԲ ամենայն
17 ՊԴ տարածիւ
18 ՊԴ ի ծագել
19 Դ ի մտանել իւրում

20 Դ մի փիւ գմի
21 ՊԴ երեսի մեծութիւն նորա փիւ ստուգես՝ թէ մեծ է եւ ոչ փոքր
22 ՊԴ բնակեալ են
23 ԱԲ անդ փիւ անդը
24 ԱԲ անդ փիւ անդը
25 Պ Բիւրիտոնիա / ԱԲ Բիւրիտանիայ. ուղղում ենք՝ Բրիտանիա
26 Ա կանկնոյ
27 Պ մեծամեծ յիրաց
28 ՊԴ քանզի փիւ վասնզի
29 Ա քայքայի
30 ՊԴ տեսիլ
31 ՊԴ ի տկարութենէ փիւ ի տկար զաւրութենէ
32 ՊԴ վասնզի փիւ քանզի

բաւական ի հեռաձիգ վայրս հասուցանել
 զհայեցուածսն այլ ի¹ տեսիլն: 76 Եւ
 զլոյսն իբրեւ զմռայլ² տեսանես³. եւ մեծ
 ինչ իրս որպէս զփոքունս: 77 ⁴Ձիցէ՞ ար-
 դեաւք տեսեալ քո ի գլխոյ բարձր լեռանց
 զծով իւրով մեծանիստ լայնութեամբն,
 ո՞րչափ արդեաւք փոքր երեւեսցի քեզ մե-
 ծուլիւն նորա: 78 Եւ կամ ո՞րչափ սակա-
 լիկ տեսանիցես զմեծութիւն նաւու որ
 բարձրաբերձ իցէ աղխաղխեալ ուղերձեալ⁵
 զբազմաշահն վաճառս՝ հանդերձ սպիտակ
 առագաստաւն, որոյ խորշ առեալ գոգեալ
 տանիցի զնաւն յարշաւանի, այլ թերեւս
 իբրեւ զձագս աղաւնոյ տեսանիցես զնաւն:
 79 Կամ չիցէ՞ տեսեալ քո ի բարձրաբերձ
 բարձրաւանդակաց զբաշտ ընդարձակ եւ
 զմեծանիստ, յորում վարիցին հարկիք ե-
 զանց. զի՞ արդ թուիցի քեզ հանդերձ զովո-
 դաւն⁶ իւրով որ վարէ զնոսս. այլ թերեւս
 որպէս զմըջիւնս⁷ գետնագնացս յայլայլե-
 լոյ⁸ աւդոյն որ քայքայեաց զտեսիլ ա-
 չացդ⁹ քոց, որ ո՛չ ետ ճշգրտիւ նշմարել
 զտեսիլ իրացն հեռաւորաց, քանզի չառնի
 բաւական լոյս աչացդ զհեռաւորն, որպէս
 զմաւտաւորս ճանաչել. զի եւ զլերինս
 բարձունս որ զատեալ լինին ի միմեանց
 խորածորիւք¹⁰, եւ յորժամ հայեցեալ տե-
 սանիցեմք ի հեռաստանէ՝ ցածունք եւ
 միայարք երեւին. եւ ո՛չ կարեմք նշմարել
 զխորածորոցն անջրպետս. այլ եւ շար-
 ժունս նմանեցուցանեմք. եւ որպէս թէ
 շուրջ զմեաւք երեւեսցին գալ: 80 Ձի եւ
 աշտարակք չորեքկուսիք բոլորք երեւին,
 եւ այնպէս թուեսցին թէ շուրջ գայցեն:

1 ՊԴ այլայլի փխ այլ ի
 2 Ա գմառայլ
 3 ՊԴ տեսանէ
 4 ՊԴ չի՞ք Ձիցէ... ի հեռաստանէ (նախ. 79)
 5 Ա աղերձեալ
 6 ԱԲ գովաղաւն
 7 ԱԲ միջունս
 8 Ա յայլ այլոց
 9 Ա աչացտ
 10 Ա խորածորեալք

81 Եւ մեծութիւնք ետեղակալ¹¹ տարերց ի
 բացեայ շարժունք¹² երեւեսցին՝ եւ ո՛չ որ-
 պէս հաստատեալ կայ ի տեղուղն¹³ նովին
 կերպարանաւքն երեւին ի հեռաստանէ:
 82 Դարձեալ յայսմ յաւրինակէ ի միտ առ
 զանբաւ մեծութիւն արեգականն. տես
 ո՞րչափ բազմութիւն¹⁴ աստեղաց են յեր-
 կինս, եւ ընդ ամենեսեան ո՛չ են բաւական
 լուսաւորել զմթութիւն գիշերոյն. եւ արե-
 գակն միայն միով անձամբն յորժամ երե-
 ւեսցի¹⁵ զամենայն սահմանս աշխարհի
 միանգամայն լուսաւորէ: 83 Նաեւ մինչ
 չեւ¹⁶ ելեալն իսկ քաղցրահայեաց ճառա-
 գայթիւն¹⁷ ցրուէ մաշէ զխաւարն եւ հե-
 տակորոյս առնէ զաղջամուղջն, եւ բառ-
 նայ զտխրութիւն. եւ ի տարածել¹⁸ մեծա-
 պայծառ լուսոյն՝ ծածկէ զլուսաւորութիւն
 աստեղացն, եւ զթանձրամած աւդոց¹⁹
 ստուերն մերկանայ յերկրէ: 84 Եւ ընդ
 նմին աւդ քաղցրաշունչ շնչէ յաշխարհի²⁰,
 եւ ընդ արեւածայրսն լուսաւորին, արկա-
 նէ ցաւղ մանրացաւղ ի ժամանակս ամա-
 րայնոյ ընդ ամենայն երեսս երկրի:
 85 ²¹Եւ ուստի՞ կարէ լուսաւորս այս զան-
 չափ մեծութիւն երկրի միովն երեւելով
 յանկարծածին ժամու լուսաւորել, եթէ ո՛չ
 զի անչափ մեծութեամբն յանբաւ բարձ-
 րութենէ²² զանչափ ճառագայթս լուսոյ
 արձակէ²³. եւ յայսմ ամենայնէ յայտ է թէ
 մեծ է արեգակն ըստ վկայութեան աս-
 տուածային գրոց, որում եւ արտաքնոցն

11 Բ է տեղակալ փխ ետեղակալ
 12 Ա շարժումք
 13 Ա տեղիոցն
 14 ՊԴ բազմութիւնք
 15 ՊԴ երեւիցի
 16 ԱԲ միջեւ
 17 ՊԴ ճառագայթիւնք
 18 ՊԴ տարածանել
 19 ՊԴ օդոյս
 20 ՊԴ յերկրի փխ յաշխարհի
 21 ՊԴ չի՞ք եւ... երկրի
 22 ՊԴ բարձրութեանէ
 23 Պ արձակէր

բարեաց ի ճահ պատահեն վկայութիւնք: 86 Քանզի ասեն թէ՛ է մեծութիւն լուսնոյ ըստ չափոյ երկրի. եւ արեգակն առաւել մեծ¹ քան զլուսին², ըստ աստուածային գրոց. զի թէպէտ եւ ասաց երկոցունց մեծամեծս, սակայն ի համեմատութիւնն՝ ասէ լուսաւոր մեծ, եւ լուսաւոր ³փոքր: 87 Եւ ի տեսութենէ իսկ կարեմք իմանալ՝ թէ մեծ է արեգակն քան զլուսինն: 88 Ջի⁴ ի պակասել լուսոյն արեգական՝ զոր խաւարեալն կոչեմք, յայտնի միջոց արեգական խաւարեալ բոլոր, եւ լոյսն արեգական սակաւիկ իբրեւ ժապաւէն երեւի շուրջ զբոլոր խաւարաւն. եւ այն է լուսին որ կացեալ ընդդէմ արեգական արգել ի մէնջ⁵ զլոյսն: 89 Բայց ոչ որպէս ինքն ամենեւին՝ քանզի փոքր է քան գնա, եւ ո՛չ է բաւական գամենայն զանիւն ծածկել: 90 Վասն այնորիկ իբր ժապաւէն երեւեցաւ լոյս արեգական շուրջ զլուսնաւն: 91 Իսկ⁶ յորժամ սակաւիկ միտ դնիցես յառաջէ որոչեալ⁷ լուսինն. եւ սկսանի մերկանալ մեծացուցանել զլոյսն արեգական: 92 Եւ տեսանես զարեգակն կէս թերի որպէս զլուսին եղջերաւոր⁸, մինչեւ մեկնի ի նմանէ լուսինն: 93 Ջի լուսինն է պատճառ խաւարման արեգական, որպէս արեգակն լուսնի ի թագուցանել զճառագայթս իւր ընդ երկրաւ, որով ծածկեալ ի ստուերէ երկրի՝ լուսին⁹ առանց լուսոյ երեւի: 94 Իսկ ի սորին հակառակէ նոյն¹⁰ անցանէ եւ ընդ արեգակն, ո՛չ միջակաւն որ անջրպետեացն, այլ յորժամ եղիցին երկոքեան¹¹ ի վերնում կի-

սագնդին. քանզի արեգակն գեր ի վերոյ ¹²լուսնի է, եւ լուսին դիպեալ ի ներքոյ արեգական. եւ յորժամ հասարակագոյգ լիցին¹³ ¹⁴մինն զի իցէ ի վերոյ, եւ միւսն ի ներքոյ կշիռ նմին. եւ արեգակն բերանաբացեալ¹⁵ հոսէ հեղլով զբոլորութիւն լուսոյն՝ հանդէպ ուղիղ կշռութեամբ ի ¹⁶միջոյ լուսնին: 95 Ո՛չ թողու անցանել ի ներքին անաւարութիւն աւդոյն¹⁷ որ սիրեալ տարածանի¹⁸ ընդ ծով եւ ընդ ցամաք: 96 Եւ¹⁹ զայս տեսանելով բազումք յանուամնութենէ՝ արեգական կորուստ կարծեն: 97 Իսկ իմաստնոցն յայտնի է իրացն եղելութիւն, որպէս եւ բազում անգամ ասացաք: 98 Եւ է նա նախախնամութիւն Աստուծոյ, ո՛չ միայն զի վայելիցեմք լուսով²⁰ արեգականդ, այլ զի ճանաչիցեմք զմեծ սէր արարչին որ առ աշխարհ²¹: 99 Ջի ահա ոմանք զարեգակն աստուած կարծեցեալ՝ մատուցին երկրպագութիւն, իբրեւ մտաւորի եւ բանաւորի եւ արարչի աստուծոյ: 100 Եւ եթէ գոյր նորա բարբառ, մեծաւ աղաղակու ձայն արձակէր յերկիր ասելով. Ջիս վասն քո արարեալ է՝ եւ դու ի՞նձ երկրպագանես, երկիր. ո՛չ տեսանես զանդադար²² ասպարէզս տունջեան ի գործառնութիւնս եւ ի վայելս ամենայն կենդանեաց, տեղի տուեալ գիշերային մասամբն հանգչել ձեզ ի բազում աշխատութեանցն²³, հայեցարուք եւ յիմ յեղափոխութիւնս, զի ի ձմերայնի²⁴ ցրտա-

1 ՊԴ չի՞ք մեծ
2 ՊԴ գնա փխ զլուսին
3 ՊԴ չի՞ք փոքր... զլուսինն (նախ. 87)
4 ՊԴ քանզի փխ Ջի
5 ԱԲ ի մէջ
6 ՊԴ եւ փխ Իսկ
7 ՊԴ որոչէ
8 ՊԴ եղջիրաւոր
9 Պ լուսինն
10 ՊԴ նոյնն
11 ՊԴ չի՞ք երկոքեան

12 ՊԴ լուսնի է
13 ՊԴ լիցին
14 ՊԴ մինչ զի իցէ
15 Պ բերանացեալ
16 ՊԴ միջոց լուսնին
17 ՊԴ օգոյս
18 ՊԴ տարածեալ է
19 ԱԲ չի՞ք եւ
20 Պ ի լուսոյ
21 Պ առ երկիրս
22 Պ զի անդադար փխ զանդադար
23 ՊԴ աշխատութեանցդ
24 Ա ձմերայնի

նամ, գարնանայնի¹ ծածկիմ ընդ թանճրա-
խիտ ամպովք. յամարայնի ես յիս հրկէզ
լինիմ, եւ յիմ տեւողութիւն եւ յերկիր
աւգտութիւն, յորժամ կատարեմ զգիշերա-
յին ընթացս իմ ի ստուերէ² երկրիս յարեւ-
մտից յարեւելս. եւ ի բերիլն իմ ի վեր՝
զբազմութիւն³ ջուրց ցանեմ զաշխարհաւ՝
զոր եւ զուք ցաւղ անուանէք: 101 Ո՞չ ա-
հա տեսանէք զնահանջմունս երկիրցս ի
տարւոջ եւ զուգաւորութիւնս հանգոյն
նմին. նաեւ երբեմն պակասիմ⁴ ի լուսոյ՝
զոր կորուստ անուանէք: 102 Եւ որչափ
ընդ խանգարմամբք⁵ եմք եւ ընդ բազում
փոփոխմամբք: 103 Ոչ միայն չաստուած

չանուանելով, այլ եւ ո՛չ կենդանի բանա-
ւոր: 104 Այլ քաջ գործ Աստուծոյ որ վա-
րիմ հրամանաւ արարչին, եւ արդար եւ
ճշմարիտ խնամ Աստուծոյ է ի վերայ աշ-
խարհի⁶, որ զմարմինս դարմանէ սննդա-
կանաւն եւ զոգիս առլցուցանէ կատարեալ
գիտութեամբ քննելով եւ ի վերայ հասա-
նելով ամենայն արարածոցս, որ ո՛չ ունին
յինքեանց զգոյացութիւն: 105 Այլ յանեղէ
ուժեմնէ որ էած ի լինելութիւն, եւ բանա-
ւորաց միայն ետ իշխանութիւն ճանաչել
զարարիչն ամենայնի եւ փառաւորել
զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

1 ԱՊ գարնանի

2 Պ ստորեւ

3 Ձեռագրերում՝ բազմութեան

4 Ա պակասի մի

5 Ա խանգար մասամբք

6 Պ երկրի փխ աշխարհի

ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒՆՈՅ ԱՈ ԽՈՍԱԳՅԵԱԼՍՆ
([իամառոտ խմբագրութիւն])

1 Ա. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻ

2 Արդ որովհետեւ 'ի մտաւորն եկաք բան, հարկաւոր է թէ եւ յանմարմինն ելցուք տեսակ. ապաքէն ուստի արժան է սկսանելի է: 3 Իսկ անսկսանելին ասի յանսկիզբն ումեքէ. ապա ուրեմն անսկիզբն անասաց եւ անճառելի մնայ. սակայն իմանալովն իմանի. իսկ որ իմանի՝ ապաքէն մտացն իմանի: 4 Իսկ միտքն զիս՞րդ կարիցեն հասու լինել ասելոյն, եթէ ոչ ունիցին յանկուծիւն 'ի նմին իմանալոյն: 5 Իսկ զոր ունին յանկուծիւն զնորա բերէ զճշմարտութիւնն. արդ եթէ ինքն իմանալին կամեսցի՝ նորուն յանկակցի մտացն, եկեսցէ ճառելին, ոչ զորպիսութիւնն գիտելով, այլ զէութիւն գոյութեանն իմանալով: 6 Քանզի որ իմանալին է՝ եւ անեղ է. իսկ որ անեղ է՝ նոյն եւ անարար է. իսկ որ անարար է՝ նոյն եւ անտեղի է. իսկ որ անտեղի է՝ ինքն է տեղի ամենեցուն: 7 Եւ որ անարարն¹ է, արարիչ է բոլորեցուն. ասացուք զնա եւ անեղանելի. ապա յայտ է թէ եղեալքս 'ի նմանէ առին սկիզբն լինելոյ. իսկ յուժմէ սկիզբն առին՝ նա գեր 'ի վերոյ մնաց քան զսկսեալսն: 8 Այսպէս բարի փիլիսոփայքն մի աստուածութիւն խոստովանելով հրէաբար՝ ասացին եթէ տեսութիւն նորա ոչ մտաւք նկատի, կամ բանիւ բովանդակի, եւ նա է սկիզբն եւ արարիչ ամենայնի. եւ եղեալքս 'ի նմանէ՝ են թուով չորս՝ հուր եւ հողմ, հող եւ ջուր. եւ զհողի՝ աստուածային փչումն ասացին, եւ ոչ նիւթական արարած, թէպէտ եւ արար Աստուած, եւ գիտելի է նմա միայն որ արարն զնա. այլ երկինք եւ երկիր, եւ որ 'ի նոսա, այս 'ի նիւ-

թից կազմեցան հրամանաւ արարչին որ արարն զնա: 9 Եւ ունի խառնուած միաբանութեան առ միմեանս հաղորդութեան. եւ բնութիւն հրոյ՝ ջերմ եւ ցամաք, աւրոյ՝ ջերմ եւ խոնաւ, ջրոյ՝ խոնաւ եւ ցուրդ, հողոյ՝ ցուրդ եւ ցամաք: 10 Եւ 'ի հաղորդելն ընդ միմեանս առնուն եւ 'ի բնութենէ միմեանց: 11 Արդ սոցա արարիչն յառաջագոյն նախախնամութեամբ, տեղի ոչ պատրաստէր, քանզի մարմին գործէր. իսկ մարմնոյ՝ զիրք հաստատութեան պիտոյ էր. իսկ հաստատութեան նախ եւս որ զտեղի ունիցի, եւ այլն ամենայն ընդ նովաւ պատկանիցին: 12 Արդ ահա հասաք 'ի կէտն ոչ դուզնաքեայ, այլ 'ի մեծն եւ յահագին յերկինն վերին, որում Յոյնք եթեր կարգացին, եւ Քաղդէացիք հուր թաղկեալ ասացին, որում եւ բազումք յեկեղեցոյ հաւանեցան: 13 Թէպէտ եւ չարաց փիլիսոփայիցն ոչ թուեցաւ հաճոյ, բայց մեզ աւելորդ է զնոցայն ճառել, լքեալ թողցուք զխոսեալսն, եւ դարձցուք անդրէն 'ի կէտն ահաւոր, որում Յոյնք եթեր կարգացին, եւ Քաղդէացիք հուր թաղկեալ ասացին. եւ է նա մարմին անչարչարելի, հուր պարզ, ո՛չ յուժեքէ, եւ ո՛չ ոք 'ի նմանէ. ինքն յինքենէ, ինքն առանձինն, մարմին անհատ, անտեղիտալի, անկորանալի, անխորշ, անփոփ, անգոգ. պատ առեալ զամենայնիւ, փակեալ զգոյսս ընդ իւրեւ, տարածեցաւ, կալաւ բոլորն բոլորակ երկնից թաղուն սերտութեամբ, զտարերս ընդ իւրեւ. եւ բաւական եղեւ մեծատարած շրջան նորա որ պատեաց զամենայն արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորուածի նորա, բոլորակ գնդաձեւ, զոր տարածեալ ձեւ յաւիտեան կոչեն նոքա, շրջագայ անդադար երազութեամբ, անչափելի եւ անթուելի, միայն իմանալի, ոչ ամենեցուն,

¹ Օրինակում՝ անարմ է

այլ միայն որք զիմանալիս իմանան, ոչ որպէս կամին, այլ որպէս ՚ի գոյացութեան շրջագայութեան, զոր եւ պրկումն անուանեն: 14 Եւ ՚ի ներքոյ պրկմանն ըստ նմին ձեւացեալ կայ հաստատութիւնդ, զոր կոչեմք երկին. եւ ասեն զդմանէ թէ ջուր է եւ աւդ, ոչ պողեալ, եւ ոչ թանձրութեամբ խտացեալ, այլ ջուր է ճշմարիտ որպէս զաստիս լոյծ բնութեամբ: 15 Եւ աւդոյն փշեալ ուռուցեալ գոգացեալ որպէս զպղպղակ, որ փշեալ բոլորովին աւդով ՚ի խոնաւութենէ անձրեւաց, եւ առնուն կերպարանս ըստ աւրինակի գմբեթաց: 16 Նոյնգունակ եւ հաստատութիւնդ փշեալ է աւդով, բոլորեալ պա՛տ առեալ զերկրաւ. եւ աւդ թանձր եւ թաղուն, եւ ամենայնիւ բնութիւն ցուրտ առաւել ՚ի ներքս մտեալ մէջ նորա շուրջ զերկրաւ պատեալ ունի ՚ի ներքոյ պրկմանն արգելեալ սաստկութիւն հողմոյն վերոյ եւ ներքոյ. եւ ՚ի մէջ առ փակեաց զմեծ մարմինս զայս զերկիրս: 17 Քանզի ըստ ձեւոյ բուն երկնի եւ սա բաղկացաւ, կատարեալ զձեւն առեալ: 18 Եւ սա շրջագայ անդադար ՚ի նմանէ հարկաւորեալ, եւ ձեւ բոլոր շրջագային բաժանի յերկուս կիսագունտս. զի իցէ մին ՚ի վերոյ, եւ միւսն հայեսցի ՚ի ներքոյ. եւ հայեցուած երկուց կիսագնտիցն հանդիպութեամբ կշիռ ուղիղ ՚ի վերին եւ ՚ի ներքին տրամագիծն: 19 Նոյնպէս ըստ նմանութեան բուն երկնի ջուրն եւ աւդն ձեւացան: 20 Զայսոսիկ եւ արտաքինքն ասացին. եւ ես հաւանիմ նոցա. մի վասն շուրջ գալոյ երկնից, զի եւ աստուածային գիրք վկայեն, որպէս Յովբայն ասաց Տէր. Գիտիցե՞ս զշրջանն երկնից՞: 21 Եւ դարձեալ վասն երկու երկինս լինելոյ, որում նոյնպէս աստուածային գիրք վկայեն. որպէս յիսկզբանն յայտնապէս ցուցանէ երկու լինել. զոր կոչեն արտաքինքն երկին եւ բուն երկին: 22 Բայց

վասն նիւթոյ հաստատութեանդ միւս երկնի ջուր եւ աւդ լինելոյ՝ բազումք յեկեղեցւոյ վկայեն նոցա. որպէս հայաստանեայցս վարդապետ Սուրբն Գրիգորիոս ասէ ջրեղէն զհաստատութիւնդ երկնից: 23 Երանելին Բարսեղ ՚ի վեցաւրեայն ասէ, եթէ զվերին վայրս աւդոյն հանդերձ խոնաւութեամբ ջրոյն երկինս կոչեաց. ըստ այնմ, թէ թռչունք երկնից: 24 Արդ թռչունք յերկրէ ելեալք, եւ կերակրեալք, եւ ՚ի սմա մեռեալք՝ զիա՞րդ իցեն երկնից, եթէ ոչ զվերանալն յաւդն կոչէ: 25 Եւ դարձեալ ասէ նոյն ինքն Բարսեղ, եթէ յորժամ աւրհնէր Մովսէս զազգն Յովսեփու, ասէր՝ ՚ի ցաւոյ երկնից՞. եւ դարձեալ յորժամ դնէր անէծս Իսրայելի, ասէր. Արարից ՚ի վերայ քո գերկիմս պղնձի՞: 26 Եւ զի՞նչ իցեն միտք բանին, եթէ ոչ՝ ամենեւին երաշտութիւն. զի յաւրինուածոյ պտղոյ երկրի պատճառ՝ աւդոյն խոնաւութիւնն է, որ անուանեցաւ երկինք, որպէս ասելով՝ ՚ի ցաւոյ երկնից՝ զխոնաւութիւն ջուրցն յայտ առնէ զոր ունի աւդն ՚ի վեր, որպէս ցանէ զաշխարհաւ ՚ի պարզ ժամանակի. զայս Բարսեղ ասէ: 27 Բայց զնիւթոյ բուն երկնից բազումք բազում ինչ ասացին, որ յեկեղեցւոյ ոմանք վկայեն նոցա, եւ ոմանք այլ ինչ ասեն, հանգոյն Փիլոնի, եթէ միտք են, եւ ոչ նիւթական ինչ: 28 Եւ վասն երրորդ երկնի արտաքինք ոչ հաւանին, եւ ոչ բնագիրք ինչ ոչ յայտնեցին մեզ. բայց վասն ՚ի Պաւղոսէ կոչելոյ, ես այսպէս հաւանիմ թէ զերկրէս ասիցէ՞. զի ուր Աստուած է՝ երկինք կոչի. եւ փրկչին մերոյ Քրիստոսի Աստուծոյ ՚ի վերայ երկրի շրջելով՝ երկին ասեմ կոչիլ ՚ի Պաւղոսէ. մանաւանդ զի դրախտն յերկրիս, եւ ոչ յերկինս իմանի:

բ Տէ՛ս Բ՝Օբ՝ԼԳ՝13:

գ Տէ՛ս Գ՛Է՝ԻԳ՝19:

1 Օրինակում լուսանցում՝ զդրախտէն

1 Բ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՐԻ

2 Զերկիր ոմանք 'ի բարեաց փիլիսոփայիցն ասացին թէ ձեւացեալ է իբրեւ սկուտեղ, եւ ոմանք ասացին իբրեւ զգունտ, եւ ոմանք իբրեւ զքուէս երկեռակ (երկերրեակ?): եւ 'ի միջոցին երկնի կառուցեալ՝ սաստկութիւն հողմոյ 'ի ներքոյ մտեալ՝ ամբարձեալ ունի զերկիրնս 'ի վեր. եւ ընդ անգայտութիւն ցան եւ ցիր հողմոց երկրի խառնեալ մանրասիք խոնաւութիւն ջուրց, եւ հողմոյն սաստկութեամբ 'ի վեր փչելով եւ երկրիս թանձրութեամբ հողոյն 'ի վայր գալով՝ կափչի հողն յիրեարս, եւ ճնշի իբրեւ 'ի մամուլս մանրասիք խոնաւութիւն ջուրցն 'ի վեր կոյս, եւ խտանայ երկրային մարմինն 'ի ներքոյ ջուրցն, եւ լինի սալայատակ հաստատրամ, անպախելի եւ անպայթելի նեցուկ անվթար, զբազում ջուրս յինքեան ունելով, զոր եւ ծով անուանեմք: 3 Եւ քանզի երկիր չորեքկուսի 'ի միջոցի երկնի կառուցաւ, ոչ թոյլ տայ սմա երկին իւրով երազութեամբն 'ի ներքին կիսագունտն խոնարհել. քանզի երկիր իւրով ծանրութեամբն հակէ 'ի վայր իջանել, եւ հողմ իւրով ուժգնութեամբն ջանայ 'ի վեր բերել զնա. եւ ոչ ծանրութիւն երկրիս թողացուցանէ 'ի վեր բերել, եւ ոչ ուժգնութիւն հողմոյն թոյլ տայ 'ի վայր իջանել: 4 Եւ այսպէս զհասարակակշիռ կէտն կալեալ կայ. եւ յերկոցունց հակառակացն գտրամագիծն ունի: 5 Իսկ կայան սորա 'ի տրամագծի անդ զուղիղ անկիւնս չորեսեան առ միմեանս հայեցուցանէ. եւ 'ի հայել ուղիղ անկեանցն առ տրամագիծսն միջին, զամենայն հարթարտակ զուգամասն զլեռնային եւ զգաշտային եւ զծովային յարմարեալ անվնաս պահէ. զի որք 'ի սայս են՝ անկասկած առցեն զլինելութիւն հրամանաւ արարչին: 6 Եւ եթէ ոք կամեսցի՝ աւրինակ տեսական զարտաքնոցն լսել, իբր թէ զկայս երկրի նմանեցուցանել ինձ 'ի դէպ

թուի ասացեալն իբրեւ զձու. որպէս նորա դեղինն 'ի միջին գնտածեւ կառուցեալ կայ. եւ սպիտակն շուրջ գնովաւ, եւ խեճեան պատ առեալ զամենայնիւ, նոյնպէս եւ երկիրս 'ի միջոցին կառուցեալ կայ, եւ ապա շուրջ գնովաւ եւ երկին պատ առեալ զամենայնիւ: 7 Դարձեալ թէ առցէ ոք աման խեցեղէն, եւ արկցէ անդ ջուր եւ ձէթ եւ աւազ, եւ ահա յայտնի երեւեցաւ. աւազն կալաւ զներքին կողմն ամանոյն եւ ձէթն զվերինն, եւ ջուրն հարկաւորեալ՝ 'ի միջոցին կառուցաւ, եւ ամանոյն մարմինն՝ պատ առեալ զամենայնիւ: 8 Իսկ եթէ տարերքս այսպիսի ունին նմանութիւն ցուցական արարածոցս, ո՛րչափ եւս առաւել արարիչն ամենայնի կամի զի արարածքս այսպէս յաւրինեալ կազմեսցին բնական բերմամբ: 9 Իսկ որ ինչ չարաց փիլիսոփայիցն եղեալ է աւրինակ յաղագս երկնի եւ երկրի՝ ատելի է ինձ 'ի նոցա ասիցն ճառել զբովանդակն բաց 'ի սակաւուց: 10 Աւրինակ ասեն զյարկ աղամանդեայ գմբեթին որ 'ի Կրետէս, եւ զանդրին երկաթի որ 'ի մէջ աւղոյն կառուցեալ կայ՝ ոչ յոք հասանելով. զի ծանրութիւն երկաթոյն 'ի վայր հակէ, եւ զաւրութիւն աղամանդին 'ի վեր քարչէ. եւ ա՛յնպէս կախեալ կայ հնարագիտութեամբ ճարտարին, զոր առաջինքն Կրետացուց զլուխ մեհենաց ունէին: 11 Արդ թէպէտեւ արտաքինքն յաղագս երկրի այսպէս ասացին, եթէ չարքն եւ եթէ բարիքն հանգոյն նոցին, թէպէտ եւ սակաւիկ ինչ մաքրագոյն, բայց ես ոչ հաւանիմ նոցա, յիշելով զաստուածայինն բան որ առ Յովբն ասէ. ՅԷ՞ր վերայ հաստատեցան աղիսֆ դորա՞: 12 Ես արդարեւ անգիտելի վարկանիմ զայն 'ի մարդկանէ. զի թէպէտեւ լսեմ 'ի Սաղմոսարանին թէ 'ի վերայ ծովու հիմունս արկ երկրի՞, կարծեմ թէ վասն զի խառն ընդ

« Յ՞բ. ԼԸ 6
բ Սաղմ. ԻԳ. 2

սանդարամետան է ջուրն, զայնմանէ ասի-
ցէ ջրոյ 'ի վեր ունել զերկիր, տարակուսին
միտքս թէ զիրարդ 'ի վերայ անչափ բնու-
թեան ջուրցն կայցէ անչափ ծանրութիւն
երկրի, եւ ոչ ընկղմի եւ ոչ զերծեալ փրծա-
նի յամենայն կողմանց երկրէ, սորեալ ան-
կանի 'ի ջուրսն: 13 Արդ ես հաւատամ
միւսում Սաղմոսին որ ասէ. ես հաստատե-
ցի զսիւնս նորա^ա. Իբր թէ հրամանն աս-
տուածային կարաւղ է ունել զարարածս
յիւրաքանչիւր կարգի, եւ 'ի մարդկանէ
անգիտելի է:

14 Ասեն արտաքինքն զբնակութիւն
կենդանեաց աստի եւ անտի, եթէ գոն 'ի
ներքոյ երկրի մարդիկ, եւ այլ կենդանիք
որք ընդդիմոտունք են մեզ. որպէս ճանճք
զինձորով պատեալ, նոյնպէս մարդիկ
զերկրաւ. եւ յամառեալ պնդին՝ ասելով. Ե-
թէ ոչ էին ընդդիմոտունք, ո՞ւմ արդեաւք
արեգակն տայր լոյս զկէս աւրն, յորժամ
ստուերաւն զմեզ զիշերացուցանէ: 15 Զի
անաւգուտ արեգականն զընթացս իւր ծա-
խել անհնար է: 16 Այս են անմտութիւնք
մեծ, եւ աւելի թուին ինձ 'ի սոցանէ ասա-
ցեալքն. թողում ասել զյանդիմանութիւնն
որ յաստուածային գրոց: 17 Բայց յորժամ
մարդկային իմաստիւք հայիցիս, յայտնա-
պէս երեւի անմտութիւն նոցա ճառիցն. զի
թէ աստէն իսկ յաշխարհի, բազում այն է
որ անբնակաց եւ անկենդանեաց տայ ար-
եգակն զլոյս, քան որ բնակաւորքն են
տեղեաւք, եւ յորում գոն կենդանիք, որ-
պէս հիւսիսայինն 'ի սառնամանեացն է
անկենդանի, եւ կամ հարաւայինն երկիր
յաւելորդ ջերմութենէն, զոր այրեցական
զաւտին կոչեն, կամ անապատն արեւելից,
որ եւ ոչ 'ի գեռնոց անգամ գտանի:
18 Բայց պարտ է մեզ զերկբայանալ
խորհրդոց իմոց պատմել ձեզ որ ինչ յա-
ղագս այսր եղեւ. թէպէտեւ լսէի 'ի մար-
գարէից եւ յամենայն աստուածային գրոց,

եւ 'ի վարդապետաց եկեղեցւոյ, թէ ոչ գոն
այլ ներքնաբնակ կենդանիք, սակայն ես
հաւանեալ էի ընդդիմոտունս մեզ լինել, եւ
ըստ իմոց խորհրդոց զաստուածային
զբանն ձեւանալ համարէի: 19 Եւ արդ մի՛
զիս եպերէք սիրելիք, զիտէ ծածկագէտն
զի ոչ ստեմ. մինչդեռ էի առաւաւտին յա-
ղաւթսն 'ի վկայարանին Սրբոյն Եւգի-
նեայ, եւ միտքս յայս խորհուրդս ծփէին,
քուն էառ զիս, եւ տեսանէի որպէս թէ ա-
րեգակն 'ի ծագելն խոնարհէր յերկիր իջա-
նել, եւ ես յառաջս ընթանայի, եւ 'ի գիրկս
ընդունէի զնա, եւ նա էր պատանի ան-
մաւրուս ոսկեղիտակ, եւ շրթունք բերանոյ
նորա որպէս թէ ոսկեով լինէր աւծեալ. եւ
ինքն սպիտակս եւ փայլունս ունէր հան-
դերձս, եւ լոյս սաստիկ ելանէր 'ի բերանոյ
նորա: 20 Եւ ես ասացի ցնա թէ 'ի վաղըն-
ջուց ցանկացեալ էի 'ի քէն լսել բան. արդ
աղէ՛ պատմեա՛ եթէ յորժամ ծածկիս 'ի
մէնջ, ո՞ւմ տաս լոյս. գո՞ն այլ կենդանիք
'ի ներքոյ երկրիս, թէ ոչ. եւ նա ասէ. Ոչ,
այլ լերանց եւ անփայից ձորոց եւ անձա-
ւաց անկենդանեաց տամ լոյս: 21 Եւ իմ
պատմեալ զայս վարդապետին իմոյ, եւ նա
ասէ. Զիս ընդէ՞ր ոչ հարցանէիր զայդ. եւ
նա եցոյց ինձ զճառս երանելոյն Ամփիլո-
քոսի որ մեկնէր զգիրսն Յովբայ 'ի
խաւսսն Տեառն որ ասէ այսպէս. Զի՞նչ
վայրբ իցեմ ուր ծածկեմ ես զարեգակն 'ի
գիշերի յերեսաց ամենայն կենդանեաց^բ:
22 Արդ պարտիմք հաւատալ մեծի վար-
դապետին, եւ նորուն նմանեաց արանց
աստուածայնոց, եւ ոչ արտաքնոց. եւ
զշարժմանց երկրիս ես հաւատամ Սաղմո-
սին որ ասէ. Ո՞ հայի յերկիր եւ տայ դողալ
սմա^գ. եւ կամ որպէս 'ի Յովբն պատմի. ե-
թէ՛ Ո՞վ շարժէ զառ 'ի ներքոյս երկնից 'ի
հիմանց, եւ սիւնք նորա դողան^դ:

« Սաղմ. ԸԳ 4

բ Լուսն. Յոթ ԼԸ 19:
գ Սաղմ. ԸԳ 32
դ Յոթ. Թ 6

1 Գ. ՅԱՂԱԳՍ ԾՈՎՈՒ

2 Զծովէ ասեն խելագարեալ փիլիսոփայքն հեթանոսաց, թէ պա՛տ առեալ զերկրաւ, եւ ՚ի միջի ծովու է երկիր իբրեւ կղզի մի, եւ ջուր ՚ի վերայ աւգոյ եւ ՚ի կողմանէ. իսկ որ ՚ի վերայ երկրիս են ծովք՝ ընդ որս շրջին մարդիկ՝ գոյ նոցա եզերս, սպառուածն եւ բաւանդակածն, եւ ՚ի սմա են ձկուք, եւ այլ կենդանիք բազումք:

3 Իսկ ՚ի ծովուն, որ շուրջ պատին զերկրաւ, ոչ գոն ՚ի նմա կենդանիք, եւ ոչ եզր սպառուածի. քանզի ոչ երկիր, եւ ոչ այլ ինչ կայ զնովաւ, եւ ոչ արեգակն անցանէ զնովաւ, այլ ընդ եզր նորա առ երկրաւ մտանէ եւ ելանէ:

4 Փիլիսոփայքն բարիք ասացին զծովէ թէ այս իսկ է որ ՚ի վերայ երկրի է, եւ ՚ի մէջ ընդ որ շրջին մարդիկ, եւ ոչ գոյ այլ ծով արտաքոյ երկրի. եւ այս ծով թէպէտ սահմանաւ գատեալ են ՚ի միմեանց, այլ մի՛ են. զի ծակք են ՚ի միմեանս ներքոյ երկրիս, եւ յատակք ամենեցունց ՚ի միմեանս հային. թէպէտ եւ յոյժ հեռի են ՚ի միմեանց վերին սահմանաւքս, եւ ես հաւանիմ այսմ. զի աստուածային գիրն հանգոյն սոցա ասէ. Ժողովեսցիմ ջուրքն որ ՚ի ներոյ երկնից՝ ՚ի ժողով մի՞. յորմէ մարթի իմանալ թէ խառնին ՚ի միմեանս, եւ զուգեալ լինին ՚ի մի. եւ դարձեալ ասէ. Զժողովս ջուրցն կոչեաց ծովսէ. եւ ահա յայտ է թէ որոշեալ սահմանաւք եցոյց զխորշս գոգոցն որ են յամենայն կողմանս երկրի. եւ ունին իւրաքանչիւր խորշքն առանձին կերպարանս, եթէ ծովն հարաւոյ, եթէ ծովն արեւելից, եթէ ծովն հիւսիսոյ, եթէ ծովն արեւմտից. եւ անուանա ունին իւրաքանչիւր գոգքն բազում ծովուց. զի մին անուանեալ կոչի Պոնտոս եւ Եւքսինոս, եւ միւսն Պրոպոնտոս եւ Հելլեսպոնտոս, եւ միւսն Էգէոս եւ Յունիոս, եւ միւս ծովն Սարդոնիկեայ աշ-

խարհին, եւ միւսն Սիկիլիայ աշխարհին, եւ միւսն ՚ի Տիւրոսի, հանդերձ այլ եւս բազում անուամբք, որ անցանեն զթիւ եւ զհամար. եւ են այլ եւս բազում ծովակք որք ոչ են յաշխարհածովէն՝ թէպէտեւ զդառն եւ զաղի ճաշակս ունիցին, եւ աւազով սահմանեալ գտանիցին ըստ աւրինակի կերպարանաց մեծաց ծովուցն:

5 Սակայն ոչ է պարտ զծովակսն ծովս կոչել. ոչ զԱսիալդէս ծովակ որ մաւտ յաշխարհն Հրէաստանի է, եւ ոչ զՍերբինիդիս ծովակ որ է ընդ Եգիպտոս եւ ընդ Պաղեստինէ ՚ի միջի, եւ գայ հասանէ յաշխարհն Արաբացոց: 6 Եւ ոչ մեր աշխարհիս ծովակս զոր կոչեմք Բզնունեաց, եւ ոչ այլք որ յարեւելս են որ կոչին նոյնանմանք. զի սոքա զոր ասացաք՝ ծովակք են եւ ոչ ծովք: 7 Թէպէտ եւ ասեն ամանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա, եւ զնորուն ընկերէ որ կոչի Ասպիս, եթէ գատեալ մեկնեալ են ՚ի բուն ծովէն, այլ որ փոյթ յանձին կալան զաշխարհ ամենայն ՚ի գիր առնուլ, որպէս յառաջն ասացի, ասեն թէ ծակք են ՚ի միմեանս ծովքն, եւ երթան կցին ՚ի միմեանս ներքոյ երկրի. որպէս զի լինի ըստ աստուածային գրոցն ժողով ջուրցն մի: 8 Բայց վասն միակշիռ կալոյ ծովու, եւ ոչ լնլոյ ՚ի գետոց եւ յուղից ըստ բանին Սաղոմովնի, որ ասէն թէ՛ Ամեցայն ուղիս ՚ի ծով գնան, եւ ծով ոչ է լցեալ՞, փիլիսոփայքն բարիք ասացին վասն միակշիռ կալոյ ծովու, թէ՛ ջերմութիւն արեգականն ծծէ քաղէ զքաղցունսն եւ զնուրբսն եւ զթեթեւսն գոլորշեալն հանէ յաւդսն. եւ թանձուքն եւ ծանունքն անդէն մնան, այսինքն պղտորեալքն եւ մրրկեալք, եւ որ անդէն մնան են աղի եւ դառինք. վասն այնր է ծով միակշիռ եւ ժահահամ, զի գոլորշին որ ձգեցաւ ջերմութեամբ արեգականն, պակասեցոյց զյաւելուածն, եւ տարաւ

» Եւ. Է 9
է Եւ. Է 10

զ Ժ. Է 7

գթադցրութիւնն: 9 Եւ աւրինակ տան զկաթսայս եւ զսանս լի ջրով եռացուցեալ 'ի հրատի: 10 Միտ դիր թէ զիա՛րդ ելանէ թերութիւն ջրոյն գոլորշեան որ ելանէ 'ի նմանէ. զի թէ յերկար թողցես 'ի բորբոքեալ հրատին, եւ ոչ յաւելցես ածել 'ի նա ջուր՝ ամենեւին սպառի. նոյնպէս ծով գուգեալ կայ յաւելլոյ գետոց եւ ուղխից եւ պակասելոյ գոլորշւոյն զոր ձգէ արեգակն տապովն իւրով եւ հանէ յաւդս: 11 Ասեն աւրինակ 'ի նաւավարաց որոց թէ պակասէ ջուրն, ասեն, 'ի ծովու՝ առնուն ջուր գաղին եւ զդառն, եւ արկանեն 'ի կաթսա եւ եռացուցանեն 'ի հրատի, եւ դնեն սպունգս մեծամեծս խփունս կաթսայիցն եւ 'ի խոնաւութենէն զոր առնուն սպունգքն 'ի գոլորշւոյն՝ ջուրս քաղցունս ժողովեն քամելով: 12 Եւ այսպէս հնարագիտութեամբ առնեն դարմանս կենաց իւրեանց 'ի նեղութեան ջուրցն նուազութեան, յորժամ նուազի 'ի ծովու: 13 Արդ թէպէտեւ աւրինակս հաւանականս տան արտաքինքն, սակայն ինձ ոչ է հաճոյ. քանզի հաւատացեալ եմ թէ հրաման աստուածային է որ ունի զծով միակշիռ արգելեալ, ըստ բանի Սաղմոսին որ ասէ. Սահման եղ որ ոչ անցանէ, եւ ոչ եւս դառնան ծածկել զերկիր՝ որպէս զառաջինն. քանզի ինքն ասէ Տէր. փակեցի զծով դրամբք, եղի նմա սահման. ասացի՝ ցայդ վայր եկեսցես եւ այլ մի անցանիցես, այլ այդրէն 'ի ճեղ խորտակեսցիս արիւմբն: 14 Արդ եթէ գնալոյ ջուրցն յերեսաց ծովու ոչ արեգակն եղեւ պատճառ, այլ հրամանն աստուածային. զի յառաջ քան զլինել իսկ արեգական ժողովեցան ջուրքն 'ի ժողովս իւրեանց, եւ ցամաքեցաւ երկիր, ապա յայտ է թէ 'ի հրամանէ Աստուծոյ արգելեալ կան ծովք միակշիռ, զի մի դարձցին 'ի ծածկել զերկիր:

« Հմմտ. Սաղմ. ճԳ. 9:
 ք Յոթ. Լ. Ը 8-12

1 Դ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ԶԱՐԴՈՒՑ

2 Որ ինչ յազագս երկնային զարդուց 'ի մէջ Քաղզէացուցն պատմին բանք բաջաղանաց, աշխատութիւն անշահ համարիմ զստութիւնս նոցա: 3 Յառաջ ժամանակաւ մարդք իմաստասէրք որք գանձինս իւրեանց 'ի սկզբանէ մանկութեան իւրեանց ետուն 'ի դեգերումն երկնային տեսութեանն, եւ զբնութիւն իմաստութեան 'ի վար արկին, հասու եղեալ ամենայնի գեր 'ի վերոյ երկնածեմք երեւեցան, եւ պսակս եւ աշխարհս եւ գոհութիւն 'ի մեծամեծ թագաւորաց ընկալան: 4 Իսկ վարդապետք եկեղեցւոյ կարգի ուսումնասիրութեան գանձինս տուեալ՝ անցին ընդ ամենայն ճգնութիւնս, պահելով զաստուածային հաւատս մկրտեցան 'ի խորս գիտութեան. քանզի գրաւոր արկէնք ոչ ընդդիմանան բնական գիտութեանն: 5 Ապա թէ միաբանութիւն է, դաստիարակ եղեն մեզ առաջին իմաստասէրքն. զի նոցա տեսակ քննութեամբք յորոց ճշմարիտքն ասացան. եւ մերոց հարցն առաջնոց ընկալեալ 'ի նոցանէն զտրամագիծան ասացեալս, զի յերկոցունց՝ յարմատոցն եւ 'ի ծայրէն պահելով մեզ զաստուածային հաւատսն, պտղով ծայրին աուլցեալք, եւ հաստատուն արմատովն միշտ դալարաբերեալ՝ պտղաբերք լիցուք 'ի գիտութեան:

6 Արդ ահա եաւթն պարունակք ասեն հարկաւոր շրջագայց ընդ հրային կամարին երկնի, ընդ որ շրջին աստեղքն 'ի նոսա, եղեալ դիգեալ զմիմեամբք 'ի մէջ միմեանց աստիճանեալք: 7 Եւ այսպէս յամենեսեան գնան աստեղքն հակառակ ընդդէմ 'ի ներքնումս: 8 Լուսին բերի յիւրում գաւտուղն. եւ 'ի վերայ նորա հինգ աստեղք մոլորակքն բերին յիւրում գաւտուղն. եւ 'ի վերայ նոցա արեգակն բերի յիւրում գաւտուղն. եւ են ամենեցուն ցրտութիւն եւ միջնորդեն արեգական եւ արփւոյն. եւ գանշէջ տոչորումն արփւոյն՝

իւրեանց բնական ցրտովն սաստիկ բարե-
խառնութիւն առնելով, արեգականն մա-
տուցանէ աւզնութիւն: 9 Իսկ արեգականն
առեալ հեղու 'ի ներքին գաւտիսն. եւ 'ի
ձեռն մոլորականացն սփռեալ տարածանէ
ընդ երկիր աւդով եւ լուսով. զի աւզն ու-
նիցի զհոգութիւն. եւ լոյսն զարեգակնա-
յին մասն հրոյն. եւ 'ի ձեռն երկուցս այս
նուրբ եւ անաւար տարերցս կենդանած-
նեալ լինի երկիր, աւզնականութեամբ ծո-
վային ջրով, բոյսք խոտոց եւ պտուղք ծա-
ռոց եւ շարժուն կենդանի շնչաւոր, եւ ա-
մենայն սողուն, հետեւակ եւ թռչուն. եւ
սեռականք՝ գազանք եւ անասուն, եւ
նուագութիւնք եւ աճմունք, ապականու-
թիւն մարմնոյն, լրմունք եւ պակասու-
թիւնք ուղղոց եւ անասնոց եւ մարդկան:
10 Նոյնպէս արեանց եւ շնչոց, առ 'ի լի-
նելութիւն եւ ապականութիւն. զի լինելու-
թիւն սկիզբն է ապականութեան եւ ապա-
կանութիւնն դարձեալ՝ սկիզբն է լինելու-
թեան: 11 Զի յայսմ անվնաս հակառակու-
թենէ՝ աշխարհ առցէ գտեւողութիւն:

1 Ե. ՅԱՂԱԳՍ ՈՐ 'Ի ՄԷՋ ԵՐԿՆԻ ԵՒ
ԵՐԿՐԻ ՇԱՐԺՄՈՒՆՔ

2 Ամենայն արարածքս առ 'ի յաւ-
գուտ մարդկան եղեն ըստ բարերարու-
թեան եւ մարդասիրութեանն Աստուծոյ.
զի որպէս պատճառք ճշմարիտ արարչու-
թեանն, նոյնպէս եւ անսխալ մատակարա-
րութեանն: 3 Արդ է բնութիւն մի՝ հողմ,
եւ ամպ եւ ձիւն եւ եղեամն եւ աւդ եւ
ծիածան եւ ձայն որոտման, նոցին սակի
են եւ շանդիք եւ ցոլմունք: 4 Եւ 'ի սոցա-
նէ որ սեռական է եւ պատճառ առ 'ի պէտս
աշխարհի կելոյ. եւ են 'ի սոցանէ որ հետե-
ւանք են սեռից. եւ գոյնք առ 'ի տեսու-
թիւն եւ երեւմունք նշուլից: 5 Արդ հող-
մոց սեռ՝ ցրտութիւն. իսկ մասունքն 'ի բա-
ժանմունս բազում. թանձրութիւն գործի՝
համբառնալով զծովային ջուրս, եւ լեռ-
նայնոյն եւ դաշտայնոյն առ 'ի հասարա-

կութիւն մատակարարելով: 6 Իսկ առ յոյժ
ցրտութիւն ձմեռնային ժամանակին ինքն
ամպն կոտորատի հանդերձ խոնաւու-
թեամբն, բաժանի, բրդի, լնանի, դիզու 'ի
բարձրավանդակ վայրսն, զոր ձիւն ա-
նուանեմք: 7 Իսկ նոյն ցրտութեանն 'ի
պարզ ժամանակին յորժամ ջինջ երկինն
լինիցի՝ 'ի խոնաւութենէ վերնոյն ձիւնա-
կերպ իջեալ սփռմամբ անաւարութեան
հողմոյն, զոր սիրդ կոչեմք, դնի 'ի վերայ
երկրի, զոր եղեամն անուանեմք: 8 Իսկ 'ի
պարզութեան անուշութեան հողմոյն 'ի
ձեռն հրային մասինն սփռի տարածանի
առ երկրաւս առ 'ի ծծումն կենդանեաց
աճմանց եւ նուագութեանց, զոր եւ աւդ
սովորեցաք ասել: 9 Իսկ 'ի գարնանային
ժամանակին յոլովք լինին անձրեւք, եւ ա-
րեգակն 'ի հարաւային միջաւերայն մեր-
ձեալ, եւ ջերմութիւն եւ խոնաւութիւն յի-
րեարս խառնեալ, եւ փարատեալ անձրե-
ւին, յաւդէն 'ի ներքուսդ 'ի վեր գոլորշիք
խոնաւութեանն ընդդէմ ձգման արեգակ-
նային նշուլիցն սփռմամբ անաւարու-
թեամբ աւդոյն եւ զգենու զգոյնս ազգի.
եւ ըստ երկնային գնդին երեւի կամարա-
ձեւ, ողորկակալ զոր եւ մարդիկ աստուա-
ծակամար կարդացին. եւ է նշանակ դա-
դարման եւ փարատելոյ յորդ անձրեւաց.
բայց թէ կրկին երեւեսցի՝ երփն երփն գու-
նաւք զգաւազանսն ձգելով, զսաստիկ
անձրեւաց եւ զղողացուցիչ յորդութեանց
յայտ առնէ: 10 Իսկ մեկինն զդադարումն
եւ զփարատումն: 11 Քանզի էր սա 'ի
սկզբանէ ընդ երկնի, զի հետեւանք են
տարերց. որպէս մղտութիւն ծխոյ՝ առ 'ի
պարզիլ քամիլ գէջ խոնաւութեանն հրա-
յին կերակրոյն. եւ ապա յստակիլ սրբիլ
լուսատեսիլ բոցոյն: 12 Արդ 'ի սկզբանէ
լինելութեան երկնի եւ երկրի, եւ 'ի սկսմա-
նէ անձրեւացն էր տեսիլ նշանիս այսորիկ,
որով մարդիկ նշանակիցեն զդադարումն
յորդ անձրեւաց. սոյն զսա յաւուրսն յա-
ռաջինս արկածից անչափ անձրեւացն՝ ո-

րով դատեցաւ զդարն առաջին, դնելով ուխտ ընդ արդարոյն, թէ այսպիսի հեղեղ բարկութեան այլ մի՛ եկեսցէ յերկիր: 13 Իսկ սովորական անձրեւն որ յառաջ քան զՋրհեղեղն էր, եւ ձգումնն երեւմանն որ էր յառաջ քան զՋրհեղեղն, լիցի եւ գկնի Ջրհեղեղին, եւ անձրեւք եւ նշոյլք, յորմէ բաղկանայ ձեւ կամարին իբրեւ բազմատեսիլ երանգոց: 14 Եւ մարգիկ հայեցեալք ընդ այս, ակնկալութիւն յուսոյ լինի ըստ առաջին յարմարական արարածին: 15 Իսկ որոտումնդ որ լինի յանկարծակի՝ ՚ի յեղանակս երից ժամանակաց, եւ ձմերանի ոչ երբէք լինի, այլ ՚ի գարնայնի յաճախ եւ սաստկագոյն, ասացից որպէս են, եւ վասն է՞ր են: 16 Քանզի ձմերանի ստերջանան ամպք. եւ որ բերինն ՚ի խոնարհ՝ ինքեանք են այնք հանդերձ ջրային խոնաւութեամբ, վասն որոյ եւ ոչ ձայն կարեն հանել: 17 Իսկ գարնանային ժամանակին աւզն պարարի՛ խոնաւութեամբ. եւ յարեգականային ջերմութենէն ջրանայ գհարատութիւն. եւ առ ՚ի յոյժ փոթորկելն խոնարհի ՚ի ծով, եւ բերանացեալ համբառնայ զՋուրն ՚ի վեր. եւ ՚ի սաստիկ արբմանէն ծանրութեամբ յառաջ խաղայ. իսկ այլ հողմք շուրջ պատեալ գնովաւ գաւրէն կառավարի, գերասանակս ՚ի ձեռն առեալ ստիպելով անցանէ յերկնային ասպարիսին. իբր առաջին եւ միջին եւ վերջին բախմունս, եւ ճայթմունս գործեն, չկարացեալ ընդ գայտութիւն մարմնոյն միանգամայն հոսել զբազմութիւն ջուրցն ծովային, գաւրէն դժուարածին կանանց բարձրաճիչ ձայնս արձակեն, զոր որոտմունս անուանեմք: 18 Եւ այս ոչ դուզնաքեայ եւ դատարկ իրաւք. քանզի ՚ի կենդանածննդոց մարդկան յորժամ որք յոյժն դժուարին՝ շիկնելն եւ շառագունելն եւ մեծաձայն աղաղակելն ոչ այլ ինչ է, այլ որչափ գհողին յինքն քաղէ եւ գձայնն ՚ի վեր բարձրացուցանէ, շնչերակքն ՚ի խոնարհ կոյս գմարմինն ճնչէ. զի որ ՚ի ներքս

իցէ՝ բռնադատեալ ուժով ՚ի վայր բերցի. իսկ որ թէ առ ոմանս այսպիսի բնական հնարիւք վարիցիմք, ո՞րչափ եւս առաւել մեծ մարմին ամպոց որ է պատճառ երկրային մարմնոյն թանձրախիտ, քան գձմեռնային ժամանակին որ պաղեաց, ձուլեաց, սառեաւ, ընդարմացոյց զբերրի հող արգաւանդահող տեղեացն, սոյնպէս եւ գամենայն առապարս: 19 Արդ ոչ միայն սա կարաւտ է ջերմութեան եւ խոնաւութեան, այլ եւ ձայնի արձակման յերկնուստ. զի ՚ի սաստիկ ճայթմանէ աւզոյն շարժամբ խտացեալ թանձրութիւն հողոյս թուլասցի, եւ ՚ի դալարաբեր արմատոյն բոյսք խոտոցն վերընձիւղեսցին: 20 Սոյնպէս եւ պտուկք ծայրիցն ծառոց բացեալ փթթիցին, եւ այլքն ըստ իւրաքանչիւր կարգի՝ գձմեռնային ծանրատաղտուկ թախծութիւնս ՚ի բաց ընկենուցուն, զարթուցեալք եւ զուարճացեալք յոյժ պայծառութեամբ երկիր առնուցու գվայելչութիւն: 21 Ապա թէ լինիցի ինչ հետեւանք վնասուց ՚ի սաստիկ որոտալոյ, իբր թէ կարկուտք եւ հրաձգութիւնք, այս ՚ի վրէժխնդրութիւն անզգամաց, եւ ՚ի խրատ այնոցիկ որ գահ եւ գերկիւղ արարչին չունիցին յանձինս իւրեանց: 22 Քանզի մարդկան իշխանաց գործիք են տանջանաց գաւազանք, չարիք, շղթայք, պէսպէս մենքենայք, եւ մարդիկ սպասաւորք եւ ստրուկք: 23 Ոչ զի մարդատեացք իցեն թագաւորք, այլ յառաջահողակք, շինիչք եւ խաղաղասէրք, կարգիչք եւ յաւրինիչք գեղեցկադիր աւրինաց: 24 Իսկ վերին թագաւորն արարչական գաւրութեամբն բարերար եւ մատակարար եւ մարդասէր: 25 Իսկ դատողականաւն խրատիչ եւ կազմիչ, եւ լսեն ամենայն տարերքս, եւ ահաւորութեամբ կան ՚ի սպասու: 26 Անչափութիւն անձրեւաց ողողանեն, եւ երաշտութիւնք գերկիր դալարաբեր ցամաքեցուցանեն, եւ ժանտախտք, սուր, հիւանդութիւնս, մինչեւ հարկանել մարդ եւ անասուն առհասար

րակ: 27 Իսկ յորժամ յանհնարին ցասումն ումեք բրդիցի, որպէս երբեմն ուրեմն 'ի վերայ Սողոմացոցն 'ի յերկնէ 'ի հրեղէն մարմնոյն կոտորատեալ 'ի վայր հոսեցուցանէր: 28 Զոր եւ ալսաւր 'ի նմին մարմնոյն անկեալ յերկիր՝ շանդի՝ անուանեմք: 29 Եւ հասեալ իբրեւ կենդանի մտաւոր՝ զբարկութեան հրամանն կատարէր. եւ չղաղարելով ծակէ զթանճրութիւն երկրի, թափ անցանէ 'ի ներքին կիսագունդն. զի ուստի հատանն՝ անդէն գտեղի առցէ: 30 Սորին հրոյ սակի է գոր ցումունք աստեղաց անուանեմք. քանզի առ 'ի յոյժ բախմանց շրջագայ պարունակացդ շարժելով գլարմարական զնացս՝ երեւումն լինի վերին լուսոյն, իբրեւ ընդ անաւսր փապարս ինչ աւդեղէնս. եւ 'ի յաղամողել լուսոյն էառ փայլատակիւն՝ առ 'ի ցըրուել ուժգնութեան աւդոյն, եւ վաղվաղակի ժողովումն ծածկութի անդրէն լինի: 31 Եւ մեք հայեցեալք 'ի հեռաստանէ, չկարացեալ ճշմարտութեան իրացն 'ի վերայ հասանել հաստատութեամբ, աստեղ թափելոյ նշան առնեմք գայն, եւ ոչ լուսոյն վերնոյ, որ է ճշմարիտ: 32 Բայց ոմանք 'ի փիլիսոփայիցն որ յեկեղեցւոջ ասացին թէ է հողմ սառնային եւ թանճր, որ եւ զնա եթեր կոչեմք, նա խոնարհի յամպն, եւ զջուրն իբր ոլոռն սառոյց զնդէ, եւ այն է կարկուտ: 33 Եւ ասեն թէ զորոտումնդ այն հողմն առնէ, եւ զփայլատակմունս. զի ամենայն արարածք բնութեամբ ունին յինքեանս հուր, եթէ ցամաքայինք եւ եթէ խոնաւայինք. եւ 'ի բախել հողմոյն զամպն՝ հուր ելանէ յամպոյն, եւ ձայն ճայթմանց բախմամբ հողմոյն: 34 Եթէ սակաւ բախէ, սակաւ եւ հուրն ելանէ, եւ ձայնն. եւ անդէն ընդ ամպն անցանի, 'ի վեր բերելով աւդոյն: 35 Եւ եթէ ուժգին բախէ հողմն, ուժգին եւ ձայնն եւ հուրն ելանէ. եւ չզաւրէ աւդն՝ 'ի վեր ցանել զնա ընդ ամպն, 'ի խոնարհ անկանի. եւ 'ի տեղին յոր անկանի՝ խաղաղութեան ակն ոչ ու-

նիմք: 36 Բայց մեք որ զհուրն յառաջ տեսանեմք եւ ապա զորոտն լսեմք՝ ա՛յն է պատճառ զի թէպէտ յամպոյն զոյգ ելանէ ձայնն եւ հուրն, այլ մեզ հուրն առաջոյ երեւի, քանզի ակն երազ է քան զուռնկն. եւ ակն փոյթ կարէ տեսանել հեռագոյն զհուրն՝ յորժամ յամպոյն ելանէ: 37 Իսկ զձայնն ունկն ոչ կարէ լսել մինչեւ 'ի մաւտ հասանէ: 38 Եւ զցումանէ աստեղացդ ասեն թէ հողմն այն 'ի պարզ ժամանակի բախէ անդէն ինքն զինքն, եւ հուր ելանէ, որպէս յամպոյ. բայց անաւսր ելանէ 'ի հողմոյն, եւ ո՛չ որպէս յամպոյն. եւ աւդովն վերաբերեալ անդէն ամփոփի:

1 Զ. ՅԱՂԱԳՍ ԿԱԹԻՆ ԾՐՈՅ

2 Կաթին ծիր որ անուանեցին՝ ոչ այնպէս է որ չար փիլիսոփայքն առասպելաբանեցին բազում բանիւք: 3 Քանզի ոմանք ասացին զդմանէ թէ ճանապարհ է հին, արեգական հետ. իսկ այլք տգիտագոյնք քան զնոսա՝ առագաստ ասեն Պերսեփոնայ, զոր սպիտակ սուգ կոչեցին Աթենացիք: 4 Այլք 'ի նոցանէ՝ Հերակղէս ասեն՝ զանդէս Գէրիոնի ընդ շաւիղ վարեաց: 5 Նա եւ այլք եւս ըստ նոցին արուեստի՝ տարածումն է ասեն ստեանցն Հերայ՝ կնոջն Արամագղայ: 6 Դարձեալ ոմանք յառաջնոցն Հայոց ասացին՝ թէ խիստ ձմերանի վահագն՝ նախնին Հայոց՝ գողացաւ գլարդն Բաղտամայ Ասորուոց նախնոյն. զոր եւ մեք սովորեցաք բնախաւսութեամբ՝ Յարդգողի հետ անուանել: 7 Թողէ՛ք 'ի բաց գայդ, ո՛վ աստուածասէր լսաւդք, եւ մի՛ գայդպիսի բան լսէք. քանզի փիլիսոփայքն բարիք ասացին զդմանէ թէ խիտ աստեղք են բազումք, յոյժ ընդ աղաւտ երեւմանէն՝ միաւոր լոյսն տեսանի: 8 Իսկ մեք որ եմք աշակերտք վարդապետաց եկեղեցւոյ, ասեմք՝ թէ ամենայն զգայութիւնքս վերինք եւ ներքինք ունին խառնուած միաբանութեան առ իրեարս. եւ է՛ դա անգայտութիւն գաւտեացն վեր-

նոց, զթաղկեալ հրոյն նշոյլս հեղլով 'ի վայր՝ երեւումն գործէ տեսողացն: 9 Այս է նորա պատճառն ճշմարիտ:

1 Է. ՅԱՂԱԳՍ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍՏԵՂԱՑ

2 Աստեղացդ՝ զոր կոչեն բեւեռս երկնից՝ որ 'ի տեղն գան շուրջ եւ ոչ ծագեն յարեւելից եւ գան 'ի մուտս. եւ սայլք աստեղացդ՝ որք դէմ ընդ դէմ գաւրէն անուոյ հոլովին, եւ այլ խումբքն՝ որ շուրջ գնոքաւք են, մշտագայ երեւմամբ շրջագայանան՝ ոչ երկրորդեցից զանհամոցն ճառս. զի յոլովս ասել զսուտն՝ ճանճրոյթ ձեզ լինի: 3 Այլ ասասցուք որում հաւատացեալ եմք: 4 Են դոքա նշանակ տեսական, զի երեւակի են եւ իմացական գանտեսին զարփւոյ բերեն նմանութիւն, շրջագայութեամբ ծառայական հասարակութիւն գործելով. բաժանեալ երից հատածաց ուղեգնացութեամբ ծովային ճանապարհաւն. միաբանութիւն առնել ցամաքայնոցս: 5 Քանզի եթէ ոչ էր տուեալ՝ եւ ոչ առնոյր. եւ կարի գեղեցիկ. քանզի 'ի բաժանեցելոյն կարաւտութիւն գործեցաւ. իսկ 'ի ձեռն նաւավարութեանն զիւրաքանչիւր պիտոյսն զիւրամատոյցս մերձեցոյց. որում որք տեղեակն են, եւ սովորութիւն է անսուտ բանիւք զճշմարիտն ասել: 6 Զցերեկ ասէ յածեալ մոլորի նաւն. եւ 'ի գիշերի 'ի ձեռն երկնային արջոյդ երթայ ելանէ յուղորդ ճանապարհն: 7 Եւ այս ոչ դոյզն նախախնամութիւն է արարողին բոլորեցունց. զի 'ի ձեռն սայլիցդ ոչ միայն ապրի նաւն եւ նաւավարքն՝ այլ եւ բազում բիւրք 'ի նաւահանգիստն զիւրաքանչիւր կարաւտութիւնս բարձեալ տանին 'ի տունս իւրեանց: 8 Ապա թէ այդ այդպէս իցէ, ոչինչ է յէսդ երկնից վայրապար եւ դուզնաքեայ, այլ առ 'ի մեծ աւգտութիւն մարդկան, եւ 'ի փառս արարչին, ամէն:

1 Ը. ՅԱՂԱԳՍ ԼՈՒՍՆԻ

2 Զերկրորդ լուսաւորէդ բիւր բանք են ճառեալք եւ յարտաքնոց եւ յեկեղեցականաց. բայց մեզ որ ինչ միաւորեալ է յերկոցունց, յայնց հաճոյ թուեցաւ ասել: 3 Նիւթ ամանոյն լուսնի նմա միայնոյ է գիտելի որ արարն գնա: 4 Բայց առաջինքն որ ջանացան հասու լինել նմա, այսպէս ասացին, եթէ լուսինն տարր է սեղմ, խիտ¹, մաքուր, գնդաձեւ, եւ ոչ ունի զլոյսն բնութեամբ՝ այլ հաղորդութեամբ յարեգականէ առեալ. որպէս հայելի ընդդէմ արեգական ունելով, եւ նա ճառագայթս բազումս արձակէ յիւրմէ, նոյնպէս եւ լուսինդ ասեն: 5 Բայց երկուք ոմանք յեկեղեցւոյ ասացին, եթէ առանձինն ունի լուսինն զլոյսն, եւ ոչ յարեգականէ. զի որպէս ամանն լուսնի ա՛յլ իմն է, նոյնպէս եւ լոյս նորա ա՛յլ իմն է. եւ ասեն եթէ չէ ծանր Աստուծոյ զլոյսն բաժանել 'ի բազում կերպս. զի լոյս արեգականն ա՛յլ ունի կերպ, եւ լուսնի ա՛յլ, աւտար 'ի նմանէ. եւ հրոյ եւս առաւել աւտար 'ի նոցանէ յերկուց: 6 Նաեւ ճճի մի որ անուանեալ կոչի փոսուռա², ունի լուսաւորութիւն 'ի տտանն, որ եւ զգիրս մարթ է ընթեռնուլ նովաւ 'ի վերայ կարգի գրոցն տանելով: 7 Արդ եթէ 'ի զեռունն յայն արհամարհեդ Աստուած զլուսաւորութիւն յատուկ, որ ոչ յումեքէ առնու այլ հաստատեալ կայ յիւրում մարմինն՝ աւտար յամենայն լուսոյ, զի ոչ սպիտակ է եւ ոչ լուրջ եւ ոչ դեղին եւ ոչ կարմիր, այլ կանաչ իմն գոյն է լուսիկն, մեղմ ըստ իւրում տկարութեանն, համայն յատուկ է: 8 Արդ ո՞րչափ եւս առաւել պարտիմք հաւանել՝ եթէ լուսնի ետ Աստուած լոյս առանձնական, եւ ոչ յոք արար կարաւտ ապաստանի: 9 Իսկ որ սեաւ նշանն երեւի 'ի լուսնի, որպէս գիծ իմն դրոշմի, ասացին արտաքինքն թէ ելք

1 Օրինակում լուսանցում՝ խիտս
2 Օրինակում լուսանցում՝ ֆաւս

են խոռոչաց՝ որպէս յական յականթի: 10 Եւ վասնզի ոչ անգէղ ունի զբոլորութիւնն՝ այնր աղագաւ ոչ կարէ տալ լոյս որպէս զարեգակն: 11 Զի եւ գունդ բիւրեղ՝ որ գէզ կամ սպի ունի, ոչ կարէ հեղուլ բորբ շող լուսոյ: 12 Իսկ եկեղեցականքն ասացին, եթէ որ երեւին ՚ի լուսնի՝ երկիր է եւ ծով. զի որպէս հայելի զամենայն ընդգէմ կացոյց իւր, ցուցանէ յինքեան զնմանութիւն, նոյնպէս եւ լուսինդ ցուցանէ յինքեան զերկիր եւ զծով, ըստ բանին որ ասէ, թէ լուսինդ հայելի է երկրի. զի մեծ իսկ է միանձնութեամբ որպէս զերկիր. եւ ես ցուցից քեզ ՚ի սակաւ նմանութեանց առնուլ աւրինակ: 13 Ուսի՛ր ՚ի քաղաքաց որ ընդ ամենայն տիեզերս շինեալ են ՚ի միմեանց հեռիք. հայեա՛ց ընդ հրապարակս եւ ընդ փողոցս որ ուղղորդ ընդ արեւելս նայիցին, զիա՞րդ միանգամայն լուսաւորին, եւ միաւք կերպարանաւք տեսանես զի լուսաւորէ զամենայն նուրբ փողոցս. եւ զիա՞րդ է այս, եթէ ոչ՝ զի առ ամենեսեան է մեծութեամբ, եւ կշիռ յերեսս ամենեցուն արձակէ զլոյսն: 14 Եւ արդ ՚ի տկարութենէ լուսոյ ճրագի ուսի՛ր զմեծութիւն լուսնի. զի ՚ի լուսոյն իւրմէ ոչ կարէ, վասն այնորիկ միակերպ ստուերս ամենայն բազմութեանն որ ՚ի տանն իցեն. զի որ մաւտն կայցեն ՚ի լոյս ճրագին՝ զնորայն մեծացուցանիցէ զստուեր. եւ որ հեռագոյնն է՝ զնորայն փոքրկացուցանէ: 15 Արդ եթէ ոչ մեծ էր լուսինն՝ ոչ կարէր հաւասար ծագել, եւ միակերպ տալ ստուեր ամենեցուն որ բնակեալ են ՚ի հարաւ եւ ՚ի հիւսիսի, այլ վասն զի մեծ է միանձնութեամբ ըստ աստուածային գրոց որ ասաց, թէ արար լուսաւորս մեծամեծս ՚ի նշանս, ՚ի ժամանակս, յաւուրս եւ ՚ի տարիս. յոյժ պիտոյ են մարդկան նշանք որ լինին ՚ի լուսաւորացդ, եթէ ոք ըստ կէտ սահմանին ոչ ելանիցէ աւտարոտի քննութեամբ. զի որ միտ եղեալ ընտրեսցէ զգեղեցիկ փորձ նոցա, եւ ոչ խառնիցէ ՚ի ներքս ամպարշտութիւն

ազգի ազգի հնարագիտութեան, գտանեն ՚ի նշանաց անտի, զի վասն խոնաւոյ զժամանակն ցուցանէ, բազում անգամ վարդապետք լինին մեզ աւդոյն պղտորութեան, եւ դառնաշունչ սառնամանեաց. զի յերեկաւրեայ ժամանակի յորժամ վճիտ երեւիցի, զյստակ պարզոյ յայտ առնէ. եւ յորժամ ՚ի մահիկ եղջիւրսն զնշան կարմրութեան կամ զմթութեան ունիցի՝ ջուրք բազումք յամպոց յերկիր հեղուն, եւ հարաւ յորդաշունչ բռնութեամբ յաւդս բարբառի. եւ յորժամ շուրջ բակ ունիցի յամպոց՝ ջուրք բազումք յաւդոց յերկիր առաքին, կամ զարամուր բքոց եւ զդառնացուցիչ հողմոց ամբոխելոյ յայտ առնեն: 16 Զի յընծայմանն լուսնի բազում անգամ յորժամ յստակ եւ խաղաղ իցէ աւդն, յանկարծակի սաստիկ աւդոց յայտնին ՚ի նմամրրկեալ, եւ ամպք ՚ի վերայ ամպոց դիզանին յահ եւ յերկիւղ մեծի տաքնապի: 17 Եւ այսու ամենայնիւ յայտ է եթէ նշանք որ լինին ՚ի լուսաւորացդ՝ ՚ի շահ աւգտութեան են երկրի: 18 Նաւավարն զգուշասցի եւ մի՛ խառնիցէ զնաւն ՚ի ծովն՝ այլ անդէն զետղ առեալ՝ պահիցէ ՚ի նաւահանգստի. զի մի՛ պաշարեալ գտանիցին ՚ի ծովուն ՚ի շնչելոյ հողմոյն ամբոխելոյ: 19 Եւ ճանապարհորդն զգուշասցի, զի մի՛ ելանիցէ ՚ի տանէն, եւ երթեալ աշխատեալ ՚ի բքայոյց եւ յանճրեաց ժամանակի, զի ՚ի փոփոխմունսն որ լինին ՚ի լուսնին՝ անասունք զլիութիւն առնուն, եւ տունկք աւգնականութիւն գտանեն աճման սննդեանն իւրեանց: 20 Զի ՚ի մաշելն լուծութիւն եւ ապականութիւն գտանի ՚ի նոսա. եւ յաճելն լիութիւն եւ պնդութիւն առաւելու ՚ի նոսա: 21 Քանզի լուսին ՚ի ջերմութենէ եւ ՚ի խոնաւութենէ ունի խառնուած: 22 Եւ ա՛յս լիցի քեզ նշան. զի որք ՚ի լուսնակային ննջեն՝ խոնաւութիւն լինի ՚ի զլուխս նոցա: 23 Եւ զմիս դալար եթէ ՚ի լուսնակի կախիցեն, հոտի եւ ապականի. եւ ՚ի ջրայինս պակասութիւն եւ

լիութիւն գտանի, սապէս եւ 'ի սիրտս ծառոց: 24 Եւ գնացք իմն են ասեն յերկրին Եւրոպացոց յովկիանոս, որ երբեմն ցուցանէ գյաւելուած լիութեան, եւ երբեմն զիջանին 'ի լիութենէ անտի. եւ այս ասեն ըստ գնացից լուսնի փոփոխի: 25 Իսկ զսկիզբն ծննդեանն լուսնի՝ անշարժական ասեն գնաց խաղացիցն. եւ յաճելն լուսնի՝ սկսանին շարժել եւ գեռալ: 26 Եւ դարձեալ յայնմ ծովու որ անուանեալ կոչի Երեկորեայ՝ նմանութիւն սրուակաց է ասեն 'ի միջին, իբր թէ ձգեն եւ ծծեն, խոնարհին եւ պակասին ընդ պակասելն լուսնի. եւ բզխեն, յորդեն, եւ վերանան ընդ լնուլ լուսնի: 27 Այս են նշանք եւ զաւրութիւն նորա յերկրի եւ ծովու. իսկ զժամանակս եւ զաւուրս եւ զտարիս որոշէ եւ սա Հանգոյն արեգական. յաւուր՝ քսան եւ չորս ժամս ընթանալով ընդ տիւ եւ ընդ գիշեր, ամիս՝ յընծայմանէ յընծայումն, եւ երիցս կատարելով առնէ տարի, ըստ թուոյ Եբրայեցոց, որ կատարեն զընթացս տարւոյն 'ի հին կտակարանաց: 28 Իսկ յիշխանութիւն գիշերոյ՝ ցուցանելով 'ի նմա զլոյսն իւր. քանզի կարկնահատ բոլորութիւնք երկոցունց տարեցդ մին առանձին ունի զբոլոր բազմութիւն լուսոյն. իսկ առ միւսն առ նոյն Հանդիպի ընդունելով մասն գիշերային լուսոյն. եւ նա՝ Հանապագ անխափան գնացիւքն առ սակաւ սակաւ մատուցանէ զմասունս երեւակի լուսոյն աճամբր եւ նուագութեամբ: 29 Քանզի ոչ եթէ Հանապագ ընդ մի շաւիղ ընթանայ արեգակն յորժամ 'ի Հարաւ կոյս նհանջիցի, եւ կամ այսրէն 'ի միջաւրեայդ: 30 Սոյնպէս եւ լուսին 'ի ձեռն այս երկու փոփոխմանցս տալոյ եւ առնլոյ լինի փոփոխումն աճման եւ մաշելոյ. վասն զի լուսին բերի 'ի ներքնում պարունակիս¹, եւ արեգակն 'ի վերոյ նորա 'ի հինգերորդ պարունակին. եւ 'ի շրջագայանալն երկոցունց Հանապագ տե-

սանեն զմիմեանս, եւ յորժամ երթայ մաւտի լուսին յարեգակն՝ լինի նուագութիւն լուսոյն լուսնի, զի վերին կողմն նորա ունի զբոլորութիւն լուսոյն որ ընդդէմ Հայի արեգականն, զի վերեւ նորա է. եւ կէս գնդի լուսնին որ 'ի խոնարհ յերկիր կոյս Հայի՝ անլոյս բոլոր ներքին կոյս գնդի լուսնին երեւի՝ ծածկեալ յիւրում ստուերի. եւ յորժամ հեռանայ լուսին յարեգակնէ՝ մեծանայ լնու լոյսն լուսնի. վասն զի հեռանալով յարեգականէ լուսաւորի ներքին կողմ գնդի երկնի. եւ ստուեր տարերն իւրոյ 'ի միւս կողմ Հալածի 'ի վեր փոխելով. քանզի այս է յայտնի պատճառ. վերին եւ ներքին կիսագունդքն առ հինգ պարունակացդ գեր 'ի վերոյ երկրիս յերկուս բաժանեալ տուրնջեան եւ գիշերոյ, չորրեակ վեցեկաւք. եւ երբեմն Հասանելով յարեւմուտս 'ի ներքին կիսագունդն, գերկուս վեցեակսն արեգակն ունիցի գիշերային մասամբքն զառ 'ի ներքոյս շրջագայութեանն. իսկ ընդդէմ նմին գերկուս վեցեակսն լուսին ունիցի 'ի վերայ երկրի. եւ ընդ կողմն հիւսիսոյ մատուցանէ արեգակն լրումն լուսոյ ունակութեան լուսնի. ոչ Հանապագորդ լիով մատուցանէ, այլ ըստ մաւտելոյ եւ հեռանալոյ արեգական. երբեմն կատարեալ լի 'ի բոլորն բոլորական երեւի լոյսն իւր. եւ երբեմն մաշեալ եւ պակասեալ 'ի լուսոյն՝ զպակասութիւն իւր նախ ցուցանէ լուսին 'ի վերայ միոյ միոյ կողմանց իւրոց: 31 Զի յորժամ աճէ մի կողմն, միւսն գնշանակ աղջամղջին ցուցանէ. եւ դարձեալ յորժամ սկսանի պակասիլ միւս կողմն ամփոփի ինքն յինքն՝ զի ծածկեսցի միւս կողմն: 32 Եւ յորժամ սկսանի երեւել յարեւմտից յարեւելս կոյս ցուցանէ զՀայեցուածն բոլորն բոլորակին. եւ յորժամ յարեւելից սկսանի մաշել՝ յարեւմուտս կոյս ցուցանէ զմահիկն եղջիւրս: 33 Եւ այնպէս լուսաւորի կողմն գնդին լուսնի՝ որ յարեգական կուսէն լինի, եւ որ 'ի միւս կողմանէն լինի

1 Օրինակում պարունակիս

կէս գնդին լուսնի՝ առանց լուսոյ երեւի՝ ծածկեալ ՚ի ծոց իւրոյ հովանւոյն. զի պակասումն լուսոյն լուսնի՝ ստուեր տարերն իւրոյ է, ինքն ինքեան ունելով հովանի: 34 Իսկ յորժամ համաւրէն գայն որ ետն ՚ի բաց հանցէ զլոյսն, սուղ ծածկութիւն լինին, մինչեւ անդէն ծնցի զնա նովին լուսովն: 35 Դարձեալ եթէ դիպեսցի ժամանակ լուսնի ՚ի լրման կամ ՚ի միջոցի, կամ մերձ ՚ի հինս, եւ լուսին իցէ ՚ի վերին կիսագնդին, եւ երկոքին դիպեսցին հասարակութեամբ ՚ի միջնում տրամագծին, եւ ՚ի միում ժամու ոչ բաւէ արեգակն մատուցանել ընդ հիւսիսային կողմնն զսովորական ձգումն լուսոյն մասին, լոկ մնացեալ գիշերային անիւն ՚ի լուսոյ՝ կորնչել լուսնի կարդացաք: 36 Եւ կարի քաջ կորուստ լուսոյն ասացաք, եւ ոչ տարերն. զի ամենեցուն յայտնի երեւի բոլորածիրն ՚ի տեղւոջն, եւ առ երագ շարժունս վերնոյն եւ ներքնոյն անցանել զսովորական ընդունի լոյս լուսին, վասն զի անցանէ զնովաւ ստուերն որ խաւարեցոյցն զնա: 37 Արդ ամենայն եղեալքս անկեալ են ընդ յարմարական մասամբք, եւ ընդ ապականագործովք հետեւանաւք: 38 Եւ այս ոչ գուզնաքեայ նախախնամութիւն արարողին է՝ զի մի՛ ոք զարարածս տեսեալ առանս ապականութեան՝ զնոսին իսկ արարիչս կարծիցէ. այլ զի հանապազ յերեւելի տարերս վայելեսցէ զերկրաւոր սպասաւորութիւն. եւ զարարիչն ամենայն գոյիցս գեր ՚ի վերոյ գիտացէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

1 Թ. ՅԱՂԱԳՍ ԱՐԵԳԱԿԱՆ

2 Յոյժ սիրելի է ինձ՝ ՚ի միաւորութեանց նոցա բանից՝ յիմում ճառի առնել զառատութիւնս որ ինչ յաղագս առաջնոյ եւ մեծի լուսաւորիդ է բան: 3 Եւ արդ ասացից նոյնպէս, եթէ նիւթ ամանոյն արեգական արարչին միայն է գիտելի. իսկ պատուականք յարարածս մարդիկ՝ այն-

չափ միայն գիտացին զնա՝ թէ է տարր սեղմ, մաքուր, գնդաձեւ, բոլոր, ամենեւին անգէղ եւ անսպի. ինքն է ցուրտ բնութիւն. եւ զջերմութիւն եւ զլուսաւորութիւն առեալ յարփւոյն՝ հեղու յաւդս, որով լուսաւորի եւ ջեռնու երկիր: 4 Եւ հաւանեցուցէ զքեզ ակրինակն. գունդ բիւրեղ յորժամ յարեւու ունիցիս, տես՛ս զի ինքն ցուրտ է ամենեւին, իսկ որ շողն կաթէ ՚ի նմանէ՝ պայծառ է առաւել քան զլոյսն արեգական. եւ ուրանաւր կաթէ՝ լուցանի. քանզի կաթուած շողոյն նորա հուր ծնանի, թէպէտեւ ինքն ցուրտ է բնութեամբ. նոյնպէս եւ զարեգակնդ իմա՛: 5 Բայց երկու ոմանք յեկեղեցւոյ ո՛չ այդպէս, այլ ասացին թէ ինքն իսկ արեգակն ունի զլոյսն իւր բնութեամբ յինքեան բնակեալ, եւ ոչ յարփւոյն, եւ ոչ յայլ ումեքէ առեալ, այլ ասեն թէ լոյս արեգական՝ ա՛յն լոյս է որ յառաջ քան զեղանիլ լուսաւորացդ էր. վասն զի լուսաւորքդ են արարած ակուրն չորրորդի. իսկ երից ակուրցն նախագունից ցիր բնութիւն էր. եւ արեգակնդ աման եղեւ այնր լուսոյ. եւ ժողովեաց Աստուած զլոյսն գայն եւ արկ ՚ի դա, զորմէ ասացի թէ ցիր բնութիւն էր. եւ ժողովեալ զնա ունի արեգակն՝ որպէս ճրագ զհուր: 6 Սոյնպէս եւ լուսոյն առաջնոյ կազմեցան լինել աման լուսաւորքդ: 7 Արդ թէպէտ հոգեւորք են եւ սոքա, սակայն ես հաւանեալ եմ սրբոց հարցն բազմաց միաբանելոց, որում եւ բարի փիլիսոփայք արտաքնոցն համաձայնին, յարփւոյն ասեն ունել զլուսաւորութիւն եւ զջերմութիւն. եւ վասն ընթացից լուսաւորացդ ՚ի մտից յետկոյս ընդդէմ երկնի՝ մի ումեք անհաւատ թուեցեալ՝ ասիցէ, թէ մեք տեսանեմք զլուսաւորսդ ելեալ յարեւելից եւ եկեալ մինչեւ յարեւմուտս, այլ գիտացէ զի յերկնէ է այն որ հանէ զնա յելիցն, եւ բերէ ՚ի մուտս, քանզի անչափ է երագութիւն շրջագայութեան երկնից: 8 Արդ որք միտս ունիցին՝ է ՚ի տեսութեանցդ իսկ ուսանել՝

Թէ՛ յարեւելս գնան արեգակն եւ լուսին, եւ բազումք յաստեղաց որք ոչ խմբիւք կցեալ ունին զետեղակալութիւնս. քանզի ասեն արտաքինքն՝ թէ՛ մըջիւն լիցի քեզ աւրինակ, առեալ դիցես՝ ՚ի վերայ երկանի, եւ տե՛ս զիա՛րդ ընթանայ ընդդէմ երկանին եկիցն. վասն զի ոչ կարէ ընթանալ ՚ի կողմն, եւ ոչ զոյգ երկանի ընթացիցն. քանզի երազութիւն երկանին գլէ՛ գնա. եւ նա հարկաւորեալ ընդդէմ ընթանայ: 9 Իսկ երկանն իւրով արագութեամբն ընդ իւր բերէ գնա՛ յոր կոյս ինքն գայ շուրջ. սապէս եւ զլուսաւորսդ իմա՛: 10 Եւ ուշիմ մտաւք թէ՛ հայիցիս՝ դիւրին է ուսանել ՚ի լուսնոյ. տե՛ս յընծայման նորա՛ զիա՛րդ ընդ մտանել արեգականն երեւի լուսինն մաւտ ՚ի մուտս. եւ յամենայն աւուր հայեա՛ ընդ նա ՚ի նոյն ժամու, եւ տե՛ս զիա՛րդ աւր ըստ աւրէ ընդ մտանելն գարեւելաւք երեւի. եւ զիտեա՛ թէ՛ ո՛րչափ տեսեր զտեղին՝ ուր ժամէ ՚ի ժամ փոխեցաւ, այնչափ է նորա ընթացք աւուրն. եւ ուսիր թէ՛ երազութիւն երկնին է այն որ ածէ գնա յաւուր պատել զերկրաւ, եւ ո՛չ թէ իւր ընթացքն: 11 Եւ զարեգակն թէպէտեւ ոչ կարես տեսանել, այլ իմացի՛ր ՚ի կենդանատեսակացն անուանեցելոց աստեղատանց. տեսանե՞ս զիա՛րդ կարգեալ կան՝ կցեալ զմիմեանց եւ ծագեն յելից զհետ իւրեանց¹, նախ խոյն, եւ ապա ցուլն. եւ զհետ նոցա եկաւորին եւ այլք ՚ի կարգի: 12 Եւ արեգակն կատարեալ զխոյն՝ փոփոխի ՚ի ցուլն, եւ ՚ի նմանէ յայլսն, ընդդէմ երկնի ընթանալով յարեւելս կոյս: 13 Երթիցուք յաստուածային գրոց ճառս որ ասեն. Եղիցիմ ՚ի նշանս եւ ՚ի ժամանակս, յաւուրս եւ ՚ի տարիս՝: 14 Բազում նշանս ունիմք ուսանել յարեգակնէ, եթէ ոչ առնուցումք զխեղագարեալ խորհուրդս աստեղաբաշխիցն, որ ինչ պատահման վիճա-

կաց վասն եւ ծննդաբաշխութեան. քանզի մի ինչ իրս որ լինի յարեգակնէ, փրկիչն մեր յայտնեաց յաւետարանին, յասելն թէ՛ Յորժամ տեսանիցե՛ք զի գայ ամպ յարեւելից՝ աւե՛ք թէ անձրեւ լինի, եւ լինի. եւ յորժամ հարաւ շնչէ՛՝ աւե՛ք թէ խորշակ ընթացայ՝ եւ լինի այնպէս². ըստ նմին աւրինակի ա՛յլ եւս բազումս, կերպարանաւք փորձի՛ յայտ լինի: 15 Զի յորժամ ընդ ծագել արեգականն մթագոյն ելանիցէ եւ արեան եւ կայծական նշանակ ունիցին ճառագայթքն, ըստ փոփոխման խստաշունչ աւդոյն. եթէ ՚ի նոյն կերպարանս կայցէ, եւ աւգն պղտորեալ եւ յուզեալ՝ ոչ յստակիցի. եւ գոյնն մթագոյն՝ ոչ լրթասցի, եւ հողմք եւս խստագոյնք յուզեսցին, եւ ամպն եւս քան զեւս յաւելցէ, զերկար խոնաւայուզից եւ զսաստիկ անձրեւաց յայտ առնէ: 16 Եւ յորժամ յամպոյ յամպ մտանիցէ արեգակն, զՉերմակիծ շող ամպոյն յերկիր առաքելով՝ զխոնաւութենէ աւդոյ յայտ առնէ: 17 Եւ յորժամ ելանիցէ ծագումնն զառաջինսն խանձելով՝ զառաւրեայ անձրեւածումն նշանակելով. եւ յորժամ ՚ի մուտս գլխտոյսն խանձիցէ զերկինս կարմրացուցանելով, զառաւրեայ պարզոյ յայտ առնէ: 18 Մեկնութիւն նշանաց եղեւ առաջին բանիւքդ:

19 Ասասցուք վասն ժամանակաց որք են փոփոխմունք աւդոց, եւ զնացք ժամուց եւ երեւել սառնամանեաց ճմերայնոյ, եւ քաղցրախառն շնչելոյ աւդոյ գարնայնոյ, եւ բոցախառն հրատ տապոյ ժամանակաց ամարանոյ, եւ մեղմախառն ցրտութեան ժամանակաց աշնանոյ. զի այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աշտիճանաց՝ արդար գնացիւք արեգականն շրջանին անցանեն ՚ի վերայ մեր, կարգ ըստ կարգի յաւրինեալ յարդարմամբք՝ ըստ ակնարկելոյ զաւրութեանն որ պատշաճեաց զնոսս յիւրաքանչիւր կարգս եւ ՚ի ժամա-

1 Օրինակում լուսանցում՝ իրերաց
 * Ծն. Ը 14

2 Հմբ. Գ. Կ. ԺԲ 54:

նակս: 20 Ձի ճմեռն ա՛յնպէս լինի՝ յորժամ հեռանայ մերժի՝ յիջանել արեգականն ՚ի հարաւ, եւ անդէն մշտնջենաւորեալ զգնացս իւր, յորժամ յաճախեալ բազմանայ աստ ՚ի մերուժ կողմանս երկայնութիւնք ստուերաց գիշերոյ, որ է խաւար: 21 Եւ յիջանել արեգականն ՚ի հարաւկոյս կողմանս՝ շնչեն ցրտային սառնամանիք ընդդէմ աւդոյ՝ որ տարածեալ կայ առ երկրաւս, եւ ՚ի պատճառս խոնաւութեանն որ զարթնու ՚ի վերայ երկրի՝ յառնեն անձրեւայոյզք եւ թաւնընկէցք՝ եւ բալաճիգք եւ ձիւնաբերք: 22 Եւ դարձեալ յորժամ սկսանի արեգակն աշտիճանել ՚ի հարաւակողմանց՝ գալ հասանել ՚ի հասարակածն երկնից՝ զհաւասարութիւն տուրնջեան եւ գիշերոյ կատարէ: 23 Մեծ սքանչելեալք կատարին կարգք ժամանակաց. որչափ վերասցի ելցէ արեգակն՝ փոփոխելով զգնացս իւր ՚ի ծագելն յերկիր, եւ ՚ի նոսին գետդ առեալ դադարեսցէ: 24 Եւ այս ամենայն ... քաղցրախառն խառնուածալք յարդարի գարունն՝ իւրով մեծագեղ վայելչութեամբք. զի ՚ի նմա արմատք արձակեն զբոյսս, եւ մարգք զուարճանան, եւ ծաղիկք պայծառանան, եւ տունկք ցցուին եւ ծառք արձակեն զբողբոջն, եւ անասունք հանդերձ թռչնովք եւ ծովային ջրածնունդ գեռնովք. եւ ամենեքեան ըստ իւրաքանչիւր ազգի գան ՚ի ծնունդ, ՚ի սեր եւ ՚ի սնունդ: 25 Եւ յետ այսորիկ սկսանի մատել արեգակն ՚ի փոփոխմունս ամարայնոյ եւ երեւցուցանէ զգնացս իւր ՚ի կողմանս հիւսիսոյ, ձգել եւ երկայնացուցանել զտիւս: 26 Եւ քանզի յամրագնաց ժամալք անցանէ զաւդովք երկարաճիգ գնացիւք, ջեռուցանէ ՚ի վերայ երկրի զաւդս, եւ ծծէ ՚ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, եւ առնի գործակից եւ վաստակակից սերմանց՝ ՚ի պաշտել զպէտս նոցա, պարարեալ պնդէ զի հասցեն ՚ի չափ սննդեան իւրեանց. նոյնպէս եւ զպտուղս ծառոց: 27 Եւ յորժամ ՚ի վերին բարձանցն ծագիցէ արեգակն՝

փոքրկանան ստուերք տարերց երկրի, եւ կարճին շուքք հասակաց ՚ի միջաւրեայ ժամանակի, տիւքն երկայն լինին: 28 Եւ յորժամ երկային ստուերքն՝ աւուրքն փոքունք լինին: 29 Եւ աստ առ մեզ որ ՚ի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք՝ այլազգ անկանին ՚ի մէնջ ստուերքն, եւ յայլուժ աշխարհի միոջ՝ այլազգ: 30 Ձի երկու աւուրս յամենայն տարուջ առ միջաւրեայ ժամանակի առանց ստուերի լինին, քանզի կշիռ ՚ի վերայ ամենեցուն գլխոյ կան ճառագայթք արեգականն. եւ հասարակ յամենայն կողմանց արկանէ զնշոյլս պայծառութեանն ՚ի վերուստ եւ ցնեքքին խորս ջրհորոց, ընդ նեղ եւ ընդ նուրբ բերանս մտանէ շող եւ լուսաւորէ: 31 Եւ անուանեն զաւուրսն անստուեր միջաւրեայ: 32 Եւ այլք որք ՚ի հեռաւոր աշխարհին Հնդկաց բնակեալ են՝ անդր եւս քան զՍընդ եւ Սմրդան՝ ստուերք հասակաց մարդկան յերկուց կողմանց երեւի, եւ կոչեն իսկ երկստուերեան զաւուրսն, եւ այս ամենայն ՚ի փոփոխելոյ գնացից արեգականն լինի: 33 Եւ իբրեւ հասուցանէ զսերմանս եւ զմիրգսն ՚ի կատարեալ չափսն, ապա սկսանի սակաւ սակաւ մեղմանալ ՚ի բոցաճաճանչ տապոյն: 34 Սկսանի այնուհետեւ մերձենալ աշունն, ցուցանել ՚ի նմա զմեղմախառն գնացս իւր. եւ գայ հասանէ քաղցրախառն խառնուածն որ ունի զմիջնորդութիւն. եւ ըստ աշտիճանելոյ՝ սկսանի երեւել նշանակ ցրտոյ կարգին մտանելոյ սառնամանիք ճմերայնոյ՝ ՚ի շրջելոյն արեգական՝ որ իջանէ մեղմով ՚ի կողմանց հիւսիսոյ, երթալ երեւցուցանել զգնացս իւր ՚ի կողմանս հարաւոյ: 35 Եւ այսպիսի փոփոխէ արեգակն զգնացս իւր, եւ կատարէ զժամանակս յեղանակաց, եւ եղիցին յաւուրս որպէս եւ Սաղմոսն վկայեաց թէ իշխանական տուրնջեան՝: 36 Եւ իւ իցէ իշխանական տուրնջեան, թէ ոչ գնացիւքն

« Սաղմ. ՃԼԵ 8

ցուցանել 'ի նմա զլոյս իւր՝ յորժամ 'ի վեր քան զկէս գնդին առնիցէ զգնացս իւր, հալածելով զխաւարն, եւ լուսաւորելով զաւզս՝ կոչեցաւ տիւ: 37 Եւ արդ յայտ է թէ տիւ 'ի լուսոյ արեգական իցէ, իսկ գեշերն ոչ յումեքէ, այլ ուր ո՛չ գոյ լոյս անդ խաւար է: գիշեր է՝ ստուեր աւզոյս՝ որ անկանի 'ի տարերէ երկրիս: զի ամենայն ինչ որ ընդդէմ կայ լուսոյ՝ նա՛ է պատճառ երեւելոյ խաւարի, որպէս ստուեր երկրի պատճառ է գիշերոյ: 38 Եւ հաւանեցուցէ զքեզ աւրինակն. որպէս թէ հարկանիցես տաղաւար 'ի սաստիկ լուսաւորութեան միջաւրեայ ժամանակի եւ պատիցես պնդիցես ամենեւին արտաքուստ՝ զի մի՛ մտցեն 'ի նա նշոյլք լուսոյ. եւ հայեա՛ եւ տե՛ս, որպիսի՛ խաւար թանձրատարած գտանի 'ի նա. եւ գիտես թէ դու ես արարող խաւարին, եւ տաղաւարին, եւ տաղաւարն է պատճառ. զի որպէս վայրք որ առանց լուսոյ են՝ խաւար մածեալ գտանի 'ի նոսա, նոյնպէս եւ գիշեր՝ յորժամ 'ի ներքին կիսագունդն խոնարհեսցի արեգակն, եւ պակասեսցէ յաւզոյս լոյս, եւ անկանիցի զսովաւ ստուեր երկրի: 39 Քանզի ստուերս զոր տեսանեմք՝ նա՛ է խաւարն գիշերոյ 'ի փոփոխելոյ ճառագայթից արեգական: 40 Ձի յորժամ յարեւելից երեւեսցի լոյսն՝ ստուերն յարեւմուտս ձգի. եւ յորժամ 'ի հարաւ անցանէ լոյսն՝ ստուերն 'ի հիւսիսակողմ փոխի. եւ յորժամ յարեւմուտս փոխի լոյսն՝ ստուերն յարեւելս անկանի. եւ 'ի մտանել արեգականն՝ ստուեր երկրի յաւզդ վերանայ. եւ այնպէս մտանէ խաւար տիրել երկրի՝ որ անուանեցաւ գիշեր: 41 Դարձեալ եւ 'ի տարիս եղաւ լինել արեգակն՝ ըստ աւրինակի թուոցն Յունաց, որ յաւանդութենէ եւ 'ի հարցն իւրեանց՝ համարին զտարի արեգականն 'ի հաստատեալ կիտէն մինչեւ զմիւս կէտն նշանակեալ. եւ ըստ ընթացից շարժմանցն զոր ունի արեգակն՝ նոյնպէս առնէ կատարումն տարւոյն իւրոյ: 42 Եւ արար, ասէ,

Աստուած երկուս լուսաւորս մեծամեծս՝, եւ զնովիմբ ածեալ ասէ. Ձլուսաւորն մեծ: 43 Միտք բանիս այսպիսի են, իբրու թէ ինչ մի միանձնութեամբ մեծ է, ըստ միանձնութեան երկնի եւ երկրի եւ ծովու. իսկ այլքն որ կոչին մեծ՝ ըստ աւրինակի բնութեան իւրեանց որ գտանին առ մեզ՝ ոմն մեծ քան զընկեր իւր, որպէս զի մեծ է ձի քան զձի եւ եզն քան զեզն, ոչ եթէ ըստ մեծութեանդ ա՛յլ ինչ տարր, այլ ըստ համամտութեան իւրոյ ընկերին ասի մեծութիւն նորա: 44 Արդ ո՛չ է այսպէս մեծութիւն լուսաւորացդ, որպէս ասի աստղ քան զաստղ, այլ այնպիսի մեծատարած մեծ լուսաւորութիւն ունին, որ բաւական են լուսաւորել զամենայն, ծագել ծաւալել համասփիւռ յերկինս եւ յերկրի, 'ի ծովու եւ 'ի շրջանակի յամենայն ծագս երկրի: 45 Եւ քանզի զամենայն բոլորակն երկնից տարածիւ ունի լուսաւորդ 'ի ծագել եւ 'ի մտանելն իւրում, եւ զամենայն միջավայրս վայրացն իբրու զմի ինչ ունի զամենայն միանգամայն, վասն այնորիկ միապէս միով կերպարանաւք երեւի ամենայն մարդկան որ բնակեալ են յամենայն ծագս երկրի: 46 Եւ գիտեա՛ թէ ամենայն մեծ իրք 'ի հեռաստանէ փոքունք երեւին. եւ որչափ երթաս մաւտիս, ապա երեւի մեծութիւն նորա: 47 Իսկ առ արեգակն չէ ոք որ մաւտ իցէ, կամ հեռի, այլ միով հաւասարութեամբ յամենայն մասանց երկրիս տեսանի. եւ այս է աւրինակ ճշմարիտ, զի որ բնակեալ են անդր 'ի Հնդկաց երկրին, եւ կամ անդր 'ի Բիւրիտոնիա երկրին, միով հաւասարութեամբ տեսանեն զծագելն եւ զմտանելն արեգական. զի ոչ յորժամ մտանէ առ արեւմտեայսն՝ նուազի ինչ 'ի մեծութենէ անտի առ արեւելեայսն: 48 Եւ ոչ յորժամ ծագէ առ բնակչացն արեւելեայց, եւ ոչ յորժամ գայ հասանէ 'ի հասարակածն երկնից, փոխի ինչ 'ի կեր-

պարանայն զոր ունէր: 49 Արդ մի՛ խաբեսցէ զքեզ¹ սակաւ տեսիլ նորա: 50 Որ չափ կանգնոյ միոյ երեւի, եւ կարծիցես թէ այնչափ իցէ. քանզի մեծամեծք յիրաց որ ՚ի բացեայ ՚ի հեռուստ տեսանես՝ իբր փոքունք երեւին. քանզի քայքայի սակաւ տեսիլ ական ՚ի տկարութենէ լուսոյն զոր ունի. վասնզի չլինի բաւական ՚ի հեռաձիգ վայրս հասուցանել զհայեցուածն՝ այլայլի տեսիլն, եւ զլոյսն իբրեւ զմուսյլ տեսանէ. եւ զմեծ ինչ իրս իբրեւ զփոքունս: 51 Եւ դարձեալ յայսմ աւրինակէ ՚ի միտ առ զանբաւ մեծութիւն արեգականն. տե՛ս ո՛րչափ բազմութիւնք աստեղաց են յերկինս, եւ ընդ ամենեսեան ոչ են բաւական լուսաւորել զմթութիւն գիշերոյն. եւ արեգակն միայն միով անձամբ յորժամ երեւիցի զամենայն սահմանս աշխարհի լուսաւորէ. նա՛ եւ մինչչեւն եկեալ իսկ՝ քաղցրահայեաց ճառագայթիւքն՝ ցրուէ մաշէ զխաւարն, եւ հետակորոյս առնէ զաղջամուղջն. բառնայ զտխրութիւն, եւ ՚ի տարածանել մեծապայծառ լուսոյն՝ ծածկէ զլուսաւորութիւն աստեղաց, եւ զթանճրամած աւգոյս ստուերս մերկանայ յերկրէ. եւ ընդ նմին աւգ քաղցրաշունչ շնչէ յերկրի եւ ընդ արեւածայրսն լուսաւորին արկանէ ցաւղ մանրացաւղ ՚ի ժամանակս ամարայնոյ ընդ ամենայն երեսս երկրի. միովն երեւելով յանկարծածին² ժամու լուսաւորել, եթէ ոչ զի անչափ մեծութեամբն յանբաւ բարձրութենէն զանչափ ճառագայթս լուսոյն արձակէր: 52 Եւ յայսմ ամենայնէ յայտ է թէ մեծ է արեգակն, ըստ աստուածային գրոց վկայութեան. որում եւ արտաքնոցն բարեաց ՚ի ճահ պատահեն վկայութիւնք: 53 Քանզի ասեն թէ մեծութիւն լուսնոյ է ըստ չափոյ երկրի. եւ արեգականն առաւել է քան զնա՝ ըստ աստուածային գրոց. զի թէպէտ եւ ասաց եր-

կոցունց մեծամեծս, եւ սակայն ՚ի համեմատութենէն ասէ. լուսաւոր մեծ՞. եւ լուսաւորն³ ... քանզի ՚ի պակասել լուսոյն արեգական՝ զոր խաւարելն կոչեմք, յայտնի միջոց արեգականն խաւարեալ բոլոր. եւ լոյս արեգականն սակաւիկ իբր ժապաւէն երեւի շուրջ զբոլոր խաւարովն. եւ այն է լուսին, որ կացեալ ընդդէմ արեգականն՝ արգել ՚ի մէնջ զլոյսն: 54 Բայց ո՛չ որպէս ինքն ամենեւին, քանզի փոքր է քան զնա, եւ ոչ է բաւական զամենայն անիւն ծածկել, վասն այնորիկ իբր ժապաւէն երեւեցաւ լոյս արեգականն շուրջ զլուսնովն: 55 Եւ յորժամ սակաւիկ միտ դիցես, յառաջէ որոշէ լուսինն, եւ սկսանի մերկանալ մեծացուցանել զլոյս արեգականն. եւ տեսանես զարեգականն կէսն թերի, որպէս զլուսին եղջիւրաւոր, մինչեւ մեկնի ՚ի նմանէ լուսինն. զի լուսինն է պատճառ խաւարման արեգականն, որպէս արեգակն լուսնի. ՚ի թաքուցանել զճառագայթս իւր ընդ երկրաւ, որով ծածկեալ ՚ի ստուերէ երկրի՝ լուսին առանց լուսոյ երեւի: 56 Իսկ ՚ի սորին հակառակէ նոյնն անցանէ եւ ընդ արեգակն, ոչ միջակաւն որ անջրպետեացն, այլ յորժամ եղիցին ՚ի վերնում կիսագնդին. քանզի արեգակն գեր ՚ի վերոյ լուսնին է, եւ լուսինն դիպեալ ՚ի ներքոյ արեգականն: 57 Եւ յորժամ հաւասարագոյգ լինին, մինչ զի իցէ մին ՚ի վերոյ եւ միւսն ՚ի ներքոյ կշիռ նմին, եւ արեգակն բերանացեալ՝ հոսէ հեղիով զբոլորութիւն լուսոյն հանդէպ ուղիղ կշռութեամբ, միջոց լուսնին ոչ թողու անցանել ՚ի ներքին անաւարութիւն աւգոյս, որ սփռեալ տարածեալ է ընդ ծով եւ ընդ ցամաք: 58 Եւ զայս տեսանելով բազումք՝ յանուսումնութենէ՝ արեգական կորուստ կարծեն: 59 Իսկ իմաստնոցն յայտնի է իրացն եղելութիւն, որպէս բազում անգամ

1 Օրինակում գ... սակաւ
2 Օրինակում յանկարծակից

* Տե՛՛ս Սաղմ. ՃԼԼ: 7:
3 Օրինակում մի տողը չի:

ասացաք. եւ է նա նախախնամութիւն Աստուծոյ, ոչ միայն զի վայելիցեմք 'ի լուսոյ արեգականդ, այլ զի եւ ճանաչիցեմք զմեծ սէր արարչին առ երկիրս. զի ահա ոմանք զարեգակն աստուած կարծեցեալ՝ մատուցին երկրպագութիւն իբրեւ մտաւորի, եւ բանաւորի, եւ արարչի աստուծոյ: 60 Եւ եթէ գոյր նորա բարբառ՝ մեծաւ աղաղակաւ ձայն արձակէր յերկիր, ասելով. Զիս վասն քո արարեալ է, դու ին՞ձ երկիրպագանես. ո՞չ տեսանես զ'ի անդադար ասպարէզ տունջեանն գործառութիւնս, եւ 'ի վայելս ամենայն կենդանեաց տեղի տուեալ, գիշերային մասամբն հանգչել ձեզ 'ի բազում աշխատութեանցդ. հայեցարուք եւ յիմ յեղափոխութիւնս, ձմերանի ցրտանամ, գարնանի ծածկիմ ընդ թանձրախիտ ամպովք, եւ ամարանի ես ինքն հրակէզ լինիմ. եւ յիմ տեւողութիւն եւ յերկրի աւգտութիւն յորժամ կատարեմ զգիշերային ընթացս իմ 'ի ստորեւ երկրիս

յարեւմտից յարեւելս: 61 Եւ 'ի բերիլն իմ 'ի վեր՝ բազմութիւն ջուրց ցանեմ զաշխարհաւ, զոր դուք ցաւդ անուանէք: 62 Ո՞չ ահա տեսանէք զնհանջմունս երկիցս 'ի տարւոջն եւ զուգաւորութիւն հանգոյն նմին. նա՛ եւ երբեմն պակասիմ 'ի լուսոյ՝ զոր կորուստ անուանէք. եւ որչափ ընդ խանգարմամբք եմ, եւ ընդ բազում փոփոխմամբք, ո՞չ միայն աստուած չանուանել՝ այլ եւ ոչ կենդանի բանաւոր, այլ քաջ գործ Աստուծոյ, որ վարիմ հրամանաւ Աստուծոյ: 63 Եւ արդարեւ ճշմարիտ խնամ է Աստուծոյ 'ի վերայ երկրի, որ զմարմին դարմանէ սննդականաւն, եւ զհոգի առլցուցանէ կատարեալ գիտութեամբ. քննելով եւ 'ի վերայ հասանելով ամենայն արարածոցս՝ որ ոչ ունին յինքեանց զգայութիւն, այլ յանեղէ ումեմնէ որ էած 'ի լինելութիւն, ճանաչել զարարիչն ամենայնի որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

ՅԱՂԱԳՍ ԿԵՆԴՐԱՆՍԵՍԱԿԱՑ

1 ՅԱՂԱԳՍ ԿԵՆԴՐԱՆՍԵՍԱԿԱՑ:

2 Խոսք աստեղատանցդ, որ անուանեալ կոչին կենդանատեսակք, եթէ յորո՞ց, եւ զինչ իւրաքանչիւր պատճառք անուանցդ՝ գործ աւելի համարիմ պատմել, բայց վասն զի ոչ այլազգ գորոշմունս¹ նոցա կարեմ առնել, եւ գյայտարարութիւնս հարկաւորիմ զնոյն անուանս յիշել՝ զոր յետ Քաղզէացւոցն կոչեն Յոյնք, Հայք, Պարսք: 3 Յոյնք՝ կոիոց, Հայք՝ խոյ, Պարսք՝ վարբաք²: 4 Յոյնք՝ տաւրոս, Հայք՝ ցուլ, Պարսք՝ դաւ: 5 Յոյնք՝ դիդիմոս³, Հայք՝ երկրաւորի, Պարսք՝ գուպաքար⁴: 6 Սոքա երեքեան յեղանակ գարնանային: 7 Եւ դարձեալ՝ Յոյնք՝ կարկինոս, Հայք՝ խեցգետի, Պարսք՝ գոզընտ⁵: 8 Յոյնք՝ լէաւնոս, Հայք՝ առիւծ, Պարսք՝ շեր: 9 Յոյնք՝ պառթնաս, Հայք՝ կոյս, Պարսք՝ գաւսիճադ⁶: 10 Սոքա երեքեան⁷ ամառնային: 11 Յոյնք՝ զիւգաւս, Հայք՝ կշիւ, Պարսք՝ տրազուկ⁸: 12 Յոյնք՝ սկորոպիոս, Հայք՝ կարիճ, Պարսք՝ գրեշգոմ⁹: 13 Յոյնք՝ պաւկսուտիաւս, Հայք՝ աղեղնաւոր, Պարսք՝ նեմասպ: 14 Սոքա երեքեան յեղանակ աշնանային: 15 Յոյնք՝ աղաւկերաւս, Հայք՝ այծեղջիւր, Պարսք՝ բզասար: 16 Յոյնք՝ իւդեոիքաւս, Հայք՝ ջրհոս, Պարսք՝ դոլ: 17 Յոյնք՝ իւքթիւս, Հայք՝ ձուկն, Պարսք՝ մահիկ: 18 Սոքա երեքեան եղանակ ձմեռային: 19 Երկոտասաներեքեան սոքա շարժին չորիւք տարբերու-

թեամբք՝ առ ի լինել միոյ տարեւոր ժամանակի, քանզի տարածեալ ունին գերկինս ամենայն, կցեալ զմիմեանց, պատեալ փորուածիւ: 20 Եւ են դոքա ճանապարհ արեգական եւ լուսնի եւ եւթանց մոլորակացդ, բերեն յինքեանս բարձրացուցանելով եւ խոնարհեցուցանելով¹⁰, մաւտեցուցանեն ի մեզ եւ հեռացուցանեն, կատարեն գիշերաւ գտիւս փոքրկացուցանելով եւ մեծացուցանելով. եւ առնեն ջերմութիւն եւ ցրտութիւն, խոնաւութիւն եւ երաշտութիւն, եւ իշխեն փոփոխմանց աւզոց եւ ժամանակաց: 21 Բայց եթէ Աստուածային ինչ հասանէ հրաման, փոփոխին¹¹ տարերց բնութիւնք՝ թէ արդեաւք յողորմութիւն կամ ի խրատ՝ որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամարային¹² ցրտութիւն եւ¹³ ձիւնաբերութիւն, եւ շնչումն սառնամանեաց՝ որ է արտաքոյ բնութեան ժամանակի, գիտելի¹⁴ նմա միայնոյ: 22 Արդ մեզ¹⁵ գիտել, զոր սահմանեաց Աստուած՝ զյեղանակս¹⁶ չորից ժամանակաց, որպէս տայր քաջալերս արդարոյն՝ յորժամ ել ի տապանէն. Յայսմ հետէ գարուն եւ ամառն մի դադարեցեն՝ որպէս դադարեցին յամի ջուրցն սաստկութեան: 23 Յակնարկելոյ արարչին խանգարումն աւզոյն լեալ՝ վասն անբաւ խոնաւայուզից: 24 Արդ՝ այն նորա Աստուածութեանն են ծանաւթք եւ անգէտք ի մարդկանէ. իսկ որ բնական բերմամբ հրամայեցաւ լինել, այնմ կարող եմք հասու լինել,

1 d գորոշումս

2 ձիւտը՝ վարակ

3 d տիտիմոս

4 ձիւտը՝ դուպատար

5 ձիւտը՝ գարգանկ

6 ձիւտը՝ գուսիմա

7 չիֆ երեքեան

8 ձիւտը՝ տարագուկ

9 ձիւտը՝ քեթում

10 d խոնարհացուցանել

11 dP վասն որոյ փոփոխին

12 d յարմարին փխ յամարային

13 RP կամ փխ եւ

14 dRP եւ գիտելի

15 P ի մեզ

16 P գյեղանակս

որպէս ուսաք ի բազմափորձութեանց գիտութեամբ զարդուդ, ո՛չ միայն գեղանակա չորից ժամանակաց, այլ եւ զանցնիւր աստեղատանցդ զամսական իշխանութիւն, եւ բաւանդակութիւն առանձնական ընթացիցդ յամս բազումս, ըստ յորովութեան տարեաց բոլորակին, իւրաքանչիւր շրջագայից, նոյնպէս եւ զեւթանեցունց մոլորակացդ անուանելոց, ոչ միայն յամս եւ յամիսս, այլ եւ յաւուրս շաբաթու՝ զանցնիւր աստեղ աւր յայտնելով. զոր եւ ես ձեզ նկատեմ գրել զիւրինս, եւ ոչ դժուարահասանելիս՝ որպէս զարտաքնոցն:

25 Արդ կոչեցեալն ի նոցանէ յընթացողաց աստղ եւթներեակն է. եւ զրեալ զաւուրս շաբաթուց՝ հանյաւէն¹ յարեգակն, այսինքն միաշաբաթուջն, որպէս եւ ձաւնեալ իսկ է հեթանոսաց զաւուրս շաբաթու՝ արեգական եւ լուսնի, եւ եւթանց մոլորակացդ, զոր հարկաւորիմ նոյն անուամբ յորջորջել, զոր կոչեն Յոյնք, Հայք եւ Պարսք: 26 Միաշաբաթ էդէաւս², արեգակն, խորաշէտ³: 27 Երկշաբաթ սեղիւնաւս, լուսին, մանգ: 28 Երեքշաբաթ առէս, հրատ, նարգ: 29 Չորեքշաբաթ երմէս, փայլածու, կոճ: 30 Հինգշաբաթ դաւս⁴, լուսնթագ, տէրընջ: 31 Ուրբաթ փորողիտէս⁵, լուսաբեր, անհետբա⁶: 32 Շաբաթ կռոնոս, երեւակ, զրուան: 33 Ասեն հեթանոսք ի սոցանէ զոմանս բարերարս եւ զոմանս թշուառացուցիչս, որպէս խնդրեն տանուտէրութիւնս: 34 Առէս⁷ աստեղ, որ է երեքշաբաթ, զոր ասեն ոչ բարիոք⁸ ճանապարհորդել կամ առնել

սկիզբն գործոյ: 35 Նմանապէս զտանուտէրութիւն կռաւնոս աստեղ, որ է շաբաթ, զոր ասեն ամենայն թշուառութեան պատճառ: 36 Բայց մեզ քաւ եւ մի՛ լիցի զաւուրս խտրել, վասնզի ի բարիս ստեղծ Աստուած. եւ ո՞ր աւր բարի իցէ քան գերեքշաբաթն, որ է ըստ թուոյ Երրորդութեանն, եւ երկիցս ի Տեառնէ լսեաց յարարչութեանն՝ թէ բարի է: 37 Կամ զի՞նչ քան զաւրն շաբաթու բարի է, զոր Աստուած սրբեաց, եւ աւրհնեաց եւ հրամայեաց ի նմա հանգիստ եւ թողութիւն: 38 Քանզի բոլոր ինչ մատակարարելոց է արեգակն եւ լուսին. եւ որ ինչ⁹ յորոց երկրի են, առանց ընթակացս այսոցիկ են: 39 Կարեւոր է ուսուցանել զարեգակնայինն եւ զլուսնային անանձնաւորութիւնն, որ եւ զինչ վիճակեալ է: 40 Քանզի արեգակն վիճակեցաւ զտիւն, եւ զարական կենդանատեսական եւ զարեւելեայ ծագումն: 41 Եւ ընծայաբերս ունի գերեւակին եւ զլուսնթագին աստղ: 42 Եւ լուսին հաւասար գիշերոյ, եւ իգական կենդանատեսակացս, եւ արեւմտական ծագմանն. եւ ընծայաբերս ունի զհրատին եւ զլուսաբերին աստղ: 43 Փայլածուն հասարակաց¹⁰ բնութեամբ գոլով եւ¹¹ ընդ արեգական յարեւելական ծագմանն կոյս հրճուելով: 44 Իսկ լուսին ի յարեւմտականն կոյս, նաեւ հասարակ իսկ բնութեամբ վիճակել, եւ ընդ բարերարսն բարերար եւ ընդ խարդախսն խարդախ: 45 Իսկ բարերար աստեղքն են՝ լուսնթագ, լուսաբեր. եւ խարդախք՝ երեւակ, հրատ: 46 Վասն երեւակին՝ առաւել ցրտութիւն ունելոյ, եւ հրատին՝ առաւել ջերմութիւն: 47 Իսկ փայլածուն հասարակաց բնութիւն. բայց խնդիրսն ընդ տունջենային ծնելութիւնն: 48 Արեգակն, լուսնթագ եւ

1 P d յան հաւրէն
 2 Յունարէն ήλιος
 3 Ճիշտը՝ խորշետ
 4 P դաս, ճիշտը՝ դիոս (Δίος)
 5 P Ավրողիտ
 6 P անետ, ճիշտը՝ Անստիտ
 7 d արիս
 8 P բարւոք

9 P ոչ ինչ փխ որ ինչ
 10 P հրաւիրակաց փխ հասարակաց
 11 P չիք եւ

երեւակ՝ ¹յարական կենդանակերպսն իշխելով, մանաւանդ լուսնթագ եւ երեւակ յարեւելեաց ծագման գոլով: ⁴⁹ Իսկ ի գիշերային ծնելութիւնսն լուսին, հրատ, լուսաբեր՝ արեւմտական ծագմանն. զիգական կենդանատեսակսն ունելով լուսնի վասն ծննդաբերութեան ասացեալ երկուց աստեղացս այսոցիկ:

1 ՅԱՂԱԳՍ ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ:

2 Երկինդ² եւթն պարունակք են, որ կոչին գաւտիք. սառնեղեալք գաւտին, որ կոչի³ երկնից ցրտաբնակ⁴, այրեցանաւդ գաւտին, որ կոչի շարահիւսակ, մեծասիր գաւտին, որ կոչի անգոն կոռոնաւոր. խառնարան գաւտին որ կոչի, որ եթերն բնակեալ է եւ արեգակն. եւ նա ունի զհոյս ընթացից իւրոց, զի ի հինգերորդ գաւտուջն է արեգակն. գեղեցկական գաւտին, որ կոչին՝ այս է, յորում է մոլորակացն առկայումն. եւ խոնարհ գաւտին որ կոչի՝ մերձ առ միւս գաւտին, որ միայն եթերն բնակեալ է, ուստի հրացանութիւն եւ փայլատակմունք լինին. խլրտմունք ամպոց, խոնարհմունք խոնաւոց, իջմունք անձրեւաց, ⁵եւ վնասք պէսպէս առաքին ի մեզ: 3 Քանզի այս գաւտիս, որ կիսալուսին է համակարգի, սա է դայեակ անձրեւաց եւ սնուցիչ բուրաստանաց: 4 Քանզի առաջին հարքն զլուսին դայեկան եւ սնուցիչ բուսոց անուանեցին: 5 Այս եւթն գաւտիքս են հակառակ միմեանց: 6 Առաջին գաւտին հաստատութիւն ունի նովաւ, որ կոչի ութերրակ, որ կոչի երկնից ցրտաբնակ. եւ զլերինս գովացուցանէ մեծ ցրտովն. եւ ի նմա են եւթն մոլար աստեղքն, որք են բնութեամբ ցուրտ, ուստի

զսաստկութիւն ցրտոյն ի բարձր կատարս լերանց իջուցանեն. եւ վասն այսորիկ խոնարհ տեղիք ջերմ եւ գոլ աւուրք են, զի ոչ գոյ ի նոսա սաստկութիւն ցրտոյն, ի բարձր կատարս լերանց իջուցանել ցրտակ անուանին, եւ զլերինս գովացուցանեն մեծ ցրտովն. նաեւ թաղկեալ հրոյն անկմունս շիջուցանի, որ կոչի անկումն արփուոյն, զոր ոմանք կաթ ծիրանագոլ⁶ ասացին. եւ կէսք՝ հին արեգական ճանապարհ, եւ այլք՝ կառս երկնից. կէսք՝ պատառումն. կէսք՝ սպի տարածեալ⁷ եւ կէսք յարգագողս զհետ աստուածոցն. իսկ ոմանք մսուր եւ կայան աւղոյն անուանեցին: 7 Այլ ոչ է այդ ամենայն, այլ թաղկեալ հուր է, եւ մանր աստեղացն ցոլումն լուսոյ. զի շարժեալ է եւթն գաւտեացն յաղամողել հրոյն անգայտութիւն ունի զվերին հուրն, արգելլով զցոլումն գնացից վերին հրոյն թաղկեցելոյ. եւ հասեալ ի կիմիրական գաւտին՝ շիջանի այրեցանողն, ունի զարփին թուրցեալ եւ գմանրաստեղս. ուստի յայսմ լուսաւորի արեգակն, գնալով երեքտասան աւուրս ընդ նա, եւ ապա ամենայն լուսաւորքն յարեգականէն առոգանին⁸: 8 Ի մեր գաւտուջ են ոգիք մարդկան ըստ հարցն իմաստնոց, ի նմին ժողովին կողմանաւորք մերոցն: 9 Արդ այս գաւտիս զգունդ կիսագնդին հանապազ ի գիշերի տեսանես⁹, եւ ոչ փոփոխի ի գիշերի. եւ վեցն առաւաւտուն ընդ արեգականն ելանեն եւ գնան մինչեւ ի¹⁰ մուտս արեւու: 10 Բայց է խոյն եւ ցուլն եւ եկաւորին ընդ մի տեղուջ. եւ ընդ մէջն արփի: 11 Կշիռ, կարիճ, աղեղնաւոր, եւ ընդ մէջն արփի: 12 Այծեղջիւր, ջրհոս, ձուկն եւ ընդ մէջն արփի: 13 Ի սրական գաւտուջն են

1 P չի՛լ յարական կենդանակերպսն իշխելով, մանաւանդ լուսնթագ եւ երեւակ
2 P երկինք
3 d ասի փխ կոչի
4 P իրրից տարբրակ փխ երկնից ցրտաբնակ
5 P կրնատուած է՝ եւ վնասք ... բուրաստանաց

6 PdR կարք ծիրանագոլ
7 P տարեալ փխ տարածեալ
8 լուսաւորին փխ առոգանին
9 dP տեսանէ
10 d մինչ ի

երկոտասան ախտարականքն¹, որ կոչին կենդանակերպք: 14 Ի խառնարան գաւտ-
 ւոջն՝ արեգակն եւ եթերն երկրորդ, եւ եր-
 կու աստեղքն ընդ արեգական, որ կոչին
 արեգականաբերք: 15 Ի գեղեցկական
 գաւտւոջն՝ լուսինն եւ հինգ² մոլար աս-
 տեղքն, որ կոչին առիս եւ կռինիս: 16 Ի
 խառնարան գաւտւոջն՝ եթերն երկրորդ:
 17 Այս եւթն գաւտիքս են հակառակ մի-
 մեանց: 18 Արդ այս գաւտիքս են բաժինք
 գաւտկաց: 19 Խոյն ունի զիշխանականն,
 զգեղեցկականն, զգանգրական հերսն:
 20 Յուլն ունի զուժեղնականն: 21 Երկա-
 ւորեակն՝ զմիջասահմանականն: 22 Խեց-
 գետինն՝ կողմանաւոր է եւ գէջ: 23 Ա-
 ուիւծն՝ բբջաւղ է եւ հողմին, մեծակն է,
 խանգարական եւ գոռոզ: 24 Կոյսն՝ զար-
 դասիրական է, գէջ եւ գեղեցիկ: 25 Կշիռն՝
 հարաւական է եւ զարդարական: 26 Կա-
 րիճն՝ ծնելական է³ եւ խոժոռական: 27 Ա-
 ղեղնաւորն՝ պատերազմողական է եւ զաւ-
 րաւոր: 28 Այծեղջիւրն՝ զանգիտական է եւ
 անբանական: 29 Զրհոսն՝ գիշական է եւ
 խառնական: 30 Զուկն բարեխառնական է
 եւ ընդգէմ հարկանէ: 31 Խոյն, ցուլն եւ ե-
 կաւորին՝ Պարսք եւ Բաբելովն՝ որ կոչին
 տուն⁴ Տէրունական: 32 Խեցգետին, ա-
 ուիւծ, կոյս՝ Հայք եւ Կորդիակք եւ Յոյնք՝
 որ կոչին գիշերականք եւ կողմանացիկք:
 33 Կշիռն, կարիճն, աղեղնաւորն, այծեղ-
 ջիւրն, ջրհոսն, ձուկն՝ տուն որ մէջ է ընդ
 ամենայն երկիր, զի երկոտասան մասն եր-
 կին է, եւ մի մասն ցամաք, մետասան
 մասն ծով է, եւ այս տունն ի վեց մասինն
 երկնից է, հինգ ծովու է, եւ մի մասն ցա-
 մաքի:

1 P ախտարքն
 2 d եւթն փխ հինգ
 3 dP չիբէ
 4 R տուն փխ տուն

1 ՊԱԻՂՈՍԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ
 ՆԱԽԵՐԳԱՆ Ի ՆԵՐՔՍԱԾՈՒԹԵՆԷՏ⁵
 ՅՈՅԺ:

2 Գեղեցկաբար ով որդի սիրելի Կրաւ-
 նամովն, ստագրաւզս⁶ զմեզ գրեալ յոմանց
 յառաջ քան զայս արտադրութիւն⁷ ներք-
 սածականացն, յորդորեցեր միւս շարադա-
 սել, նուազեալ ոչ իւրք յայնցանէ, որք ի
 նոյն նախադրութեան պատշաճ⁸ ի տեսու-
 թեան համանգամայն եւ հարկեցուցանե-
 լով զՊտղոմեան վերաբերութիւնս, համե-
 մատելով առն յանդան՝ արտագրել իբրեւ
 զայնոսիկ պիտանեզոյնն հասանելով մեր:
 3 Նա եւ նորին իսկ Պտղոմեայ յաղագս ա-
 մանակաց⁹ կենաց՝ նոքաւք զիրագործու-
 թիւնն առնելով. եւ Ապողինարի հրաման
 տալով առ ի յարձակչեն եւ տանուտեառն,
 եւ բացբարձրութեան¹⁰: 4 Այսոքիւք վա-
 ուին ի վերայ այսոցիկ. եւ Ապողինի Լաւո-
 ղիկեցոյ ինքեան յառաջին իւր հինգ մա-
 տեանսն, զսրովելով զեգիպտացիսն, որպէս
 թէ բազում մոլորութիւն լեալ իցէ¹¹ նոցա ի
 կենդանատեսակացն վերաբերութիւն:

5 Ա. Յաղագս կենդանատեսակ բոլո-
 րատեսութեան: 6 Կենդանատեսակ բոլո-
 րակութիւն շարժի առչեղապէս, բաժանեալ
 ի հատածս երկոտասան, որ կոչին կենդա-
 նատեսակք: 7 Եւ ունի կենդանատեսակն
 պարունակս երիս, մասունս երեսուն. եւ
 մասն ունի մասունս վաթսուն եւ ման-
 րերկրորդակս¹² վաթսուն:

8 Բ. Յաղագս խոյին: 9 Արդ է սկիզբն
 կենդանատեսակ բոլորակութեան խոյն, ա-
 րական, հասարակաւրեայ յեղանակ գար-
 նանային, տուն հրատի. բարձրութիւն ա-

5 d ներբագործութեան
 6 d ստաղրոզս
 7 d արտադրութեան
 8 d նախադրութիւն պատշաճի
 9 R ժամանակաց
 10 P եւ ի բացբարձրութեան
 11 d չիբէ իցէ
 12 Pd մանրերկրողակ

րեգական իննեւտասան նուաստութիւն երեւակի մասանց քսան. եռանկիւնի¹. ի տուրնջեան արեգական, իսկ ի գիշերի լուսնթագի: 10 Ձաւնեալ է նահանգին Պարսից. բաժանաւ Հողմոյն արեւելականի եւ տիրեալ գլխոյ եւ բոլոր երեսացն: 11 Եւ ելանէ կենդանատեսակ ըստ եգիպտացւոցն եւ Աղեքսանդրացւոցն նահանգին, որ եւ ելանէ² յաներեւութէն յերեւելի երկիրն ի ժամու միում Հասարակաւրոյ եռանկիւնի իննեակս, է ամանակացն քսան եւ մի եւ երկուց մասանց. եւ է յայսմիկ կենդանատեսակի երկնամիջոցակէտն երկրական³ տրամադրութեանց:

12 Գ. Յաղագս ցլուն: 13 Երկրորդ կենդանատեսակ է ցուլն. իգական, Հաստատուն, գարնանային. տուն լուսաբերի. բարձրութիւն լուսնոյ. ունի մասունս երիս. նուաստութիւն ոչ ուրեք. եռանգիւնի, ի տուրնջեան լուսաբերի, իսկ ի գիշերի լուսնոյ, Ձաւնեալ է նահանգին Բաբելացւոց. բաժանաւ Հողմոյն Հարաւոյ. եւ տիրեալ է ուլանն եւ պարանոցին: 14 Եւ ելանէ կենդանատեսակ յաներեւութէն յերեւոյթն ի ժամու միոջ, եւ երկուց մասանց, եւ ամանակաց քսան եւ Հնգից առաջիկայ նահանգին:

15 Գ. Սակս եկաւորի: 16 Երրորդ կենդանատեսակ է եկաւորին⁴. արական. երկտարրական. մարդակերպ. տուն փայլածուին, երմու բարձրութեանն ոչ ուրուք նուաղութեան, ոչ ուրուք եռանգիւնի ի տուրնջեան երեւակի կրաւնոս, իսկ ի գիշերի փայլածուի. եւ ձաւնեալ է նահանգին Գամրաց, բաժանեալ Հողմոյն Լիբէացւոց. եւ տիրեալ է ուսոց եւ ձեռաց եւ մատանց: 17 Ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւոյթն ի ժամու միում, եւ երկուց մա-

սանց, եւ եւթն մասին. եւ քառասունեւհինգ⁵ երմասին յիշեցելում նահանգին, եւ ամանակաց եւ քսան եւ մի երրորդ մասին: 18 Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի գարնանային ժամուն յեղանակ, որ կոչի աւզ:

19 Ե. Յաղագս խեցգետնի⁶: 20 Չորրորդ կենդանատեսակ է խեցգետին. իգական, յեղանակ ամառնային. տուն լուսնոյ. բարձրութիւն լուսնթագի ի մասունս եւթնեւտասն⁷ նուաստութիւն Հրատի արէս՝ առ ի մասունս քսան եւ ութ. ի տուրնջեան լուսաբերի Ափրոզիտէս, իսկ ի գիշերի⁷ Հրատի. եւ ձաւնեալ է նահանգին Հայոց, բաժանեալ Հողմոյն Հիւսիսոյ, եւ տիրեալ է լանջաց: 21 Եւ ելանէ կենդանատեսակն յաներեւութէն յերեւելի երկիրս ի ժամս երկուս եւ ինն երմասին, եւ ամանակաց երեսուն եւ մի. եւ յայսմ կենդանատեսակի աշխարհային ժամագէտն:

22 Զ. Յաղագս առիւծուն: 23 Հինգերորդ կենդանատեսակ է Առիւծն. արական. Հաստատուն. ամառնային. տուն արեգական. բարձրութիւն ոչ ուրուք. եռանգիւնի, ի տուրնջեան արեգական, իսկ ի գիշերի լուսնթագի, եւ ձաւնեալ է նահանգին Ասիացւոց. բաժանեալ է Հողմոյն արեւելից. եւ տիրեալ է կողից. եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամս երկուս, եւ երիս մասունս. եւ ամանակս երեսուն եւ հինգ:

24 Է. Յաղագս կուսանակի⁸: 25 Վեցերորդ կենդանատեսակ է կուսանակն. իգական. ամառնային. երկտարրական, տուն եւ բարձրութիւն փայլածուի՝ ի մասունս Հնգետասան. նուաստութիւն լուսաբերի՝ առ ի մասունս քսանեւեւթն. եռանգիւնի, ի տուրնջեան լուսաբերի եւ գիշերի լուսնոյ, եւ ձաւնեալ է նահանգին Քաղղէացւոց⁸,

1 R ամնուրէ՛ եռանկունի
2 PdR որ է երկրորդ փխ որ եւ ելանէ
3 R արեգական փխ երկրական
4 P եկաւորոյն

5 d հինգ փխ բառասունեւհինգ
6 P խեցգետնացն
7 d չի՛ գիշերի
8 P Քաղղէացւոյ

բաժանեալ հողմոյն հարաւոյ. եւ տիրեալ է կշտիցն¹, եւ ստորին որովայնին եւ ամենայն փորոտւոյն: 26 Եւ ելանէ յաներեւոլթէն յերեւոյթ երկիրս ի ժամս երկու եւ երիր մասին, ²եւ է երկ[կ]մասին իՅԵ երմասին եւ ամանակաց է եւ Գ մասին: 27 Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի ամառնային ժամուն յեղանակն, որ կոչի հուր:

28 Ը. Յաղագս կշոյն: 29 Եւթներորդ կենդանատեսակ է կշիռն. արական, հասարակաւրեայ. յեղանակ աշնանային. տուն լուսաբերի, բարձրութիւն առ ի մասունս երեւակի. ի նուաստութիւն արեգական՝ առ ի մասունս իննեւտասն, եռանգիւնի, ի տուրնջեան երեւակի, ի գիշերի փայլածուի. եւ ձաւնեալ է նահանգին Լիբէացոց եւ Կիւրենացոց. բաժանեալ է հողմոյն Լիբէացոց. եւ տիրեալ է կոթանցն³, եւ ելանէ կենդանատեսակն յաներեւոլթէն յերեւոյթ ի ժամս երկու, եւ երեք մասին եւ քառասուն մասին, եւ ամանակաց երեսուն եւ ինն եւ եւթն մասանց. եւ է երկրական տրամադրութեանն կէտ եթերական:

30 Թ. Յաղագս կորին: 31 Ութերորդ կենդանատեսակ է կորն. հաստատուն. աշնանային, տուն հրատի, բարձրութիւն ոչ ուրուք⁴. նուաստութիւն լուսնի՝ առ ի մասունս երեք. եռանգիւնի, ի տուրնջեան լուսաբերին, ի գիշերի հրատին. եւ ձաւնեալ է նահանգին Իտալացոց, բաժանեալ հողմոյն հիւսիսոյ. եւ տիրեալ է առնացի անդամոցն եւ գանձակի եւ ցայլիցն: 32 Եւ ելանէ կենդանատեսակն յաներեւոլթէն յերեւոյթն ի ժամս երկու, եւ երեք մասունս. եւ ամանակս երեսուն եւ եւթն⁵:

33 Ժ. Յաղագս աղեղնաւորին: 34 Իններորդ կենդանատեսակ է աղեղնաւորն,

երկտարրական, աշնանային. տուն լուսնութագի. եւ ձաւնեալ է նահանգին Կիլիկեցոց եւ Կրետացոց, բաժանեալ հողմոյն հարաւոյ, եւ տիրեալ է երանացն. եւ ելանէ յաներեւոլթէն յերեւոյթն ի ժամս երկու եւ ինն երմասին, եւ յամանակս երեսուն եւ մի, եւ երեք մասին: 35 Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի աշնանային ժամուն յեղանակ, որ կոչի երկիր:

36 ԺԱ. Յաղագս այծեղջերն: 37 Տասներորդ կենդանատեսակ է այծեղջիւրն. իգական, յեղանակ ձմեռնային. տուն երեւակի. բարձրութիւն հրատի՝ առ ի մասունս հինգետասան. եռանգիւնի. ի տուրնջեան լուսաբերի եւ ի գիշերի լուսնոյ. եւ ձաւնեալ է նահանգին Ասորոց, բաժանեալ հողմոյն հարաւոյ. եւ տիրէ ծնագացն⁶. եւ ելանէ յաներեւոլթէն յերեւոյթն ի ժամու միում եւ յերկու մասին եւ եւթն մասին եւ քառասուն եւ հինգ երմասին. եւ ժամանակաց քսան եւ ութ եւ երից մասանց: 38 Եւ երկրական⁷ տրամադրութեանն կէտ սուզական:

39 ԺԲ. Յաղագս ջրահեղին: 40 Մետասաներորդ կենդանատեսակ է ջրահեղն. արական. հաստատուն. ձմեռնային. տուն երեւակի. բարձրութիւն ոչ ուրուք⁸. նուաստութիւն ոչ ուրուք՝ եռանգիւնի. ի տուրնջեան երեւակի, ի գիշերի փայլածուի. բաժանեալ հողմոյն Լիբէացոց. եւ ձաւնեալ է նահանգին Եգիպտացոց. եւ տիրեալ է սրանցն. եւ ելանէ յաներեւոլթէն յերեւոյթն ի ժամու միում, եւ երկուց մասանց եւ ամանակաց քսան եւ հինգ:

41 ԺԳ. Յաղագս ձկանցն⁹: 42 Երկոտասան կենդանատեսակ է ձկունք. իգական. երկտարրական. ձմեռնային. տուն լուսնութագի. բարձրութիւն լուսաբերի՝ առ մա-

1 P կշտիցն

2 P չիբ եւ է երկմասին ... եւ Գ մասին

3 P կաթանցն փխ կոթանցն

4 dR ուրեբ

5 d հիւց փխ եւթն

6 P չիբ եւ տիրէ ծնագացն

7 R եւ արեգական փխ երկրական

8 d ուրեբ

9 d ձկան

սուսնս քսան եւ հինգ, նուաստութիւն փայլածուի՝ առ մասուսնս հնգետասան. եռանգիւնի. ի տուրնջեան լուսաբերի, ի գիշերի հրատի. ձաւնեալ է նահանգին Կարմիր ծովուն եւ Հնդկաց երկրին. բաժանեալ հողմոյն հիւսիսոյ. եւ տիրեալ է թաթից ոտիցն եւ կոչեցելու՞մ ծայրից մատանցն, եւ ինն երմասին¹: 43 Եւ ելանէ յաներեւութէն յերեւոյթն ի ժամ մի, եւ երից մասանց. ²եւ ամանակաց քսան եւ հինգ եւ երկուց մասանց: 44 Եւ յայսմ կենդանատեսակի աւարտի ձմեռնային յեղանակ, որ է Չուր:

45 ԺՂ. Վերագլխութիւն: 46 Երկոտասան կենդանատեսակացն ըստ իւրաքանչիւր տարբերութեանց երկոտասան կենդանատեսակացն այսպէս ինչ ասաց: 47 Բայց առ միահամուռ զնոսա իմանալ՝ այսպէս արտադրիցի: 48 Արականք են այստքիկ՝ խոյն, եկաւորն, առիւծն, կշիռն, աղեղնաւորն, ջրահեղն. իսկ իգականք սոցա մնացուածքն՝ ցուլն, խեցգետին, կուսանակն, կորն, այծեղջիւրն, ձկունքն. եւ համանգամայն իսկ ասել, որքան աւելորդութիւն ունելով³ սոցա՝ յառաջնմէն հաւելով ի խոյնն, այստքիկ քեզ արականք իմացեալ լիցին, իսկ որքան հաւասարք՝ իգականք: 49 Իսկ յեղանականք՝ խոյ, խեցգետին, կշիռ, այծեղջիւր: 50 Իսկ հասարակաւորքն՝ խոյ, կշիռն: 51 Իսկ զուգաթիւքն սոցա են հաստատունք՝ ցուլն եւ առիւծն, կարիճն, ջրահեղն: 52 Երկտարրական սոցայց զաւրութիւն գոլով են այստքիկ՝ երկաւորեակն եւ կուսանակն, աղեղնաւորն. եւ շարառոցելով⁴ ասել, որքան քառիւքն բաղկացեալ այստքիւք, զնոյն կենդանատեսակաց բնութիւն: 53 Եւ բնակարանք են խոյի եւ կարճի՝ հրատ, արէս. ցուլն՝ լուսաբերի, ամբողջտեայ. երկաւորեակն

եւ կուսանակն՝ փայլածուի, երմու, խեցգետինն՝ լուսնոյ. առիւծն՝ արեգական. աղեղնաւորն եւ ձկունքն՝ լուսնթագի, դիոս. այծեղջիւրն եւ ջրահեղն՝ երեւակի, կրաւնոս: 54 Եւ բարձրութիւն են. խոյն՝ արեգական, ցուլն՝ լուսնոյ, խեցգետինն՝ լուսնթագի, կուսանակն՝ փայլածուի, կշիռն՝ երեւակի, այծեղջիւրն՝ հրատի, ձկունքն՝ լուսաբերի: 55 Եւ որ քան զայս հեռի տեսակով տրոհեալք են, այսոցիկ նուաստութիւնք են: 56 Իսկ եռանգիւնիքն՝ խոյն, առիւծն, եւ աղեղնաւորն՝ ի տուրնջեան արեգական, իսկ ի գիշերի լուսնթագի. ցուլն, եւ կուսանակն եւ այծեղջիւրն ի տուրնջեան լուսաբերի, իսկ ի գիշերի՝ լուսնոյ: 57 Իսկ երկաւորեակն, եւ կշիռն եւ ջրահեղն՝ ի տուրնջեան երեւակի, իսկ ի գիշերի՝ փայլածուի: 58 Խեցգետինն եւ կորն եւ ձկունքն՝ ի տուրնջեան լուսաբերի, իսկ ի գիշերի հրատի: 59 Եւ ընտանացեալ է առաջին եռանկիւնիւն արեւելից, երկրորդն՝ հարաւոյ, երրորդն՝ Լիբէացոց, չորրորդն՝ հիւսիսոյ: 60 Նաեւ ցաւակից լինին գաւառացն կենդանատեսակքն: 61 Խոյն՝ Պարսից, ցուլն՝ Բաբելացոց, երկաւորն՝ Գամբաց, խեցգետին՝ Հայոց, առիւծն՝ Ասիացոց, կուսանակն՝ Ելլադացոց եւ Յունաց, կշիռն՝ Լիբէացոց, կարիճն՝ Իտալացոց, աղեղնաւորն՝ Կիլիկեցոց, այծեղջիւրն՝ Ասորոց, ջրհոսն՝ Եգիպտացոց, ձկունքն՝ Հնդկաց աշխարհին:

62 ԺՆ. Յաղագս խառնարան աստեղաց⁵: 63 Շնաստղն, Խողովակն, Վաքն⁶, Ծիծառն, Արջն, Վիշապն, Բազմոտանին, Բեւեռքն երկնից, Խիփակն, Սայլն, միւս Սայլն, Մարզոնն, Կարճնդեաց, Ճոկանոտնն, Ջրաբաշխն, Խողն, Անդիակն, Արկաւղն: 64 Այս աստեղք են, որ ցուցանեն զանձրեւաց սաստկութիւն⁷: 65 Եւ որ ի

1 dRP իններ մասին
2 d չի՞ եւ ամանակաց ... եւ երկուց մասանց
3 R աւելորդութեան ունել
4 R շարառոցելով

5 R աստեղացոյ
6 R Վագն
7 d գանձրեւ սաստկութեան

ծովու գնան՝ սոքիմբք, մանաւանդ Սայլդ յայտնի ցուցանէ զնաւագնացաց զհետ, զի հիւսիւսական աստեղքդ ոչ են գնացականք, այլ կացականք: 66 Եւ շարժեալք ի վերին եւթն գաւտեացն, որպէս ի ծովու ալեկոծին: 67 Այս են նշանացոյց աստեղք: 68 Տխմարք եպերեն, որք ոչ գիտեն զգիրս: 69 Այլ Մովսէս գրէ թէ՛ Եդ զնոսա Աստուած ի նշանս եւ ի ժամանակս, եւ յաւուրս եւ ի տարիս^ա: 70 Կատարէ եւթներբեակ գաւտին: 71 Այս են աստեղք, որք են եւթն մոլորակք: 72 Զի գարեգակն եւ զլուսին ընդ եւթն մոլորակացն եղեալ հարցն իմաստնոց, եթէ ի տէրունականն խաւարումն դիպիցի, մեծ նեղութիւնք հասանեն երկրի եւ տագնապ, յոր եւ իցէ եւթն մոլորակացն:

73 Հրատն եւ լուսաբերն՝ յորժամ ընդ կարծին պարանոցն անցանեն՝ արեան նշանակ է, եւ վախճան նոցա՝ կորուստ երկրի: 74 Եւ եթէ ի կարճէն գալով լինի, որ բարկ աստղիկդ կայ ի գլխոյն, եւ ի վերայ բարկի անդ գտանին՝ մեծ նեղութիւնք² գան երկրի եւ տագնապ յոր եւ իցէ:

75 Փայլածուն յորժամ զվարսն ցուցանէ, զոր ոմանք գիսաւոր կոչեն, եւ առնու զգէսան իբրեւ զգալի, զի³ զլոյսն յինքն առնու, մեծ պատերազմունք եւ արիւնհեղութիւնք գան երկրի, եւ տագնապ՝ ի հարաւոյ կողմանն:

76 Խոյն, յորում են աստեղք եւթն, եթէ հայիս եւ տեսանես գեւթն եւ զչորս այլ զուգեալ առ իրեարս, գիտասջիր՝ զի⁴ եկեալ հասեալ են թշնամիք եւ զքեւ պատեալ, եւ գիտասջիր՝ զի ի խաղաղութեան մնաս:

77 Յուլն, յորում են աստեղք երկուտասան, եթէ հայիս⁵ եւ տեսանես զնոսա յեղջիւրս հարեալ, գիտեա՝ թե վաղվաղակի լինին պատերազմունք եւ կոիւք. բայց տարին՝ յաւոյց եւ յանճրեւաց լինի:

78 Երկաւորին, յորում են աստեղք երկու, եթէ տեսանիցես զնոսա ի լուծ ուղղորդ, գիտեա՝ թէ մեծամեծաց կորուստ գայ⁶, եւ տղայոց յախտից մահ. բայց տարին լի եւ պտղաբեր լինի:

79 Խեցգետին, յորում են աստեղք երեքտասան, որ կոչին կողմանագնացիկք, եթէ տեսանիցես⁷ զնոսա ի ճանապարհէն խոտորեալ, գիտեա թէ ապստամբութիւն լինի զաւրաց, մեկնեսցին յիւրաքանչիւր տերանց եւ թշնամիս բազումս ածեն ի վերայ երկրի. բայց երկրի վնաս ինչ ոչ կրեն առնել:

80 Առիւծն, յորում են աստեղք տասն, եթէ տեսանիցես զնոսա միաժողով, գիտեա թէ թագաւորք ելանեն, եւ մի (ի) նոցանէն կորնչի: 81 Եւ եթէ տեսանիցես զճանգն արիւնագոյն՝ գիտեա թէ ինքն կորնչի, զաւրքն ապրին. եւ արեգակն ի տարւոջն երեք անգամ խաւարի:

82 Կոյսն, յորում են աստեղք երեք, եթէ տեսանիցես զնոսա պայծառս, եւ այլանմանս, եւ մլմլոտս, գիտեա թէ ողորմութիւն Աստուծոյ գթացեալ է ի վերայ երկրի, եւ խաղաղութիւն լինի, եւ թշնամեաց կորուստ, երկրի լիութիւն եւ պտղոց առատութիւն:

83 Կշիռն, յորում են աստեղք երեք, եթէ տեսանիցես զնոսա զհարաւային կողմամբքն բարձր քան զմիւսն, եթէ ես ինչ ի վերայ թշնամոյն՝ ի բաց դարձիր, զի չես յաղթաւդ: 84 Ապա եթէ զհիւսիւսայինն տեսանես՝ բարձր երթ, զի յաղթես:

^ա Տէ՛*Ն՝. Ը 14:
 1 P հրատ եւ լուսաբեր
 2 d նուագութիւնք փխ նեղութիւնք
 3 P չիք զի
 4 P թէ փխ զի

5 d հասանես փխ հայիս
 6 d լիցի փխ գայ
 7 P տեսանես

85 Կարիճն, յորում են աստեղք երեսուն՝ կարգք կարգք, եթէ տեսանիցես զկարգն խառնեալ առ կարգն, գիտեա թէ առաջին առուրքն ձմերայնոյն քաղցր գան:

86 Աղեղնաւորն, յորում են աստեղք վեց, եթէ տեսանիցես զնոսա ի թրթումանց, գիտասալիր թէ առաքին ի նոցանէ աստեղք հանգոյնք, ծովք խոռվին, եւ ամպք ՚գուարճանան եւ թագաւորք զուարճանան:

87 Այծեղջիւրն, յորում են աստեղք երեք, մի քան զմի ձիգ, եթէ տեսանիցես զնոսա զկարճն եւ զերկայնն զուգեալ առ իրեարս՝ գիտեա թէ քեզ զնալ պիտի յերկրէս, եւ բազում այլ սիրելեաց ընդ քեզ. ապա թէ այլ լուսով տեսանես՝ գիտեա թէ բազում ծնունդք ի տան քո լինին:

88 Զրհոսն, յորում են աստեղք վեց:

89 Զուկն՝ աստեղք հինգ, մին՝ յորդ անձրեւաց նշանակիչ, եւ միւսն՝ խոռովութեանց:

90 Այս է յարեալ հմտութիւն ի կենդանատեսակս²: 91 Արեգակն զիւրաքանչիւր ժամանակս տարոյն կատարէ ի ձեռն երկուց կենդանակաց, զոր կոչեաց թակոյկս, վասն երից զաւրութեանց՝ զանազանելով ի միմեանց եւ մեկնելով, խառնուած³ միաբանութեան առնուն առ ի լինելոյ միոյ տարեւոր ժամանակի: 92 Որպէս գարունն՝ խոյ, ցուլ, եկաւոր: 93 Ամառանի՝ խեցզետին, առիւծ, կոյս⁴: 94 Աշնանի՝ կշիռ, կարիճ, աղեղնաւոր: 95 Զմերանի՝ այծեղջիւր⁵, ջրհոս, ձուկն: 96 Ընդ իւրաքանչիւր ումեք յոստոն թակոյկք տպա-

ւորեալք ընկուզագարդ⁶, եւ գնդաձեւ, եւ շուշան: 97 Իսկ զկենդանակացն զձեւ եւ զբնութիւն ցուցանէ ընկուզոյ, թերեւս զի յառաջագոյն բոյս արձակէ եւ յետոյ ծաղկէ: 98 Թուր թէ վասն ի շարժմանէ եղելոյ ձայնիցն դաշնակաւորաց, զի ոչ եթէ անգէտք եմք ընկուզոյդ անուանն⁷, ըստ քարոզականին ասացեալ, զի խեցեմորթն նմա⁸ բնաւորեցաւ հնչումն եւ կայթումն գործել. եւ գնդաձեւ ճախարակեալ է, զի որ ինչ միանգամ ի յերկնի է, ամենայն ինչ զնդացեալ է, կատարեալ ձեւոյն հասեալ, որպէս երկիր: 99 Շուշանն՝ թերեւս վասն սպիտակութեանն եւ զի լուսատեսիլ իսկ է, իսկ աստեղք նշոյլք են, որ շուրջ զնովաւ առանցք են, զի իւրաքանչիւր յաստեղացն ճառագայթս արձակէ: 100 Ունի եւ բարբառութիւն բանդ շուշանի, հակառակ իմն ունի առ այլ ծաղկունս⁹, զի է որ ձմերան եւ ամառանի բոյս արձակէ: 101 Իսկ շուշան ի հասանել ամառանի, յորժամ այլքն թառամին. եւ նշանակ մարդկային աստուածայնոցն. խեղքն եւ պիղծք նուիրելոց¹⁰, անկարաւտքն ի կարաւտելոց: 102 Քանզի որ ջուրքն ոռոգանին, ծաղիկք են, իսկ շուշանն առ շամբն եւ յետշանն, յորժամ բոցատապագոյն է արեգակն: 103 Վասն որոյ մարգարէն զտեսական ազգն ասէ ծաղկել¹¹ առակով: 104 Զի ոչ ըստ նմին ժամանակի վարեսցի աջողութիւնք, այլ յորում ժամանակի այլքն անցին ի զուարճանալոյ¹². սկսցի արժանեացն եւ հաւանեացն, քանզի առանց ջրոյ ծաղ-

1 P չիբ գուարնանան ... մի քան
2 P կենդանատեսակս բառից յետոյ տեքստն ընդհատուի է
3 d խառնուած
4 d կոյ փխ կոյս
5 d այծեղջիր

6 d ամենուրեք՝ ընգուզ
7 d անուան
8 նորա փխ նմա
9 d ծաղիկս
10 d նւիրեալ
11 d ծաղկեալ
12 d զուարնանալոյ

կեալ¹ յարեգականէ բոցակէզ ոչ հաւասարէ² ընդ վայելչականին:

1 ՅԱՂԱԳՍ ՀՈՂՄՈՑ:

2 Հողմ արեւելեայ, որ կոչի ապիլիոտէս, ելանէ յԱնծանաւթ երկրէն Սինէաց-(ւ)ոց՝ փչելով հանդէպ Հնդկային լեռանցն. բաժանեալ է կշիռ կենդանակատեսակի:

3 Հողմ հարաւոյ արեւելեայ, որ կոչի եւրոնաւտաւս, ելանէ հանդէպ Պարսկական ծովուն եւ Սեռեդոն քաղաքի. բաժանեալ է այծեղջիւր կենդանակերպի:

4 Հողմ հարաւային, որ կոչի նաւտաւս, ելանէ հանդէպ Թերաւս եւ աւազ Ադեկսանդր քաղաքի. բաժանեալ <է> ադեղնաւոր կենդանակերպի:

5 Հողմ հարաւային արեւմտեայ, որ կոչի լիվոնաւտաւս, ելանէ հանդէպ Մեծ Եթովպիոյ եւ Նէապաւլսոյ. բաժանեալ է ջրհոս կենդանակի:

6 Հողմ արեւմտական³, որ կոչի գեւփիւռաւս, փչէ յՈվկիանոսէ ընդդէմ Ատլաս լեռինն, եւ Սեփտէ ծովուն. բաժանեալ է⁴ ի խոյ կենդանակի:

7 Հողմ հիւսիւսային արեւմտեայ, որ կոչի թերակայի, փչէ Հիպեո բուռինաւս Ովկիանու, հանդէպ Յունիոս եւ Ադրիական ծովուն. բաժանեալ է եկաւորն կենդանակի⁵:

8 Հողմ միջակ հիւսիւսոյ⁶, որ կոչի ապաուկտիաս, այսինքն արջնային, փչէ հանդէպ Կոստանդնուպաւլսի⁷. բաժանեալ <է> խեցգետին կենդանակի:

9 Հողմ հիւսիսոյ արեւելեայ, որ կոչի վաւուէս, ելանէ յԱնծանաւթ երկրէ, փչէ հանդէպ ծովուն Կասբից եւ Վրկանի. բաժանեալ է առիւծ կենդանակի: 10 Զամանէ սսէ Սողոմոն⁸ թէ՛ Խիստ է եւ աջոյ կոչի⁹: 11 Իսկ Բարոն Դաղմատացի ասաց՝ սկիզբն աւդոց: 12 Յորժամ յաճախ գեւփիւռոնն, զոր խոզն կոչեն, երեւի, սկիզբն աւնուցու փչելոյ՝ որ է յառաջ քան գեւթնիցդ փերրուարի¹⁰, մինչդեռ արեգակն ի ջրհոսին երիցս կամ հնգիցս¹⁰ խառնիցէ ի կենդանատեսակին, որ է գազանաբեկ:

13 Եւ դոցին հողմոցդ ծնունդք են այսոցիկ. սիք՝ ցրտային է, սիր եւ ցրտային եւ դառնահոտ, սողոխ՝ մաճսառութեամբ, բուք յամպոց¹¹ փչէ. մի յարի՝ ոչ հատակոտոր մրրիկ՝ հալ եւ հում. հողմ՝ արագատեալ հանդերձ ամպով շրջաբերեալ, յընդդիմահարութենէ¹² խիստ մարմնոց. շամանդաղ՝ աւելորդութիւն ամպոց է, զառ ի ջուր փոփոխմանց. մառախուղ յաղբերաց եւ ի գետոց ելանէ, եւ բնութեամբ ի վերայ լեռանց անկանի: 14 Շոգի՝ ի ջրոց՝ փոփոխումն յաւդ. եւ բնութիւն է խոնաւին ցրտութիւն. շոգալի բնութիւն, ջերմ եւ խոնաւ: 15 Գոլոչի՝ բնութիւն ջերմին եւ չորին. մռայլ՝ ցամաք ի հողոյ: 16 Ախմուր¹³ ցամաք եւ ծխալից ի հողոյ. եւ ի հողմոյ փչրելոյ: 17 Փոթորիկ՝ հատուած է պտուտակեալ ներքուստ ի վեր փողելով: 18 Վերածխութիւն է, գաւրութեամբ հուր. լիպարեան՝ որ հուր հնչէ ի սանդարամետէ¹⁴, վհականք¹⁵ որ ի դուրս¹⁶ քար ընկե-

1 d ծաղկել
2 b ոչ հաւասարել փխ ոչ հաւասարել
3 b արեւմտական բառից առաջ գրուած է՝ հիւսիւսային, եւ ներքեւից կէտեր են դրուած՝ որպէս սխալ գրուած բառ:
4 R բարձրանեալ է (ամենուրեք այսուհետեւ այսպէս)
5 d կենդանականի
6 R հիւսիւսոյ
7 d Կոստանդինուպաւլսի

8 R Սաղմոն
9 “ Ըստ Իւլ 15
10 d փերրարի
11 R հնգից
12 R յամբոց
13 d յընդդիմահարութեան
14 Rd խանդարամետ
15 d չիք վհականք
16 b դուրս

նու¹ կամ հող կամ կաւ: 19 Լուղակ² եւ³ բաւրա անդընդայինք վհականք գբովանդակութենէ, յորժամ լսես՝ համար կալջիր. տես զկարգն խառնեալ եւ երկինք եւ երկիր գուգակցութեամբ, յերկնից առցես զհամար, զաւղ ընդ հող խառնեալ. արդ մտացիս զաւրութեամբ, որ ի մէջ երկնից եւ երկիր զաւրութիւն ջրոց է, յայտնութիւն հողոյ է: 20 Տես զի ժողովեաց մածոյց զիւրովին⁴: 21 Կարգել կարգաց: 22 Արդ չորս ինչս պարտ է ասել զջուրս⁵: 23 Եւ որ իցեն՝ զոր ասացաք⁶: 24 Շտեմարան իմն է ի ջուրս, յորմէ աւղք ելանեն ի դուրս՝ հոսսափն, քառսափն, սարսափն, եւ մազատն: 25 Ելք սոցա ի ծովէ են: 26 Եւ գնացք սոցա⁷ յերկինս: 27 Ջշտեմարան նոցա եւ զելս նոցա անցեալ վերագոյն⁸ յայտ արարից, բայց այժմ գբովանդակութիւն ասացից: 28 Հիմունքն հաստատեալ են ի բանէն Աստուծոյ եւ ջուր փակեալ ի հիմուն, շտեմարանս ազգի ազ-

գի եւ պէս պէս զարմանալի: 29 Ի ջուրս աւղք պէսպէս եւ նշանաւորս ի շտեմարանս երկնի եւ երկրի, եւ գոյն գոյն, զարմանալի եւ ազգի ազգի յաւղս: 30 Ապա թէ ասիցէ ոք, եթէ հողմ ի ջրոյ է, եւ դու զի՞արդ ասես թէ՛ յաւղս, յայտնի ցուցից նմա: 31 Ջուր է լայնանիստ, շտեմարանափակ: 32 Աւղք անհանգիստք <են եւ> ելք նոցա յարտաքին ծովէ. եւ գնացք նոցա ի ներքին ջուրց: 33 Քանզի ծով, որ զծածուկ ոչ ունի՝ արտաքին է: 34 Եւ ընդ մէջ ջրոց եւ երկրի աւղք են: 35 Եւ բազումք անգամ վնասք եւ շարժմունք առնեն, եւ բազում անգամ յաւգուտ աղբերաց եւ յերակս ջրոց յաճախեն: 36 Եւ են այսոքիկ՝ յասումն, սուրհապն, անագումն, նեսփայ: 37 Այսոքիկ են, որ շարժումն առնեն: 38 Եւ երկինք հաստատեալ են ի վերայ երկրի: 39 Այսոքիկ են բաւանդակութիւն, զոր ասեմք: 40 Բովանդակութիւն սոցա ամենեցուն է Աստուած, որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

1 d վարքկուն փ/ս քար ընկեմու

2 d լուղագ

3 d չի՛ եւ

4 d գիրովին

5 d չուր

6 d ասացուի

7 d նոցա փ/ս սոցա

8 d անցել վերագոյն

**ԱՆԱՆԻԱՅԻ ՀԱՄԱՐՈՂԻ ՎԱՍՆ ԸՆԹԱՑԻՑ ԱՐԵՊԱԿԱՆ՝ ԸՍՏ
ԿԵՆՂԱՆԱՏԵՍԱԿԱՅՆ ԵՒ Է ՊԱՏԵԱՅՆ, ՉՈՐ ԿԱՏԱՐԷ Ի ՏՈՒՆՁԵ[Ա]Ն
ՅԱՒՈՒՐՍ ՅԿԵ ԵՒ ԺԱՄՍ Գ**

1 Մարտի ամսոյ որ աւր Ի, եբրայեց-
ւոցն աւելեացն Դ, մտանէ արեգակն՝ ի
խոյն, որ է գլուխն: 2 Ունի աստեղս ժՁ:
3 Իշխէ Պարսից ի գաւտիսն Խրատ, արե-
գակն, լուսաբեր՝ իշխելով Հողմոյն զեփո-
րայ, որ է արեւմտից՝ լինելով ի խոյին ա-
ւուրս Լ, եւ ժամս Ե, եւ մասն Դ. կատարէ
ի նմին ի վերին կիսագնդին զտունջենա-
յին ժամս ՅԿԵ եւ մասն Դ: 4 Տիւն ունի
ժամս ԺԲ, գիշերն՝ ԺԲ:

5 Ապրիլի, որ աւր ԻԱ, եբրայեցւոցն
[իւր]՝² Ա, ի տունջեանն ի Ժ ժամու
՝³մտանէ արեգակն ի ցուլն: 6 Ունի աս-
տեղս ժԲ: 7 [Ի]շխէ Բաբելոնացւոց ի գաւ-
տիսն փայլածուն⁴, երեւակ՝ իշխելով Հող-
մոյն յապէքս⁵, որ է յահեկէ արեւմտ[ից]
լինելով ի ցլին աւուրս Լ, եւ ժամս Ե, եւ
մասն Դ. [կատար]է ի վերին կիսագնդին
զտունջենային ժամս ՅԿԵ, [մ]ասն Դ:
8 Տիւն ունի ժամս ԺԳ, գիշերն՝ ժամս ԺԱ:

9 [Մայ]իս, որ աւր ԻԶ, եբրայեցւոցն
[սիւրան]՝⁷ Ա, ի գիշերն Ը [ժամու]ն ՝⁸մտանէ
արեգակն յերկաւորին: 10 Ունի աստեղս

ԺԲ. իշխէ Գամրաց ի գաւտիսն լուսն-
թագն, Խրատ, արեգակն՝ իշխելով Հողմոյն
Թարսակիսս, յաջմէ յարջնա(յ)նուոյ լինե-
լով յերկաւորին աւուրս Լ, ժամս Ե, մասն
Դ. կատարէ ի նմին ի վերին կիսագնդին
զտունջեան ժամս ՅԿԵ, եւ մասն Դ:
11 Տիւն ունի ժամս ԺԴ, գիշերն՝ Ժ:

12 Յունիս, որ աւր ԻԾ, եբրայեցւոցն
թամուզ Ա, ի տունջեանն ի Զ ժամու մտա-
նէ արեգակն ի խեցգետինն, որ է լանջքն:
13 Ունի աստեղս ժԷ. իշխէ Հայոց ի գաւ-
տիսն լուսաբեր, փայլածուն՝ իշխելով Հող-
մոյն ապակարտիսս, որ է արջնայնուոյ լի-
նելով ի խեցգետին աւուրս Լ, ժամս Ե,
մասն Դ. կատարէ ի նմին ի վերին կի-
սագնդին զտունջեանն ժամս ՅԿԵ, եւ
մասն Դ, դառնալով ի նուաստութիւն ե-
ղանակ ամառնային: 14 Տիւն ունի ժամս
ԺԵ, գիշերն՝ Ժ:

15 Յուլիս, որ աւր ԺԹ¹⁰, եբրայեց-
ւոցն աւ Ա, ի գիշերին ԻԴ ժամու մտանէ
արեգակն յառեւծն, որ է կողքն: 16 Ունի
աստեղս ժԿ: 17 Իշխէ Ասիացւոց ի գաւ-
տիսն երեւակն, լուսնթագ, խրատ. իշխէ
Հողմոյն բորեաս¹¹, որ է Հիւսիսային՝ լինե-
լով յառեւծուն աւուրս Լ, ժամս Ե, մասն
Դ. Գիշերն ունի ժամս Ժ, տիւն՝ ԺԴ:

1 Արեգակ բառը տեխնոլոգիայի գրեթէ ամենուրեք գրուած է գաղափարագրով Յ:
2 Լուսանցում գրուած է մարտի ԻԲ: Նիսա: Ա: Սկզբում գրուած է եղել նիսան, յետոյ ջնջուել, տարբեր թանաքով գրուած է բառի վերելում իար:
3 Բացթողում կայ այստեղ. պիտի եղած լինէր մտանէ արեգակն ի ցուլն <որ է պարանցն>:
4 Տեխնոլոգիայի ամենուրեք փայլածու բառից յետոյ բերում է նրա նշանագիրը Յ:
5 Բնագրում՝ ի ապէս
6 Այլ թանաքով Ի-ից յետոյ աւելացրած է Ա՝ ԻԱ:
7 Ամսի անունը եղել է իար. ջնջուած է եւ նոր գրչութեամբ գրուած սիւրան:
8 Բացթողում է նկատուում: Նախնական բնագիրը եղած պիտի լինի մտանէ արեգակն յերկաւորին <որ է ուս մտանցն>:

9 Տեխնոլոգիայի սխալմամբ գրուած է ԻԹ, որը տոմարական հաշուով չի համապատասխանում, ուստի եւ ուղղում ենք ՄՄ թիւ 1973 գրչագրի տեխնոլոգիայի հիման վրայ:
10 Մեր հաշուով այստեղ պիտի լինէր Ի փխ ԺԹ, բայց յարմար համարեցինք թողնել ինչպէս գրչագրումն է:
11 Բնագրում՝ բարեաս, որը գրչական սխալ է եւ պիտի լինի՝ բորեաս (βορέας):

18 Աւգոստոս, որ աւր ժԹ¹, երբայց-
ւոց իրոն Ա, տունջեանն Բ ժամուն մտանէ
արեգակն ի կոյսն, որ է կուշտն: 19 Ունի
աստեղս ժԳ: 20 Իշխէ Եղադացւոցն ի
գաւտիսն արեգակն, փայլածուն, լուսա-
բերն. իշխէ հողմոյն կեկիաս, յաջմէ արե-
ւելեան, լինելով ի նմա աւուրս Լ, ժամս Ե,
մասն Դ. կա[տարէ] ի նմա ի վերին կի-
սագնդին գտունջեան ժամս ՅԿ[Ե], մասն
Դ: 21 Գիշերն ունի ժամս ժԱ, տիւն՝ ժԳ:

22 Սեպտեմբեր, որ աւր ժԸ, երբայց-
ւոցն թշրին [Ա], աշնանային հասարակա-
ւորութիւն, ի տունջեանն ժԲ ժամուն
մտանէ արեգակն ի կշիռ, որ է կոթունքն:
23 Ունի աստեղս ժԲ: 24 Իշխէ Լիբեացւոց
եւ Կիւրենացւոց ի գաւտիսն երեւակն,
լուսնթագն. իշխէ հողմոյն եպիստիս, որ է
արեւելեան՝ լինելով ի կշիռն աւուրս Լ,
ժամս Ե, մասն Դ. կատարէ ի նմին ի վերին
կիսագնդին գտունջեան ժամս ՅԿԵ, մասն
Դ: 25 Գիշերն՝ ժամս ժԲ, տիւն՝ ժԲ:

26 Հոկտեմբեր, որ աւր ժԹ², երբայց-
ւոցն մահչրուան, Ա³, ի գիշերն ժ ժամուն
մտանէ արեգակն ի կարիճն, որ է առնի
անդամն: 27 Ունի աստեղս ժԲ: 28 Իշխէ
Իտադացւոցն ի գաւտիսն խրատ, արե-
գակն, լուսաբերն: 29 Իշխէ հողմոյն էի-
րոս, յահեկէ արեւելեան՝ լինելով ի կարիճն
աւուրս Լ, ժամս Ե, մասն Դ. կատարէ ի
նմին վերին կիսագնդին գտունջեան ժամս
ՅԿԵ, մասն Դ, գիշ⁴երն՝ ժԳ, տիւն՝ ժԱ:

30 Նոյեմբեր, որ աւր ժԷ⁴, երբայց-
ւոցն քասդեւ Ա, ի տունջեանն է ժամուն
մտանէ արեգակն յաղեղնաւորն, որ է ե-
րանք: 31 Ունի աստեղս Ի: 32 Իշխէ Կիւ-
ղիկեցւոցն ի գաւտիսն փայլածուն, երե-

ւակն: 33 Իշխէ հողմոյն Կոռնոտոս, յաջմէ
հարաւոյ՝ լինելով յաղեղնաւորին աւուրս
Լ, ժամս Ե, մասն Դ. կատարէ ի նմին ի վե-
րին կիսագնդին գտունջեանային ժամս ՅԿԵ,
մասն Դ: 34 Գիշերն ունի ժամս ժԴ, տիւն՝
ժ:

35 Դեկտեմբեր, որ աւր ժԷ⁵, եր-
բայ[եց]ւոցն տիբեթ Գ⁶, ի գիշերն Զ ժա-
մուն ⁷մտանէ արեգակն [յա]յծեղջերն. ու-
նի աստեղս ժԲ: 36 Իշխէ Ասորւոց [ի
գա]ւտիսն լուսնթագն, խրատ, արեգակն:
37 Իշխէ հողմոյն [նոտ]ոս, հարաւային՝
լինելով յայծեղջերն աւուրս Լ. [ժա]մս Ե,
մասն Դ կատարէ ի նմա ի վերին կիսագն-
դին գտունջեան ժամս ՅԿԵ եւ մասն Դ. ե-
ղանակ ձմեռնային դառնալով ի մեծու-
թիւն: 38 Գիշերն ունի ժամս ժԵ, տիւն՝
Թ⁸:

39 Յանուարի, որ աւր ժԹ, երբայց-
ցոցն շբաթ Դ⁹, ի տունջեանն Դ ժամու
մտանէ արեգակն ի ջրհոսն, որ է սրունքն:
40 Ունի աստեղս ԼԱ: 41 Իշխէ Եգիպտաց-
ւոցն ի գաւտիսն լուսաբերն, փայլածուն:
42 Իշխէ հողմոյն լիբիոտոս յահեկէ հա-
րաւոյ՝ լինելով ի ջրհոսին աւուրս Լ, ժամս
Ե, մասն Դ կատարէ ի նմին ի վերին կի-
սագնդին գտունջեան ժամս ՅԿԵ, մասն Դ:
43 Տիւն ունի ժամս ժ, գիշերն՝ ժԴ:

44 Փետրուարի, որ աւր ժԷ¹⁰ Երբա-
յեցւոցն ադար Դ¹¹, ի գիշերին Բ ժամուն
մտանէ արեգակն ի ձուկնն, որ է թաթ ո-
տիցն: 45 Ունի աստեղս ժԷ: 46 Իշխէ
Կարմիր ծովու եւ Հնդկաց, ի գաւտիսն ե-

1 Սկզբում եղել է ժԹ, որը մեր հաշուով միշտ չէ:
Ներքեւում Թ-ն ուղղուած է Ը-ով:
2 Առաջ գրուած է եղել ժԸ, յետոյ ջնջուել եւ
վերեւում գրուել է ժԹ:
3 Սկզբնական գրչութիւնը եղել է Բ:
4 Նախնական գրչութեամբ եղել է ԺԷ, իսկ յետոյ
ուղղուել է ժԹ:

5 Է-ն գրուած է այլ թանաքով վերելում:
6 Գ-ի վերելում նոր թանաքով աւելացուած է Ա:
7 Այստեղ պակաս է նկատուում. բնագրում եղած
պիտի լինի՝ մտանէ արեգակն յայծեղջերն <որ
է սրունքն>:
8 Այլ թանաքով ջնջուած է Թ-ն եւ վերելում
գրուած Զ:
9 Սկզբնական գրչութեամբ եղել է Գ:
10 Է-ն ջնջուած է եւ վերելում գրուած Ե:
11 Նոր թանաքով Դ-ն սարքուած է Ա:

րեւակն, լուսնթագն, խրատն. իշխէ հող-
մոյն լիւփիա, յաջմէ արեւմտից՝ լինելով ի
ձկանն աւուրս Լ, ժամս Ե, մասն Դ. կատա-
րէ ի նմա ի վերին կիսագնդին զտուն-
ջեանն ժամս ՅԿԵ, մասն Դ: 47 Տիւն ունի
ժամս ԺԱ, գիշերն՝ ԺԳ:

48 Յայսֆան խորիրդոյս յորժամ ստեղ-
ծաւ արեգակն ի խոյին յերկնամիջակին յա-
րեւելահատածին եւ գնաց ի բարձրութիւն
ի խեցգետին:

49 ԱՄԻՍՔ ԵՐՐԱՅԵՑԻՈՑ: 50 Նիսան՝
Լ: 51 Ի սմա է մշտակայ զատիկն երրա-
յեցւոց: 52 Իար՝ Լ: 53 Սիւան՝ Լ: 54 Թա-
մուզ՝ Լ: 55 Ի սորա Ա է դարձ արեգական
եւ եղանակ ամառնային: 56 Աւ՝ Լ: 57 Ի-
լոն՝ Լ: 58 Թշրին՝ Լ: 59 Ի սորա Ա նուե-
րեալ աւր սուրբ կոչի: 60 Եւ [ի սորա] Բ է
հասարակաւորութիւն տունջեան եւ գիշե-
րոյ եւ եղանակ աշնանային: 61 [Եւ] ի Ժ
թշրին է միշտ աւր քաւութեանն, յորում

մտանէր քահանայապետն ի սրբութիւն
սրբութեանցն. եւ պապանձումն Զաքա-
րիայի, որ է սեպտեմբերի Իէ: 62 Եւ ի ԺԵ
է տաւն տաղաւարահարացն: 63 Եւ ի ԻԲ
յղութիւն Եղիսաբէթի: 64 Մահաշրուան՝
Լ: 65 Քասդեւ՝ Լ: 66 Տիբեթ՝ Լ: 67 Ի սորա
Գ է հա[սարակաւորութիւն տունջեան եւ
գիշերոյ]¹ եւ եղանակ ձմեռնային: 68 Եւ ի
ԻԱ է միշտ յայտնութիւնն: Շբաթ՝ Լ: Ա-
դար՝ Լ: 69 Աւելիք՝ Ե: 70 Եւ ի Դ աւե-
լեացն է միշտ հասարակաւորութիւն տուն-
ջեան եւ գիշերոյ եւ եղանակ զարնանա-
յին:

71

խթ ժա ժե	ծգ ե ժթ	աստ քո հաւն
կգ իգ ա	կգ ժե ժգ	

72

ա	ժե	ժ	ժգ	իբ	իգ	բ	ժա	ժթ	դ	ժգ	դ	ժգ	ի
իգ	իբ	դ	ա	ժբ	իե	ե	ժբ	իա	իէ	գ	ժե	իդ	իթ

1 Ուղղում ենք ըստ իմաստի. տեքստում, բացի
առաջին հա տառերից, միւսները չեն երեւում:

ՅԱՂԱԳՍ ԵՐԶԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ՝ ԹԵ ՈՐՊԵՍ¹ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅՆ ԹՈՒԵՅԱԻ² [ԱՆԱՆԻԱՅԻ ԵՒՐԱԿԱՅՈՒՅ ԱՍԱՅԵԱԼ]³

1 <Ա.ՅԱՂԱԳՍ ԵՐԶԱԳԱՅՈՒԹԵԱՆ
ԵՐԿՆԻՑ>:

2 Գործք Աստուծոյ ⁴մեծամեծ են^ա, *ասէ Իսրայէլի թագաւորն Դաւիթ, եւ զամենայն ինչ իմաստութեամբ արարեալ պատմէ աստուածային ⁵ստացուածոցս զոյս^բ. զի են՝ որք ի տեսութեան աչաց են, եւ են՝ որք յիմանալեաց⁶ քննութեան⁷:* 3 Արդ վերին զայն երկին⁸, զոր ⁹յոյնք եթերն կոչեն եւ քաղդէացիքն հուր թաղկեալ, որ կոչի հրատ բոցեղէն. զի է հուր՝ որ առանց նիւթոյ¹⁰ է, պարզ ըստ այլախառն¹¹ շարադրական մասինն, զի չէ յումեքէ, այլ յոչընչէ. եւ ոչ ոք ի նմանէ յեղելոցս, եւ ոչ ոք ի վեր քան զնա, այլ ինքն յինքեան¹² առանձնացեալ՝ անհատանելի էութեամբ¹³, պարզ միութեամբ, տարածեալ զաւրէն ¹⁴վերնայարկի ձեղուան, անթիւրելի շրջափակութեամբ, բոլորածեւ հարթութեամբ զերկրովս զնդանման¹⁵, անդադար եւ անյաղթելի շրջագայութեամբ երազապէս, անտեսանելի նիւթականութեամբ, իմանալի եւ եթ, որ յերկու կիսագունդս բովան-

դակի՝ ներքին եւ վերին՝ ըստ երկրիս գրի հանդէպ միմեանց:

4 Եւ ի ներքս փակեալ ունի զմեծս զայս զաշխարհ եւ զսաստկութիւն հողմոց¹⁶ – զի յանկութիւն¹⁷ է հրոյ եւ հողմոյ առ միմեանս – զի նորա¹⁸ շրջապատութեամբն իբրեւ կա[մ]ար¹⁹ իմն ձեւանայ ²⁰եւ աւղոցն անաւարութեամբն իբրեւ յաման ինչ ըմբռնեալ՝ որպէս ջուր ի խեցեղէն ինչ կամ ի նիւթեղէն աման ըմբռնեալ՝ պահի լուծութեամբ:

5 Այսպէս եւ հողմք ²¹ի սփիռ տարածմանէ ձեւացեալ եղեն վերին երկնի շրջափակութեամբ: 6 Բայց ունի նա զերկիր շրջափակութեամբ եւ զջուր ի ներքոյ փակեալ, որք ծովք անուանին. որպէս զթաղկութիւն²² բալոյ նորա ծին է, այլ սա ծննդական ջրոյ²³, որ լինի ի ձնշմանէ հողմոց: 7 Զի [ի] շարժկոծելն՝ կամ յորդորիւն կամ մեղմ՝ նա ըստ իրաց յուզմանն, որպէս ի կենդանուջն, թէ առաւելու հրայինն՝ նուազեցուցանէ զխոնաւայինն, եւ խոնաւումն բազմացեալ՝ զհրայինն պակասեցուցանէ: 8 Ընդ նմին աւզն՝ որ է շուռնչն՝ ի բաց բառնայ զջերմութիւնն²⁴, վճարի ի կենդանութենէ մահուամբ: 9 Զի պիտոյ

1 Ա որպէ
2 Բ քվեցաւ
3 Ա չիբ
4 Բ մեծամեծք են եւ զանազան
ա Սաղմ. ճժ. 2
5 Բ ստացուածոց ոգոյս
բ Հմմտ. Սաղմ. ճՊ. 24:
6 Գ իմանալեաց
7 Բ քննութեան
8 Գ գերկրին
9 Բ յոյնքն եթեր
10 Բ նիւթոյ
11 Ա շատ յանախ ունի լիւն-ի փոխանակ փշիկով զատ
12 Բ յինքեան
13 Բ է բնութեամբ
14 Բ վերնայարկի ձեղուան
15 Բ գլանման

16 Բ հողմոյ
17 Բ յանկութիւն
18 Բ նորայ, այսպիսի ուղղագրութիւն շատ յանախ Բ օրինակում
19 Ա կա.ար, լուսանցում աւելացրած է ենթադրարար՝ պակասար, նաեւ կամար, կաղապար: Մեմֆ ընտրում եմֆ կամար վարկածը: Բ օրինակն արդէն լուսանցագրութիւնները մտցրել է բնագրի մէջ այսպէս. իբրեւ կամար կաղապար կապար իմն ձեւանայ:
20 Բ եւ ողոցն անատրութեամբն
21 Բ ի սպիւռ
22 Գ քովկութիւն
23 Բ ջրո է
24 Բ զջերմութիւն

են գոյգլխառնութիւնք¹ չորիցս այս, զոր Աստուած խառնեաց ի միասին:

1 Բ. [ՅԱՂԱԳՍ ԱՆՁՐԵՒԱՑ ԹԷ ԶԻՆՉ Է:

2 Յաստուածային խորս իմաստութեան մարդկան մտածմունն² ոչ կարացին իջանել, բայց որ զքննութիւնս երկրի վարժին ուսմամբ ըստ երիցս այս դիմաց՝ չըջելով եւ տեսութեամբ եւ լսելով՝ կամեցան ոչ յամենեւին անհասութեան թողուլ զարարածս: 3 Եւ զծովն մեծ զայն շուրջ պատեալ զաշխարհովս³ ասացին. եւ ի բազում տեղիս եւ կողմանս, յարեւելս եւ յարեւմուտս,⁴ ի հիւսիսի եւ ի հարաւ եւ զոգս եւ խորշս⁵ դիմեալ ծովացեալ եւ անջրպետ կղզիք մնացեալք ի չորեսին կողմանս, յոր բնակեն բազում աշխարհք⁶: 4 Եւ կէսք ի նոցանէ Ատլանտինէ⁷ կոչեն զնա եւ այլք Ովկիանէ: 5 Որ ինչ փոփոխմունք յերկրիս կրին⁸ հողմոց եւ բերեն ախտս ըստ ազգի ազգի ցաւոց եւ առողջութիւն անտի լինին: 6 Եւ է ինչ որ դարձեալ իւրաքանչիւր երկրիս գոլորշեաց, յորոց գործի վնասք եւ աւգուտք: 7 Եւ երկու ջրոգիք փղծկալիցք յաճախ եւ ստէպ յերկրէ աստի յաւդս ելանեն, նրբապէս անտեսանելի աչաց, որ թուի թէ յարեւելս յաճախ լինի: 8 Եւ են դարձեալ, որ ի գետոց եւ յաղբերաց լինին: 9 Երեւին ինձ այսպէս նմանութեամբ՝ զի մին է ցամաք ծխալից, եւ է նա ի հողմոց անտի, եւ միւսն խոնաւ է թանձրամած՝ ի գիճականութենէն զփղծուկն տալով եւ առնելով. եւ ¹⁰ի նմանէ

1 Բ գոյգլխառնութիւնք
2 Բ չիբ
3 Բ գաշխարհով
4 Բ ի հիւսիսի / Ա ի հիւսւսի
5 Բ ի խորշ
6 Բ աշխարհք
7 ԱԲ անտլոտինէ
8 Ա եւ հողմոց եւ բերեն ախտս / Բ եւ հողմոց եւ բենախս
9 Բ շոբիբ փղցփալիցք
10 Բ ի նմանէ

լինին բալք եւ տեսիլք սառամանեաց, ամպք¹¹ եւ անձրեւք եւ ձիւնաբերք եւ կարկուտք: 10 Բայց ¹²ի շոգւոյ անտի՝ հողմք ազգի ազգի, որոտմունք եւ փայլատակմունք, կայծակն եւ հուր եւ որ ինչ նման է սոցին:

1 Գ. [ՅԱՂԱԳՍ ԲԱԼՈՅ:

2 Բալ լինի ի նաւարութենէ ամպոց]¹³, զի յորժամ թանձրանայ՝ ի բալ դառնայ եւ յամպս՝ ամուլ եւ ¹⁴անձնունդ յորդաբուղիս անձրեւաց, զոր սակաւութեամբ ինչ խոնակեցուցանէ զերեսս երկրի. զոր յոյնք ընդդէմդարձ ասեն սակս արգելլոյ¹⁵ զարեգակնային ճառագայթս եւ զանձրեւաց¹⁶, զոր Աստուած կարգեաց¹⁷ յաւգուտ մեր:

1 Դ. [ՅԱՂԱԳՍ ՈՐՈՏՄԱՆ ԹԷ¹⁸ ԶԻՆՉ Է ԿԱՄ ՈՒՍՏԻ՞:

2 Որոտումն լինի յորժամ վարին հողմք]¹⁹ ի վերին բռնութենէն²⁰ եւ ըմբռնեալ ի միջոյ ամպոյ²¹ հողմ ինչ եւ սաստկապէս ի բաց պատառել ամպոց՝ լինին²² ճայթմունք եւ որոտմունք: 3 Եւ ի ճնշել հողմոյն հուր հատանի, զոր փայլատակմունս ասեն. զի ամենայն արարածք հուր ունին յինքեանս, բայց ամպոյն խտագոյն է: 4 Մինչ հատանէ յամպոյն՝ ²³թէ թեթեւ՝ անձրեւ ելանէ ²⁴եւ ներքին աւղն ի վայր

11 Բ ամբ
12 Բ ի շոգոյ
13 Բ չիբ
14 Բ անձնունդս յորդաբուլիս
15 Բ արգել լոյս
16 Բ գանձրեւացս
17 Բ պարգեւեաց
18 Ա շատ անգամ հնագոյն ուղղագրութեամբ թե, եթե
19 Բ չիբ
20 Բ բնութեանէն
21 Բ ամբոյ, սոյն ուղղ. եւ յետոյ
22 Բ լինի
23 Բ թե, թեւթեւ
24 Բ եւ ներքի աւթն

անցանէ, եւ թէ թանձր ելանէ եւ հանդիպի ումեք՝ վնասէ. թէ անաւոր¹ ելանէ՝ ոչ թողուն աւդք, յերկինս անդ ժողովի անվնաս: 5 Բայց յաւուրս ձմերայնոյ ոչ լինի այս, զի ամպքն նաւարացեալ լինի[ն] ի հիւսիսային² աւդոցն. զի հարաւային աւդն թանձրէ գամպն:

1 Ե. [ՅԱՂԱԳՍ ՁԵԱՆ:

